ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԵՂԱՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ 1860-1870թթ.

ՔԱՐՏԵԶԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝
Ս.Տ. ԵՐԵՄՅԱՆ ԵՎ Հ.Մ. ՂԱԶԱՐՅԱՆ



ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ

- ◎ ԵՐԵՎԱՆ — Նահանգների, մարզերի, վիլայեթների կենտրոնները
- ◉ ԵՐԶՆԿԱ — Գավառների, օկրուգների, սանջակների կենտրոնները
- ◦ Ջեյթուն — Գավառակների, կազաների, նահիեների, օլքաների, մահալների կենտրոնները և այլ բնակավայրեր
- • Սարդարապատ — Բերդեր և ամրոցներ
- Կոթամար — Վանքեր
- 1862 — Հայ ժողովրդի ազատագրական պայքարի կենտրոնները

ՍԱՀՄԱՆՆԵՐ

- Պետական
- Նահանգների, մարզերի, վիլայեթների
- Գավառների, օկրուգների, սանջակների
- Գավառակների, կազաների, նահիեների, օլքա
- մահալների

Հայ ժող. պատմ. հատ. V

ՄԱՍՇՏԱԲ

կմ 20 0 20 4

ՏԻԳՐԱՆ ՄԵԾ
ՓԲԸ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
CJSC TIGRAN METS PUBLISHING HOUSE

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
МУЗЕЙ-ИНСТИТУТ ГЕНОЦИДА АРМЯН

ГАЙК КАЗАРЯН

ГЕНОЦИД АРМЯНСКОГО НАРОДА В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ

ТОМ ВТОРОЙ

Ереван 2004

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ



Երևան 2004

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Ղ 158

Խմբագիր՝ պատմական գիտ. դոկտոր **Լ.Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ**

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅԿ ՄԻՐԶԱԶԱՆԻ

Ղ 158 Հայ ժողովրդի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում.– հատոր երկրորդ.– Եր., Տիգրան Մեծ, 2004.– 780 էջ:

Սույն աշխատությունը հեղինակի մենագրության երկրորդ հատորն է և նվիրված է օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի ապրած ամենածանր ողբերգության ***ցեղասպանության բուն պատմությանը:*** Հիմնականում արխիվային, ապա բազմալեզու գրականության և պարբերական մամուլի ընծեռած առատ փաստերին կռթնած հեղինակը ներկայացնում է ***Մեծ եղեռնի*** պատմության պատմաքննական վերլուծությունը: Հետևողական և հիմնավոր պատասխան է տրվում թուրք այն պատմաբաններին և պետական բարձրաստիճան այրերին, որոնք, կաշվից դուրս գալով, ինը տասնամյակ շարունակ, մշուշի ևռնակներ են շպրտել պատմական իրողության վրա ջանալով ժխտել հայասպանության սահմռկեցուցիչ իրողությունը:

Փորձ է արվում շարադրել ցեղասպանության ընդհանրական պատմությունը՝ ներառնելով ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Հայկական Կիլիկիան և Թուրքիայի հայաբնակ մյուս նահանգները: Տեսակետ է զարգացվում, թե ցեղասպանությունն արևմտահայ իրականության մեջ սկսվել է XIX դարի 90-ականների սկզբին և եզերվել 1922 թվականով: Այն իրականացվել է երկարատև (շուրջ երեք տասնամյակ) պրոցեսում, եղել է կանխամտածված, վաղօրոք ծրագրված ու խնամքով մշակված և հիմք է ծառայել հիտլերյան ֆաշիզմին՝ Երկրորդ աշխարհամարտում: Մանրակրկիտ ներկայացվում են միջազգային այն որոշումները, որոնք բանածնում են ցեղասպանության իսկությունը, նրա կատարողների նկատմամբ կիրառվելիք պատժամիջոցները, չարաբաստիկ նման երևույթների նկատմամբ վաղեմության միանշանակ բացառումը: Հեղինակն անթաքույց նպատակ է հետապնդում սույն ***երկհատորյակով*** արտահայտել ինչպես հանուր հայ ժողովրդի, առավել ևս ***հայ դատի*** պաշտպանների ձգտումներն ու ցանկությունները, այսինքն՝ ժամանակակից Թուրքիայից պահանջել այն, ինչը մինչև օրս մերժվում և ուրացվում է: Հետևաբար Թուրքիան ու թուրքերը ոչ միայն պետք է ճանաչեն Հայոց ցեղասպանությունը, այլև հայ ժողովրդից հրապարակավ ներողություն խնդրելուց զատ նրան վերադարձնեն բռնազավթած Հայրենիքն ու յուրացրած միլիարդավոր ունեցվածքը: Իբրև հավելված՝ աշխատության վերջում զետեղված են մի շարք այնպիսի վավերագրեր, որոնք առավել հիմնավորում են հեղինակի զարգացրած տեսակետները:

Աշխատությունը նախատեսված է հանուր հայ ժողովրդի համար:

Ղ $\frac{0503020913}{7774(01)2004}$ 2004 թ.

ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 99941–0–081–5

© Ղազարյան Հ.Մ., 2004 թ.

Երկու խոսք

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ պատմության մեջ արձանագրված ամենաողբերգական իրադարձությունները ցեղասպանություններն են. մանավանդ երբ դրանք մինչև օրս ճանաչված և դատապարտված չեն Այդ տեսանկյունից դիտարկելիս հայ ժողովրդի՝ օսմանյան կայսրությունում ապրած *արմենոցիդը* (հայասպանություն) ամենախաղեպ երևույթ է. քանզի մենք կորցրեցինք ոչ միայն ***երկուտակես միլիոն խաղաղ, անգեն ու ստեղծագործ քնակչությանը, այլև շուրջ երեք հարյուր հազար քառ. կմ պատմական, հնամենի ու սրբազան Հայրենիքը, տասնյակ ու տասնյակ միլիարդների գումարվող ազգային հարստությունն***՝ նյութական. առավել ևս հոգևոր. որոնք դրամով չեն գնահատի նրբերք: Հետևաբար և ծանրությամբ. և բնդգրկումով. բազմաոլական առումով. Հայոց ցեղասպանությունը. դժբախտաբար. մինչև օրս մնում է եզակի

Թերևս ցեղասպանությանը հավասար և նույնիսկ առավել վտանգավոր է. երբ այն ուրացվում է. չի ճանաչվում ոչ համաշխարհային հանրության և ոչ էլ նրա կառավարողների ժառանգորդների կողմից: Դրա առհավատչյան բոլորական կեղծապատիր պատմաբանները են. պետական բարձրաստիճան այրերը. որոնք իրենց տասնամյակ անդադար աշխատանքը նվիրել են նետել պատմական իրողությունների վրա. ոչ միայն խեղաթյուրել են իրականությունը. այլև «վարպետորեն» բյուրեղացության բավիղ են նետել դեպքերին ականատես Արևմուտքի պատմաբաններին. էլ չենք ասում սովորական քնթերցողներին

Դժբախտաբար. միայն վերջերս են սկսել աշխուժանալ հայրենի հետազոտողները. որոնք. արդեն չբավարարվելով հայրենի գրականությամբ ու արխիվներով. փորձում են անգլո-սաքսոնական ու ֆրանսիական վավերագրերը. փորձում են գիտական շրջանառության մեջ դնել բոլորական ու գերմանածին փաստերը Հասկանալի է. որ Հայոց ցեղասպանության մեղսակից ու կատարող. գերմանական և բոլորական պետական արխիվներում վաղուց նիրհող. քնդարմացած նյութերը միայն լրացուցիչ դեր կկատարեն սահմռկեցուցիչ այդ դեպքերի պատմությունը գրելիս

Երևույթը պարզ է. հստակ ու անվիճելի: 1890-1922 թվականներին թուրքական բռնեցիները Արևմտյան Հայաստանում. Հայկական Կիլիկիայում և հայաբնակ ևահանգեներում կատարեցին մի ամբողջ ժողովրդի ***ցեղասպանություն,*** որի համար այսօր պետք է պատասխան տան սպանդից վերապրողներին ու նրանց ժառանգներին Այդ ծանր հանցագործության մեղսակից են գերմանական պետական գործիչները. բարձրաստիճան զինվորականները. որոնցից շատերի ձեռքերը կարմրեցին հրեական արյան մեջ. այն էլ Երկրորդ աշխարհամարտի տարիներին: Պարզից էլ պարզ է. որ ***եթե ժամանակին ճանաչվեր և հավուր պատշաճի դատապարտվեր XX հարյուրամյակի առաջին ցեղասպանությունը, ապա չէր կրկնվի երկրորդը, թերևս՝ դաժանը:*** Հիտլերը չպատճանակում էր Թալեաթին ու Ջեմալին պարծենալով. թե ով է այժմ հիշում հայերի ցեղասպանությունը Թուրքիայում:

Նյուրնբերգյան հայտնի պրոցեսը. նրան հաջորդող միջազգային իրավաժողովները. ՍԱԿ-ի որոշումները վերջապես հիշեցրին հայ ժողովրդի ապրած ողբերգության նկատ-

թյունը: Ի վերջո նիրհից արթնացած համաշխարհային հանրությունը սթափ հայացքով սաստեց Հիտլերի նման մտածողներին՝ որոշելով ոչ միայն հաշիվ պահանջել անցյալի և առօրյա ցեղասպանություններից, այլև բանածևեց ցեղասպանության վաղեմություն չունենալու փաստը:

Իրար հետևից որոշումներ էին կայացվում: Դժբախտաբար, մինչև օրս էլ այդ որոշումները մնում են ձայն բարբառո հանապատի:

Թուրքիան, ժամանակին մտած կայզերական Գերմանիայի բևի տակ, կատարեց այդ ոճիրը: Թուրքիան, այսօր դառնալով Ամերիկայի այսօրվկիանոսյան սատելիտը, երկիրը վերածելով նրա ռազմակայանների, վերջինիս պաշտպանությամբ ոչ միայն ուրանում է ցեղասպանության փաստը, այլև մյուսներին հարկադրում է, սպառնում, եթե չի ստացվում, խնդրում՝ չճանաչել հայերի ցեղասպանությունը: Թուրքերը լավ են հասկանում գենոցիդի ճանաչման ծանրությունը, դրան հետևող հետագա գործողությունները:

Միևնույն է: Սախաթը պարկի մեջ չես պարտակի: Այսօր, վաղը թե ապագայում հայ ժողովրդի ցեղասպանությունը ճանաչվելու է: Դա չի մոռացվել, և ճիշտ են վանկարկում, թե ***ոչինչ չի մոռացվել, և ոչ ոք չի մոռացվել:*** Այսօր ապրում են եղեռնից վերապրողները, այսօր հզորանում է ազատ, անկախ Հայաստանի Հանրապետությունը: Մորթվածների հավիտենական աճեծքը կհասնի այն հայ պետական այրերին, հոգևոր գործիչներին և մտավորականներին, որոնք մոռացության կտան սահմոկեցուցիչ այդ ողբերգությունը: Ուրեմն պայքարը շարունակվում է՝ ավելի ինտենսիվ, ավելի հետևողական:

Մենք մեզ բարոյապես բավարարված կզգանք, եթե հայ ժողովրդի սրբազան պայքարի ճանապարհին այս երկհատորյակը ինչ–որ քայլով սատար կանգնի ընդհանուրին, ***Հայ դատի պաշտպաններին:***

*

* *

Սույն մենագրության ստեղծումը մեզանից պահանջել է հիսուն տարվա լարված ու հետևողական աշխատանք: Մեծ խնդրին վերաբերող առանձին հարցերի պատմության հատվածները հրապարակելիս, ժամանակին, քիչ չեն եղել գռեհիկ սոցիոլոգներ, կուսակցական նորաթուխ գործիչներ, որոնք մեծ ու փոքր քարեր են գլորել մեր ճանապարհին՝ չկարողանալով մեզ շեղել կես դար առաջ կայացրած որոշման կենսագործման փշոտ, սակայն հայրենանվեր ուղուց: Այսօր ցեղասպանության պատմությամբ զբաղվելը դարձել է «մոդա», և շատերն են գրիչ շարժում այդ ուղղությամբ: Գնահատելով այդ պատմաբանների, բանասերների կատարած մեծ գործը, խրախուսելի համարելով այն՝ կխնդրեինք գրիչն այնպես շարժեն, որ ունքը սարքելու տեղ աչքն էլ չհանեն, այսինքն՝ անգգուշությամբ փաստեր չտան թուրք պատմաբաններին, որոնք ակնդետ հետևում են մեր գրածներին և անմիջապես արձագանքում:

Վերջապես ցեղասպանության դատապարտումը բարձրացել է պետական մակարդակի, դարձել մեծ քաղաքականություն ու քաղաքագետների վճռման առարկա: Մենք համոզված ենք, որ այս անգամ մեր ժողովուրդը, նրա ցանկությունն արտահայտող պետական այրերը անպայման կհասնեն հաղթանակի:

ԲԱԺԻՆ ԱՌԱՔԻՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԱՎԵՐՋԻՆ XX ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

Գլուխ առաջին

Արևմտահայության ցեղասպանությունը XIX դարի 90-ական թվականներին

Հայասպանը ողջակիզվեց մեր կառուցած զոհասեղանի վրա. բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897, 1909 թվականների ապրատափելի ջարդերին և 1915 թվականի ահավոր կոտորածներին:

ԼԼՈՅԴ ՋՈՐՋ

1. «Զուլումի» փասնամյակը. քաղաքական ճնշումների սաստկացումը ջարդերի նախօրյակին

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ետնախորքը, իբրև տխուր ժառանգություն, այսօրվա ու ապագա սերունդներին վճռելու է թողել արտակարգ բարդ, դժվարամարս ու կնճռոտ մի շարք խնդիրներ: Ժողովուրդն իրեն հատուկ օժտվածությամբ ու հանճարի կարողությամբ պետք է որ գտնի այդ խնդիրների ճշմարտացի ու արդարամիտ այնպիսի լուծումներ, որոնք, վերացնելով *տարածաշրջանում* երկար ժամանակ հաստատված թշնամությունը, կապահովեն անվթար առաջ շարժվելու ճշմարտացի ուղին: Երկու կողմերի համար էլ խիստ կարևոր է ճշմարտության վերականգնումը, բարիդրացիական հարաբերություններին անհրաժեշտ պայմանների խարսխումը: Անշուշտ դժվար է այդ ամենն իրողության վերածելը, բայց միաժամանակ խիստ անհրաժեշտ է և հույժ անհետաձգելի:

Մեծ ու փոքր թուրքական զույգ տերությունների ղեկավարությունը, դժբախտաբար, նաև նրանց ծայնափող դարձած պատմաբաններն ու քաղաքական գործիչներն, ունեն իրենց դաժան պայմանները, որոնք ոչ թե սատարում են միջպետական հարաբերությունների վերականգնմանը, այլև խորացնում են եղած հակասությունները, գրեթե հասցնում անսքող առճակատման:

Թուրքական պետության այսօրվա ղեկավարությունը, Հայաստանի Հանրապե-

տության հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման, տնտեսական շրջափակման վերացման համար առաջադրել է և հետևողականորեն պաշտպանում է մի շարք դաժան ու անմարդկային նախապայմաններ. դրանցից առաջինն ու աներևակայելին այն է, որ ոչ միայն ***Հայաստանը,*** այլև ***Սփյուռքի Հայ դատի պաշտպանները*** պիտի հրապարակավ հրաժարվեն ***ցեղասպանության ճանաչման*** իրենց օրինական պահանջից, հետևաբար և այլևս չպնդեն հայկական հողերի, այսինքն՝ պատմական ու սրբազան Հայրենիքը ետ ստանալու վրա:

Ավելին. մերօրյա թուրքերը, աշխարհով մեկ քաղաքական մակուլատուրա տարածելով, դրամ ու հարստություն մսխելու առաջ կանգ չառնելով, իսլամապաշտների, շատ դեպքերում էլ փողասեր եվրոպացիների գրչով «***փորձում են*** հիմնավորել», թե ընդհանրապես ***ցեղասպանություն*** գոյություն չի ունեցել, իսկ կատարվածի մեղավորն էլ ոչ թե թուրքերն են եղել, ***այլ՝ հայերը:*** Անկարան ու Բաքուն Հայ դատի, հայոց հայրենանվեր պատմաբանների դեմ «կռվում են» պետական մակարդակով ու պետական հովանավորչությամբ: Անշուշտ, այդ պարագան հայկական պետական այրերին, պատմագիտական պատկառելի մտավորականությանը պետք է ստիպի սթափ հայացքով նայել խնդրի լուծմանն անհրաժեշտ հեռանկարներին:

Պատահական չէ, որ թուրքական հանրապետությունը թիկունք է կանգնում զույգ Ալիևներին և առանց ամաչելու Հայաստանից պահանջում է ազերիներին «վերադարձնել» Պատմական Հայաստանի անբաժան մասը հանդիսացող ***Արցախ աշխարհը:*** Ասում են՝ գայլերի ախորժակն ուտելու ժամանակ է բացվում: Հայոց հնամենի, թերևս ամենահին ***Նախիջևան*** քաղաքի հայ բնակչությանը բռնագաղթեցնելուց, ֆիզիկապես ու բարոյապես մաշելուց-մաշելուց, ապա հիմնովին հայազրկելուց հետո միայն թուրքացնելով, հիմա էլ Արցախն են ետ պահանջում: Այստեղ էլ նրանք փորձում են թոզ փչել արևմտյան աշխարհի աչքերին, Նախիջևանն ու Արցախը ***«գիտականորեն»*** թուրքացնում՝ հույս ունենալով, որ առաջավոր մարդկությունը կհավատա նախկին կեղծարարներին, որոնք կարող են ***ուստա*** մականուն ստանալ:

Մեր կարծիքով Եվրոպայի ու Ասիայի, երկու Ամերիկաների բնակիչները, պետական այրերն արդեն զարթնել են ***լոթարինգյան քնից*** և, կարծեք թե, այսօր ավելի քան հավատում են ցեղասպանության ենթարկված, հրաշքով մազապուրծ հայկական բեկորների ***պահանջատիրությանը,*** քան թե քաղաքակիրթ աշխարհին այդքան տառապանք պատճառած թուրք ջարդարարներին:

Այժմ բանաձևենք, թե ինչ են թմբկահարում թուրքերը. 90-ականներին եղել են ջարդեր, որոնց մեղավորները հայերն էին: Մայրաքաղաքում և Արևմտյան Հայաստանում ապստամբություններ են բարձրացրել ***հայ հեղափոխական կոմիտեջիները,*** որոնք հարձակվել են ***թուրքերի*** և ***քրդերի*** համայնքների վրա: Սրանք էլ, հատկապես քրդերը, դիմել են ոչ ավելի, ոչ պակաս՝ ինքնապաշտպանության: Բռնկվել են կռիվներ, որոնց զոհ են գնացել ավելի ***շատ թուրքեր ու քրդեր, քան հայեր:***

Բացահայտ այս կեղծարարությունը մերկացնելու համար մենք դիմեցինք հատկապես օտար սկզբնաղբյուրների, որպեսզի ցույց տանք, թե ***թուրք և ազերի*** ստախոսներն ինչպես են իրողությունը բեկում կեղծ հայելու մեջ: Նրանք միջոցների մեջ խտրություն չդնելով՝ փորձում են խուսափել պատասխանատվությունից, քանզի դրան անմիջապես հաջորդելու է պահանջատիրությունը:

Հայ ժողովրդի պահանջները պարզ են և հստակ:

1. Հայերի ցեղասպանություն է եղել օսմանյան կայսրությունում ոչ միայն ***1915 թվականին,*** այլև դրանից շուրջ ***երկու տասնամյակ առաջ:*** Մենք ձգտում ենք օտար ականատեսների ընծեռած փաստերով, անհրաժեշտության դեպքում նաև հայրենի սկզբնաղբյուրներով ***ևս մեկ անգամ*** (հազար անգամ ապացուցվել է) հաստա-

տել, որ 90-ական թվականների հայկական ջարդերն իրենց բոլոր իրավական բանաձևումներով ***ցեղասպանություն են, հայասպանություն*** և ոչ սովորական կոտորածներ, այսինքն՝ ***հայի ու թուրքի կռիվ:***

2. 90-ականների ցեղասպանության ժամանակ գործածված մեթոդներն ու ջարդարարության ձևերը առաջին անգամ էին օգտագործվում Արևմտյան Հայաստանում, Հայկական Կիլիկիայում, ինչպես նաև եվրոպական Թուրքիայում, հատկապես հայաշատ Կ. Պոլսում: Անժխտելի է, որ Համիդ II-ը 1892-1896 թթ. Ստամբուլում ավելի շատ հայ մորթոտել տվեց, ավելի բարբարոս «հնարներ օգտագործեց», քան թե երիտթուրքերը 1915 թ. ապրիլյան մայրաքաղաքում:

3. «***Ջուլումի***» տասնամյակի հայկական ջարդերը նախօրոք ծրագրված էին, վաղամտածված: Համիդը դրա համար չխնայելով ոչ մի հարստություն՝ կազմակերպեց «համիդիե» ջոկատներ, որոնք իրենց վրա դրված ***«պարտականությունները»*** կատարեցին ***«լիուլի, անթերի»*** և դարձան ուսանելի օրինակներ երիտթուրքերի համար մեծ ոճրագործության տարիներին:

4. «***Ջուլումի***» տասնամյակում օսմանյան կայսրությունում ոչնչացվեց ***300 հազար խաղաղ ու անմեղ հայություն,*** դատարկվեցին հարյուրավոր գյուղեր ու քաղաքներ: Սակայն արգահատելին թուրքերի ու քրդերի գործադրած սպանության ձևերն ու մեթոդներն էին հայասպանության պրոցեսում՝ դաժան ու անմարդկային, ազգասպան ու սահմռկեցուցիչ:

5. Միջազգային կոնվենցիաները դատապարտում և մարդկության դեմ գործադրված չարիք են համարում ***կրոնափոխությունը:*** Համիդը, հարյուր հազարների հասնող արևմտահայերի ստիպեց, բռնադատեց մահմեդականություն ընդունել: Այդ տասնամյակում ***բազմահազար հայ որբերի*** աճուրդով վաճառեցին, դարձրեցին ***տնային ստրուկներ*** կամ ***մահմեդականների հարճեր:*** Թուրքիայում ծաղկեց ***ստրկավաճառությունը,*** որի առքի ու վաճառքի առարկան ***հայ ազգաբնակչությունն էր:***

6. Երկրորդ աշխարհամարտից հետո միջազգային դատարանների հանած որոշումները ցույց են տալիս, որ ցեղասպանությունը վաղեմություն չունի, առավել ևս հայասպանությունն այսօր էլ դատապարտելի է, կատարողները՝ պատժի ու նզովքի ենթակա:

Այսպիսով, 90-ականների հայկական կոտորածներն իբրև ցեղասպանություն որակելը մեր գերխնդիրն է, որի ապացույցներին է նվիրված այս գլխում ամփոփված հետագա շարադրանքը:

XIX հարյուրամյակը եզրագծող վերջին տասնամյակի օսմանյան կայսրության պատմությունը աշխարհի մեծ ու փոքր ազգերին պատկանող անաչառ պատմաբանների, նույնիսկ որոշ թուրք հետազոտողների, հասարակական գործիչների կողմից բնութագրվեցին իբրև ***«ջուլումի»*** տարիներ: Այդ բնութագրությունը առավել համապատասխանում էր Համիդ II (1876-1909) սուլթանի գահակալության վերջին զույգ տասնամյակներին, երբ իրականացվեց հայ ժողովրդի ***ցեղասպանության*** անդրանիկ շրջափուլը, երբ թուրքական կանոնավոր բանակի, հատկապես ***քրդական «համիդիեների»*** սրով ու հրազենով Արևմտյան Հայաստանը թաթախվեց անպաշտպան քրիստոնյաների անմեղ արյան գետերի մեջ: Երկիրն ստացավ տնտեսական, քաղաքական ու ռազմական այնպիսի հարվածներ, որոնցից առաջացած վերքերն այլևս անբուժելի դարձան:

Այդ սահմռկեցուցիչ դեպքերի, ավելի ստույգ, կիրառվող քաղաքականության պատճառները բազում ու բազմաթիվ էին, որոնցից յուրաքանչյուրի մասին իրենց տեղերում խոսել ենք և այսուհետև ևս կխոսենք աշխատության հետագա էջերում: Այստեղ արձանագրենք դրանցից մի քանիսը ևս:

Հայ ժողովրդի ապրած ողբերգության պատճառներից պակաս կարևոր չէր սուլթանի անձնավորությունը, նրա բնավորությունը, «ստացած դաստիարակությունը» և դրանցով պայմանավորված կիրառած պետական, ազգային շովինիստական քաղաքականությունը:

Տվյալ պարագայում այդ սուլթանն ***Աբդուլ Համիդն էր*** (1842-1918): Նրա կենսագրության գրառումը զբաղեցրել է բազում հետազոտողների, որոնցից ոչ մեկի մեծ ու փոքր աշխատությունների էջերում դրական որևէ պարբերություն չես գտնի: ***Ասում են՝ մարդու կյանքը նման է սևագիր գրքի՝ մի տարբերությամբ միայն: Սևագիր գիրքը միշտ էլ կարելի է մաքրագրել, խմբագրել, տպագրելիս սրբագրել,*** այսինքն՝ ***լավացնել, գեղեցկացնել:*** Դժբախտաբար, ինչ իմանաս, գուցե և բարեբախտաբար, սևագրած կյանքի պատմությունը միշտ էլ մնում է սևագիր: Հետևաբար, յուրաքանչյուր մարդ իր կյանքը սևագրելիս պետք է մտածի հետագայի մասին, հիշելով, որ ոչ թե ինքը ինչ է տանում այս աշխարհից, այլ մտածելով, թե ինչ է թողնում հաջորդ սերունդներին, հանուր մարդկությանը, եթե այդքան «մեծություն է»:

Համիդ II-ը փիլիսոփա չէր և ոչ էլ հումանիստ, որպեսզի մտածեր այնպես, ինչպես խորհում էին մեծագույն մտածողներն ու նման մակարդակի բարձրաստիճան պետական այրերը: Նա բացարձակ ***մարդասպան էր,*** սադիստ, ճիվաղ, հոգեկան հիվանդ, որի հիվանդությունն ու բնավորության չարաբաստիկ գծերը շատ ծանր էին նստում օսմանյան կայսրությունում խարսխված հպատակ մյուս ժողովուրդների, հատկապես՝ հայ ժողովրդի ուսերին:

Արյունարբու սուլթանի մասին ստեղծվել է ծավալուն գրականություն: Համիդի առաջին ծավալուն կենսագրականը գրել է նրա բարձրաստիճան պալատականներից մեկը՝ ***Սաիդ փաշան:*** Գիրքը ստեղծվել է մի մարդու գրչով, որը լավատեղյակ էր սուլթանի ոչ միայն պետական գործունեությանը, այլև անձնական կյանքին, հատկապես պալատական խժդժություններին՝ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ վարած հակամարդկային, շովինիստական քաղաքականությանը: Գիրքը բաղկացած է երեք փոքրածավալ հատորներից, որոնք իրենց վրա են սևեռել ռուսական դիվանագետների ուշադրությունը և թարգմանաբար որոշ հատվածներ ուղարկվել Պետերբուրգի արտգործնախարարությանը[1]:

Նա պատմում է, թե արյունոտ բռնապետը գահ բարձրացավ հորեղբոր՝ Աբդուլ Ազիզի և հարազատ եղբոր՝ Մուրադի «դիակների վրայով», որոնք նրան ի սկզբանե դարձրեցին նյարդային, կասկածամիտ և դաժան: Նրա դաժանությունը կիրառվում էր բոլոր տաղանդավոր մարդկանց նկատմամբ, որոնց մեջ կասկածամիտ տիրակալը տեսնում էր իր պոտենցիալ հակառակորդներին[2]: Նա սկզբում ձգտում էր բարբարոս ասիական Թուրքիային եվրոպական կեղև տալ, որը, սակայն, նրան այդպես էլ չհաջողվեց:

Սուլթանի դաժանության մասին Սաիդ փաշան պատմում է. «Մինիստրներին սովորաբար պալատ էր հրավիրում գիշերները: Հրավիրված մինիստրները, Եըլդըզ Քյոշք գնալով, չգիտեին, թե կվերադառնան իրենց տները, թե պալատից ուղղակի կդատապարտվեն աքսորի»: Նրանց վրա հաստատված էր հսկողություն այն կարգախոսով, որ իրավունք չունեին շփվել արտասահմանցիների հետ: Հազվագյուտ չէին մինիստրների տնային կալանքները: Բարձրաստիճան պետական այրերը «գի-

[1] Մանրամասն տե՛ս Архив внешней политики Российской империи (այսուհետև՝ **АВПРИ**), Политархив, фонд 151, опись 482, дело 3145, лл. 4-115.

[2] Նույն տեղում, թերթ 7:

տակցում էին», որ եթե «մեծ հայրենասեր» ***Միդհատ*** փաշային կարելի էր ոչնչացնել, ապա դժվար չէր իրենց «առևանգումն ու խեղդամահության դատապարտելը»: Սուլթանի հրամանով, շախմատի քարերի նման, օրը հարյուրներով էին աքսորվում, մահապատժի ենթարկվում, առանց դատի ու դատաստանի: Ամենածանրը այլահավատների – գյավուրների վիճակն էր»[1]:

Աբդուլ Համիդը, անգլո-ամերիկյան թուրքագետների բնութագրմամբ, եղել է «դժբախտ մարդ» և «անմարդկային սուլթան»[2]: Նա, ինչպես մյուս սուլթանները, ծնվել էր հոր բազմանդամ հարեմում: Ունեցել է շատ գեղեցիկ և ազդեցիկ մայր, որի ազգության մասին վեճեր են գնում: Ոմանց կարծիքով Վալիդե սուլթանը եղել է ***հայուհի,*** շատերի հավաստմամբ՝ «***առինքնող չերքեզուհի***»: Յոթ տարեկան հասակում Համիդը զրկվում է մորից, որն, անշուշտ, իր բացասական կնիքն է դնում «***հարճերի ձեռքով դաստիարակված***» մանկան հոգեբանության վրա[3]:

Համիդը մեծանում էր աշխարհից կտրված հոգում անթեղելով ատելության թույնը շրջապատի մարդկանց, առավել ևս այլազգի այն հասակակիցների նկատմամբ, որոնք ապրում էին ծնողների գուրգուրանքով շրջապատված: Հորեղբայր Աբդուլ Ազիզ սուլթանը Եվրոպա ուղևորվելիս իր հետ վերցրեց պատանուն: Այդ ուղևորությունը ևս զայրույթ էր առաջացնում ապագա սուլթանի մոտ, հարեմական ապրելակերպը համեմատելով եվրոպական պալատականների խրախճանքին: Նա այդ բոլորը տեսնում էր և խորհում ապագա չարագործությունների մասին:

Կ. Պոլիսը կառուցված էր յոթ բլուրների վրա: 1876 թ. զույգ դիակների վրայով, գուցեև բախտի բերմամբ, գահ բարձրացավ 34-ամյա Համիդը: ***Աբդուլ Համիդ II-ը*** գահակալական պատվանուն ստանձնեց, սուլթանի նստավայրը ***Տոլմա-Բախչեից*** տեղափոխեց ամենաբարձր բլրի վրա կառուցված պալատ, դրան ***Եըլդըզ Քյոշք*** անվանում տվեց և դարձրեց վախի ու սարսափի կենտրոն:

Համիդ սուլթանը և՛ վախենում էր, և՛ վախեցնում: Դրանց նպաստեցին գահակալական բարդույթները, որոնք առաջացան 1876 թվականին: Այդ տարում երեք սուլթաններ վեր ու վար արեցին թուրքական գահի վրա: Սուլթան ***Աբդուլ Ազիզը*** Թուրքիայում և Եվրոպայում հայտնի էր որպես «առատաձեռն, մսխող» անձնավորություն: Նրանից դժգոհ էին ոչ միայն եվրոպացի պարտքատերերն ու վարկավորողները, այլև թուրք պալատականները: Նման պարագայից օգտվելով «նոր օսմանների» առաջնորդներից ***Ալի Սուավին*** հեշտությամբ կազմակերպեց Աբդուլ Ազիզի գահընկեցությունը (մայիս, 1876) և ապա հուլիսի 4-ին նրան սպանել տվեց Չրաղանի պալատի մեջ՝ հայտարարելով ինքնասպան[4]:

«Այդ դեպքերուն ընթացքին,– շարունակում է Հայկազն Ղազարյանը, – Ապտուլ Համիտեն առաջ իր մեծ եղբայր՝ Մուրատը գահ ելած էր, հաջորդելով իր սպանեալ հորեղբոր՝ Ազիզին, բայց երեք ամիս հիմարացած էր ***և օգոստոս*** 31, 1876-ին գահ բարձրացած էր ***Ապտուլ Համիտ:*** Այդ շրջանին Միդհատ փաշան վարչապետ էր: Համիտը համաձայնելով Նետիմ փաշայի հետաշրջական կողմնակիցներու հետ, որոնք Միդհատին հակառակ էին, պայքար մղեց Միդհատի և միդհատականության դեմ, պաշտոնանկ ըրավ Միդհատ: Հինգ տարի զանազան տեղեր կառավարիչ դրկեց զայն: 1881 թ. Իզմիրեն ձերբակալելով դատավարության ենթարկեց Միդհատը 10-ը

[1] **АВПРИ**, фонд 151, опись 482, дело 3145, л. 8.

[2] ***Лорд Кинросс,*** Расцвет и упадок османской империи. Перевод с английского М. Пальникова, "Крон-пресс", Москва, 1999, стр. 579. Վերջին բաժինը վերնագրված է VII մաս, «Վերջին սուլթանը»:

[3] ***Philip Mansel,*** Constantinople, City of the World's Desire 1453-1924, London, 1995, p. 314-317.

[4] ***Հայկազն Գ. Ղազարեան,*** Յեղասպան թուրքը, Համազգային տպարան, Պէյրութ, 1968, էջ 11:

ուրիշ փաշաներու հետ, մահվան դատապարտեց բոլորը, երեք օրվան մեջ, որպես սպանիչներ սուլթան Ազիզի»[1]:

Նախորդ և հատկապես այս դեպքերը նոր գահակալած սուլթանին դարձրեցին *վախկոտ, կասկածամիտ և դաժան:* Սուլթանական գավազանը վերցնելու առաջին իսկ օրերից Համիդը դարձավ «նյարդային» և պալատը փաստորեն վերածեց *բերդ-ամրոցի:* Երկրզ Քյոշքում նա պահում էր հազարից ավելի թիկնապահներ: Պալատի պատերն ունեին իրենց անցքերը, որտեղից երևում էին *Բոսֆորն* ու *Ոսկեղջյուրը:* Ամեն ինչ հսկողության տակ էր: Նույնիսկ միայն *ուրբաթ օրը* «աղոթքի» գնալու համար նա կառուցել տվեց նոր մեչիդ՝ պալատի հարևանությամբ[2]:

Սուլթանը աներևակայելի կասկածամիտ էր: Նա ամեն րոպե կասկածում էր իրեն շրջապատող մարդկանց անխտիր: Բնավորության այդ անտանելի գիծը հարկադրում էր Համիդին պահել *հազարավոր լրտեսներ՝* դրանց վրա ևս նշանակելով *լրտեսներ: «Արդեն անեկդոտ էր դարձել, որ Կ. Պոլսի բնակչության կեսից ավելին զբաղվում է լրտեսությամբ, որոնցից յուրաքանչյուրը լրտեսում է մեկը մյուսին»*[3]:

«Այսօր ամբողջ Թուրքիան *կամ լրտեսում է կամ լրտեսվում,*– գրում է «Նոր Դարի» թղթակիցը,– լրտեսվում է հայը, հույնը, թուրքը, ֆրանսիացին, գերմանացին, ռուսը, անգլիացին՝ բոլորը: Լրտեսները գանձատնից ստանում են 3-10-30 ոսկի: ...Լրտեսվում են նույնիսկ իրենք՝ լրտեսները: Մեծ եպարքոսից սկսած մինչև վերջին պաշտոնյան... շրջապատված են լրտեսներով... լրտեսությունը բուն է դրել նաև *հարեմներում:* Ծառաները, աղախինները, կառապանները և այլն. բոլորը լրտես են: Ոչ մի բարձրաստիճան պաշտոնյա և ոչ ինքը՝ սուլթանը, ազատ չեն լրտեսությունից: Այդ նույնիսկ իրենք գիտեն, բայց դրանից ազատվելու ոչ մի հնար չկա..., որովհետև մեկը մյուսից միշտ վախենում է»[4]:

Գաղտնի ոստիկաններն ամենուր են, մանավանդ հոգևոր ծիսակատարություններին, թատերական ու մարդաշատ հարանման հավաքներին, հանգուցյալների թաղման արարողություններին: *Ճիշտ է նկատվում,* որ մարդկության համընդհանուր ու հազարամյակների պատմության մեջ քիչ են հայտնի հպատակ ժողովրդին կողոպտելու, բարբարոսական բռնությունների ենթարկելու, գազանային տանջանքների արժանացնելու, կրոնափոխելու այսպիսի բիրտ համակարգ ստեղծելու միջոցներ, քան համիդյան այդ վիժվածքը՝ *գուլումը*[5]:

Սարսափելի չարիք էին դարձել մատնագրերի պատճառով հազարավոր մարդկանց բանտարկությունը, աքսորը՝ անբարեհուսության և կասկածելի երևալու պատճառաբանությամբ: Լրտեսությունը դարձել էր բռնապետական վարչակարգի ուղեկցող հիմնական գործոններից մեկը: Իսկապես «լրտես» և «մատնագիր» բառերը վերածվել էին սարսափի: Թուրք գրող, հրապարակախոս *Խալիդ Զիա Ուշակլիտելը* իր հուշապատումներում այդ ժամանակների մասին գրում է. «Ստամբուլի մութ և խավարապատ փողոցները վախ ու սարսափ էին ազդարարում: Լրտեսներ, լրտեսներ... Բոլորը վախենում էին մեկը մյուսից, *հայրերը՝ որդիներից, ամուսինները՝ կանանցից:* Բացահայտված գլխավորներն արդեն գիտեին, որ

---

[1] *Հայկազն Գ. Ղազարեան,* Ցեղասպան թուրքը, Համազգային տպարան, Պէյրութ, 1968, էջ 11:

[2] *Лорд Кинросс,* նշված աշխատությունը, էջ 580:

[3] *Philip Mansel,* Constantinople, p. 313.

[4] «Նոր Դար», 1894, N 195: *Ս. Կ. Պողոսյան,* Արևմտահայությունը ցեղասպանության շեմին, Երևան, 1997, էջ 26-27:

[5] *Ս. Կ. Պողոսյան,* նշված աշխատությունը, էջ 27:

ամեն մի նոր մարդու «հայտնաբերվելուց» հարյուրավոր գլուխներ էին թռցվում ուսերի վրայից, դրա համար էլ բոլորը ծգտում էին ինչ-որ տեղ թաքնվել»[1]:

Լրտեսական ցանցն իր մշտական հսկողության տակ էր վերցրել կայսրության ամենաբարձրաստիճան պաշտոնյաներին, ընդհուպ մինչև մինիստրներն ու մեծ վեզիրը: Ստամբուլի ռուսական դեսպանն իր մի զեկուցագրով հաղորդում էր սուլթանի օգնական, մարշալ Ֆուադ փաշային կասկածելիների շարքին դասելու և նրա գործունեությանը լրտեսների հետևելու մասին: Սակայն, երբ համիդիեական զինված լրտեսները թափանցում են մարշալի բակը, նա և իր թիկնապահները զինաթափում են լրտեսներին և սկսում ծեծել: Ժամ չի անցնում, որ լրտեսական նոր խմբերը, ոստիկանների ուղեկցությամբ, ներխուժեին մարշալի «պալատը» և կալանքի վերցնեին նրան[2]: Այսուհետև այլևս կարիք չկա լրացնելու, թե ինչի էին ընդունակ Համիդի լրտեսները, և արդյո՞ք որևէ մեկը կարող էր ազատվել նրանց սարդոստայնից:

Հանրահայտ է, որ ազդեցությունը առաջ էր բերում հակազդեցություն, բռնությունը պոռթկում և հատկապես ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժում: Համիդ կասկածամիտը գիտակցաբար առիթներ էր ստեղծում բողոքների, լրտեսների միջոցով ստանում ճիշտ ու սուտ լուրեր և անցնում հարձակման: Նրան գիշերային քնի մեջ էլ հալածելի էր դարձել Հայկական հարցը, քրիստոնյա տերությունների իր ներքին գործերին միջամտելը, առավել ևս անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը:

Հունգարացի թուրքագետ Ա. Վամպերին «*Յուշեր*» խորագրած աշխատության էջերում այսպես է պատմում Համիդի հետ ունեցած իր առաջին հանդիպման մասին. «Կը վստահեցնեմ ձեզ, կ'ըսէ Համիտ թէ «հայերուն խելքը շուտով գլուխնին պիտի բերեմ: Իրենց գլխուն հարուած մը տալով մոռցնել պիտի տամ յեղափոխութեան գաղափարը: ... Գրեթէ հարկադրուած եմ այդ արմատական միջոցները ձեռք առնել ի ներկայութեան այն անդուլ հալածանքին եւ թշնամութեանը զոր քրիստոնեայ աշխարհը ցոյց կուտայ: Ռումանիան եւ Յունաստանը առնելով Եւրոպա Թուրքիոյ ոտքերը կտրեց: Պուլկարիոյ, Սերպիոյ եւ Եգիպտոսի կորուստով անոր ձեռքերը կտրեցին, եւ հիմա այս Հայկական յուզումով կ'ուզեն մեր ամենէն կենսական մասերը, մեր աղիքները խլել մեզմէ: *Այս պիտի ըլլար ամբողջական կործանումը, եւ մենք բոլոր մեր զօրութեամբը դէմ պիտի դնենք ատոր*»[3]:

Աբդուլ Համիդի կասկածամտության, վախկոտության և նույնիսկ ամենամտերիմներին չվստահելու մասին մի ընդարձակ քաղվածք է բերում Հրանդ Գանգրունին. «*Սուլթան Համիտ Շահսիէթի Վէ Հուսուսիէթլէրի*», 1943ին Պոլիս տպուած 370 էջնոց հատորէն վկայութիւն մը կարդանք:

Գիրքը կը ներկայացնէ Համիտը իր ընտանեկան, հարեմական, անձնական նախասիրութեանց մէջ զգուշաւոր ապրող, բայց մանաւանդ *ժուրնալճիներով* շրջապատուած եւ կասկածամիտ:

Օրինակ մը բաւարար է գաղափար տալու համար Ապտիւլ Համիտի մահուան սարսափին մէջ ապրած ըլլալուն:

Հակառակ պալատի պարտէզներուն մէջ հասունցող առատ պտուղի տեսակներուն, անոնցմէ չէր ուտեր... մասնաւոր մարդ կը ղրկէր որ գնեն: Փարիզէն Թուրհան Պէյ իրեն երեք սնտուկ պտուղ կը ղրկէ:

---

[1] *Ю. А. Петросян*, Османская империя. Могущество и гибель, исторические очерки, Москва, 1990, стр. 220.

[2] АВПРИ, ф. Посольство в Константинополе, д. 347, 1902, лл. 35-36.

[3] *Հրանդ Գանգրունի*, Հայ հեղափոխությունը օսմանյան բռնապետության դեմ (1890-1910), Պեյրութ, 1973, էջ 18: Այս հատորում օգտագործված արևմտահայ և սփյուռքահայ որոշ հեղինակների աշխատությունների վերնագրերի տառադարձությունը փոխել ենք արևելահայերենի:

Կը բանայ խնձոր, տանձ, դեղձ... լեցուն է: Կանչել կու տայ Տոքթ. Իպրահիմ փաշան: Մարդը սարսափով տունէն կանչուելուն համար մտահոգ վիճակ ունի... Սուլթանին սենեակը կը մտնէ, ուր զբաղուած էր ան աղերսագիր մը կարդալով: Իպրահիմ փաշան տեսնելուն թուղթերը մէկ կողմ կը նետէ եւ «գիտեմ որ պտուղ կը սիրէք» կ'ըսէ անոր եւ երեք սնտուկները ցոյց կու տայ... Ասոնք Եւրոպայէն ղրկած են ինծի... մինչ ես եւրոպական պտուղները բնաւ չեմ սիրեր...: Իպրահիմ փաշան կը ծռի բամպակներու մէջ տեղաւորուած պտուղները կը դիտէ... գունաւոր եւ համեղ... բերնին ջուրերը կը վազեն:

« – Հաւնեցա՞ք, կը հարցնէ...: Դրական պատասխանին վրայ.

« – Լա՛ւ, լա՛ւ բայց անոնց մէջ բաներ մը դրած չե՞ն կրնար ըլլալ... օրինակ թո՞յն...:

Փաշան սուլթանին՝

« – Չեմ կարծեր տէր իմ, բայց քանի որ կասկած արթնցաւ ձեր մէջ, չեմ թելադրեր որ ուտէք կը մրմռայ:

« – Փաշա, ուշադի՛ր, միտքդ գէշ բան մի՛ բերեր: Ես ասոնք քեզի նուէր կ'ընեմ, ուզես նետէ, ուզես կեր, բայց եթէ տակէն գէշ բան ելլէ, պատասխանատու չեմ»:

Փաշան տուն կը տանի սնտուկները, փառաւորապէս կ'ուտէ պտուղը ընտանիքի անդամներուն հետ...

Յաջորդ օրը, երբ պալատ կու գայ, Համիտ զինք կը կանչէ եւ կ'իմանայ որ պտուղները ճաշակած է փաշան...: – Բան մը պատահեցա՞ւ, կը հարցնէ: Այս վերջինը ո՛չ միայն «բան մը չպատահեցաւ, այլ ստամոքսիս մէջ ցաւ մը ունէի այդ ալ անցաւ», կը պատասխանէ:

« – Լաւ, անոյշ ըլլայ, – կ'ըսէ Համիտ եւ կ'աւելցնէ. «Ի՞նչ բախտաւոր մարդիկ էք, որ առանց մտահոգուելու ամէն ինչ կ'ուտէք ու կը խմէք... կեանքի բարիքներէն լայնօրէն կ'օգտուիք...»[1]:

Քաղվածքի հեղինակը թուրք է և աներկբայորեն ապացուցում է սուլթանի հոգեկան հիվանդ լինելը, որը շատ բանկ է նստում արևմտահայության վրա:

1889 թ. հոկտեմբերի 22-ին հունգարացի Ա. Վամպերին մեկ անգամ ևս հրավիրվեց Ելդզ Քյոշք և այս անգամ պատվով ընդունվեց Աբդուլ Համիդի կողմից: Նրանք «հանգամանորեն» քննեցին «Հայկական խնդիրը», հատկապես եվրոպական տերությունների, այդ առիթով, օսմանյան կայսրության մասնահատելու, ասիական նահանգներն էլ բռնազավթելու խճճված խնդիրները: Հունգարացու վկայությամբ Համիդը հանդիպումն ավարտեց այսպես. «***Եվրոպական տերությունները կարող են իմ գլուխն անջատել մարմնից, բայց երբեք Հայաստանն իմ կայսրությունից... Ի՞նչ է հայկական հարցը. բավական է մեկ հարված, որպեսզի ջախջախվի ողջ շարժումը*** (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[2]:

Նախապատրաստական լուրջ «աշխատանքից» հետո, Բ. Դուռը, անձամբ Համիդի կարգադրությամբ, սկսեց հակահայկական քաղաքականության «նոր փուլի» կիրառումը 1890-91 թվականներին: Լուսավորության նախարարությունը անձամբ սուլթանից հրաման ստացավ հայկական նահանգներում այնպես «խեղդամահ անել ազգային շարժումները, ազգային լեզուն, գիրն ու դպրությունը», որ նույնիսկ «դադարի գոյություն ունենալ ***Հայաստան անունը***»[3]: Դպրոցներից հավաքում և այրում էին ***Շտիլերի*** ատլա-

---

[1] ***Հրանդ Գանգրունի,*** Հայ հեղափոխությունը օսմանյան բռնապետության դեմ, էջ 227-228: Տե՛ս նաև ***Զիա Շուքիր,*** Սուլթան Համիտ, Պոլիս, 1943, էջ 351-354:

[2] ***J. Walker,*** Christhopher, Armenia. The Survival of a Nation, New York, 1980, p. 145-146. Տե՛ս նաև ***Վ. Ա. Բայբուրդյան,*** նշված աշխատությունը, էջ 220:

[3] Центральный государственный военно-исторический архив Российской империи (այսուհետև՝ **ЦГВИАРИ**), ф. ВУА, д. 478, лл. 138-139, 1890.

սը, որտեղ քարտեզի վրա գրված էր *Հայաստան* անունը: Դպրոցական տետրերի կազմերի վրա նշված էին անուններ, անհասկանալի բառեր: Ոստիկանները, լրտեսների մատնագրերով, աշակերտական հազարավոր տետրեր բռնագրավել և ոչնչացրել էին պատճառաբանելով, թե դրանք ազդանշում են *Հայաստան* բառը:

Հայաստան անվանումը նույնիսկ գիշերները հանգիստ չէր տալիս երկչոտ ու դաժան սուլթանին, համապատասխանաբար և թուրքական գրաքննիչներին: Ֆրանսիացի քաղաքագետ Պ. Ֆեշը նշում է, որ հայերի համար կան երկու արգելքներ, դրանք են Հայաստան անվան հիշատակումը և գրաքննական նոր կանոնադրության հրապարակումը[1]:

1889 թ. փակեցին ֆրանսերեն «Ստամբուլ» և հունական «Նեոլողոս» թերթերը, որոնք գրել էին, թե «երկու բարձրաստիճան պաշտոնատար անձինք *Հայաստան* մեկնեցան քննություններ կատարելու և բարեկարգություններ ներմուծելու հրամանով»[2]: Դրան հետևեց «Արևելքի» գոցումը, որն այդ լուրն արտատպելիս թեև *Հայաստանը* փոխարինել էր *Անատոլիայով*, բայց և այնպես չէր խուսափել պատժից: Նման «*անմեղ*» հանցանքով հայկական և օտար լեզուներով հրատարակվող թերթերի փակումը խիստ հաճախակի էին դարձել 1889-1892 թվականներին: Ակնհայտ էր, որ ընդհանրապես մամուլը դրվում էր գրաքննչական բիրտ աքցանների մեջ, և հայ ժողովուրդն իր վիշտն ու տառապանքը այլևս այդ հրատարակությունների միջոցով օտարներին, մասնավորապես «պարտավորված» մեծ պետություններին հասցնել չէր կարող:

Զուլումի տարիներին բազմազգ օսմանյան կայսրությունը նրա ողջ ազգաբնակչության համար վերածվել էր իսկական բանտի: Սուլթանական կառավարությունը, հետևելով այն հին սկզբունքին, թե «բաժանի ր, որ տիրես», մշտապես բորբոքում էր ազգային և կրոնական ատելության կրակը: Առանձին կրոնական խմբավորումների մեջ եղած հակասությունները սրելու և թշնամանքի վերածելու գործում Աբդուլ Համիդն օգտագործում էր ոչ միայն իրեն ծառայող մարդաշատ լրտեսական ցանցը, այլև ոստիկանությունն ու ներքին զորքերը: Այդ նպատակին հասնելու համար սուլթանը ոստիկանության կազմը համալրում էր *հեծելազորով*, որը նոր երևույթ էր Թուրքիայի պատմության մեջ[3]:

Սուլթանական բանտախցերը լեփլեցուն էին հայ բանտարկյալներով: Նրանց թիվը հարյուր հազարների հասավ, հատկապես Գում-Գափուի արկածախնդրական ցույցից անմիջապես հետո (1891 թ.): Ստամբուլի, Արաբկիրի, Դիարբեքիրի բանտերում «ասեղ գցելու տեղ չէր մնացել»: Բ. Դուռը նոր կալանավորների տեղեր բացելու համար հարկադրված էր «խիստ կասկածելիներին» հանձնել քրդական ցեղապետների սրի ողորմածությանը, իսկ մի մասին էլ, հատկապես մայրաքաղաքի բանտարկյալներին ազատ արձակել:

Դրությունը առավել վատ էր Արևմտյան Հայաստանի վիլայեթներում: Սեբաստիայի նահանգապետ փաշան բողոքում էր, որ իր տիրապետության տակ եղած բանտերում այլևս տեղ չկա[4]: Թուրքիայում հաստատված ռուսական դիվանագիտության ներկայացուցիչը 1890 թ. նոյեմբերի 8-ի N 154-րդ զեկուցագրով հաղորդում էր[5]. «Հայ գյուղական բնակչության դրությունը զգալիորեն փոխվել է դեպի վա-

[1] *Ա. Խառատյան*, Օսմանյան գրաքննությունն ու արևմտահայ մամուլը (1870-1890). «Պատմա-բանասիրական հանդես», 1985, N 4, էջ 113: Տե ս նաև «Արևելյան մամուլ», 1909, N 30, էջ 716:

[2] Նույն տեղում: Տե ս նաև «Նոր կյանք», Լոնդոն, 1900, N 15, էջ 236:

[3] *Ю. А. Петросян*, Младотурецкое движение (вторая половина XIX– начало XX вв.), Москва, 1971, стр. 160.

[4] *Ս. Մարկոսյան*, Արևմտահայության վիճակը XIX դարի վերջերին, Երևան, 1968, էջ 178-179:

[5] Նույն տեղում:

տը... Հյուպատոսները դեսպանատներ են ներկայացնում թուրքերի և քրդերի կողմից կատարվող սպանությունների, կողոպուտների և բռնությունների ընդարձակ ցուցակներ»[1]:

Արաբկիրի բանտի դռանը փակցված էր եղել մի թուղթիկ, որը գրված էր արաբերենով: Այնտեղ արձանագրված էր, որ հայերին իզուր են մեղադրում թուրքական իշխանությունից ազատվելու և ***անկախ թագավորություն ստեղծելու հանցանքի մեջ:*** Հայերը հեռու են նման մտադրությունից և միակ ձգտումն է իրենց իրավունքների պաշտպանությունը, օրենքի առջև քրիստոնյաների և մահմեդականների իրավունքների հավասարությունը: Թուղթիկն ավարտվում էր այսպես. «Հայերը շատ են, նրանց շարժմանը չեն կարող վերջ տալ ո՛չ մահապատիժները, ո՛չ աքսորը, ո՛չ էլ հազարավոր բանտախցերը»[2]:

Սամսոն քաղաքում նստած ռուսական հյուպատոսի զեկուցագրում ասված էր. «Յոզղաթում ունևոր հայերից ձերբակալված է 150 մարդ, իսկ Կեսարիայում՝ մինչև 160: Անգորայում 173 մարդ դատապարտված է, որոնցից 5-ը՝ կախաղանի, 12-ը՝ ցմահ տաժանակիր աշխատանքի: ***Բանտերում խոշտանգումներն աներևակայելի չափերի են հասել:*** Մեծ վեզիր Ջևադ փաշան հատուկ շրջաբերականով կարգադրել էր բոլոր վիլայեթների վալիներին՝ ամեն միջոց ձեռք առնել, որպեսզի օտարերկրացիները չկարողանան ծանոթանալ գործի իսկության հետ»[3]:

Վանում նստող ռուսական փոխհյուպատոսը, ծավալուն զեկուցագիր ներկայացնելով Կ. Պոլսի դեսպանին, մանրամասնորեն նկարագրում է վիլայեթի, հատկապես Վասպուրականի հայության անտանելի վիճակը: Այստեղ մասնավորապես հաղորդվում է, թե 1891 թ. հունվար ամսին քաղաքի հայ ազգաբնակչությունը խաղաղ ցույց էր կազմակերպել նահանգապետ փաշայի նստավայրի, ինչպես նաև ռուսական հյուպատոսարանի առջև: Ցուցարարները բողոքում էին իրենց ազգակիցների ***անօրինակ ձերբակալությունների, կալանավորների նկատմամբ կիրառվող դաժան խոշտանգումների ու բռնությունների դեմ***[4]:

1890 թ. հունվարի 20-ին Կարինում թուրք ոստիկանները, տրորելով ավանդույթները, հրովարտակներն ու դաշնագրերը, «***մի քանի հարյուր մարդ ձերբակալեցին և բանտերում փակեցին***»[5]: Նույն օրերին ծավալված դեպքերի մասին մի այլ ականատես գրում էր. «Այժմ թուրք կառավարությունը վերջին ծայր կասկածանոք կդիտե Տաճկահայաստանի ամբողջ հայերը... Հայաստանի վիճակը շատ դառն է»[6]:

Այսպիսով՝ Աբդուլ Համիդը սառնասրտորեն նախապատրաստվում էր ***Հայոց ցեղասպանության***՝ հաշվի առնելով բոլոր հանգամանքները, նույնիսկ ***գենոցիդից*** հետո ստեղծված դրության պատասխանատվությունը:

---

[1] **АВПРИ**, Политархив, дело 3447, лл. 53-58, 1890.

[2] Նույն տեղում, թերթ 61-63:

[3] Նույն տեղում, թերթ 71-73:

[4] Նույն տեղում:

[5] *Զ. Կիրակոսյան,* Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), Երևան, 1980, էջ 417:

[6] *Լիամեն,* Նամակներ Հայաստանից, «Արաքս», գիրք Բ, Պետերբուրգ, 1890, էջ 133:

*

* *

1890 թ. դրությունն Արևմտյան Հայաստանում պայթունավտանգ էր: Մի կողմից Բ. Դուռը պատրաստվում էր ***Հայոց ցեղասպանության***, մյուս կողմից էլ արևմտահայությունը նախապատրաստվում էր ինքնապաշտպանության: Ի տարբերություն 1915 թ. Մեծ եղեռնի, «զուլումի» տասնամյակին արևմտահայությունն ուներ հայդուկային խմբեր (որոնց մասին կխոսենք աշխատության հետագա բաժիններում), քաղաքական որոշակի ուժեր ու ղեկավարություն, որն իր թույլ տված սխալներով հանդերձ, ***որոշակի ուղղություն էր հաղորդում հայ ազատամարտին,*** շատ նահանգներում կանխում զանգվածային ցեղասպանությունը: Այդուհանդերձ 1890-92 թթ. հայկական ջարդերն սկսվեցին և գնալով մեծ ընդգրկում ստացան[1]:

Ցեղասպանության սկզբնաթելերը գտնվում էին էրզրումի վիլայեթի վալիհանիստ Կարին քաղաքում, որը փաստորեն ողջ Արևմտյան Հայաստանի կենտրոնն էր, սիրտը: Այն փաստորեն Արևելյան Հայաստանի, այսինքն Ռուսաստանի սահմանակից նահանգն էր և ավելի քան հսկվում էր Բ. Դռան լրտեսական ողջ ոհմակի կողմից:

Ըստ թուրքական «աղբյուրների» տարածած ստահոդ լուրերի, իբրև թե, 1890 թ. հունիս ամսին Կարինի քաղաքային կայազորի պետ ***Ռահիմ փաշան*** մի անանուն մատնագիր էր ստացել, որով հաղորդվում էր քաղաքի Սանասարյան վարժարանում և հայոց հոգևոր առաջնորդարանի շենքում «***պահվող մի քանի հազար հրացանների և մեծ քանակությամբ մարտական փամփուշտների մասին***»[2]: Նման բովանդակությամբ, բայց մի այլ անանուն մատնագիր էր ստացել նաև Երզնկայում նստած, թուրքական IV բանակի հրամանատար և «համիդիե» գնդերի կազմավորումով զբաղվող, մուշիր Զեքի փաշան: Նրանք այդ լուրերն անմիջապես փոխանցեցին գինվորական նախարարին, իսկ վերջինս էլ հաղորդեց հայակեր ու մարդասպան սուլթան Համիդին:

Աբդուլ Համիդի անմիջական կարգադրությամբ, հուլիսի 6-ին սկսվեցին խուզարկությունները Սանասարյան վարժարանի, Ս. Աստվածածին եկեղեցու, հայոց առաջնորդարանի և շրջակայքի այլ շենքերում: Թուրքական VIII գնդի հրամանատար Սուլիհի փաշայի գլխավորած խուզարկուների բոլոր ջանքերն անցան ապարդյուն: Բնականաբար, թուրքերը ոչինչ չհայտնաբերեցին և չէին էլ կարող գտնել, քանի որ լուրերը սուտ էին և խնամքով պատրաստված Բ. Դռան լրտեսական գումարտակներում նպատակ ունենալով նաև գրգռել մահմեդական ամբոխին, ապա առիթ ստեղծել վաղամտածված ***հայկական ջարդերը***, քիչ անց նաև, ***ցեղասպանությունը*** իրականացնելու նպատակով: Խուզարկությունները և հայերի սրբությունների ոչնչացումը, ազգային-կրոնական զգացումների վիրավորանքները շարունակվեցին[3], որոնք ունե-

---

[1] Հայկական ջարդերի առաջին էտապի, հատկապես քրդական «***համիդիեների***» ***հայասպան*** քաղաքականության մասին տես ***Ե. Կ. Սարկիսյան,*** Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., Ереван, 1972, стр. 102-107. ***Ս. Մարկոսյան.*** նշված աշխատությունը, էջ 192-200: ***Հ. Ս. Պողոսյան,*** Սասունի պատմությունը, Երևան, 1985, էջ 180-185: ***Лорд Кинросс,*** նշված աշխատությունը, էջ 600-607: ***Ю. А. Петросян,*** Младотурецкое движение, Москва, 1971, стр. 160-165. «Հայ ժողովրդի պատմություն», ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հրատարակած բազմահատորյակի VI հատոր, Երևան, 1981, էջ 230-239:

[2] **ЦГВИАРИ,** ф. ВУА, дело 478, лл. 139-140.

[3] ***Е. К. Саркисян***, նշված աշխատությունը, էջ 103: Տես նաև **ЦГВИАРИ,** ф. ВУА, дело 881, лл. 8-10. Այդ մասին ընդարձակ հաղորդագրություն էր ուղարկել Կ. Պոլսի ռուսական դեսպանին էրզրումի գլխավոր հյուպատոսը 1890-ի հուլիսի 21-ին: Տես **АВПРИ,** Политархив, дело 3447, лл. 1-32.

ցան արյունոտ շարունակություն: Այն, ինչին ձգտում էին հասան սուլթան Համիդն ու նրան սպասարկող թուրքական բարձրաստիճան պաշտոնյաները, հատկապես «համիդիե» հայակուլ հեծելազորը գլխավորող Զեքի փաշան:

1890 թ. հուլիսի 18-ին հայոց Ս. Աստվածածին եկեղեցու բակը ներխուժած թուրք ոստիկանները հանդիպեցին պատարագի եկած հայ համայնքի ներկայացուցիչների զայրացած դիմադրությանը: Ժողովրդի համբերության բաժակն արդեն լցվել էր և այլևս դիմանալ չէր կարող: «Պաշտպան Հայրենյաց» նախկին կազմակերպության ղեկավարներ Խաչատուր Կերեքջյանը, Գևորգ Չիլինկիրյանը, հնչակյանների ներկայացուցիչ Հակոբ Իշխալացյանը, գլխավորելով երիտասարդների մի մեծ խմբի, կազմակերպեցին դիմադրությունը թուրքական զափթիեներին: Թուրքերը կրակ բացեցին դիմագրավողների վրա: 20-ից ավելի հայեր սպանվեցին[1]: Հաջորդ օրը շարունակվեցին ջարդերը հայկական մյուս թաղամասերում: Ձերբակալվեցին մեծ թվով երիտասարդներ[2]:

1890 թ. հունիսի 8-ին էրզրումից գեներալ-մայոր ***Դենետին,*** գաղտնագրված ծածկանշաններով հաղորդում էր. «Անկարգությունները քաղաքում գնալով մեծանում են: Հյուպատոսությունը պաշտպանվում է զինվորների կողմից: Հայերից զոհերի թիվը գնալով ստվարանում է: Անգլիական հյուպատոսությունը ենթարկվեց հարձակման: Ֆրանսիական հյուպատոսի տան ապակիները ջարդեցին: Սպասվում է հայերի զանգվածային կոտորած»[3]: Իրոք, վիճակը գնալով դառնում էր անկառավարելի:

Կարինում ծավալված իրադարձությունները Հայաստանի երկու հատվածների մտավորականությանը, ազատագրական շարժման առաջնորդներին հարկադրեցին լրջորեն խորհել արևմտահայության ճակատագրի մասին: Նրանք արդեն հստակ պատկերացնում էին, որ նոր գողգոթա էր պատրաստվում իրենց ժողովրդի դեմ: Դրվեց ***ի՞նչ անել*** հարցը, որին իբրև պատասխան (ճիշտ թե սխալ–այդ ուրիշ առիթի) նրանք հարմար համարեցին բողոքի ցույցեր կազմակերպել սուլթանի նստավայրում և եվրոպական դեսպանների միջոցով Հայկական հարցի վրա հրավիրել Արևմուտքի տերությունների ուշադրությունը:

1890 թ. նոյեմբերի 1-ին Կ. Պոլսի ռուսական դեսպան ***Ալեքսանդր Նելիդովը*** արտաքին գործերի նախարար ***Գիրսին*** ճեպագրով հաղորդում էր. «Հուզումն ու անբավականությունը հայ բնակչության չափավոր մասի միջավայրում աստիճանաբար սաստկանում է: Հայերը ձգտում են մեծ տերություններին, հատկապես Ռուսաստանին, հարկադրել զբաղվելու Հայկական հարցով և համառորեն պնդում են, որ կատարվեն Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով խոստացված բարենորոգումները»[4]: Այդ մտահոգությամբ կազմակերպվեց ***երկրորդ քայլը,*** այս անգամ նախաձեռնողները եղան «հայ երևելիները»:

1890 թ. հուլիսի 15-ին Կարինի դեպքերից ճիշտ մեկ ամիս անց, մայրաքաղաքում և ընդհանրապես Թուրքիայի ողջ տարածքում իսլամապաշտները տոնելու էին իրենց կրոնական գլխավոր տոներից մեկը՝ ***Կուրբան բայրամը:*** Հնչակյան կուսակցության ղեկավարները, հատկապես ***Ռուբեն Խանազատը, Գ. Կաֆյանը*** (Շմավոն), ***Հարություն Ճանկուլյանը, Հ. Բոյաջյանը*** (Մուրադ), ***Միհրան Տամատյանը, Գարեգին Աչգապաշյանը, Գ. Գլչյանը, Մ. Վարդանյանը*** հուլիսի 12-ին գաղտնի խորհրդակցություն անցկացրին և որոշեցին ցույց կազմակերպել Ստամբուլում[5]:

---

[1] «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, հ. VI, էջ 233:

[2] **АВПРИ,** Политархив, дело 3447, N 233, лл. 28-30.

[3] Նույն տեղում, дело 1630, лл. 19-20.

[4] Նույն տեղում, дело 3431, лл. 172-173.

[5] ***Е. К. Саркисян,*** նշված աշխատությունը, էջ 105:

Նրանք ցույցի կազմակերպման վայրն ընտրեցին *Գում-Գափուի* Մայր եկեղեցին, որտեղ և պիտի պատարագի գար Կ. Պոլսի հայոց պատրիարք *Խորեն Աշըղյանը:* Օգտագործելով էրզրումի դեպքերի պատճառով ժողովրդի մեջ ամբարված զայրույթը՝ հնչակյանները հուլիսի 15-ի առավոտյան, պատարագի թեժ պահին, փաստորեն գրավեցին Մայր եկեղեցին, Հարություն Ճանկուլյանը բեմ բարձրացավ, կարդաց սուլթանին ուղղված բողոքագրի տեքստը, դատապարտեց արյունահեղությունն էրզրումում: Ժողովրդին առաջարկեց պատրիարքի առաջնորդությամբ գնալ դեպի Եըլդըզ Քյոշք, այստեղ Համիդին հանձնել կարդացած գրությունը[1]:

Հ. Ճանկուլյանը ցուցարարների զայրացած ճիչերի ու աղաղակների մթնոլորտում Մայր եկեղեցու պատից պոկեց, ոտքերի տակ տրորեց Համիդի նկարը և թուրքական պետական զինանշանը[2]: Ցուցարարները, իրենց հետ վերցրած Կ. Պոլսի պատրիարքին, ճանապարհին անընդհատ ստվարացող բազմության աջակցությամբ, աղմուկ-աղաղակով շարժվեցին դեպի սուլթանի որջը:

Ցույցի ընթացքի մասին լուրը վախկոտ ու կասկածամիտ Աբդուլ Համիդին հաղեց հավասարակշռությունից: «Նա անմիջապես որոշեց թողնել հանդիսավորությունը և բարձրանալ պալատ՝ համապատասխան կարգադրություն անելու: Դեր-վիշ-փաշան, հանգստացնելով «մեծ խալիֆին», զորքը վերցրած, գնաց ցուցարարներին ընդառաջ»[3]:

Թուրք հրամանատարի սպառնալից պահանջը ցուցարարներից ցրվել և վերջ դնել «անկարգություններին», ոչ մի ազդեցություն չունեցավ, քանզի ժողովրդի զայրույթին չափ ու սահման չէր մնացել: Հնչեցին կրակահերթերը: Սալահատակները կարմրեցին միայն դանակներով ու փայտերով զինված, փաստորեն անզեն հայերի արյամբ: Զոհերի թիվը գնալով մեծացավ, իսկ վիրավորները, բանտարկյալները հասան հարյուրների:

Այսպիսով Բ. Դուռը հաշվեհարդար տեսավ իրար օրգանական շարունակություն կազմող էրզրումի և Կ. Պոլսի Գում-Գափուի ցուցարարների հետ, կատարեց բանտարկություններ, կազմակերպեց դատական պրոցեսներ և նախապատրաստվեց առաջիկա *հայկական ցեղասպանությանը*[4]:

2. Հայ-քրդական փոխհարաբերությունները: «Համիդիեների» դերը հայկական ջարդերի ժամանակ

Համիդ II-ը սուրը պատյանից հանել էր: Բ. Դուռն անսքող նախապատրաստվում էր ամենուր հիմնովին ջարդեր կազմակերպել արևմտահայերի նկատմամբ: Այդ բանը զգում էին ոչ միայն հայ ժողովրդի ղեկավարները, հոգևոր պետերը, այլև Կ. Պոլսում հաստատված օտար երկրների դեսպանները: 1890 թ. օգոստոսի 1-ին Գերմանիայի հյուպատոսը Ստամբուլից հաղորդում էր. «*էրզրումում Անգլիայի*

---

[1] **АВПРИ,** Политархив, дело 3447, лл. 32-34.

[2] *Հ. Ճանկուլյան,* Հիշատակներ հայկական ծգնաժամեն, մասն Գ., Կ. Պոլիս, 1913, էջ 31:

[3] **АВПРИ,** Политархив, дело 3447, лл. 29-32.

[4] Նույն տեղում, թերթ 33-34: Տես նաև *Е. К. Саркисян,* նշված աշխատությունը, էջ 105:

հյուպատոսի զեկույցում նկարագրվում է հատուկ կազմակերպված ընդհանուր հետապնդում մի ամբողջ ազգի (հայերի) նկատմամբ»[1]:

Ահա մի ընդարձակ քաղվածք գերմանական և, հատկապես, ավստրիական փաստաթղթերի հիման վրա գրված *Արտեմ Օհանջանյանի «1915 թվական.* Անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրեր Հայոց ցեղասպանության մասին)» փաստառատ մենագրությունից: Մենագրությունը առաջին անգամ լույս է տեսել 1989 թ. Վիեննայում, ապա ցեղասպանության թանգարան–ինստիտուտի հանձնարարությամբ այն թարգմանվել և 1997 թ. հրատարակվել է Երևանում[2] (թարգմանիչ՝ Լևոն Սարգսյան):

Արտեմ Օհանջանյանը գրում է. «Հայերի հետապնդումներն ուժգնացան, երբ 1893-ի ապրիլին հայերը տարածեցին Մերսովանի ամերիկյան քոլեջում պատրաստված թռուցիկները: Ամենուրեք ծերբակալություններ էին տեղի ունենում: Դրան հաջորդեցին խռովությունները Յոզղաթում: Այս բոլոր խնդիրները դիվանագիտական ներկայացուցիչներին Կ. Պոլսում մտածել էին տալիս, որ 1894-ին համընդհանուր հեղափոխություն պիտի պայթի: Քչերից մեկը, որ չէր հավատում հեղափոխությանը, մայոր Գոլցն էր: Նա 1889-ին Կ. Պոլիս եկած գերմանական ռազմական միսիայի պետն էր: Նրա իրավասության տակ էին ռազմական կրթության հարցերը: «Սուլթանն, անշուշտ, կհաղթահարի այս ճգնաժամը՝ փորձված բյուզանդական եղանակով իրար դեմ հրահրելով իր հպատակներին»,– գրում էր Գոլցը իր օրագրում: Այսպես էլ եղավ: Աբդուլ Համիդը մահմեդականների դժգոհություններն ուղղեց հայերի դեմ»:

Շեյխ Ֆաիզ էլ Ղասեյնը *«Թուրքական տիրապետությունն ու Հայաստանի ցավի ծիչը»* գրքում գրում է. «Սուլթանի ընտրած գործիքը քրդերն էին՝ հովիվների լեռնական մի ցեղ Թուրքիայի արեւելյան գավառներից: Նախկին սուլթանները փորձել էին նրանց որոշ կարգ ու կանոն սովորեցնել, իսկ Աբդուլ Համիդը զինեց ժամանակակից հրացաններով եւ, որպես համիդյան ժանդարմերիա, ուղղեց հայերի դեմ: Սպանությունն ու կողոպուտն այն ծառայություններն էին, որոնք պահանջվում էին քրդերից, եւ դա միաժամանակ այն վարձատրությունն էր, որը նրանք ստացան դրա համար: Այստեղ, ինչպես և Մակեդոնիայում, այս քաղաքականության արդյունքն անարխիան էր ու արյունահեղությունը, եւ դա Աբդուլ Համիդի սրտով էր: Հայերը դիմեցին պատասխան միջոցների: Լեռների որոշ բնակիչներ ըմբոստացան: Այդ ժամանակ քրդերին անմիջապես ուժեղացրին օսմանյան կանոնավոր զորամասերով եւ բորբոքեցին Փոքր Ասիայի թուրք մահմեդականների մոլեռանդությունը»[3]:

Քնած չէր հայ մտավորականությունը: Տեսնելով, որ Համիդն ամեն ինչ անում էր քուրդ ցեղապետներին գինելու և նրանց ձեռքերով նաև հայ ժողովրդին ոչնչացնելու նպատակով՝ իրենք ևս որոշ միջոցների դիմեցին հայ-քրդական հարաբերությունները լավացնելու ուղղությամբ: Եվ դա արվեց ոչ թե այդ օրերին, *այլև շատ վաղուց:*

Հայ և քուրդ ժողովուրդների փոխհարաբերությունների *ցավագին* խնդիրը, բնականաբար, քննարկման, մտաբախումների ու ասուլիսի առարկա է դարձել վաղնջական ժամանակներից: Այդ վերջին կես հազարամյակում երկու ազգերը գտնված լինելով միևնույն բռնապետության երկաթյա մագիլներում՝ պետք է որ մտահոգվեին

---

[1] *J. Lepsius.* Die Grosse Politik der Europäischen Kabinette 1871-1914. Berlin, 1922, S. 190.

[2] *Արտեմ Օհանջանյան,* 1915 թվական. Անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրեր Հայոց ցեղասպանության մասին), Երևան, 1997:

[3] Նույն տեղում, էջ 21: Տե՛ս նաև *Sceik Faiz El-Chassein*, Die Türkenherrschaft und Armeniens Schmerzensschrei..., Zürich, 1918, S. 15.

պայքարի մարտադաշտ նետվելու, միասնաբար ազատագրվելու և սեփական պետություններ վերընձյուղելու գաղափարին:

Դժբախտաբար այդպես չստացվեց, քանզի հնարավորություններն այլ էին, ցանկություններն ու զարգացման մակարդակը տարբեր: Իհարկե, ցանկալի ու անհրաժեշտ այդ *միասնության խաթարման* ճանապարհին մեծ էին թեոկրատիկ առանձնաշնորհումներով ու հոգևոր, ապա աշխարհական անսահմանափակ իրավունքներով «*օժտված*» թուրք սուլթանների, նրանց սպասարկող պետական ապարատի Բարձրագույն Դռան իսլամապաշտ պաշտոնյաների, քրիստոսասպանների, առավել ևս հայասպանների անմարդկային դերն ու անհավատալի դաժանությունները:

Կասկածից վեր է, որ հանուր մարդկության արշալույսից պատմության ծայրաթելերը սկզբնավորած հայ ժողովուրդը, իր հազարամյակների *ավանդություններով, ինտելեկտով, զարգացման մակարդակով* անհամեմատ ավելի բարձր էր կանգնած թալանի ու կողոպուտի մեջ վարժված, մակաբուծային կյանքով ապրող, դեռևս օրինավոր գիր ու դպրություն չունեցող տիրապետող թուրք ազգից և քաղաքական իշխանությամբ պայմանավորված գերակայող մահմեդապաշտ-իսլամներից:

Վայրենաբարո, բարբարոս այդ ցեղախմբերը միջինասիական ավազապատ անապատներից իրենց հետ բերել էին «*վրնջացող նժույգներ*», ճանապարհին ընկած նվաճված ժողովուրդների վրա փորձարկած «*արյունաթաթախ սրեր*»: Մինչև XX հարյուրամյակի շքամուտքն էլ թուրքերը մնացին իբրև «*վայելող ազգ*», աշխատելու, արարելու վարժված չլինելով, ապրեցին քրիստոնյա, հպատակ ազգերի աշխատանքի հաշվին նրանցից խլելով ոչ միայն քրտնաթոր ջանքերի դժվարաստեղծ պտուղները, այլև աստվածատուր տաղանդը, հանճարի փայլատակության արտահայտություն դարձած միտքը, բնական գեղեցկությունը, կառուցողական արվեստն ու վերակառուցողական հմտությունը: Բռնության ուժին կոթնած, թուրք արևախանձ, կրկնագագաթ, մազակալած արտաքին ունեցող այդ ռասան փոխեց ամուսնության ձևն ու բովանդակությունը, քրիստոնյաներից խլելով կինն ու աղջիկը, վերափոխեց իր արտաքինը, բայց ոչ դաժան հոգեկան աշխարհն ու արյունախում բնավորությունը:

Թուրքը մնաց որպես թուրք՝ ոչինչ չմոռանալով և ոչինչ չսովորելով: Ռուս նշանավոր դիվանագետ, արևելագետ *Ա. Կոլյուբակինը* լավ գիտեր Թուրքիան և թուրքերին: Նա ճիշտ էր բնութագրում, որ թուրքը եղել էր և մնում էր ռազմատենչ, վաչկատուն, թալանով ու ավարառությամբ պարապող, անընդունակ մի ցեղ, որը ոչ միայն անկարող էր հոգևոր և նյութական արժեքներ ստեղծելու, այլև սեփական վաստակով ապրելու[1]: «*Թուրքը*, – շարունակում է *Ա. Կոլյուբակինը*,– *ծույլ էր, այլասերված ու ծախու: Հարեմային կյանք, հարբեցողություն, թղթախաղ, բամբասանք ու բանսարկություն՝ ահա այն ամենը, ինչը խժռում էր նրա ամբողջ ժամանակը և ունակությունները* (ընդգծումները մերն են –Հ. Ղ.)»[2]: «Երիտասարդ կամ «նոր» թուրքեր կոչվածները,– գրում է Հայկազն Ղազարյանը,– ավելի թթու ազգայնամոլներ դարձած էին. *գառան մորթու տակ իրենց մեջ նստած էր հին գայլը* (ընդգծումները մերն են –Հ. Ղ.)»[3]:

Բուլղար նշանավոր հրապարակախոս Դիմիտր Ա. Սպիրովը «Հայաստանը և սուլթան Աբդուլ Համիդը» ենթավերնագրված աշխատության էջերում խոր վերլուծության է ենթարկում ու դատապարտում թուրքական ցեղախմբերի նողկալի վերաբեր-

---

[1] *Ս. Կ. Պողոսյան*, Արևմտահայությունը ցեղասպանության շեմին, Երևան, 1997, էջ 12:

[2] *А. Колюбакин*, Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, Тифлис, 1888, стр. 158.

[3] *Հայկազն Գ. Ղազարեան*, Ցեղասպան թուրքը, Պէյրութ, 1968, էջ 10:

մունքը քաղաքակիրթ մարդկության հանդեպ՝ արձանագրելով, որ չնայած թուրքերը դարեր առաջ կործանեցին բյուզանդական երբեմնի հզոր կայսրությունը, տիրացան եվրոպական մի շարք այլ երկրների, այդուհանդերձ ոչնչով չփոխվեցին: Ճիշտ է, նրանք շփվեցին Եվրոպայի տնտեսական կյանքին, այս կամ այն կերպ աղերսվեցին նրանց լուսավորությանն ու մշակույթին, բայց կամ չկարողացան, կամ էլ չուզեցին յուրացնել այդ ամենը՝ մնալով իբրև վայրագ ցեղ, արժանանալով ստրկացված ժողովուրդների ատելությանն ու արհամարհանքին[1]: Բուլղարացի ժամանակակցի, ականատեսի ճշմարտացի դիտարկմամբ՝ կրոնական մոլեռանդությունն է գլխավոր ազդակներից մեկը, որ թուրքական ցեղերին դատապարտել է հետամնացության, ընչաքաղցության ու խավարամոլության: Հեռանկարում ևս Սպիրովը թուրքերի ցեղային նկարագրի ոչ մի բարեփոխում կամ ազնվացում չի նկատում: Ահա թե ինչպես է բնութագրում XIX դարավերջի Թուրքիան, Համիդի գլխավորած թուրքերին. «Թուրքիայի նման մի պետությունից, որտեղ ամբողջ բնակչության ճակատագիրը կախված է զինվորականից կամ ցանկացած ասիացու դեղին-կանաչ չալմայից, որի տերը բախտի բերմամբ Ստամբուլում դարձել է մեծավոր, և որտեղ «արդարադատության» կամ «սոֆտայականն» կառավարության որևէ անդամի կես կամ քառորդ գլխի հիվանդությունը դարերով բռնատիրական այս պետության մեջ համարվում է կարևոր իրադարձություն, որտեղ բաղնիք գնալը կամ չգնալը, պալատական հարեմները, սքանչելի հարճերը դառնում են քաղաքական տագնապ և դիվանագիտական խնդիր, ի՞նչ կարող են սպասել *խեղճ հայերը և Բալկանյան թերակղզու քրիստոնյաները:*

Թուրքը մինչև ուղեւուծուծը մոլեռանդ է: Ոչ մի քաղաքակրթություն կամ մշակույթ չի կարող ազդել նրա վրա: Թուրքի մոլեռանդ ուղեղն այնպես է թունավորված և հուսցված մահմեդական ուսմունքներով, որ սատանայական ոչ մի խունկ չի կարող ազդել նրա վրա:

Կան թուրքեր, որոնք իրենց կրթությունն ստացել են Եվրոպայում, խոզի ճարպ են ուտում և թասով օղի են խմում, սակայն մոլեռանդությունից չեն ազատվել: ***Ընդհակառակը, ապացուցված ճշմարտություն է, որ կրթված թուրքը ավելի դաժան է, ավելի արյունարբու:*** Սուլեյման փաշան, որը ռուս-թուրքական վերջին պատերազմի ընթացքում ամայացրել է ամբողջ Թրակիան, սրի քաշել Ստարա-Զագորայի բնակչությանը և բազում ծաղկուն քաղաքներ, առաջին թուրք գեներալն էր, որ ամենից ուսումնականն էր, ամենից կրթվածը: Նա արժանավոր Մոլտկեի աշակերտն էր, և վերջինս մեծ հույսեր էր կապում Սուլեյմանի հետ: Գերմանական զինվորական շրջանների հանձնարարությամբ Բարձրագույն Դուռը այդ Սուլեյմանին հանձնել էր իր լավագույն զորքերը, որոնք, ինչպես հայտնի է մեր ընթերցողին, փոխանակ կռվելու մոսկվացու դեմ, պատրաստվեցին բնաջնջել անպաշտպան բուլղարներին: ***Կամ՝ Միտհադ փաշան, անկասկած, թուրք պետական այրերից ամենակրթվածը, բայց ով չգիտի, թե ինչպիսի գազանն էր այդ հոգեսպանը: Ով չգիտի, որ Միտհադ փաշան մինչև ուղեւուծուծը ֆանատիկոս էր և արյունարբու քրիստոնեատյաց:*** Քանի քրիստոնյա հոգիներ ուղարկեց նա Իբլիսին երկրպագելու: Հաֆըզ փաշան, որ ավերակների վերածեց Պանագյուրիշտեն, մի ֆրանսիական ուսումնարանի սան էր: Թուրքն օրը յոթ անգամ աղոթում է ալլահին և այս յոթնապատիկ աղոթքներում անընդհատ միևնույն բանն է խնդրում մարգարեից. երկրի երեսից բնաջնջել գյավուրական ողջ աշխարհը՝ յա-

[1] *Դ. Ա. Սպիրով,* Հայերի սարսափելի կոտորածները (1894-1896 թթ.), Երևան, 1997, էջ 6: «Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի» հրատարակչություն, *Կարո Ճինգոզյանի* թարգմանությամբ և առաջաբանով:

քաղաքի միջոցով: Ոչ մի քաղաքակրթություն ի զորու չէ բարելավելու թուրքի բնույթը: Ավելի քան 80 տարի Թուրքիան գոյատևում է *խաբեությամբ:* Շնորհիվ խելապակաս թուրքասերների, ավստրիական ջհուդները իրենց փողերը «պետական փոխառություն» բարետես պիտակի տակ տալիս են Թուրքիային՝ տնտեսապես, քաղաքականապես ու բարոյապես բզկտված այս պետությանը, որ անամոթաբար այդ նպաստների հաշվին է պահպանում իր հյուծախտավոր կյանքը»[1]:

Այս ընդարձակ մեջբերումը մենք կատարեցինք, քանզի այն ստեղծվել էր 1890-ական թվականներին և մնացել բնութագրական, այժմեական, հետագա տասնամյակների Թուրքիայի ու թուրքերի մասին:

Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության պատմությունն իր ողջ գիտակցական կյանքի ընթացքում հետազոտել է անվանի մտավորական Գերսամ Ահարոնյանը: Նա «Զարթոնք» պարբերականի խմբագիրն էր, Բեյրութում Ռամկավար ազատական կուսակցության վարիչներից, «Յուշամատյան Մեծ եղեռնի» ստվարածավալ հատորի գլխավոր խմբագիրներից մեկը: Ահա թե նա ինչպես է բնութագրում օսմանյան Թուրքիան. «Պատմության այն սակավաթիվ կայսրություններեն եղած էր օսմանյան կայսրությունը, *որոնք կիատկանշեին միայն կողոպուտով ու քանդումով, տխմար շահագործումով և անհաշիվ մսխումով:* Ոչի՛նչ շինեցին *օսմանցիք, ոչ մեկ հառաջադիմություն արձանագրեցին: Տգրուկի պես փակած իրենց հպատակ քրիստոնյա, թե իսլամ ժողովուրդների կռնակին և անհագորեն ծծեցին անոնց արյունը: Առույգ և զորավոր մնացին՝ այնքան ատեն որ ծծելիք առատ արյուն կար: Երբ աստիճանաբար արյունաքամ եղան զոհերը՝ նույն համեմատությամբ տկարացավ տգրուկն ալ...:* Զարմանալի չէ բնավ, որ անիկա արագ քայլերով ընկրկեցավ և տակավ կծկվեցավ իր պատյանին մեջ (ընդգծումները մերն են–Հ. Ղ.)»[2]:

Թուրքիան, նրա սուլթանն ու Բ. Դռան պաշտոնյաները *հայերի ցեղասպանությանը լրջորեն նախապատրաստվելիս* որոշեցին օգտագործել քրդական ցեղապետներին:

Քուրդ ժողովուրդը, թուրքերի համեմատ, ճիշտ է, հնամենի անցյալ ուներ, բայց զարգացման մակարդակով, եթե ոչ հավասար, գոնե բարձր չէր կանգնած ասպատակող, ավարառության ու կողոպուտի վարժված թուրքերից: Մեծ մասամբ խաշնարածությամբ պարապող, տարբեր իրարամերժ աղանդների (շիա–սյունի) տրոհված քրդական ցեղախմբերը, դյուրաթեք իրենց բնավորությամբ, հեշտությամբ կաշառվում էին Ռուսաստանի, Իրանի, նույնիսկ Արևմուտքի դիվանագետների կողմից և ծառայում նրան *ով շուտ կվճարեր, ով շատ կվճարեր:* Թուրքական Բարձրագույն Դռան պաշտոնյաները այդ բոլորը նկատում էին, հարմար պահերին քրդական աշիրեթապետերին օգտագործում էին իրենց «թշնամիների» դեմ մղվող պայքարում:

Քրդական ցեղախմբերի վիճակը վատթարացավ Բեռլինի վեհաժողովից քիչ անց: Պետական միջամտությամբ քրդական քաղաքական կենտրոնները հերթականությամբ բռնեցին տարրալուծման ճանապարհը[3]: Անկախության ձգտումներն *աստիճանաբար մարելով՝* «ուժերն օսմանյան բանակի արշավանքներեն ջլատվեցին»: Ներքին կյանքը պառակտվեց և տեղի տվեց աշիրեթական համախումբ գոյատևմանը: Թուրքական տիրապետությունը *փաստական դարձավ* թե՛ Արևմտյան Հայաստանի և թե՛ Քյուրդիստանի վրա: Երեկվա սարսափազդու քրդական ցեղա-

---

[1] *Դ. Ա. Սպիրով,* նշված աշխատությունը, էջ 28-29:

[2] *Գերսամ Ահարոնյան,* Մեծ երազին ճամբուն վրա, Բ տպագրություն, Պեյրութ, 1964, էջ 57-58:

[3] Սանրամասն տե՛ս *Կ. Մասունի,* Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները (ժե դարեն մինչև մեր օրերը), Պեյրութ, 1969, էջ 156-157:

խմբերը ինչքան մոտենում էին դարավերջի տասնամյակին, այնքան «անվտանգ էին դառնում կենտրոնական կառավարության համար»:

«Շեյխական շրջանի փորձերն ալ,– գրում է Կ. Սասունին,– եկան ու հանգեցան Շեյխ Իբադուլլահի շարժման, որուն հետևանքով *սուլթան Համիտ մասամբ փոխեց իր քաղաքականությունը քյուրտերու հանդեպ, ու որդեգրեց ավելի բազմակողմանի ընթացք մը, որը կոչված էր ամբողջովին քյուրտ ազգը անարգ գործիքի մը վերածելու* (ընդգծումները մերն են–Հ. Ղ.)»[1]:

Խորամանկ, դաժան ու միաժամանակ վախկոտ վերջին սուլթանը, համախսլամական ներշնչումներով ու մահմեդական կրոնի ուժով, անձամբ իրեն աղերսեց *քյուրդիստանի շեյխերին:* Նա այս դեպքում սուլթանի *քաղաքական իր հզոր ուժերին* գումարում էր *խալիֆի հոգևոր* իրավասությունը և որպես իսլամապաշտների *քրդական վերնախավին դարձնում էր ձեռքի գործիք:*

XIX դարի 80-ականներից սկսած *Եըլդըզ Քյոշքից* դուրս եկած բանավոր, թե գրավոր հրահանգներով Աբդուլ Համիդը քրդական ցեղախմբերին, հատկապես շեյխերին թշնամացնում էր հայ ժողովրդի հետ: Նա արևմտահայությանը ընդհանրապես օրենքից դուրս էր համարում, նրանց դիտում «երդվյալ թշնամի», «խռովարար», «անշնորհակալ ազգ», միաժամանակ լայն արտոնություններ էր տալիս *քրդերին,* հատկապես մահմեդական քրդերին կողոպտելու, թալանելու, սպանելու հայ ժողովրդին, չխնայելով ոչ մեկին *անկախ ապրելու վայրից, ունեցվածքից, զբաղմունքից,* դասային ու դասակարգային պատկանելությունից: *«Թալանն ու կողոպուտը կդառնային քրտության օրինավոր միջոցները, որոնք լիովին կգոհացնեին քյուրտ ղեկավարներու և աշիրեթներու տնտեսական պահանջները (անշուշտ, քրտական հասկացողությամբ)»*[2]:

Բ. Դուռն օգտագործեց նաև միջազգային դիվանագիտության, սկզբում՝ քույլտըվությունը, հետագայում նաև երկերեսայնությունը «Հայկական հարցի» նկատմամբ:

Հայտնի է, որ ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմը վերջնագծով եզերող Բեռլինի (1878) կոնգրեսը ճակատագրական դեր խաղաց արևմտահայոց կյանքում: Արտաքինից արհամարհվող թուրքական խորամանկ դիվանագիտությունը, օգտվելով եվրոպական մեծերի միջև խորացող հակասություններից, թեկուզև տարածքային զիջումների (Կիպրոս) գնով, կարողացավ փոխել Սան Ստեֆանոյի (1878) պայմանագրի ոչ միայն ձևը, այլև՝ բովանդակությունը: Հայոց հարցին վերաբերող 16-րդ հոդվածը դիմաշրջվեց 61-ի: Ռուսաստանին միացվող հայկական հողերը կիսով չափ կրճատվեցին: Դրանց հաշվին երկաթյա կանցլերը (Օտտո Բիսմարկը) «ազնիվ մակլերի» (մակլերն ազնիվ լինել չի կարող) անուն վաստակեց, Գերմանիայի տնտեսական ու քաղաքական շոշափուկները տարածեց ողջ Թուրքիայով մեկ:

Խորամանկ Ալբիոնն էլ փաստորեն բռնազավթելով ռազմաստրատեգիական հույժ կարևոր նշանակություն ունեցող Կիպրոս կղզին՝ հեշտությամբ ընդառաջեց Համիդ մարդասպանի ձայնափող դարձած, ազգությամբ հույն, բայց թուրքացած, արտաքին գործերի նախարար *Կարաթեոդոր* փաշայի պահանջներին:

Հայ ժողովրդի համար ամենաողբերգականը երկուսն էին, որոնք, ճիշտ է, ոչ հավասարաչափ, բայց և այնպես խիստ բացասական դեր խաղացին նրա հետագա ընթացքում: 1. Ռեֆորմների հսկողության իրավունքը Ռուսաստանից վերցվեց և դրվեց եվրոպական տերությունների «ուսերի» վրա, որը նշանակում էր ոչնչացնել այդ ակնթարթի դերը հայ ժողովրդի պաշտպանության գործում: 2. Բ. Դռանը հանձնարար-

[1] *Կ. Սասունի,* նշված աշխատությունը, էջ 157:

[2] Նույն տեղում:

վում էր հայ ժողովրդին պաշտպանել ոչ թե Թուրքիայի ու թուրքերի բարբարոսական բռնություններից, այլ *քրդերի ու չերքեզների*՝ Հայաստանում կատարած ապատակություններից:

Արյունարբու սուլթանը կարծեք թե հասել էր իր գլխավոր բաղձանքին: Օգտագործելով հարմար պահը, նա կարողացավ *ոչ միայն սառեցնել հայ-քրդական* հարաբերությունները, բացառել իր բռնապետության դեմ հորիզոնից երևացող երկու ժողովուրդների միասնական պայքարի գաղափարը, այլև նրանց թշնամացնելով իրար դեմ, հասավ «բաժանի՛ր, որ տիրես» հանրահայտ նպատակակետին:

Անշուշտ, նման գործողության դեպքում սուլթանի հաջողության հասնելու գործում պակաս դեր չխաղացին քրդական բեկերի, հատկապես շեյխերի զարգացման ցածր մակարդակը, նրանց այն շիլ ընկալումը, թե սուլթանական բռնապետության դեմ ուղղված հայ ժողովրդի ազգային-ազատագրական ոգորումները ուղղված էին նաև քուրդ վերնախավի դեմ[1]:

Նման բարդ և անընդհատ բարդացող իրադարձությունների ընթացքում հայ ժողովրդի ընտրանին, հոգևոր ու աշխարհիկ գործիչները ևս այդ ծանր կացությունից դուրս գալու ելք էին որոնում: Երկու ծանր քարերի արանքում ընկած հայ մտավորականությունը, երկար մտածելուց, ազգովի քննարկելուց հետո, ելքեր էր մատնանշում:

Մ. Խրիմյանն իր աստվածաբանական քերթվածքներով ու դիվանագիտական մուրիկությունից հանգած եզրահանգումներով, գրչով ու խոսքով, դպրոցաշինությամբ և հրապարակախոսությամբ, ջանում էր կրթել քուրդ բարբարոս ցեղապետներին, ընդհանրապես լուսավորության և կրթության միջոցներով բարձրացնել քուրդ ժողովրդի զարգացման մակարդակը, դարբնել հայ-քրդական դաշինքը և դրանով իսկ փոքրացնել «անսահման չարիքը» դամոկլյան սրի նման արևմտահայության գլխին կախված նրանց գործողությունները:

Հայ-քրդական խրիմյանական դաշինքին վերաբերող ուսմունքը տիրապետող դարձավ և՛ արևմտահայ, և՛, հատկապես, արևելահայ մտավորականության լայն շրջաններում: Գործի լծվեցին բոլորը ամեն մեկն ինչքան կարող էր, ինչպես կարող էր: Րաֆֆին իր հանճարի փայլատակումները կազմող գործերով, հատկապես «Կայծեր» վեպով, Գր. Արծրունին իր փայլուն հրապարակախոսությամբ «Մշակ» պարբերականով, Ա. Թոխմախյանը կարդացած հրապարակային դասախոսություններով, երկրի ամեն անկյուն թափանցող գործնական խոսակցություններով, Գարեգին Սրվանձտյանցը համով-հոտով զրույցներով, բանահավաքի մեծ տաղանդով, ճիգ ու ջանք չէին խնայում բարեկամանալ քրդերի հետ, կարողանալ չեզոքացնել այն ծանր հարվածները, որոնք Համիդը նախապատրաստում էր իջեցնել հայ ժողովրդի գլխին:

Խնդիրը համազգային կերպարանք ստացավ: Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը, ապագա «Արմենական» կուսակցության հիմնադիր, սրի նման փայլատակող գրչի ու գրելու արվեստին տիրապետող Մկրտիչ Փորթուգալյանը, Վարագա վարժարանի արծիվ դարձած սաները, Թիֆլիսի հայկական կենտրոնում խարսխված մտավորականները, գործով ու խոսքով ձեռնամուխ եղան «բարեկամանալու» քրդերի հետ: Դժբախտաբար այդ բոլորի թափած ջանքերն էլ ի դերև ելան: Լուսավորելու միջոցով քրդերին չեզոքացնելու նրանց քաղաքականությունը հաջողությամբ չպսակվեց:

---

[1] *Х. Ф. Б. Линч,* "Армения, путевые очерки и этюды". Перевод с английского ***Елизаветы Джупковской,*** Тифлис, 1910, стр. 6. Տե՛ս նաև *Vahakn N. Dadrian,* The History of the Armenian Genocide, Oxford, 1995, p. 61-104.

Դրան խանգարեցին մի քանի հանգամանքներ: Նախ սուլթանն օգտագործեց քրդերի կրոնական պատկանելությունը, այսինքն՝ *իսլամը,* և խալիֆի իր բարբաջանքներով, կարողացավ սրել Քրիստոսի և Մուհամեդի ուսմունքների միջև եղած հակամարտությունները: Մինչ այդ մի կերպ «տանելի» եղած կրոնական խտրականությունը վերածեց բացարձակ թշնամանքի: Մահմեդական և՛ խավարապաշտ, և՛ լուսավորված քուրդը, գերադասում էր ավելի քան գնալ սուլթանի ու Մուհամեդի ետևից, քան թե բարեկամանալ «գյավուր» հայերի հետ: Հետևաբար հայ մտավորականության՝ քրդերին կրթելու ու լուսավորելու համար թափած անսահման ջանքերը, հետագա քառորդ դարում ապարդյուն վերջավորություն ունեցան: Ավելին, քրդական ցեղապետները (չնչին բացառությամբ) խիստ ու դաժան վարվեցին անպաշտպան հայ ժողովրդի հետ, քան կարելի էր ենթադրել:

Քիչ էական չէր ***քրդական մտավորականության սակավությունը, երբեմն, կարելի է ասել, բացակայությունը:*** Համիդը, թեկուզև նրան նախորդող ու հաջորդող թուրք պետական այրերը, բարձրաստիճան պաշտոնյաները, հեռամետ դիտավորություններով, բազմաթիվ հերյուրանքներով, ձգտում էին քրդերին թողնել անկիրթ, որպեսզի ***չխմորվեր Քյուրդիստան անկախ պետական միավորի ստեղծման գաղափարը:***

Փոքրաթիվ քուրդ գրագետ ու լուսավոր մարդիկ հիմնականում ապրում էին ***արտասահմանում,*** գիրքն ու թերթը հրատարակում էին «դրսում»: Սրանց Բ. Դուռը ոչ մեծ դժվարությամբ կարողանում էր կաշառել, ի հարկին ոչնչացնել, երբեմն էլ գաղափարապես թունավորելով՝ քրդական սրի ուղղությունը իսկական թշնամուց փոխել դեպի հայ ժողովուրդը:

Այս խնդրում էր, որ Բ. Դուռը հասնում էր առավել «հաջողությունների»: Քուրդ վերնաշերտերի մեծ մասը, չհասկանալով (եղան ըմբռնողներ) խնդրի բարդույթներն ու բուն էությունը, այսօր ջարդում էր հայերին, ծառայում թուրքերին, վաղը ոչնչացվում վերջիններիս ձեռքերով: ***Հետևաբար հայ-քուրդ, թուրք-քուրդ հարաբերությունների թեման դարձավ հավերժական ու այժմեական:***

Ինչպիսի՞ վախճանի կարժանանա հիշյալ խնդիրը, դա կախված է արդեն ձևավորված քուրդ մտավորականության, դեռևս հարատևող ցեղապետների որդեգրած դիրքորոշումից: Շեշտում ենք և նորից կրկնում, թե այն կախված է քրդերից, քանի որ ինչպես իր ժամանակին, առավել քան մեր օրերում, հայ ժողովուրդը, նրա հզոր ու խորիմաստ մտավորականությունը, ***պետական այրերը համակրում են քուրդ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները, ցանկանում նրանց հաղթանակի հեռանկար:***

Հայաստան աշխարհը, Հայրենիքով և հատկապես հզոր Սփյուռքով, ճիշտ է կողմնորոշվում, որ, որոշ իմաստով, քրդական շարժման հաղթանակի հեռանկարի հետ է աղերսվում Արևմտյան Հայաստանը իսկական տիրոջը վերադարձնելու խնդիրը (իհարկե, այսօր էլ կան քուրդ խոր չըմբռնողներ, նացիոնալիստներ, որոնք նույնիսկ սրբացած Մասիսների վրա են ***մրոտում*** Քյուրդիստան անվանումը):

Թուրքիան այդ ամենը հասկանում է: Թուրքերը քրդերին անարյուն ձևով երբեք հող չեն տրամադրի, սակայն գաղափարապես շարունակում են թունավորել, թե երբ ***հայ ժողովուրդը բարձրացնում է ցեղասպանության հարցը*** և ***պահանջատիրության*** իրավունքով, տարածքներ է պահանջում, պահանջածը ձերն է՝ քրդերինդ: Ինչպես տեսնում եք հայ-քրդական խնդիրն այժմ էլ շոշափվում է և Թուրքիան չի դադարում սեպ խրել երկու ժողովուրդների միջև: Եթե քրդերն այն ժամանակ չհասկացան, ապա հույսով մնանք, որ գոնե մեր օրերում կհասկանան, և խնդիրը կլուծվի երկուստեք համաձայնության սկզբունքներով, ***այսինքն՝ հայ ժողովուրդը մի օր կստանա իր սրբացած Հայրենիքը՝ Արևմտյան Հայաստա-***

մի գոնե վեց վիլայեթները, ծովահայաց Կիլիկիան, իսկ քրդերը կապրեն պատմական այն հողերում, որոնք հնում կոչվել էին Քյուրդիստան:

Ինչպես տեսնում ենք, հայ-քրդական հարաբերությունների խնդիրը շարունակում է մնալ «ցավոտ», և թուրքերը չեն վարանում շահարկել այն, սրել, արյունով ներկել: Թե ինչով կվերջանա, ցույց կտա պատմությունը: Հույս ունենք, որ այս պարագայում բարեհաջող ընթացք կստանա:

Ինչևէ, մի փոքր առօրեական, կարևոր շեղումներ կատարելուց հետո, վերադառնանք ժամանակի ու պատմության այն հիմնահարցերի քննարկմանը, որոնք եթե ոչ այսօր, ապա վաղը կդրվեն հայ-քուրդ հարաբերությունները վերջնական կարգավորող վիճասեղանի հիմքում, պետական այրերն ու քաղաքագետները յուրաքանչյուր ժողովրդին կտան այն, ինչը նրա օրինականն է, իրավականն ու պատմականը[1]:

*

* *

XIX դարի 80-ականների վերջնագծում, Հայկական հարցի, հատկապես երկրում բարենորոգումների, պարտավորված ծրագրերը կյանքի կոչելու եվրոպական մեծերի *դիրքորոշումն էապես փոփոխվեց:* Բանաստեղծի սրտացավ բնորոշմամբ, «արյունածարավ Եվրոպան», Թուրքիայից նոր ու համեղ պատառներ կորզելու դիտավորությամբ, դարձավ անտարբեր նրա զոհերի, հատկապես հայ ժողովրդի նկատմամբ:

Ելուզըզ Քյոշքում ծվարած արյունախում սուլթանը, զգալով այդ ամենը, ծեռնամուխ եղավ արևմտահայության թվաքանակի *փոքրացմանը,* որպեսզի երբևէ երկրորդ Բեռլինի կոնգրես գումարվելու դեպքում, հայկական պատվիրակությունը չկարողանա տերություններին համոզել բարենորոգումների նոր ծրագրեր պարտադրելու իրեն: Դա քիչ էր: Համիդ հայասպանը սոցիալական հարստահարությունների, բռնի ուծացման, ապա զանգվածային ջարդերի միջոցով ձգտում էր փոքրացնել արևմտահայության թվաքանակը, որպեսզի քրդերի ու թուրքերի հետ *շերտընդմեջ* ապրող բնակչությանը ապագայում հեշտությամբ կարողանա բնաջնջել, այսինքն կիրառել *ցեղասպանության քաղաքականություն:*

Քիչ էական չէր և այն, որ ռուս-թուրքական սահմանագլխին, հատկապես Կովկասյան հատվածում, հայեր էին ապրում, որոնք «անհուսալի էին» կայսրության համար: Բ. Դուռը ծրագրեց և անմիջապես կյանքի կոչեց դիվային մի ծրագիր. այն է՝ *սահմանագլխին բնակեցնել մահմեդականների, որպեսզի ռուս-թուրքական հերթական պատերազմի պահին* տերություն ունենա իր հավատարիմ «սահմանապահներին»: Իրենց հորջորջմամբ Ռուսաստանի, բայց իրականում հայ ժողովրդի դեմ ուղղված այդ ծրագիրը քննարկվեց *Լոնդոնի կաբինետում,* նրանից ոչ միայն հավանություն, այլև *դիվանագիտական հորդորներ* ստանալով կազ-

---

[1] Հայ-քրդական հարաբերությունների, հատկապես «*համիդիե*» գնդերի հայասպան գործունեության պատմությունը մեզ զբաղեցրել է շուրջ *հինգ* տասնամյակ: Տես *Հայկ Ղազարյան, Համիդիե հեծելագնդեր,* Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետև ՀՍՀ), հ. 6, Երևան, 1980, էջ 114: *Հայկ Ղազարյան,* Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 53-65, 237-248, 359-368: *Նույնի՝* «Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին», Երևան, 2001, էջ 99-113, 203-228, 381-386: ***Г. М. Казарян,*** Армянское общественно-политическое движение в 50-60-х годах XIX века и Россия, Ереван, 1979, стр. 73-82, 83-95, 167-174.

մակերպեց քրդական աշիրեթներից բաղկացած ***հեծյալ գնդեր***, որոնք ***սուլթանի պատվին ստացան «համիդիե»*** անվանումը[1]:

1890 թ. վերջերին ինչպես ռուսական ու թուրքական, այնպես էլ արևմտաեվրոպական մամուլի էջերում հաղորդագրություններ երևացին ***«համիդիե»*** հեծելագնդերի կազմավորման վերաբերյալ: 1891 թ. հունվար ամսին անձամբ Համիդի հրամանագրով ստեղծվեց մի հանձնաժողով, «համիդիե» 20 գնդեր ձևավորելու, նրանց մարզիչ-սպաներ նշանակելու, համազգեստների ձևերը որոշելու և զենքի հետ միասին տրամադրելու «նորակոչիկներին»: Այդ հանձնաժողովը գլխավորելու էր Պետերբուրգում երկար տարիներ Թուրքիայի դեսպանի պաշտոն զբաղեցրած, երդվյալ ռուսատյաց ***Շաքիր*** փաշան, որը վաղօրոք հետազոտել էր ռուսական ***կազակական գնդերի*** կազմավորման սկզբունքները[2]:

1891 թ. փետրվարի 14-ին Կ. Պոլսի անգլիական դեսպանը «համիդիե» գնդերի կազմավորման մասին իր կառավարությանը հաղորդում էր. «Այդ ծրագրի մասին մենք դեռևս բավականաչափ տեղեկություն չունենք, բայց ես անձամբ երկյուղով եմ նայում դրան»[3]: Հիշյալ զեկուցագրից ընդամենը չորս օր անց, այսինքն 1891 թ. փետրվարի 18-ին, Լոնդոնի կաբինետը երզրումից, իր հյուպատոս Համպսոնից ստանում է մի գրություն, որի մեջ ասված էր. «Սըր, պատիվ ունեմ սույն գրությունը կցել տեղական պաշտոնական թերթում տպագրված քրդերից իռեգուլյար հեծելազոր կազմակերպելու և նրանց պետերից ոմանց առաջիկայում Կ. Պոլիս մեկնելու մասին հոդվածի թարգմանությունը: Այդ պետերն անցյալ շաբաթ ուղևորվեցին Երզնկա, որտեղից մեկնելու են մայրաքաղաք:

...Քրդերին զինելու որոշումն այստեղ դիտվում է մեծ երկյուղով: Այդ զգացմունքն ուժեղանում է քրդերի իրենց վարքի պատճառով: Նրանցից շատերը բացեիբաց հայտարարում են, որ ***իբր իրենք նշանակված են հայերին սանձահարելու համար և իբր թե նրանք երաշխավորություն են ստացել, որ դատական պատասխանատվության չեն ենթարկվելու քրիստոնյաների նկատմամբ ճնշումներ գործադրելու համար***:

Երզրումում ապրող հայերը անհանգստացած են և նրանցից շատերը, որոնք հնարավորություն ունեն, հայտարարում են, որ մտադիր են, ճանապարհները բացվելուց հետո, հեռանալ քաղաքից (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[4]:

1891 թ. փետրվարի 19-ին Ռուսաստանի կովկասյան բանակի շտաբի պետը հատուկ գրությամբ դիմում է Պետերբուրգի կաբինետին՝ զեկուցելով, թե դրությունն

---

[1] ***«Համիդիե»*** չարաբաստիկ գնդերի մասին ստեղծվել է ծավալուն գրականություն, որոնց հեղինակները, առանց բացառության, դատապարտում են նրանց հայադավ գործունեությունը: Տե՛ս ***Հ. Փ. Ե. Լինչ***, Армения, стр. 6-8, 543-545. ***Ժագ դը Մորգան***, Հայ ժողովրդի պատմություն, Պոսքըն, 1947, էջ 340: ***Лорд Кинросс***, Расцвет и упадок османской империи. Перевод с английского, Москва, 1998, стр. 604-606. ***В. Т. Маевский***, Ванский вилайет, Тифлис, 1901, стр. 222-223. ***Эмил Диллон***, Положение дел в Турции, "Братская помощь армянам", т. II, стр. 13-19. ***Е. К. Саркисян***, Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX начале XX вв., Ереван, 1972, стр. 98-104. ***Հ. Մ. Պողոսյան***, Վասպուրականի պատմությունից (1850-1960), Երևան, 1988, էջ 250-254: ***Ս. Մարկոսյան***, Արևմտահայության վիճակը XIX դարի վերջերին, Երևան, 1968, էջ 180-185: ***Ս. Կ. Պողոսյան***, Գոյատևման պայքարի քառուղիներում, Երևան, 1988, էջ 160-166: ***Վ. Ա. Բայբուրդյան***, Հայ-քրդական հարաբերությունները օսմանյան կայսրությունում, Երևան, 1989, էջ 204-216: ***Ազատ Համբարյան***, Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.), «Քրդական շարժումներն Արևմտյան Հայաստանում» գլուխը, Երևան, 1999, էջ 376-391:

[2] **АВПРИ**, Политархив, дело 3447, л. 112. Депеша Нелидова Шишкину от 23 февраля (7 марта), 1890.

[3] ***Ս. Մարկոսյան***, նշված աշխատությունը, էջ 183: Տե՛ս նաև՝ "Положение армян в Турции", Москва, 1896, стр. 162.

[4] Նույն տեղում, էջ 162:

Արևմտյան Հայաստանում գնալով բարդանում է, քանի որ այնտեղ կազմավորվում են քրդական հեծյալ գնդեր, որոնց ընդհանուր ղեկավար է նախատեսվում Անատոլիական IV բանակի հրամանատար, ազգությամբ չերքեզ, բայց թուրքացած Զեքի փաշան: Այդ առիթով նա խնդրում է փոխել Կարինի գլխավոր հյուպատոսին և նրա փոխարեն հյուպատոս նշանակել գնդապետ Կոլյուբակինին, որովհետև վերջինս դիվանագիտական աշխատանքի մեծ փորձ ունենալով հանդերձ, լավ էր հասկանում իրադրությունն Անդրկովկասում[1]:

Տրապիզոնում նստած անգլիական հյուպատոս Մ. Լոնգվորդը, 1891 թ. մարտի 30-ին հաղորդում էր, որ քրդական հեծելազորի մի խումբ նստեց հատուկ նավ, որը գնում է մայրաքաղաք: Այնտեղ նրանց ընդունելու է սուլթանը: Այդ խումբը բաղկացած է 14 ցեղերի առաջնորդներից և մի շեյխից: Խմբին ուղեկցում է 140 մարդ: Կ. Պոլսում նրանց դիմավորեցին մեծ շուքով, ռազմական և քաղաքացիական ծիսակատարություններով, ուղեկցեցին դեպի պալատը, որտեղից հրավիրեցին ճաշկերույթի մահմեդական համայնքների ամենանշանավոր անդամների մոտ[2]:

Նույն օրը թուրքական պաշտոնական մամուլը հաղորդեց, որ «երեկ (այսինքն մարտի 30-ին) Տրապիզոնից ժամանեցին նոր գնդի սպաներն ու շարքայինները: Գունդը ձևավորվել է քոչվոր ցեղերից: Նորին մեծության սուլթանը նրանց ընդունեց Քյոշքում, պալատի հարևանությամբ և Դերվիշ փաշային ուղարկեց նրանց հաղորդելու միապետի ողջույնը: Հրամայեց նրանց տեղավորել նոր զորանոցներում և հետևել, որ ոչ մի բանում որևէ պակասություն չզգան»[3]:

Պաշտոնական մեկ այլ ամսագիր 1891 թ. ապրիլի 3-ին գրեց. «Այս երջանիկ գաղափարի նախածեռնողը և այն մեծ հաջողության համար մենք պարտական ենք նորին կայսերական մեծության սուլթանի իշխանությանն ու հեռատեսությանը»[4]:

Քրդական «***համիդիեները***» կազմավորվեցին նաև Բիթլիսի, Տարոնի, հատկապես ***Վասպուրականի*** տարածքի վրա նոր ինչ բնակություն հաստատած քրդական վայրենաբարո ու բարբարոս այն ցեղախմբերից, որոնք իրենց դաժանությամբ հանրահայտ էին ոչ միայն ասիական, այլև եվրոպական Թուրքիայում: Վանի վիլայեթի ***Պատնոսի*** ու ***Արճեշի*** շրջաններում ու ***Աբաղայի*** դաշտում ապրող ***Հայդարանլիներից, Կալկանլիներից, Մարգորկիլներից*** և այլ աշիրեթապետերից պահանջվեց ներկայացուցիչներ ուղարկել Ստամբուլ[5]: Վասպուրական հայկական վիլայեթի հողերը զավթած վերոհիշյալ և քրդական այլ աշիրեթներ աճապարեցին ներկայանալ սուլթանին և նրանից «արտոնագրեր» ստանալ հայ ժողովրդին թալանելու, իր հողերից արտաքսելու, փոքր-ինչ չհնազանդվելու դեպքում ֆիզիկապես ոչնչացնելու մտադրությամբ:

Այսպիսով, մի քանի ամսվա նախապատրաստական աշխատանքից հետո 1891 թ. մարտի վերջերին, Կոստանդնուպոլիս հրավիրվեցին ***յոթանասուն*** քուրդ ցեղապետներ, որոնց մեծ շուքով ու հանդիսավորությամբ ընդունեց Աբդուլ Համիդը: Այրյունարբու սուլթանը Եըլդըզի իր պալատում նրանց «առատորեն» զինվորական կոչումներ շնորհեց, թանկարժեք նվերներ բաժանեց և պերճանքից շլացնող զինվորական արտահագուստներով «զարդարելով» վերադարձի հրաման արձակեց:

---

[1] **АВПРИ**, Политархив, ф. 151, опись 482, дело 2945, лл. 1-2, 1891-1914.

[2] "Положение армян в Турции...", стр. 158-159. Տես նաև ***Ս. Կ. Պողոսյան***, նշված աշխատությունը, էջ 163:

[3] Նույն տեղում, էջ 162:

[4] ***Ս. Կ. Պողոսյան***, նշված աշխատությունը, էջ 161-162:

[5] ***В. Т. Маевский***, Ванский вилайет, военно-стратегическое описание, Тифлис, 1901, стр. 222-223. Տես նաև ***Հ. Ս. Պողոսյան***, նշված աշխատությունը, էջ 250:

Մարտի վերջին և ապրիլի առաջին շաբաթում կազմակերպվեցին «համիդիե» 24 գնդեր[1], որոնք գլորվող ձնագնդի նման, գնալով շատանում էին: 1899 թ. հաշվվում էին 140 գնդեր, որոնց մեջ արդեն ընդգրկված էին ***յոթանասուն հազար*** հեծյալ քրդեր[2]: 1904 թ. ձևավորվեցին ևս 32 նոր գնդեր: Այս դեպքում ծառայության էին հրավիրում նաև Սեբաստիայի ***չերքեզներին***[3]: 1905 թ. «համիդիե» հեծելագնդերի թիվը հասավ 168-ի: Նրանք համահավաքում էին ***հարյուր հազարի հասնող միայն հեծելազոր***՝ չհաշված հետևակային զորայինները[4]:

Համիդիեական գնդերը կազմվում էին ***առանձին-առանձին*** աշիրեթներից (ցեղախմբեր), ըստ սուլթանական հրամանագրի՝ քրդական, հետո նաև չերքեզական յուրաքանչյուր ընտանիք պարտավոր էր տերությանը «ծառայության» տալ առնվազն մեկ «զինվորացու»: Մնացած պարագաները, հատկապես ձին, հրացանը, փամփուշտները, տրամադրում էր պետությունը[5]: Չբավարարվելով դրանով Բ. Դուռը բանտերից ազատեց շեյխեր Ջալալեդդինի և Ուբեյդուլահի արշավանքներից հետո կալանավորված ***քուրդ իսլամներին, գողերին, ավազակներին, մարդասպաններին,*** նրանց զենք ու իրավունքներ բաշխելով, ընդգրկեց «համիդիե» գնդերի կազմում: Ակնհայտ է, որ դրանք ավելի քրեական ու քաղաքական հանցագործների ոհմակ էին, քան թե «կանոնավոր զորքեր»[6]:

Յուրաքանչյուր գունդ բաղկացած էր ***500 հեծյալից*** (լինում էր ավելի, բայց ոչ մի դեպքում այդ թվից պակաս): Նրանք կերակրվում էին «ձեռք բերած» ավարով, այսինքն՝ հայերից կատարած թալանով, օրինական ու «ապօրինի» հարկահանությունից ստացած միջոցներով: Դրանից ավել լինելու դեպքում, այսինքն՝ «ավելցուկը» դրվում էր ցեղապետի տրամադրության տակ և ծախսվում էր «ընդհանուրի» կարիքների վրա[7]:

«***Համիդիե***» գնդերն ունեին հետևյալ ներքին կառուցվածքը: Գնդի հրամանատարը (գնդապետ), իբրև կանոն, համարվում էր տվյալ ցեղի ցեղապետը: Եթե ցեղը քանակով մեծ էր, կարող էր կազմավորել մի քանի գնդեր, ապա այս դեպքում ցեղապետը դառնում էր միացյալ գնդերի ընդհանուր հրամանատար՝ ***գեներալի*** աստիճանով ու նույնիսկ հոգևոր կոչումով: Առանձին գնդերի հրամանատարներ էին հաստատվում ցեղապետի մերձավոր ազգականները՝ նրա եղբայրները, հաճախ նաև զավակները: Սպայական ստորին թե միջին պաշտոնները որպես ռազմասավար բաժանվում էին հրամանատարի ազգականների միջև[8]:

Քրդական հեծելազորի մեջ ընդգրկված բարբարոս ու ավարառու իսլամների թիվը 1897 թ. արդեն տատանվում էր 80-100 հազարի միջև, որի հայ ժողովրդի նկատմամբ կիրառած չարագործությունների մասին սրտաճմլիկ փաստեր էր հաղորդում էրզրումում նստած ռուսական դիվանագետ Ա. Ի. Զելենոյը[9]:

Նա պատմում էր «համիդիեների» քանակի, գնդերի կառուցվածքի, իսլամների

---

[1] Վրաստանի Հանրապետության պետական պատմական կենտրոնական արխիվ (այսուհետև Վրացական **ՅՊՊԿԱ**). ֆոնդ 480, ցուցակ 1, գործ 1052, թերթ 7:

[2] «Մշակ», 1914, 21-ը նոյեմբերի, N 264: Տես նաև ***Հ. Մ. Պողոսյան***, Սասունի պատմություն, Երևան, 1985, էջ 165:

[3] **ЦГВИАРИ**, ф. ВУА, дело 478, л. 153.

[4] **АВПРИ**, Политархив, дело 3447, л. 41.

[5] **ЦГВИАРИ**, ф. ВУА, дело 481, л. 551. Տես նաև ***Հ. Մ. Պողոսյան***, նշված աշխատությունը, էջ 184:

[6] **АВПРИ**, Турецкий стол (новый), опись 37, дело 449, л. 1894, 31-32.

[7] Վրացական **ՅՊՊԿԱ**, ֆոնդ 480, ցուցակ 1, գործ 1126, 1896, թերթ 30:

[8] ***Ս. Մարկոսյան***, Արևմտահայության վիճակը XIX դարի վերջերին, Երևան, 1968, էջ 184: Ավելի մանրամասն տես "Положение армян в Турции", 1896, стр. 165-166. Տես նաև **АВПРИ**, Посольство в Константинополе, ф. 180, опись 517/8, дело 3726, "Армяне в Турции", л. 123.

[9] **АВПРИ**, Посольство в Константинополе, ф. 180, опись 517/8, дело 3516, 1897, л. 22-23.

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

տեղաբաշխման, հատկապես՝ ավարառու գործունեության մասին Դերսիմում, Մուշում, Սասունում և այլուր[1]:

«Համիդիե» գնդերի և ընդհանրապես քրդական նման միավորումների հետ ավելի մեծ հույսեր էր կապում ինքը՝ անձամբ Համիդ հայասպանը, քան նույնիսկ Բ. Դուռն ու թուրքական պաշտոնյաները: Այդ իսկ պատճառով՝ սուլթանը լուրջ նախապատրաստություններ էր տեսնում իր «հաշիվները մաքրելու այն ժողովրդի հետ», որի ղեկավար մտավորականությունը, աշխարհիկ և հոգևոր այրերը, շարունակելով բռնել դիվանագիտական մուրիկության ճանապարհը, դոփելով եվրոպական մեծերի դռները, անուղղակիորեն նրանց առթում էին միջամտելու Թուրքիայի ներքին գործերին:

Ահա, հեռամետ իր դիտավորությունները գաղտնագրված պահելով, Աբդուլ Համիդը գիջում գիջումի հետևից էր անում քրդերին և լուրջ պատրաստություններ տեսնում՝ առաջիկա ***հայկական ջարդերի համար***: Զինվորագրված քրդերը ոչ թե պետք է ծառայեին այնտեղ, որտեղ կծառայեին թուրքական զինվորականները, այլև մնում էին իրենց «հայրենի վայրերում», որպեսզի ի հարկին «պատժեին» դրացի հայերին՝ մասնավորապես, քրիստոնյա մյուս ազգերի ներկայացուցիչներին՝ ընդհանրապես[2]:

Համիդ II-ը սկզբնական շրջանում նույնիսկ որոշել էր զինվորական կրթություն տալ վայրենաբարո այդ հրոսակախմբերին: 1892 թ. Կ. Պոլսում և Բաղդադում տեղակայված բանակային IV կորպուսի կենտրոնական շտաբներին կից բացվեցին «ցեղերի համար դպրոցներ» («աշիրեթ մաքթաբլերի»): Հայտարարված էր, թե դրանց նպատակն է քրդերին կրթություն տալ, նրանց շրջաններում լուսավորություն տարածել: Իրականում դպրոցները խնդիր ունեին «համիդիե» ջոկատների գրագետ և զինվորական գործին տիրապետող սպաներ մատակարարել[3]:

Մինչև հայկական ջարդերը Բ. Դուռը քրդերով ***վերաբնակեցրած*** հայկական շրջաններում, հատկապես վիլայեթների վալիանիստ կենտրոններում ևս բացեց զինվորական մի շարք այլ դպրոցներ: Դասատուները խնդիր ունեին զինվորական գործից զատ վայրենաբարո քուրդ իսլամների մեջ կենտրոնական կառավարությանը հպատակվելու զգացումներ պատվաստել: Կարծեք թե ***վերականգնվում էր*** միջնադարը, կարծեք թե ***վերակենդանացվում*** էին նույնպես հայ ժողովրդին մեծ վիշտ ու տառապանք պատճառող ***ենիչերիական*** զորաջոկատները՝ այն դեպքում կազմավորված քրիստոնյա փոքրերից, այս դեպքում համալրված մահմեդական քուրդ աշիրեթներով: Ընդհանուր առմամբ Արևմտյան Հայաստանում հիմնված, քրդերին զինվորական կրթություն տալու նպատակ հետապնդող դպրոցների վրա Համիդն իր «սեփական միջոցներից» ծախսեց ***ութ միլիոն թուրքական լիրա***[4]:

Այսպիսով, ճիշտ է ընդհանրացված, Համիդն ու նրա կառավարությունը «համիդիե» հեծելազորայիններին առատորեն բաշխում էին «իրավունքներ» և այնպիսի արտոնություններ, որոնց ստանալու համար երազում էին նույնիսկ իսլամապաշտ թուրքերը: Պարզ երևում էր, որ նպատակին հասնելու համար միջոցների առաջ կանգ չէր առնվում, այսինքն՝ զորակոչված քրդերը ազատվում էին հարկերից ու պարհակներից (բացառությամբ անասնահարկերից), ստանում էին նաև ռոճիկ, ծառայությունից հետո՝ կենսաթոշակ:

---

[1] **АВПРИ**, Посольство в Константинополе, ф. 180, опись 517, дело 3516, 1897, лл. 23-41.

[2] ***Վ. Ա. Բայբուրդյան***, Հայ-քրդական հարաբերությունները օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին, Երևան, 1989, էջ 206:

[3] ***Վ. Ա. Բայբուրդյան***, նշված աշխատությունը, էջ 206-207: Տես նաև ***J. Greagh***, Armenians, Kurds and Turks, vol. 1-2, London, 1980, p. 182.

[4] ***Ф. Ф. Грязнов***, Курды и курдская конница, **ИШКВО**, Тифлис, N 20, 1907, стр. 21. Տես նաև ***Վ. Բայբուրդյան***, նշված աշխատությունը, էջ 207:

Զինվորական դպրոցներում ուսուցումը, կերակրումն ու արտահագուստը ծրի էր, այսինքն պետության հաշվին: Համիդիեական բարձրաստիճան զինվորականներին, բոլոր տեսակ հանցագործությունների համար կարող էին դատել միայն զինվորական դատարաններում, իսկ վերջիններս էլ «կենտրոնից» հրահանգ ունեին նրանց չդատել: «*Այլ կերպ ասած, համիդիեական քրդերը դուրս էին գալիս քաղաքացիական իշխանությունների հսկողությունից և անցնում թուրքական զինվորական իշխանությունների տրամադրության տակ*»[1]:

Բազմաթիվ քրդական ցեղապետների, նույնիսկ երիտասարդ, բայց նշանավոր աշիրեթապատկան քրդերի, Համիդը հրավիրեց Ելդըզ Քյոշք և նրանց ընդունեց «պետական ծառայության»[2]: Քրդերին առատորեն բաշխվում էր դրամ (ոսկու տեսքով), կոչումներ, աստիճաններ, գեղեցիկ արտահագուստներ Բ. Դռան պատվերով, բայց կարված հայ և հույն դերձակների ձեռքերով[3]:

Այսպիսով, Աբդուլ Համիդը բացեիբաց, հրապարակայնորեն քրդական ցեղախմբերից ստեղծեց *հարյուրհազարանոց* անկանոն մի հեծելազոր, որը խնդիր ուներ ոչնչացնելու հայ ժողովրդին, իրողության վերածելու *ցեղասպանության* առաջին փուլը: Մենք նպատակ չունենք ավելի հանգամանորեն ներկայացնել անատոլիական IV բանակի հրամանատար Զեքի փաշայի գլխավորությամբ գոյատևած «համիդիե» հեծելագնդերի մանրամասն պատմությունը, չնայած այդ մասին ունենք նորահայտ բազմաթիվ վավերագրեր: Մեր նպատակն է եվրոպական և ընդհանրապես օտար հեղինակների ընձեռած վկայություններով ցույց տալ «համիդիեների» արյունախում գործունեությունն Արևմտյան Հայաստանում *պատասխանելով երեկվա և այսօրվա այն թուրք պատմաբաններին, որոնք «անխիղճ ձևով» կեղծում են պատմությունը, քողարկում այդ ջարդարարությունը, նույնիսկ կատարվածի մեղքը «փաթաթում հայերի վզին»:*

Ինչևէ: Դիմենք մի քանի հեղինակների, հատկապես ժամանակակից օտարների հայտնած կարծիքներին, աշխատելով հարազատ մնալ ճշմարտությանը՝ *ոչինչ չավելացնելով* և *ոչինչ չպակասացնելով:*

Սկսենք ժակ դը Մորգանից: ***Ժան Ժակ Մարի դը Մորգանը*** (1857-1924) ֆրանսիացի հնագետ, երկրաբան, ազգագրագետ, պատմաբան էր: Նա ապրել է Թուրքիայի քրիստոնյա այն ժողովուրդների կյանքով, որոնք զոհ գնացին թուրքական յաթաղանին: Թողել է աշխատություններ, հատկապես մեկ հատորանոց «Հայ ժողովրդի պատմություն», որի էջերում «համիդիեների» մասին գրված է. «*1890-ին սուլթանը, որն արդեն կպատրաստվեր հայերը բնաջնջելու, հանճարեղ գաղափար մը հղացած էր, այն է՝ Հայաստանի դրացի բյուրտ հրոսները զինել՝ Համիտիե ձիավորներ անվան տակ: Ինչպես նախընտրելի է, իր նպատակն էր ավազակները գրգռել քրիստոնեաներու դէմ: Հետո, քաջալերվելով դեսպաններու վարանոտ դիրքէն, 1894-ին կհրամայե Սասունի մեջ կատարել կոտորածի փորձ մը, որ երեք շաբաթ կտևէ* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[4]:

Իռլանդացի ականավոր ժուռնալիստ ու գիտնական, Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների մագիստր, Խարկովի համալսարանի պրոֆեսոր ***էմիլ Դիլոն*** (***1854-1933***) 90-ական թվականներին ունեցած հրապարակային ելույթներով մեծ

---

[1] ***Ազատ Համբարյան***, Ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.), Երևան, 1999, էջ 376: ***М. С. Лазарев***, Курдистан и курдская проблема, Москва, 1964, стр. 51.

[2] **ЦГВИАРИ**, ф. 450, дело 127, л. 43.

[3] Նույն տեղում, թերթ 45-46:

[4] ***Ժագ դը Մորգան***, Հայ ժողովրդի պատմություն, իր տարեգրութեանց ամենաստույգ ժամանակներեն մինչև մեր օրերը, ֆրանսերենից թարգմանեց ***Սարգիս Երկանյան***, Պոսթըն, 1947, էջ 340:

տերություններից, մասնավորապես, իր կառավարությունից պահանջում էր կատարել Բեռլինի կոնգրեսում ստանձնած պարտավորությունները: Հումանիստ իռլանդացին, ծանոթանալով Թուրքիայում կատարված ողբերգական իրադարձություններին, հատկապես Սասունի հայության կոտորածներին, հոդված հոդվածի հետևից էր հրատարակում, ելույթներ ունենում, առաջավոր մարդկությունից պահանջելով պաշտպանել բարբարոսների մուրճի անխնա հարվածների տակ ոչ թե ապրող, այլ մի կերպ գոյատևող հայ ժողովրդի դատը: Նրան մեծ անհանգստություն էին պատճառել «համիդիեների» գործողություններն Արևմտյան Հայաստանում:

«Բ. Դուռը վախենալով Հայաստանում բարեփոխություններ անցկացնելու խոստման վերաբերյալ իր համար լուրջ դժվարություններից,– գրում է էմիլ Դիլոնը,– և պատերազմի ժամանակ Ռուսաստանի սահմանամերձ նահանգներում ապրող քրիստոնյաների թշնամությունից, 1891 թվականին վճռեց մեկ գնդակով երկու նապաստակ սպանել և *կազմակերպեց այսպես կոչված համիդիե հեծելազոր, որը կազմավորված էր բացառապես քրդերից*: Կայսրության որոշ բարձր աստիճանավորների առաջարկած ծրագիրն այն էր, որ հայերին դուրս մղեն սահմանամերձ երկրամասերից, ինչպես, օրինակ Ալաշկերտից, և նրանց փոխարինել մահմեդականներով, որպեսզի նրանց թիվը բոլոր հինգ վիլայեթներում կրճատվի այնքան, որ վերանա հայ բնակչության համար հատուկ բարեփոխությունների անհրաժեշտությունը և որպեսզի պատերազմների դեպքում քրդերը գործեն որպես կազակների հակակշիռ ուժ:

Ոչնչացման այդ բացահայտ քաղաքականությունը ճշտորեն իրագործվելու էր և զգալիորեն ընդլայնվեց *այն ժամանակ, և եթե դրան շուտով վերջ չտրվի, ապա անտարակույս կհասցնի հայկական հարցի վերջնական լուծմանը* (նշանակում էր հայերի ոչնչացմանը), *բայց այդ լուծումը խայտառակություն կլինի քրիստոնեության համար և նողկալի ծաղրանք քաղաքակրթության նկատմամբ* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[1]:

«Համիդիե» գնդերի «գործունեությունը» ցուցադրելիս *էմիլ Դիլոն* լրացնում է. «Մի ականավոր օտարերկրացի պետական գործիչ, որը սովորաբար համարվում էր թուրքոֆիլ, մոտ ժամանակներս ինձ հետ մասնավոր զրույցի ժամանակ նկատեց, որ թուրքական տիրապետությունը Հայաստանում ճիշտ կլիներ բնորոշել որպես *կազմակերպված ավազակություն, օրինականացված սպանություն և վարձատրվող անբարոյականություն*»[2]: «Զորքի մեջ գրանցված քրդերը,– շարունակում է է.Դիլոնը,– թողնվել են իրենց հայրենի վայրերում, ազատված են ծառայությունից, մատակարարվում են զենքով, օժտված են դեսպանական անձեռնմխելիությամբ և ապահովված են ռոճիկով... Եվ նրանք իրենց միսիան կատարում են փութաջան ճշտությամբ՝ *կողոպտում են հարուստ հայերին, քանդում են տները, այրում են հացն ու անասնակերը, ոչնչացնում են գյուղերը, մորթում են անասունները, հափշտակում են երիտասարդ աղջիկներին, անպատվում են ամուսնացած կանանց, կոտորում են ամբողջ գյուղեր և կոտորում են բոլոր նրանց, ովքեր այնքան արիություն կամ անխոհեմություն ունեն, որ փորձում են ընդդիմանալ նրանց: Այժմ հայերը պատկանում են երկրագնդի ամենաչքավոր և ամենադժբախտ ժողովուրդների թվին* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[3]:

---

[1] *Эмиль Диллон*, Положение армян в Турции. Տե՛ս "Братская помощь армянам", II, Москва, 1896, стр. 13. Տե՛ս նաև *Ս. Մարկոսյան*, նշված աշխատությունը, էջ 181: Տե՛ս նաև «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», Երևան, 1991, էջ 91-97:

[2] Նույն տեղում, էջ 14, 181:

[3] *Эмиль Диллон*, նշված աշխատությունը, էջ 13: Տե՛ս նաև *Ս. Մարկոսյան*, նշված աշխատությունը, էջ 181:

«Հայկական հարցը», Հայոց ցեղասպանության խնդիրը և, մասնավորապես, «համիդիեների» անփառունակ գործունեությունը խիստ հետաքրքրել են Անգլիայի երկարամյա վարչապետ *Գլադստոնին: Վիլյամ Յուարտ Գլադստոնը* (Gladstone) (1809-1898) երիտասարդ տարիներից է սկսել իր պետական գործունեությունը, 1868 թվականից ընտրվել է լիբերալ կուսակցության պարագլուխ, նույն թվականից մինչև 1894 թվականը, որոշ ընդմիջումներով, գլխավորել է միացյալ թագավորության կառավարությունը՝ վարչապետի պաշտոնով:

Վ. Յու. Գլադստոնին է պատկանում «*Ծառայել Հայաստանին, նշանակում է ծառայել քաղաքակրթությանը*» պատկերավոր արտահայտությունը: Նրա նախաձեռնությամբ, Բեռլինի աճապարող հայկական պատվիրակությունը ընդունվեց անգլիական մի շարք լորդերի և ամենավերջում նաև իր կողմից: Մ. Խրիմյանին անգլիական էքսվարչապետը խոստացավ *պաշտպանել Հայոց դատը*, սակայն գաղտնագրելով, թե ինքն այդ ամենն անում է՝ ելնելով նաև իր կառավարության գաղութատիրական նկրտումներից[1]:

Գլադստոնը հայկական բարենորոգումների 1880 թ. կազմված հուշագրի նախաձեռնողն էր, Անգլո-հայկական ընկերության ստեղծողը: Այնպես որ այդ «մեծ» անգլիացին ծանոթ էր «հայկական գործերին», լավ գիտեր Թուրքիան և թուրքերին[2]:

1896 թ. հուլիս ամիսն էր: Ութսունվեցամյա *էքսվարչապետը*, լսելով հայկական ջարդերի մասին, վերադարձավ պաշտոնաթողությունից և իր ծննդավայր *Լիվերպուլում* արտասանեց վերջին ատենախոսությունը: Այն ուղղված էր թուրքական սուլթանի դեմ և զայրույթ էր արտահայտում նրա հայասպան քաղաքականության պատճառով:

Գլադստոնը նոր էր նամակ ստացել իր վաղածանոթ «բարեկամ», այդ պահին արդեն Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրված *Խրիմյան Հայրիկից*, որով Վեհափառը օգնություն էր խնդրում «մեծ անգլիացուց», նրան թախանձում միջամտել Թուրքիայի ներքին գործերին և դադարեցնել տալ անվերջանալի դարձած հայկական կոտորածներն Արևմտյան Հայաստանում ու մայրաքաղաքում:

Գլադստոնը հայկական կոտորածների մասին մանրամասն տեղեկություններ էր ստացել էմիլ Դիլոնի հոդվածներից, հրապարակային դասախոսություններից, ինչպես նաև Կ. Պոլսի բրիտանական դեսպանի հաղորդագրություններից: Երեկվա քաղաքական գործչի մեջ դիվանագիտությունը զիջում է մարդկային զգացմունքներին, և ծերունազարդ անգլիացու զայրույթը հասնում է գագաթնակետին: Լիվերպուլյան ատենախոսության ժամանակ Աբդուլ Համիդին բնութագրում է իբրև «*մեծ մարդասպան*», սպառնում նրա պետությունն ընդհանրապես «*ջնջել քարտեզի վրայից*», քանզի այն հանդիսանում է «*քաղաքակրթության ամոթանքը*», իսկ թուրք մարդասպանը՝ «մարդկության անիծյալը»: Այդ նույն օրերին առաջավոր ֆրանսիացիները Համիդին «զարդարեցին» «*արյունարբու սուլթան*» մականունով[3]:

Գլադստոնը զայրացած էր նաև *համիդիեական գնդերի կազմավորման պատճառով:* Դեռևս 1895 թ. հուլիսի 26-ին՝ Չեստերում գումարված մարդաշատ միտինգում արտասանած ճառի ժամանակ, նա արձանագրեց. «*Սուլթանը և Կ. Պոլսի կառավարությունը ֆորմալ ձևով հավաքագրեցին ռազմական կարգապահություն չունեցող մարդկանց, որոնցից կազմեցին կեղծ հեծելազորային գնդեր և այնու-*

---

[1] ՀԱՀ, հ. 3, Երևան, 1977, էջ 90:

[2] **АВПРИ**, Посольство в Константинополе, опись 8, дело 27, лл. 3-7.

[3] *Лорд Кинросс*, Расцвет и упадок османской империи, Москва, 1899, стр. 610-611. Տե՛ս նաև **АВПРИ**, Посольство в Константинополе, опись 8, дело 25, лл. 2-4.

հետև արձակեցին նրանց՝ լիազորելով սուլթանական զինվորների դերում քայքայել ու ոչնչացնել հայ բնակչությանը (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[1]:

Ժամանակակից անգլիացի պատմաբան ***Էդմոնդ Թեյլորը,*** գիտական շրջանառության մեջ դնելով անգլալեզու սկզբնաղբյուրներ, իբրև եզրահանգում գրում է. «Դեռևս 1891 թ. սուլթանը թույլ տվեց քրդական ցեղերին օգտագործել որպես օժանդակ ոստիկանական ուժ հայկական հուզումները ճնշելու համար... նրանց ուղարկում էին հայկական շրջանները՝ հեղափոխական ազգայնականներին հետապնդելու համար, հուսալի միջոց էր կրոնական և ռասայական պատերազմ սանձազերծելու համար»[2]:

Ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ Զելենոյը, «Հայկական հարցի մասին» գաղտնագրված զեկուցագրով, իր կառավարությանը զգուշացնում էր քրդական հեծելազնդերի գործունեության վտանգավորության մասին, ոչ միայն անպաշտպան հայ ժողովրդի, այլև բուն իր Ռուսաստանի համար: Նա գրում էր. «Ռուսաստանին չի կարող ժպտալ եվրոպական սպաների և փողի միջոցով բազմաթիվ ագահ, բայց դրամ չունենալու պատճառով չկազմակերպված քրդերի հեծյալ հրոսակախմբերի կազմակերպումը, դրանք Անդրկովկասի համար առայժմ քիչ վտանգ են ներկայացնում, բայց եթե կազմակերպվեն, որպես թեև իռեգուլյար, բայց կազմակերպված և ռազմական որոշ նշանակություն ունեցող հեծելազորի մի զանգված, այդ դեպքում դրանք իսկապես վտանգ կներկայացնեն Անդրկովկասի համար»[3]:

Ֆրանսիացի քաղաքական գործիչ, պատմաբան, ուղեգրող ***Լյուդովիգ Քոնթասոնը,*** ստախոսություն է համարում այն վարկածը, որի համաձայն, Համիդը քրդական հեծելախմբերն ստեղծում էր երկրի պաշտպանությունն ամրապնդելու նպատակով: Նա ուղղակի արձանագրում էր, թե համիդիեները կոչված էին ***հայերին ունեզրկելու, կողոպտելու և ոչնչացնելու դիտավորությամբ***[4]: «Սահմանների պաշտպանության պատրվակի տակ քրդական «համիդիե» գնդերի ձևավորումը ըստ էության հանդիսանում էր հայ քրիստոնյաների կողոպուտի պաշտոնական կազմակերպություն»,– շարունակում է ֆրանսիացի ուղեգրողը[5]: Այդ տեսակետը վավերացնում է նաև Թուրքիայի մայրաքաղաքում Ֆրանսիայի դեսպան ***Պոլ Կամբոն***[6]:

«Համիդիեների» կազմակերպման, նրանց առջև դրված խնդիրների, արևմտահայության վիճակի առավել վատթարացումը խիստ անհանգստացնում էին սուլթանի նստավայրում խարսխված, իրար հերթափոխող Ռուսաստանի արտակարգ ու լիազոր դեսպաններին, Արևմտյան Հայաստանի քաղաքներում գործող հյուպատոսներին և փոխհյուպատոսներին:

Դիմենք մի քանի փաստերի հրապարակմանը: Բայց նախքան այդ...

XX դարի 60-ական թվականներին հերթական անգամ բարձրացավ «քրդական խնդիրը»: Թուրքիայում ուժեղացան ազգային-ազատագրական ոգորումները: Քուրդ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը ջերմ վերաբերմունքի արժանացավ սովետական կառավարության, ինչպես նաև հայ ժողովրդի Հայրենիքի ու Սփյուռքի բնակչության կողմից: Հետաքրքրությունը դեպի քրդական շարժումներն ու քուրդ ժողովրդի պատմությունը ևս ուժեղացավ:

---

[1] ***М. Г. Ролен-Жекмен,*** Армения, армяне и трактаты. В кн.: "Положение армян в 1895 г.", Москва, 1897, стр. 161. Տես նաև *Վ. Բայբուրդյան*, նշված աշխատությունը, էջ 208:

[2] ***E. Taylor,*** The Fossil Monarchs, London, 1967, p. 156.

[3] **АВПРИ,** Политархив, дело 3440, л. 22, 1890.

[4] Հիշյալ փաստերը քաղել ենք *Վ. Բայբուրդյանի* նշված գրքի 208-րդ էջից: Տես նաև ***L. Contenson,*** Chrétiens et musulmans.Voyages et études, Paris, 1901, p. 49-50.

[5] ***Людовик де Контансон,*** Реформы в Азиатской Турции, Армянский вопрос, Москва, 1914, стр. 26.

[6] «Documents diplomatiques français», 1871-1914, Paris, série I (1871-1907), vol. II, p. 72-73. Տես նաև *Վ. Բայբուրդյան*, նշված աշխատությունը, էջ 208:

ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Ասիայի ինստիտուտը քուրդ ժողովրդի պատմությանը նվիրված մի շարք աշխատություններ հրապարակեց: Դրանց մեջ հիշատակության են արժանի ***Մ. Ս. Լազարևի***[1] և ***Ն. Ա. Խալֆինի***[2] մեծ ու փոքր ծավալի զույգ մենագրությունները: Ազգությամբ հրեա այդ հետազոտողները, հապշտապ կազմելով վերոհիշյալ մենագրությունները, կարծելով, թե օր առաջ կստեղծվի «մեծ Քյուրդիստան», և իրենք էլ պաշտոններ կստանան այդ նոր ու «մեծ պետության մեջ», որոշեցին ոչ միայն յուրացնել քրդերենը, այլև կեղծել դրա ***կարիքը չզգացող այդ ժողովրդի պատմությունը*** և ***Հայաստան*** անունը փոխարինեցին ***Քյուրդիստանով:*** Հայ մտավորականների արդարացի զայրույթի ալիք բարձրացավ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հումանիտար ինստիտուտներում, Երևանի պետական համալսարանում և գրական հասարակայնության լայն շրջաններում:

«Սովետական հետազոտողները» բառացիորեն կրկնում էին արյունարբու Համիդ մարդասպանի կարծիքը և տուրք տալով դիվանագիտության միջոց էին ընտրում հաճոյանալու մահմեդապաշտ Սուլթովի հայամերժ զառանցանքներին: Բայց հայ ժողովուրդն էլ պաշտպանվել էր սովորել, այն էլ այս դեպքում, ոչ թե զենքով, այլ գրչով, որ տվյալ պարագայում խիստ հատու էր ու անզիջում:

«Հայաստանը», մեկ հարյուրամյակ առաջվա, այսինքն «զուլումի տարիների» նման վերանվանվում էր «Քյուրդիստան», հայոց սրբություն Արարատի վրայից հանվում էին Մեծ ու Փոքր Մասիսներ անունները, «վերամկրտվում» էին հայկական վիլայեթների, գետերի, լճերի հնամենի, պատմական անունները: Զայրույթն անհատակ էր, գիտնականների բողոքը սուր էր և զանգվածային:

ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի բազմաթիվ ինստիտուտներում, հատկապես պատմության և արևելագիտության ինստիտուտներում գումարվեցին գիտական հավաքներ, ամենուրեք կազմակերպվեցին ասուլիսներ, որտեղ քննարկվում էին ոչ միայն այդ, այլև Մեծ եղեռնին վերաբերող բազմաթիվ այլ խնդիրներ:

Ժողովրդի համբերության բաժակը լցվել էր: Դա 1965 թվականն էր, երբ արդեն բոլորում էր Հայոց ցեղասպանության հինգերորդ տասնամյակը: Հայ ժողովրդին արգելվում էր թեկուզ բարձրագոչ սգալ իր ազգային ողբերգությունը, իսկ քրդացած հրեաներին արտոնվում էր կեղծել նրա պատմության հերոսական էջերը: Կարծեք թե ժողովուրդներին իրար դեմ գրգռելու «անհաջող փորձեր» էր արվում:

Այժմ, ինչպես միշտ, հզոր էր համամարդկային գաղափարներով տոգորված հայ մտավորականությունը: Ուղիղն ասած, քուրդ, նոր ձևավորված պատմաբանների խումբն էլ այս անգամ բռնեց պայքարի ճիշտ ու խաղաղ ընթացք:

Կազմակերպված քննարկումների կոլեկտիվ արդյունքները, բյուրեղացած կարծիքները, ռուսաց լեզվով պատրաստված հոդվածները զետեղվեցին ***«Պատմա-բանասիրական հանդեսի», «ՀՍՀ ԳԱ տեղեկագրի», «Коммунист»*** և «Խորհրդային Հայաստան» պարբերականների էջերում: Հոդվածների հեղինակներ պատմաբաններ Ե. Ղ. Սարգսյանը, Ռ. Սահակյանը, Ս. Հակոբյանը, Զ. Կիրակոսյանը, Հ. Ղազարյանը, Կ. Խուդավերդյանը և շատ ուրիշներ, արժանի հակահարված էին տալիս ոչ միայն Մ. Ս. Լազարևին և Ն. Ա. Խալֆինին, այլև բոլոր այն «հետազոտողներին», որոնք տասնամյակներ շարունակ աղավաղել և այդ պահին էլ շարունակում էին աղավաղել հայ ժողովրդի, հատկապես նոր ու նորագույն շրջանների պատմությունը:

Հրեաների գրգռող, հայատյաց ելույթները առթեցին ոչ միայն հայ գիտնականնե-

---

[1] ***М. С. Лазарев,*** Курдистан и курдская проблема (90-е годы XIX века-1917 г.), Москва, 1964, изд. "Наука".

[2] ***Н. А. Халфин,*** Борьба за Курдистан (Курдский вопрос в международных отношениях XIX в.), 1963.

րի մթերած զայրույթը պոռթկալով արտահայտելու, այլև ժողովրդին պայքարի կոչելու: Արդյունքը եղան ***1965 թվականի ապրիլյան հակակառավարական միտինգներն ու ցույցերը***: Սովետական ղեկավարությունը (անսալով նաև հայկական կոմունիստների խնդրանքին՝ ՀԿԿ քարտուղարը Յա. Ն. Զարոբյանն էր) ոչ միայն հարկադրված եղավ թույլատրել ապրիլի 24-ը դիտել իբրև ***սգո համազգային օր***, այլև արտոնեց կառուցելու ***Ծիծեռնակաբերդի համալիրը՝ հավերժական կրակով***: Անշուշտ, պայքարը հասցրեց ցանկալի հաղթանակի և մեկ անգամ ևս հաստատվեց ժողովրդական այն հանրահայտ ասացվածքը, թե ***ոչ մի հաղթանակ առանց պայքարի ու զոհերի ձեռք չի բերվում***:

Տողամեջերում արված մեր այս փոքր, բայց խնդրին առնչվող անհրաժեշտ շարադրանքին ավելացնենք, որ այդ հրեաները, հատկապես Մ. Ս. Լազարևը, հարկադրված էին նաև գիտական շրջանառության մեջ դնել «համիդիեների» չարագործություններին, հայ ժողովրդին նրանց հասցրած անսահման վնասներին վերաբերող արխիվային, այն էլ, նոր նյութեր: Մոսկովյան արխիվներից, գուցեև արտոնություն ունենալով (հայ պատմաբաններին ժամանակին այդ նյութերը չէին տրամադրում) նրանք շրջանառության մեջ դրեցին այնպիսի փաստեր, որոնք դատապարտում էին Համիդ մարդասպանի գործունեությունը՝ քուրդ ցեղապետների ձեռքերով, հայ ժողովրդի հետ հաշվեհարդար տեսնելու եղելությունները: Նյութերի նման քվաքանակը այսօր էլ հետաքրքրական են «համիդիեների» պատմությունը հետազոտողներիս համար:

Մ. Ս. Լազարևը, համենայն դեպս, թվաշատ փաստերի ճնշող ազդեցության տակ հարկադրված էր արձանագրել նաև, որ թուրքական կառավարող շրջանները, հատկապես սուլթան Համիդը «Հայկական հարցը» ձգտում էին «լուծել» հայ-քուրդ արյունահեղությունների միջոցով, բացարձակապես քրդական զինված ջոկատներն «ուղղելով դեպի Հայաստան»[1]: Նա շարունակում էր. «1890 թ. նոյեմբերի կեսերին թերթերում հրապարակվեցին կառավարական պաշտոնական հաղորդագրություններ քրդական դիվիզիաների կազմավորման մասին»[2]: Այդ հաղորդագրությունները հայկական շրջաններում առաջացրեցին անհանգստություններ, դրա մեջ «տեսնելով, ռուսական դեսպան Ա. Ի. Նելիդովի խոսքերով, ***իրենց դժբախտության նոր աղբյուրներ***»[3]:

Հենվելով սկզբնաղբյուրների, հատկապես ռուսական արխիվներից քաղված նորահայտ փաստերի վրա, Մ. Լազարևը հաստատում է նախորդների պատմածները «համիդիեների» մասին[4]: Նրա շարադրանքով քրդական յուրաքանչյուր «ծուխ» պարտավոր էր տերությանը տրամադրել մեկ ձիավոր ձիու հետ միասին: Նախատեսվում էր ամեն մի գունդը կազմել 512 ձիավորից և այն հավասարաչափ բաշխվում էր վեց մասերի: Նորակոչիկներին վարժեցնում էին թուրքական հեծելազորային սպաները: Խաղաղ ժամանակ համիդիեները տեղաբաշխված էին մնում իրենց «բնակավայրերում», պատերազմի պահին, առաջին իսկ կանչով, նրանք պարտավոր էին ներկայանալ զինվորական շտաբին:

«Միաժամանակ.– գրում է Մ. Լազարևը.– թուրքական կառավարությունը հենց սկզբից ևեթ սիրախաղեր էր անում քրդական վերնախավի հետ, նրանց առատորեն բաշխելով զինվորական կոչումներ, շքանշաններ, փող (ոսկու տեսքով): Մի շարք հայտնի քրդերի հրավիրում էին պալատ՝ պետական ծառայության»[5]: Համիդիեները

---

[1] ***М. С. Лазарев***, նշված աշխատությունը, էջ 50-51:

[2] Նույն տեղում, էջ 51:

[3] **АВПРИ**, Политархив, дело 975, л. 344, 1890.

[4] ***М. С. Лазарев***, նշված աշխատությունը, էջ 51:

[5] Նույն տեղում, էջ 51: Տես նաև **ЦГВИАРИ**, ф. 450, дело 127, л. 43.

ձևավորվում էին ըստ ցեղախմբերի (աշիրեթների): Օրինակ՝ ***ջելալիների*** ցեղի ողջ քրդերը մտցվում էին երկու գնդերի մեջ: Հայդարանլիներից կազմեցին առանձին մի գունդ, որի մեջ մտան ***զիլյան*** ու ***մամաշ*** աշիրեթները:

Ճիշտ է նկատվում նաև, որ կազմավորելով «համիդիեական» գնդերը, Բ. Դուռը հետապնդում էր նաև ***այլ նպատակներ:*** Սուլթանը դրանով ձգտում էր վերջ տալ քրդերի «***ազատականությանը***», նրանց ենթարկել տերության քաղաքական և ռազմական օրենսդրությանը, վերացնել բոլոր քրդերի ինքնիշխան դրությունը, աննայում ձևով վերանվաճել կենտրոնախույս ճանապարհ բռնած, գրեթե անկառավարելի դարձած «Քյուրդիստանը»: Նա քրդական ռազմական նոր դպրոցներ բացեց, որոնց վրա ծախսեց ևս ութ միլիոն լիր[1]:

Համիդ II-ի ծրագրերը՝ բոլոր քրդերին «համիդիեներ» կազմակերպելու միջոցով «հպատակեցնել» կենտրոնական կառավարությանը, միշտ չէ, որ հաջողությամբ էին ավարտվում: Քրդական բազմաթիվ ցեղապետներ, հասկանալով Ելդըզ Քյոշքի դիտավորությունները, բացահայտորեն հրաժարվեցին այդ գնդերի մեջ մտնելուց: Վատ էին ընթանում գնդերի կազմավորումը իրանա-իրաքյան սահմանագծում: Այստեղի քրդերը, ցուցադրականորեն մերժելով կենտրոնի առաջարկները, հաճախ թողնում էին Թուրքիան և անցնում հարևան երկրներ: Այնքան զանգվածային բնույթ էր կրում այդ երևույթը, որ Զեքի փաշան անձամբ մեկնեց Դերսիմ, Վան, Մուշ, Բիթլիս, որպեսզի քրդերին համոզի ստեղծելու «համիդիե» միավորումներ, նրանց «ծիավորներին» խոստանալով՝ առաջիկայում տեր դառնալու հայերի և ընդհանրապես քրիստոնյաների ոչ միայն հարստությանը, այլև՝ նրանց գեղեցիկ կանանց ու աղջիկներին[2]:

Հանրահայտ էր, որ «համիդիեները», ստանալով թուրքական զենքը, գինամթերքն ու գործելու անսահմանափակ իրավունքները, նպատակաուղղվում էին քրիստոնյա հպատակ ժողովուրդների ազատագրական շարժման դեմ: Կ. Պոլսի այդ ժամանակվա ֆրանսիական դեսպան ***Պոլ Կամբոնի*** խոսքերով «համիդիեները նշանակված էին իբրև թե պաշտպանելու Թուրքիայի սահմանները, իրականում նրանք ոչ այլ ինչ էին, քան կառավարության կողմից հավաքագրված թալանչիներ՝ հայ քրիստոնյաների ունեցվածքի»[3]:

Ռիզեյում նստած փոխհյուպատոս Գիբբոնսը, սրտի ցավով հաղորդում էր իր երկրի կենտրոնական բարձրաստիճան դիվանագիտական միսիային, որ Բ. Դուռը համիդիեներին խոստանում էր տրամադրել ոչ միայն արոտավայրեր, այլև «կուլտուրական հողատարածություններ»: Այդ հողերը գտնվում էին հայերի ձեռքում: Հետևաբար քրդերը իրավունք էին ստանում դրանք խլել տերերից[4]: «Եվ ահա մենք տեսնում ենք, որ կազմավորման իսկ սկզբից համիդիեները ուժեղացնում են ***հայերի հետապնդումները:*** Նրանց հետապնդում են և՛ տնտեսապես, և՛ քաղաքականապես: Եվ այստեղ նկատվում է կառավարության ոչ միայն թողտվությունը, այլև շահագրգռումը՝ քրդական ցեղապետներին թալանելու, ոչնչացնելու, անարգելու հայ բնակչությանը, խլելու նրա ***ոչ միայն շարժական ու անշարժ գույքը, այլև կանանց ու աղջիկներին:*** Համիդիեները Աստծու կողմից սահմանված պատուհաս էին՝ իջած հայ ժողովրդի գլխին[5]:

---

[1] ***Ф. Ф. Грязнов,*** Курды и курдская конница,–ИШКВО, 1907, N 20, стр. 16-25. Տե՛ս նաև ***П. И. Аверянов,*** Курды в войнах России с Персией и Турцией, стр. 242-243.

[2] **АВПРИ,** Политархив, дело 1630, лл. 103-1074, 1889-1894 гг.

[3] «Documents diplomatiques français», série I, vol. XI, p. 72. Տե՛ս նաև ***М. С. Лазарев,*** նշված աշխատությունը, էջ 55:

[4] **ЦГВИАРИ,** ф. ВУА, дело 478, л. 147.

[5] Նույն տեղում, թերթ 150:

Վանի և էրզրումի ռուսական հյուպատոսները, 1891-1893 թթ. ընդարձակ ցուցակ են ներկայացնում Կ. Պոլսում հաստատված դեսպանին, որի մեջ ամփոփված են թալանված, բանտարկված, սպանված հայերի անունները, կողոպուտի մեծ չափերը: Նրանք ևս խիստ վրդովված են քրդերի վայրագ գործողություններից[1]:

«Համիդիե» գնդերի կազմավորման իրողությունը խիստ անհանգստություն էր առաջ բերել ոչ միայն համաշխարհային առաջադեմ հասարակայնության մի ստվար հատվածի, այլև Բեռլինի կոնգրեսի (1878) որոշումները ստորագրած, դրանով իսկ արևմտահայությանը պաշտպանելու պարտավորություն ստանձնած մեծ տերությունների պետական բարձրաստիճան այրերի շրջաններում: Խստացվեցին հալածանքները կայսերահպատակ քրիստոնյա բոլոր ազգերի, ամենից շատ հայ ժողովրդի նկատմամբ: Թողնենք մնացած երկրներին (տեղ չլինելու պատճառով), պատմենք միայն Անգլիայի մասին:

Բրիտանական դիվանագիտության հայ ժողովրդի նկատմամբ բռնած ընթացքը ժամանակին քննարկման ու քննադատության նշանախեց էր դարձրել ***մեր անվանի ու տաղանդաշատ պատմաբան,*** դժբախտաբար վաղամեռիկ ***Ջոն Կիրակոսյանը*** (իմ մտերիմ, հարազատ ու գաղափարամերձ ընկերը): Նրա կիսատ թողած գործերն այսօր ոչ պակաս հաջողությամբ է շարունակում որդին՝ ***Արման Ջոնի Կիրակոսյանը:*** Պատմական գիտությունների դոկտոր, մի պահ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար (հոր երբեմնի պաշտոնին), ապա Հունաստանի, մի շարք այլ երկրների, այսօր էլ ԱՄՆ-ի դեսպանի պաշտոնաթոռն զբաղեցրած, հաջողությամբ պաշտպանում է ***հայկական դատը,*** պայքարում ***ցեղասպանության ճանաչման համար:*** Նրա գրչին են պատկանում մեծ ու փոքր ծավալի բազմաթիվ աշխատություններ, հատկապես վերջերս հրատարակած ծանրակշիռ մի նոր մենագրություն, որի էջերում վիճահարույց ու ծանրակշիռ խնդիրների հետ մեկտեղ, քննարկվում է նաև «համիդիեների» հարցը[2]:

Շարադրանքի խիստ արժեքավորությունը պայմանավորված է նաև հեղինակի գիտական շրջանառության մեջ դրած անգլիական, ամերիկյան և հունական արխիվներից հայտնաբերած, մինչ այդ կուսական վիճակում մնացած փաստերով: Բերենք դրանցից մի երկուսը:

Համիդ II-ը իրար հետևից Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորությունից դիտողություններ էր ստանում հայերի նկատմամբ կիրառված վայրագ քաղաքականության համար: Սուլթանն ունկնդրում էր դրանց, սակայն գործով... 1890-91 թթ. Թուրքիայում արգելվում էին այնպիսի դասականներ, ինչպիսիք էին ***Ռուսո և Վոլտերը, Շեքսպիրը և Շիլլերը, Բայրոնը և Միլթոնը, Վալտեր Սքոթը և Հյուգոն,*** ինչպես նաև «***Աստվածաշնչի***» այն գլուխները, որոնց էջերում գործածված էին «***հալածանք***», «***խիզախություն***», «***ազատություն***», «***իրավունք***», «***միություն***», «***հավասարություն***», «***զենք***», «***հերոս***», «***կոտորած***», «***բռնապետություն***» և այլ բառերը[3]:

1886 թ. և 1992 թ. Թուրքիայի մայրաքաղաքում եվրոպական դեսպանների բաց աչքերի առաջ, լույս տեսան «***Պաշտպանություն***» և «***Համիդիեի պարագլուխները***»[4] օրապակաս փոխադրությունները, որոնք ուղղված էին քրիստոնեություն «դա-

---

[1] **АВПРИ,** Политархив, дело 3447, ***Ա. Նելիդովի*** զեկուցագիրը Շիշկինին, 1895-ի փետրվարի 23 (մարտի 7-ին): Տես նաև ***Ե. Կ. Саркисян,*** նշված աշխատությունը, էջ 100-101:

[2] ***Արման Կիրակոսյան,*** Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (XIX դարի 30-ական թթ.–1914 թ.), Երևան, 1999:

[3] Նույն տեղում, էջ 226:

[4] ***M. Maceoli,*** The Constantinople Massacre and Its Lesson.–The Contemporary, Review, 1895, vol. 68, pp. 750-752.

վանողների» դեմ ընդհանրապես, կայսերահպատակ քրիստոնյա ազգերի դեմ մասնավորապես: Թուրքական ու թուրքալեզու մամուլը, իբրև «գաղափարական զենք», օգտագործվում էին իսլամապաշտների կրոնական մոլեռանդությունը բորբոքելու, ***հայ ազգաբնակչության կոտորածների*** «անփառունակ» պրոցեսը կազմակերպելու և «հաջողությամբ» իրողության վերածելու[1]:

«Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը» խորագրված հոդվածում 90-ական թվականների Թուրքիայի գրաքննությանը վերաբերող զավեշտական փաստեր է հրատարակել Ալբերտ Խառատյանը[2] դրանք քաղելով ժամանակի սկզբնաղբյուրների էջերից: 1898 թ. Տ. Ճեվելեքյանը հրաշքով փրկվեց թուրք ոստիկանների ճանկերից, քանի որ Բ. Դռան դիմել էր «Սուրհանդակ» անունով թերթ հրատարակելու արտոնություն ստանալու խնդրանքով: Այդ վերնագիրը տառադարձել էին «Սուր հա՞ն դակ»–այսինքն՝ «սուրը հանե թաքմիշ ըրե (թաքմիշ՝ խրել իմաստով)»[3]:

Հայկական մամուլին արգելված էր «հիմար», «հիմարանոց» (հիշեցնում էին Մուրադ V-ի հիվանդությունը), «աստղ», «աստղաբաշխություն» (Համիդի պալատը կոչվում էր Եըլդըզ-աստղ), և այլ բառեր[4]: «Մանզումե էֆքյար» հայատառ թուրքերեն թերթը «Լևանտ Հերալտից» արտատպել էր «աստղերը վայր կընկնեն երկնքից» դարձվածքը, որն առաջացրեց գրաքննական հիդրայի խռովքը. թերթն անհապաղ խափանվեց[5]: Կտրականապես արգելվում էր օսմանյան կայսրության սահմաններից դուրս տպագրվող թերթերից արտատպություններ անել: «Արտասահմանի մամուլը ենթարկվում էր ***երկշերտ*** գրաքննության՝ Բ. Դռան և պալատի գրաքննիչների կողմից»[6]:

Դառնանք Անգլիային և «համիդիեներին»: 1891 թ. հունիսի 22-ին էրզրումում նստող, Միացյալ Թագավորության նոր հյուպատոս Գռեյվզը դեսպան Ֆորդին տեղեկացնում էր, թե Անատոլիական IV բանակի հրամանատար Զեքի փաշայի ներկայությամբ քաղաքում հավաքված համիդիե գնդերն սկսեցին զինվորական ծառայության անցնելու իրենց պաշտոնավարությունը: «Ըստ հյուպատոսի, սուլթան Աբդուլ Համիդի հատուկ հրովարտակի ընթերցումից հետո տեղի ունեցավ ***զինվորական շքերթ***, որին, կանոնավոր զորամասերի շարքին, մասնակցեցին շուրջ ***1500 քուրդ հեծյալներ,*** որոնք զինված էին մարտին և բերդան տեսակի հրացաններով»[7]: Մինչ այդ հունիսի 10-ին, Զեքի փաշան նման շքերթ էր ընդունել նաև Վանում: Իր ելույթով նա հաղորդում էր, որ 1891 թ. հունիսին արդեն կազմավորվել էին 20 հազար ձիավորից բաղկացած քրդական 40 զորագունդ, որոնց հրամանատարությունը պետք է ստանձնեն թուրքական «կանոնավոր բանակից» հրավիրված 40 գնդապետներ և 150 կապիտաններ[8]:

Անդրադառնանք մի հետաքրքրական հաղորդագրության ևս: 1891 թ. հայերի կողմից խմորվող հակաթուրքական շարժման և Ռուսաստանից սպասվող զինվորական միջամտության վտանգի վերաբերյալ Զեքի փաշայի ներկայացրած ***կեղծ զեկույցի հիման վրա*** Բարձրագույն Դուռը սուլթանի հաստատմանը ներկայացրեց IV բանա-

---

[1] ***Արման Կիրակոսյան,*** նշված աշխատությունը, էջ 228:

[2] ***Ա. Խառատյան,*** Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը, «Պատմա-բանասիրական հանդես», N 4 (111), 1985, էջ 103-115:

[3] Նույն տեղում, էջ 114: Տե՛ս նաև «Մշակ», 27-ը հոկտեմբերի, 1898:

[4] Նույն տեղում: Տե՛ս նաև «Նոր կյանք», 1901, N 4, էջ 44:

[5] Նույն տեղում: Տե՛ս նաև «Շիրակ», 1905, էջ 857:

[6] Նույն տեղում, էջ 114: Տե՛ս նաև ***Pears E.***, Forty years in Constantinople, New York, 1916, p. 116.

[7] ***Արման Կիրակոսյան,*** նշված աշխատությունը, էջ 229:

[8] Նույն տեղում, էջ 229: Տե՛ս նաև Turkey, N 3, 1896, p. 33-34:

կի յուրաքանչյուր 64 գումարտակի զինվորների թիվն ավելացնել մինչև պատերազմական շրջանի քանակի, այսինքն՝ 800 մարդու: Աբդուլ Համիդի որոշման համաձայն՝ շատ կարճ ժամանակահատվածում IV բանակի զինվորների թիվը լրացվեց II և V բանակների հաշվին[1]:

Եվ այսպես՝ «համիդիեների» ձևավորման և նախնական շրջանի Արևմտյան Հայաստանում ծավալած թալանչիական գործունեության մասին փաստերն առատ են, այնքան առատ, որ պատմաբանը երբեմն տարվելով «դրանց հետաքրքրությամբ», մոռանում է հետապնդած խնդրի կոնկրետությունը և ծավալվում շարադրանքի մեջ: Գուցե մենք ևս: Հետևաբար բավարարվենք վերևի շարադրանքով և փորձենք ցույց տալ մարդախողխող այդ ավազակների սև գործերը 90-ական թվականների Արևմտյան Հայաստանում և հայաբնակ նահանգներում:

3. Հայ ժողովրդի ցեղասպանությունը 1890-ական թվականների առաջին կեսին

Առաջին զանգվածային *ցեղասպանությունը կազմակերպվեց Սասունում:* Հայոց հազարամյակների պատմության, հատկապես հերոսապատումների էջերում առանձնակի ու ընդգծված տեղ են գրավում մեր հայրենիքի մի քանի լեռնագավառները: Դրանք ոչ միայն ունեցած անառիկ աշխարհագրական դիրքով, այլև *ժողովրդի կոշտ ու խիզախ* բնավորությամբ, *ուժեղ և սարսափազդու արտաքինով*, մինչև քսաներորդ դարամուտը, նույնիսկ հետագայում էլ, իրենց դռները գոց պահեցին մահմեդական տիրակալների դեմ: Այդ լեռնահամայնքներն էին. *Սասունը* Արևմտյան Հայաստանում, *Զեյթունը* Հայկական Կիլիկիայում, *Արցախը – Լեռնային Ղարաբաղը* Արևելյան Հայաստանում:

Լեռնահայերն ունեին իրենց ուրույն, հայաշխարհի մյուս գավառներից ընդգծված ձևով տարբերվող սովորություններ, ճիշտ է համեստ ապրելու հնարավորություն, բայց երբեք օտարի առջև շլինքը չծռելու հպարտություն, մշտապես զենք կրելու *նվաճված իրավունք:*

Թուրքերի տիրապետությունը Սասունի և Զեյթունի վրա, մինչև անցյալ հարյուրամյակի առաջին տասնամյակը, փաստորեն *անվանական էր, ձևական,* որը պայմանավորված էր ոչ թե արյունարբու, հայասպան սուլթանների, հատկապես Աբդուլ Համիդի «հումանիզմով», այլ արծվաբնի համարում ձեռք բերած Լեռնահայաստանի օտարին չենթարկվելու «հանդգնությամբ»:

Ոչ միայն Հայաստանի, այլև ողջ Արևելքի ժողովուրդների հատուկ գավառների մեջ առանձնահատուկ էր Սասունը: Պատահակա՞ն էր արդյոք, որ հայոց դյուցազնավեպը *«Սասնա ծռեր»* էպոսը, ծնվեց, բերնեբերան անցնելով մեզ հասավ Սասնո լեռներից, Սանասարն ու Բաղդասարը, Մեծ ու Փոքր Մհերները, Հզոր Դավիթը սասունցիներ էին, Քուռկիկ Ջալալի–հրեղեն ծին Կաթնաղբյուրի ջուր էր խմել, քառատրոփ սլացել Մսրա Մելիքի դեմ, հաղթել նրա արագաշարժ արաբական նժույգին, «Թուր կեծակին» կոփվել էր լեռնագավառում արտադրված մետաղից: Սրանք հրաշք չէին, այլ պատմական իրողություն, ժողովրդի կողմից քիչ-ինչ գունազարդված, եր-

[1] ЦГВИАРИ, ф. ВУА, дело 366, лл. 23-24:

բեմն ցանկալին իրականին փոխարինած, հերոսապատումներ, որոնք նոր սխրանքների էին քաջալերում ոչ միայն սասունցիներին, այլև ողջ հայ ժողովրդին:

Էպոսը համահայկական էր, համահայաստանյան: Ժողովուրդը, հատկապես նրա գրագետ, բանագետ ու բանասաց ներկայացուցիչները, յուրահատուկ սիրով ու խանդաղատանքով էին գուրգուրում իրենց սասունցի հերոս նախնիների գործողությունները, բանաստեղծական քնքշաթույր գրչով ու գեղագիտական վարպետացած շուքով զարդարում նրանց: Դավիթը սիմվոլն էր քաջության ու բոլոր հայ քաջերի համար: Դավիթն այսօր էլ, հատկապես ղարաբաղյան հերոսական շարժման ժամանակ, օրինակ էր մարտակոչող, զինվորներին կռվի տանող հրամանատարների համար: Թուրքի դեմ կռվող ազատամարտիկները ***Շուշին ազատագրելիս*** ունեին Դավթի քաջությունը, Չենով Օհանի խելքը, Սիերների իմաստնությունը: Այնպես որ, Թուրքիայի մականի տակ մնացած, հայազրկված Սասունը (քրդացած հայերի թիվը մեծ էր այնտեղ) իր կերտած անցյալի փառքով, այսօր էլ որպես արծիվ սավառնում է «լեռ ու ձոր», հույս արթնացնում, երբևէ վերադարձվելու իսկական տիրոջը, ***Մայր Հայաստանին:***

Սասունն ու Զեյթունը պետություններ էին պետության մեջ՝ իրենց ուրույն ապրելակերպով, ընդհանուրից առանձնացող օրենքներով, սովորույթներով: XIX դարավերջին դրան ավելացավ նաև ***հայդուկային շարժումը,*** որի հիմնական կենտրոններն էին Սասնո լեռնաձերպերը, Մշո դաշտի անառիկ վայրերը, ինչպես նաև «դժվարամարս» այլ գավառներ:

Թուրքիայի կոկորդին կանգնած, կուլ չգնացող ոսկորներ էին այդ երկրահատվածները, թուրքերի և նույնիսկ օտար անցորդների կողմից վերամկրտված ***Չեռնոգորիաներ,*** որոնց վերանվանելու բազում փորձեր էին արվել: Միայն Զեյթունի վրա թուրքական բանակները ***42 անգամ*** էին արշավել և բոլոր դեպքերում էլ ***Ս. Աստվածածնա*** վանքի բարձունքում կամ ***Կոտորածի ձորում,*** դիակույտեր թողնելով, պարտված հեռացել: Սասունն ավելի քիչ թվով արշավանքներ էր տեսել, բայց և այնպես հաղթանակով էր ավարտել իր ոդիսականը: Խորամանկ թուրք պաշտոնյաները, տեսնելով, որ չեն կարող հաղթանակներ տանել, առաջնորդվում էին այն սկզբունքով, թե եթե չես կարող կտրել թշնամուդ ծեռքը, ապա այն համբուրիր, մաղծդ մթերիր՝ «հարմար պահին թափելու նրա գլխին»:

Աբդուլ Համիդի, Բ. Դռան բարձրաստիճան պաշտոնյաների, հատկապես թատերախաղը պատրաստող Չեքի փաշայի կարծիքով, «համիդիեների» ձևավորումից հետո արդեն պահը հարմար էր հաշվեհարդար տեսնել կեսհազարամյակ կիսանկախ վիճակ պաշտպանող Սասնո աշխարհի հետ:

Սասուն–Սանասուն–Սանասունք երկրամասը Մեծ Հայքի Աղձնիք նահանգի տասներորդ գավառն էր, որի կենտրոնն էր Սանասուն բերդը[1]: Հետագա դարերում բուն երկրամասը, նրա հարակից գավառները, տնտեսական, հատկապես ռազմաքաղաքական կարևորությամբ պայմանավորված, ձևավորեցին աշխարհագրական մի ամբողջություն, ստանալով ընդհանրական ***Սասուն*** անվանումը: Ըստ Լինչի՝ բուն Սասնո վարչական միավորի մեջ մտնում էին չորս գավառակներ. ***Շատախ, Տալվորիկ*** կամ ***Պսուն, Խուլբ և Խիլանք***[2]: Միայն Սասնո գյուղերի ընդհանուր թիվը նա հաշվում էր 102-ի:

Անվանի մտավորական Սմբատ Բյուրատը, մանրամասնելով Սասնո պատմությունը, արձանագրում է, որ XIX դարավերջին Սասունը համահավաքում էր ութ գավառ-

---

[1] ՀՍՀ, հ. 10, Երևան, 1984, էջ 198-200: ***է. Դանիելյանի*** հոդվածը:

[2] ***Х. Ф. Б. Линч,*** Армения, Тифлис, 1910, стр. 138-202.

ներ. *Շատախ, Վերին գավառ, Բուն Սասուն, Խարզան, Փսանք, Խիլանք, Խուլբ, Բռնաշեն*[1]. *ընդհանուր բնակչության թիվը շուրջ 31 հազար էր:*

Սասունի վարչական բաժանումների և բնակչության թվաքանակին է անդրադարձել բնիկ սասունցի, եղեռնից մազապուրծ, Վարդան Պետոյանը, որի *գրքի ձեռագիրը ժամանակին տպագրվել է իմ դրական գրախոսությամբ:* Ըստ նրա հաշվարկումների Առաջին աշխարհամարտի նախօրյակին Սասունը բաժանված էր տասը շրջանների և ուներ 539 գյուղ[2]: Նրա հաշիվներով երկրամասում ապրել էր 95 հազար բնակիչ, որից միայն 15 հազարն էին քրդերը:

Սասնո ազգագրությանն է անդրադարձել նաև *Եղիազար Կարապետյանը*, որի շահեկան աշխատության (*գրքի անպաշտոն խմբագիրն եմ եղել ես*) առաջին բաժնում խոսվում է երկրամասի վարչական բաժանումների, վարչակարգերի, բնակչության թվաքանակի մասին: Ըստ *բնիկ սասնեցու* տվյալների XIX դարավերջին և XX դարասկզբին պատմական Սասունը մտնում էր Բիթլիսի վիլայեթի Մուշի սանջակի կազմում և տրոհվում էր յոթ շրջանների, որոնք էին. *Խութը, Բռնաշենը, Մոտկանը, Փսանքը, Խուլբը, Խիանքը, Տալվորիկը, Շատախը, Սանասունքը*[3] (Սասուն): Նրա հարյուրավոր գյուղերից զուտ հայկական բնակչություն ուներն միայն 115-ը:

Ճիշտ է նկատում Հ. Ս. Պողոսյանը, որ վերոհիշյալ երեք և այլ հեղինակների հաղորդագրությունների միջև եղած տարբերությունները արդյունք էին Թուրքիայի վարչակարգի հարափոփոխության, աղբյուրների տարակարծության, ինչու չէ նաև տարիքով պայմանավորված, հեղինակների հիշողության լավ կամ նվազ լինելուն[4]:

Սասուն երկրամասի հզորությունն ու անառիկությունը պայմանավորված էր նաև նրա բարձրաբերձ լեռների սեգ գագաթներով, անանցանելի ձորախորշերով, ընդհանրապես աշխարհագրական յուրահատուկ դիրքով, որն առանձնակի էր ամբողջ Հայաստանում: Բնությունը կարծեք թե առատաձեռն էր գտնվել այդ լեռնագետնի ու նրա խորուխութ լեռնածերպերում հազարամյակներ առաջ խարսխված հայ ժողովրդի նկատմամբ:

Սասնո լեռները գտնվում են Հայկական Տավրոսի արևելյան հատվածում: Նրանք փռված են մերձզուգահեռականի ուղղությամբ *Ակբաքար* (Ակչակարա) լեռնաշղթայից մինչև Բիթլիս գետը 30-50 *կմ* լայնությամբ և 110 *կմ* երկարությամբ: Ամենաբարձր գագաթն ունի *Մարութա Սարը* (2967 *մ*), որը բանաստեղծական գույնով է ներկայացված Հայոց էպոսի չորրորդ ճյուղում («Սասունցի Դավիթ»)[5]: Հայրենամասի լեռների հյուսիսային մասով ձգվող *Կողբասարը* (30 *կմ*), *Սիմսարը* (35 *կմ*), *Խաչառաջը* (Խաչբեշ) առանցքային լեռնաշղթաներ են և *ջրբաժան* գիծ Արածանիի և Տիգրիսի միջև: Ջրագրական ցանցը խիտ է: Այստեղից են սկիզբ առնում *Հայոց Տիգրիսի վտակները՝ Սալնո* ջուրը, *Սասնա* ջուրը, *Ասպականը, Կողբո* ջուրը:

Մենք այսքան մանրամասն կանգ առանք Սասնո աշխարհագրության վրա, թվարկեցինք բազմաթիվ անուններ, շեշտեցինք նրանց հայկական ծագումն ու հայկական մնալը, որպեսզի *թուրք կեղծարարներին* ասենք, որ իզուր են ձեր «թափած ջանքերը»: Սասունը Հայաստան է և հիմա էլ քրդական ցեղերին մեկ անգամ ևս մի գրգռեք մեր ժողովրդի դեմ ասելով, թե տեսեք հայերը ձեր երկիրն են ուզում: *Մենք ուզում ենք մե՛ր երկիրը, հերոս Սասունը և հույս ունենք, որ մի օր կստանանք այն:*

Սասունը կերտեց հերոսական պատմություն, որը սկզբնավորվում էր դեռևս խոր

---

[1] *Սմբատ Բյուրատ* (Տեր Ղազարենց), Ելուզբզե Սասուն, Գ հ., Կ. Պոլիս, էջ 613:

[2] *Վ. Ս. Պետոյան,* Սասունի բարբառ, Երևան, 1954, էջ 7:

[3] *Ե. Կարապետյան,* Սասուն – ազգագրական նյութեր, Երևան, 1962, էջ 3-5:

[4] *Հ. Մ. Պողոսյան,* Սասունի պատմությունը, Երևան, 1985, էջ 107-112:

[5] ՀԱՀ, հ. 10, Երևան, 1984, էջ 203:

միջնադարից: Արաբների դեմ խութեցի Հովնանի մղած պատերազմները նյութ դարձան *Ծերենցի* (Հովսեփ Շիշմանյան) համար, ստեղծելու «Երկունք Թ դարու» պատմավեպը, ճիշտ այն օրերին, երբ թուրքերը թխպոտ ամպերով մթագնում էին լեռնագավառի երկնակամարը: Գեղարվեստական վարպետությամբ, անվանի վիպասանը, լեռնահայերին կոչ էր անում հետևել քաջ նախնիների, հատկապես Հովնանի ու նրա ազատամարտիկների օրինակին, որոնց նշանաբանն էր, ***«մահ կամ ազատություն»:*** Սասունն այդ օրերին իր վրա հրավիրեց ոչ միայն ողջ հայ ժողովրդի, այլև առաջավոր մարդկության ուշադրությունը[1]:

Աբդուլ Համիդը մի կողմից՝ կազմավորել էր տալիս քրդական «համիդիե» հեծելազորը, մյուս կողմից՝ թունավորում հայ-քրդական հարաբերությունները ողջ Արևմտյան Հայաստանում, հատկապես Սասունում, որտեղ այդ երկու ժողովուրդները խառն էին ապրում: Ըստ որում, հայերը շեյխերին հարկ էին վճարում ո՛չ միշտ և ո՛չ «կանոնավոր» ձևով: Կենտրոնական կառավարությունը, ջարդի՝ ***զանգվածային ցեղասպանության*** մասին մշակած իր ծրագիրը իրողության վերածելու նպատակով, արդեն հարկեր վճարած սասունցիներից, քրդերի միջոցով ***կրկնակի*** հարկեր պահանջեց:

1890-91 թթ. տնտեսական տարին անբարենպաստ էր, չորային, գյուղացին մի կերպ ծայրը ծայրին էր հասցնում, հետևաբար, և՛ քրդերին, և՛ թուրք վալիին չէին կարող հարկեր վճարել: Հարկերից հրաժարվելը համարվեց ***ապստամբություն,*** և ***քրդական ավարածարավ խուժանը,*** թուրք բաշիբոզուկները, ընկած «***համիդիեների***» և կանոնավոր զորքի ետևից, սկսեցին արշավանքը դեպի Սասուն[2]:

1891-1893 թթ. ***քրդական զորամիավորումները*** պետության հովանավորչությամբ, արյունահեղ պատերազմ էին մղում լեռնագավառում: Հայ լեռնականները, տեսնելով, որ բանակցությունների միջոցով հաջողության հասնել չեն կարող, որոշեցին անցնել կազմակերպված դիմադրության, ***այո՛, դիմադրության և ո՛չ ապստամբության, ինչպես փորձում էին այն օրերին ներկայացնել, այսօր էլ շարունակում են իրենց նախորդների ստահոդ լուրերը «հաստատել» թուրք պաշտոնյաները:***

Մուշի և Սասունի հարթավայրի վրա ընկած հայկական մի քանի գյուղերի, հատկապես ***Տատրագոմի*** գյուղացիները, ***Հովնանի*** ու նրա հայդուկային խմբի գլխավորությամբ, առաջին ու լուրջ, բայց ***ինքնապաշտպանական*** մարտեր մղելով, «***ջարդեցին արյունախում քրդերի քիթը***», ետ շպրտեցին թուրքական ոստիկաններին: «Համիդիեական» զորաջոկատները, հայերի ունեցվածքի ավարառության ծարավով՝ սողում էին դեպի լեռնագավառի սիրտը: Նրանց դեմ հանդիման դուրս եկան երկրամասի «առաջապահ», հատկապես ***Շենիկ, Սեմալ, Տալվորիկ, Գելիեգուզան, Խոծոծվանք, Շուշամերկ*** և այլ գյուղերի բնակիչները, «քրդերին լավ դաս տալուց» բացի քանդեցին «***սատանի կամուրջը***», որը հրոսակախմբերի նահանջի միակ ուղին էր[3]:

---

[1] 1890-ական թվականների Սասնո, հատկապես, հայկական ջարդերի պատմության վերաբերյալ ստեղծվել է ծավալուն գրականություն: Տե՛ս ***Հ. Ս. Պողոսյան,*** Սասունի պատմություն, էջ 180-200, ***Ե. Կ. Սարկիսյան,*** նշված աշխատությունը, էջ 108-114: ***Վ. Ա. Բայբուրդյան,*** նշված աշխատությունը, էջ 215-221: ***Յու. Ա. Պետրոսյան,*** նշված աշխատությունը, էջ 220-224: ***Ս. Մարկոսյան,*** նշված աշխատությունը, էջ 295-305: ՀՍՀ, հ. 10, էջ 202-205: «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 240-256: ***Մ. Ս. Լազարև,*** նշված աշխատությունը, էջ 56-61: ***Philip Mansel,*** Constantinople, p. 375-391. ***Ծ. Պ. Ադայան,*** Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 123-130: ***Լորդ Կինրոսս,*** նշված աշխատությունը, էջ 608-609: «Հայկական հարցը», ՀՍՀ, խմբագրությամբ՝ ***Կ. Ս. Խուդավերդյանի,*** Երևան, 1996, էջ 401-406 և բազմաթիվ այլ աշխատություններ:

[2] ***Frédéric Macler,*** La Nation Arménienne, son passé, ses malheurs, Paris, 1923, p. 41-43. Տե՛ս նաև «Թուրքական աղբյուրներ», Երևան, հ. Դ, 1872, էջ 171-175:

[3] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 241:

Թուրքիայի վարած ցեղասպանության քաղաքականությունը ակնհայտ էր: Լեռնահայերն այդ մասին ստույգ տեղեկություններ ունեին, թեկուզև այն հատուկենտ քրդերից, որոնք դեռևս չէին թունավորվել պանիսլամիզմի վարակիչ, քրիստոսասպան ախտով: Համայնքը ևս նախապատրաստվում էր մահու և կենաց պատերազմի, իր շարքերից տալով հայրենանվեր ու խիզախող այնպիսի անհատների, որոնց անունները *ոսկե տառերով* դրոշմվեցին հայոց արյունաթաթախ պատմության էջերում: Այդ հերոսներից հայտնի դեմքեր դարձան *Սպաղանցի Մակարը, Միհրան Տամատյանը, Մուրադը* (Համբարձում Բոյաջյանը), *Հրայրը* (Արմենակ Ղազարյանը), *Գրգոն* (Գրիգոր Մռանյանը), *Քոլոզը* (Հովհաննես Կիրակոսյանը), *Գևորգ Չաուշը* (Գևորգ Ադամյանը) և ուրիշներ[1]: Սասունի և հարթավայրում գտնվող Մուշի հայ բնակչությունը, իրենց շարքերից տալով տաղանդավոր ղեկավարների, որոշեց *թանկ ծախել «աստծո կողմից»* մեկ անգամ տրված կյանքը, դիմագրավել հարձակումներին մինչև վերջին մարդը: *Ասում են՝ զորավարները ծնվում են պատերազմների ժամանակ՝ մարտադաշտում:* Սասունի առյուծները, Սասունցի Դավթի թոռները, մռնչում էին *Տալվորիկի* ու *Գելիեգուզանի* գյուղամուտքերի առաջ, քրդերից դիակույտեր գոյացնելով այդ անօրեններին թույլ չէին տալիս մտնել իրենց սրբազան հողը:

Աբդուլ Համիդը հասկացավ, որ միայն «ավազակաբարո» քուրդ ցեղախմբերի արշավանքներով Սասունը հպատակեցնել և հայերին հիմնովին բնաջնջել հնարավոր չէր, ուստի 1893 թ. հունիսի 7-ին Տալվորիկ ուղարկվեց Բիթլիսի նահանգապետ Հասան Թահսին փաշան ստվարաթիվ «զորայիններով»: Նրան օգնության շտապեցին Գենջի մյութեսարիֆը, ինչպես նաև Մուշի ոստիկանները ոստիկանապետ Իսկենդեր-աղայի հրամանատարությամբ[2]:

1893 թ. հունիսին Սասունը բոլոր կողմերից շրջապատվեց թուրքական զորքերով, հատկապես «համիդիե» հեծելազորի ծիավորներով և քրդական շեյխերի բաշիբոզուկներով: Թուրք ու քուրդ ավազակներին ուղեկցում էր ավարառության եկած իսլամապաշտ ամբոխը: Առաջին ընդհարումը տեղի ունեցավ *Շենիկ* գյուղի մոտակայքում, որտեղ հայկական կողմից մարտերը գլխավորում էր *Գրգոն,* որին աշխարհազորայիններով օգնության շտապեց *Մանե Պողոսը:* Թեկուզ անհավասար մարտերում, հայ հերոսները քուրդ-թուրք հրոսակներին հարկադրեցին բռնել նահանջի ճանապարհը չխաբվելով Հասան Թահսին փաշայի ստահոդ առաջարկություններից և շարունակեցին անհավասար ու հերոսական *գոյամարտերը:*

Գնալով սասնեցիների և կառավարության միջև անդունդը խորանում էր, միաժամանակ բացահայտվում, թե թուրքերի ու «համիդիեների» նպատակը ոչ թե հարկերի գանձումը կամ լեռնականների հպատակեցումն է, *այլ ողջ հայ ժողովրդի հիմնովին ոչնչացումը – ցեղասպանությունը:* Սակայն նրանք դեռևս երկնչում էին հայերից և զգուշությամբ նախապատրաստվում վճռական մարտերին:

Ս. Մարկոսյանը բերում է հետևյալ շարադրանքը. «Այդպիսի պայմաններում գեներալ-նահանգապետը շարժվեց Մուշ և զորքով ու դաշտային երկու հրանոթով մտավ Տալվորիկի մոտի շրջան. բայց արդյո՞ք այն պատճառով, որ իր ուժերը անբավարար համարեց, թե՞ հրաման ստացավ հանգստությունը չխանգարել, նա հարձակման չդիմեց և սահմանափակվեց նրանով, որ պահում էր պաշարման մեջ: Նախքան հեռանալը նա պատանդներ տալով, տեսակցություն ունեցավ Տալվորիկի ամենաազդեցիկ մարդկանց հետ և նրանց հարցրեց, թե ինչու չեն ենթարկվում կառավարու-

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 242:

[2] ***Ե. Կ. Սարկիսյան,*** նշված աշխատությունը, էջ 103: Տես նաև *Գևակ Տարոնեցի,* Ապստամբ Սասուն, ժնև, 1903, էջ 7-9:

թյանը և չեն վճարում հարկերը: Նրանք պատասխանեցին, որ իրենք կառավարության դեմ չեն ապստամբվում, բայց հարկերը երկու անգամ չեն կարող վճարել՝ և՛ քրդերին, և՛ կառավարությանը: Եթե կառավարությունն իրենց պաշտպանի, ապա իրենք հարկերը կվճարեն կառավարությանը: Բանակցություններից բան դուրս չեկավ և պաշարումը շարունակվեց այնքան, մինչև ծյունը եկավ»[1]:

1894 թ. վաղ գարնանը հնչեց արյունախում սուլթանի հրամանը – այն է. Սասունը հիմնահատակ կործանել *չխնայելով այնտեղ ոչնչի և ոչ ոքի*[2]: Արշավող զորքի և քրդական խուժանի ընդհանուր հրամանատարությունը հանձնարարվեց Անատոլիական IV բանակի հրամանատար Զեքի փաշային: Նա Բիթլիսում հատուկ խորհրդակցություն անցկացրեց, որին մասնակցում էին օսմանյան կառավարական զորքի գինվորական հրամանատարները, ինչպես նաև, և հատկապես, քրդական ազդեցիկ *տասնյոթ ցեղապետները*[3]: Թուրք-քրդական ոճիրը պատրաստվեց, մշակվեց պլանը, և անցան նրա գործադրությանը:

Սուլթանական կառավարությունը Սասնո շուրջ ստեղծեց երկաթե օղակ, շրջապատեց լեռնահամայնքը և հայտարարեց պատերազմական դրություն: Բ. Դուռը Բիթլիսից Սասուն ուղղեց 12 հազարանոց կանոնավոր բանակը, ինչպես նաև Գերմանիայից նոր գնած հրետանին (թնդանոթներ):

Ողջ արշավանքի, ինչպես և Բիթլիսից շարժվող զորքերի գլխավոր հրամանատար նշանակվեց Զեքի փաշան: Նրան օգնության շտապեցին Դիարբեքիրում նստած երեքհազարանոց հետևակային գունդը՝ Օսման փաշայի հրամանատարությամբ: Զեզիրե–Բոհտանից, Մուշի հարթավայրով, Տալվորիկ շարժվեց հեծելազորը՝ Գենջեն-բաբուրի գլխավորությամբ: Սասնո դեմ ուղղվեցին 19-րդ հեծելազորային գունդը՝ Երզինջանից, 32-րդ հեծելազորային գունդը՝ Մուշից, 25-րդ հետևակային գնդի առաջին վաշտը՝ Էրզրումից[4]:

Դրանով չբավարարվեցին: Կարծեք աշխարհը փուլ էր եկել, և թուրքական բոլոր տեսակի ռազմական ուժերը շտապում էին դեպի Սասուն՝ ոմանք կռվելու, ոմանք «այլահավատ գյավուրներին» պատժելու, ոմանք էլ պարզապես թալանի, ավարառության, հայ կանանց և աղջիկներին առևանգելու: Այդ նպատակով, կանոնավոր զորքերից զատ, Սասուն ուղղվեց *քրդական քառասունհազարանոց համիդիեն, ինչպես նաև Հալեպից ու Բաղդադից երեքհազարանոց քրդական հեծելագնդը՝ Մահմեդ էլ Աղասիի* գլխավորությամբ[5]: Քրդերին այնպես էին թունավորել հակահայկական «թունամիջոցներով», որ հայ երևելիների բոլոր փորձերը նրանց չեզոքացնելու գործում ապարդյուն անցան:

Շրջապատման օղակի մեջ առած մահմեդական «կանոնավոր» ու «անկանոն» ոհմակը՝ իր հետ լեռնագավառ էր տանում տասը ջորի բարձած *ութսուն կուժ նավթ*[6]:

Նրանք այդ վառելիքը մեծ դժվարությամբ լեռնածերպերն էին բարձրացնում,

---

[1] *Ս. Մարկոսյան,* նշված աշխատությունը, էջ 205: Տե՛ս նաև **АВПРИ,** Политархив, Армянский вопрос, янв.-июнь, 1895, лл. 77-78.

[2] *Վ. Բայբուրդյան,* նշված աշխատությունը, էջ 216:

[3] Հայաստանի Հանրապետության ՊՊԿԱ, ֆ. 56, գործ 145, թերթ 19-20:

[4] **АВПРИ,** Политархив, дело 3447, л. 42. Донесение генерального консула Эрзерума, стр. 58. Տե՛ս նաև *Лазарев,* Причины бедствий в Турции и ответственность за разорение Сасуна, Тифлис, 1925, стр. 29-30. Տե՛ս նաև՝ *Ե. Կ. Սարկիսյան,* նշված աշխատությունը, էջ 110-111:

[5] *Ա. Ալպոյաճեան,* Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրե, 1950, էջ 435: Տե՛ս նաև *Վ. Բայբուրդյան,* նշված աշխատությունը, էջ 216-217:

[6] *Ս. Մարկոսյան,* նշված աշխատությունը, էջ 205:

որպեսզի հեշտացնեն գազանաբար այրելու գյուղերն ու բնակավայրերը, ամենասարսափելին կրակի ճարակ դարձնեն սասունցիներին կենդանի-կենդանի այրելով մարդաշատ հրապարակներում: Այդ մասին Վանում հաստատված անգլիական փոխհյուպատոս *Հոլլուորդը* 1894 թ. գրած զեկուցագրով հաղորդում է. «Նավթը բերեցին Բիթլիսից և օգտագործեցին հրդեհելու մարագներն ու գոմերը, այնտեղ պատսպարված հայերի հետ միասին»[1]: Այնուհետև, դեպքերին ժամանակակից անգլիացին վկայում է, թե «նավթը օգտագործում էին նաև դիակներն այրելու համար»[2]: *Զարդերին մասնակից զինվորները պատմել են, թե կենդանի մարդկանց շուրջկալի մեջ դնելով և նավթով այրելու ժամանակ, երբ մի երեխա, կրակից դուրս թռչելով, փախել է, նրան «սվինահարեցին և նորից գցեցին կրակի հրեղեն բոցերի մեջ ու այրեցին»*[3]:

Արյունախում Սուլթանի համար Սասնո հայասպանությունը ազդանշուշ էր հայ ժողովրդի *ցեղասպանության* իրականացմանը ողջ երկրով մեկ: Այն միաժամանակ փորձաքար էր ստուգելու քրդական բարբարոս, ավարառու և մարդախողխող ցեղախմբերի ոչ միայն մարտունակությունը, այլև համոզվելու նրանց հավատարմությանը կենտրոնական կառավարությանը[4]:

Համիդն ավելի հեռամետ ծրագրեր ուներ, քան կարծում էին նրա շրջապատի մարդիկ: Դրա համար էլ նա ամեն ինչ անում էր մահմեդական քրդերի, հատկապես «համիդիե» հեծելազորի ձեռքերը հայոց արյունով ներկելու: Նրա հանձնարարությամբ տասնյակ մոլեռանդ շեյխեր ուղարկվեցին Սասուն, որպեսզի գրգռեին քրդերի կրոնական ֆանատիզմը, ծայրաստիճան լարեին հայ-քուրդ հարաբերությունները[5]: Այսպիսով ամեն ինչ հաշվի առնելով Չեքի փաշան պատրաստ էր բարձրանալ հայոց լեռնաշխարհը մսաղացի:

Լեռնականները ևս որոշ նախապատրաստություն տեսան առաջնորդվելով հուսահատական ամենավերջին որոշմամբ, այն է *«մա՛հ կամ ազատությո՛ւն»*: Խրոխտ լեռների լուսառատ հորիզոնում, դժբախտաբար, հույսի ուրիշ ոչ մի ճառագայթ չէր երևում: Նրանք գիտակցում էին, որ պիտի մահանան, դրա համար էլ որոշեցին իրենց կյանքն ավելի թանկ վաճառել, քան թուրքերը գիտեին:

1894 թ. հուլիսի 15-ին Սասունի Շենիկ գյուղում, գյուղապետ *Գրգո Մոսեի* (Գրիգոր Մովսիսյանի) հարկի տակ հավաքվել էին երևելի անձնավորություններ, աշխարհիկ և հոգևոր այրեր, հայդուկային խմբերի առաջնորդներ: Հավաքի մասնակիցներից հիշատակվում են *Մուրադի* (Համբարձում Բոյաջյանի), *Միհրան Տամատյանի, Գևորգ Չաուշի, Քոլոզի*, Գելիեգուզանի գյուղապետ իշխան *Պետոյի*, դեռևս նոր ինչ իր ոդիսականն սկսած *Անդրանիկ Օզանյանի*–ապագա մեծ զորավար գեներալ *Անդրանիկի* և այլոց անունները:

Ժողովականները միաբերան պաշտպանական ուժերի գլխավոր հրամանատար են ընտրում *Մուրադին*, որն իր ելույթը սկսեց այսպես. «Եղբայրնե՛ր, Սասունը պաշարված է: Ձեզ հայտնի են առաջին օրվա արյունահեղ ընդհարումը բադկանցի աշիրեթի հետ: Կառավարական զորքն արդեն եկել հաստատվել է մեզնից մեկ երկու ժամ հեռու... *քուրդ աշիրեթներն ու հրոսակախմբերն իրենց անթիվ ոհմակներով պաշարել են մեր լեռները:* Սակայն մենք չպետք է վհատվենք, այլ Սասունի վաղեմի

---

[1] **АВПРИ**, Политархив, дело 3435, 1894-1895, л. 25.

[2] Նույն տեղում, л. 16-21.

[3] *Ե. Կ. Սարկիսյան*, նշված աշխատությունը, էջ 113-114:

[4] *Վ. Ա. Բայբուրդյան*, նշված աշխատությունը, էջ 216-217:

[5] *Ա. Ալպոյաճեան*, նշված աշխատությունը, էջ 435:

սովորության համաձայն պիտի ջանանք մինչև վերջ, մեր արյան վերջին կաթիլով *պաշտպանել մեր հայրենիքի լեռները, մեր ընտանեկան սուրբ օջախը*»[1]: Նրանք խորհում էին նաև ստեղծված դրությունից խաղաղ ելք որոնելու մասին: Անհնարին էր, քանզի պահանջներն անիրականանալի էին:

Բ. Դուռը, Զեքի փաշայի բերանով, սասունցիներից պահանջում էր վճարել անցած յոթ տարիների չվճարված հարկը *175 հազար ղուրուշի արժողությամբ:* Այնուհետև, ըստ կառավարության պահանջի, Սասունի, հատկապես, Տալվորիկի 67 անվանի մարդիկ, երկրահատվածի քահանաներին իրենց հետ վերցրած, պիտի գնային Մուշ և հպատակություն հայտնելով, ներողամտություն խնդրեին: Ամենածանր պահանջն այն էր, որ Բ. Դռան կամ վիլայեթի ոստիկանությանը պետք է հանձնեին երկրամասում գտնվող բոլոր օտարերկրացիներին[2]:

Սասունցիները ջինջ ու մաքուր էին, բայց *ոչ երբեք այնքան միամիտ*, որ չհասկանային Համիդի ու նրա գործակալների, քուրդ ու թուրք ջարդարարների խաբեական մտադրությունը: Կառավարական զորքերի հրամանատարությունը ջանում էր գլխատել շարժումը, այսինքն՝ ընդդիմադիրների գլխավորներին հեշտությամբ «ձեռք գցելով» ոչնչացնել, նոր ապա սկսել լեռնագավառի բնակչության մորթոտման – *միջազգային բնորոշմամբ՝ ցեղասպանության* պրոցեսը:

Շենիկի հավաքում կատարվեց հայ զինականների հաշվարկում: Ըստ վիճակագրության՝ Տալվորիկն ուներ 304 հրացանակիր, որին գումարվելով շրջակա գյուղերի աշխարհազորայինները՝ դառնում էին 741: Գելիեգուզանը՝ 208, Շենիկը՝ 160, Սեմալը՝ 180, Իշխանաձորն ու Հարթինքը՝ 34, Աչբին՝ 120, Ալիանցիք՝ 208: Այս թվերն, իհարկե, լավագույն դեպքում, կարելի է կրկնապատկել, որովհետև կայծաքարային հրացանները սակավաթիվ էին, կռվողների քանակը՝ մեծ: Նրանց մեծ մասն էլ կռվում էր թուրքերից և քրդերից խլած հրացաններով[3]:

Եվ այսպես, Սասունը պաշարած քրդական «համիդիեների» կազմում ընդգրկված հեծյալների թիվը ձգվում էր մինչև *հիսուն հազարի*, այդքան էլ քուրդ խուժան էր եկել լեռնագավառի կողոպտմանը, ավարառությանը: Թուրքական «կանոնավոր զորքը» ևս համահավաքում էր շուրջ *հիսուն հազար* հետևազոր, հետևին ձգած արյունահեղություն քարոզող շեյխեր ու դերվիշներ, մոլլաներ ու բարձրաստիճան իսլամ այլ քարոզիչներ: Մոլլաներն ու շեյխերն իրենց ոռնացող քարոզներով, աղմկոտ ու աղաղակող կոչերով, զորքն ու ամբոխը տանում էին *գազավաթի – սրբազան պատերազմի:* Ամենուր երևում էին սպիտակ չալմաներ, որոնք հայ ժողովրդին *ցեղասպանության* ենթարկելու քարոզներ էին կարդում բացահայտ ու առանց երկնչանքի:

Երկուստեք զիջումների գնալու բանալին չգտնվեց: Վիճակն արդեն գցված էր, ռուբիկոնն անցել էին, և սկսվեց մի արյունահեղ պատերազմ, որի, երկու կողմերից, *ուժերն անհավասար էին*, խնդիրներն ու ձգտումները՝ տարբեր: *Կերտվում էր հայոց պատմության զոհառատ, միաժամանակ հերոսական էջերից մեկը:*

Թուրքերն ու քրդերը հիմնական հարվածի ուղղությունը նախատեսել էին *Շենիկ –Սեմալ* հատվածում: 1894 թ. հուլիսի 27-ին շրջակա գյուղերն ավերելուց, հրո ճարակ դարձնելուց, երբեմն հողին հավասարեցնելուց հետո թշնամին, հատկապես «համիդիեները», հարձակվեցին Շենիկ գյուղի վրա: Հուլիսի 27-ից օգոստոսի 2-ը

---

[1] «Ապստամբ Սասունը», մի էջ Սասունի նորագույն դեպքերից նկարագրեց *Գլակ Տարոնացին,* ժնև, 1903, էջ 4:

[2] *Հ. Մ. Պողոսյան,* Սասունի պատմությունը, էջ 196-197: Տե՛ս նաև՝ «Ապստամբ Սասունը», էջ 4-5: Հայաստանի Հանրապետության ԿՊՊԱ, ֆ. 56, ցուցակ 4, գործ 145, թերթ 79-90:

[3] Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվ, *Համբարձում Առաքելյանի* ֆոնդ, վավ. 168, թերթ 3: Տե՛ս նաև՝ *Հ. Մ. Պողոսյան,* նշված աշխատությունը, էջ 198-200:

ծավալվեցին արյունահեղ կռիվներ, որոնք հաճախ վերածվում էին ձեռնամարտերի: Ուժերի բացարձակ անհավասարության պատճառով, լեռնականները հանձնում են Շենիկը, Սեմալը և բարձրանալով վերև, նոր դիրքեր են բռնում Ալիանքի բարձունքներում[1]:

Գրաված գյուղերում մնացած բնակչության նկատմամբ վերաբերմունքը դաժան էր, սպանություններն ու ավերածությունները անտանելի: Բայց շուտով վիճակը կտրուկ փոխվեց: Շրջակա գյուղերից օգնական ուժեր ստանալով՝ շենիկցիներն ու սեմալցիները անցան հակահարձակման: Օգոստոսի 2-ի ճակատամարտում հակառակորդը կորցրեց 354 մարդ, իսկ լեռնականները՝ 40 սպանված և զգալի թվով վիրավորներ[2]: Խուճապահար նահանջող թուրքական ասկյարները, հատկապես քուրդ մարդակերները, ահաբեկված լեռնականների սրընթաց հարվածներից, նահանջելով, ուղղակի փախուստի դիմելով, առասպելներ էին հորինում «*սարսափազդու տեսք ունեցող սասունցի հսկաների*», նրանց օգնության հասած «*մոսկովյան գյավուրների*» և հայերի «*արտասովոր հրանոթների մասին*»[3]:

Շենիկում լեռնականների տված հաղթական ճակատամարտն առավել սթափեցրեց թշնամու գլխավոր շտաբին: 1894 թ. օգոստոսի 3-ին սկսվեց ընդհանուր հարձակումը: Ըստ որում, առաջին անգամ գործողության մեջ դրվեցին թնդանոթները: Լեռնականները, շուրջ յոթ օր, մահու և կենաց պայքար մղելով, կարողացան մնալ իրենց դիրքերում: Օրվա քսանչորս ժամում անընդհատ տեղացող հրազենային ու հրանոթային կրակի տակ մնալով, նրանք հերոսաբար դիմագրավում էին, մեծ զոհեր տալով, համենայն դեպս մեկ սանտիմետր ետ չէին նահանջում: «*Մա՛հ կամ ազատությո՛ւն*» նշանաբանով կռվող սասունցիները, դժբախտաբար, հարկադրված էին մահն ընտրել, մեռնելով սակայն «*թանկ էին ծախում*» իրենց կյանքը թշնամուն տալով լուրջ վնասներ:

Դժբախտաբար լեռնականների շարքերը գնալով նոսրանում էին և պայքարը հաղթանակի իմաստով, դառնում էր **անհավասար և անհուսալի**: Տեսնելով շրջափակող օղակի աստիճանական նեղացումը, սողալով, մեծ զոհերի գնով լեռներ բարձրացող քրդական բարբարոսների կողմից ռազմավարական կարևոր կրակակետերի գրավումը, սասունցիները թողնում են Շենիկ և Սեմալ գյուղերը և մարտական շարքերով նահանջում Ալիանք ու Անդոկի փեշերը: Ոգևորված այդ նահանջից թշնամու հորդաները, կրկին մեծ թվով սպանվածներ տալով, ներխուժում են Գելիեգուզան:

Թուրք-քրդական ծանր հարվածներին արիաբար դիմագրավում են հայ աշխարհազորայինները, լեռների ծերպերում «մկրտություն» ստացած քաջ ֆիդայիները: Դեռևս իրենց ծեռքում մնացած բարձունքներից նրանք քարեր էին գլորում հայակուլ հրեշների գլխին, կռվում մինչև արյան վերջին կաթիլը, մեռնում հերոսաբար, ողջակիզվում քաջերի պես, այսինքն առանց փրկության որևէ աղերսանքի, առանց տրտունջի: Մինչև կյանքի վերջին վայրկյանն էլ քաջերի նշանաբանը մնում էր «*մա՛հ կամ ազատությո՛ւն*»[4]:

Երկու շաբաթ տևեցին անհավասար գոտեմարտերը: Թնդանոթներով և իր ժամանակի իմաստով զենքի վերջին տեսակով զինված բազմահազար իսլամ բարբարոսները, շեյխերի ու մոլլաների առաջնորդությամբ, քայլ առ քայլ նվաճում էին հայերի

---

[1] Հ. *Մ. Պողոսյան,* նշված աշխատությունը, էջ 200-201: Տես նաև «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 244:

[2] Եղիշե Չարենցի անվան ԳԱԹ, Հ. *Առաքելյանի* ֆոնդ, վավ. 165, էջ 3:

[3] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 244: Տես նաև *Գլակ Տարոնացի,* Ապստամբ Սասուն, Ժնև, 1903, էջ 23:

[4] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 244:

դիրքերն ու բնակավայրերը: Սկսվում էր *մահախուճապ* նահանջը, որին բնականաբար պիտի հաջորդեին կոտորածները:

1894 թ. օգոստոսի 31-ը արյունարբու Համիդ II սուլթանի գահակալության տարեդարձի օրն էր: Թուրքերն ու հատկապես «*համիդիե*» քրդերը որոշել էին իրենց խալիֆի «ծնունդը ներկել հազարավոր անմեղ հայերի արյամբ»: Եվ այդ օրվանից սկսվեց հայկական *մի գողգոթա*, որի նմանը չէր տեսել հանուր մարդկությունը իր հազարամյակների պատմության ընթացքում: Դժվար է ասել, թե ում գրիչն ու լեզուն պիտի ուներ պատմաբանը, որպեսզի կարողանա նկարագրել այդ *ողբերգությունը*, որը մեկ բառով կարելի է բնութագրել իբրև *ցեղասպանություն:* Սակայն բերենք մի քանի *փաստեր միայն*, հատկապես օտարազգիների վկայություններ[1], որոնք փշի նման պետք է ծակեն առօրյա թուրք պատմաբանների և պետական այրերի աչքերը, չնայած այն հանգամանքին, որ այդ կեղծարարները մեզանից լավ գիտեն ճշմարտությունը, բայց ջանում են խնամքով թաքցնել համաշխարհային հասարակայնությունից: Դա այլևս հնարավոր չէ:

Ինչպես նշեցինք, *հարյուրհազարանոց* զորքը, հետևից գցած ավարածարավ ամբոխը, ուժեղացնում է հայասպան փոթորիկը: Նրանք, իրենց դաժանությամբ ետ էին բերել Մահմուդ երկրորդից առաջ գործող ենիչերիների հայասպան գործելակերպը, դերեբեյների դաժանությունները, Մահմեդի գազավաթի սկզբունքները[2]:

1894 թ. հոկտեմբերի 29-ին էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս *Վ. Մաքսիմովը,* Կ. Պոլսի դեսպան *Ա. Նելիդովին* գրում է. «Ըստ վերջերս ստացած տեղեկությունների, թուրքերը Սասունում ոչնչացրել են 15 հազար հայ: Ընդ որում առանձնակի դաժանությամբ աչքի է ընկել գնդապետ *Իզմայիլ բեյը*, Սասունի բնակիչների դեմ ուղարկված զորքերի հրամանատարը, որը հրամայել է բռնել մի քանի գյուղերի պատվավոր բնակիչների և տանջամահ անել: Երբ այդ գյուղերի բնակիչները, իմանալով այդ գազանությունների մասին սարերն են բարձրացել, նա հրամայել է ռմբակոծել սրանց և պահանջել է հանձնվել: *Հենց նույն գիշերը բոլոր հանձնվողները անգթորեն ոչնչացվել են: Թուրքերը վայրագություններ են արել 25 օր և կործանել են 50 գյուղ* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[3]:

1894 թ. նոյեմբերի 26-ին, նույն Մաքսիմովը, Կ. Պոլսում ռուսական դեսպանության խորհրդական *Ժադովսկուն* հաղորդում է. «Այսպես... քրիստոնյա բնակչությունը ամենաանգութ և բարբարոսական ձևերով ոչնչացվել են [Սասունի] հայկական 32 գյուղերում: Դժվար է բառերով հաղորդել... սուլթանի զինվորների վայրագությունները: Նրանք սպանում են մանուկներին, իրենց անասնական հակումները բավարարելով՝ անգթորեն ոչնչացնում են աղջիկներին և կանանց... զինվորները և *քրդերը* ոչնչացնելով բնակիչներին և ավերելով գյուղերը, հավաքել տարել են վիթխարի քանակությամբ անասուններ: Նրանց ավարն այդ առումով այնքան մեծ է եղել, որ ջարդից մեկ շաբաթ անց, Մուշ քաղաքում մեկ ոչխարը ծախել են 5 ղուրուշով (42 *կոպ.*), ցուլը՝ 20 ղուրուշով (1 *ռ.* 58 *կոպ.*), մեկ փութ կարագը 10 ղուրուշով (84 *կոպ.*), մեկ փութ մեղրը՝ 20 ղուրուշով (մոտ 1 *ռ.* 58 *կոպ.*) և այլն»[4]:

1894 թ. նոյեմբերի 26-ին, Կ. Պոլսի բրիտանական դեսպան *Ֆիլիպ Քերին* էրզրումի հյուպատոս *Գրեյվսից* ստանում է մի զեկուցագիր՝ Սասունի կոտորածների վերաբերյալ: Այնտեղ մասնավորապես ասված է. «Երկրամասում ապստամբություններն

---

[1] *Ծ. Պ. Աղայան,* Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, էջ 124-130:

[2] *Վ. Ա. Բայբուրդյան,* նշված աշխատությունը, էջ 217:

[3] **АВПРИ,** Посольство в Константинополе, дело 3716, л. 152-153.

[4] **АВПРИ,** նույն տեղում, թերթ 45: Տե ս նաև՝ «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», Երևան, 1991, էջ 35:

ու ունեցվածքի ոչնչացումը այն աստիճանի նկատելի են, որ անհնար է հեշտությամբ թաքցնել դրանց հետքերը: Ավերված ու ամայացած շրջանը մնում է որպես նշանակալի աստիճանի հավաստիության վկա պ. Հոլլուորդի պնդումների համար...»[1]:

1894 թ. նոյեմբերի 6-ին, Վանից, անգլիական փոխհյուպատոս *Հոլլուորդը,* իր երկրի դեսպան *Ֆ. Քերրիին,* նամակի տեսքով, մանրամասն հաշվետվություն է հաղորդում Սասունում կատարված իրադարձությունների մասին: Այդ ընդարձակ վավերագիրը կազմված լինելով անկողմնակալ դիվանագետի կողմից, անժխտելի ապացույց է, որ թուրքերն ու քրդերը *դաժան ցեղասպանություն* են իրականացրել լեռնային երկրահատվածում:

Մեջբերենք այդ զեկուցագրից առանձին հատվածներ. «Բիթլիսից ուղարկված զորքերն իրենց հետ ունեցել են *ութսուն բաք կերոսին և չորս լեռնային հրանոթ... կոտորածը կատարվել է առանց որևէ խղճահարության և կամ տարիքի և սեռի խտրության:* Երևելի անձանց մի մեծ խումբ, քահանայի գլխավորությամբ, ընդառաջ են եկել հրամանատարին ձեռքներին բռնած հարկերի վճարման ստացագիրը՝ դրանով ցանկանալով ապացուցել կառավարության հանդեպ իրենց օրինապահությունը և գթություն են խնդրել: *Նրանց շրջապատել և կոտորել են մինչև վերջին մարդը*»:

Գելիեգուզանում շատ երիտասարդների ձեռն ու ոտը կապել են, շարել կողք կողքի, վրաները ցախ լցրել և ողջ-ողջ այրել: Մյուս գյուղում բռնել են քահանային և մի քանի գյուղացիների: Քահանայի վզին շղթա են գցել և այս ու այն կողմ քաշքշել այնքան, որ համարյա խեղդել են: Վերջապես, նրանք գետնին ուղղահայաց տնկել են սվինները և նրան վեր են նետել այնպես, որ ընկել է սվինների վրա:

Մի այլ գյուղում տղամարդիկ կանանց ու երեխաների հետ թաքնված են եղել քարայրում, որտեղ մնացել են մի քանի օր, մինչև որ թույլերը սովից մեռել են: Մնացածներին էլ հայտնաբերել են զինվորները և խողխողել սվիններով, մի զենքով, որը և հիմնականում գործադրվում էր բոլոր այս իրադարձությունների ընթացքում:

Մոտ վաթսուն երիտասարդ կանանց ու աղջիկների քշել մտցրել են եկեղեցին: Զինվորներին թույլ են տվել նրանց հետ վարվել ինչպես կամենան, իսկ դրանից հետո սպանել ինչը և արվել է: Ջոկել են մեծ թվով առավել գեղեցիկ կանանց, որոնց առաջարկել են մահմեդականություն ընդունել և թուրքերի հետ ամուսնանալ: Նրանք հրաժարվել են և սպանվել:

Բիթլիսից բերված կերոսինն օգտագործվել է տներն իրենց բնակիչներով հանդերձ վառելու համար: Բիթլիսից մի զինվոր պատմում էր, որ ինքը մի անգամ տեսել է, թե ինչպես *բոցերի միջից փախչող մի փոքր տղայի զինվորը սվինով վերցրել ու նետել է կրակի մեջ:* Կերոսինն օգտագործվում էր նաև դիակներ հրկիզելու համար: Ասում են, թե կատարվել են շատ այլ սարսռեցուցիչ դաժանություններ, *այնպիսին, ինչպիսին է հղի կանանց փոր պատռելը, երեխաներին կտոր-կտոր անելը և այլն*»[2]:

Թուրք և քուրդ հրոսակների դեմ կռվելիս անօրինակ հերոսություն ցույց տվեց հայ կինը, իր ապրած լեռների պես հպարտ ու սեգ, շրջապատի բնության նման գեղեցիկ ու ազատ: Այսօր *Հայոց Եռաբլուրում,* արցախյան զոհված ազատամարտիկների կողքին թաղված *Սոսե մայրիկի* քույրերն էին դրանք, որոնք իրենց սխրանքներով, բարոյական նկարագրով և անձնազոհությամբ զարմանք ու հիացմունք են պատճառել նույնիսկ օտարերկրացիներին:

1894 թ. նոյեմբերի 21-ին, Վանի անգլիական փոխհյուպատոս *Հոլլուորդը* դեսպա-

---

[1] АВПРИ, Посольство в Константинополе, дело 3435, 1894-1895, л. 26.

[2] Նույն տեղում, дело 3135. Տե՛ս նաև «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 36-40:

նին հաղորդել է. «Հերոսաբար կռվող հայ տղամարդիկ և նրանց կողքին *գտնվող կանայք ի սկզբանե որոշել էին ինչքան հնարավոր է քանկ վաճառել իրենց կյանքը:* Թուրքերը և քրդերը հարձակվում էին նրանց վրա, սակայն ապարդյուն: Նրանք կռվում էին մինչև վերջին գնդակը, նույնիսկ քաղցած վիճակում: Այնուհետև մահմեդականների ձեռքը չընկնելու մտահոգությամբ իրենց նետում էին լեռների ծերպերից»[1]: Համառ պայքար էր գնում նաև նահանջելիս: «Մայրերն իրենց զավակները գրկած գահավիժում էին անդունդից: Նրանց, ովքեր չէին հասցնում գցվել բարձունքներից, թուրքերն ու քրդերը գազանի կերպարանք առած պատառոտում ու սպանում էին»[2]:

Էրզրումում հաստատված ռուսական գլխավոր հյուպատոս Մաքսիմովը, 1894 թ. հոկտեմբերի 1-ին Կ. Պոլսում նստած ռուսական դեսպան Ալեքսանդր Նելիդովին հաղորդում է. «Բազմաբնույթ աղբյուրների վկայությամբ, Սասունի բնակչության մեծ մասը, չնայած անօրինակ սխրագործություններին, անհավասար մարտերում զոհվեցին բոլորը, *նույնիսկ կանայք*»[3]:

Բերենք սրտաճմլիկ մի քանի փաստեր ևս: Շենիկ գյուղացի Պողոսի դուստր Անանն նշանավոր հերոս Գրգոյի տղայի Տոնոյի կինն էր, որը մեկ տարի առաջ 18 տարեկան հասակում, ամուսնացել էր, սակայն դեռևս երեխա չուներ: Նա, 250 մյուս հայ կանանց հետ, զինվորների ձեռքով փակված է եղել եկեղեցում: Քրդական բակրանալի ցեղի ցեղապետ Օմար բեկը եկել ընտրել է նրան և զինվորներին ասել է, թե կնության է տանում իր տղային: «Թեև զինվորները փորձել են կնոջը բաց չթողնել, բայց քրդին հաջողվել է տանել նրան: Մի հղի կին բռնել է նրա ձեռքից խնդրելով իրեն էլ հետը հանել և ազատել: *Երկու զինվոր տեսնելով կնոջ վիճակը գրազ են եկել. մեկն ասել է տղա է, մյուսը՝ թե աղջիկ է: Նրանք պատռել են կնոջ փորը Աննայի աչքի առաջ, երեխային դուրս հանել և սվիններով վերցրել գամել են մոր կրծքին:* Աննային տարել են Օմար բեյի վրան և բռնաբարել են»[4]:

Կանայք մեծ քաջագործություններ կատարեցին Տալվորիկի շրջանում: 1894 թ. օգոստոսի 15-ին ջարդարար մահմեդականները, նախօրոք ունեցած հաջողություններից արբեցած, վերջին հարվածներն են ուղղում քաջազուն իշխան *Գրիգորի* (Գրգոյի) գլխավորած աշխարհազորայինների դեմ: Նրանք կարողանում են դիմագրավել թշնամու գերազանց ու գերակշռող ուժերին մինչև օգոստոսի 22-ը: Մյուս օրվա առավոտյան սասունցիները թողնում են մարտական դիրքերն ու բարձրանում լեռնագագաթներն ու մտնում կիրճերը: Զոհառատ այդ մարտին ակտիվորեն մասնակցում էին նաև Տալվորիկի ու շրջակա գյուղերի կանայք[5]:

Իշխան Գրգոյի եղբոր կին Շաքեն և իր ընկերուհիները, ամբողջ հերոսամարտի ընթացքում, տղամարդկանց հետ համահավասար, կռվեցին այդ հատվածում հարձակվող քուրդ «համիդիեների» դեմ: Օգոստոսի 23-ին, տեսնելով, որ կարող են գերեվարվել և ընկնել քրդերի ձեռքը, Շաքեի խմբի կանայք *քարաժայռերից իրենց նետում են անդունդը և ահատակվում:* Ահա թե ինչ է գրվում խիզախ այդ հայուհիների մասին. «Այդ գազան զորաց ձեռքը չմատնվելու համար, ինքն իրանց ժայռերու բարձրությունեն անդունդ գլորեցին, ոմանք իրենց մանուկները գրկած անոնց հետ մեկտեղ, գահավեժ ըրին իրենց արիաբար»[6]:

---

[1] **АВПРИ**, Политархив, дело 3435, 1894-1895, лл. 25-27.

[2] Հայաստանի ՀՊՊԿԱ, գործ 56, թերթ 83: Տե՛ս նաև *Е. К. Саркисян*, նշված աշխատությունը, էջ 113:

[3] **АВПРИ**, Посольство в Константинополе, дело 3176, л. 26.

[4] Նույն տեղում, թերթ 88-89: Տե՛ս նաև «Հայերի ցեղասպանություն...», էջ 60-61:

[5] *Հ. Մ. Պողոսյան*, Սասունի պատմություն, էջ 202:

[6] Ե. Չարենցի անվան ԳԱԹ, *Հ. Առաքելյանի* ֆոնդ, վավ. 1899, թերթ 14:

Լեռնահամայնքների հայ կանայք անհուն վրեժի զգացումով էին լցված *թուրքերի* և իրենց պատիվն ու անարատությունը պղծող ավազակաբարո **քրդերի** նկատմամբ: Այդ մասին արևմտահայ պատրիարք *Խորեն Աշըոյանը* 1895 թ. փետրվարի 8-ին Թուրքիայի արդարադատության և պաշտամունքի նախարարին գրում է. «Ինչ վերաբերում է ընտանեկան պատվի նկատմամբ հանցափորձերին, ապա որքա՜ն անգամ է եղել, որ մարդու գնացող աղջիկները առևանգվել են հենց իրենց հարսանիքի օրը: Ապացուցված է, որ երիտասարդ կանայք, նույնիսկ փոքրահասակները, ենթարկվել են ծայրագույն անպատվության: Բանտերում ոճրագործները երիտասարդ հայուհիներին ստիպում են կենակցել իրենց հետ: Հայտնի են դեպքեր, երբ ազգականները մահվան սպառնալիքի տակ ստիպված են եղել միմյանց հետ արյունապիղծ կապի մեջ մտնել: Դժվար է այդ ամենի մասին խոսել առանց վրդովմունքի»[1]:

Այո՛, շուրջ կես հազարամյակ հայ կինը ամենուր ենթարկվել է ամեն տեսակ տանջանքների, արհամարհանքի, պատվի անարգման: Այժմ պահն էր փոխվրեժի: Նրա մեջ իսլամների նկատմամբ կուտակված զայրույթը դատարկվում էր, թեկուզև կյանքի ու զավակների արյան գնով: Նա ևս կռվում էր «*մա՛հ կամ ազատությո՛ւն*» նշանաբանով:

Լեռնահամայնքներում, ամոթխածության և բարոյականության տիպար հանդիսացող, օր ու գիշեր տքնող, աշխատասեր հայ գեղջկուհին, աչքը հայդուկ կամ պանդուխտ ամուսնու ճանապարհին, անցորդներից լուրեր էր հարցնում իր հարազատների մասին: Նա սիրասուն մանկանը օրորոցային էր երգում, «*զարթի՛ր, լա՛ւ, մոնիմ քզի՛*» բառերով, քնեցնում և մեծացնում իբրև Սասունի ապագա առյուծի: Այժմ արդեն այլ էր պահը: Հայ կինը, հետը վերցրած այդ նույն դեռահասներին, ֆիդայի ամուսնու հետ, բարձրանում էր լեռները «նրա հետ միասին, նրա նման ապրելու, նրա հետ մեռնելու պատգամով»: Ամուսնու ու հարազատների հետ միասին, այժմ ինքն էր սուր ու հրացան առել և կանգնել հայրենի տունն ու հողը պաշտպանող իր որդու և ամուսնու կողքին[2]:

Հայ կնոջ սխրագործությունն ու անձնազոհությունն առավել դրսևորվեց Տալվորիկի ոլորապտույտ կիրճերում ծավալված անհավասար կռիվների ժամանակ: Այստեղ հերոսի մահով ընկած կողք կողքի մարտնչող, կամքի բացառիկ ուժ ու տոկունություն դրսևորած սասունցի կանայք: Շատերը մանուկներին գրկած, իրենց անդունդ էին նետում, խուսափելով ոսոխի քմահաճույքից: Շատերն էլ ճաշակեցին գերեվարվելու «քաղցրությունը»[3]:

Այսպիսով, անհավասար պայքարում, բնականաբար, պարտվեց Սասունը: Հայոց հերոս քաջերը, ճիշտ է իրենց արյամբ ներկեցին հայրենի հողը, բայց և այնպես չկարողացան դիմագրավել մինչև ատամները զինված մարդակեր *քուրդ* ու *թուրք բազմահազարանոց* բանակի, նրանց ուղեկցող խուժանի հարվածներին: Ավերվեց լեռնագավառը: Շուրջ *վաթսուներկու հայկական գյուղեր հողին հավասարվեցին:* Բնակիչները կամ զոհվեցին, կամ էլ բնավեր խլյակ դառնալով, աստանդականի ցուպ վերցնելով, ցրվեցին աշխարհեաշխարհ ստվարացնելով հայ գաղթականների շարքերը:

Սասունի հայասպանության ողբերգական պրոցեսն իր վրա է հրավիրել բուլղարացի հայտնի հրապարակախոս *Դիմիտր Սպիրովի* սևեռուն ուշադրությունը: «Հա-

---

[1] **АВПРИ**, Политархив, дело 1416, 1895, лл. 12-13. Տե ս նաև «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 75:

[2] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 215:

[3] Նույն տեղում: Տե ս նաև **АВПРИ**, Политархив, дело 3235, 1895-1896, лл. 25-35.

յաստանը և սուլթան Համիդը», «Հայերի սարսափելի կոտորածները (1894-1896 թթ.)» աշխատության էջերում, նա ոչ միայն տեղավորել է ականատեսի իր տպավորությունները, այլև փաստեր է քաղել արևմտաեվրոպական ժամանակի մամուլի, հատկապես *«Թայմս»* թերթի հրապարակումներից և ջանացել ընթերցողին պատկերացում տալ, թե ի վերջո ինչ է կատարվել Սասունում 1893-1896 թվականներին:

Սպիրովը բերել է փաստեր, հրապարակել է շարադրանք, որը, հարյուրամյա հեռավորությունից, կարդալով, չես կարող չցնցվել, չզայրանալ, չզարմանալ, թե մի՞թե բնության ստեղծած մարդ-արարածը ընդունակ էր նման դաժանությունների, մեղմ ասած՝ նման գազանային արարքների: Նրա շարադրանքից հրապարակենք մի քանի հատվածներ միայն:

Նա գրում է. «Զինվորներն իրենց վրանները ցրել էին ամենուր: Միայն Տալվորիկում կային շուրջ 150 վրաններ: Եվ ամեն առավոտ զինվորներից շատերը դուրս էին գալիս գյուղացիներ որսալու: Նրանք ամեն տեսակ հնարներ էին մոգոնում իրենց զոհերին հայտնաբերելու համար: Պատահել է, ***որ մայրերը խեղդել են իրենց երեխաներին՝ չմատնվելու համար: Տալվորիկի միջով հոսող կատաղի գետի գահավեժ ափերին նստած զինվորները զոհերին շամփրել են սվիններ ի վրա և նետել արագավազ ջրերի մեջ:*** Տալվորիկում մի երիտասարդ քահանա համոզել է 70 հոգու, որ գնան իր հետ հանձնվելու: Մի երիտասարդ տղա չի ուզեցել հետևել նրանց, բարձրացել է մոտակա բլրակը և այնտեղից դիտել, թե ինչ է պատահելու իր ընկերների հետ: Երբ այս վերջիններս հասել են զինվորական ճամբար, քահանային առանձնացրել են մի վրանում, իսկ մյուսներին պահակի հսկողության տակ տարել են մեկ այլ տեղ և ստիպել, որ գետինը փորեն: Երբ փորել են մի մեծ խանդակի չափ, նրանց սպանել են, կտոր-կտոր արել կամ, ինչպես վկան է ասում՝ «կտրատել են, ինչպես թութունը» և լցրել խանդակը: Եվ որպեսզի ծիծաղեն մարդկային մսի այդ կույտի վրա, բերել են մի շուն, նրան ևս կտրատել ու նետել են մարդկային աճյունների վրա, ապա նոր միայն հողով ծածկել: Ճամբար վերադառնալով՝ այս գազանները դուրս են բերել բանից անտեղյակ քահանային, խաչել մի գերանի վրա, մաս-մաս կտրատել և, որքան հնարավոր է, կտորները հեռուն շպրտել տարբեր ուղղություններով: Քրդերը քահանայի պարեգոտն ու գլխարկը տարել-ծախել են հայկական մի գյուղում: Քահանայի եղբայրը ճանաչել է եղբոր պարեգոտը: Եվ հիմա դա ինձ մոտ է: Մեկ այլ վայրում մի ուրիշ քահանայի հետ վարվել են այլ ձևով. վզին գցել են շղթա, և երկու զինվոր սկսել են ծգել: Քահանան հենց ուշաթափ էր լինում, թուլացնում էին մինչև կրկին ուշքի գալը, ապա նորից տանջում էին: Այս միջոցը կրկնվել է մի քանի անգամ, մինչև կորցրել է գիտակցությունը: Ապա սվինները շարել են ուղղահայաց և զոհին նետել սվինների վրա: Վեց թե յոթ քահանաներ սպանվել են ամենազազրելի եղանակներով»[1]:

Լեռնահամայնքի հայ ժողովրդի կրած նյութական կորուստների մասին, անկողմնակալ բուլղարացին հրապարակում է ներքոհիշյալ տվյալները. «Վաթսուներկու (62) գյուղ այրվել է, բնակչությունը՝ կոտորվել, իսկ թե հայերից ընդհանրապես որքան մարդ է զոհվել, դժվար է հաշվել: ***Քրդերը կռիվներից վերադառնալիս համոզված են եղել, որ հրկիզված գյուղերում ոչ մի կենդանի մարդ չեն թողել:*** Սակայն կասկած չկա, որ շատերը փրկվել են՝ թաքնվելով անտառներում ու քարանձավներում: Ասում են, թե Սուշի նահանգապետը իր մի զեկուցագրում հայտնել է, որ կոտորել են ***քսան հազար մարդ:*** Դրա համար նրան պաշտոնանկ են արել և տեղափո-

[1] *Դ. Ա. Սպիրով,* Հայերի սարսափելի կոտորածները (1894-1896 թթ.), Հայաստանը և սուլթան Աբդուլ Համիդը, Երևան, 1997, էջ 44-45:

խել: Պատմում են, թե Վերջիի կառավարիչը՝ եկամուտների հսկիչը, այս շրջանում սպանվածների թիվը հասցնում է տասը հազարի: Թահսին փաշան զայրացել է զեկույցի վրա և հրամայել է զեկուցագրում գրել, որ կոտորվել է միայն 2000 հոգի: Ես գտնում եմ, որ սպանվածների թիվը 25000-ից պակաս չէ: Տասնվեց հազարը նվազագույնն է, և չէի առարկի այն մարդկանց, ովքեր կասեին, թե ***զոհվել է 36000 հոգի:***

Ապա թող մոռացության չտրվի նաև այն փաստը, թե որքան գյուղ որ հրկիզվել է, դրանից ոչ պակասը թալանվել է: Մուկտինգ գյուղը, օրինակ, որ փրկվելու համար վճարել է 1000 լիրա, այդուհանդերձ թալանվել է: 30 տուն ունեցող Պուվի գյուղը թալանվել է, և բոլորը, բացի 8 տնից, թողել հեռացել են գյուղից: Հոսներ գյուղը երկու անգամ դատարկվել է բնակիչներից: Եթե հաշվի առնենք առհասարակ բոլոր կոտորվածներին, գերեվարվածներին, անտուն-անտեր մնացածներին և թալանի հետևանքով ծայրահեղ աղքատության եզրը հասցվածներին, զոհերի թիվը պետք է որ հասնի 30000-ի: Դրան պիտի ավելացնել նաև զորքի բերած հիվանդությունների հետևանքով տարածված համաճարակի զոհերը և այն ծախսերը, որ արվել են հայերի դեմ կազմակերպված արշավանքների մասնակից 10-15 հազար զինվորներին ու 20000 քրդերին պահելու համար»[1]:

Թուրքերն առանձին են թալանել, քրդերը՝ առանձին: Զարմանալի չէ, որ թալանված ավարի մեջ իբրև նյութական արժեք են հաշվել նաև գեղեցիկ կանանց ու դեռահաս աղջիկներին. «Ոչխարներից, կովերից ու այլ ապրանքներից բացի, քրդերը, որպես ավար, տարել են նաև շատ կանանց ու երեխաների: Ասում են միայն բակրաձոր գեղի քրդերը առևանգել են 400 կին: Քրդերի ու զորքի, մանավանդ սպաների տարած կանանց ու երեխաների թիվը հասել է մոտավորապես 1000-ի: Չիլանի քրդերի առաջնորդն ավարից վերցնում էր մեկ ութերորդը: Նրան բաժին է ընկել 8600 ոչխար ու այծ, 40 ջորի, 33 ընտիր կով, երեք կամ չորս զամբիկ: Այսքանը միայն շնչավոր ապրանքից: Դրանից բացի նրան հասել է շատ հագուստ, գորգեր, ամաններ և այլն: Այս առաջնորդը հայտարարեց, թե իր 14 կամ 15 հազար մարդկանցից սպանվել է 120 հոգի: Նա ասաց, որ սպանվել են նաև շուրջ 150 զինվորներ»[2]:

Սասունի ինքնապաշտպանության և ընդհանրապես Հայկական ցեղասպանության պատմությունը շուրջ չորս տասնամյակ ընկած է եղել ամերիկահայ պատմաբան, իրավագետ, պրոֆ. ***Վահագն Ն. Տատրյանի*** ուշադրության կիզակետում[3]: Մանրազնին հետազոտելով օտար աղբյուրները գիտնականը զայրույթ է ապրում, թե թուրք պատմաբաններն ինչպես են համարձակվում կեղծել Հայոց ցեղասպանության պատմությունն ընդհանրապես, Սասունի ինքնապաշտպանության պատմու-

---

[1] *Դ. Սպիրով,* նշված աշխատությունը, էջ 46-47:

[2] Նույն տեղում, էջ 45:

[3] Պրոֆ. ***Վահագն Ն. Տատրյանը*** առաջին բարձրագույն կրթությունն ստացել է Բեռլինի համալսարանում ավարտելով ***մաթեմատիկայի*** ֆակուլտետը, ապա Վիեննայի համալսարանի ***պատմության*** ֆակուլտետը: Յուրիխի (Շվեյցարիա) համալսարանում ստացել է ***իրավագիտական*** կրթություն: Նա Չիկագոյի համալսարանում պաշտպանել է ***դոկտորական*** թեզը՝ իրավաբանության ճյուղով: Տատրյանը երկու տասնամյակ շարունակ դասախոսել է ամերիկյան մի շարք համալսարաններում, սակայն հիմնական աշխատավայր է ընտրել Հարվարդի համալսարանը, որտեղ պաշտոնավարում է իբրև ***ավագ գիտական աշխատող:*** Պրոֆ. Վ. Տատրյանի հետազոտության թեման է Հայոց ցեղասպանության պատմությունը, այն դեպքում, երբ նա կատարյալ տիրապետում է ***գերմաներենին, անգլերենին, ֆրանսերենին, հայերենին և թուրքերենին:*** Գիտնականի գրչին են պատկանում հիսունից ավելի մենագրություններ և գիտական ծանրակշիռ հոդվածներ: Այդ գործերի մեջ առանձնակի ուշադրության են արժանի *Vahakn N. Dadrian,* The history of the Armenian Genocide, Oxford, 1995, (452 էջ): ***Նույնի՝*** Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, Պայքար, 1995, (144 էջ): Նա Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր անդամ է:

թյունը՝ մասնավորապես: Պրոֆ. Վ. Տատրյանն իր գործերը հրատարակում է արևմտյան լեզուներով, նույնիսկ թուրքերենով, դրա համար էլ նրա կատարած գործը պետք է գնահատվի ըստ արժանվույն: Նրա աշխատությունից բերենք մի հատված, որը վերաբերում է Սասունի ինքնապաշտպանությանը: Նա գրում է. «Թուրք որոշ պատմաբաններ, անդրադառնալով XIX դարի վերջին տեղի ունեցած կոտորածներին, մեղքն ամբողջովին գցում են քուրդ ցեղապետների վրա: Օրինակ՝ Օսման Նուրին Աբդուլ Համիդի կենսագրությանը նվիրված իր եռահատոր գրքի երկրորդ հատորում Սասունի կոտորածների կազմակերպիչներ է համարում քրդերին, որոնք «անկարող լինելով իրենց ենթարկել հայերին, կազմակերպում են կոտորածներ»:

Ցավոք, Սասունի կոտորածները եզակի չէին, այլ դրանք կարծես հիմք հանդիսացան հաջորդ ավելի լայնամասշտաբ կոտորածների համար: Սասունի տխրահռչակ դեպքերը տևեցին շուրջ 24 օր՝ 1894 թվի օգոստոսի 18-ից մինչև սեպտեմբերի 10-ը: Նշված իրադարձություններին ժամանակին մանրամասնորեն անդրադարձել է բրիտանական վիցե-կոնսուլ Սեսիլ Հոլվարդն իր գրառումներում, որոնց ականատեսն է եղել ինքը: Ըստ Սեսիլ Հոլվարդի վկայության՝ «միանգամից վերանում է մոտ 25 գյուղերի բնակչություն: Այդ գյուղերից շատերն անսովոր ծևով մեծ էին այդ երկրի համար»: Բրիտանացի կոնսուլը վկայում է նաև, որ տոննաներով նավթ էին օգտագործում թուրք զինվորները՝ այրելու գյուղական տներն իրենց բնակիչներով հանդերձ: «Գյուղերից մեկում հարյուրավոր հայ երիտասարդների ոտքերն ու ծեռքերը կապկպած լցնում էին կույտով միմյանց վրա և այրում»,– շարունակում է Հոլվարդը: «Մեկ այլ գյուղում էլ տասնյակ երիտասարդ կանանց ու աղջիկների լցրեցին եկեղեցի՝ ենթարկելով հազար ու մի անպատիվ անմարդկային արարքների, իսկ վերջում էլ այրեցին»: Սեսիլ Հոլվարդն իր հաղորդումներում նշում է նաև, որ այդ ամենի մասին հաճախ նրան տեղեկացնում էին հենց իրենք՝ զինվորները, որոնց անմիջական մասնակիցն էին իրենք:

Թուրք պաշտոնյաները ոչ միայն ժխտում էին այդ ամենը, այլև ավելին՝ կեղծ վկայում էին, թե իբր հայերն իրենք էին կազմակերպել այդ ամենը մուսուլմանների հանդեպ: Մի շարք թուրք պատմաբաններ, անդրադառնալով Սասունի կոտորածներին, «վկայում էին», թե իբր «հայերի դաժանությունների հետևանքով տուժում էին անմեղ մուսուլման ազգաբնակչությունը, որոնց զոհ են գնում հազարավոր մուսուլմաններ»: Մյուս կողմից էլ միջազգային հանրության անտարբերությունը հայկական կոտորածների նկատմամբ նպաստում է դեպքերի զարգացման հետագա ընթացքին: Այստեղ տեղին է նշել, որ իրենց «անմեղությունն» ապացուցելու նպատակով թուրքերն անգամ ստեղծել են գիտահետազոտական կենտրոն, որտեղ տարբեր լեզուներով թարգմանվում են մի շարք պատմական գրառումներ և փաստաթղթեր, որոնք ուսումնասիրում են կոտորածները հօգուտ Թուրքիայի»[1]:

Եվ այսպես. թուրքական զորքերի հրամանատար Զեքի փաշան Սասունի բնակիչների հետ դաժան դատաստան տեսնելուց հետո, Աբդուլ Համիդի «Գահիը թետմիր» (արմատախիլ անել) հեռագրին պատասխանեց «իրատեի սենիյե թամամեն իծրա, Սասուն վե հավալիստինտե ասայիչ պեր քեմալ տըր» (կայսերական հրամանը գործադրված էր ամբողջովին, Սասունի և շրջակայքի մեջ անդորրությունը կատարյալ է)[2]:

Սասունի կոտորածը կատարվեց Զեքի փաշայի գլխավորությամբ, որն ստացավ մուշիրի կոչում՝ սուլթանի, իսկ ***Հայաստանի ու հայ ժողովրդի դահիճ*** «պատվա-

---

[1] ***Vahakn N. Dadrian,*** The History of the Armenian Genocide, s. 113-116. ***Վ. Ն. Տատրյանի*** այս աշխատության համառոտագրությունը հրատարակվել է հայերեն: Տե՛ս «Հայոց ցեղասպանության պատմությունից», Երևան, 1998: Կազմողներ՝ ***Հ. Աբրահամյան, Ա. Մարտիրոսյան,*** գլխավոր խմբագիր՝ ***Ղարիբջանյան Գ. Բ.:*** ՀՍՍՀ ԳԱ գիտական տեղեկատվության և լրատվության կենտրոն:

[2] ***Սմբատ Բյուրատ,*** Երկտրզե Սասուն, Կ. Պոլիս, 1910, էջ 1237-1238:

նուը» արևմտահայության ու եվրոպացիների կողմից: Թուրք-քրդական հրոսակախմբերն իրենց ստացած հանձնարարությունները գերակատարելով լեռնագավառում, իջան դաշտ և սկսեցին նույն ավերածությունները Մշո դաշտում, Պատմական Հայաստանի Տարոն աշխարհում:

Երկրահատվածում իրականացված բացահայտ *ցեղասպանությունը* հաստատող փաստերից բերենք մեկը ևս. «Ցուցմունքներում լիակատար համերաշխություն կա այն մասին, որ Սասունում կատարվել է մի վիթխարի և իր սարսափով աննկարագրելի ջարդ, որին ենթարկվել են հայ տղամարդիկ, կանայք ու երեխաները, և որ այդ ջարդը կատարել են թուրքերը, սուլթանի կողմից *զինված քրդական զորքերը* և կանոնավոր բանակի զինվորները, որոնք ուղարկվել են հատուկ հրամանով, և իրագործվել է թուրքական բարձրաստիճան սպաների անձնական ղեկավարությամբ: Որևէ կասկածի ենթակա չէ (քանի որ արքունական պաշտոնական հաղորդումը նոյեմբեր ամսին տպագրվել է Կ. Պոլսի լրագրերում), որ IV բանակային կորպուսի հրամանատար *Զեքի փաշան, որը ջարդի ժամանակ առաջնորդում էր կանոնավոր զորքը, դրանից հետո սուլթանից հատուկ շքանշան ստացավ, և բացի այդ, սուլթանը հատուկ սուրհանդակների միջոցով մետաքսե դրոշներ ուղարկեց քրդերի չորս գլխավոր պետերին*»[1]:

Պարտվեց լեռնահամայնքն իր անհավասար գոյամարտում, ջարդի ենթարկվեց Սասունի բնակչության հիմնական հատվածը: *Ոչնչացված հայ բնակչության ոսկորներից շքանշաններ պատրաստեցին և մարդագայլ սուլթանի ձեռքով կախվեցին քուրդ ցեղապետների, թուրքական զորքերի հրամանատար Զեքի փաշայի վզին:* Հայազրկվեց գավառի մեծ մասը, փոքրաթիվ վերապրողները քաշվեցին լեռների անմատչելի հատվածներն ու շարունակեցին ապրել գրեթե միջնադարյան մարդկանց կյանքով ու կենցաղով:

Գոյամարտից հետո էրզրումի բանտ ենետվեցին շուրջ 140 «ապստամբներ»: Նրանց սկսեցին հարցաքննել, որը տևեց ոչ թե ամիսներ, այլ, զարմանալիորեն, շուրջ մեկ *հնգամյակ:*

Մեղքեր չկարողանալով «հնարել» ամբաստանյալներից 63-ը ազատ արձակվեցին, 10-ը մեղադրվեցին «անհայտ պատճառներով», մնացածը *մահացավ դատաքննության ընթացքում կիրառվող անմարդկային խոշտանգումներից*: Դիմադրողական շարժման ղեկավարներ *Համբարձում Բոյաջյանը* (Մուրադ), *Գևորգ Չաուշը, Ադամը, Ավոն գտնվում էին Մշո կենտրոնական* բանտում, իշխան *Պետոն* զոհվել էր Տալվորիկի մատույցներում մղած հերոսական մարտերում[2]: Սրանք տարբեր ձևով և տարբեր ճանապարհներով, փախուստով դուրս պրծան օսմանյան բանտախցերից և զոհվեցին հետագա դյուցազնամարտերի ժամանակ:

Սասունի կոտորածով, Լեռնահայաստանի խիզախ բնակչության դիմադրական պայքարով ու տված անհամար զոհերով շրջվեց Հայոց պատմության արյունոտ էջերից մեկը: Սակայն Աբդուլ Համիդի ու նրա հենարան դարձած «համիդիե» հեծյալ ու հետևազորային ջոկատների առջև բացվեց նոր ճանապարհ *հայկական ջարդեր* կազմակերպելու համար: 1895-1896 թթ. հայկական ծով արյամբ ողողվեցին Հայաստանն ու հայաբնակ վայրերը, նույնիսկ սուլթանի որջ դարձած մայրաքաղաքը[3]:

---

[1] "Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.", Москва, 1895, стр. 229-230.

[2] *Հ. Մ. Պողոսյան,* նշված աշխատությունը, էջ 207:

[3] Այստեղ մեր նպատակից դուրս է հայկական ջարդերի մանրամասն պատմության շարադրանքը: Հետագա էջերի համառոտ շարադրանքից ընթերցողը պիտի պատկերացում կազմի, որ կատարվածը *ցեղասպանություն էր* իրագործված վաղօրոք մշակված ծրագրերով, թուրքական բանակի և քրդական «համիդիեների» ձեռքերով:

*

* *

Սասունի հերոսապատումը, առավել ևս հայ ժողովրդի ապրած ամենախոր ողբերգությունն իր վրա հրավիրեց համաշխարհային հասարակայնության ակնդետ ուշադրությունը: Ինչքան էլ մեծ մարդասպանը լեռնագավառի դռները գոցում էր թուրքական, հատկապես օտարերկրացի լրագրողների առջև, հնարավոր չեղավ փակել անբուժելի այն վերքերը, որոնք պատճառ էին դարձել հայ ժողովրդի մի ստվար, միաժամանակ խիզախ հատվածի ***ոչնչացման:***

Արևմտյան տերությունների ընդդիմադիր ուժերը դրամական միջոցների ծախսման առաջ կանգ չէին առնում, Թուրքիայից հայերի նկատմամբ կիրառված «***գազանությունների***» վերաբերյալ փաստեր մթերելու, մի կողմից՝ Համիդին ու նրա վարչակարգին ***ապավարկելու,*** մյուս կողմից՝ Բեռլինի վեհաժողովի որոշումներով Հայաստանի օգնությունը հանձն առած երկրների ղեկավարների դեմ պայքարելու հեռամետ դիտավորությամբ:

Աբդուլ Համիդն ի վիճակի չեղավ կանխել սահմռկեցուցիչ այդ իրադարձությունների մասին տեղեկությունների լրահավաքը: Աշխարհի գրեթե բոլոր ցամաքամասերի առաջավոր քաղաքական գործիչներն ու հրապարակախոսները փորձեցին մոտիկից հետազոտել կատարվածը Սասունում:

Բանաստեղծ ***Յուլիա Հուլի*** գլխավորությամբ ԱՄՆ-ում ձևավորվեց պատկառելի մի հանձնախումբ, որի հանձնարարությամբ ու ֆինանսավորումով, թերթի խմբագիր Սամուել Պարտուգին մեկնելու էր Սասուն՝ լեռնահամայնքներում կատարված դեպքերին ոչ թե ականջալուր, այլև իբրև ականատես ծանոթանալու: Երկրամասում կատարված դեպքերը, հատկապես բնակչության կոտորածի լուրը ցնցեց ամերիկահայերին և նրանց հաղորդմամբ, նաև՝ բազմաթիվ ***ամերիկացիների***[1]:

Սասունի 1894 թ. ինքնապաշտպանության մասին ռուս հետազոտողներից ***Լև Գրինի*** «***Թուրքական գազանությունները Հայաստանում***» հետազոտության էջերում հեղինակը, նույնիսկ էմոցիաներով, պաշտպանում էր լեռնականներին: Գրքում նկարագրված է, թե թուրքական կանոնավոր զորքերն ու անկանոն «համիդիեները» մինչ այդ չտեսնված ու չլսված գազանային ինչպիսի մեթոդներով էին հոշոտում հայ համայնքին: «***Սասունի անմարդկային ջարդը տեղի ունեցավ անցած տարի՝ 1894 թ. օգոստոսին, կատարվեց երկրամասի բարձունքներում***, ինչպես նաև Վանա լճի մոտակայքում»[2]:

Թուրքական կառավարությունը տեսնելով, որ այլևս այդքանը ծածկել հնարավոր չէր, ստիպված էր երբեմն նույնիսկ կաշառք խոստանալ, երբեմն էլ սպառնալ «ճշմարտությունը» «մերկապարանոց» հաղորդողներին: Ահա թե ինչ է մի կաթոլիկ հայ Կ. Պոլսում գտնվող իր լուսավորչական եղբորը հաղորդում. «Սասունի կոտորածների

---

[1] ***Հ. Մ. Պողոսյան,*** Սասունի պատմությունը, էջ 211:

[2] "Русская мысль", 1895, т. 11, стр. 109. 90-ական թվականների ***հայկական ջարդերի*** մասին, բնականաբար, ստեղծվել են բավականին հետազոտություններ: Նշենք դրանցից մի քանիսը. «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 266-276: «Հայ ժողովրդի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 57-70: ***Ս. Մարկոսյան,*** նշված աշխատությունը, էջ 200-225: ***Ե. Կ. Սարկисян,*** նշված աշխատությունը, էջ 214-221: ***Հ. Մ. Պողոսյան,*** Սասունի պատմությունը, էջ 215-245: ***Նույնի*** «Վասպուրականի պատմությունը», Երևան, 1988, էջ 247-282: ***Նույնի*** «Զեյթունի պատմությունը», Երևան, 1969, էջ 321-366: ***Ծ. Պ. Աղայան,*** Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 331-355: ՀՍՀ, հ. 6, «Հայկական կոտորածներ», հոդվածի հեղինակ՝ ***Ա. Ս. Համբարյան,*** Երևան, 1980, էջ 183-184: ***Վ. Ա. Բայբուրդյան,*** նշված աշխատությունը, էջ 220-223: ***Արման Կիրակոսյան,*** նշված աշխատությունը, էջ 227-240:

վրա քող քաշել աշխատող խումբն արդեն հուսահատ հայերին հավատացնում է, թե եվրոպական թերթերում հրատարակվածները սուտ են, թե հայերի վիճակը երբեք չպետք է փոխվի, թե ինչպես ռուսները եկան մինչև Էրզրում, հասան Սան Ստեֆանո ու ստիպված եղան կրկին հետ գնալու իրենց տեղերը, այս անգամ էլ քննիչները պիտի գան ու դարձյալ հետ գնան, առանց մի բան անել կարենալու, այնինչ քննության ժամանակ հօգուտ կառավարության խոսողները, որպես հավատարիմ հպատակներ, պետք է վարձատրվեին և երբեք նրանց որևէ վնաս չպետք է հասնի, քննիչների առաջ ի վնաս կառավարության խոսողները կենթարկվեն ավելի խիստ տանջանքների...»[1]:

Սասունի կոտորածները, մասնավորապես 90-ականների առաջին կեսերին Արևմտյան Հայաստանում, ինչպես նաև մայրաքաղաքում ծավալված հայասպան իրադարձություններն իրենց վրա են հրավիրում համաշխարհային առաջավոր հասարակայնության ուշադրությունը: Սոցիալ-դեմոկրատներից ***Ֆ. Էնգելսը***[2], ***Կարլ Լիբկնեխտը***[3], ***Ռոզա Լյուքսեմբուրգը***[4] և այլոք իրենց բողոքի ձայնն են բարձրացնում հայկական ջարդերի առիթով, Արևմուտքի տերություններից պահանջում միջամտել «բարբարոս» թուրքերի ներքին գործերին, Հայաստանն ազատել «անմեղ գառ» հանդիսացող սուլթանի հայակուլ երախից:

Պակաս զայրացած չէին դիվանագիտական աշխարհն ու հրապարակախոսության ձայնափողերը: ***Էմիլ Դիլոն,*** որին «բախտ էր վիճակվել» անձամբ շրջել Սասունի գյուղերը, սեփական աչքերով տեսնել այն ավերակները, որոնք իրենց հետևից թողել էին թուրք և քուրդ ջարդարարները, գրում էր. «***Այժմ արդեն ապացուցված է, որ Սասունի ջարդերը գիտակցորեն կազմակերպել է Բարձրագույն Դուռը, դեպքեր, որոնք հոգնաշատ ձևով և անխնայորեն իրականացվեցին: Դաժանություններն այնքան սահմռկեցուցիչ էին, որ դրանցից նույնիսկ սարսափում էին կատարողները – այն է՝ քրդական ավազակախմբերն ու թուրքական զինվորները*** (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[5]:

1894 թ. նոյեմբերի 16-ին ամերիկյան քաղաքացիների մի խումբ այսպես է բնութագրել հայերի վիճակը Սասունում փաստեր հրապարակելով լեռնագավառում կոտորածների ձևի և կոտորողների մասին. «Այս տարի կառավարությունը միջամտեց և կանոնավոր զորքի ջոկատներ ուղարկեց հայերին հնազանդեցնելու համար: Կանոնավոր զորքերին օգնում էին ***քրդական*** համիդիեները (Hamidiens–անկանոն զորքեր):

Մի խումբ կանանց (թիվն ստույգ հայտնի չէ. 60-160 հոգի) փակել են եկեղեցում և նրանց մեջ «բաց են թողել» զինվորներ: Այդ կանանցից շատերը տանջամահ են արվել, իսկ մնացածները սվիններով ու սրերով սպանվել: Մի քանի ջահել կանանց վերցրել են որպես ռազմաավար: Նրանց մասին երկու կերպ են պատմում. 1) թե նրանք հարեմ են տարվել այն մուսուլմանների կողմից, ովքեր առևանգել են նրանց, 2) թե նրանց առաջարկել են իսլամ ընդունել և մտնել հարեմ, և երբ մերժել են, նրանց սպանել են: Երեխաներին իրար ետևից շարել են և շարքի վերջից կրակել, երևի, իմանալու համար, թե քանի հոգու կարելի է սպանել մեկ գնդակով: Փոքրահասակ երեխաներին շարել են մեկը մյուսի վրա և գլխատել: Զինվորները շրջապատել են

---

[1] Վրաստանի ՊԿՊԱ, ֆոնդ 180, ցուցակ 1, գործ 1272, 1894, թերթ 27-28:

[2] ***Ա. Գ. Յովհաննիսյան,*** Էնգելսը և Հայկական հարցը, Մոսկվա, 1931:

[3] ***Գ. Բ. Ղարիբջանյան,*** Ռ. Լյուքսեմբուրգը և Կ. Լիբկնեխտը հայ ժողովրդի մասին, Երևան, 1971, էջ 49:

[4] Նույն տեղում, էջ 49-57:

[5] ***Эмиль Диллон,*** Положение дел в Турецкой Армении. См., сборник "Братская помощь пострадавшим в Турции армянам", Москва, отдел II, 1897, стр. 14.

տները, հրդեհել և մարդկանց սվիններով ստիպել են ետ քաշվել բոցերի մեջ, երբ նրանք փորձել են դուրս փախչել:

Բայց բավական է այս կոտորածի մասին: Մարդկային զոհերի թիվը *3000-ից 8000 է:* Սրանք համեստ թվեր են: Համարձակ հաշվարկները սպանվածների թիվը սահմանում են *20 000-ից 25 000:* Այս ամենը տեղի է ունեցել օգոստոսի վերջին և սեպտեմբերի սկզբին... Պետք է նշել, որ կոտորածը տեղի է ունեցել կանոնավոր զորքերի կողմից՝ մեծ մասամբ բարձրաստիճան սպաների հրամանատարության տակ: Դա չափազանց լուրջ նշանակություն է տալիս գործին:

Քրիստոնյան չի օգտվում այն հարգանքից, ինչին արժանանում է փողոցային շունը: Եթե այս կոտորածն աննկատ անցնի, սա պարզապես մահվան դատավճիռ կլինի քրիստոնյաների համար: Քրիստոնյայի կյանքը, սեփականությունն ու պատիվը պաշտպանություն չեն գտնում: Սրանից մի շաբաթ առաջ, անցած երեքշաբթի օրը, երեկոյան, արևմուտի ժամանակ, մի թուրք առևանգեց հայ հարուստ վաճառականի կնոջը Խնուս Բերդ քաղաքում: Հաջորդ առավոտյան կնոջը փնտրողները ճիչեր լսեցին և նրան ազատեցին թուրքի տնից: Մեղավորին որևէ պատիժ տալու մասին խոսք լինել չի կարող:

Սարսափելի լուրերը արդեն վաղուց էին տարածվում, բայց վստահության արժանի տեղեկությունները դանդաղորեն էին գալիս: Ամեն բան արվել էր, որպեսզի բերանները փակեին: Իմ հաղորդած տեղեկություններում որոշ երկրորդական մանրամասնություններ գուցե ճշգրիտ չեն, բայց լիովին վստահ եմ այդ լուրերի իրական լինելուն:

Համենայն դեպս չի կարելի հերքել այն, որ իրագործվել է ***քրիստոնյաների դաժան, բարբարոսական և վիթխարի մի կոտորած կանոնավոր զորքերի կողմից՝ քուրդ համիդիեների*** օգնությամբ և բարձրագույն ու պատասխանատու սպաների ղեկավարությամբ:

Հիմա ի՞նչ է անելու քրիստոնեական աշխարհը»[1]:

Սասունում, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի այլ վիլայեթներում իրականացված հայկական զանգվածային ջարդերը հետևանք էին նաև Արևմտյան տերությունների երկդիմի ու խարդախ քաղաքականության: Նրանք իրենց քրիստոսապաշտ աչքերը գոցեցին թուրքերի ու քրդերի կատարած բարբարոսության առջև, չցանկացան ու չփորձեցին բռնել ոճրագործ սուլթանի արյունոտ ձեռքը և կարծես լռությամբ խրախուսեցին ***ցեղասպաններին***[2]: Ամերիկացի նամակագիրներից մեկը դեպքերի վայրերից կենտրոն ուղղված նամակներից մեկում Սասունի ողբերգությունը համարում է կառավարման հատուկ համակարգի հետևանք, ապա շարունակում. «վերջին տասնամյակում ամբողջ երկրում եղել են հարյուրավոր սասուններ... Եվրոպայի ներողամտությունը նպաստավոր պայմաններ է ստեղծել, որպեսզի այդ համակարգը գործի դաժանորեն և իր ամբողջ ուժով: ***Այն հետևանք է կրոնական ու ռասայական անհանդուրժողականության և հանգում է քրիստոնյաների բնաջնջմանն*** ու ***քրիստոնյաների վերացմանը: ... Թուրքերը մեղադրյալի աթոռին են նստած: Թող մենմիայն Սասունը ուշադրության չառնվի, հիշենք, որ նույն ողբն է հնչում երկրով մեկ....*** (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[3]:

Լ. Գրինը խոսելով Սասունի կոտորածների մասին՝ ընթերցողին հիշեցնում է, թե

---

[1] «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», Երևան, 1991, էջ 43-44: Տե՛ս նաև "Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году", Москва, 1896, стр. 233-237.

[2] *Ծ. Պ. Աղայան,* նշված աշխատությունը, էջ 129:

[3] «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 48-49: Տե՛ս նաև "Положение армян в Турции...", стр. 246-247.

քրիստոնյա, թուրքահպատակ ազգերի կոտորածները նոր երևույթ չէին մահմեդական մոլեռանդ սուլթանների համար ամբողջ XIX հարյուրամյակում: 1820 թ. մինչև 1894 թ. Թուրքիայում սպանվել է ***93000 քրիստոնյա հպատակ,*** որից հույներ, հատկապես Քիոս կղզում 50 հազար մարդ՝ 1822 թ., 1850 թ. քրդաբնակ շրջաններում մորթոտվեցին 10 հազար ասորիներ և հույներ, 1860 թ. Լիբանանում և Դամասկոսում սպանվեցին 11 հազար մարոնետներ (քրիստոնյա արաբներ) և սիրիացիներ: Բալկանյան ճգնաժամի օրերին սպանվեցին ***10 հազար բուլղարացիներ***[1], որը և պատճառ դարձավ բուլղար ժողովրդի հերոսական, ազատագրական պատերազմի: Այս բոլորը իրականացվել են «խաղաղ պայմաններում», իսկ պատերազմների դաշտում քանի հարյուրներ... Ճիշտ է նկատում պրոֆ. ***Հ. Մ. Պողոսյանը,*** որ Գրինի թվերը պակասավոր են[2] և եթե դրանցից յուրաքանչյուրը քառապատկենք, դարձյալ լրիվ չի արտահայտի ամբողջական պատկերը:

Սասունի կոտորածը լռությամբ մարսելուց հետո, Համիդ II-ն ու նրա կամակատար քրդական «համիդիեները» գազազեցին իրենց արարքների մեջ և շարունակեցին ***նոսրացնել*** հայկական նահանգները, նախապատրաստվել հայկական ***զանգվածային ջարդերին – նոր ցեղասպանությանը***: Ժողովրդին տանջահար ձևով սպանելը դարձավ սովորական երևույթ: Դրանից զերծ չմնացին նաև հոգևորականները:

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքը նշում է, որ 1895 թ. թուրքական բանտերն են նետվել մոտ 40 հոգևորականներ: Նրանցից մի քանիսը ծանր տանջանքներից մահացել են հենց իրենց խցերում: Հաճախ պետական պաշտոնյաները ծեծում են մարդկանց և ստիպում, որ մեկը մյուսի դեմ կեղծ ցուցմունքներ տա: Այս կամ այն տունը խուզարկելով՝ կողոպտում ու գողանում են թանկարժեք իրերը, ահ ու սարսափ տարածում կանանց ու երեխաների վրա: Շատ հաճախ կարելի էր տեսնել սոսկումից ցնորված կանանց ու երեխաների: Բանտերն են նետվել մինչև անգամ դպրոցականներ և մանկահասակ երեխաներ: Բանտերում մարդկանց մերկացնում և ծեծում են մինչև ուշագնացության աստիճան կամ թե խաչածև սյուների վրա կապկպելով՝ շիկացած երկաթով դաղում են նրանց մերկ մարմինը: Շատերին հարկադրում են մահմեդականություն ընդունել՝ խոստանալով ազատել, մյուսներից մեծ գումարներով փրկագին վերցնելով՝ շարունակում են պահել բանտերում, ապա նրանց կանանց պատվազրկում են. նորից խոստանալով ազատել ամուսիններին: Նման ձևով բանտարկվածների թիվը հասնում է հազարների[3]:

Թուրքական բանտերը, հայկական զանգվածային ցեղասպանության նախօրեին, վերածվեցին նոր ու այնպիսի տանջարանների, որոնք հիշեցնում էին միջնադարյան հավատաքննության մոլեգին ժամանակները: Այժմ բանտարկյալներին ստիպում էին անշարժ կանգնած մնալ մի ամբողջ օր ու գիշեր՝ առանց ուտելու և խմելու: Եթե նրանք ուժասպառ էին լինում, շիկացած երկաթով խարանելով կամ սառը ջրի օգնությամբ ուշքի էին բերում, որ նորից տանջեն: Եվ քանի որ օրենքը միայն թուրքերին էր պաշտպանում, գործը սովորաբար վերջանում էր նրանով, որ «հայերը պատրաստակամությամբ զոհաբերում էին ամեն ինչ, միայն թե ազատվեն սարսափելի տանջանքներից: Նրանք կամ պետք է ամեն ինչ զոհաբերեին կամ իրենք զոհվեին. պարզ է, նրանք ընտրում էին չարիքներից փոքրագույնը»[4]:

---

[1] "Русская мысль", 1895, N 11, стр. 122.

[2] *Հ. Մ. Պողոսյան,* նշված աշխատությունը, էջ 229:

[3] *Ծ. Պ. Ադայան,* նշված աշխատությունը, էջ 135:

[4] Նույն տեղում, էջ 137: Տես նաև "Положение армян в Турции...", стр. 333-334.

Սասունի կոտորածները համաշխարհային հանրությանը ստիպեցին շարժել իրենց մարդկային գթասրտությունը, եվրոպական տերություններից պահանջել միջամտելու Թուրքիայի ներքին գործերին, արյունարբու սուլթանի արյունոտ ձեռքերը դնելով կաղապարի մեջ վերջ տալ հայ ժողովրդի սպանդին[1]: Օգտվելով մեծ տերությունների միջև եղած հակասություններից և դրանով պայմանավորված դանդաղկոտությունից Աբդուլ Համիդը ոչ միայն շարունակում էր հայասպան քաղաքականությունը, այլև արգելում էր օտարերկրացիների մուտքը լեռնագավառ և այդ բոլոր լուրերը «հայտարարում ստախոսություն»: Բանն այնտեղ հասավ, որ հայակուլ սուլթանը Կ. Պոլսի անգլիական դեսպանից պահանջեց ետ կանչել Մուշում նստած բրիտանական կոնսուլին և երկրից արտաքսել իբրև փաստերն աղավաղողի[2], դիվանագիտության լեզվով «անհուսալի անձնավորություն»:

Տերությունների համբերության բաժակն արդեն լցվել էր: Որոշ հակասություններով հանդերձ, Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, վերջնագրի սարսափի տակ, Համիդից պահանջեցին վերաքննիչ հանձնաժողով ուղարկել Սասուն և դեպքերի հետազոտությունից հետո զեկուցագիր ներկայացնել իրենց: Ինչպես ասվեց, վախկոտ էր սուլթանը, ուստի ի նկատի ունենալով կատարվածը՝ համաձայնվեց ***հանձնաժողովի գործողություններին:***

Հանձնաժողովը, Գլադստոնի բնութագրությամբ, պետք է աշխատեր «***անկողմնակալ***» և ներկայացներ ջարդերին վերաբերող բոլոր տեսակի փաստերը: 1895 թ. հունվարին Սասուն եկավ մայրաքաղաքում ձևավորված հանձնախումբը, որը խնդիր ուներ ներկայացնելու կատարվածի օբյեկտիվ պատկերը: Հանձնաժողովն աշխատեց շուրջ ***վեց ամիս***. այդ ընթացքում հարցաքննեց տարբեր ազգերի պատկանող (հայ, թուրք, քուրդ) 192 վկաների, գումարելով 107 նիստ[3]:

Հանձնաժողովը հետաքննության ընթացքում բացահայտեց այնպիսի փաստեր, որոնք վկայում էին, թե Սասունում կատարվել է կատարյալ ***հայասպանություն*** (արմենոցիդ): Հանձնաժողովի անդամ, բրիտանական ներկայացուցիչ Ի. Շապլիի խոսքերով, թուրքական գազանները գնացել են Սասուն, ոչ թե ***Մուրադին*** բանտարկելու, այլ «իսկապես ***ոչնչացնելու հայերին Գելիեկուզանում և Տալվորիկում***»[4]:

1895 թ. հունիսի 20-ին ընդունած որոշման մեջ, համարյա միաձայն, հանձնաժողովը արձանագրեց, թե 1894 թ. օգոստոս–սեպտեմբեր ամիսներին Սասունում սպանվել է 9 հազար հայ բնակիչ: Նրանք արձանագրեցին նաև, որ որոշակի թվաքանակով փախստականներ, առանց սեռի ու տարիքի հաշվարկման, սպանվել են թուրքական զինվորների, ոստիկանների և քրդերի ձեռքերով[5]:

Հանձնաժողովի աշխատանքներին զուգընթաց, Թուրքիայի մայրաքաղաքում հաստատված եվրոպական հինգ տերությունների (Անգլիա, Ռուսաստան, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Ավստրո-Հունգարիա) դեսպանություններից առանձնացված իրավագետ-դիվանագետների գրչով մշակվեց Արևմտյան Հայաստանում բարեփոխություններ կատարելու մի ընդարձակ ծրագիր: Այն սուլթանի վավերացմանն ու ի կատար ածելուն ներկայացվեց 1895 թ. մայիսի 11-ին, դրա համար էլ (ամսվա անու-

---

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 246: Տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1972, էջ 372-373: ՀՍՀ, հ. VI, էջ 183-184: «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», խմբագրությամբ ***Ջ. Ս. Կիրակոսյանի,*** Երևան, 1972, էջ 137:

[2] **АВПРИ,** Политархив, дело 3445, 1894-1895, лл. 3-5.

[3] ***Ю. Г. Барсегов,*** Геноцид армян по международному праву, Москва, 2000, стр. 42-43.

[4] Նույն տեղում, էջ 43:

[5] **АВПРИ,** Политархив, дело 3437, 1894-1896, лл. 7-11.

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Ցեղասպանութիւնը պէտք է պատժուի որպէս ոճիր մարդկութեան դէմ: Չի բաւեր միայն դատապարտել ցեղասպանութիւնը միջազգային որոշումներով: Անհրաժեշտ է հավաքական ու խիստ կեցուածք ճշդել ցեղասպանութեան նկատմամբ: Ցեղասպանութեան զոհ գացած անմեղ ժողովուրդներուն իրաւունքներու ճանաչումը նախապայման մըն է առաջքը առնելու մարդկութեան դեմ գործադրուելիք նոր ոճիրներու: Ուստի, Հայկական Ցեղասպանութիւնը գործադրողներուն կողմէ անոր ճանաչումը անհրաժեշտութիւն մըն է:

նով) ստացավ ***մայիսյան ռեֆորմներ***[1] ճչացող, բայց դատարկամիտ անվանումը:

Այդ բարեփոխությունների մասին Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան ***Կամբոն*** գրում էր. «Ըստ երևույթին նորից առաջանում է ***հայկական հարցը*** թուրքական կառավարության համար առանձնապես տագնապալի հանգամանքներում: Սուլթանը հարցմունք արավ իմ կարծիքի մասին: Ես պատասխանեցի, որ անհրաժեշտ է Հայաստանի կառավարման գործում ռեֆորմներ մտցնել, քննել ամեն մի հանցագործություն, ***մանավանդ «համիդիե» գնդերի կողմից, վերականգնել սուլթանի գերագույն հեղինակությունը, զգացնել տալ նրա գերագույն իշխանությունը:*** Որ նա իզուր է երկյուղ կրում անգլիական գործակալների քննությունից, եթե ինքը շտապի դա հանձնարարել աչքի ընկնող, բոլորի կողմից հարգված մարդկանց, որոնք վստահություն և հեղինակություն վայելեն, չարագործներին զսպեն և մարդկանց ու իրերը համապատասխան կարգի դնեն»[2]:

Մայիսյան բարեփոխությունները պետք է որ ստորագրեր հայ ժողովրդի համար առաջին թշնամին Աբդուլ Համիդը, որպեսզի գործողության մեջ դրվեին: Խորամանկ մարդասպանն իր լրտեսների միջոցով քաջատեղյակ էր եվրոպական վեց մեծերի միջև եղած և գնալով խորացող հակասություններին, դրա համար էլ «անտրտունջ» ձգձգում էր փաստաթղթի վավերացումը: Եվ, վերջապես համոզվելով, որ այդ փաստաթուղթը մեռելածին է, այսինքն՝ դրա կիրառմանը ոչ ոք չի հետևելու, պատմաբան Լեոյի բնութագրությամբ «եվ ահա այդ բոլոր սակարկություններից, առուծախի համաձայնությունից դուրս է գալիս ***մի սոսկալի դատավճիռ հայ ժողովրդի համար – բնաջնջում***»[3]:

Մայիսյան բարեփոխությունները, երկարատև ձգձգումից հետո, վավերացվեցին, որոնց հետևեցին ոչ թե հայ ժողովրդի վիճակի բարելավումը, այլ լուրջ ***նախապատրաստություն*** հայկական գողգոթային – ***Հայոց ընդհանուր ցեղասպանության:*** Սուլթանը հայերի ոչնչացման հանձնախմբի նախագահ նշանակեց մարդատյաց Շաքիր փաշային և Բ. Դռան հետ միասին սպասում էր հարմար առիթի: Առիթն այդքան էլ չուշացավ:

4. Ջարդերն Արևմտյան Հայաստանում 1895-1896 թթ. (համառոտ ակնարկ)

Ծրագրի կենսագործման դանդաղկոտությունն առիթ տվեց հայ մտավորականության ***էլիտային*** միջոցներ որոնել սուլթանին ստիպելու կատարել իր պարտականությունները: Գործողության վայր ընտրվեց մայրաքաղաքը: Գործիչներ դարձան Փարիզում ու Լոնդոնում ապրող վտարանդված Ա. Արփիարյանը, Ա. Չոպանյանը, Երվանդ Օտյանը և այլոք: Ակտիվանում էին հնչակյանները՝ բոլորովին չմտածելով կոտորածի աներևակայելի հետևանքների մասին:

1895 թ. սեպտեմբերի 30-ին Կ. Պոլսում, Հայոց Մայր եկեղեցու բակում, հնչակյան-

---

[1] «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», էջ 139, 767:

[2] **АВПРИ**, Политархив, дело 3437, "Сасунские дела", 1894-1896, лл. 97-100.

[3] ***Լեո,*** Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանություն, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 182:

ները կազմակերպեցին անարյուն, խաղաղ ցույց, որին մասնակցում էին շուրջ 4000 ցուցարարներ: Թափորի մասնակիցներն էին գավառներից եկած պանդուխտ օրամշակները, բեռնակիրները, ինչպես նաև նրանց ուղեկցող կանայք և աղջիկներ[1], ցուցարարները շարժվում են դեպի սուլթանի նստավայրը – Բաբ Ալի, դրա անունով էլ այն կոչվեց Բաբ Ալիի ցույց: Նրանք տանում էին մի աղերսագիր, կրկնում ենք *խնդրագիր*, որում նշված էր, թե Բ. Դուռը սկզբունք է արել. «***բնաջինջ ընել հայերը և պարպել իրենց հայրենիքը***»[2]: Պահանջն էր շատ անմեղ, այսինքն հայերի հետ «*վարվել այնպես, ինչպես վարվում են հպատակ մյուս ժողովուրդներու հետ*»:

Ցույցի մասին եղել են ամենատարբեր, իրարամերժ կարծիքներ: Զարմանալի է, որ պատմաբան Լեոն այն համարում է զինված ցույց և այդ փաստից հանում սխալ եզրակացություն[3]. «Թուրք կառավարությունը,– գրում է Լեոն,– վաղօրոք իրազեկ էր այդ ցույցին: ***Նա զինել էր սոֆթաներին*** (մահմեդական կրոնական դպրոցների ուսանողներին) և ***մահմեդական խուժանը հաստ բրերով ուղարկել էր նրանց փողոց***: Ցուցարարների ճանապարհը կտրեցին թուրք ոստիկանությունը և զորքերը հրամայելով նրանց ցրվել: Բայց որովհետև ցուցարարները զինված էին, ուստի դիմադրություն առաջ եկավ նրանց կողմից, հրաձգություն սկսվեց երկու կողմերի միջև: Մի հայի արձակած գնդակով սպանվեց զինվորական հրամանատարը, ***թուրքերը հարձակում գործեցին, իսկ հայերը փախուստի դիմեցին***՝ թողնելով կռվի տեղում բազմաթիվ դիակներ: Այնուհետև սոֆթաներն ու խուժանը սկսեցին իրենց գործը փողոցներում հարձակվելով հայերի վրա և իրենց բրերով ջարդելով նրանց գլուխները: Սարսափն ու ահաբեկումը տիրեցին մայրաքաղաքի և նրա արվարձանների վրա: Կոտորվեց մոտ 2000 հայ»:

Իբրև Լեոյի այդ նկարագրության սրբագրում Ս. Մարկոսյանն ավելացնում է. «... Ցուցարարներից սպանվածների թիվը շատ չնչին էր: Սպանվածների մեծագույն մասը ցույցի հետ առնչություն չունեցող ժողովուրդն էր: Խուժանը մահակներով հայերին ջարդում էր ամենուրեք, իսկ ոստիկանությունը միայն օժանդակում էր նրան: Թալանի ենթարկվեցին հայերին պատկանող խանութները և շատ հայերի տներ: Հարց է առաջանում, եթե ցույցը զինված ապստամբության (կամ զինված ցույցի) բնույթ էր կրում, այդ ինչպես է, որ մահակներով (ընդ որում, ապացուցված էր, թե ինչպես այդ ժամանակ, այնպես էլ հետո այդ մահակներն իրար շատ նման էին և բնականաբար, պատրաստված էին կառավարական հատուկ պատվերով և բաժանված խուժանին) զինված խուժանը ջարդում էր ատրճանակներով զինված հայերին: Մի՞թե պարզ չէր, որ ցուցարարները զինված չէին, այլ նրանց մեջ կային ատրճանակ ունեցող մի քանի մարդ»[4]:

Բաբ-Ալիի խաղաղ ցույցը հայերի համար վերածվեց արյան բաղնիքի: Մայրաքաղաքի կենտրոնական փողոցներն ու սալահատակված մայթերը լցվեցին սպանված հայերի դիակներով: Զավեշտականն այն է, որ կատարված սպանդին անտարբերությամբ նայեցին եվրոպական այն դիվանագետները, որոնց աչքերի առաջ կատարվեց ***շուրջ 5000 հայերի ոչնչացումը***: Թուրքական դիվանագետները այս անտարբերությունը բացատրում էին եվրոպական մեծերի միջև բարեփոխությունների ծրագրերի շուրջ առաջացած տարակարծությամբ: Անգլիայի դեսպան ***Դաֆֆերինը*** Կ. Պոլսից գրում էր. «Թուրքերը շատ արագ են գլխի ընկնում, թե ***Եվրոպան երբ է դադարում միասնական լինելուց***»[5]:

---

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 289:

[2] «Պատմություն Ս.Դ. Հնչակյան կուսակցության, 1887-1962», հ. Ա, էջ 155:

[3] ***Լեո,*** նշված աշխատությունը, էջ 184:

[4] ***Ս. Մարկոսյան,*** նշված աշխատությունը, էջ 239:

[5] «British Documents on Ottoman Armenians», vol. II, (1880-1890), Ankara, 1983, N 93, p. 274. Տե՛ս նաև ***Ю.А. Борсоев,*** նշված աշխատությունը, էջ 46:

Այո, Եվրոպան արդեն ճեղքվում էր խմբավորումների, և կարծեք թե երևում էին ապագա այն դաշինքները, որոնք աշխարհի վերաբաժանման համար հայտ էին ներկայացնում, նախապատրաստվում Առաջին աշխարհամարտին: Հայաստանը ինչպես միշտ, առավել ևս այդ պահին, մանրադրամ էր արևմտյան տերությունների ձեռքին: Թուրքիան այդ ամենը և՛ տեսնում էր, և՛ հասկանում՝ այժմ նախապատրաստվելով ոչ Հայաստանի *ընդարձակման*, այլ հայերի «կատարյալ» ոչնչացմանը – ցեղասպանությանը:

Մարդասպան սուլթանն անձամբ ղեկավարելով հայասպանության պրոցեսը՝ *թուրքական կանոնավոր բանակը, հարյուր հազարի հասնող քրդական «համիդիե» հեծյալ զորաջոկատները* (ինչ ջոկատ – մի ամբողջ բանակ), *չերքեզական վայրագ խմբերը* նետեց անպաշտպան, անզեն, խաղաղ ու ստեղծագործ մի ժողովրդի՝ *հայ ժողովրդի դեմ:* Սկսվեցին 1895–1896 թթ. հայկական կոտորածները:

Հայկական ջարդերի *աշխարհագրությունն* այսպես է. կոտորածներ եղան 1895 թ. սեպտեմբերի 29-ին՝ *Տրապիզոնում*, սեպտեմբերի 30-ին *Բաբերդում*, հոկտեմբերի 7-ին՝ *Դերջանում*, հոկտեմբերի 9-ին՝ *Երզնկայում*, հոկտեմբերի 10-ին՝ *Չարսանջակում* և *Քղիում*, հոկտեմբերի 13-ին՝ *Բաղեշում* և *Գյումուշխանեում*, հոկտեմբերի 16-ին՝ *Եդեսիայում* և *Շապին-Կարահիսարում*, հոկտեմբերի 18-ին՝ *Երզրումում*, հոկտեմբերի 26-ին՝ *Խարբերդում*, հոկտեմբերի 27-ին՝ *Ակնում*, նոյեմբերի 1-ին՝ *Դիարբեքիրում*, նոյեմբերի 3-ին՝ *Մարզվանում*, նոյեմբերի 12-ին՝ *Սեբաստիայում*, նոյեմբերի 28-ին *Զիլեյում*, դեկտեմբերի 28-29-ին՝ *Ուրֆայում* և այլ տեղերում[1]: Շատ գավառներում, հայկական արյունից չկշտացած, թալանից ու կողոպուտից չբավարարված, *թուրքական* կանոնավոր զորքերը, *խուժանն* ու «*համիդիեական*» հեծելազորայիները ջարդերի պրոցեսը կրկնում էին, երբեմն էլ երրորդ անգամ ավերում Հայաստան աշխարհը[2]:

Թուրք և քուրդ հրոսակների դաժանություններին չափ ու սահման չկար: Նրանք նախ և առաջ բռնազավթում էին հայերի ունեցվածքը, ապա ամենավայրագ, բարբարոսական մեթոդներով ոչնչացնում անզեն ու անպաշտպան բնակչությանը՝ հաշվի չառնելով ո՛չ սեռը, ո՛չ տարիքը և ո՛չ էլ կարողության չափը: Նրանց սրի ողորմածությանն էին հանձնված երեխաները, ծերերը, կանայք: Շատ-շատերին կախում էին ծառերից, կենդանի թաղում իրենց իսկ պատրաստած փոսերի մեջ, հարյուրներով լցնում մարագներ և գոմեր, եկեղեցիներն ու վանքերը, «նավթի օգնությամբ» կրակի հրեղեն բոցերի կերակուր դարձնում: 1876 թ. ապրիլին բուլղար ժողովրդի զանգվածային ջարդերից «իմաստնացած», մահմեդապաշտ այդ բորենիները, յուրահատուկ ծևերով էին կոտորում նոր զոհերին[3]:

1895-1896 թթ. հայկական կոտորածներին (ոչ ճշգրտված տվյալներով, այսինքն՝ պակասավոր) զոհ գնացին Կ. Պոլսում՝ *20 հազար հայ*, Ուրֆայում՝ *7 հազար*, Երզրումում՝ *15 հազար*, Շապին-Կարահիսարում՝ *10 հազար*, Ակնում՝ *4 հազար*, Մալաթիայում՝ *10 հազար*, Արաբկիրում *8 հազար*, Սեբաստիայում՝ *7 հազար*, Մարաշում *9 հազար*, Տիգրանակերտում *7 հազար*, Հալեպում՝ *3 հազար*, Կեսարիայում՝ *5 հազար*, Այնթապում՝ *2 հազար:* Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր գյուղերն ու քաղաքները դարձան հայ ժողովրդի գերեզման, ողողվեցին բնիկ ժողովրդի արյամբ[4]:

Աշխարհի բոլոր երկրների փակ ու բաց արխիվադարանները լիքն են այնպիսի

---

[1] ՀՍՀ, հ. 6, Երևան, 1980, էջ 183:

[2] *Վ. Ա. Պարսամյան,* Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1967, էջ 332:

[3] Նույն տեղում, էջ 333:

[4] Նույն տեղում (Վ. Պարսամյանի բերած թվերը պակասավոր են: Մենք կատարել ենք որոշ ճշգրտումներ ու լրացումներ):

վավերագրերով, որոնք ամոթանքի թուք են շպրտում թուրք այն կեղծարարների երեսին, ավելորդ, գուցեև *հազարերորդ* անգամ ապացուցում, հայ ժողովրդի *ցեղասպանության* եղելությունն օսմանյան կայսրությունում: Եթե մենք այդ մասին մանրամասներ ու նոր փաստեր հրապարակենք, ապա հարյուրավոր հատորներ են պետք, վավերագրերի բազում ժողովածուներ: Եվ դրանց մի ստվար հատվածն արդեն լույս են տեսել *Մ. Գ. Ներսիսյանի, Վ. Ա. Միքայելյանի* խմբագրությամբ մեզանում, բազմաթիվ մեծ ու փոքր ժողովածուներ Հայկական Սփյուռքում, արևմտյան այլ երկրներում:

Եվ թվաշատ մենագրություններն ու վավերագրերի ժողովածուները *կասկած* չեն թողնում, որ օսմանյան կայսրության *արմենոցիդի – հայասպանության* քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում և հայաբնակ նահանգներում իրականացվել է *պետական մակարդակով,* Աբդուլ Համիդի անմիջական ղեկավարությամբ: Սուլթանը հայերին ջարդում էր *կառավարական գործի, այսինքն՝ կանոնավոր բանակի,* ավարածարավ թուրք խուժանի, երբեմն էլ ամբողջ իսլամ ազգաբնակչության ձեռքերով: Արյունախում «*սուլթան-խալիֆը*», հպատակ քրիստոնյա ժողովուրդների՝ ընդհանրապես, հայ հպատակների հետ՝ մասնավորապես, վարվում էր իբրև «ստրուկների», «գյավուրների» և փաստորեն *կրոնական պատերազմ* էր ծավալում սեփական ժողովրդի դեմ: *Դա ոչ տեսնված էր և ոչ էլ լսված, երբ գահակալը մորթում է մի ժողովրդի, որի աշխատանքով կերակրվում է և՛ ինքը, և՛ հպատակների իսլամապաշտ մյուս մասը:*

Համիդն այդ ամենն անում էր *նաև* քուրդ ցեղապետների առաջնորդած «*համիդիեների*» ձեռքերով, մտքում պահած ունենալով թշնամացնել երկու դրկից ժողովուրդների, առաջնորդվելով ոչ միայն «*բաժանի՛ր, որ տիրես*», այլ «*սպանվեն իմ թշնամիներն են, սպանեն իմ թշնամիներն են*» խարդախ ու խորամանկ սկզբունքներով: Հետևաբար, երբ վերևում ընդգծեցինք *նաև* բառը, այդ նշանակում է, որ քուրդ բարբարոս հրոսակները ջարդելով հայ ժողովրդին, այդ չի նշանակում, թե ամեն ինչը նրանք արեցին: Նրանք արեցին այն, ինչ արտոնեց իրենց հոգևոր (խալիֆ) և աշխարհիկ (սուլթան) առաջնորդը:

Հայկական կոտորածները *պետական քաղաքականության* արգասիք էին, և քրդերի դաժանությունները մասն էին այն ամբողջի, ինչը Թուրքիայի պատմության մեջ մտավ *գենոցիդ – ցեղասպանություն* անունով:

Մի կարևոր հանգամանք ևս հաշվի առնենք: Շուրջ կես դար, ժողովուրդների բարեկամության կեղծ նշանի տակ ծվարած ԽՍՀՄ «գաղափարական առաջնորդներն» արգելում էին քրդերի մասին *«հավաքականորեն»* ճշմարիտ խոսք ասել, նրանց ջարդարար գործունեության համար դիմակազերծ անել, ցույց տալ վերջիններիս անտարակույս մասնակցությունը Հայոց ցեղասպանության արգահատելի պրոցեսին:

Անշուշտ, ողջ քուրդ ժողովուրդը չէ, որ կատարեց հայոց կոտորածը: Նրանցից շատերը գերծ մնացին այդ մեղսակցությունից, շատերը նույնիսկ օգնեցին հայերին և փրկեցին կոտորածներից: Սակայն այսօր պետք է ասել ճշմարտությունը, այսօրվա քուրդ ղեկավարներին հիշեցնել, որ «համիդիեական» հարյուրհազարանոց բանակը մորթոտեց արևմտահայությանը, հետևաբար ժամանակակից քրդերը չպետք է կրկնեն նախորդների սխալները, քանզի մենք *վաղը լուրջ հարցեր ունենք իրար հետ լուծելու:*

Երկրորդ պարագան այն է, որ մեր սույն մենագրությունը ստեղծելիս մենք հաշվի ենք առել *հայկական ակադեմիական* բարձրարժեք այն աշխատությունները, որոնք հայ-քրդական հարաբերությունների, «համիդիեական» գնդերի չարագոր-

ծությունների մասին համարձակորեն, անկողմնակալ ու գիտական խիզախությամբ իրենց ճշմարիտ խոսքն են ասել: Դրանցից մենք առանձնացնում ենք պրոֆ. *Վ.Ա. Բայբուրդյանի* «Հայ-քրդական հարաբերությունները օսմանյան կայսրությունում» արժեքավոր մենագրությունը, որը խնդրի վրա նոր ու հիմնավոր լույս է սփռել, և որի էջերում եղած փաստերից ու եզրահանգումներից մենք օգտագործել ենք սույն և նախորդ մեր աշխատություններում:

Անկարելի է անտեսել պրոֆ. *Ա. Ս. Համբարյանի* լուրջ ավանդը հայ-քրդական հարաբերությունների պատմության հետազոտման գործում: Նրա բոլոր աշխատություններին եկավ ու գումարվեց վերջինը՝ «Ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.)» մենագրությունը, որի նախավերջին և ծավալուն գլուխը խորագրված է «Քրդական շարժումներն Արևմտյան Հայաստանում»[1]:

Պատմաբանը XIX դարավերջին և XX դարի արշալույսին ծավալված քրդական շարժումները *եռատում է՝ հետադիմական աղայականի, լիբերալ մտավորականության և գյուղացիականի:* Այս դասդասման ճշգրիտ քե վիճահարույց գնահատականը թողնելով հետագային այստեղ մեր տեսակետով, անժխտելի համարենք հետադիմական աղայականին պատմաբանի տված գնահատականները, նրանց կատարած ավերածություններն Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի բոլոր այն վայրերում, որտեղ հայ ու քրիստոնյա այլ ազգեր կային:

Նա գրականության, պարբերական մամուլի էջերից և ամենատարբեր արխիվներից, տարիների ընթացքում, հատիկ-հատիկ հավաքելով արժանահավատ ու հետաքրքրական փաստեր, շարադրում է «համիդիեների» պատմությունը, իրավամբ նրանց վայելած իրավունքներն ու կուտակած հարստությունը համեմատում շուրջ 400 տարի շարունակ հարատևած դերեբեյությունների (ծորապետությունների) և դերեբեյների հետ:

Մահմուդ II-ը սկսեց, Աբդուլ Համիդն ավարտեց դերեբեյությունների ոչնչացումը, կենտրոնախույս ուժերի հպատակեցումը: Համիդ II-ը քանդեց քրդական ցեղապետների ձեռքերին դրած կապանքները, որոնց կապկպելը իր նախորդներից մեծ ջանքեր ու ծով արյուն էր պահանջել:

Մինչև 1908 թ. կեղծ հեղաշրջումը Թուրքիայի ասիական նահանգներում «համիդիե» զորաջոկատների ավագանին, հայ ժողովրդին գռփելու, ծանր հարկային հարստահարության, ուղղակի կողոպուտի և ոչնչացման դաժան, անմարդկային արարքների միջոցով հասավ *առասպելական հարստության*, այնպիսի ունեցվածքի, որին մարդակեր բորենին – Համիդ սուլթանն էր նույնիսկ նախանձում:

Մի քանի մեջբերումներ անենք *Ա. Համբարյանի* վերոհիշյալ մենագրությունից:

Քուրդ «համիդիեականների» առաջնորդներից էր *Քյոռ Հուսեյն* փաշան: Նա «մի տեղում թալանում էր գյուղացիներին, մի այլ տեղում վաճառականներին, մի դեպքում գռփում էր բնակիչներին հարկահանության, իսկ մյուս դեպքում վաշխառուական եղանակով»[2]:

90-ականներին միաչքանի այդ հրեշը Չեքի փաշայի մտերիմներից էր, նրա կնոջ «խաչեղբայրը», որն իր թալանածը կիսում էր «համիդիեների» գլխավոր հրամանատարի հետ, փոխարենն ստանում գործելու անսահմանափակ իրավունքներ: 1896-1903 թթ. հայկական ջարդերի ժամանակ միայն Ադլջևազում նա բնաջնջեց հայկական 117 ընտանիք, առևանգեց 18 կին և աղջիկ, դաժանությանը չդիմանալով

---

[1] *Ազատ Համբարյան,* Ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում. (1898-1908 թթ.) Երևան, 1999, էջ 376-399:

[2] Նույն տեղում, էջ 378:

գաղթի ճանապարհը բռնեցին 332 գերդաստաններ[1]: «Բյուզանդիոնի» թղթակիցը առանց զայրույթը պահելու վկայում է, թե. «Հրեշներու հրեշ միակնանի քյուրդ Հյուսեին փաշան, որը երկար ատեն իվեր հայտերանլը կոչված աշիրեթին պետն ըլլալով *իբրև համիդիե* քանդ ու ավեր ըրած է ամբողջ *Ատիլճևագի* և *Արճեշի* մեջ գտնված հայ գյուղերը, տանջելով, չարչարելով, թալանելով, դեզեր վառելով և սպանելով շատ մը նշանավոր հայ տանուտերերը, ավրած է անոնց նահապետական շեն տուները, այսօր տակավին իր դերին մեջ կը գտնվի արծակ համարծակ: Կիմանանք, որ այս տարի իր սահմանին մեջ եղած բոլոր գյուղերու թաղերը բռնությամբ առնելով, իբրև հավաքել իր զինված խոլամները (ծառա) այն գյուղերը ղրկած է, որոնք ծեծի և բռնության ներքև տասանորդեն ավելի գանձելեն ետք յուրաքանչյուր մեյմեկ խումբ քուրդերու ընկերակցությամբ իրենց անիրավ բաժիններն ալ կհափշտակեն, դիմադրողը չարչարելով և արևէ զրկելով: Այս հերիք չէր, այդ անխիղճ միակնանին իր ունեցած հին ցորենները մեկուն 3-4 վերադիրով (տոկոս) ցրած ըլլալով հայ գյուղերու վրա, բռնությամբ նորեն իր մարդիկը ղրկելով կը գանձե զանոնք այն եղանակով, որ անոնց քանակը հավասարվի ցորենի նախկին գիներուն»[2]:

Ա. Համբարյանը հանգամանորեն բացահայտում է Հյուսեին փաշայի հորեղբոր որդի *էմին փաշայի* չարագործությունները 90-ականների հայկական ջարդերի ժամանակ: Սկզբում սովորական թալանչի այս քուրդը պարապում էր ավազակությամբ: 1891 թ. զինվորագրվելով «համիդիեներին» սկզբում դարձավ բին բաշի, ապա հասավ փաշայի աստիճանի: Նրա այդ արագ աստիճանափոխությունը պայմանավորված էր արևմտահայության նկատմամբ գործադրած *աներևակայելի դաժանություններով:*

Գարշելի այդ քուրդը, իր խոլամների ձեռքերով և անձնական ցուցաբերած մասնակցությամբ, 1895-1896 թթ. միայն Արճեշում կոտորեց 500 հայ, ոչնչացրեց բազմաթիվ գյուղեր և քարուքանդ արեց տասնյակ հազարավոր շեն օջախներ[3]: Այդ դաժանությունների առումով հայտնի են ներքոհիշյալ փաստերը:

1896 թ. Կայծակ, Արմիզոն գյուղերի և Կենավոր վանքի քրիստոնյաները հավաքվում են Գանձակ գյուղի կենտրոնում և քուրդ մարդասպանից, ռոմանտիկ հավատով, խնդրում իրենց *խնայել*, խոստանալով դառնալ նրա «*հավատարիմ հարկատուները*»: Հայասպան ու դաժան քուրդն իր տարերքի մեջ էր: Նա սկզբում հրամայեց հպատակություն հայտնած հայերին հերթականությամբ կանգնեցնել գյուղամեջի պատի տակ և մեկ առ մեկ գնդակահարել: Տեսնելով, որ շատ փամփուշտներ է «վատնում» փոխեց հայասպանության ձևը և անզեն հայերին ոչնչացնել տվեց սրերով ու խանչալներով չխնայելով նաև կանանց ու երեխաներին:

Դեպքերի ականատեսը պատմում է, թե դաժանությունը սպանության ձևի մեջ էլ է անմարդկային, աներևակայելի: Էմինի հրամանով նրա խոլամները «*փոքրիկ երեխաների ոտներից բռնելով և օդի մեջ ճոճելով ծեփում էին պատերին և սպանում: Կանանց և օրիորդներին բռնաբարում էին արևի տակ, ծնողների և ամուսինների ներկայությամբ, իսկ այդ բոլորից հետո կենդանի մնացած մի քանի պառավ և մանր երեխաներ ձգեցին քոլոզ Վրդոյի ցորենի հորը, նրանց վրա լցրին քար ու հող և կենդանի կենդանի թաղեցին այդ հորի մեջ, որտեղից... երեք օր շարունակ լսվում էին սիրտ կտրատող ոռնոցներ և հոգեվարքի նվոցներ* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[4]:

---

[1] ***Վ. Ա. Гордлевский,*** Избранные сочинения, том III, Москва, 1966, стр. 117.

[2] «Բյուզանդիոն», 1908, սեպտեմբեր 4: Տես նաև *Ազատ Համբարյան*, նշված աշխատությունը, էջ 379:

[3] *Ազատ Համբարյան,* նշված աշխատությունը, էջ 380:

[4] *Ա–Ղօ,* Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներ, Երևան, 1912, էջ 360: Տես նաև *Ազատ Համբարյան*, նշված աշխատությունը, էջ 381:

Արևմտյան Հայաստանում և նրա մերձակա վիլայեթներում տնտեսական մեծ ազդեցության և քաղաքական հզորության հասավ քուրդ Իբրահիմ փաշան: Նա աներևույթ, գաղտնի կապերով աղերսվում էր սուլթանի հետ, նրան վճարում էր հսկայական գումարներ և նրանից ստանում հովանավորություն իր չարագործություններ ծածկելու համար[1]:

Իբրահիմ փաշան 90-ականների հայկական ջարդերի գլխավոր դերակատարներից էր և այդ ու հետագա տարիներին կուտակեց հսկայական հարստություն: Երիտթուրքերի տխրահռչակ հեղաշրջման նախօրյակին Իբրահիմ փաշան դարձել էր աշխարհակալ, որի տիրույթները փռված էին *Դիարբեքիրի, Ուրֆայի, Հալեպի, Մելիտինեի, Դևրիկի* հողատարածությունների վրա: Պատերազմի կամ հայերին կոտորելու պահին *Ջեքի փաշային*, այսինքն Բ. Դռանը, նա տրամադրում է *«համիդիեական» տասը գունդ– 5000 քուրդ ավազակներով, ցեղապետն ուներ 50 հազար ձի, 300000 ոչխար, 20000 ուղտ, 5000 հրացան* և անթիվ հպատակներ, որոնցից, երբ ցանկանար, կարող էր հավաքել հարկեր և տուրքեր այնքան, ինչքան կամենար[2]:

Հայոց թափած ծով արյան, կոտորածից անթաղ մնացած ոսկորների գնով, հեքիաթային հարստության հասան հարյուրավոր քուրդ ցեղապետներ, աղաներ, շեյխեր, բեկեր, փաշաներ: Դրանց առաջին շարքերում էին *Մամադ բեկը, Սեիդ Ալի շեյխը, Մուսա և Դասըմ բեյերը, Շաքիր աղան, Միր Միհեն, Շարաֆ բեյը* և շատ ուրիշներ: Հայ ժողովուրդն իր կամքից անկախ այդ մարդակեր ավազակներին դարձնում էր բեկ, աղա, փիր, փաշա և այլն: Այդ կոչումները քրդերին տալիս էր Բ. Դուռը պատրաստում կոտորածների, երբեմն նրանք ավելի դաժան էին, քան թուրքերը.

Քրդերի անտանելի դաժանության մասին բերենք մի քաղվածք ևս Ազատ Համբարյանի մենագրությունից: Նա գրում է. «Բնորոշ է, որ որոշ աղաներ, հարբելով հայերի արյամբ, պահանջում էին շարունակել նրանց կոտորածները, մինչև իսպառ բնաջնջվեն: Այսպես. 1901 թ. հուլիսի 7-ին Սուշի մյութեսարիֆը Սասունում երբ հրավիրեց համիդիե աղաների խորհրդակցություն և բացատրեց կառավարության ծրագիրը հայկական նոր ջարդեր կազմակերպելու մասին, բալաքցիների ցեղապետ Ֆերոն պահանջեց «բոլոր հայ տները տակն ու վրա ընելու» թույլտվություն («Դրոշակ», 1901, N 6, էջ 103): 1902 թ. երբ սուլթանական վաշտերը մեկնում էին Սասուն բնակիչներին հալածելու և ահաբեկելու համար, ճանապարհին նրանց միացան Բուլանըխի, Մանազկերտի, Խնուսի և Վարդոյի գավառներում գտնվող համիդիե գնդերը: Նրանք պատրաստակամություն հայտնեցին կատարել թուրքական զորահրամանատարի հրահանգը «միշտ պատրաստ մնան, որ իրենց նշան տրվելուն պես հարձակվին Սասունի վրա» («Դրոշակ», 1902, N 8, էջ 121): 1904 թ. Սասունի գոյամարտի ժամանակ համիդիեի հրոսակները կատարելով կառավարության կամքը, կոտորեցին բազմաթիվ անմեղ ու անպաշտպան հայերի»[3]:

Առաջադրված խնդիրներն ու դրանց լուծման շրջանակները թույլ չեն տալիս նորից փաստեր, փաստեր... հրապարակել, քանզի դրանք այնքան առատ են, բազմաբնույթ, որ մեկ կամ մի քանի մենագրությամբ հետազոտելը, ամբողջացնելը անհնարին է..., ուստի ընդարձակ մեջբերումներ անելով մեր գրչակից պատմաբաններից, ցանկացանք ցույց տալ, որ քրդական աշիրեթների Հայաստանում կատարած ավերածությունների մասին միայն մենք չէ, որ նույնանման կարծիքի ենք, այլ *հանուր հայ պատմագրությունը, նույնիսկ շատ օտարներ:*

---

[1] *Ազատ Համբարյան*, նշված աշխատությունը, էջ 383:

[2] *Т. Томилов*, Отчет о поездке по азиатской Турции в 1904, часть I, СПб., 1907, стр. 188, *Ազատ Համբարյան*, նշված աշխատությունը, էջ 383:

[3] *Ազատ Համբարյան*, նշված աշխատությունը, էջ 338:

Մորթվեց հայը, որոշ տեղերում մաղվեց, նվազեց նրա թվաքանակը: Շատ գավառներ լրիվ հայազրկվեցին: Հեռացող կամ սպանվող հայ գերդաստաններին փոխարինելու էին գալիս թուրք ու քուրդ «*նորաբնակները»: Վերածվեց Հայաստանի դեմոգրաֆիկ քարտեզը,* և Համիդը, կարծեք թե հասավ իր դիվային ծրագրի *միմիմումի* իրականացմանը: Տոկոսային փոխհարաբերությամբ, շատ գավառներում, հայերն այլևս բացարձակ մեծամասնություն չէին կազմում: Նա նախապատրաստեց 1915 թվականի հայկական հիմնավոր *ցեղասպանությունը,* որը կատարվեց իր «հմուտ և ընդունակ» աշակերտներ, ուսուցչին գերազանցող երիտթուրքերի *առավել արյունոտ ձեռքերով:*

Հայկական ջարդերն Արևմտյան Հայաստանով չվերջացան: 1895-1896 թվականներին հայ ժողովրդին «խփում էր և՛ մարդ-գազանը, և՛ բնությունն» իր ահռելի ուժով: Ցրտաշունչ ձմռանը փոխարինելու եկան սովն ու համաճարակը: Թուրքերի ու քրդական զորաջոկատների սվիններից մազապուրծ հայկական բեկորները, վիրավորված, հարազատների մի մասը կորցրած, վաղվա օրվա մասին այլևս չմտածելով, աստանդականի ցուպը վերցրած, գաղթում, պանդխտում էին այն երկրները, որտեղ հարատևելու քիչ թե շատ հույսեր ունեին: Շատերը խուռն բազմությամբ լցվեցին Կ. Պոլիս, այն սին հույսը փայփայելով, թե եվրոպական դիվանագետներից երկնչելով, Բ. Դուռն այլևս այնպիսի մարդասպանություն չի իրականացնի, ինչպես կատարվեց Արևմտյան Հայաստանում: Ջո՜ւր հույսեր էին. այստեղ էլ խաբվեցին հայն ու Հայաստանը:

5. Հայկական ողբերգությունը Կոստանդնուպոլսում

Հայկական ջարդերի դժոխային ալիքն ասիական Թուրքիայից տեղափոխվեց Բոսֆորի ափերը՝ սուլթան-խալիֆի նստավայրը, այնտեղ, որտեղ հաստատված էին եվրոպական դիվանագետները, ամեն տեղ այցելելու արտոնություն ունեցող *արևմտյան թերթերի թղթակիցները:* Ջույգ աշխարհամասերը կամրջող այդ քաղաքն աշխարհի և՛ աչքն էր, և՛ ականջը: Հետևաբար բոլորն էին զարմանում, որ արյունախում սուլթանը, չկշտացած գավառներում իրականացրած արյունահեղությունից, *չերկնչելով* արևմտյան տերություններից, գոտեպնդվեց և արդեն սկսեց *հայերի ցեղասպանությունը Կոստանդնուպոլսում:*

Համիդ մարդասպանը վաղօրոք ծրագրած մայրաքաղաքի հայությանը ոչնչացնելու համար լուրջ նախապատրաստություն էր տեսել[1]: Նրա անմիջական ղեկավարությամբ Կ. Պոլիս տեղափոխվեցին *«քուրդ «համիդիեները», ալբանացիներ և լազերի հրոսակախմբեր»*[2]: Նրանք զինված էին համանման կապարե ծայրակալներ ունեցող հատուկ մահակներով, դանակներով և հրազենով:

Հայերի կոտորածի համար նախապատրաստվում էր նաև «անկառավարելի խուժանը», զարմանալի էր, բայց փաստ՝ նաև թուրք *կանայք:* Դեպքերի ականատեսներից մեկը վկայում է, թե ինչպես «թուրք կանանց ամբոխը, ճչալով, ծիծաղելով ու ոտքերով տրորելով այն ամենը, ինչ չէր կարող տանել իր հետ, թալանում էր իրենց կողմից սպանած հայերի կրպակները»[3]:

---

[1] *Արման Կիրակոսյան,* Բրիտանական դիվանագիտությունը և Հայկական խնդիրը, Երևան, 1999, էջ 354:

[2] "История дипломатии", том II, Москва, 1963, стр. 336.

[3] *Արման Կիրակոսյան,* էջ 355: Տե՛ս նաև՝ *D. Kolopothakes Massacre*–The Contemporary Review, p. 460.

Սուլթանական կառավարությունը հիմնավորապես նախապատրաստվելով հայասպանությանը, սպասում էր հարմար *առիթի*, այո՛, միայն առիթի, որը չուշացավ:

1896 թ. օգոստոսի 19-ի վաղ առավոտյան երեսուն հոգուց բաղկացած հայ հայդուկների մի խումբ, ՀՅ դաշնակցության նշանաբանով, գրավեց «Օտտոմանյան բանկը» և ռումբերով զինված, սպառնաց պայթեցնել շենքը, եթե սուլթանը վերջ չդներ Արևմտյան Հայաստանում շարունակվող հայկական ջարդերին և չիրականացներ պարտավորված բարենորոգումները[1]: *Կ. Բաստրմաջյանի* գլխավորած մահապարտներն, այլ մեթոդներ չգտնելով, գերադասում են հուսահատական այդ քայլը և երես առ երես նայելով մահվան, մեծ տերությունների դիվանագետներին են ներկայացնում իրենց գրավոր պահանջները:

Բանկի գրավումը լուրջ անհանգստություն առաջ բերեց եվրոպական դիվանագետների շրջանում: Այդ դրամատանն էր ամբարված ոչ միայն թղթադրամը, այլև կայուն կուրսով պահող հսկայածավալ մետաղադրամը (ոսկու տեսքով): Բանկի գրավման պլանը վաղօրոք հայտնի էր լրտեսներով լցված Ելդըզ Քյոշքին: Սակայն Համիդն անմիջապես չկանխեց այն, որպեսզի շիկացնի միջավայրը և թեժացնի ատելությունը մահմեդական ամբոխի մեջ՝ ընդդեմ քրիստոնյաների:

Հետաքրքիր երկու քաղվածք է գիտական շրջանառության մեջ դնում Արման Կիրակոսյանը: Նրա մեջբերմամբ, այդ օրերին լինելով Թուրքիայում, *Լ. Կամարովսկին* գրում էր. «Թուրք իշխանությունները, նախապես իմանալով Օտտոմանյան բանկի վրա հայերի կողմից նախապատրաստվող հարձակման մասին, ոչ միայն միջոցներ չձեռնարկեցին կանխելու դրա իրագործումը, այլ ոստիկանական ճարպիկ գործակալների միջոցով, ամեն կերպ բորբոքեցին ոգևորվող հայերի հայրենասիրական խանդավառությունը և այնուհետև օգտվեցին առիթից զանգվածային կոտորած կազմակերպելու համար»[2]: Ավելի հետաքրքրաշարժ է Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպանության քարտուղար *Ռոբերտսի* այն պնդումը, թե Աբդուլ Համիդն ու նրա հայասպան դրածոները կարող էին կանխել, սակայն չկանխեցին դրամատան գրավումը, *որպեսզի առաջավոր մարդկության աչքում արդարացնեին դրան հաջորդած զանգվածային հայասպանությունը*[3]:

1896 թվականը բնության կողմից ժողովրդին չժպտացող, անբարենպաստ տարի էր: Թուրքերին սնողը, հաց և գյուղատնտեսական այլ մթերքներով նրանց կերակրողը Հայաստան աշխարհն էր, որը շաղախված էր հայության անմեղ արյան մեջ և չէր կարողանում նախկինի նման հաց մատակարարել եվրոպական Թուրքիային: Ստամբուլում ոչ միայն հացի պակաս էր զգացվում, *այլև սովի նախանշաններ էին երևում:* Խորամանկ ու խարդախ սուլթանն այդ ամենի մեղքը բարդում էր հայերի վրա, պատեհ, թե անպատեհ առիթներով «գյավուրներին» մեղադրում երկրում ստեղծված տնտեսական դժվարությունների համար: Նա, «խալիֆի» գերագահությամբ, Կ. Պոլսի իսլամապաշտներին կոչ էր անում պատրաստվել և առաջիկայում կոտորել մայրաքաղաքի հայ զանգվածը: Ամերիկացի միսիոներ *Փիրսը* որոշակի տեղեկություններ է հաղորդում այդ մասին:

Հայկական ողբերգությունից մի քանի օր առաջ, մարդակեր բորենին Համիդը, նամազի էր եկել իր պալատին մոտիկ կառուցված մեչիդում (հեռու տեղ նամազի գնալուց նա վախենում էր): Նամազն ավարտելով *նա ուղղակի կոչ է անում մահմեդական-*

---

[1] *Արման Կիրակոսյան*, նշված աշխատությունը, էջ 351:

[2] *Л. Комаровский*, Восточный вопрос и его жертвы, "Новое слово", 1896, декабрь, стр. 177.

[3] *Ch. Roberts*, A Mother of Martyrs – The Atlantic Monthly, 1899, vol. 83, p. 95. Տես նաև *Արման Կիրակոսյան*, նշված աշխատությունը, էջ 152:

ներին, որպեսզի նրանք անպատիժ կոտորեն մայրաքաղաքի հայությանը[1]:

Բանկի շրջափակումն ու գրավումը տևեց շուրջ 36 ժամ: Սուլթանն անհավատալի դանդաղկոտությամբ հրամայեց կառավարական զորքերով այն առնել «երկաթե օղակի» մեջ: Սակայն, հուսահատության վերջին ճիգերը լարած երիտասարդները հարկադրված ռումբեր են նետում լուսամուտներից և սպառնում պայթեցնել բանկը իրենց հետ միասին: Դա Համիդին ձեռնտու էր, նա հրաման է արձակում զորքը հետ քաշել, վերացնել շրջապատումը, միաժամանակ դիմում է մայրաքաղաքում ծվարած եվրոպական դիվանագետների խաղաղեցնող միջնորդությանը[2]:

Հայ մահապարտները վերջնագիր են ներկայացնում մեծ տերությունների դեսպաններին նրանցից պահանջելով Թուրքիային պարտադրել, որպեսզի բարենորոգումները իրականացվեն Արևմտյան Հայաստանում: Կ. Պոլսի ռուսական դեսպանության ներկայացուցիչ ***Մաքսիմովը*** կարողանում է «հայ հայդուկներին» համոզել, թողնել բանկը, տեղափոխվել մոտակա շոգենավը, այնտեղից եվրոպական մի այլ երկիր անցնելու: Նա խոստանում է նաև, որ մեծ տերությունների դեսպանները կբավարարեն հայերի պահանջները[3]: Երիտդաշնակները «համոզվում են» և բանկը թողնելով տեղափոխվում են անգլիական շոգենավ: Հաջորդ առավոտյան նրանց մոտ են գալիս ֆրանսիական և ռուսական դեսպանների ներկայացուցիչները հայտարարելով, որ Ձեր «ծրագիրը» հիմարություն է, և այն իրականացնել հնարավոր չէ: Համենայնդեպս, նավը նրանց հեռացնում է Թուրքիայից, տեղափոխում Մարսել և փրկում ֆիզիկական հաշվեհարդարից[4]:

Վախկոտ ու դաժան սուլթանը ազատ շունչ է քաշում և հրամայում է սկսել հայերի ջարդը մայրաքաղաքում, որը տևում է երեք օր և երեք գիշեր:

1896 թ. օգոստոսի 16-ին (հին տոմարով) Կ. Պոլսի ռուսական դեսպան ***Ալեքսանդր Նելիդովը*** N 123-րդ զեկուցագրով Պետերբուրգի կաբինետին տեղեկացնում է, որ նույն ամսվա երեք օրերին (14-16) Թուրքիայի մայրաքաղաքում ***երեսուն հայեր,*** դինամիտներ ու ատրճանակներ վերցրած, խորամանկությամբ մտել են օսմանյան բանկ և պահանջել կիրառելու մայիսյան ռեֆորմները: «Հայերի շարժման մասին լուրը, – շարունակում է Ա. Նելիդովը, – արագությամբ տարածվեց քաղաքում և թուրքական զանազան թաղամասերից դուրս թափվեցին դանակներով և մահակներով զինված բաշիբոզուկների ամբոխներ, որոնք սկսեցին հարձակվել բոլոր նրանց վրա, ում որ հայ էին համարում, և սկսվեց անպաշտպան և որևէ հանցանք չունեցող քրիստոնյաների բարբարոսական ջարդ: Ոստիկանությունը ոչ միայն մնում էր որպես կատարվող սարսափների դիտող, այլև շատ դեպքերում մասնակցում էր կոտորածներին և թալաններին: Զորքերը, որոնք շատ ուշ էին հասնում անկարգությունների վայրերը, նույնպես ոչ մի միջոց չէին ձեռնարկում դրանք դադարեցնելու համար: Այդպիսով, Ստամբուլի, Ղալաթիայի և Բերայի զանազան վայրերում և նույնիսկ ավելի հեռու թաղամասերում մինչև երեկո քրիստոնյաների հետ կատարվում էր ահեղ դատաստան, որն ընդհատելու համար ոչ մի միջոց ձեռք չառնվեց:

Մինչդեռ Օտտոմանյան բանկում դիրք մտած հեղափոխականները պատուհաններից ռումբեր էին նետում այդտեղ աճապարած զինվորների և ոստիկանների վրա, որոնք սահմանափակվեցին լոկ նրանով, որ հեռվից շրջապատեցին շենքը: Նրանք

---

[1] Սանրամասն տե՛ս **АВПРИ,** Посольство в Константинополе, дело 3441, лл. 7-11, 1896. Տես նաև ***E. Pears,*** Turkey and its people, London, 1911, pp. 40-41.

[2] ***Լեո,*** Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանություն, հ. Բ, Փարիզ, 1934, էջ 26:

[3] ***Լեո,*** նշված աշխատությունը, էջ 27:

[4] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 272:

բանկից պալատ ուղարկեցին բանկի դիրեկտորի օգնական պ. *Օբուաճոյին,* որին հանձնարարեցին սուլթանին հայտնել, որ նրանք դուրս կգան, եթե միայն նրանց ապահովվի, օտարերկրյա դեսպանների մասնակցությամբ, իրենց բոլոր պահանջների կատարումը:

Այդ ժամանակ պալատ ներկայացավ դեսպանության առաջին թարգման պ. Մաքսիմովը, որին ես ուղարկել էի տեղեկանալու տեղի ունեցող դեպքերի մասին և սուլթանին առաջարկելու համար վտանգի դեպքում իմ ծառայությունները: Աբդուլ Համիդը ջերմագին խնդրում է նրան մասնակցել այդ գործին և լիազորում է ապստամբներին խոստանալ բանկից ազատ հեռացում և Թուրքիայից մեկնում, եթե նրանք հրաժարվեն այդ հիմնարկը օդ ցնդեցնելու վերաբերյալ իրենց հանցագործ մտադրությունից:

Չնայած այդ ձեռնարկության ակնհայտ վտանգավորությանը, պ. Մաքսիմովը համարձակ կերպով իր վրա է վերցնում այդ հանձնարարությունը և պպ. Վենցենտի ու Օբուաճոյի հետ ուղևորվում է բանակցելու ապստամբների հետ: Երեք ժամ վիճաբանելուց հետո նրան հաջողվում է համոզել նրանց, որ պաշտպանած գործի շահերից ելնելով, Եվրոպան ամեն կերպ մասնակցություն է ցուցաբերել, որ հոժարակամ դուրս գան բանկից և անգլիական նավ նստեն և մյուս օրը հեռանան արտասահման: Ռումբերը և դինամիտը (13½ *կգ*) նրանք թողին բանկում, *5 հոգի* վիրավորներին և *5 հոգի* սպանվածներին փոխադրեցինք մեր հիվանդանոցը: Իսկ հեղափոխականները, որ մնացել էին 15 հոգի, բոլորն էլ հայեր, ինչպես հավատացնում էին թուրքահպատակներ, նավով ուղևորվեցին Մարսել»[1]:

Կ. Պոլսի հայոց կոտորածն ամենասարսափելին էր 90-ական թվականների ջարդերի ընդհանուր շղթայի մեջ: Մայրաքաղաքը դարձավ անմեղ հայերի սպանդանոց: Արյան բաղնիքի մեջ լողում էին երիտասարդներն ու տարեցները, կանայք և երեխաները, հարուստներն ու աղքատները, միլիոնատեր վաճառականներն ու մեկ լումային կարոտ պանդուխտ օրամշակները: Դժոխքն այցի էր եկել հայ քրիստոնյաներին, որոնց ոչնչացնելու կոչեր էին արձակում մեչիդների ու մինարեթների գավիթներից հնչող թուրք մոլլաների հայասպան քարոզները: Մոլլան սպիտակ չալմա էր կապել գլխին, որը նշանակում էր «*սրբազան պատերազմի*» – «գազավաթի» կոչել թուրք ամբոխին[2]:

Սխալվում են բոլոր այն հետազոտողները, որոնց կարծիքով մայրաքաղաքի հայության նման ոչնչացման *պատճառը* «բանկ Օտտոմանի» դեպքերն էին, *ո՛չ, հազար անգամ, ո՛չ: Դրանք սոսկ առիթ էին:* Համիդն ու Եըլդըզ Քյոշքը Կ. Պոլսում հայկական ջարդերին նախապատրաստվել էին *շատ վաղուց*[3]:

Նրանց «զորավիգ» էր կանգնել *նորաթուխ թուրք բուրժուազիան*, որը մրցակցության ժամանակ չէր կարողանում հաղթել հայ հնուռ վաճառականությանը, դրա համար էլ ձգտում էր ֆիզիկապես ոչնչացնել նրան, որպեսզի տեր դառնար երկրի *տնտեսության հիմնական զարկերակներին:* Համիդի ու թուրք բուրժուազիայի հեռամետ դիտավորությունները սերտաճում էին և վերածվում *աներևակայելի չարիքի՝ հայ ժողովրդի պոլսահայ հատվածի համար*[4]:

Այդ մասին ծանրակշիռ ու անժխտելի փաստեր է հաղորդում Կ. Պոլսի ռուսա-

---

[1] АВПРИ, Политархив, дело 3449, лл. 170-173. Տե՛ս նաև *Ս. Մարկոսյան,* նշված աշխատությունը, էջ 260:

[2] *А. Тыркова,* Старая Турция и младотурки. Год в Константинополе, СПб, 1916, стр. 68-69.

[3] *Ե. Կ. Սարկիսյան,* նշված աշխատությունը, էջ 150-151:

[4] *E. E. Ramsani,* The Young Turks. Prelude to the Revolution of 1908, Beirut, 1965, p. 10.

կան զինվորական գործակալ, գնդապետ Պեշկովը: 1896 թ. սեպտեմբերի 22-ին իբրև դեպքերի ականատես նա զրույց է ունենում ***«Երիտասարդ Թուրքիա»*** կազմակերպության ներկայացուցիչների հետ: Զրույցի ժամանակ պարզվում է, որ Աբդուլ Համիդի հրամանով վաղօրոք ստեղծվել էին ***հատուկ խմբեր***, որոնք իրենց շարքերն էին համալրում հասարակության ***թափթփուկներին, անցյալում մարդասպանության մեջ փորձ ունեցողներին, շուկաներում «գործող» գրպանահատներին,*** բանտերից նոր արձակված քրեական հանցագործներին, նույնիսկ մահվան դատավճռով մահապարտների խուցերում արգելափակված ***թուրք, քուրդ, չերքեզ*** ազգությունների ներկայացուցիչներին: Սրանց շաբաթներով ***վարժեցնում էին*** մարդասպանության մեջ և նման «աշխատանքի» յուրաքանչյուր օրվա համար վճարում ***20 դահեկան***[1]:

Վաղօրոք ձևավորված պատժիչ ջոկատները, ստեղծված առիթի պատճառով Համիդն ու նրան արժանի հենարան դարձած թափթփուկները, խուժանը սկսեցին «հասկաքաղը» օգոստոսի 14-ին, 15-ին և 16-ին: Թալանչիները կարոտ էին կողոպուտի, ավարառության: Նրանք հասան իրենց նպատակներին. թալանեցին հայ հարուստների տներն ու խանութները, կրակի հրեղեն բոցերի մեջ այրեցին նրանց կալվածքները, առևանգեցին, բռնաբարեցին, ապա չնչին գներով, շուկայում, այն էլ աճուրդով վաճառեցին իրենց զոհերի կանանց և աղջիկներին: Համարյա XX դարամուտին Եվրոպան Ասիային կամրջող տերության մայրաքաղաքում, քաղաքակիրթ Արևմուտքի հայացքի տակ, ***մարդավաճառությամբ,*** ավելի ճիշտ ***հայավաճառությամբ*** էին պարապում թուրքերը: Սուլթանը ևս հասավ իր նպատակին, այն է նախ վերականգնեց ***ստրկավաճառությունը:*** Չէ որ վաճառողները Մահմեդի «գավակներն» ու երկրպագուներն էին: Գնողները ևս ***իսլամապաշտներն էին*** մահմեդականները: Աճուրդի առարկան «գյավուրներն» էին, «գիմմիները», «ստրուկները», այսինքն այն հայերը, որոնք բարձրաստիճան մահմեդականների ափսոսանքով, կոտորածից ազատվել էին, «***բայց իզուր էին ազատվել***»[2]: Մեկ այլ ծավալուն վավերագրից հստակ տեղեկանում ենք, որ «***հայերի կոտորածները, խուժանին զուգընթաց, իրականացնում էին՝ նաև թուրք բարձրաստիճան զինվորականները, իբրև գործիք ծառայեցնելով*** ավարածարավ մահմեդական ամբոխին»[3]:

Կ. Պոլսի հայկական կոտորածներին ականատես ***Ա. Տիրկովան*** վկայում է, որ հայկական կոտորածները Ստամբուլում հիշեցնում են այն սարսափելի տեսարանները, երբ հաղթողները սպանում են, տանջամահ են անում, բռնաբարում են, թալանում այնպես, ինչպես հատուկ է «***բնության ամենասոսկալի արարածին՝ մարդուն***»: Նրա հաշվարկներով երեք օրում մայրաքաղաքում ոչնչացվեց շուրջ ***10 հազար հայ***[4]:

Կոտորողների դաժանությանը չափ և սահման չկար: Օգոստոսի 15-ի դեպքերի ականատեսներից մեկը հաղորդում է, թե սուլթան Աբդուլ Մեջիդի երկարամյա քարտուղարի դուստր, եվրոպական կրթություն ստացած և արևմտյան լեզուներին տիրապետող հայուհի ***Մանիլյանի*** երեք արու զավակները զոհվել էին կոտորածի ժամանակ: Սա եզակի դեպքերից մեկն էր, երբ եղբայրները երկու օր շարունակ դիմագրավել էին ոճրագործներին, ետ էին մղել նրանց գրոհները, սակայն երբ անհավասար կռվում փամփուշտները վերջանում են, նրանք ինքնասպան են լինում: Որդեկո-

---

[1] **ЦГВИАРИ,** ф. 450, дело 113, лл. 54-56.

[2] Նույն տեղում, թերթ 55:

[3] **АВПРИ,** Политархив, дело 3449, лл. 182-183. ***Е. К. Саркисян,*** նշված աշխատությունը, էջ 152: ***А. Тыркова,*** նշված աշխատությունը, էջ 62-63:

[4] ***А. Тыркова,*** նշված աշխատությունը, էջ 64:

րույս մայրը (Մանիլյանը) սրտաճմլիկ աղաղակներով նետվում էր մի որդուց մյուսի դիակը: *Տուն ներխուժած թուրքական ասկյարները լուռ ակնդրում էին անտանելի այդ տեսարանը,* վերջում նրանց ավագը ասաց. «*Թողեք այդ պառավ շանն իր սատկած լակոտների հետ* (ընդգծումները մերն են – Հ. Ղ..)»[1]: Կա՞ արդյոք ցեղասպան թուրքին դատապարտելու այլ եղելություն, քան վերոհիշյալը:

Օգոստոսի 18-ին գնդապետ *Պեշկովը* զեկուցում է Կ. Պոլսի ռուսական դեսպանությանը, թե «օգոստոսի 14-ին կեսօրվանից և այսօր գիշեր Ստամբուլում տեղի ունեցան հայերի կոտորածներ: Բնակչության մեջ խուճապն էլ ավելի մեծ է նրանից, որ վստահություն չկա իշխանության միջոցառումների նկատմամբ: Ոստիկանությունը սադրում է և մասնակցություն ունենում ջարդերին: *Պարեկները դիտավորյալ չեն լսում կամ համագործակցում են մարդասպաններին* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[2]:

1896 թ. օգոստոսի 19-ին, չնայած կոտորածները «մեղմացել» էին, այնուամենայնիվ, խուճապը շարունակվում էր, որի մասին Պեշկովը 36-րդ զեկուցագրով հաղորդում է. «Կ. Պոլսում երկու օրում սպանվել են 5500-ից ավելի անպաշտպան հայեր, որոնց թվում և ուրիշ շատ քրիստոնյաներ: *Ստույգ պարզված է, որ կոտորածները կատարել են կառավարության կողմից նախապես կազմակերպված հրոսակախմբերը՝ ոստիկանության պաշտոնյաների գլխավորությամբ*»[3]:

Կ. Պոլսում կատարված հայերի ցեղասպանության մասին իր նամակներում կարևոր փաստեր է հրապարակում ազգությամբ ռուս *Օլգա Կայդանովան:* Նրա ականջալուր վկայությամբ, առաջին օրը հայերին ջարդելու ազդանշան են ծառայել փոստատան կռիվն ու գանձապահի սպանությունը: Նա գրում է, որ դրանից մի քանի րոպե հետո «իսկույն սկսվել է թուրքերի կողմից բոլոր հայերի հետապնդումն ու անխտիր սպանությունը: Խանութները, կրպակները մեկը մյուսի հետևից արագ փակվել են: Չիաքարշների երթևեկությունը դադարեցվել է: Միանգամից քաղաքի տարբեր կողմերի չորս փողոցներում աիեղ իրարանցում է սկսվել: Բոլորը, ոչինչ չհասկանալով, փախել են: Րոպե առ րոպե փողոցների մեջ, մայթերի վրա ընկել են սպանվող հայերը իրենց գլխին տեղացող մահակների ու թրերի հարվածներից: Չբավարարվելով փողոցներում սպանելուց թուրք ամբոխները ներխուժել են տները և այնտեղ շարունակել ջարդը: Տվյալ դեպքում ուշագրավն այն է, որ կոտորածը ամբողջ քաղաքում սկսվել է միաժամանակ, և այդ իսկ պատճառով էլ դա բացատրել, ինչպես հետո էին ասում, բանկում հայերի կողմից գանձապահին սպանելու վրեժով. տարօրինակ կլիներ...»[4]:

Օ. Կայդանովան ջարդի երկրորդ օրն արդեն Կ. Պոլսումն էր և նկարագրում է այդ հայասպան պրոցեսը, ներկայացնում է այնպիսի սրտաճմլիկ տեսարաններ, որոնց նմանը այլ երկրներում և այլ ժողովուրդների մոտ ոչ տեսնված է և ոչ էլ լսված:

Հայ բնակչության բոլոր խավերին թուրքերն սպանում էին վայրագ դաժանությամբ: Նրանք իրենց մահակների ծանրությունը և սրերի ուժը փորձում էին հայերի, հատկապես, պանդուխտ այն դժբախտ օրամշակների վրա, *որոնց «բնակարանի» առաստաղը բաց երկինքն էր, ապրելատեղը բաղնիքների մութ ու խոնավ նկուղները* (թուլումբարանները), *կերակուրը սոխթայիների շարտած հացի*

---

[1] *Ch. Roberts,* A Mother of Martyrs – The Atlantic Monthly, 1899, vol. 83, p. 95. Տես նաև *Սրման Կիրակոսյան,* նշված աշխատությունը, էջ 356:

[2] АВПРИ, Политархив, дело 3449, 1896, лл. 181-182.

[3] «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 156-157: Տես նաև АВПРИ, Политархив, дело 3449, лл. 183-184.

[4] "Братская помощь пострадавшим в Турции армянам", Москва, 1897, стр. 75-76. Տես նաև «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 158:

կտորները՝ ավելցուկը: Աստվածն արդեն սրանց պատժել էր, անիծյալ այդ թուրքերը, սակայն, չէին բավարարվում իվերուստից ստացած հարվածներով, իրենք էլ լրացնում էին և «Գուցեև այդ թշվառներին սպանելով փրկում էին ամենօրյա տանջանքներից»: «Նրանցից շատերն այդ ժամանակ աշխատում էին նավահանգստում, մյուսները, հավանաբար, իմանալով սպառնացող վտանգի մասին, պատսպարվել էին այդ տանը, դեպի ուր էլ հենց ուղղվեց թուրքերի ամբոխը՝ մահակներով ու քրերով զինված: Նավահանգստում աշխատող մի քանի հայեր սրանց ձեռքով սպանվեցին վայրկենապես, տեղնուտեղը, փայտի մի քանի հարված ստանալով գլուխներին. թռչելով անցնելով նրանց դիակների վրայով, դրանք փռված թողնելով նավահանգստում, հետապնդողները նետվեցին դեպի բանվորների տունը: Առջևից գնացողները վազեվազ բարձրանում էին սանդուղքներով, ներս նետվում լուսամուտներից, իսկ մնացած ամբոխը կանգնել էր ներքևում՝ սպասելով այն ավարին, որ նետելու էին իրեն՝ բզկտելու համար: Մի րոպե աղաղակները դադարեցին, ինչ-որ ոռնոց էր լսվում միայն: Ահա լուսամուտներից երևացին թուրքերը՝ իրենց հետևից քարշ տալով հայերին, որոնց գտել էին տանը: Դժվար էր որոշել՝ նրանք արդեն սպանվա՞ծ էին, ծեծված-կիսամե՞ռ, թե՞ սարսափից ուշքները կորցրած: Նրանց նետեցին ամբոխի մեջ, որն սկսեց նրանց ջարդել, քարշ տալ փողոցով, կոխկրտել փոշու մեջ: Տեսարանն այնքան զարհուրելի էր, որ անհնար էր նայել»[1]:

Մայրաքաղաքում կատարվող հայկական ջարդերի երրորդ օրն ավելի սարսափելի էր: Ինչպես մարդակեր բորենիներ, թուրքերը հայերի արյան հոտից «հարբած էին», սպանության ձևերի ու մեթոդների մեջ վարժված, «վարպետացած»: *Օ. Կայդանովան* այդ ամենը տեսնում էր և նկարագրում Կ. Պոլսից ուղարկված իր նամակներում: Նա պատմում է, որ իրենք մի ամբողջ օր մնացել են շոգենավում, չկարողանալով տեղից շարժվել, այնուամենայնիվ, հետևել են հայերի սպանության և թալանի ահավոր տեսարաններին:

Հայերի կտրված գլուխներից բլուրներ էին գոյանում, այնպես, ինչպես Լենկ-Թեմուրը Հայաստանում արեց, Չինգիզ և Բաթու խաները՝ Ռուսաստանում: Մեռած մարմիններից տարափոխիկ ու վարակիչ հիվանդություններ չառաջանալու մտավախությամբ՝ նրանք հավաքում էին, բարձում ծիակառքեր և տանում «թափում էին» ծովը: «Դիակները, որոնք ինչպես տեսնում էինք, – գրում է Կայդանովան, – տանում էին ձիասայլերով, հետո լցնում էին մեծ շոգեմակույկներ և *առանց հաշվելու ջուրն էին թափում այն մասում, որտեղ Բոսֆորից Մարմարա ծովը մտնելիս բավական ուժեղ հոսանք կա: Ասում էին, թե սպանվածների դիակներով ծանրաբեռնված քառասուներկու շոգեմակույկներ են իրենց բեռը ծովը թափել գիշերվա ընթացքում:* Զոհերի իսկական թիվը նույնիսկ մոտավորապես ոչ ոք երբեք չի իմանա... Սարսափելի ծանր, տագնապալի, ճնշող էր այդ գիշերը»[2]:

Խոլերայի համաճարակից վախեցած՝ սուլթանական կառավարությունը ինչքան դաժանությամբ կազմակերպում և իրողության էր վերածում *հայերի կոտորածը,* այնքան *խնամքով էլ* փոխադրել էր տալիս սպանվածների դիակները, որոնց հետ մեռելափոսեր կամ ծովն էին նետվում նաև ծանր վիրավորները: Երեկոյան ժամերին, հատկապես երբ մութն ընկնում էր, կոտորածների վայրերում «հայտնվում էին սպանվածների մարմիններով բեռնված հսկայական սայլեր»[3]: Եղել են օրեր, երբ Ղալաթիայից ու Բերայից 98 եզնասայլ, 136 սովորական սայլեր, լրիվ ծանրաբեռնված՝

[1] «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 159: Տես նաև "Братская помощь...", стр. 76.

[2] «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 161-162:

[3] *А. Амфитеатров,* Армянский вопрос, СПб, 1906, стр. 5-6.

դիակներ են տեղափոխել: Մայրաքաղաքի մյուս շրջաններից *Գատը գյուղի* ճանապարհով, օրը մինչև 70 սայլով բեռնված սպանված հայեր են տարել ու թափել ծովը[1]: 1896 թ. աշնանը ռուսական "Новое время" պարբերականը սրտի ցավով, բայց բազմիմաստ գրում էր. «*Եվրոպացիները հիմա Կ. Պոլսում ձուկ չեն ուտում: Ես էլ եմ զգվում Բոսֆորի ձկից, քանի որ այն անչափ ճարպոտ է*»[2]:

Այդ և բազմաթիվ սարսափազդու այլ փաստերից տեղեկանալով *Օ. Կայդանովան* հանգում է ճշմարտացի ու կարևոր եզրահանգումների, որոնք այսօրվա համար շատ այժմեական են և պատասխան թուրք կեղծարարներին: Նրա ամփոփիչ խոսքն այսպես էր. «*Դա ընդհարում չէր, պատերազմ չէր, ապստամբության ճնշում չէր, այլ պարզապես զազրելի, համատարած, զանգվածային մի սպանություն, մարդորսություն, գոնե այդպիսի տեսք ուներ կոտորածը քաղաքի այն մասում, որը մենք կարողանում էինք տեսնել, բայց ուրիշներից վիճակվել է լսել, որ այնտեղ էլ նույն բանն է եղել* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[3]:

Այժմ փորձենք պարզել Կոստանդնուպոլսի հայ ազգաբնակչության թվաքանակը և նրանց տված զոհերի թիվը 1890-ական թվականներին (գերադասում ենք օտար սկզբնաղբյուրները):

XV դարավերջին Կ. Պոլիսն ուներ *ավելի քան 200 հազար բնակիչ, XVI դարակեսին սրանց թիվը հասավ 400-500 հազարի, XVII դարավերջին՝ 700-800 հազարի*[4]: Թուրքերի գրավումից հետո, հատկապես 1478 թվականի վիճակագրությամբ, մայրաքաղաքում հաստատված 100-120 հազար ընդհանուր բնակչության կազմում ապրում էին 817 տնտեսություն հայեր: XVIII դարի կեսերին Կ. Պոլսում արդեն *ութ հազար* տուն տեղացիներ և *հիսուն հազար* էլ պանդուխտ հայեր կային[5]:

XIX դարասկզբին Կ. Պոլսում ապրում էին 150 հազար հայեր[6], 1840-ական թվականներին նրանց թիվը հասավ *222 հազարի*[7], 1860-90-ականներին *250-300 հազարի*[8]: Ակնհայտ է, որ գաղութն ստվարանում էր ոչ միայն բնական աճի, այլև հախուռն ձևով մայրաքաղաք խուժող պանդուխտ-օրամշակների հաշվին:

Սուլթանների նստավայրի շուրջ *մեկ միլիոնից, մեկ միլիոն երկու հարյուր հազարի* (Թուրքիայում մարդահամարները հազվադեպ էին) հասնող ընդհանուր բնակչության մեջ, ամեն չորսից մեկը հայ էր:

Սակայն խնդիրը միայն տոկոսային փոխհարաբերության մեջ չէր: Հայերի ձեռքումն էին կենտրոնացել տնտեսության բոլոր զարկերակները, որոնց ետ խլելն ու թուրքացնելը «ազնիվ» պայքարով այլևս հնարավոր չէր, դրա համար էլ սուլթանը, թուրք պետական այրերն ու նորելուկ բուրժուազիան դիմում էին *զանգվածային ջարդերի մեթոդին:*

---

[1] *Արման Կիրակոսյան,* նշված աշխատությունը, էջ 356-357:

[2] Նույն տեղում, էջ 497:

[3] "Братская помощь пострадавшим в Турции армянам", Москва, 1897, стр. 79.

[4] *Հայկ Ղազարյան,* Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 394: Տես նաև *M. A. Ubicini,* Lettres sur la Turquie, Paris, 1853, p. 27. *Հ. Ադոնց,* Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, стр. 201-205.

[5] *Philip Mansel,* Constantinople, City of the World's Desire 1453-1924, London, 1996, p. 189-220. Տես նաև *Эссад Джелал,* Константинополь, от Византии до Стамбула, Москва, 1977. *Ю. А. Петросян, Л. А. Юзлов,* Город на двух континентах, Москва, 1977, стр. 70-144. *Հայկ Ղազարյան,* Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Երևան, 2001, էջ 577-578:

[6] Հ. Գ. Մ. Մասնական պատմություն հայ մեծատուններու, էջ 49:

[7] *M. A. Ubicini,* նշված աշխատությունը, էջ 27-28:

[8] *M. A. Ubicini,* Etat présent de l'Empire Ottoman, Paris, 1876, p. 72. Տես նաև *Հայկ Ղազարյան,* Արևմտահայերի սոցիալ-տնտեսական վիճակը..., էջ 394:

Ա. Տիրկովան 1896 թ. ***օգոստոսյան երեք օրվա ջարդվող հայերի թիվը*** հաշվեց 10-ը հազար[1], իհարկե, դրա մեջ չմտցնելով հազարների հասնող վիրավորներին, որոնք բժշկական օգնությունից խուսափելով, մահացան տարբեր անկյուններում: Ռուսական զինվորական գործակալներից մեկը Կ. Պոլսից հաղորդում է, թե 1896 թ. օգոստոսի 14-15-ին, միայն ***երկու օրում*** սպանվեցին ***5 հազար 500 հայեր***[2]: Հետագա երկու օրերի ջարդը գումարելով նախորդին և ընդհանուր հաշվարկներ կատարելով, այն հասցնում է 12 հազարի[3]:

Լորդ Կինրոսը՝ հենվելով անգլիական դիվանագիտական, բայց արխիվային վավերագրերի ընձեռած փաստերի վրա, գրում է. «***1896 թ. օգոստոսին հայերի զանգվածային ջարդերը*** հասան իրենց կուլմինացիային Ստամբուլում»: Կամ թուրք խուժանը, ուղեկցելով կառավարական զորքին, միայն «***առաջին երկու օրում իր հետևից թողեց մոտավորապես վեց հազար դիակ***»[4]:

Հետագայում հայերի սպանվածների թիվը հասավ շուրջ 13 հազարի, որի մասին լսելով, ութսունվեցամյա ***Գլադստոնը*** Համիդին անվանեց ***«արյունարբու սուլթան», «մեծ մարդասպան»*** և պահանջեց ոչ միայն ***սուլթանին գահընկեց անել, այլև Թուրքիան իբրև պետություն սրբել քարտեզի երեսից***[5]:

Մեր մանրակրկիտ հաշվառումները, ձեռքի տակ ունեցած բազմաբնույթ ու իրար լրացնող վավերագրերը, հայկական, հատկապես օտար աղբյուրները կասկած չեն թողնում, որ ***Ստամբուլում*** 90-ական թվականներին ***ոչնչացվել են*** շուրջ ***20 հազար հայեր:*** Հայազրկվել են քաղաքամերձ ամբողջական թաղամասեր, փակվել են 15-ից ավելի դպրոցներ, պարբերականներ, կամավոր կամ բռնի վտարանդվել են հարյուրների հասնող մտավորականներ, քաղաքական գործիչներ, պետական պաշտոնյա այրեր: Իզուր չէր, որ դարավերջի տասնամյակը և՛ Թուրքիայի, և՛ համաշխարհային պատմության մեջ մտավ իբրև ***«զուլումի»*** տասնամյակ, որը զուլում էր ոչ միայն մայրաքաղաքի, այլև ***ընդհանուր արևմտահայության համար: Բերենք մի քանի փաստեր ևս***:

1894-1896 թթ. հայերի զանգվածային կոտորածների զոհերի թիվը հաշվում են երեք հարյուր հազարից ***մինչև կես միլիոնի***[6]: Այս թվի մեջ, անշուշտ, մտցնում են հարյուր հազարի հասնող, բռնությամբ մահմեդականություն ընդունողներին[7]: ***Յուրի Վեսելովսկին*** գրում էր, որ «Այդ արյունոտ դեպքերի կազմակերպիչների իսկապես ղեկավարող ցանկությունն է, ***եթե այժմ հնարավոր չէ ամբողջովին ոչնչացնել հայկական տարրը, այնուամենայնիվ, որքան հնարավոր է, այն պետք է կրճատել***»[8]:

Բեյրութում լույս տեսած «Ցեղասպան թուրքը» ծանրակշիռ և փաստառատ աշխատության էջերում կարդում ենք. «Սուլթան Համիդի երեսուներեք տարվան բռնապետության շրջանին հայ ազգը ճնշելու և հետզհետե բնաջնջելու համար, ***կազմված էին թվով 94 «համիդիե»***» կոչված ***քրտական գունդեր*** (ալայ): ***Անոնց հետ թուրք խուժանի և թուրք զինվորներու գործակցությամբ տեղի ունեցած էին 1894-1896 թթ. ջարդերը, ուր հայերուն կորուստը եղած էր 300 000 և մոտ***

---

[1] ***А. Тыркова,*** Старая Турция и младотурки, стр. 62-63.

[2] **АВПРИ,** Политархив, дело 3449, лл. 183-184.

[3] Նույն տեղում, թերթ 214-216:

[4] ***Лорд Кинросс,*** նշված աշխատությունը, էջ 608 609:

[5] Նույն տեղում, էջ 610:

[6] ***Виктор Бераг,*** Братская помощь..., стр. 1-3. Տես նաև ***Е. К. Саркисян,*** նշված աշխատությունը, էջ 154.

[7] **АВПРИ,** Посольство в Константинополе, дело 3184, 1896, л. 38.

[8] ***Ю. А. Веселовский,*** Очерки армянской литературы, истории и культуры, Ереван, 1972, стр. 428.

400 000 արկածեալներ, 6-ը նահանգներու մեջ, այրիներով և որբերով միասին և քանդումներու, կողոպուտի և հրդեհներու նյութական վնասը գնահատված է մոտավորապես 400 000 000 դոլար (ընդգծումները մերն են –Հ . Ղ.)»[1]:

Այդ գազանային արարքները, Եվրոպայի և այլ ցամաքամասերի առաջադեմ մարդկության շրջաններում իրենց արծագանքը են գտել շնորհիվ արևմտյան դեսպանատների հաղորդագրությունների և հայ գործիչների ջանքերի: Այդ օրերին էր, եզրակացնում է գրքի հեղինակը, որ Համիդն ստացավ «մեծ մարդասպան», «կարմիր սուլթան» որակումները, իրենց ասելով՝ «պատվանուններ», քանզի նրան այլ կերպ բնութագրել չէր կարելի[2]:

Մանրախույզ հետազոտելով 90-ական թվականներին հրապարակված վավերագրերը հայկական ջարդերի վերաբերյալ՝ պրոֆ. Հ. Մ. Պողոսյանը ընդհանրացնում է, թե այդ տարիներին քարուքանդ արվեցին *երկու հազար վեց հարյուր քաղաքներ և գյուղեր*, 560 վանքեր և եկեղեցիներ: Սպանվածների թիվը հասավ *երեք հարյուր հիսուն հազար մարդու: Մի շարք ուսումնասիրողներ այն հասցնում են մինչև կես միլիոնի:* Այդ անելանելի վիճակից սարսափած հայ բնակչության մի մասը կաթոլիկություն և մահմեդականություն ընդունեց: 559 հայկական գյուղեր դավանափոխ եղան: *Կոտորածների* ժամանակ անապաստան դարձած *երեխաների թիվը հասավ հարյուր հազարի*[3]: Բնութագրելով հայ ժողովրդի այդ մղձավանջային վիճակը՝ Կ. Պոլսի հայոց «երկաթյա» պատրիարք Մատթեոս Իզմիրլյանը գրում էր. «*Ամբողջ հայ ժողովուրդը սուզվել է արյան ծովի մեջ*»[4]:

1896 թ. դեկտեմբերի 3-ին Սուշի հոգևոր առաջնորդի փոխանորդ Վարդան վարդապետ Հակոբյանը Կարսի, Թիֆլիսի և Կովկասի բարեգործական ընկերություններին մի աղերսագիր է ուղղում, որտեղ ներկայացնում է Տարոնի ժողովրդի կրած տառապանքները[5]: Այդ վավերագրում արծանագրված է. «Գիտեք, որ, ի սուգ, անմխիթար կամք այն ընդհանուր քստմնելի կոտորածներու, վայրագ բռնաբարությանց, ոճրագործությանց և անօրինակ չարչարանաց հանդեպ, վերջին տարիներե, մանավանդ անցյալ 1895 տարվընե ի վեր եկան հասան թշվառ տաճկահայերուն վրա և բովանդակ Հայաստան աշխարհի լեռներ, ձորեր, դաշտ ու դուրաններ հարյուր հազարավոր հայ անմեղ զոհերու արյունով ներկեցան ու ողողեցան»[6]:

Պրոֆ. Հ. Պողոսյանը գիտական շրջանառության մեջ է դնում նաև այլ փաստեր, որոնք ընթերցողին տանում են դեպի Լեռնահայաստանը, ճշգրիտ պատկերացում տալիս սարսափելի այն կոտորածների մասին, որոնք կազմակերպվել էին սուլթանի, նրա պալատականների ոչ միայն ղեկավարությամբ, այլև անմիջական մասնակցությամբ: Նա բերում է. «Երկիրն անիշխանության և լրբության տարտարոս մը դարձած է. չկա երբեք պատասխանատվություն հայերու դեմ եղած ամեն չարյաց համար: Կառավարությունն մի կողմե, իսլամ տարերք մյուս կողմե հրդեհ մը բռնկցուցած են հայերու գոյության դեմ և փութապես ու անխղճաբար կը բորբոքեն կրակը, վառելով, մոխիր դարձնելով ինչ-որ հայուն և Հայաստանինն է»[7]: Խոսելով 1896 թ. դեպքերի մասին՝ ականատեսը գրում է. *«Անցիր դեպի ներքին աշխարհներ, տես ինչ աշխարհ*

---

[1] *Հայկազն Գ. Ղազարեան*, Ցեղասպան թուրքը. Տպարան Համազգային, Պէյրութ, 1968, էջ 315:

[2] Նույն տեղում:

[3] *Հ. Մ. Պողոսյան*. Սասունի պատմություն, էջ 230: Տե՛ս նաև "Братская помощь пострадавшим в Турции армянам", Москва, 1998, стр. 23.

[4] Նույն տեղում, էջ LXIV.

[5] Եղիշե Չարենցի անվան ԳԱԹ, *Հ. Աոաքելյանի* ֆոնդ, վավ. 1903, թերթ 1-2:

[6] Նույն տեղում, թերթ 1:

[7] Նույն տեղում:

է այդ, Տարօն դարա՜ն, Մուշ մաշա՜վ, Սասուն սասանվե՜ց, Կարին կորա՜վ, Բաղեշ փչացա՜վ, որ մեկ թվեմ»[1]: Պարզ ասած, այդ մի ժամանակ էր, երբ մարդիկ իրար ասել են. «Մեր զմանուկ ուրացել է»: Նույնը ասում է նաև սուլթանի քարտուղարը Մուստաֆա Նետիմը, գրելով. «Մեկը չմնաց, որ լսած չըլլա և չգիտենա քարերը սարսափեցնելու չափ դառն աղետներ և զարհուրելի աստիճանը այն հարստահարություններուն, զորս թուրքերը ի գործ դրին հայերու նկատմամբ»[2]:

Պրոֆ. *Ե. Ղ. Սարգսյանը,* ընդհանրացնելով 1894-1896 թթ. հայերի զանգվածային ջարդերի պատմությունը, եզրակացնում է, թե ոչնչացվածների թիվը հասնում էր *երեք հարյուր հազարի*[3]: Ապա ավելացնում. մի քանի հետազոտողներ, ջարդված հայերի *թվաքանակը հասցնում են մինչև կես միլիոնի*[4]: Կան հեղինակներ, որոնք այդ թիվը դնում են *երեք հարյուր երեսուն հազարի*[5]: *Միայն հարյուր հազար երեխաներ դարձան որբեր և տարագրվեցին աշխարհի տարբեր ծայրեր:*

Բոլոր դեպքերում 90-ականներին ջարդի ենթարկված հայերի թվաքանակը ճշգրիտ որոշել հնարավոր չէր: Նրանց մի մասն իր մահկանացուն կնքեց *Արևմտյան Հայաստանի* և *Հայկական Կիլիկիայի* լեռնաձերպերում, անհավասար մարտերում ընկավ Սասունի, Զեյթունի անմատչելի կիրճերում, Վասպուրականի ծորախորշերում: Կապուտաչյա Բոսֆորն իր գեղեցիկ տեսքով, 1896 թ., հայերի համար դարձել էր գարշելի *մի անդունդ,* որը կլանում էր սպանված հայերի անհամար դիակներ: Դրանց թիվը ճշգրտելն անհնարին էր և՛ այն ժամանակ, և՛ առավել ևս այսօր[6]:

Հայերի փաստական ոչնչացմանը գումարվեց հարկադրական *մահմեդականություն* ընդունելը, որը նույնիսկ հաշվարկվում և հասցվում է *հարյուրից– երկու հարյուր հազարի*[7]:

Աղթամարի կաթողիկոսն ընդարձակ գրությամբ դիմում է Կ. Պոլսի հայոց պատրիարք *Մատթեոս Իզմիրլյանին,* որտեղ բազմաթիվ խնդիրներին գումարում է հայերի *բռնի իսլամացման դաժան պրոցեսը:* Նա գրում է. «Հայ ժողովուրդն, իր անցած բոլոր դարերի ընթացքում, երբեք չի արժանացել այնպիսի դժբախտության, ինչպես այժմ...,– ապա շարունակում,– աշխարհի ոչ մի քրիստոնյա ազգ երբեք չի հանդիպացել այդքան հետապնդումների և տվել այդքան զոհեր: *Որտեղ է տեսնված, որ քրիստոնեական այդքան գերդաստաններ բռնության ուժի ներքո դիմեն թուրքական հոգևորականությանը՝ ընդունելու իսլամը՝ որպեսզի ազատվեն հաստատ ոչնչացումից* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[8]: Իսլամացած հայերի թիվը շատ մեծ է եղել ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև Հայկական Կիլիկիայում:

Վերևում բերված փաստերին գումարենք մի *կոլեկտիվ – ընդհանուր կարծիք,* որը, թերևս, հիմնավոր պատասխան լինի ոչ միայն թուրք պատմաբաններին, այլև այսօրվա Անկարայի ամենաբարձրաստիճան պետական այրերին: Դա «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի վեցերորդ հատորի շարադրանքն էր՝ տվյալ հարցերի մասին:

1978 թվականն էր՝ Լ. Ի. Բրեժնևի գահակալության վերջին տարիներից մեկը:

---

[1] «Դիվան Հայոց պատմության», գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ ժդ:

[2] *Մուստաֆա Նետիմ* (նախկին քարտուղար սուլթան Համիդի), Հայ եղեռնը (իմ վկայություններս), թարգմանություն *Արշակ Ս. Շալճյան,* Սոֆիա, 1936, էջ 3:

[3] *Ե. Կ. Սարկիսյան,* նշված աշխատությունը, էջ 154:

[4] *Виктор Берар,* в сборнике "Братская помощь...", стр. 1.

[5] «Թուրքական բռնակալներ», Նյու Յորք, 1963, էջ 12-13:

[6] *Ե. Կ. Սարկիսյան,* նշված աշխատությունը, էջ 154:

[7] АВПРИ, Посольство в Константинополе, дело 3184, л. 36.

[8] Նույն տեղում, թերթ 37-38:

ԽՍՀՄ Կենտկոմի քաղբյուրոյում նստած է Գորշ Կարդինալը – Միխայիլ Սուսլովը, որը պետական անվտանգության կոմիտեի աշխատակիցների միջոցով արգոսի աչքերով հետևում էր «Հայաստանում նացիոնալիզմի որոնմանը»: Սովետա-թուրքական հարաբերությունները «կանոնավոր էին», ուստի «ինչ-որ *եղեռնի*» պատճառով «չարժեր» փչացնել այն: Նույնիսկ հակաթուրքական հոդվածների հրապարակումը գրեթե արգելված էր: Ո՞րն էր ելքը:

Բազմահատորյակի վեցերորդ հատորի գլխավոր խմբագիր, ակադեմիկոս *Ց.Պ. Աղայանի* ղեկավարությամբ կազմակերպվեց Արևմտյան Հայաստանի պատմությանը վերաբերող հոդվածների, գլուխների, բաժինների կոլեկտիվ քննարկումը: Քննարկմանը մասնակցում էին *Մ. Գ. Ներսիսյանը, Ա. Ս. Համբարյանը, Հ. Մ. Ղազարյանը, Դ. Ա. Մուրադյանը, Ե. Ղ. Սարգսյանը* և շատ այլ պատմաբաններ, որոնք խնդրի մասնագետներից էին և հրավիրված էին կարծիքներ հայտնելու: Քննարկումից և խմբագրումից հետո, քրիստոնեական տեսքով, ստեղծվեց մի շարադրանք, որին պատասխանատու էր փաստորեն հայ պատմագրությունը:

Հետևաբար, դեռևս 1981 թ. Հայաստանի Հանրապետության Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը, ողջ պատմագրության էլիտան (հատորն ուներ բազմամարդ խմբագրական զույգ կոլեգիաներ) ախտորոշեց, որ 1890-ական թվականների ջարդերը *արևմտահայության առաջին ցեղասպանության փորձերն էին:* Կոլեկտիվը նույնպես անդրադարձավ հայերի կորուստների հաշվառմանն ու արձանագրմանը: Չնայած պակասավոր են այդ թվերը, բայց և այնպես դրանք մի ժամանակաշրջանում էին «ծնվել», որը հաջող չէր հայ ժողովրդի համար: Համենայն դեպս, վեցերորդ գլխում կարդում ենք. «1890-ական թվականների ջարդերը թուրքական դահիճների *արևմտահայության առաջին զանգվածային ցեղասպանության փորձն էր:* Այդ ջարդերի *հետևանքով զոհվեց շուրջ 300 000 հայ, համարյա այդքան էլ տարագրվեց*, որից *մոտ 100 000-ը անցավ Ռուսաստան, իսկ 150 000–200 000-ը*՝ Եվրոպայի, Աֆրիկայի ու Ամերիկայի զանազան երկրներ: Արևմտահայության որոշ մասն էլ հարկադրված դավանափոխվեց՝ ընդունելով մահմեդականություն: Դանիացի ճանապարհորդ Բենիգսենը, 90-ական թվականների վերջերին շրջելով Արևմտյան Հայաստանում, գրում էր, որ Դիարբեքիրի, Խարբերդի կուսակալություններում և Արաբկիր գավառակներում կոտորածներից հետո շուրջ *երկու հարյուր հայկական գյուղեր* մահմեդականություն են ընդունել: Միայն Վասպուրականում դավանափոխված հայերի թիվը 1901 թ. կազմում էր «մոտավորապես *10–12 հազար*»[1]:

Համիդյան կառավարությունը, բնաջնջված և արտաքսված հայերի տեղում բնակեցնում էր մահմեդական ցեղեր, գլխավորապես քրդեր ու մուհաջիրներ (Բալկաններից ու Կովկասից եկած թուրքեր, չերքեզներ ու չեչեններ): Ա.-Դօճ վկայում է, որ Հայոց Ձորում քրդերը հաստատվեցին գլխավորապես 1896 թ. կոտորածներից հետո: Խոշաբ ու Ոստան գավառակներում «կես դար առաջ ապրում էին բավական թվով հայեր, այժմ... նրանց տեղը բռնել են... քուրդ տարրերը»: Մուշի դաշտի 21 գյուղերում 1889 թ. 117, իսկ XX դարի սկզբին արդեն 554 քրդական տնտեսություն կար: Բազմաթիվ շրջաններ, որոնք մի ժամանակ բնակեցված էին հայերով, այժմ կամ ամայացել են, կամ դարձել *քրդաբնակ* և *թուրքաբնակ* բնակավայրեր»[2]:

Այսպիսով, գիտական շրջանառության մեջ դնելով մեր ձեռքի տակ եղած վավերագրերի մի փոքր մասը՝ անցնենք ընդհանրացումների, եզրահանգումների, որոնք

---

[1] «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ, հ. VI, Երևան, 1981, էջ 276:

[2] *Ա.-Դօ*, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներ, Երևան, 1912, էջ 183:

փաստարկեցինք նախորդ էջերում, և որոնք խիստ կարևոր են պատմության կեղծարարներին մերկացնելու համար:

XIX դարավերջին «Զուլումի» տասնամյակի նախօրյակին, հայ ժողովրդի թվաքանակն Արևմտյան Հայաստանում, Հայկական Կիլիկիայում և ընդհանրապես օսմանյան Թուրքիայում հասնում էր ***երեքուկես միլիոնի՝ մի փոքր ավել, կամ պակաս:*** 90-ական թվականների հայկական ջարդերի տարիներին, հատկապես 1892-1901 թվականներին, արևմտահայությունը կորցրեց շուրջ ***հինգ հարյուր հազար հայ բնակչություն***, որոնք զոհ գնացին անհավասար մարտերին (***Սասուն, Զեյթուն, Վան-Վասպուրական***) կամ էլ ծեռարծակ մորթվեցին թուրք և քուրդ հայասպանների արյունոտ ձեռքերով:

Հայ ժողովրդի դեմոգրաֆիկ քարտեզին մեծ վնաս հասցրեցին ջարդերին հաջորդող զանգվածային ***արտագաղթերը:*** Իսլամական սրից մազապուրծ հայկական գերդաստաններից շատերը, կորցրած հավատը թուրքերի և եվրոպական տերությունների խաբուսիկ խոստումների նկատմամբ, իրենց հետ վերցնելով օրվա անհրաժեշտ իրերը, թողնում են հայրենի բնօրրանը և ծողոպրում ու հաստատվում աշխարհով մեկ: Նրանց ուղեգծերն էին ***Ռուսաստանը, Եվրոպան, Աֆրիկան*** և նույնիսկ հեռավոր ***Ամերիկան:***

Մոտավոր հաշվարկումներից պարզվում է, որ արտագաղթողների թիվը հասնում է շուրջ ***երեք հարյուր հազարի:*** Այս տասնամյակում ոչ միայն ստվարացան հնում հաստատված հայկական գաղթօջախները, այլև ամենուր ձևավորվեցին նոր համայնքներ: Որոշակիորեն ձևավորվեց Հայկական ***Սփյուռքը*** իր ուրույն օրենքներով ու դիմագծով: Այն ավելի հայաշատ դարձավ 1915 թվականից, այսինքն ***Մեծ եղեռնից հետո:***

Հայկական ջարդերը Թուրքիայի պատմության մեջ ծնունդ տվեցին մի նոր հասարակախմբի փոքրիկ անդամների, որոնք ստացան երկկողմանի կամ միակողմանի ***ծնողազուրկ*** երեխաներ անվանումը: Դարեր առաջ հայ երեխաներին, ***Դեվշիրմե*** հարկի անվան տակ հավաքում էին, աղջիկներին դարձնում իսլամապաշտների հարեմների հարճեր, տղաներին տալով մահմեդապաշտ դաստիարակություն, ընդգրկում բանակում, վերածում ենիչէրիների (նոր զորք), այսինքն մարդ գազանների: Մահմուդ II-ը վերացրեց այդ երևույթը 1826 թ.:

Համիդն այժմ վերականգնում էր ***մանկաժողովները,*** քրիստոնյա փոքրիկներին շուկաներում աճուրդով վաճառել էին տալիս: Գնորդները պարտավոր էին նրանց մահմեդականացնել և իբրև ստրուկներ աշխատեցնել թե՛ տնային տնտեսության մեջ, թե՛ գյուղատնտեսական պլանտացիաներում: Դեռևս XIX դարի սկզբին միջազգայնորեն արգելվել էր ***ստրկավաճառությունը:*** XX դարի նախաշեմին Համիդը հրապարակայնորեն վերականգնում էր ստրկությունն ու ստրկավաճառությունը Թուրքիայում: Այս բոլորը Եվրոպան տեսնում էր ու լռում:

Օսմանյան կայսրության հայասպան տիրակալները, Համիդի գլխավորությամբ, բռնեցին հայերի ***զանգվածային իսլամացման*** ճանապարհը: Ահա այստեղ էր, որ թվաբանական հաշվարկներն անկարող են ամբողջացնել հավատափոխության այն պատկերը, որն իրականացվեց ջարդերի տարիներին և նրանից հետո: Մահմեդի փարախ էին առաջնորդվում հայերն իրենց գերդաստաններով, հետո ամբողջ գյուղերով, նույնիսկ գյուղախմբերով: Այդ բոլորը իրականացվում էր ***բռնությամբ, երբեմն գաղտնի, երբեմն հրապարակավ:*** Չսխալվելու մտավախությամբ, մենք ևս ընդհանրացնող թվեր չենք հրապարակում, միայն ասում ենք՝ շատ էին հավատափոխներ, այնքան շատ, որ երևակայելն անհնար էր:

Նախորդ շարադրանքում մենք ջանացինք ցույց տալ, թե ով կոտորեց ան-

պաշտպան արևմտահայությանը: Պատասխանը միանշանակ է, անժխտելի: *Հայ ժողովրդի զանգվածային կոտորածները նախօրոք պլանավորված էին, ծրագրված և 1894-1896 թվականներին դրանք կազմակերպեց Բարձրագույն Դուռը՝ նրա վախկոտ, միաժամանակ, դաժան ու հայակուլ տիրակալի՝ Համիդ II մարդասպանի գլխավորությամբ: Հայերի կոտորածները իրականացվեցին պետական քաղաքականության մակարդակով, իհարկե, արևմտյան տերությունների լուռ համաձայնության պայմաններում:* Խորամանկ ու խարդախ սուլթանը կարողացավ օգտվել մեծ պետությունների միջև առկա ու հեռակա հակասություններից և խաղաղ պայմաններում մորթեց այնքան հայ, որին իրենք՝ եվրոպացիներն էլ չէին հավատում:

Համիդ II-ին ինչպիսի բացասական մակդիրներով էլ բնութագրելու լինենք, այդուհանդերձ նա հիմար չէր: Ընդհակառակը, նա վախկոտ էր ու խորամանկ: Ահա թե ինչու, ծրագրելով իրականացնել «*փոքր ցեղասպանությունը*» (ինչ էլ փոքր էր, *կես միլիոն հայ սպանեցին*), Բ. Դուռը սուլթանին սովորեցնում էր, որ կանոնավոր բանակին զորավիգ պետք է կանգնեին այլ ուժեր, *տվյալ պարագայում*՝ քրդական վայրենաբարո *ցեղախմբերը*: Հետևաբար, սուլթանի ու նրա ամենաբարձրաստիճան պալատականների *հովանավորությամբ ու ֆինանսավորմամբ կազմավորվեցին «համիդիեական» հեծելազորային գնդեր*:

Շուրջ *հարյուր հազարի հասնող ծիավոր*, մինչև ատամները զինված, հայի ունեցվածքին, ընտանիքի անդամներին աչքը տնկած, ավարածարավ քուրդ բարբարոսները, որոնց համար այն ինչ-որ մարդկային էր, ապա արդեն խորթ էր սկզբունքով առաջնորդվելով, ստացան գործելու անսահմանափակ հնարավորություններ: Հետամնաց ու մարդասպան այդ բանդաները հանվեցին թուրքական քաղաքացիական գերատեսչությունների հսկողությունից և անցան կառավարական զինվորական իշխանությունների տրամադրության տակ:

Երեկվա քուրդ մարդասպանն այսօր Բ. Դռնից ռոճիկ էր ստանում, տարիքն առնելու պահից *թոշակավորվում էր*, ձրի բուժվում, հարկավորության դեպքում զինվում կառավարական զենքով[1]: Անսահման հանցանքների դեպքում քուրդ ծիավորը կարող էր դատվել միայն *զինվորական դատարաններում*, որն էլ հրահանգ ուներ չդատել «համիդի սուրը» հանդիսացող այդ ավազակներին:

Անշուշտ, վերևում թվարկածները նրանց իրավունքներն էին, իսկ պարտականություննե՞րը: «Համիդիեները» փաստորեն այն զորքն էին, որոնք հետագայում, անունը փոխելով, երիտթուրքերի հովանավորությամբ, հիմնադրեցին *«Թեշքիլաթի մախսուսա»*-ն: Երկու դեպքում էլ այդ զորախմբերը ունեին շատ պարտականություններ, որոնցից *հիմնականն ու գլխավորը հայ ժողովրդի ոչնչացումն էր, առանց հաշվի առնելու սպանվողների սեռը, տարիքը, ունեցվածքն ու պիտանիությունը երկրին:*

«Համիդիեները» մարդկային խղճի մասին պետք է գաղափար չունենային: Հայասպանության պրոցեսում ցուցաբերած դաժանությունների դեպքում ջանալ մրցակիցներ չունենալ, հայերի ոչնչացումից հետո անտրտունջ հափշտակել նրանց տները, անասունները, հողատարածությունները, հայկական գերդաստանների կենդանի մնացած *փոքր երեխաները*, հատկապես կանայք և աղջիկները դառնում էին ասպատակող քրդերի սեփականությունը:

Մենք այսքան երկար կանգ առանք «համիդիեների» գործունեության վրա, քանզի դրանք սուլթանի *«գվարդիական գնդերն»* էին, և 90-ական թվականների

[1] *Ազատ Համբարյան*, նշված աշխատությունը, էջ 376:

հայկական ջարդերը Համիդն իրականացրեց հիմնականում սրանց ձեռքերով: Անշուշտ, եթե սուլթանը չուզենար և չհովանավորեր, ապա քուրդ խոլամներն այդքան հայի արյուն խմել չէին կարող: Երկրորդն էլ այն էր, որ ժողովուրդների կեղծ բարեկամության սկզբունքներով առաջնորդվելով պատմաբաններին պարտադրել էին քրդերի արածի մասին *ճշմարիտ խոսք չասել, չբացահայտել նրանց չարագործությունները:*

Այո՛, թերևս ճիշտ համարվեր այդ պարտադրանքը, եթե *այսօրվա քուրդ պատմաբանները գեթ մեկ անգամ անդրադառնային նման կնճռոտ խնդրի վերլուծմանը, նույն ազգությանը պատկանելիս լինելով, քաղաքացիական քաջությամբ, դատապարտեին իրենց անարժան նախորդների ցեղասպան գործունեությունը: Նրանք ևս բռնել են պատմության կեղծարարության ճանապարհը,* այսինքն ամեն *«ջանք թափում են» արդարացնել քրդական ցեղախմբերին՝ հայերի ոչնչացման գործում*, իսկ «համիդիեների» մասին ընդհանրապես լռում են:

Ես համոզված եմ, որ այսօր թե ապագայում, քննարկման առարկա են դառնալու *Արմենոցիդի՝ հայասպանության* քաղաքականությունը, շոշափվելու են հայ-քրդական հարաբերություններին վերաբերող խնդիրներ: Անշուշտ, կնճռոտ հարցեր են ոչ միայն «համիդիեների» հայասպան գործունեությունը, այլ նաև *Հայաստանի* ու *Քյուրդիստանի* սահմանագծումները: Մեր կարծիքով Հայրենիքի և Սփյուռքի պետական այրերը, պատմաբանները, քաղաքական գործիչներն այսօր էլ ունեն իրենց ճիշտ մոտեցումները, հայեցակարգը: Պատմական Հայաստանն ու Հայկական Կիլիկիան հանրահայտ են հազարամյակներից եկող իրենց սահմանագծերով՝ հայկական կամ օտարերկրյա հեղինակների ընծեռած նյութով փաստարկված:

Բոլորին հայտնի է, որ հայկական հողերի չափը եղել է 340 հազար քառակուսի կիլոմետր և այսօր էլ կա: Թուրքերն իմանալով այդ ամենը՝ այժմ էլ են ձգտում սեպ խրել հայ և քուրդ ժողովուրդների միջև, քրդերին պարզորոշ «բացատրելով», թե հայերի պահանջները ծեր հողերն են, և դրան, դժբախտաբար, քրդերից հավատացողներ կան: Տեսեք նոր հակասություններ, որոնք պիտի մտահոգեն մեր երկու ժողովուրդներին:

*

* *

Փորձենք անդրադառնալ մի քանի խնդիրների ևս, որոնք վերաբերում են *90-ական թվականների հայկական ջարդերին, 1915 թ. Մեծ եղեռնին և* ընդհանրապես *հայ-թուրք փոխհարաբերություններին:* Այս հարցերի մասին ժամանակին կոմունիստական պատմագրությունը ճշմարիտ կարծիք հայտնելու իրավունքից զրկված էր: Մամուլի ու ակադեմիական գրականության էջերում ստեպ-ստեպ երևացող քննադատության նշանախեզ էր դառնում *թուրք վերնախավը* և *ոչ թուրք ժողովուրդը:*

Համեմատաբար ազատ ու լիարժեք կարծիք էին հայտնում սփյուռքահայ հետազոտողները, մանավանդ, որ *նրանք շարունակական հետնորդներն էին եղեռնից փրկվածների:* Վերջիններիս գրեթե բոլորի կարծիքները միանման էին այն է. *հայ ժողովրդի հոշոտման գործում թուրք ժողովուրդը մեղավոր է ամբողջովին, չնչին բացառություններով: Այդ խնդիրն ամենից հիմնավոր քննել է Գերսամ Ահարոնյանը, որի կարծիքի հետ աներկբա համերաշխելով, մեք*

ենք բերում ամբողջությամբ՝ ընթերցողից ներողություն խնդրելով քաղվածքի ընդարձակության համար[1]:

Ահա Գ. Ահարոնյանի ընդհանրական կարծիքը. «Մեծ եղեռնին մասին շատ հակիրճ ակնարկը փակելե առաջ անհրաժեշտ կը նկատենք անդրադառնալ այդ առնչութեամբ քանի մը իրողութիւններու եւ երեւոյթներու եւս, նկատի ունենալով որ ատոնք սերտ աղերս ունին մեր ներկայ կեցուածքին եւ կամ որդեգրելի գործունեութեանց հետ: Առաջինն այդ երեւոյթներէն այն է՝ որ *ցեղասպանութեան համար պատասխանատու է ամբո՛ղջ թրքութիւնը, եւ ոչ «թուրք ղեկավարութիւնը» միայն:* Մեր մէջ կան մարդիկ, ընդհանրապես «մարքսիստ տեսաբանի կամ պատմաբանի» քղամիդով ներկայացող, որոնք գաղափարաբանական ճամարտակութիւններով կը ջանան պատահածին համար պատասխանատուութենէ զերծ կացուցանել *թուրք ժողովուրդը:* Անոնք յանցաւոր կը հռչակեն «նացիոնալիստ» ու «պուրժուա» թուրք ղեկավարութիւնը, օսմանցի կամ իթթիհատական, եւ կը փորձեն ըսել թէ թուրք ժողովուրդը, ինչպէս բոլոր ժողովուրդները, չար ու ոճրագործ չէր, եւ մոլորեցաւ գէշ առաջնորդութեան պատճառով: *Ո՛չ, եւ հազար անգամ, ո՛չ*: Ով որ նուազագոյն չափով գիտէ օսմանցի թուրքերուն պատմութիւնը անիկա չի կրնար յայտնել նման չքնա՛ղ միտքեր: Ով որ գիտէ թէ «թուրք ժողովուրդ» կոչուած բարբարոսներու վոհմակը ի՛նչ վերաբերում ցուցաբերեց հայ զոհերու հանդէպ՝ անիկա չի կրնար մէկ րոպէ իսկ պատասխանատուութենէ զերծ կացուցանել ժողովուրդ կոչուելու անարժան այդ ամբոխները:

Աշխարհի բոլո՛ր ժողովուրդները կրնան խորքին մէջ չար ու ոճրագործ չըլլալ, բայց ո՛չ այս մէկը: Այս մէկը տարբե՛ր է, տարբեր եղած է անցեալին եւ տարբեր է հիմա՛: Այո, տեղահանութեան ու բնաջնջումի ծրագրին ու գործադրութեան համար վերին պատասխանատուութիւնը կ'իյնայ թուրք ղեկավարութեան վրայ. սակայն ո՞վ կրնայ ըսել, թէ «թուրք ժողովուրդը» ծառացաւ այդ անմարդկային որոշումին դէմ, ո՞վ կրնայ ըսել թէ թուրք հանրային կարծիքը դատապարտեց իր ղեկավարներուն դժոխային մահավճիռը: Ոչ ոք կրնայ այդպիսի փաստ մատնանշել: Ընդհակառակը, միլիոն փաստ ու ապացոյց գոյութիւն ունի հաստատող թէ «թուրք ժողովուրդը» անասնական անօրինակ ախորժակով լծուեցաւ ցեղասպանական գործողութեանց ամէն տեղ: Անիկա աննկարագրելի եւ անյագենալի սատիզմով անարգեց ու չարչարեց հայ իգական սեռը, անպատմելի անբարոյութեան թիրախ ըրաւ հայ պարմանուհիներն ու մանչերը: Չարչարանքի չերեւակայուած «նրբութիւններ» հնարեց ան, եւ անսահման ախորժակով դիտեց ու վայելեց զոհերուն գալարումն ու տառապանքը: Չգոհացաւ անօթի ձգելով հայ տարագրեալները, այլ զանոնք հասցուց այնպիսի կէտի մը ուր գոհունակութեամբ դիտեց անոնց ստորնացումը: Չգոհացաւ սովորական միջոցներով սպաննելով հայ մանուկները, այլ զանոնք նաւակներու մէջ լեցուց եւ ողջ ողջ

---

[1] *Գերսամ Փանոսի Ահարոնյանը* (1916-1986) անվանի հրապարակախոս, մանկավարժ, քաղաքական գործիչ էր. Սփյուռքում *Ռամկավար ազատական կուսակցության* ղեկավարներից. Նյու Յորքի միջազգային ակադեմիայի պատվավոր դոկտոր: Նրա կիլիկեցի հարազատների մեծ մասը զոհ գնաց 1915 թ. ցեղասպանությանը: *Գերսամը ծնվեց Մարաշում,* փախեփախի ճանապարհներով բարուրված վիճակով շրջեց աշխարհով մեկ և իր ոդիսականն ավարտեց Կիպրոսում: Հետագայում (1948-ից սկսած) Բեյրութում խմբագրեց «Զարթոնք» պարբերականը, հիմնադրեց «Անի» գրական ամսագիրը: Նրա վարպետ ու հայրենանվեր գրչին են պատկանում «Մեծ երազին ճամբուն վրա» (1964 – Բեյրութ), «Խոհեր հիսնամյակի ավարտին» (1966-Բեյրութ), մենագրությունները: Ահարոնյանը խմբագրել և *Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա-ի* օրհնագիր-առաջաբանով հրատարակել է «Յուշամատեան Մեծ եղեռնի 1915-1965» ծավալուն գիրք-ժողովածուն (1965 – Բեյրութ): Այն Մեծ եղեռնի մասին ստեղծված և մինչև օրս չգերազանցված կոլեկտիվ աշխատությունն է մնում, որն, իրոք, արգասիքն է հեղինակների և խմբագրի մեծ ջանասիրության:

ծովուն բացերը թափեց՝ ինչպէս *Տրապիզոնի մօտ, եւ դաշոյններով պատռտեց ու օդը բարձրացուց անմեղ հրեշտակներ, եւ հազարաւոր հայ մանուկներ անապատները թափեց՝ որպէս զի «շուներո՛ւ պէս ապրին»՝ ինչպէս ըրաւ Ջեքի ծիւաղը Տէր Զորի մէջ, եւ տակաւին հազար ու մէկ վանտալութիւն, եւ այդ բոլորէն հաճո՞յք առաւ, հրճուեցա՞ւ ու գոհացաւ...*

Թուրք ժողովուրդին մէջ երկար ատենէ ի վեր կուտակուած անասնութիւնը կամ գազանային բնազդը մէկ անգամէն շղթայազերծուեցաւ, եւ անզսպելի սատիզմով զարկաւ հայ անօգնական բազմութիւններուն: Թուրք ժողովուրդը գո՛հ էր, որ իր ղեկավարութիւնը իրեն *առիթը* տուած էր կողոպտելու եւ թալանելու հայն ու իր տունը, բռնաբարելու եւ վայելելու հայ կիները, ջարդելու եւ յօշոտելու հայ այրերը, ջախջախելու իր նախանձը գրգռող հայ մտաւորականները: Սատիստական աննախընթաց խրախճանք մը սարքեց թուրք ամբոխը. անսահման հրճուանքով լծուեցաւ անիկա՝ իրեն վստահուած «առաքելութեան»: Եւ զարմանալի չէ, որ փոքր, շա՜տ փոքր ու զանցառելի եղաւ թիւը «բարի թուրքերու», որոնք ընդվզեին կատարուող ահռելի ոճիրին դէմ եւ փորձէին ձախողցնել զայն:

Լաւ է որ չմոռնանք այս իրողութիւնը՝ որովհետեւ մենք իբրեւ պահանջատէր եւ իբրեւ դրացի երկար ատեն գործ պիտի ունենանք տակաւին թուրք ժողովուրդին հետ, որ այսօր ծիշդ այն է՝ ինչ որ էր երէկ: Չէ փոխուած բնաւ, վկայ՝ 1955 Սեպտ. 6-7ի վանտալութիւնը Իսթանպուլի մէջ, ուր աւելի քան 90 յոյն եկեղեցիներ պղծուեցան, յունական գերեզմաննոցներ իսկ պղծուեցան, տարիքոտ յոյն կղերականներ եւ յոյն կիներ անարգուեցան, եւ այլն եւ այլն: Այո, դժբախտաբար չէ բարեփոխուած թուրքը: Եւ մենք միշտ ի մտի պիտի ունենանք այս ճշմարտութիւնը՝ մեր ներկայ թէ յետագայ գործունէութեանց ընթացքին»[1]:

Մեծ եղեռնի վաթսունամեայի առիթով, սփյուռքահայ խորհրդածուն իրավագէտ-պատմաբան *Լեւոն Վարդանը,* պատմագիտական իր բազմաթիվ աշխատութիւնների զինանոցը հարստացրեց ևս մեկով: 1975 թ. նոյն Բեյրութում, «Շիրակ» հրատարակչութիւնում լոյս տեսավ նրա *«Թող թուրքը խոսի»* վերնագրված ծանրակշիռ մենագրությունը, որը շատ կողմերով նոր լոյս է սփռում արևմտահայության XIX դարավերջի, հատկապես, XX դարասկզբի պատմության կնճռոտ, մինչ օրս վիճահարույց համարվող խնդիրների վրա:

Հիշատակված աշխատությունը գրված է *բացառապես* թուրքական սկզբնաղբյուրներին կռթնած և հիմնավոր պատասխան է այսօրվա թուրք կեղծարարներին, դրանք լինեն պատմաբաններ, թե քաղաքական գործիչներ, հրապարակախոսներ, թե այդ բոլորին (կեղծարարության համար) առատորեն վարձատրող պետական բարձրաստիճան այրեր:

Այնքա՜ն տպավորիչ ու պատկերավոր են պատմաբանի եզրափակիչ, շարադրանքին ամփոփագիր դարձած էջերը, որ մենք համերաշխելով նրա հեղինակի հետ, փորձեցինք ընթերցողին տեղյակ պահել, թե ինչպես են մտածում Հայ դատի հանճնաժողովի անդամները Սփյուռքում:

Ահա մի ընդարձակ մեջբերում, այսինքն՝ թող մեր տեղ խոսի Լևոն Վարդանը. «Բայց շարունակե՞նք տակաւին. ըսե՞նք բաներ, որոնք շատ ալ հաճելի չեն, դիմե՞նք թուրք «պատմագրութեան», թրքական գիտութեան, թուրք հեղինակներուն, թուրք մամուլին, թուրք յօդուածագիրներուն. բայց ի՞նչ շահ այդ բոլորէն. վաթսուն տարուան ընթացքին թուրքը ցոյց չտուաւ ապաշաւի եւ զղջումի որեւէ նշան, այսօ՞ր պի-

[1] *Գերսամ Սիսրոնյան,* Մեծ երազին ճամբուն վրա (Ակնարկ հայկական հարցի պատմության վրա), Բ տպագրություն, Պեյրութ, 1964, էջ 74-77:

տի ցոյց տայ. վաթսուն տարի ուրացաւ, հիմա՞ պիտի ընդունի. ե՞րբ է պատահեր, որ տասնիններորդ դարու վերջին քառորդին սկսած թուրքի հակահայ քաղաքականութիւնը դիմագիծ փոխէ յանկարծ: Հրա՞շք, բայց ի՞նչպէս, բայց ինչո՞ւ...

Այս հարցումներուն պատասխանը մենք չենք որ պիտի տանք. չենք ալ սպասեր, որ ուրիշներ տան: Եթէ գոյութիւն ունի որեւէ մէկը, որ պիտի կարենայ պատասխանել անոնց՝ թուրքն է ան ալ: Իսկ թո՞ւրքը:

Ո՛չ, չենք սպասեր անկէ, ինչպէս որ չենք սպասեր ուրիշ որեւէ մէկէն պատասխանն այս հարցումներուն: Մեր պատմութեան ընդմէջէն կը ճանչնանք թուրքը, եւ անոր մասին կարծիք մը կազմելու համար պէտք չունինք վկայութեանը ուրիշներուն: Մեր պատմութիւնը աւելի քան բաւարար է յստակացնելու համար անոր դիմագիծը: Ջայն չենք ուզեր սեւ տեսնել. չենք ուզեր նաեւ քինախնդրութեամբ մօտենալ անոր: Անոր չենք մերժեր բարոյական բարձրութիւնները, բայց չենք ալ կրնար սպասել, որ անիկա վար իջնէ այդ բարձրութիւններէն, զորս գրաւած է ուրիշներէն՝ անարդարութեամբ:

Չենք ուզեր որ խիղճէ ճառէ թուրքը. չենք ուզեր որ պատմութեան խորքերէն եկող շքեղ ու բարի սկզբունքներու անունով խօսի մեզի հետ: Ոչ, կ'ուզենք ասոնցմէ եւ ո՛չ մէկը. հաւատացէք, եւ ո՛չ մէկը. ընդհակառակը, մեր ուզածը քիչ է շատ, փոքր է շատ, նոյնիսկ՝ զանցառելի:

Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ոչ. մեր ուզա՞ծը սակայն:

Ահաւասիկ – կ'ուզենք որ թուրքը մարդանա՛յ. մարդանա՛յ միայն. անկէ ետք մնացածը կը կատարուի ինքնիրեն. մնացածը կը հարթուի ինքնիրեն:

Շա՞տ է այս փափաքը. այսքան փոքր փափաք մը շա՞տ է միթէ: Կարելի չէ՞, որ Գորշ Գայլը բան մը զիջի իր գազանութենէն, վերածուի խորհրդանիշի, ու դառնայ բարի, առհաւական իմաստութեամբ սնած էակ, ճիշդ այնպէս, ինչպէս որ գայլն է Թիպէրի ափին թառած Հռովմին:

Կ'անգիտանանք թէ ե՞րբ կարելի պիտի ըլլայ այսպէս, բայց շատ լաւ գիտենք մէկ բան – մինչեւ հիմա կայ ո՛չ մէկ յոյս այս ուղղութեամբ, ահա թէ ինչո՛ւ չենք ուզեր մտածել իսկ այս ուղղութեամբ:

Բայց վաթսունամեակ մը անցաւ Հայկական Տասնհինգէն եւ առաջին ցեղասպանութիւնը մնաց հոն, ուր որ էր – ***անպատիժ, անհատուցում, անընդունելի:*** Այս իրականութեան մէջ բաժին ունին մեծերը այդքան՝ որքան թուրքը ինք: Կարելի չէ ծալլել ու բարձի տակ դնել հարց մը, որուն ճամբուն վրայ միլիոններու արիւնը կայ թափուած: Արիւնի այդ հեղումը արդիւնքը չեղաւ պատահականութեան, ոչ ալ ծնունդը՝ թուրք ամբոխին յեղակարծ պոռթկումին: Ընդհակառակը, անիկա գոյութեան կոչուեցաւ ծրագիրի մը որպէս արդիւնք, պետականօրէն հաշուարկուած տուեալներու որպէս արգասիք:

Այսօր ուրանալ այս բոլորը՝ պիտի նշանակէր յիմարի տեղ դնել ամբողջ մարդկութիւնը. բայց կը թուի, թէ մարդկութիւնը արդէն իսկ բոներ է ճամբան յիմարութեան, այլապէս պիտի չպատահէր այն, ինչ որ եղաւ կատարուած Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Մարդկային Իրաւանց Յանձնաժողովին մէջ: Հոն, ուր արդարութիւնն էր որ պիտի խօսէր՝ բարբառեցաւ անոպայ անխելքութիւնը. հոն ուր իրաւունքն էր որ պիտի պաշտպանուէր՝ խորտակուեցաւ անիկա:

Եւ թուրքը ծափեց. ծափեց, որովհետեւ հեղ մը եւս մարդեր յայտարարեցին, թէ թուրքը անմեղ էր, թէ անիկա չէր սպանած, չէ՞ր ջարդած, չէ՞ր կոտորած. ծափեց, որովհետեւ մարդեր անգամ մը եւս կամաւոր կերպով մոռնալ ուզեցին այն, ինչ որ կատարուեցաւ վաթսունամեակ մը առաջ:

Մոռցա՞ն, կարողացա՞ն մոռնալ:

Կ'անգիտանանք: Բայց շա՛տ լաւ գիտենք, թէ թուրքը բոլոր ծափահարողներուն մառանները, թաքստոցները, դարանները եւ մասամբ նորին լեցուն են վաւերագիրներով, լեցուն են վկայութիւններով, լեցուն են հատորներ յորդեցնելիք տեղեկագիրներով, որոնք բոլորն ալ կը խօսին թուրքին վայրագութենէն, թուրքին կատարած սպանդէն, թուրքին *ստեղծած առաջին ցեղասպանութենէն:*

Բայց թուրքը ցեղասպան էր հիներէն ի վեր. մասնագէտն էր անոր այդ ցեղասպանութեան: Անոր նախնիքներէն, որոնցմով հպարտ է ինք, Ճենկիզ Խանը ջարդեց տասնութը միլիոն մարդ Սինկ Քիանկի մէջ հիւսիսային Չինաստան. Հուլաղու Խանը մօտ երկու միլիոն մարդ Միջագետքի մէջ, իսկ Լենկթիմուրը Իսպահանի մէջ կազմեց բուրգ մը եօթանասուն հազար գանկով, *Սեբաստիոյ մէջ ջարդեց քաղաքը պաշտպանողները եւ որպէս օրինակ մնացողներուն՝ ողջ-ողջ վառեց ամբողջ բանակ մը. աւելին՝ իր զինուորներու ձիերուն սմբակներով ճզմել տուաւ մօտ չորս հազար մանուկ, որոնք հաւաքուած էին պարտուած Սեբաստիայէն. իսկ Վանի մէջ՝ ամբողջ բանակ մը վար նետել տուաւ քաղաքի բերդէն. բայց նետուողներուն թիւը այնքան էր շատ՝ որ պահ մը ետք նետուողներն ա՛լ մնացին ողջ:* Շարունակե՞նք տակաւին: Բայց ինչո՞ւ: Հայկական Տասնհինգին ստեղծումը տարօրինակ չէր բնաւ. թուրքը կատարեց հինէն, իր նախնիքներէն իրեն փոխանցուած, իրեն համար արիւնի կանչ եղող, իրեն համար կեանքին իմա՛ստն իսկ եղող բան մը. արդի՞ւնքը – ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹԻ՛ՒՆ:

Միացեալ Ազգերու Կազմակերպութեան պատկառելի մարմին մը փորձեց թուրքին ճակատէն սրբել ցեղասպանութեան խարանը, բայց ոչ *հայասպանութեան.* գուցէ սա մէկն եղաւ ակամայ եւ անգիտակից կերպով. բայց ինչ որ եղաւ, ինչ որ որոշուեցաւ, ինչ որ պատահեցաւ չէ՛ կարող սրբացնելու թուրքը, որովհետեւ ցեղասպանութեան ոճիրէն աւելի՛ անիկա յանցաւոր է հայասպանութեան ոճիրով. առաջինը եղաւ եւ վերջացաւ 1915-1923ի միջոցին, մինչ երկրորդը կը շարունակուի տակաւին, թուրք պետականութեան որոշումով եւ թուրք ժողովուրդին բարեջա՛ն գործակցութեամբ: Թէ ե՞րբ պիտի աւարտի այս մէկն ալ՝ ո՛չ մէկը կրնայ կռահել, բայց յստակ է մէկ բան լոկ – *հայասպանութիւնը պիտի հասնի իր աւարտին միա՛յն այն ատեն՝ երբ Արեւմտեան Հայաստանի մէջ այլեւս մնայ ո՛չ մէկ հետք հայութենէ:*

Թէ թուրքը հետամուտ է արագացնելու գալուստը այդ օրուան՝ կը վերցնէ ոչ մէկ կասկած, որովհետեւ այսօր ունինք ամէն փաստ եզրակացնելու, որ թուրք իշխանութիւնները, թուրք ժողովուրդը, թուրք կրօնական, մարդասիրական եւ մշակութային կազմակերպութիւնները, բոլո՛րը, բոլո՛րը, եղած մէկ սիրտ եւ մէկ հոգի, բռնկած ու մրրկած մէ՛կ տեսլականով, կ'աշխատին ու կը տքնին փաստելու թէ հոն ուր կը գտնուին իրենք՝ ճանչցած է ուրիշ ո՛չ մէկ նախաբնիկ տարր, եւ թէ միա՛կ բնիկ տարրը որ հազարամեակներու պատմութիւն մըն է ապրած ու կերտած հոն՝ թուրքն է միայն, եւ ուրիշ ո՛չ մէկը:

Հաւատա՞նք այս մէկուն, թո՛ւրք հայրենակից, հաւատա՞նք: Իսկ եթէ սուտ է՝ վիզդ ծռի՞, հէ՞, ըսէ, վիզդ ծռի՞:

Բոլոր այս էջերուն մէջ թուրքն էր որ խօսեցաւ միայն. մենք ձեռք չզարկինք այլ աղբիւրներու, օտար վկայութիւններու. ընդհակառակը, ուզեցինք որ թուրքն ի՛նք խօսէր եւ խօսեցա՛ւ:

Բայց այդ բոլորը կը պատկանէին երէկին: Իսկ վա՞ղը:

Սակայն կրկի՛ն կը սպասենք, որ խօսի թուրքը, այս անգամ՝ վաղուան հաշուոյն: Իրաւ է, որ չենք ակնկալեր, որ լաւ բաներ ըսէ անիկա, բայց տակաւին կը սպասենք մենք յոյսով, այո՛, յոյսո՛վ, որովհետեւ կը ճանչնանք զայն, թուրքը:

Մեր պատմութի՛ւնը վկայ»[1]:

Թուրք ժողովրդի հայերի նկատմամբ գործադրած գազանությունների մասին մենք կարող էինք բազում փաստեր բերել, ընդարձակ շարադրանքով ներկայանալ մեր գրքի ընթերցողներին: Սակայն որոշեցինք *համերաշխել* Մարաշում ծնված, Հայկական գողգոթայի ողջ ծանրությունը տեսած Գ. Ահարոնյանի և նրա գրչեղբայր *Լևոն Վարդանի* կարծիքների հետ, մանավանդ, որ դրանք գրված են գեղարվեստագետ–պատմաբանի հմուտ գրչով, ոչ միայն փաստերի լեզվով, այլ տեսածի ու լսածի ծանր տպավորության տակ: Մենք անվարան կերպով կիսում ենք վերոհիշյալ տեսակետները:

6. Զեյթունի և Վասպուրականի ինքնապաշտպանությունները

XIX դարի 90-ական թվականներին օսմանյան կայսրության ողջ տարածքով մեկ ծավալված հայասպանության պատմությունն ամբողջական ու լիարժեք լինել չի կարող, առանց *Զեյթունի* ու *Վասպուրականի* (հատկապես *Վանի*), *ինքնապաշտպանական,* այո, միայն *ինքնապաշտպանական* հերոսապատումների, թեկուզ և խտացված պատկերի ներկայացման:

Համիդի ջարդարարական քաղաքականության առաջ արևմտահայության բոլոր հատվածները չէ, որ անզեն ու անասպար զոհվեցին: Սասունից հետո, հերոսական ինքնապաշտպանություն կազմակերպեցին տավրոսահայերը – *Զեյթունն իր շրջակա գյուղերով*[2]:

Սուլթան Համիդի աչքի փուշը, Սասունից հետո կամ նրան համահավասար Զեյթուն լեռնագավառն էր, որը մեկ անգամ չէ, որ հարյուրավոր թուրք ասկյարներ էր փռել իր պատերի տակ, կառավարական հարկահաններին արգելել մտնելու արծվաբուն:

1892 թվականից վիճակը փոխվեց: Գավառում կայմակամ նշանակվեց Թաֆիկ բեյը, հայատյաց ու մոլեռանդ մի թուրք, որը Համիդից հանձնարարություն էր ստացել բոլոր միջոցները գործադրել այնպես, որ «*քարտեզի վրայից ջնջվի Զեյթուն անունը*»: Հաջորդ երկու տարիներին անտանելի դաժանության հասան Մարաշի վիլայեթի հայության սոցիալական ճնշումները, քաղաքական իրավազրկությունը, որոնք առանց այդ էլ սոսկալի էին:

Չբավարարվելով այդ ամենով, Բ. Դռնից հրաման, ֆինանսավորում և զորք ու զինամթերք ստանալով կառավարական «կանոնավոր բանակը», հետևից գցած

---

[1] *Լևոն Վարդան,* Թող թուրքը խոսի, Պեյրութ, 1975, էջ 116-118:

[2] Նախորդ բաժիններում արձանագրեցինք, որ Զեյթունը սիմվոլն էր հայ ժողովրդի ազատաբաղձության: Դրա համար էլ գավառի պատմության, հատկապես 1895 թ. դեպքերի մասին ստեղծվել է ծավալուն գրականություն: Նշենք դրանցից մի քանիսը միայն: *Հայկ Ղազարյան,* նշված աշխատությունը, էջ 387-433: *Հայկ Ղազարյան,* ՀՍՀ, հ. 3, «Զեյթուն», «Զեյթունի ապստամբություններ» հոդվածները, Երևան, 1977, էջ 683-685: *Վ. Գ. Մելիքսեթյան,* Զեյթունի հերոսամարտերը, Երևան, 1960, էջ 90-107: *Հ. Մ. Պողոսյան,* Զեյթունի պատմությունը (1409-1921 թթ.), Երևան, 1969, էջ 325-366: *Վ. Ա. Պարսամյան,* Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1967, էջ 333-335: «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, Երևան, 1981, էջ 250-259: «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում» *(խմբագրությամբ՝ Մ. Գ. Ներսիսյանի),* էջ 18-23: *Զեյթունցի [Մ. Սեմերճյան],* Զեյթունի անցյալեն և ներկայեն, մասն Բ, Փարիզ, 1903, էջ 30-41: «Զեյթունի պատմագիրք», Պուենոս Այրես, 1960, էջ 625-631: *Սմբատ Բյուրատ,* Զեյթունի վրեժը, Կ. Պոլիս, 1911, էջք 168, 541-544:

հազարավոր բաշիբոզուկների, սկսեց արշավանքը Կիլիկիա: Թուրքերն առաջին ներխուժումը կատարեցին Մարաշ քաղաքի հայկական թաղամասերը, մի քանի օրում սրախողխող արեցին ավելի քան 1200 մարդ, բանտերը լցրեցին հազարավոր հայ բնակիչների: Միաժամանակ հարձակումներ կատարվեցին Հաճընի, Ֆռնուզի, Ալբիստանի և այլ հայաշատ քաղաքների ու գյուղերի վրա: Երբեմնի պատմական Կիլիկիայի ամեն մի քարը, հողը կրկին ու կրկին ներկվում էր անմեղ ու անպաշտպան ժողովրդի արյունով: Թուրքական ռազմական ուժերը կոտորածներ կազմակերպելով, ահաբեկում էին Զեյթունի մոտ գտնված հայաշատ քաղաքների ու գյուղերի բնակչությանը, որպեսզի նրանք հնարավորություն չունենային ռազմական ու նյութական օգնություն ցույց տալու լեռնաքաղաքին: Թուրքական չորրորդ բանակը մորեխի նման ներխուժել էր Կիլիկիայի Անդրոնի գավառի հայաբնակ գյուղերը, կոտորում էր բնակչությանը, ավերում ու թալանում բնակավայրերը, հետապնդում փախչողներին: Անպաշտպան հայ բնակչությանը օգնելու նպատակով զեյթունցիների զինված ջոկատները հերոսական դիմադրություն էին ցույց տալիս թուրք ոսոխներին: Այսպես, Շիվլիկ հայ գյուղի բնակչությունը զինված դիմադրություն էր ցույց տալիս թշնամուն, օգնության են հասնում Զեյթունի և Ֆռնուզի զինված խմբերը ճեղքում թուրքական բանակի օղակումը և բնակչությանը տեղափոխում Ֆռնուզ[1]:

Կիլիկիայում դրությունը դառնում է անտանելի: Ժողովրդի ջարդն ու երկրամասի ավերածություններն իրենց վրա են հրավիրում հանուր հայ մտավորականների, հատկապես, քաղաքական գործիչների ուշադրությունը: Արդեն բացահայտ էին մարդասպան սուլթանի ցեղասպանության իրականացման մտադրությունները, դրա համար էլ դեպի երկրամաս շտապեցին մի շարք քաղաքական գործիչներ, զինավառ հայդուկապետեր, հատկապես Հնչակյան կուսակցության ղեկավար անդամները:

1895 թ. օգոստոսին Զեյթուն գավառի բնակչությանը ***ինքնապաշտպանության նախապատրաստելու*** մտադրությամբ, լեռնագավառ մեկնեցին ***Աղասին*** (Կարապետ Թուր-Սարգսյան), ***Ապահը*** (Պետրոս Գմգմյան), ***Ջելլաթը*** (Կարապետ Ղրփանոսյան), ***Հրաչյան*** (Հրաչյա Մարալ), ***Մլեհը*** (Ասատուր Տամղաճյան): Այդ հայրենանվեր քաջերին միացան մարաշցի ***Ջիմ Թորոսը,*** Աքրայի բանտից փախած ***Մհո Շահեն, Միհրան Գայանը, Ասլանը*** (Մինաս Էզմակյան), ***Կարապետ Սուքիասյանը, Նշան Ղազարոսյանը*** և այլ այնպիսի մահապարտ հայդուկներ, որոնց անունները ոսկի տառերով մտան հայոց գոյամարտերի սրբազան պատմության էջերը[2]:

Ընտրվեց ինքնապաշտպանության ղեկավար մարմին, որի կազմում էին 75-ամյա զեյթունցի իշխան ***Ղազար Շովրոյանը***, Արեգին գյուղի տանուտեր ***Խաչեր Կարապետյանը,*** Ավագկալի գյուղապետ ***Հարություն Գոճայանը***, Ս. Կարապետ վանքի վանահայր ***Բարդուղիմեոս վարդապետ Թագաճյանը*** [3]:

Երկուստեք կոնֆլիկտը հասունացնում էին և նախապատրաստվում ահեղ գոտեմարտերի: 1895 թ. հոկտեմբերի 12-ին, Զեյթունի գյուղախմբերի մեջ մտնող **Արեգին** ներքևում գտնվող ***Մութ Ձոր*** անվանված վայրում, գիշերով, պահակախմբերի խիստ հսկողության ներքո հրավիրվեց ***ինքնապաշտպանության*** ղեկավարների խորհրդակցություն: Նրանք, առանց մեծ տարակարծության, որոշեցին դիմել ***ինքնապաշտպանության,*** այլապես թուրքերը խաղաղ բնակչությանը կոչնչացնեին մինչև վերջին մարդը:

---

[1] **Վ. Գ. *Մելիքսեթյան***, նշված աշխատությունը, էջ 92:

[2] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 251:

[3] Նույն տեղում: Տես նաև «Զեյթունի պատմագիրք», էջ 173-174:

Միջոցներ ձեռք առնվեցին զենք և զինամթերք կուտակելու, գիտակցելով, որ շուտով երկրամասը դրվելու է երկաթե օղակի մեջ:

Շուրջ մեկ շաբաթվա ընթացքում կուտակվեց 5000 հրացան, 250 օխա վառոդ: Մարաշից Զեյթուն փոխադրվեց 1500 օխա աղ, 500 օխա արճիճ, մեծաքանակ նավթ և մի ձիաբեռ կայծաքար[1]:

1895 թ. հոկտեմբերի 15-ին զեյթունցիները, տեսնելով, որ այլևս խաղաղ ելք չկա, անհնազանդության դրոշ բարձրացրեցին: Դրան հակառակ սկսվեց թուրքերի առաջխաղացումը դեպի լեռնագավառ: Ինքնապաշտպանության զորակայանը (շտաբ) հաստատվեց քաղաքի նախամուտքի մոտ գտնվող Ս. Աստվածածնա վանքում, որտեղից մարտերը պիտի տեղափոխվեին *Կոտորածի ձորը* (այդպիսի անուն էր ստացել 1862 թ. ապստամբության ժամանակ)[2]:

Ինքնապաշտպանները, լավ իմանալով տեղանքը, որոշեցին նախ գրավել քաղաքը երկրամասի հետ կապող միակ կամուրջը, ապա հարձակվել թուրքական զորանոցի վրա, որտեղ նստած էին մինչև ատամները զինված 600 զինվորներ: Հոկտեմբերի 16-ին զեյթունցիները պաշարեցին զորանոցը. երկօրյա կատաղի մարտերից հետո չկարողանալով գրավել այն լեռնցի մարտիկները տեղական միջոցներով պատրաստելով անիվների վրա դրված երկաթյա վանդակներ, նպատակ ունեին շարժվել դեպի զորանոցի պարիսպները: Վանդակները մարտիկներին պաշտպանելու էին գնդակներից, իսկ նրանք մոտենալով զորանոցի պարսպին, պետք է անցք բանային պարսպի վրա ու ներխուժեին զորանոց: Սակայն լեռնականներին հարկ չեղավ օգտագործել այդ վանդակները, քանի որ շուտով զորանոցի հրամանատար Իֆֆետ պեյն իր 600 զինվորներով և սպաներով անձնատուր եղավ: Ապստամբների ձեռքն են անցնում գերմանական 2 թնդանոթ, 170 ռումբ, Մարտին տիպի 600 հրացան, 120000 փամփուշտ, 2 տակառ վառոդ, 2 ամբար գարի, 2 ամբար բրինձ, 2 ամբար լուբիա, 40 տոննա ալյուր, 30 տակառ ձեթ, 30 վառարան, 300 ձեռք համազգեստ, 1500 զույգ գուլպա, 6 ջորի, 3 ձի և 1 դեղատուն[3]: Զորանոցի գրավելուց հետո նրա վրա ծածանվում է ազգային դրոշակ, որի վրա գրված էր *«Կեցցե՛ հայ ժողովուրդը», «Ազատ ապրի՛լ կամ մեռնի՛լ»*[4]:

Զորանոցի գրավումը իրարանցում առաջ բերեց սուլթանից սկսած, մինչև Կ. Պոլսի, Հալեպի, Մարաշի թուրք բարձրաստիճան պաշտոնյաների շրջաններում: Նրանք արդեն իրենց գրավոր ու բանավոր խոսակցությունների ժամանակ, Զեյթունի փոխարեն օգտագործում էին «*Ապստամբ լեռ*» անվանումը: Ոգևորված էր նաև հայ մտավորականությունը: Լեռնականների առաջին հաղթանակի պատվին, *Մկրտիչ Փորթուգալյանը* ստեղծեց «Զեյթունցիների քայլերգը»:

Զեյթունում անհաջողության մատնվելով թուրքերն իրենց մթերած թույնի մաղձը թափում են Մարաշի անզեն բնակչության գլխին: 1895 թ. հոկտեմբերի 24-ի լույս 25-ի գիշերը սկսվում է Մարաշի բնակչության առաջին կոտորածը: Ականատեսներից մեկը, որն զգուշացել է իր անվան հիշատակումը, գրել է. «Մարաշի ջարդի օրերն են. հոկտեմբերի 25-ին շուկայեն տուն փախանք. և 10 օր տունը փակվեցանք: *Այս տասը օրեն երեքը տեղի ունեցավ առաջին ջարդը, որին մեջ մեռցվեցան դուրսը*

---

[1] *Սմբատ Բյուրատ*, Զեյթունի վրեժը, Կ. Պոլիս, 1911, էջ 234: Տե՛ս նաև *Հ.Մ. Պողոսյան*, նշված աշխատությունը, էջ 336:

[2] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 252:

[3] *Սմբատ Բյուրատ*, նշված աշխատությունը, էջ 375: Տե՛ս նաև *Հ.Մ. Պողոսյան*, նշված աշխատությունը, էջ 338:

[4] *Տեովլեթ Գևորգյան*, Սանտոխ, պատմություն Զեյթունի 1895 թ. պատերազմներուն տեղական բարքերով և հին դեպքերով ծոխացրած, Բ մաս, Փարիզ, 1946, էջ 28:

գտնվողները: Ասկե 15 օր ետքն ալ հանկարծ 70-80 հազար խուժանի և զինվորներու հարձակումով տեղի ունեցավ մեծ ջարդը նոյ. 18-ին: Բայց ինչպե՞ս ջարդ, ջարդ, գիտե՞ք: Տան մեջ պահվածներուն դուռները կացիններով կոտրեցին, ներս մտան և հարցուցին, անձնատուր կըլլա՞ս. այո՛, կըլլամ. դրամ ունի՞ս, տուր. դրամը կառնե, քիչ մը անդին կը հրե, և հրացանազարկ կընե: Այս տեսակը ուրիշ մահերու հետ բաղդատելով լավագույնն էր: Շատերը խողխողեցին, ոմանց վիզը ետևեն կտրեցին, ուրիշներ հրացանազարկ ընելով կրակի մեջ նետեցին, ոմանց ալ փախչելու պահուն գլուխը տապարով ջախջախեցին և երբ ինկավ փայտ ճեղքելու պես շերտ-շերտ կտրեցին: Թուրքերը ահա այսպես մեռցուցին քրիստոնյաները, այսպես վարվեցան այդ անգութները»[1]:

Հայոց արյան «քաղցրությունը» միավորում էր թուրքական տարաբաժանված զորքերին և ***Ռեմզի փաշայի*** (1909 թ. Ադանայի հայոց ջարդի կազմակերպիչը դարձավ) գլխավորությամբ, ուղղվում իրենց մկրտած լեզվով «***Ապստամբ լեռան***» դեմ: Չերքեզ գեներալ Ռեմզի փաշայի 20 հազարանոց բանակին, Ադանայից օգնության է հասնում ***Ալի բեկը,*** որն իր հետևից գցած ուներ բազմահազարանոց, մահմեդական, ավարածարավ, խաժամուժ ամբոխը: ***Զեյթունցիների զորքի քանակը հասնում էր հինգից վեց հազարի:*** Անհավասար մարտեր էին սպասվում:

1895 թ. դեկտեմբերի 2-ին տեղի ունեցավ թուրքական բազմահազարանոց զորքի և Զեյթունի հերոս զավակների առաջին լայնածավալ հանդիպումը: Մինչև ուշ երեկո տևող կռիվները արյունահեղ էին, երկուստեք զոհառատ: Մեռնողների դիակույտերը, վիրավորների լալահառաչ ու աղեկտուր ձայները, օդը ապականող վառոդի ծուխը, լեռնագավառը վերածել էին այնպիսի դժոխքի, որի իսկական պատկերը, նույնիսկ հանճարեղ Դանթեն կերտել չէր կարող: Երեկոյան թուրքերը, մեծ զոհերի գնով, գրավեցին քաղաքի դարպասների մոտ փռված բարծունքի վրա կառուցած Ս. Փրկչի վանքը և այն մոխրակույտի վերածեցին[2]:

Դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը, Զեյթունի Կոտորածի ծորում հրավիրվեց ինքնապաշտպանական ուժերի ղեկավարության ***արտահերթ համաժողով:*** Նրանք վերլուծեցին, թե ի՞նչ կատարվեց Սասունի հայության հետ, երբ թուրքերը գրավեցին լեռնագավառը: «Անհնազանդները», մեկ մարդու նման բռունցք դարձած, որոշեցին կռվել մինչև վերջին մարդը, ***մեռնել, բայց երբեք չհանձնվել թուրքի սրի ողորմածությանը:*** 15-70 տարեկան բոլոր զեյթունցիներին հանձնարարվեց զենք վերցնել և դիմագրավել թշնամուն: Ծերունիներն ու դեռահասները, քաջակորով ու դարերի ընթացքում իրենց սխրանքներով աշխարհին հիացնող, Զեյթունի կանայք, պիտի զինամթերք, հաց և ջուր մատակարարեին դիրքերում կռվող ռազմաճակատի մարտիկներին: Եվ այսպես, սասունցիների օրինակով, ***«մա՛հ կամ ազատությո՛ւն»*** նշանաբանով, Արծվաբունը թուրքերի հետ այրեց բոլոր տեսակի կամուրջները և իր առյուծասիրտ զավակներին մեկ մարդու նման նետեց անհավասար գոյամարտերի[3]:

Ահեղ թշնամին, զայրացած լեռնցիների վճռակամությունից, 1895 թ. դեկտեմբերի 3-ի առավոտյան մթնշաղին, երեք ուղղություններով շարժվեց դեպի Զեյթունի մատույցները մտքում ունենալով «***հիմնովին կործանել լեռնաքաղաքը***»: Նրան դեմ առ դեմ կանգնեց Զեյթունը մշակած ունենալով տակտիկական յուրահատուկ հնարքներ: «Որպեսզի թշնամին երբեք հնարավորություն չունենար սողոսկելու Զեյ-

[1] «Զեյթունի պատմագիրք», Հրատարակչություն Զեյթունի հայրենակցական միության, Պուենոս-Այրես, 1960, էջ 666-667:

[2] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 256:

[3] *Աղասի,* Զեյթունն և իր շրջակաները, Պեյրութ, 1969, էջ 271:

թուն, նրա զինված ջոկատները մի ընդհանուր շղթայով փակեցին քաղաք տանող բոլոր ճանապարհները՝ Պերզնկայի ստորոտներից մինչև Զեյթուն գետակը, Քարտաշ քարից մինչև Ս. Աստվածածնա վանքը, զորանոցի ամրոցից մինչև Ճապաղ-Չայիր: Պատերազմական այս գործողությունները Զեյթունի նոր պատմության մեջ հայտնի են «Սանդուխի ճակատամարտ» անունով»[1]:

Սանդուխի ճակատամարտում, իտալացի դիվանագետ Հենրիկոս Վիթթոյի վկայությամբ, զեյթունցիները տվեցին ***չորս զոհ,*** իսկ թուրքերը ***հազար*** և ավելին: Այդ արդյունքները պայմանավորված էին ոչ միայն քաջերի խիզախությամբ, այլև մարտավարության արվեստով, կուտակած փորձի դրսևորմամբ:

Այդուհանդերձ ուժերն անհավասար էին: Դեկտեմբերի 6-ի առավոտյան հորիզոնում երևաց այրվող Ավագկալի (Մխալ) երկինք հասնող ծուխը, որը գուժում էր Ֆռնուզն ավերած Ալի բեկի բանակի մոտալուտ ժամանումը: Մի քանի ժամ անց նրա առաջապահ զորամասերը քաղաքը երիզող այգիների միջով, ճեղքելով քանձր մշուշը, արդեն փորձում էին մոտենալ Զեյթունին: Հանկարծ աղջամուղջի միջից, ընդամենը տաս-տասնհինգ մետր հեռավորության վրա որոտացին դիրքավորված ապստամբների հրացանները: Հեռվից հնչեց եկեղեցական կոչնակների տագնապալի ձայնը: Քիչ անց թուրքական բանակի թիկունքից սկսվեց դարանամուտ հայ զինվորների անսպասելի մի գրոհ: Թշնամու վրա քշելով այծերի հսկա հոտը, զեյթունցի մի բուռ քաջեր խաբուսիկ այդ հնարքով խուճապի մատնեցին թուրք զինվորներին: Նրանք մեծ կորուստներ տալով և ռազմադաշտում թողնելով մեկ հրանոթ, խուճապահար ետ քաշվեցին: Զորանոցի ուղղությամբ հարձակվող արևելյան բանակի ջոկատները նույնպես ուժեղ հակահարված ստացան և նահանջեցին: Հարձակման անցած զեյթունցիները գրավեցին մի շարք կարևոր ռազմական կետեր[2]:

Դեկտեմբերյան արյունահեղ պատերազմի օրերին, հայ նշանառուներից մեկը, հեռարձակ, բայց դիպուկ կրակոցով, ***վիրավորեց Ռեմզի փաշային:*** Վերքը ծանր էր, բայց ոչ մահացու: Կատաղած անհաջողություններից իրեն կորցրած թուրք հրամանատարը, հեռագրեց Բ. Դուռ, օգնական զորք պահանջեց այն պահին, երբ Համիդը թաղված հոգսերի մեջ չգիտեր ինչպես դիմագրավեր արաբ և հույն ապստամբներին: Անմիջապես Ռեմզի փաշան հեռացվեց գլխավոր հրամանատարի պարտականությունից և նրան փոխարինող նշանակվեց թուրքական հինգերորդ բանակի հրամանատար ***էդհեմ փաշան:*** Նրա բոլոր ջանքերը Զեյթունն հպատակեցնելու ուղղությամբ ևս անհաջողության մատնվեցին[3]:

Աբդուլ Համիդը տեղյակ էր նաև իր բանակի կրած կորուստներին: Ինքնապաշտպանների վրա հարձակումներ գործելու չորս ամիսների ընթացքում թուրքական բանակը տվել էր մոտավորապես ***քսան հազար զոհեր,*** մինչդեռ հայերի կորուստը չէր անցնում ***երեքուկես հազարից***[4]: Օսմանյան բանակում սկսվել էր դասալքություն, տարածվել էին տարափոխիկ հիվանդություններ, զգացվում էր պարենի և բժշկական օգնության պակաս: Չնայած իրենց խանդավառ հայրենասիրության, անկոտրում կամքի՝ Զեյթունի քաջերի տնտեսական վիճակը ևս լավ չէր: Խիստ զգացվում էր ռազմամթերքի, աղի, պարենի պակաս: Երկուստեք հաշտության եզրեր որոնելու ճանապարհ էին որոնում հակառակորդները:

---

[1] *Վ. Գ. Մելիքսեթյան*, նշված աշխատությունը, էջ 98:

[2] *Գր. Հ. Գալուստյան*, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու Յորք, 1934: Տես նաև «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 257:

[3] Նույն տեղում:

[4] *Մամիկոն Վարժապետյան*, Հուշիկ Զեյթունի, Մարզվան, 1912, էջ 197-198:

Բ. Դուռը ձգտում էր չորրորդ բանակը հանել Կիլիկիայից և ուղղել ապստամբ Հունաստանի դեմ: Այդ նպատակով էդհեմ փաշան, 1896 թ. հունվարի նախաշեմին, հրաման ստացավ դադարեցնել կռիվները Զեյթունում և սկսել բանակցությունները ինքնապաշտպանների հետ, որոնց միջնորդ պիտի լիներին եվրոպական վեց տերությունների հյուպատոսները:

1896 թվականի հունվարի 4-ին մեծ տերությունների հյուպատոսները՝ ռուսականը (Յակիմանսկի Միխայիլ Իվանովիչ), ֆրանսիական փոխհյուպատոսը (Պարթելմի), ավստրո-հունգարական հյուպատոսը (Պարներոնը), անգլիականը (Պարնհայմը), գերմանականը (Զոլինգերը) և իտալականը (Հենրիկոս Վիթթոն) ժամանում են Զեյթուն: Սկսվում են բանակցությունները, որոնց զեյթունցիների կողմից մասնակցում էր 12 հոգի: Նրանք առաջադրում են Լիբանանի ձևով մի վարչություն ունենալ, ինչպես գյուղաքաղաքի, այնպես էլ շրջակա գյուղերի համար: Այդ առաջարկությունը, սակայն, հենց բանակցությունների սկզբից չի ընդունվում և մերժվում է[1]:

Բանակցություններն ընթանում էին չափազանց լարված մթնոլորտում: Թուրքերի հետ միացած՝ եվրոպական հյուպատոսների մի մասը ձգտում էր այնպիսի որոշումներ կայացնել, որոնք ձեռնտու լինեին Բ. Դռանը: Զեյթունցիներն այստեղ էլ անդրդվելի էին և իբրև հաղթողներ թելադրում էին իրենց կամքը, այլապես սպառնում՝ թողնել վիճասեղանը:

Թուրք-եվրոպական բանագնացների վզին փաթաթված հաղթողի օղակը գնալով նեղանում էր: 1896 թ. հունվարի 30-ին, մեկ շաբաթյա բանակցություններից հետո, վերջապես ստորագրվեց հաշտության մասին համաձայնագիրը: Այդ փաստաթղթի համաձայն՝ 1) ընդհանուր ներում էր շնորհվում ***լեռնականներին,*** գավառում գտնվող բոլոր գաղթականներին, հատկապես կուսակցական վարիչներին: 2) Հնչակյան վեց գործիչները, եվրոպական դիվանագետների հովանավորությամբ, իրավունք էին ստանում ազատորեն մեկնել արտասահման: 3) Թուրքերը պիտի իրենք վերաշինեին այրված զորանոցը: 4) Զեյթունում նշանակվող կայմակամը պիտի քրիստոնյա լիներ, տեղակալը՝ միայն մահմեդական: 5) Զեյթունցիները երեք տարով ազատվում էին հարկերից, չեղյալ էին հայտարարվում հարկային նախկին պարտքերը: 6) Զեյթունում միայն մի վաշտ զորք պիտի մնար. մնացածները պիտի հեռանային տասը օրվա ընթացքում: 7) Մեծ տերությունները Մարաշում պետք է ունենային իրենց ներկայացուցիչները, որոնք՝ պետք է հսկեին պայմանագրի բոլոր կետերի կենսագործմանը[2]:

Այսպիսով, հերոս լեռնագավառը մեկ անգամ ևս Թուրքիային և արևմտյան աշխարհին ապացուցեց, որ ինքն անառիկ է, իր զավակներն ազատատենչ են, խիզախ, մարտունակ: Նրանք իրենց ազատությունը գերադասում են կյանքից, զարմանք ու հիացում պատճառում հանուր մարդկությանը:

1897 թ. Իտալիայի փոխհյուպատոսը Մարաշում ***Հենրիկոս Վիթթոն, Անատոլի Լատինո*** գաղտնանունով հրապարակեց իր գրած ծավալուն մի աշխատություն, որը խորագրված էր «***Cit Armenie Zeitun***»: Այդ աշխատության էջերում օտարերկրացին այսպես է արտահայտվում լեռնահամայնքի մասին. ***«Ողջույն քեզ Զեյթուն՝ դյուցազն քաղաք: Որչափ արևը փայլի մարդկային դժբախտութեանց վրա, քու անունդ պիտի ապրի իբրև խորհրդանշանը տառապող ժողովուրդներուն, զարթումի շեփորը անոնց համար, որոնք պառկած են ստրկութեան տիղմին մեջ, դրոշակը ապագա պատերազմներու ի պաշտպանութիւն իրենց ընտանեկան սրբութեանց»***[3]:

---

[1] *Հ. Մ. Պողոսյան,* Զեյթունի պատմությունը, էջ 354:

[2] «Զեյթունի պատմագիրք», էջ 634: Տես նաև *Հ. Մ. Պողոսյան,* նշված աշխատությունը, էջ 356:

[3] *Վ. Գ. Մելիքսեթյան,* Զեյթունի հերոսամարտերը, Երևան, 1960, էջ 108: Տես նաև «Զեյթունի պատմագիրքը», էջ 775-776:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԸ

ՏԵՍԱՐԱՆ ՍՏԱՄԲՈՒԼԻՑ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԸ ՆԵՂՈՒՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
(ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼՈՒՍԱՆԿԱՐ)

ՍԿՅՈՒՏԱՐԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԹԱՂԱՄԱՍԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐԱՆԸ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ ՍԿՅՈՒՏԱՐ ՀԱՅԱԲՆԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՃԱԿԱՏԱՅԻՆ ՄԱՍԸ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՍԿՅՈՒՏԱՐ ՀԱՅԱԲՆԱԿ ԹԱՂԱՍԱՍԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԿԱԹՅԱ ՎԱՆԴԱԿԱՁԱՂԵՐԸ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ԳՈՒՄԳԱԲՈՒ ԹԱՂԱՄԱՍԻ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ ՆԵՐՍԻՑ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ ՆԵՐՍԻՑ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՍՈՒՐԲ ՓՐԿՉՅԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ
ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐԱՆԸ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐԱՆԸ

ԻՍԿԵՆԴԵՐՈՒՆԻ ՍՈՒՐԲ ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՆ

ԿԵՍԱՐԻԱՅԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ
ՄՈՒՏՔԻ ԿՈՂՄԻՑ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ ԲՈՅՈՒԿԴԵՐԵ ԹԱՂԱՄԱՍԻ ՍՈՒՐԲ ՊՈՂՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍԱՄԱՍԸ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՆՈՐԱԳՅՈՒՂ ԹԱՂԱՄԱՍԻ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՕՐԹԱԳՅՈՒՂ ԹԱՂԱՄԱՍԻ
ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՂԱԼԱԹԻԱ ԹԱՂԱՍԱՍԻ
ՍՈՒՐԲ ՀԻՍՈՒՍ ՓՐԿՉԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Կարծում ենք, սրանից լավ գնահատական տալն այլևս անհնարին է, և մենք էլ սրանով կավարտենք մեր շարադրանքը Զեյթունի ***1895-1896 թթ. ինքնապաշտպանության*** մասին:

*

* *

90-ական թվականների հայասպան քաղաքականությունը ծանր նստեց Վասպուրականի հայության, հատկապես Հայոց հնամենի, թերևս առաջին մայրաքաղաք, ***Վանի ազգաբնակչության վրա:*** Նահանգը սահմանակից էր և Ռուսաստանին (այսինքն Արևելյան Հայաստանին), և՛ Պարսկաստանին (այսինքն Պարսկահայքին): Դրա համար էլ դարձել էր Աբդուլ Համիդի աչքի փուշը: Կասկածամիտ սուլթանը ենթադրում էր, որ արևմտահայությունը Վասպուրականի վրայով էր ստանում զենք, զինամթերք, «ապստամբական ուժեր», արևելահայության ուղարկած նյութական օգնությունն ու բարոյական աջակցությունը[1]:

Իրոք, Վասպուրականը հայ ազատագրական մտքի վառարանն էր: Այստեղ էին խարսխված Վանի «***ժառանգավորաց վարժարանի***» երեկվա սաները, որոնք սկսելով իբրև ***արծվիկներ***, 80-ականներին թևավորվել էին իբրև ***արծիվներ***, մտքով ու գաղափարներով հասունանալով, մտահոգվում էին ոչ միայն երկրամասի, այլև հանուր հայության ճակատագրով: ***Մ. Խրիմյանի*** ցանած սերմերը ծլարձակել էին, հասունանալով կազմել էին մի ազատաբաղձ փաղանգ, որի գլխագիրն էին ***Գարեգին Սրվանձտյանցը, Արսեն Թոխմախյանը, Փանոս Թերլեմեզյանը, Մկրտիչ Ավետիսյանը, Մկրտիչ Փորթուգալյանը, Տևկանց եղբայրները*** (նրանք վեցն էին), աչքերով կույր, սակայն մտքով պայծառ ***Համբարձում Երամյանը*** և շատ ու շատ այլ երիտասարդներ:

Հայ մտավորականներին և քաղաքական գործիչներին խիստ մտահոգում էր ժողովրդի անտանելի վիճակը, մանավանդ, թուրքերի ավերածություններին լրացնելու եկած, «***քրդական համիդիեների» չարագործությունները:*** Արևմտյան Հայաստանի ոչ մի վիլայեթում ***քրդերն*** այնքան բարբարոս, դաժան ու հայասպան չէին, որքան Վասպուրական աշխարհում: Թալանը, կողոպուտը, հայ բնակչության ամենօրյա սպանությունները, կանանց առևանգումը, աղջիկներին փախցնելը սովորական երևույթներ էին դարձել քուրդ գազանների համար: Բողոքելն (բայց ո՞ւմ բողոքեին) անօգուտ էր, ավելի վտանգավոր, քանզի վրեժխնդրությունը քրդերի ազգային այնպիսի սովորություն էր, որքան ***գողությունն*** ու ***թալանը:***

Բերենք մի քանի փաստեր միայն: 1890 թ. Ամենայն Հայոց հայրապետին ուղղված կոլեկտիվ մի համախոսականում կարդում ենք. «Ո՛չ, մարդկային լեզուն ու

---

[1] ***Հայկ Ղազարյան,*** Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 346-380: ***Հայկ Ղազարյան,*** Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Երևան, 2001, էջ 447-477, 550-571: ***Հ. Մ. Պողոսյան,*** Վասպուրականի պատմությունից (1850-1900), Երևան, 1988, էջ 246-292: «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 261-265: ***Վ. Ա. Պարսամյան,*** Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 335-336: «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», Երևան, 1991, էջ 154-156: ***Е. К. Саркисян,*** Политика османского правительства в Западной Армении, стр. 136-138. ***Հ. Գ. Վարդանյան,*** Արևմտահայերի ազատագրության հարցը և հասարակական-քաղաքական հոսանքները XIX դարի վերջին քառորդում (***Հայկ Ղազարյանի և Դերենիկ Մուրադյանի*** խմբագրությամբ), Երևան, 1967, էջ 231-235: ***Հ. Երամյան,*** Հուշարձան, հ. Ա, Ալեքսանդրիա, 1925: «Ванский вилайет», составитель ***В. Т. Маевский,*** Тифлис, 1901, стр. 189-219. ***Ծ. Պ. Աղայան,*** Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, էջ 315:

նրա գրիչը չեն կարող նկարագրել այն բազմատեսակ ծանր դժբախտությունք, որ մենք կրում ենք...: Մեր Հայրենի հողի վրա մեր կյանքը խաղալիք է դարձել մեր իշխողների ձեռքին, մեր գույքն անապահով դրության մատնված, մեր ընտանիքը ամոթաբեր բռնության, մեր զավակները զոհ են դարձել կոպիտ ուժի, մեր դառը քրտինքով վաստակած հացը մեզնից կորզելով մեր զավակները սովամահ կոտորվելու են թարկված են, մեր եկեղեցիները կսրբապղծվին և իրո ճարակ կլինին, մեր սրբությունները կանարգվին...»[1]:

Նրանք կաթողիկոսից խնդրում են. «Վեհափառ Տե՛ր, համբերության վերջին գագաթնակետին հասած ու մեր արյան վերջին կաթիլը քամված լինելով ուժեզրկված ենք, ոչ ոքից այլևս գթության ու օգնության հույս չունենք ու մենք զմեզ օրհասական վերջին ճգնաժամին մեջ գտած ենք այս վայրկյանիս: Այսօր մեր առջև բացված է երկու ճանապարհ. տակավ առ տակավ մահանալ կամ դիմադրելով մահանալ: ***Առաջինն արդեն դարերե ի վեր կշարունակվի, իսկ վերջինը կատարելու համար մեր ոյութական ուժ չունինք, պիտի պարտավորինք գոնե բրով կամ գավազանով դիմադրել ու մեռնիլ***»[2]:

Աբդուլ Համիդը Վասպուրականի համախումբ հայությանը ***մաշելու, նոսրացնելու, տեղահանելու, ոչնչացնելու,*** ապա նրանց տեղերը իսլամներին լցնելու խորամանկ դիտավորություններով, այստեղ վերաբնակեցված քրդերից կազմակերպեց շուրջ ***տասնչորս*** «համիդիե» գնդեր: Վանի վիլայեթում 1892 թ. կային արդեն յոթը հազար համիդիեներ[3]: ***Սա սարսափելի թիվ էր մեկ վիլայեթի համար:***

Անտանելի էին, աներևակայելի դաժան քուրդ այդ բարբարոս ավազակների, մարդակերպ գազանների կատարած չարագործությունները ինչպես վիլայեթի կենտրոնում, այնպես էլ և, հատկապես, մոտավոր ու հեռավոր գյուղերում, գյուղաքաղաքներում: 1895 թ. սեպտեմբերին քուրդ բորենիները թալանեցին ***Դարման, Ոսկեպարկ և Առեն*** գյուղերը: Երկու ամիս անց, օրը ցերեկով, նրանք հափշտակեցին ***էրերին և Նորշեն*** գյուղերի ոչխարի հոտերը: Մեկ ամիս հետո, 300 համիդիեականներ հարձակվեցին Չիրաքլու գյուղի անզեն բնակչության վրա և սկսեցին կողոպուտը, խոշտանգումները, առևանգումները[4]: Հուսեին և էմին քուրդ փաշաները կարծեք թե «կանոնավոր ձևով» ամիսը մեկ ժամանում էին հայկական գյուղեր և անում այն, ինչ զարհուրելի էր ու անմարդկային:

1895 թ. թուրքական իշխանությունները Արճակի բնակիչներին քրդական ուժերից պաշտպանելու պատրվակով այնտեղ հարյուր հոգիանոց մի ջոկատ տեղավորեցին, որն ապրում էր գյուղացիների հաշվին և բնակիչները որպես հավելյալ սնունդ զորքին տալիս էին օրական «մի ջվալ ալյուր և շաբաթական մի մսացու անասուն»: 1896 թ. հունիսի 8-ին Վանի կոտորածն առաջացնող քրդական համիդիեները շրջապատեցին Արճակը և պահանջեցին թուրքական զորքին ու իշխանություններին հեռանալ և «կայմակամի և մյուդիրի առաջ են դնում հարյուր հիսուն օսմանյան լիրա, որպես արվելիք թալանի փոխհատուցում: Մյուդիրը պահանջում է նաև Խառակոնիս գյուղի «գինը», քրդերը ավելացնում են ևս 50 ոսկի»: Խառակոնիսը մի կերպ ազատվում է կոտորածից, իսկ Արճակը թալանվում է հիմնովին: Զինված ուժերը սպանում են տղամարդկանց, թալանում տները, վերցնում անասունները, «հարյուր ուբսուն ջահել կանանց ու աղջիկներին և շարժվում դեպի Աբաղայի դաշտը», որտեղ Հուսեին

---

[1] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 236, վավ. 48:

[2] Նույն տեղում: Տե՛ս նաև *Հ. Մ. Պողոսյան*, նշված աշխատությունը, էջ 2:

[3] «Ванский вилайет», составитель ***В. Т. Маевский***, стр. 222-223.

[4] *Հ. Մ. Պողոսյան*, նշված աշխատությունը, էջ 251:

բեկի մայրը «անեծքի սպառնալիքով ստիպում է նրանց գերեվարողներից խլել հայուհիներին»[1]:

Այսպիսով, Վասպուրական նահանգը փաստորեն ընկել էր քրդերի բռնապետության ներքո, և նրանք անում էին այն ամենը, ինչ ուզում էին: Համիդը հասել էր իր նպատակին: Նա ուղղակիորեն թշնամացրել էր քրդերին հայերի հետ և նախապատրաստում էր մեծ կոտորածներին, ինչը չէր վրիպում անձնազոհ հայ հայրենանվերների աչքից:

Վասպուրական աշխարհում ծավալված սոցիալ-քաղաքական ճնշումներով, մասնակի ջարդերով չբավարարվելով Բ. Դուռն ու նրա «ձեռքի գործիքը» դարձած քուրդ «համիդիեները» անցնում են զանգվածային ջարդերի իրականացմանը, այնպես, ինչպես հայկական մյուս նահանգներում: Չէ՞ որ Համիդի համար 1895-1896 թվերը ընդհանուր *հայասպանության* տարիներ էին, հետևաբար, Վանի վիլայեթը բացառություն կազմել չէր կարող: Սակայն թուրքերը և քուրդ ցեղապետները վասպուրականցիներից երկնչում էին, դրա համար էլ նախքան հարձակումը նախապատրաստական լուրջ աշխատանքներ էին ծավալել:

1896 թ. հունվարին սուլթանը Վան ուղարկեց դաժանությամբ անգերազանցելի, *Ֆերիկ Սաադէդդինն* փաշային, նրան հանձնարարելով, բոլոր միջոցները գործադրել հայազրկելու ոչ միայն փաշայանիստ քաղաքը, այլև իրեն այդքան մտատանջության առարկա դարձած Վասպուրական աշխարհն ամբողջովին[2]:

Սաադէդդին փաշան Վան հասնելու առաջին իսկ շաբաթում սահմանափակեց վիլայեթի Վալի Նազըմ փաշայի իրավունքները: Երկրամասի կառավարման ղեկը հավաքելով իր բռում, նա քաղերում ոստիկանական նոր կայաններ հիմնադրեց և սրանց միջոցով արգոսի աչքերով հետևեց հայ երիտասարդության գործողություններին ամենուր. «Անձամբ հաճախակի սկսավ քննել հայ քաղերու աշխարհագրական դիրքերը, կարևոր շենքերը և այն պողոտաները, որոնցմէ կարելի էր խուժել հայկական թաղամասերը»[3]:

Քաղաքամերձ վայրերում տեղակայված թուրքական բանակի գլխավոր զորակայանում Ֆերիկ Սաադէդդինը գիշերները շարունակական խորհրդակցություններ էր հրավիրում և գնդերի հրամանատարների, հատկապես քրդական հրոսակախմբերի առաջնորդների հետ քննարկում հայկական ջարդերի իրականացման պլանը: Այսպիսով, Վան ժամանած «*Աբդուլ Համիդի սիրելի Սաադէդդին* փաշան հատուկ նպատակ ուներ ջարդել հայերին» և այդ նպատակի իրագործման ճանապարհին դիմում էր ամեն միջոցի: Ըստ քուրդ մի հիսնապետի վկայության նա այցելում էր համիդիե գնդերի պետերին և նրանց հրահրում կենսագործել Վանի հայերի կոտորածը: Հիսնապետի վկայությամբ Սաադէդդինը այցելելով համիդիե գնդի ղեկավարին, կարգադրեց, որպեսզի հայերին կոտորելու մասին հեռագիր ստանալուն պես *«համիդիե հեծյալներով ճամբա ելնեք և պատահած հայ գյուղերը կոտորելեն հետո Վան քաղաքը կը լցվիք, որպեսզի ջնջեմք այն քաֆիրներ, որոնք կուզեն թագավորություն ձեռք բերել և իշխել մուսուլմաններու վրա, որչափ կրնաք անխնա և աներկյուղ կոտորեցեք, իսկ քաղաքի ամբողջ ավար և հարստություն ձեզ համար է»*[4]: Այնուհետև նույն քուրդը շարունակում է. «Վերջապես մայիսի 31-ին եկավ սուլթանի դժոխքի մուրով գրված հեռագիրը, որ վճռակի և անհապաղ Վանա կոտորածը կը պահանջեր»[5]:

---

[1] *Հ. Մ. Պողոսյան*, նշված աշխատությունը, էջ 253: Տես նաև «Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ», հ. 8, 1978, (սերիմե գիրք), էջ 16-17: Վրաստանի Հանրապետության ՊՊԿԱ, ֆ. 480, ցուց. 2, գործ 1194, թերթ 92:

[2] *Ծ. Պ. Աղայան*, նշված աշխատությունը, էջ 150:

[3] «Պայքար», (ԱՄՆ), 1957, հունիս:

[4] Եղիշե Չարենցի անվան ԳԱԹ, *Հ. Առաքելյանի* ֆոնդ, վավ. 155, թերթ 2:

[5] Նույն տեղում, թերթ 4: Տես նաև *Հ. Մ. Պողոսյան*, նշված աշխատությունը, էջ 263:

Ջարդը սկսվելու էր 1896 թ. մայիսի 31-ին: Այն պիտի ծայր առներ շուկայից, ցերեկվա ժամերին, երբ քրիստոնյա ազգաբնակչությունը «անհոգ» զբաղված էր առևտրով: Երկար խորհելուց հետո ժամկետը երկարածգեցին, քանզի այն համընկնում էր Ղուրբան բայրամի տոնակատարության հետ, և հազիվ թե քրիստոնյաները համարձակվեին իրենց խանութները բացել մահմեդականների տոնի օրերին:

Բարեբախտաբար քնած չէր նաև Վասպուրականի հայությունը, որի երևելի զավակները բոլոր հնարավոր միջոցները ձեռք էին առնում կանխելու ծրագրված կոտորածը, իսկ եթե չկարողանային հասնել դրան, ապա գոնե ***զինված դիմադրություն, ինքնապաշտպանություն կազմակերպեին:***

Հայերը վառոդի հոտն առել էին վաղուց, դրա համար էլ 1895 թ. վերջերից, Սալմաստից Վասպուրական էին անցկացրել ***հայդուկային մի քանի խմբեր: Հայդուկային ջոկատներ կազմավորվեցին նաև տեղական երիտասարդներից***: Չինավառ հայդուկը բարձրացավ Վասպուրականի լեռնագագաթները և արծվի սրատես հայացքով սկսեց հետևել դեպքերի զարգացման ընթացքին: Թուրքերն ու քուրդ ավազակները հայդուկային այդ ոչ մեծաթիվ վրիժառուներից ավելի էին երկնչում, քան թե ամբողջական զորամիավորումներից:

1895 թ. հոկտեմբեր ամսին Պարսկահայաստանից Վան անցան վրիժառուների նոր ջոկատներ: Դրանց մեջ հայտնի էին ***Ներսեսի*** (Գ. Պեոզիկյան), ***Վազգենի*** (Տ. Տերոյան), ***Նիկոլի*** (Ն. Տեր-Հակոբյան) գլխավորած զինված խմբերը, որոնք նոր ոգևորություն առաջացրեցին Վասպուրականի հայության շրջաններում[1]: Նույնիսկ ստեղծվեց ***ինքնապաշտպանության,*** կարդում եք, այո՛, ***ինքնապաշտպանության խորհուրդ***, որի ղեկավարությունը հանձնվեց ***Մկրտիչ Ավետիսյանին*** (Թերլեմեզյանին): Խորհրդի անդամներ դարձան ***Մարտիկը*** (Մարտիրոս Սարուխանյան), ***Պետոն*** (Ալեքսանդր Պետրոսյան)[2]:

Կամավոր մահապարտներ դարձած Վանի ինքնապաշտպանության ղեկավարները 1896 թ. մայիսի 31-ին վերջին ժողովն անցկացրեցին Այգեստան թաղամասում, լսեցին Չեյթունից, Սասունից վերադարձած բանագնացներին և որոշեցին, ***թուրքերի հարձակման դեպքում դիմագրավել, կռվել մինչև վերջին մարդը:*** Այստեղ ևս հնչեց ***«Մա՛ հ կամ ազատությո՛ւն»*** կարգախոսը: Ինքնապաշտպանները ցուցակագրեցին 560 երիտասարդների (այդքան հրացան ունեին), նրանց զինեցին, բաժանեցին խմբերի և տեղավորեցին թուրքական թաղամասերին սահմանակից տների վերին հարկամասերում: Ստեղծվեցին հարձակվողներին դեմ հանդիման կանգնած դիրք–պատնեշներ:

Կազմավորվեցին երեսունից ավելի նման դիրքեր: Պաշտպանական միջոցառումներ ձեռնարկվեցին գրեթե բոլոր բնակարաններում, բակերում և պարտեզներում: Դիրքերի միջև ստեղծված էր հաղորդակցություն: Հրազեն ունեցողներից զատ, բոլորը զինվել էին ով ինչով կարող էր: Ինքնապաշտպանության առաջին շարքերում համարձակ կռվում էին նաև կանայք: Հայ մարտիկներից շատերը, հատկապես դիրքապահ ջոկատների հրամանատարները և մյուս ղեկավարները, կրում էին հատուկ համազգեստներ և կարմիր խաչերով մորթե գլխարկներ: Մի շարք թաղամասերում թշնամու հեծելազորի առաջխաղացումը կասեցնելու և ընդհանրապես հարձակվող զորամասերի համար դժվարություններ ստեղծելու նպատակով կտրել ու ցած էին գցել Այգեստանի փողոցները երիզող հսկա ուռենիները, ինչպես նաև փակել էին առուների հուները և թաղամիջյան բոլոր ճանապարհները ողողել ջրով[3]:

---

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 261-262:

[2] ***Հ. Երամյան,*** Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. I, Ալեքսանդրիա, 1929, էջ 344:

[3] ***Հրաչյա Աճառյան,*** Տաճկահայոց հարցի պատմությունը, Նոր Նախիջևան, 1915, էջ 39-40: Տես նաև «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 263:

Քաղաքը բաժանվեց ինքնապաշտպանական չորս մասի, որոնց պետք է ղեկավարեին Հմայակ Թանկարազյանը, Արմենակ Եկարյանը, Գարեգին Բաղշեցյանը և Բաղդասարը, իսկ սրանց ղեկավարում էր մի խորհուրդ՝ Մ. Ավետիսյանի գլխավորությամբ: Մ. Ավետիսյանի մոտ հավաքվեցին հնչակյան Մարտիկն ու դաշնակցական Պետոն, և սկսվեց ինքնապաշտպանական մտահղացումների կոնկրետ իրականացումը: Քաղաքի վերը նշված թաղերում ստեղծվեցին 10 դիրքեր: Պարզվեց, որ արմենականները ունեին 370, դաշնակները 42 և հնչակյանները՝ 30 հրացան, կար նաև յոթանասունվեց հարվածանի[1]: Ահա այսպիսի փոքրաթիվ զենքերով նրանք կռվի դուրս եկան մինչև ատամները զինված թուրքական կանոնավոր զորքերի և քրդական «համիդիեների» դեմ, որոնք ունեին զենքի և փամփուշտների ահռելի պաշար:

Ընդհանրապես Վասպուրականի, մասնավորապես Վանի հայության ջարդը կազմակերպեց Համիդ մարդասպանի օգնական, Կ. Պոլսից այդ նպատակով երկրամաս գործուղված ***Ֆերիկ Սաադէդդին*** փաշան: Արյունախում այդ գազանը կոտորածն իրականացնելիս օգնականներ ուներ վիլայեթի ***վալի Նազըմ***, և քաղաքում նստած թուրքական զորքերի հրամանատարներ ***Մուստաֆա*** և ***Հալըմ*** փաշաներին[2]: Մինչև ատամները գերմանական զենքերով զինված, արշավող թուրք ասկյարների թիվը հասցվում է մինչև ***40 հազարի***: Նրանք ունեին նաև կրուպ տիպի երկու թնդանոթ[3]:

Վասպուրականի հայության համար սակայն, ահավորն ու անտանելին, դաժանն ու առավել բարբարոսականը քրդական «համիդիեներն» էին, որոնք հետևից գցած քուրդ ու թուրք ավարածարավ խուժանին, փոխադրական միջոցներով կանգնած էին քաղաքի դարպասների մոտ, որպեսզի կարողանան կողոպտել ու տանել «առասպելական հարստության տեր» քրիստոնյաների ունեցվածքը[4]:

Բազմաբնույթ սկզբնաղբյուրները, հատկապես ռուսական դիվանագետները (հյուպատոսը Վանում) քրդական հեծելազորայինների թիվը հաշվում են ***15 հազար***, որոնք գավառները թալանելուց հետո եկել նստել էին քաղաքի դարպասների մոտ[5]:

Վասպուրականի նահանգում հայկական ջարդերն սկսվել էին դեռևս 1895 թվականի վերջերին: 1896 թ. սկզբներին քրդական ուժերը շարունակեցին Սպարկերտ և Խիզան գավառների հայկական գյուղերի թալանը և բնակիչների կոտորածը. միայն Սպարկերտում սպանեցին 225, իսկ Խիզանում 96 հոգի[6]: Թալանից և սպանություններից զերծ չմնացին նաև Սարայի ասորական գյուղերը, որտեղ թուրքական ուժերն ավերեցին 12 գյուղեր, «կանանց բռնաբարեցին, ոչխար, տավար, ցորեն ամեն բան սրբեցին ի բաց առյալ մի քանի գյուղեր, որ դիմադրության պատճառով թալանը կիսով չափ եղավ»[7]:

1895 թ. վերջերին և 1896 թ. սկզբներին Վանի նահանգի Ձախող, Ծողտու, Տապ, Խրոտենց, Միջկանց, Մուլք-Գիճի, Արգինց և Հախտ գյուղերի բնակիչներին սպառնալիքի տակ ստիպեցին ընդունել մահմեդական կրոնը: Շատ չանցած նույն բանն արվեց նաև Փայխներ, Նարեկ, Վերին Սարին, Շադոսեն, Վարենց, Փիշավկանք, Պատականց, Դելոզ, Սմբոն, Ուղուց, Բիկանց և այլ գյուղերի բնակիչների նկատմամբ: Սորբ գյուղում ջարդարարները անդամահատեցին Պետրոս վարդապետին: Հափշտակվե-

---

[1] «Պայքար» (ԱՄՆ), 1957, հունիս: Տե՛ս նաև *Հ. Մ. Պողոսյան*, նշված աշխատությունը, էջ 270:

[2] Վրաստանի ՊԿՊԱ, ֆ. 480, ցուցակ 1, գործ 1179, թերթ 52:

[3] Նույն տեղում, թերթ 53-54:

[4] **АВПРИ**, Посольство в Константинополе, дело 3181, л. 163.

[5] **АВПРИ**, Политархив, дело 3445, лл. 3-5.

[6] Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիա, պատմության ինստիտուտի արխիվ, ***Լեոյի ֆոնդ***, ցուցակ 1, գործ 144, թերթ 14: Տե՛ս նաև *Հ. Մ. Պողոսյան*, նշված աշխատությունը, էջ 260:

[7] «Դրոշակ», N 14, 1896, 1 հունիսի:

ցին և առևանգվեցին զգալի թվով կանայք և աղջիկներ: Հայոց ծորից քալանվեցին 25 գյուղեր, սպանվեցին 19 հոգի, իսկ Կարճկանից 27 գյուղեր և սպանվեցին 11 հոգի: Թուրքական կառավարությունը ավելի ու ավելի թշնամական էր դարձնում հայ-քրդական, առանց այն էլ սրված հարաբերությունները: Երկու հարևան ժողովուրդների միջև տիրող թշնամությունը ծեռնտու էր թուրքական կառավարությանը: Սուլթանը ոչ միայն չէր մտածում այն բարելավելու մասին, այլև շահագրգռված էր պաշտպանել և ավելի խորացնել երկու ժողովուրդների միջև եղած թշնամանքը նաև ապագայում[1]:

Թուրք ջարդարարները Վասպուրականի գյուղական բնակչության հետ «հաշիվներ մաքրելուց» հետո «վերջապես», ծեռնամուխ եղան ***Վանի կոտորածին:*** 1896 թ. մայիսի 29-ից 31-ը քաղաքի թուրքական թաղամասերից նրանք սկսեցին կրակահերթեր տեղալ քաղաքի հայ բնակչության գլխին: Հայ ինքնապաշտպանները լուրեր քաղեցին, որ շրջապատում նստած քուրդ ցեղապետները հրաման են ստացել սկսել քաղաքում հավաքված (գյուղերից փախչելով, հրաշքով փրկվածները, լցվել էին քաղաք) քրիստոնյա ազգաբնակչության կոտորածը:

1896 թ. հունիսի 2-ին թուրք ոստիկանները, զենք և զինամթերք թաքցնելու «մեղադրանքով» խուզարկում են ուսուցչուհի ***Զարուհի Տոնոյանի*** բնակարանը: Չնայած այնտեղից ոչինչ չհայտնաբերեցին, այնուամենայնիվ, նրան և մորը բանտարկեցին: Ծայր առան զանգվածային բանտարկություններ, իսկ կալանավորներին քաղաքից դուրս հանելով տեղնուտեղը տանջամահ էին անում[2]:

1896 թ. հունիսի 3-ի վաղ առավոտյան մոլլաները, սպիտակ չալմա կապած, մզկիթներից ***գազավաթի*** կոչ էին անում արյունախում իսլամապաշտներին: Նրանք և հատկապես քուրդ շեյխերը, արհեստականորեն գրգռում էին առանց այդ էլ գրգռված, հայերի «արյան կարոտ», կազմ ու պատրաստ կանգնած քուրդ ու թուրք ջարդարարներին: Մթնոլորտը շիկացած էր, և ընդհարումն սկսվեց նույն օրվա ժամը 4-ին, երբ մզկիթներում վաղօրոք կուտակված ամբոխը հանկարծակի դուրս թափվեց թաքստոցներից և սկսեց անզեն բնակչության կոտորածը:

Առաջին իսկ ժամերին Հայկավանի, Թորոմանի, Կլոր Դարի, Հակոբի և Շանոյի Դարի թաղամասերի հայությունը ամբողջովին ոչնչացվեց բարբարոսական եղանակներով: Հայասպանները չխնայեցին նույնիսկ կանանց և երեխաներին: Նրանց ջարդեցին «կացիններով, փայտերով, սրերով և խանչալներով, շատերին էլ ողջ-ողջ վառվող թոնիրներ ձգելով»[3]: Առաջին օրվա սպանված հայերի թիվը ռուս դիվանագիտության աշխատողները հաշվում են շուրջ 800 հոգի, որոնց ունեցվածքը «***մինչև վերջին մեխը քալանելուց հետո» տները հրդեհեցին***[4]: ***Նրանց դաժան դատաստանից չէին ազատվում նույնիսկ «խեճքերն, ապուշներն, կույրերը, խուլ-համրերը, անդամալույծներն, հիվանդներն ու հարյուրավոր ծերունիները»***[5]:

Թուրքերի կողմից խոցելի կետեր էին համարվում Արարոց թաղի և Նախրի ու Փաշի փողոցների այն հատվածները, որոնք արևմտյան երեսով սահմանակից էին թուրքաբնակ շինություններին: Այդ ի նկատի ունենալով, ինքնապաշտպանները, վաղօ-

---

[1] *Հ. Մ. Պողոսյան*, նշված աշխատությունը, էջ 261: Տե՛ս նաև «Արարատ», 1896, փետրվար, N 2, էջ 88-89, N 5, էջ 247: ***В. Т. Маевский,*** стр. 189-190.

[2] *Ծ. Պ. Աղայան*, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, էջ 151: Տե՛ս նաև «Братская помощь пострадавшим в Турции армянам», Москва, 1897, стр. 120. ***Е. К. Саркисян,*** նշված աշխատությունը, էջ 137:

[3] *Արսեն Կեօրկիզյան*, Վասպուրականի հերոսամարտը, 1915, ապրիլի 7 – 1915 մայիսի 7, Պեյրութ, 1965, էջ 25: Տե՛ս նաև *Հ. Մ. Պողոսյան*, նշված աշխատությունը, էջ 268-271:

[4] **АВПРИ,** Посольство в Константинополе, дело 3185, 1896 г., л. 197-198.

[5] «Արաքս», գիրք Բ, 1894-1895, Ս. Պետերբուրգ, 1897, էջ 107:

րոք այստեղ հաստատել էին վեց դիրքեր և կռվում, դիմադրում էին առյուծի ուժով, «վագրի համարձակությամբ»: Հայոց հազարամյակների պատմության ոսկյա մատյանում հերոսական բազում ու բազում էպոպեաներ արծանագրած քաջ վասպուրականցին, այսօր էլ տոգորված ազատության վեհ գաղափարներով, մարտի էր նետվում աներևակայելի հերոսությամբ, կռվում երգը շուրթերին, մեռնում՝ երգը շուրթերին: Նրանք կռվի ժամանակ կրակում էին ու միաժամանակ բարձրաձայն երգում *«Կռվեցե՛ք, տղերք, կռվեցե՛ք քաջ-քաջ, թշնամուն չթողնեք, որ շարժվի առաջ»*[1]: Պայքարի այս աներևակայելի ծնև ավելի զարմանք ու սարսափ էր պատճառում թշնամուն, քան թե նրա գերմանական հրանոթները, որոնք քարուքանդ էին անում խիտ բնակեցված քաղաքը:

Հերոսականորեն դիմագրավող քաջամարտիկ հայ պաշտպանների առաջ թշնամին սկսեց ընկրկել և պատրաստվում էր նահանջել, երբ հանկարծ անասնական գոռում-գոչումով, Շատախում ջարդերն ավարտած, մեծաթիվ զորքերի գլուխն անցած, քաղաք ներխուժեց *Շաքիր աղան*:

Առավոտ էր: Վարագա սրբազան լեռան թիկունքից դանդաղորեն սկսեց բարձրանալ հայոց արևը, որն այդ օրը կարմիր էր, արյունաներկ: Բնությունը կարծեք իմաստնացած՝ երկուստեք մարդկային մեծաքանակ զոհեր էր կանխատեսում: Այո՛, լուրջ ընդհարում տեղի ունեցավ Մանդակունյանց և Պուլունենց դիրքերի ուղղությամբ, զոհեր տվեց Շաքիր աղայի առաջատար զորքը, այնպես, որ կարծեք թե պատրաստվում էր փախուստի: Սակայն ոհմակապետը, դժվարությամբ, բայց կարողացավ վերաւկազմավորել խուճապահարների շարքերը և շարունակեց հարձակումը[2]:

Քաղաքի պաշտպանները ևս վերադիրքավորվում են, օգնություն ակնկալում կենտրոնից: Նրանց օգնության է շտապում գլխավոր հրամանատարի տեղակալ *Մուշեղն իր հարյուր կտրիճներով*: Ոգևորված դրանից՝ պաշտպանվողները դիրքերից դուրս եկան և Այեջօղլու դաշտում կատաղի հարձակման անցան: Հատկապես հերոսաբար էին կռվում *Մուշեղը, Վահեն, Քոչարը և Տիգրանը*: «Չորս կռվողների օրինակին հետևելով, 60 հոգի դաշտ կիջնեն և երեք ժամ տևող կատաղի կռիվը կվերջանա թուրքաց փախուստ տալով: Շաքիր կատաղած կհեռանա իր թույնը ուրիշ թաղերի վրա թափելու, սակայն այն տեղերում էլ նա հաջողություն չէր գտնում...»[3]: Թշնամին այդ մարտերում կորցրեց մոտ 150 հոգի:

Հունիսի 6-ին և 7-ին մարտերը երկուստեք կատաղի բնույթ ստացան *Հայկավանք* և հատկապես գեղատեսիլ ծառերով զարդարված (Մ. Խրիմյանն էր դրանք տնկել) *Այգեստան* թաղամասերում: Ինքնապաշտպանները ոչ միայն բարբարոսներին հարկադրեցին փոքր-ինչ նահանջել, այլև նրանց ծեռքից ծեռնամարտով խլեցին երկու թնդանոթները: Սա արդեն թուրքերի համար չափազանց էր և անհավատալի: Վանեցիների ոգևորությանը չափ չկար: Թնդանոթների գրավման ժամանակ հայ մարտիկներն իրար շնորհավորում էին ասելով. «*Օտարեն մեզ ծրագ չի կպչիր, մեր միակ և իրական հույսը մեր սեփական բազկի ուժն է*»[4]: Հունիսի 8-ը կռվի ամենաթեժ օրն էր, որը թուրքերին մտածել տվեց «նոր հնարների որոնման»:

Եըլդըզ Քյոշքում ծվարած, միշտ Համիդի փշրանքներով կերակրված *Սաադէդդին* փաշան (չար լեզուներն ասում են. թե նրա արյան մի շիթը հայկական էր) սովոր էր մեղկ ու փափուկ կյանքի, էժան հեղինակություն ծեռք գցելուն: Վասպուրական

---

[1] «Հայուն երգարան», Կ. Պոլիս, 1911, էջ 134-135:

[2] *Ծ. Պ. Աղայան*, նշված աշխատությունը, էջ 153: Տե՛ս նաև «Արաքս», գիրք Բ, էջ 108: *Հ. Գ. Վարդանյան*, նշված աշխատությունը, էջ 231-233:

[3] «Արաքս», գիրք Բ, էջ 113-114: Տե՛ս նաև «Պայքար» (ԱՄՆ), 1957, հունիս:

[4] «Հայրենիք» (Բոստոն), N 6, 1936, 3-ը հունիսի:

գալով՝ նա կարծում էր, թե բավական է մի երկու բռնամարտ և հայերը կենթարկվեն իրեն, և ինքը կշարունակի նրանց բնաջնջումը: Թուրք բորենին խորապես սխալվեց: Վասպուրականցի խիզախ երիտասարդությունը, ինչու չէ, նաև ողջ ժողովուրդը, ցուցաբերեց անօրինակ դիմադրողականություն, աներեր կամք, հանուն հայրենիքի մինչև վերջին շունչը կռվելու ու մեռնելու պատրաստակամություն:

Սաադէդդինը հարկադրված էր ժամանակավորապես զիջման գնալ: Նա քաղաքում նստած եվրոպացի հյուպատոսներից ապստամբների մոտ բանագնացներ ուղարկեց, նրանցից պահանջելով, որ եթե իրեն իբրև պատանդներ հանձնեն տասը մարտիկներ, ապա ինքը կդադարեցնի կոտորածը: Երկար վիճելուց հետո Մ. Ավետիսյանը համաձայնվում է այդ առաջարկի հետ պայմանով, որ օտարերկրյա հյուպատոսները «*գլխավորապես երաշխավորեին* և ապագա հետևանքին *պատասխանատու* իրենք ճանաչվեին»: Հանձնվելու առաջարկությունը Մ. Ավետիսյանը ընդունեց, գտնելով, որ եթե այդ 10 հոգին սպանվեն անգամ, քաղաքի և նրա շրջակայքի գյուղերի տասնյակ հազարավոր բնակիչներ կփրկվեն կոտորածից: Այդ կապակցությամբ հայրենասեր երիտասարդը ասաց, որ եթե «մեր անձնատուր լինելով կոտորածը կը դադրի, մենք գիտակցաբար մահը դիմագրավենք, այդ միևնույն ժողովրդի սիրուն համար»: Այնուհետև Մ. Ավետիսյանը ասել է. «Եթե մենք մեռնենք և ժողովուրդը ապրի, քիչ ժամանակեն մեզ պես շատ շատեր պիտի արտադրե դարձյալ, իսկ եթե մենք ապրինք ու ժողովուրդը մեռնի, մենք չենք կարող ժողովուրդ մը ստեղծել»[1]:

Մկրտիչ Ավետիսյանի (Թերլեմեզյանի) գլխավորած բանագնացները թուրքերի առաջարկին համաձայնվում են, այսինքն՝ պարտավորվում են դադարեցնել դիմադրությունը, եթե հյուպատոսների երաշխավորությամբ, պայմաններ ստեղծվեն *հազար հոգի՝ մարտիկները* անվնաս անցնեն սահմանը և տեղափոխվեն Պարսկաստան: Գործարքը կայացվում է: Թուրքերը հարկադրված թողնում են հայերին անցնել սկզբում Վարագ, ապա Պարսկաստան: Թուրքերն ու քրդերը ինքնապաշտպանների հեռացումից հետո ավերում են քաղաքի կանգուն մնացած տները, թալանում ժողովրդին մինչև վերջին ունեցածը: ***1896 թ. հունիսի 9-ին փաստորեն ավարտվում է Վասպուրականի հերոսամարտը, փակվում հայ ազատագրական շարժման փառահեղ էջերից մեկը:***

Որպեսզի Վանի բնակչության կրած կորուստների մասին պատկերն ամբողջական լինի, գիտական շրջանառության մեջ դնենք «Արարատի» ականատես թղթակցի ընդհանրացնող վկայությունից մի քանի հատվածներ (ընդարձակության համար ներողամտություն ենք հայցում ընթերցողից): Նա գրում է. «Հունիսի 3-ին, երբ սկսվեց քաղաքի կոտորածը, պաշտոնական հեռագրերն այդ մասին տեղեկացրին գավառական իշխանություններին, որոնք այդ պատճառով հրամայեցին սկսել ջարդը: Թեև Փոքր Ասիայում հաղորդակցության ճանապարհների փակման հետևանքով ընդհանրապես չի կարելի ճշգրիտ թվերով արտահայտել սպանվածների քանակը, այնուամենայնիվ, ըստ մեզ հասած պաշտոնական տեղեկությունների կարելի է ենթադրել, որ սպանվածների ընդհանուր քանակը ամբողջ վիլայեթում 20 000-ից պակաս չէ, իսկ ուրիշների կարծիքով էլ՝ 30 000-ից:

Ամենասարսափելի կոտորածը եղել է Արճեշում, Հայոց ձորում, Գավաշում և Կարճկանում: Առաջին երկուսում սպանվել է 1650 հոգի, իսկ մյուս երկուսում՝ 850: Արճեշի գավառի բոլոր գյուղերում համարյա ոչ մի բնակչություն չի մնացել: Նարեկ

[1] *Հ. Մ. Պողոսյան*, նշված աշխատությունը, էջ 270-271: Տես նաև «Հայրենիք» (Բոստոն), N 32 (370), 1906, 11 օգոստոսի: «Արձագանք», N 85, 1897, 27 օգոստոսի:

գյուղում սպանվել է 200 հոգի, իսկ Բալուում՝ դրանից էլ ավելի: Բոլոր այդ գյուղերից միայն տասն է փրկվել: Երկու ավազակ՝ Աբդուլ Համիդը և նրա եղբայր Աբդուլ Քաֆյուրը, սպանել են ավելի քան 200 հոգու:

Արճակ գյուղը անցյալ տարի ավերածության չենթարկվեց, այնտեղ կարգուկանոնը պահպանում էր զորքի 130-հոգանոց մի ջոկատ: Իսկ երբ կոտորածն սկսվեց ամբողջ մարզում, այդ ջոկատի պետը երդվեց հասարակության առաջ, որ թույլ չի տա նրանց մոտ մտնեն թալանչիները: Բայց դա լոկ խաբեություն էր: Շուտով հենց ինքն է թալանի մատնում գյուղը, և նրան օգնության է գալիս մի ուրիշ՝ ավելի մեծ ջոկատ: Այստեղ սպանվել է 200 հոգի, 60-65 ջահել կանայք ու աղջիկներ անպատվված են: Մի քանիսը փախչում են քրդական Մեզրե գյուղը և այնտեղ իսլամ ընդունում, որպեսզի փրկվեն անխուսափելի մահից:

Վերոհիշյալ գավառներում, բացի մեծ թվով սպանվածներից, շատ են եղել նաև իսլամ ընդունածները: Իսլամ ընդունելու պատճառը այն հանգամանքն էր, որ շատ մարզեր չունեին այնպիսի բնական ապաստարաններ, որտեղ հնարավոր լիներ թաքնվել, որի հետևանքով շատերն ուղիղ փախչում էին մեչիդ, շեյխերի, մոլլաների, դերվիշների տները, որոնք մահվան սպառնալիքի տակ բռնի իսլամ էին ընդունել տալիս նրանց: Շատ են եղել նաև այնպիսի քուրդ բեգեր, որոնք փրկել են շատ հայերի: Մահմուդ զադե Բեյտուլլահ բեյը, որն աչքի էր ընկնում մարդկայնությամբ ու մարդասիրությամբ, կոտորածից պաշտպանել է ամբողջ Մոկսի գավառը:

Եղել են և զինյալ ջոկատներով հապճեպ կազմակերպված ինքնապաշտպանության շատ օրինակներ, չնայած դրան ոչ մի տեղ նրանց չի վիճակվել մինչև վերջ պաշտպանել իրենց անվտանգությունը: Ասրաֆ գյուղը անցյալ կոտորածին պաշտպանել էր իրեն, այժմ միանգամայն ոչնչացված է: Ոչ պակաս քաջաբար պաշտպանվել է նաև Բանոն գյուղը, բայց ի վերջո ընկել է էմին փաշայի գազանություններից: Գենդոտն գյուղը զոհն է դարձել համիդիեների խաբեության, որոնք կյանքի ապահովության դիմաց հայերից պահանջել են հանձնել զենքերը: Բնակիչները հավատացել են և գլխովին կոտորվել:

Ամենից շատ տուժել է Շատախի գավառի Շահ մեծ գյուղը... Ընդհանրապես գյուղերում, բնակչության նոսրության, միջոցների ու զենքերի բացակայության պատճառով ավելի շատ զոհեր են եղել, քան քաղաքներում: Կոտորածներն էլ սարսափելի բարբարոսական բնույթ են կրել: Այսպես, օրինակ Արճեշի քահանային կապել են *վայրի ծիու պոչից*, իսկ Գանձակ գյուղում ոմն Ալի բեկ և Նադիր օղլին մոտ 20 երեխաների ու 10 պառավների նետել են խոր փոսի մեջ, որտեղ այդ դժբախտներին քարկոծել են այնքան, մինչև փոսը լցվել է քարերով, և երկու օր անց էլ դեռ լսելի են եղել նրանց հեծեծանքի ձայները: Բուն Վանում կանանց ու երեխաներին խնայել են: Այլ կերպ է եղել գյուղերում, այստեղ չեն տարբերել ո՛չ սեռ, ո՛չ տարիք: Եթե կենդանի էին մնում կանայք և նույնիսկ երեխաներ, ապա նրանց էլ պատվազրկում էին: Որպեսզի այդ անարգանքից խուսափեին, քաղաք փախչող կանանցից շատերը սափրում էին գլուխները, հոնքերը, երեսներին ցեխ էին քսում: Շատ գյուղեր կրկնակի, եռակի, նույնիսկ քառակի ավերածության են ենթարկվել, այնպես, որ այնտեղ ոչինչ չեն թողել, նույնիսկ դռների ու լուսամուտների շրջանակներն են հանել տարել:

Հայերից նրանք, ովքեր այս կամ այն նկատառումով փրկություն են որոնել՝ փախչելով մահմեդականների մոտ, կրոնափոխ են արվել: Այդպիսի շատերը կան Արճեշի, Արծկեի, Գավաշի, Կարճկանի, Խոշաբի և այլ գյուղերի բնակիչներից: Հայտնի է, որ դեռևս անցյալ կոտորածի ժամանակ Խիզանի, Սպարկերտի, Կարկարի, Մամրտանի իսլամ ընդունած բնակիչները արդեն ութ ամիս է չարչարվում են,

որ նորից քրիստոնեություն ընդունեն, բայց կառավարությունը ձգձգում է: Վանի վիլայեթում մահմեդականացվածների թիվը հասնում է մոտ 30000-ի: Այժմ նրանք ի նշան իսլամ ընդունած լինելու գլխներին սպիտակ չալմա են կապում, իսկ գոտիներից՝ դաշույն:

Բացի նյութական կորուստներից, որ հասցված են շատ վանքերի, ոչնչացված են բազում հնություններ եկեղեցական հին սպասք, շատ ու շատ հազվագյուտ ձեռագրեր և այլն»[1]:

1895–1896 թվականների հայկական կոտորածների ժամանակ սուլթանական բռնապետությունը, քուրդ «համիդիեները», բնաջնջելով հայ գյուղացիությանը, արտաքսելով սեփական հայրենիքից, նրա շեն ու բարգավաճ քաղաքները վերածում էին «բուերի երկրի», տնտեսությունը զարգացման մակարդակով ետ շպրտում կես հազարամյակով: Թուրքիայի կիրառած ցեղասպանության քաղաքականությունը, նրա ծանր հետևանքները երկիրը հասցրին տնտեսական ու քաղաքական խոր ճգնաժամի[2]:

[1] "Братская помощь пострадавшим в Турции армянам". Москва, 1897, стр. 120, 122-124. Տես նաև «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 154-156:

[2] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 277:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XIXդ. ՎԵՐՋԻՆ – XXդ. առաջին քառորդում

ՄԱՍՇՏԱԲ 1:4 400 000



Ստորագրվել է տպագրության 01.12. 1988թ.

ГЕНОЦИД АРМЯНСКОГО НАРОДА 1890-1922гг.



Автор карты Г.М. КАЗАРЯН
Редактор Л.А. БАРСЕГЯН

Цифрами на карте обозначены:

1 Дпреванк
2 Армаш
3 Патриаршие покои
4 Аяс
5 Мамура
6 Испахие
7 Александретта
8 Райо
9 Азаз
10 Фрнуз
11 Ярпуз
12 Чемишгезек
13 Капан-Маден
14 Св. Геворг
15 Св. Агарон
16 Св. Карапет
17 Св. Аракелоц
18 Св. Нарек
19 Ахтамар
20 Св. Огвоц
21Св. Бардугимеос
22 Мецотаванк
23 Каракесе

МАСШТАБ 1 : 3 500 000

35 0 35 70 105 140 175км

Армянские вилайеты:

1 Трапезундский
2 Сивасский
3 Эрзерумский
4 Харбердский
5 Диарбекирский
6 Битлисский
7 Ванский

Карту составил Г.Г. САРКИСЯН

Գլուխ երկրորդ

Ցեղասպանության դատապարտման իրավագիտական հիմնավորումները. 90-ականների հայկական ջարդերն արմենոցիդի առաջին շրջափուլն էին

Ծառայել Հայաստանին նշանակում է ծառայել քաղաքակրթությանը:

ՎԻԼՅԱՄ ՅՈՒԱՐՏ ԳԼԱԴՍՏՈՆ

1. Միջազգային օրենքները ցեղասպանության դատապարտման վերաբերյալ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ մասին ընդհանրապես, Հայոց ցեղասպանության պատմության վերաբերյալ հատկապես, նրա իրավագիտական դատապարտման վերաբերյալ իրավաբանների, փիլիսոփաների, առանձնապես պատմաբանների գրչով ստեղծվել է *ծավալուն* գրականություն: Հատկանշականն այն է, որ խնդրին վերաբերող փոքր ու մեծ ծավալի աշխատությունները լույս աշխարհ են եկել և Հայրենիքում, և Հայկական Սփյուռքում, թե՛ հայոց և թե օտար լեզուներով[1]: Այս գործում նշանակալից են Հայաստանի Ազգային ակադեմիայի ցեղասպանության թանգարան-ինստիտուտի թափած ջանքերը[2]:

Հայոց ցեղասպանությունը – գենոցիդը XIX դարավերջի և XX հարյուրամյակի առաջին երկու տասնամյակներին ծավալված և խորությամբ ու լայնությամբ նմանատիպը չունեցող ողբերգություն էր, որն իրավամբ համաշխարհային պատմության

[1] Այդ մասին գրված աշխատություններից հիշատակենք մի քանիսը: «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», հրատարակություն «Ձարթոնք» օրաթերթի, Պեյրութ, 1965, էջ 1098-1109: ***Շավարշ Թորիկյան,*** Հայկական հարցը և միջազգային օրենքը, Պեյրութ, 1976: ***Մ. Արզումանյան,*** Հայաստանը 1914-1917, Երևան, 1969, էջ 644-670: ***Ա. Ի. Պոլտորակ,*** Նյութեր Երգյան վերջաբան, Երևան, 1968: ***Дж. С. Киракосян,*** Младотурки перед судом истории, Ереван, 1986. ***Ազատ Համբարյան, Ստեփան Ստեփանյան,*** Հայոց ցեղասպանությունը, Երևան, 1995: ***Ծ. Պ. Աղայան,*** Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 496-500: ***Ю. Г. Барсегов,*** Геноцид армян-преступление по международному праву, Москва, 2000.

[2] ***И. А. Арабян,*** Геноцид и его наказуемость, Ереван, 1999. ***Արսեն Ավագյան,*** Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений, Ереван, 1999. ***Յուրի Բարսեղով,*** Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Երևան, 1999:

էջերը մտավ ***Մեծ եղեռն, Մեծ ոճիր, Հայասպանություն, Հայկական տասնհինգ, Ողջակիզում, Հայկական ջարդեր*** և նույնանման այլ բնորոշումներով: Այդ բոլորով հանդերձ մենք մնում ենք մի ազգ, մի ժողովուրդ, պատմության ետնախորքից, ***մարդկության արշալույսից*** եկած, հաճախակի մահվան ընդառաջ գնալով, ***մահը տորոտել ենք կյանքով,*** դրա համար էլ մեզ հետ գոյատևումի եկած ժողովուրդների մեծ մասն անհետացան ասպարեզից, իսկ մենք մնացինք, դիմացանք և այսօր ոչ միայն հարատևում ենք, այլև ունենք ***անկախ Հայաստան պետականությունը:***

Դժբախտությունն այն է, որ մարդկության հազարամյակների պատմության էջերը կարմիր են ներկված այն անհամար արյունով թափված հին աշխարհից սկսած, այսօրվա նոր դարաշրջանով եզերված: Եղել են նաև անթիվ պատերազմներ, հեղվել է մարդկային ծովածավալ արյուն, և ինչքան ժամանակները նոսրանում են, այնքան պատերազմները թեժանում են, նույնիսկ երկու անգամ վերածվում աշխարհամարտերի:

«Քաղաքակրթություն կոչված մարդկային ծեռակերտի պատմության գրեթե բոլոր էջերեն արյուն կկաթկթի դժբախտաբար, – գրում է Գերսամ Ահարոնյանը: – Բոլոր ցամաքամասերուն վրա և բոլոր դարերուն, աշխարհակալներ, թե տիտղոսավոր ավազակներ «թշնամի» ջարդած են հազարներով, հարյուր հազարներով, միլիոններով վասն փառքի, կողոպուտի ու տիրակալության: Եվ այս տեսակետով իրարու ըսելիք չունին պատմության մեջ «մեծ» որականունին արժանացած պետությունները»[1]:

Անժխտելի է նաև, որ պատերազմների ժամանակ երկուստեք թափած արյունը տարբերվում են զանգվածային այն ջարդերից, որոնք կիրառվել են մեծերի կողմից փոքրերի նկատմամբ, ունեն պայքարի անհավասար սկզբունքներ և իրավամբ ստանում են ***գենոցիդ*** անվանում:

Դժբախտաբար ցեղասպանությունը, իբրև ոճիր կամ զանգվածային ջարդ հատուկ է եղել ծերացած Եվրոպային տարածքներ զավթելու, աշխարհակալության հասնելու, նորանոր տիտղոսներ ծեռք բերելու և այլ պատճառներով, որոնց զոհ են գնացել անթիվ ժողովուրդներ, ցեղային միություններ, զորավար անհատներ: Հանրահայտ է Հռոմեական կայսրության ավերիչ ծեռքերով գեղեցիկ ***Կարթագենի*** հիմնահատակ կործանումը (146 թ. մ. թ. ա.): Վաղուց էին պատմության բեմահարթակից անհետացել հին աշխարհի հզորագույն տերությունները Ասորեստանն ու Բաբելոնը:

XIII հարյուրամյակում բռնկվեց ***ալբիգոյացիների*** պատերազմը, որին զոհ գնաց 60 հազար մարդ: Համաշխարհային պատմության սև էջերից է ***Բարդուղիմեոսյան գիշերը,*** երբ մոլեռանդ կաթոլիկները մի քանի ժամում մորթեցին 30 հազար ***հուգենոտների:*** Եվրոպայի պատմության սև էջերից էր ***իսպանական ինկվիզիցիան:*** Այնտեղ ոչնչացվեց 8 հազար «հերետիկոս»: Թերևս ամենազանգվածային կոտորածներն ու տեղահանությունն արեցին ***Ֆերդինանդն*** ու ***Իզաբելան:*** Նրանք ջարդեցին, ապա մնացածին տեղահանեցին. ընդամենը 160 հազար հրեա[2]:

Վերջիններիս հաջորդել կամ զուգահեռաբար կազմակերպվել են ավելի մարդաշատ ջարդեր: Մոնղոլական տափաստաններից սկսելով իր արշավանքները, ***Թեմուչինը*** (1206 թ. ***Չինգիզ խանը***) վայրենաբարո և բիրտ զորականներով մտավ Չինաստան և կարճ ժամանակահատվածում ոչնչացրեց շուրջ 5 միլիոն խաղաղ, անպաշտպան չինացիների, ամայի անապատների վերածեց բազմաթիվ նահանգներ:

---

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», ***Գերսամ Ահարոնյան,*** Թուրքական ցեղասպանությունը և հայ ժողովրդի հատուցման իրավունքը (աշխատության 1098-րդ էջը):

[2] ***Ծ. Պ. Աղայան,*** նշված աշխատությունը, էջ 496:

Լենկ-Թեմուրը ավերածություններով, դաժանությամբ ձգտեց գերազանցել իր ջարդարար նախորդներին: Նա Առաջավոր Ասիայում բազում քաղաքներ կործանեց, հարյուր հազարավոր շինարար ձեռքեր անդամահատեց: Միայն Բաղդադի մեջ 100 հազար մարդ գլխատեց և նրանց գլուխներից բուրգեր կառուցեց: Եվ այսպես կարելի է օրինակները կրկնապատկել, եռապատկել: Պարզվում է, որ մարդը մարդու բարեկամն է հանրահայտ ասույթը այնքան էլ ճիշտ չէ: Երբեմն մարդը մարդու համար գայլի օրենքով է առաջնորդվել և մարդկության պատմության գերակշռող էջերը գրված են սեփական արյունով[1]:

«Այդ քստմնելի, ահազդեցիկ մարդկային տրամային մեջ,– գրում է Գերսամ Ահարոնյանը,– եղած են ցեղեր կամ ազգեր սակայն, որոնց միակ ***«առաքելությունը»*** եղած է կարծեք ոճիր գործել, քանդել, ավերել, թալանել: Մինչ սպանացիք կամ անգլիացիք... սպանելեն ետք սկսած են շինել ու քաղաքակրթություն կերտել, անդին եղած են սակավաթիվ ցեղեր, որոնք միայն հրկիզած են ու բնաջնջած և հետո ոչինչ ստեղծած են, ոչինչ կերտած:

Ահա այդ վերջին տեսակի ցեղերուն ցանկին գլուխը գրված է թուրք: Ցեղ մը, որուն գլխավոր մասնագիտությունը եղած է ցեղասպանությունը, որուն գլխավոր «շնորհքը» եղած է քանդումը: Անիկա «մարդը մարդու դեմ գայլ» չէ եղած, այլ՝ «գայլ՝ մարդու դեմ գայլ եղած է, – գիշատիչ գայլերու ոհմակ պարզապես ու տևապես:

Եվ իզուր չէ, որ թուրքը իբրև ցեղային խորհրդանիշ նախընտրած և որդեգրած է Գորշ գայլը (պոզ քուրթ)» (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[2]:

Ակամայից կարծեք թե զայրույթ, մի քիչ էլ վիրավորանքի երանգ կա եղեռնից մազապուրծ, ընտանիքի վերջին շառավիղներից մեկի սփյուռքահայ տաղանդավոր հրապարակախոսի («Զարթոնք» թերթի գլխավոր խմբագիրն էր) վերոհիշյալ տողերի մեջ: Բայց չէ՞ որ այդպես է իրողությունը: Ապացույցներից բերենք միայն մեկը. *երեկ,* այսինքն *1995 թ.* թուրք ***«դեմոկրատական մտավորական» Դուրու Աբդուլկադիրը*** հրապարակեց հետևյալ տողերը. ***«Ոչ թուրքերը – կամա, թե ակամա հանդիսանում են թուրքերի թշնամիները,*** – գրում է նա, – ***քանզի նրանք չունեն մեր ազնվաբարո, վեհանձն գծերը»***[3]: Ստացվում է այնպես, որ աշխարհի քրիստոնյա բոլոր ժողովուրդները, ինչպես նաև մահմեդապաշտ, ոչ թուրք մյուս ժողովուրդները ևս, քանի որ չունեն թուրքերի «ազնվաբարո և վեհանձն» գծերը, հետևաբար, նրանք բոլորը թուրքերի թշնամիներն են:

Թուրքական ցեղապաշտությունն այսօր ևս շնչում է Բոսֆորի ափերին, քանի որ քրդերի և ոչ թուրք հպատակ այլ ժողովուրդների ցեղասպանությունը շարունակվում է օրը ցերեկով, առանց արգելքի:

Թուրքերը, այո, գրեթե ողջ ազգը և ոչ թե միայն կառավարող շրջանները, հայերից և քրդերից զատ, գուցե և ավելին, թունոտ ատելությամբ են լցված ***Ռուսաստանի, ռուս ժողովրդի,*** ընդհանրապես սլավոնական ցեղակրոնական միավորման դեմ: ***Յուքսել Օսման Սերչենգեշտին*** «Ենի Իսթանբուլում» (Նոր Իսթանբուլում) (2.IX.1967) զետեղած պանթուրքիստական թույնով ներծծված հոդվածում ոչ միայն պահանջում է օսմանյան լայնածավալ կայսրության վերակենդանացումը, այլև նախկին ԽՍՀՄ իսլամապաշտ երկրներից «ռուսներին դուրս վռնդելը»: Նա

---

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1098:

[2] Նույն տեղում, էջ 1098-1099: Տե՛ս նաև ***Лорд Кинросс,*** Расцвет и упадок османской империи, Москва. Перевод с английского, часть первая, Заря империи, 1999, стр. 31-51:

[3] "Турция между Европой и Азией", итоги европизации на исходе XX века, Москва, 2001, стр. 34. Տե՛ս նաև ***Duru Abdulkadir,*** Türk Kimdir, Ýstanbul, 1995, p. 79:

գրում է. *«Ռուսները պետք է հեռանան թուրքական երկրներից՝ Կովկասից, Թուրքմենիայից, Ղազախստանից, Ադրբեջանից, Ուզբեկստանից, Յակուտիայից... Կովկասը և Ադրբեջանը պետք է Թուրքիային թողնել»*[1]: Ճիշտ է բնութագրում պատմաբանը. «Լինելով *բրդոտ ռասիստ, նա լկտիաբար քարոզում էր «Անատոլիայի ամեն մի անկյունում բնակվող իսլամ թուրքը... ռուսից ավելի քաղաքավարի է, ավելի մարդկային»*[2]:

Հետևաբար արդարամիտ է Գերսամ Ահարոնյանի բնութագրությունը *ցեղասպան* թուրքերի, ինչպես երիտթուրքերի գենոցիդ կիրառելու տարիներին, այնպես էլ այսօրվա «քաղաքավարի թուրքերի» մասին: Պարզվում է, որ թուրքերը մտածելակերպով, զավթողական նկրտումներով, քրիստոնեատյացությամբ, հոգեբանությամբ մնացել են նույնը, ինչպես եղել էին իրենց զավթումները սկսելուց ի վեր: Գուցե փոխվել են արտաքին որոշ տվյալները, որոշ քաղաքաբնակների հագուստի ձևերը, այդուհանդերձ թուրքը մնացել է նույնը՝ *դաժան* և *ցեղասպան:*

Թուրք բարբարոսների գործած չարիքների անպատիժ մնալը, անցյալ դարասկզբի *ցեղասպանությունը* հավուր պատշաճի չդատապարտելը, թերևս պատճառներից մեկը դարձան, որպեսզի *հիտլերյան ֆաշիզմը* կրկներ գենոցիդը հրեաների, լեհերի, ռուսների և *սլավոնական* այլ ազգերի նկատմամբ: Բուհենվալդի և Մայդանեկի համակենտրոնացման ճամբարները կարծեք թե կառուցել էին այն թուրքերն ու գերմանացիները, որոնք 1915 թ. հսկում էին **Դեր Զորի** հայասպան «կենտրոնակայանները»: Քիչ թե շատ բանական մարդ արարածը, այլևս չէր կարող դիմանալ սահմռկեցուցիչ այն արարողությանը, երբ տեսնում էր 100 հազարավոր 3-5 տարեկան հասակի, սպանվելուց հետո վառարանում այրված, երեխաների կոշիկները: *Դրանք Միջագետքում չէին, այլ Արևմտյան Եվրոպայի սրտում:*

Ինչպես ինձ, այնպես էլ այդ ճամբարները տեսնող քաղաքակիրթ մարդկանց վրա, ցնցող նման տպավորությունները տարան դեպի *Նյուրնբերգ,* որտեղ կարծեք թե որոշվել էր մարդկության ապագա ճակատագիրը:

Նյուրնբերգյան դատավարության ժամանակ (20.XI.1945 – 1.X.1946) քննարկվեց Երկրորդ աշխարհամարտի գլխավոր հանցագործների հարցը: Այն մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար պետությունների ղեկը վարողների նկատմամբ պատմության մեջ առաջին դատավարությունն էր[3], կայացրած անդրանիկ որոշումը:

Միջազգային ռազմական տրիբունալի դատին էին հանձնվել նացիստական Գերմանիայի 24 խոշոր այն հանցագործները, որոնք մեղադրական աթոռին էին գամվել, խաղաղ բնակչությանն ընդհանրապես, պատերազմի ռազմագերիներին մասնավորապես՝ տանջամահ անելու, հասարակական և մասնավոր սեփականությունը հափշտակելու, ստրկական աշխատանքը վերակենդանացնելու, փոքր ու անպաշտպան ժողովուրդների բնաջնջման փորձ կատարելու և նմանատիպ այլ հանցագործությունների համար[4]:

Նյուրնբերգյան դատարանի բացահայտումներն ու նրանց նկատմամբ հանած որոշումները Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ – հիմնված 12.01.1945) Գլխավոր ասամբլեայի համար հիմք դարձան, որպեսզի անդրադառնար *ցեղասպանության* հարցին և այդ փաստերից աներ համապատասխան եզրահանգումներ:

---

[1] *Մ. Արզումանյան,* Հայաստանը 1914-1917 թթ., Երևան, 1969, էջ 645:

[2] Նույն տեղում: Տե՛ս նաև «Ենի Իսթանբուլ», 11.VIII.1967:

[3] ՀՍՀ, հ. 8, Երևան, 1982, էջ 330: Տե՛ս նաև *Ա. Ի. Պոլտորակ,* Նյուրնբերգյան վերջաբան, Երևան, 1968:

[4] "Нюрнбергский процесс над главными немецкими военными преступниками". Сборник материалов в семи томах, Москва, т. 1, 1957, стр. 67-68.

1946 թ. դեկտեմբերի 11-ին, մանրակրկիտ հետազոտելով ընծեռված սարսափազդու փաստերը, միջազգային հանրաճանաչ իրավագետների գրչով ՄԱԿ-ն արդեն ընդունեց կոնվենցիա *ցեղասպանության* վերաբերյալ:

1948 թ. դեկտեմբերի 9-ին վերամշակված ձևով այն պաշտոնապես հրապարակվեց[1], որը գործողության մեջ մտավ 1951 թ. հունվարի 12-ից: Կոնվենցիան վերնագրված էր *«Գենոցիդ կատարող հանցագործ տերությունների նախազգուշացումն ու դրանց պատժումը»*[2]:

1948 թ. դեկտեմբերի 9-ին կայացրած որոշումն ուղղակիորեն կոչվում էր *«Ցեղասպանության օրենք»:* Նրա առաջաբանում ասվում էր, որ ստորագրող կողմերը, հիմք ունենալով ՄԱԿ-ի ընդհանուր ժողովի 1946 թ. դեկտեմբերի 11-ին ընդունված հայտարարության հիմնական այն սկզբունքները, որոնց համաձայն ցեղասպանությունը *մարդկության դեմ գործադրված ոճիր է,* ուստի դատապարտվում է քաղաքակիրթ ազգերի կողմից: Սակայն վավերացնում էր 1946 թ. դեկտեմբերի 11-ին ընդունված այն բանաձևը, թե. «Ինչպես մարդասպանությունը հանգեցնում է առանձին մարդկային էակների ապրելու իրավունքի ժխտմանը, այնպես էլ ցեղասպանությունը նշանակում է ամբողջ մարդկային խմբերի գոյատևման բացառում: Գոյատևման իրավունքի այդպիսի բացառումը վիրավորում է մարդկային խիղճը, մեծ վնասներ է հասցնում մարդկությանը, որը զրկում է մարդկանց այդ խմբերի մշակութային և այլ արժեքներից, հակասում է բարոյականության օրենքներին, Միացյալ Ազգերի ոգուն և նպատակներին»[3]:

Վերոհիշյալ փաստաթղթում, որն արդեն օրենքի ուժ էր ստացել, արձանագրված է. *«Միջազգային իրավունքի տեսանկյունից, ցեղասպանությունը հանդիսանում է հանցագործություն, դատապարտվում է քաղաքակիրթ աշխարհի կողմից, և ցեղասպանության իրագործման գլխավոր մեղավորները և մասնակիցները պատժվելու են անկախ այն բանից, թե նրանք առանձին անհատներ, պետական պաշտոնական անձեր կամ պետական գործիչներ են, և անկախ նրանից, թե այդ հանցագործությունը կատարվել է կրոնական, ռասայական, քաղաքական կամ այլ շարժառիթներով* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[4]:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան միաժամանակ կազմակերպության բոլոր անդամ պետություններին առաջարկեց «անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել այդ հանցագործության կանխման և մեղավորներին պատժի ենթարկելու համար»[5]:

Ցեղասպանություն էր որակվում ռասայական, ազգային, էթնիկական կամ կրոնական հատկանիշներով բնակչության առանձին խմբերի բնաջնջումը: Գենոցիդը XX դարում երկու անգամ ընդունել է ավելի խոշոր չափեր և հետապնդել է որևէ ժողովրդի ամբողջովին ոչնչացնելու նպատակ՝ ինչպես Թուրքիայում *հայերի կոտորածը* (1890-1922) կամ գերմանական ֆաշիստների կողմից հրեաների և սլավոնների հավաքական, ամբողջական ոչնչացումը (1939-1945)[6]:

---

[1] The Crime of Genocide. A United Nations Convention–is Aimed at Preventing Destruction of Groups and at Punishing those Responsible, New York, 1949, p. 11-12.

[2] "Республика Армения", 1998, N 98-100. "Мир против Геноцида армян". Տե՛ս նաև «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1098-1099:

[3] "Нюрнбергский процесс...". Сборник материалов..., т. 1, стр. 67. Տե՛ս նաև *Ա. Համբարյան, Ս. Ստեփանյան,* նշված աշխատությունը, էջ 4:

[4] "Официальные отчеты второй части первой сессии Генеральной Ассамблеи ООН. Пленарное заседание Генеральной Ассамблеи". Стенографические отчеты 23 октября–16 декабря, 1946 г. Флошинг Медоу, Нью-Йорк, стр. 226.

[5] Նույն տեղում: Տե՛ս նաև *Ա. Համբարյան, Ս. Ստեփանյան,* նշված աշխատությունը, էջ 4:

[6] ՀՍՀ, հ. 12, *Յու. Բարսեղով,* «Ցեղասպանություն» հոդվածը, Երևան, 1986, էջ 149:

Գենոցիդը դիտարկվում է իբրև ***ծանր հանցագործություն՝ գործադրված ընդհանուր մարդկության դեմ,*** որն ուներ հետևյալ որակումները. զավթողական պատերազմների սանձազերծում, պատերազմի օրենքների և սովորույթների խախտում, գերիների նկատմամբ դաժանության դրսևորում, զավթած տարածքների բնակչության բնաջնջում և ստրկացում, անմեղ քաղաքացիների տանջահարում, հանրային կամ մասնավոր սեփականության կողոպտում, կրոնական կամ քաղաքական շարժառիթներով նրանց հետապնդում[1]:

Կոնվենցիայով պատժելի են համարվում նաև ցեղասպանության կազմակերպումը, դավադրությունը, հրահրումը, օժանդակությունը:

Ցեղասպանության համար մեղավորների հանդեպ վաղեմության ժամկետ չի կիրառվում: Նրանց նկատմամբ կոնվենցիան ունի հետադարձ ուժ, այսինքն՝ մեղավորները պատասխանատվության են կանչվում նաև մինչև կոնվենցիան կատարած հանցագործության համար[2]: Ծանր հանցագործներ են ճանաչվում Թուրքիան և Գերմանիան, որոնցից երկրորդը պատժվեց, իսկ առաջինը՝ մինչև օրս մնում է անպատիժ:

Պատերազմի ավարտից մեկ տասնամյակ չանցած Արևմտյան Գերմանիայում ծվարած Հիտլերի մաշկափոխած սատելիտները, զարմանալիորեն փորձեր էին անում հնացած համարել Նյուրնբերգյան դատավարության որոշումները, առաջադրում հանցագործության ***վաղեմության իրավունքի խնդիրը:*** ՄԱԿ-ի գագաթաժողովը ժամանակին հասկացավ նման առաջարկի վտանգավորությունը, ի լուր աշխարհի հայտարարեց, թե նման ոճիրներ, որոնց զոհ են գնացել միլիոնավոր մարդիկ, երբեք արդարացում չունեն և դրանց հանցավորներին չի փրկի նույնիսկ վաղեմության իրավունքը[3]:

Այդուհանդերձ ՄԱԿ-ը 1967 թ. դեկտեմբերին հերթական անգամ անդրադարձավ գենոցիդի խնդրին, հատուկ կոնվենցիայով մեկ անգամ ևս որոշեց պատերազմի հանցագործների վրա վաղեմության իրավունքը չտարածել: «Կոնվենցիան ելնում էր նրանից, որ «ըստ միջազգային իրավունքի ռազմական հանցագործությունները և մարդկության դեմ ուղղված մյուս հանցագործությունները պատկանում են ամենածանր հանցագործությունների թվին», որ այդպիսի հանցագործությունների նկատմամբ ներքին օրենքների կիրառումը «արգելակում է ***այն անձանց դատական հետապնդումն ու պատիժը, որոնք պատասխանատու են այդպիսի հանցագործությունների համար», ուստի և նրանց վրա բոլորովին չի տարածվում վաղեմության ժամկետը»*** [4]:

Վերոհիշյալ բոլոր որոշումները, առավել ևս 1967 թ. ՄԱԿ-ի կոնվենցիան, առանց վերապահումների պետք է տարածել թուրքական շովինիստների վրա, որոնք Հիտլերից առաջ ոչնչացրեցին մի ամբողջ ժողովրդի ստվար հատվածին:

Ժամանակին Խորհրդային Միության ղեկավարությունը վերջապես վճռականորեն դատապարտեց Թուրքիայի գործած ոճրագործությունը հայ ժողովրդի նկատմամբ, ոչ միայն թույլատրեց Երևանում կառուցելու ցեղասպանության զոհերի հիշատակը հա-

---

[1] ՀՍՀ, հ. 6, իրավաբան *Ա. Թովմասյանի* հոդվածը. «Հանցագործություն մարդկության դեմ», Երևան, 1980, էջ 230:

[2] ՀՍՀ, հ. 12, էջ 149: Մենք ամբողջական հատվածներ ենք մեջբերել, քանի որ դրանք գրված են իրավաբանի մասնագիտական գրչով և հրապարակել է «Հանրագիտարանի...» հեղինակավոր խմբագրությունը:

[3] "Права человека", Сборник международных договоров, т. I (часть вторая), универсальные договора, Организация Объединенных Наций, Нью-Йорк и Женева, 1994, стр. 785-787.

[4] Նույն տեղում, էջ 786:

վերծացնող ***հուշարձան-կոթողը,*** այլև ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի գլխավոր օրգան «Պրավդա» օրաթերթում հրատարակեց հոդված ***«Գենոցիդը ծայրագույն հանցագործություն է մարդկության հանդեպ»*** վերնագրով: Հոդվածը նվիրված էր ***Հայոց Մեծ եղեռնի*** կեսդարյա տարելիցին և առաջին անգամ էր նման մակարդակով ճանաչում հայ ժողովրդի սգո արարողությունը ***Ծիծեռնակաբերդում***[1]:

Այդ «հաջողությունները» պայմանավորված էին նախ համաժողովրդական այն ***պոռթկումով, հանրահավաքով,*** որը բռնկվեց 1965 թ. ապրիլի 24-ին (որին մասնակցում էի նաև ես, և որի պատճառով անվտանգության մարմինների կողմից կալանավորվեցի, լավ ծեծ կերա, սակայն երեկոյան ազատ արձակվեցի): Ժողովուրդը, հատկապես երիտասարդությունը, համբերության բաժակը լցրած, այլևս դիմանալ չէր կարողանում անարդար լռությանը և պահանջում էր թույլտվություն ապրիլի 24-ը նշելու իբրև սգո օր և Հայաստանին վերադարձնել նրա անբաժան մասը ***Լեռնային Ղարաբաղը:*** Իբրև կանոն ժողովուրդը չի սխալվում: Նա հասավ իր նպատակին: Իհարկե, չպետք է ուրանալ Հայաստանի այն ժամանակվա ղեկավարության հայրենասիրական ոգին, ինչպես նաև, այս դեպքում ***Սփյուռքի*** գորավիգ կանգնելը Սայր Հայրենիքին:

Խնդիրը դրանով չավարտվեց: 1965 թ. հուլիսին Հելսինգֆորսում կայացավ խաղաղության, ազգային անվտանգության, ընդհանուր զինաթափման համաշխարհային կոնֆերանս: Միջազգային այդ բարձրապատիվ համաժողովն իր ամփոփիչ բանաձևում, միաձայն դատապարտեց բռնատիրությունը, գաղութատիրությունը և ***ցեղասպանությունը:*** Առանց զարմանքի, նման փաստաթղթում, նման մակարդակով ուղղակի գնահատական տրվեց նաև Հայոց ցեղասպանությանը: Այնտեղ ասված էր. ***«Այս տարի 50-ամյակն է Օսմանյան Թուրքիայի կողմից գործադրված հայկական կոտորածների, ազգային հարցը մի ժողովրդի բնաջնջումով լուծելու նպատակով: Այս ցեղասպանությունը խլեց կյանքը ավելի քան մեկուկես միլիոն ազատասեր հայերի, այսինքն՝ հայ ժողովրդի երկու երրորդին»***[2]:

Ցեղասպանության ճանաչման խնդիրն այսօր, վերջապես, դարձել է գրեթե բոլոր խոշոր տերությունների ղեկավարության և պառլամենտների ուշադրության առարկա: Թուրք պետական այրերը, առավել ևս ***պրեզիդենտն*** ու ***վարչապետը,*** հասկանալով եղելության բացահայտման ու ճանաչման բարդույթը, ամեն միջոցի դիմում են ժխտելու այն, նույնիսկ անամոթաբար կատարվածի մեղքը բարդում են «հեղափոխական հայերի» վրա: Թուրքերը սպառնում են բացել Ստամբուլի, Անկարայի, այս վերջերս էլ Բաքվի արխիվները, «նոր նյութեր» դնել շրջանառության մեջ և ապացուցել ցեղասպանության բացակայությունը կամ «անշնորհակալ» ու «անհնազանդ» հայերի մեղավորությունը:

Նրանք մոռացել են, որ հարդագողի ճանապարհորդության ժամանակ թուրք ջարդարարները թողել են հսկայածավալ նյութեր հայերի ցեղասպանության և ցեղասպանների մասին: Փորձենք դրանցից մի քանիսը միայն վկայակոչել:

1. ՄԱԿ-ի բոլոր կոնվենցիաներով ցեղասպանություն էր ճանաչվում այն ***հանցագործությունը,*** որը վաղօրոք ***ծրագրված էր,*** ուներ իրողության վերածելու համապատասխան նպատակադրում: Հայ ժողովրդի բնաջնջման մտահղացումը ձևավորվել էր դեռևս ուշ միջնադարում, կիսով չափ իրականացվել արյունախում Աբդուլ Համիդի գահակալության նախավերջին տասնամյակին (1894-1896), ապա Ադանայում (1909) և ավարտվել երիտթուրքերի ու քեմալականների տխրահռչակ տիրակալության ժամանակահատվածում:

---

[1] "Правда", 12. XII.1967.

[2] *Մ. Արզումանյան,* նշված աշխատությունը, էջ 647: Տե՛ս նաև "Правда", 26.IV.1965.

Պատճառները «բազմազան էին», սակայն այս դեպքում նշենք միայն ***մեկը՝ գլխավորը:*** Պանթուրքիզմի ախտով թունավորված թուրքական ռասան XIX դարավերջին, Արևմուտքի, ու հատկապես, Ռուսաստանի ծանր հարվածների տակ, հերթականորեն կորցնում էր իր եվրոպական նահանգները: Սլավոնական ազգերը թոթափում էին սուլթանական բռնապետության կեսհազարամյա լուծը, վերածվում էին ինքնիշխան պետությունների: Պարազիտային կյանքով ապրող թուրք պետությունը կորցնում էր և՛ ռազմաստրատեգիական հենակետերը, և՛ հարկերի ու կողոպուտի միջոցով «ձեռք բերված» եկամուտները: Բ. Դուռը խճճվում էր միջազգային պարտքերի բարդ ցանցի մեջ, և «հիվանդ մարդը» ոչ միայն վերակենդանանալու հույսեր չէր ներշնչում, այլև կանգնած էր մահացման իրական վտանգի նախաշեմին:

Թուրքերը կայսրության վերակենդանացման, նույնիսկ նոր ու ընդարձակ տերության վերականգնելու ելքը տեսնում էին ծավալվել դեպի Առաջավոր Ասիա, իրենց միացնել Արևելքի մահմեդապաշտ ժողովուրդներին, «նոր օսմանների ձիերը վրնջացնել» Աֆղանստանից մինչև Հնդկաստան: Զառանցական թվացող նրանց երազանքն էր իրար կարկատել իսլամապաշտ երկրներին, ստեղծել ***թուրանական*** նոր և հզոր պետություն: Այդ զառանցանքը այսօր էլ ուժի մեջ է, մանավանդ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո:

Պանիսլամիստների «մտահղացմամբ» իրենց զավթողական այդ պլաններն իրականացնելու ճանապարհին, իբրև «բնական արգելք», կանգնած էին հայ ժողովրդի զույգ հատվածները: Նրանց կարծիքով, և դա թերևս սխալ չէր, Հայաստանն իր աշխարհագրական ու ռազմաստրատեգիական դիրքով, ժողովրդի ռուսական կողմնորոշմամբ, քրիստոնեական հավատարմությամբ, խանգարում էր Արևելքում ապրող Մուհամեդի երկրպագուների միավորմանը[1]: Որպես ելք նրանք սկզբում մտադրվել էին կամ տեղահանել, կամ էլ ***ոչնչացնել*** արևմտահայությանը:

Յոհաննես Լեփսիուսը, Թալեաթ փաշայի դատավարության ժամանակ տված ցուցմունքում, Բեռլինի հրապարակային դատական նիստում հայտարարել է. «Ես 1913-ին Կ. Պոլիս էի: Բանակցությունների միջոցին երիտթուրքերը շատ զայրացած էին, որ հայկական բարենորոգումների հարցը դարձյալ կզբաղեցնե պետությունները... Այն ատեն երիտասարդ թուրքերու կողմը կարտահայտվեր. ***«Եթե դուք, հայերդ, բարենորոգումներե ձեռք չեք քաշեր, պիտի պատահի բան մը, որուն հանդեպ Աբդուլ Համիդի ջարդերը տղու խաղալիք են*** (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[2]:

Երիտթուրքերը, դեռևս համաշխարհային պատերազմը չսկսված, արդեն բացահայտ հայտարարում էին. «Հայաստանը խանգարում է մահմեդականների միասնությանն ու թուրքական միության ստեղծմանը՝ թուրքական ռասան Կովկասի, Իրանի ու Կենտրոնական Ասիայի նրան ազգակից բնակչության հետ միավորելու ճանապարհով»[3]:

Մեհմեդ Թալեաթի նման հայակուլ մարդասպանի անթվական մի հրամանագրի մեջ (այն Գ. Ահարոնյանին է տրամադրել Ա. Անտոնյանը՝ թուրքերենից թարգմանված վիճակում և կարծիք է հայտնել, թե տված է 1915 թ. գարնանը) ասված է. ***«Թերևս ասկից շատ առաջ որոշված էր բնաջնջել հայ տարրը, որ դարեր շարունակ կջանար մեր կայսրության ապահով հիմունքը քանդել և հիմա ալ իրական վտանգի մը ձևեր ստացավ, սակայն դասավորումները չէին թույլատ-***

[1] *Ե. Ղ. Սարգսյան,* Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասում, Երևան, 1964, էջ 229:

[2] «Դատավարություն Թալեաթ փաշայի», Վիեննա, 1921, էջ 95: Տե՛ս նաև *Մ. Արզումանյան,* նշված աշխատությունը, էջ 295:

[3] *Poidebard A.* La lutte pour la route des Indes. Notes du voyage de Paris à Tiflis par Bagdad, Paris, 1923, p. 229.

րեր այս սուրբ ծրագիր–նպատակը ի գլուխ հանել: Հիմա, որ բոլոր արգելքները մեջտեղեն վերցված են, պատեհ առիթ կներկայանա մեր հայրենիքը այդ վտանգավոր տարրեն փրկելու: Ստիպողական կհանձնարարենք, որ պետք չէ գութի զգացումներով վարակվիք անոնց թշվառ ու տառապալի կացությունը տեսնելով, բայց անոնց բոլորին ալ սպանդ ի գործ դնել: Ձեր ամբողջ կարողությամբ ջանացեք Տաճկաստանեն, Թուրքիայեն մի անգամ ընդմիշտ հետքը վերացնել «Հայաստան»ի անվան...»[1]:

1914 թ. փետրվարի 22-ին, այսինքն՝ Առաջին աշխարհամարտի բռնկումից շուրջ կես տարի առաջ, երիտթուրքերի կենտրոնական օրգան «Իկդամ» օրաթերթը առաջնորդող հոդվածում պատգամում էր Արևելյան Անատոլիայից – այսինքն՝ Արևմտյան Հայաստանից ողջ հայությանը բռնագաղթեցնել Միջագետք և նրանց փոխարինել մահմեդականներով, նույնիսկ շեշտում՝ *իսլամ – թուրքերով*[2]:

Վերևում զարգացրած մեր կոնցեպցիայի ուղղակի ապացույցն է Բաթումի կոնֆերանսում Թուրքիան ներկայացնող *Վեհիբ փաշայի*՝ 1918 թ. մայիսին արած սպառնալի հայտարարությունը ուղղված հայ պատվիրակներին: Նա այսպես դիմեց հայերին. «*Դուք տեսնում եք, որ ճակատագիրը Թուրքիային արևմուտքից մղում է դեպի արևելք: Այնտեղ է մեր արյունը, մեր կրոնը, մեր լեզուն: Դա տարերային հակում է: Մեր եղբայրները Բաքվում են, Դաղստանում, Թուրքեստանում ու Ադրբեջանում: Մենք պետք է ճանապարհ հարթենք դեպի մեր եղբայրները, և դուք, հայերդ մի կանգնեք մեր ճանապարհին*»[3]:

1915 թ. սեպտեմբերի 9-ին արյունարբու Թալեաթը ծածկագրով Հալեպի կուսակալին է ուղարկում հայասպան ներքոհիշյալ հեռագիրը. «Հայերու համար Թուրքիո հողին մեջ ապրելու, աշխատելու իրավունքները ամբողջովին ջնջված են և *այդ մասին կառավարությունը, բովանդակ պատասխանատվությունը ստանձնելով, հրամայած է նույնիսկ օրորոցին մանուկները չթողուլ:* Քանի մը նահանգներու մեջ այս հրամանին գործադրության արդյունքները տեսնված են... Առանց որևէ պատճառաբանություն ընդունելու, *կին, թե մանուկ, ինչ որ ալ ըլլան, նույնիսկ շարժվելու անկարող եղողները հանեցե՛ք հոնկե և տեղի մի տաք, որ զանոնք պաշտպանե ժողովուրդը, որ տգիտությանը բերմունքով...* չի կրնար կառավարության հետապնդած մեծ քաղաքականությունը գնահատել, որովհետև ուրիշ տեղեր անուղղակի կերպով կատարվող բնաջնջման գործողությունները. – խստություն, արագություն (տարագրության ընթացքին), ճամբու նեղություններ, թշվառություն.– հոդ ուղղակի կերպով կրնան ապահովիլ, հետևաբար առանց ժամանակ կորցնելու ոգի ի բռին աշխատեցեք...

Հաճեցեք Ձեր գործունեության արդյունքները ամեն շաբթու ծածկագրով հաղորդելու:

9 սեպտեմբերի 1915: Ներքին գործերի նախարար Թալեաթ»[4]:

Թուրք պետական մի շարք գործիչների հիշողությունների, նույնիսկ պաշտոնական գրագրությունների մութ ծալքերում պահպանվել են փաստեր, որոնք հաստատում են, թե երիտթուրքերի պարագլուխները *գաղտնի խորհրդակցությունների*

---

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 526: «Դահճապետ Թալեաթի և այլ մարդասպաններու հեռագիր հրահանգներու հավաքածոյ»: Տես նաև *Արամ Անտոնյան*, Մեծ ոճիրը, Պոսթըն, 1921, էջ 26:

[2] **ЦГВИАРИ** (Центральный Государственный военно-исторический архив Российской империи), фонд 2000, опись 1, дело 38, лл. 37-39.

[3] "Заря Востока", № 612, 24.11.1925 г. Տես նաև *Ե. Ղ. Սարգսյան*, նշված աշխատությունը, էջ 230:

[4] *Արամ Անտոնյան*, Մեծ ոճիրը, էջ 37: Թուրքերենից թարգմանել է գրքի հեղինակը, կրճատված տեքստը տես «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 526-527:

են հավաքվել և այնտեղ վավերացրել են *հայ ժողովրդին բնաջնջելու իրենց հրեշավոր ծրագրերը*: Ահա թե ինչ է ասում այդ խորհրդակցություններից մեկում իթթիհատականների ղեկավար, ընդհանրապես երիտթուրքերի գաղափարական առաջնորդ ճանաչված *դոկտոր Նազըմ բեյը. «Հայ ժողովրդին պետք է արմատապես ոչնչացնել, այնպես, որ ոչ մի հայ չմնա մեր հողի վրա, և մոռացվի այդ անունը: Այժմ պատերազմ է գնում և այդպիսի հարմար առիթ այլևս չի լինելու: Մեծ տերությունների գործին խառնվելուց և համաշխարհային մամուլի աղմկալից բողոքներից չպետք է վախենալ, քանզի մինչև նրանց իմանալը ավարտել գործը և նրանց կատարված փաստի առաջ պիտի կանգնեցնել: Դրանով հարցն այլևս կփակվի: Այս անգամ մեր գործողությունները պետք է ընդունեն համընդհանուր բնույթ, այնպես, որ ոչ մի հայ չփրկվի... Ես ուզում եմ, որ այս հողի վրա ապրեն թուրքեր, միայն թուրքեր և անբաժան տիրապետեն իրենց հողին: Թող անհայտանան բոլոր ոչ թուրք տարրերը, ինչպիսի ազգության և կրոնի էլ պատկանելիս լինեն նրանք* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[1]:

Երիտթուրքերի հայասպան նման բարբաջանքները նորույթ չէին: Իշխանության գլուխն անցնելուն պես նրանք բացեիբաց հայտարարեցին, որ «ազգային հարցերը կլուծեն բոլոր ազգությունների ֆիզիկական ոչնչացմամբ, բացի թուրքերից և միայն նրանցից, ովքեր կհամաձայնվեն անհապաղ դառնալ թուրք»[2]: Նրանք հայտարարեցին, որ օսմանյան կայսրության մեջ այլևս «չկան» հայ, հույն, արաբ և այլն, որ այնտեղ ապրող բոլոր ազգությունները «օտտոմաններ են» և պետք է դառնան թուրքեր, այլապես մենք նրանց կկոտորենք»[3]:

1911 թ. հոկտեմբերին Սալոնիկում գումարվեց իթթիհատականների հերթական, բայց վճռորոշ համագումարը: Պանթուրքիզմի արյունոտ դրոշով կայացած այդ համաժողովում ելույթ ունեցավ Նազըմ բեյը: Նրա «ատենախոսությունը» դարձավ համագումարի որոշումների «հիմնաքարը»: Նազըմը մասնավորապես ասաց. «Մի մոռանաք, որ մեր նախահայրերը Թուրանեն եկած են ու այսօր Անդրկովկասի ու ինչպես Կասպից ծովեն դեպի Արևելք տարածվող ընդարձակ հողամասերուն վրա թուրք ցեղեր կապրեն, գրեթե միատարր, ավա՜ղ, մեր դարավոր թշնամի Ռուսաստանին լուծին տակ: Մեր քաղաքական հորիզոնը բաց կմնա այդ ուղղությամբ միայն ու մեզի կմնա սրբազան պարտք մը իրականացնել թուրք ցեղին միությունը Միջերկրականեն մինչև Արալ ծովը... *Այդ քաղաքական ծրագրին իրականացման նախապայմանը՝ Հայկական հարցի արմատական լուծումն է... Պետք է բնաջնջել հայերը մեր կայսրության մեջ* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[4]:

Քննարկման լուրջ մտաբախումների առարկա դարձավ Ռուսաստանի դեմ ուղղված, բայց հիմնականում հայ ժողովրդին բնաջնջելու բովանդակած կարծիքները: Սալոնիկում խմբված հրեաների գլխավորած այդ *խառնաժողով-համագումարը*, թեր ու դեմ կարծիքներ հայտնելուց հետո, ի վերջո հանգեց հետևյալ եզրահանգմանը. *«վաղ թե ուշ պետք է իրագործվի Թուրքիայի բոլոր հպատակների օտտոմանացումը, բայց մի բան պարզ է, որ դա երբեք չի կատարվի համոզելով, այլ պետք է կատարվի զենքի ուժով* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[5]:

1911 թ. հոկտեմբերին «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրո-

---

[1] ***Mevlan-zade Rifat.*** Türk inkilabının iç yüzü, Halep, 1929, s. 89-93. Տե՛ս նաև "Геноцид армян в османской империи", стр. 7.

[2] ՀԱՀ, h. 7, Երևան, 1981, էջ 424:

[3] ***Е. В. Тарле,*** Сочинения, том 5, Москва, 1958, стр. 199.

[4] «Արարատ», N 6542-6543: Տե՛ս նաև ՀԱՀ, h. 7, 1963, էջ 424:

[5] ***J. Lepsius.*** Der Todesgang des Armenischen Volkes. Potsdam, 1930, S. 222.

նական կոմիտեն Սալոնիկից տեղափոխվեց մայրաքաղաք: Մի քանի ամիս անց, նույն կուսակցության ղեկավարության որոշմամբ, Բոսֆորի ափերին իր չորս կանանց հետ ցմահ բանտարկության դատապարտված Աբդուլ Համիդը փոխադրվեց Սալոնիկ (նոյեմբեր, 1912): 1918 թ. Սալոնիկում էլ նա մահացավ, որի գերեզմանին, ճառ արտասանելուց հետո, արտասվեց Թալեաթը, «Կարմիր սուլթանին» որակելով իբրև *«ջարդարարության վարպետ»* և իրենց ուսուցիչը[1]:

Հայ ժողովրդի զանգվածային բնաջնջման *վերջնական* որոշումը կայացվեց 1915 թ. փետրվարի 11-17-ին գումարված *«Իթթիհատ վե թերաքը»* կուսակցության կենտրոնական կոմիտեի «խիստ գաղտնի» նիստում: Ոճրագործների, ազգասպանների, հայ ժողովրդի «ընտրյալ» թշնամիների ժողով էր այն, որին մասնակցում էին *Թալեաթ բեյը, Ջիա Կեոքալփին, դոկտոր Նազըմը, Միդհատ Շուքյուրին, դոկտոր Բեհաեդդին Շաքիրը, Հյուսեին Ճահիտը, Կարա Քեմալը, Խալիլ բեյը, Հասան Ֆահմին, Աղա օղլու Ահմեդը, Էնվեր Ճահիտը և Մեվլան զադե Ռիֆաթը:* Կենտկոմի անդամներից բացակայում էին Ջեմալը, որը ղեկավարում էր եգիպտական ռազմաճակատում տեղակայված թուրքական բանակը և *Պետրոս Հալաճյանը,* որը կոմիտեի միակ հայ անդամն էր[2]:

Շուրջ մեկ շաբաթ (ոմանց կարծիքով 3 օր) տևած հայասպանների այդ ժողովը հերթականությամբ նախագահում էին ներքին գործերի նախարար Թալեաթը, պանթուրքիզմի տեսաբան Զիա Կեոքալփը, մարդկության վերջին տականք *Նազըմ բեյը:* Հնչեցին նույնպես քեր ու դեմ, ավելի ճիշտ «չափավոր» և «արմատական» կարծիքներ:

Վերջնական որոշման կայացումը դանդաղում էր: Ջայրացավ դոկտոր Նազըմ բեյը, բորբոքված ամբիոն բարձրացավ և հայտարարեց, որ *«Պետք է արմատապես լուծել Հայկական հարցը, բնաջնջելով ազգն ամբողջովին»,* ապա ավելացրեց. *«Եվ կը կարծեմ արտահայտած ըլլալ կարծիքը Պեհա պեյին, երբ ըսեմ, թե մենք երկուքս ալ գլուխ կը հանենք այս գործը, կբավե, որ որոշեք»*[3]:

Տեսնելով, որ համենայն դեպս այդքան էլ հաճությամբ չի ընդունվում մի ամբողջ ժողովրդի բնաջնջելու վաղամտածված ծրագիրը գործադրության մեջ դնելու որոշումը, Նազըմ բեյն ամբիոն բարձրացավ և իր արյունաներկ ելույթը շարունակեց այսպես. «Մենք այս հեղափոխությունը ինչո՞ւ կատարեցինք, մեր նպատակն ի՞նչ էր: Սուլթան Աբդուլ Համիդի մարդիկը իրենց աթոռներեն վար առնելո՞ւ, անոնց տեղը բազմելո՞ւ համար... *Ես թրքություն կենդանացնելու համար ծեզի ընկեր, եղբայր եղա, ես թուրքին, միայն թուրքին, ապրելը, այս հողին վրա անկախ իշխան մը ըլլալը կփափագիմ, ոչ թուրք տարրերը թող ջնջվին, որ ազգության և որ կրոնքին ալ պատկանած ըլլան, որ այս երկիրը ոչ թուրք տարրերեն մաքրել պետք է... վա՜յ մեզի, եթե վերջնական մաքրագործումը, վերջնական բնաջնջումը չկատարվի»*[4]:

Մեվլան զադե Ռիֆաթը, այսինքն «Միություն և առաջադիմություն» կուսակցության Կենտրոնական կոմիտեի *թուրք անդամը,* կրկնում ենք, *իսլամ–թուրք անդամը,* ժողովի բոլոր նիստերի ականատեսն ու ակտիվ մասնակիցը, այնուհետև այսօր-

---

[1] *Ծ. Պ. Աղայան,* Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 456:

[2] «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 187: *Լևոն Վարդանի* շահեկան, ծավալուն և փաստառատ հոդվածը. «Ցեղասպանության ծրագրումն ու նախապատրաստումը»: Այն հիմնականում գրված է թուրքական սկզբնաղբյուրների հիման վրա:

[3] *Սեպուհ Ակնունի,* Միլիոն մը հայերու ջարդի պատմությունը, Պոլիս, 1921, էջ 28: Տես նաև «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 187:

[4] *Մեվլան զատե Ռիֆատ,* Օսմանյան յեղափոխութեան մութ ծալքերը, Պեյրութ, 1938, էջ 161: Տես նաև *Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան,* Հայ ժողովրդի նոր պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 33-34:

վա և հետագայի համար շատ կարևոր փաստեր է *թողել:* Նրա հավաստմամբ, նիստի նախագահությունը *Բեհաեդդին Շաքիրին* հանձնարարեց կազմելու և քննարկման դնելու «գործողության ծրագիր»:

Այդ ծրագրում ասված էր. «Ո՛ր քաղաքի և գյուղաքաղաքներու մեջ որ հայ կա և ասոնցմե ո՛ր մեկուն առաջին անգամ բնաջնջվիլը հարկ է, այդ քաղաքները ներքին նախագահի հետ կորոշենք և յուրաքանչյուր շրջանակին պետք եղածին չափ այս ուժերեն կղրկենք, ասոնք մեր նշանակիք ճամփաներուն համար վայրերուն վրա հասնելիք *հայ կարավաններուն կսպասեն,* ներքին նախարար Թալեաթն ալ այդ քաղաքներու վարչական պաշտոնյաներուն կհրահանգե, որ հոն գտնվող բոլոր հայերը պատերազմական շրջանակեն դուրս գտնվելու հարկը պատճառաբանելով, խումբ-խումբ և յուրաքանչյուր օրը երկու անգամ մը, ոստիկան զինվորներու հսկողության տակ այսինչ ճամփան, այնինչ տեղ ղրկվին: Ոստիկան պաշտոնյաներ այս հրամանին վրա բոլոր հայերը հավաքելով, հսկողության տակ խումբ-խումբ որոշված ճամբաներեն ղրկել կսկսին, ճամբան ասոնց գալուն սպասող հատուկ կազմակերպության չեթեներու կեցած վայրը հասնելուն խումբերը մեր չեթեներուն կհանձնեն և կվերադառնան, *չեթեներն էլ այս հայերը մինչև վերջին անհատը անմիջապես կսպանեն* և, որպեսզի հանրային առողջությունը չվնասվի դիակները նախապես պատրաստված փոսերու մեջ կծգեն ու կթաղեն: Եվ այս *կերպով հաջորդաբար բնաջնջման գործողությունը կլրացնեն: Այս հայերուն քով գտնվող գույքը, դրամը և գոհարեղեններն ալ իբր ավար՝ չեթեներուն կբաժնվի»*[1]:

Պանթուրքիզմն ու պանթուրանիզմն իբրև գաղափարաբանություն թևածում էր ժողով-խորհրդակցության մասնակիցների ուղեղներում: Բանը հասնում էր նրան, որ Բեհաեդդին Շաքիրը ցինիկորեն հայտարարում էր, որ եթե թշվառական *Մովսեսը,* պարապ *Հիսուսը* և որբ *Մուհամեդը* կարող էին ստեղծել «աստվածային վարդապետություններ» – իրարից տարբեր ու իրարամերժ տարբեր կրոններ, ապա ինչո՞ւ մենք չենք կարող *«ստեղծել և տարածել թուրանի կրոնը և գաղափարը»*[2]:

Կենտկոմի մյուս անդամ Հասան Ֆեհմին նույնպես «աստվածաբանական մարգանքներ է անում» և ձգտում ցեղամոլության արգահատելի դոկտրինան հիմնավորել կրոնական դոգմաներով. «Արևելյան գիտության և սուրբ օրենքի շարիաթի համաձայն, բոլոր նրանք, ովքեր վնասակար են ճանաչվում, պետք է ոչնչանան: Ամենայն ճշգրտությամբ ապացուցված է, *որ հայերը վնաս են բերում:* – Քանի որ նրանք ապստամբել են մեր «Իթթիհատ վե թերաքքի» կուսակցության դեմ, ստիպել են *ազատության հերոս էնվեր փաշայի* փեսային (Վանի նահանգապետ Ջևդեդ բեյին) ամոթալի փախուստի դիմել, *ապա պետք է նրանց բոլորին մինչև վերջին մարդը բնաջնջել»*[3]:

Համաժողովն ավարտվեց: Վերջին նիստի նախագահող Թալեաթի առաջարկով հայ ժողովրդի ոչնչացման կոնկրետացված պլանի իրագործումը դրվեց քվեարկության: *Այն ընդունվեց միաձայն*[4]:

Հայ ժողովրդի նկատմամբ անասնական ատելությամբ լցված այդ «մարդակերպ արարածները» բոլոր մանրուքները հաշվի էին առել ջարդը *«հաջողությամբ»* իրագործելու համար: Թուրքական, ժամանակի արևմտաեվրոպական, դժբախտաբար նաև որոշ հայ հեղինակների գործերում գովասանքի տողերի ենք հանդիպում

---

[1] *Mevlan zade Rifat.* Türkiye inkilâbininiç yüzü, Halep, 1929, արաբատառ թուրքերեն, թարգմանությունը, Բեյրութ, 1938, էջ 196: Տես նաև *Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան,* նշված աշխատությունը, էջ 34:

[2] *Մեվլան զադե Րիֆատ,* Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը, էջ 161-162:

[3] "Геноцид армян в османской империи", Ереван, 1983, стр. 411-412.

[4] Նույն տեղում, էջ 412:

այն թուրքերի հասցեին, որոնք փրկել են հայերի: Բայց քանի՞սն են եղել դրանք, քանի՞ հայի են ազատել սպանությունից:

Որպեսզի պատկերն առավել պարզ դառնա, և վեճերի առիթ չստեղծվի, բերենք հետևյալ հրամանը. «Այս հեռագիրը (թարգմանաբար հրատարակել է Արամ Անտոնյանը) հակառակ իսլամական օրենքին, թե «արգելված բանը մի ըներ սպառնալիքի ու սարսափի տակ» կը հայտարարե, ***թե այն իսլամը, որ կհամարձակի պահել հայ մը, պիտի կախվի իր տան առջև և իր տունը պիտի այրվի: Պահողը, եթե պաշտոնեայ մըն է, պաշտոնանկ պիտի ըլլա և, պիտի դատվի պատերազմական ատեանի կողմէ: Հայ պաշտպանողները, եթե զինվորական են, պիտի վտարվին զինվորական ասպարեզեն և, պիտի տարվին պատերազմական ատեանի առջև»***[1]:

1915 թ. ապրիլի սկզբին, երիտթուրքական տխրահռչակ քառյակը «պատրաստ» էր հոշոտելու անպաշտպան, եվրոպական բոլոր մեծերի կողմից լքված ու մոռացված արևմտահայությանը: Նրանք ստեղծեցին դահիճներ ու դահճապետներ համահավաքող մի հատուկ կազմակերպություն – ***Թեշքիլաթի մախսուսան:*** Նրան հանձնարարվեց գլխավորել արևմտահայության ոչնչացման պրոցեսը[2]: Կազմակերպության ղեկավարությունը հանձնվեց դոկտոր Նազըմին, տեղակալներ նշանակվեցին ***Ազիզ*** և ***Արիֆ բեյերը:*** Հայ մտավորականության ոչնչացումը մայրաքաղաքում պիտի իրականացներ Կոստանդնուպոլսի զինվորական նահանգապետ ***Ջավադ*** բեյը:

Ջարդարարների տրամադրության տակ դրվեց թուրքական ողջ ոստիկանությունը: ***Նրանց պիտի*** «զորավիգ կանգներ կանոնավոր բանակը»: Սակայն հրեշավոր, լայնամասշտաբ նման գործողությունը շտապ ավարտելու համար համարվեց, որ դրանք քիչ էին: Ուստի բանտերից ազատեցին քրեական տարրերից կազմված հրոսակախմբեր, համիդիեական չեթեներ, ***քրդական ավազակախմբեր,*** ամեն կարգի հանցագործներ, առանձնացրեցին ***մահմեդական խուժանին:*** Մարդկային այդ տականքից կազմավորեցին ջոկեր, դրուժինաներ, միավորումներ, որոնց խոստացան սպանվող կամ բռնագաղթեցվող հայերի հարստությունը, գեղեցիկ կանանց ու դեռատի աղջիկներին[3]:

«Պատերազմը հազիվ սկսած,– կգրե Նաիմ բեյը...,– արդեն անզոր եղող Թուրքիո մեջ ծայր առին անօթություն և թշվառություն: Այս թշվառները խաբել, կերակրել պետք էր, և ասիկա ալ՝ հայերուն թողելիք ապրանքներն ու դրամը կրնային իրականացնել: Էրզրումի, Պիթլիսի, Տիարպեքիրի, Մամուրեթ Յուլ-Ազիզի, Սվազի նահանգներու մեջ հայոց ջարդն ու կողոպուտն սկսավ: Այս զբաղումը ժողովրդին ամեն բան մոռցնել կուտար... Միջագետքի դաշտը, ճամբաները, Սուրիո անապատները հայերով լցվեցան: Դարերու ընթացքին պատվաբեր ջանքերով շահված հայոց ահագին հարստությունն իր ամբողջ շքեղությամբ ու մեծությամբ կորեր էր: Ինչ որ մնար պիտի կորեր այդ անապատներուն մեջ՝ որոնց ժողովուրդը շուտով հասկցավ, թե այն գաղթականի քարավանները իբր զոհ կղրկվեին իրենց»[4]:

Փաստերն առատ են, իրար լրացնող ու վերահաստատող, սակայն բավարարվենք բերվածով: Ակնհայտ է նաև, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարության հայ ժողովրդին ցեղասպանելու վաղեմի քաղաքականության օրգանական շարունակությունն էր: Այդ քաղաքականությունը սկզբնավորվել

---

[1] ***Արամ Անտոնյան,*** Մեծ ոճիրը, Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Պոսթըն, 1921, էջ 291:

[2] «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 32:

[3] ***Մ. Արզումանյան,*** նշված աշխատությունը, էջ 319:

[4] ***Արամ Անտոնյան,*** Մեծ ոճիրը, Պոսթըն, 1921, էջ 246:

էր դեռևս *գորշ գայլերի* Առաջավոր Ասիա թափանցելու հարյուրամյակից, անցել ուշ միջնադարի միջնորմներով, կատարելագործվել ու կիրառվել Համիդ մարդասպանի դարավարտի տասնամյակում: Պատահական հայտարարություն չէր, ցինիկության աստիճանի հասած Թալեաթի այն խոսքը, թե. *«Հայկական խնդիրը լուծելու տեսակետով՝ երեք ամսում մեջ ես ավելի գործ կատարեցի, քան Աբդուլ Համիդը երեսուն տարվան մեջ»*[1]: Չանղըրըում թուրք հազարապետերից մեկն առանց ամոթի ու խղճի խայթի խոստովանեց. *«Ինչ որ մեր նախկին սուլթաններ ը չըրին, մենք ըրինք, պատմական ազգ մը երկու ամսվա մեջ մեռցուցինք* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[2]:

Այսպիսով, արևմտահայության ցեղասպանության ծրագիրը մշակված էր վաղօրոք, որոշված էր հիմնովին ոչնչացնել մի ամբողջ ժողովրդի, տեր դառնալ նրա ունեցվածքին: Հետևաբար ՄԱԿ-ի կանոնակարգի համաձայն նման հանցանքը քրեորեն պատժելի է, քանզի *ուղղված է հանուր մարդկության դեմ:* Սակայն առավել դատապարտելի ու պատժելի է այդ ծրագրի իրագործումը, այսինքն ցեղասպանության կատարումը, որը չուշացավ վերոհիշյալ որոշումներից հետո:

2. *Գենոցիդին* վերաբերող Միավորյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) բոլոր կոնվենցիաների հրապարակած փաստաթղթերում *ընդգծված է,* թե ցեղասպանությունը կատարված լինի պատերազմի, թե խաղաղության ժամանակ, միևնույն է, այն միջազգային օրենքներով դիտվում է իբրև մարդկության դեմ գործած ոճրագործություն և *նրա մտահղացողներն ու իրողության վերածողները պատժվելու են առանց վաղեմության ժամկետի*[3]:

Ցեղասպանության երևույթի բնորոշումը տրվել է 1945-1946 թթ. տեղի ունեցած Նյուրնբերգյան միջազգային զինվորական դատարանի կողմից երկրորդ համաշխարհային պատերազմի հանցագործների դատավարության ընթացքում: Դատարանի վճռի 6-րդ հոդվածում հստակորեն արձանագրված է, որ *«մարդկության դեմ հանցագործություններ են՝ քաղաքացիական բնակչության նկատմամբ կիրառված սպանությունները, բնաջնջումը, ստրկացումը, աքսորը և այլ դաժանությունները կամ քաղաքական, ռասայական ու կրոնական շարժառիթներով հետապնդումները, որոնք կատարվել են պատերազմից առաջ և պատերազմի ժամանակ...»:*

Միջազգային իրավունքի տեսանկյունից *«գենոցիդ»* տերմինը կամ *ցեղասպանությունն* հասկացությունը համակողմանիորեն իր ձևակերպումն է ստացել Միավորված ազգերի կազմակերպության 1946 թվականի դեկտեմբերի 11-ին ընդունած բանաձևի մեջ, որը հիմք դարձավ 1948 թվականի դեկտեմբերի 9-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված համաձայնագրի համար, որն այսօր հայտնի է հանրությանը որպես *«Կոնվենցիա ցեղասպանության հանցագործության՝ կանխարգելման և դրա համար պատժի ենթարկելու մասին»:* Կոնվենցիան սահմանում է, որ *ցեղասպանություն է համարվում ամեն մի գործողություն, որն իրագործվում է բնաջնջման մտադրությամբ, ամբողջովին կամ մասամբ, ազգային, բարոյական, ռասայական կամ կրոնական խմբի հանդեպ՝ հետևյալ դեպքերում*[4].

---

[1] *Հենրի Մորկընթաու,* Յիշատակներ և Հայկական եղեռնին գաղտնիքները, անգլերենից թարգմանեց *Ենովք Արմեն,* Պոլիս, 1919, էջ 384:

[2] *Մ. Արգումանյան,* նշված աշխատությունը, էջ 296:

[3] The Crime of Genocide. A United Nations Convention is Aimed at Preventing Destruction of Groups and at Punishing those Responsible, New York, 1949, pp. 11-12.

[4] "Права человека", Сборник международных договоров, т. I (часть вторая), универсальные договора, Организация Объединенных Наций, Нью-Йорк и Женева, 1999, стр. 781-782.

ա. խմբի անդամների սպանությունը.

բ. խմբի անդամներին լուրջ մարմնական կամ հոգեկան վնասներ պատճառելը.

գ. կանխամտորեն խմբի համար կյանքի այնպիսի պայմանների պարտադրումն այն հաշվով, որպեսզի դրանք հանգեցնեն ամբողջապես կամ մասնակիորեն ֆիզիկական ոչնչացմանը.

դ. հարկադիր միջոցների նախատեսում, որով կանխվում են ծնունդները խմբի ներսում.

ե. մի խմբի երեխաներին բռնի տեղափոխելը մեկ ուրիշ խումբ:

Միավորված ազգերի կազմակերպության նույն կոնվենցիան միաժամանակ սահմանել է պատժի ենթակա հետևյալ գործողությունները.

ա. ցեղասպանությունը.

բ. գաղտնի համաձայնությունը ցեղասպանություն գործելու համար.

գ. ցեղասպանության ուղղակի և զանգվածային հրահրումը.

դ. ցեղասպանություն կատարելու փորձը.

ե. մասնակցությունը ցեղասպանությանը:

1968 թվականի նոյեմբերի 26-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան ընդունեց ***«Կոնվենցիա ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետի մասին»,*** որով հռչակվեց, որ միջազգային իրավունքի մեջ հաստատվում է կարևորագույն մի սկզբունք, ըստ որի՝ «ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ գոյություն չունի», և այն չի կիրառվում 1948 թվականի դեկտեմբերի 9-ի ***«Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի ենթարկելու մասին համաձայնագրի»*** նկատմամբ:

Ցեղասպանության համար վաղեմությունը չկիրառելու մասին համաձայնագիրն ունի հետադարձ ուժ: Դա նշանակում է, որ ցեղասպանության կազմակերպիչներն ու իրագործողները պատասխանատվության են ենթարկվում նաև մինչև համաձայնագրի հռչակումը կատարած մարդկության դեմ ձեռնարկած հանցագործության համար:

Ինչպես նշեցինք, 1948 թ. դեկտեմբերի 9-ի՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի որոշումը պաշտոնապես ուժի մեջ է մտել 1951 թվականի հունվարի 12-ին, իսկ Թուրքիայի կողմից այն վավերացվել էր դեռևս 1950 թվականի հունիսի 31-ին: Այդ համաձայնագիրը վավերացրած Թուրքիան միաժամանակ հստակ գիտե, որ ցեղասպանության գործողությունները ***«մարդկությանը ծանր կորուստներ է պատճառել»*** և ցեղասպանությունը որակվում է որպես ոճիր՝ ըստ ազգերի իրավունքի կանոնակետերի: Այս սահմանումը նաև նշանակում է, որ մինչև 1948 թվականի դեկտեմբերի 9-ն իրագործված ոճիրները նույնպես պետք է դիտվեն որպես ցեղասպանություն, անկախ այն հանգամանքից, որ ցեղասպանություն տերմինը վերջերս է մտել շրջանառության մեջ:

Չգիտես ինչու, շատերն այն սխալ պատկերացումն ունեն, որ ցեղասպանությունը պարզունակ, մի ինչ-որ տեղ անասնական կամ պարզապես խելագար գործողություն է: Սակայն, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, ցեղասպանությունը պահանջում է մեծ կազմակերպվածություն՝ այն իրականացնելու և մտավոր կարողություն ու հմտություն՝ կատարվածը վերջում ժխտելու համար: Ցեղասպանություն իրականացնելիս նախապես կազմակերպիչներն ամեն ինչ մանրամասնորեն հաշվարկում են: Նախ և առաջ նախապատրաստողներն ընտրում են հարմար պահ իրենց ծրագիրն իրագործելու համար:

Այսօր արդեն, երբ միջազգային հանրությունը քաջածանոթ է ցեղասպանությունների պատմությանը, մի բան պարզ է, որ ցեղասպանությունը կարող են ծրագրել և իրագործել ինչպես հետամնաց, այնպես էլ առաջադեմ հասարակություններում: Սխալ են նրանք, որոնց պատկերացումներում ցեղասպանությունները համարվում են անցյալին բնորոշ երևույթներ[1]:

*

* *

Գենոցիդ-ցեղասպանություն, արմենոցիդ-հայասպանություն երևույթը հիմնականում վերաբերում է հայ և հրեա, այսինքն՝ այն ժողովուրդներին, որոնք թուրքական և ֆաշիստական հրոսակախմբերի ջարդարար ձեռքերով Առաջին և Երկրորդ աշխարհամարտերի տարիներին կորցրեցին իրենց բնակչության կեսից ավելին: Այժմ փորձենք պարզել, թե վերոհիշյալ միջազգային փաստաթղթերը ինչքանով են վերաբերում հայասպանությանը, և այդ պրոցեսը ինչպիսի՞ շրջափուլեր է անցել:

Գենոցիդ անվանումն առաջին անգամ ձևակերպել է, միջազգային մակարդակով բարձր ատյաններում հրապարակել լեհական հրեա, իրավագիտության դոկտոր ***Ռաֆայել Լեմկեն*** (Լեմկին), ***որի ընտանիքի 49-ը անդամները*** Երկրորդ աշխարհամարտի տարիներին զոհ գնացին հիտլերյան ֆաշիզմի հակահրեական քաղաքականությանը[2]:

Ռ. Լեմկեի հնչեցրած ցեղասպանություն բնորոշումը լիովին վերաբերում է հայ ժողովրդին, քանզի այդ խնդիրը նա բարձրացրեց դեռևս 1933 թվականին, այսինքն՝ ***Մեծ եղեռնից*** ընդամենը ***ութը տարի*** հետո, միաժամանակ, երբ երկրորդ բորենին՝ Ադոլֆ Հիտլերը դեռևս իր տարերքի մեջ չէր, ոչ էլ սկսել էր սլավոնասպանությունն ու հրեասպանությունը:

1933 թ. հոկտեմբերի 14-20-ին Մադրիդում գումարվել էր իրավապաշտպանների միջազգային հինգերորդ կոնֆերանսը, որը պիտի միասնական կարծիք մշակեր ընդհանուր մարդկությանը հուզող մի շարք բարդ հարցերի մասին: Ռ. Լեմկեն, բարձրապատիվ այդ ամբիոնից, առաջարկություն արեց՝ քննարկել զանգվածային ջարդերի կազմակերպման ու կազմակերպիչների հարցերը, նրանց նկատմամբ պատժաչափեր սահմանել ռասայական սկզբունքներով, ազգային պատկանելության կամ կրոնական հակադիր ուղղություն դավանողներին ***ոչնչացնելու համար:*** Այդ երևույթները, միջազգային իրավունքի տեսանկյունից, նա բնութագրեց իբրև ***բարբարոսական հանցագործություն,*** բայց դեռևս ոչ ***գենոցիդ***[3]:

1944 թ. հիտլերյան ֆաշիզմը Մայդանեկում և Բուխենվալդում, Գերմանիայի ու Լեհաստանի տարածքում հիմնած համակենտրոնացման բազմաթիվ այլ ճամբարներում, գերազանցելով մարդակեր ուսուցիչներին՝ ***Համիդին, երիտթուրքական***

---

[1] "Права человека", Сборник международных договоров, т. I (часть вторая), универсальные договора, Организация Объединенных Наций, Нью-Йорк и Женева, 1999, стр. 781-782, 785-787. Սույն վերլուծությունը մեզ է տրամադրել գրքի խմբագիր, ցեղասպանության բանգարան-ինստիտուտի տնօրեն, պատմագիտության դոկտոր ***Լ. Ա. Բարսեղյանը:***

[2] ***Ю. Г. Барсегов,*** Геноцид армян-преступление по международному праву, Москва, 2000, стр. 62-65.

[3] ***Ю. Г. Барсегов,*** Նշված աշխատությունը, էջ 63: Տե՛ս նաև ***R. Lemkin,*** *Les actes créant un danger général (intérétatigue), considérés comme délit du droit des gens, Paris, Pédon, 1933:*

քառյակին և Քեմալ-կարաբեքիրին, շուրջ հինգ միլիոն խաղաղ, անպաշտպան ժողովուրդ ոչնչացրեց: Հիտլերյան կոտորածներին այս անգամ արդեն զոհ էր գնացել նաև Ռ. Լեմկեի ողջ գերդաստանը: Հասարակական վիշտը գումարելով անձնականին՝ լեհ իրավաբանը կրկին ամբիոն բարձրանալով արդեն այդ երևույթին *գենոցիդ – ցեղասպանություն անվանում* տվեց և պահանջեց միջազգային դատարանով դատել այդ հանցագործներին, այսինքն՝ երեկվա թուրքերին և այդ օրերի ֆաշիստներին:

Գնալով Ռ. Լեմկեի կողմնակիցների թիվը ստվարացավ, մանավանդ, երբ մեկ տարի անց, խայտառակ պարտություն կրեց հիտլերյան ֆաշիզմը, և նախապատրաստվեց դատավարության պրոցես սկսել պատերազմի այդ հանցագործների դեմ: Դա Նյուրնբերգյան հայտնի դատավարությունն էր, որը, բնականաբար, չէր կարող չանդրադառնալ ցեղասպանության խնդիրներին:

Միավորյալ ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1946 թ. դեկտեմբերի 11-ի նիստում, պաշտոնապես բնութագրվեց *«գենոցիդ»* երևույթը և սահմանվեց նրա բովանդակությունը: Այնտեղ ասված էր. «Ինչպես մարդասպանությունը հանգեցնում է առանձին մարդկային էակների ապրելու իրավունքի ժխտման, ցեղասպանությունը նշանակում է ամբողջ մարդկային խմբերի գոյատևման իրավունքի բացառում: Գոյատևման իրավունքի այդպիսի բացառումը վիրավորում է մարդկային խիղճը, մեծ վնասներ է հասցնում մարդկությանը, որը զրկում է մարդկանց այդ խմբերին մշակութային և այլ արժեքներից, հակասում է բարոյականության օրենքներին, Միացյալ ազգերի ոգուն ու նպատակներին»: Նույն բանաձևում ուղղակիորեն մատնանշված է, որ «Միջազգային իրավունքի տեսանկյունից, *ցեղասպանությունը հանդիսանում է հանցագործություն, դատապարտվում է քաղաքակիրթ աշխարհի կողմից, և ցեղասպանության իրագործման գլխավոր մեղավորներն ու մասնակիցները պատժվելու են անկախ այն բանից, թե նրանք առանձին անհատներ, պետական պաշտոնական անձեր կամ պետական գործիչներ են, և անկախ նրանից, թե այդ հանցագործությունը կատարվել է կրոնական, ռասայական, քաղաքական կամ այլ շարժառիթներով»:* Ելնելով այդ խնդրի կարևորությունից, Գլխավոր ասամբլեան առաջարկեց ՄԱԿ-ի բոլոր անդամ-պետություններին «անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել այդ հանցագործության կանխման և մեղավորներին պատժի ենթարկելու համար»[1]:

Ցեղասպանության խնդրի քննարկումը, գնալով ավելի լուրջ ուշադրության է արժանանում և հակահիտլերյան կոալիցիայի, հետևաբար և հակաթուրքական տրամադրություն ունեցող Եվրոպայի մյուս բոլոր մեծ տերություններին, այդ թվում և ԱՄՆ-ին հարկադրում ավելի կոնկրետ միջոցների դիմել, հանցագործներին պատժելու համար:

ա) Կրկնում ենք, *գենոցիդ – ցեղասպանություն* բնորոշումը հայտնագործեց *առաջին անգամ* միջազգային մակարդակի փաստաթղթերով, գիտական գրականությամբ, նույնիսկ բառարաններով, մեր ժամանակի մարդկությանը տեղյակ պահեց լեհական հրեա, իրավագիտության դոկտոր *Ռաֆայել Լեմկեն* 1944 թ.[2]: Սակայն

---

[1] Официальные отчеты второй части первой сессии Генеральной Ассамблеи ООН. Пленарное заседание Генеральной Ассамблеи. Стенографические отчеты 23 октября - 16 декабря 1946 г. Флошинг Медоу-Нью-Йорк, 1946, стр. 226. Տես նաև *Ազատ Համբարյան, Ստեփան Ստեփանյան,* Հայոց ցեղասպանությունը, Երևան, 1995, էջ 4:

[2] Այս խնդիրների մասին վերջերս լույս է տեսել ծավալով փոքր, բայց արժեքավոր մի գրքույկ: Այն է. *Նիկոլայ Հովհաննիսյան,* Հայոց ցեղասպանությունը ցեղասպանագիտության հայեցակարգային համակարգում, Երևան, 2002, էջ 8:

Հայոց ցեղասպանությունը, որը պատմագիտական գրականության էջերում այժմ կոչվում է ***արմենոցիդ – հայասպանություն,*** ձևի ու բովանդակության տեսանկյունով ***առաջին անգամ***՝ 1967 թ., բնութագրեց և գիտական շրջանառության մեջ դրեց արաբ հայտնի պատմաբան ***Մեթր Մուսա Պրենսը:*** Հայոց պատմության խորաքնին հետազոտողի կարծիքով, ***արմենոցիդը*** ոչ միայն XX հարյուրամյակի առաջին ցեղասպանությունն է, այլև ***«ամենագեղոցիդային գեղոցիդը»***[1]:

1967 թ. հուլիսին Փարիզում գումարվեց ցեղասպանության կանխարգելմանը նվիրված համաշխարհային երկրորդ համաժողովը, որտեղ քննարկվեց նաև «Առաջին աշխարհամարտում իրականացված Հայոց ցեղասպանության հարցերը»: Եվրոպական հեղինակավոր այդ ամբիոնը բարձրացավ լիբանանցի արաբ իրավագետ ***Մեթր Մուսա Պրենսը*** և հայ ժողովրդի կոտորածները բարձրապատիվ նման ամբիոնից արդեն հնչեցրեց իբրև ***արմենոցիդ (հայասպանություն),*** միաժամանակ մարդկության պատմության մեջ ***անպատիժ մնացած հանցագործություն***[2]:

Գնալով արմենոցիդ անվանումը ոչ միայն համաշխարհային հնչեղություն, այլև լայն ճանաչում էր ստանում: Այդ նույն՝ 1967 թվականին, ինքնուսնչորսամյա անգլիացի նշանավոր փիլիսոփա, մաթեմատիկոս, հասարակական գործիչ ***Պերթրանտ Ռասելը*** (հայտնի է նաև մարքս-լենինյան փիլիսոփայության քննադատական կոնցեպցիայով), Մեծ Բրիտանիայում «անպաշտոն համաշխարհային դատական պրոցես» կազմակերպեց, որը պիտի քններ ԱՄՆ-ի 36-րդ պրեզիդենտ ***Լինդոն Ջոնսոնի*** «հանցագործությունը» ***Վիետնամում կատարած ջարդարարության համար:*** Այդ պրոցեսին իրենց մասնակցությունն էին խոստացել ֆրանսիացի փիլիսոփա-վիպասան ***Ժան-Պոլ Սարտրը,*** վիպասանուհի ***Սիմոն դը Բովարը,*** Մեքսիկայի պաշտոնաթող նախագահ ***Լազարո Քարտենասը,*** հարավսլավացի գրող ***Վլադիմիր Տետիևը,*** անվանի մարդկանց կենսագիր ***Իսաակ Դոյչերը*** և այլոք: Նրանց ընդհանուր գործերի քննարկումը թողնելով ուրիշներին՝ այստեղ հատուկ շեշտենք, որ մեծ մարդկանցից կազմված այդ խումբը պահանջում էր ***միջազգային անպաշտոն դատարան կամ «բարոյական ատյան» կազմել՝ պատմության առջև դատելու ջարդարար թուրքերին և համաշխարհային համբավ վայելող անձնավորությունների միջոցով «պատժական դատավճիռ կայացնել ընդդեմ ցեղասպաններին –հայասպաններին»***[3]:

Եվ այսպես համաշխարհային առաջավոր մտքի ներկայացուցիչներից ու պետական այրերից շատերն արդեն ընդունեցին և դատապարտեցին արմենոցիդը, որոնցից շատ հազվագյուտ մեծություններին առանձնացնում և վկայակոչում է պրոֆ. Ն. Հովհաննիսյանը[4]:

Այդ իրողությունը հաստատում է ամերիկյան քաղաքագետ Մայքլ Բենկսը, որը հատուկ նշում է ***«քսաներորդ դարի առաջին խոշոր գենոցիդի պատճառով հայ ժողովրդի ցրված բեկորների առաջացման մասին»***[5]: Երուսաղեմի հրեական համալսարանի պրոֆեսոր Ֆրանկլին Լիթթելի կարծիքով Հայկական ցեղասպանությունը նոր դարաշրջանի սկիզբն է. ***«Կամբոջայի, Սուդանի, Բուրունդիի, Ռուանդայի***

---

[1] Նույն տեղում, էջ 26: Տե՛ս նաև ***Moussa Prince,*** Un génocide impuni, L'Arménocide, Heidelberg Press-Lebanon, 1967, p. 26-27. Տե՛ս նաև ***Մ. Պրենս,*** Անպատիժ ցեղասպանություն մը, Հայասպանությունը, Պեյրութ, 1969:

[2] ***Ազատ Համբարյան, Ստեփան Ստեփանյան,*** Երևան, 1995, էջ 7: Տե՛ս նաև ***Մ. Պրենս,*** Անպատիժ ցեղասպանություն մը, Հայասպանություն, Պեյրութ, 1969, էջ 17-19:

[3] ***Գերսամ Սհարոնյան,*** Խոհեր հիսնամյակի ավարտին 1915-1965, Պեյրութ, 1966, էջ 256-257:

[4] ***Նիկոլայ Հովհաննիսյան,*** Նշված աշխատությունը, էջ 12-13:

[5] ***Michael Banks,*** Four Conceptions of Peace, p. 267.

և Բոսնիայի կառավարությունների ցեղասպան գործողություններից հետո մենք կարող ենք խոսել այս XX դարի մասին, որը սկսվեց հայերի ցեղասպանությամբ, որպես ցեղասպանության դարաշրջան»[1]:

Իսկ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների ինստիտուտի մասնագետ Վիկտոր Նադեին-Ռաևսկին հաստատում է, որ «XX դարը վկան է մի քանի իրադարձությունների, որոնք որակվում են ցեղասպանություն: Նման տիպի առաջին և ամենամեծ ոճիրը հայերի և մյուս, գլխավորապես քրիստոնյա, ազգային փոքրամասնությունների կոտորածներն էին օսմանյան կայսրությունում»[2]:

Համանման կարծիքի են նաև անգլիական պատմաբան Քրիստոֆոր Ուոկերը, ֆրանսիացի Իվ Տերնոնը և շատ ուրիշներ[3]:

Այսպիսով միջազգային ժամանակակից գրականության էջերում, առաջավոր համաշխարհային գործիչների բազմաթիվ ու բազմաթիվ ներկայացուցիչների կողմից աներկբայորեն ընդունվում է *արմենոցիդը – հայասպանությունը*, դատապարտում են այն իրականացնողներին՝ վերջիններիս դիտելով իբրև *ոճրագործներ*՝ հանուր մարդկության առջև:

բ) Հայասպանության – արմենոցիդի պատմության վերաբերյալ՝ այսօր և հայրենիքում, և արտերկրում ստեղծվել է ծավալուն գրականություն: Դժբախտաբար հետազոտողների աշխատություններում խնդրի պատմության պարբերացման վերաբերյալ *միասնական հայեցակարգ չի մշակվել:* Տարակարծություններ են նկատվում ցեղասպանության ժամանակահատվածի, սկզբնավորման և վերջավորության տարեթվերն արձանագրելիս:

Այդ գիտավեճը թողնելով մեկ ուրիշ առիթի՝ մենք այստեղ որոշակի բանաձևենք, որ *հայ ժողովրդի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում, առաջին շրջափուլով,* իրականացվել է «զուլումի» տասնամյակին, *այսինքն՝ XIX դարի 90-ական թվականներին:*

Թուրքիայի ջարդարարական քաղաքականությունը «փորձության» էր ենթարկվել, երբ իսլամ բորենիների սուրը կարմրել էր բուլղար ժողովրդի արյան մեջ: Բուլղար քաղաքական գործիչ *Զաքարիա Ստոյանովը,* որը գործուն մասնակցություն է ունեցել թուրքական լծից Բուլղարիայի ազատագրման պայքարին, ականատեսի աչքով նկարագրել է Բուլղարիայում կատարված թուրքական բարբարոսությունները: Նա իր գրքում ընթերցողին ծանոթացնում է թուրքական դատարանի, բանտերի ծանր կացության, պատմում է ավազակների այնպիսի ոճիրների և հրեշավոր հանցագործությունների մասին, որոնցից մարդ փշաքաղվում է. *«Դժվար էր այդ ժամանակ ապրել Թուրքիայում: Ազատության նշույլն անգամ չէր մնացել: Մարդիկ իրար չէին վստահում. չէին վստահում, որովհետև կախաղաններն ու գարշահոտ բանտերը սարսափեցնում էին բոլորին, և սպանում էին ամեն մի ազնիվ և գործունյա մարդու»:*

Զ. Ստոյանովը իր գիրքը ավարտում է բուլղարական Բաթակ գյուղում կատարված թուրքերի բարբարոսության նկարագրությամբ:

«Ծնկի եկե՛ք, հարգելի ընթերցողներ, հանեք ձեր գլխարկները՝ ձեր առաջ Բաթակի ավերածություններն են: Կոչ եմ անում բոլոր ազնիվ և անկեղծ բուլ-

---

[1] *Franklin Littell,* Problems of Genocide, p. 29.

[2] *Viktor Nadein-Raevski,* Problems of Genocide, p. 201-202.

[3] Վերոհիշյալ շարադրանքը վերցրել ենք *Նիկոլայ Հովհաննիսյանի* նշված աշխատությունից, էջ 12-13:

դարներին, որոնք սիրում են իրենց հայրենիքը, ինձ հետ այցելելու այս բուլղարական սրբատեղին: Մեր ազատագրության գոհասեղանն է այս, որը հազարավոր նահատակների և սրբերի, հարյուրավոր փոքր երեխաների, անթիվ անմեղ աղջիկների և պատանիների արյունով է ներկված...»[1]:

Բուլղարիայի ազատագրումը առավել գազազացրեց ոչ միայն Աբդուլ Համիդին, Բ. Դռան բազմահազարանոց ծրիակեր պաշտոնյաներին, այլև իսլամապաշտ թուրք և քուրդ վերնախավին, որոնք սնվում էին քրիստոնյա անպաշտպան ժողովրդի արյունը վամպիրի պես ծծելով: Թուրքական ահարկու սուրն այս անգամ ուղղվեց հայ ժողովրդի դեմ: Սակայն նախքան *ցեղասպանությունը խնդիրը գաղափարական նախապատրաստության շրջան անցավ:* Կասկածամիտ Աբդուլ Համիդը որոշեց «լավ նախապատրաստվել» հայկական ողբերգությանը, քանզի գիտակցում էր դրա բարդությունը և դեռևս չէր պատկերացնում կատարելիքի հետևանքները: Վիկտոր Հյուգոյի դիպուկ բնութագրությամբ, գահակալական տարիների սկզբից մինչև վերջ, երկյուղամոլ ոճրագործը 30 տարի շարունակ փակված մնաց իր պալատի խորքերում, ինչպես Կայենն իր գերեզմանում[2]:

Բուլղարիայի ազատագրումից հետո կասկածամիտ բռնավորը ազգային շարժում, ապստամբություն էր փնտրում Արևմտյան Հայաստանի ամեն մի գավառում, ամեն մի անկյունում: Կասկածելի էին թվում հայ մտավորականները, խմբագիրները, հրապարակախոսները, գրողները, բանաստեղծները, Ռուսաստանից եկած ամեն մի ճանապարհորդ, եվրոպական մուճակով Տաճկաստան այցելող ամեն ուղևոր: Լևոն Սարգսյանի այցելության հետ կապված խուզարկությունները, գեղագետի վրձնով կերտված «Կայծերի» հերոսների, մասնավորապես, Ասլանի, Կարոյի ուղևորության հետ կապված հետապնդումների մանրամասնությունները. «Շահենն ի Սիպիր» վեպի բազմաթիվ էջերը այս հարցի վավերական վկայագրերն են: Սուլթանը չէր պարփակվում մայրաքաղաքով, նրա ոստիկանները խուզարկում ու ստուգում էին ողջ կայսրությունը: Այս ամենը հանգեցնում էր զանգվածային բանտարկությունների, աքսորի, սպանությունների:

Ոչնչացնելով կամ հայրենի բնաշխարհից արտաքսելով հայ մտավորականներին Համիդը թուրք վերնախավին, մահմեդական հոգևորականությանը լայն հնարավորություններ էր ընձեռում իրականացնելու պանթուրքիստների առաջադրած այն ծրագիրը, թե Թուրքիան կանգուն և «անվրդով» պահելու համար հրամայական պահանջ է դարձել կայսրության մեջ ապրող այլազգիներին ուծացման ենթարկելը: Տակավին 1869 թվականին Ֆուադ փաշան թուրքական նորաստեղծ բուրժուազիային և կառավարությանը պատգամում էր. «Ներքին գործերուն մէջ մեր բոլոր ջանքը միմիայն մէկ նպատակի մը ծգտելու է, որ է *զանազան ցեղերու ի մի ձուլում...:* Ասկէ յետոյ այդ մեծ կայսրութիւնը ոչ յոյներուն, ոչ ալ սլաւոններուն կրնայ վերաբերիլ, ոչ մի կրօնքի և ոչ ալ մէկ ցեղի... *Գարատաղ մը, սերպ իշխանապետութիւն մը, Հայաստանի թագաւորութիւն մը, իրենց և աշխարհի ամենափոքր օգուտ մը չընծայելէ զատ, առաւել կամ նուազ ցնորական երազներ են* (ընդգծումները մերն են – Հ. Դ.)»[3]:

Աբդուլ Ազիզին ուղղված այդ փաստաթղթում Ֆուադ փաշան գրում է նաև, որ «Ալ-

---

[1] ***Ավետիս Փափազյան,*** Թուրքական վավերագրական նյութեր օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1835-1915 թթ.), Երևան, 2002, էջ 14-15: Տես նաև ***Զաքարիա Ստոյանով***, Գրառումներ բուլղարական ապստամբության մասին, Մոսկվա, 1956, էջ 9 և 668: Գիրքը լույս է տեսել ռուսաց լեզվով:

[2] ***Սարուխան,*** Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860-1910), Թիֆլիս, 1912, էջ 348: Տես նաև «Le Temps», 1877, 19 փետրվարի:

[3] Նույն տեղում:

լահը Չեզի որքան փառավոր, նույնքան վտանգավոր առաքելություն մը հանձնած է: Այդ առաքելությունը լավապես կատարելու համար, Չերդ վեհափառությունը պետք է գիտակցի մեծ և ցավալի ճշմարտություն մը: ***Օսմանցիների կայսրությունը վտանգի մեջ է:*** Մեր դրացիներու յառաջադիմությունները և մեր նախահայրերու գործած աններելի սխալները ճգնաժամային դրության մը մատնած են մեզ այսօր»:

Ֆուադ փաշան, հետագա թուրք սուլթաններին զգուշացնում էր, որ երբ Ռուսաստանը ներխուժի Փոքր Ասիա, հայերը նրա պատրաստի դաշնակիցներն են: Հետևաբար, այդ վտանգը վերացնելու համար, Ֆուադը թելադրում էր. «Պետք չէ ճիգ խնայել միակ նպատակի հասնելու համար՝ կայսրության բոլոր ***ցեղերի համաձուլում, որովհետև առանց այդ ձուլումի հնարավոր չէ կայսրության ամբողջականության պահպանում»***[1]:

Մահից քիչ առաջ կազմված Ֆուադի ընդարձակածավալ այս կտակը դարձավ թուրքական կառավարության վարած ազգային «նոր» քաղաքականության վիմաքարը, մանավանդ երբ Բ. Դուռը տեսավ, թե Բուլղարիան, Չեռնոգորիան, Սերբիան պայքարի ինչպիսի անօրինակ հերոսություն ցուցաբերեցին: Հայերի ուծացման քաղաքականությունը մտավ նոր փուլ, որի իրականացումը հանձնարարվեց իսլամ շեյխերին, քուրդ աղաներին, տեղական կառավարիչներին[2]:

Գավառից պանդխտողներից վեցը, Ադրիանապոլիս տանող երկաթգծի վրա աշխատելիս, չեն կարողացել իրենց գոյությունը պահպանել, ուստի չորս կին, երկու 16-18 տարեկան երիտասարդներ մահմեդականություն են ընդունել[3]: «Խաղտիք և Բարձր Հայք ***բրքացած,*** մորթուած, գաղթած և աքսորուած կը հեծէ այսօր,- գրում է Սրվանձտյանցը Ն. Վարժապետյանին: - ...Քեղքիք գավառն այսօր ունի... 98 գերեզմանոց աւերակ, այդ ընդարձակ գաւառին մէջ միայն 15 տուն հայ մնացեր է...»[4]: Տիգրանակերտի մոտակայքում բնակություն էին հաստատել մի քանի հազար ընտանիքից բաղկացած սասունցիներ, որոնք «...անուանական տաճկութեան տակ բռնաբարուած հայեր...» էին և պարծանքով էին հիշում, թե իրենք սերած են Մամիկոնյան տոհմից[5]: Նրանք շարունակում են գաղտնի խոսել հայերեն, հարգել հայ վանականներին, հաճախել հայոց վանքեր, իսկ մահմեդականություն ընդունելն առերես էր, հարկադրված[6]:

Հայերի մահմեդականացումը ավելի ուժեղ էր արտահայտվում քրդաշատ Վասպուրականի նահանգում: 1872 թ. նոյեմբերին շատախցի քրդերը երկու հայ օրիորդների առևանգում են, տանում լեռները, տաճկացնում և ամուսնանում հետները: «Տեղական կառավարութիւնը՝ առանց քննելու կրօնափոխութեան պատճառները և առանց օրինականութեան պարտաւորութիւնները լրացնելու, կընդունի զանոնք մահմետականութեան»[7]: Թրքաց Հայաստանից եկողները պատմում են «Մշակին», որ «Խիզանի, Մոդկանի և Շատախի կողմերի հայերը կատարելապես ստրկացած են քրդերի ձեռքում: Այդ վերջինների շէյխերը և պէյերը իրանց մէջ բաժանել են հայոց գիւղերի բոլոր հողերը և ստիպում են գիւղացիներին հնազանդել իրանց անմիջական իշ-

---

[1] ***Սարուխան,*** նշված աշխատությունը, էջ 348: Տե՛ս նաև «Le Temps», 1877, 19 փետրվարի:

[2] ***Ա. Ալպոյաճեան,*** Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Բ, էջ 1430: Այս և հետագա հինգ էջերը մենք տպագրել ենք դեռևս 1967 թ.: Տե՛ս ***Հայկ Ղազարյան,*** Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 355-368:

[3] «Մշակ», 1876, N 2:

[4] ԳԱԹ, ***Թ. Ազատյանի*** արխիվ, 3-րդ բաժին, փաստաթուղթ 42:

[5] Նույն տեղում, փաստաթուղթ 50, էջ 1:

[6] Նույն տեղում:

[7] «Մասիս», 4 մայիսի, 1872, N 1233:

խանութեանը: *...Այդ գաւառներում բնակուող հայերը համարեայ բոլորովին քրդացել են թէ՛ լեզուով և թէ՛ սովորութիւններով* (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)»[1]:

Վանի վիլայեթում հազարների հասնող քրդացած ու թուրքացած հայեր, 44 ավերակ վանքեր, 800-ից ավելի «...չէն և անշէն եկեղեցիք կան, որոնք քրդեր աւերեր, մզկիթ, գոմ, ախոռ շիներ են»[2]: Կոստանդնուպոլիս առաքված բողոքագրերից մեկում արձանագրված է. «Խլաթա մէջ հայ կին մը, սաստիկ ծեծելով թևն ու գլուխը ջարդեցին զոռով տաճիկցնելու համար»[3]:

Բեռլինի վեհաժողովից հետո, հայերի վիճակի ծանրացման մասին նոր փաստեր են հաղորդում Համիդի թուրք կենսագիրները, «Խիստ հսկողութեան տակ առնուեցին հայ պաշտօնեաները եւ հայկական հրատարակութիւնները: Այդ պահից սովորական երեւոյթ դարձաւ աքսորը: Կուսակալների կողմից քննութեան առնուեցին հայոց եկեղեցիների եւ դպրոցների մասին տրուած հրովարտակները: Վերջին տարիների ընթացքում փակուեցին այն հայկական դպրոցները, որոնք բացուել էին ոչ թէ հրովարտակով, այլ միայն կառավարութեան թոյլտուութեամբ: Խստութիւններ ու բռնութիւններ գործադրուեցին նաեւ հարկերի գանձման հարցում»,- գրում է թուրք գործիչ Օսման Նուրին: Հրահանգ տրուեց մամուլի գրաքննչական վարչութեանը արգելել «Հայաստան» բառի, հայ ժողովրդի պատմութեանը եւ աշխարհագրութեանը վերաբերող անունների յիշատակումը: ***Բնականաբար այս բոլորը նախաձեռնւում եւ հրահանգւում էր սուլթան Ապտուլ Համիտի կողմից***[4]: Այդ լիովին հաստատւում է նաեւ թուրք պատմաբան Ջուհուրի Տանիշմանի բազմահատորանոց գրքի 13-րդ հատորում բերուած նիւթերից, որը նուիրուած է Ապտուլ Համիտի իշխանութեան ժամանակաշրջանին»[5]:

Բերված և նման բնույթի անհամար այլ փաստերից ելնելով սխալված չենք լինի, եթե ասենք, որ 1840-90-ական թվականների Թուրքիայի վարած քաղաքականությունը հայերի հարկման, հարստահարման, երբեմն էլ դավանափոխման վերաբերյալ, 1870-ական, մասնավորապես 80-ական թվականներին ***մտնում է նոր փուլի մեջ:*** Համիդը, նրան թև ու թիկունք դարձած «մոլի նացիոնալիստ» թուրք արիստոկրատիայի ներկայացուցիչները, ելնելով պանթուրքիստական բուրժուազիայի շահերից, ձգտում էին ասիական Տաճկաստանի հիմնիվեր համածուլման: Տարաբախտաբար այս նախերգանքը էր սաղմը այն ահավոր եղելությունների, որոնց իրականացմամբ սուլթանական լայնատարած կայսրությունը ներկվելու էր արևմտահայության արյամբ:

Համիդական Թուրքիան հայերի բնաջնջման ծրագրեր մտահղացրեց Բեռլինի կոնգրեսից անմիջապես հետո, այն ժամանակ, երբ տակավին չէին հիմնվել արևմտահայոց գաղտնի կազմակերպությունները ու հայդուկային խմբերը, երբ մի ամբողջ տասնամյակ հետո նոր պիտի կազմակերպվեին ազգային կուսակցությունները: Եղելության անտեղյակությունից բխող այս տեսությունը հիմնավորապես ժխտվում է հետևյալ փաստերով: Համիդի մեծ վեզիր Քյամիլ փաշան 1879 թվականին «Հայկական հարցի» շոնդալից զարգացման պահին, հրապարակեց մի ծրագիր, որտեղ ասված էր. «...Եթէ Եւրոպիոյ մասին մեր ծոցը օձ սնուցինք, պէտք չէ, որ նոյն յիմարութիւնը ընենք մեր ասիական Տաճկաստանի մէջ. խելօքութիւնը ջնջել վերցնելն է այն ամէն տարերքը, որ օր մը կրնան մեզ նոյն վտանգը ծնանիլ և օտարին ծեռնամխութեան առիթ և գործիք լինիլ:

Հիմա, այսօր, գոնէ Անգլիոյ շահերն կը պահանջեն, որ Փոքր Ասիոյ ***(Մենք և Անգլիա Հայաստան բառը ոչ միայն չենք ճանչեր, այլ այդ անունը հնչող կզակնե-***

---

[1] «Արձագանք», 1882, N 3, էջ 38:

[2] ԳԱԹ. ***Թ. Ազատյանի*** արխիվ, 3-րդ բաժին, փաստաթուղթ 57:

[3] «Դիւան Հայոց պատմութեան», գիրք ԺԹ, էջ 253-254:

[4] ***Ավետիս Փափազյան,*** նշված աշխատությունը, էջ 17-18: Տե՛ս նաև *Osman Nuri*, Abdul Hamid, s. 582, 838:

[5] ***Zuhuri Danisman,*** Osmanli Imparatorlugu tarihi, c. XIII, Sultan ikinci Abdul Hamid han, Istanbul, 1966, s. 146.

ՀԱՅԿ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ

ՌԱԶՄԻԿ
քույրը

ՄԻՐՋԱՆԱՆ
հայրը

ԳՈՒՐՈՒՆԿԱ
մայրը

ԱՐԵԳ

ՀԱՅԿ

ՀԱՅԿ ԵՎ ՆԻՆԱ

ԳԱՓԻԿ

ՆՈՒՐԵՆ

ԼԱՐԻՍԱ
հարսը

ԿՈՐՅՈՒՆ
տղան

ԽՈՐԵՆ
տղան

ՌՈՒԶԱՆ
դուստրը

ԳՈՒՐԳԵՆ
փեսան

րը պէտք է ջախջախենք) մեր ունեցած երկիրները ազատ մնան օտարի միջամտութենէն ու միջամտութեան ամէն առիթներէն. ուստի այդ սուրբ նպատակին համար պէտք է, *և պետական իրաւունքը կը պահանջէ, որ որևիցէ կասկածելի տարրը անհետ ընենք, որպէսզի ապագան ապահովենք, ուրեմն այդ հայ ազգը վերցնելու, անհետ և անձետ ընելու ենք: Եւ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիր մեզ, ամէն գործիք պատրաստ ունինք, քուրդ, չէրքեզ, կուսակալ, դատաւոր, հարկահան, ոստիկան, վերջապէս ամենայն ինչ. կրօնական պատերազմ մը կը հրատարակենք և դիւրին պատերազմ այնպիսի ազգի մը դէմ, որ ո՛չ զէնք ունի, ո՛չ զինուորութիւն և ո՛չ պաշտպան... Եւ եթէ այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնեայ Եւրոպա կրօնակից մը փնտրէ, և չի գտնէ տաճկական Ասիոյ մէջ, կը թողու զմեզ հանգիստ և այն ատեն կը զբաղինք ներքին գործերով և բարեկարգութեամբը...* (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)[1]:

Համիդն ավելի խորամանկ էր, քան նրա պալատականները: Սուլթանը, խուսափելով նոր միջամտություններից, առաջադրված հայաջինջ ծրագրերը սկսեց իրականացնել քրդական ցեղապետների, շեյխերի, աղաների միջոցով: Նա արծակեց վտանգավոր, արյունոտ այնպիսի ծեռքեր, որոնք մի քանի տարի առաջ հազիվ էին կարողացել կապկպել: Պայմաններ ստեղծեցին գավառահայության բնաջնջման այն էլ քրդական վերնախավի, նրան հետևող քուրդ խաժամուժի միջոցով:

Առաջին հերթին բանտերից ազատվեցին Արևմտյան Հայաստանից արտաքսված քուրդ նշանավոր ցեղապետները: 1882 թվականին շեյխ Ուբեյդուլահը Պոլսից դուրս եկավ և վաճառականի շորերով ու անցագրով մեկնեց Պարսկաստան: Սեպտեմբերի կեսերին շեյխը Բայազետում էր, որտեղից անցնելիս, Բերկրի գավառի մեջ նրան միացան 1500 քուրդ ծիավորներ[2]: «Մշակի» Վանի թղթակիցը վկայում է, թե Ուբեյդուլահը այնքան շուքով էր շրջում Արևմտյան Հայաստանում, այնքան ազատ էր զգում իրեն, որ հազիվ թե «փախած» լիներ Պոլսից[3]: Թուրքական կառավարությունը, զբաղված լինելով Եգիպտոսով, Ուբեյդուլահին ուղարկել էր սահմանագլուխ պարսիկների դեմ կռվելու[4]: Արյունարբու շեյխին այդ չխանգարեց անարգել կանանց ու աղջիկներին, սրախողխող անել անպաշտպան քրիստոնյաներին:

1882 թվականին Վանից գրում են. «... Հայաստանը այս րոպեիս երկու քրդական հրոսակների ասպատակության ասպարեզ է ներկայացնում: Ալի բեյը իր խմբով ծայրե ի ծայր կոտորում է Հայաստանի Արևելյան մասը, Պարսկահայք, Վասպուրական, Մոգք, իսկ Համզա աղան ասպատակում է Հայաստանի Արևմտյան կողմը, Տուրուբերան, Ծոփք և Աղձնիք: Այլևս չենք հիշում քյուրդերի մյուս մանր-մունր խմբեր, որոնք թափառում են Մեծ Հայաստանի զանազան կողմերը»[5]: Թղթակիցը վկայում է նաև, որ թուրքական խալիֆը դեռ 1881 թվականին, իր մոտ որպես «հյուր» պահված 64 քուրդ բեկերին ազատեց «կալանքից» և նորից ուղարկեց ասիական Տաճկաստան (իմա Հայաստան - Հ. Ղ.), որոնք գազանաբար վարվեցին իրենց արտաքսելու գործում որոշ դեր խաղացած հայերի հետ[6]:

Միջազգային իրավունքի տեսաբան Ոլեն Ժեքմենը, Մաքկոլը[7] բազմաթիվ փաստեր են բերում, որոնք միաբերան վկայում են, թե պատերազմից հետո թուրքական

---

[1] «Փորձ», ազգային և գրական միամսյա հանդես. Տփխիս. 1879. N 7-8. էջ 204-205:

[2] «Մշակ», 1882, N 165:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, N 170, սեպտեմբերի 16:

[5] «Արծագանք», 1882, N 1, էջ 8, արտատպություն «Մշակից»:

[6] Նույն տեղում, N 2, էջ 23:

[7] Մանրամասն տես ***Кон-Мольколь-Макколь,*** Ответственность Англии перед Арменией, М., 1896.

կառավարության թողտվությամբ ու գիտությամբ, Անգլիայի անտարբերության պայմաններում, թուրք ու քուրդ աղաները գազանային վայրագությամբ էին վարվում քրիստոնյա ազգերի հետ: «Քրիստոնյաների ներկա վիճակը վատթար է, քան վերջին տարիներին երբևիցե,- գրում է Ռոլեն Ժեքմենը:- Քրդերը, թվում է, թե ամենուրեք ուժ ունեն և բազմաթիվ տեղերում թալանը, կողոպուտը և կանանց հափշտակումները կատարվում են համարյա առանց պատժի: Քուրդ բեկերը, օգտվելով թուրքական իշխանությունների թույլտվությունից, երբեմն էլ նրանց աջակցությամբ, թալանում, կողոպտում են խաղաղ ազգաբնակչությանը: ... Նրանց ունեցվածքը, կանանց ու աղջիկների պատիվը մի շարք տեղերում հանձնվում է ֆեոդալ բեկերի կամքին»[1]:

Քաջատեղյակ լինելով նման եղելություններին կառավարական պաշտոնյաները կարծես թե ուրախանում էին դրանցով և «մասնակիորեն» լուծված էին համարում իրենց վրեժը «ռուսասեր» գյավուրներից: Ասում ենք մասնակիորեն, քանի որ նոր էր գալու «ապագա» ահավոր սպանդը, նոր էին իրականացվելու սուլթան Համիդի հայաջինջ ծրագրերը:

Ռուս-թուրքական այս պատերազմի օրերին, նրանից հետո չափազանց ողբերգական էր Ալաշկերտի և Բայազետի հայերի վիճակը: Այն, ինչը ողջ արևմտահայության համար իրականություն դարձավ տասնամյակներ հետո միայն, Բայազետում կենսագործվեց պատերազմի ժամանակ: Ջանգվածորեն բնաջնջվեց և տեղահանվեց հայկական տարրը, նրա տեղը լցվեցին մահմեդական քրդերը:

Ռուսները 1877 թ. գրավեցին Բայազետը: Թուրքական բանակները ռուսական հերթական գրոհների առաջը չկարողացան առնել: Կառավարությունը ստիպված դիմեց քուրդ ցեղապետներին, հայտնի շեյխերին, հատկապես Ջալալեդդինին[2], 20.000 հրացան բաժանեց նրա զինվորներին, գործելու անսահմանափակ իրավունքներ ընծեռեց, միայն թե վերջիններս կարողանային ետ խլել կորցրած գավառները:

Վայրենաբարո քուրդ ցեղապետներն ու ավարառության ելած խոլամները իրենց տարերքի մեջ էին: Կառավարությունը տեղաբնիկներին հրաման էր արձակել հոգալ թուրքական զորամասերի, այդ թվում և սուլթանին ծառայող քուրդ «կամավորների» ուտեստի, հագուստի, նույնիսկ զինվորներին ձմեռային տաք հագուստով ապահովելու մասին: Մահմեդական զորամասերը լայն իրավունքներով սփռվեցին Բայազետի ու Ալաշկերտի գավառներում: «Նրանց ճանապարհի երկու կողմերում գտնուող գիւղերի, մինչև իսկ Վան քաղաքի հայերը ենթարկուեցին «սրբազան պատերազմ» գնացող քրդերի բռնութիւններին՝ կողոպուտ, տանջանքներ, կոտորածներ»[3]:

Վանի վալի Ֆայըկ փաշան լրտեսների միջոցով տեղեկացավ, որ գեներալ Տեր-Ղուկասովը Բայազետում թողել է 1600 հոգուց բաղկացած մի փոքր զորագունդ և առաջ է շարժվել: Առիթը հարմար համարելով, հայդարանցի քուրդ ցեղապետ շեյխ Ջալալեդդինի հետ դաշնակցած, թուրք փաշան 15.000 թուրք և քուրդ հրոսակներով հարձակվեց Բայազետի վրա: Քուրդ բաշիբոզուկները սկսեցին իրենց ավարառությունը: Դեռ փաշայի բանակը չհասած, քրդերը հարձակվեցին շրջակայքի 24 հայաբնակ գյուղերի վրա, հիմնահատակ կործանեցին դրանք, բնակիչներին ոչնչացրին, ամբողջ ունեցվածքը թալանեցին[4]:

Գազանաբար սրախողխող արվեց Ս. Բարդուղիմեոս վանքին ապավինած հայ

---

[1] ***Մ. Գ. Ռոլեն-Ժեքմեն.*** Армения, армяне и трактаты, М., 1897, стр. 52.

[2] «Մասիս», 1877, 27 հոկտեմբերի:

[3] Նույն տեղում:

[4] ***Սարուխան,*** Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրութիւնը Թուրքիայում, էջ 200 201:

գաղթականությունը, գերվեցին կանայք և աղջիկները: Համիդը, կեղծավորությամբ, հայապաշտպան է ձևանում, խոսքով համակրություն հայտնում «հայ ազգի նկատմամբ», Ներսես Վարժապետյանին կոչ անում համոզել հայերին զինվորագրության գնալ, իսկ երկրում ոչնչացնում նրանց: Հայերը բողոքեցին: Ներսեսը բողոքագիր մատուցեց մեծ եպարքոսին, ինչպես նաև շեյխ-ուլ-իսլամին: Արդյունքն այն եղավ, որ Պոլսում, մեծ ու շքեղազարդ պալատում, սուլթանի կողմից ընդունվեց հայոց պատրիարքը, մեծ-մեծ խոստումներով կերակրվեց, իսկ Արևմտյան Հայաստանում ավերվեց, մոխրակույտ դարձավ հայաշատ Բայազետ քաղաքը: Թուրքերը և քրդերը 1877 թ. վերջերին թալանեցին բայազետցիներին: Պատերազմից առաջ եղած 5000 բայազետցիներից 1878 թվականին քաղաքում մնացել էին 1300 մարդ, որից 800 թուրք, 400 քուրդ, միայն 100-ը հայ[1]: Քաղաքի հայ ազգաբնակչությունը միակ հնարավոր ելքը համարեց բռնել գաղթականության ճանապարհը: Նրանք գաղթեցին Պարսկաստանի Մակուի խանություն:

Պատերազմի տարիներին մոխրացվեցին Արևմտյան Հայաստանի բազմաթիվ այն շրջանները, գյուղերը, որտեղ թուրք զինվորը ապաշնորհ մարտեր մղեց ռուսական բանակի դեմ, որտեղ հանգստացավ, ծմեռեց կամ վարժական պարապմունքներ անցկացրեց սուլթանական բանակը: Պատերազմից հետո հաշվեհարդար տեսան հայկական այն շրջանների հետ, որոնք այս կամ այն կերպ դուրս էին պրծել թուրքական ավերածության ոլորտից, մանավանդ, եթե առաջինները սրտաբաց էին ընդունել ռուսական բանակին, հույսեր էին տածել «քյաֆուր Մոսկովի» նկատմամբ: «Ամբողջ ճանապարհների շրջակայքում մինչև պատերազմի դաշտը հրոսակախմբերը ոչ մի գյուղ չէին թողել: Բոլորն էլ ավերվել էին քրդերի և կանոնավոր զորքերի կողմից: Բոլոր եկեղեցիները, վանքերը կողոպտված և ավերված էին: Կոտորվածների և սպանվածների թիվը անսահման էր»[2]:

Ռուս-թուրքական պատերազմի օրերին, հայ ժողովրդին Ռուսաստանից անջատելու միտումով, սուլթանը սիրաշահում էր Ներսես Վարժապետյանին ցանկություն ունենալով նրա օգնությամբ ազդել իր հայ հպատակների վրա, նույնիսկ խախտում էր մահմեդական օրենքները, ձգտում «գյավուրներից զինվոր վերցնել»: Բեռլինի կոնգրեսի օրերին պատրիարքը հաճախակի այցելում էր Կ. Պոլսի եվրոպական պետությունների դեսպանատները, կառավարական բարձրաստիճան պաշտոնյաների հետ խոսում հավասարի իրավունքով: Օգտվելով իր «նոր դիրքից» և «երես առնելով», Ներսես Վարժապետյանը սուլթան Համիդին ուղղած իր գրությունների տակ այլևս չէր գրում ***«Ձեր գերին»*** կամ ***«պաղատանոք»*** բառերը, մի բան, որ իր ողջ նախորդների բաժինն էր եղել: Այդ բառերը փոխարինված էին ***«ես»***[3], ***«պահանջում եմ»*** արտահայտություններով: «Թուրքական «Հաքիքաթ» թերթը ծաղրանքով գրում էր, որ, ***ըստ երևույթին, հայերի պատրիարքն իրեն շփոթում է եվրոպական դեսպաններից մեկնումեկի հետ»:***

Ռեակցիայի օրերին Համիդը, մոռանալով իր խոստումները, պատրիարքի գրություններն այլևս չէր ընդունում՝ պատճառաբանելով, որ նրանք ունեն ***«անհարմար և անքաղաքավարի ոճ»,*** քանի որ նախկինի նման չէր ստորագրվում «Ձեր գերին», «պաղատանոք» բառերով:

Այսպիսով, 1880-ականների սկզբին սուլթանական Թուրքիան արմատապես վերադիրքավորվեց հայ ժողովրդի արևմտահայ հատվածի հանդեպ: Փաստորեն, «ա-

---

[1] ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 42, գործ 11, թ. 65-70:

[2] *Ա. Ամէմեան,* Պատմութիւն արեւելեան պատերազմի, հ. Ա, էջ 16:

[3] *Գ. Խ. Ստեփանյան,* Արփիար Արփիարյան, Երևան, 1955, էջ 76 և շարունակությունը:

վարտվեց» «Թանզիմաթի» ժամանակահատվածը, ի դերև ելան ժողովրդի հույսերը, ոչնչացվեցին արևմտահայերին տրված մասնակի «իրավունքները», մոլեգնելու աստիճանի հասավ քաղաքական ռեակցիան: Միդհատյան «Սահմանադրության» արգելումից հետո գործադրության իրավունքից զրկվեցին հայկական սահմանադրական հիմնարկները, կախաղանները դարձան քաղաքական հանցագործների հետ հարաբերություն ունենալու գերադասելի միջոցը, բանտերը լցվեցին ռուսական կողմնորոշման կամ հեղափոխական պրոպագանդ մղելու մեջ մեղադրված «անմեղ մեղավորներով»: Բայց այս բոլորը դեռ նախերգանքն էին: «Քրիստոնյա Եվրոպայի» աչքերի առաջ, նրա լուռ համաձայնությամբ, արյունախում Աբդուլ Համիդը գրոհի անցավ, ծայր առան հայկական բեկորների զանգվածային ջարդերը[1], որոնք իրավամբ ցեղասպանություն էին:

գ) Համիդ հայասպանի ***պանօսմանիզմից պանիսլամիզմին, ապա պանթուրքիզմին անցնելու***, 90-ական թվականների Հայկական ցեղասպանությունը կազմակերպելու վերաբերյալ վավերական փաստեր է հաղորդում պարսիկ պատմաբան, գրող, հրապարակախոս ***Իսմայիլ Ռայինն*** «Հայերի կոտորածները» խորագրված իր ***շատ*** արժեքավոր աշխատության էջերում[2]: Նա Համիդին տալիս է այսպիսի բնութագրություն. «Սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը որպես «սանձարձակ դիկտատոր», անհիշյալ կայսերական Օսմանիայի թագավոր, երեսուն տարի հրամանատարություն արեց: Նա մի լրտեսական ապարատ (մեխանիզմ) կազմեց: Իր լրտեսների վրա նորից լրտեսներ նշանակեց նրանց լրտեսելու համար: Ոչ ոքի հանդեպ ամենաչնչին իսկ վստահություն չուներ: Մի կտոր հացը, ճաշը անպայման երեք հոգու համտես անել էր տալիս, որից հետո ինքն էր ուտում: Իր հավանական հակառակորդներին, առանձին ղեկավար առաջնորդներին, այլ ազգի հպատակ կայսերական ներկայացուցիչներին հրավիրում էր Ստամբուլ բանակցությունների: Բանակցություններն ու խորհրդակցությունները տարիներ էին տևում, գնալ-գալ, սպասեցնել էր տալիս Ստամբուլում»[3]:

Աշխատության ***«Պանիսլամիզմը և քշնամությունը քրիստոնյաների հետ»*** գլխում կարդում ենք. «Ամբողջովին կլանված զավթողական մտադրություններով Աբդուլ Համիդ 2-րդը որոշեց ստեղծել և կայծակնային ուժի տակ իրականացնել «իսլամական աշխարհ», «իսլամական միություն», այսինքն՝ «պանիսլամիզմ»: Նա ցանկանում էր հենվելով կրոնի օգնությանը, կոչվել «մուսուլմանական առաջնորդություն» կամ «առաջնորդող մուսուլման» և դրանով հասնել հաջողության: Ազգային այն երկրները, որոնք գտնվում էին կայսերական Օսմանիայի իշխանության ներքո, հլու-հնազանդ էին ռեժիմի ճնշումին: Նա պայքարում էր և այնպես էր գիտում «առաջնորդող մուսուլման» լինելը, որը ոչ միայն կործանումից կփրկեր կայսրության նպատակները, այլև առանձին մուսուլմանական երկրների, որոնք օսմանահպատակ չէին, այդ թվում՝ Իրանը և այլ արաբական երկրներ, հնարավորություն կունենար գրավելու և իրեն հպատակ դարձնելու: Եվ այդ մտածված «պանիսլամիզմը», որ այդ

---

[1] ***Հայկ Ղազարյան,*** Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Երևան, 2001, էջ 380-385:

[2] ***Իսմայիլ Ռային,*** Հայերի կոտորածները, Երևան, 1999: Պարսկերենից թարգմանել և գրքին առաջաբան է գրել ***Ա. Ա. Դարբինյանը:*** Ի. Ռային ծնվել է Իրանի Բուշեհեր քաղաքում (1919 թ.), ավարտել է Թեհրանի համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը, ուսանողական տարիներից սկսած հոդվածներ է գրել և հրատարակել հայրենի և այլ երկրների մամուլի էջերում: ***«Հայերի կոտորածները»***, ***«Իրանում բնակվող հայերը»*** և այլ հետազոտությունները մեծ հռչակ են բերել հեղինակին, ճանաչել տալով ողջ Իրանում և նրա սահմաններից դուրս: ***Ի. Ռային*** վախճանվել է 1980 թ.:

[3] Նույն տեղում, էջ 27: Այդ բնութագրությունը նա քաղել էր ***«Երկիր և թուրք ժողովուրդ»*** աշխատության 90-րդ էջից:

բռնակալ, ինքնիշխան կայսեր հիվանդոտ կոկորդից դուրս էր ծորել, հավանական էր Օսմանիայում և որոշ երկրներում շատ կողմնակիցներ ուներ»[1]:

Հմուտ թուրքագետ Ավետիս Փափազյանը, հետազոտելով թուրքական սկզբնաղբյուրները, եզրակացնում է, թե 90-ականների հայկական ջարդերը մարդկային մեծ ողբերգություն էին, և դրանում մեղադրում է Աբդուլ Համիդին, նրա «գվարդիական» «համիդիե» գնդերին: Նա գրում է. «1891 թ. Ապտուլ Համիտի նախաձեռնութեամբ կազմակերպուեցին հիմնականում քրտերից կազմուած անկանոն զօրագնդեր, որոնց գլխաւոր նպատակներից *մէկն էր* հալածել ու կոտորել հայ բնակչութեանը: Ժամանակի մեծ վէզիրներից Սայիտ փաշան ահա թէ ինչ բնութագրութիւն է տալիս այդ զօրագնդերին իր յուշագրութեան մէջ. «Համիտիէ հեծելագնդերը, տուրքերից ազատուած լինելով հանդերձ, իրենց շահերի համար բռնութիւններ են գործադրում բնակչութեան վրայ: Թէ վիլայէթի (վարչութեան) և թէ բնակչութեան բողոքներից պարզւում է, որ Տիարպէքիրի շրջանում գտնուող «համիտիէ» հեծելագնդի հրամանատար Մուստաֆա փաշան, որը նաեւ աշիրեթի առաջնորդն է, զինուած աշիրեթի մարդկանց, բառիս բուն իմաստով, դարձրել է բռնութիւն գործադրելու կատարեալ մի գործիք, վտանգելով շրջանի բնակչութեան ապահովութիւնն ու անդորրը: Տիարպէքիրի նախկին վալի Խալիտ էֆէնտին եւ նրա յաջորդը Ֆայիք փաշան բազմիցս գրել են այն մասին, որ 4-րդ բանակի հրամանատար Զէքի փաշան չափից աւելի է հովանաւորում յիշեալ Մուստաֆա փաշային:

...Այս տարի (1896 թ.) «համիտիէ» հեծելագնդերի զօրախաղերի ծախսերը եւ նրանց ռոճիկը ապահովելու համար ռազմական մինիստրութիւնը *35 հազար լիրա տրամադրելու գեկոյց էր ներկայացրել:* Ես չեմ հասկանում, թէ այս տարի

---

[1] Նույն տեղում, էջ 28: Համիդի գաղափարական դրոշի մասին խոսելով պարսիկ պատմաբանը հաղորդում է, թե սուլթանն իր հպատակներին կոչ էր անում *«գորշ գայլի»* ժամանակների օրինակով հասնել համաիսլամական պետության ստեղծմանը: Նա թուրքերի գենեզիսի մասին բերում է հետևյալ տեսությունը, որը հրապարակում ենք առանց փոփոխության, որպեսզի, եթե թուրքերը վիրավորվեն, թող վիրավորվեն իրենց հավատակից իսլամապաշտ պարսիկից և ոչ քրիստոսապաշտ հայից: Սիա այդ տարբերակներից երկուսը. «Թուրքերը ռուսական տափաստաններում հայտնվեցին «գորշ գայլեր» մականվամբ, նրանք ժողովուրդներին ներկայանում էին իբրև բարեկամներ: Անցան տարիներ, և նրանք հասան մինչև Եվրոպա: Բայց ինչո՞ւ թուրքերին «գորշ, մոխրագույն գայլեր» էին համարում, և ինչո՞ւ գայլը մեծ հարգանք էր վայելում նրանց մոտ: Դրա վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ պատմություններ և ասքեր: Այն ժամանակ, երբ թուրքերը «գորշ գայլեր» պիտակով և խմբերով ցրված էին Կենտրոնական Ասիայում, գրականության մեջ գոյություն ուներ մի հին պատմություն: Իբրև թե դարեր առաջ թուրքերը նիզակները ծեռքերին, ոստյունախաղերով (ձիերի վրա) առաջ էին շարժվում, իսկ «գորշ գայլը» առաջ ընկած տանում էր նրանց կանանց, երեխաներին և սայլերը: Նա էր համարվում խմբի առաջնորդողն ու ղեկավարը: Սամարղանդի մեծ պատմիչներից մեկը, գայլի օգնությամբ արքայատստեր փրկության մասին, այսպես է պատմում. «Կենտրոնական Ասիայում արքայադուստրը մի խումբ ավազակների ձեռքն է ընկնում: *Այնպես է ստացվում, որ մի հսկա, մեծ գայլ նրան փրկում է ավազակներից: Արքայադուստրը գայլի այդ արարքի համար, որպես փոխհատուցում, ամուսնանում է նրա հետ, և հենց թուրքերն էլ համարվում են գայլի և արքայադստեր ժառանգները, որոնք, որպես խառնածիններ և մարդու ու գայլի սերունդների մարմնավորողներ, մնացած ժողովուրդներից միանգամայն տարբերվում են՝ բարձր պահելով այդ պատիվը...»:* Սիա և մեկ ուրիշ լեգենդ, որն այսպես է հիմնավորում. «Եգ գայլը գտնում է մի կրծքի երեխա, պաշտպանում է նրան, կերակրում իր կաթով, և մանկիկը մեծանում է գայլերի ոհմակի մեջ...»: (*Իսմայիլ Ռային,* նշված աշխատությունը, էջ 63-64):

Անգլիացի նշանավոր պատմաբան Լորդ Կինրոսը, Թուրքիայի պատմությանը նվիրած իր ծավալուն մենագրության նախաբանում, գրում է. «VIII դարի սկզբին *այն ցեղերը, որոնք կոչվում էին օղուզներ և որոնց առաջնորդը հանդիսանում էր առասպելական գորշ գայլը...* հասան մինչև Սամարղանդ և ձգտեցին իրենց իշխանությունը հաստատել Կենտրոնական Ասիայի վրա». Համիդը վերակենդանացնում էր գորշ գայլի առասպելը և թուրքերին ու քրդերին կոչ անում ոչնչացնել հայ ժողովրդին: (*Лорд Кинросс,* Расцвет и упадок османской империи, Москва, 1999, стр. 24).

ինչ դրդապատճառների հիման վրայ է ցանկութիւն առաջացել անցկացնել «համիտիէ» հեծելագնդերի զօրախաղեր: ***Հայերի աղէտից յետոյ Անատոլիայի դրութիւնը բաւականին նրբացել է եւ եթէ քրտերը իրենց այս տեղաշարժերով բնակչութեան ունեցուածքին եւ անասուններին նոր բռնութիւններ գործադրեն, որը աւելի հաւանական է, դա առաջ կը բերի մի նոր աղէտ:***

Հայերին զանգուածաբար բնաջնջելով եւ նրանց թիւը արհեստականօրէն նուազեցնելով, թուրքական կառավարութիւնը ձգտում էր մոռացութեան մատնել Պեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածը, ինչպէս նաեւ մայիսեան բարենորոգումների ծրագիրը: Միեւնոյն ժամանակ սուլթանական կառավարութիւնը մեծ ջանքեր էր թափում թուլացնելու միջազգային հասարակայնութեան կարծիքը կոտորածների կապակցութեամբ: Այս առիթով Քեամիլ փաշան Ապտուլ Համիտին խորհուրդ էր տուել օտար պաշտօնեաների ստորագրութեամբ շտապ յօդուածներ հրապարակել արտասահմանեան մամուլում՝ հերքելու համար տեղի ունեցած ողբերգական իրադարձութիւնները»[1]:

Թուրքական սկզբնաղբիւրների ընձեռած փաստերին կռթնած՝ Ա. Փափազյանը, իրավացիորեն, բանաձեւում է, թե 1894-1896 թթ. հայկական ջարդերն իրենց բնոյթով ***ցեղասպանութիւն էին, վաղօրոք ծրագրված, մտահղացված և պետական մակարդակով իրականացված*** Աբդուլ Համիդի և Բ. Դռան պաշտօնյաների ոչ միայն գիտութեամբ ու թողտուութեամբ, այլև նրանց անմիջական ղեկավարութեամբ: Նա վկայակոչում է թուրք պետական գործիչներ ***Օսման Նուրիի և Սադըի Շահիդ*** բեյի գրվածքները հայկական ցեղասպանության մասին, նրանց բերանով հաստատում կատարվածի սահմռկեցուցիչ բնույթը:

Նա գրում է. «Փաստերը ցույց են տալիս, որ Ապտուլ Համիտը մի նոր հայկական ջարդ կազմակերպելու իր նենգ ծրագիրը գործադրել է հետեւեալ կերպ: Գաղտնի զինել է սոֆթաներին (կրօնական ուսումնարանի սաներին), ինչպես նաեւ մահմետական խուժանին եւ նրանց ուղարկել փողոց՝ հայերի վրայ: Պարզւում է, որ այդ խուժանի մէջ եղել են նաեւ ծպտեալ զինուորներ: Այդ է վկայում Սայիտ փաշայի հետեւեալ խօսքը. «Նոյնիսկ բռնացողների թուում եղել են զինուորներ եւ ուսանողներ»:

Դէպքերին ականատես թուրք գործիչներ Օսման Նուրին եւ Սադըկ Շահիդ պէյը իրենց գրուածքներում, անդրադառնալով 1894-1896 թթ. արեւմտահայութեան նկատմամբ կատարուած հալածանքներին ու կոտորածներին, բերուած բոլոր պատճառաբանութիւններով հանդերձ չեն կարողանում թաքցնել ճշմարտութիւնը: ***«Այս ջարդը բոլոր պարագաներում,***- գրում է Օսման Նուրին,- ***մի ահարկու եղեռն էր մարդկութեան դէմ: Իսկ այս եղեռնի պատճառ հանդիսացողը, անկասկած, նոյն Ապտուլ Համիտ երկրորդն էր, որը ղեկավարում էր Եըլտըզի այս հրոսակախումբը եւ կոտորում էր ոչ միայն հայերին, այլեւ դէպի կործանում էր տանում ամբողջ հայրենիքը»:*** Սադըկ Շահիտը նշում էր. ***«հայերի վերջին կոտորածը նախապէս մտածուած էր, ծրագրուած եւ կարգադրուած էր սուլթանի կողմից»***[2]:

Այսպիսով, թուրքերն են մեծ թուրքի մասին խոսում, որ նա պետական մակարդակով կազմակերպել էր հայկական ցեղասպանությունը 90-ական թվականներին:

դ) Թուրքիայում 90-ականների ցեղասպանությունը կիրառվել է ***պետական մակարդակով, նախապատրաստված:*** Դրա անժխտելի վկայությունը «համիդիե» գնդերի կազմակերպումն էր 1890-1891 թթ.: Եվ դա միանգամից ու պատահական մտահղացման արգասիք չէր:

---

[1] ***Ավետիս Փափազյան,*** Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում, Երևան- Լոս Անջելես, էջ 19: Վերցված է «Հայերի կոտորածները Ապտուլ Համիտի բռնատիրութեան շրջանում» գլխից:

[2] ***Ավետիս Փափազյան,*** նշված աշխատությունը, էջ 22-23: Տե՛ս նաև՝ ***Osman Nuri,*** Abdul Hamid Sani ve devri Saltanati, Istanbul, 1337, s. 866 (արաբատառ):

Խոր միջնադարում առաջին իսկ սուլթանները հարկերի փոխարեն քրիստոնյաներից հավաքում էին մանուկներ, դրանցից ստեղծում ***ենիչերական զորք,*** որն իր դաժանությամբ նախադեպը չուներ հանուր մարդկության պատմության մեջ: Այդ զորքի դաժանությանը չդիմանալով՝ սուլթաններից շատերը դրությունից ելք էին որոնում: Վերջապես Մահմուդ II սուլթանը, խիզախելով, 1826 թ. մեկ գիշերվա մեջ, սրի քաշեց ***ենիչերիներին***՝ մինչև վերջին մարդը: Համիդը վերակենդանացրեց փաստորեն այդ զորքը: Այժմ մահմեդական քրդերից ***հարյուրհազարանոց հեծյալ, անկանոն զորք հավաքեց՝ նրանց հայ ժողովրդին ոչնչացնելու հանձնարարություն տալով:*** Համիդիեները «պատվով կատարեցին» իրենց տված հանձնարարությունը, և Համիդը դժգոհ չէր նրանց հայասպանության գործողություններից:

Հատկանշական է մեկ այլ պարագա: Երիտթուրքերը, նախապատրաստվելով Մեծ եղեռնին, ստեղծեցին ***«Թեշքիլաթի մախսուսա»*** (հատուկ կազմակերպություն) զինվորական միավորումները, որոնց արյունոտ ձեռքերով ոչնչացրեցին շուրջ մեկ միլիոն հայ բնակչություն: Սրանց շարունակությունը դարձան Հիտլերի ***էսեսականները,*** որոնք ոչնչացրեցին հինգ միլիոն հրեաներ, սլավոններ և այլ ազգերի ներկայացուցիչներ: Ինչպես տեսնում ենք, հետագա ցեղասպանությունների պատվանդանը կառուցվել է XIX դարավերջին և Համիդ II-ի հրամանով:

ե) XIX դարի 90-ական թվականներին օսմանյան կայսրությունում սպանվեց ***երեք հարյուր հազար հայ:*** Այսինքն՝ թուրքերն ու քրդերը ոչնչացրեցին մեկ ամբողջ ժողովրդի 10 տոկոսը: Ցեղասպանության դատապարտման օրենքի երկրորդ հոդվածի առաջին ենթակետով, մարդասպանները դրանով իսկ ոճրագործություն են կատարել ընդհանուր մարդկության դեմ և ենթակա են ամենախստագույն պատժի:

զ) Թուրք ու քուրդ ջարդարարները բարբարոսական մեթոդներով են վարվել անպաշտպան, անզեն հայ հպատակների հետ: Նրանք, սպանելուց առաջ, մարմնական անտանելի տանջանքների են ենթարկել հայ բնակչությանը հաշվի չառնելով նրանց սեռը, տարիքը և բոլոր այլ հանգամանքները: Հղի կանանց արգանդը սրով բացելը, սպանելուց առաջ տղամարդկանց ձեռքերն ու ոտքերը անդամահատելը, աչքերը փորելով հանելը, կենդանի մարդկանց վրա նավթ լցնել և այրելը սովորական երևույթ էին: ***Ականատեսները խելագարվում էին, հոգեկան խանգարումներ ստանում,*** որը համապատասխանում էր օրենքի երկրորդ հոդվածի ***երկրորդ ենթակետի*** պահանջներին:

է) Շուրջ ***հարյուր հազար*** հայ երեխաներ բռնի մահմեդականացրեցին, աղջիկներին ***իբրև հարճեր, տղաներին իբրև ստրուկներ շուկաներում վաճառքի հանեցին:*** Այս ևս համապատասխանում է օրենքի երկրորդ հոդվածի հինգերորդ ենթակետին:

ը) Շուրջ տասը տարի շարունակ երկիրը գտնվում էր պատերազմական գործողությունների իրավիճակում: Կանանց խլում էին իրենց ընտանիքներից, բռնաբարում և կամ շպրտում փողոց, կամ էլ սպանում: Աղջիկներին բռնազավթում էին, նրանց հետ վարվում անասնական հաճույքով:

Ընտանիք չէր մնացել, զույգեր չէին մնացել ամուսնանալու համար: Հետևաբար ***չկային ծնունդներ, ժողովրդի աճ, որը*** դատապարտվում էր օրենքի երկրորդ հոդվածի հինգերորդ ենթակետով:

Իրավագիտական նման ձևակերպումները կարծում ենք, որ բավարար են ապացուցելու, թե 90-ական թվականների հայկական ջարդերը ցեղասպանություն էին: Սակայն այդ որակումը տվել են ժամանակակիցները, տվել են օտարները, աշխարհի մեծերը՝ մեծավարի: Ուստի գրքի հաջորդ ենթագլխում թող խոսեն օտարազգի հումանիստները:

2. Աշխարհի առաջավոր մտավորականությունը դատապարտում է համիդյան կեղասպանությունը «պուլումի» տասնամյակում

Չեռարծակ, անկաշկանդ ոչնչացնելով, մասամբ միայն դեպորտացիայի (բռնահանման) ենթարկելով շուրջ *երկուսնկես միլիոն* անմեղ, անզեն ու անպաշտպան *արևմտահայությանը,* ինչպես իր ժամանակին, առավել քան այսօր, երկնչելով պատմության ահեղ դատաստանից թուրքերը բռնեցին և համառությամբ շարունակում են որդեգրել ցեղասպանության անժխտելի իրողությունը հետևողականորեն ժխտելու ուղին: Չքմեղ ձևանալով նրանք ոչ միայն իրենց հայրերին և պապերին արդարացնելու անհաջող փորձեր են անում, այլև անամոթաբար ճգնում են կատարված եղելության մեղքը փաթաթել յաթաղանի զոհ դարձած անպաշտպան հայ ժողովրդի վզին:

Խնդրի ամբողջ պատմության բազմակողմանի շարադրանքը թողնելով աշխատության ծավալուն հետագա երկու բաժիններին՝ այստեղ փորձենք ընթերցողի ուշադրությանը հանձնել մի քանի օտար հեղինակների, առավել ևս ժամանակակիցների կարծիքները հայոց ապրած ողբերգության, թափած ծով արյան և արտաբերած օվկիանոսաչափ արցունքների մասին: Սկսենք ռուսներից:

Ռուսական մամուլի էջերը հագեցված էին բազմաթիվ ու բազմաբնույթ հոդվածներով, որոնք նվիրված էին թուրքերի ու վայրենաբարո քրդերի՝ հայ ժողովրդի նկատմամբ կատարած վայրագությունների նկարագրությանը: Ռուսաստանում, ցարից սկսած, սովորական ռուս քաղաքացիով վերջացրած, բոլորը դատապարտում էին Թուրքիային և նրա հովանավոր Գերմանիային Հայկական եղեռնի պատճառով: Սակայն հայերին առավել պաշտպանեցին ռուս գրողներն ու քաղաքական գործիչները: Բազմաթիվ ելույթներ ունեցան *Մ. Գորկին ու Ի. Բունինը, Վ. Բրյուսովն ու Ն. Մառը, Յու. Վեսելովսկին ու Մ. Կովալևսկին, Ա. Կրիմսկին ու Ֆ. Սոլոգուբը:* Ռուսաստանը դռները բացեց հայ թշվառ գաղթականների առաջ և նրանց հետ էր:

Ռուս գրող *Մաքսիմ Գորկին* հայ ժողովրդի լավագույն բարեկամներից էր: Նա անարգանքի սյունին է գամում համիդյան ջարդարարներին, հատկապես 90-ական թվականների ցեղասպանության պատճառով: Իբրև ժամանակակից, ոչ միայն հայ, այլև քրիստոնյա մյուս բոլոր ժողովուրդների բարեկամ պրոլետարական գրողը, թողել է հետևյալ տողերը. «... Հիշողության մեջ հառնում են Հայաստանի XIX դարի վերջի - XX դարի սկզբի ողբերգական պատմությունը, Կոստանդնուպոլսի, Սասունի կոտորածները, «մեծ մարդասպանը», «բարեկիրթ» Եվրոպայի քրիստոնյաների նողկալի անտարբերությունը, որով նրանք վերաբերվեցին իրենց «քրիստոնյա եղբայրների» բնաջնջմանը, վերջին տարիների թուրքական արշավանքների սարսափները. դժվար է վերհիշել *այդ եռանդուն ժողովրդի ապրած բոլոր ողբերգությունները»:*

Այդ կարգի փաստերը զարմանալիորեն արագ ու ճարպկորեն են մոռանում պարոնայք «մարդասերները», իդեալիստները, այն «քաղաքակրթության» պաշտպանները, որոնք հիմնված է ագահության, նախանձի, ստրկության և ժողովրդական զանգվածների լկտի բնաջնջման վրա: Այդ «քաղաքակրթության» միևչև ականջները արյան ու կեղտի մեջ խրված պաշտպանների կեղծիքն ու երկերեսանիությունը հասնում են ակնհայտ ցնորամտության, այնպիսի ոճրագործության, որի համար արժանի պատիժ չկա[1]: «Դժվար է հիշել,- շարունակում է Մ. Գորկին,- *բոլոր այն ողբերգությունները, որոնք ապրել է եռանդուն այդ ժողովուրդը»*[2]:

---

[1] "Наши достижения", Москва, 1929, N 1, стр. 81.

[2] "Русские писатели об Армении", Ереван, 1946, стр. 115-116.

Ռուս գրողի վերոհիշյալ տողերը և այլ աշխատություններում արտահայտած բազմաթիվ մտքերը հրապարակային ու գրական ապտակ են քաղաքակիրթ մարդկության երեսին հայ ժողովրդի ցեղասպանության նկատմամբ ունեցած անտարբերության համար:

Յուրի Ալեքսանդրովիչ Վեսելովսկին (1872-1919-Մոսկվա) անվանի գիտնական էր, գրականագետ, պրոֆեսոր, բանաստեղծ, թարգմանիչ, հայագետ: Նա իր կրթությունն ստացել էր Մոսկվայի *Լազարյան* ճեմարանում, որտեղ և սովորելով հայոց լեզուն, ուսումնասիրել է հայոց պատմությունն ու գրականությունը: Յու. Վեսելովսկին մի շարք հոդվածներ է գրել, առանձին աշխատություններ, որոնց էջերում մերկացրել է թուրք բարբարոսների հայ ժողովրդի նկատմամբ վարած հայասպան քաղաքականությունը:

Մեծ եղեռնի օրերին հայասեր հրապարակախոսը լույս աշխարհ բերեց «Թուրքահայաստանի ողբերգությունը» գիրքը, որի էջերում անդրադարձավ նաև համիդյան կոտորածներին: Նա գրում է. «Նույնիսկ քրքական չարաբաստիկ սահմանադրութիւնը չփոխեց իրերու դրութիւնը: Միմիայն այն փաստը, թէ նոր վարչակարգին օրով կարող էին կոտորածներ տեղի ունենալ ինչպես Աբդուլ Համիդի ժամանակ, օրինակ, Ադանայի մէջ, որ ամենաարիւնահեղ կոտորածներէն մէկն էր, պերճախօս կերպով կը վկայեն այն մասին, թէ որքան ***անօգուտ զբաղում է նոր գինին լեցնել հին կարասին մէջ, ինչպիսի անզգուշութիւն է յոյսեր դնել ինքնանպատակ սկզբունքներու վրայ, երբ հին պետական օրգանիզմի ընդհանուր ոգին կը մնայ անփոփոխ»***[1]:

Այնուհետև դիմակազերծ անելով երիտթուրքական սահմանադրության ազգայնամոլ, շովինիստական բնույթը նա ընդգծում է, թե դրա գործադրողները նպատակ են հետապնդել թուրքացնել օսմանյան կայսրության մեջ ապրող բոլոր այլազգիներին և եզրակացնում. «Այսպիսով, նաև ***XX դարում Թուրքիան տակավին կիանդիսանա անցյալի բարբարոսության մնացուկ»***[2]:

Վալերի Յակովլևիչ Բրյուսովը (1873-1924-Մոսկվա) ռուս գրող էր, թարգմանիչ, գրականագետ, ամենակարևորը՝ հայ ժողովրդի ջերմ բարեկամը, նրա մշակույթի սիրահարն ու պրոպագանդիստը հանուր ռուսախոս Եվրոպայում: Խորապես ազդվելով հայկական կոտորածների թողած ծանր տպավորություններից նա որոշում է սովորել հայերեն, ապա հետազոտելով հայկական աղբյուրները, հայ ժողովրդի պատմությանը վերաբերող եվրոպական գրականությունը, թարգմանել հայոց պոեզիան: Բրյուսովը ժամանեց Երևան, այցելեց Մայր աթոռ, ընդունելության արժանացավ Հայոց հայրապետի կողմից, շփվեց արևմտահայ գաղթականների հետ, լիարժեք պատկերացրեց, թե ինչ է կատարվել Արևմտյան Հայաստանում:

«Որքան խորացա,- գրում է Բրյուսովը,- Հայաստանի պատմության ուսումնասիրության մեջ, այնքան ավելի պարզորոշ կերպով առջևս ուրվագծվեցան հայ ժողովրդի պատմական բախտը և նրանց մեծ մարդկանց կերպարները»: Ավելի շեշտած լինելով թուրք բարբարոսների կատարած ոճրագործությունները, Բրյուսովը շարունակում է. «Հայ ժողովուրդը ժամանակակից քաղաքակրթյալ ժողովուրդների մեջ ամենահնագույններից մեկն է: Նա մեր աշխարհը եկած է այնպիսի հեռավոր անցյալի մեջ, երբ տակավին գոյություն չունեին ոչ միայն ժամանակակից եվրոպական ժողովուրդները. ֆրանսիացիները, անգլիացիները, իտալացիները, ռուսները, այլև հազիվ պատմական ասպարեզ իջած հին աշխարհի ժողովուրդները՝ հռոմեացիները և հույները»[3]:

Այդ ֆոնի վրա, *Վ. Բրյուսովը* անարգանքի սյունին է գամում համիդյան ջարդարարներին:

---

[1] *Ю. А. Веселовский,* Трагедия турецкой Армении, Москва, 1915, стр. 7. Տես նաև *Ավետիս Ահարոնեան,* Մեծ եղեռնը օտար մտավորականության գնահատումով, Գահիրե, 1980, էջ 20:

[2] *Ավետիս Ահարոնեան,* նշված աշխատությունը, էջ 20:

[3] Նույն տեղում:

*

* *

Հայ ժողովրդի նկատմամբ երիտթուրքերի կիրառած ***ցեղասպանության*** քաղաքականությունը, Հայաստանն առանց հայերի «արտասուքի և մահվան հովտի վերածելը», վշտի ու կարեկցանքի, բողոքի ու զայրույթի լայնահուն ալիք առաջացրեցին ***ֆրանսիական*** հասարակության, հատկապես նրա առաջավոր զավակների շրջաններում[1]: Սենայի ափերից հնչեցին ֆրանսիացի բազում գրողների, հրապարակախոսների, քաղաքական գործիչների արձակած բողոքի ճիչերը, որոնք միանալով համաշխարհային հանրության լուրջ մտահոգություններին, փորձ արեցին կանխելու հայոց ***Մեծ եղեռնը:*** Ջուր հույսե՞ր... Թուրքերն ու գերմանացի զինվորականները լսում էին այդ ամենը և շարունակում «իրենց անմարդկային ու զարհուրելի արարքները»:

Ֆրանսիական մեծերից առաջինը ***Անատոլ Ֆրանս*** (France) ***Թիբոն*** (Thibault) էր (1844-1924), որը փորձեց զորավիգ կանգնել ջարդերի ենթարկվող հայ ժողովրդին[2]: ***Նա մեծ գրող էր,*** հրապարակախոս, ֆրանսիական անմահների ակադեմիայի անդամ (1896), ***Նոբելյան*** մրցանակի դափնեկիր (1921), հայ ժողովրդի զույգ հատվածների անզուգական բարեկամը:

Ա. Ֆրանսը, լինելով հայ ժողովրդի պաշտպաններից, ամենուր շփումներ է ունեցել նրա զավակների հետ, նրանց կոչելով միասնության, համբերության, կազմակերպված պայքարի: Մեծ ֆրանսիացին անձամբ ծանոթ էր ***Արշակ Չոպանյանին*** և նրան զորավիգ էր կանգնում Ֆրանսիայում հայ մշակույթի գոհարների պրոպագանդման գործում[3]:

Նա մեր ժողովրդի ճակատագրով սկսել էր հետաքրքրվել դեռևս Համիդ II-ի կիրառած ջարդերի քաղաքականության տարիներին: 1897 թ. մարտին կազմակերպելով մարդաշատ մի հանրահավաք, Փարիզում արտասանած իր ելույթը նա ամփոփեց այսպես. «Մենք պետք է խոստովանենք, որ հայ ժողովուրդը խելոք և քաջարի ժողովուրդ է, որը ձգտում է յուրացնել քաղաքակրթության բարձր իդեալներ. նա իր հանճարով և անօրինակ դժբախտություններով համակրանքի է արժանացել այն ժողովուրդների մոտ, որոնք արդարության և ազատության գաղափարների սկիզբն են առաջադրել...»[4]:

Քիչ անց, մեծ ֆրանսիացին, արդեն դավանելով սոցիալիստական իդեալներ, մտահոգվելով հանուր մարդկության ճակատագրով, անդրադառնալով ***հայոց հարցին,*** բացախոսությամբ արձանագրեց. ***«Հայերի դատը մարդկության դատն է, հետևաբար՝ նրանք պետք է ամբողջ մարդկությանը հետաքրքրեն այդ դատով: Եվրոպային և արար աշխարհին իրենց ձայնը հասցնելու համար բոլոր հայերի ձայնը մեկ ձայն պետք է կազմի: Նրանց միակ փրկությունը՝ համերաշխ գործունեության մեջ է»***[5]:

Ա. Ֆրանսը խոր վշտով ու կարեկցանքով բացահայտեց հայ ժողովրդի բնաջնջման պրոցեսը Թուրքիայում, ցույց տվեց, որ այն զանգվածային է դարձել դեռևս Աբդուլ Համիդի ***«հզորության և թուլության հրեշի, սարսափից խելագար բռնակալի»,*** գահակալության երրորդ տասնամյակում: Երիտթուրքերը խաբեությամբ իշխանու-

---

[1] ***Ա. Ն. Մնացականյան,*** Հայկական ողբերգություն, Երևան, 1965, էջ 139-144: Տես նաև ***Մ. Արզումանյան,*** Հայաստանը 1914-1917 թթ., Երևան, 1969, էջ 561-564: «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1096-1098:

[2] ՀՍՀ, հ. 12, Երևան, 1986, էջ 700-701: ***Ծ. Պ. Աղայան,*** նշված աշխատությունը, էջ 515-516:

[3] ***Կառլեն Դալլաբյան,*** Արշակ Չոպանյան, Երևան, 1987, էջ 296-301:

[4] "Братская помощь пострадавшим в Турции армянам", Москва, 1897, стр. 474.

[5] «Գրական թերթ», Երևան, 1965, մարտի 26, N 3: Տես նաև ***Մ. Արզումանյան,*** նշված աշխատությունը, էջ 565:

թյան գլուխն անցնելով դրժեցին իրենց խոստումները և ցեղասպանության գործում գերազանցեցին ոչ միայն ամենամեծ մարդասպանին արյունախում սուլթանին, այլև մինչ այդ կիրառած *ցեղասպանությունները*՝ բոլոր երկրներում և բոլոր ժամանակներում: Ըստ հռչակավոր գրողի, այդ ցեղասպանությունը *«կեղեքող թուրքի և աշխատասեր հայի երկարատև և անհավասար պայքարի արդյունք էր, որն իր բուն առումով, այլ բան չէր, քան բռնակալության ու բարբարոսության պայքարը արդարության և ազատության ոգու դեմ»*[1]:

1916 թ. ապրիլի 9-ին Սորբոնի համալսարանի մեծ դահլիճում հրավիրված մարդաշատ ժողովում, որը ղեկավարում էր Ֆրանսիայի ներկայացուցիչների պալատի նախագահ *Պոլ Դեշանելը*, հանդես գալով հայ ժողովրդի պաշտպանությամբ, անարգանքի սյունին գամելով երիտթուրքական դահիճներին, միաժամանակ մերկացրեց կայզերական Գերմանիայի փարիսեցիական դիրքորոշումը[2]: Ապա խոսք վերցնելով Ա. Ֆրանսը անարգանքի սյունին գամեց հայ ժողովրդի ցեղասպանության մեղավորներին՝ շարունակելով. «Եվ երբ մենք տեսանք Թուրքիայի այդ զոհին դեպի մեզ հառած նրա խամրող աչքերով, որոնց մեջ փայլատակում էր հույսի ճառագայթը, մենք հասկացանք վերջապես, որ այդ մեր քույրն է մահանում Արևելքում և մահանում է հենց նրա համար, որ նա մեր քույրն է, որի հանցանքն այն է, որ նա կիսել է մեր զգացումները, սիրել է այն, ինչ մենք ենք սիրում, մտածել է այնպես, ինչպես մենք, հավատացել է նրան, ինչին մենք ենք հավատում և մեզ նման գնահատել է իմաստությունը, արդարությունը, պոեզիան, արվեստը: Այդ է նրա անքավելի հանցանքը: Հետևապես... հարկավոր է ֆրանսիացիների ժողովն արժանին հատուցի այդ ժողովրդին նրա մեծ դժբախտության պահին: Մենք կատարում ենք մեր սրբազան պարտքը: Հայաստանին հատուցում ենք իր արժանի պատիվը, ոչ այնքան նրա բոլորին հայտնի տանջանքների, որքան դրանք համառությամբ տանելու համար»[3]:

Նա իր սրտաճմլիկ ճառն ամփոփում էր լավատեսական այսպիսի մտքերով. *«Հայաստանը հոգեվարքի մեջ է, բայց նա կվերածնվի: Ո՛չ մեծ քանակությամբ այն արյունը, որը նա դեռ պահպանել է, շատ թանկարժեք արյուն է, որից հերոսական սերունդ կծնվի: Այն ժողովուրդը, որը չի ուզում մեռնել, նա երբեք չի մեռնի* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[4]:

1916 թ. մայիսին Փարիզում ձևավորվեց և իր գործունեությունն սկսեց ծավալել «Ֆրանսիա–Հայաստան» կոմիտեն: Նրա կազմի մեջ մտան հանրաճանաչ գիտնականներ և քաղաքական գործիչներ Ա. Ֆրանսը, Էտյեն Լամին, Ռաֆայել Ժորժ Լևին, աշխարհահռչակ լեզվաբան Մեյեն և շատ ուրիշներ[5]: Առաջավոր Ֆրանսիան օգնության ձեռք էր կարկառում ցեղասպանությունից փրկված հայկական բեկորներին:

Ժան Ժորեսը (Jaurés) (1859-1914) ֆրանսիական և համաշխարհային սոցիալիստական շարժման ականավոր ու ղեկավար գործիչներից էր, հետադիմության և, հատկապես, պատերազմի երդվյալ հակառակորդներից: Նա կարողացել է ցույց տալ Առաջին աշխարհամարտի գլխավոր մեղավորին, այն է՝ բոլոր երկրների իմպերիալիստական բուրժուազիային: Ինքը «պացիֆիստ» էր, դրա համար էլ սպանվեց շովինիստ Ռ. Վիլլենի կրակոցով, սպանվեց մինչև պատերազմի սկսվելը[6]:

---

[1] *Մ. Արգումանյան*, նշված աշխատությունը, էջ 565:

[2] «Հայ ժողովրդի պատմություն», բազմահատորյակ, հ. VI, Երևան, 1981, էջ 560:

[3] "Армянский вестник", 1916, стр. 17-18.

[4] "Геноцид армян в османской империи", Ереван, 1966, стр. 395. Տե՛ս նաև La Revue des «Amitiés franco-étrangères», N 4, mai-juin, 1916, p. 35.

[5] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 560:

[6] ՀՍՀ, հ. 4, Երևան, 1978, էջ 301: Տե՛ս նաև *Н. Н. Молчанов*, Жорес, Москва, 1969, стр. 31.

Մեծ հումանիստը ավելի քան զայրացած էր Եվրոպայի տերությունների ղեկավարության վրա, որն անտարբերությամբ էր նայում Աբդուլ Համիդի հայասպան քաղաքականությանը, թեկուզև նրա համար, որ չէր կատարում 1878 թ. Բեռլինի վեհաժողովում ստանձնած իր պարտավորությունները արևմտահայության հանդեպ: Նա ափսոսանքով էր խոստովանում, որ չկարողացավ կազմակերպել բողոքի ցույցեր, որպեսզի դատապարտվեին 1890-1896 թթ. հայկական ջարդերը, ապա շարունակում. «Հայաստանում տեղի է ունեցել դաժան կոտորած, որի համար մենք շատ ենք ափսոսացել: Լոնդոնից հայեր եկան, որպեսզի ֆրանսիական սոցիալիստներին խնդրեն Փարիզում միտինգներ կազմակերպելու իրենց պաշտպանության համար»[1]:

Ժ. Ժորեսը դեռևս 1907 թ. զգում էր հայերի կոտորածի նախապատրաստությունը թուրքերի կողմից: «Մտատանջող ու չարագուշակ համբավները, – գրում է նա,– կարծեք, թե նոր ջարդեր են գուժում Հայաստանի մեջ... Եվրոպան այս անգամ է՞լ արդյոք պիտի թույլ տա այդ ջարդը: Նա արդեն մեծ ոճիր գործեց՝ զոհելով մի ամբողջ ազգաբնակչություն սուլթանի մոլեգին սարսափներին և դիվանագիտության դատերին: Բայց ոճիրն այս անգամ ավելի մեծ պիտի լինի, քանի որ եվրոպական կառավարությունները արդեն ազդարարել են իրենց երկպառակությունները, մրցումները, շահադիտական հաշիվները»[2]:

1903 թ. փետրվարի 15-ին Փարիզում արտասանած իր հայանպաստ ատենախոսության մեջ, պաշտպանելով Հայաստանի ու Մակեդոնիայի շահերը, ֆրանսիացի հումանիստը շռնդալից ապտակներ է իջեցնում և՛ անտարբեր Եվրոպայի, և՛ մարդակեր Թուրքիայի երեսին: Նա գրում է. «Եթե Հայաստանում և Մակեդոնիայում մենք ուզում ենք պաշտպանել քրիստոնյա ժողովուրդներին, ապա դա ոչ թե այն պատճառով, որ նրանք քրիստոնյա են... Այստեղ խոսք անգամ չի կարող գնալ կրոնական խաչակրաց արշավանքի մասին... Այն, ինչ մենք իրավունք ունենք պահանջելու,–դրան Եվրոպային հարկադրում են իրավունքն ու պարտականությունը,– դա էլ այն է, ***որպեսզի թուրքական կառավարությունը իր բոլոր ժողովուրդներին, ռասաներին և նրանց կրոններին տա ու լիովին ապահովի տարրական անվտանգություն, ազատություն ու արժանապատվություն... Չի կարելի թույլ տալ, որպեսզի մահաբեր, արյունոտ բարբարոսության պրոբլեմը լուծվի ժողովուրդների մի մասի ոչնչացմամբ*** (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[3]:

Ժան Ժորեսն իր մյուս ու բազմաթիվ ելույթներով, հոդվածներով, առանձին ու բնութագրող ասույթներով անվերապահորեն ապացուցել է, թե ինքը արդարության, այսինքն՝ հայ ժողովրդի կողմն է, մի ժողովուրդ, որին սպասվում էր Մեծ գողգոթա: Դժբախտաբար, գուցեև, բարեբախտաբար նա չտեսավ 1915 թ. աներևակայելի բարբարոսությունները:

Ժան Ժակ Մարի դը Մորգանը (1857-1924) ֆրանսիացի ականավոր հնագետ էր, աշխարհաճանաչ ու բազմահմուտ ***պատմաբան,*** ազգագրագետ, երկրաբան, աշխարհագրագետ: Տիրապետելով եվրոպական և արևելյան մի շարք լեզուների՝ նա տարիներ, տասնամյակներ շարունակ պեղումներ էր կատարել ***Եգիպտոսում, Իրանում, Հայաստանի երկու հատվածներում,*** հասել համաշխարհային հանրությանը զարմացնող հնագիտական խոշոր հայտնագործությունների[4]: Նրան խորապես հետաքրքրել է հայ ժողովրդի ճակատագիրը, այնքան, որ ոչ միայն գրել և ֆրանսերե-

---

[1] ***Жан Жорес,*** Против войны и колониальной политики, Москва, 1961, стр. 115.

[2] "Армянский вестник", 1916, стр. 14. Տես նաև ***Ա. Ն. Մնացականյան,*** նշված աշխատությունը, էջ 141:

[3] "Геноцид армян в османской империи", стр. 166-167.

[4] ՀՍՀ, հ. 8, Երևան, 1982, էջ 48:

նով հրատարակել է «Հայ ժողովրդի պատմություն» մեկհատորյակը (1919 – Փարիզ), այլև սրտի ցավով է արտահայտվել հայկական ջարդերի մասին և 1890-ականներին, առավել ևս Առաջին աշխարհամարտի տարիներին: Գիրքն անմիջապես իր վրա հրավիրեց եվրոպացի գիտնականների ուշադրությունը, թարգմանվեց արևմտյան մի շարք լեզուներով, ինչպես նաև հայերեն[1]:

Մեկհատորյակից բացի հումանիստ և ինտերնացիոնալիստ գիտնականը, վաղօրոք հրատարակել էր բազմաթիվ հոդվածներ, որոնք վերաբերում էին Համիդ մարդասպանի, ապա նաև երիտթուրքերի հայասպան քաղաքականության մերկացմանը: Զգացմունք կա ժակ դը Մորգանի գրածների մեջ, հուզմունք և ապրումներ է նկատվում նրա հոդվածների էջերում, որոնց տողամեջերով հոսում է հայոց թափված ծով արյունը: Ինչպե՞ս չհուզվեր հայ ժողովրդի կյանքին ու կենցաղին լավածանոթ ֆրանսիացին, երբ արդեն տեսել էր փրկված եզակի հայ գաղթականներին, շփվել էր Կահիրեում, Փարիզում, Թեհրանում հանգրվանած արևմտահայ կմախքացած որբերին, ականատես էր էջմիածնի կաթողիկոսարանի պատերի տակ խմբված փախստականներին, որոնցից մահացողները բազում էին և թաղողները՝ սակավ: Ինչպե՞ս ծանր, շատ ծանր ապրումներ չունենար գիտնականը, երբ տեսել էր հանճարեղ *Կոմիտասին,* գիտեր հայոց մեծերի սպանության մանրամասները: Այստեղ պակասում էր մեծատաղանդ բանաստեղծը, որպեսզի ասեր *դե եկ, պատմաբան, մի խելագարվիր:*

Ժ. Մորգանն իր գրառումները սկսում է 1890-ականների հայկական ջարդերի պատմությամբ: «1890-ին սուլթանը, որ արդեն կը պատրաստվեր հայերը բնաջնջելու,– գրում է նա,– հանճարեղ գաղափար մը հղացած էր, այն է՝ Հայաստանի դրացի քյուրտ հրոսները զինել՝ *Համիտիե* ձիավորներ անվան տակ: *Ինչպես նախատեսելի է, իր նպատակն էր, այս ավազակները գրգռել քրիստոնյաներու դեմ:* Հետո քաջալերվելով դեսպաններու վարանոտ դիրքեն, 1894-ին կը հրամայե Սասունի մեջ կատարել կոտորածի փորձ մը, որ երեք շաբաթ կտևե: *Նույն ինքն՝ կանոնավոր զորքն էր, որ ստանձնած էր մահ սփռել ամբողջ Հայաստանին մեջ»*[2]:

Ֆրանսիացի պատմաբանի հաշվարկներով, 1894-1896 թթ. 200 հազարից ավելի հայեր կոտորվեցին, 100 հազարն էլ մահմեդականություն ընդունեցին: *«100 000-են ավելի կիներ, դեռատի աղջիկներ կառևանգվին և կղրկվին հարեմներ»*[3]: Նրա հավաստմամբ եղան նաև թույլ դիմադրություններ, որոնց ներկայացումը նույնպես հոգեմաշ տեսարաններ են հիշեցնում: Մի տեղ 60 կանայք և դեռատի աղջիկներ բանտարկվում են մի եկեղեցու մեջ, հետո *«հանձնվում զինվորներին»,* որից հետո ապավարկված վիճակում սրախողխող են արվում: Արյան հեղեղ է սկսում հոսել:

«Ուրիշ տեղ ալ, լերան մը վրա, քանի մը հազար փախստականներ, տասը օր կ'դիմադրեն, բայց իզուր: Կին մը կ'հառաջանա ժայռի մը վրա ու կ'պոռա, *«Քույրե՛ր, պետք է ընտրել երկուքեն մեկը. – կամ հանձնվիլ թուրքերուն կամ ինծի հետևիլ»,* և գրկելով իր մեկ տարեկան զավակը կ'գահավիժի անդունդը: Եվ սուլթանը շքանշաններ կպարգևե մարդասպաններու հրամանատար պաշտոնյաներուն: Արծաթազօծ դրոշակ մը կ'ղրկե քյուրտ բեկերուն»[4]:

«Դեռատի կին մը, իր բազուկներու մեջ բռնած զավակը՝ կ'երկարե, – բերում է Մորգանը, *– իր դահիճներուն մեկուն, ըսելով «առ զավակս քեզի կուտամ, բայց*

---

[1] *Ժագ դը Մորգան,* Հայ ժողովրդի պատմութիւնը իր տարեգրութեանց ամենաստույգ ժամանակներեն մինչև մեր օրերը (այսինքն՝ 1919 թ.), Պոսթըն, 1947:

[2] Նույն տեղում, էջ 340:

[3] Նույն տեղում, էջ 341:

[4] Նույն տեղում:

մի սպաներ գայն»: Դահիճը կառնե տղան, գետին կնետե և տապարի մեկ հարվածով գլուխը կկտրե: Հետո դառնալով անոր դժբախտ մորը, տապարի երկրորդ հարվածով մը անոր գանկն ալ կ'ծեղքե (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[1]:

Ժ. Մորգանը շարունակում է. «Ավա՜ղ, այս հուսահատական գործն էլ անտարբեր կ'ձգե Եվրոպան, և սուլթանն, իր կատաղութեան մեջ կ'հրամայե ավելի խստութեամբ շարունակել կոտորածները ամբողջ Հայաստանի մեջ, նույնիսկ Կ. Պոլսո մեջ, դեսպաններու աչքին առջև 10 000 հայեր վատորեն կ'սպանվին»[2]: 90-ական թվականների «դեպքերը», ծանր տպավորությամբ, օտար լեզուներով, քրիստոնյա աշխարհի ուշադրությանն է ներկայացնում ժակ դը Մորգանը, ապա անցնում է հաջորդ էտապի ջարդարարության բնութագրությանը:

Հայապաշտպան լայն գործունեություն ծավալեցին ֆրանսիացի ականավոր դեմքեր *Վիկտոր Բերարը, Ֆրեդերիկ Մակլերը, Անտուան Մեյեն* և շատ ուրիշներ, որոնց մասին գրքի ծավալի պատճառով այլևս խոսելը հնարավոր չէ:

*

* *

Աշխարհին հայտնի էր, այսօր էլ առավել ևս հանրահայտ է, որ հայ ժողովրդի ցեղասպանությունը իրողության վերածեցին երիտասարդ թուրքերը, նրանց գլխին թառած տխրահռչակ եռյակը (Էնվեր, Թալեաթ, Ջեմալ), կատարեցին *վաղուց ծրագրվածը, կատարեցին պետական մակարդակով, մարդկային խիղճն ու բանականությունը կորցրած:* Բորենու կերպարանք առած իսլամ զինվորականները, բերդերից ազատված քուրդ ցեղապետներն ու նրանց աշիրեթները, երբեմն, նույնիսկ, *«խուժանը»* – ամբողջ մուսուլման ժողովուրդը, հաշվեհարդար տեսան անպաշտպան արևմտահայության հետ՝ քաղաքում թե՝ գյուղում, դաշտում թե՝ անտառներում, շուկայում թե՝ ճանապարհների վրա: *Կատարվեց Մեծ եղեռն.* մորթոտվեց հնամենի ու զարգացած, աշխատասեր և ստեղծագործ մի ազգություն, դատարկվեց ու սեփականացվեց նրա մեծ ու պատմական Հայրենիքը:

Այդ ամենը կատարվեց ոչ ջունգլիներում, այլ *Առաջավոր* (տեսնում եք, շեշտում եմ *առաջավոր* բառը) Ասիայում, երբեմն եվրասիական ցամաքամասում, իրողության վերածվեց հանուր մարդկության, այն էլ, կարծեք թե «նրա կուրացած» աչքերի առջև: Բայց միայն մի շնագայլը չէր կարող ոչնչացնել մի ամբողջ ժողովրդի: Մահմեդական Թուրքիայի թիկունքում ոչ թե վարագուրված, այլև բացահայտորեն կանգնած էր մի այլ *«քրիստոնյա գիշատիչ»*՝ կայզերական Գերմանիան: Այստեղ էր, որ ասում են՝ ռազմաստրատեգիական և տնտեսական շահերի առջև կրոնը որևէ դեր չէր խաղում: Թուրք-գերմանական ռազմական մեքենան ուղղվեց հայ ժողովրդի դեմ, որն իր սև գործն սկսել էր դեռևս երկու տասնամյակ առաջ:

Բեռլինի միջազգային վեհաժողովը (1878 թ.) նախագահող Գերմանիայի երկաթյա կանցլեր *Օտտո Բիսմարկը,* ֆրանս-պրուսական պատերազմում փայլուն հաղթանակներ տանելով, հարևանից խլելով էլզաս-Լոթարինգիան, շուրջ հինգ միլիոն ֆրանկ ռազմատուգանք և ոսկյա անձրև տեղալով նոր միավորած Գերմանիայի արդյունաբերության գլխին, Եվրոպայի սրտում նոր ու հզոր պետություն ստեղծեց: 356 կտորից կարկատված յունկերական պետությունն իր «հմուտ, ռազմատենչ ու խարդախ» ղեկավարի վարպետությամբ դարձավ միասնական, ռազմատենչ ու վայրենա-

[1] *ժագ դը Մորգան,* նշված աշխատությունը, էջ 349:

[2] Նույն տեղում:

բարո մի տերություն, որը համայն մարդկությանը *«Համաշխարհային երկու պատերազմ պարգևեց»*[1]:

Հայկական հարցը թուրքավարի լուծելու համար օսմանյան տերության, առավել ևս երիտթուրքերին հզոր դաշնակից ու հովանավոր էր պետք: Կայզերական Գերմանիան պատրաստվում էր «հին աշխարհի բաժանման», նոր երկրների ու ազդեցության նոր գոտիների բռնազավթմանը: Երկու գիշատիչների շահերը համընկնում էին, և ստեղծվում էր թուրք-գերմանական մի նոր ալյանս: Այն առաջին հերթին ուղղվում էր նախ Ռուսաստանի, ապա, հատկապես, հայ ժողովրդի մեծ հատվածի՝ արևմտահայության դեմ:

Գերմանիան Թուրքիայի սովորական դաշնակիցը չէր: Նրա ձեռքին էին կենտրոնացված բնական հարստություններով առատ այդ երկրի տնտեսական բոլոր այն զարկերակները, որոնք անհրաժեշտ էին գրեթե ողջ աշխարհի դեմ պատերազմելու համար: Գերմանական զինվորականներն էին կազմակերպում, վարժեցնում ու վերահաս պատերազմին նախապատրաստում սուլթանական բանակը դեռևս XIX դարի 80-90-ական թվականներին: Հետևաբար 1890-ականներից էր սկսվել Գերմանիայի մեղսակցությունը հայկական ողբերգությանը:

90-ականների հայկական ջարդերից շատ առաջ Գերմանիան հետևողականորեն օսմանյան կայսրությունից դուրս էր մղում մառախլապատ Ալբիոնի սառած դիմապատկերը և Բոսֆորի ափերին ծածանվող իր դրոշի վրա մակագրում *«մահմեդականների բարեկամ և պաշտպան»* ճչացող արտահայտությունը: Այդ մակագրությամբ նա թևավորում էր արյունոտ սուլթանին ոչ միայն մորթելու հայ ժողովրդին, այլև հանցանքի մեղքը բարդելու զոհվածների հարազատների տկար ուսերին:

Եվ այսպես, 1894-1896 թթ. հայկական ջարդերի ժամանակ քաղաքակիրթ աշխարհը կարկամած էր կատարվածի մասին մանրամասներ իմանալով, զարմացած էր Համիդ մարդասպանի դաժանության համար և ամեն մեկը, ինչով կարողանում և ինչքան կարողանում, օգնություն էր հասցնում ջարդից հրաշքով փրկվածների հարազատներին և բարեկամներին: Օգնում էին թագավորներն ու պրեզիդենտները, հարուստներն ու աղքատները, կարողներն ու անկարողները: Չուշացան դեպքերին արձագանքել նաև Գերմանիայի ղեկավարները, բայց ինչպե՞ս...[2]:

1895 թ. Վիլհելմ Երկրորդ գերմանական կայսրը Թուրքիայի արյունարբու սուլթան Համիդին, հայերին օգնելու փոխարեն, ուղարկեց իր լուսանկարը[3], բարեկամական մակագրությամբ և նամակով, որտեղ նրան խորհուրդ էր տալիս չտատանվել և *«հպատակներին ցույց տալ – որ ինքը միապետ է Ալլահի ողորմածությամբ և նրա կամքը հպատակների համար Աստծո կամքն է* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[4]:

Կայզերական *կառավարությունը,* ոգևորված Վիլհելմի նամակից և վերաբերմունքից, Գերմանիայում կատեգորիկ կերպով արգելեց հայերի նկատմամբ Համիդի կազմակերպած ջարդերի մասին բացասական որևէ կարծիք հայտնել, հոդվածներ տպագրել: Ընդհակառակը, հրապարակային ճառերում նրանք գերմանական հասարակությանը *«հավատացնում»* էին, թե ջարդերը կազմակերպել են հայ գործիչները, և մեղավորը նրանք են[5]: Գերմանական կանցլեր *Գոգենհոլեն* հայերի ջարդերի պատճառները որոնում էր հայերի մեջ՝ հայտարարելով, թե *«հայկական շարժումը կապված է անարխիստների և սոցիալիստների հետ»,* դրա համար էլ այդ բոլորը

---

[1] ***Отто фон Бисмарк,*** Воспоминания, мемуары, Минск-Москва, ***Харвест Аст***, том I, 2002.

[2] ***С. М. Акопян,*** Западная Армения в планах империалистических держав, Ереван, 1967, стр. 36-37.

[3] ***А. Ф. Миллер,*** 50-летие младотурецкой революции, Москва, 1958, стр. 19.

[4] ***А. В. Амфитеатров,*** Армянский вопрос, СПб., 1906, стр. 43.

[5] ***А. С. Ерусалимский***, Внешняя политика и дипломатия германского империализма в конце XIX в., Москва, 1951, стр. 198.

ղեկավարել են *«հայկական հեղափոխական-անարխիստական կոմիտեները»*[1]:

Ջարդերից հետո Վիլհելմ կայսրը իր մինիստրների և հարուստ գործարարների հետ ժամանեց Կ. Պոլիս, որտեղ շնորհավորելով Համիդ II-ին «հաջողված գործողության համար», ոչ միայն *գրկախառնվեց նրա հետ*, այլև նրան նվիրեց գերմանական նորաստեղծ ատրճանակ, մաուզեր տիպի 200 հազար հրացան[2]: Ինչպիսի՞ արյունաներկ բարեկամություն, որը շարունակվեց մինչև Համիդի գահընկեցությունը:

Բռնկվեց Առաջին աշխարհամարտը: Գերմանական իմպերիալիստները, հատկապես նրանց ռազմական մեքենան, լիակատար տեր դարձան «դաշնակից» Թուրքիային, իհարկե, գաղտնագրված ունենալով, հաղթանակի դեպքում, այդ երկրի անդամահատման պլանները: Գերմանիան «սրտի ցավով էր ընդունում» Թուրքիայի կազմակերպած հայկական ցեղասպանության մասին հրապարակած մեղադրական հոդվածները, հաղորդագրությունները:

Կայզերական կառավարությունը սկզբում բռնեց հայկական ջարդերի մասին շրջաննառության մեջ դրված փաստերի ժխտման ճանապարհը: Ցեղասպանության օրերին Վաշինգտոնում գերմանական դեսպան *Բեռնդորֆը* ի լուր աշխարհի հայտարարեց, թե Թուրքիայում և ոչ մի հայկական ջարդ էլ տեղի չի ունեցել, և այն, ինչի մասին շատերը խոսում են, *դատարկ բամբասանք է*[3]: Նմանատիպ հայտարարություններով հանդես եկան կայզերական տերության մյուս դեսպանները բոլոր երկրներում: Սակայն մինչև ե՞րբ, քանի որ գենոցիդը «դաշնակցի» երկրում գնալով նոր թափ էր ստանում:

Մշակվեց նոր տակտիկա: Այժմ գերմանական դիվանագետները, թուրքական ջարդարարների հետ միասին, կաշվից դուրս գալով փորձում էին արդարացնել արյունախում ջարդարարներին: Նրանք հրատարակում են գրքեր, հոդվածներ, ժողովածուներ, հակաքարոզ կազմակերպելով ոչնչացվող հայ ժողովրդի և նրան ցավակցող համաշխարհային հանրության դեմ: 1915 թ. վերջերին լույս տեսավ Բրատտերի «Հայկական հարցը» գրքույկը, որտեղ փորձում էր ապացուցել, որ պատերազմի ժամանակ նման «միջոցառումները» այս կամ այն կերպ ընդունելի են[4]:

Ֆրիդրիխ Նաումանը «Կենտրոնական Եվրոպա» վերնագրված իր գրքույկի մեջ, ծայրից ծայր կեղծում էր իրողությունը և արդարացնում թուրքերի կատարած ցեղասպանությունը: Վիլհելմ II-ի Թուրքիայում նստող ներկայացուցիչ *Գումանը*, անամոթաբար հայտարարում էր, թե այդ երկրում կողք կողքի ապրում են «երկու բշնամի ժողովուրդներ՝ *թուրքեր և հայեր: Նրանք իրար հետ գոյատևել չեն կարող, հետևաբար, նրանցից մեկը պիտի ոչնչացվի: Եվ քանի որ թուրքերը գերմանացիների բարեկամներն են, հետևաբար պետք է ոչնչացվեն հայերը»*[5]: Գերմանական դեսպանը Կոստանդնուպոլսում այդ օրերին *Վանգենհայմն* էր, որը նույնպես արդարացնելով թուրքական վայրագությունները՝ տառացիորեն կրկնում էր *Գումանին*, ասելով. *«Այս պատերազմում հայերը հանդես եկան իբրև թուրքերի թշնամիներ, և ակնհայտ է, որ այդ երկու ժողովուրդները չեն կարող ապրել միասին, մեկ երկրում»*[6]: *Կարինի գերմանական հյուպատոս Անդերսը ուղղակի հայտարարեց, թե հայերը կրեցին իրենց արժանի պատիժը*[7]:

---

[1] Die Grosse Politik der Europäischen Kabinette. 1871-1914. Bd XII, Berlin, Dok. N 2904. Տե՛ս նաև ***C. M. Акопян***, նշված աշխատությունը, էջ 37:

[2] ***Георг Хольгартен***, Империализм до 1914 г., Москва, 1961 (перевод с немецкого), стр. 230.

[3] «Կոչնակ», 2 հոկտեմբերի, 1915, N 40, էջ 862-863: Տե՛ս նաև ***C. M. Акопян***, նշված աշխատությունը, էջ 59-60:

[4] ***Brätter***, Die Armenische Frage, Berlin, 1915, s. 5-7.

[5] «Մշակ», 22 սեպտեմբերի, 1915, N 207:

[6] ***Ա. Ալպօյաճեան***, Պատմություն Հայ Կեսարիո, հ. 2, Գահիրե, 1937, էջ 1450:

[7] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, գործ 632, թերթ 16: Փաստերը վերցված են ***C. M. Акопян***, նշված աշխատությունը, էջ 60-61:

Գերմանական իմպերիալիստները ամենուրեք արդարացնում էին հայերի նկատմամբ «փոքր եղբոր» կիրառած գենոցիդի քաղաքականությունը: Այդ մասին փաստերն առատ են և կասկածից վեր: Սակայն նրանք ոչ միայն արդարացնում էին թուրքերին, այլև արդեն ամենուրեք մասնակցում էին ջարդերի իրականացմանը և՛ եվրոպական, և՛ ասիական նահանգներում, այնտեղ, որտեղ հայ կար, և որտեղ սպասվում էր մորթվողների թեկուզ փոքր դիմագրավում:

Ստամբուլում գերմանական դեսպան ***Վանգենհայմի*** 1915 թ. մայիսի 31-ի գաղտնագրված հաղորդագրությունից հայտնի դարձավ, որ երիտթուրքերի գլխավոր դահճապետ էնվեր փաշայի հրամանով հայերին քշում են դեպի Միջագետքի անապատները: Այդ «սուրգյունի» պրոցեսը գլխավորում էին նաև գերմանական զինվորականները: 1915 թ. նոյեմբերին հին դեսպանին փոխարինելու եկավ ***Մետերնիխը,*** իսկ 1916 թ. հոկտեմբերի 30-ին՝ ***Բենսդորֆը:*** Երեք դեսպանների «կանոնավոր» գրագրությունները (որոնք պահպանվել են) բավական են, որպեսզի հիմնովին ապացուցվի ***գերմանական յունկերների ակտիվ մասնակցությունը հայերի ցեղասպանությանը*** [1]:

Թուրք-գերմանական հարաբերությունները գնալով սերտաճում էին «բարեկամության», հատկապես գլխավոր շտաբի այն զինամասերում, որտեղ վճռվում էր հայերի ճակատագիրը, տեղում նրանց ոչնչացնելու, թե բռնագաղթեցնելու խնդիրները: Այդ հարցերը «լուծելիս» երիտթուրքերի առաջնորդներին ոչ միայն խորհուրդներ էին տալիս, այլև գործողությանը մասնակից էին դառնում թուրքական բանակի շտաբում ծառայող գերմանացի բարձրաստիճան թվաշատ զինվորականները:

Այդ սպաների մեծ մասը հետագայում խոշոր դեր կատարեցին Երրորդ ռայխում: Դրանցից էր թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր ***Ֆրիդրիխ Բոնսարթ ֆոն Շելիհդորֆը,*** որը հետագայում կազմակերպեց թուրք հանցագործներից յոթի, այն էլ գլխավորների փախուստը:

Իր դաժանությամբ և հայատյաց վերաբերմունքով հայտնի էր թուրքական բանակներից մեկի հրամանատար, գեներալ-լեյտենանտ ***Հանս ֆոն Սեքթը:*** Նա զգուշացնում էր, թե «յուրաքանչյուր ոք, ով քրիստոնեական, զգացմունքային և քաղաքական վերաբերմունք ցուցաբերի հայերի նկատմամբ, ***կանհետանա պատերազմական անհրաժեշտությունից ելնելով»***: Այդ նույն Սեքթը հետագայում, հատկապես Երկրորդ աշխարհամարտի նախապատրաստման ծրագրերի կազմման գործում դարձավ Հիտլերի գլխավոր խորհրդականներից մեկը: Հայերի և հրեաների ջարդերի հովանավորներից ու մասնակիցներից էին գերմանական բարձրաստիճան զինվորականներ ***Ֆրանց ֆոն Կապենը, Ալֆրեդ Յոդլը, Կոնստանդին ֆոն Նեյուրատը*** և այլոք [2]:

Ադոլֆ Հիտլերը գիտեր հայ ժողովրդի գենոցիդի մասին և ոգևորված էր այն մտայնությամբ, թե հանցագործությունը արդարացում չի պահանջում: Ավելին, արդարացնելով ֆաշիստների կողմից հրեաների և լեհերի ծրագրվող ջարդերը, նա 1939 թ. օգոստոսի 22-ին Օբերզալցբուրգում Գերմանիայի գերագույն հրամանատարներին և գեներալներին ուղղված ճառում ասել էր. «Մեր ուժը արագության և դաժանության մեջ է: Չինգիզ խանը միլիոնավոր կանանց ու երեխաների կոտորեց կանխամտածված կերպով ու թեթև սրտով: Պատմությունը նրանում տեսնում է սոսկ պետության

---

[1] Մանրամասն տես «Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke», Herausgegeben und eingeleitet von Dr. *Johannes Lepsius.* Potsdam, 1919, Dok. 72, S. 71-79, նույն տեղում, էջ 96-97: Տե՛ս նաև՝ "Сборник дипломатических документов, реформы в Армении", СПб, 1915, стр. 114-118.

[2] Վերոհիշյալ շարադրանքի փաստերը մեզ է տրամադրել այս գրքի խմբագիր, Ցեղասպանության բանգարան-ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ***Լավրենտի Աշոտի Բարսեղյանը:***

հիմնադրի: Ինձ համար նշանակություն չունի, թե ինչ կասի իմ մասին խղճուկ արևմտաեվրոպական քաղաքակրթությունը: Ես հրամայել եմ, որպեսզի մեր պատերազմական նպատակը չլինի սոսկ որոշակի սահմաններ նվաճելը, այլ թշնամու ֆիզիկական ոչնչացումը: Եվ ցանկացած մեկը, որ քննադատական որևէ խոսք կարտասանի, կգնդակահարվի պատժիչ ջոկատի միջոցով: Այսպես, կազմ ու պատրաստ վիճակում են մահվան ջոկատները, առայժմ միայն Արևելքում, որոնց հրամայված է առանց խղճահարության սպանել լեհական ծագման ու լեհերեն խոսող տղամարդկանց, կանանց ու երեխաներին: Միայն այսպես մենք կկարողանանք ձեռք բերել մեզ անհրաժեշտ հողային կենսատարածությունը:

Վերջիվերջո, ո՞վ է այսօր հիշում հայերի ցեղասպանությունը (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[1]:

Այդպիսին է եղել գերմանական իմպերիալիզմի պաշտոնական վերաբերմունքը հայերի ցեղասպանության նկատմամբ, այդպիսին է եղել նրա տխրահռչակ դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Սակայն կար նաև երկրորդ Գերմանիա, գերմանական ժողովուրդ, նրա լուսավոր զավակները, որոնք ճանաչեցին և դատապարտեցին հակամարդկային այդ եղելությունը՝ գենոցիդը:

Այս դեպքում է, որ ասում ենք երկու Գերմանիա, երկու տեսակետ, երկու վերաբերմունք հայ ժողովրդի ու նրա կրած տառապանքների – Մեծ եղեռնի նկատմամբ:

Դեռևս XIX դարի 90-ական թվականներին արևմտահայերի ողբերգությունների վրա է հրավիրվել գերմանական սոցիալ-դեմոկրատիայի անդրանիկ սերնդի ուշադրությունը: Դրանցից առաջինը երկրի սոցիալ-դեմոկրատիայի ճանաչված տեսաբան ու ղեկավար ***Ավգուստ Բեբելն էր*** (1840-1913): Նա առաջիններից մեկն էր, որն իր ձայնը բարձրացրեց 90-ական թվականների հայկական կոտորածների առիթով, դատապարտեց բոլոր տեսակի պատերազմները, առավել ևս անպաշտպան քրիստոնյա ժողովրդի վրա մահմեդական բորենիների հարձակումները, 300 հազար անզեն հայերի ոչնչացման եղերական եղելությունը:

Այդ տասնամյակների Գերմանիայում կրթություն էին ստանում մի քանի տասնյակների հասնող հայ ուսանողներ և՛ արևմտահայերից, և՛ արևելահայերից, հատկապես Լեռնային Ղարաբաղից ու նրա մայրաքաղաք, հայաշատ Շուշի քաղաքից: Նրանք սովորում էին Բեռլինի, Իենայի, Մյունխենի, Լայպցիգի համալսարաններում, ունեին «Հայ ուսանողական ընկերություն»: Ուսանողները կապված էին Մայր Հայրենիքի հետ, լուրեր էին ստանում Թուրքիայում խմորվող ապագա հայկական ջարդերի մասին և միջոցներ չէին խնայում օգնության ձեռք կարկառել մարդկային սպանդի առաջ կանգնած արևմտահայ անզեն հայրենակիցներին:

Այդ ուսանողներից մեկը՝ Ա. Աթաճեսյանը պատմում էր, որ ինքը և Լայպցիգում սովորող երեք այլ հայ ուսանողներ, հայրենակից ողջ ուսանողության անունից 1893 թ. հանդիպումներ են ունեցել Ա. Բեբելի և Վիլհելմ Լիբկնեխտի հետ, նրանց խնդրելով, որպեսզի ազդեն իրենց կառավարությունների վրա, եթե կարողանան կանխեն ծրագրվող հայկական ջարդերը, իսկ եթե ոչ, ***«գոնե թեթևացնեն այդ թշվառների ապրելակերպի զարհուրելի պայմանները»***[2]:

Հայ ուսանողներին Ա. Բեբելը պատասխանում է. «Ես հավատում եմ Ձեզ: Նույ-

---

[1] *Գ. Պ. Բարդակչյան*, Հիտլերը և հայերի ցեղասպանությունը, Երևան, 1991, էջ 58: Այդ մասին մենք հոդված ենք տպագրել մամուլում: Տե՛ս ***Гайк Казарян,*** Даже Адольф Гитлер признал факт геноцида армян, "Урарту", (Ереван), N 14 (440), 2002, 26 апреля-2 мая.

[2] *Մ. Արզումանյան*, նշված աշխատությունը, էջ 582-583:

նանման դիմում մենք ստացանք մի ամիս առաջ նաև Բեռլինի հայ ուսանողությունից: Ձեզ ասում եմ այն՝ ինչ նրանց. Հայ ժողովրդի բախտը կապված է համայն Թուրքիայի ժողովուրդների բախտի հետ: Միապետական ռեժիմի պայմանները միանման սոսկալի են ողջ Թուրքիայի համար, ուստի և հայերի դրությունը կբարելավվի այն ժամանակ, երբ կբարելավվի ամբողջ Թուրքիայի ժողովուրդների բախտը: Իսկ բոլորիդ հարցը կլուծվի, երբ կտապալվի և սուլթանի ռեժիմը:

– Իսկ ե՞րբ կտապալվի սուլթանի ռեժիմը, – հարցրի ես:

– Ե՞րբ, երբ որ Թուրքիայում նույնանման պայմանների տակ ապրող բոլոր ազգությունները, մանավանդ նրանց ամենից շատ տանջված տարրերը կմիանան՝ փշրելու գոյություն ունեցող կարգերը:

– Բայց չէ՞ որ թուրքերը մահմեդական են և երբեք քրիստոնյաների հետ չեն միանա, – նկատեց ընկերս:

– Հալածվածներն ու ճնշվածները կրոն ու ազգություն չեն ճանաչում: Փորձեք դուք, հայերդ, այդ ուղղությամբ գործել թուրք ժողովրդի հետ և երբեք հայկական առանձին հարց չբարձրացնել: Հակառակ դեպքում Դուք միայն հեռացնում եք ձեզանից բողոքող մուսուլման տարրերին և հարստահարվածների դատը դարձնում ազգային հայկական դատ, մի բան, որ, բնականաբար, գրգռում է մուսուլման ժողովրդին...»[1]:

Ա. Բեբելի, դժբախտաբար միջազգային բանվորական շարժման մյուս բոլոր եվրոպացի ղեկավարների ուսմունքի հիմքում ընկած էր ճնշված ժողովուրդների ինտերնացիոնալ, միասնական պայքարի տեսությունը: Նրանք սոցիալ-դասակարգային պայքարին իրական, ճիշտ ձև ու բովանդակություն հաղորդելով՝ չհասան ազգային հարցի լուծման գործարար ճանապարհ ցույց տալուն[2]: Մարքսիստները, բոլոր սոցիալ-դեմոկրատները կրոնի, դավանանքի խնդիրները համարել են ածանցիկ, որտեղ և խորապես սխալվել են: *Հետագա հարյուրամյակն ապացույցներ տվեց այն մասին, թե դասակարգային անտագոնիզմը հարթել ավելի դյուրին ու հնարավոր է, քան թե կրոնական տարբեր ուղղությունների միջև համերաշխություն ստեղծելը:* Իսլամն այստեղ մարտնչող է, բարբարոսության քարոզիչը «սրբազան պատերազմի» գաղափարախոսը: Այս բոլորի վկայությունը փաստական հիմնավորումն է արևմտահայ քրիստոնյաների ապրած ողբերգությունը Թուրքիայի իսլամապաշտների ձեռքին:

Ավագ գործընկերոջ գաղափարակիցն ու հայացքների պաշտպանն էր *Վիլհելմ Լիբկնեխտը* (1826-1900): Նա իր խմբագրած «Ֆորվերտս» պարբերականի էջերում, շառաչող առաջնորդողներում քննադատության նշանախեց էր ընտրել ոչ միայն արյունարբու սուլթանի, քրդական «համիդիեների» հայաջինջ գործունեությունը, այլև արկածախնդրությամբ թուրքերին գրգռող հայ որոշ «տաքգլուխներին», ինչպես նաև գերմանական իմպերիալիստներին:

Վ. Լիբկնեխտն ընդարձակ հոդվածով դատապարտեց «Օտտոմանյան բանկի» գրավողներին, անխոհեմ, ժամանակավրեպ համարեց նրանց պայքարի ընթացքը, միաժամանակ սրտացավությամբ հայ երիտասարդությանը խորհուրդ տվեց զգույշ գործել, մինչև «ատամները զինված գազանին չնետահարել»: Դա կարող էր անհարկի զոհեր տալու առիթ դառնալ, ուստի պետք է գործելուց առաջ լավ մտածել հետևանքների մասին:

Հայ ուսանողները, չհասկանալով ծերունազարդ խմբագրի մարդասիրական խորհուրդները, օրը ցերեկով հարձակվեցին «Ֆորվերտսի» խմբագրության վրա, քարա-

[1] Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև «Երկրի ձայն» (Թիֆլիս), 1907, N 25, էջ 7:

[2] *Н. А. Овчаренко*, Август Бебель, Краткий очерк жизни и деятельности, Москва, 1963.

ջարդ արեցին բանկարժեք տպագրական մեքենաները: Կյանքի մայրամուտն ապրող, հայ ժողովրդի բարեկամ գերմանացին սրտի ցավով իրեն չհասկացող ուսանողներին պատասխանեց. «*Ձավակներս, սակայն ես եվրոպական խարդախ դիվանագիտությունն ավելի լավ գիտեմ, քան դուք* (ընդգծումները մերն են-Հ. Ղ.)»[1]:

Առաջին աշխարհամարտի տարիներին թուրք-գերմանական հայասպան քաղաքականության մերկացմամբ, շռինդով հրապարակ իջավ «Սպարտակ» հեղափոխական կազմակերպությունը, հատկապես *Վիլհելմ Լիբկնեխտի* ավագ որդին՝ *Կարլ Լիբկնեխտը* (1871-1919)[2]: Միջազգային բանվորական շարժման ականավոր ղեկավարներից էր նա, հայ ժողովրդի ամենաջերմ ու սրտացավ բարեկամներից, որը ոչ միայն նամակագրական սերտ կապեր էր ունեցել, այլև անձնապես ծանոթ էր եղել Բոգդան Կնունյանցի, Ստ. Շահումյանի, Սիմեոն Տեր-Պետրոսյանի – Կամոյի, Ալ. Բեկզադյանցի, Վ. Կասպարովի, Հ. Հակոբյանի, Հ. Գյուլիքևխյանի և այլոց հետ[3]:

Կարլ Լիբկնեխտը պատերազմի սկզբում գերմանական բանակի զինվոր էր: Նախքան ռազմաճակատ մեկնելը նա բազմիցս ելույթներ էր ունենում և հայտարարում, թե այդ պատերազմը զավթողական է, թալանչիական, հետևապես ռազմաճակատում չի կրակելու ռուս, անգլիացի, թե ֆրանսիացի զինվորների վրա: Նրա ճշմարիտ բնութագրմամբ ինչպես Վիլհելմ II կայսրը, այնպես էլ երիտթուրքերն իրենց հպատակներին քշում են դեպի սպանդանոց[4]: 1914-1916 թթ. Կ. Լիբկնեխտը պատեհ առիթը բաց չէր թողնում հրապարակայնորեն ելույթներ ունենալու իթթիհատական իշխանությունների իրականացրած հայկական սպանդի, ավելի կոնկրետ՝ կատարված ցեղասպանության մասին[5]:

Կարլ Լիբկնեխտը մինչև պատերազմը ընտրվել էր գերմանական *Ռայխստագի* (պառլամենտի) պատգամավոր և գլխավորում էր սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան: 1916 թ. հունվարին նրան ռազմաճակատից ետ կանչեցին Ռայխստագի նիստերին մասնակցելու համար: 1916 թ. հունվարի 11-ին Բեռլինում Կ. Լիբկնեխտը հարցապնդումով դիմեց գերմանական կառավարությանը՝ պահանջելով պատասխանել, թե ինչպես է, որ «*Թուրքիայի դաշնակիցը լինելով՝ Գերմանիան իր ձեռքերը տաքացնում է հայերի արյան մեջ, հատկապես պատերազմի ժամանակ, երբ անչափ ավելացնում է իր մեղքերը՝ մասնակցելով դժբախտ հայ ժողովրդի դաժան կոտորածներին* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[6]:

Ռայխստագի «բարձրապատիվ» ամբիոնից, աներեր գերմանացին, առանց երկնչելու իր երկրի կառավարությանը ուղղակիորեն մեղադրեց Հայոց ցեղասպանությանը մասնակից լինելու մեջ՝ շարունակելով. «*Արդյո՞ք կայսերական կառավարության գրասենյակի պետը տեղեկություն ունի, որ այս պատերազմի ընթացքում, մեր դաշնակից Օտտոմանյան կայսրությունը հարյուր հազարներով հայերի է բռնագաղթեցրել իրենց բնակավայրերից և ենթարկել կոտորածի: Ինչպիսի՞ հայտարարություն է արել թուրքական կառավարության գրասենյակի պետը այդ ոճրագործության մեղավորներին պատասխանատվության ենթարկելու, Թուրքիայում*

---

[1] *Եմ. Յարոսլավսկի*, Հայրն ու որդին, Մոսկվա, 1919, էջ 5: Տե՛ս նաև *Н. Б. Овчаренко*, նշված աշխատությունը:

[2] *Կարլ Լիբկնեխտի* դիմաստվերը պատմագրական մեծ վարպետությամբ կերտել է պրոֆ. *Ա. Ն. Մնացականյանը:* Տե՛ս նրա «Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային մտքի գնահատմամբ», Երևան, 1965, էջ 147-149:

[3] ՀՍՀ, հ. 4, Երևան, 1978, էջ 610:

[4] *Ա. Ն. Մնացականյան*, նշված աշխատությունը, էջ 147: Տե՛ս նաև *Карл Либкнехт*, Мой процесс по документам, Петроград, 1918, стр. 6-7.

[5] *С. М. Акопян*, նշված աշխատությունը, էջ 67:

[6] *Карл Либкнехт*, Мой процесс по документам, стр. 54.

հայերի գոնե մնացած մասի պաշտպանության ապահովման վերաբերյալ և կանխելու նման դաժանությունները (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[1]:

Կարլ Լիբկնեխտի հարցադրումը ցնցեց ողջ Ռայխստագը: Նրանից դժգոհ մնացին ոչ միայն բուրժուական կուսակցությունները, այլև սոցիալ-շովինիստները: *«Հայկական խնդրին»* գումարելով ուրիշ այլ հարցումներ Ռայխստագի պատգամավորները 1916 թ. հունվարի 16-ին, 60 ձայնով, ընդդեմ 25-ի, որոշեցին Լիբկնեխտին զրկել Ռայխստագի դեպուտատի և ընդհանրապես անձեռնմխելիության իրավունքներից: 1916 թ. հունվարի 27-ին Լիբկնեխտը «Սպարտակի» ղեկավարությանը դիմեց քաղաքական բովանդակությամբ հագեցված մի նամակով, որտեղ ասված էր. «*Թուրքական կառավարությունը կազմակերպել է հայերի սարսափելի կոտորածներ: Ամբողջ աշխարհը գիտե այդ մասին և ամբողջ աշխարհը դրա պատասխանատվությունը դնում է նաև Գերմանիայի վրա, քանի որ թուրքական կառավարությունը Կոստանդնուպոլսում ղեկավարում են գերմանական զինվորականները: Ոչինչ չգիտեն միայն Գերմանիայում, քանզի գերմանական մամուլի շուրթերին փականք է դրված* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[2]:

Կարլ Լիբկնեխտը կոտրեց լռության սառույցը, և գերմանական աշխատավորությունը նրա ելույթների շնորհիվ տեղեկացավ, թե թուրք-գերմանական շնագայլերն ինչպես են հոշոտել և տվյալ պահին էլ հոշոտում են հայ ժողովրդին: Նա զոհ գնաց յունկերական կառավարության գաղտնի հրահանգով սպանությանը, սակայն իր մարդասիրական գործերով մնաց հայ ժողովրդի ամենաջերմ բարեկամների ցանկում:

Օտտոմանյան բռնապետության երկաթյա մագիլներում հինգ հարյուրամյակ աքընդմեջ տառապած, օր օրի արյունաքամվող հայ ժողովրդի ստվար հատվածի *արևմտահայության* սոցիալ-քաղաքական անտանելի վիճակը երեք տասնամյակ (1895-1925) շարունակ խնդրո առարկա են դարձել մեկ այլ, խոշոր գերմանացի *Յոհաննես Լեփսիուսի* (1858-1925) համար: Նա իր համապարփակ, հայանվեր գործերով խոր ակոս գծեց հայ-գերմանական հարաբերությունների պատմության քառուղիներում, ուսանելի էջեր թողեց երկու ժողովուրդների բարեկամությունը նորովի վերընծյուղելու ճանապարհին: Յ. Լեփսիուսը, իր ստեղծագործական ոգորումներով մտավ համաշխարհային մեծությունների փաղանգ, քանի որ զբաղվելով գիտությունների զույգ առաջավոր ճյուղերով՝ փիլիսոփայությամբ և աստվածաբանությամբ, դրանք հիմնավորապես ծառայեցրեց մարդուն, տվյալ պահին՝ հայ ժողովրդին[3]:

Դ-ր Յ. Լեփսիուսը ծնվել է Բեռլինում, հռչակավոր եգիպտագետ և լեզվաբան *Կարլ Ռիխարդ Լեփսիուսի* ընտանիքում: Նա սովորել է Բեռլինի, Մյունխենի, Գրայֆսվալդի, Շտետինի համալսարաններում, ստացել նախ փիլիսոփայության, ապա աստվածաբանական գիտությունների դոկտորի աստիճան[4], աշխատանքն սկսել է Երուսաղեմի միաբանությունում, որը և կանխորոշեց «նրա ապագա կյանքի հետագիծը»[5]:

---

[1] «Հայաստանի կոչնակ», 1916, 26 փետրվարի, N 9, էջ 225: Տես նաև *С. М. Акопян*, նշված աշխատությունը, էջ 67:

[2] *Карл Либкнехт*, Мой процесс по документам, стр. 41, 54. Տես նաև *Գ. Բ. Ղարիբջանյան*, Կարլ Լիբկնեխտը և Ռոզա Լյուքսեմբուրգը հայ ժողովրդի մասին, Երևան, 1971: Տես նաև "Геноцид армян в османской Турции", стр. 445, 607.

[3] *Յ. Լեփսիուսի* մասին քիչ էր գրվել: Տես "Геноцид армян в османской империи", *Ռ. Գ. Սահակյանի* կազմած ծանոթագրությունները, էջ 604: Տես նաև ՀՍՀ, հ. 4, էջ 594: *Մ. Արզումանյան*, Հայաստանը 1914-1917, Երևան, 1969, էջ 591: "Армянский вестник", 1916, N 1, стр. 5. Միայն վերջերս լույս է տեսել մի շահեկան աշխատություն, որը գրված է օտար լեզվով ստեղծված սկզբնաղբյուրների հենքի վրա, փաստառատ է և արժանի ուշադրության: Տես *Աշոտ Նորայրի Հայրունի*, Յոհաննես Լեփսիուս, հայանվեր գործիչ ու հրապարակախոսը, Երևան, «Միտք» հրատարակչություն, 2001:

[4] Տես *Ա. Ն. Հայրունի*, նշված աշխատությունը, էջ 7:

[5] Նույն տեղում:

Յ. Լեփսիուսը արևմտահայերի ճակատագրով սկսել է հետաքրքրվել XIX դարի վերջալույսին, իր խոստովանությամբ՝ դեպքերի ճակատագրական բերումով: Երուսաղեմում աշխատելու առաջին իսկ տարում՝ 1895 թ. սեպտեմբերի 29-ին՝ նրա մասնակցությամբ հիմնադրեցին «Գերմանական առաքելությունը արևելքում» ընկերություն, որը խնդիր ուներ արևելքի մահմեդականների մեջ քրիստոնեական վարդապետության քարոզչություն ծավալել: Սեպտեմբերի 30-ին լուրեր հասան Քրիստոսի ծննդավայրը, հայ ժողովրդի ջարդերի մասին, այն էլ սուլթանների մայրաքաղաքում: «Կարելի է ճակատագրի ցուցում համարել..., որ սեպտեմբերի 30-ին (1895), մեզ համար միանգամայն անակնկալ կերպով, – գրում է Լեփսիուսը, – Կ. Պոլսում սկսվեց հայերի առաջին կոտորածը, որին հաջորդեցին նոր ջարդեր: Դրանց հրահրողը անձամբ Աբդուլ Համիդ II-ն էր: 1895 և 1896 թվականներին նրա նստավայրից էին դուրս գալիս հրամանները քրիստոնյաների կոտորածները սկսելու *վերաբերյալ, որոնք աննկարագրելի ցասում առաջ բերեցին ողջ Եվրոպայի ու Ամերիկայի քրիստոնյաների մեջ: ԳԱՄ-ի ծրագիրը, որը սկզբնապես վերաբերում էր մահմեդականների շրջանում քարոզչության կազմակերպմանը, փաստերի տրամաբանությամբ կանգնեց մի այլ առաջադրանքի առջև՝ օգնության կազմակերպումը հարյուր-հազարավոր մորթված հայերի այրիներին ու որբերին* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[1]:

Գերմանական կառավարությունը սկզբում ստահոդ էր համարում հայկական ջարդերի մասին տարածված լուրերը, իսկ պաշտոնական դեղին մամուլը սկզբում ժխտում էր անգլիական և ֆրանսիական թերթերի հաղորդագրությունները, հետագայում սկսեց շահարկել *«հայկական հեղափոխության» հեքիաթը:*

1896 թ. մայիսին, Յ. Լեփսիուսը, իր հետ վերցնելով եվրոպական ու արևելյան մի քանի լեզուների տիրապետող *Ջեյմս Գրինֆելդին,* սկսում է իր ոդիսականը: Նրանք շրջում են Թուրքիայի, ապա Արևմտյան Հայաստանի տարածքով մեկ, Կիլիկիայի դարպասներով մտնում Ադանա, Տարսուս և երեք շաբաթից հետո վերադառնում Ստամբուլ: Հայապաշտպանների խնդիրն էր ակնառու փաստեր հավաքել հայկական ջարդերի մասին, որպեսզի կարողանան եվրոպական մամուլում մերկացնել Համիդ II-ին, հայ ժողովրդի նկատմամբ կիրառած հայասպան քաղաքականության համար: Ստացած տպավորությունները նա ամփոփում է այսպես. *«Մենք կարողանում էինք ամենուրեք քրիստոնյաներից և մահմեդականներից տեղեկություններ քաղել տեղի ունեցած կոտորածների սոսկալի մանրամասների մասին և շարունակ հաստատված տեսանք այն փաստը, որ ոչ մի տեղ հայերի կողմից ապստամբություն կամ պրովոկացիա տեղի չի ունեցել, այլ ջարդերի ողջ պատասխանատվությունը ծանրանում է բացառապես թուրքական իշխանությունների վարչական միջոցառումների վրա* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[2]:

1896 թ. հունիսի 18-ին Յ. Լեփսիուսի արշավախումբը վերադարձավ Գերմանիա: Սկսվեց նրա պայքարը՝ մի կողմից՝ թուրքական ջարդարարներին դիմակազերծ անելու, մյուս կողմից՝ Արևմտյան Հայաստանում ու ողջ Թուրքիայով մեկ «կուտակված» որբերին օգնության ձեռք մեկնելու ուղղություններով: Առաջին իսկ շաբաթներում հիմնվեցին հայերին սպասարկող երկու որբանոցներ *«Հարիսյան»* և *«Լեփսիուսյան»:* Նա իր ունեցած միջոցները, ինչպես նաև փայլատակող միտքն ու շառաչող գրիչը անմնացորդ ծառայեցնում էր տանջահար հայ ժողովրդին:

1896 թ. ամփոփելով հավաքած նյութերը՝ Յ. Լեփսիուսը կազմեց մի աշխատու-

---

[1] *J. Lepsius*, 30 Jahre Deutscher Orient-Mission, «Der Orient», 1925, էջ 11: Տես նաև *Ա. Ն. Հայրունի,* նշված աշխատությունը, էջ 10:

[2] *Ա. Ն. Հայրունի,* նշված աշխատությունը, էջ 20: Տես նաև *J. Lepsius*, նշված աշխատությունը, էջ 133:

թյուն, որը վերնագրելով «Հայաստանը և Եվրոպան», սկզբում հրատարակեց գերմաներեն, ապա այն թարգմանվեց անգլերեն, ֆրանսերեն, վերջում նաև հայերեն: Դրա էջերում մեծ գերմանացին 90-ական թվականների հայկական ջարդերի սահմռկեցուցիչ տեսարանները դարձրեց Եվրոպայի ու եվրոպացիների ուշադրության առարկա, հրապարակած փաստերն իբրև ամոթի թուք շպրտեց թուրք-գերմանական կառավարողների անամոթ երեսին, նրանց կատարած զազրելի արարքները անարգանքի սյունին գամեց[1]:

1914 թ. հունիսի 16-ին Բեռլինում, Յ. Լեփսիուսի նախագահությամբ, ստեղծվեց «Գերմանա-հայկական ընկերություն», հանձնարարություն ունենալով, ի հակադրություն Անտանտի տերությունների, Արևմտյան Հայաստանում ուժեղացնել կայզերական տերության ազդեցությունը: Աշխարհամարտի վառոդի հոտն արդեն զգացվում էր Առաջավոր Ասիայում և հումանիստ գերմանացին չարաղետ կանխատեսումներ էր անում արևմտահայության նկատմամբ: Նա 1915 թ. կեսերին, իր արևմտահայ բարեկամներից լուրեր ստացավ ***ցեղասպանության*** ծրագրերի վերաբերյալ:

Կատարվեց անսպասելին, աներևակայելին: Ապրիլի 24-ին ծայր առավ ***Մեծ եղեռնը – ցեղասպանությունը:*** Կերտվեց Հայոց պատմության ***ամենաողբերգական, ամենավիպական, զարմանալիորեն նաև ամենահերոսական*** շրջանը: Հայ ժողովուրդը մաքառեց, բայց ուժերն անհավասար էին, դրա համար էլ տվեց միլիոնավոր զոհեր, անհատների փոխարեն ***վեր խոյացան անթիվ ու անհամար հերոսներ:*** Զոհերի շարքերում էին գիտնականներ և բանաստեղծներ, ճարտարապետներ և երաժիշտներ, բժիշկներ ու փաստաբաններ, փիլիսոփաներ և բանասերներ: Հերոսների փաղանգում զոհվելով անմահացան, ապրելով փառաբանվեցին երկրագործներ և արհեստավորներ, անասնապահներ և այգեգործներ, ուսուցիչներ ու վանականներ: Զարմանալի է մեր ժողովուրդը. մեռնելով էլ անմահանում է, զոհվելով էլ փոխվրեժի է կոչում վերապրողներին[2]:

Ստանալով շշմեցուցիչ տեղեկություններ հայկական ջարդերի մասին, իմանալով այդ ժողովրդի բնավորությունը, հատկապես անկոտրում կամքն ու մաքառելու պատրաստակամությունը, Յ. Լեփսիուսը արևմտահայությանը ոչնչացումից փրկելու խնդրանքով սկսում է ծեծել գերմանական տերության բարձրաստիճան կառավարողների դռները, փորձում կանգնեցնել սպանդը: Աղաչանքներն անօգուտ էին, պատասխանները խիստ մերժողական, նույնիսկ սպառնալից: Թուրքիայի ու թուրքերի պաշտոնյաներից մեկը նրան պատասխանել է. «Պատվելի, քեզի խորհուրդ կուտամ, սահմանափակել գործունեությունդ հայերի վերաբերյալ հարցերի մեջ և անոնց աչքի զարնող ձև մը չտալ: Գիտես որ օսմանյան պետությունը մեր դաշնակիցն է: Հայերը մեր հպատակները չեն. մենք թուրքերու գործերուն միջամուխ ըլլալու իրավունք չունինք»[3]:

Պարտություն պարտության հետևից կրած Յ. Լեփսիուսը, դեռևս վերջնականապես չհուսահատված, մեկնում է Բոսֆորի այն ափերը, որտեղ երեկ հայոց արյան գետեր էին հոսել, որտեղ ոչնչացվել կամ բռնագաղթեցվել էր ազգի ընտրանին, ***ժողիկը՝ այն էլ անթառամ:*** Նա թուրքերի պետական նստավայրում դիմում է գերմանական դեսպան Վանգենհեյմին, փորձելով աստվածաբանական, ավելի ստույգ անեծքաբանական մեթոդով վախեցնել նրան և կանխել հետագա արյունահեղությու-

[1] "Геноцид армян в османской Турции", Ռ. Գ. Սահակյանի կազմած ծանոթագրությունները, էջ 604: Տես նաև *Մ. Արզումանյան,* նշված աշխատությունը, էջ 591:

[2] *Ա. Ն. Մնացականյան,* Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային մտքի գնահատմամբ, Երևան, 1965, էջ 3-4: Գրքի խմբագիր և առաջաբանի հեղինակ *Հրաչյա Քոչարի* մտքերից:

[3] *Մ. Արզումանյան,* նշված աշխատությունը, էջ 591:

նը: Դեսպանը կատարում էր իր տերության ղեկավարների կամքը, որոշումների մեջ անդրդվելի էր և չափազանց զայրացած Լեփսիուսի վրա. նրան սպառնալով պատասխանում է *«Պատվելի, այդ խղճահարություններդ երկնքի հովերում փչե, քու պաշտոնեդ դուրս է մեր և թուրքերու ներքին գործերուն միջամուխ ըլլալը: Կերևի, թե դուն չես ըմբռնած Քրիստոսի այն խոսքը, թե «թագավորինը՝ թագավորինն է և Աստծունը՝ Աստծուն»* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[1]:

Գերմանացիներից մերժված ու հուսախաբված Յ. Լեփսիուսը փորձում է ազդել թուրքական արյունախում եռապետության անդամներ Թալեաթի և Էնվերի վրա: Պատասխանն առավել կոպիտ ու դաժան էր: Նրանք բացեիբաց կշտամբում են գերմանացուց՝ ասելով. «Չափազանց միամիտ կերևիք, ծերուկ, մենք թուրքերս, մեր ըրած գործերը ձեզի պես մարդոցմեն ավելի շատ լավ կըմբռնենք: Դուք միամիտ եվրոպացիներդ, մեր երկրին ներքին և քաղաքական անցքերուն բոլորովին անտեղյակ եք: Դուք երբեք իրավունք չունիք մեր կառավարության որդեգրած ներքին զսպողական օրենքները քննադատելու: Երբեք իրավունք չունիք նաև մեր երկրին մեջ ապրող ժողովուրդները պաշտպանելու, *մանավանդ, ապերախտ հայերը, որոնք դարերե ի վեր մեր երկրին մեջ ապրելով, գրեթե թուրք ժողովուրդին վնաս պատճառելով հարստացած են»*[2]: Լեփսիուսը ժխտելով այդ զրպարտությունը, պատասխանում է, թե *«Հայերն այս երկրին մեջ ամենեն լուսամիտ ժողովուրդը կհամարվին»*[3]:

Յ. Լեփսիուսին մնում էր կանգնել *ցեղասպանությունից* մազապուրծ հայկական բեկորների կողքին, նրանց ցույց տալով նյութական օգնություն, բարոյական աջակցություն: Խիզախ ու հայանվեր այդ մտավորականը հազարներով հայ որբերի կյանք է փրկել ուղղակի Թուրքիայի գեհենից փախցնելով նրանց տեղափոխել է շրջակա քրիստոնյա երկրներ, նույնիսկ արաբական արևելք, վերջիններիս ապահովել նյութապես, ապա կազմակերպել կրթության գործը: Լեփսիուսյան որբերից դեռևս այսօր էլ վերապրողներ կան:

Սակայն միայն դա չէր: 1915 թ. երկրորդ և հաջորդ տարվա առաջին կեսին նա հավաքեց *Հայոց եղեռնին* վերաբերող եզակի, վավերական փաստեր, թուրքական պետական պաշտոնական գրություններ և 1916 թ. Պոտսդամում հրատարակեց *«Հաշվետվություն Թուրքիայում ապրող հայ ժողովրդի մասին»* ժողովածուն: Աշխատությունը գաղտնի ուղարկվեց «Deutsche orient mission» միսիոներական ընկերության անդամներին, նրանց ծանոթացնելու, թե ի՞նչ է կատարվել և այդ պահին ինչ է կատարվում Թուրքիայում: Աշխարհամարտից հետո, երիտթուրքերի և կայզերական տերության ղեկավարների *«դիմապատկերը»* պատռելու նպատակով աշխատությունը գերմաներենով, մեծ տպաքանակով տպագրվեց, ապա թարգմանվեց ֆրանսերեն և հայերեն, տարածվեց Եվրոպայով մեկ:

1919 թ. Յ. Լեփսիուսը լույս ընծայեց *«Գերմանիան և Հայաստանը 1914-1918 թթ.»* ծավալուն մի այլ ժողովածու, որի էջերում ամփոփված են Թուրքիայում պաշտոնավարած գերմանական դեսպանների, հյուպատոսների, դիվանագիտական բնագավառի տարաբնույթ աշխատողների զեկույցները, հաշվետվությունները և հուշերը: *Բնագիր, վավերական ու վավերագրական անժխտելի այդ փաստերով, նա կարողացավ քրիստոնյա աշխարհին* տեղյակ պահել, թե 1915-1918 թվականների Թուրքիայում ոչ միայն կռիվներ են եղել, *այլ պետական մակարդակով ոչնչացվել է մի ամբողջ ժողովուրդ, այսինքն՝ XX դարի*

[1] «Ջարթոնք», Բեյրութ (Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի առիթով), 1965, 17 մարտի, N 141:
[2] *Մ. Արզումանյան,* նշված աշխատությունը, էջ 591-592: Տե ս նաև «Ջարթոնք»,1965, մարտի 23, N 146:
[3] Նույն տեղում:

արշալույսին կատարվել է Մեծ եղեռն, որն ուրիշ անունով կոչել չես կարող, բացի ցեղասպանությունից: Ցնցող էին, աներևակայելի Հայկական եղեռնին վերաբերող փաստերը, առավել աներևակայելի էին հայերի մորթոտման, ոչնչացման, կենդանի-կենդանի այրման, ամենափոքր մանուկների, ամենատարեց ծերունիների ոչնչացման թուրքական ձևերն ու քրդական բարբարոսական մեթոդները:

Յ. Լեփսիուսը մինչև կյանքի վերջն էլ մնաց հայ ժողովրդի հավատարիմ բարեկամը և այդ պատճառով հալածվեց իր հայրենիքում, մահապատժի ենթարկվելու վտանգից խուսանավելով՝ ծողոպրեց Հոլանդիա, *բայց երբեք չդադարեց Հայոց ցեղասպանության մեղքը դնել իսկական մեղավորների՝ թուրք բորենիների և գերմանական ջարդարարների ուսերին:*

Մեծ գերմանացու, հումանիստ մարդու դիմապատկերն առավել պայծառ դարձավ *Սողոմոն Թեհլերյանի* դատավարության ժամանակ: Արժե, մանավանդ, *այսօր հարկավոր է,* քիչ ավելի մանրամասնել այս խնդրի պատմությունը, քանզի թուրք կառավարությունը, նրա ծայնափող դարձած «կեղծ պատմաբաններն» աղավաղված փաստեր են հրապարակ նետում, որպեսզի փրկվեն պատասխանատվությունից: Դա այլևս անհնար է...

1918 թ. նոր լիցք ստացավ Յ. Լեփսիուսը, փորձելով ասել այն ամենը, ինչ մինչ այդ երկնչել էր հրապարակել: Նա իր խմբագրած հանդեսում տպագրեց փաստառատ մի աշխատություն, որը վերնագրել էր *«Ի՞նչ է կատարվել հայերի հետ»*[1]: Այդ գործի երկրորդ մասը կոչվում էր *«Օգնելու ժամանակը եկել է»,* որն ուղղված էր գերմանացի քրիստոնյաներին:

Ահա նրա սպառիչ բնութագրությունը *Հայկական ցեղասպանության,* որի բովանդակած փաստերին թող մեկ անգամ ևս ծանոթանան այսօրվա «թուրք կեղծարարները»: Նա դիմում է գերմանացիներին. «Արե՛ք, ինչ կարող եք, – գրում է Յ. Լեփսիուսը,– մեր ժողովրդին բեռնաթափեք անասելի ոճիրից: Մեր՝ քրիստոնյաների անունները ազատեք այն նախատինքից, որ մենք Աբելի սպանության համար միայն Կայենի խոսքերն ունենք: Դեռ ապրում է աքսորված ժողովրդի մնացորդը, որին կին և երեխայի հետ թվով *1,5 միլիոն* քշեցին անապատները: Տասնյակ հազարների դիեր, որոնց ճանապարհին սպանեցին, թունավորեցին օդը, վարակեցին Անատոլիայի և Միջագետքի թիկունքային ճանապարհները: Անապատի ավազը ծածկում է հարյուր հազարավոր սովամահ եղածների դիերը: Հավանաբար դեռ 150 հազար հյուծված կանայք, երեխաներ, զառամյալներ, մուրացկանների մի ժողովուրդ, մահին ընդառաջ է գնում: Դա խղճուկ մնացորդն է մի՝ նախկին ջանասիրությամբ և տոկուն աշխատանքով վեր խոյացած ժողովրդի, *որն իր քրիստոնյա հավատը պահպանեց երկու հազարամյակ:* Մի՞թե տասնյակ հազարավոր աղջիկներն ու երեխաները, որոնց որպես հեշտ ավար քարշ տվեցին թուրքական քաղաքներն ու քրդական գյուղերը, ազատության իրավունք չունեն: Մի՞թե հարյուր հազարավոր քրիստոնյաների հարկադրված օտար հավատը պետք է շարունակվի մնալ: *Պե՞տք է արդյոք ամբողջ աշխարհը իրավացի դուրս գա այն հարցում, որ միայն Գերմանիան ոչ մի զգացում չունի քրիստոնյա անվան և մարդկային արժանապատվության նման նախատինքի համար: Եթե դուք մեղսակից չեք եղել, ապացուցեք, որ չեք ուզում մեղսակից դառնալ: Ձեզ ցավ չե՞ն պատճառում տասնյակ հազարավոր որբերը: Արե՛ք, ինչ Ձեր ուժերը թույլ են տալիս: Օգնեցե՛ք, այդ թշվառ մնացորդին փրկել...»*[2]:

---

[1] Սույն մտքերը մենք քաղում ենք *Ա. Ն. Հայրունու* նշված աշխատությունից: Գերմաներենից բերված ընդարձակ մեջբերումը նույնպես վերցրել ենք նրա թարգմանությամբ:

[2] *J. Lepsius,* Was hat monden Armenien getan? «*Miteilungen...*», 1918, p. 116-117. Տե՛ս նաև *Ա. Ն. Հայրունի,* նշված աշխատությունը, էջ 79-80:

Հայ ժողովրդի մեծ բարեկամներից էր ***գերմանացի*** ականավոր գիտնական, արևելագետ, հայագետ, բանասեր, լեզվաբան, աշխարհագրագետ, միջազգային չափանիշների ակտիվ քաղաքական գործիչ ***Յոզեֆ Մարկվարտը*** (1864-1930): Նա ավարտել էր ***Թյուբինգենի*** համալսարանը, 1912 թվականից դասախոսել Բեռլինի համալսարանում, որտեղ և 1920 թ. հիմնելով իրանագիտության ու հայագիտության ամբիոն, ղեկավարել է մինչև կյանքի վերջը: Գիտնականն այնքան էր կապված հայ ժողովրդի հետ, որ իր բազմաթիվ ու բազմաբովանդակ գիտահետազոտական աշխատություններից մի քանիսը ստորագրեց ***«Հովսեփ Բդեշխյան»***[1]:

Յ. Մարկվարտը պարբերաբար հանդես է եկել Հայկական դատի պաշտպանությամբ, արևմտահայության ողբերգությունը ճանաչել իբրև ***ցեղասպանություն,*** որի մեղսակիցն է համարել Թուրքիայից բացի գերմանական իմպերիալիստներին: 1914 թ. հրատարակած «Կոմանների ցեղի մասին» աշխատության էջերում նա մերկացրել է համաշխարհային հանրության դատին ներկայացված Գերմանիայի արտաքին քաղաքականությունը, հատկապես առաջին աշխարհամարտի նախօրյակին:

1919 թ. Բեռլինում լույս տեսավ Յ. Մարկվարտի ***«Հայ ազգի ծագումն ու վերածնունդը»***[2] աշխատությունը, որի էջերում խստությամբ դատապարտեց երիտթուրքական ջարդարարներին և նրանց գերմանական հովանավորներին[3]:

Ահա թե ինչ էր գրում Յ. Մարկվարտը Աբդուլ Համիդի ջարդարարության մասին. ***«Մեր սերունդներն անտարակույս ամոթից կշառագունեն, երբ պատմության գրքերում կարդան կամ հարկադրված լինեն իրենց հարևաններից լսել այն մասին, որ Աբդուլ Համիդը, homo sapiens-ի այդ ցցուն հատանմուշը, համարձակություն է ունեցել իրեն կոչել գերման ժողովրդի բարեկամը*** (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[4]:

Երիտթուրքերի իրականացրած ցեղասպանության մասին նա գրում էր. «Անկասկած է օսմանյան կառավարությունը համաշխարհային պատերազմի մոտեցումը գնահատեց որպես առավել բարենպաստ պահ վաղ ժամանակներից ի վեր իր փայփայած պլանը կենսագործելու համար: ***Ջիհադը***՝ ի պատիվ ալլահի կատարվող սպանությունն ու կողոպուտը, որը մեղմ ձևով կոչվում է «սրբազան պատերազմ», և որը Թուրքիան հայտարարեց գերմանական կառավարության հրահրմամբ կամ համենայն դեպս նրա ***հավանությամբ, այդ սրբազան պատերազմը, որի հետ այսօր մեծ հույսեր էին կապում, ունեցավ միայն այն հետևանքը, որ թուրքերին օգնեց իրականացնելու սպանությունների իրենց պլանները, Արևելքի համարյա բոլոր քրիստոնյաների, գլխավորապես հայերի լրիվ ոչնչացումը*** (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[5]:

Հայկական ցեղասպանության ճանաչողների ու դատապարտողների համաստեղության մեջ փայլատակող գիսաստղերից է ***Ֆրանց Վերֆելը*** (1890, Պրագա –1945, Կալիֆոռնիա, ԱՄՆ): Նա իրեն համարում է ***ավստրիացի*** գրող, որն անցել է գրական-ստեղծագործական հարուստ, միաժամանակ բարդ ճանապարհ, սկսելով էքսպրեսիոնիզմից, հանգրվանել է ռեալիստների ճամբարում:

---

[1] Սաքրամասն տես Գ. Վ. ***Աբգարյան,*** Յոզեֆ Մարկվարտ, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, N 2: Տես նաև ՀՍՀ, հ. 7, 1981, էջ 325-326: ***Ռ. Գ. Սահակյան,*** Մարկվարտը արևմտահայ գենոցիդի մասին, ՀՍՍՀ, «Տեղեկագիր», 1966, N 7, էջ 111-120: ***Ստ. Ստեփանյան,*** Հայաստանը իմպերիալիստական Գերմանիայի պլաններում, Երևան, 1975:

[2] ***Մ. Արզումանյան,*** նշված աշխատությունը, էջ 595:

[3] Տես "Геноцид армян в османской империи", стр. 579, 615:

[4] «Պատմա-բանասիրական հանդես», 1965, N 2, էջ 151: Տես նաև ***Մ. Արզումանյան,*** նշված աշխատությունը, էջ 595:

[5] "Геноцид армян в османской империи", Ереван, 1983, стр. 578.

Ֆ. Վերֆելը գրել է բանաստեղծություններ, պոեմներ, պատմվածքներ, պիեսներ (հատկապես «Մարդը հայելու միջից», «Տրոյայի կանայք»), վեպեր («Ոչ թե սպանողն է մեղավորը, այլ սպանվածը», «Ուսումնականիցները») և այլն[1]: Գրողը պաշտպանում և զարգացնում է համամարդկային հումանիստական գաղափարաբանություն, ճնշված անհատների, հարստահարված ու պետականազուրկ ազգերի բարեկամն է, կործանված գահերի ու կորուսյալ թագերի կենդանացման, վերականգնման համար պայքարողների առաջին շարքերումն է: Այդ ժողովուրդներից է նա համարում նաև *հայ ժողովրդին:*

1923 թ. նա գրեց «Վերդի» վեպը: Այն նվիրված էր իտալական ազգային-ազատագրական պայքարին, սակայն բովանդակությամբ հար և նման էր սուլթանական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած անհավասար պայքարին, կռվելով մեռնելու, բայց երբեք չհանձնվելու, չստրկանալու ընդվզմանը:

Մեծ գրողը ըստ երևույթին հայ ժողովրդի հերոսապատման մասին վեպ գրելու մտահղացումը վաղուց ուներ, սակայն դեռ չէր համարձակվում գործի անցնել: 1930 թ. նա հանգրվանում է *Վիեննայի Մխիթարյանների միաբանությունում,* երեք տարի անընդմեջ հետազոտում հայոց ձեռագրեր, պատմական նշխարքի վերածված, պատերազմին ու հայկական գողգոթային վերաբերող վավերագրեր, արվեստի նմուշներ: Նա ուսումնասիրում էր այն ամենը, ինչ հայկական էր, *միաժամանակ* երկարատև ու երկարաշունչ զրույցներ ունենում թուրքական յաթաղանից մազապուրծ, եղեռնը վերապրող հայ գաղթականների հետ:

Վերջապես իրողության է վերածվում հանճարեղ գրողի երազանքը: 1933 թ. ավարտվում է նրա վեպը, որի 1935 թ. հրատարակության տիտղոսաթերթին գրված էր. *«Ֆրանց Վերֆել, բախտորոշ դյուցազներգություն՝ կռվով, հերոսությամբ, սիրով և հաղթանակով զեղուն»*[2]: Այդ վեպը *«Մուսա լեռան քառասուն օրն» էր,* սկզբում փոքր տպաքանակով տպված, այսօր թարգմանված աշխարհի տարբեր ու բազմաթիվ լեզուներով, տարածված գրեթե բոլոր աշխարհամասերում, էկրանավորված և դարձած քրիստոնյա ազատատենչ գրեթե բոլոր ժողովուրդների սիրելի գրքերից մեկը:

Վեպը 1934 թվին, այսինքն՝ հրատարակության առաջին տարում, արժանացավ *«Տարվա լավագույն վեպի միջազգային մրցանակին»*[3] և անմիջապես իր վրա հրավիրեց համաշխարհային ընթերցողի ուշադրությունը:

Ֆրանց Վերֆելի վեպը արծակ, իսկական դյուցազներգություն է, որի գլխավոր հերոսը *հայ ժողովուրդն է:* Գեղագիտական մեծ վարպետությամբ կերտված Գ. Բագրատյանի, Տեր-Հայկազունու, Ա. Թովմասյանի, Անդրեասյանի գրական դիմանկարները *հավաքական են,* որքան իրական, այնքան էլ վիպական են: Հեղինակը, նրանց մղած պայքարի մեջ խտացրած ներկայացրել է այն ամեն դրականը, ինչ դրսևորվել է երիտթուրքական բորենիների դեմ հայ ժողովրդի մղած հերոսամարտերում:

Վեպի վերնագիրը ևս աստվածաբանական է: Ֆ. Վերֆելն իր գործին նյութ է ընտրել սուետահայության գոյապայքարը 1915 թ. օգոստոսի 8-ից մինչև սեպտեմբերի 20-ը, այսինքն՝ հարմարացրել է այնպես, որ *40 օր* դուրս գա: Սակայն հայտնի է սուետահայության դյուցազնամարտի տևողությունը – 50 օր: Փիլիսոփա վիպասանը այն հարմարեցրել է Մովսես Մարգարեի *«Քառասուն օրվան»,* որպեսզի աստվածաբանական բովանդակություն հաղորդի եղելությանը, քանզի միայն *հրաշքը* կարող էր

---

[1] *Франц Верфель,* Сорок дней Муса Дага, Ереван, 1982. Предисловие *Михаила Дудина,* стр. 3-9. Տե ս նաև՝ ՀՍՀ, հ. 11, Երևան, 1985, էջ 420, *Մեջի Փիրումովայի* հոդվածը:

[2] Այդ մասին տե ս *Ա. Ն. Մնացականյան,* նշված աշխատությունը, էջ 159-161: *Մ. Արզումանյան,* նշված աշխատությունը, 596-597:

[3] ՀՍՀ, հ. 11, էջ 421:

փրկել բեկորացված, ամեն ինչից, հատկապես հույսից կտրված այդ ժողովրդին, քանզի միայն ***«սուրբ աստվածայինը»*** կարող էր պատահաբար օգնության ձեռք մեկնել լեռնածերպերին քառած, թուրք բորենիների կողմից շրջափակված (բացի ծովահայացը) կիլիկիահայությանը:

Վեպի հեղինակը խորաթափանցությամբ, փաստառատ նյութերով դիմակազերծ է անում հայ ժողովրդի դահիճներ էնվեր, Թալեաթ և Ջեմալ փաշաներին, գեղարվեստական մեծ վարպետությամբ ներկայացնում վաղամտածված նրանց ծրագրերը, ցույց տալիս դրանց գործադրելու հրեշավոր մեթոդներն ու աներևակայելի հետևանքները: Ֆ. Վերֆելը Թուրքիայի կատարածը Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում իրավամբ բնութագրում է իբրև ***ցեղասպանություն, եղեռն,*** և առաջավոր մարդկությանը թախանձում է հաշիվ պահանջել աշխարհի բոլոր ժողովուրդների ցեղասպաններից:

Հումանիստ քաղաքացին ու գրողը վեպում փայլուն ապագա է գուշակում ջարդերից նոր ինչ աչք բացած, «փոքրիկ Հայաստանի» հողի վրա պետականություն վերընծյուղած հայ ժողովրդին: Նրա վեպի լեյտմոտիվն այն է, որ չնայած իր կրած անհամար տառապանքներին, ապրած մեծ, շատ մեծ ողբերգությանը, աշխատասեր, խիզախ, ընդունակ ու շնորհալի հայ ժողովուրդը եկել է դարերի խորքից և պիտի ապրի, պիտի տեսնի նոր հազարամյակներ, քանզի նա դրա իրավունքը նվաճել է և՛ զենքով, և՛ աշխատանքով:

Երախտագետ հայ ժողովուրդն այսօր էլ մեծ ակնածանքով է վերաբերվում Ֆրանց Վերֆելի անմահ հիշատակին: Տարիներ անց հայրենանվեր սուետահայերը նրա աճյունը Կալիֆոռնիայից սգո մարդաշատ թափորով տեղափոխեցին Ավստրիա, ամփոփեցին նրա հայրենի Վիեննայի հողում, կանգնեցնելով մահարձան-կոթող: Միայն վերջերս հայկական պատվիրակությունը, ***նախագահ Ռ. Քոչարյանի*** գլխավորությամբ եղավ Վիեննայում, գլուխ խոնարհեց հայ ժողովրդի մեծ բարեկամի շիրիմի առջև: Երևանի գեղեցիկ փողոցներից մեկը կոչվում է ***Ֆրանց Վերֆելի*** անունով:

Էդուարդ Բեռնշտայնը (1850– Բեռլին, 1932 – Բեռլին) գերմանացի նշանավոր սոցիալ-դեմոկրատ էր, քաղաքագետ, պատկանում էր մարքսիստական գաղափարաբանության աջ թևին: 1902 թվականի հունիսի 26-ին Բեռլինում նա կարդաց մի դասախոսություն ***«Հայկական տառապանքներն ու Եվրոպան»*** թեմայով, որը 1906 թ. հրատարակվեց գերմաներեն: 1997 թ. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, տնօրեն Լ. Ա. Բարսեղյանի խմբագրությամբ, այն հրատարակել է նաև հայոց լեզվով[1]:

Է. Բեռնշտայնի հրապարակային դասախոսության ժամանակ, նախ մեկ անգամ ևս, բացահայտվել և դատապարտվել են համիդիեական թուրքերի կիրառած գազանությունները հայ ժողովրդի նկատմամբ, ցույց է տրվել հայկական ջարդերի աշխարհագրությունը, դրանց պատճառներն ու հետևանքները՝ հատկապես ռուս-թուրքական պատերազմից (1877-1878), Սան Ստեֆանոյի (1877, 3 մարտի) պայմանագրից, Բեռլինի կոնգրեսից (1878, հունիս-հուլիս) հետո: Նրա հրապարակախոսական մտրակող լեզվի «ծանր հարվածների» տակ անարգանքի սյունին են գամվել նաև եվրոպական մեծ տերությունները, հայերի նկատմամբ վերջիններիս վարած երկդիմի, շահամոլ, փարիսեցիական քաղաքականությունը, որին զոհ գնացին 90-ականներին ցեղասպանված ու գաղթի ճանապարհ բռնած կես միլիոն հայերը:

Գերմանացի քաղաքագետը ներկայացնում է 90-ականների դեպքերն Արևմտյան

[1] «Օտարերկրացիները Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին», ***Էդուարդ Բեռնշտայն,*** Հայերի տառապանքն ու Եվրոպան, Երևան, 1997, էջ 11-27:

Հայաստանում և եվրոպական Թուրքիայում: «... 1894 թ. սեպտեմբերին, – գրում է Բեռնշտայնը,– Սասունում և նրա մերձակայքում գազանաբար 2000 հայեր մորթվեցին: Իրավիճակն այնքան զարհուրելի էր, թուրք մեծամեծ պաշտոնյաների մեղսակցությունն այնքան ակնհայտ, որ պետությունները հարկ համարեցին միջամտել: ...1895 թ. մայիսի 11-ին պետությունները թուրքական կառավարությանը ներկայացրին բարենորոգումների ծրագրի մի հուշագիր, ***որի արդարացի լինելը չհամարձակվեց ժխտել նույնիսկ սուլթանը»***[1]:

1895 թ. հոկտեմբերի 22-ին սուլթանը, մեծ տերություններին, հատկապես Անգլիայի վարչապետին խոստացավ անմիջապես սկսելու բարեփոխությունների ծրագրերի կենսագործումը: Բայց ինչպե՞ս կիրառեց. ***«Կազմակերպվեցին սահմանները չճանաչող և նախապես ծրագրված կոտորածներ, – գրում է Բեռնշտայնը, – հայերին ամբողջովին բնաջնջելու համար՝ ցեղասպանություն, որի նմանը երբեք չէր տեսել պատմությունն իր մեծությամբ ու դաժանությամբ*** (ընդգծումները մերն են-Հ. Ղ.)»[2]:

Ջարդերը կազմակերպվում ու խրախուսվում էին Բարձրագույն Դռան, անձամբ արյունախում սուլթանի կողմից: Նա փաստորեն խաբում էր եվրոպական տերությունների: Հոկտեմբեր - նոյեմբեր ամիսներին, «խաբվել ցանկացող» արևմտյան տերությունների բաց աչքերի առջև կատարվեց հայկական ***առաջին ցեղասպանությունը,*** մորթվեց մոտավորապես 200 հազար անպաշտպան հայություն: «... Եթե Դուք իմանաք, թե ի՞նչ պայմաններում են սպանվել մարդիկ,- գրում է Է. Բեռնշտայնը,– կին, ծեր, մանուկ, ինչ անգթությամբ և ինչ գազանությամբ են գործածված այդ ոճիրները և հոշոտումները, ինչ նրբանուրբ ու դիվային են (որին ընդունակ են միայն արևելցիները իրենց մոլեռանդությամբ ու մտաբորբոքմամբ), այնժամ պիտի հասկանաք անգլիացի ոչ զգայապաշտ պետական գործչին, որն ասել է, թե Հայաստանի կոտորածների տեսիլները գիշերները խռովել են իր քունը: Մանուկներին ծնողների աչքի առաջ վայրագորեն խողխողել են, հղի կանանց արգանդները ամուսինների ներկայությամբ ճեղքել են և տղամարդկանց սպանելուց առաջ՝ խայտառակ ձևով անդամահատել...

Պատմության տարեգրությունների մեջ որքան կուզեք փնտրեցեք, մի ամբողջ ժողովրդի դեմ գործած նման վայրագությունների ուրիշ օրինակ չեք գտնի»[3]:

Ջարդերը շարունակվեցին 1896 թվականին մայրաքաղաքում, Արևմտյան տերությունների դիվանագետների բաց աչքերի առջև: «Իհարկե, 1895-1896-ի կոտորածների նման ջարդեր չեն լինում ամեն տարի, բայց թուրք կառավարությունը այսօր ևեթ պատրաստ է կրկնելու ամեն տեսակ չարագործություններ: ***Հայ ժողովրդի մեջքը ծուռ, չի կարող ինքնապաշտպանվել, թուրքը չոքել է նրա կոկորդին իբրև շղթայակապ մի շուն»***[4]:

Գերմանական սոցիալ-դեմոկրատների մեծ մասի մասնակցությամբ, է. Բեռնշտայնը առավել մանրամասնելով հայ ժողովրդի Թուրքիայում և սեփական Հայրենիքում Արևմտյան Հայաստանում, կրած տառապանքների պատմությունը, կոչ է անում գորավիգ կանգնել հնամենի, ընդունակ, քաղաքակիրթ այդ ժողովրդին, նրան փրկել մահմեդականների մահասփյուռ երկաթյա մագիլներից: Նա առաջարկում և քվեարկության է դնում ժողովականների ուշադրությանը ներկայացրած ներքոհիշյալ որոշ-

---

[1] *Էդուարդ Բեռնշտայն,* նշված աշխատությունը, էջ 20:
[2] Նույն տեղում, էջ 20-21:
[3] Նույն տեղում, էջ 20:
[4] Նույն տեղում, էջ 24:

ման տեքստը. *«Թուրքահայ ժողովրդի տառապանքները, իր անկախության պայքարը կառավարության գործակալների կամայականության դեմ, իր ինքնապաշտպանությունը ընդդեմ կիսաքաղաքակիրթ լեռնականների անգութ բարբարոսությունների, պահանջում են բոլոր ազատասեր մարդկանց համակրանքը և, մանավանդ, քաղաքակիրթ աշխարհի բարոյական աջակցությունը, ովքեր կռվում են իրենց ազատագրության համար:*

Ժողովը հայտնում է իր ողոկանքը այն արյունահեղ ջարդերի համար, որոնց ասպարեզը այս վերջին տարիներին եղավ Հայաստանը, և որոնք դեռ շարունակվում են: Ժողովն այդ սոսկալի անգթությունների պատասխանատվությունը նախ դնում է սուլթանի կառավարության վրա, ապա և՝ հավասարապես մեծ տերությունների կառավարությունների վրա, որոնք 1878 թ. Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի համաձայն հանձն առան հսկելու մի շարք միջոցառումներ և պիտի երաշխավորեն կյանքի գոյության որոշակի պայմանների ապահովությունը Հայաստանում»[1]:

1902 թվականին կարդացած դասախոսությամբ, ***Էդուարդ Բեռնշտայնը*** և գերմանական սոցիալ-դեմոկրատները 90-ականների հայկական ջարդերը բնութագրում են իբրև ***եղեռն,*** այսինքն՝ ***ցեղասպանություն*** և ***մարդկության ու ազգերի*** դեմ գործած ոճիր: Այնտեղ ասված է.

«1793 թ. մարդու իրավունքների հռչակագրում կա հետևյալ հոդվածը. որևէ հասարակության դեմ եղեռն է համարվում այն, երբ նրա անդամներից մեկի դեմ ***բռնություն է բանեցվում:*** Այս իմաստով, մենք այսօր ասում ենք՝ մարդկության և ազգերի դեմ ոճիր է հարստահարել և ճնշել քաղաքակրթության ընդունակ մի ազգ: Եթե զոհված ժողովուրդը մեզանից հեռու է, հուժկու բողոքներ բարձրացնենք, որ մինչև Բարձր Դուռ լսվի և հզոր արձագանք գտնի կայսրության նախարարապետի մոտ: *Պետք է վերջ դնել Թուրքիայի անարգ կառավարությանը, ծեռք մեկնել հայերին և երկրի երեսից ջնջել սուլթանական հալածանքները: Այս պատճառով խնդրում եմ* ձեզ, որ բողոքի որոշման հավանությունը տաք և վավերացնենք (երկարատև և բուռն ծափահարություններ)»[2]:

Կարծեք թե կանխատեսվում էր 1948 թվականի դեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի «Ցեղասպանության մասին» կայացած որոշման ***երկրորդ հոդվածը***[3]:

Առաջին աշխարհամարտի տարիներին, նույնիսկ դրանցից տասնամյակներ առաջ, կացնահարվող հայ ժողովրդի զույգ հատվածներին, հատկապես արևմտահայությանը, սին խոստումներով էին կերակրում իրար դեմ կռվամարտող, աշխարհի գրեթե բոլոր խոշոր տերությունները, թե՛ Անտանտի և թե՛ Քառյակ համածայնության մեջ մտնող երկրները: Եվրոպական մեծերը հրապարակավ, բազմիցս հավաստիացնում էին հայ ժողովրդին, ոչ միայն կանխել ***մարդկային սպանդի*** պրոցեսն օսմանյան, ապա երիտթուրքական Թուրքիայում, այլև վերականգնել կես հազարամյակ առաջ կորցրած նրա պետականությունը՝ գոնե ***ինքնավարության*** սկզբունքներով, իրողության վերածել վերջինիս փայփայած վաղնջական երազանքը:

Դժբախտաբար դրանք բոլորն էլ սոսկ հայտարարություններ էին, այն էլ հանգամանքների բերումով, պահի ազդեցությամբ «թելադրված» հրապարակումներ, որոնք այսօր տրվում էին, վաղը, առանց փոքր-ինչ խղճի խայթի, մոռացվում: Իրականում «արյունածարավ» Եվրոպայի պետությունների կառավարող ամենաբարձրաստի-

---

[1] *Էդուարդ Բեռնշտայն,* նշված աշխատությունը, էջ 27:

[2] Նույն տեղում:

[3] *Համեմատիր* "Сборник международных договоров ООН", Нью-Йорк и Женева, 1944, стр. 780-781:

ճան այրերը հայ ժողովրդին, ինչպես նաև աշխարհի մյուս փոքր ժողովուրդներին, ***մանրադրամի տեղ էին ծառայեցնում,*** ամեն կերպ ջանում նրանց թափած ծով արյունն օգտագործել իրենց նվաճողական, զավթողական նպատակներին:

Նրանք երբեք էլ նպատակ չեն հետապնդել Թուրքիայի «ծեռքը բռնելով» թույլ չտալ, որ շարունակվի անպաշտպան արևմտահայության նահատակման պրոցեսը: Ավելին, ոչ մի տերության դիվանագիտական փաստաթղթերում վկայություն չկա Հայաստանի երկու հատվածների միավորման և հայկական միասնական անկախ պետության ստեղծման վերաբերյալ:

Ցավալի է, բայց դաժան իրողություն, որ մեծ տերություններից և ոչ մեկը, նույնիսկ բոլորը միասին, գործնականորեն ու ժամանակին չդատապարտեցին ցեղասպանության երևույթը, որևէ էտապում Թուրքիային չստիպեցին կանգնեցնել հայասպանության անտանելի պրոցեսը: Այդ պարագան ավելի ոգևորեց ոչ միայն երիտթուրքական շնագայլերին, այլև նրանց գործը «հավատարմորեն շարունակող» Մուստաֆա Քեմալին, Քյազիմ Կարաբեքիրին և այլ բորենիների: Հայ ժողովրդի մորթոտման տարիներին, նույնիսկ ամիսներին, Անգլիան, Ֆրանսիան, ցավոք նաև ցարական Ռուսաստանը, գաղտնի բանակցություններ էին վարում, դաշնակցային պարտավորությունները մոռացած, մեկը մյուսին ***սպառնալիքներ էին տալիս և «որոշում»,*** թե պատերազմի հաղթական ավարտից հետո,ինչպես են վերածնելու Հայաստանի, Կիլիկիայի և արաբական աշխարհի քարտեզը:

Այսպիսով, չնայած իմպերիալիստական բոլոր պետությունները, ընդհանուր առմամբ, իրենց մեղքն ունեն հայկական ողբերգության մեջ, բայց միաժամանակ էլ նրանցից յուրաքանչյուրը յուրովի իր բաժին պատասխանատվությունը պիտի կրեր անմարդկային, աներևակայելի այդ պրոցեսի համար: Մեծ տերություններից ամեն մեկը Առաջին աշխարհամարտի տարիներին նրանից և՛ առաջ, և՛ հետո, վարում էր առանձին քաղաքականություն, Արևմտյան Հայաստանի նկատմամբ ուներ իր զավթողական պլանները՝ չնույնացնելով մյուսների հետ[1]:

Արևմտյան Հայաստանի և արևմտահայության նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքի հարցի քննադատությունը թողնելով աշխատության ***հետագա էջերին,*** այստեղ ջանանք ցույց տալ, որ Եվրոպայի առաջավոր մտածողները, քաղաքական գործիչներից շատերը ճանաչում էին ցեղասպանությունը, դատապարտում այդ պրոցեսը և հնարավորության սահմաններում օգնության ձեռք մեկնում ջարդերից փրկված հայկական բեկորներին:

Դիմելով պատմական փաստերին՝ ***սկսենք Անգլիայից:*** Պատմագիտությամբ զբաղվող յուրաքանչյուր հետազոտողի հանրահայտ է Բրիտանական տերության թուրքոֆիլական քաղաքականությունը, որը գալիս էր դարերի խորքից և շարունակում է հարատևել ***մինչև մեր օրերը, այսինքն՝ այսօր:***

Օվկիանոսի մեջ խարսխված սառնասիրտ Ալբիոնը, հազարավոր կիլոմետր հեռավորությունից, օգտվելով ***«ծովերի թագուհի»*** լինելու իր առավելությունից, «պաշտպանում» էր Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, իհարկե, առիթից առիթ, առանց կրակոց արձակելու և գեթ մի զինվոր զոհելու, համեղ պատառներ կորզում նրանից: Սառախլապատ Թեմզայի ափերին ծվարած, և՛ Լորդերի, և՛ Համայնքների պալատները միշտ էլ որոշումները կայացնում էին ի վնաս հայ ժողովրդի:

Ղրիմի պատերազմից (1853-1856) հետո Փարիզի «խաղաղության» պայմանագրով՝ լորդերի առաջարկով Ռուսաստանի կողմից ազատագրված Արևմտյան Հայաստանի ողջ տարածքը վերադարձվեց Թուրքիային: Ռուս-թուրքական (1877-1878)

---

[1] Սանրամասն տես *С. М. Акопян,* նշված աշխատությունը, էջ 33-34:

պատերազմի ժամանակ Անգլիան հարձակումով սպառնաց Ռուսաստանին, կանխեց Ստամբուլի գրավումը, Կիպրոս կղզին ստանալով՝ Թուրքիային ետ վերադարձրեց Արևմտյան Հայաստանի մի հատվածը (Ալաշկերտը, Բայազետը և այլն): Առաջին աշխարհամարտի տարիներին, հատկապես ավարտից հետո, Բրիտանական էմիսարները զարմանալիորեն կանգնած էին ոչ միայն ցեղասպան Թուրքիայի, այլև նավթատեր Ադրբեջանի պաշտպանի դիրքերում:

Ուինստոն Չերչիլը գերազանցեց բոլորին: Երկրորդ աշխարհամարտի ավարտին խորհրդային զորքերը կազմ ու պատրաստ կանգնած էին Արաքսի ու Արփաչայի այս ափերին և վայրկենական հրամանի էին սպասում՝ ազատագրելու Արևմտյան Հայաստանը: Նույնիսկ վեճեր էին սկսվել, թե ***Կարսն*** ու ***Արդահանը*** Հայաստանին պիտի միանան, թե՞ Վրաստանին: Առանձնացված էին բանակները, նշանակված էին հրամանատարները, քարտեզի վրա նշված էին զորքերի շարժման ուղղությունները: Հատկանշված էին այն մարդիկ, որոնք պիտի գլխավորեին ազատագրված նահանգները:

Թուրքապաշտ Անգլիայի վարչապետը քնած չէր և երբեք չէր համաձայնվում, իր խոսքերով ասած, Ռուսաստանի՝ իրականում Խորհրդային Միության ազատագրական նման միսիային: Այժմ Ու. Չերչիլն սպառնաց, որ այդ դեպքում Անգլիան կգրավի Բոսֆորի ու Դարդանելի նեղուցները. Կոստանդնուպոլիսն ընդհանրապես: Այդ նշանակում էր Խորհրդային Միությանը զրկել ստրատեգիական կարևոր, շատ կարևոր ճանապարհից, գուցեև քաշել նոր պատերազմի մեջ, որին նա այդ պահին պատրաստ չէր: Շրջվեց պատմության դասագրքի այդ էջը ևս, հայ ժողովուրդը Անգլիայի մեղքով, զրկվեց իր պատմական Հայրենիքը վերստանալու ***գուցեև եզակի*** հնարավորությունից:

Ճիշտ է ասված, որ պատմությունը ***«եթեներ»*** չի սիրում, բայց եթե այդ հնարավորությունը իրողության վերածվեր, ապա այսօր հայ ժողովուրդը ցեղասպանության մասին այլ բովանդակությամբ հաշիվ կպահանջեր Թուրքիայից:

Ինչ որ է: Արձանագրենք սակայն, որ կղզիների վրա քառած, երբեմնի աշխարհի հարստությունը անաշխատ վայելող այդ երկրում կային նաև պետական այրեր, առաջավոր մտածողներ, որոնք ժամանակին դատապարտել են Հայոց ցեղասպանության փաստը, ճանաչել են եղեռնը և ձգտել են օգնության ձեռք մեկնել կոտորածից փրկվածներին: Դրանցից հիշատակության արժանի է ***Լլոյդ Ջորջը:***

Դեյվիդ Լլոյդ Ջորջը (Llojd George) (1863-1946) առաջիններից մեկն էր Միացյալ Թագավորությունում, որը ոչ միայն դատապարտեց ***ցեղասպանության իրողությունը*** Թուրքիայում, այլև խոստովանեց իր երկրի մեղսակցությունը այդ պրոցեսին: Խոստովանողը մի սովորական մտավորական չէր:

Նա եղել է ողջ երկրի լիբերալ կուսակցության առաջնորդը, պաշտոնավարել է իբրև ***առևտրի*** (1905-1908), ***ֆինանսների*** (1908-1915) նախարար, վարել է սոցիալական դեմագոգիայի քաղաքականություն և հասել Անգլիայի վարչապետի պաշտոնին (1916-1922): Աշխարհամարտի տարիներին Լ. Ջորջը, հրապարակային ելույթներով, պահանջում էր վերջնականապես ջախջախել և՛ Գերմանիային, և՛ հատկապես Եվրոպային այդքան հոգսեր պատճառող Թուրքիային:

Լիբերալ անգլիացին իր պաշտոնավարության բարձունքներից պաշտպանում էր հայ ժողովրդին, դատապարտում Համիդ արյունարբուի և երիտթուրքերի վարած հայասպան քաղաքականությունը, պահանջում «արդարամտորեն» վճռել «Հայկական հարցը»[1]: Ահա ինչպես էր նա բնութագրում օսմանյան կայսրության վերջին սուլթանին. «Բարի հիշատակ ***չունեցող*** Աբդուլ Համիդը անց էր կացնում այդ հնագույն ժո-

[1] ՀՍՀ, հ. 4, Երևան, 1978, էջ 635-637: Տե՛ս նաև ***Л. Джордж,*** Военные мемуары, Предисловие, т. 1-6, Москва, 1934-1937.

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՄԻՇՏ ԷԼ, ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՊՐԱԾ ՑԱՎԸ ԵՎ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՈՐՊԵՍ ԻՐ ՍԵՓԱԿԱՆԸ: ԽՈՆԱՐՀՈՒՄ ԵՆՔ ԳԼՈՒԽՆԵՐՍ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՑԵղԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ԱՌՋԵՎ:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՒՏԻՆ

РОССИЯ ВСЕГДА ВОСПРИНИМАЛА БОЛЬ И ТРАГЕДИЮ АРМЯНСКОГО НАРОДА КАК СВОЮ СОБСТВЕННУЮ. НИЗКО СКЛОНЯЕМ ГОЛОВУ ПЕРЕД ПАМЯТЬЮ ЖЕРТВ ГЕНОЦИДА АРМЯНСКОГО НАРОДА.

ПРЕЗИДЕНТ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ ВЛАДИМИР ПУТИН

г. Ереван
15.09.2001г.

ղովրդին իր բնակեցված հովիտներից արտաքսելու քաղաքականություն: Հայերի մեծամասնությունը խղճուկ փոքրամասնության վերածելու այդ վայրենի մեթոդը իրագործվում էր Հայաստանի արգավանդ շատ շրջաններում: ***Դաշնակից տերությունները միահամուռ այն կարծիքին էին, որ չի կարելի թույլ տալ թուրքերին օգտվելու իրենց գազանությունների պտուղներից, իսկ հայ ժողովրդին ամբողջապես պետք է վերադարձվի նախնիների ժառանգությունը և հնարավորություն տրվի վերականգնելու իր երբեմնի հզորությունը*** (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[1]:

Շուրջ վաթսուն տարի հետո միայն Լ. Ջորջը, ի լուր աշխարհի, խոստովանեց անգլիական դիվանագիտության մեղսակցությունը հայ ժողովրդի ճակատագրում, հատկապես Բեռլինի կոնգրեսի տխրահռչակ, հայադավ որոշումները կայացնելիս: «Այդ որոշումը, – գրում էր Միացյալ Թագավորության նախկին վարչապետը, – ***մեծարվում էր մեր կողմից, որպես Անգլիայի մեծագույն հաղթանակը, նրա թելադրած պատվավոր խաղաղությունը: Հայաստանը ողջակիզվեց մեր կառուցած հաղթանակի զոհասեղանի վրա... Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897, 1909 թվականների սոսկալի ջարդերին և 1915 թվականի ամենասարսափելի կոտորածին*** (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[2]:

Կարծում ենք, որ դրանից ուժեղ քննադատություն Անգլիայի հասցեին և դրանից հիմնավոր ճանաչում Հայոց ցեղասպանությանը («ամենասարսափելի կոտորածներին») արդեն ավելորդ էր: Այստեղ ասված է ամեն ինչ:

Հայկական ողբերգությունը դատապարտել է նաև մեկ այլ անգլիացի ***էմիլ Դիլոնը:***

Ծագումով իռլանդացի էմիլ Դիլոնը ծնվել է 1855 թ. մարտի 9-ին Դուբլինում: Բարձրագույն կրթությունը ստացել է Անգլիայում, իսկ այնուհետև փիլիսոփայության և արևելյան լեզուների դասախոսություններ է ունկնդրել Ֆրանսիայի և Գերմանիայի լավագույն համալսարաններում: «Colege de Franc»-ում նա մասնակցում է Ռենանի դասընթացներին, իսկ ***Թյուբինգենի և Լայպցիգի*** համալսարաններում խորությամբ զբաղվում համեմատական բանասիրության ուսումնասիրմամբ: Գերմանիայից Դիլոնը մեկնում է Ռուսաստան, Պետերբուրգի համալսարանում ստանում արևելյան լեզուների մագիստրոսի կոչում, ապա հրավիրվում է Խարկովի համալսարանի համեմատական բանասիրության ամբիոն, ուր աշխատում է չորս տարի: Առանձնահատուկ ուշադրություն նվիրելով գրաբարին և հայ հին գրականությանը Դիլոնը շուտով թարգմանում և ռուսերեն լույս է ընծայում Եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին» գիրքը, ինչպես նաև «Հայերենի և իրանական լեզվախմբի առնչությունները» մենագրությունը: Հայոց լեզուն և գրականությունն ավելի հիմնավոր ուսումնասիրելու նպատակով Դիլոնը, այնուհետև, մեկնում է Վենետիկ, որտեղ այդ առարկաներն ուսանում է Մխիթարյան միաբանությունում: Հայոց լեզվին նվիրված իր աշխատությունը հրատարակելուց հետո՝ 1886 թ., ստանում է այդ միաբանության անդամի կոչում: Վենետիկից վերադառնալով Անգլիա՝ Դիլոնը անգլիական գիտական հանդեսներում հրապարակում է համեմատական բանասիրության, հայերի և հայ գրականության վերաբերյալ մի ամբողջ շարք մասնագիտական հոդվածներ՝ վաստակելով ծանրակշիռ գիտնականի համբավ: Մայրենի լեզվից բացի Դիլոնը հիմնավորապես տիրապետում էր ռուսերենին, ֆրանսերենին, գերմաներենին և գրաբա-

---

[1] ***Ллойд Джордж,*** Правда о мирных договорах, т. 2, Москва, 1957, стр. 417-418. Տե՛ս նաև ***Գալուստ Գալոյան,*** Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 196:

[2] ***Ллойд Джордж,*** նշված աշխատությունը, հ. 2, էջ 390: Տե՛ս նաև ***Հայկ Ղազարյան,*** Արևմտահայերի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 599: Վերոհիշյալ մտքերը մենք գիտական շրջանառության մեջ ենք դրել ***դեռևս*** 1967 թվականին:

րին: Շնորհալի և վաստակաշատ լրագրող էր Դիլոնը, նրա թղթակցությունները, որոնք աչքի էին ընկնում արծարծվող նյութի հիմնավոր իմացությամբ և շարադրանքի ճշմարտացիությամբ, համընդհանուր ուշադրության արժանացան Անգլիայում և կարեկցանք հարուցեցին Հայաստանի վիճակի նկատմամբ, որի տառապանքները, ***Գլադստոնի*** հեղինակավոր արտահայտությամբ, գերազանցում էին Բուլղարիայի վերջին պատերազմին նախորդած սարսափները:

1895 թ. փետրվար-մարտին, որպես Լոնդոնի «The Daily Telegraph» թերթի թղթակից, Դիլոնը մեկնում է Արևմտյան Հայաստան՝ լուսաբանելու տեղի իրադարձությունները: Նա թուրքերի գազանությունները հետաքննողի տքնաջան դերը անասելի դժվարությամբ և վտանգների ենթարկվելով էր կատարել՝ իր ազնիվ առաքելության ճանապարհին ամեն քայլափոխի հանդիպելով Թուրքիայի կառավարության հակազդեցությանը: Գրքույկում ներկայացվող բազմաթիվ հավաստի տեղեկություններն աներկբայորեն հաստատում են Թուրքիայի կառավարող շրջանների հանցակցությունը հայ ազգաբնակչության զանգվածային կոտորածների կազմակերպմանը[1]:

Այն, ինչ տեսավ ու լսեց իռլանդացին, մարդկային երևակայությունից դուրս էին, ցնցող ոչ միայն իրեն, այլև նրա գրած հոդվածների ընթերցողներին: 1895 թ., թարմ տպավորությամբ, ***Էմիլ Դիլոնը*** գրեց ***«Իրավիճակը Թուրքահայաստանում»***[2] ծավալուն հոդվածը, որտեղ վճռական կարծիք հայտնեց, թե Թուրքիայում, պետական մակարդակով կազմակերպվել է ***հայերի ցեղասպանություն,*** և քանի որ մարդկության դեմ ուղղված այդ ոճիրը շարունակվում է, ուստի քաղաքակիրթ աշխարհը կանխարգելելու պարտավորություններ պետք է ստանձնի:

Նա պատմում է, որ 1891 թ. Բ. Դուռը, մեծ երկյուղածությամբ նայելով Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու խնդրին, որոշեց կազմակերպել «համիդիե» քրդական հեծելազորային գնդեր և վերջիններիս ձեռքերով ոչնչացրեց ***հայ բնակչությանը*** այնպես, որ նրանք այլևս մեծամասնություն չկազմեին իրենց հայրենիքում: «Ոչնչացման այդ բացահայտ քաղաքականությունը ճշգրտորեն իրագործվել և նշանակալիորեն ընդլայնվել է այն ժամանակից ի վեր, և եթե դրան շուտով վերջ չտրվի, ***ապա դա անկասկած կհանգեցնի Հայկական հարցի վերջնական լուծմանը. բայց այդ լուծումը խայտառակություն կլինի քրիստոնեության համար և անարգ ծաղր՝ քաղաքակրթության նկատմամբ...»***[3]:

Էմիլ Դիլոնը փաստեր է դնում շրջանառության մեջ այն մասին, թե ինչպիսի պայմաններում է ապրել քրիստոնյա ու հնամենի մի ժողովուրդ, որը ներկայացնում է քաղաքակիրթ Եվրոպան, բարբարոսական Ասիայի բռնապետության ճիրաններում: «Օտարերկրյա նշանավոր մի պետական գործիչ,- բերում է է. Դիլոնը,- որը սովորաբար համարվում է համոզված թուրքասեր, վերջերս ինձ հետ ունեցած մասնավոր խոսակցության ժամանակ նկատեց, որ թուրքական տիրապետությունը Հայաստանում կարելի էր ճիշտ բնորոշել որպես ***կազմակերպված ավազակություն, օրինականացված սպանություն և վարձատրվող անբարոյականություն:*** Այս համակարգի դեմ բողոքները կարող են արդարացի լինել և տեղին, բայց հազիվ թե դրանք կարելի լի-

---

[1] ***Էմիլ Դիլոն,*** Իրավիճակը Թուրքահայաստանում, Երևան, 1997, էջ 3-4: Սույն հատվածը կցված է գրքույկին իբրև առաջաբան, որը բերում ենք ***նույնությամբ:*** Գրքույկը ռուսերենից թարգմանել է ***Հ. Լիլոյանը:*** Այն հրատարակել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը՝ խմբագրական հանձնաժողով նախագահ ***Լ. Ա. Բարսեղյան:*** Այս մասին տես նաև «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», Երևան, 1991, էջ 720-721:

[2] "Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году", Москва, 1896, стр. 332-335, 338-341, 352-357, 362, 366-368, 372-373.

[3] «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 86:

նի օգտակար համարել: Մարդասերը բանտ այցելելիս կարող է մեծ դառնություն ապրել տեսնելով, որ բանտարկյալներից մեկի ձեռնուոտը կապված են, բայց նա դժվար թե ժամանակ կորցնի դրա դեմ բողոքելու վրա, եթե իմանա, որ այդ բանտարկյալը մահվան է դատապարտված և շուտով կախաղան է բարձրացվելու»[1]:

Նա անդրադառնում է իր տեսած Սասնո գավառին և այնտեղ ծավալված հայկական ջարդերին գրելով. «Սասունի կոտորածը սահմռկեցրեց ամենասառը սրտերն անգամ: Բայց այս ջարդը երկնային ողորմածություն էր համեմատած այն դժոխային արարքների հետ, որոնք կատարվում են տարվա յուրաքանչյուր շաբաթ և յուրաքանչյուր ժամ: ***Սովալլուկ երեխաների սրտակեղեք հեծեծանքներ, ծերունիների հառաչանքներ, որոնց վիճակվել է տեսնել այնպիսի բաներ, որ նկարագրել չի լինի, բռնաբարվող աղջիկների ու նրբին մանկիկների սարսափելի ճիչեր, մայրերի ողբ, որոնք իրենց զավակներից զրկվել են այնպիսի ոճրագործ եղանակներով, որոնց համեմատությամբ սպանությունը բարերարություն կլիներ, կանանց անմարդկային ծղրտոցներ, որոնք գալարվում են վազերի տակ. դրանք անապատում մեռնողների արյան ու տանջանքների անզոր ու զուր ճիչեր են, որոնք արձագանք չեն գտնում ո՛չ երկրի վրա, ո՛չ երկնքում: Այդ ամենը, միասին վերցրած, ստվերում են թողնում Սասունն ու նրա սարսափները:***

Այսպիսին են այն գործերը, որոնց համար մենք բարոյական պատասխանատվություն ենք կրում: Եվ չնայած լիբերալ կառավարությանը հայտնի են եղել այս փաստերն ու սրանց նմանները, սակայն լորդ Քեմբերլեյը հնարավոր չի գտել հանդես գալ սրանց դեմ և հարմար չի համարել սրանք հրապարակել...»[2]:

Էմիլ Դիլոնի տպագիր հոդվածները ձեռքեձեռք անցնելով, տաք հացի նման, իրարից խլում էին ոչ միայն Ռուսաստանում, այլև Մեծ Բրիտանիայում և Արևմտյան մյուս երկրներում: Նրա թղթակցություններին ծանոթացավ հատկապես ծերունազարդ ***Ուիլյամ Յուարտ Գլադստոնը*** և ոչ միայն արձագանքեց դրանց, այլև լծվեց հայերի ցեղասպանությունը կանխելու գործին:

Ու. Յ. Գլադստոնը (1809-1898) ընդմիջումներով եղել է Անգլիայի երկար տարիների վարչապետ և 1894 թ. կամովին հեռացել այդ պաշտոնից: 1878 թ. հուլիսին, էքսվարչապետի կարգավիճակով, ընդունել է Բեռլին աճապարող հայկական պատվիրակությանը գլխավորող ***Մկրտիչ Խրիմյանին (Հայրիկին),*** նրան խոստումներ է տվել աշխատելու ի նպաստ Հայաստանի, նրան է պատկանում ***«Ծառայել Հայաստանին, նշանակում է ծառայել քաղաքակրթությանը»*** թևավոր խոսքը:

1890-ական թվականների հայկական ջարդերին Ու. Յ. Գլադստոնը հետևողականորեն հայապաշտպանի դիրք էր գրավել: 1895 թվականի հուլիսի 26-ին *Չեսթերի* հանրահավաքի ժամանակ նա հանդես եկավ ծավալուն մի ատենախոսությամբ, որտեղ տեղեկացրեց, թե ինքը դեռևս կես տարի առաջ Թուրքիայում ապրող հայերի վիճակի մասին ելույթ է ունեցել, դատապարտել է մահմեդականների ջարդարարական գործունեությունը հայերի նկատմամբ:

- Բանից պարզվում է,- ասում է Գլադստոնը,- որ ի դերև են ելել հույսերը: Գնալով Համիդը գազազում է իր արարքների մեջ:

Նա այդ օրերին «Contemporaru Review»-ում կարդացել էր Էմիլ Դիլոնի հոդվածները, նյութեր ստացել Կ. Պոլսի բրիտանական դեսպանից և ոչ միայն ծանր ապրումների մեջ էր, կատարվածի տպավորություններից, այլև հուսակտուր իրադրությունները կանխելու:

---

[1] «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 87:

[2] *Էմիլ Դիլոն,* Իրավիճակը Թուրքահայաստանում. Երևան, 1997, էջ 54:

Չեսթերի ելույթում նա ասում է. «Մենք բնավ գործ չունենք հասարակության այսպես կոչված վտանգավոր դասակարգերին պատկանող մարդկանց արարքների հետ: Մենք ծանոթանալու ենք ոչ թե նրանց արարքներին, այլ *Կոստանդնուպոլսի կառավարության ու նրա գործակալների արարքներին: Հայաստանում կատարվող ոճրագործություններից չկա գեթ մեկը, որի համար բարոյական* պատասխանատվություն չկրի Կոստանդնուպոլսի կառավարությունը: Ովքե՞ր են նրա *գործակալները: Թույլ տվեք ինձ դա մի քանի խոսքով բացատրել ձեզ: Նրանք բաժանվում են երեք դասակարգի:* Նախ, դա վայրենի քրդերն են, որոնք, դժբախտաբար, հարևաններն են հայերի՝ *քրիստոնեական քաղաքակրթության ամենահին ժողովուրդներից և աշխարհի ամենախաղաղ, ձեռներեց ու խելամիտ ժողովուրդներից մեկի...»*[1]:

Գլադստոնը առաջարկում է Հայկական հարցի արմատական լուծում. այն է. «Ես առանց տատանվելու կասեմ, որ հարցի ամենաճիշտ և *ուղղակի լուծումը կլիներ թուրքերի վտարումը Հայաստանից. նրանք իրավունք չունեն մնալու այնտեղ, բայց ամենևին հնարավոր չէ վստահ լինել, որ եվրոպան կամ թեկուզ երեք տերություն համաձայնեին ներկայիս դժվարությունների նմանօրինակ լուծման: Ուստի մի կողմ թողնենք բոլորը, բացի անպայմանորեն անհրաժեշտից»*[2]:

Նա արևմտյան աշխարհին կոչ էր անում հրաժարվել Թուրքիայից ունեցած ռոմանտիկ պահանջներից, ուզածը կոնկրետացնել, բայց միաժամանակ ձգտել դրա կատարմանը: Նա հայտարարում էր, որ «եթե մեր մեջ կենդանի է մարդասիրության գեթ թույլ զգացողություն, եթե մենք բանկ ենք գնահատում մեր արժանապատվությունը, ապա վերջին 12 կամ 18 ամսվա ընթացքում ձեռնարկված միջոցառումներից հետո մենք պետք է միջամտենք: Մենք պետք է մեր պահանջները խստիվ սահմանափակենք միայն անպայմանորեն արդարացիով ու անհրաժեշտով, բայց որոշենք, որ այդ արդարացին ու անհրաժեշտը պետք է կատարվի»[3]:

Գլադստոնը առավել զայրույթ ապրեց, երբ տեղեկացավ Կ. Պոլսի հայկական ջարդերի մասին: Այդ նյութերը հրատարակել է բուլղարացի քաղաքական գործիչ Դիմիտր Ա. Սպիրովը, «Հայերի սարսափելի կոտորածները (1894-1896 թթ.)» աշխատության էջերում: Նա գրում է. «Հայերի նկատմամբ Կ. Պոլսի անօրինակ ու ահավոր սպանդի մասին ահա թե ինչպես է արտահայտվում XIX դարի ամենաբարի մարդը և մեծագույն մարդասերը՝ սպիտակահեր ծերունի Վ. Յ. Գլադստոնը, այն բարերարը, որը բուլղարների համար սարսափելի 1876 թվականին իր ծայնը բարձրացրեց մեր ժողովրդի մարդկային իրավունքների համար և Բաթակի կոտորածների դեմ, որոնք խորապես վրդովեցին «մեծ ծերունու» ազնիվ հոգին: Արտասովոր այդ մարդը, նշանավոր անգլիացին ու պետական այրը ահա այս նամակն է հղել ոմն Ի. Վինդելին՝ «Հայաստանը և նրա վշտերը» գրքի հեղինակին:

«Հարգարժան պարոն,

Շնորհակալ եմ Ձեր սիրալիրության համար, ինձ հաճելի կլիներ, եթե ձեզ հաջողվեր արթնացնել հասարակայնությանը, որպեսզի նա զգար այն ամոթն ու խայտառակությունը, որ կրում է մեր ժողովուրդը մեծ պետությունների հետ միասին՝ համբերությամբ հանդուրժելով Կ. Պոլսի գահին նստած մարդասպանին:

1876 թվականին մեր հայրենակիցներն արտահայտեցին իրենց ազնիվ զգացում-

---

[1] «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 102:

[2] Նույն տեղում, էջ 105:

[3] "Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году", 2-ое издание, Москва, стр. XXVIII.

ները շատ ավելի նվազ այն սարսափների հանդեպ, որ կատարվեցին Բուլղարիայում նույն սուլթանի հովանավորությամբ: Բուլղարական այդ դեպքերը *մեծապես տարբերվում են հայոց սոսկալի ողբերգությունից:*

Ձեզ հավատարիմ՝ Վ. Յ. Գլադստոն»[1]:

1896 թ. Հավարդենում նստած Վ. Գլադստոնը, ֆրանսիական *«Ֆիգարո»* թերթի խմբագրությանն է ուղարկել ընդհանրապես քրիստոնյաների նկատմամբ Թուրքիայի վարած վայրագ քաղաքականությունը մերկացնող ընդարձակ մի նամակ, որտեղ հայ ժողովրդի մասին ասված է.

«Այսօր մարդասպանը, որ նստած է Կ. Պոլսում, առավել խորամանկ է դարձել, կոտորածը կոտորածի վրա է սարքում և երբ փորձում է արյունահեղությունների պատասխանատվությունը բարդել թշվառ զոհերի վրա, հիշեցնում է այն բազմաթիվ չարագործությունները, որոնք կատարվում են նրա կառավարական մեքենայի միջոցով: Ավելի քան վեց ամիս է, ինչ նրան հաջողվում է իշխել վեց մեծ պետությունների դիվանագիտության վրա:

Ճշմարտությունն այն է, որ այս տերությունները նվաստանում են նրա առջև, և պատմության մեջ չկա նրանց հեզության նախադեպը, որ նրանք ցուցաբերեցին այդպիսի հանդուրժողությամբ: Դրա հետևանքով սուլթանը համարձակություն ստացավ գնալ այն ճանապարհով, որը տվեց նման արդյունքներ, և, ըստ երևույթին, բուն խնդիրն այն չէ, թե ուզո՞ւմ է, արդյոք, կանգ առնել այդ ճանապարհին, թե ոչ, այլ այն, թե երբ և որտեղ ավելի շուտ *կվերսկսի իր մահասփյուռ արկածները:*

Այս վերաբերմունքի հետևանքները հավանորեն պիտի ի չիք դարձնեն նրա՝ չարաբաստիկ և նույնքան չարաբարո ղեկավարվող թագավորության պահպանման վերջին հնարավորությունները: «Exoriare aliguis nostris ex ossibus ultor»: Նրա ուժի առջև ծառացած է հարցը, թե արդյո՞ք պիտի արտոնվի նրան՝ նոր, անհամար ոճիրներով ավելացնել զոհվածների առանց այն էլ սոսկալիորեն ուռճացած քանակը: Նախկինում, երբ ես ղեկավարում էի, իմ ամբողջ ուժերով ձգտում էի բարելավել եվրոպական միասնությունը, բայց առանց երկմտության ենթադրում եմ, որ գլխավոր չարիքը, որ վերջին 20 տարիների ընթացքում տեղ է գտել Թուրքիայում, կատարվել է ոչ թե եվրոպական համաձայնությամբ, այլ դրան հակառակ:

Ինձ թվում է՝ համառոտակի ներկայացրի բավական շատ փաստեր, որպեսզի ընդունելի լինեն այն հորդորները, որոնք տրվում են ձեզ, և քանի որ ինձ իրավունք չի վերապահված բարոյականության ու արժանապատվության դասեր տալ ֆրանսիական ժողովրդին, այլևս ոչինչ չունեմ ավելացնելու: Ես բավարարվում եմ հույս հայտնելով, որ այս ժողովուրդը ներկայիս հանդիսավոր պարագայում պիտի հետևի Նորին բարձրության, նրա անվանն ու բարձր դիրքին արժանավայել քաղաքականությանը, որով նա վաղուց ի վեր գրավել է իր պատվավոր տեղը եվրոպական պատմության և քրիստոնեության մեջ:

Հավարդեն, 1896 թ.,

Վ. Յ. Գլադստոն»[2]:

---

[1] *Դիմիտր Ա. Սպիրով,* Հայերի սարսափելի կոտորածները (1894-1896 թթ.), Հայաստանը և սուլթան Աբդուլ Համիդը, Երևան, 1997, էջ 52:

[2] Նույն տեղում, էջ 52-53:

Վ. Գլադստոնի թափած ջանքերն ապարդյուն էին անցնում, որն առավել էր գազազեցնում ***86-ամյա ալեհեր ծերունուն:*** Նա այդ տարիքում վերադարձավ Լիվերպուլ, 1896 թ. սեպտեմբերի 24-ին հանրահավաք հրավիրեց, որտեղ արտասանած ատենախոսության ժամանակ, բացեիբաց պահանջեց արյունախում ***սուլթանի գահընկեցությունը:*** Այդ ճառը, դժբախտաբար անգլիացի երբեմնի հզոր պետական գործչի, վերջին ելույթն էր, որտեղ թուրքերին բնութագրում էր իբրև ***«անկանխագուշակելի ազգ» և պահանջում էր «թուրքական կայսրությունը սրբել քարտեզի վրայից»:*** Սուլթանական բռնապետությունը նա համարում էր ***«քաղաքակրթության ամոթանք», «անեծք մարդկության հասցեին»:*** Ջառամյալ անգլիացին սուլթանին բնութագրեց ***«մեծ մարդասպան Աբդուլա»,*** այն դեպքում, երբ ֆրանսիացիները Եըլտըզի բռնակալին արդեն անարգանքի սյունին գամելով ***«արյունոտ սուլթան»*** «պատվանուն» էին խարանել նրա անամոթ ճակատին[1]:

Գլադստոնի հակասուլթանական տարերքը անսպասելի էր: Նա իր որդիներին ասում էր, որ միայն մի ցանկություն ունի, որպեսզի աստվածն իրեն ուժ տա, որպեսզի նոր խաչակրաց արշավանք կազմակերպի թուրքերի դեմ: «Եթե ես լինեի այն տարիքում, որքան 1876 թ., ապա հաճույքով նոր կամպանիա կսկսեի»[2]:

Գլադստոնի ելույթները խառնեցին մեծ տերությունների խաղաքարտերը, ջրի երես հանեցին հինգ պետությունների միջև եղած հակասությունները, բացահայտվեցին յուրաքանչյուրի ակնկալությունները՝ «հիվանդ մարդու» մարմնից պոկելը: Աշխուժացավ նաև Ռուսաստանը (բացի ֆինանսների նախարար Վիտտեից) և որոշեց, կոնֆլիկտի դեպքում բանակ մտցնել ծով և զավթել նեղուցները: Այդ ամենը վախեցնում էին մեծ տերություններին, որոնցից ամեն մեկը գաղտնի բանակցում էր բորենի սուլթանի հետ, որից օգուտ քաղելով Թուրքիան անտրտունջ մարսեց հայոց թափած արյունը ցեղասպանության այդ շրջափուլում: Սակայն Գլադստոնի ուղեգիծը բռնեցին նաև այլ անգլիացիներ:

Հայոց ցեղասպանության ***ճանաչողների ու խստագույնս դատապարտողների*** փաղանգում առանձնանում է նաև անգլիական պետական մեկ ուրիշ խոշոր գործիչ, իրավաբան, վաստակաշատ պատմաբան ***Դերկումս Ջեյմս Բրայսը*** (Bryce James) (1838, Բելֆաստ, Իռլանդիա–1922, Սիդմուտ): Նա ստացել էր փայլուն կրթություն (Գլազգոյի համալսարան, Օքսֆորդի Թրինիթի քոլեջը և այլն), ապա երիտասարդական տարիներից սկսել քաղաքական ու պետական իր գործունեությունը:

Լիբերալ կուսակցության կողմից նա մի քանի անգամ ընտրվել էր համայնքների պալատի անդամ, ապա սկսել պաշտոնավարության հաղթարշավը: Եղել է արտգործնախարարի տեղակալ (1866), Լանկաստերի հերցոգության կանցլեր (1892), առևտրի մինիստր (1894), Իռլանդիայի գործերի գլխավոր քարտուղար (1905-1907), Անգլիայի դեսպան Վաշինգտոնում (1907-1913): Երիտասարդ տարիներից սկսած, նա ինչքան մեծ համակրանք է ունեցել հայ ժողովրդի նկատմամբ, նույնքան էլ ատելություն՝ «օսմանյան բարբարոս մեծերի հանդեպ»[3]:

Ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին, հաշվի չառնելով Միացյալ Թագավորության թուրքասիրական վերաբերմունքը, Ջ. Բրայսը 1876 թ. ոչ միայն հիմնում է

---

[1] ***Лорд Кинросс,*** Расцвет и упадок османской империи. Перевод с английского М. Пальникова, Москва, 1999, стр. 610.

[2] ***Արման Կիրակոսյան,*** Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը, Երևան, 1999, էջ 367:

[3] ՀՍՀ, հ. 2, Երևան, 1976, էջ 555:

«Անգլո-հայկական ընկերությունը», այլև այցելում է Կովկաս, շրջագայում Հայաստանում և 1877 թ. իր ստացած տպավորություններն ամփոփում *«Անդրկովկասն ու Արարատը»* գրքում: 1890-ական թվականներին անգլիացի հայասերը եվրոպական մամուլի էջերից քարկոծում էր Համիդ II-ի հայասպան քաղաքականությունը և Արևմուտքից պահանջում կանխել հայկական ջարդերը[1]:

Առաջին աշխարհամարտի տարիներին (1916 թ.) Ջ. Բրայսը (մի խումբ երիտասարդների, հատկապես, Մ. Թոյնբիի մասնակցությամբ), Լոնդոնում, անգլերենով հրատարակեց վավերագրերի մի ծավալուն ժողովածու *«Հայերի վիճակն օսմանյան կայսրությունում 1915-1916 թթ.»* վերտառությամբ: 684 էջերից բաղկացած, 158 փաստաթղթերին կցված խմբագրի ծավալուն առաջաբանում[2] ներկայացվում է հայ ժողովրդի անտանելի կացությունը սեփական ու պատմական Հայրենիքում, նրա ապրած ողբերգությունը՝ ջարդն ու տեղահանությունը:

Մեծն անգլիացին իրավամբ բացահայտում է և մերկացնում *եղեռնի* իսկական կազմակերպիչներին, այսինքն՝ *երիտթուրքերի* կենտրոնական կառավարությանը: «Կենտրոնական կառավարությունն էր, որ կիսկեր գործադրությանը վրա ծրագրին, - գրում էր Ջ. Բրայսը,– որուն հղացումը միայն իրն էր: *Երիտասարդ թուրք նախարարները և Կոստանդնուպոլսո անոնց գործակիցները ուղղակիորեն և անձնապես պատասխանատու են, սկիզբեն մինչև վերջը, այն իսկական ոճիրին համար, որն ավերեց Մերձավոր Արևելքը 1915-ին* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[3]:

Ջ. Բրայսը բազում փաստերով ապացուցում է, որ 1915-1916 թթ. հայկական ջարդերը թուրքական նախկին գազանությունների օրգանական շարունակությունն են, սակայն այժմ՝ «առավել կատարելագործված»: «Կհարցվի, թե մարդկային էակներ կարո՞ղ են նման ոճիրներ գործելու՝ անմեղ կիներու և մանուկներու վրա, բայց նախորդ ջարդերուն հիշատակը ցույց կուտա, թե նման ոճիրներ մաս կկազմեն այն քաղաքականության, որ երկար ատենները ի վեր հաստատված և հաճախ կրկնված են թուրք կառավարության կողմե»: Տարբերությունն այն է, որ երիտթուրքերը «մինչև իսկ իրենց նախորդ վարպետը եղող Աբդուլ Համիդեն ավելի չարաշուք եղան, մասնավորապես հայոց հանդեպ»[4]:

Ժողովածուի կազմումից շուրջ մեկ տարի առաջ, այսինքն՝ 1915 թ., Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքում շատերն էին ցավակցում նահատակվող հայ ժողովրդին, ուստի և իրենց զայրույթն էին արտահայտում համաքաղաքային հանրահավաքներում: Հոկտեմբերի 16-ին կայացած մարդաշատ միտինգում Ջ. Բրայսը հայ ժողովրդի մասին ասաց. *«Ամենից ինտելիգենտ, կուլտուրական, առաջադեմ և հանճարեղ ժողովուրդն է Արևմտյան Հայաստանում: Սիա այդ ժողովուրդը պիտի ոչնչացվի՝ համաձայն իրեն թուրքական կառավարություն անվանող հանցագործների մի շայկայի ծգտումների: Նրանք վախենում են հայերի առավել ինտելիգենտությունից ու բարեկրթությունից և ենթադրում են, որ հայերը կարող են հետագայում իրենց զրկել ղեկավար դերից Արևմտյան Ասիայում* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[5]:

Առնոլդ Ջոզեֆ Թոյնբին (1889-1975) անգլիական բուրժուական խոշոր պատմաբաններից էր, իրավաբան և փիլիսոփա: 1915 թ. աշնանը, հավաքելով միսիոներնե-

---

[1] *Bryce James*, Studies in History and Jurisprudence, London, 1901, p. 5-7.

[2] *Մ. Արզումանյան*, նշված աշխատությունը, էջ 574-575:

[3] «1915-1965. Յուշամատեան Մեծ եղեռնի», Բեյրութ, 1965, էջ 1034:

[4] Նույն տեղում, էջ 88-89: Տես նաև *Մ. Արզումանյան*, նշված աշխատությունը, էջ 576:

[5] "Армянский вестник", Москва, 1916, N 1, стр. 16. Տես նաև *Մ. Արզումանյան*, նշված աշխատությունը, էջ 576:

րի տրամադրած նյութերը Հայոց ցեղասպանության վերաբերյալ, նա հետազոտեց դրանք և Լոնդոնում անգլերենով հրատարակեց ***«Հայկական սարսափները» – «Մի ազգի բնաջնջումը»***[1] գիրքը՝ այն նվիրելով երիտթուրքերի ջարդարարական քաղաքականության պատմությանը: Գիրքը 1916 թ. լույս տեսավ ֆրանսերեն, ապա գերմաներեն և հայերեն թարգմանություններով[2]:

Հեղինակն այդ տարիներին Օքսֆորդի համալսարանի բարձր կուրսի ուսանող էր: Նա թարմ փաստերով շարադրել էր 1914-1915 թթ. Արևմտյան Հայաստանում կատարված ջարդերի պատմությունը, որն անմիջապես արժանացավ Մոսկվայում հրատարակվող թերթերի ու ամսագրերի աշխատակիցների ուշադրությանը: Գրքին կցված է հայկական ջարդերի ***քարտեզը – տեղագրությունը,*** ինչպես նաև Թալեաթի և էնվերի այն հրամանները, որոնք ուղարկված էին «տեղական կոմիտեներին» պահանջելով դրանց «անթերի կատարումը»[3]:

Անգլիացի հումանիստը նախ արժանի հակահարված էր տալիս թուրքական և գերմանական այն լրագրողներին ու պետական այրերին, որոնց կարծիքով հայերը «ապստամբ», «անհաշտ» ժողովուրդ են, դրա համար էլ իրենց արժանի պատիժն ստացան: Նա գրում էր, որ «Ես պետք է կրկնեմ, որ քաղաքներում ապրող այդ հայերը հիմնականում աշխատասեր, խաղաղությամբ տրամադրված մարդիկ են, նույնիսկ չեն կարողանում տիրապետել զենքին: Նրանց, ինչպես Արևմտյան Եվրոպայի քաղաքներում ապրող բնակչությանը. խորթ է վրեժի գաղափարը»[4]:

Չնայած հայերի խաղաղասիրությանը՝ երիտթուրքերը, վաղօրոք մշակված ծրագրով, նախապատրաստված, սկսեցին նրանց կոտորածը՝ պրոցեսը բաժանելով երկու էտապի: Առաջին նվագով, ըստ Թոյնբիի, «նշանակված օրը նշանակված քաղաքների փողոցները զբաղեցվում էին ժանդարմներով և նահանգապետի հրամանով 15-70 տարեկան բոլոր առողջ տղամարդիկ ներկայանում էին նրանց: Այնուհետև այդ տղամարդիկ բոլորը տարվում էին քաղաքից դուրս, բայց նրանց բախտ չէր վիճակվում հեռու գնալ: ***Քուրդ և թուրք հանցագործների շայկաները, որոնք բանտերից բաց էին թողնված հենց այդ նպատակով, սպասում են հայ տղամարդկանց, որ իսկույն ոչնչացնեն նրանց*** (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[5]: Երկրորդ էտապում. «Առաջին գործողությունը կատարված էր, դյուրին էր ձեռնամուխ լինել երկրորդին, զբաղվել միայն կանանց, ծերունիների և երեխաների հարցով: Նրանք բոլորը, առանց բացառության, պետք է ուղարկվեին աքսոր՝ թողնելով իրենց գույքը, տունը և այլ ունեցվածքներ, որը բաժանվում է մահմեդականների միջև»[6]:

Ա. Թոյնբիին նկարագրելով բռնագաղթի ենթարկված, տանջահար հայերի վիճակը՝ ավելացնում էր. ***«...թե մի ամբողջ ժողովուրդ է ջնջված երկրի երեսից: Հեշտ է ասել այդ բառերը, բայց շատ դժվար է թափանցել դրանց իսկական էության մեջ»***[7]: Նա իրավացիորեն բանաձևում էր, որ կատարվածը ոչ թե սովորական ջարդ է, այլ ***եղեռն - ցեղասպանություն:*** Այդ սահմռկեցուցիչ «գործողությանը», թուրքերից ոչ պակաս, մեղսակից էր կայզերական Գերմանիան: Եվ այդ մասին երիտասարդ անգլիացին գրում է. «Այսօր աշխարհն առանց զարմանքի ու անվստահության ականջ է դնում այն սարսափելի փաստերին, որոնց մասին Փոքր Ասիայից մեզ լուրեր

---

[1] ***Arnold J. Toynbee,*** Armenian Atrocities. The Murder of a Nation. New-York–London, 1915.

[2] "Геноцид армян в османской империи", стр. 604.

[3] ***Ա. Ն. Մնացականյան,*** Հայկական ողբերգություն, էջ 145-146:

[4] ***Arnold J. Toynbee,*** նշված աշխատությունը, էջ 69-70:

[5] Նույն տեղում, էջ 31-32: Տե ս նաև ***Ա. Ն. Մնացականյան***, նշված աշխատությունը, էջ 145-146:

[6] "Армянский вестник", Москва, 1916, N 2, стр. 18.

[7] Նույն տեղում, էջ 19:

են հասնում: *Այն, ինչ արել է Գերմանիան միայն օրենքի խախտում չէր: Դա միայն մանրուք է: Նրա հանցագործությունը նրանում է, որ նա XX դարում մեզ վերադարձրել է պատմության ամենամռայլ ժամանակները»*[1]:

Ա. Թոյնբին հակաթուրքական պայքարն ու հայապաշտպան առաքելությունը շարունակեց ամբողջ պատերազմի ընթացքում, պատերազմից հետո և իր ողջ գիտակցական կյանքում կանգնած էր ճնշված, հարստահարված ժողովուրդների կողքին:

Ուինստոն Չերչիլ (Winston S. Churchill) *Լեոնարդ Սպենսերը* (1874-1965) Մեծ Բրիտանիայի խոշորագույն պետական գործիչ էր, պահպանողական կուսակցության երկար տարիների առաջնորդը[2]: Վարել է բազմաթիվ պաշտոններ: Առաջին աշխարհամարտի տարիներին (1914-1918) ստանձնել է Դարդանելի օպերացիայի կազմակերպումը, ձախողվել է, դրա պատճառով էլ պաշտոնաթող է արվել: 1940 թ. նշանակվել է Անգլիայի վարչապետ, խարդախությամբ, բայց և այնպես պայքարել է հիտլերյան կոալիցիայի դեմ, հասկացել, որ առանց ԽՍՀՄ-ի մասնակցության գերմանական Ռայխին հաղթել չի կարող: Նրա սպառնալիքները վախեցրին Ստալինին. Թուրքիայի դեմ կազմակերպված, պատրաստ հարձակումը հանվեց պլանից, և Արևմտյան Հայաստանը փաստորեն չազատագրվեց:

Նա թողել է գրական ու քաղաքական բնույթի մի շարք աշխատություններ, որոնց համար արժանացել է *Նոբելյան մրցանակի* (1953), այն էլ գրականության գծով: Ու. Չերչիլի ստեղծագործությունների ցանկում առանձնակի տեղ ունի *«Համաշխարհային ճգնաժամ»* աշխատությունը, որի էջերում էլ անդրադարձել է *հայերի զանգվածային ջարդերին*՝ թուրք բարբարոսների ձեռքերով[3]:

Աշխարհահռչակ պետական գործիչը, վերոհիշյալ գրքի մի ամբողջական գլխում վերլուծում է հայ-թուրք փոխհարաբերությունների զարգացման ընթացքը, պատմության ետնախորքից սկսում և ավարտում 1912 թ. Հայկական հարցի վերաբացումով[4]: Նա գտնում է, որ *Եռապետությունը,* հայերին Ռուսաստանի դեմ հանելու ծրագրի իրողության վերածելու առաջարկն անելիս մերժվեց, դրանից առավել գազազեց և սկսեց «ուխտադրուժ» հպատակների *ցեղասպանության* վաղամտածված քաղաքականության կիրառումը:

«Թուրքական կառավարությունը, – գրում է Ու. Չերչիլը,– 1915 թ. սկսեց և վայրագորեն գործադրեց այն հայերի զանգվածային ջարդերն ու տեղահանությունը, որոնք ապրում էին Փոքր Ասիայում: *300-400 հազար տղամարդիկ, կանայք և երեխաներ փախան դեպի ռուսական տարածքը.* շատերն անցան Պարսկաստան և Միջագետք: Բայց հայ տարրի բնաջնջումը Փոքր Ասիայում այնքան արմատական էր, որքան նման բան չէր կարող կիրառվել այդչափ լայնածավալ տարածքի վրա: *Ենթադրվում է, որ շուրջ 1.250.000 հայեր ենթարկվեցին այդ ջարդերին ու տեղահանության, որոնց կես մասն էլ բնաջնջվեցին: Տրամաբանական ոչ մի կասկած չկա, որ այդ ոճիրը վաղօրոք ծրագրված էր և գործադրված քաղաքական մոտիվներով:*

Պատեհ առիթը ներկայացել էր թուրքական հողը մաքրելու քրիստոնյա մի ազգից, որը դեմ էր թուրքերի բոլոր փառասիրություններին, ուներ ազգային տենչեր և ձգտումներ, աշխարհագրականորեն գտնվում էր թրքության և կովկա-

---

[1] "Армянский вестник", Москва, 1916, N 2, էջ 20: Տե՛ս նաև *Մ. Արզումանյան,* նշված աշխատությունը, էջ 574:

[2] *Վ. Գ. Տրախանովսկի,* Ուինստոն Չերչիլ, Երևան, 1979, էջ 3-12:

[3] *У. Черчилль,* Мировой кризис, Москва–Ленинград, 1932, стр. 25-31.

[4] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 1040-1041:

սյան իսլամ ժողովուրդների միջև»[1]: *«1920 թ. հունվարին թուրքերը հարձակվեցին Ֆրանսիացիների վրա,–* շարունակում է Ու. Չերչիլը,*– նրանց դուրս հանեցին Մարաշի նահանգից և ջարդեցին շուրջ 50 000 հայեր»*[2]:

Վերոհիշյալ մտքերը հայտնագործություն չեն և նման մտքեր արտահայտվել են հազար ու հազար անգամ: Մենք դրանց վրա ուշադրություն դարձրեցինք, քանի որ ասողը Ուինստոն Չերչիլն էր, մի կառավարության ապագա վարչապետը, որն իր ուսերի վրա մեղքեր ուներ Հայկական հարցում:

Տանջանքների ենթարկված հայ ժողովրդի տառապանքները, գեղագետի վրծինով, հրապարակախոսի դատապարտող վարպետությամբ են ներկայացրել ամերիկյան բազմաթիվ առաջավոր ու հումանիստ գործիչներ, որոնցից անհրաժեշտ ենք համարում ներկայացնել մի քանիսին միայն:

Հենրի Մորգենթաուն (1856-1946) ամերիկացի իրավաբան էր, խոշոր առևտրական, դիվանագետ, 1913-1916 թթ. Ստամբուլում պաշտոնավարել էր իբրև ԱՄՆ-ի դեսպան, պատերազմի տարիներին միաժամանակ պաշտպանել էր Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի, Բելգիայի շահերը Թուրքիայում:

Ամերիկացի դիվանագետը, Առաջին աշխարհամարտի սկզբից ևեթ, պաշտոնի ընձեռած հնարավորություններն օգտագործելով, երկրում սփռված հյուպատոսներից, փոխհյուպատոսներից, սովորական գործակալներից զեկուցագրեր էր ստանում և լավատեղյակ էր, թե ապրիլից սկսած երիտթուրքերն անմարդկային ինչպիսի գազանություններ էին կատարում Արևմտյան Հայաստանում, Հայկական Կիլիկիայում, հայաբնակ մյուս նահանգներում[3]: Նրանք վաղօրոք բանակ էին զորակոչել հայ երիտասարդներին, որոնց, ըստ ամերիկացու ճշմարտացի վկայության, 1915 թ. հենց սկզբներից զինաթափեցին և օգտագործում էին իբրև «քաշող անասուններ»: Մորգենթաուն հաղորդում է, որ որոշ ժամանակ անց թուրքերը սառնասրտորեն ոչնչացնում էին հայ զինվորներին: Նրա հավաստմամբ, զինաթափված, արու, առողջ, երիտասարդ, այսինքն դիմադրելու պոտենցիալ կարողություն ունեցող հայ զինվորներին ոչնչացրեցին վաղամտածված ծրագրերով: «Բոլոր վայրերում, – գրում է Մորգենթաուն, – հայ զինվորներին գնդակահարում էին նույն ընթացակարգով (արարողությամբ): Տարբեր վայրերից հավաքում էին հայ զինվորներին, կազմում էին 50-60 հոգիանոց խմբեր, բաժանում էին չորսական ենթախմբերի, կապկպում, ապա գյուղերից հանելով կուտակում վաղուց ի վեր նշանակված վայրերում: Այնուհետև լսվում էին թուրք զինվորների կրակոցների ձայնը: Սկսվում էին սպանվածների մերկացումներն ու փոսերի մեջ գլորելու արարողությունը: *Ամենաանմարդկայինն ու տանջալին այն էր, երբ մարդասպաններն իրենց զոհերին... ստիպում էին մեռնելուց առաջ փորել սեփական գերեզմանափոսերը* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[4]:

Երիտթուրքերն առավել դաժան ու բարբարոսաբար վարվեցին անզեն ու անպաշտպան *խաղաղ բնակչության* հետ: «Երիտթուրքերը,- գրում է Մորգենթաուն,- ցուցաբերեցին առավել հայտնագործություն, քան նրանց նախորդ Աբդուլ Համիդը: Գահընկեց արված սուլթանը միայն կարգադրում էր «սպանել», «սպանել», իսկ նրա հաջորդների «դեմոկրատիայի» ժամանակ ջարդերի նոր մեթոդներ էին և գործում էին բոլորովին նոր պլաններով»[5]:

---

[1] "Геноцид армян в османской империи", стр. 582.

[2] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1043:

[3] Սանրամասն տե՛ս *Henry Morgenthau*, Ambassador Morgenthau's Story, Garden-city, New-York, 1918. Տե՛ս նաև *Հ. Մորկընթաու*, Ամերիկյան դեսպան *մր. Մորկընթաուի* հիշատակները և հայկական եղեռնի գաղտնիքները. Կ. Պոլիս, 1919: "Геноцид армян в османской империи", Ереван, 1983, стр. 510-554, 613:

[4] "Геноцид армян в османской империи", стр. 541-542.

[5] Նույն տեղում, էջ 545:

Առավել տանջանքների էին ենթարկվում խաղաղ, այսինքն՝ բանակի ոչ ենթակա բնակիչները՝ կանայք, երեխաները, մեծահասակները, ծերերը: Ողջ արևմտահայությունը տեղահանվում էր, կամ տեղերում ոչնչացվում, կամ էլ «բռնում գաղթի ճանապարհը» դեպի Միջագետքի ու Սիրիայի անմարդաբնակ անապատները: Ամերիկացի դիվանագետը այնպիսի սրտաճմլիկ ոճով է ներկայացնում բռնագաղթի պրոցեսը, որ մարդկային սիրտը չի դիմանում թեկուզ դրանց ընթերցմանը: Դաժանությունների մեծ բաժինը ոստիկաններինն էին, որոնք հայտնվում էին անպաշտպան բնակչության կողքին *«նույնպիսի անսպասելիությամբ, ինչպես Վեզուվի ժայթքումը Պոմպեյի համար»*[1]:

Մենք բերեցինք Մորգենթաուի հրապարակած մի քանի փաստեր միայն՝ մնացած նյութը թողնելով համապատասխան բաժիններում ներկայացնելու: Այստեղ, սակայն, արձանագրենք, որ ԱՄՆ-ի դեսպանը ևս ցնցված էր, հոգեկան անսահման խռովք էր ապրում՝ ծանոթանալով յուրաքանչյուր փաստին, յուրաքանչյուր եղելությանը: Երբեմն նույնիսկ չհավատալով իր աչքերին, որոնք տեսնում էին, կասկածելով իր ականջներին, որոնք լսում էին: Դեռևս օրորվելով *ռոմանտիկական* հույսերով՝ նա որոշեց գործնական պայքարի դուրս գալ Հայոց ցեղասպանությունը իրականացնողների դեմ: Ջո՜ւր հույսեր...

1915 թ. ապրիլից հետո Մորգենթաուն մեկնում է Բարձրագույն Դուռ, հանդիպումներ է ունենում եռապետության գլխադասային անդամների, հատկապես, Թալեաթի և Էնվերի, այսինքն՝ ցեղասպանության հակամարդկային գործողությունները գլխավորողների հետ: Նա թուրք դահճապետերից պահանջում է դադարեցնել եղեռնը, այլապես ինքը հավաքած փաստերը կուղարկի Ամերիկայի համապատասխան դեպարտամենտին: Մորգենթաուն ոչ միայն թուրքերից, այլև գերմանական դեսպան Վանգենհայմից կոպիտ և մերժողական պատասխան է ստանում, երեսին լսելով, թե *«ի՞նչ է, հայերն ամերիկացինե՞ր են, որ դուք պաշտպանում եք»* արտահայտությունը:

ԱՄՆ-ի դեսպանին մնում էր գրչի պայքար մղել բարբարոս այդ մարդկանց դեմ: Նա սկսեց նոր նյութեր հավաքել և իրար հետևից ստեղծել հայ ժողովրդի ողբերգությանը նվիրված իր աշխատությունները: 1918 թ. Նյու Յորքում լույս տեսավ «Պատմության մեջ ամենասարսափելի եղելությունները» նրա աշխատությունը, որը նույն թվին հրապարակվեց ֆրանսերենով և հայոց լեզվով: Նույն տարում լույս աշխարհ եկավ «Հիշատակներ և հայկական եղեռնի գաղտնիքները» համառոտագրված մյուս գիրքը[2]:

Այսպիսով, միայն Հ. Մորգենթաուի աշխատությունները բավարար են, որպեսզի երկու սերնդի թուրքերն ընդունեն հայերի ցեղասպանության փաստն օսմանյան կայսրությունում: Չէ՞ որ գրողն ամերիկացի է, դեպքերի ժամանակակիցը, այն երկրի քաղաքացին, որն այսօր ՆԱՏՕ-ի բազում թելերով կապված է Թուրքիայի ու թուրքերի հետ: Հակադրվելն ու հակաճառելը, կարծում ենք, այլևս անիմաստ են:

Ջոն Ռիդը (Reid) (Պորտլանդ, 1887 – Մոսկվա, 1920) ամերիկյան բանվորական շարժման վետերաններից էր, մեծատաղանդ գրող և շնորհալի հրապարակախոս: Ավարտելով Հարվարդի համալսարանը, իբրև ռազմածակատային թղթակից, նա 1915 թ. մեկնել է Արևելյան Եվրոպա, իսկ Հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակ եկել է Պետրոգրադ, ականատես եղել Ռուսաստանում ծավալվող հեղափոխական շարժումներին, բազմիցս հանդիպումներ ունեցել Վ. Ի. Լենինի հետ:

Ջ. Ռիդը գրել է «Ապստամբած Մեքսիկան» (1914, ռուսական թարգմանությունը 1959), «Պատերազմը Արևելյան Եվրոպայում» (1916) և այլ աշխատություններ:

---

[1] "Геноцид армян в османской империи", էջ 546:

[2] Նույն տեղում, էջ 613:

1919 թ. մարտին ԱՄՆ-ում լույս տեսավ նրա գլուխգործոցը՝ «Տասն օր, որ ցնցեց աշխարհը»: Վ. Ի. Լենինի առաջաբանով հրատարակված այդ գիրքը (հայերեն առաջին անգամ թարգմանվել է 1928-ին) ցույց է տալիս, որ եթե *Հոկտեմբերյան հեղաշրջումը ցնցել է իրեն, ապա նրա գիրքն էլ ցնցել է մարդկությանը*[1]:

Ջ. Ռիդը պատերազմական թեմաներով թղթակցություններ էր տպագրում եվրոպական և ամերիկյան մամուլում, և այդ առիթով նրան շատ հետաքրքրեց հայ ժողովրդի ճակատագիրը: 1915 թ. ապրիլին, դժվար է ասել պատահաբա՞ր, թե՞ պլանավորված ձևով նա գալիս է Կոստանդնուպոլիս, հանգրվանում ամերիկյան դեսպանատանը, նյութեր հավաքում Թուրքիայում կատարվող գազանությունների մասին, դրանց մի մասը տպագրելով համաշխարհային մամուլում, ապա ամբողջացնում և հրատարակում *«Ռազմածակատի գծով»* գիրքը[2]:

Կ. Պոլսում եղած օրերին նա ականատես է լինում, թե ինչպես շատ հայեր խմբերով կամ ջոկ-ջոկ դիմում էին եվրոպական դեսպաններին՝ խնդրելով օգնություն: «Դիվանագիտական ներկայացուցիչները հրաժարվեցին լրջորեն արգելակել թուրքական գազանությունները, – գրում է Ջ. Ռիդը, – հայտարարելով, թե իրենք շատ գույք ունեն Թուրքիայում և չեն ուզում նեղացնել թուրքերին»[3]: Նա առանձնակի ուշադրության է արժանացնում ԱՄՆ-ի դեսպանորդի վարքագիծը՝ գրելով՝ *«Ամերիկյան դեսպանորդ պարոն Շտրաուսը ինքը լինելով միլիոնատեր, առաջարկեց ամբողջ հայ ժողովրդին փոխադրել Ամերիկա և ինքը բավական մեծ գումար հատկացրեց:* Բայց նրա պլանն այն էր, որ հայերին հարկադրեր աշխատել ամերիկյան ֆաբրիկաներում և էժան բանվորական ուժ տրամադրեր պարոն Շտրաուսի և նրա գործակիցների շահույթներն ապահովելու համար»[4]:

Հետագայում Ջ. Ռիդը եղավ Անդրկովկասում: Բաքվում ներկայացրեց Հայկական ցեղասպանությանը վերաբերող սարսափեցնող փաստեր, ապա շարունակեց. «Շատ հայեր շնորհակալ են Ամերիկային նրա վերաբերմունքի համար դեպի *այն հայերը, որոնք տառապել են թուրքական գազանություններից: Բայց ի՞նչ է արել Ամերիկան, բացի դատարկ դեկլարացիաներից: Ոչի՛նչ, կտրուկ պատասխանել է ամերիկացի հռետորը: Հիրավի, ոչինչ»*[5]:

Հերբերտ Ադամս Գիբբոնսը (1880-1934) ամերիկացի ականավոր պատմաբան, աշխարհաճանաչ հրապարակախոս էր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, հեղինակ ծանրակշիռ մի շարք աշխատությունների, որոնցից առանձնանում է *«Օտտոմանյան կայսրության հիմնադրումը»* նրա մենագրությունը: Իբրև «New-York Herald» և եվրոպական մի շարք այլ թերթերի թղթակից՝ Գիբբոնսը բազմիցս շրջել է Թուրքիայով մեկ, իսկ 1908-1913 թթ. դասախոսել *Տարսոնի* ամերիկա-հայկական քոլեջում փիլիսոփայություն և միջազգային հարաբերություններ առարկաները:

Թուրքիայում եղած տարիներին, հումանիստ ամերիկացին սկզբում շփվում է կիլիկիահայության, տարբեր առիթներով նաև արևմտահայ շատ համայնքների, հայ «գրագետ ու բանիմաց» մտավորականների հետ, ականատես դառնում քրիստոնյա-

---

[1] Մանրամասն տե՛ս ՀՍՀ, հ. 9, Երևան, 1983, էջ 660: Տե՛ս նաև *Ջոն Ռիդ*, Տասն օր, որ ցնցեց աշխարհը, Երևան, 1928, էջ 5-12:

[2] *Ա. Ն. Մնացականյան*, Հայկական ողբերգությունը, էջ 149-150: Տե՛ս նաև *Մ. Արզումանյան*, նշված աշխատությունը, էջ 581-582:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 150:

[5] Նույն տեղում: Տե՛ս նաև "Первый съезд народов Востока. Стенографические отчеты", Петроград, 1920, стр. 123.

ների ջարդերին, թե՛ Համիդ մարդասպանի, և թե՛ նրա «հավատարիմ հոգեզավակներ» երիտթուրքերի ձեռքերով»[1]:

Առաջին աշխարհամարտը և նրա շարունակությունը դարձած ջարդարարության նողկալի պրոցեսը ցնցող տպավորություն են գործում «Մարդկության բարեկամները» անվանակոչված ամերիկյան ընկերության ինտերնացիոնալիստ, ավելի շատ հումանիստ անդամի վրա: 1916 թ. Հ. Ա. Գիբբոնսը ավարտելով *«Վերջին կոտորածները Հայաստանում»*[2] աշխատությունը՝ այն սկզբում հրատարակեց անգլերեն, ապա նույն տարում թարգմանաբար լույս տեսավ ռուսաց և հայոց լեզուներով: Գիրքը վերածվեց շանթահարող մեղադրականի՝ *ուղղված Աբդուլ Համիդի, երիտթուրքերի և նրանց ջարդարարության պրոցեսը հովանավորող կայզերական Գերմանիայի կառավարողների դեմ*[3]:

Ամերիկացի գիտնականը տեսածից և լսածից ներքին խոր ցավ էր ապրում և հոգեկան խռովքի մեջ, իր վիշտը միացնում էր քաղաքակիրթ աշխարհի, հատկապես կացնահարված հայ ժողովրդի ողբերգությանը ցավակցողների վշտին, փորձում, գոնե գրավոր բողոքներով, ամոքել արևմտահայության անբուժելի վերքերը: Հանրահայտ է, որ դա անհնարին էր ֆիզիկապես, բայց և վշտի թեթևացում էր բարոյապես: Տվյալ պարագան ի նկատի ունենալով, հայ ժողովրդի մեծ բարեկամը, կոթնած վավերական փաստաթղթերի հեղեղին, համառոտակի ներկայացնում է Հայոց ցեղասպանության պրոցեսը. այն, ինչ այսօր համառորեն ուրանում են Թուրքիայի կառավարողները, ցավալի է նաև *«պատմաբանները»:*

Հ. Ա. Գիբբոնսը իր հետազոտությունների պրոցեսը սկսում է XIX դարի վերջալույսից: Նա նախ ցույց է տալիս, թե դժոխային ինչպիսի պայմանների մեջ է տանջահարվել արևմտահայությունը, ապա՝ ենթարկվել 90-ականների զանգվածային ջարդերին: Ամերիկացի պատմաբանը ականատես է եղել Ադանայի 1909 թ. կոտորածներին և վստահ հայտնում է դրանց կազմակերպիչներին այսինքն՝ երիտթուրքերին: *«Ես անձամբ եմ ականատես եղել այն տեսարանին, թե ինչպես Կիլիկիայի և Սիրիայի 30 000 հայերի ոչնչացրեցին»,* – գրում է Գիբբոնսը...[4]:

Սրանով լուծվում է երկու խնդիր: Օտարի հաղորդմամբ հաստատվում են կոտորված կիլիկիահայության թվաքանակը, ապա կոտորողները: Երիտթուրքերը չքմեղ էին ծևանում և արյունահեղության մեղքը դնում էին Համիդի ու նրա «մարդկանց» ուսերին: Ամերիկացին հաստատում է, թե երիտթուրքերը առավոտյան պառլամենտում (մեջլիսում) հայանպաստ ճառեր էին արտասանում հայերի մասին, երեկոյան ոչնչացնում նրանց: Այդպես էին, այսօր էլ այդպես են թուրքերը:

Ականատեսի վավերականությամբ, պատմաբանի խորաթափանցությամբ, դիվանագիտական համակողմանիությամբ Հ. Գիբբոնսը ներկայացնում է հայ ժողովրդի *ցեղասպանության* պրոցեսը և հրապարակում այնպիսի փաստեր, որոնց դեմ, կարծում ենք, պետք է զինաթափվեն *այնօրվա,* առավել ևս *այսօրվա* թուրք կեղծարարները: Նրանք փաստեր են ուզում, թող կարդան ամերիկացի հետազոտողին, նրանք փաստեր են պահանջում, թող լսեն Հ. Գիբբոնսին. *«1915 թ. ապրիլին Օտտոմանյան կառավարությունը ամբողջ Թուրքիայում կիրառեց հայ ժողովրդի ոչնչացման այնպիսի պլան, որը հանգամանորեն մտածված էր եղել վաղուց: Վեց ամիսների ընթացքում սպանվեց մոտավորապես մեկ մի-*

---

[1] "Геноцид армян в османской империи", *Ռ. Գ. Սահակյանի* կազմած ծանոթագրություններից, էջ 608:

[2] *Герберт Адамс Гиббонс,* Последние избиения армян, факты и ответственности. Перевод с английского, Петроград, 1916.

[3] *Մ. Արզումանյան,* նշված աշխատությունը, էջ 577:

[4] "Геноцид армян в османской империи", стр. 446.

լիոն հայ: Զոհերի քանակը և նրանց ոչնչացման արգահատելի մեթոդներն աննախադեպ էին նորագույն պատմության մեջ»[1]:

Գիտնականը փորձում է համառոտակիորեն շարադրել *Մեծ եղեռնի* պատմությունը, կարծեք թե չզգալով, որ մի օր իր *հրապարակած փաստերը* «դատական ատյաններում» պետք կգան դատապարտելու մի ամբողջ ժողովրդի սպանողներին, մերկացնելու ազգասպանների հովանավորողներին:

Եվ այսպես՝ 1914 թ. աշնանը, ըստ Գիբբոնսի, թուրքերը, մահմեդականներին համահավասար, բանակ զորակոչեցին քրիստոնյաներին: Ավելի երիտասարդ հայ զորակոչիկներին զինեցին և ուղարկեցին Բալկանյան ռազմաճակատում կռվելու: Համեմատաբար մեծահասակներից կազմեցին շինբրիգադներ և ուղարկեցին աշխատելու երկաթգծերի և սովորական ճանապարհաշինարարության վրա:

«1915 թ. ապրիլին, – գրում է Հ. Գիբբոնսը, – Կոստանդնուպոլսից գաղտնի հրաման առաքվեց Փոքր Ասիայի տեղական իշխանություններին, կարգադրելով նրանց, բոլոր միջոցները ձեռք առնել ճնշելու հայերի *հնարավոր ապստամբությունը:* Հրամանում ասված էր, որ հայերն սպառնում են կայսրության անվտանգությանը, դրա համար էլ, պետության պաշտպանության նպատակով, անհրաժեշտ է կիրառել ամենախիստ միջոցներ, որպեսզի թշնամին վնասազերծվի»[2]:

Հրամանը տեղ հասնելուն պես ծայր առավ հայ տղամարդկանց ահավոր ու աներևակայելի ոչնչացումը: Փաստերը կեղծ էին, լուրերը՝ ստահոդ: *Հայերի ոչ մի ապստամբություն էլ չկար, պետությանը ոչ մի սպառնալիք էլ գոյություն չուներ:* Դա կարևոր չէր: Թուրքերը թուրքավարի, քաղաքներից և գյուղերից 300-500 հոգիանոց խմբեր էին կազմում հայ բնակչությունից, զինվորների և չեթեների հսկողությամբ, դուրս էին հանում հայրենի օջախներից, մի քանի կիլոմետր հեռավորության վրա գնդակահարում, ապա վերադառնում նոր խմբերի արտաքսմանը: «Նավակները վերադառնում էին արագ, – ինչպես պատկերավոր ձևով ասում է Հ. Գիբբոնսը, – վերադառնում էին արդեն դատարկ, այսինքն՝ առանց ուղևորների»[3]:

Մի քանի շաբաթում հայ ժողովրդի արական սեռի բնակչության հետ հաշվեհարդար ավարտելով, *ջեղասպանության* մի մասն իրողության վերածելով, երիտթուրքերի եռապետությունը չհանգստացավ, դրանով չբավարարվեց[4]:

«Ծերերը, կանայք, երեխաները, բոլորը հանդիսանում էին վտանգավոր տարր օսմանյան կայսրության համար, – շարունակում է Գիբբոնսը: – *Հարկավոր էր ողջ հայությանը ոչնչացնել օսմանյան կայսրությունում:* Եվ այնպես ոչնչացնել, որպեսզի թուրքական դեսպանը *Վաշինգտոնում,* գերմանական թերթերը ինչ-որ ասել էին սկզբում, այժմ էլ շարունակեն գրել, թե սպանվել են միայն *խռովարարները,* որոնք բռնվել են հանցագործության վայրերում և վերջիններիս ձեռքերը դեռևս արյունոտ են... կանանց և երեխաներին ոչ ոք ձեռք չի տվել...»[5]:

Ներքին գործերի նախարար, հայակուլ Թալեաթ բեյն այժմ արդեն գործի դրեց հայասպանության վաղամտածված ծրագրի *երկրորդ մասը:* 1915 թ. մայիս–հոկտեմբեր ամիսներին օսմանյան կառավարությունը, ըստ դեպքերին ականատես Հ. Գիբբոնսի հավաստման, կիրառեց դժոխային մի պլան, որի ընթացքում իրականացրեց ջարդերի *հիմնական* և հաջորդ մասը: Այն իրականացվեց այնպիսի մեթոդնե-

---

[1] "Геноцид армян в османской империи", стр. 447.

[2] *Горберт Адамс Гиббонс,* Последние избиения армян, стр. 10-11.

[3] "Геноцид армян в османской империи", стр. 447.

[4] Նույն տեղում, էջ 448:

[5] Նույն տեղում:

րով, այնպիսի դաժանությամբ, որ մարդկային բանականությունը երևակայել, այո՛, նույնիսկ երևակայել չէր կարող:

Ամբողջ Փոքր Ասիայում հրամաններ բաժանվեցին, որ ողջ հայ բնակչությունը պետք է աքսորվի Միջագետք: Աքսորին նախապատրաստվելու համար տրվում էր ***երկու օր և վեց ժամ***[1]: Երբեմն էլ ոչ մի րոպե: Ոտաբոբիկ, քաղցած, երբեմն մերկ ծերեր, կանայք, փոքր երեխաները գլխիկոր, զինվորների մտրակի ծանր հարվածների տակ քայլում էին, քայլում, և վերջը չէր երևում: Նրանք գնում էին Միջագետքի բարկ արևի տակ, ավազուտներով, երբեմն անցնում բարձրադիր ու ձյունածածկ լեռներով, առանց կերակրի, նույնիսկ խմելու ջրի:

«Հիվանդները, ծերերը և երեխաները քայլեցվում էին ճանապարհի եզրերով, որպեսզի եթե ընկնեն, այլևս թույլ չտան վեր կենալու, – գրում է Հ. Գիբբոնսը: - Ծննդաբերության ցավերի մեջ տառապող կանանց խփում էին մտրակներով կամ մարմինը ծակծկում սվիններով մինչև ազատվելը: Դրանից հետո նրանց շպրտում էին քարավանից դուրս, թողնում մինչև արյունաքամ լինելն ու մեռնելը: Քիչ թե շատ հաճելի տեսք ունեցող աղջիկներին վերցնում էին հարեմներում... ով կարող էր իրեն զրկում էր կյանքից: ***Խելագարված մայրերն իրենց երեխաներին գցում էին գետերը, որպեսզի նրանց փրկեն տանջանքներից: Հարյուր հազարավոր կանայք և երեխաներ մահացան քաղցից, ծարավից, բռնաբարությունից և ամոթից»*** [2]:

Ամերիկացի հրապարակախոսը, իր ձեռքի տակ եղած փաստերից զատ, շրջանառության մեջ է դնում օտար այլ թղթակիցների հաղորդագրություններ: Նրա ծանոթ անգլիացի մի կին թղթակից հաղորդել է, թե հոկտեմբեր ամսին ***հայերի աքսորը*** շարունակվում է. «Երկրի խորքերից այդ դժբախտները քշվում են դեպի Բաղդադի երկաթգիծը և Ադանայով ուղարկվում մահվան ճանապարհով... Օ՜, ինչքան լավ կլիներ, եթե նրանց ուղղակի սպանեին, ինչպես արեցին Աբդուլ Համիդի օրերին: Ես եղա Ադանայի երկաթգծի կայարանում, տեսա, թե ինչպես թշվառ մայրերն իրենց երեխաներին կպցնում էին վագոնի լուսամուտներին և արտասուքը աչքերին աղերսում էին գոնե մի կում ջուր տալ: Նրանք այլևս հաց չէին խնդրում, այլ միայն ջուր, մի կում ջո՜ւր: Չնայած կայարանում ջրի խողովակներ կային, բայց ժանդարմները արգելում էին դրանցից խմելը... Եվ այդպես մինչև գնացքը շարժվեց... Այնուհետև ես երկար ժամանակ լսում էի այդ դժբախտների հոգեմաշ ճիչերը... Լորդ Բրայսը (ամիսներ առաջ) զոհերի թիվը դնում էր 800000, ***այժմ այն անցել է մեկ միլիոնից»***[3]:

Եվ այսպես, խորությամբ ու բազմակողմանիորեն ծանոթանալով ցեղասպանության մասին լեռնակուտակ վավերագրերին, ականջալուր լինելով օտարերկրացիների պատմածներին, ականատես ջարդերի անմիջական պրոցեսին, Հ. Գիբբոնսը ***հաստատակամորեն, առանց տատանվելու*** հայտնում է «հեղափոխության բացակայության», շինծու, ստահոդ լինելու վարկածը: Նա շարունակում է, «որ ինքը ամբողջապես համոզվել է, որ հայերի կոտորածն ու աքսորվելը միաժամանակ սկսվելով ողջ Թուրքիայում, կարելի է հաշվել, որ դրանք արդյունք էին վաղօրոք մշակված ծրագրերի, որոնք մտահղացվել էին, հաստատվել և գործադրելու սանկցիա ստացել Ստամբուլում նստած կառավարության անդամների կողմից, շատ վաղուց, գուցե գործադրումից հինգ տարի առաջ»[4]:

Հ. Գիբբոնսը վստահեցնում է, որ հայկական ***«մեկկես միլիոն»*** բնակչության թափած ծովածավալ արյունը հեղեղվել է կայզերական Գերմանիայի գիտությամբ և ա-

---

[1] "Геноцид армян в османской империи", стр. 448.

[2] Նույն տեղում, էջ 449:

[3] ***Герберт Адамс Гиббонс,*** նշված աշխատությունը, էջ 28:

[4] "Геноцид армян в османской империи", стр. 451-452.

ջակցությամբ, նրա համար, որ ***«հայերը խանգարում էին Անատոլիայի գերմանացման պրոցեսին»:*** Նա փաստեր է հրապարակել, ապացուցելու գերմանական դեսպան Վանգենհայմի գիտենալը Հայոց ցեղասպանությանը, ինչպես նաև գերմանական սպաների անմիջական մասնակցությունը անզեն բնակչության ոչնչացման պրոցեսին:

Ամերիկացին հատուկ ընդգծում է, պարտադրում եվրոպական մեծերին նրանցից պահանջելով ***խուլ չմնալ այդ մեծ ոճիրի հանդեպ, դատապարտել այն, կատարողներից հաշիվ պահանջել:*** Նրա ճշմարտացի վավերացմամբ, Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում ապրած հայ բնակչությունը եղել է երկրի ամենազարգացած, ամենաընդունակ և կարող ժողովրդահատվածը, «որն ապահովել է Թուրքիայի տնտեսական բարգավաճումը»: «Հայկական տարրի պահպանությունը Փոքր Ասիայում, – շարունակում է Հ. Գիբբոնսը, – անհրաժեշտ է հենց իրենց թուրքերի բարեկեցության համար: ***Առանց հայերի*** աջակցության թուրքերը չեն կարող ո՛չ քաղաքականապես և ո՛չ էլ տնտեսապես գոյություն ունենալ որպես ինքնուրույն և անկախ ազգ»[1]:

Գեորգ Բրանդեսը (1842– Կոպենհագեն–1927 Կոպենհագեն) դանիացի ականավոր հրապարակախոս էր, գրաքննադատ, հիմնականում դասախոսել է Կոպենհագենի համալսարանում, գրել և հրատարակել է «XIX դարի եվրոպական գրականության» վեցհատորյակը (1872-1890), Վ. Շեքսպիրի, Վ. Գյոթեի դիմանկարները ներկայացնող գործեր: Հայտնի են նրա գրականագիտական ակնարկները նվիրված ռուս մի շարք գրողների գործերի վերլուծությանը: Վերջին գիրքը վերնագրված էր «Ասք Քրիստոսի մասին», ուր քննադատության նշանախեց է դարձնում քրիստոնեական վարդապետությունը[2]:

1903 թ. փետրվարի 2-ին, ***«Եվրոպայի հայ ուսանողների միության»*** հրավերով, Բեռլինում կազմակերպած հանրահավաքի ժամանակ Գ. Բրանդեսը դասախոսություն է կարդացել նվիրված XIX դարի 90-ական թվականներին Թուրքիայում կատարված հայկական ջարդերի պատմությանը[3]: Դասախոսության համառոտագրությունը «Դրոշակ» թերթի խմբագրությունը հրատարակել է առանձին գրքույկով, (1907) և այն անփոխարինելի սկզբնաղբյուր է հայկական ցեղասպանության մասին[4]:

Եվրոպացի գրականագետը, նախ սեղմ էջերի մեջ, գիտական մեծ վարպետությամբ, կարողացել է ներկայացնել հայոց հազարամյակների պատմության համառոտագրությունը և այն կատարել է լավատեղյակությամբ, առանց սխալների: Հեղինակի նպատակն է արևմտյան տերությունների, հատկապես, Թուրքիայի թիկունքում վարագուրված Գերմանիային կոչ անել, որ զորավիգ կանգնեն աշխատասեր, տաղանդավոր, ստեղծագործ մի ժողովրդի, կանխեն նրան սպառնացող ***եղեռնը:***

Ահա նրա դասախոսությունից մի քանի հատվածներ. «Եթե հայերի բաժինը միմիայն թշվառությունը լիներ, մենք դարձյալ չպետք է զլանայինք նրանց նկատմամբ դրսևորելու մեր համակրանքը: ***Նրանց տանջանքներն անսահման են, նկարագրելը կամ պատմելն անհնար է, որովհետև լսողները պիտի փակեն իրենց ականջները:*** Եթե ասվի, թե երեք հարյուր հայ ոչնչացվեց բռնության, ցրտի ու սովի պատճառով՝ շատ թեթև տպավորություն կթողնի և ձեր երևակայությունը չի շարժի:

Օրինակ, ի՞նչ օգուտ, եթե ասենք, թե 1894-ի ***օգոստոսին Մուշի շրջակա գյուղերում տեղի ունեցած համատարած կոտորածը տևեց երեք շաբաթ, որ այնտեղ***

---

[1] ***Герберт Адамс Гиббонс,*** նշված աշխատությունը, էջ 24-25: Տես նաև ***Մ. Արզումանյան,*** նշված աշխատությունը, էջ 577-578:

[2] ՀՍՀ, հ. 2, Երևան, 1976, էջ 555:

[3] «Օտարերկրացիները Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին», ***Գեորգ Բրանդես***, Հայաստանը և Եվրոպան, մատենաշար, N 1, Երևան, 1997, էջ 3-10: Խմբագիր ***Լ. Ա. Բարսեղյան:***

[4] ***Գեորգ Բրանդես,*** նշված աշխատությունը, էջ 3:

անխտիր կոտորեցին տղամարդկանց, կանանց, երեխաներին, որ կանայք սպանվելուց առաջ լլկվեցին, որ հարյուրավոր կանանց սրին ու սվիններին զոհ դառնալուց առաջ զինվորներին հանձնեցին (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[1]:

Թուրքերն ու քրդերը, հատկապես քուրդ «համիդիեները», հղի հայ կանանց, մանկահասակ երեխաներին, անպաշտպան ծերունիներին կոտորում էին, մորթում *աներևակայելի դաժանությամբ,* ստորացուցիչ ցինիզմով: Ահա մի քանի օրինակ. «Հղի մի կին զորքի առաջ ընկած աղերսում էր, որ խնայեն իրեն: – Տղա է, թե՞ աղջիկ, – գոռացին զինվորները: Եվ ասացին, որ տղա է, և յոթ մեջիթով գրազ եկան: – Տեսնենք, որն է, – ասացին ու թշվառ կնոջ արգանդը ծեղքեցին: Ով պատմում է այս մասին, կարող է դեպքի մանրամասները նկարագրել ու վկաների անունները տալ»[2]:

Դաժանությունը չափ չուներ: Մարդկանց ոչնչացման մեթոդները գնալով «կատարելագործում էին» և՛ քրիստոնեատյաց թուրքերը, և արյունախում, ավարածարավ, բարբարոս ու վայրենի քրդերը. «Մի այլ տեղում, – գրում է Բրանդեսը, – *քրդերը գրազ բռնեցին, թե ով կարող է մեկ հարվածով չորս երեխայի գլուխ թռցնել: Նրանք երեխաներին մորթեցին մայրերի աչքերի առջև...* 1900 թվականի հուլիսի 3-ին 500 քրդեր պաշարեցին, ապա հարձակվեցին Սպաղանք գյուղի վրա: Կանայք և երեխաները լացով ու պաղատանքով զորքերին ընդառաջ գնացին: Բայց փոքրիկ երեխաները ողջ-ողջ սվիններին բարձրացվեցին, իսկ կանանց մերկացնելուց ու անպատվելուց հետո սպանեցին: Գյուղի ութսունամյա քահանայի բերանը ծեղքեցին և ծնոտը պոկեցին: Գյուղի տանուտերի հղի կնոջ Թիմենեի արգանդը բացեցին և երեխային կտրատեցին, իսկ մորը դաշույնի հիսուն հարվածով ծակծկեցին»[3]:

Նույն վիճակն էր Հայաստանի քաղաքներում, բոլոր բնակավայրերում, նույն դաժանություններն ու զարհուրելի կոտորածներն էին ամենուրեք: «Տրապիզոնում կոտորածի առաջին օրը մի հայ դուրս է գալիս հացի խանութից, ուր գնացել էր հիվանդ կնոջ և զավակների համար հաց գնելու: Հանկարծ վրա է հասնում մոլեգին մի խումբ: Մարդը խնդրում է բարեհաճ վերաբերմունք: Նրանք լկտիաբար բռնում են խեղճին, կապում ոտքերը, կտրում են մի ծեռքն ու *հրամայում, որ խաչ հանի, իսկ մյուսներն էլ հորդորում են բարձր գոռալ, որպեսզի Քրիստոսը կարողանա լսել նրա պաղատանքները:* Ոճրագործներից մեկը կտրում է նրա ականջներն ու խոթում բերանը, հետո շպրտում երեսին: Մեկ ուրիշը գոռում է. «Էֆենդիի բերանը, որ արհամարհեց այդպիսի համեղ կերակուրը, պետք է պատժվի»: *Կտրում են լեզուն, որպեսզի այլևս չկարողանա հայհոյել: Դաշույնի ծայրով հանում աչքը, այնպես, որ դեմքի զարհուրելի կծկումները, թույլ մարմնի ջղաձգումները, արյան տեսքն ավելի ու ավելի են գազանացնում մոլեռանդներին: Հետո փորում են մյուս աչքը և ոտքերն էլ կտրում են մահացու հարված հասցնելուց հետո* (ընդգծումները մերն են- Հ. Ղ.)»[4]:

Գ. Բրանդեսը խոսում էր հրապարակախոսական մեծ վարպետությամբ, խոր ապրումներով, անկեղծ գթասրտությամբ, լսարանում նստած ունկնդիրների վրա ազդելու ակնկալությամբ: Նա տեսնում էր, որ կանայք այլևս չէին կարողանում դիմանալ, հեծկլտալով դուրս էին նետվում: Ատենախոսը շարունակում էր նպատակ ունենալով խորությամբ ազդել գերմանացիների ներքնաշխարհի վրա, նրանց նպատակամղել օգնության ձեռք մեկնել թշվառ արևմտահայությանը, վրեժխնդիր լինել բարբարոս պետությունից, մահմեդական վայրենի ջարդարարներից:

---

[1] *Գեորգ Բրանդես,* նշված աշխատությունը, էջ 10:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 4-6:

[4] Նույն տեղում, էջ 4:

Ատենախոսությունն ավարտվում էր հետևյալ պատկերով. «Հին իռլանդական մի առասպելում կինը սպանված ամուսնու արնաթաթախ վերարկուն նետում է իր այն ազգականի ուսերին, որը համաձայն չէր նրա դատը պաշտպանելու, որպեսզի դրանով վրիժառության դրդեր նրան: Մեզանից ոչ ոք չի ձգտում վրիժառության: ***Սակայն, եթե հնարավոր լիներ հայոց զոհերի արնաշաղախ վերարկուն գցել գերմանական ժողովրդի ուսերին, որպեսզի նա իր կառավարությանը ստիպեր ստանձնել այս փառավոր ազգից ողջ մնացածների ապահովությունն ու երաշխավոր ազատությունը, ապա դա կլիներ մի հրաշալի և փառահեղ գործ»:***

Դրանք զուր հույսեր էին... Եղածը դեռ նախերգանքն էր 1915 թ. մեծ սպանդի, որի պրոցեսում Գերմանիայի մեղքն անսահման էր:

Հայ ու բուլղար ժողովուրդները դարեր շարունակ ենթարկվել են թուրքական յաթաղանի ծանր հարվածներին: Բուլղարիան, հերոսական պայքարով և սլավոնական «եղբոր» Ռուսաստանի օգնությամբ, ազատագրվեց սուլթանական բռնապետությունից, սակայն չմոռանալով այն տանջանքները, որոնք կրել էր անցած հարյուրամյակներում հայ ժողովրդի հետ միասին: Բուլղարիայի հերոս զավակները, բանիմաց ու հումանիստ մտավորականները, ազատագրվելուց հետո էլ, չմոռացան բախտակից արևմտահայությանը, նրանց 90-ականներին ունեցած վիշտն ու տառապանքը համարեցին ***իրենց սեփականը:***

Բուլղարացի հայասերներից առաձնանում է հատկապես ***Դիմիտր Ա. Սպիրովը,*** որը ջարդերի օրերին գրեց և հրատարակեց ***«Հայերի սարսափելի կոտորածները (1894-1896 թթ.)»,*** ապա քիչ անց նաև ***«Հայաստանը և սուլթան Աբդուլ Համիդը»*** աշխատությունները: Դժվար է գերագնահատել այդ գործերի նշանակությունը հայասպանության պատմության հետազոտողներիս համար, մանավանդ այն տեսանկյունից, որ 90-ականների հայկական կոտորածները ոչ թե սոսկ ջարդեր էին, այլև ***ցեղասպանություն, հայասպանություն:***

Գնահատելով դրանց օգտակարությունը, այսօրվա թուրքական պետական այրերին պատասխանելու պրոցեսում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, բուլղարերենից թարգմանել (թարգմանիչ ***Կարո Ճինգոյան***) և հայերենով հրատարակել է Դ. Սպիրովի վերոհիշյալ երկու աշխատությունները (խմբագիր ***Լ. Ա. Բարսեղյան):*** Աշխատություններին կցված են թարգմանչի առաջաբանները, որոնք պարունակում են նաև խնդրին վերաբերող փաստական չկրկնվող նյութեր:

Թարգմանչի առաջաբանում պատասխանի խոսք կա ուղղված ժամանակակից թուրք պատմաբաններին և պետական բարձրաստիճան գործիչներին: Նա գրում է. «Այսօր թուրք ջարդարարների արժանավոր հետնորդները, նրանց վայ գիտնականներն ու ծախու գրչակները անպատկառ լկտիությամբ փորձում են խեղաթյուրել ու ննջգափոխել պատմական ճշմարտության անվիճելի փաստերը, չքմեղանալ և խուսափել պատասխանատվությունից, ջանալով մարդկությանը հավատացնել, թե այդ ամենը չարամիտ հերյուրանքների արդյունք է, թե Թուրքիայում ոչ մի միտումնավոր ցեղասպանություն չի եղել, թե պատահածն էլ բյուրիմացություն է և կամ պատերազմի անխուսափելի հետևանք:

Իսկ ինչպե՞ս մեկնաբանել աղետալի իրադարձություններին անմիջականորեն ականատես օտարազգի նշանավոր մարդկանց բազում ու բազմապիսի վկայությունները, այդ տագնապալի օրերի ցնցող տպավորությունների ազդեցությամբ նրանց գրած և հրապարակած առանձին գրքերն ու հոդվածները: Եվ, ի հեճուկս թուրքական դիվանագիտության համառ ջանքերի, օրավուր բազմապատկվում են այդ հանցագործությունը վերապրողների հուշագրությունները, ժամանակի օտարազգի դիվանագետների ու հասարակական-քաղաքական գործիչների վկայությունները, որոնք հաճախ

անսքող կրքով ու ցասումով նկարագրում կամ դատապարտում են Արևմտյան Հայաստանում օսմանյան դահիճների գործած անասելի գազանությունները:

Դժոխային այդ օրերին բուլղարական մամուլը («Սոցիալիստ», «Միսլ», «Նովո վռեմե», «Դեն», «Ռոբոտնիչեսկի վեստնիկ», «Գլաս Մակեդոնսկի», «Օսվոբոժդենիե» և այլն) հանդես եկավ թուրք ջարդարարների և սուլթան Համիդի վարած հայահալած քաղաքականության խիստ քննադատությամբ: Օրինակ՝ «Սոցիալիստ» թերթի քաղաքական տեսաբանը գրում էր. «Արդեն երեք տարի է, ինչ գազազած սուլթանական հորդաներն ու ոստիկանության կողմից զինված մոլեռանդ ամբոխը աշխարհով մեկ տարածել է հայ ժողովրդի դառն հառաչանքը: Հայաստանում տեղի ունեցող արհավիրքն ու գազանությունները իրենց նմանը չունեն պատմության մեջ: Այնտեղ առանց սեռի ու տարիքի խտրության սպանում են ոչ թե հարյուրներով կամ հազարներով, այլ տասնյակ ու հարյուր հազարներով: Այնտեղ հրկիզված են ոչ թե մեկ կամ երկու, այլ հարյուրավոր գյուղեր ու տասնյակ քաղաքներ: Ողջ երկիրը վերածված է ավերակների ու մոխրակույտերի»[1]:

Դիմիտր Սպիրովը սոսկ հրապարակախոս չէր: Նրա տաղանդավոր գրչից կայծեր էին թռչում և ժամանակակից գրչեղբայրները խորհուրդ էին տալիս ***գրելու ժամանակ ձեռնոց հագնել, որպեսզի կարողանար մեղմ շարժել իր գրիչը***: Այո՛, շատերն են բացահայտել Համիդ մարդասպանի բարբարոսական գործունեության մութ ծալքերը, բայց գրեթե ո՛չ ոք Սպիրովի կրքով ու մարտունակությամբ, լեզվական կուլտուրայով ու խորիմաստ փաստագիտությամբ: Հումանիստ, հայասեր բուլղարացին իր գործով ու գրչով, թերևս մնում է անգերազանցելին ժամանակակից գրչեղբայրների անտառաչափ բանակում:

Ջայն տանք մեծ հումանիստին՝ Դիմիտր Սպիրովին. «Առհասարակ Եվրոպայի վերաբերմունքը այս արյունարբու բռնակալի նկատմամբ դատապարտելի է վաղուց ի վեր, իսկ ինչ վերաբերում է շնական Ստամբուլում ներկայիս կոտորածներին, ապա Եվրոպան ստանձնել է իսկական բռնակալի դերը: Մի՞թե Եվրոպան, որ հոխորտում է իր քաղաքակրթությամբ ու մարդասիրությամբ, սիրտ չունի: Քրիստոնյա ու քաղաքակիրթ Եվրոպան, որ ավելի քան 60 տարի այնքան ճիգ ու ջանք է թափել, որպեսզի մարդկայնացնի, ոտքի կանգնեցնի, որպեսզի վերակառուցի դարերով բարբարոս այս պետությունը, մի՞թե չտեսավ, չհասկացավ, որ իր ջանքերը հօդս են ցնդում, որ ինչքան ջանում է բարեփոխել այս պատմական աղբակույտը, այն, ի հեճուկս Եվրոպայի ու մարդկության, ***դառնում է ավելի անհեռատես ու ավելի անպատկառ:*** Նապոլեոնը Թուրքիային ներգրավեց եվրոպական դաշնության մեջ, դարձրեց յոթ մեծ տերությունների անդամակիցը միմիայն նրան վերակառուցելու նպատակով, ***սակայն հիմար մոհամեդական պետությունը, առ ի երախտագիտություն Նապոլեոնին, գլխովին կոտորեց Լիբանանի բնակչությանը... Թուրքիան այս առումով ինչպես Բալկաններում, այնպես էլ Ասիայում չի տարբերվում մի անառակ կնոջից, որը քացի է տալիս, կծում, մորթում է առանց դրդապատճառի ու աննպատակ: Ու Եվրոպան հովանավորում է այս փչացած կնոջը:*** Այսքան ժամանակ մի՞թե Եվրոպան չհասկացավ, որ այդ պատմական աղբից լավագույնս մի երկար ու լայն գերեզման կստացվի: Չհասկացա՞վ նրա նենգ, անատոլաբյուզանդական ու մանաֆական քաղաքականությունը, որ նրա հազարավոր խոստումները, խաթթը-հյումայումները, խաթթը-շերիֆները մի խոշոր զերո են: ***Լուսավորյալ Եվրոպան չհասկացա՞վ, որ Թուրքիան ու բարեփոխումները տար-***

---

[1] *Դ. Ա. Սպիրով,* Հայերի սարսափելի կոտորածները (1894-1896 թթ.), Երևան, 1997, էջ 4-5: Թարգմանիչ *Կ. Ճինգոյանի* առաջաբանից:

բեր բաներ են՝ միմյանց հակասող, որ Թուրքիայում բարենորոգում նշանակում է յաթաղան, ջարդ ու կոտորած, կախաղաններ և ծովի հատակ...»[1]:

Դ. Սպիրովը մանրակրկիտ անդրադառնում է Կ. Պոլսի ողբերգության պատմությանը, Սասնո կոտորածներին, քրդական վայրենաբարո ցեղերի ձեռարծակ գործունեությանը լեռնագավառներում: Նա նկարագրում է կառավարական հանճնաժողովի, եվրոպախառն անդամների մուտքը Սասուն, նրանց բերած փաստերի վավերականությունը և որպես ընդհանրացում գրում. «Այժմ կոտորածի մասին, որը հաջորդել էր այս դեպքերին, բայց չգիտեմ ո՞րտեղից սկսեմ և ի՞նչ ասեմ: XIX դարի արևմտականները ինձ չեն հասկանա: Այդուհանդերձ, փորձեմ անդրադառնալ մի քանի փաստերի: Ասացի, որ քրդերի դեմ կռվելիս հայերի պաշարները գրեթե սպառվել էին, ուստի չգիտեին ինչով դիմադրեին զինվորներին, թեև հնարավոր է, որ ծայրահեղ հուսահատության մեջ ոմանք իրենց կյանքը ըստ ամենայնի թանկ են ծախել: Հենց որ իմացել են, թե ինչ ճակատագրի են արժանացել հանձնվողները, ոմանց հաջողվել է փախչել: Ասում են, ոմն Պետո Գալինից, քրդերի մեջ ճանաչված էր վերքեր բուժելու իր արվեստով, վերջիններիս օգնությամբ փրկվել է իր ամբողջ ընտանիքով, բայց նրա ունեցվածքը ևս թալանվել է: Հետո քրդերն արցունքն աչքերին պատմել են հայկական գյուղերում, թե չնայած հայերն իրենց թշնամիներն են, այնուամենայնիվ, սիրտ չեն արել սպանելու կանանց ու երեխաներին, ինչպես արել են զինվորները: Բայց շարունակենք: Բոլոր հայերի տները հրկիզվել են, մեծահասակներն ու փոքրերը, տղամարդիկ ու կանայք սրի են քաշվել: Ձեռքներն ընկած երիտասարդ տղաներին կապկպած տապալել են գետնին, վրաները չոր փայտ դիզել և վառել՝ մինչև այրվել են: Ուրիշներին կտոր-կտոր են արել: Շենիկում մի տան մեջ հավաքել են շուրջ 50 տղամարդ, կանայք ու երեխաներ և տունը կրակի են տվել, իսկ զինվորները շուրջը հսկել են, որ ոչ ոք դուրս չպրծնի: Մի տղա փորձել է փախչել, բայց խոցել են սվինով ու տուն վերադարձրել, որպեսզի այրվի: Գերգոն, գյուղի մեծահարուստներից մեկը, բռնվել և բերվել է Զիլանի շեյխի և զորքերի հրամանատարի մոտ: Անցյալ տարվա հայ-քրդական ընդհարումների ժամանակ Գերգոն իբր վիրավորել է շեյխի եղբորը: Եվ վրեժխնդիր զինվորներն ու քրդերը Գերգոյին տարել են իր տունը, ուր անկողնում պառկած է եղել նրա կինը, որը մի քանի օր առաջ էր ծննդաբերել: *Նորածնին վերցրել և դրել են մոր կրծքի վրա ու երկուսին ջարդել, երկու կտոր արել: Գերգոյին տարել են հեռու և սպանել:* Հետո մարդիկ գտել են նրա շապիկը, որը կարված է եղել յուրահատուկ կտորից, սվիններով ու դաշույններով ծակծկված 20 տեղից: Գերգոյի եղբոր կինը, արտակարգ գեղեցկուհի, մի քանի օրով պահվել է զինվորների մոտ և բռնաբարվել, որ հավատը փոխի, սակայն, տեսնելով, որ անդրդվելի է, սպանել են: Գերգոն, կինը, երեխան և Գերգոյի երկու եղբայրների կանայք սպանվել են, իսկ մյուսներին հաջողվել է փախչել»[2]:

Եվ այսպես, գավառ առ գավառ, գյուղ առ գյուղ ներկայացվում են տաղանդավոր բուլղարացու այս գրքում, որը կարդացողը գիշերները քնելուց զրկվում է, քանզի տպավորությունները ահավոր են, անտանելի:

Ավելի քան ծանր տպավորություն է գործում Դիմիտր Ա. Սպիրովի մյուս աշխատությունը, որը վերնագրված է «Հայաստանը և սուլթան Աբդուլ Համիդը», և որը նույնպես Կ. Ճինգոզյանի թարգմանությամբ և գողտրիկ առաջաբանով, հրատարա-

[1] *Դիմիտր Ա. Սպիրով*, նշված աշխատությունը, էջ 15-16:

[2] Նույն տեղում, էջ 41-42:

կել է ցեղասպանության թանգարան-ինստիտուտը (խմբագիր *Լ. Ա. Բարսեղյան*)[1]: Այստեղից հայտնի է դառնում, որ գրքի *«հակասուլթանական ուղղվածության պատճառով»*, հեղինակը դատապարտվել է վեցամսյա բանտարկության:

Այժմ տեսնենք, թե ինչպես է ներկայացվել թուրքական նախավերջին սուլթանը, բոլոր «սուլթաններից ամենասարսափելին ու ամենահայակուլը»: Նա գրում է. *«Որ Կոստանդնուպոլսի սատրապ Աբդուլ Համիդ II-ը, ինքն է հրամայել հայերի կոտորածը, այդ մասին այլևս ոչ մի կասկած չկա: Նա է ուղղակի, արյունարբու, անհատապաշտ և, այսպես ասած, ֆիզիկական մարդասպանը, XIX դարի բռնակալների այս լուսատուն, այս երկրորդ Ներոնն է հրամայել կոտորածները, իր գլխավոր քարտուղար Սուրեյա փաշայի միջոցով, որին հետո թունավորեց ընթրիքի ժամանակ, որպեսզի կենդանի վկայի հետքը չմնա, որպեսզի Եվրոպայի առջև որևէ առիթով չկարողանա մատնել սուլթանին:* Սա վկաներին վերացնելու արևելյան ձև է, որը սովորաբար գործի է դրվում թուրք բռնակալների կողմից: Բոսֆորի մեծ չալմայակիրը ուզեց աշխարհի երեսից սրբել այս ժողովրդին, քանզի շատ գլխացավանք և ծանր, անքուն գիշերներ է պատճառել նրան: Բայց ի հեճուկս այս թշվառականին, նրա ծրագիրը չկարողացավ լրիվ իրագործվել, որպեսզի ամբողջ ժողովրդին սրի քաշի: Սակայն այն, ինչ կարողացավ անել այս անպաշտպան ազգին, բավական էր արժանանալու դափնե պսակ ստանալու համար մարգարե Մուհամեդի օրհնությանը ուղղակի եդեմ մտնելու հավերժական երանությունը վայելելու համար: Որովհետև յուրաքանչյուր սուլթանի, Մուհամեդի ամեն մի ժառանգորդի, ամեն մի խալիֆի գերագույն պաշտամունքն է քրիստոնյաներին կոտորելը, անհավատ շներին գյավուրներին սպանելն ու ոչնչացնելը»[2]:

Դ. Ա. Սպիրովը հետազոտելով սկզբնաղբյուրները, հատկապես ֆրանսիացի ժուռնալիստների հոդվածներն ու գրքերը, դրանցից առանձնացնում է «Les Messacres d' Armenie» («Կոտորածները Հայաստանում») աշխատությունը, որը հիմնականում նվիրված էր *Եդեսիայի* (Ուրֆա) հայոց աներևակայելի կոտորածներին: Հեղինակը ներկա է եղել ողբերգությանը և ականատեսի վկայությամբ ներկայացնում է քաղաքի ջարդի ամբողջական պատկերը: Բուլղար հեղինակը ֆրանսիացու գրքից բերում է քաղվածքներ ու անում համապատասխան եզրահանգումներ:

Ըստ այդ շարադրանքի Ուրֆայում (Եդեսիայում) ջարդն սկսվել է 1896 թվականի հոկտեմբերի 15-ին, ժամը 11-ին, կիրակի օրը: Երկուշաբթի առավոտյան, թուրք ամբոխը, ոստիկանների ուղեկցությամբ, շարունակել է հայկական խանութների թալանը՝ գոռալով *«կոտորելու ենք բոլոր հայերին, հենց իրենց զենքերով, փառք Մուհամեդին»:* Կոտորածի պահին հայտնվում է կառավարիչ Հասան փաշան, որն ամբոխի միջից բղավում էր. «Ապա, սիրելիներս, ձեզ տրվում է քսանութ ժամ, որպեսզի մորթեք քաղաքի բոլոր գյավուրներին և՛ նրանց ամբողջ հարստությունը թալանեք»: Ամբոխը շնորհակալ եղավ փաշային, և շարունակեց իր գործը՝ թալանը: Մի կապիտան մոտեցավ փաշային և մի կողմ հրավիրեց նրան, մի որոշ ժամանակ խոսեց նրա հետ, ապա հրամայեց զինվորներին դադարեցնել կողոպուտը և ամբոխը ցրել: «Հայդե,- կանչում էր նա,- գնացեք գյավուրների թաղը, մորթեք բոլորին և թալանեք նրանց»: Վերջում զինվորները թողեցին թալանը և համոզեցին ամբոխին դուրս գալ շուկայից: Այնժամ բոլորը գնացին հայոց թաղը: Մի ուժգին ճիչ ցույց տվեց նրանց ներկայությունն այնտեղ, քանի որ նրանք անընդհատ կանչում էին «Փառք Մուհամեդին», իսկ որոշ կանայք ընկերակցում էին

[1] *Դիմիտր Ա. Սպիրով*, Հայաստանը և սուլթան Աբդուլ Համիդը, Երևան, 2000:
[2] Նույն տեղում, էջ 4-5:

նրանց դահիրեների հնչյունների տակ: Թալանը տևեց տասը ժամ: Հետո նրանք հարձակվեցին հայոց թաղի վրա, որտեղ սկսեցին կացիններով ջարդել տների դրսի դռները: Մորթում էին այնտեղ գտնվող մարդկանց և կողոպտում ամեն ինչ, նույնիսկ պարենը և տնական մանր-մունր իրերը: Բայց թե թաղի մեջտեղում, որտեղ հայերի տները հասնում էին 4000-ի, բնակիչներին հաջողվեց համախմբվել և ետ մղել զորքերի ու բաշիբոզուկների հարձակումները: Վայրի տականքները անհաջողությունից գազազած, սոսկալի աղաղակներով վերադարձան շուկա ու շարունակեցին թալանել խանութները: Այդ օրը միայն 80 խանութ մնացին չթալանված, մյուս 1800-ը կատարելապես կողոպտված էին, այնպես էլ թալանված էին 300 տներ: Այդ օրը կային 177 մահացածներ և 58 հոգի ծանր վիրավորներ բաշիբոզուկների գազազած ամբոխից»[1]:

Հաջորդ օրն առավոտյան, պորտապար պարող թուրք կանանց ուղեկցությամբ, խուժանը ներխուժեց հայկական թաղամաս, սակայն հանդիպեց դիմադրության: Զինվորներով պաշարեցին ամբողջ հայկական թաղը: Նրանց թույլ չէին տալիս հայթայթել ոչ սնունդ, ոչ գարի և ոչ էլ նույնիսկ հարդ:

Արդեն սպանված էին հացի փռերում կամ քաղաքի ջրաղացներում աշխատող սասունցիները: Առևանգվեցին և բոլորովին մերկ զորանոցներ բերվեցին նրանց կանայք ու դուստրերը: Հինգ օր նրանց տանջելուց և պատվազրկելուց հետո բաց թողեցին իրենց տները: Բոլորը համոզված էին, որ անհավատ կնոջ անպատվելը կամ մի գյավուր տանջելը Ալլահին և նրա մարգարե Մուհամեդին ամենահաճելի գործ է, որ անհավատների ունեցվածքն ու փողերը պատկանում են մուսուլմաններին, և բոլորը կատաղած փողոցներում բղավում էին. «Եթե մինչև վերջին հայ գյավուրին, այս ապստամբ, գող ու ավազակներին, այս շներին չսպանենք, երբեք չենք տեսնի դրախտը, փա՜ռք Մուհամեդին...»[2]:

Շաբաթ օրը դեկտեմբերի 16-ին, լուր տարածվեց, թե թուրքերը նոր հարձակման են նախապատրաստվում: Կիրակի առավոտյան 3000 զինվորներ և 1500 «համիդիեներ» ներխուժեցին հայկական թաղամասը և սկսեցին կատարյալ ***«բարդուղիմեոսյան ցերեկ»:*** Ջարդերին չափ ու սահման չկար, դաժանության մասին խոսք ասելը դժվար էր: Ինչքան շատ էին կազմակերպվում ջարդերը, այնքան թուրքերն ու քրդերը հմտանում էին իրենց արհեստի մեջ: Վերադառնալով ջարդերի պատմության շարունակությանը Սպիրովը լրացնում է սրտաճմլիկ նոր տեսարաններով: Նա գրում է. «Եվ ոչ մի տեղից ոչ մի օգնություն, ոչ մի գթասրտություն չեկավ ամոքելու խեղճ հայերի տանջանքները: Մայրերը նետվում էին մարդասպանների ոտքերի առջև, որոնք հարձակվում էին երեխաների, քույրերի, եղբայրների, ամուսինների վրա, չնայած նրանց առջև թափված էին իրենց ունեցած ամբողջ փողը, մինչ այդ թաքցրած թանկարժեք իրերը: Աղերսում էին, որ վերցնեն իրենց ամբողջ ունեցածը, միայն թե իրենց կյանքը խնայեն, սակայն, խեղճ կանայք ոտնահարվում էին մարդկային կերպարանքով այս գազանների կողմից, որոնք թռնում էին նրանց դիակների վրայով, որպեսզի հասնեն ընտանիքի մյուս անդամներին, նրանց ևս կոտորելու համար:

Երեկոյան ամբոխը մոտեցավ եկեղեցուն, որտեղ թաքնված էին շուրջ 3000 հայեր: Թուրքերը կես ժամվա ընթացքում ջարդեցին դուռը և ներս ներխուժեցին, կանչելով. «Փառք Մուհամեդին»: Տեսնելով այստեղ թաքնված հայերի բազմությունը, մտածեցին, որ չարժի ժամանակ վատնել նրանց բոլորին մեկ-մեկ մորթելու համար, ուստի

[1] *Դիմիտր Ա. Սպիրով,* նշված աշխատությունը, էջ 34:
[2] Նույն տեղում, էջ 36-37:

բերեցին 16 սնդուկ նավթ, այն թափեցին շուրջ բոլորը ու եկեղեցու վրա, որն անմիջապես բոցավառվեց ամեն կողմից: Երեք հազար հոգի կենդանի այրվեցին: Նրանք ուժեր փորձեցին փախչել, դաժանորեն ջարդվեցին գազազած ամբոխից: Այս բոլոր տանջանքներից միայն մեկ հոգի փրկվեց, այն ևս շատ տեղից վիրավոր, երեք օր շարունակ թաքնված մնալով այրված դիակների տակ»[1]:

Ուրֆայի-Եդեսիայի գողգոթան իր չափերով ու դաժանությամբ գերազանցեց հայկական մյուս նահանգներին, որոնց մասին բուլղար մտավորականը շարունակում է. «Եդեսիայում զոհվածների թիվը պետք է հասած լինի 15000-ի: Վերապրողները, ծանր վիրավորները և հաշմանդամները մեռնում են օրական 20-25 հոգի: Չմնաց այլևս ոչինչ, ոչ ժողովուրդ, ոչ հովիվ: Ութ քահանաներից ողջ մնաց միայն մեկը: Բողոքականների քարոզիչը կտոր-կտոր էր արվել, որի մսի կտորտանքները ցրված էին փողոցում, *որովհետև շներն անգամ այլևս կուշտ էին մարդկային միս ուտելուց:* Ողջ մնացածները խրված էին չքավորության մեջ, իսկ դահիճները դեռ չէին հագեցել: Պատվարժան մարդիկ լռել էին, որ գիշերները խոսում են, որ անհրաժեշտ էր վեց ժամ ևս կոտորած, ճշտությամբ կատարած լինելու համար սուլթանի սրբազան հրամանը և ի փառք Մուհամեդի: Նրանք պետք է մորթեին վիրավորներին ևս»[2]:

Եթե շարունակենք, ապա մեր առջև դրված խնդրի շրջանակներից դուրս կգանք, չնայած արդեն դուրս ենք եկել: Այդուհանդերձ, բուլղար հրապարակախոսի բերած շարադրանքով, այնտեղ ամփոփված փաստերով, դժվար չէ թուրք պատմաբաններին «համոզել», որ 90-ականներին կատարվածը *ցեղասպանություն էր, հայասպանություն,* որի համար, եթե ոչ այսօր, ապա վաղը պատասխան պետք է տա հանցագործների հաջորդ սերունդը՝ *թե՛ բարոյապես, և թե՛ նյութապես:*

90-ական թվականների հայկական ջարդերը դատապարտել են նաև իսլամապաշտ *Մեվլանա զադե Ռիֆաթը*, Հալեպի գաղթականների տեսչության պետ *Նայիմ բեյը,* ազգությամբ արաբ՝ *Ֆայեզ էլ Դուսեյնը և Մուսա Փրենսը:*

Ավետիս Եափուջյանը, տիրապետելով արաբերենին և թուրքերենին, հետազոտելով բազմաթիվ օտարալեզու սկզբնաղբյուրներ, հատկապես Մուսա Փրենսի գործերը, անում է ներքոհիշյալ ընդհանրացումը. «*Համիդեն Քեմալ,* հայ ժողովուրդին զոհերը. Մուսա Փրենս կը գնահատէ երկու միլիոն-300.000 Համիդի օրով, 1-1.500.000 երիտթուրքերուն օրով, եւ 500.000 Քեմալի օրով: Այս է թրքական տիրապետութեան «տխուր հաշուեկշիռը» Արեւմտահայաստանի մէջ, միայն քառորդ դարու ընթացքին: «Թուրքերը յափշտակեցին հայերուն հողը, ինչքերը եւ երեսուն դարերու ընթացքին անոնց ամբարած ամէն կարգի հարստութիւնները, անոնք քանդեցին հայերուն ստեղծագործ տաղանդով ու աշխատանքով ստեղծուած մշակոյթի եւ արուեստի գանձերը»: Այս է թրքական տիրապետութեան «տխուր հաշուեկշիռը» Արեւմտահայաստանի մէջ, միայն քառորդ դարու ընթացքին:

Իր գրքին վերջաւորութեան, Մուսա Փրենս խօսելէ ետք «Հայասպանութիւնը եւ միջազգային իրաւունքը» հարցին շուրջ, շատ կարեւոր հարց մը կը յարուցանէ որպէս եզրակացութիւն - «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԱՅՍՕՐ ԵՒՍ»: «Ամէն անգամ որ հայ մը իր ինքնութիւնը կը կորսնցնէ, կէս դար առաջուան ցեղասպանութիւնն է որ կը տեւականանայ: *Հայաստանէն դուրս այսօր ապրող հայերը, իրենց հողը չեն լքած իրենց կամքով, եւ քանի որ Ցեղասպանութեան մասին միջազգային օրէնքին գլխաւոր նպատակն է արգելք հանդիսանալ ազգի մը բռնի ուժով բնաջնջման, հայ ազգին աստիճանական բնաջնջումը, որ կը*

[1] *Դիմիտր Ա. Սպիրով,* նշված աշխատությունը, էջ 41-42:
[2] Նույն տեղում, էջ 42:

շարունակուի այսօր, ոչ թէ արիւնով, այլ «անձնականութեան» բնաջնջումով, միջազգային այս օրէնքին բռնաբարումն է»[1]:

Մեր կարծիքով, սրանից ավելին ասելն արդեն ավելորդ է, քանզի յուրաքանչյուր աշխատություն գրելիս վերջում բարի խոսքեր ես ասում քո ժողովրդին, ամփոփում լավատեսական ցանկություններով: *Այս դեպքում վիճակն այլ է: XIX դարի 90-ական թվականներն իբրև ցեղասպանության առաջին շրջափուլ, փաստորեն այն ահավոր սկիզբն էին հայ ժողովրդի Մեծ գողգոթայի, որը նա ապրեց հետագա քառորդ դարի ընթացքում:* Բայց զարմանահրաշ այս ժողովուրդը, այդքանից հետո, ոչ միայն ապրեց, հարատևեց, այլև փյունիկի նման վեր հառնեց և կերտելով *սեփական պետականությունը*, հնի վրա վերընձյուղեց նորն ու համազգայինը: *Ճիշտ է ասված, այո, «եթե մի ժողովուրդ ուզում է ապրել, նրան սպանել չես կարող»:*

[1] *Ավետիս Ահարոնեան*, Մեծ եղեռնը օտար մտավորականության գնահատումով, Գահիրե, 1890, էջ 112-113:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ.
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Գլուխ առաջին

Ցեղասպանության «գաղափարական» նախապատրաստումը. պանօսմանիզմից պանթուրքիզմ

1915 թ. ապրիլին Օսմանյան կառավարությունն ամբողջ Թուրքիայում կիրառեց Հայ ժողովրդի ոչնչացման այնպիսի պլան, որը հանգամանորեն մտածված է եղել վաղուց: Վեց ամիսների ընթացքում սպանվեց մոտավորապես մեկ միլիոն հայ: Չոհերի բանակը և նրանց ոչնչացման արգահատելի մեթոդներն աննախադեպ էին նորագույն պատմության մեջ:

ՀԵՐԲԵՐՏ ԳԻԲԲՈՆՍ

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ հարյուրամյակում իրենց ավերիչ գործերն սկսեցին թուրք օղուզական ցեղախմբերը, որոնք գորշ գայլի նշանի տակ ծվարած, օգտվելով ստեղծված ռազմաստրատեգիական նպաստավոր պայմաններից, փոքր ժամանակահատվածում ձևավորեցին «Կարահիսարի ավազակաբարո» մի բռնապետություն: Այն աստիճանաբար, երբեմն էլ հախուռն ձևով, ընդարձակվելով, իր արյունոտ, ջարդարարական թևերը փռեց Առաջավոր Ասիայի, Հարավային Եվրոպայի, նույնիսկ Աֆրիկայի առափնյա երկրահատվածների վրա:

Տասնյոթերորդ դարում օսմանյան կայսրությունն այնպես էր ընդարձակվել, որ արդեն ահ ու սարսափ էր տարածում ոչ միայն ասիական փոքր տերությունների, այլև հանուր Արևմտյան Եվրոպայի վրա: Հաջորդ հարյուրամյակում, Օտտոմանյան տերության տարածությունն ընդարձակվելով, արդեն հասել էր ***մեկուկես միլիոն քառակուսի կիլոմետրի:*** Սրընթաց արշավանքների հաջողություններից ոգևորված, թուրք ասպատակիչները պատրաստվում էին ներխուժել Ավստրիա, այնտեղից էլ Ֆրանսիա ու Գերմանիա, դառնալ համաշխարհային տերություն:

Վերջապես, մինչ այդ նիրհած Եվրոպան, սթափվեց լոթարինգյան քնից, արթնացավ և նախապատրաստվեց բացթողումները լրացնել, այսինքն գոնե ինքնապաշտպանության միջոցներ ձեռք առնել: Արևմուտքի բանիմաց ու հեռամետ գործիչներն արդեն ըմբռնեցին թուրքերի ներկայացրած վտանգը ***քրիստոսապաշտ աշխարհի համար: Ավստրիական և հունգարական*** քաջակորով զորքերը, ժողովրդական աշխարհազորի զորակցությամբ 1664 թվականին, Սեն Գոթարդի ճակատամարտում մահացու հարված հասցրեցին թուրքական բանակին:

Եվրոպայի դիպուկ հարվածից շշմած «բարբարոս Ասիան» երկար ժամանակ ուշ-

քի չէր գալիս, միաժամանակ չէր էլ հրաժարվում նոր ասպատակություններ անելու մտադրությունից: Շուրջ երկու տասնամյակ նախապատրաստվելուց հետո թուրք օղուզները ձեռնարկեցին նոր, հերթական արշավանք: 1683 թ. ***Վիեննայի պատերի տակ, ավստրիական, լեհական*** և ***հունգարական*** զորքերը, կրկին օգնական ունենալով ժողովրդական աշխարհազորայիններին, կատարելապես ջարդեցին օսմանյան «փառաբանված» ասպատակիչներին և վերջիններիս հարկադրեցին ստորագրելու նախ ***Կարլովիցի*** (1699), ապա ***Ստամբուլի*** (1700) թուրքերին ստորացնող պայմանագրերը:

Արևմուտքի քրիստոնյա աշխարհը մի պահ ազատ շունչ քաշեց, քանզի դրանով ի չիք դարձավ Թուրքիայի անպարտելիության առասպելը, և աստիճանաբար ազատագրական պայքարի մայրուղի մտան թուրքահպատակ մեծ ու փոքր ժողովուրդները, այդ թվում և հայ ժողովուրդը:

Դեպի Եվրոպա լուսամուտ բացելուն զուգընթաց, Թուրքիայի հզորացման թումբ կանգնեց Պյոտրյան Ռուսաստանը, որն այդ տասնամյակներին, հատկապես հետագա հարյուրամյակներին, ոչ միայն բացառեց թուրքերի նոր առաջխաղացումն արևմտյան աշխարհում, այլև հերթականությամբ, մաս առ մաս խուզեց նրա մարմնի տարբեր հատվածները, տիրացավ դրանցից շատերին, մեծ մասին էլ օգնեց վերականգնելու իրենց ազգային պետությունները (Բուլղարիա, Սերբիա, Չեռնոգորիա, Հունաստան, Ռումինիա և այլն):

Վերջին երեք հարյուրամյակների ընթացքում բռնկվել էին ռուս-թուրքական ***տասնմեկ պատերազմներ*** (բոլորում հաղթել էր Ռուսաստանը, բացի Ղրիմից, որը կռիվ էր ողջ Եվրոպայի դեմ), եղել են ***քսաներկու*** կոնֆլիկտներ, որոնց հետևանքով Թուրքիան կորցրեց (ավելի ճիշտ՝ թուրքերի լծից ազատագրվեցին) կայսրության եվրոպական նահանգները: Սուլթանները XIX դարավերջին, հատկապես Սան Ստեֆանոյի (1878, փետրվարի 19) պայմանագրով և Բեռլինի կոնգրեսով (1878, հունիս-հուլիս) վերածվեց ասիական տերության, քանզի Աֆրիկան ևս «անկախություն» էր ստացել[1]: Տերության ընդհանուր տարածքը մնաց 800 հազար քառակուսի կիլոմետր, որից 25 հազարը՝ եվրոպական մասում, մնացածը՝ Ասիայում: Բնակչությունը 42,5 միլիոն էր հաշվում 1975 թ., 55 միլիոն՝ 1995 թ.[2]:

Մինչև բռնապետության թուլացումն ու քայքայումը թուրքական հաղթարշավ զորքերն, առաջապահ զինյալներով, տանում էին դրոշակներ, որոնց վրա դաջված էր ***գայլակերպ*** գինանշանը (ի նշանավորումն իրենց ծագմանը): ***Նրանց դոկտրինան էր. քրիստոնյա բոլոր ազգերը գյավուր են, զիմմի, ռայա, ստրուկ:*** Թուրքերը նրանց պետք է իշխեն և իրենց կամքը թելադրեն այնպես, ինչպես կամենան: Պայքարի, նվաճման, ստրկացման գլխավոր ձևը համարվում էր ***Ջիհաթը - սրբազան պատերազմը,*** որն այսօր էլ կիրառվում է ոչ միայն Թուրքիայում, այլև մահմեդական գրեթե մյուս բոլոր երկրներում ***(Չեչնիա, Աֆղանստան, Պակիստան*** և այլն): Օգտագործվում էր նաև ***գազավաթ*** անվանումը[3]:

Թուրքական օրենսդրությունը հիմնականում սնվում էր «Կորանի» դոգմաներով, քանզի երկիրը թեոկրատիկ էր, և սուլթանները ոչ միայն Թուրքիայի քաղաքական գերագույն սյուզերեններն էին, այլև ողջ մահմեդական աշխարհի հոգևոր պետերը: Նոր դարաշրջանում այլևս կառավարման հնամենի այդ ձևն ու առավել ևս բովանդա-

---

[1] ***Лорд Кинросс,*** Расцвет и упадок османской империи, Москва, 1999, стр. 16. (գրքի խմբագիր՝ ***Մ. Ս. Մեյերի*** առաջաբանից):

[2] "Турция. Окно в мир", Москва, 1997, стр. 66. Տես նաև ***Александр Скаранц,*** Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Москва, 2002, стр. 21.

[3] ***А. И. Агрономов,*** Джихад: "Священная война" мухаммедян, Москва, Крафт, 2002, стр. 2-3.

կությունը իրենց չէին արդարացնում: Թուրքիան ոչ միայն մնում էր հետամնաց երկիր, այլև վերածվում էր եվրոպական տերությունների կիսագաղութի[1]:

Նիկոլայ Առաջին ցարը, Լոնդոնում եղած օրերին, բանակցությունների ժամանակ արտահայտվելով Թուրքիայի մասին, 1844թ. այդ երկիրը ճշմարտացի բնութագրմամբ, անվանեց *«հիվանդ մարդ»*: Օսմանյան կայսրությունը նոր դարաշրջանում, կորցնելով երբեմնի «փառքն» ու ռազմական հզորությունը, խճճվել էր կապիտուլյացիաների խիտ ցանցի մեջ, պետական պարտքը հասցնելով աստղաբաշխական համրանքի, քայլ առ քայլ ետընթաց էր ապրում և վերածվում եվրոպական տերությունների կիսագաղութի:

Դիպուկ էր բնութագրում նաև *«Նոր օսմաններ»* ընկերության անդամ *Զիյա բեյը*՝ գրելով. «Եվրոպացիներն օսմանյան կայսրությանը *նայում են իբրև հանգուցյալի, բայց չնայած այն բանին, որ հանգուցյալին այլևս հնարավոր չէր կյանքի վերադարձնել,* համենայն դեպս նրանք ձգտում են պաշտպանել այդ դիակը, հակառակ դեպքում վախենալով, որ *Ռուսաստանը կգավթի Ստամբուլը. նաև նրա համար, որ ոչինչ չեն կարողանում դնել վերջինիս տեղը* (ընդգծումները մերն են- Հ. Ղ.)»[2]:

Օսմանյան կայսրության «անբուժելի հիվանդ» լինելու պարագան «անհանգըստացնում էր» Եվրոպայում կրթություն ստացած թուրք այն մտավորականներին, *որոնք ընդգրկվել էին մասոնական կազմակերպությունների շարքերում,* ունեին քիչ թե շատ արևմտյան կրթություն և վերադարձին դեղամիջոցներ էին փորձարկում հանգուցյալին կյանքի վերադարձնելու, եթե ոչ եվրոպական Թուրքիայում, գոնե ասիականում: Նույնիսկ թուրք մասոնների թիվն այնքան էր ստվարացել, որ արդեն տրոհվել էին *տարբեր կողմնորոշումների,* իրար հետ վիճում էին հիվանդին բուժելու մեթոդների և եղանակների, ժամանակի ու տարածության վերաբերյալ: Օրինակ՝ ոչ անհայտ *Միդհատ փաշան* (1822-1884) որդեգրել էր անգլիական կողմնորոշում, անդամակցում էր Լոնդոնի *«Ազատ որմնադիրների»* մասոնական ակումբին, մտահղացնում էր, Գր. Օտյանի հետ կազմում և վավերացնել տալիս Թուրքիայի առաջին *Սահմանադրությունը* (1876)[3]: Սակայն միայն Միդհատ փաշան չէր Թուրքիայի վերակենդանացման ջատագով:

Թուրք պետական այրերի, առավել ևս «մտավորականության» կեղծարարությունը սկիզբ էր առել դեռևս պատմության ետնախորքում: Իրար հետևից ձևավորվում էին թուրքական գաղափարական մոլեռանդ ուղղություններ, որոնք կամ լրացնում, կամ էլ հաջորդում էին մեկը մյուսին: Դրանցից առաջինը *«Նոր օսմաններ» ընկերությունն էր*[4]:

XIX դարի 60-ական թվականներին օսմանյան կայսրությունում սկզբնավորվեց սահմանադրական մի շարժում, որի հիմնադիրները, որոշ բացառությամբ, կրթություն էին ստացել Փարիզում, շատերը ականատես էին եղել 1848 թ. ֆրանսիական հեղափոխությանը, բոլորը անխտիր ծանոթացել էին այդ հեղափոխության գաղափարաբանությանը: «Լուսավոր» այդ դեմքերն որոշում են Թուրքիան հանել տնտե-

---

[1] ***Ս. Մանուկյան,*** Тюрки в Анатолии, Ереван, 1994, стр. 58.

[2] ***Ալեքսանդր Սվարանց,*** նշված աշխատությունը, էջ 22: Տե՛ս նաև ***Մանուկյան Ս.,*** Тюрки в Анатолии, стр. 58.

[3] "История масонства", Смоленск, 2002, глава "Происхождение масонства и его развитие в Англии XVIII и XIX вв.", стр. 3-41.

[4] Կազմակերպության ընդարձակ պատմությունը տե՛ս ***Ю. А. Петросян,*** Младотурецкое движение (вторая половина XIX - начало XX вв.), Москва, 1971, стр. 39-103. Տե՛ս նաև ***Е. К. Саркисян,*** Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., Ереван, 1972, стр. 40-49. ՀՍՀ (Հայկական սովետական հանրագիտարան), հատ. 8, 1982, էջ 373: ***Ռ. Ս. Սաֆրաստյան,*** Արևելագիտության հարցեր, պրակ 1-2, Երևան, 1983 («Օսմանցման քաղաքականության պատմությունից» հոդվածը), էջ 193-195:

սական ու քաղաքական խորացող գահավիժումից, երկիրը փրկել «եվրոպացիների կիսագաղութացումից»:

Եվ այսպես, 1865 թ. հունիսի 6-ին *Ստիքյոյում* գտնվող Սագիրա Ահմեդ բեյի ամառանոցում, այսինքն՝ Կոստանդնուպոլսի արվարձանում, հանդիպեցին հինգ երիտասարդներ և քննարկեցին գաղտնի ընկերություն հիմնելու խնդիրը[1]: Հունիսի 7-ին Բոսֆորի եվրոպական ափին, Բելգրադյան անտառում հիմնադրվեց գաղտնի մի կազմակերպություն, որը պատմության մեջ ստացավ հայտնի դարձած ***«Նոր օսմաններ» ընկերություն*** անունը: Շուտով նրա կազմում ընդգրկվեցին 250 անդամներ[2], որոշ ժամանակ անց «նրա անդամները» դարձան 470-500 երիտասարդներ:

«Նոր օսմաններ» գաղտնի ընկերությունը ձևավորվել էր՝ օգտագործելով ***իտալական կարբոնարների*** և ***լեհական կոնֆեդերատորների*** ընկերությունների կազմակերպական սկզբունքները: Սակայն այդ նոր ռեֆորմատորները Թուրքիայում փոփոխություններ էին առաջարկում ոչ թե ***ներքևից,*** ոչ թե հեղափոխության ճանապարհով, այլ ***վերևից:*** Նրանք փորձում էին երկրի վերակառուցումը կատարել պարբերական մամուլի և քաղաքական գրականության էջերում հրապարակած նյութերի ազդեցությամբ, այսինքն՝ անարյուն ճանապարհով[3]:

«Նոր օսմաններ» կազմակերպության հիմնադիր անդամները հինգն էին: Դրանք էին ***Իբրահիմ Շինասին, Աբդուլ Համիդ Զիա բեյը, Մահմեդ Նամըկ Քեմալը, Ալի Սուավին*** և ***Ռիշադ բեյը:*** Դրանցից երկուսը «քանզիմաթի» ձևակերպող, հանրաճանաչ ***Մեհմեդ Ռեշիդ*** փաշայի հետևորդներն էին, գաղափարական սնունդ էին ստացել նրանից, որն արդեն մահացել էր 1858 թ.:

Այդ երկուսից ***Իբրահիմ Շինասին*** (1817-1871) ֆրանսիական 1848 թ. հեղափոխության ժամանակ սովորում էր Փարիզում և ենթադրություններ կան, թե նա մասնակցել է բարիկադային մարտերին: Ընկերության հիմնադրման տարում նա Կոստանդնուպոլսում էր, խմբագրում էր ***«Թասվիրի էֆքյար»*** («Գաղափարների արտահայտիչ») ազդեցիկ պարբերականը՝ նրա էջերում հրատարակելով իր հրապարակախոսական հոդվածները, բանաստեղծությունները, պիեսները[4]: Սակայն մայրաքաղաքում նա մնաց ընդամենը մեկ տարի, ապա կամավոր տարագրվեց Ֆրանսիա՝ վախենալով, որ իրեն կբանտարկեն՝ մեղադրելով Մեծ վեզիր Ալի-փաշայի դեմ կատարած անհաջող մահափորձին մասնակցելու համար: Ի. Շինասին մայրաքաղաք վերադարձավ 1869 թ., երբ արդեն ծերացել էր և մահացավ 1871 թ. սեպտեմբերի 13-ին[5]:

Երկրորդը ***Աբդուլ Համիդ Զիա*** բեյն էր (1825-1881): Նա ծառայում էր սուլթանի պալատում, ապա հետագայում զբաղեցրեց ոչ բարձր, բայց և այնպես մի քանի պաշտոններ: 1867 թ. նա ևս կամավոր գաղթի ճանապարհ բռնեց, հերթականությամբ ապրեց Փարիզում, Լոնդոնում, Ժնևում, որտեղ աստիճանաբար դարձավ Թուրքիան սահմանադրական միապետության վերածելու և պառլամենտական համակարգով կառավարելու կողմնակից[6]: Եվրոպայից վերադառնալով՝ նա ստացավ Կիպրոսի նահանգապետի պաշտոնը, մտերմացավ Բարձր Դռան պաշտոնյաներ ***Ալի և Ֆուադ*** փաշաների հետ:

---

[1] ***Ю. А. Петросян,*** նշված աշխատությունը, էջ 52:

[2] Տե՛ս ***Лорд Кинросс,*** Расцвет и упадок османской империи. Перевод с английского ***М. Палникова,*** оформление ***В. Осипяна,*** Москва, 1999, стр. 546-547:

[3] Նույն տեղում, էջ 547: Տե՛ս նաև ***Ю. А. Петросян,*** նշված աշխատությունը, էջ 54-55:

[4] Մանրամասն տե՛ս ***B. H. Davison,*** Reform in the Ottoman Empire, 1856-1876, Princeton, 1963, p. 25.

[5] ***Ю. А. Петросян,*** նշված աշխատությունը, էջ 55: Տե՛ս նաև ***S. Mardin,*** Jon turklerin sivast fikirleri, 1895-1908, Ankara, 1964, s. 31-34.

[6] ***Лорд Кинросс,*** նշված աշխ., էջ 547: Տե՛ս նաև ***Ибрахим Татарль,*** Годишник на Софийский университета, томе LXI, 1967, стр. 350-354.

Ավելի երիտասարդ և ավելի ճկուն քաղաքագետ դուրս եկավ ***Մեհմեդ Նամըկ Քեմալը*** (1842-1889): Նա ծնվել ու դաստիարակություն էր ստացել անատոլիական մի ֆեոդալի ընտանիքում, որը մոտիկ կապեր ուներ մեծ վեզիր Մահմուդ I Տոպալիվա Օսմանն փաշայի հետ: Մայրաքաղաքի աշխարհիկ մասնավոր դպրոցներից մեկում կրթություն ստանալով Նամըկ Քեմալը պաշտոնավարության է անցնում արտաքին գործերի նախարարությունում: Այնտեղ դիվանագիտական աշխատանքին զուգընթաց, նա սկսում է բանաստեղծություններ գրել և շատ շուտով հայտնի է դառնում իբրև ընդունակ բանաստեղծ: Նրա թեմաները դարձան «Սերը և հայրենիքը», գրական ժանրը՝ ***էսսեներ և բանաստեղծություններ***[1]:

Չնայած այն պարագային, որ Նամըկ Քեմալը Թուրքիայի եվրոպականացման հիմքը համարում էր ***մահմեդականությունը-իսլամը***, այնուամենայնիվ նրան սպառնաց բանտը և աքսորը: Եվ ահա դիվանագիտական գործունեության պատրվակով «Նոր օսմաններ» կազմակերպությունը տեղափոխվեց Փարիզ, ուսումնասիրեց Անգլիայի, ապա Նապոլեոն III-ի սահմանադրությունները, կառուցեց իր տեսությունը Թուրքիայի ապագայի մասին և Փարիզ փախած մյուս ընկերոջ՝ Ալի Սուավիի հետ, թուրքերենով հրատարակեցին «Հուրիեթ» («Ազատություն») պարբերականը:

1867 թ. Աբդուլ-Ազիզ սուլթանը պետական այց կատարեց սկզբում Փարիզ, ապա Լոնդոն: Անգլիայի մայրաքաղաքում, թուրքական ֆես կրող մի խումբ երիտասարդներ բողոքի ցույց կազմակերպեցին ընդդեմ սուլթանի[2]: Դրանց գլխավորում էր Նամըկ Քեմալը:

Ընկերներից քիչ ավելի տարբեր եղավ ընկերության հիմնադիր անդամներից ***Ալի Սուավիի*** անցած ուղին: Նա ծնվել էր 1838 թվականին Ստամբուլում, արիստավորի ընտանիքում: Ստանալով և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր կրթություն՝ Ալի Սուավին աշխատանքի էր անցել Պլովդիվում և մեդրեսեում աշխատել իբրև ուսուցիչ: Այնտեղ նա հաճախակի էր հանդես գալիս Բ. Դռան՝ մեդրեսեների նկատմամբ վարած քաղաքականության խիստ քննադատությամբ: 1867 թ. Ալի Սուավին Ստամբուլում էր, որտեղ և մտերմանալով Նամըկ Քեմալի հետ, մայրաքաղաքում սկսեց հրատարակել «Մուխբիր» («Թղթակից») թերթը[3]:

Ընկերության մի շարք անդամներ տարբեր ժամանակներում զբաղեցրել են պետական զանազան պաշտոններ: ***Կայգադե Րեշիդ բեյը*** ի վերջո հասավ նահանգապետի պաշտոնի և ստացավ փաշայի տիտղոս: ***Մենապարիձե Նուրի բեյը***, լինելով ապագա սուլթան Աբդուլ Համիդի եղբայրը, ընկերության հիմնադրման ժամանակ թարգմանում էր օտար լեզուներով ստացված նյութերը: Հետո նա դարձավ արտասահմանյան «Ռեժի» ծխախոտագործական կամպանիայի պետական կոմիսարը: «Նոր օսմանների» ղեկավար կազմում մենք տեսնում ենք անվանի զինվորական և քաղաքական գործիչների: Մի քանի ամիս ընկերության նախագահության կազմում ենք տեսնում Մեհմեդ բեյին, ապագա ներքին գործերի նախարարին[4]:

Այսպիսով՝ 1865 թ. հիմնադրված «Նոր օսմաններ» ընկերությունը երբեմն կոչվում էր այդ, երբեմն էլ «Գրքասերների» ընկերություն, «Օսմանյան լուսավորիչների» միություն և այլ անուններով: Նրա հիմնադիրները ձգտում էին հասարակության բոլոր խավերի համար թուրքերենը դարձնել հասկանալի լեզու, շրջանառության մեջ դնել

---

[1] Տե՛ս ***Лорд Кинросс,*** նշված աշխ., էջ 547: Տե՛ս նաև ***Ю.А. Петросян,*** նշված աշխ., էջ 54-55:

[2] ***Лорд Кинросс,*** նշված աշխատությունը, էջ 549: Տե՛ս նաև ***Х. З. Габидулин,*** Младотурецкая революция, Москва, 1936, стр. 15-21.

[3] ***Ю. А. Петросян,*** նշված աշխատությունը, էջ 56:

[4] Նույն տեղում, էջ 56-57: Տե՛ս նաև ***Лорд Кинросс,*** նշված աշխատությունը, էջ 548-560: ***M. C. Kuntay,*** Namik Kemal, Istanbul, 1949, t. 1, s. 291.

այնպիսի բառեր, որոնք Արևմուտքում տարածված էին, իսկ Թուրքիայում՝ արգելված: Դրանք էին. «հայրենիք», «ազատություն», «ազգ», «հայրենասիրություն», «պառլամենտ», «հեղափոխություն» և այլն[1]: Ակնհայտ է, որ այդ երիտասարդները ստացել էին արևմտյան, հատկապես ֆրանսիական դաստիարակություն և աստիճանաբար դառնում էին «համոզված սահմանադրականներ»:

Սրանց օրինակով Կ. Պոլիս լցվեցին տարբեր ձևի ու երանգի մարդիկ, որոնց բոլորի հայացքը սևեռված էր դեպի Արևմուտք: Սկզբում *Աբդուլ Մեջիդ*, ապա *Աբդուլ Ազիզ* սուլթանները, գտնվելով լիբերալ գործիչների ազդեցության տակ, ազատություն տվեցին արտասահմանյան գրականության ներմուտին Թուրքիա, նրա թուրքական կամ այլալեզու բարգմանություններին: Ղրիմի պատերազմից հետո թուրք մտավորականության մեծ մասը գտնվում էր Ֆրանսիայի ազդեցության տակ: Երեկվա բարբարոսներն այսօր ֆրանսերեն էին սովորում, կարդում ֆրանսիական գրականություն: Նույնիսկ հարեմների երկաթյա վարագույրները ճեղքեր էին բացում և գրկաբաց ընդունում ֆրանսիական ռոմանները[2]:

Աբդուլ Մեջիդի աղջիկ Ֆաթիման ֆրանսերենից թուրքերենի վերածեց Ժորժ Սանդի մի քանի վեպեր՝ կնոջ էմանսիպացիային նվիրված: Հայրը անձամբ չէր համակրում Ժորժ Սանդին, սակայն աղջկա նկատմամբ ունեցած սիրո պատճառով արտոնեց դրանց հրատարակությունը և գրքերը նույնիսկ ուղարկել տվեց գավառ: Երևացին անգլիական, գերմանական գրականության թարգմանություններ: Զարմանալիորեն թուրքերը սրտաբացորեն էին ընդունում եվրոպական միտքը[3]:

Թուրք մտավորականության աշխարհայացքը զարգացման նոր թափ ստացավ: Միստիկական ժանրին պատկանող գրքերի և հերոսավեպերի փոխարեն ծնվեցին կենցաղային ռոմաններ, հասարակական-քաղաքական խնդիրներ շոշափող գործեր: Զարգացավ թուրք գրականությունը: Աբդուլ Մեջիդի արտոնությամբ գործել սկսեց եվրոպական տիպի թատրոն: Գրվեցին և բեմադրվեցին այնպիսի պիեսներ, որոնք քննադատում էին հարեմական կյանքը, իշխող կենցաղն ու հնամենի սովորույթները և զարգացման նոր ճանապարհ կանխատեսում:

«Նոր օսմաններ» ընկերության անդամներն իրենց վրա *«երիտասարդ Թուրքիա»* մակագրությամբ թիկնոց կրելով՝ սկսեցին ստեղծագործության զարգացման նոր ուղի: Հատկապես *Եկրեմ բեյը, Աբու Զիյան, Տևթիկ բեյը, Քեմալ բեյը, Միդհատ փաշան* ցույց տվեցին Թուրքիայի քայքայման նկարագիրը, փորձեցին բացահայտել դրա պատճառները: Սակայն գեղարվեստական գրականության զարգացման արվեստի տեսանկյունից նայելով՝ նրանց գործերում գրեթե բացակայում է ինքնուրույնությունը: Դրանց վրա իշխում էր այսպես կոչված *գալիականության* ազդեցությունը: *Այդուհանդերձ, պատճենավորող նրանց գործերից բարեփոխությունների հոտ էր փչում:*

«Նոր օսմաններն» իրենց առջև խնդիր էին դրել տապալել բացարձակ միապետական կարգերը և երկրում հաստատել սահմանադրական միապետություն[4]: Նրանք, հերթականությամբ տարագրվելով Արևմտյան Եվրոպայի երկրներ, արտա-

---

[1] *А. Ф. Миллер*, Краткая история Турции, Москва, 1948, стр. 84-85.

[2] *И. И. Голобородько (И. Южанин)*, Старая и новая Турция, Москва, 1908. стр. 100-102. *Лорд Кинросс*, նշված աշխատությունը, էջ 550-551. *А. Д. Желтяков, Ю. А. Петросян*, История просвещения в Турции (конец XVIII- начало XX века), Москва, 1965, стр. 50-54.

[3] *И. И. Голобородько (И. Южанин)*, նշված աշխատությունը, էջ 102-103.

[4] *N. Berkes*, The Development of Secularism in Turkey, Montreal, 1964, s. 204-205. Տես նաև *Ю. А. Петросян*, նշված աշխատությունը, էջ 64-65.

սահմանից Թուրքիա էին առաքում իրենց հրատարակությունները, թերթերը, թռուցիկները, սուլթաններին և մեծ վեզիրներին առաքած նամակները, ամեն միջոցի դիմում հետամնաց, ֆեոդալական այդ տերությանը եվրոպական կերպարանք տալ, փրկել այն մասնատումից, առավել ևս գաղութացումից:

Մենք այսքան էջեր հատկացրեցինք «Նոր օսմաններ» ընկերության անդամների կատարած գործերին, որպեսզի ընթերցողը հասկանա, որ թուրքի ***ֆեսը գլխարկով*** փոխելով՝ նրա մտածելակերպը փոխել չես կարող: Թուրքը բոլոր պարագաներում մնում է իբրև թուրք, և եթե ***նա պաշտում է իսլամը՝ մահմեդական է, ապա հպատակ մյուս ազգերին դրականորեն չի նայել, չի նայում և չի էլ նայելու:*** Ինտերնացիոնալիզմը այդ երկրի և այդ պետության համար խորթ է:

«Նոր օսմանների» ծրագրի ***ամենախոցելի տեղը ազգային հարցն էր,*** որն անշուշտ վերաբերում է ինչպես թուրքահպատակ ոչ թուրք մյուս ազգերին, այնպես էլ առավել ևս հայ ժողովրդին: Այդ հարցի լուծման նկատմամբ ***թուրքական առաջին սահմանադրականները որդեգրել էին բացահայտ մեծապետական, շովինիստական, ռեակցիոն վարքագիծ*** [1]: «Ինչպես երևում է,- գրում է Յու. Ա. Պետրոսյանը,- «Նոր օսմանների» քաղաքականությունը ազգային հարցում, ինչպիսի ֆրազներով և լոզունգներով էլ դրանք քողարկվեին, գործնականորեն հանգում էին թուրքական գերիշխանության պահպանմանը հայերի, արաբների, քրդերի, հույների, սլավոնների և օսմանյան կայսրությունում ապրող մյուս բոլոր ժողովուրդների վրա»[2]:

«Նոր օսմանների» ծրագրերում ամրագրված էին օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման սկզբունքները: Հետևաբար նրանք դեմ էին ճնշված որևէ ժողովրդի բարձրացրած ազգային-ազատագրական շարժմանը և եվրոպական այն տերության քաղաքականությանը, որը զորավիգ կկանգներ այդ պայքարին: Նամըկ Քեմալը և Ալի Սուավին վճռականորեն դեմ արտահայտվեցին սերբական ազատագրական շարժմանը, հատկապես «թուրքական բերդերի հանձնմանը սերբերին» և օսմանյան կայազորի դուրս հանելուն այդ երկրից[3]:

«Նոր օսմանները», սակայն, հենց այնպես չէ, որ ժխտում էին ազգային շարժումները Թուրքիայում և վերջիններիս անկախ զարգացման ճանապարհ բռնելը: Նրանք տեսականորեն հիմնավորում էին այդ դոկտրինան ***պանօսմանիզմի*** (օսմանլիկ) այն տեսությամբ, որը որդեգրել և զարգացնում էին XIX դարի 60-70-ական թվականների թուրք լիբերալ-սահմանադրականների ղեկավարները: Ըստ «Նոր օսմանների» օսմանյան կայսրության բազմազգ ժողովուրդները բոլորը միասնական են և հավասար տերության մեջ այն չափով, ինչքանով օսմանյան կայսրության «ընդհանուր հայրենիքի» քաղաքացիները: ***Հետևաբար ինքնուրույնություն ստանալը, Թուրքիայի կազմից դուրս գալը նրանք վճռականորեն մերժում էին*** [4]:

Կայսրությունը փլուզումից փրկելու, նրա ամբողջականությունը պահպանելու եզակի միջոցը «Նոր օսմանները» համարում էին այդ հսկա տերության կազմում ապրող ոչ թուրք ժողովուրդներին ***թուրքացնելու*** մեջ՝ նրանց բոլորին անվանելով ***օսմանցիներ*** և ուրիշ ոչինչ: Պետական այդ պաշտոնյաները ջանում էին սուլթանական բռնապետության կապանքներով կապկպված այլալեզու և այլազգի ժողովուրդներին հաշտեցնել իրենց առկա վիճակի հետ, թեկուզև բռնությամբ, կասեցնել

---

[1] ***Ю. А. Петросян,*** նշված աշխատությունը, էջ 125:

[2] Նույն տեղում, էջ 129:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 126: Տե՛ս նաև ***M. C. Kuntay,*** նշված աշխատությունը, հ. 1, էջ 470:

[4] ***Ю. А. Петросян,*** նշված աշխատությունը, էջ 126: Տե՛ս նաև ***А. Д. Новичев,*** Очерки экономики Турции до мировой войны, Москва-Ленинград, 1937, стр. 25-27:

արևմտահայերի, արաբների, հույների, բալկանյան սլավոն և ոչ սլավոն ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները[1]:

Դեռևս XIX դարի 60-ականները չավարտված, այսինքն՝ «Թանզիմաթի» վերջին տասնամյակին, Աբդուլ-Մեջիդ, ապա Աբդուլ-Ազիզ սուլթանների պալատում մեծ համարում ունեցող ***Ալի և Ֆուատ փաշաները*** ձևակերպեցին օսմանիզմի կամ ինչպես իրենք էին նախընտրում անվանել ***«ծուլման»*** դոկտրինայի հիմնական սկզբունքները[2]: Ըստ հիշյալ տեսության՝ կայսրության այլազգի ժողովուրդների ***համաձուլումը,*** թուրք դարձնելը միայն կարող է պահպանել տերության ամբողջականությունը: Եվ այդ նպատակն իրողության վերածելու ճանապարհը վերոհիշյալ ժողովուրդներին դաստիարակելն է օսմանյան կառավարության հավատարմության ոգով[3]: Հետևաբար պետք է լիներ այն, որ ոչ թուրք, հպատակ ժողովուրդները, թեկուզև Մուհամեդի երկրպագուները, պարտավոր էին մոռանալ իրենց ***լեզուն*** և ***ազգությունը*** և դառնային սուլթան-խալիֆի «հավատարիմ» հպատակներ, այսինքն՝ ***«օսմաններ»:*** Ընդ որում, վերոհիշյալ զույգ փաշաները «օսմանյան ապագա համայնքի» մեջ կանխորոշել էին թուրքերի և իսլամ կրոնապաշտների կառավարող դերի պահպանումը[4]: «Նոր օսմանների» գաղափարաբաններից Ալի Սուավին շեշտում էր, որ ***«օսմանյան կայսրությունում այժմ ապրող բոլոր ժողովուրդները պետք է վերակազմավորվեն մեկ ազգի - այն է օսմանների*** (ընդգծումը մերն է- Հ. Ղ.)»[5]:

«Նոր օսմանները» անխնա քննադատության նշանախեց էին դարձնում Թուրքիայում գործող դպրոցական համակարգը, ընդգծում եղածի անբավարարությունը և անմխիթար վիճակը: Նրանք մատնանշում էին, որ քրիստոնյա ազգերը, հատկապես հայերն ու հույները ավելի շատ դպրոցներ ունեն, ավելի բարվոք է նրանց դպրոցների վիճակը, քան թուրքերինն ու թուրքականը: Շովինիզմի ախտով վարակված այդ գաղափարախոսները կառավարությանը հիշեցնում էին, թե մայրաքաղաքում չկա մի քրիստոնյա երեխա, որը թեկուզև տասը տարին լրացած լինի և գրել կարդալ չիմանա: Մինչդեռ նույն քաղաքի թուրք երեխաների բացարձակ մեծամասնությունը, նույնիսկ հասուն տարիքում անգրագետ է[6]:

Նրանք առաջարկում էին կատարելագործել լուսավորության համակարգը, օսմանյան տերության և՛ կենտրոնական, և՛ գավառական քաղաքներում, նույնիսկ հեռավոր գյուղերում: Նպատակը չէին թաքցնում երիտասարդ այդ մտավորականները, այն է ***համաձուլման ամենաարդյունավետ միջոցը մահմեդական, այն էլ թուրք և քրիստոնյա երեխաների*** համատեղ ուսուցումն էր, ***մեկ լեզվով - թուրքերենով, մեկ ծրագրով, կրոնական նույն սկզբունքներով - իսլամի դոգմաներով*** [7]:

Նման բարբարոսական ծրագիր գոյություն չի ունեցել աշխարհի և ոչ մի երկրում և ոչ մի կայսրության մեջ ապրող ժողովուրդների համար: Եվ դա առաջարկում էին ծրագրում եվրոպական կրթություն ստացած, սահմանադրության ջատագով թուրք երիտասարդները: Բ. Դուռն ու սուլթանները, նույնիսկ Համիդ II արյունարբու տիրակալը չհամարձակվեց նման քայլի դիմել: ***Նման ծրագրեր իրականացրեց միայն***

---

[1] ***Ե. Ղ. Սարգսյան,*** Նոր օսմաններ, հոդված տպագրված ՀՍՀ-ում, հ. 8, Երևան, 1982, էջ 373:

[2] ***Ռ. Ա. Սաֆրաստյան,*** Օսմանյան քաղաքականության պատմությունից, «Արևելագիտության հարցեր», պրակ 1-2, Երևան, 1983, էջ 193:

[3] Նույն տեղում, էջ 193: Տես նաև ***Ali Pacha,*** Testament politique - La Revue de Paris, 1910, t. 3, n. 9, p. 106:

[4] Նույն տեղում, էջ 193-194:

[5] ***R. H. Davison,*** նշված աշխատությունը, էջ 221-222:

[6] ***АВПРИ,*** фонд "Канцелярия", 1867, дело 32, стр. 5-7: Տես նաև ***Ռ. Ա. Սաֆրաստյան,*** նշված աշխատությունը, էջ 193:

[7] ***АВПРИ,*** фонд "Канцелярия", 1867, дело 31, лл. 63-64.

Ադոլֆ Հիտլերը: Հետևաբար թուրք նոր օսմանները ոչ միայն դառնում էին շովինիզմի քարոզիչներ, այլև գերմանական ֆաշիզմի գաղափարական սնողները[1]:

Ինչպես հայտնի է, օսմանյան կայսրությունում ապրող քրիստոնյա ժողովուրդներից երիտասարդությանը զինվորական ծառայության չէին զորակոչում: Նրանք իբրև ***ռայա, զիմմի, ստրուկ*** պետք է դրա փոխարեն հարկ վճարեին, որը կոչվում էր ***բեդելիե-ասկերիե*** (զինվորական հարկ): «Նոր օսմանները», նրանց հորդորներով և քարոզներով մեծ Սադրազամ Ֆուատ փաշան հատուկ զեկուցագրերով դիմում էր Աբդուլ-Ազիզ սուլթանին համոզելով «այլահավատներից» զինվոր վերցնել: Հայոց Ազգային Ժողովի երեսփոխանները, Միդհատ փաշայի մտերիմ դասընկեր (Փարիզում) Գր. Օտյանի բացատրությամբ հայերից պահանջում էին ենթարկվել այդ հրամանին և զինվոր տալ թուրքական բանակին: Նա հայտարարում էր, որ զինվորական հարկը հայ ժողովրդի ***«տկարության հարկն է»,*** հետևաբար պետք է գնալ բանակ և ծառայել կայսրությանը[2]:

Եթե իսկապես, օբյեկտիվորեն նայելու լինենք, և՛ թուրք պետական գործիչները, և՛ «Նոր օսմանները» հայանպաստ քայլեր էին անում: Բայց որն էր խնդրի բուն էությունը: Իբրահիմ Շինասին, Նամըկ Քեմալը Նազըմ փաշային բացատրում էին, ***թե այլահավատ երիտասարդները իսլամապաշտների հետ խառը, բանակում ծառայելով, կհեշտացվի նրանց մահմեդականացումը, համաձուլումը***: Քիչ կարևոր չէր, որ Թուրքիայի դարավոր թշնամին Ռուսաստանն էր: Նա էր միշտ պատերազմներ վարում Կովկասյան ռազմաճակատում, որտեղից Արևմտյան Հայաստան էին գալիս արևելահայ զինվորականներ: Հետևաբար զորակոչված արևմտահայ զինվորները կռվի կգնային իրենց եղբայրների դեմ: Բ. Դուռը «Նոր օսմանների» սադրանքով, եղբայրասպան պատերազմի էր տանում հայ ժողովրդի երկու հատվածներին: Կ. Պոլսի ռուսական դեսպան գեներալ Ն. Պ. Իգնատևը չէր զարմանում նման քայլերը տեսնելիս և Պետերբուրգին զեկուցելով այդ մասին, ավելացնում էր, թե «հիվանդ մարդը» առողջանալու ջղաձգումներ է անում, բայց հազիվ թե հաջողության հասնի[3]:

Թուրքիայի, թուրք մտավորականության մասին, ինչպես անցյալում, այնպես էլ այսօր, թուրքահպատակ շատ ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի որոշ ներկայացուցիչների մոտ թյուր կարծիք է ստեղծվել, թե նրանք թերուս են, ստեղծագործելու համար անընդունակ, հետամնաց, դիվանագիտության մեջ ապիկար: Այդպես մտածողները, դժբախտաբար, սխալվում են: XIX դարի երկրորդ կեսի, առավել ևս այսօրվա թուրքը այլևս օսմանների ***ժամանակի «երկգլխանի», տգեղ օղուզը չէ:***

Թուրք բարբարոս ռասան, որն իր կյանքն անցկացնում էր ծիու թամբի վրա, քնում վրանի տակ, ծույլ էր և հպատակների աշխատանքով, վայելքներով էր զբաղված, ժամանակի ընթացքում ***վերափոխվեց*** և արտաքնապես, և մտավոր զարգացումով: Օղուզներն սկսեցին կանայք վերցնել իրենց գերեվարած քրիստոնյա աղջիկներից իհարկե մահմեդականացնելով: Նրանք իրենց ռասայի արտաքինն աստիճանաբար փոխեցին: Մազակալած, վայրենաբարո, մարդասպան ու արյունախում թուրքին փոխարինելու եկավ եվրոպական, ավելի կոնկրետ հունական, սլավոնական և հայկական տեսքի սերունդ, որն ավելի դաժան էր, սակայն խորամանկ ու խարդախ:

Թուրք պետական այրերի մի մասը, հատկապես «Նոր օսմանները» սովորել էին

---

[1] ***Ջ. Կիրակոսյան,*** Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915-ից մինչև մեր օրերը), Գիրք երկրորդ, Երևան, 1983, էջ 345-346:

[2] «Ատենագրությունք Ազգային Ժողովո», հատոր Ա, Կ. Պոլիս, 1868, էջ 311-313:

[3] ***АВПРИ,*** фонд «Канцелярия», 1867, дело 31, лл. 159-161, 495-496. Տես նաև ***Գրիգոր Օտյան,*** Սահմանադրական խոսքեր և ճառեր, Կ. Պոլիս, 1910, էջ 173:

Ֆրանսիայի օազիսում, շատերը հաղորդակցվել էին եվրոպական առաջավոր գաղափարներին, սակայն վերադառնալով Թուրքիա, այդ գիտելիքներն ի չարն էին գործադրում, ավելի դաժան էին վարվում քրիստոնյա հպատակ ժողովուրդների հետ, քան իրենց նախորդները: Հետևաբար այսօրվա հայ և եվրոպացի պատմաբանը չպետք է արհամարհի «թուրք մտավորականներին», «թուրք պատմաբաններին», որոնք անցել են և անցնում են կեղծարարության խարդախ ճանապարհով և այդ բնագավառում գերազանցողները չունեն:

Եվ այսպես, դեռևս «Թանզիմաթի» ստորագրման թանաքը չչորացած, «Նոր օսմանները» և ոչ միայն սրանք, այլ թուրք ավագանին ընդհանրապես, արդեն ականատես էր ֆեոդալական կարկատված կայսրության փլուզման առկա վտանգին, ուստի մարդկային թե անմարդկային, ազգային թե հակազգային միջոցներ էր որոնում տերության ամբողջականության պաշտպանության:

Դարի երկրորդ կեսի նախաշեմից սկսած՝ Ալի և Ֆուատ փաշաները «Նոր օսմանների» հուշելով, կտրուկ միջոցներ են ձեռք առնում Սերբիայի, Չեռնոգորիայի, Բուլղարիայի, հատկապես ***Հայաստանի*** կիսանկախ համայնքների վերջնական հպատակեցմանը, դեռևս պաշտպանած բերդերի ու ամրոցների ոչնչացմանը: Սուլթանական կառավարությունը կտրուկ միջոցներ է ձեռք առնում ***Սասունի*** և ***Զեյթունի*** դեմ, որոնք չորս հարյուրամյակ շարունակ, արյան գնով պաշտպանել էին իրենց ***կիսանկախ վիճակը***[1]:

Ճիշտ է ընդհանրացնում հայերի ցեղասպանության պատմության հմուտ մասնագետ, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը, որ եթե նախորդ տասնամյակներին այս կամ այն կերպ «հանդուրժվում» էր կայսրության կազմում դեռևս եղած կիսանկախ իշխանությունների գոյության փաստը, ապա հաջորդ շրջանում, հատկապես XIX դարի 60-ականներից սկսած, վիճակը կտրականապես փոխվում էր, և ճարճատվելով՝ քանդվող սուլթանական կառավարությունը անցնում էր հարձակման[2]:

Այնուհետև Բարձրագույն Դուռը բոլոր տեսակի միջոցներ ձեռք է առնում խաթարելու արևմտահայության հավաքական գոյությունը, ձգտում հայերին ցրել կայսրությունով մեկ, որպեսզի կարողանա իրողության վերածել համաձուլման իր քաղաքականությունը: Այդ նպատակով Կովկասից Թուրքիա տեղափոխվեցին և Արևմտյան Հայաստանում բնակեցվեցին վայրենաբարո, ռազմատենչ, հայատյաց չերքեզներ, արհեստականորեն սրեցին սրանց և հայ բնակչության փոխհարաբերությունները: Թուրքերը բյուզանդացիներից լավ էին սովորել «բաժանի՛ր, որ տիրես» սկզբունքը: Նրանք իրարից բաժանում էին հայերին և քրդերին, հայերին և թուրքերին, հայերին և չերքեզներին և փաստորեն 60-ականներից նախապատրաստվում էին 90-ականների կոտորածներին[3]: «Նոր օսմանները» կարծես թե հասնում էին իրենց նպատակին:

«Նոր օսմանները», հատկապես նրանց դրոշակակիրը դարձած, օսմանյան սահմանադրության հայր Միդհատ փաշայի հետ թուրքական կառավարությանը հուշեցին պաշտոնական գրություններից, ինչպես նաև դասագրքերից, քարտեզներից, մամուլի էջերից արտաքսել հպատակ երկրների պատմաաշխարհագրական անունները: Նրանք արգելեցին ***Հայաստան, Բուլղարիա, Չեռնոգորիա, Սերբիա, Բոսնիա*** երկրանունների օգտագործումը: Բուլղարիան փոխարինվեց Դանուբի իշ-

---

[1] ***Մ. Գ. Ներսիսյան,*** Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Երևան, 1955, էջ 74-75: Տե՛ս նաև ***Мак-Коль,*** Султан и державы. Перевод с английского, СПб, 1897, стр. 297.

[2] Նույն տեղում, էջ 75:

[3] Նույն տեղում:

խանությամբ, Չեռնոգորիան՝ Մոնտենեգրոյով, Հայաստանը՝ Անատոլիայով կամ Արևելյան Անատոլիայով:

Թուրք պետական ամենաբարձրաստիճան գործիչները, եվրոպական դեսպանների ներկայությամբ, մի կողմից՝ քրիստոնյա հպատակ ժողովուրդներին խոստանում էին բարելավել նրանց կյանքը, մյուս կողմից՝ պատմության էջերից ջնջում էին վերջիններիս ***սուրբսրբոցները՝ պատմական հայրենիքի անունները,*** որոնք հազարամյակների խորքից էին գալիս: Դրանց ջնջողները չէին հասկանում, որ իրենց հասմար դա այդքան էլ դյուրին գործ չէ[1]:

Օսմանյան նացիոնալիստական պատմագրության մեջ շռայլ գովեստների արժանացած, մոլի շովինիստ Միդհատ փաշան, տերության պաշտոնյաներին էր փոխանցում «Նոր օսմանների» առաջարկությունները և ջանում ջնջել տալ այն, ինչ ազգային էր կամ հպատակ ժողովուրդների ինքնուրույնությունն էր հիշեցնում[2]: Նրանց սադրանքներով, դեռևս 60-ական թվականների սկզբներին, Բ. Դուռը հետևողականորեն, առանց փոքր-ինչ տատանման, ռազմական արդյունաբերությունը «մաքրում էր հայերից»: «Գրեթե 80 տարիե իվեր օսմանյան պետության վառոդաշինությունը հայոց հանձնված է,- գրում է Մոսկվայում հրատարակվող պարբերականը,- ընդ վերատեսչությամբ Տատյան... գերդաստանին: Այժմ Բ. Դուռը արժան համարեր է վառոդարանի վերատեսչությունը նույն գերդաստանեն առնուլ և ***հայ աշխատավորաց քով թուրք գինվորներ դնել, և նույն աշխատավորներն ստիպել, որ անոնց հետ գործեն և վառոդաշինության արհեստն ուսուցանեն անոնց, որպեսզի հայերն հետո բոլորովին արտաքսեն վառոդարանեն*** (ընդգծումները մերն են- *Հ. Ղ.)»*[3]:

Լիբերալ-սահմանադրականի համարում ստացած Միդհատ փաշան Բարձրագույն Դռան հուշեց, որ կայսրությունը վարչական նոր բաժանման ենթարկելով, վարչամիավորները խոշորացնելով, վարչակարգերը փոխելով, երկրահատվածները վերանվանելով, նախ՝ պետությունը ֆինանսական միջոցներ կխնայի, ապա կիրականացնի ***«ձուլման»*** քաղաքականությունը, կհեշտացնի «օսմանացման» դոկտրինայի իրողության վերածելը[4]: Իբրև փորձ, 1864 թ. Բուլղարիայի տարածքի վրա ձևավորվեց ***Դանուբի*** ընդարձակ վիլայեթը, որին նահանգապետ նշանակվեց Խնդիրն առաջադրող Միդհատ փաշան[5]:

1864 թ. նոյեմբերի 4-ին, Աբդուլ-Ազիզ սուլթանի հրամանով ձևավորված վարչական այդ նոր միավորը ընդգրկում էր պատմական Բուլղարիայի տարածքը, սակայն առանց ***Բուլղարիա*** անվանման: Ուրեմն ապագա նոր օսմանները երկիրն ու ժողովուրդը զրկեցին իրենց անցյալից: Համաձայն նոր օրենքի՝ Դանուբի վիլայեթի բնա-

---

[1] Պատմական անունների գործածության արգելումը ավելի քան ընդգծված է 1869 թ., մահվանից քիչ առաջ կազմած, ***Ֆուատ փաշայի*** քրիստոնեատյաց կտակում: Փաստաթուղթը գործածվել է, սակայն երկար ժամանակ գաղտնի է պահվել: Այն առաջին անգամ հրապարակվել է 1896 թ. նոյեմբերին «Revue de Paris» հանդեսում, ապա ռուսերեն է թարգմանվել և տպագրվել "Русская мысль" հանդեսի 1896 թ. 11-րդ համարում: Հայկական թերթերը խիստ զայրացած, զանգվածորեն արտատպեցին զազրելի այդ թուղթը: Ամբողջական տեքստը տե՛ս «Արոր», 1910, N 6-7:

[2] ***Մ. Գ. Ներսիսյան,*** նշված աշխատությունը, էջ 78-79:

[3] «Համբավաբեր Ռուսիոյ», Մոսկվա, 1863, N 48, էջ 3:

[4] ***Ռ. Ա. Սաֆրաստյան,*** նշված հոդվածը, էջ 193-194: Տե՛ս նաև ***Ե. Կ. Սարկիսյան,*** Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., Ереван, 1972, стр. 21.

[5] Տե՛ս ***А. Убичини*** и ***П. Де-Куртейль,*** Современное состояние османской империи. Перевод с французского, СПб, 1877, стр. 79:

կիչները կոչվում էին ոչ թե բուլղարներ, հայեր, հույներ, թուրքեր, այլ ուղղակի ***«օսմանյան հպատակներ»***[1]: Սրանով կարծեք թե լուծում էին «ազգային հարցը», լուծում էին թուրքավարի, քանզի այն առաջացրեց բողոքի մի մեծ ալիք, որը տարավ դեպի 1875 թ. բուլղարական ապստամբությունը[2]: Դանուբի վիլայեթի մեջլիսների ընտրության մասին հոդվածները ձևակերպված էին այնպես, որ ընտրությունից հետո այնտեղ մեծամասնություն կազմեին թուրքերը, երբ իրականում վերջիններս ընդհանուր բնակչության կեսից էլ պակաս էին: Օրենքի գլխավոր խնդիրներից էր բուլղարական համայնքների իրավունքների սահմանափակում և նրանց ծուլում օսմանյան համակարգի հետ[3]:

Դանուբի վիլայեթի կազմավորումը հաջողությամբ պսակվեց: Նահանգի վալին Միդհատ փաշան, իր տարերքի մեջ էր: Նա հետագայում (1878 թ.) բացարձակապես հայտարարեց, որ ինքն իր նպատակին ուզում էր հասնել, այն է ***«ձուլել բոլոր ժողովուրդներին և նրանց համար ստեղծել ընդհանուր հայրենիք»***[4]: Տերությունը մեկն էր՝ ***օսմանյան կայսրություն,*** հետևաբար ժողովուրդն էլ մեկը պետք է լիներ՝ ***օսմանցիներ:***

Միդհատ փաշան փորձեց կազմակերպել թուրք և բուլղար երեխաների «խառը» ուսուցում, թուրք և բուլղար երիտասարդների միասնական զինվորական ծառայություն բանակում: Վիլայեթի «օսմանացման» համար խարդախ պետական գործչին պարգևատրեցին «Օսմանիե» շքանշանով, որն առավել զայրույթի մեծ ալիք առաջ բերեց և՛ Բուլղարիայում, և՛ Ռուսաստանում: Բարձրագույն Դուռը, երկնչելով Բուլղարիայում բռնկվող նոր ապստամբության պայթյունից, Միդհատ փաշային համարյա փախցնելով, ետ կանչեց մայրաքաղաք և բարձր պաշտոնի նշանակեց: Ալի և Ֆուատ փաշաները սակայն չհրաժարվեցին հպատակներին «օսմանցիների» վերածելու մտքից:

Դանուբի վիլայեթի օրինակով օսմանյան կայսրությունը 1867 թ. հրապարակեց «Վիլայեթների վարչության մասին օրենքը», որով նոր և լուրջ փոփոխության ենթարկվեցին կայսրության գրեթե բոլոր նահանգները, հատկապես Արևմտյան Հայաստանը, Հայկական Կիլիկիան ու հայաբնակ նահանգները[5]:

Ըստ այդ օրենքի՝ ողջ Արևմտյան Հայաստանը բաժանվեց ընդամենը երկու վիլայեթի: Դրանք էին ***էրզրումը*** և ***Դիարբեքիրը:*** Էրզրումի մեջ համահավաքեցին ***էրզրումի, Կարսի, Բայազետի, Մուշի, Վանի, Երզինջանի*** կազաները, որոնցից յուրաքանչյուրը մինչ այդ առանձին փաշայություն էր: Դիարբեքիրի վիլայեթի մեջ մտցվեցին ***Դիարբեքիրը, Մարդինը, Սղերդը, Մալաթիան***[6]: Ամբողջ Կիլիկիայից կազմավորեցին մեկ ***Ադանայի*** վիլայեթը[7]:

Միդհատ և Ֆուատ փաշաները ***«օսմանացնում էին»*** Արևմտյան Հայաստանը: Առաջին անգամ հայկական դպրոցներում սովորելու իրավունք էին վերապահում քուրդ, մասամբ նաև թուրք երեխաներին: Հայոց դպրոցների ծրագրերը դրվում էին վիլայեթի կենտրոնում տեղավորված ***«ուսումնական խորհրդի»*** հսկողու-

---

[1] ***АВПРИ, Главный архив*** 11-18, дело 1, лл. 75-77.

[2] "Россия и освобождение Болгарии", под редакцией ***И. А. Федосова,*** Москва, 1982, стр. 111-141.

[3] ***Ռ. Ս. Սաֆրաստյան,*** նշված հոդվածը, էջ 194: Տե՛ս նաև ***А. А. Попова,*** Национальная освободительная борьба Болгарского народа в 60-х годах XIX в. "Вопросы истории", 1953, N 10, стр. 52-54.

[4] ***Midhat pacha,*** La Turquie, son passé, son avenir, L, 1878, p. 14.

[5] ***АВПРИ,*** Политархив, дело 9468, "Об'яснительная записка", 1867, лл. 1-37.

[6] Մանրամասն տե՛ս ***АВПРИ,*** Политархив, дело 9468, лл. 1-37. Տե՛ս նաև ՀՍՍՀ ՊՊԿԱ, Քաղվածքների ֆոնդ, գործ 39, թերթ 1-3:

[7] ***ЦГВИАРИ,*** фонд 1300, опись 18, дело 83, лл. 3-5. Տե՛ս նաև ***Я. Д. Малама,*** Описание эрзерумского вилайета, СПб, 1874, стр. 3-6.

թյան տակ: Դասագրքերի հրատարակության արտոնությունը վերապահում էին այն հանձնաժողովին, որի կազմում գերակշիռ մեծամասնություն էին կազմում թուրք պաշտոնյաները: Հետևաբար վիլայեթների խոշորացմամբ, վարչաքաղաքական հիմնարկների փոփոխությամբ, Բ. Դուռը «Նոր օսմանների» սադրանքով ձգտում էր թուրքացնել, օսմանցի դարձնել հայկական նահանգները, հատկապես այն գավառները, որտեղ բնակչությունը խառն էր, այսինքն կային և՛ քրդեր, և՛ թուրքեր, և՛ ասորիներ[1]:

Բուլղարիայի օրինակով, Բ. Դուռը հաշվառման էր ենթարկում Արևմտյան Հայաստանում դեռևս թուրքական ավերածություններից փրկված հուշարձանները, հատկապես հնամենի վանքերն ու խոշոր եկեղեցիները, որպեսզի «օսմանցիները» հնարավորության դեպքում դրանց կատարին դրված խաչերը փոխարինեին մահիկով կամ կիսալուսնով: Ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը գիտական շրջանառության մեջ է դնում «հետաքրքիր», բայց մարդատյաց, հայատյաց մի քանի փաստեր:

Նրա բերած հաղորդագրության համաձայն՝ 1869 թ. Կ. Պոլսի ռուսական դեսպան Ն. Պ. Իգնատևը, Պետերբուրգի կառավարությանն է հաղորդել, թե սուլթանական Բարձրագույն Դուռը, Արևմտյան Հայաստանում գտնվող թուրք բարձրաստիճան իշխանավորներին գաղտնի հրահանգներ է ուղարկել. ***«Անխնա ոչնչացնել հայկական պատմական բոլոր հուշարձանները, որպեսզի նրանք չհիշեցնեն Հայաստանի պատմական անցյալն ու չզարթեցնեն ազգային անկախության գաղափարը հայ ժողովրդի մեջ*** (ընդգծումները մերն են- *Հ. Ղ.)»*[2]:

Արևմտյան Հայաստանում Թուրքիայի կիրառած ազգային-գաղութային քաղաքականության վերաբերյալ նման փաստերն առատ են: Բավարարվենք բերվածով, միաժամանակ փորձենք պարզել այդ քաղաքականության խստացման պատճառները, «Նոր օսմանների» ծրագրերի իրողության վերածելու անհաջողության պատճառներն ու հետևանքները: Խոսենք քիչ ավելի հանգամանալից:

Եվ այսպես՝ XIX դարամեջին իրար դեմ հանդիման կանգնած էին երկու զորեղ ուժեր: Մի կողմում կայսերահպատակ քրիստոնյա ազգերն էին, որոնք հուսահատության ճիչեր էին արձակում, ոտքի կանգնում, ջանալով սուլթանական լծի թոթափմանը, ազգային պետականությունների վերականգնմանը: Արյունոտ էր, փշոտ ու զոհառատ էր այդ ճանապարհը: Ինչ արած, ուրիշ ելք չկար:

Բարիկադների մյուս կողմում կանգնած էին թուրքական բռնապետությունը, հատկապես թուրք թույլ, բայց խարդախ, նորելուկ բուրժուազիան: Սրանք, արդեն ասվեց, ձգտում էին բոլոր միջոցները գործի դնել, որպեսզի կասեցնեին թուրքական բռնապետության քայքայման պրոցեսը: ***«Նոր օսմանների» ընկերության*** անդամները սակայն անհաջողության մատնվեցին երկրի թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության բնագավառում: Նրանք Աբդուլ-Ազիզ և Մուրադ V սուլթաններին «զոհելով», ի վերջո, 1876 թ. օգոստոսի 31-ին սուլթանական գահին բազմեցրին, մարդկության պատմության մեջ իշխած ամենաբարբարոս մի մարդու՝ Աբդուլ Համիդ II-ին, որն իր գործունեությամբ ***արյունարբու, արյունախում*** մականուններն ստացավ: «Նոր օսմանների» թելադրած մեթոդներով, Աբդուլ Համիդը արգելեց 1876 թ. իր իսկ հաստատած սահմանադրությունը, նախքան հայկական ջարդերին անցնելը ոչնչացրեց երիտասարդ այդ մտավորականներին, հատկապես ***Միդհատ փաշային:***

---

[1] Վրաստանի Հանրապետության *ՊՊԿԱ*, ֆոնդ 11, գործ 3683, վավերագիր 54, թերթ 2-3:

[2] "Биржевые ведомости", Петербург, 1869, N 109. Տե՛ս նաև *Մ.Գ. Ներսիսյան*, նշված աշխատությունը, էջ 79:

Թուրքիայի վերջին սուլթանի գահակալության տասնամյակները պատմության մեջ մտան «զուլումի տարիներ» բնորոշմամբ: Համիդը, հաջորդաբար, այսինքն՝ հնի հենքի վրա ձևակերպել տվեց մի նոր, ավելի դաժան, ավելի մարդատյաց գաղափարախոսություն, այն է ***պանիսլամիզմ,*** ապա նաև ***պանթուրքիզմ:*** Սկզբում արյունախում սուլթանը, ապա նաև նրան գահընկեց անող և իշխանության եկած երիտասարդ թուրքերը սնվում էին «Նոր օսմանների» գաղափարախոսությունից և հերթականությամբ կազմակերպում հայկական ջարդերը, Հայոց Մեծ եղեռնը, Հայոց ցեղասպանությունը: Ուստի հետաքրքրությունից զուրկ չէ ծանոթանալու պանիսլամիստների, ապա պանթուրքիստների դավանած գաղափարներին:

Պանիսլամիզմը, համեմատած ***օսմանիզմին,*** ավելի խոր արմատներ գցած, ավելի դաժան ու հեռագնա նպատակներ հետապնդող գաղափարական-քաղաքական մի ուղղություն էր Թուրքիայում, որն իր վտանգավորությամբ, համապատասխան վերաբերմունքի չի արժանացել[1]: Հոսանքը համեմատաբար ավելի հեշտ հաղթանակի հասավ XIX դարի 90-ական թվականների սկզբին, այսինքն «զուլումի» տասնամյակում, քանզի նրա սատարողների համար ստեղծվեցին «բարենպաստ պայմաններ»:

Սան Ստեֆանոյի պայմանագրով (1878-19. II), Կիպրոսի ու Լոնդոնի համաձայնագրերով (1878) և հատկապես Բեռլինի կոնգրեսի որոշումներով, «հիվանդ մարդու» մարմինը ծվատվում էր, անկախության ու ազատության շեփոր էր հնչում Բալկանյան թերակղզում, Միջերկրականի ափերին փռված թուրքահպատակ երկրամասերում: Օսմանյան կայսրությունը կորցնում էր եվրոպական հատվածը և վերածվում էր սոսկ ***ասիական տերության*** (ի միջի այլոց, Ռուսաստանն էլ ստանում էր Կարսի մարզը):

Թուրքիայի խայտառակ պարտությունը ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմում, ոչ թուրք ժողովուրդների ազգային-ազատագրական ոգորումները, նրանց անկախանալու բացահայտ ձգտումները, արյունախում սուլթանին հանգեցրին այն ***եզրակացության,*** որ ***պանօսմանիզմն արդեն կրախ էր ապրել, իրեն չէր արդարացնում, ուստի հարկավոր էր մտածել գաղափարական նոր, ավելի դաժան ուղղության մասին:***

Ինչպես Ստամբուլը, առավել ևս ***Եըլդըզ*** Քյոշքը դառնում էին ազդեցության համար պայքարի մարտադաշտ, որտեղ շտապում էին եվրոպացիներից շատերը ամեն մեկը Համիդի վրա ազդեցություն գործելու, ամեն մեկը՝ հիվանդ մարդուց իր բաժինը պոկելու ակնկալիքներով:

Թուրքիայում ուժեղանում էին ***սիոնիստները,*** որոնք Համիդին առաջարկում էին հրեական կապիտալը դնել նրա «ոտքերի տակ», միայն թե համաձայնվեր վերականգնելու ***«եվրեների պետությունը»:*** Նրա ականջի թանձրաթաղանթի վրա այդ ուղղությամբ լուրջ «աշխատանք» էր ծավալում իր ֆրանսերենի ուսուցիչ, ազգությամբ հրեա, պրոֆեսոր ***Վամբերին:*** Բ. Դռան խորհրդականների հետ խորհելով, սուլթանը երկնչում էր հրեաների զորեղ ազդեցությունից՝ մտածելով, որ եվրոպական

[1] Պանիսլամիզմի մասին շատ է գրվել: Նշենք դրանցից մի քանի աշխատություններ միայն: ***Ե. Սարգսյան,*** Պանիսլամիզմ, ՀՍՀ, հ. 9, Երևան, 1983, էջ 121: ***Александр Сваранц,*** Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Москва, 2002, стр. 26-28. ***Лорд Кинросс,*** նշված աշխատությունը, էջ 600-601: ***Дж. С. Киракосян,*** Младотурки перед судом истории, Ереван, 1986, стр. 21. ***Եղիկ Ճերեճեան,*** Փանթուրքիզմը, Պեյրութ, 1998, էջ 12-20: ***Հրանդ Գանգրունի,*** Ցեղասպան իթթիհատը (1908-1923), Պեյրութ, 1994, էջ 13-20: ***Զարեվանդ*** (Զավեն Նալբանդյան), Միացյալ անկախ Թուրանիա, Երևան, 1993, էջ 5-35: ***Շահան Նաթալի,*** Թուրքիզմը Անգորայեն Պաքու և թրքական օրենքասիոն, թուրքերը և մենք (Քննադատական հայ քաղաքական մտքի), Երևան, 1992, էջ 45-46:

պետություն ստեղծելով կկորցնի արաբական, մահմեդապաշտ աշխարհը, որի հոգևոր *ղեկավարը, այսինքն՝ խալիֆն ինքն* էր[1]:

Ստամբուլում սնկի պես աճող հոսանքների ու ընկերությունների գաղափարախոսությունը հետազոտելով Համիդը որոշեց որդեգրել *պանիսլամիզմը* ոչ միայն իբրև հոգևոր դոկտրինա, այլև գործողության լայնահուն ծրագիր:

Արդեն ասվեց, որ Եվրոպան կորցնելուց հետո թուրքերը մտադրություն ունեին ծավալվել Ասիայում՝ *սկսելով Ալժիրից*, ավարտելով *Հնդկաստանով:* Այդ *«նոր տերության դրոշը» պետք է լիներ Մուհամեդի դրոշը, մայրաքաղաքը՝ Կոստանդնուպոլիսը*, տիրակալը՝ ուսմունքի առաջատար *խալիֆը:* Փաստորեն նախապատրաստվում էր Թուրքիայի տարածքի ընդարձակումը, նոր հսկա կայսրության ստեղծումը, ըստ որում Համիդ II-ը պիտի դառնար դրա խալիֆը, այսինքն և քաղաքական տիրակալը, և հոգևոր առաջնորդը:

Կիսազառանցանքի մեջ ընկած հոգեկան այդ հիվանդը, փառքի մարմաջով տարված, երբեմն բարձրածայն մտածում էր, ասելով, թե ինքը նպատակ ունի *կապեր հաստատելու* համահավատացյալների՝ Ալժիրի, Թունիսի, Եգիպտոսի և Հնդկաստանի ժողովուրդների, ինչպես նաև արյունակիցների՝ թուրքմենների, թաթարների, ուզբեկների, բաշկիրների և այլ ազգերի հետ: Նա փաստորեն թուրանական պետություն էր ուզում ձևավորել՝ ըստ որում Թուրանին հակադրելով Ղորանը[2]:

Այսպիսով՝ Համիդն ընտրում էր *պանիսլամիզմը,* այսինքն՝ *համաիսլամականությունը,* կրոնաքաղաքական հետադիմական մի ուղղություն, որի հիմքում ընկած էր իսլամ դավանող բոլոր ժողովուրդների քաղաքական միավորումը, նրանց համախմբումը վերդասակարգային և վերազգային մի ընդհանրության կեղծ ու պատիր գաղափարի շուրջը[3]:

Պանիսլամիզմն իբրև գաղափարաբանություն սկսել է ձևավորվել դեռևս XIX դարամեջին, որի քարոզիչներն էին՝ *Ջեմալ էլ դին ալ Աֆղանին* (1839-1897) իբրև պահպանողական ուղղության ջատագով, *Մուհամմատ Ապտոն*՝ (1841-1900) բարեփոխչության կողմնակից և *Սայիտ Ահմատ խանը*՝ (1842-1903) լուսավորության քարոզիչ: «Փանիսլամիզմ եզրը,- գրում է դոկտոր Եղիկ Ճերեճյանը,- առաջին անգամ օգտագործված է Ֆրանց ֆոն Վերների «Die Den «Panislamism» in the programm Aufgenommen Hat» գրքին մեջ և ապագային ընդհանրացած է Կապրիել Չարմըզի կողմե»[4]: Պանիսլամիզմին սատարողները մերթ գլխավոր էին համարում Իրանի շահին, մերթ թուրքական սուլթանին, համենայն դեպս իսլամական որևէ տերության գերագույն սյուզերենին[5]:

Նրանք ի վերջո կանգ առան սուլթան Աբդուլ Համիդի թեկնածության վրա: Սակայն, սուլթան «Ապտուլ Համիտ իր իշխանության առաջին երկու տարիներին *օսմանիստ* էր,- գրում է Եղիկ Ճերեճյանը.- (այդ տարիներուն կը գործէ Սահմանադրութիւնը (Միդհատեան) եւ Խորհրդարանը): Շատ շուտով, ան ամբողջապէս կը հեռանայ կայսրութիւնը բարեփոխութիւններու ճամբով փրկելու գաղափարէն եւ ամբողջապէս կ'իւրացնէ *Փանիսլամիզմի գաղափարախօսութիւնը:* Այդ շրջադարձը կը կատա-

---

[1] *Александр Свеанц,* նշված աշխատությունը, էջ 26-27: Տես նաև *Е. М. Примаков,* Анатомия ближневосточного конфликта, Москва, 1978, стр. 81.

[2] *А. Саркисян,* Сионизм от Теодора Герцеля до лорда Ротшильда и Армянский вопрос, "Армянский вестник", 1999, N 1-2, стр. 157-159.

[3] ՀՍՀ, հ. 9, Երևան, 1983, էջ 120:

[4] Տոքտ. *Եղիկ Ճերեճեան,* Փանթուրանիզմը, Պեյրութ, 1998 (*Զավէն Մսըրլեանի* նախաբանով), էջ 10, տողատակ ծանոթագրությունը:

[5] *Н. А. Смирнов,* Современный ислам, Москва, 1930, стр. 7-41.

րուի ռուս-թրքական պատերազմի անմիջական ազդեցութեան տակ. պատերազմ մը որուն հետեւանքով Օսմանեան Կայսրութենէն կ'անջատուին Եւրոպական քրիստոնեաբնակ շրջանները»[1]:

Բացատրվում է նաև բարբարոս սուլթանի օսմանիզմից պանիսլամիզմին շրջադարձվելու պատճառները: ա) Պատերազմի ժամանակ գումարված փաստերը Համիդին հանգեցրին այն եզրակացության, որ քրիստոնյա հպատակ ազգերը, համապետական իմաստով, «անբարեհույս» էին: Բարեփոխությունների ճանապարհով «այլակրոն» հպատակների ազգային-ազատագրական շարժումներին թումբ կանգնելը անհնարին էր: Հետևաբար էլի վստահելի տարրը մնում էր ***իսլամությունը:*** բ) Համիդն ուներ, բառիս բուն իմաստով, անսահմանափակ իշխանություն: Կորցնել այդ արտոնությունները կամ դրանք զիջել խորհրդարանին և սահմանադրությանը, նա չէր համաձայնվում: գ) Սուլթանը շրջապատված էր աստղագուշակ խավարամոլներով, բախտ բացողներով, որոնց կարծիքով բարեփոխությունների մեջ սատանայի մատ կար խառնված[2]:

Համիդը, սակայն, հրաժարվելով ***օսմանիզմից,*** որդեգրեց ոչ թե թուրանիզմը, այլ ***պանիսլամիզմը,*** քանզի.

«1.- Ապտուլ Համիտ, ըլլալով Օսմանեան Կայսրութեան Սուլթանը, նաեւ ամբողջ իսլամական աշխարհին Խալիֆան էր (1516-1517 թուականեն երբ թուրքերը կը գրաւեն Եգիպտոսը, Մամլուքներու ձեռքէն կ'առնեն Խալիֆայի իրաւունքը), ուստի անոր կրօնական իշխանութիւնը կը տարածուէր ամբողջ իսլամական աշխարհին վրայ: Դժուար էր համոզուիլ նման անծայրածիր իշխանութիւն մը կորսնցնելու գաղափարին հետ. մանաւանդ որ այդ իշխանութեան սահմաններուն մէջ կ'իյնար ***«Հիհատ» յայտարարելու իրաւունքը,*** որմէ կրնար օգտուիլ Խալիֆան՝ եթէ պայմանները պարտադրէին այդ:

2.- Օսմանեան Կայսրութեան իսլամ ազգաբնակչութեան մեծամասնութիւնը ոչ-թուրքեր էին՝ հիմնականին մէջ արաբ եւ քիւրտ (եապէս տարբեր պատկեր մը Ռուսական Կայսրութեան հետ բաղդատած): Փանթուրանիզմի որդեգրումը որպէս պետական գաղափարախօսութիւն, կրնար ոչ-թուրք իսլամ տարրին զգացումները գրգռել՝ սպառնալով կայսրութեան ամբողջականութեան:

3.- Սուլթան Համիտի ախորժակները, Պարսկաստանի եւ Աֆղանիստանի վրայով կ'երկարէին մինչեւ Հնդկաստան. այս ծաւալողապաշտ քաղաքականութեան համար որպէս տեսութիւն կրնար ծառայել Փանիսլամիզմը եւ ոչ Փանթուրանիզմը:

4.- Օսմանեան Կայսրութիւնը շօշափելի, գոյութիւն ունեցող կայսրութիւն մըն էր. մինչդեռ Թուրանական Կայսրութիւնը երազային էր տակաւին եւ անոր ստեղծումը կ'անցնէր ***Ռուսաստանի հետ առճակատումի ընդմէջէն,*** բան մը՝ որմէ ***մեծապէս կը զգուշանար սուլթան Համիտ»***[3]***:***

Եվ այսպես ձևավորվեց, ***պետական մակարդակի*** բարձրացավ և գաղափարական առաջնորդներ ունեցավ ***պանիսլամիզմը:*** Այն քաղաքական, ծայրահեղ հետադիմական, քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ կրոնական խիստ ատելություն սերմանող մի գաղափարաբանություն էր: Ռասիզմի թույնով շաղախված, մարդատյաց այդ ուսմունքի հիմքում ընկած էր սուլթան խալիֆի գլխավորությամբ (քանի որ Թուրքիայում իշխանությունը թեոկրատիկ էր) ստեղծել իսլամ դավանող ասիական բոլոր ժողովուրդների ***քաղաքական և ռազմական*** մի նոր միավորում- ***պե-***

[1] ***Եղիկ Ճերեճեան,*** նշված աշխատությունը, էջ 14:

[2] Նույն տեղում, էջ 15:

[3] Նույն տեղում, էջ 15-16:

տություն: Այդ նորակազմ պետության գերագահության տակ ապրող իսլամապաշտ բոլոր ժողովուրդները, համայնքներն ու նույնիսկ անհատները, իրենց պետք է զգային *վերդասակարգային, վերազգային:* Նրանք պետք է խմբվեին սուլթան-խալիֆի շուրջը՝ կազմելով ֆիզիկական և հոգևոր մի *ընդհանրություն*[1]:

Կրոնական-քաղաքական կոնցեպցիայով, պանիսլամիստները ձգտում էին աշխարհի, սկզբնական շրջափուլում Արևելքի բոլոր մուսուլմաններին *(սունի* թե *շիա,* չէին տարբերակում) նվաճել և ենթարկել սուլթան-խալիֆի գերագույն իշխանությանը: Ըստ որում, «գազավաթի» կամ «ջիհադի»- այսինքն՝ սրբազան պատերազմի հայտարարման մենաշնորհը վերապահում էին սուլթանին: Նրանք քարոզում էին այն զառանցանքը, թե ողջ հողագնդի վրա ապրող մահմեդականները, և՛ կրոնական, և՛ քաղաքական տեսակետից բարձր են կանգնած *այլահավատներից, այսինքն՝ «անհավատներից»:* Թուրքերն իրենց գենետիկայով ու կրոնական պաշտամունքով *բացառիկ են* և պիտի օգտվեն *բացառիկության* արտոնություններից[2]:

Պանիսլամիզմը բացառում էր ազգերի և ազգությունների ինքնուրույնության անհրաժեշտությունը, դասակարգերի, հետևապես և դասակարգային պայքարի առկայությունը: Այն թունոտ ատելություն էր ներարկում օսմանյան կայսրությունով մեկ փռված իսլամապաշտ ժողովուրդների մեջ՝ ընդդեմ քրիստոնյա հպատակ ազգերի- հատկապես «անհանգիստ հույների» և «պետականության ձգտող, ռուսասեր հայերի»:

Նրանց գաղափարաբան, գրող, պատմաբան *Ջելալ Նուրին,* կաշվից դուրս գալով, շինծու փաստեր մոգոնելով, ձգտում էր «ապացուցել», որ թուրքական ռասան առավելություն, նույնիսկ *գերազանցություն* ունի ոչ *միայն քրիստոնյաների,* այլև մահմեդական մյուս բոլոր ժողովուրդների նկատմամբ: Ավելին, թուրքերն իրավունք ունեն անկաշկանդ տիրապետելու կայսերահպատակ մյուս ժողովուրդներին դարերով պատկանած երկրները, սեփականացնել իսլամապաշտ, ոչ թուրք ժողովուրդների «հայրենիքը»:

Պանիսլամիզմի թունավոր գաղափարները ամփոփվեցին Ջելալ Նուրիի *«Իսլամի միությունը»*[3] վերնագրված աշխատության էջերում, որը կարծեք դասագիրք դարձավ իսլամապաշտ թուրք երիտասարդության համար: Այդ գիրքը մահմեդական մոլեռանդություն և ատելություն էր սերմանում քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ և հեղինակը բացահայտորեն հայտարարում էր, թե իրեն հետաքրքրում է պանիսլամիզմի ոչ թե կրոնական, այլ քաղաքական կողմը: Նուրիի կարծիքով իսլամ դավանող ժողովուրդները կազմում են միասնական մի ազգ, որոնք համահավաքում են շուրջ 300 միլիոն մարդ[4]:

Պանիսլամիզմի հոգևոր-քաղաքական կոնցեպցիան Ջելալ Նուրին ևս հանգեցնում էր նրան, որ աշխարհի բոլոր մահմեդականները հնազանդորեն պետք է ենթարկվեն սուլթանի գերագույն իշխանությանը: Սրբազան պատերազմի, այսինքն «գազավաթի» և «ջիհադի» քարոզը, դրանց կոչելն ու իրականացնելը հանդիսանում էր պանիսլամիզմի կարևոր ու բաղկացուցիչ մասը[5]: Այն տարանջատում և

---

[1] *Ե. Ղ. Սարգսյան,* Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասում, Երևան, 1964, էջ 68-69:

[2] *Дж. С. Киракосян,* նշված աշխատությունը, էջ 21: Տե՛ս նաև՝ «Հորիզոն», Թիֆլիս, 1913, N 41:

[3] *Celal Nurî,* İttihat-i İslam, İstanbul, 1331 (1912-1913), s. 11-13 (գրված է արաբատառ թուրքերենով): Տե՛ս նաև՝ *Ե. Ղ. Սարգսյան,* նշված աշխատությունը, էջ 69-70:

[4] Նույն տեղում:

[5] *Дж. С. Киракосян,* Младотурки перед судом истории, стр. 20-21.

իրար էր հակադրում օսմանյան կայսրության քրիստոնյա և մահմեդական ժողովուրդներին, ատելություն էր բորբոքում իսլամապաշտների մեջ՝ ընդդեմ քրիստոնյա ժողովուրդների:

Պանիսլամիզմի դոկտրինան XIX դարի մայրամուտից դրվեց սուլթանական բռնապետության վարած թե՛ ներքին, և թե՛ արտաքին քաղաքականության հիմքում: Այսինքն՝ այն բարձրացվեց պետական մակարդակի, մի բան, որին հեշտությամբ չհասան «Նոր օսմանները»: Համիդ II մարդասպանը, ծրագրելով և իրականացնելով անմեղ արևմտահայության կոտորածները, ձգտելով ժողովրդական զանգվածների ուշադրությունը շեղել դասակարգային պայքարից, երկու հարյուրամյակների դարաշեմին, լայնորեն օգտագործեց պանիսլամիզմի գաղափարախոսությունը: Այդ նպատակով պրոպագանդվում և տարածվում էին պանիսլամիզմի այն «սկզբունքները», թե ***իբր խալիֆի, սուլթանի իշխանությունը պետք է տարածվեր և ամրապնդվեր ոչ միայն օսմանյան կայսրության մեջ ապրող մահմեդականների, այլ նաև ամբողջ աշխարհի մուսուլմանների վրա***[1]: Աբդուլ Համիդը անձամբ էր խրախուսում և նյութականապես շահագրգռում պանիսլամիզմի գաղափարախոսներին: Նրա պալատի դռները բաց էին մոլի շովինիստ Ջեմալեդդին Ավգանիի առջև, որն իրար հետևից թխում ու «շրջանառության» մեջ էր դնում սուլթանի «հեղինակությունը բարձրացնող» գրքույկներ[2]:

Այժմ մի քանի խոսք ասենք Համիդ II-ի՝ արևմտահայության նկատմամբ կիրառած ***ցեղասպանության*** քաղաքականության մասին: Այստեղ ընդհանրացնենք, որ սուլթանն ու Բ. Դուռը, որդեգրելով ***պանիսլամիզմի հակազգային ու հակամարդկային դոկտրինան,*** նրա ողջ ծանրությունը, շովինիստական բովանդակությունը սուր ծայրով ուղղում էր անպաշտպան արևմտահայության դեմ: Նա նախ կատարում էր նախապատրաստական լուրջ աշխատանք, որպեսզի կարողանար իրականացնել հայասպանության, իհարկե բարդ ու դժվարին գործը: Սուլթանը դաժան էր, արյունախում, սակայն հիմար չէր և պատկերացնում էր, թե ինչքան դժվար է մի ամբողջ ազգ ոչնչացնելը: Ուստի...

1. Նախքան հայասպանությանն անցնելը Համիդ II-ը կազմակերպեց ***հարյուրհազարանոց «համիդիե» գնդեր,*** որոնց մեջ ընդգրկելով ավարածարավ, դաժան ցեղախմբերին, քրեական հանցագործներին, մարդկային տականքին, օգտագործելով նաև խուժանը, այդ բոլորին թունավորում էր ***պանիսլամիզմի գաղափարախոսությամբ:*** Սուլթանն ու Բ. Դուռը առանց այդ էլ եղած քրիստոնյա-մահմեդական անջրպետը խորացնում էին, իսլամապաշտներին գրգռում քրիստոնյաների դեմ, ***այսինքն՝ գաղափարական նախապատրաստություն էին տեսնում արմենոցիդի համար:***

2. Ցեղասպանությունից առաջ Եղլդզի տիրակալը վարում էր ծանր հարկային քաղաքականություն, հայերի նկատմամբ կիրառում քաղաքական անտանելի ճընշումներ: ***Պանիսլամիզմը*** որդեգրելով՝ սուլթանն ու նրա դրածոները հայ ժողովրդի համածուլումից (որը կատարվում էր օսմանիզմի ժամանակ) անցան նրա բացարձակ, զանգվածային ու բացահայտ ***բնաջնջման քաղաքականությանը,*** չերկնչելով կիրառել մարդասպանության մինչ ***այդ չտեսնված ու նույնիսկ չլսված եղանակներն ու մեթոդները:***

3. Սուլթանական կառավարությունը, հայասպանության առաջին քայլերն անե-

---

[1] ***Ю. А. Петросян,*** նշված աշխատությունը, էջ 161:

[2] Նույն տեղում, էջ 161: Տե՛ս նաև ***N. Berkes,*** The Development of Secularism in Turkey, Montreal, 1964, p. 265-268.

լով սկզբում *փորձում էր ստուգել* Արևմուտքի տերությունների ռեակցիան, հատկապես Բեռլինի կոնգրեսի որոշումներով պարտավորված պետությունների վերաբերմունքը պանիսլամիզմի իր «սև գործերն անելիս»: Այստեղ էր, որ երևաց եվրոպական տերությունների ղեկավարների անբարոյական վերաբերմունքը Հայոց հարցի նկատմամբ, որից և քաջալերված, Համիդ մարդասպանը ձեռնարձակ անցավ արդեն հայ ժողովրդի զանգվածային ոչնչացմանը ոչ միայն Սասնո ու Զեյթունի լեռնագավառներում, Վանի ու Բարձր Հայքի ծայրամասային նահանգներում, այլև բուն մայրաքաղաքում՝ *Կոստանդնուպոլսում:* Նա արդեն ցեղասպանություն էր իրագործում եվրոպական դեսպանների, դիվանագետների, հյուպատոսների բաց աչքերի առջև, կարողանում վարպետորեն օգտվել տերությունների միջև գոյություն ունեցող հակամարտությունից և իր հայասպան գործն անելով, ոչ մի պատասխանատվության չէր ենթարկվում:

4. Բեռլինի կոնգրեսից սկսած՝ Արևմտյան Հայաստանում կատարվելիք բարենորոգումների խնդիրը ծանր քարի նման կախված էին սուլթանի և նրա պալատականների վզից: Ոչնչացնելով արևմտահայությանը՝ նա փաստորեն բացառում էր բարենորոգումների անցկացումը, Մայիսյան կիսատ-պռատ որոշումները ստորագրելիս, ծգծգում էր և փաստորեն ծիծաղում դրանց առաջարկողների վրա:

5. Սուլթանին հանգիստ չէր տալիս հայերի թվական *գերակայությունն իրենց բուն Հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում: Պանիսլամիզմի* բովանդակած թունավոր գաղափարներով, նա թուրքերին և քրդական ցեղապետներին լայն իրավունքներ էր տալիս, գինում, կերակրում, բացատրում և ուղղում հայերի դեմ, խոստանալով քրիստոնյաների ունեցվածքը փոխանցել իսլամապաշտներին: Եվ նա ոչ միայն կարողացավ այդ ամենն անել, այլև փոխեց Արևմտյան Հայաստանի ազգագրական քարտեզը, մորթելով հայերին, նրանց տեղ շերտընդմեջ լցնելով քրդերին և թուրքերին, հիմք դրեց Մեծ եղեռնին, փաստորեն հեշտացրեց երիտթուրքերի և քեմալական բորենիների մեծ ոճրագործությունը[1]:

6. Համիդը, նրան շրջապատող վերնախավը, նորաթուխ թուրք բուրժուազիան, ինչո՞ւ չէ նաև թուրք ժողովրդի մեծ մասը, նախանձով ու ատելությամբ էին նայում աշխատասեր ու գործիմաց, հմուտ ձեռքեր ու բնական խելք ունեցող հայ ձեռներեցների ունեցվածքին, երբեմն մեծ հարստությանը: Սուլթանը, աղվեսի խորամանկությամբ, վարպետորեն գրգռում էր (նույնիսկ դրա կարիքը չկար, նրանք գրգռված էին) իսլամապաշտներին, վերջիններիս ուղղում «գյավուրների դեմ»: Մի քանի օրում, երբեմն մի քանի ժամում (նայած որտեղ և երբ) հայերը նստում էին մոխիրների վրա, եթե կենդանի մնային, իսկ թուրքերն ու քրդերը տեր դառնում նրանց ունեցվածքին, որն արդար աշխատանքով գումարել էին տարիների, տասնամյակների ընթացքում:

7. Համիդն իր արյունարբու գործերով, *պանիսլամիզմն* իր մարդատյաց բովանդակությամբ, հիմք դարձան *պանթուրքիզմին*՝ գաղափարախոսության մարզում, ցեղասպանությանը, այսինքն՝ մինչև վերջին հայը ոչնչացնելու նոր ծրագրեր կազմելուն երիտթուրքերի ու քեմալականների համար: Համիդ II-ը, «ամուր ձեռքերով» կառուցեց *գենոցիդի, արմենոցիդի շենքը,* որին կոթնած նրա հաջորդներն ավարտեցին սուլթանի սկսած գործը:

8. Բերված փաստերն ու դրանցից արված եզրահանգումները կաթիլ են օվկիանոսի մեջ: Սակայն դրանք էլ բավարար են ապացուցելու, թե XIX դարի 90-ականնե-

[1] Այս հարցերը քննել է նաև անվանի թուրքագետ *Ռուբեն Սահակյանը,* տե ս նրա «Ցեղասպանության պատմությունից» (Երևան, 1990, էջ 12-13) աշխատությունը:

րի հայկական կոտորածները ցեղասպանություն էին կազմակերպված ձևով և ամենից առաջինը՝ թուրքական գաղափարախոսությամբ՝ պանիսլամիզմով:

Պանթուրքիզմը - համաթուրքականությունը - թուրանիզմը - ծայրահեղ շովինիստական, հետադիմական, միաժամանակ ռասիստական գաղափարաբանություն էր: Հոսանքի ու նրա ծայնափողերի գերխնդիրն եղել և այսօր էլ մնում է աշխարհի թուրքալեզու բոլոր ժողովուրդների միավորումը, ***թուրքերի գլխավորությամբ՝ մեկ ազգ, մեկ պետություն*** ստեղծելու ոչ միայն տեսական հիմնավորումը, այլև գործնական ջատագովությունը[1]:

Պանթուրքիզմն իբրև գաղափարաբանություն ձևավորվեց XIX և XX հարյուրամյակների սահմանագծին (1879-1908 թթ.) և իր գործունեության ***անդրանիկ շրջափուլում*** կանխատեսում էր Թուրքիայի զարգացման «առաջընթացի» ուղիները հետագա տասնամյակներին, նույնիսկ՝ ընդհանրապես:

Զարգացման այդ տասնամյակներին, պանթուրքիստները, սակայն, մշակում էին ձևավորելու գաղափարական, քաղաքական, սոցիալական, ***ազգային*** և կուլտուրական այն սկզբունքները, որոնց հենքի վրա պիտի միավորվեին աշխարհի մահմեդական, բայց թուրքալեզու բոլոր ժողովուրդները՝ ***կազմելով մի ընդհանրություն օսմանյան կայսրության գերագահության ներքո*** [2]:

Պանթուրքիստների կազմակերպական ձևավորման գլխավոր խթան հանդիսացան ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմում Թուրքիայի կրած ջախջախիչ պարտությունը, եվրոպական մեծ տերությունների միջամտությունը կայսրության ներքին գործերին, տերության տնտեսական զարգացման ետ շպրտումը, տարածքային ամբողջականության կորուստը և վերջապես ոչ թուրք, հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների վերելքը: Հոսանքի գաղափարաբանները հրապարակ էին նետում գործելու «դեղամիջոցներ», իբրև թե դրանցով Թուրքիային պիտի փրկեին տարածքային նոր կորուստներից:

Պանթուրքիզմը ***«Մեծ Թուրանի»*** գաղափարաբանության վերածելու համար, սակայն, առաջին տասնամյակներին դեռևս համապատասխան հող չկար: Ռուսաստանի կայսրության կազմում ապրող ***թուրք-թաթարները,*** քաղաքական հասունացման բավարար մակարդակի վրա չէին կանգնած: Ուստի անհրաժեշտ էր «քնից արթնացնել» ռուսական ***իսլամապաշտ թուրք-թաթարներին,*** նրանց մեջ «հակաքրիստոնեական թույն ներարկել», ապա նոր կոչ անել ***գազավաթի***՝ սրբազան պատերազմի:

Այդ էր գլխավոր պատճառը, որ երկու դարերի սահմանագծում, պանթուրքիստները բավարարվում էին կուլտուրական-պրոպագանդիստական աշխատանքներով, հիմնում հարյուրավոր թերթեր ու թերթուկներ, հրատարակում գրքեր ու գրքույկներ,

---

[1] ***Պանթուրքիզմի*** մասին ստեղծվել է ծավալուն գրականություն թե մեզանում, և թե արտասահմանում: Նշենք դրանցից հիմնականները: ***Ե. Ղ. Սարգսյան,*** Պանթուրքիզմ, ՀՍՀ, հ. 9, էջ 120-121: ***Дж. С. Киракосян,*** Младотурки перед судом истории, Ереван, 1986, стр. 74-76. ***Лорд Кинросс,*** նշված աշխատությունը, էջ 628-629: ***Jacov M. Landau,*** Pan-turkism From irredentism to cooperation, London, 1981, 1985. ***Александр Скаванц,*** Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Москва, 2002. ***Э. Ю. Гасанова,*** Антикоммунизм в Турции, Баку, 1973. ***И. Л. Фадеева,*** От империи к национальному государству, идеи турецкого социолога Зии Гек Алпа, Москва, 2001. ***Շահան Նաթալի,*** Թուրքիզմը Անգորայեն Պաքու և թրքական օրենքասիոն, Երևան, 1992: ***Հրանդ Գանգրունի,*** Ցեղասպան թուրքը (1908-1923), Պեյրութ, 1994: ***Զարեվանդ*** (Զավեն Նալբանդյան), Միացյալ անկախ Թուրանիա, Երևան, 1993: Տոքտ. ***Եղիկ Ճերեճեան,*** Պանթուրանիզմը, Պեյրութ, 1998: ***Հայկազն Գ. Ղազարեան,*** Ցեղասպան թուրքը, Պեյրութ, 1968: ***Սուրեն Բաղդասարյան,*** Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1930-ական թթ., Երևան, 2001: ***Ю. Г. Барсегов,*** Геноцид армян-преступление по международному праву, Москва, 2000.

[2] ***Александр Скаванц,*** նշված աշխատությունը, էջ 109-110:

դրանք տարածում թուրքալեզու ժողովուրդների բնակության շրջաններում՝ նպատակ հետապնդելով պատրաստելու ***ազգային կադրեր:***

Ինչպես այս շրջափուլում, առավել ևս դրան հաջորդող տասնամյակներում, պանթուրքիստների շարքերը համալրող պատմական ատաղձը, շենքի «կառուցման շաղախը» գոյանում էր ***մասոններից,*** ավելի շատ հրեաներից, որոնք գործում էին ոչ միայն Թուրքիայում, այլև թուրքաբնակ և թուրքալեզու բոլոր երկրներում, հատկապես Ռուսաստանում (Կազան, Նիժնի Նովգորոդ, Միջին Ասիայի քաղաքներ, նույնիսկ զույգ մայրաքաղաքներ՝ Մոսկվա և Լենինգրադ)[1]:

Ստեղծվեցին սակայն մի քանի կազմակերպություններ ևս. դրանք էին ***«Օսմանյան հասարակության ազատություն», «Թուրք իթթիհադ»*** («Թուրքերի միավորումը»), ***«Իթթիհատ վե Թերաքի»*** («Միություն և առաջադիմություն») և այլն: Ըստ որում վերջինը Թուրքիայի պատմության մեջ ***քաղաքական անդրանիկ կազմակերպությունն էր,*** որը հետագայում ***այդքան բացասական դեր կատարեց,*** կայսրության ոչ թուրք, հատկապես ***հայ ժողովրդի կյանքում***[2]***:***

Պանթուրքիստների գործունեության երկրորդ էտապը (1908-1913) սկսվում է անարյուն հեղաշրջմամբ և ավարտվում Բալկանյան պատերազմներով: Այդ տարիներին գահազրկվեց արյունարբու սուլթանը՝ Թուրքիայում, անհաջողությամբ ավարտվեց առաջին հեղափոխությունը Ռուսաստանում, պարտվեց ցարիզմը ռուս-ճապոնական (1904-1905 թթ.) պատերազմում: Աշխուժացան պանթուրքիստները, քանզի հասան հաջողության և կարծես թե դարձան իշխանամետ հոսանք, նույնիսկ կուսակցություն: «Միություն և առաջադիմությունը» սատար կանգնեց երիտասարդ թուրքերի Սալոնիկի կենտրոնականներին, մասնաճյուղեր հաստատելով Կ. Պոլսում, փաստորեն ձեռքերը թաթախեց Կիլիկիայի (Ադանա- 1909) հայության արյան մեջ. բայց այդ բոլորով ոչ միայն չբավարարվեց, այլև ձեռնարկեց ավելի մարդատյաց գործողություններ:

1912 թ. հոկտեմբերի 9-ին բռնկվեց և 1913 թ. մայիսի 30-ին, Թուրքիայի խայտառակ պարտությամբ, ավարտվեց ***Բալկանյան առաջին պատերազմը:*** Բուլղարիան, Հունաստանը, Սերբիան, Չեռնոգորիան, շուրջ 650 հազարանոց միացյալ բանակով, ջախջախիչ հարված հասցրեցին երիտթուրքական զորքերին և նրանց հարկադրեցին պարտված ճանաչել իրենց: Ի միջի այլոց այդ պատերազմում դաշնակիցների դրոշի տակ կռվում էր ***Հայկական վաշտը,*** ապագա երկու անվանի զորավարների ***(այդ օրերին վոյվոդա) Անդրանիկի*** և ***Գարեգին Նժդեհի*** գլխավորությամբ:

1913 թ. մայիսի 30-ին կնքվեց թուրք-դաշնակիցների ***Լոնդոնի*** պայմանագիրը, որով Թուրքիան վերջնականապես կորցրեց եվրոպական իր բոլոր տիրույթները, բացառապես Կոստանդնուպոլսի և Արևելյան Թրակիայի- շուրջ 25 հազ. քառ. կմ: Կարճ ժամանակ անց անկախություն ստացավ նաև Ալբանիան: Փաստորեն դրանցով ավարտվեց թուրքահպատակ սլավոնական բոլոր ժողովուրդների անկախացման պրոցեսը: Բալկանյան ***երկրորդ պատերազմը*** կարճ տևեց՝ 1913 թ. հունիսի 29-ից, օգոստոսի 10-ը: Թուրքիան այս անգամ որոշ տարածքներ ետ ստացավ, սակայն թուլացած, քայքայված վիճակով մոտենում էր Առաջին աշխարհամարտի եզրագծին:

1913 թ. հուլիսի 17-ին Թուրքիայում տեղի ունեցավ պետական ևս մեկ այլ հեղաշրջում: Սպանելով վարչապետ ***Մահմուդ Շևքեթ փաշային,*** եռապետեր- ***Թալեաթ, Ջեմալ*** և ***Էնվեր*** փաշաները, երկրում վերջնականապես հաստատեցին ***ռազմականուսակցական դիկտատուրա:*** Նրանք գործակցեցին երիտթուրքական բանա-

---

[1] ***Jacov M. Landau,*** Pan-Turkism, London, 1985: Գլուխ ***առաջին***՝ «Պանթուրքիզմը- նրա վերելքն ու անկումը Թուրքիայի սահմաններից դուրս», էջ 7-27:

[2] ***Александр Сваранц,*** նշված աշխատությունը, էջ 112-113:

կի հրամանատարության հետ և իրենց դրոշը դարձրեցին ***պանթուրքիզմը***՝ արդեն բացահայտորեն «հիմնավորելով» ***Մեծ Թուրանի*** ստեղծման անհրաժեշտությունը, փաստորեն մարտահրավեր էին նետում Ռուսաստանին և Արևելքի մի շարք այլ երկրներին: Առաջին աշխարհամարտը չսկսված՝ երիտթուրքերը գաղափարական պատերազմ էին հայտարարում այն պետություններին, որոնց գահակալության տակ ապրում էին ***թուրքալեզու, մահմեդապաշտ*** ժողովուրդներ:

Նախքան այդ, 1911 թ. Սալոնիկում կայացած համագումարում, պանթուրքիստ ***իթթիհատականները*** որոշում կայացրեցին թուրանիզմի մասին, որտեղ արձանագրեցին, թե «վաղ թե ուշ պետք է իրագործվի Թուրքիայի բոլոր հպատակների ***օսմանականացում,*** բայց մի բան պարզ է, որ դա երբեք չի կատարվի համոզելով, ***այլ պետք է իրականացվի զենքի ուժով»***[1]:

Բալկանյան պատերազմների ավարտից հետո շատ բան հստակեցվեց և՛ պանթուրքիստների, առավել ևս հայ քաղաքական կուսակցությունների համար: ***Ամենահիմնականը,*** այլևս չէր մնացել այն ***«քաղցրությունը»,*** որն արհեստականորեն և ժամանակավրեպ ձևով կարկատվել էր «Միություն և առաջադիմություն» և հայկական ազգային-քաղաքական կուսակցությունների ղեկավարության միջև:

Հայ քաղաքական ուժերն իրենց գործն արդեն ավարտել էին՝ օգնելով պանիսլամիստներին իշխանության գալու պրոցեսում: Նրանց ձեռքերով թուրք նացիոնալիստները սկզբում Համիդից խլեցին Սահմանադրությունը (1908), մեկ տարի անց գահընկեց արեցին (1909) և առանց որևէ կաթիլ արյուն թափելու, սուլթանին արտաքսեցին մայրաքաղաքից: Հայերն այժմ արդեն ոչ միայն պետք չէին եռապետերին, նրանց սատարող մոլի պանթուրքիստներին, այլև թշնամի էին դիտարկվում և անհրաժեշտ էր համարվում ազատվել նրանցից:

Բալկանյան պատերազմների արդյունքներից հուսախաբված, տարածքային նոր և մեծ կորուստներից հետո, ***առանց երկմտելու,*** թուրք բորենիները բացում էին իրենց խաղաքարտերը և բարեփոխություններ պահանջող հայ ժողովրդի նկատմամբ անցնում հարձակման քաղաքականության: ***Վաղամտածված հայկական ցեղասպանության գաղափարական նախապատրաստությունը անթաքույց քարոզարշավի էին հանձնարարում:***

Երիտթուրքերի ներկայացուցիչներից պրոֆ. ***Ռեմզի Օղուզ Արընկը,*** անդրադառնալով իր կուսակցության կրոնաքաղաքական գործունեության վերլուծությանը, ավելացնում էր. ***«1912 թ. Բալկանյան պատերազմը օսմանիզմի գլխին մի նոր փորձանք եղավ: Տեղացի, բայց ոչ թուրք տարրերը, գործակցում էին օտար ուժերի հետ: Բալկանյան պատերազմը, պիտի ասել, որ մեզ զգաստության հրավիրող մի երկրաշարժ եղավ»*** [2]: ***«Այդ ճգնաժամային պահին,***- շարունակում է ***Օղուզ Արընկը,***- ***ծնվեց թուրքիզմը, որպես քաղաքական գաղափարախոսություն: Միաժամանակ մուսուլմանությունը ևս, որպես նորոգված գաղափարախոսություն, հրապարակ հանվեց: Նրանք, ովքեր ուզում էին մուսուլմանությունը թարմացնել ու վերստին թուրքերին մի գաղափարախոսության շուրջ համախմբել, Բալկանյան պատերազմը համարում էին պրոպագանդայի լավագույն առիթ*** (ընդգծումները մերն են- Հ. Ղ.)» [3]:

---

[1] ***J. Lepsius.*** Der Todesgang des Armenischen Volkes. Potsdam, 1930, S. 222. Տե՛ս նաև ***Ավետիս Փափազեան,*** Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում, Երևան-Լոս Անջելես, 1995, էջ 40:

[2] ***Prof. Arık R. O.,*** Türk inkilabi ve milliyetçiliğimiz, Ankara, 1958, s. 9.

[3] Նույն տեղում, էջ 10: Տե՛ս նաև «Արևելագիտության հարցեր», Երևան, 1983, պրակ 1-2, էջ 9 ***(Ե. Ղ. Սարգսյանի***՝ «Պանիսլամիզմի և պանթուրքիզմի դոկտրինաները երիտթուրքերի ներքին քաղաքականության մեջ» հոդվածը):

«Փանթուրքիզմը» խորագրված հետաքրքիր ու փաստառատ իր հետազոտության էջերուն, գիտության դոկտոր *Եղիկ Ճերեճեանը* պանթուրքիզմի *գենեզիսի*, նրա *գնոսեոլոգիական* արմատների և մյուս ուսմունքների հետ ունեցած փոխհարաբերությունների մասին անում է ընդհանրական ներքոհիշյալ դատողությունները. «Երիտթուրքերը օսմանիզմի պետական գաղափարախոսություն ունենալով հանդերձ քաղաքական գործնական կեանքին մեջ, ճարպկորեն կօգտագործեին իրենց ներսիդին գոյություն ունեցող գաղափարական այլակարծությունները: Անոնք օսման կայսրության քրիստոնյա ժողովուրդներու հետ իրենց յարաբերութեան մէջ *Օսմանիստներ եւ Բարեկորոգչականներ էին.* իսլամ ժողովուրդներու հետ իրենց յարաբերութեան մէջ՝ *Իսլամիստներ.* իսկ թուրք տարրին հետ իրենց յարաբերութեան մէջ՝ *Թուրքիստներ:* Այս բազմադէմ քաղաքականութեան վառ օրինակներէն է «Իթթիհատ Վէ Թերաքքը» Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան անդամ, ինքզինք Օսմանիստ եւ Բարեկարգիչ ներկայացնող Պահաէտտին Շաքիրի գրած նամակը «Կովկասի Իսլամ եղբայրներուն», 1906 թուականին՝ տակաւին Իթթիհատի իշխանութեան գլուխ գալէն առաջ: Այդ ծրագրային նամակը իր նախաբանին մէջ կ'ըսէ.- *«Ստացանք ձեր նամակը, որ կարդացինք մեր կազմակերպութեան ժողովին մէջ: Միաձայնութեամբ՝ կ'ողջունենք իսլամական եւ ազգային իրաւունքներու պաշտպանութեան համար ձեր կողմէ Կովկասի բոլոր վայրերուն մէջ գիտական ու քաղաքական ընկերութիւններու ստեղծումը, դպրոցներուն եւ հրատարակութիւններուն մէջ օսմանեան թուրքերէն գործածելը, մեզի հետ յարաբերութիւնները սերտացնելու համար Եւրոպա ներկայացուցիչներ ղրկելու ձեր մտադրութիւնները»:* Ապա, իր 7րդ վերջին կէտին մէջ կ'եզրակացնէ.- *«7- Մեր թշնամին հանդիսացող եւ ձեզ ռուսերու լուծէն ազատելուն դէմ ամենամեծ արգելքներէն մէկը հայերն են: Մշակեցէք կանոնաւոր ծրագիր մը անոնց ջլատելու համար»*[1]:

Այս ժամանակաշրջանի գաղափարախօսը կարելի է նկատել Եուսուֆ Աքչուրան, որուն «Իւչ Թարզի Սիասէթ» (Երեք Ձեւի Քաղաքականութիւն) յօդուածը, տպուած Գահիրէի «Թուրք» հանդէսին մէջ 1904 Յունիսին, կը դառնայ գործունէութեան ծրագիր: Այդ յօդուածով, Ե. Աքչուրա կը պաշտպանէ այն տեսակէտը, որ ապագայ Օսմանեան Կայսրութիւնը իր քաղաքականութիւնը պէտք է մշակէ երեք զուգահեռ գիծերով.- *1) Օսմանականութիւն, 2) Իսլամութիւն, 3) Թրքութիւն:*

Իշխանութեան գլուխ գալէն քանի մը տարի ետք, պետական գաղափարախօսութեան տեսակէտէն, խոր եւ էական շրջադարձ մը կը կատարուի Օսմանեան վերնախաւէն ներս: Օսմանիզմը, իր ե՛ւ ազգայնամոլական, ե՛ւ բարեկարգչական տարատեսակներով, ամբողջապէս կը նետուի պատմութեան աղբանոցը եւ իր տեղը կու գայ բռնելու *Փանթուրանիզմը:* Ի՞նչ պատճառներով եւ ի՞նչ ներգործութիւններու ազդեցութեան տակ կը կատարուի այս փոփոխութիւնը:

Ա) Երիտթուրք ղեկավարները կը համոզուին, որ երկդիմի քաղաքականութեամբ եւ բարեկարգչական խոստումներով կարելի չէ բաղկացուցիչ ազգերու ազատագրական ձգտումներուն առաջքը առնել: Ազատագրական ձգտումներ կ'արտայայտեն ոչ միայն քրիստոնեայ ժողովուրդները, այլեւ՝ իսլամները, յատկապէս արաբները: Այսինքն, գործնական քաղաքականութեան եւ ռազմավարական տեսակէտներէն յուսալի եւ վստահելի տարր կը մնայ միայն թուրքը:

Բ) Կայսրութեան բոլոր ժողովուրդներն ալ կ'ապրին ազգային ինքնագիտակցութեան զարթօնք մը, որուն որպէս հակազդեցութիւն, հրապարակ կու գայ թրքական

[1] *Հայկազն Գ. Ղազարեան,* Ցեղասպան թուրքը. Պէյրութ. 1968. էջ 153-154:

ազգայնականութիւն մը, ծանօթ Թիւրքծիւլիւք անունով: Թիւրքծիւլիւքը, որ կը վայելէ պետական հովանաւորութիւն, քաջալերանք եւ ֆինանսաւորում, իր դրսեւորումը կ'ունենայ հոգեւոր գործունէութեան բոլոր ասպարէզներուն մէջ մշակոյթ, արուեստներ, գրականութիւն, լեզուաբանութիւն, կանանց-ուսանողական-երիտասարդական կազմակերպութիւններ եւայլն: Հրապարակ կու գան ակումբներ *(Օջախներ), կազմակերպութիւններ, թերթեր, եւայլն: 1911էն, Պոլսոյ մէջ կը գործէ «Թուրանեան Գիտահետազօտական Կեդրոնը»: Թիւրքծիւլիւքի ազգայնամոլական հոսանքը լայն տարածում կը գտնէ Օսմանեան թուրքերուն մօտ: Աւելորդ է ըսել թէ թրու ազգայնամոլական Թիւրքծիւլիւքը քանի մը քայլ կը բաժնէր Փանթուրանիզմէն, որուն հասնելու համար մանրատոտիկ «տա՜-տի՛» մը պէտք էր միայն...*

Գ) Առաջին օրէն իսկ, Երիտթրքական շարժման մէջ տեղ կը գրաւեն Կովկասեան ծագումով ականաւոր թաթար Փանթուրանիստներ, ինչպիսիք են *Ահմատ Աղայեւ, Եուսուֆ Աքչուրա, Գասփիրսկի, Թոփճիպաշեւ եւ ուրիշներ: Ասոնց աշխոյժ եւ յարատեւ աշխատանքը կ'ըլլայ Փանթուրանիզմը բարձրացնել Օսմանեան կայսրութեան պետական գաղափարախօսութեան մակարդակին՝ Կովկասի իրենց ազգակիցներուն ազատագրման համար ամուր յենակէտ մը ստեղծելու առաջադրանքով»*[1]*:*

Այսպիսով, եթե ուշադիր նայենք, ապա կտեսնենք, որ *պանթուրքիզմը* և *պանթուրանիզմը* իրար նման են, սակայն *նույնը չեն: Թուրքիզմը* կազմում է *թուրանի* մի մասը միայն, այսինքն ժողովուրդներ կային, որոնք Թուրանի տարածքումն էին ընկած, սակայն լեզվով թուրքախոս չէին, և նույնիսկ ոմանք իսլամապաշտ չէին (օրինակ ֆիններ, հունգարներ, բուլղարների մի մասը):

Թուրան, երբեմն *թուրա,* բառը ունի հնամենի ծագում: Դեռևս պարսկական *Ավեստայի* մեջ հիշատակվում է Թուրան անվանումը *թուրա* կամ *թուրիա* տառադարձություններով: *Թուրան* բառակապակցությունը օգտագործում է նաև *Ֆիրդուսին* իր հռչակավոր *«Շահնամեի»* սուրահներում՝ այդպես անվանելով Իրանի հյուսիսից թափանցող քոչվոր-վաչկատուն ցեղախմբերին[2]: Արևմտյան եվրոպական պատմագիտական և տեղագրական գրականության էջերում թուրանը օգտագործվում է և 1697 և 1839-ը թվականներին[3]:

Թուրանի մասին մի քանի անգամ հիշատակություն ունի գերմանացի զինվորական և դիվանագետ *Հելմութ ֆոն Մոլթկեն,* որը երկար ժամանակ պաշտոնավարել է Թուրքիայում՝ լինելով ոչ միայն թուրքական բանակի վերակառուցողներից, այլև սուլթանների պալատական խորհրդականներից մեկը[4]:

Պանթուրքիզմի սկզբնավորման մասին ավելի հստակ կարծիք է հայտնել արաբ պատմաբան և լրագրող *Ահմատ ալ Սահտ Սուլեյմանը*՝ 1968 թ. գրելով. «Այս գաղափարախօսութեան (Փանթուրքիզմ) հիմնադիրը հունգար արեւելագէտ *Վամպէրին էր,* 1868 թուականէն մինչեւ 1874: Անգլիացիները որդեգրեցին այդ որպէսզի Օսմանեան թուրքերէ եւ Արեւելեան թուրքերէ կազմուած մարդկային զանգուած մը յառաջ բերեն հարուածելու համար Կեդրոնական Ասիոյ վրայ աւելցող ռուսական ազդեցութիւնը»:

Այսպիսով հայ ժողովրդի կյանքում ողբերգական դեր կատարած *պանթուրքիզմն* իր *հակառուսական* և *հակահայկական* ավերիչ գործերն սկսել էր շատ վաղուց, սակայն պետական մակարդակի է բարձրացվել Բալկանյան պատերազմի

---

[1] Տոքթ. *Եղիկ Ճերեճեան,* Փանթուրանիզմը, Պեյրութ, 1998, էջ 19-21:

[2] Նույն տեղում, էջ 5-6:

[3] ***Bernard Levis,*** The Emergence of Modern Turkey, 1968, s. 347.

[4] ***Moltke, Helmuth von.*** Briefe über Zustande und Begebenheiten in der Türkei aus den Jahren 1835 bis 1839. Berlin, 1876.

ավարտից հետո, հատկապես հայկական բարենորոգումների համար մղված պայքարի տարիներին, այն է՝ 1912-1913 թվականներին:

Պանթուրքիստները պարզ տեսնում էին և այդ տեսածի մասին տեղեկացնում Թուրանի ժողովուրդներին, որ յուրաքանչյուր պատերազմի ժամանակ, կայսրությունը կորցնում էր նորանոր երկրամասեր, հետևաբար նախկին մեթոդներով, այսինքն ավերիչ արշավանքներով, այլևս հնարավոր չէր ոչ միայն վերադարձնել տերության նախկին փառքը, այլև տարածքային ամբողջականությունը: Ուստի ելքն առաջարկվում էր թուրանական շարժման միջոցով նվաճել թուրքալեզու, իսլամապաշտ բոլոր ժողովուրդներին, հայացքն Արևմուտքից թեքել դեպի Արևելք, և այդ շարժման ժամանակ, եթե որևէ երկիր խանգարեր իրենց, ապա դաժան հաշվեհարդար տեսնել նրա հետ, ինչպես կատարեցին Հայաստանի երկու հատվածներում:

Պանթուրքիզմի առաջին գաղափարաբանները եղան թուրքական ազգայնականության պարագլուխ, երդվյալ հակահայ ***Ջիյա Գյոք Ալփը*** [1], ***Ահմեդ Աղաևը*** [2], ***Յուսուֆ Ակչուրան*** [3]:

Հետագայում սրանց բանակի անդամները դարձան ***Իսմայիլ-բեյ Գասպրինսկին*** [4], ***Ֆուատ Քյոփրուլուլուն*** (1879-1930), ***Ղուկասուս*** թաթար ***Ալի Հուսեյն զադեն*** (1864-1941), ***Մուստաֆա Շոկայև*** (Շոկա) (1890-1941), ***Սամիթի Սամին*** (1850-1904), ***Մեհմեդ Էմին Յուրդալգուն*** (1869-1944), ***Աբդուլա Բաթալ Թայմաս*** (1882/83-1969), ***Ջահիդ Հուսեյն Յալչին*** (1875-1957) և ուրիշներ[5]:

Այս ոհմակացանկը կարելի է համալրել նոր անուններով, սակայն եղածն էլ բա-

---

[1] ***Ջիյա Գյոք Ալփը*** (Մեհմեդ Ջիյա Գյոք Ալփը, Մարտ, 1876, Դիարբեքիր, Հոկտեմբեր 26, 1924, Ստամբուլ): Թուրքական սոցիոլոգ էր, իրավաբան, փիլիսոփա, գրականագետ, արձակագիր, բանաստեղծ: Նա հանդիսանում էր սկզբում պանիսլամիզմի գաղափարախոսներից, ապա (XX դարասկզբին) ***թրծված պանթուրքիստ,*** հետագայում Մուստաֆա Քեմալի գաղափարական հենարաններից մեկը որին Քեմալը նույնիսկ ձգտել է իրեն խորհրդական դարձնել: Նրա ***նացիոնալիստական, պանթուրքիստական*** աշխատությունները օգտագործվել են Երկրորդ աշխարհամարտի տարիներին իբրև պրոֆաշիստական սնունդ թուրք երիտասարդությանը: (Ջարմանքով կարող ես կարդալ *Ի. Լ. Ֆադեևայի* "От империи к национальному государству", Москва, 2001, աշխատությունը նվիրված Գյոք Ալփին, որտեղ թուրքին սիրահարված ռուս տիկինը կեղծում է փաստերը և հայ ժողովրդի, նույնիսկ սլավոնական ժողովրդի այդ թշնամուն դարձնում համաշխարհային մակարդակի մտածող, ոչ ավել և ոչ պակաս ***հումանիստ):***

[2] ***Ահմեդ Աղաև*** (Աղաօղլու) (1869, Արցախի ***Շուշի*** քաղաքում, 1939, Անկարա), հրապարակախոս, ազերիների երկրում դարձավ ***պանթուրքիզմի*** գաղափարաբաններից, հետո անցնելով Թուրքիա՝ դարձավ «Միություն և առաջադիմություն» կուսակցության ակտիվ անդամներից: Ավարտելով Պետերբուրգի համալսարանը հիմնավորվեց Բաքվում, դարձավ 1905 թվականի թուրք-հայկական ջարդերի գլխավոր կազմակերպիչներից մեկը. Կովկասում հայտնի էր ***«Հայկական տարրը» հիմնովին ոչնչացնելու քարոզիչներից գլխավորը:*** Ռուսական առաջին հեղափոխության պարտությունից հետո նա անցավ Ստամբուլ, ընդգրկվեց պանթուրքիստների շարքերում. Առաջին աշխարհամարտի տարիներին գործուն մասնակցություն ունեցավ հայկական ջարդերին, որի համար էլ 1919 թ. աքսորվեց Մալթա: Վերադարձին դարձավ Մուստաֆա Քեմալի խորհրդականներից, Ստամբուլում հիմնեց պանթուրքիստական կազմակերպություններից մեկը- ***«Թուրք օջախը»:*** Հայ ժողովրդի ամենակատաղի թշնամիներից էր:

[3] ***Յուսուֆ Ակչուրա*** (Ակչուրօղլու) (1876, Սիմբիրսկ, 1933, Անկարա), հրապարակախոս, ժուռնալիստ, ***պանթուրքիզմի գաղափարախոսներից:*** Միջնակարգ դպրոցն ավարտել է Ստամբուլում, բարձրագույնը Փարիզում: 1911 թ. ընտրվել է «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտկոմի անդամ, կազմակերպչական լայն աշխատանք է ծավալել հայկական ողբերգության ժամանակ, հրապարակային ելույթներով քաջալերել հայ ժողովրդի ջարդարարներին: Հետագայում աշխատել է Անկարայի համալսարանում պատմության պրոֆեսոր, ապա «թուրքական պատմության ընկերության անդամ», հետևաբար և դարձել ցեղասպանության խնդիրների կեղծարարներից մեկը:

[4] ***Իսմայիլ Մուրզա Գասպրինսկին*** (1851, Գասպրե ավուլ [illegible] Ստամբուլ), թաթարական նացիոնալիստ, հրատարակել է ***«Թերջուման»*** (Թարգմանիչ) կատաղի հայատյաց պարբերականը, ***Յուսուֆ Ակչուրայի*** և այլոց հետ մշակել է պանթուրքական գաղափարաբանությունը:

[5] ***Yacob M. Landau,*** Pan-Turkusm, London. 1995, p. 29-57. «Պանթուրքիզմը օսմանյան կայսրությունում» գլուխը:

վարար է, ցույց տալու պանթուրքիզմի աշխարհագրությունը, նրա գործունեության շառավիղը, մահացու վտանգավորությունն ոչ թուրք, հատկապես քրիստոնյա հպատակ այն ժողովուրդների համար, որոնք կանգնած էին թուրանիստների ճանապարհին՝ արևելյան աշխարհը նվաճելու պահին, թեկուզ և այսօր, թողնելով մյուս ազգերին, անդրադառնանք ***միայն հայոց խնդրին:***

Շահան Նաթալին «Թուրքերը և մենք» իր աշխատության էջերում, քննարկելով պանթուրքիզմի խնդիրները երեկ և նույնիսկ այսօր, այսպես է ընդհանրացնում. ***«Ի՞նչ կիասկանանք մենք թուրքիզմ եզրով: Թուրքիզմ մեզի համար կնշանակե Անատոլուի միացումը Ազրպեյճանի հետ՝ Հայաստանին դիակին վրայով»***[1]: Կամ ***«Թուրքիզմը ազգային այն ուխտն է, որ այսօր ավելի քան երբեք վճռորոշ կեցվածքով կանգներ է հայ ժողովրդի կողքին՝ արևելքեն ու արևմուտքեն և երկու պողպատյա բազուկներով գրկեր է հայ կմախքացած մարմինը*** (ընդգծումները մերն են- *Հ. Ղ.)»*[2]:

Պանթուրքիզմի գաղափարակիրների վարած ***բռնամահության քաղաքականության*** մերկացմանն են նվիրված Հրանտ Գանգրունու շրջանառության մեջ դրած մի շարք փաստեր, որոնք նա քաղել է հատկապես թուրքական աղբյուրներից: Բերենք դրանցից մի քանիսը[3]:

«1910ին Թալեաթ կըսեր Սելանիկի համագումարին... «Մենք ուզեցինք կեավուրը օսմանցի դարձնել և չկրցանք: ***Այժմ միակ միջոցը կմնա զենքով ճգմել զանոնք»:*** Ապա ժողովն ընդունեց կեդրոնածիգ ճնշողական քաղաքականություն՝ բանթուրքիզմի գործադրության ջարդի միջոցներով»[4]:

Սողոմոն Թեհլերյանի դատավարության ժամանակ, գերմանացի փաստաբան դոկտոր ***Վերթաուրը,*** Մեհմեդ Թալեաթի հասցեին ուղղում է ներքոհիշյալ մեղադրականը. «Թալաթը մէկն էր անոնցմէ որ թէեւ գինուորականի համազգեստ չի կրեր, բայց կաղամարի առջեւ նստած հրամաններ կը յղէ եւ ***գազանօրէն կը պաշտպանէ բռնութեան դրօշը:*** Ամբողջ ժողովուրդ մը տեղահան ընելու հրամանը ամէնէն հրէշային բանն է, որ կրնայ ծնունդ առնել միայն ռազմատենչ ուղեղի մէջ: Եթէ ինչպէս հոս ըսուեցաւ, Երիտ. Թուրք Կոմիտէն համոզուած էր, որ լաւ ժանտարմաները հեռացուած էին ու մնացեր էին միայն սինլքորները, այդ դէպքին իրաւունք չուներ տեղահանութեան հրաման արձակելու: Եթէ տեղահանութեան գործը յանձնեց անոնց՝ ուրեմն ինքն է պատասխանատուն հետեւանքներուն: Եթէ հայերը մինչեւ իսկ դաշնակցած ըլլային ուրիշ ժողովուրդներու հետ եւ դաւաճանած, Երիտ. թուրքերը այնու ամենայնիւ գիտէին, որ կային հազարաւոր կիներ, երեխաներ, որ այդ գործէն ո՛չ մէկ լուր չունէին, եւ հետեւաբար տեղահանութեան հրամանի առաջին պայմանը պիտի ըլլար խիստ կարգադրութիւն՝ հոգալու կիները, երեխաները եւ այրերը, որոնք կապ չունէին «դաւաճան»ներու հետ»[5]:

Դատավարության պրոցեսում բացահայտվեցին Թալեաթի կապերը պանթուրքիստների հետ, նրա մասնակցությունը ստեղծված ***«թուրք օջախներին»,*** վերջիններիս ազդեցությունը Թուրքիայի ներքին գործերի նախարարի վրա, հատկապես հայկական ջարդերի պահին:

1913 թ. Բայազետի մեջ խորհրդաժողով կայացավ, որը նախագահում էր Էնվերը,

---

[1] ***Շահան Նաթալի,*** Թուրքիզմը Անգորայեն Պաքու և թրքական օրենքթասիոն, Երևան, 1992, էջ 31:

[2] Նույն տեղում, էջ 33:

[3] ***Հրանդ Գանգրունի,*** Ցեղասպան իթթիհատը (1908-1923), Պեյրութ, 1994:

[4] Նույն տեղում, էջ 16:

[5] Նույն տեղում, էջ 17: Տե՛ս նաև՝ «Վերհիշումներ ըստ ***Սողոմոն Թեհլերյանի,*** գրի առավ ***Վ. Միրախորյան»,*** Պելկրատ, 1943, էջ 415:

մասնակցում էին պանթուրքիստներ Աղաևը, Ռասուլ Ջադեն, Թոփչի Բաշիևը: Նրանք քննարկում էին Կովկասի և Թուրքիայի թուրքերի միության հարցը. որոշվեց այդ միության ձևավորման գործողություններն սկսել անհապաղ, կանգ չառնելով ոչ մի դժվարության առջև[1]:

Հրանտ Գանգրունին շարունակում է. «1914ի հունուարին Թալաթի գլխաւորութեամբ փանիսլամական միթինկ տեղի ունեցաւ Կ. Պոլսոյ մէջ, ուր ճառեր արտասանուեցան Ռուսաստանի եւ Քրիստոնեաներու դէմ եւ առեւտուրի պոյքոթ յայտարարուեցաւ հայերու եւ յոյներու դէմ: Միթինկի աւարտին Թալաթ յայտարարեց, թէ - Թուրքիան Անատոլուի մէջ թոյլ չի տար եւ ո՛չ մէկ *եւրոպական վերահսկողութիւն:*

- Իսկ այժմ ուժեղ բանակ կը կազմուի Կովկասի սահմանին վրայ: Ըստ ռուսական աղբիւրներուն Պալքանեան դէպքերէն յետոյ (1912-1913) երիտ-թրքական կոմիտէն Ռուսաստանի մէջ բացած է շատ մը ընդյատակեայ բաժանումները, որոնք ցարդ (1914) կը գործեն Կովկասի մէջ:

- Անոնց բրոբականտը թափանցած է մինչեւ Երեւանի նահանգը, որ տեղական թաթարներուն կոչ կ'ուղղէին ռուս-թրքական պատերազմի պարագային պաշտպան կանգնիլ *հաւատքին:*

- Երիտ Թուրքերը իսլամութիւնը դաւանող բոլոր ժողովուրդները թուրքերու գլխաւորութեամբ մէկ պետութեան մէջ *միաւորելու կը ձգտէին:* Յարձակողական ոգիով լի, այդ ծրագրով լի, պէտք է ստեղծուէր այսպէս կոչուած *մեծ թուրան* ծագէ ծագ, *Պոլսէն Չինաստան, Հնդկաստան, Սիպերիա:*

Ահմէտ Աղաեւը կը գրէր. «Չկայ աւելի դժուար գործ, քան որոշել ֆանտաստիկօրէն ընդարձակ եւ հպարտ թրքական աշխարհի իսկական սահմանները»:

Այդ աշխարհը բանթուրքիստ Աբչուրա Օղլու Եուսուֆին համար - *Իր մէջ պիտի առնէ Խրիմը, Քազանը, Բաշկիրիան, Խազախստանը, Թիւրքմէնիստանը, Սիպերիան եւ այլն: Ետիպէ Խալիտը կը յայտնէր, Թէ Հայաստանն ու Վրաստանն ալ կը միացուին անպայման «Միացեալ թրքական պետութեան»*[2]:

Պանթուրքիստների գաղափարաբանությանը վերաբերող «ուսմունքը» պետական մակարդակի բարձրացնելու, կայսերահպատակ ժողովուրդներին *համաձուլելու, թուրքացնելու,* եթե չհաջողվի *ֆիզիկապես* ոչնչացնելու պատմության հիմնավոր ու մանրամասն շարադրանքին է նվիրված *Զարեվանդի (Զավեն Նալբանդյանի)* կարևորագույն աշխատությունը[3]:

Նա բերում է պանթուրքիստների թևավոր, սակայն ահավոր այն խոսքը, թե. *«Թուրքիան թուրքերինն է»,* հետևաբար մյուս ազգերը պետք է թուրքանան, այսինքն՝ ոչ միայն իսլամն ընդունեն, այլև նրանց լեզուն, սովորույթները դառնան թուրքական: Նա ապա հրապարակում է «Միություն և առաջադիմություն» կուսակցության ծրագրային փաստաթուղթը *«թուրքչիության վերաբերյալ»,* այն է. *«Քրիստոնյա ըլլան թե իսլամ, մերինեն հիմնովին տարբեր մշակոյթներ և դարավոր անցյալ ունեցող, մերինին ուղղակի հակընդդեմ ձգտումներ ունեցող ժողովուրդներեն հայրենասիրություն սպասել ոչ միայն ծիծաղելի, այլև վտանգավոր է: Անոնք չեն կրնար մեր իդեալներուն, մեր նպատակներուն ծառայել, մեզի հետ քալել, մեզի հետ նույնանալ: Մե՞նք պիտի երթանք անոնց ճամփեն: Ո՛չ, այդ մեզի համար, որպես թուրք, մահ է:*

Ամեն բանե առաջ ուրեմն, Թուրքիա պետք է թրքանա:

---

[1] *Հրանդ Գանգրունի,* նշված աշխատությունը, էջ 25:

[2] Նույն տեղում:

[3] *Զարեվանդ,* Միացյալ անկախ Թուրանիա, Երևան, 1993:

Թուրք մտավորականը պետք է թրքացնե իր ժողովուրդը, բնական ու բնազդական թրքության վրա պատվաստե բուռն, գիտակից թրքություն:

Ասոր համար ան պետք է ստեղծե ազգային մշակույթ:

Իսկ կառավարությունը պետք է թրքացնե երկիրը: Ան պետք է վճռապես փոխե իր քաղաքականությունը, հրաժարի օսմանցիություն խաղալե. դադրի շփոթելե իսլամը թուրքին հետ: ***Ան պետք է կոթնի բացառապես թուրք տարրին վրա և բացառապես ուժ տա անոր: Մյուս տարրերը գոյություն չունին իբրև ուրույն ազգեր, անոնք իրավունքներ չունին: Պետք է թրքանան կամ կորսվին: «Օսմանյան ազգ» չկա. մեկ ազգ կա, մեկ ազգ պիտի ըլլա ասկե վերջ Թուրքիո մեջ և ա՛յն թուրքն է: Ա՛յս է թուրքչիությունը»***[1]:

1912 թ. Ստամբուլի սրճարաններից մեկում, ժամանցի պատրվակով, հավաքված են եղել թուրք բարձրաստիճան մի շարք սպաներ, որոնց խոսակցության նյութն էր հայ-թուրք փոխհարաբերությունների խնդիրը: Ջրույցին տոն էր տալիս շուշեցի պանթուրքիստ ***Ահմեդ Աղաևը:*** Բաքվում հայ-թաթարական ջարդերը կազմակերպելուց, հայոց արյունից չկշտացած, նա տեղափոխվել էր Թուրքիայի մայրաքաղաքը և սատար էր կանգնում թուրք ջարդարարներին, նրանց «գաղափարական սնունդ» տալիս: Աղաևի զրուցակիցն էր դոկտոր ***Կարաբեքովը,*** այսինքն՝ մեկ այլ պանթուրքիստ: Բերենք նրանց խոսակցության սղագրությունը. «ՏՕՔԹ. ՔԱՐԱՊԵՔՈՎ.- Օսմանեան պետութեան ապագան եւ մեծութիւնը ապահովելու համար պէտք է որ ***Հայերը եւ Յոյները չապրին այս երկրում:*** Քանի այդ երկու ժողովուրդները ապրում են մեր երկրի սահմաններում, մեր պետութիւնը միշտ բաժանման վտանգի է ենթարկուած:

ՏՕՔԹ. ՃՈՎՏԷԹ.- Ի՞նչպէս կարելի է մօտ 7 միլիոն ժողովուրդ զրկել Թուրքիայում ապրելու իրաւունքից եւ ավելացրեց-- Գուցէ յարգելի Տօքթ.ը առաջարկում է ***գլխովին կոտորել հայերին էլ, յոյներին էլ:***

ԱՂԱԵՒ.- ***Այդ ամենալաւ միջոցը կը լինէր իսլամ այս պետութիւնը եւ երկիրը հայերի ու յոյների ներկայութիւնից ազատելու:***

Դեռ մի քանի օր առաջ տիրապետող կուսակցութիւնը՝ Իթթիհատ վէ Թէրաքքի հայ յեղափոխականների օգնութեան դիմել էր Սահմանադրութիւնը փրկելու համար, եւ ստացել էր այդ օգնութիւնը, դեռ մի քանի օր առաջ հայ աղջիկները՝ իրենց բարի անունն ու կեանքը վտանգի դնելով՝ որպէս գթութեան քոյրեր կամ զէնք տեղափոխողներ՝ իրենց աշխատանքը միացրել էին իրենց եղբայրների աշխատանքին, դեռ մի քանի օր առաջ Ազատարար բանակի յաղթանակը հայ եւ թուրք եղբայրօրէն միացած էին տօնել, եւ, ահա այսօր, Կովկասից եկած երկու հայակերները՝ Ազատարար բանակի սպաների եւ թուրք մտաւորականների ներկայութեամբ ***խօսում են հայերին եւ յոյներին ոչնչացնելու մասին...:***

Ապշեցուցիչ էր: Գոնէ այդ օրերին:

Տօքթ. Ճովտէթը կամեցաւ նիւթը փոխել, ես միջամտեցի եւ հարցրի.

- Բացի կոտորածից կա՞յ արդեօք ուրիշ միջոց հայերին եւ յոյներին միջամտելու:

Աղաեւը դրական պատասխան տուաւ:

Մի սպայ կամեցաւ իմանալ այդ միջոցը:

Շուշեցի հայակերը պատասխանեց.

- Պէտք է քանդել նրանց ընտանիքը, նրանց ընտանեկան կազմակերպութեան հիմքերը: Այդ երկու ժողովուրդների, մանաւանդ հայերի ամրութեանց միջնաբերդը ընտանիքն է: Եթէ քանդուի այդ միջնաբերդը, բոլոր նրանց ամրութիւնները կը քան-

[1] ***Զարեվանդ,*** Միացյալ անկախ Թուրանիա. Երևան, 1993, էջ 60-61:

դուեն եւ նրանց կոտորելու պէտք չի զգացուիր, որովհետեւ ինքնաբերաբար կ'ոչընչացվեն որպէս ազգային միութիւններ»[1]:

Պանթուրքիստների հայակուլ քաղաքականությունն իր վրա էր հրավիրել նաև Մեծ Բրիտանիայի ապագա վարչապետ, ***Ուինստոն Չերչիլի*** ուշադրությունը: Նա այդ տարիներին զինվորական էր, քիչ անց ղեկավարեց ***Դարդանելի օպերացիան,*** հետագայում էլ այդքան դրական դեր չկատարեց հայոց ճակատագրական խնդիրների լուծման պահին (Կարսի վերադարձի հարցը քննելիս նա հակադրվեց Ստալինին և տապալեց այն): Համենայն դեպս լսենք Չերչիլին. «Պատերազմը իրենց վրայ հրաւիրեց (Հայերուն.- Հ. Գ.) չարիքի նոր շարք մը ամբողջ պալքանեան պատերազմներէն ետք: Փանթուրքիստները մէկդի դրին «օսմանացում»ն ու «թրքացում»ը որպէս միջոց իրենց պետութիւնը վերստեղծելու: Անոնք իրենց երկրին ոչ-թուրք ցեղերուն կը վերագրէին մասամբ այն աղետները, որոնց ենթարկուած էր թրքական կայսրութիւնը: Բիրտ բայց հասկնալի լեզուով մը անոնք եզրակացուցին թէ այս ցեղերը «արժանի չէին նկատի առնուելու իսկ. բեռ ու արգելք էին. ***թող գրո՛ղը տանէր զանոնք»:*** ...Տրամաբանական ոչ մէկ կասկած կայ, թէ այս ոճիրը ծրագրուած եւ գործադրուած էր քաղաքական պատճառներով: Պատեհութիւնը ներկայացած էր թրքական հողը մաքրելու քրիստոնեայ ցեղէ մը որ դէմ էր թրքական բոլոր փառասիրութիւններուն, ունէր ազգային ձգտումներ ու տեսիլներ, որոնք կրնային գոհացուիլ Թուրքիոյ ի վնաս միայն, եւ որ աշխարհագրականօրէն կը գտնուէր թրքական եւ կովկասեան իսլամ ժողովուրդներու միջեւ: Կրնայ ըլլալ որ անգլիական յարձակումը Կալիփոլիի թերակղզիին վրայ հրահրած ըլլայ անողոք կատաղութիւնը թրքական կառավարութեան: ***Փանթուրքիստները կը խորհէին որ եթէ Պոլիսը իյնար եւ Թուրքիան կորսնցնէր պատերազմը՝ այդ պարագային իսկ հայերու բնաջնջումը պիտի ուներ իր հետեւանքները եւ մնայուն առաւելութիւն մը ապահոված պիտի ըլլար թուրք ցեղին ապագային համար»[2]:***

Եվ վերջապես, այսօրվա թուրքերը, այսինքն պատմաբաններն ու կառավարող բարձրաստիճան այրերը (նախագահ, վարչապետ, արտգործնախարար) փաստեր են ուզում, որ հայասպանությունը եղել է կազմակերպված, պետական մակարդակով: Մի՞թե կարելի է մտածել, այո միայն մտածել, որ մի պետություն կարող է իր սեփական ժողովրդին ***«գազավաթ»- սրբազան պատերազմ*** հայտարարել և ամբողջովին, առանց խտրականության, մեծին ու փոքրին, կարողին ու անկարողին, կնոջն ու երեխային, հիվանդին ու առողջին, բոլորին-բոլորին սրի քաշել: Պատմությունը նման օրինակ մինչև օրս չի տեսել: Եվ որպեսզի լռեն թուրքերը, ամաչեն, եթե ընդունակ են ամաչելու, ստիպված ենք ընթերցողի ուշադրությանը արժանացնել ***1914 թ. հոկտեմբերի 11-ին Շեյխ-ուլ-իսլամ Մուսա Քյազիմի*** կոչը, «զառանցանքը», հպատակ «այլահավատներին», «անհավատներին», այսինքն հայերին, հույներին և սլավոններին սրբազան պատերազմ հայտարարելու վերաբերյալ (ընդարձակ լինելու համար ներողություն ենք խնդրում), որը թուրքերենից թարգմանել և իր աշխատության էջերում հրատարակել է ***Հայկազն Գ. Ղազարյանը***[3]:

Ահա այդ փաստաթղթերը. ***«Ժամանակը եկած է կազմակերպելու գաղտնի եւ***

---

[1] ***Գ. Եղիկյան,*** Ուսանողաց տարեգիրք, Պեյրութ, 1937, էջ 71-79: Տե՛ս նաև ***Հրանդ Գանգրունի,*** նշված աշխատությունը, էջ 90-91:

[2] ***Մեջբերում ենք*** «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի» գրքից, Պեյրութ, 1965, էջ 1040-1041: Անգլերենից թարգմանությունը կատարել է ***Գերսամ Սիարոնյանը:*** Տե՛ս նաև ***Եղիկ Ճերեճեան,*** Պանթուրքիզմ, Պեյրութ, 1998, էջ 32:

[3] ***Հայկազն Գ. Ղազարեան,*** Ցեղասպան թուրքը, Պեյրութ, 1968, էջ 137-139, 178: Այս վավերագիրը վերահրատարակել են ***Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան,*** Հայկական հարցը և Հայոց ցեղասպանության պատմություն, հատոր երկրորդ, գիրք առաջին, Երևան, 2001, էջ 384-389:

հրապարակային ընկերություններ, սրբազան պատերազմ յայտարարելով, մաքրելու համար երկրին անբաղձալիները եւ յաղթանակ տանելու անկախութեան ուժով...

Սրբազան պատերազմը պարտականութիւն մըն է դարձած...

Անհավատներու սպանութիւնը պարտականութիւն մըն է, պետք է ըլլայ գաղտնի կամ հրապարակային: Կորանը ըսած է. «Անհավատները բռնեցեք, սպանեցեք, ուր որ գտնեք: Ձեր ձեռքին մեջ գտնուողին դեմ գերագույն ուժ ի գործ դրեք...

Թուրքերն անոթի են եւ կը տառապին, իսկ անհավատները լիութեան եւ պերճանքի մեջ կապրին: Ժամանակն է իւրաքանչիւրին առնելու մեկ ձեռքի մեջ՝ սուր, միւս ձեռքի մեջ՝ հրացան եւ գրպաններուն մեջ՝ մահացու գնդակներ»»[1]:

Պանթուրքիզմը, ավելի կոնկրետ, պանթուրանիզմն իր «գերագույն աստիճանի» վրա էր արդեն և նման մարդակուլ բարբաջանքներ հրապարակողները չէին մտածել իհարկե, որ մի օր դրա համար աշխարհի գոնե առաջավոր մարդկությունը հաշիվ է պահանջելու, եթե ոչ իրենցից, ապա իրենց զավակներից և թոռներից: Եվ այդ ժամանակն այսօր է... հասունացել է, ուշացել է...[2]

Այսպիսով՝ երիտթուրքերը, գաղափարական զենք դարձնելով պանթուրքիզմը, փաստորեն, լրջորեն նախապատրաստվում էին արևմտահայության ցեղասպանությանը Առաջին աշխարհամարտից դեռևս շուրջ *հինգ տարի առաջ:*

---

[1] *Հայկազն Գ. Ղազարեան,* Ցեղասպան թուրքը, էջ 174:

[2] *Տոքտ. եղիկ Ճերեճեան,* Փանթուրքիզմ, Պեյրութ, 1998, էջ 33-34:

Գլուխ երկրորդ

Թեշքիլաթի մախսուսա
Teskilat-I Maxsusa
(հատուկ կազմակերպություն)

Մեկ անգամ չէ, որ Հայոց հողը կաբաևում է հայոց արյամբ, բայց պատերազմը հիշեցնում էր ահռելի չափերի հասնող ջարդերի պրոցես, երբ մարդ զազաևն իր ևմաևին հոշոտել էր, բողևելով միայն անթաղ ոսկորևեր: Ջարդերի ժամանակ բուրքերից ևր չևն մևացել նրանց բարեկամևերը-գերմանական իմպերիալիստևերը:

ՎԼԱԴԻՄԻՐ ԳՈՐԴԼԵՎՍԿԻ

ԱՌԱՋԻՆ աշխարհամարտի տարիներին հայ ժողովրդի նկատմամբ երիտթուրքերի կատարած ջարդարարությունը *գենոցիդ էր - ցեղասպանություն, արմենոցիդ էր - հայասպանություն:* Այն *կազմակերպված հանցագործություն էր*՝ ուղղված ոչ միայն աշխատասեր ու շինարար, ստեղծագործ ու տաղանդավոր մի ժողովրդի, այլ նաև *հանուր մարդկության դեմ*[1]:

Աշխատության նախորդ բաժիններում մենք այդ մասին խոսել ենք, սակայն անհրաժեշտ ենք համարում ընթերցողին մեկ անգամ ևս հիշեցնել, թե *վերջերս ևս,* միջազգայնագետ-օտարների գրչով ինչպես է բնութագրվում գենոցիդն ընդհանրապես, արմենոցիդը մասնավորապես: Դրանց թիվը մեծ է, սակայն եղածներից առանձնացնենք մեկը, որն ավելի դիպուկ բնութագրություններ է տալիս ցեղասպանությանը: «*Գենոցիդ.* գործողություններ, որոնք կատարվում են ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խումբ, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակիորեն ոչնչացնելու մտադրությամբ. քրեական ծանրագույն հանցագործություն: *Որպես գենոցիդ են որակավորվում հետևյալ գործողությունները. նման մի խմբի անդամների սպանությունը. նման խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ խանգարումներ պատճառելը. որևէ խմբի համար կանխամտածված այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնք հանգեցնելու են նրա լրիվ կամ մասնակի ոչնչացմանը, միջոցներ, որոնց նպատակն է կանխել ծննդաբերությունը նման մի խմբի միջավայրում, երեխաների բռնի հանձնումը մարդկային մի խմբից մյուսին»*[2]:

[1] *«Գենոցիդի դասական օրինակ»* ենթավերնագրի տակ այս հարցերը քննել է հմուտ արևելագետ, ցեղասպանության մասին հրատարակած մի շարք աշխատությունների հեղինակ, *Ռուբեն Սահակյանը:* Տես «Ցեղասպանության պատմությունից» (Երևան, 1990, էջ 23-24) նրա աշխատությունը: Տես նաև "Что есть что в мировой политике. Словарь-справочник", Москва, 1987, стр. 91-92:

[2] "Что есть что в мировой политике. Словарь-справочник", стр. 91.

Հատկանշականն այն է, որ աշխատության հեղինակային և հեղինակավոր կոլեկտիվը ոչ միայն չի շրջանցում Հայոց ցեղասպանության փաստը, այլև շեշտադրում է հենց այդ եղելությունը: Այնտեղ ասված է, որ. ***«Գենոցիդի դասական օրինակ է հանդիսանում մեկ ու կես միլիոն հայերի բնաջնջումն օսմանյան կայսրության իշխանությունների կողմից, որոնք օգտվեցին Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից*** (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)»[1]:

Մեծ ճանաչում գտած ***«Պրոգրես»*** հրատարակության շրջանառության մեջ դրած բազմաթիվ փաստերին զուգընթաց խոսք է ասվում նաև ՄԱԿ-ի 1948 թվականի դեկտեմբերի 9-ին ցեղասպանության մասին կայացրած և ***դատապարտող որոշման մասին:*** Հատուկ ընդգծվում է, որ ցեղասպանությանը վերաբերող միջազգային ատյանների ընդունած ***որոշումները վաղեմություն չեն ճանաչում:***

Խնդրի արծարծումը սակայն դրանով չեզրափակվեց: 1987 թ. հունիսի 18-ին ***Եվրոպական պառլամենտը*** մեկ անգամ ևս դատապարտեց հայերի ցեղասպանությունը: Այդ որոշման մեջ ասված է. «Եվրոպական պառլամենտը... այն կարծիքին է, որ օսմանյան կայսրության տարածքում հաստատված հայերի հետ կապված 1915-1917 թթ. ***ողբերգական դեպքերն իրենցից ներկայացնում են գենոցիդ՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948-ի դեկտեմբերի 9-ին հավանության արժանացած գենոցիդի հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու կոնվենցիայի իմաստով»*** [2]:

Ճիշտ է նկատվում, որ ցեղասպանության մասին կայացրած բոլոր որոշումների հիմքում ընկած են ***Ռաֆայել Լեմկեի*** մշակած սկզբունքները, ըստ որոնց ***գենոցիդն ազգային-կրոնական կամ ցեղային խմբի համակարգված և ծրագրված ոչնչացումն է այնպիսի գործողությունների միջոցով,*** որոնք ուղղված են խմբի որպես այդպիսինի գոյատևման համար անհրաժեշտ հիմքերի խարխլմանը[3]:

Լևոն Մկրտչյանը հետազոտել է նաև եվրոպական այն իրավագետների աշխատությունները, որոնք նվիրված էին ցեղասպանության բնութագրությանը: Դրանք էին ***Փեթեր Տրոստի, Իրվինգ Հորովիցի, Լյուսի Տալիտոլովիչի, Լեո Քուփերի, Իսրայել Հառնի*** և այլոց գործերը: Լ. Մկրտչյանը եվրոպացիների հաղորդած փաստերին, դրանցից հանած եզրահանգումներին կոթնած, անում է կարևոր մի շարք ընդհանրացումներ:

1. XX դարի բոլոր ցեղասպանություններն ունեն գաղափարախոսական բնույթ և, ինչպես իրավացիորեն մատնանշում են մասնագետները, այս ոճրագործությունները կատարել են առանց հաշվի առնելու սոցիալական և տնտեսական այն կորուստները, որոնք կրում են ոճիրն իրագործող հասարակությունը:

2. Այդ ցեղասպանությունները նպատակ ունեին պահպանել տվյալ գաղափարախոսությունն ու հասարակական կառուցվածքը և իրականացվում են որպես պետության քաղաքականություն: Հորովիցի բնութագրությամբ դա ***«անմեղ մարդկանց համակարգված և հետևողական ոչնչացումն է՝ պետության դիվանագիտական կառույցի կողմից»:***

3. Ցեղասպանությունը, հետապնդելով կենսաբանական ու ընկերային վերարտադրությունը խափանելու գլխավոր նպատակ, նաև տնտեսական, քաղաքական և սոցիալական խմբերի պետականորեն ղեկավարվող ոչնչացումն է[4]:

---

[1] "Что есть что в мировой политике. Словарь-справочник", стр. 91-92.

[2] «L'espérance retrouvée. Le génocide arménien et le Parlement européen». Paris, 1988, p. 3.

[3] ***Լևոն Մկրտչյան,*** Հայոց ցեղասպանությունը. «Ազդակ» բացառիկ համար, Եղեռնապատում, Բեյրութ, 2000, 24-ը ապրիլի, էջ 67: ***Մեծ եղեռնի*** 80-ամյա տարելիցին նվիրված մեկ ամբողջ համար:

[4] Նույն տեղում:

Ենթադրում ենք, որ ընդհանուր և ընդհանրացնող, տեսական վերոհիշյալ սկզբունքները կասկած չեն թողնում, որ XIX դարավերջին հայ-թուրքական հարաբերությունները հասնում էին ***բնականոն վերջակետի,*** և սկսվում է ցեղասպանության կեսհարյուրամյա շրջափուլը՝ լի ողբերգությամբ, արցունքով ու արյունով: Այդ պրոցեսից այս գլխում առանձնացնում ենք ***Հատուկ կազմակերպության հայասպան գործողությունները՝ նպատակ ունենալով*** մեկ անգամ ևս ***ապացուցելու,*** թե ***արմենոցիդը իրականացվել է պետության կողմից կազմակերպված քաղաքականությամբ, հետևաբար զուր են թուրքերի կողմից հրաժարականի ապարդյուն ճիգերը:***

Թուրքիայում գործադրվել են քաղաքականության առանձնահատուկ սկզբունքներ, որոնք յուրահատուկ են եղել ***միայն*** այդ երկրին, կիրառվել են ***միայն*** պետական նման համակարգում: Դրանք բռնապետական վարչակարգի կեսհազարամյա ուծացման, բռնի համածուլման, մասնակի ջարդերի պրակտիկան էր՝ կիրառված հպատակ ժողովուրդների, մասնավորապես հայ ժողովրդի նկատմամբ: Այս բնագավառում սուլթանիզմն անմրցակից է:

Համաշխարհային պատմության ընթացքին քիչ թե շատ տեղյակ մարդիկ առանց դժվարության կարող են նկատել, որ մարդկությունը քայլ առ քայլ խորացել է գիտության բազմաթիվ բնագավառներում, այնպես, որ քարե անվարժ գործիքներից, պարզունակ բրիչից հասել է ատոմային էներգիայի և արբանյակային տեխնիկայի արարմանը: Թուրքն ու Թուրքիան գիտության բոլոր բնագավառների համար մնացել են ***անպիտան,*** սակայն նրանք մշակել են ու կիրառել այնպիսի սկզբունքներ, որոնց կիրառման գործում ***անմրցակից են,*** հիմնարարը ***ունենալով*** իբրև աշակերտ, իրենց գերազանցող ***հիտլերյան ֆաշիստներին:***

Դա մարդկանց ոչնչացնելու տեխնիկան է, կիրառման մեթոդները, գործողությունների ընդգրկած լայն շառավիղը, դաժանությունների աներևակայելիությունը, որոնք մշակվել են, կատարելագործվել հարյուրամյակների ընթացքում: Զարմանալին ու զարհուրելին այն է, որ որքան հպվում ենք նոր դարաշրջանին, գիտնականների բնորոշմամբ՝ քաղաքակրթության հարյուրամյակին, այնքան տարածուն է դառնում գենոցիդը Թուրքիայում, հետագայում նաև Գերմանիայում: Հետևաբար խորապես սխալվում են հին ու միջնադարի նույնիսկ հանճարեղ այն մտածողները, փիլիսոփաները ու քաղաքագետները, որոնց կարծիքով ցեղասպանությունները, ազգերի մասնակի կամ կոլեկտիվ ոչնչացումները, ջարդող ազգի ու նրա գլխավերևի պետական կառույցի ***հետամնաց, բարբարոսական մակարդակի վրա կանգնած լինելով էր պայմանավորված:*** Պատմությունը հակառակն է հուշում: Թուրքիան ու թուրքերը ինչքան «կրթվում էին», այնքան անտանելի էին դառնում իրենց արարքների մեջ:

Դեպքերի զարգացման ընթացքին խորությամբ չտիրապետող ընթերցողին ճիշտ կողմնորոշելու նպատակով բերենք ***մի երկու փաստ միայն:*** Աշխատության նախորդ գլուխներում մենք հանգամանորեն անդրադարձանք թուրքական զորքի մի տեսակի ***ենիչերիների,*** ժամանակի իմաստով ***աներևակայելի դաժանությունների ներկայացմանը:*** Նրանց բռնարարքները գնալով անտանելի դարձան ոչ միայն քրիստոնյա հպատակ ազգերի, այլև նույնիսկ բուն թուրքերի, սուլթանների, Բ. Դռան ծառայողների հանդեպ:

XVIII-XIX դարի առաջին քառորդի սուլթանները, երկար խորհելով, նախապատրաստվելով, վերջապես դիմեցին վճռական քայլերի: 1826 թ. հուլիսի 15-ին ***Մահմուդ II*** սուլթանի հրամանով պետական զորքի մի մասի ծեռքերով մորթվեցին, ջրախեղդ արվեցին, վերջապես սրակոտորվեցին ենիչերիները՝ ***մինչև վերջին մարդը:***

Քրիստոնյաները մի պահ շունչ քաշեցին և կարծեցին, թե իրենք ազատվեցին այդ չարիքից ու չարագործներից:

Նրանք չէին սխալվում: «Թանզիմաթի» կիրառման կեսհարյուրամյակում լիբերալ որոշ օրենքներ մշակվեցին, որոնք երկիրը շեղում էին նախորդ հարյուրամյակների բռնապետական գործընթացից և բուրժուականանալու հոտ էր փչում արդեն, ***սահմանադրություն ու պառլամենտ էին ձևավորվում:*** Այն անհարիր էր, անհավատալի՝ գլորվելով վայրէջք կատարող թուրքերի ու Թուրքիայի համար: «Սխալն ուղղեց Աբդուլ Համիդը», մեծ մարդասպանը, պատմության մեջ մտած ***կարմիր***, այսինքն ***արյունարբու*** սուլթան համանունով:

Վրա հասավ «զուլումի» տասնամյակը: Հոգեկան հիվանդ սուլթանը որոշեց «թեթևացնել» հայերի թիվը Հայաստանում: ***Անմիջապես հիշողության մեջ վերականգնվեցին ենիչէրիները:***

1. Ենիչէրիներն այն ժամանակ կազմավորվում էին ***քրիստոնյա երեխաներից***՝ նրանց դարձնելով մահմեդական, դաստիարակում իբրև ***մարդ - գազան,*** և երբեմն չիմանալով, այդ նույն գավառից բռնազավթված, բայց հասունացածների միջոցով հաշվեհարդար էին տեսնում նույնիսկ իրենց ծնողների հետ:

Համիդն իր կատարած հայկական ջարդերի համար այս դեպքում օգտագործեց ***քրդական աշիրեթներին,*** փոքր թվով չերքեզներին: Կազմվեց 80-100 հազարի հասնող «համիդիեների» ոհմակը, որոնց ձեռքերով և կազմակերպեց շուրջ ***չորս հարյուր հազարի*** հասնող հայերի կոտորածը, ***առաջին ցեղասպանությունը:***

2. Առաջին դեպքում հայերի ձեռքերով ոչնչացնում էին հայերին: Երկրորդ դեպքում քրդերի ձեռքերով ոչնչացնում էին հայերին, առաջնորդվելով այն սկզբունքով, թե՝ եթե սպանեն, թուրքերի հակառակորդներին են սպանում, եթե սպանվեն, թուրքերի հակառակորդներն են սպանվում:

3. Ջարդերի ընթացքում գործադրված դաժանությունները կիրառելիս, «համիդիեները» գերազանցում էին ենիչէրիներին, այսինքն՝ ինչքան մոտենում էին քաղաքակրթության դարաշրջանին, այնքան անտանելի էին դառնում զոհերի նկատմամբ կիրառված աներևակայելի մեթոդները:

4. Ե՛վ ենիչէրիները, և՛ «համիդիեները» պահվում էին, զինվում, ֆինանսավորվում պետական միջոցներով, նրանց տրվում էին անսահմանափակ իրավունքներ՝ «գյավուրներին» - քրիստոնյաներին կոտորելու դեպքում: Վարձատրությունը՝ զոհերի ունեցվածքի բռնագրավումն էր, նրանց կանանց և աղջիկների հետ ինչպես ուզենալ վարվելն էր: Սակայն քրդական աշիրեթները, ժամանակի ընթացքում ավելի սանձարձակ դարձան, հարստացան այնքան, որ շատ դեպքում Բ. Դռան հետ այլևս հաշվի չէին նստում, այսինքն՝ թագավորներ էին թագավորության մեջ:

5. Ենիչէրիները ոչնչացվեցին մեկ օրում: «Համիդիեներն» իրենց գործն ավարտելուց հետո, իհարկե, ոչ թե Համիդի, այլ երիտթուրքերի ձեռքերով, իբրև զորամիավորումներ, լուծարվեցին, ժամանակավորապես սահմանափակվեցին նրանց իրավունքները, սակայն հեռամետ նպատակներով պահվեցին, որպեսզի օգտագործվեին առաջիկա ցեղասպանության ժամանակ:

6. Տեսնում եք Թուրքիայի քաղաքական պատմությունը. սեփական ժողովրդին, այսինքն՝ հպատակ այլազգիներին իրար դեմ հանելու, մասնակի, ապա զանգվածային ջարդերի կազմակերպման գործադրություն է, ցեղասպանության արարողություն է՝ ***կազմակերպված, կանոնակարգված, պետական մակարդակով կիրառված:***

Քրիստոնյա հպատակ ազգերի, հատկապես հայ քաղաքական կուսակցությունների զորակցությամբ իշխանության գալու առաջին իսկ ամիսներից, նույնիսկ առաջին իսկ շաբաթներից, «Միություն և առաջադիմություն» կուսակցության պանթուր-

քիստական ղեկավարները մտահոգված էին թուրանիզմի հաղթարշավով, գործում էին ***մեկ ազգ մեկ պետություն կարգախոսով:*** Ցեղասպանությունը ծրագրվում էր նրանց գաղտնախոսությունների ժամանակ, և մտահոգությունը մեծ էր այդ ***«համարձակ ծրագիրը»*** իրողության վերածելու պատճառով:

Երկրում ***կուսակցական դիկտատուրա*** հաստատած երիտթուրքական ***քառյակը*** (Թալեաթ, Էնվեր, Ջեմալ, Նազըմ), հետազոտելով Թուրքիայի պատմության հեռավոր և մոտավոր անցյալը, գերադասեց ***ենիչերիներ-համիդիեներ*** զորախմբերի նմանությամբ, ձևավորել զինվորական մի նոր կառույց, որի ձեռքերով կարողանար ոչնչացնել մի ամբողջ ժողովրդի:

Այդ կառույցը ***Թեշքիլաթի մախսուսան (Հատուկ կազմակերպություն)*** էր, որի հետ էին կապված հայ ժողովրդի ցեղասպանության իրականացման ամբողջ հույսերը[1]: Թուրք պատմաբան ***Սուատ Պարլարն*** ուղղակի նշում է, որ. ***«Բռնագաղթեցման մասին օրենքի իրականացման պարտականությունը դրված էր Teskilate-i Mahsusa կազմակերպության վրա, որն այդ պահին գլխավորում էր Անատոլիայի թուրքացման գործընթացը»***[2]: Նրան լրացնում է մեկ այլ թուրք պատմաբան, ***Թաներ Ակչամը,*** գրելով. ***«Անատոլիայի ոչ թուրք ժողովուրդների ոչնչացման կարևոր կետերից մեկի կենսագործելու պարտականությունը դրված էր Teskilate-i Mahsusa վրա, որը գործում էր Արևելյան Անատոլիայում»***[3]: Թուրքերի նման, ուղղակի խոստովանությունը, իրենց մեղքն իրենց վիզը վերցնելու պարագան, հայ պատմաբաններիս հարկադրում է քիչ ավելի հանգամանորեն բացահայտել հայասպան վերոհիշյալ կազմակերպության գործունեության թեկուզև մանրամասները:

Անշուշտ, անհետաքրքիր չէ, թե երբ է ձևավորվել այդ կազմակերպությունը և ինչու հատկապես այդ թվականին: Թուրքական սկզբնաղբյուրներում բազմաթիվ վավերագրեր են պահպանվել «Միություն և առաջադիմություն» կուսակցության գաղտնի գործունեության մասին, հատկապես 1909-1911 թվականներին: Արսեն Ավագյանը, հենվելով վերոհիշյալ փաստերի վրա, ցույց է տվել, որ 1909-1912 թվականներին, ապա նաև բալկանյան պատերազմների ժամանակ, օսմանյան ռազմաճակատում գործել է մարդաշատ մի կազմակերպություն, որն իբրև ծխածածկույթ իր վրա է վերցրել ***«Ֆիդայիների կազմակերպություն»*** անվանումը[4]:

---

[1] Թեշքիլաթի մախսուսայի մասին ստեղծվել է ծավալուն գրականություն, հրապարակվել են բազմաթիվ ու նորահայտ վավերագրեր: Թվարկենք դրանցից մի քանիսը՝ կարևորները, որոնք օգտագործել ենք այս գլուխը շարադրելիս: ***Արամ Անտոնյան,*** Մեծ ոճիրը, Պոսթըն, 1921, էջ 276-304 (թուրքական վավերագրեր): ***Գրիկեր,*** Եոզղատի հայասպանության վավերագրական պատմությունը, Նյու Յորք, 1980, էջ 215-263 (գլուխ ԺԳ, երկու տեսակ Թեշքիլաթի մախսուսա): ***Հայկազն Գ. Ղազարեան,*** Ցեղասպան թուրքը, Պէյրութ, 1968, էջ 50-61 (Թեշքիլաթի մախսուսա): Պրոֆ. ***Վահագն Տատրյան,*** Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, Պայքար, 1995, էջ 127-140: (Հատուկ կազմակերպությունն իբրև հայկական ցեղասպանության գլխավոր գործիք գլուխը): ***Vahakn N. Dadrian,*** The History of the Armenian Genocide, Oxford, 1995, p. 235-237. ***Арсен Авакян,*** Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений, Ереван. 1999, стр. 68-86. ***Ահմեդ Ռեֆիկ,*** Երկու կոմիտե, երկու ոճիր, Երևան, 1997, էջ 32-33: ***Ю. Г. Барсегов,*** Геноцид армян - преступление по международному праву. Москва, 2000, стр. 136. ***Александр Сваранц,*** Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Москва, 2002, стр. 191-192. ***Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան,*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. II, գիրք առաջին, Երևան, 2001, էջ 448-470 (գլուխ տասներկուերորդ - Թեշքիլաթի մախսուսա՝ հատուկ կազմակերպություն): ***Ազատ Համբարյան, Ստեփան Ստեփանյան,*** Հայոց ցեղասպանությունը, Երևան, 1995, էջ 15:

[2] ***Suat Parlar.*** Osmanlı'dan Günümüze Gizli Devlet. Istanbul, 1997, s. 76.

[3] ***Taner Akçam.*** İnsan Hakları ve Ermeni Sorunu İttihat ve Terakki'den Kurtuluş Savaşı'na. İstanbul, 1999, s. 221. Տե՛ս նաև՝ ***Арсен Авакян,*** նշված աշխատությունը, էջ 70:

[4] ***Арсен Авакян,*** նշված աշխատությունը, էջ 72-73:

Այդ կազմակերպության մեջ սկզբում մտնում էին միայն այնպիսի զինվորականներ, որոնք պատրաստ էին *«իրենց կյանքը զոհել»* Իթթիհատի որոշումների կենսագործմանը, առավել ևս ահաբեկչության ենթարկելու կուսակցության Կենտրոնական կոմիտեի որոշումներին հակադրվող անձնավորություններին՝ որ ազգությանն էլ պատկանելիս լինեին նրանք: Այսպես օրինակ, Իթթիհատի ԿԿ-ի 1909-1911 թթ. որոշումներով «ֆիդայիները» կազմակերպեցին թուրք երեք ընդդիմադիր թերթերի խմբագիրներ *Հասան Ֆեհմի բեյի, Ահմեդ Սամիմ-բեյի և Զեքքի-բեյի* ահաբեկչական սպանությունը: Հայկական աղբյուրները վկայում են նաև, որ 1909 թ. Ադանայի կոտորածի եղելությունը քննող հանձնաժողովի միակ հայ անդամ *Հակոբ Պապիկյանի* սպանությունը կազմակերպել և իրականացրել են թուրք *«ֆիդայիները»*[1]:

«Ֆիդայիների կազմակերպության» անդամների թիվն ու ունեցած ազդեցությունը գնալով մեծանում էին և վախեցնում նույնիսկ յուրայիններին: 1912 թ. այդ կազմակերպության անդամներն էին դարձել հանրահայտ «հրացանակիրներ», կռիվներում ճանաչում ստացած սպաներ *Յակուբ Ջեմիլը, Թոփչա Իսսանը, Աբդուլ Կադիրը, Սապանջալի Հակկին, Էնվերի* հորեղբայր *Խալիլը, Խոսրով Սեհմին, Սուլեյման Ասքյարին, Օմեր Նադժին* և այլոք: Այդ խմբին հարեցին նաև ոստիկանական բնագավառի սպաներ *կուշչուբաշի էշրեֆը* և նրա եղբայր *Սամի բեյը,* որոնք արդեն հեղինակ էին մի շարք արկածախնդրությունների և հատկապես տեռորիստական բնույթի սպանությունների[2]: Կարծեք թե զինվորական մասը պատրաստ էր: Մնում էր քաղաքականը, որը նույնպես ձևավորման պրոցեսում էր:

1911 թ. փետրվարին Ստամբուլում ստեղծվեց *«Թյուրք օջաքը» («Թուրքական օջախ»)* միջազգային, պանթուրքիստական կազմակերպությունը, որի ծայնափողն էր *«Թյուրք յուրդու» («Թուրքական հայրենիք»)* պարբերականը, խմբագիրը՝ ռուսական էմիգրանտ *Յուսուֆ Ակչուրան*[3]: Կազմակերպության լիդերներն էին՝ *Յուսուֆ Ակչուրան, Խանդուլա Սուբխին, Ահմեդ-բեկ Աղաևը, Կարաբեկովը*[4]: «Թուրքական օջախը» գերխնդիր դարձրեց կայսրության բնակչությանը, հատկապես երիտասարդ թուրքերին ներարկել պանթուրքիստական հաշիշը, նրանց գաղափարապես պատրաստել *մեկ ազգ, մեկ պետություն, կամ Թուրքիան՝ թուրքերի համար* կարգախոսի իրականացմանը:

Ծավալված իրադարձությունները, կարճ ժամանակ անց, նպաստեցին պանթուրքիստական մեծ ու փոքր խմբերի, հատկապես վերոհիշյալ երկու կազմակերպությունների միավորման, քրիստոնյա հպատակ ժողովուրդների բնաջնջման ծրագրերի իրականացմանը:

1911 թ. բռնկված թուրք-իտալական պատերազմն ավարտվում է Թուրքիայի հերթական պարտությամբ, որի արդյունքում վերջինս կորցնում է Տրիպոլիտանիայի և Կիրենիկայի նահանգները, այսինքն *Լիբիան:* 1912 թ. Բալկանյան առաջին պատերազմում, Թուրքիան ջախջախված պարտություն է կրում և այս անգամ հարկադրված էր ազատություն տալ տերության եվրոպական վիլայեթների բնակչությանը:

Եղավ այնպես, որ Ավստրո-Հունգարիան գրավեց *Բոսնիան* և *Հերցոգովինան:* Ավտոնոմ իրավունքներ ստացան *Թրակիան* և *Մակեդոնիան:*

---

[1] ***Արսեն Ավակյան,*** նշված աշխատությունը, էջ 74:

[2] ***Suat Parlar.*** Osmanli'dan Günümüze Gizli Devlet. Istanbul, 1997, s. 50. Տե՛ս նաև ***Արսեն Ավակյան,*** նշված աշխատությունը, էջ 93:

[3] ***Александр Скворец,*** Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Москва, 2002, стр. 191.

[4] Տոքթ. *Եղիկ Եերեմեան,* Փանթուրքիզմը, Պեյրութ, 1998, էջ 23-24:

Երիտթուրքերի պատերազմական անհաջողություններից օգտվելով 1911 թ. կազմավորված *«Յուրիեթ վե իթթիլաֆ» («Ազատություն և համաձայնություն»)* կուսակցության պարագլուխները *1912 թ. ամռանը,* կարողացան ոչ երկար ժամանակով զավթել իշխանությունը[1]:

Երիտթուրքական վերնախավը, նրան գաղափարապես սնող պանթուրքիստներն իշխանությունը կորցնելով, արդեն ակամայից համաձայնվում էին օսմանյան երբեմնի հզոր կայսրության *ամբողջականությունը պահպանելու անհնարինության մտքի հետ:* Նրանք հաշվարկում էին, որ յուրաքանչյուր պատերազմ ավարտվում էր Թուրքիայի ներքաշ պարտությամբ, հետևաբար և նոր հողերի կորստով:

Բալկանյան պատերազմից հետո, երիտթուրքերը բացեիբաց հայտարարում էին, որ քանզի Ռուսաստանին առայժմ հաղթելը հնարավոր չէ, ուստի անհրաժեշտ էր փրկության նոր միջոցներ որոնել: Այդ մասին անգլիական պատմաբան *Բերնարդ Լեվիսը* գրում է. «Կայսրության անկման գաղափարը նոր էր և շատերը շվարած էին. փոքր շրջագծով ազգային-նահանգ մը անբաւարար եւ անգրաւիչ կը գտնէին: Փանթուրքական շրջանակներուն մէջ եւ մասնաւորաբար թաթար վտարանդիներուն մօտ, այս մտահոգութիւնը առօրեական էր: *Անոնք կը հաւատային թէ նոր կայսրութեան մը ճակատագիրը կը սպասէ Թուրքիոյ՝ որուն պարտականութիւնն է ոչ թէ վերազարթնել բազմալեզու եւ բազմազգ Օսմանեան Կայսրութիւնը, այլ ստեղծել թուրք եւ թաթար ժողովուրդներէ բաղկացած նոր, Փանթուրքական Կայսրութիւն մը, որ կը տարածուի եգիպական ծովէն Չինական ծով»*[2]:

Ակնհայտ է, որ երիտթուրքերն օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու հեռանկարը փոխարինում էին մի նոր, ավելի ընդարձակ ու ավելի հզոր կայսրություն կազմավորելու բարբաջանքով: Այդ կայսրությունը լինելու էր *թուրանական խալիֆաթը,* որից *թուրքերը ձեռք չեն քաշել մինչև այսօր*[3]:

Ահա գլխավոր այն պատճառը, երբ առաջին անգամ աշխարհի թուրքերի, հատկապես երկու խոշոր հատվածները՝ օսմանյանը՝ *իր պետական,* ռուսականն՝ իր ազգային (ձգտումներով) գաղափարախոսությամբ կհանդիպեն, կողջագուրվեն իրար հետ, ենթահող ունենալով պանթուրքիզմի ցնորամիտ երազանքը[4]:

Ճիշտ է նկատվում, որ զորավարները ծնվում են պատերազմների դաշտում, գաղափարաբանները՝ գաղափարական պայքարի հորձանուտում: Այնպես որ, իթթիլաֆականների թուլություններից օգտվելով, իթթիհատականները հրապարակ նետեցին պանթուրքիստական քրիստոնեատյաց երկու գաղափարաբանների՝ *Յուսուֆ Ակչուրային* և *Զիա Գյոք Ալփին:* Սրանք իրար գիտեին ստեղծագործություններով, այժմ անձնական ծանոթությամբ, մտերիմ կապեր էին հաստատում, համալսարանական ամբիոններից թուրք երիտասարդությանը կոչում պանթուրանական ծրագրերի իրականացման համար մղվող պայքարին[5]:

---

[1] *И. Л. Фадеева,* От империи к национальному государству, Москва, 2001, стр. 51. Տես նաև *Александр Сваранц,* նշված աշխատությունը, էջ 115:

[2] *Bernard Lewis,* The Emergence of Modern Turkey. London, 1968, s. 358.

[3] Իսլամական խալիֆաթի ցնորական երազանքը քարոզվում է մինչև այսօր, որի մասին դատապարտող, միանգամայն արդարացի գնահատականով հանդես եկավ *Վ. Վ. Պուտինը* 2002 թ. դեկտեմբերի 19-ի հեռուստաելույթով:

[4] *Եղիկ Ճերեճեան,* Փանթուրանիզմ, էջ 23-24:

[5] *И. Л. Фадеева,* նշված աշխատությունը, էջ 50: Զարմանալին այն է, որ ազգությամբ ռուս այդ տիկինը, կարծեք թե սիրահարված է «իր հերոս» Զիա Գյոք Ալփին և այնպես է ներկայացնում պանթուրանիստ այդ թուրքին, որ կարծեք թե նա մի հանճարեղ ազատարար էր: Մինչդեռ Դիարբեքիրի ծնունդը, ճիշտ է կրթություն էր ստացել Եվրոպայում, սակայն մնացել էր և՛ բարբարոս, և՛ հայատյաց:

Կարճ ժամանակ պահանջվեց իթթիհատականներից, որպեսզի կարողանային տիրապետել թուրք երիտասարդության շովինիստական զգացմունքներին, և՛ համալսարանում ուսանողության, և՛ բանակում զինվորների ու զինվորականների շրջաններում: Պանթուրանիզմի ցնորամիտ դոկտրինան թևածում էր ոչ միայն Սալոնիկի մասոնների շրջաններում, այլև Կ. Պոլսում, և թուրքական մյուս քաղաքներում:

Խնդիր դրվեց իշխանությունը ետ խլել իթթիլաֆականներից: Մթնոլորտը շիկացած էր հօգուտ պանթուրանիստ իթթիհատականների: Այդ էր պատճառը, որ առանց մեծ դժվարությունների, վերջիններս 1913 թ. հունվարի 10/23-ին պետական հարվածով տապալեցին իթթիլաֆականների դիկտատուրան և իշխանությունը վերցրին իրենց ձեռքը:

1913 թ. հունվարի 15-ից Թուրքիայում ավարտվեց մի տեսակ ***երկիշխանության*** շրջափուլը: «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն իշխանությունն իր ձեռքը վերցնելով, իթթիհատականներից ***ձևավորեց նոր կառավարություն,*** որը տեռորի, ուղղակի բանտարկությունների, աքսորի ու ահաբեկումների ճանապարհով «մաքրելով» մայրաքաղաքը, հասավ ***կուսակցական բացարձակ դիկտատուրայի***[1]:

Իշխանությունն անցավ ***եռապետերին:*** Ներքին գործերի նախարար Թալեաթը տեռորի ու աքսորի ճանապարհով վնասազերծեց երեկվա իր հակառակորդներին: Ոստիկանությունը հանձնվեց ընդդիմադիր թուրքերի, ինչպես նաև հայերի կատաղի թշնամի հանդիսացող ***Պետրիին:*** Նա նոր թափ հաղորդեց հակահայկական լրտեսական աշխատանքներին, պատրիարքարանն ու հայ քաղաքական կուսակցությունների կենտրոնակայանները ողողվեցին լրտեսներով: Այդ օրերից վերջացավ հայ-թուրք հարաբերությունների «երանավետ շրջանը», և հայկական ջարդերի ծրագրման շոշափուկներն արդեն բացահայտ էին:

Փոփոխության ենթարկվեց նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի ղեկավար կազմը: Այնտեղ թափանցեցին և ***Էնվերի, Թալեաթի*** ու ***Ջեմալի*** կողքին, հաստատուն աթոռներ ստացան բժիշկներ ***Նազըմ բեյը, Բեհաեդդին Շաքրին*** և պանթուրքիզմի առաջին դրոշակակիր ***Զիյա Գյոք Ալփը:*** Վերջին երեքը բացահայտեցին իրենց հակազգային դեմքը և բացարձակորեն բռնեցին հակահայկական քաղաքականություն վարելու կողմնակցություն, այնքան հայատյաց, որ այդ պահին դժգոհեցրեցին ապագա հայոց ***«ջարդերի մարտարապետ»,*** մարդակուլ Թալեաթին: Հատկապես ***Զիյա Գյոք Ալփը*** չափազանց մտահոգված էր ոչ միայն հայերի նկատմամբ կիրառվելիք ռեֆորմներով, այլև «Հայաստանի կորուստով», որն անկախանալով կարող էր թումբ կանգնել Թուրքիայի դեպի Արևելք ընդարձակվելու դեմ: Նորից շեփորվեց ***«Թուրքիան թուրքերի համար»*** կարգախոսը, նորից առարկայական դարձավ արևմտահայության բնաջնջման խնդիրը: Պանթուրանիստները շտապում էին, վախենում էին, թե շուտով, Ռուսաստանի ճնշման ազդեցության տակ, Հայաստանը կբարեփոխվի, դրա համար էլ մեծ հույսեր էին կապում բանակի, հատկապես III բանակի հետ, որը պետք է անցներ իրենց ղեկավարության տակ:

Պրոֆ. Վ. Տատրյանը անդրադառնում է այդ խնդիրներին ևս: Թուրքական III բանակը կազմավորված էր Ստամբուլի ռազմական ակադեմիան ավարտած, պանթուրքիզմով թունավորված սպաներից: Սրանց ջանքերով երկու անգամ (1908 և 1909 թ.) գահընկեց արեցին մարդագայլ Համիդ սուլթանին, կոտորեցին ադանա-

[1] Պրոֆ. ***Վահագն Տատրյան,*** Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, «Պայքար» հրատարակչություն, 1995, էջ 128:



ԱՆԱՏՈԼ ՖՐԱՆՍ
(1844-1924)

Երիտթուրքերը, տիրանալով իշխանությանը, իրենց դաժանությամբ գերազանցեցին Աբդուլ Համիդին կազմակերպելով Ադանայի կոտորածը... Մեզ սիրող այդ ժողովրդին բնաջնջելու որոշումն ընդունվել է թուրքական կառավարության խորհրդակցություններում... Այյան այն փոքր քանակությունը, որը նա դեռևս պահպանում է, թանկագին արյուն է, որից հերոսական սերունդ է ծնունդ առնելու: Ժողովուրդ, որը մեռնել չի ուզում, երբեք չի մեռնի:

հայությանը (1909, ապրիլ), իշխանազրկեցին իթթիլաֆականներին (1913, հունվար): Այդ զորքն այժմ գլխավորում էր *երեսուներեքամյա,* դեռևս անփորձ ու անհայտ, գնդապետ ***Էնվեր*** փաշան, որը Թալեաթից խելոք էր, դաժան ու ճարպիկ: Նա ճիշտ հաշվարկներ կատարելով՝ ոստյուններով վեր բարձրացավ և ***մեկ տարում*** հասավ պատերազմական (այսինքն՝ զինվորական) նախարարի աստիճանին, փաշայի տիտղոսին: Էնվերը, հաստատվելով իր համար էլ անհավատալի նման հզոր պաշտոնին, դաժան դատաստան տեսավ իր առկա և պոտենցիալ հակառակորդների հետ, փակեց բոլոր նրանց ճանապարհները, որոնք կարող էին խանգարել իրեն ծրագրված քաղաքականությունն իրականացնելիս: Նա պաշտոնազրկեց շուրջ 1100 սպաների և դրանց աստիճանաբար հեռացնելով մայրաքաղաքից բոլորին զրկեց քաղաքականությամբ զբաղվելու իրավունքից ու հնարավորությունից: Դրանց շարքերումն էր նաև ապագա թուրքական հանրապետության առաջին պրեզիդենտ ***Մուստաֆա Քեմալը,*** որն Էնվերից և՛ խելոք էր, և՛ դաժան էր, և՛ հայատյաց, սակայն այդ օրերին նման հատկանիշները խորամանկորեն թաքցրած էր պահում[1]: Համենայն դեպս Էնվերը, առաջին օրվանից մինչև իր անկումը, Քեմալի ճանապարհը փակեց և չթողեց որևէ հաջողության հասնելու: Էնվերին հենարան մնացին մյուս սպաները:

Ցեղասպանության պատմության հմուտ մասնագետ Վ. Տատրյանը գրում է. «1913 հունվարին Իթթիհատի Իթթիլաֆական կառավարութեան դէմ պետական հարուածին մասնակցող աչքառու Իթթիհատական սպաներուն համար անհրաժեշտ եղաւ հրաժարիլ իրենց զինուորական ասպարէզէն եւ նետուիլ քաղաքական կեանքի մէջ, այսինքն՝ ծառայել Իթթիհատի այն թաքուն նպատակներուն, ***որոնք զոհողութիւն, քաջութիւն եւ մարդասպանական հակումներ կը նախադրէին:*** Ասոնցմէ էին, զոր օրինակ, Եաքուպ Ճեմիլ, Եէնի Պահճէլի Նայիլ եւ Ֆիլիպէլի Հիլմի, այսպէս ***կոչուած Ֆէտայի սպաները, որոնք յետոյ ամբողջութեամբ նետուեցան հայասպանութեան Մեծ Ոճիրին*** մէջ իբրեւ գլխաւոր եղեռնագործ դերակատարներ, բոլորն ալ Յատուկ Կազմակերպութեան առաքելութեան ուղիով»[2]:

Եվ այսպես, իշխանության մեջ ամրանալով, եռապետները ձեռնամուխ եղան կուսակցական բռնակալության հաստատմանը, իսկ դրա համար անհրաժեշտ էր մեխանիզմ, քաղաքականությունը կիրարկող օրգան, որը դարձավ «Հատուկ կազմակերպությունն» իր չար գործերով ու հայատյաց ապարատով:

Հայտնի է, որ Սալոնիկի հրեական երիտթուրքական ***համաժողովը - կոնգրեսը*** 1911 թ. որոշում էր կայացրել կայսրության քրիստոնյա ժողովուրդների, մասնավորապես հայ ժողովրդին ոչնչացնելու, բռնագաղթեցնելու, մի խոսքով «կայսրության տարածքային ամբողջականությունը» պաշտպանելու վերաբերյալ: Դրանից անցել էր երկու տարի, շատ ջրեր էին հոսել թուրքական կեղտոտ ու արյունոտ առուներով, սակայն իթթիհատականները պինդ մտապահել էին «Հատուկ կազմակերպություն» ստեղծելու իրենց գաղափարը, ծրագիրն ու նրան տրվող արտոնությունների չափաբաժինը:

Այսպիսով, իթթիլաֆականների ձեռքից իշխանությունը բռնազավթելուց հետո, իթթիհատականներն առանց դանդաղելու, այսինքն ***1913 թ. փետրվար-մարտ ամիսներին,*** ձեռնամուխ եղան «Հատուկ կազմակերպության» ձևավորման աշխատանքներին: Այն կազմավորվում էր, սակայն, ոչ թե պետական ապարատի, այլ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի որոշմամբ, պատե-

[1] Պրոֆ. ***Վահագն Տատրյան,*** նշված աշխատությունը, էջ 130:
[2] Նույն տեղում, էջ 130-131:

րազմական նախարար Էնվերի նախագահությամբ ու ֆինանսավորմամբ[1]:

Կազմակերպությունը, սկզբնական ամիսներին, անդամներ ունենալով վաղուց գոյություն ունեցող *«Թուրքական օջախ»* և *«Ֆիդայիներին»* անդամակցողներին, գործում էր *խիստ գաղտնի,* աստիճանաբար իր շարքերը համալրելով նոր մասնակիցներով:

«Հատուկ կազմակերպությանը» վերաբերող թուրքալեզու վավերագրերի ծեռք բերումից հետո այսօր արդեն շատ բան է հայտնի նրա գործունեության, հայասպանության հանցագործությունների մասին, հարկավ, դեռ շատ բան էլ անհայտ է, և անհայտ կմնա, քանզի Նազըմ բեյը, ինչպես նաև Էնվերն ու Թալեաթը, արժանի գնդակներ ստանալուց առաջ շատ վավերագրեր կրակին հանձնեցին գիտակցելով դրանց վտանգավորությունն իրենց պատասխանատվության ենթարկելու պրոցեսում:

Ավետիս Փափազյանը, հետազոտելով թուրքական վավերագրերը, իրավացիորեն ընդհանրացնում է. ««Թեշքիլաթ-ը մահսուսե» անուան տակ գործել է *երկու գաղտնի կազմակերպութիւն:* Մէկը եղել է զինուորական կազմակերպութիւն եւ ստեղծուել է ռազմական մինիստրութեան հրամանով: Ղեկավարն է եղել *Սուլէյման Ասքերի պէյը:* Կենտրոնը գտնուել է Կ. Պոլսում: Դատավարութեան 5-րդ նիստի ժամանակ մեղադրեալ *Ատիֆ պէյը* խոստովանում է, որ «Թեշքիլաթ-ը մահսուսե»ի համար յատուկ պաշտօնատեղի է եղել *Նուրի Օսմանիէում,* «Թասֆիր-ի էֆքեար» թերթի տպարանի դիմաց վարձուած թիւ 32 տունը: Այս կազմակերպութեան խնդիրն է եղել կովկասեան մահմետական ժողովուրդների մէջ Ռուսաստանի դէմ խռովութիւն սերմանելու նպատակով հաւաքագրել Կովկասի տարածքին ծանօթ, տեղի ժողովուրդների լեզուներին տիրապետող մարդկանց եւ խմբերով, գաղտնի ուղարկել սահմանից այն կողմ»[2]:

Նա ապա շարունակում է. «Երկրորդ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն գտնուել է ներքին գործերի մինիստրութեան անմիջական տրամադրութեան տակ, եւ *Բեհաէդդին Շաքիրի ղեկավարութեամբ իրականացրել է արեւմտահայութեան տեղահանութիւնն ու կոտորածը:* Դա հաստատւում է կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ Ռիզա պէյի ցուցմունքով: «Իմ կարծիքով,- նշում է նա,- ռազմական մինիստրութեան հրամանով կազմակերպուած «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն գործել է ռազմաճակատում եւ ընդհանրապէս հակառակորդի գտնուած շրջաններում: Միւս՝ երկրորդ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն ստեղծուել է, որպէսզի մի շարք վիլայէթներում, սանջակներում, կազաներում իրականացնի տեղահանութիւնը»[3]:

«Երիտթուրք» բորենիների դատավարության նյութերը, բնագրերով (թուրքերեն) ուսումնասիրելով, Գրիկերը գրում է. «Պատերազմական Ատեանը թուրք պաշտօնական վաւերագրերու ուսումնասիրութեամբ եւ թէ հարցաքննիչ Յանճնախումբի եւ թէ Պատերազմական Ատեանի առջեւ արձանագրուած պաշտօնական վկայութիւններու համաձայն հասած է այն եզրակացութեան թէ *21 Յուլիս 1914ի զօրակոչէն* անմիջապէս ետք Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէն կազմակերպած է *Թէշքիլաթը Մախսուսա* մը որ բոլորովին տարբեր է արդէն գոյութիւն ունեցող *Թէշքիլաթը Մախսուսայէն իր նպատակով եւ իր կազմութեամբ: Այս նոր Թէշքիլաթը Մախսուսային մէջ ընդունուեցան ներքին գործերու եւ արդարութեան նախարարութիւններու հրահանգով բանտերէն ազատ արձակուած դատապարտեալ ոճրագործները որոնք չէին ընդունուած*

[1] *Арсен Авакян,* նշված աշխատությունը, էջ 76-77:

[2] *Ավետիս Փափազյան,* նշված աշխատությունը, էջ 53:

[3] Նույն տեղում, էջ 54: Տես նաև Takvim-i vakayi, 1919, մայիսի 12, N 3554, էջ 88:

պատերազմական նախարարութենէն կախում ունեցող Թէշքիլաթը Մախսուսայի մէջ: Բանտերէն ոճրագործներու ազատ արձակուելու ատեն կուսակցութիւնը հանրային կարծիքը մոլորեցնելու համար լուրեր տարածեց թէ բանտերէն հանուած ոճրագործները պիտի գործածուէին պատերազմի ճակատներուն վրայ, *մինչդեռ իրականութիւնը այն էր, որ անոնք դրկուեցան կանխապէս որոշուած ջարդավայրեր հայ կարաւանները կողոպտելու եւ կոտորելու համար»*[1]:

Ցեղասպանության պատմության մեկ այլ, ոչ պակաս հմուտ աղբյուրագետ, թուրքերենին կատարյալ տիրապետող *Հայկազն Գ. Ղազարեանն* իր աշխատության էջերում, ընդարձակ բաժիններ ունի նվիրված *«Թեշքիլաթի մախսուսայի»* գործադրած չարագործությունների բացահայտմանը, նրա հիմնադրման ու հիմնադիրներին վերաբերող մինչ այդ անհայտ, կարևոր վավերագրերի գիտական շրջանառության մեջ դնելուն:

Նրա հաղորդման համաձայն «Թեշքիլաթի մախսուսային» վերաբերող, *երեքի կոմիտեի* հիմնադիր նիստը տեղի է ունեցել 1915 թվականի *փետրվարի առաջին կեսին:* Այդ երեքն էին *Ալի Շուքրին*[2], դոկտ. *Բեհաեդդին Շաքիրը*[3] և դոկտ. *Նազըմը*[4]: Թուրք շնածակների տեսակետները հայ ժողովրդի ոչնչացման խնդրում միասեռ էին, դրա համար էլ առանց մեծ տարակարծության կայացրեցին ներքոհիշյալ որոշումը.

1.- «Թեշքիլաթը Մախսուսէի արիւնարբու-մարդասպաններու (գանլը-գաթիլ) *թիւը 8 000էն 10 000 է:* Ատոնց գործն է մեռցնել հայերը, կողոպտել եւ բռնաբարել, գործադիր իշխանութեան հրամաններով»:

---

[1] *Գրիկեր,* Եոզղատի հայասպանության վավերագրական պատմությունը. Նյու Յորք. 1980. էջ 263: Տե՛ս նաև Takvim-i vakayi (Պատերազմական նախարարության պաշտոնաթերթ). 1919. 12-ը ապրիլի. N 3540:

[2] *Ալի Շուքրին* (1875-1923) «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտկոմի անդամներից էր. նույնիսկ դարձավ նրա քարտուղարը: 1908 թ. նա Սերեզի (Բալկաններում) փոխկառավարիչն էր. 1910 թ. Չերքեզ Ահմեդի և այլ չարագործների ծեռքով սպանել տվեց լիբերալ գրողներ *Ահմեդ Սամիհին, Հասան Ֆեհմիհին և Զեքի բեյին:* 1913-1918 թթ. Շուքրին Թուրքիայի կրթության նախարարն էր. հայկական ջարդերի ամենաակտիվ մասնակիցներից մեկը: Նրա մտերիմ ընկեր Չերքեզ Ահմեդը սպանեց *Գր. Զոհրապին* և *Վարդգեսին,* երկուսով կազմակերպեցին Վանի, Տիգրանակերտի և Սևերեկի շրջանների հայերի բռնագաղթը: Նա 1923 թ. կախաղան հանվեց Զմյուռնիայում. Մուստաֆա Քեմալի դեմ մահափորձ կազմակերպելու ամբաստանությամբ (*Հայկազն Գ. Ղազարեան,* Ցեղասպան թուրքը. Պեյրութ. 1968. էջ 34):

[3] *Բեհաեդդին Շաքիրը* (1887-1922) Իթթիհատի կենտրոնական կոմիտեի ամենաազդեցիկ անդամներից մեկն էր. հայկական ջարդերի դաժան կազմակերպիչը. ղեկավարը «Թեշքիլաթի մախսուսա» կազմակերպության: 1913 թ. ընտրվել է երիտթուրքերի կուսակցության կենտկոմի քարտուղար. 1914 թ. մասնակցել է Արդանուշի հայերի կոտորածին: Նա *մասնագիտությամբ բժիշկ էր,* ավարտել էր *Սորբոնի* համալսարանը և այդքան դաժան, մարդատյաց ու հայասպան էր (նշանակում է կրթվելը կապ չունի թուրքի մարդասպանության հետ): Բ. Շաքիրը հավասարապես մեղսակից է և Էնվերի, և Թալեաթի հայասպանական գործունեության համար: Զինադադարից հետո (1918 թ.) ճողոպրել է Գերմանիա, եղբայրացել հրեաներ Զինովևի և Ռադեկի հետ և 1922 թ. ապրիլի 17-ին ստացել արժանի պատիժը Բեռլինում *Արամ Երկանյանի* և *Արշավիր Շիրակյանի* գնդակներով (*Александр Скарятин,* նշված աշխատությունը. էջ 576):

[4] *Նազըմ բեյը* (1870-1926) երիտթուրքերի կուսակցության կենտկոմի գլխավոր քարտուղարն էր (1911 թվից). «Իթթիհաք վե թերաք» կուսակցության գլխավոր գաղափարաբանը: «Թեշքիլաթի Մախսուսայի» ղեկավարներից մեկը: Հրեական մասոնական սեկտայի անդամներից էր. ամուր կապերի մեջ մտած հրեա-մուսուլման խմբակցության հետ: Նազըմը 1913 թ. կրթության նախարարն էր. քիչ անց արդեն կուսակցության բարձրագույն պաշտոնյան: Նա հայ ժողովրդի ցեղասպանության ոչ միայն գաղափարական մենտորն էր. գործողության ծրագրավորողն ու ոգեշնչողը. այլև կազմակերպիչը. մասնակիցը: Նրա գործերը համեմատում են *Գեբելսի* ֆաշիզմի հետ: 1919 թ. թուրքական դատարանը. հեռակա կարգով. նրա նկատմամբ մահապատժի որոշում է կայացրել. այն դեպքում. երբ վերջինս փախել էր և ապրում էր Բեռլինում: Ապա եկավ Մոսկվա. *«հյուր եղավ Ալի Ֆուատին»:* 1923 թ. վերադարձավ Թուրքիա. Ալի Շուքրիի հետ. մահափորձ կազմակերպեց Մուստաֆա Քեմալի դեմ և 1926 թ. Աթաթուրքի ծեռքով կախվեց Զմյուռնիայում: (*Հայկազն Գ. Ղազարեան,* նշված աշխատությունը. էջ 34-35: Տե՛ս նաև *Александр Скарятин,* նշված աշխատությունը. էջ 581-582):

2.- Թալէաթին հետ կը դասաւորենք բնաջնջուելիք հայերուն քաղաքները եւ ա-ւանները: Կը բաժնենք շրջաններու (մանթըքա) եւ պէտք եղածին չափ չեթէ կը ղրկենք ճամբաներուն վրայ որոշ տեղեր, ուր անոնք կը սպասեն: Կառավարական քաղաքա-յին պաշտօնեաներուն հրահանգ կը տրուի ոստիկաններով եւ ժանտարմաներով կա-րաւանները դուրս հանել եւ հսկողութեան տակ բերել ու յանձնել չեթէներուն:

3.- Սպանութիւնները լրացնելէ յետոյ, դիակները կը նետուին նախապէս պատ-րաստուած խրամներու, փոսերու (չուգուր) մէջ եւ կը թաղուին, հանրային առողջու-թիւնը պահելու համար: Կիներու եւ աղջիկներու բռնաբարութեանց հանդէպ լուռ կը մնանք «Թիւրքիա ինքնեապընընը իչ եիւգիւ»[1]:

Կազմակերպչական տեսակետից «Հատուկ կազմակերպութիւնը» տրոհված էր *չորս* բաժանմունքների, որոնցից յուրաքանչիւրն ուներ իր նստավայրը, ուրույն ի-րավունքները, առանձին ֆինանսավորումը և իրարից տարբերվող հանձնարարու-թյուններ: Դրանք էին.

1. Ռումելիայի բաժանմունքը՝ Արիֆ բեյի գլխավորությամբ:

2. Կովկասյան բաժանմունքը ղեկավարում էր ոստիկանության մայոր Ռիզա բեյը:

3. Աֆրիկական, Տրիպոլիական բաժանմունքը գտնվում էր Հյուսեյն Թոսունի և Ա-լի Բաշխամբայի հսկողության տակ:

4. Արևելյան վիլայեթներով ***զբաղվող*** բաժանմունքը տեղակայված էր ***Կարին քաղաքում:*** Այն իր «կարևորությամբ» համարվում էր հիմնականն ու խոշորը, դրա համար էլ ղեկավարությունը վստահված էր Իթթիհատի կենտկոմի անդամ ***Բեհաեդ-դին Շաքիրին***[2]: Կազմակերպությունը կառուցված էր կենտրոնացված սկզբունքնե-րով, որի կենտրոնը գտնվում էր մայրաքաղաք Ստամբուլում, ըստ որում մի մասը են-թարկվելով ***էնվերի,*** մյուսը՝ ***Թալեաթի*** հրամաններին:

Հայկազն Գ. Ղազարյանն իր աշխատության ընդարձակ բաժիններ նվիրելով «Թեշքիլաթի մախսուսաի» հայասպան գործունեությանը[3], առատորեն օգտագործե-լով դեպքերի ականատես ***Մեվլան զադե Ռիֆաթի*** վկայությունները[4], անփոխարի-նելի փաստեր է դրել գիտական շրջանառության մեջ:

Նա գրում է. «Հաստատված է, որ ***Թեշքիլաթը Մախսուսէն*** կառավարութեան և օ-րենքներու միջամտութենէն զերծ էր և իր քայլերուն մէջ անկախ եւ միայն Երեքի Գոր-ծադիր Կոմիտէին հրամանով գործող եւ ***Իթթիհատ վէ Թերագգը Կոմիտէին*** արիւ-նարբու եւ մարդասպան ***(գանլը-գաթիլ)*** կողոպտիչներէն բաղկացած խումբ(?) մըն էր:

Տոքթ. Պէհաէտտին Շաքիրէ, տոքթ. Նազըմէ եւ կրթ. նախարար Շիւքրիէ բաղկա-ցած այդ Գործադիր Կոմիտէն անկախ, ոչ-պաշտօնական, ոչ-պատասխանատու(?) մարմին մըն էր, որ ուներ իր սեփական քարտուղարութիւնը (***գալէմը մախսուսը*** - դի-ւանատունը), քննիչները ***(միւֆեթթիշները)*** եւ նման կազմակերպութիւններ: Կառա-վարութեան մէջ՝ կառավարութիւն մը, կուսակցութեան մէջ՝ կուսակցութիւն մը, եւ լրջօրէն վտանգաւոր տարր մըն էր:

Այդ կազմակերպութիւնը տոքթ. Պէհաէտտին Շաքիրի ուղեղէն բխած եւ ընկերնե-րուն ընդունիլ տուած էր: Մինչեւ պատերազմին վերջանալը՝ այրած-մրկած էր ***(գա-***

---

[1] ***Հայկազն Գ. Ղազարեան,*** նշված աշխատությունը, էջ 37: Այստեղ նշված մարդասպանների թիվը 8-10 հազար է: Հավանական է, որ դա սկզբի համար է, քանզի հետո «Թեշքիլաթի» ոճրագործների քանակը ***հասավ 40 հազարի:***

[2] ***Suat Parlar,*** Osmanlı'dan Günümüze Gizli Devlet. İstanbul, 1997, s. 63. Տե՛ս նաև ***Արսեն Ավագյան,*** նշված աշխատությունը, էջ 77:

[3] ***Հայկազն Գ. Ղազարեան,*** Ցեղասպան թուրքը, Պեյրութ, 1968, էջ 37-58:

[4] ***Մեվլան զադե Ռիֆաթ,*** Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհատի հայաջինջ ծրագրերը, Երևան, 1990, էջ 91-130:

սուպ-գաւրումուշ) երկրին (հայ) ժողովուրդը, եւ զինադադարի տարիներուն ալ, ազգային շարժումներուն մէջ երեւնալով, շատ արժէքաւոր անձերու արիւնը մտած էր, տուներ աւերած, քաղաքներ եւ գիւղեր փճացուցած էր:

Թեշքիլաթը Մախսուսէին մէջ կային Րումելիէն եկած օրինազանց և ինքնութիւնին կասկածելի անզուսպ ***անձեր (իփսիզներ),*** ոճրագործներ, կողոպտիչներ, որոնք ԵՐԵՔի Կոմիտէին ենթակայ էին Անատոլուի մէջ, ***էշգյաններ*** էին եւ իբրեւ մարդասպաններ ու կողոպտիչներ աչքի կը զարնէին(*):

Այդ մարդասպաններուն ընդհանուր թիւը 8.000էն 10.000 էր: Ամենէն նուազը 10 եւ առաւելագոյն ***50 նեֆէրէ*** (անձ) բաղկացած զօրախումբերու ձեւով դասերու բաժնուած էին եւ ատոնց վրայ նշանակուած էին պետեր, զինուորական սպաներ կողոպտելու, տուն, խրճիթ, ընտանիք այրելու, թալանելու եւ պատիւ բռնաբարելու նման ոճիրներ ու չարիքներ գործելու»[1]:

«Հատուկ կազմակերպութիւնը» հայ ժողովրդին ոչնչացնող հիմնական կառույցն էր, դրա համար էլ քիչ ավելի ուշադրություն նվիրենք նրա կազմակերպական ձևավորման, գործունեության և «գաղափարական հենքի» պատմությանը:

Թուրք ժամանակակիցները և՛ ականատեսները, և՛ ականջալուրները, պնդում են, որ ***«Թեշքիլաթի մախսուսան»,*** կազմակերպորեն, ***վերջնականապես*** ձևավորվել է 1915 թ. ***փետրվար ամսի առաջին կեսին:*** Մինչ այդ կատարվածը համարում են նախապատրաստական ***թե՛ գաղափարաբանության, և թե՛ պրակտիկայի բնագավառներում:***

Կազմակերպության ավարտական, ձևավորող նիստը, կոչվելով ***երեքի կոմիտեի նիստ,*** ինչպես նշեցինք, գումարվել է 1915 թ. փետրվար ամսին (գաղտնապահության պատճառով ճշգրիտ օրը չի հիշատակվում), այն էլ ***իթթիհատի կենտրոնի մեջ - Ստամբուլում:*** Ժողովը ստանալով ***երեքի կոմիտեի*** նիստ անվանումը, սակայն, եղել է մարդաշատ և մեկ օրում չի վերջացել[2]:

Նիստի կենտրոնական դեմքը ***Բեհաեդդին Շաքիրն էր,*** որի ձեռքումն էր ոչ միայն ***խոսափողը,*** այլև կազմակերպության գործելակերպի ողջ մեխանիզմը, այսինքն հայ ժողովրդին ոչնչացման դատապարտելու ***վաղօրոք մշակված պլանը:*** Այն բաղկացած էր երեք բաղադրամասերից.

1. Բեհաեդդին Շաքիրը գտնում էր, որ հարմար ժամանակն է հայ ժողովրդի ոչնչացման, պատճառաբանելով, որ եթե մենք այսօր նրանց չոչնչացնենք, ապա վաղը նրանք մեզ կոչնչացնեն:

Ահա կոմիտեի նիստի բացման ժամանակ արտասանած նրա ընդարձակ ճառից մի հատված միայն: Նա ասում է. «Ընկերնե՛ր, խիստ կարևոր և ծանր պարտականություն մը ստանձնեցինք, եթե այդ պարտականությունը պէտք եղածին պէս չվերջացնենք եւ առաջիններուն նման կիսկատար ձգենք, երբեք կասկած ***չունենանք, որ հայերու վրէժխնդրութենէն պիտի չկրնանք փրկուիլ:*** Պատերազմի մէջ ենք, Եւրոպայի եւ մեծ պետութիւններու միջամտութեան վախը չկայ. աշխարհի մամուլն ալ չի կրնար բողոք բարձրացնել, եթէ աղմկեն իսկ, որեւէ արդիւնք չունենար. յառաջիկայիս խնդիրը կատարուած իրողութիւն մը կը դառնայ, ձայները կը դադրին եւ ո՛չ ոք բողոքի ձայն բարձրացնելու համարձակութիւնը կ'ունենայ: Այս բացառիկ կացութեան նրբութիւններէն առաւելագոյն չափով պէտք է օգտուինք: Այս առիթը ամէն ժամանակ

[1] ***Հայկազն Գ. Ղազարեան,*** նշված աշխատությունը, էջ 38-39: Այստեղ անճշտությունն այն է, որ կազմակերպության մեջ ոչ թե ***8-10 հազար*** ավազակներ էին, այլ ***քառասուն հազար:*** Վերևի թիվն է դրվել շրջանառության մեջ և մինչև օրս էլ հիշատակվում է հայրենի պատմաբանների աշխատությունների էջերում:

[2] ***Արամ Անտոնյան,*** Մեծ ոճիրը, Պոսթըն, 1921, էջ 275-281:

չի ներկայանար: Հիմա ամէն բանէ առաջ մեր տրամադրութեան տակ անկախ զինեալ ուժի մը պէտք ունինք: Այս ստիպողական պէտքը ինչպէ՞ս եւ ուրկէ՞ պէտք է ճարենք: ***Հայերը լման բնաջնջելու համար որո՞նց պաշտօն պիտի տանք:*** Ահաւասիկ բուն հարցը հոս է. գործը բանակին, ոստիկան-զինուորներուն չենք կրնար յանձնել, ասոնցմով մեր նպատակին չենք կրնար հասնիլ»[1]:

2. Հայ ժողովրդի դահիճը, մարդկային կերպարանքը կորցրած (եթե ունեցած լիներ) առաջարկում է ***սպանել ողջ հայ ժողովրդին փոքրից մինչև մեծը, ծծկեր երեխայից սկսած, վերջացրած ալեհեր ծերունիներով,*** չխնայելով ոչ ոքի՝ փոքրին, ու մեծին, կնոջն ու տղամարդուն, հիվանդին ու առողջին, հարուստին ու աղքատին: Զայրանալով, որ իր ծառը ընդմիջողներ կան, հատկապես, կրթության նախարար Շուքրին. «մսագործ» Շաքիրը, նրան պատասխանելով ասում է.

«Պէհաէտտին Շաքիր (բարկութեամբ).- Շիւքրի, որչափ անհամբեր ես: Եթէ առարկելու, վիճաբանելու եւ ծեծկրտուքի պիտի ելլես, սպասէ՛, ուշադրութեամբ գիս մտիկ ըրէ. մեր ստանձնած պարտականութիւնը ***ի՞նչ է. հայերը առանց բացառութեան՝ երախայ, կին, աղջիկ, ծեր ու անկար, մինչեւ վերջին անհատը սպաննել եւ բնաջնջել չէ՞... ես ալ քեզի կը հարցնեմ. ասիկա ամէն մարդու դիւրութեամբ կատարելիք սովորական գո՞րծ է...*** Ինչպէս ամէն գործի համար, ասոր համար ալ այս գործերով զբաղած, փորձառու եղած մարդիկը փնտռել եւ գտնելէ վերջ կազմակերպութեան մը ենթարկելու եւ կանոնաւոր կերպով գործել տալու աշխատիլ պէտք է: Կը կրկնեմ, այս գործը ո՛չ զինուորին, ո՛չ ոստիկան-զինուորին եւ ոչ ալ ժողովուրդին կրնանք կատարել տալ: Ասիկա անոնց գործը չէ: Զինուորին, ոստիկան-զինուորին կոչումը ուրիշ է, թէեւ զինուորին, ոստիկան-զինուորին մարդ սպաննելու, աւերներ գործելու ձեւերուն կը վարժեցնեն, սակայն զինուորը միայն պատերազմի մէջ, հայրենիքին եւ երկրին խաղաղութեան համար բացուած պատերազմի մը մէջ մարդ կը սպաննէ, աւեր կը գործէ եւ ***կարծեմ կ'ըմբռնես թէ պատերազմի եւ պարզ մարդասպանութեան միջեւ տարբերութիւն մը կայ:*** Մեր ընել տալիք գործը անզէն, ձեռքերը կապուած հայերը, երախաները, ծերերն ու անկարները մինչեւ վերջին անհատը սպաննել տալ է: Ասոր պատերազմի գոյն չենք կրնար տալ. ասիկա հասարակ եւ վայրագ ոճրագործութիւն մըն է. ***զինուոր մը կաթնկեր մանուկ մը մօրը գիրկէն յափշտակելով՝ մօրը աչքերուն առջեւ չի՛ կրնար գլուխը ջախջախել, չի՛ կրնար եւ թերեւս մայրն ալ փրկելու կ'աշխատի, տրուած հրահանգին գործադրութիւնը իր զինուորական պատուոյն հակառակ կը գտնէ եւ կ'ըմբոստանայ. նոյնպէս զինուոր մը անկարող, ձեռքերը կապուած ծերունկի մը կուրծքին չի՛ կրնար իր սուինը մխել. գերիին գթալ պարտականութիւն կը համարէ: Ան վայրագութիւնը հերոսութիւն չի նկատեր. այս պարագային պէտք է ընդունիլ, որ զինուորը, ոստիկան-զինուորը, մեր կատարել տալիք բնաջնջումի գործողութեան յարմար չէ:*** Երբ այսպէս կ'ընդունինք, մեր գործին յարմար ուժը, մարդիկը ո՞ւր կրնանք գտնել. ահաւասիկ բուն կարեւոր կէտը: Ես կը կարծեմ, որ մեզի յարմար մարդիկը գտած եմ. ըսե՞մ թէ ուր գտայ, - ***բանտերու մէջ:*** Ասոնք իրենց գործած ոճրագործութեան, մարդասպանութեան հետեւանքով զինուորական պատիւը չարատաւորելու համար՝ զինուորական ծառայութենէ զերծ կացուցուած մարդիկ են: ***Եթէ ասոնք արձակել տալով մեզի ենթարկենք եւ խումբերու բաժնենք, կը կարծեմ որ շատ լաւ մասնաւոր կազմակերպութիւն մը ստեղծած կ'ըլլանք»***[2]:

3. Նոյնիսկ ***Շուքրին*** և ***Նազըմ*** զարմացած էին, թե մարդկային այդ տականքը, ինչ-

[1] *Մեվլան զադե Ռիֆաթ*, նշված աշխատությունը, էջ 113:
[2] Նույն տեղում, էջ 114-115:

պիսի դաժան մեթոդներ էր մտածել մի ամբողջ ժողովրդի ոչնչացման համար: Նրանք «մսագործին» փոքրիկ, աննշան լրացումներ անելով, նրանից պահանջում են ծրագիրն իրականացնելու «գործադիր ծրագիր» ներկայացնել: Ուշացել էին առաջարկության հեղինակները: *Բեհաեդդին Շաքիրը* այդ ծրագիրն ավելի խնամքով էր պատրաստել:

Ահա այդ ծրագիրը.

«Պէհաէտտին Շաքիր.- Այս շատ պարզ է. ո՞ր քաղաքի եւ գիւղաքաղաքներու մէջ որ հայ կայ եւ ասոնցմէ ո՞ր մէկուն առաջին անգամ բնաջնջուիլը հարկ է, այդ մասին ներքին նախարարին հետ կ'որոշենք եւ իւրաքանչիւր շրջանակին պէտք եղածին չափ այս ուժերէն կը ղրկենք. ասոնք մեր նշանակելիք ճամբաներուն յարմար վայրերուն վրայ հասնելիք հայ կարաւաններուն կը սպասեն. ներքին նախարար Թալեաթն ալ այդ քաղաքներուն վարչական պաշտօնեաներուն կը հրահանգէ, որ հոն գտնուող բոլոր հայերուն, պատերազմական շրջագիծէն դուրս գտնուելու հարկը պատճառաբանելով, խումբ խումբ եւ իւրաքանչիւր *երկու օրը անգամ մը,* ոստիկան-զինուորներու հսկողութեան տակ այս ինչ ճամբէն այն ինչ տեղը ղրկուին: Ոստիկանական պաշտօնեաներ, այս հրամանին վրայ բոլոր հայերը հաւաքելով, հսկողութեան տակ, խումբ խումբ որոշուած ճամբաներէն ղրկել կը սկսին: Ոստիկանները «մասնաւոր կազմակերպութեան»» չէթէներուն կեցած վայրը հասնելնուն խումբերը չէթէներուն կը յանձնեն ու կը վերադառնան: *Չէթէներն ալ այս հայերուն մինչեւ վերջին անհատը անմիջապէս կը սպաննեն եւ որպէսզի հանրային առողջութիւնը չվնասուի, դիակները նախապէս պատրաստուած փոսերու մէջ կը ձգեն ու կը թաղեն: Այս կերպով յաջորդաբար բնաջնջման գործողութիւնը կը լրացնեն: Այս հայերուն քով գտնուող գոյք, դրամ եւ գոհարեղէններէն ալ իբրեւ աւար չէթէներուն կը բաժնուին: Մենք ասոնցմէ բան մը առնելու չենք, եւ եթէ կիներ ու աղջիկներ ալ լլկելու ըլլան, ատոր ալ պէտք է հանդուրժենք:*

Տօքթ. Նազըմ - Այս կարգի մարդոց հոգեբանութեան որչափո՜վ տեղեակ էք, Պէհա, ես ձեզի տօքթոր չէ, այլ այս վայրկեանիս արիւնռուշտ չէթէներու խմբապետ մը կը կարծեմ. որչա՜փ լաւ կը խորհիք»[1]:

Այսպիսով, ավարտելով նիստը, հավանություն տալով Բեհաեդդինի հայասպան ծրագրին, երեքի կոմիտեն փաստաթուղթը ներկայացրեց ներքին գործերի նախարարությանը, որտեղից Թալեաթը հրաման արձակեց անմիջապես գործի անցնելու «Թեշքիլաթի մախսուսան» կազմավորելու և հայկական զանգվածային ջարդերն սկսելու վերաբերյալ:

Ահա ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի արձակած հրամանն անփոփոխ.

«Հայերուն իրենց բնակավայրէն հանուելով բանակին չկարենալ սպառնալու եւ երկրին խաղաղութիւնը չկարենալ խանգարելու համար ուրիշ վայրեր ղրկուիլը քաղաքային եւ գինուորական իշխանութեանց կողմէ տեսնուած ստիպողական պէտքին համաձայն իբր կանխամիջոց կառավարութեան կողմէ որոշուած ըլլալուն, այս որոշումին շուտափոյթ գործադրութիւնը կարեւոր է: Իրականութեան մէջ, իր գոյութիւնը պաշտպանելու համար պատերազմի դաշտերուն վրայ իր հազարաւոր զաւակները զոհող եւ այս պահուն առանց ցեղի եւ կրօնի խտրութեան իր բոլոր հպատակներէն հայրենիքին հանդէպ ամէն ժամանակէ աւելի աջակցութիւն ակնկալող կառավարութեան մը՝ գինքը ներսէն զբաղեցնող եւ կռնակէն զարնելու աշխատողներուն հանդէպ այս որոշման յանգիլը եւ միեւնոյն ժամանակ գործադրութեան

[1] *Մեվլան զադե Ռիֆաթ*, նշված աշխատությունը, էջ 118 119:

մէջ չթերանալը, շատ բնական է որ իր օրինական իրաւունքն է. ըստ այնմ հարկ եղածին լուրջ կերպով գործադրութիւնը կը հրահանգուի»:

Այս հաղորդագրութենէն զատ 3 յօդուածներէ բաղկացած օրէնք մըն ալ հրատարակուած էր:

«Յօդ. Ա.- Երբ ժողովուրդին կողմէ որեւէ կերպով կառավարութեան հրամաններուն եւ երկրին պաշտպանութեան, արդարութեան պահպանման վերաբերեալ միջոցներու դէմ անսաստում, զէնքով դիմադրութիւն տեսնուի, բանակի եւ զօրաբաժիններու հրամանատարները եւ ասոնց փոխանորդները, անկախ կեդրոններու հրամանատարները, անմիջապէս զինուորական ուժով եւ խիստ կերպով պատժելու եւ դիմադրութիւնը հիմնովին բնաջնջելու արտօնուած եւ պարտաւոր են:

«Յօդ. Բ.- Զօրաբանակի եւ անկախ կեդրոններու հրամանատարները՝ զինուորական պէտքին համաձայն լրտեսութիւն եւ դաւաճանութիւն զգացուած գիւղերու եւ գիւղախումբերու ժողովուրդը կրնան անհատապէս եւ կամ ամբողջութեամբ ուրիշ վայրեր տարագրել եւ բնակեցնել:

«Յօդ. Գ.- Սոյն օրէնքի հրատարակութեան թուականէն սկսեալ գործադրելի է:

13 Րէճէպ 1333, 14 Մայիս 1331-1915»[1]:

Այսպիսով, 1915 թ. մայիսի 14-ին սկսվեց «Հատուկ կազմակերպություն», Բեհաեդդին Շաքիրի գլխավորած բաժանմունքի ձևավորումը: Խիստ կարևոր համարվեց կադրերի ընտրության խնդիրը:

Կազմակերպությունն իր երկու ճյուղերով գտնվում էր Էնվերի և Թալեաթի գերիշխանության տակ, առատորեն ֆինանսավորվում էր պատերազմական և ներքին գործերի նախարարությունների կողմից, կատարում նախարարների ամենատարբեր հանձնարարությունները: 1919 թ. երիտթուրքերի դատավարության, խաչածև հարցաքննությունների ժամանակ պարզվեց, որ «Հատուկ կազմակերպության» սև գործերին խառն են եղել և մեղսակից ***Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Իբրահիմը, Շուքրին, Խալիլ և Ահմեդ Նեսիմին,*** Իթթիհատի ընդհանուր քարտուղար ***Միդհատ Շուքրին,*** դոկտոր ***Ռուսուկսին, Բեհաեդդին Շաքիրը, Նազըմ բեյը, Աքըֆը, Ռիզան,*** ընդհանուր ապահովության նախկին նախարար ***Ազըմ*** բեյը[2]: Այսինքն «Միություն և առաջադիմություն» կուսակցության ողջ ղեկավար կազմը, որոնք էլ պատասխանատվության ենթարկվեցին դատական ատյանի կողմից, այն օրերին... իսկ հիմա թուրքերը ուրանում են կատարվածը:

Կազմակերպության գործունեությանը վերաբերող բազմաթիվ, հազվագյուտ վավերագրեր է ձեռք բերել, թուրքերենից հմտորեն թարգմանել և վերլուծական շարադրանքով ներկայացրել ***Գրիկերը,*** որի ժողովածուն անփոխարինելի նյութեր է պարունակում այս խնդիրների վերաբերյալ[3]:

Հմուտ թուրքագետը, հայատառ թուրքերենով մի շարք փաստաթղթեր թարգմանաբար, կողք կողքի զետեղված ձևով, հրատարակելով, անում է ուշագրավ ու վավերական ներքոհիշյալ ընդհանրացումը.

«Պոլսոյ մէջ Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան ակումբը Նուր էլ Օսմանիէ դարձած էր պետական որոշումներու եւ գործունէութեան ընդհանուր կեդրոն կամ կառավարական զանազան վարչական մասնաճիւղերու գործատեղի: ***Հոն էր***

[1] ***Մեվլան զադե Ռիֆաթ,*** նշված աշխատությունը, էջ 119 120:

[2] ***Արամ Անտոնյան,*** Մեծ ոճիրը, Պոսթըն, 1921, էջ 273-274:

[3] Պատրաստեց ***Գրիկեր,*** Եոզղատի հայասպանության վավերագրական պատմությունը: Նյու Յորք, 1980, էջ 215-270:

որ վճռած էին Հայերու տեղահանութեան գործողութեան մանրամասնութիւնները, հոն էր որ ծրագրած էին Հայերու կոտորածներուն մանրամասն որոշումները եւ ոճիրներու գործադրութեան վայրերը կանխապէս նշանակուած էին, հոն էր որ վճռած էին բանտերէն ազատ արձակել դատապարտեալ ոճրագործները: Նոյնպէս կուսակցութեան կեդրոնական կոմիտէն Օսմանեան կայսրութեան հայաբնակ նահանգներուն, գաւառներուն եւ գաւառակներուն մէջ տարածած էին կազմակերպական ցանցեր հոն նշանակելով պատասխանատու քարտուղարներ եւ պատուիրակներ, որոնք տեսակ մը լիազօրութիւն ունէին պաշտօնական վարչութեան վրայ հայերու տեղահանութեան եւ բնաջնջումի գործերուն կարգադրութեան մէջ»[1]:

Այսպիսով, «Թեշքիլաթի մախսուսայի» գործավայր-կենտրոնը հաստատված էր երիտթուրքերի կենտկոմի տեղակայված շենքում, այսինքն՝ Կ. Պոլսի *Նուր էլ Օսմանիեում:* Կազմակերպության ղեկավար կազմը փաստորեն իթթիհատականների կենտկոմի անդամներն էին, որոնք և առանց բացառության, 1919 թ., հեռակա թե առկա, դատապարտվեցին:

Տեղը և ղեկավարությունն առանձնացնելուց հետո նրանք ձեռնամուխ եղան կազմակերպության անդամների *«ընտրությանը»,* ֆինանսավորմանն ու հանձնարարություններին: Կազմակերպության գործող ղեկավար կազմը ևս խայտաբղետ էր, բազմաճյուղ:

1. «Հատուկ կազմակերպության» գործակալներն էին՝ ինժեներները, բժիշկները, ժուռնալիստները, մոլլաները, դերվիշական օրդենների անդամները և այլն: Սակայն կազմակերպության բաղկացուցիչ մասերը կազմող խմբերի ղեկավարները նշանակվում էին օսմանյան բանակի սպաներից: Առաջին ղեկավարներից էր պարտիզանական շարժման ժամանակ (բալկանյան պատերազմներում) մեծ փորձ ձեռք բերած, էնվերի մտերիմ ընկեր, *Սուլեյման Ասկերի բեյը,* նրա երաշխավորությամբ տեղակալ նշանակվեց *Ատիֆը* (Կամչիլ)[2]:

Ղեկավար այդ կազմում, Բեհաեդդին Շաքիրի հանձնարարությամբ, ընդգրկվեցին Խոսրով և Սամի կուչուբաշիները, Օմար Նադջին, Տրիպոլիի դեպուտատ Շուվս Շեվտան, էյուբ Սաբրին և ուրիշներ[3]: Հետագայում սրանց կազմը փոփոխվեց, համալրվեց և ինչքան Առաջին աշխարհամարտը թեժանում էր, այնքան վերջիններս դառնում էին դաժան, հայասպան ու երբեմն էլ անկառավարելի[4]:

2. «Հատուկ կազմակերպության» մեջ ծառայելու հրավեր ստացան քրդական աշիրեթները, հատկապես նրանք, ովքեր 90-ական թվականներին ընդգրկված էին եղել «համիդիեների» զորաջոկատներում և զինաթափվել 1909 թ. հեղաշրջումից հետո: Նորից քրդական վայրենաբարո խոլամներն իրենց տարերքի մեջ էին և հիշում էին հայերի ունեցվածքի համը, նրանց գեղեցիկ կանանց ու աղջիկներին տիրանալու հաճույքը[5]:

3. *«Թեշքիլաթ»*-ի կազմում ընդգրկվեցին դեռևս Ղրիմի (1853-1856 թթ.) պատերազմի ժամանակ Ռուսաստանից բռնությամբ գաղթեցված *չերքեզները,* որոնք իսլամապաշտ լինելով հանդերձ, թունոտ ատելությամբ էին տոգորված քրիստոնյա ազգերի, հատկապես, հայ ժողովրդի նկատմամբ: Սրանց էին հարում մահմեդական,

---

[1] *Գրիկեր,* նշված աշխատությունը, էջ 229-230:

[2] *Արսեն Ավակյան,* նշված աշխատությունը, էջ 77:

[3] Նույն տեղում, էջ 78:

[4] **АВПРИ,** Политархив, фонд 151, опись 482, дело 719, 1911-1916 гг., лл. 213-214.

[5] **АВПРИ,** Турецкий стол (старый), фонд 149, опись 502а, 1897-1916, Эрзерум, дело 3116, лл. 401-414.

թափառաշրջիկ գնչուները, իսլամապաշտ արաբական «անտուն ու անհայրենիք», անիվների վրա ապրող բեդուինները[1]:

4. *«Թեշքիլաթի մախսուսայի»* համար, սակայն, հիմնական «անդամներին» հավաքագրեցին, ինչպես Բ. Շաքիրն էր հանձնարարել, ***քրեական ու քաղաքական հանցագործներից, գողերից, ավազակներից, մարդասպաններից, իրենց վայրենի վարքով ու դաժանությամբ հանրահայտ դարձած թուրքերից, քրդերից ու չերքեզներից:***

Գրիկերը Եոզղատում «Թեշքիլաթի» շարքերը համալրած հանցագործների հարյուրավոր անուններ է հիշատակում, նշելով նրանց կենսագրական բոլոր տվյալները: Որպեսզի ընթերցողը պատկերացում կազմի, թե ինչ անցյալ ունեին այդ բորենիները, բերենք Եոզղատի բերդից ազատված և հայերի ցեղասպանության պրոցեսում օգտագործած հանցագործների մի փոքր հատված միայն: Նրա հիշատակած Բ. ցանկում կարդում ենք.

1. ***Գարա Խալիլ Օղլու Մէհմէտ,*** Եոզղատի Քէօթիմհոլ գիւղացի, մարդասպանութեան յանցանքով 15 տարի բանտարկութեան դատապարտուած:

2. ***Պըտըք Օղլու Խալիլ,*** Պողազլեանի Կէօքտէմ գիւղացի,: 15 տարուան բանտի դատապարտուած՝ մարդասպանութեան ոճիրով:

3. ***Վէլի Քեհեա Օղլու Մուսթաֆա,*** Եոզղատի Րիւթպէճի գիւղէն, 15 տարի բանտի դատապարտուած մարդասպանութեան ոճիրով:

4. ***Հիւսէին Օղլու Մէհմէտ Մախտումը,*** Պողազլեանի Ալի Թիմուրճի գիւղէն, մարդասպանութեան ոճիրով 15 տարուան բանտարկութեան դատապարտուած:

5. ***Կոչ Օղլան Օղլու Մէհմէտ,*** Պողազլեանի Իքի Գըշլա գիւղէն, 15 տարի բանտի դատապարտուած մարդասպանութեան ոճիրով:

6. ***Մէյիտ Մէհմէտ Օղլու Մուհաճիր Ղազի,*** Անգարայի Տէյմիշ գիւղէն, 15 տարի բանտի դատապարտուած՝ մարդասպանութեան ոճիրով:

7. ***Եուսուֆ Օղլու Եուսուֆ,*** Սարընըն Վէրան գիւղէն, 15 տարի բանտի դատապարտուած մարդասպանութեան յանցանքով:

8. ***Եագուպ Օղլու Ալի,*** Սորկունի Աքոլուք գիւղացի, 15 տարի բանտի դատապարտուած մարդասպանութեան յանցանքով:

9. ***Էօքէպէ Օղլու Հիւսէին,*** Սորկունի Քիւրէք գիւղացի, 15 տարի բանտի դատապարտուած մարդասպանութեան ոճիրով:

4. Դ. Ե. թիւ Մ 534:

Ալի Պէյ Եոզղատի բանտի տնօրէնն է»[2]:

Գրիկերը, ապա շարունակելով մարդագայլերի այդ ցուցակը, անում է իր եզրահանգումը, ընդհանրացումը. «Եոզղատի բանտէն ազատ արձակուած վաթսունհինգ ոճրագործներէն մեծ մասը մարդասպաններ են. 65էն 51ը մարդասպան է. 12ը գող եւ աւազակ, մին անորոշ յանցանքով բանտարկուած, իսկ ուրիշ մըն ալ բանտէն փախած ըլլալուն համար: Այս մարդասպաններէն մեծ մասը 15 տարուան բանտարկութեան դատապարտուած էին, մէկ հոգի ցկեանս, մնացածները եօթէն մինչեւ երեք տարի բանտարկութեան դատապարտուած էին:

Եոզղատի բանտի տնօրէն Ալի Պէյ իր երկու պաշտօնական եւ բացատրական յայտարարութիւններու մէջ կը գործածէ ***Թէշքիլաթը Ճետիտա*** եւ ոչ թէ ***Թէշքիլաթը Մախսուսա*** բառերը, զանազանելու համար առաջինը երկրորդէն, ուրիշ բառով ար-

[1] **ЦГВИАРИ**, ֆոնդ 2000, դեպո 145, 1916, լո. 25-27. Տե ս նաև ***Արամ Անտոնյան,*** Մեծ ոճիրը. էջ 292: Նա հիշում է, որ ***քուրդ Ալոյի*** չեթենի ձեռքով սպանվեցին ***Դանիել Վարուժանն*** ու ***Ռուբեն Չիլինկիրյանը:***

[2] ***Գրիկեր,*** նշված աշխատությունը. էջ 217:

դէն գոյութիւն ունեցող *Թէշքիլաթը Մախսուսա* տարբեր էր 1914 Յուլիս ամսուան մէջ առնուած որոշումին համեմատ կազմուած *Թէշքիլաթը ճետիտայէն:*

ճետիտա արաբերէն բառ է նոյն իմաստով գործածուած նաեւ թրքերէնի մէջ, կը նշանակէ նորոգուած կամ նոր գոյութեան բերուած: Արդէն գոյութիւն ունէր 1913 Յունուար ամիսէն ի վեր *Թէշքիլաթը Մախսուսա* մը որ հիմնուած էր պաշտօնապէս եւ որ կախում ունէր պատերազմական նախարարութենէն անկանոն գործունէութեամբ օգնելու Օսմանեան բանակին, մինչ 1914 Յուլիսին կազմուած *Թէշքիլաթը ճետիտան* նպատակ ունէր հայ ցեղի բնաջնջումը: Այս մասին պաշտօնական վաւերագրերէ պիտի տրուին մանրամասնութիւններ:

Թուրքիոյ բանտերէն դատապարտեալ ոճրագործները ազատ արձակելու հրամաններ տրուած էին Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան Ընդհանուր Կեդրոնական Կոմիտէէն, Պատերազմական Նախարարութենէն, Ներքին Գործերու Նախարարութենէն, եւ մասնաւորապէս Օսմանեան Արդարութեան Նախարարութենէն, որուն հրահանգներուն համաձայն իւրաքանչիւր նահանգի, գաւառի, գաւառակի եւ քաղաքի մէջ կազմուեցան յատուկ յանձնախումբեր: Այս յանձնախումբերու մէջ առնուեցան առ հասարակ կառավարիչներ, զինուորական հրամանատարներ, ընդհանուր դատախազներ եւ դատաւորներ, ոստիկանապետներ եւ առողջապահութեան տնօրէններ:

Եոզղատի նախկին դատաւոր Մուսթաֆա Րէմզի Պէյ, որ նոյն քաղաքի մէջ կազմուած յանձնախումբի անդամ էր, յատկապէս կը շեշտէ թէ արդարութեան նախարարութեան հրամանով էր որ կազմուեցաւ Եոզղատի բանտէն ոճրագործները ազատ արձակելու յանձնախումբը: Արդարութեան Նախարարութեան հրամանները կ'ընդգրկէին նաեւ բանտերէն ազատ արձակուած ոճրագործներու գործած ոճիրներն եւ կողոպուտները դատական հետապնդումէ զերծ պիտի մնային բացի այն պարագայէն երբ մարդասպանները ու կողոպտիչները բաժին չէին հաներ իրենց կողոպուտէն կառավարութեան եւ Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան մէկ երրորդի համեմատութեամբ»[1]:

Նա ապա շարունակում է.

«Եոզղատի բանտէն 15 Մայիս 1915ին վաթսուն հինգ դատապարտեալ ոճրագործներ ազատ արձակելու համար արդարութեան նախարարութենէն մասնաւոր հրաման տրուած էր կազմել յատուկ յանձնախումբ. այս յանձնախումբի անդամ դատաւոր Մուսթաֆա Րէմզի Թուրք Պատերազմական Ատեանի պահանջով տեղեկագիր մը ղրկած է Եոզղատի կառավարիչին, որ իր կարգին զայն փոխանցած է Պոլսոյ Ատեանի նախագահութեան:

Այս վաւերագրին մէջ յատկապէս նկատելի է գլխաւոր եւ կարեւոր այն կէտը որ արդարութեան նախարարութիւնը մասնաւոր հրաման ղրկած է կազմել յանձնախումբ մը բարձրաստիճան քաղաքային եւ զինուորական անձերէ Եոզղատի բանտէն ազատ արձակելու դատապարտեալ ոճրագործները, որոնք ոչ մէկ յատկութիւն ունէին զինուոր գրուելու կամ զինայր արձանագրուելու, *եւ որոնք ղրկուած են Չորում* հոն հրոսակներու խումբեր աւելցնելու եւ զօրացնելու:

Կոտորածներու պատասխանատուները դատող Պոլսոյ Թուրք Արտակարգ Պատերազմական Ատեանի Նախագահը ամբաստանեալ Երիտասարդ Թուրք ղեկավարներու առջեւ կարդալ կու տայ 1914ին ղրկուած ծածկագիր հեռագիրները ապացուցանելու համար թէ Երիտասարդ Թուրքերու Կուսակցութիւնը 1914 Յուլիսէն սկսեալ կազմակերպել սկսած էր նոր Մասնաւոր Կազմակերպութիւն մը *Թէշքիլաթը Մահ-*

[1] *Գրիկեր,* նշված աշխատությունը. էջ 223-224:

սուսա կամ *Ճէտիտա* որուն պաշտօն տրուեցաւ տարագրուած հայ կարաւանները կոտորելու եւ անոնց ինչքերը կողոպտելու»[1]:

Քննարկվող խնդիրների խոշորագույն մասնագետ, թուրքագետ, հայագետ Հայկազն Գ. Ղազարյանը, տարիներ շարունակ պրպտել է տարբեր երկրների արխիվները, գիտական հասարակայնությանն ու ընթերցող լայն շրջաններին ներկայացրել շատ հետաքրքիր նորահայտ վավերագրեր, որոնք կասկած չեն թողնում «Թեշքիլաթի մախսուսայի» հայասպան գործունեության վերաբերյալ: Նրա բերած փաստերը թողնելով, որ ընթերցողը ծանոթանա դրանց հետ, այստեղ ներկայացնենք պատմաբանի ամփոփիչ ու ամփոփ եզրակացությունը ցեղասպան այդ կազմակերպության և կազմակերպիչների մասին:

Նա գրում է. «Թալեաթի և Սայիտ Հալիմի ղեկավարած պետութեան ժառանգորդ, Թուրքիոյ նախագահ Ճեմալ Կիւրսէլ, վարչապետ Սայիտ Խայրի Իւրկիւպլիւ, Ուաշինկթընի թուրք դեսպանատան տեղեկատու կցորդ Ալտեմիր Գըլըճ, Գահիրէի թուրք դեսպանատան գործակատարը կամ Փարիզի թրքական դեսպանատան մամլոյ խորհրդականը Ջիա Թուկալ եթէ անգամ մը քննեն թուրք պետութեան արխիւները, Երեսփոխանական ժողովի թուղթերը եւ արձանագրութիւնները, *Իթթիհատի և Թեշքիլաթը Մախսուսէի նիստերուն արձանագրութիւնները եւ յարաբերական թուղթերը, շատ դիւրութեամբ պիտի տեսնեն թուրք պետութեան կատարած ցեղասպանական ոճիրներուն ահաւորութիւնը եւ նաեւ հայերու ներկայացուցած իրաւունքներուն ու պահանջներուն արդարութիւնը, եւ ստիպուած չեն ըլլար ստայօդ յօդուածներ տեղաւորելու թերթերու մէջ»* [2]:

Թուրքիայի նոր պատմության, հատկապես *«Հատուկ կազմակերպության»* գործունեության բազմաթիվ խնդիրները սփյուռքահայ պատմաբանները, բնականաբար, քննել են ավելի բազմակողմանի ու փաստագրված, քան Մայր Հայրենիքում: Այդ պարագան պայմանավորված է նաև նրանով, որ ոչ միայն նրանք ստեղծագործական հնարավորություններից *զրկված չեն եղել,* այլև տիրապետելով լեզուների, հատկապես թուրքերենի, գտնելով Թուրքիա ներթափանցելու հնարները, հայթայթել են նոր նյութեր և ամեն առիթով թարմ ու նոր խոսք են ասել եղեռնի դարաշրջանին վերաբերող հարցերի մասին: Բերենք դրանցից մի քանիսը.

Սփյուռքահայ պատմաբան ***Լևոն Վարդանը,*** «Թող թուրքը խոսի» իր աշխատությունը կառուցելով բացառապես թուրքական սկզբնաղբյուրների և թուրքալեզու գրականության ընձեռած փաստերի վրա, անում է ներքոհիշյալ դատողությունները.

«Սակայն վերջերս հրապարակ նետուած սա գիրքերը չեն այն միակ հատորները, որոնք կը խօսին Հայկական Հարցի մը եւ անկէ յառաջացած Հայկական Տասնհինգի մը մասին: Երիտասարդ-թուրքերու իշխանութեան անկումէն ետք, երբ Թալէաթ եւ ընկերներ փախուստ կատարեցին սուլթաններու մայրաքաղաքէն՝ իրենց հետ տարին բաւական մեծ քանակով վաւերագիր եւ ապա փճացուցին զանոնք: Ըստ Շեւքէթ Սուրէյա Այտեմիրի՝ Թալէաթ իրեն հետ ունէր մեծկակ ճամպրուկ մը վաւերագիրներու, զոր վառեց հապճեպով պարտէզի մը մէջ, երբ զինք եւ իր ընկերները Պոլիսէն փախցնող գերման ԵՈՒ. 67 յածանաւը զիրենք իջեցուց Կէօզլեւէ (Եւփաթորիա)՝ Խրիմի մէջ, Սիմֆերոփոլի մօտ:

Բայց Թալէաթ միակը չմնաց Հայկական Տասնհինգի հետ առնչուող վաւերագիրները փճացնելու արարքին մէջ: Օսմանեան Կայսրութեան պետական ընդհանուր ապահովութեան նախկին տնօրէն Ազիզ՝ գիտնալով որ վերջին չունչին էր հասած Թա-

---

[1] *Գրիկեր,* նշված աշխատությունը, էջ 225-226:

[2] *Հայկազն Գ. Ղազարեան,* Ցեղասպան թուրքը, Պեյրութ, 1968, էջ 57:

լեաթի վարչութիւնը՝ մեծ վեզիրին 15 Սեպտեմբերի հրաժարումէն առաջ վերցուց բաւական մեծ թիւով հեռագիրներ, փաստաթուղթեր, Մասնաւոր Կազմակերպութեան *(Թեշքիլաթը Մախսուսէ) պատկանող հաղորդակցութիւններ, Երիտասարդ-Թուրք* Կուսակցութեան Ընդհանուր Կեդրոնի ամբողջ թուղթերը եւ տոմարները, զանազան տեղեկագիրներ եւ հաղորդագրութիւններ, եւ գրաւոր վկայութիւններ եւ անհետացուց զանոնք:

Ըստ Հիւսամետտին էրթիւրքի, որ պետերէն մէկն էր Մասնաւոր Կազմակերպութեան, այդ կազմակերպութեան պատկանող եւ այլ տեսակի վաւերագիրներուն բոլորն ալ ինք վերցուց եւ պահեց Ֆաթիհի մզկիթին գաղտնի թաքստոցներէն մէկուն մէջ: Տոքթ. Նազըմ, Կեդրոնական Մարմինի ընդհանուր քարտուղարը, իր կարգին Գերմանիա իր փախուստէն առաջ, Երիտասարդ-Թուրք Կուսակցութեան Պոլսոյ Օսմանիէի կեդրոնէն վերցուց բոլոր թուղթերը:

Իսկ 1919ին Պոլսոյ մէջ տեղի ունեցող «հռչակաւոր» դատավարութիւններու ընթացքին (որոնցմով որպէս թէ պիտի դատուէին Հայկական Տասնհինգի ոճրագործները) հաւաքուած *196 թղթածրար վաւերագիրներու,* վկայութիւններու եւ խոստովանութիւններու ամբողջութիւնը յափշտակուեցաւ քեմալականներու կողմէ, եւ բոլորը նախ տարուեցան Պրուսա, ուրկէ յետոյ փոխադրուեցան Անգարա՝ ուր եւ մինչեւ այսօր ամուր կերպով կղպուած կը մնան անոնք:

Իսկ ինչ որ մնացած էր Երիտասարդ-Թուրք Կուսակցութենէն անոր, այդ կուսակցութեան, լուծուած յայտարարուելէն ետք անոր աւերակներուն վրայ կանգնած *Թեճետտիւտ* կուսակցութեան փոխանցուեցաւ, որ իր կարգին, քեմալականներու յաղթանակէն ետք փոխանցեց կեդրոնական իշխանութիւններուն: Այս վերջիններն ալ պարզօրէն զանոնք դրին Պոլիսէն գողցուածներուն քովիկը եւ կղպեցին ամբօրէն:

Այսօր, Հայկական Տասնհինգին հետ աղերսուող եւ առկայ եղող այս վաւերագիրները կը մնան հեռու հասողութենէ պարզապէս անոր համար որ երբ կարելի չէ ձեռքի տակ ունենալ վաւերագիրը կարելի չէ նաեւ փաստել առկայութիւնը կատարուածին եւ ճշմարտութեան, վասնզի երբ չկա՞յ վաւերագիրը, երբ չկա՞յ զոհը՝ չկա՞յ եւ չէ՞ եղած ու պատահած դէպքը:

Անստգի՞ւտ այս մտածելակերպը յատուկ է միմիայն թուրքին. անիկա, այդ թուրքը, շատ լաւ գիտէ արժէքը վաւերագիրներուն, ահա թէ ինչո՛ւ մեծ փոթորիկի օրերուն Թալէաթ մէկէ աւելի անգամներ դիմեց պատկան մարմիններուն, որ փճացնէին որեւէ հետք, որեւէ փաստ, որեւէ նկար եւ, որեւէ տուեալ որ կրնար խօսիլ կատարուածներուն մասին»[1]:

Սփյուռքահայ վաստակաշատ պատմաբան, ցեղասպանությանը նվիրված բազմաթիվ ու բազմաշխատ մենագրությունների հեղինակ, պրոֆ. *Վահագն Տատրյանը,* «Հատուկ կազմակերպության» մասին գրել է մի քանի բաժիններ, որոնցից ընթերցողին ներկայացնենք մի քանի հատվածներ առանց փոփոխությունների:

Նա բանաձևում է, որ Իթթիհատը շատ շուտով դարձավ ոչ միայն քաղաքական կուսակցություն, այլև դավադրական կազմակերպություն: «Կառավարական ղեկն 1913 թվականի հունվարին ամբողջովին իր ձեռքն առնելուց հետո, *սաղմնային վիճակին մեջ գտնվող հակահայկական իր տրամադրությունները հարաճուն կերպով սկսան բյուրեղանալ և կառավարության քաղաքականության հունին մեջ արմատավորվիլ»*[2]:

---

[1] *Լևոն Վարդան,* Թող թուրքը խոսի, Պեյրութ, տպարան «Շիրակ», 1975, էջ 43-44:

[2] Պրոֆ. *Վահագն Տատրյան,* Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, «Պայքար», 1995, էջ 131-132:

Վ. Տատրյանը, այնուհետև ներկայացնում է երիտթուրքերի ջարդարարական քաղաքականության պատճառները, դրանց իրագործման մեխանիզմն ու հետևանքները, նա գրում է. *«Ձանգվածային մարդասպանութիւնը ոճիրի տեսակ մըն է, որուն իրագործման համար ամէն բանէ առաջ գաղտնապահութիւն, խստաբարոյ կարգապահութիւն, բայֆայական հաւատարմութիւն, բացառիկ խիզախութիւն եւ գազանային անգթութիւն պէտք է:* Սովորական պետական վարչամեքենայ մը դժուար թէ կարողանայ այս «արժանիքները» մարմնաւորող անձնակազմեր զօրաշարժի ենթարկել եւ ոճիրը իր լրումին հասցնել: Բռնատիրական եւ մոլեռանդ ղեկավարներէ առաջնորդուած միահեծան կուսակցութիւն մը ի վիճակի է այդպիսի անձնակազմեր մշակել եւ գործածել: Իթթիհատ այդպիսի կուսակցութեան մը հանգամանքը ուներ, մանաւանդ իր դաւադրական ենթակառոյցի ընծայած առաւելութիւններուն շնորհիւ: Այդ ենթակառոյցին գլխաւոր լծակները նախկին սպաներէ բաղկացող գինուորականներ էին, բայց ջարդարար ջոկատներու մեծ մասը, եթէ ոչ ամբողջաբար, արիւնարբու ոճրագործներու վոհմակներէ կը բաղկանային (kanli katil):

Իթթիհատ Կուսակցութեան գերադաս մարմինը յատուկ կարգադրութեամբ այդ ոճրագործները կայսրութեան մեծ բանտերէն ազատ արձակել տուաւ եւ ջարդի գործին լծեց: Ատիկա ընելու համար սակայն պէտք ուներ Արդարութեան, Պատերազմական եւ Ներքին Գործոց նախարարութիւններու աջակցութեան: Քանի որ այդ նախարարութիւնները կը կառավարուէին կուսակցութեան կողմէ նշանակուած վարիչներով, հարցը դիւրութեամբ լուծուեցաւ: Բանտերու վարչութիւնը, որ Արդարութեան Նախարարութեան հսկողութեան տակ էր, մեծապէս դիւրացուց գործը, արգիլելով ընդհանուր դատախազներու բողոքարկու միջամտութիւնը այս ապօրինի գործին դէմ: *Պատերազմական Նախարարութիւնը Թրքական Խորհրդարան դրկեց գնդապետ Պեհիճ էրքինը, օրէնսդիր մարմնի անդամները համոզելու համար,* որ հայրենիքին պիտի ծառայեն այս դատապարտեալ ոճրագործները: Արդարութեան Նախարարութիւնը ըրաւ նոյնը, հոն դրկելով աւագ խորհրդական Եուսուֆ Քեմալը: Այսինքն, կառավարութեան գրեթէ բոլոր իշխանութիւնները լծուեցան Իթթիհատի կուսակցական ոճրապարտ ծրագիրները իրագործելու նպատակին:

Որպէսզի ցեղասպանութիւնը անսայթաք կերպով գործադրուի, Իթթիհատ օգտուեցաւ յատկապէս իր կառոյցի այն ենթաբաժինէն որ կը բաղկանար երեք տեսակի կուսակցական լիազօրներէ: 1. Այսպէս կոչուած Պատասխանատու Քարտուղարներ (Kâtibi Mesul), 2. Պատուիրակ (Murahhas), եւ 3. Ընդհանուր Քննիչ (Umumi Müfettis): Այս լիազօրներու միակ պարտականութիւնն էր գաւառներու մէջ հակակշռի տակ առնել պետական վարչամեքենան եւ հսկել ցեղասպանութեան գործողութիւններու անխափան կիրարկման: Այս տեսակէտէ իրենք գերադաս հեղինակութիւն ունէին եւ կրնային նահանգային կուսակալներու իրենց կամքը պարտադրել: Թէ՛ Տրապիզոնի եւ թէ Կարինի (Էրզրումի) մէջ ատիկա իրօք պատահեցաւ: Տրապիզոնի Պատասխանատու Քարտուղար Նայիլ յետս կոչել տուաւ կուսակալին այն արտօնութիւնը որով երեխաներ, հիւանդներ եւ անկարներ առժամանակեայ կերպով զերծ պիտի կացուցուէին տարագրութենէն: Նոյնը պատահեցաւ Կարինի Կուսակալ Թահսինի առնչութեամբ: Ուրիշ տեղեր, ինչպէս՝ Անկորա, Եոզկատ, Հալէպ, Գասթամոնու, *կառավարիչներ, որոնք կ'առարկէին կամ կը վարանէին տեղահանութիւնը ջարդի վերածել,* Իթթիհատական այս լիազօրներու պնդումով առանց այլեւայլի պաշտօնազուրկ կ'ըլլային: Կուսակցական լուծը դաժան եւ լայնատարած էր, եւ ինչպէս 3-րդ Բանակի հրամանատար զօրավար Վէհիպ իր պատրաստած վկայագիրին մէջ շեշտած էր, կառավարական պաշտօնեաներ գաւառներու մէջ «կ'ենթարկուէին» (inkiyad) կուսակցութեան շէֆերուն: Այս բոլոր լիազօրները բծախնդ-

րօրէն ընտրուած եւ նշանակուած էին Իթթիհատի Կեդրոնական Կոմիտէին կողմէ եւ մեծ մասամբ նախկին սպաներ էին:

Բռնատիրական Կուսակցութեան մը պատասխանատուութեան սահմանները ո՛չ նշանակուած են, ո՛չ ալ նշանակելի են, մանաւանդ եթէ այդ Կուսակցութիւնը դաւադրական ոճրագործութիւններով որոշ ծրագիրներ կ'իրականացնէ: Իթթիհատ փորձեց պետութեան դիմակով հրապարակ իջնել եւ արդարացնել հայկական ցեղասպանութիւնը, զայն նենգափոխելով եւ իբրեւ պատերազմի պայմաններուն հարկադրած մէկ տեղահանութիւնը ներկայացնելով: ***Բայց նպատակադրութեան, նոյնիսկ թաքուն նպատակադրութեան մը էութիւնը երեւան կ'ելլէ ո՛չ թէ ատոր տրուած խաբեպատիր անունով, ինչպէս «տեղահանութիւն», այլ նպատակադրութեան յանգած ցայտուն հետեւանքներով: Հայկական ցեղասպանութիւնը ցայտուն արտայայտութիւնն է միահեծան եւ բռնակալ կուսակցութեան մը այն ոճրապատ նպատակադրութեան, որով ազգ մը կործանեցաւ շնորհիւ Իթթիհատ Կուսակցութեան դաւադրական միածուլման Օսմանեան Պետութեան հետ»***[1]:

Հարգարժան պատմաբանին այստեղ կարելի է միայն լրացնել ասելով, որ հայ ժողովրդի թափած ծով արյան պատասխանատվությունն ընկած է ոչ միայն բորենիներից ձևավորված իթթիհատի, այլև ***ողջ թուրք ու քուրդ ժողովուրդների, այո՛, ժողովուրդների ուսերի վրա:*** Միայն ***տասից մինչև քառասուն հազարի հասնող վայրենի, հանցագործ տարրերի ձեռքով երկուսևկես միլիոն ժողովրդին տեղահանել, ոչնչացնել, կրոնափոխել, չուկաներում վաճառելը հնարավոր չէր:*** Անմարդկային այդ պրոցեսին իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան թուրքերն ու քրդերը՝ չնչին բացառություններով:

Լսենք սփյուռքահայ մեկ այլ աղբյուրագետ, պատմաբան ***Արամ Անտոնյանի*** կարծիքն այս մասին, որը ձևակերպվել է ցեղասպանության օրերին, իբրև ականատեսի գրառումներ և ***թուրք Նայիմ բեյի*** ընծեռած փաստերի վերաշարադրումներ: Նա իր գրքի տողատակում ներկայացրել է վիճարկություն չվերցնող ներքոհիշյալ շարադրանքը. «Թուրք ժողովուրդը խաբուելուն համար, կամ վախնալուն համար չէր որ լռեց կամ համամիտ գտնուեցաւ Իթթիհատի ոճիրներուն: Բովանդակ Հայ ազգին հարստութիւնը, ստացուածքը, կիները, աղջիկները, տղաքը յափշտակելու ազատութիւնն էր որ զինքը մղեց ո՛չ միայն լուռ եւ համամիտ մնալու, այլ գործակցելու Իթթիհատին: Եւ առանց այդ գործակցութեան Իթթիհատը իր ափ մը չէթէներով երբէք չպիտի կրնար իրականացնել այն ահաւոր սպանդը: Եւ յետոյ, թուրք ժողովուրդը, Իթթիհատի քարոզութիւններուն հետեւանքով, համոզուած էր թէ Հայերը կայսրութեան սպառնացող վտանգ մըն են, եւ թէ անոնց բնաջնջումը, որ անպատիժ պիտի մնար ոեւէ կերպով, մէկ հատիկ միջոցն էր այդ վտանգը բառնալու համար:

Իթթիհատը ամբողջ թուրք ժողովուրդին օժանդակութեան պէտք ունէր եւ ունեցաւ այդ օժանդակութիւնը: Եւ արդէն, նախորդ բոլոր ջարդերը. Համիտի օրով կատարուածները ինչպէս Ատանայինը, միշտ թուրք ժողովուրդին միջոցաւ եղած են: Չէ մոռցուած անշուշտ որ Համիտ՝ ջարդերուն բոլոր պատասխանատուութիւնը ժողովուրդին կը վերագրէր. առարկելով որ չի կրնար անոր կիրքերը սանձել»[2]:

Մենք, լրիվ համերաշխելով Ա. Անտոնյանի կարծիքին, միաժամանակ ավելացնում ենք քրդերի կատարած հայասպան դերը, որը երբեք չի կարելի մոռանալ:

Թուրք պատմաբան Ահմեդ Ռեֆիկ Ալթընայը (1880-1937) ականատես է եղել էսքի-

---

[1] Պրոֆ. *Վահագն Տատրյան*, նշված աշխատությունը, էջ 131-133:

[2] *Արամ Անտոնյան*, Հայկական վերջին կոտորածները և Թալեաղ փաշա. Պոսթըն, տպարան «Պահակի», 1921, էջ 277, 279:

շեհիրի 1915 թ. տեղահանությանը և 1918 թ. այցելել է սկզբում Էրզրում, ապա Ալեքսանդրապոլ: Այնուհետև իր տեսածն ու լսածը ամփոփել է մի աշխատության մեջ, որը հրատարակել է թուրքերենով: Վերջերս հայոց լեզվով (թարգմանաբար) լույս տեսած այդ գրքում «Հատուկ կազմակերպության» և երիտթուրքերի ջարդարարության մասին կարդում ենք. «Սակայն իթթիհադականները ցանկանում էին իսպառ ջնջել հայերին և այս ձևով մեջտեղից հանել վեց վիլայեթների հարցը: Ենթադրելով, թե օր-օրի մոտենում է հայերի փրկության պահը. Անատոլիայի արևելյան սահմաններում կատարվող շուտափույթ ծեռնարկումները վերաճեցին կոտորածների: Հայ, թուրք՝ հայրենիքի հազարավոր զավակներ ճզմվեցին կոմիտեի ոտքերի տակ: Պատերազմի սկզբում Ստամբուլից բազմաթիվ հրոսակախմբեր ուղարկվեցին Անատոլիա: *Այս հրոսակախմբերը բանտերից դուրս բերված մարդասպաններից ու հանցագործներից էին կազմված: Սրանք, ռազմական նախարարության մարզահրապարակում «Հատուկ կազմակերպության» միջոցով մեկ շաբաթ վարժվելուց հետո Կովկասի սահման էին ուղարկվում: Հայերի նկատմամբ իրականացվող բռնություններում ամենից մեծ հանցագործություններն այս հրոսակախմբերն են կատարել: Այստեղ հրոսակախմբերն ու ժողովուրդը կոտորում էին միմյանց, արյան հեղեղը քշում տանում էր դիակները*»[1]:

Այսպիսով, երիտթուրքերի վաղուց ծրագրած, մշակած, *պետական քաղաքականության մակարդակի բարձրացրած* Հայոց ցեղասպանությունը սկսեց իրականացվել Առաջին աշխարհամարտի հենց առաջին ամիսներին, որոշ տեղերում, նույնիսկ դրանից ավելի վաղ[2]:

[1] *Ահմեդ Ռեֆիկ,* Երկու կոմիտե. երկու ոճիր. Երևան, 1997, էջ 33:

[2] *Մեվլան զադե Ռիֆաթ,* Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իթթիհատի հայաջինջ ծրագրերը. Երևան, 1990, էջ 120-121:

Գլուխ երրորդ

Հայ երիտասարդության զինվորագրումն ու ոչնչացումը. Ապրիլի 24-ի ողբերգությունը

Եվ երբ մենք պնասանք Թուրքիայի այդ գոհին՝ մեզ հատված մարող աչքերով, որոնց մեջ հույսի շող առկայծնց, մենք վերջապես հասկացանք, որ այդ մեր քույրն է մնռնում Արևելքում և մնռնում է հենց նրա համար, որ նա մեր քույրն է, որի հանցանքն այն է, որ նա համակված էր մեր զգացումներով, սիրում էր այն, ինչ մենք ենք սիրում, մտածում էր այնպես, ինչպես մենք ենք մտածում, հավատում էր նրան, ինչին մենք ենք հավատում, և մեր նման գնահատում էր իմաստությունը, արդարությունը, բարությունը, արվեստը: Սա էր նրա անբավելի հանցանքը:

Հայաստանը վերջին շնչումն է, բայց նա կվերածնվի:

Արյան այն փոքր բանակությունը, որը նա դեռևս պահպանում է, բանկային արյուն է, որից հերոսական սերունդ է ծնունդ առնելու: Այն ժողովուրդը, որը մեռնել չի ուզում, նա երբեք չի մեռնի...

ԱՆԱՏՈԼ ՖՐԱՆՍ
9-ը ապրիլի, 1916 թ.

1. Հայ երիտասարդության վինվորագրումն ու ոչնչացումը. Մեծ եղեռնի սկզբնավորումը

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ սկզբնավորվեց համաշխարհային պատերազմի բռնկմանը զուգընթաց, այսինքն այն պահին, երբ Թուրքիան դեռևս ոչ մի երկրի պատերազմ չէր հայտարարել, և ոչ էլ նրան էին ներքաշել այդ սպանդի հորձանուտը: Սակայն երիտթուրքերը, ինչպես նախորդ բաժիններում բազմիցս փաստեցինք, վաղօրոք նախապատրաստված լինելով *ցեղասպանության* իրականացմանը, ակնդետ սպասում էին «նպաստավոր պայմանների»:

Այժմ, իրար հոշոտող, երկու բանակների բաժանված աշխարհի մեծերը, սեփական հոգսերից զատ, այլևս ուրիշներով զբաղվելու ժամանակ չէին գտնում: Ասում են՝ որսի համար գայլերը ամենից օրեր են որոնում: Թուրքերի ու Թուրքիայի համար այդպիսի օրեր եղան պատերազմի առաջին տարիները, որոնցից օգտվելով սկսեցին *Մեծ ոճիրի* իրականացումը:

Ա. Մեծ եղեռնը սկզբնավորվեց հայ երևելիների ***պաշտոնանկությունից***՝ թե՛ մայրաքաղաքում և թե՛ ամբողջ կայսրությունով մեկ: Թուրքիայում, հատկապես Համիդի գահընկեցությունից հետո, հայերից շատերը բազմաթիվ ու բազմազան պաշտոններ ստացան, երեսփոխաններ դարձան, ոմանք գավառներում, ոմանք էլ կենտրոնում բարձրապատիվ աթոռներ զբաղեցրին: Ժամանակն էր գոցել այդ ճանապարհը, մանավանդ, որ նրանք չպետք է տեղեկություններ ստանային, թե ինչ է կատարվելու առաջիկայում:

Հայերի պաշտոնանկության պրոցեսը սկսվեց ***1914 թ. հունվարից*** և շարունակվեց շուրջ մեկ տարի: Դիմենք ժամանակակիցների վկայություններին: ***Գրիկերը*** բերում է ներքոհիշյալ շարադրանքը. «Յունուար 1914էն սկսեալ ներքին գործերու նախարարութեան եւ արդարութեան եւ կրօնից նախարարութեան հրամաններով եւ հրահանգներով նահանգներու եւ գաւառներու մէջ պետութեան եւ ***վարչական շրջանակներու մէջ պաշտօն վարող Հայերը պաշտօնանկ եղան, քիչ բացառութեամբ, եւ անոնց տեղ բերուեցան իսլամ եւ թուրք պաշտօնեաներ այնպէս որ մէկ տարուան 1914-1915 ընթացքին հայ պաշտօնեաներէն գրեթէ հարիւրին 90ը փոխարինուած էին:***

Պոլսոյ Պատրիարքարանը 16 Ապրիլ 1914ին բողոք ներկայացուց կառավարութեան, սակայն պաշտօնանկութիւնները աւելի սաստկացան եւ բազմացան: Նոյեմբեր 1914ին արդէն վեց հայ նահանգներու պետական շրջանակներու մէջ պաշտօնավարող Հայերը հեռացուած էին իրենց պաշտօններէն: Պաշտօնանկ եղած Արթին Աբարթեան, որ Զէյթունի նախկին գայմագամ եղած էր եւ Սեբաստիոյ կուսակալին օգնական, Պոլսոյ մէջ փորձեց նոր պաշտօն մը գտնել: Թալաաթ Պէյ մերժեց անոր ամէն պաշտօն եւ ըսաւ. ***«Հայերուն այլևս պաշտօն չկայ, իսլամ եղիր, թերեւս պաշտօն մը ընդունիս»:***

Սակայն Անգարայի կուսակալութեան հայերու տարագրութեան եւ կոտորածի ժամանակը յետաձգուած ըլլալով, նոյնպէս Եոզղատ գաւառի հայ պաշտօնեաներու պաշտօնանկութիւնն ալ յետաձգուեցաւ: Եոզղատի Հայերու տեղահանութեան եւ կոտորածի պատասխանատուները դատող Պատերազմական Ատեանը հաւաքեց Հայ պաշտօնեաներու պաշտօնանկութեան հետ առընչութիւն ունեցող թուրք պաշտօնական վաւերագրերը»[1]:

Բ. Երիտթուրքերի երկրորդ ծանր հարվածը հայ ժողովրդին ***զենքերի հավաքումն ու պետականացումն էր:*** Օսմանյան հակամարդկային օրենսդրությամբ, քրիստոնյա ազգերը գյավուր էին, ռայա, ստրուկ, նրանք ոչ տաք, ոչ էլ սառը զենքեր կրելու իրավունք չունեին: Իհարկե, եղել են բացառություններ:

Շուրջ երեք հարյուրամյակ Կ. Պոլսում խարսխված, մեծ հարստության հասած Տատյան հանրահայտ ամիրայական գերդաստանն ինքն էր ***կազմակերպում կայսրության վառոդի, որոշ ժամանակ անց նաև ողջ տաք զենքի արտադրումն ու մատակարարումը բանակին:*** Ղրիմի պատերազմի սկզբում, եվրոպացիների խորհրդատվությամբ Թուրքիայում կազմավորվեց պատերազմական նախարարություն, հետևաբար և Տատյանները կորցրեցին իրենց մենատիրական արտոնությունները:

Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում կային առանձին բացառություններ: ***Հերոս զեյթունցիները, բաջակորով սասունցիները, Մուշի*** ու ***Չարսանջակի*** որոշ տոհմերը դարավոր, հերոսական պայքարով, տաք ու սառը զենքեր կրելու իրավունք

[1] ***«Հայկաշեն Տարեգիրք»,*** Ա տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 108 110: Տես նաև ***Գրիկեր,*** Եոզղատի հայասպանության վավերագրական պատմությունը, Նյու Յորք, 1980, էջ 198:

էին նվաճել: Վանում Դանկովյանները, Բիթլիսում հայկական բազմաթիվ համայնքներ սուլթաններից անձամբ զենք կրելու ֆերմաններ էին ստացել: Ընդհանուր առմամբ, հայն ու Հայաստանը Թուրքիայում «անզեն էր ու անեղջյուր», դրանք բացառություններ էին:

Ձենք ունենալու համար կային նաև այլ պարագաներ: 1847 թ. ողջ Արևմտյան Հայաստանն ալեկոծվում էր ***Բեդերխան բեյի*** և ***Մահմուդ խանի*** ապստամբական շարժումներից: Վայրենաբարո քուրդ խոլամները ***բռնամահության*** էին դատապարտում ոչ միայն թուրքերին, այլ, հատկապես, Վասպուրականի ու Տարոն աշխարհի հայ բնակչությանը[1]:

Այս պահն այն հազվագյուտ ժամանակներից էր, երբ արևմտահայության և Բ. Դռան շահերը համընկնում էին: Ուստի ***Աբդուլ Մեջիդը*** դիմեց Կ. Պոլսի հայոց ***Մատթեոս պատրիարքին,*** նրա գիտությամբ ու համաձայնությամբ զինեց Վասպուրականի ու Տարոնի հայությանը, և ***հայ-թուրքական*** միացյալ զորքերը հպատակեցրեցին քրդական հզոր բեկերին[2]: ***Այսինքն՝ 1847-1849 թթ. թուրքերը հայերին զենք բաժանեցին և հետագայում այդ զենքերը հետ չվերցրեցին:*** Վասպուրականի զենքի պաշարները գումարվեցին դարակեսի այդ իրադարձությունների ժամանակ[3]:

90-ականների հայկական ջարդերի ժամանակ Լեռնահայաստանի, թեկուզև Վասպուրականի հայությունը ծեռարծակ չմորթվեց թուրքական յաթաղանից: Անհավասար մարտերում դիմագրավող հայերը, թուրքերից զենքեր խլեցին և իրենց իսկ ծեռքերով գոյամարտեր ծավալեցին լեռնածերպերում: Հետո այդ զենքը մնաց հայ հայդուկների ծեռքին:

XX դարի արշալույսին սուլթանական բռնապետության դեմ թուրք ժողովրդի, ինչպես նաև կայսերահպատակ քրիստոնյա այլազգիների ծավալած ազգային-ազատագրական պայքարը նոր ուղի մտավ, որը ի սկզբանե սպառնում էր սուլթանիզմի կործանմանը: Հասունանում էր բալկանյան նոր ճգնաժամը, սրվում Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքական իրադրությունը: 1907 թ. դեկտեմբերին Փարիզում կայացած թուրքական և այլազգի քաղաքական ընդդիմադիր կուսակցությունների ու կազմակերպությունների համագումարը և ստեղծված իրավիճակը երիտթուրքերն օգտագործեցին երկրում քաղաքական իշխանությունը զավթելու համար: Թեև Փարիզի համագումարում որոշվել էր ընդհանուր զինված ապստամբությունը համիդյան բռնատիրության դեմ սկսել 1909 թ., սակայն երիտթուրքերի Սալոնիկում գտնվող կենտրոնը մակեդոնական հարցի սրման հետևանքով մեծ տերությունների միջամտությունը կանխելու նպատակով որոշեց ապստամբության դրոշ պարզել հենց 1908 թ. ամռանը: 1908 թ. հունիսի 28-ին Մակեդոնիայի Ռեսենա քաղաքում տեղակայված թուրքական զորամասերը երիտթուրք սպաների գլխավորությամբ, միանալով ապստամբ մակեդոնացիներին, սկսեցին պայքարը սահմանադրական կարգերի համար: Շուտով շարժման գլուխ անցավ Սալոնիկում գտնվող «Միություն և առաջադիմություն» երիտթուրքական կոմիտեն[4]:

1908 թ. հուլիսի 3-ին Ռեսենում (Մակեդոնիա) կազմավորված երիտթուրքական զորամասը մայոր Նիազի բեյի հրամանատարությամբ ապստամբեց, հուլիսի 6-ին

---

[1] ***Helmuth von Moltke.*** Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei aus den Jahren 1835 bis 1839. Berlin, 1876, S. 266.

[2] ***Ավետիս Պերպերյան,*** Պատմություն Հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 322-323:

[3] ***Հայկ Դազարյան,*** Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 237-241:

[4] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, Երևան, 1981, էջ 492:

նրան միացավ մայոր էնվերն իր ջոկատով: Մի քանի օրից Մակեդոնիայում ապստամբություն բռնկեց: Այդ զորամասերի արշավանքը դեպի մայրաքաղաք կանխելու նպատակով սուլթանը հուլիսի 23-ին ստիպված վերականգնեց 1876-ի սահմանադրությունը: Նոր կառավարության մեջ երիտթուրքերը թեև չմտան, բայց, բանակն իրենց ձեռքում պահելով, հանդես եկան թելադրողի դերում:

Նրանց հաղթանակը սկզբնական շրջանում համընդհանուր խանդավառություն առաջ բերեց: Ամբողջ կայսրությունում տեղի ունեցան ցույցեր «ազատություն», «հավասարություն», «եղբայրություն», «արդարություն» լոզունգներով, ազատ արձակվեցին հազարավոր բանտարկյալներ ու աքսորականներ, վերացվեց գրաքննությունը, վերադարձան քաղաքական վտարանդիները: Սակայն արտահայտելով թուրք բուրժուազիայի, լիբերալ-կալվածատերերի և գերազանցապես զինվորական վերնախավի շահերը՝ երիտթուրքերը որդեգրեցին հակաժողովրդական, հետադեմ քաղաքականություն[1]:

Համիդ II-ը չէր հաշտվում իր իրավունքները սահմանափակվելու մտքի հետ, ուստի գաղտնի նախապատրաստվում էր հաշվեհարդար տեսնել սահմանադրության ջատագովների հետ: Այդ փորձը կատարվեց 1909 թ. մարտի 31-ին, երբ մայրաքաղաքում մոտ տասը օր վերականգնվեց սուլթանի միահեծանությունը: Մակեդոնիայից բերված զորամասերը և սահմանադրականների զինված ջոկատները միացյալ ուժերով ճնշեցին խռովությունը: Աբդուլ Համիդը վերջնականապես գահազրկվեց (1909, ապրիլի 27-ին): Նրա փոխարեն երիտթուրքերն օսմանյան գահին բազմեցրին կամազուրկ ***Ռեշադին՝ Մեհմեդ V*** անունով, որը պետք է «թագավորեր, բայց ոչ թե կառավարեր»: Նոր կառավարության մեջ մտան «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ղեկավարները, որոնք երկրում հաստատեցին արյունոտ դիկտատուրա: Երիտթուրքերի կառավարությունը օրենքով արգելեց բանվորական գործադուլները, արհմիությունները[2]:

Կայսրության մեջ խաղաղ չէին 1909-1913 թթ. (մինչև հունվար, 1913) տարիները: Իշխանության համար, երբեմն խուլ, հիմնականում բացահայտ պայքարի մեջ էին իթթիհատականներն ու իթթիլաֆականները: Այդ իշխանակռվի ընթացքում, թուրքական բորենիների խմբավորումները, իրարից իրավունքները փոխադարձ խլելու պրոցեսում, զգում էին կայսրության մեջ ապրող ոչ թուրք ժողովուրդների, հատկապես նրանց քաղաքական կուսակցությունների զորակցությունը: Հետևաբար, դեռևս առանց երկնչելու, նրանք զենք էին բաժանում և զինում էին այլազգիներին: ***Արևմտահայությունն այդ տարիներին հսկայական քանակությամբ զենք ստացավ երիտթուրքերից, որի մասին նրանք չէին մոռացել և 1914 թ. որոշեցին ետ պահանջել այդ զենքը:***

Զինահավաքն իրականացվեց պետական մակարդակով, բացահայտ: 1915 թ. ապրիլի սկզբին թուրք մունետիկները կայսրության գավառներում ազդարարում էին կառավարական հրամանագիրը՝ հայերից պահանջելով հանձնել իրենց մոտ եղած զենքն ու զինամթերքը: «Պոլսո Պատրիարք Զաւէն Եղիաեան բոլոր նահանգներու եւ գաւառներու առաջնորդներուն մասնաւոր հեռագիրներ ղրկեց եւ յորդորեց որ հայերը Թուրք կառավարութեան հլու հպատակ մնան եւ ոչ մէկ դէպքի առիթ տան: ***Նոյնպէս Հ. Յ. Դաշնակցութիւնը բոլոր շրջաններուն ղրկեց նման հրահանգներ որ անպատեհ դէպքերու առիթ չտան:***

---

[1] ՀՍՀ, հ. 3, Երևան, 1977, էջ 590: *Ե. Ղ. Սարգսյանի* «Երիտթուրքական հեղափոխությունը» հոդվածը (էջ 590-591):

[2] Նույն տեղում, էջ 497: Տես նաև *Մեվլան զադե Ռիֆատ*, նշված աշխատությունը, էջ 104:

Եոզղատի առաջնորդ Ներսէս Եպիսկոպոս Դանիէլեան եկեղեցիներու մէջ կարդալ տուաւ Պոլսոյ Պատրիարքի հրահանգները եւ Եոզղատի Ազգային Ժողովի որոշումներուն համեմատ ժողովուրդը յորդորեց որ յանձնեն իրենց զէնքերը: *«Յանձնեցէք, գրած էր Առաջնորդը, ձեր ունեցած զէնքերը՝ օրէնքը յարգած ըլլալու համար»*[1]:

Ենթադրում ենք, որ հայ հոգևոր և աշխարհիկ երևելի անձանց հորդորները՝ զինաթափման վերաբերյալ, փաստորեն ազգակործանման պրոցեսի սկիզբն էր, որի մասին հրահանգողները, դժբախտաբար, տակավին պատկերացումներ չունեին: Նրանք ուշ հասկացան կատարվածի ողբերգական հետևանքները:

Սակայն, ի տարբերություն հայ պաշտոնյա մեծահասակ այրերի, հայ երիտասարդության մեծ մասը, Վարդանի ու Դավթի թոռներն ընդդիմացան, զենքերը վերցնելով, բարձրացան լեռներն ու *ֆիդայացան:* Այդ պարագան վախեցրեց թուրքերին, որոնք գործի դրեցին ամենուր մորեխի պես ցրված «Հատուկ կազմակերպության» անդամներին: Նրանք «ոստիկանի համազգեստով կը մտնէին Հայերու տուները, կիներն ու աղջիկները կը մերկացնէին եւ կարմրած երկաթով կ'այրէին անոնց մարմնի ամէնէն փափուկ մասերը՝ զանոնք ստիպելու համար որ յայտնեն այրերու պահուած թագստոցները եւ զէնքերու տեղերը»[2]:

Զինահավաքն ավելի դաժան բնույթ ընդունեց Սվազի նահանգում: Կ. Պոլսի Զավեն պատրիարքն իր հուշերում հաղորդում է, թե դեռևս 1913 թ. հոկտեմբերին, հայ գրերի գյուտի հոբելյանի օրերին, Ադաբազարի հայերը զինաթափ էին արել և սպանել մի ոստիկանի: Այդ դեպքն առիթ բռնելով, Ադաբազարում, ավելի վաղ սկսվեց զինահավաքը և ավելի դաժան կերպարանք ստացավ: Այդ մասին Սեբաստիայից Պատրիարքին գրում են. «1915 Փետրվար և Մարտ ամիսներուն կառավարութիւնը հրամայեց ժողովուրդին զէնքերը ըլլայ մեծ կամ պզտիկ յանձնելու, յայտարարելով որ ինք զէնքի պէտք ունի: Չյանձնողները պատերազմական ատեան պիտի ղրկուէին: Հայերէն շատեր իրենց զէնքերը յանձնեցին, մեծ մասամբ ոչ արգիլեալ զէնքեր: Թէև Թուրքերն ալ յանձնեցին նախապէս իրենց զէնքերը, սակայն մէկ ձեռքով կուտային իսկ միւսով ետ կ'առնէին: Կառավարութիւնը հաւաքուած զէնքերուն վրայ կարգ մը պետական զէնքեր ալ վրան աւելցուց ու կառավարութեան շէնքին առջև ցուցադրեց ու լուսանկարել տուաւ, մէկ կողմէ Թուրքերը Հայերու դէմ գրգռելու և միւս կողմէն ալ Պոլիս տեղեկագրելու Հայերու կողմէ երեւակայական հարձակումներու և ապստամբութեանց պատրաստ ըլլալու»[3]:

Զենք որոնելու պատրվակով թուրքական ոստիկանները մտնում են հայերի տները, ամեն ինչ տակնուվրա անում, ցանկացածը կողոպտում և կազմակերպում զանազան պրովոկացիաներ (իրենց զենքը ցուցադրում էին որպես հայերից գրաված և այլն), որոնք ուղեկցվում էին ծեծկռտուքներով ու սպանություններով: Այդ կարգի հալածանքներն այնքան սաստկացան, որ հայերը հարկադրված էին թուրքերից, քրդերից, չերքեզներից բարձր գներով զենք գնել ու հանձնել, որպեսզի թեթևացնեն իրենց դրությունը. «Հայերը,- գրել է Ջ. Բրայսը,- զենք կգնեն իսլամներե, զանոնք հանձնելու թուրք իշխանության, որպեսզի իրենց ենթարկած

---

[1] *Գրիկեր,* նշված աշխատությունը, էջ 112: Տես նաև «1915-1965 Յուշամատեան Մեծ Եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 320-323: «Հայկաշեն Տարեգիրք», Պոլիս, 1922, էջ 122, 139, 141: *Նազար Գաբրիկյան* և *Կյուլպենկ Գալուստյան,* Գոյամարտը, Մարսել, 1932, էջ 42:

[2] *Գրիկեր,* նշված աշխատությունը, էջ 113: Տե՛ս նաև *Եոզղատ,* ձեռագիր, Նուպարյան մատենադարան, Փարիզ, էջ 133-144:

[3] *Զավեն արքեպս.,* Պատրիարքական հուշերս, վավերագրեր և վկայություններ, Գահիրե, 1947, էջ 51-52:

անագորույն տանջանքներեն վայրկյան առաջ փրկվեին: Այս պարագան հաստատվում է բոլորովին անկախ և անաչառ բազմաթիվ ականատեսներու կողմե»[1]: Եթե թուրքերը չեն հավատում դրան, ապա կվկայակոչենք իրենց դաշնակից գերմանական չինովնիկներին, որոնք ասում էին, թե «շատ հայեր ստիպված էին շատ բարձր գներով զենքեր գնել իրենց թուրք ու չերքեզ դրացիներե, որպեսզի կառավարությանը հանձնեն»[2]: Արժանահավատ խոստովանություն հայերի անմեղության ու նրանց հասցեին թուրքական զրպարտության մասին:

Պատահում էր նաև այնպես, որ թուրքերը «երևակայական զենք էին» ստեղծում ու հարձակվում հայերի վրա: Այդպես, օրինակ, Մարզվանում ամերիկյան քոլեջի հայ արհեստավոր Հովհաննեսը մարմնամարզական խաղերի համար պատրաստել էր մի երկաթե գունդ, որը թուրքերը համարեցին «վտանգավոր ռումբ» և Հովհաննեսին ծեծելով, կիսամեռ դարձրին:

Այսպիսով, նախքան բուն ցեղասպանությունն սկսելը, երիտթուրքերը, նախ պաշտոնանկ արեցին հայ պետական այրերին, ապա զինաթափեցին ժողովրդին, նրա ձեռքից վերցնելով ոչ միայն տաք, այլև սառը զենքերը՝ մինչև նույնիսկ ամենափոքրիկ դանակները: Հարկավոր էր անվնաս դարձնել ժողովրդին: Ահա այստեղ էր, որ երևաց ցեղասպանության ծրագրվածությունը, պետականորեն իրականացումը: Նրանց հաջորդ քայլը եղավ հայ երիտասարդության կեղծ զինվորագրությունն ու ոչնչացումը:

Գ. Արևմտահայության ողբերգության առաջին և ամենասև էջը ***սեֆիրբերլիքն*** էր (զորահավաքը): Սուլթանական բռնապետության կեսհազարամյա գոյության ողջ ժամանակաշրջանում, ինչպես կայսերահպատակ քրիստոնյա մյուս բոլոր ազգերը, առավել ևս հայ ժողովուրդը, զրկված էին զենք կրելու, ***բանակում ծառայելու,*** դատարանում վկայություն տալու իրավունքներից: «Սրբազան ղորանի» դոգմաներով, այլահավատները, կամ ինչպես իրենք էին անվանում «անհավատները», համարվում էին ***գյավուր, զիմմի, ստրուկ:*** Բանակում ծառայելու փոխարեն նրանք պարտավոր էին հարկ վճարել, որն սկզբում կոչվում էր ***ջեզիե- գլխահարկ,*** XIX դարում վերանվանվում ***բեդելի-ասկերիե*** (զինվորական հարկ):

Երիտթուրքերի հեղաշրջումից հետո արևմտահայ «որոշ երևելիներ» ***խաբվելով,*** սահմանադրական այնպիսի մեղրամիս էին ապրում, որը նման էր մեծ տակառի մեջ լցված մի բաղադրության՝ վերևում քսված քաղցրավենիք, ներքևում և ամբողջ պարունակությամբ թույն: 1908 թ. սեպտեմբերի 14-ին, գործադրելու թույլտվություն ստացավ արևմտահայերի ***Ազգային Սահմանադրությունը:*** Այն Համիդ II-ի կողմից արգելվել էր դեռևս 1891 թ.[3]: Վերականգնվեցին Ազգային ժողովի երկու պալատները, մեջլիսում հայերը երեսփոխաններ ունենալու իրավունք ստացան:

1909 թ. հունիսի 25-ին երիտասարդ թուրքերի կառավարությունը օրենք ընդունեց այլահավատների վճարած զինվորական հարկի վերացման և նրանցից, մահմեդականների հետ համահավասար, բանակ զորակոչելու վերաբերյալ[4]: Զինվորության չէին կանչվում ուսուցիչները, հատկապես գյուղական ուսուցիչները, ու-

---

[1] Հայկական ջարդերում փաստաթղթերը. աշխատասիրեց ***Վահան Միրագենց,*** Կ. Պոլիս, 1920, էջ 24: Տես նաև ***Մ. Արզումանյան,*** Հայաստան 1914 1917, Երևան, 1969, էջ 313-314:

[2] ***Տաշյան հ. Հակովբոս Վ.,*** Հայ ազգի տարագրությունը գերմանական վավերագրերու համեմատ, մասն Ա, Վիեննա, 1921, էջ 71:

[3] **АВПРИ**, фонд Политархив, 1908 г., опись 482, дело 544, лл. 14-15.

[4] **ЦГВИАРИ**, фонд 2000, дело 1015, л. 134.

սանողները, օտարերկրյա քաղաքացիություն ընդունածները, ինչպես նաև «անպաշտպան կանանց և երեխաներին խնամողները»[1]: Կային նաև այլ խոստումներ, որոնք մենք արձանագրում ենք անկողմնակալ պատմաբանի մեր հեղինակությունը չկորցնելու նպատակով: Սակայն իրականում, ընդամենը մեկ հնգամյակ չանցած, այդ օրենքը աներևակայելի դժբախտության պատճառ դարձավ հայ ժողովրդի համար:

1914 թ. օգոստոսի 1-ին բռնկվեց Առաջին աշխարհամարտը: Թուրքիան դաշնակցել էր կայզերական Գերմանիային, բայց պատերազմի մեջ մտավ ավելի ուշ: Չնայած դրան՝ կառավարությունը անմիջապես զորահավաք կազմակերպեց երկրում: *Օգոստոսի 12-ին* հայտարարված զորահավաքի հրամանագիրը մահմեդականներին համահավասար տարածվեց նաև հայ ժողովրդի վրա: Հայ երիտասարդներին, հատկապես 18-45 տարեկան, առողջ բոլոր տղամարդկանց բանակ զորակոչեցին, միացրեցին նախկինում զորակոչված իրենց ազգակիցներին և աշխատացրեցին շինարարության վրա իբրև բանվորներ:

Եռապետերն ավելի հեռու էին նայում, քան կարծում էին այն մարդիկ, որոնք ուրախացած էին հայերին զորակոչելու առիթով: *Նրանք զորակոչելով առողջ և երիտասարդ հայ բնակչությանը՝ ձգտում էին թուլացնել ժողովրդի դիմադրողական կարողությունները, որպեսզի առաջիկայում հեշտությամբ ոչնչացնեին* մնացած անպաշտպան ժողովրդին – *ծերերին, կանանց, մանուկներին:*

Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան *Հենրի Մորգենթաուն,* անդրադառնալով հայերի զինվորագրության խնդրին, գրում է. «*Ցեղ մը բնաջնջելու ծրագիրը հաջողացնելու համար, երկու նախաքայլեր պետք էին առնվիլ. անհրաժեշտ էր բոլոր հայ զինվորներ անզոր դարձնել և ամեն քաղաքներու հայերուն ձեռքեն զենքերը առնել: Հայաստանը խեղդամահ ընելեն առաջ, Հայաստանը պետք է անպաշտպան դարձնել* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[2]:

Դեպքերին ականատես, իրադրությանը բազմակողմանի ականջալուր, անկողմնակալ այդ մեծ ամերիկացու ասածներն այսօր հաստատվում են թուրքերի *«թողած գրավոր հետքերով»:* Բերենք թուրքական բանակի ընդհանուր հրամանատար, «պատերազմական նախարար», հայակուլ *Էնվեր* փաշայի հրամանը զինվորացու և զինվորագրված հայերի զանգվածային ոչնչացման վերաբերյալ. «*Ծածկագիր* պատերազմական նախարարության տրված բոլոր զինվորական հրամանատարությանց...

Ներկա կացության բերմամբ, կայսերական հրամանով որոշված է հայ ցեղին ամբողջական վերացումը: Անոնց մասին հետևյալ գործողություններ պիտի ըլլան.

1. Մինչև հինգ տարեկան մանուկներեն զատ՝ օսմանեան հպատակ եղող և երկրին մեջ գտնվող հայ անունը կրող բոլոր պաշըպոզուքները (ոչ զինվորականները) քաղքե դուրս հանելով պիտի սպանվին:

2. *Կայսերական բանակին մեջ ծառայող բոլոր հայ անհատները, առանց դեպքի մը տեղի տալու՝ իրենց զորաբաժիններեն զատելով, ընդհանուրին աչքեն հեռու ծածուկ վայրերուն մեջ գնդակահար պիտի ըլլան:*

3. *Բանակին մեջ գտնվող հայ սպաներն ալ, իրենց պատկանած զորախմ-*

---

[1] **ЦГВИАРИ,** фонд 2000, дело 1015, л. 137. Տե՛ս նաև *Ա. Ս. Համբարյան,* Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908-1914), Երևան, 1979, էջ 91:

[2] *Henry Morgenthau,* Ambassador Morgenthau's Story, Garden-city, New York, 1918, p. 301. Տե՛ս նաև «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1054:

բերու բանակատեղին մեջ պիտի բանտարկվին մինչև իրենց մասին նոր զեկուցում ըլլա:

Այս երեք տրամադրությունները յուրաքանչյուր բանակի հրամանատարության հաղորդված թվականեն 48 ժամ վերջ անոնց գործադրության մասին հատուկ զեկույց մը պիտի ըլլա: Ասոր համար անհրաժեշտ նախապատրաստություններեն զատ, որևէ գործողություն պետք չէ ձեռնարկել»[1]:

Ռուսաստանի զինվորական նախարարությունը իր գործակալներից ստանում էր հետևյալ զեկուցագիրը, որը վերաբերում էր 1915 թ. մարտի 15-ից ապրիլի 3-ին ծավալված իրադարձություններին. «Ամբողջ երկրում տեղի են ունենում հայերի ձերբակալություններ... Սիստեմատիկ կոտորածներ էրզրումում, Դորթյոլում, Զեյթունում և շրջակայքում: Արյունալից ընդհարումներ Բիթլիսում, Վանում, Մուշում... բռնություններ, թալան, սպանություններ Ակնում և ամբողջ Փոքր Հայքում: Ժողովրդի տնտեսական քայքայում, ընդհանուր կոտորած»[2]:

Կարծեք թե շարունակությունն էր Հենրի Մորգենթաուի ընդարձակ շարադրանքի՝ զինվոր և զինվորացու հայերի ոչնչացման մասին: Ամերիկացին գրում է. «1915 թ. սկիզբը, հայ զինվորները թուրք բանակին մեջ ենթարկվեցան նոր օրենքի մը: Մինչև այդ ատեն, անոնցմե շատերը պատերազմին եղած էին, բայց հիմա անոնց բոլորեն ալ զենքերը առնվեցան և գործավոր եղան անոնք: Փոխանակ իրենց երկրին իբր հրետածիգ և հեծելազորք ծառայելու, տեսան, որ ճամբա շինող գործավոր և բեռի կենդանիներ եղած են: Իրենց կռնակը կբեռցվեին ամեն կարգի պաշարներ, և կքելով բեռին տակ ու քշվելով թուրքերու խարազաններեն ու սվիններեն, կբռնադատվեին իրենց հոգնած մարմինները քաշկռտել Կովկասի լեռներու մեջ...

Կարգ մը պարագաներու մեջ, հայ զինվորները հաճախ կմեռցվեին ավելի կտրուկ կերպով մը, որովհետև, գրեթե ընդհանուր սովորություն մը դարձած էր զանոնք պաղարյունով սպանելը»[3]:

Ամերիկացի մեկ այլ հրապարակախոս, փիլիսոփա և պատմաբան ***Հերբերտ Ադամս Գիբբոնսը,*** տարբեր ժամանակներում եղել է Թուրքիայում (հատկապես 1908-1913), հետագայում ևս, հավաքելով արժանահավատ վավերագրեր, գրել է. «Օտտոմանյան կայսրության հիմնադրումը» աշխատությունը: ***«New York Herald»*** թերթի թղթակիցն իրավունք ունենալով շրջել ողջ Թուրքիայով մեկ՝ բազմաթիվ աշխատություններ է գրել նաև երիտթուրքերի գազանությունների, հատկապես հայ զինվորականներին կոտորելու մասին[4]:

Նրա հաղորդագրության համաձայն՝ երիտթուրքերն իրենց հայասպան ծրագրերը սկսեցին իրողության վերածել 1914 թ. աշնանից, երբ ոչնչացրեցին կամ բանակ զորակոչեցին հայ երիտասարդությանը: Հայ զինվորներին նախ զինաթափեցին: 1914-1915 թթ. նրանցից կազմավորեցին բանվորական գումարտակներ, որոնց օգտագործում էին ճանապարհներ կառուցելիս[5]: 1915 թ. ապրիլին նման գումարտակների թիվը հասավ 120-ի: Սրանց բաժանում էին դրուժինաների, որոնցից յուրաքան-

---

[1] ***Արամ Անտոնյան,*** Մեծ ոճիր, Պոսթըն, 1921, էջ 232-233:

[2] **ЦГВИАРИ,** фонд 2000, опись 1, дело 3851, лл. 92-94. Տես նաև ՀՍՀ, հ. 7, Երևան, 1981, էջ 425:

[3] ***Henry Morgenthau,*** նշված աշխատությունը, նաև «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1055: "Геноцид армян в османской империи", стр. 541.

[4] ***Герберт Адамс Гиббонс,*** Последние избиения в Армении, факты и ответственности. Перевод с английского, Петроград, 1916.

[5] ***Ե. Դ. Սարգսյան,*** Թուրքիայի նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասում, Երևան, 1964, էջ 234:

յուրի մեջ ընդգրկում էին 400-500 մարդ, աշխատեցնում սարսափելի ծանր պայմաններում:

«Թուրքական կանոնավոր զորքերը,- շարունակում է Գիբբոնսը,- որոնք առանձնացված էին հայկական հեղափոխությունը ճնշելու համար, անսպասելիորեն հարձակվում էին այդ դրուժինաների վրա, որոնք խաղաղ աշխատում էին բրիչներով, լինգերով ու բահերով և մինչ նրանք ուշքի կգային՝ գնդակոծում էին բոլորին: Եթե որևէ մեկը փորձում էր դիմել փախուստի, նրան հետապնդում էին հեծյալ թուրքերը և սրախողխող անում կամ գնդակահարում»[1]: Այդ մեթոդով միայն 1915 թ. ապրիլ ամսին սպանվեցին 6000 հայ զինվորներ, որոնք աշխատում էին Կարին-Երզնկա, Դիարբեքիր-Ուրֆա, Դիարբեքիր–Խարբերդ ճանապարհաշինարարության վրա[2]:

Ֆրանսիացի ականավոր պատմաբան Ժակ դը Մորգանը գրում է. «...Պատերազմի պատճառավ, կայսրության մեջ բնակվող բոլոր հպատակ քրիստոնյա երիտասարդները դրոշի տակ կկանչվին: Բայց զանոնք ճակատ չեն ուղարկեր: Մի քանի հարյուրակ դասակներու բաժնած՝ այս մարդիկը կղրկեն ճամբաներու շինության և նորոգության: Եվ անոնց աշխատանքը կավարտի, անոնցմե մեծ թիվ մը հրացանազարկ կընեն»[3]:

Հայ զինվորների և զինվորացուների թիվը հասցրեցին 85-100 հազարի, որոնց բոլորին *ոչնչացրեցին* նույն մեթոդով: Հենրի Մորգենթաուն այդ մասին գրում է. «Ասկե անկե 50 կամ 100 հոգիանոց խումբեր կժողովեին, չորսական դասակներով իրարու կկապեին, կտարվեին գյուղեն քիչ հեռու ամայի տեղ մը: *Յանկարծ հրացաններու պայթուններու ձայնը կլեցներ օդը և թուրք զինվորները, որոնք իբր հետևորդ ծառայած էին, տխրադեմ իրենց կայքը կդառնային: Անոնք, որ դիակներ թաղելու կղրկվեին, զանոնք գրեթե միշտ բոլորովին մերկ կգտնեին, որովհետև սովորության համաձայն, թուրքերը գողցած կըլլային անոնց բոլոր զգեստները: Այն դեպքերուն մեջ, որոնց ծանոթացա, սպանիչները, իրենց զոհերուն տառապանքին վրա նրբարվեստ մը ավելցուցած էին, բռնադատելով զանոնք գնդահար ըլլալե առաջ իրենց գերեզմանները փորելու* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[4]:

Հայ զինվորների զանգվածային ջարդերին է անդրադառնում նաև *Եվգենի Վիկտորովիչ Տառլեն:* Նա գրում է. «Պետք է նկատել, որ թուրքական կառավարությունը պատերազմի տարիներին արտաքին թշնամիներին դիմագրավելուն զուգընթաց ծեռնամուխ եղավ հայ ժողովրդի ոչնչացմանը, որպեսզի վերջնականապես և հավիտենականորեն իրեն պաշտպանի Կովկասի կողմից եկող վտանգից և ռուսական պահանջներից: *Այն, ինչ այս ուղղությամբ տեղի ունեցավ Թուրքիայում, իր չափերով միանգամայն բացառիկ բան է համաշխարհային պատմության մեջ՝ Չինգիզ խանի ժամանակներից ի վեր:*

1914 թվականի սեպտեմբերին հայկական բոլոր վիլայեթներում անխնայորեն ու բծախնդրորեն անցկացրած զորահավաքը ուժասպառ էր արել հայ բնակչությանը. մնացել էին միայն կանայք, երեխաներ և զառամյալ մարդիկ»[5]:

1916 թ. Նյու Յորքում լույս տեսավ ամերիկացի լրագրող *Հերբերթ Էտմզ Կի-*

---

[1] ***Գերբերտ Ադամս Գիբբոնս,*** նշված աշխատությունը, էջ 12-13:

[2] "Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии", лист 236.

[3] ***Ժագ դը Մորգան,*** Հայ ժողովրդի պատմություն, Պոսքըն, 1947, էջ 344: Ֆրանսերենից թարգմանեց *Սարգիս Երկանյանը:*

[4] «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1055: Տե՛ս նաև *Henry Morgenthau,* նշված աշխատությունը, էջ 301:

[5] ***Евгений Тарле,*** Европа в эпоху империализма, 1871-1919 гг., Москва-Ленинград, 1928, стр. 387.

պընգի «ժամանակակից պատմության սևագույն էջը» աշխատությունը: Այն երկարատև հետազոտության արգասիք էր, քանզի գրքի ամերիկացի հեղինակը Թուրքիայում էր եղել դեռևս 1909 թ., շրջել էր Ադանայի նահանգով մեկ, ծանոթացել ջարդերից մազապուրծ հայ վերապրողների հետ և թողել ականատեսի վավերական գրառումներ, որոնք ցեղասպանության պատմաբանների համար սրբազան նշխարքներ են[1]:

1915 թ. ապրիլին ***Հերբերթ Կիպընգը*** նորից Թուրքիայում էր և քայլում էր այն վայրերով, որտեղով անցել էին երիտթուրքական մարդագայլերը, որոնց մասին էլ և գրում էր. «1915 ապրիլին, օսմանյան կառավարությունը Թուրքիո մեկ ծայրեն մյուսը սկսավ գործադրության դնել սիստեմատիկ և խնամքով պատրաստված ծրագիր մը ***բնաջնջելու հայ ցեղը: Վեց ամսվա ընթացքում մոտավորապես մեկ միլիոն հայեր սպանվեցան: Ջոհերու թիվը և անոնց փճացումի եղանակը ժամանակակից պատմության մեջ աննախընթաց է*** (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[2]:

Ամենաարժեքավորը հայկական զորահավաքի և հայ երիտասարդության ոչնչացման մասին հրապարակված այն նյութերն են, որոնց ծանրության տակ ոչ միայն կծռվեն թուրք պատմաբանների տկար մեջքերն, այլև շռնդալից ապտակ են այսօրվա պետական այրերի երեսին, որոնք մինչև օրս էլ համառում են ճանաչել ցեղասպանությունը: Մեր ապրած կիսագնդում չէր ապրում փաստերը հրապարակողը: Նա արևմտյան կիսագնդում է ապրել, նրա տերությունը պատերազմին չի մասնակցել, կողմնակալ չէ եղելության մասին գրելիս: Մի խոսքով, դիմենք Հերբերթ Կիպընգին. «1914-ի աշնան, թուրքերը բանակին համար քրիստոնեաներու և իսլամներու զորահավաքումի սկսան: Բովանդակ Թուրքիո մեջ, լըման վեց ամիս, հայերը զինվորական ծառայության կանչվեցան: Ունևորներեն զինվորական փրկանք ընդունվեցավ: Բայց քանի մը շաբաթ ետք՝ աննկատ թողած զինվորական փրկագնի ստացագիրները՝ անոնց տեղերուն զինվորագրություն վերսկսավ:

Պոլսո շրջանակները գտնվող հայ դեռատի դասու զինվորները գործող բանակին մեջ զետեղվեցան, ինչպես Պալքանեան պատերազմի ատեն: Իսկ չափահասները, և հեռավոր վայրերու հայերը, գործածվեցան ճամփաներու, երկաթուղիներու և ամրություններու շինությանց»[3]:

...Եվ սկսվեց հայկական ջարդերի ալիքը. «Նախ, այս ձեռնարկը կարելի ամենաքիչ դժվարություններով գործադրելու համար, դեռևս քաղաքներու և գյուղերու մեջ մնացած հայ բնակչության ուժեղ տղամարդիկ ազդարարություն ստացան հավաքվիլ հարմարագույն վայր մը, ընդհանրապես քաղաքեն դուրս: Ժանտարմներն ու ոստիկաններն այս հրամանին գործադրության խստիվ հսկեցին: ***Ոչ ոք աչքե վրիպեցավ: Ջանոնք ժողովելե ետքը բոլորն ալ սուրե անցուցին:*** Գործադրության այս մեթոդը հնարավոր էր փոքր տեղերու մեջ, առհասարակ: Մեծ քաղաքներու մեջ սակայն, Պոլսո հրամաններն այսքան ճիշտ ու պարզ կերպով կատարել կարելի չէր միշտ:

Հայ երևելիները, փողոցներու վրա կամ իրենց տուներու մեջ սպանվեցան: Ներքին քաղաքներու այրեր հսկողությամբ ***«ուրիշ քաղաք»*** ղրկվեցան: Քանի մը ժամեն վերադարձան պահապանները առանց իրենց բանտարկյալներուն... Ծովեզրյա քաղաքներու հայեր նավակներով ***«ուրիշ նավահանգիստ***

[1] «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1065:

[2] ***Հերբերթ Էտմզ Կիպընգ,*** ժամանակակից պատմության սևագույն էջը, 1915-ի հայկական դեպքերը, Նյու Յորք, 1916, էջ 25:

[3] Նույն տեղում, էջ 25-26:

մը» տարվեցան: Նավակները զարմանալիորեն շուտ վերադարձան պարպված իրենց ճամբորդներեն»[1]:

Կանոնավոր բանակի, թուրք ու քուրդ խուժանի, չեթեների անխնա ու անմարդկային ձեռքերով, մեկ ամսվա ընթացքում ոչնչացվեց հայ ժողովրդի երիտասարդ, կռվելու, դիմադրելու կարող մասը: Ամեն կողմից մարդակեր Թալեաթը հեռագրեր էր ստանում, թե իբր *հայ հեղափոխությունը ճնշված է, թատերախաղն ավարտված է* և վարագույրներով բեմահարթակը փակված:

Ի՞նչ հեղափոխություն, ի՞նչ սեպարատիզմ, այդ բոլորը շինծու էին, խաբկանք, որպեսզի Արևմուտքի առանց այդ էլ շիլ հայացքը հեռու պահեին անմարդկային եղելությունից:

Ջորահավաքն ու տեղահանությունը, շատ զարմանալիորեն սկիզբ առան Զեյթունից, դրա համար էլ քիչ ավելի մանրամասն անդրադառնանք այդ գավառում ծավալված իրադարձություններին 1914-1915 թվականներին:

Արևմտահայերի, ավելի կոնկրետ կիլիկիահայերի, ողնաշարն էր *Ուլնիան՝ Զեյթուն* քաղաքն իր երեսուն փոքր ու մեծ գյուղերով, ռազմաստրատեգիական անառիկ դիրքով, բաց գրքանման գեղեցիկ կեցվածքով, ամենակարևորը *անկոտրում կամքի տեր խիզախ լեռնականներով:* Զեյթունցին սրատես ու հզոր հարվածի տիրապետող արծիվ էր, մշտարթուն թառած իր արծվաբնում, կես հազարամյակ բազկի ուժով պաշտպանելով լեռնահամայնքի կիսանկախությունը, երբեմն էլ անկախությունը, ծակող փշի պես խրված էր իրար հաջորդող սուլթանների աչքերի մեջ[2]:

Քառասուն և ավելի անգամ լեռնահամայնքը Ս. Աստվածածնա վանքի պատերի տակ կամ *Կոտորածի ձորում,* ջարդված թուրքերից դիակույտեր էր բարձրացրել: Իսկ հիմա, այսինքն դեռևս աշխարհամարտ չսկսած, լեռնահամայնքը խաբեության զոհ է գնում և կորցնում այն ամենը, ինչ հարյուրամյակներով նվաճել էր:

1914 թ. օգոստոսի 10-ին զեյթունցիներին զորահավաքին մասնակցելու պահանջ է ներկայացվում: Փոքր թվով լեռնականները, ենթարկվում են այդ հրահանգին, սակայն մեծ մասը խուսափում է թուրքական բանակում ծառայելուց: Ավելին՝ Մարաշ գնացող մի քանի հարյուր թուրք զինվորականների լեռնականները զինաթափում են,

---

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1065-1066:

[2] Զեյթունի պատմությանն ընդհանրապես, քաղաքի դատարկմանը մասնավորապես, նվիրվել է հսկայածավալ գրականություն: Այն առավել ստվարացավ 1962 թվականից սկսած, երբ առաջին անգամ Սփյուռքն ու Հայրենիքը միասնաբար նշեցին Զեյթունի ապստամբության *հարյուրամյա* հոբելյանը: Օգոստոսի 1-ին (1962 թ.) ՀԽՍՀ ԳԱ պլենար նիստում նախագահությամբ պրեզիդենտ *Վ. Ա. Համբարձումյանի,* փոխնախագահությամբ Ամենայն Հայոց Հայրապետ *Վազգեն Առաջին Վեհափառի,* գումարված հոբելյանական գիտաժողովում կարդացվեցին երեք զեկուցումներ, որոնցից մեկի հեղինակը *Հայկ Ղազարյանն* էր: Նրա թեման էր. «Զեյթունի ապստամբության արձագանքները հայ գրականության և պարբերական մամուլի էջերում»: Զեկուցումը տպագրվեց և Հայաստանում, և արտասահմանում: Այդ գիտաժողովին հրավիրված էին Զեյթունի երկու իշխանական տոհմերի *Նորաշխարհյանների* և *Սուրենյանների* շառավիղները, որտեղ ծանոթանալով նրանց հետ, մեր մեջ ստեղծվեց մեծ բարեկամություն, որը նպաստեց Զեյթունի պատմության խորաքնին հետազոտությանը, ամենակարևորը՝ փոխադարձ հետաքրքրող նյութերի փոխանակմանը: Եվ այսպես, նշենք մի քանի աշխատություններ միայն (դրանց թիվը շատ է), որոնց էջերում Զեյթունի տեղահանության մասին շարադրանք և նոր նյութեր կան: *Գր. Հ. Գալուստյան,* Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու Յորք, 1934, էջ 169-174: «Հայկական ջարդերը», տոքթ. *Եոհաննես Լեփսիուսի* տեղեկագիրը, Պեյրութ, 1965, էջ 7-13: *Տ. Անդրեասյան,* Զեյթունի տարագրությունը և Սուետիո ապստամբությունը, Հալեպ, 1935, էջ 25-40: «Զեյթունի պատմագիրքը», հրատարակություն Զեյթունի հայրենակցական միության, Պուենոս-Այրես, 1960, էջ 245-270: *Հ. Մ. Պողոսյան,* Զեյթունի պատմությունը, 1409-1921, Երևան, 1969, էջ 366-415: *А. М. Шамсутдинов,* Турецкая республика, Краткий очерк истории, Москва, 1962.

«մորուքի մի մասը ածիլելով», ծաղրական կերպարանքով «մասնավոր բարև են ուղարկում» գավառի մյութեսարիֆին[1]:

Խորամանկ թուրք հայդար փաշան, վիրավորանքը թաքցրած, օգոստոսի վերջերին 600 զինվորներով ժամանում է Զեյթունի զորանոց և պահանջում նախ լեռնականների զինաթափում, ապա զինվորագրում թուրքական բանակին[2]: Նա մեծ վախ ուներ լեռնագավառի ապստամբությունից և չէր սխալվում: Ժողովուրդը լսելով ծանր պահանջի մասին պատրաստվում է ապստամբության դրոշ պարզել: Շատերը բարձրանում են լեռները, ջոկատներ կազմում և պատրաստվում հարձակվել Մարաշի փաշայի ու նրան ուղեկցող զինվորների վրա:

Բայց կատարվում է անսպասելին: Այդ օրերին քաղաքապետ նշանակված ***Նազարեթ Չաուշը (Նորաշխարհյան)*** ոչ միայն դեմ է արտահայտվում ըմբոստանալուն, այլև իր եղբորորդուն բռնում և հանձնում է թուրքերին: Հայդար փաշան իր տարերքի մեջ էր: Առանց գնդակ արձակելու նա փաստորեն հպատակեցրել էր ***Զեյթունը, գիտե՛ք, հերոս Զեյթունը,*** արծվաբունը: Հանձնվել էր լեռնաքաղաքը, քանի որ այդպիսի հանձնարարություն էին տվել նաև Կիլիկիայի հոգևոր առաջնորդները: «Այդքանով չգոհանար ծեր աղուէս Հայտար եւ աղաները ձերբակալելով անոնցմէ զէնք կը պահանջէ, սոսկալի ծեծի ենթարկելով: Յաճախ ինչպէս Նազարէթ Չավուշի պարագային ծեծուողին բերնին վրայ բարձ մը կը դնէին, վրան պաշտօնեայ մը կը նստէր եւ հարուածները անանկ կը տեղացնէին որ ծեծուողներու ոտքերը արիւնլուայ կ'ըլլային եւ օրերով ոտքի վրայ չէին կրնար կենալ: Շատեր կը ստիպուին գաղտնի զէնք գնել ու տալ որ խոշտանգումէ ազատին: Հայտար կը յաջողի քաղաքին ամէնէն ընտիր զէնքերէն 150 հատ հաւաքել: Կառավարիչ Հայտարի այս վայրագութեանց կարծես պակասը կը լրացնէին Հալէպի գերման հիւպատոսը եւ արտակարգ զինուորական հրամանատար Ֆախրի փաշա, որ Մարաշ նստած սպառնալիք կը տեղար:

Զէյթունցիներ ալ այս դժուարին կացութեան հանդէպ ներքնապէս պառակտած ոմանք յանձնուելու եւ հնազանդելու, ուրիշներ ալ կռուելու կողմնակից կ'ըլլան: Եւ որովհետեւ ***կաթողիկոսարեղէն ալ խելօք կենալու հրահանգներ*** կը տրուէր վերջապէս կ'որոշեն յանձնուիլ եւ յանձնել, հետեւաբար 75-80 հոգի, որոնց գլխաւորներէն էին Առաջնորդ Յովհաննէս Վարդ. Գարանֆիլեան, Նազարէթ Չավուշ, Փանոս եւ Հաճի Չօլագեան, Խաչեր Թէօպէեան եւ ուրիշներ, ինչպէս նաեւ հարիւրաւոր զինուորցուներ, բոլորն ալ կապուած, 1914 Սեպտեմբերին Մարաշ կը տարուին:

Ասոնց Մարաշ մուտքի տեսարանը շատ յուզիչ կ'ըլլայ: Կարաւանը կը հասնի Մարաշի զօրանոցին մօտերը, ուր տեսակ, տեսակ ծաղրի ու նախատինքի առարկայ կը դառնան թուրք ամբոխին կողմէ: Մասնաւոր լուտանքի, թուքի եւ հայհոյութեան կ'ենթարկուի Նազարէթ Չավուշ, զոր քիչ ետքը բանտի մէջ այն աստիճան կը ծեծեն որ ամէն կողմը վէրքեր կը բացուին եւ իբր թէ դարմանելու պատրուակաւ թունաւոր սպեղանի կը քսեն ու կըսպաննեն զայն եւ մեռելը 10 ժամ պահելէ ետքը՝ առանց եկեղեցական իշխանութեան յանձնելու՝ չորս բեռնակիրներու թաղել կուտան՝ իբր բնական մահով մեռած ըլլար: Ահա այսպիսի վախճան կունենա այն քաջը, որմէ թուրքերը կդողային ատեն մը»[3]:

---

[1] ***Գր. Գալուստյան,*** նշված աշխատությունը, էջ 171:

[2] ***Մ. Մաշտոցի*** անվան Մատենադարան, ***Այլևայլ*** հեղինակների արխիվ, թղթ. 240ա, վավ. 75, էջ 14-15:

[3] ***Գր. Գալուստյան,*** նշված աշխատությունը, էջ 172-173:

Բանտարկելով և Մարաշի բանտ տեղափոխելով Զեյթունի ավագանուն, ազատ շունչ քաշած Հայդար փաշան, լեռնականներին հարկադրում է հանձնել զենքերը: Երկու օրում թուրքերը *բերդաքաղաքի բնակիչներից հավաքեցին քսան հազար ամենատարբեր տեսակի զենքեր, իսկ շրջակա գյուղերից 15 հազար միավոր զինատեսակներ*[1]:

Զենքերը հանձնելուց հետո, զեյթունցիները 1915 թ. ողջ ձմռան ընթացքում հանդարտ մնացին: Իհարկե, եթե ուզենային էլ ապստամբվել, չէին կարող, քանզի զինաթափված էին, իրարից պառակտված, հոգևոր և աշխարհիկ համայնապետերի կողմից խաբված: Գարնանը, սակայն, իրադրությունները նոր ընթացք են ստանում: Դեպքերին քաջատեղյակ Յոհաննես Լեփսիուսը մանրամասն անդրադառնում է այդ պատմությանը, դրա համար էլ բերենք նրա ականատեսի, գրառումները (քաղվածքի ընդարձակության համար ներողամտություն ենք խնդրում):

Նա գրում է. «Գարնանը (1915 թ.) թուրք ժանտարմաները, հայ երիտասարդ աղջիկներ անպատուեցին, ինչ որ իրաց կացութեան մէջ փոփոխութիւն մը յառաջ բերաւ ընդդէմ կառավարութեան: Այս ըմբոստացումին մասնակցեցան քսանի չափ տաք գլուխ Հայեր, և երկու կողմէն մէկ քանի սպանեալներ եղան: Այն Հայերը, որոնք մասնակցած էին այս գործին, և որոնց մէջ կը գտնուէին մէկ քանի դասալիքներ, պատիժէն խուսափելու համար, երեք քառորդ ժամ հեռու քաղաքին հիւսիսակողմը գտնուած վանք մը փախան և այնտեղ ապաստանեցան:

Ի մեծ զարմացում և սոսկում Զեյթունի բնակիչներուն զինուորական ստուար զօրաթեւ մը–չորսէն վեց հազար զինուորի մասին կը խօսուէր–քիչ յետոյ, 1915 Մարտի սկիզբը, Հալէպէն Զեյթուն եկաւ: Զեյթունի դէմ զինուորական ոյժի առաքումը Կիլիկիոյ մէջ մեծագոյն մտահոգութիւնը յառաջ բերաւ:

Սիսի կաթողիկոսը 3-16 Մարտ թուակիր Պատրիարքարան կը գրէ. «Կառավարութիւնը միջոցներ ձեռք առաւ Զեյթունի փախստականներուն դէմ: Որովհետեւ այս միջոցները կապ ունին արտաքոյ կարգի կարեւորութիւն ունեցող զինուորական գործողութեան մը հետ որ երբեք համեմատական չէ աննշան շարժառիթին հետ. կը վախնանք թէ մի գուցէ խնդիրը Զեյթունի հաւատարիմ ազգաբնակչութեան հարուած մը տալուն շուրջ դառնայ: Ապահով ենք թէ մեծ դժբախտութիւն մը կը սպասէ մեզ: Սպաներէ կազմուած զինուորական խորհուրդ մը, երկու օր առաջ, Մարաշէն Զեյթուն գնաց: Կ'անգիտանանք մասնաւոր մանրամասնութիւնները, բայց յստակօրէն կը տեսնենք թէ, գայմաքամը Զեյթունի հրամանատարին հետ համախորհուրդ, և մէկ քանի դասալքութիւններէ, իբր առիթ օգտուելով, բնակիչներուն դէմ անլուր ճնշումներ կը պատրաստէ:

Զեյթուն պաշարուեցաւ: Ի տես այնքան բազմաթիւ զօրագունդներուն, քաղաքին մէջ սպիտակ դրօշներ պարզուեցան, հասկցնելու համար թէ բնաւ մտքերնուն չէին անցներ ընդդիմութիւն ընել: Վանքին մէջ ապաստանողները ինքզինքին պաշտպանեցին ամբողջ օր մը, և մեծ թիւով զինուոր սպաննեցին, որովհետեւ աղէկ պաշտպանուած էին և աղէկ նշան կ'առնէին, մինչդեռ իրենք մէկ վիրաւոր միայն ունեցան: Զեյթունի մարդիկը մասնաւոր կերպով խնդրեցին հրամանատարէն, չփախցնել այս ընդդիմացողները, որպէսզի անոնց չարիքներուն երեսէն իրենք չձերբակալուին: Պաշարեալները սակայն յաջողեցան փախիլ, որովհետեւ գիշերային հսկողութիւնը անբաւական էր: Յաջորդ առտուն, ժամը իննին ատենները, նոյնիսկ իրենց փախուստը քաղաքին մէջ գիտցուելէ առաջ, հրամանատարը կան-

[1] *Մ. Մաշտոցի* անվան Մատենադարան, *Այլևայլ* հեղինակների արխիվ, թղթ. 240ա, վավ. 75, թերթ 37:

չել տուաւ քաղաքին առաջաւորներէն 300 հոգի, բանակատեղին մէջ իրենց հետ տեսակցութիւն մը ունենալու համար: Որովհետեւ մինչեւ այն ատեն, կառավարութեան հետ յարաբերութիւնները բարեկամական էին, այս մարդիկը առանց կասկածի ստուերին գացին որոշուած տեղը: Իրենցմէ մեծ մասը աշխատութեան հասարակ զգեստներով եկած էր, միայն մէկ քանի հոգիներ քիչ մը դրամ ունէին իրենց քով և աւելի աղէկ հագուած էին: Իրենցմէ մէկ մասը, լեռներու մէջ արածող իր հօտերուն քովէն կուգար: Երբ թուրք բանակատեղը հասան քիչ չեղաւ իրենց զարմացումը, տեղեկանալով թէ այլեւս քաղաք չէին կրնար վերադառնալ և թէ պիտի փոխադրուէին: Այս պատճառաւ ճամբորդութեան անհրաժեշտ պիտոյքները չկրցան հայթայթել: Մէկ քանիներուն թոյլատրուեցաւ որ կառքեր բերել տան. մեծ մասը ոտքով գնաց: Ո՞ւր կ'երթային, բան մը չէին գիտեր:

Քիչ ատենէն տեղի ունեցաւ Զէյթունի ամբողջ հայ ազգաբնակչութեան տարագրութիւնը, իրարու ետեւէ շատ մը կարաւաններով: Շուրջ 20 000 հոգի էին ասոնք: Քաղաքը չորս թաղեր ունի: Բնակիչները տարուեցան, մէկը միւսին ետեւէն, շատ անգամ կիները և մանուկները այրերէն զատուած: Իւրաքանչիւր արհեստէ մէյ մէկ հոգի ըլլալով, միայն վեց Հայեր կրցան մնալ:

Տարագրութիւնը շաբաթներ տեւեց: Մայիսի երկրորդ կեսուն, Զէյթուն ամբողջովին պարպուած էր: Զէյթունի բնակիչներէն 6-էն 8000 հոգի, Գոնիայի և Էրէյլիի մէջտեղ: Գարա-Բունարի և Սիւլէյմանիէի ճախճախուտ մարզերը դրկուեցան և 15-էն 19.000 հոգի դէպի Տէյր-էլ-Զօր, Եփրատի վրայ, Միջագետքի տափաստանը: Անվերջ կարաւաններ անցան Մարաշէն, Ատանայէն և Հալէպէն: Սնունդը անբաւական էր: Բան մը չեղաւ զանոնք տեղ մը հաստատելու համար կամ նոյն իսկ զիրենք իրենց տարագրութեան վախճանին հասցընելու համար:

Ականատես վկայ մը որ տարագրեալներուն Մարաշէն անցքը տեսաւ, 10 Մայիս թուակիր նամակի մը մէջ կը նկարագրէ զայն հետեւեալ կերպով:

«Զանոնք ճամբան տեսայ... անվերջ թափօր մը ժանտարմաներու ընկերակցութեամբ, որոնք զանոնք յառաջ կը քշեն գաւազանի հարուածներով: Հազիւ թէ հագուստ կը կրեն, տկարացած, աւելի ինքզինքնին կը քաշկռտեն ասոնք քան թէ կը քալեն: Ծեր կիներ կը կքին և երբ զապթիէն գաւազանը բարձրացուցած կը մօտենայ, ոտքի կ'ելլեն: Ուրիշ կիներ յառաջ կը քշուին էգ էշերու խումբի մը պէս: Տեսայ երիտասարդ կին մը որ կքեցաւ, զապթիէն երկու երեք հարուած տուաւ անոր և ան տաժանագինօրէն ոտքի ելաւ: Իր առջեւէն կ'երթար իր ամուսինը (երկու երեք տարեկան մանուկ մը գիրկը առած): Քիչ մը անդին, ծեր կին մը սահեցաւ և ցեխին մէջ ինկաւ: Ժանտարման երկու երեք անգամ զարկաւ իր բիրովը: Կինը շարժում չէր ըներ: Այն ատեն, երկու երեք ոտքի հարուածներ տուաւ. միշտ անշարժ կը մնար կինը: Թուրքը այն ատեն աւելի զօրաւոր ոտքի հարուած մը տուաւ և կինը փոսին մէջ գլորեցաւ: Կարծեմ թէ արդէն մեռած էր ան: Այս մարդիկը որոնք հոս քաղաք հասած են, երկու օրէ իվեր բան մը չեն կերած: Թուրքերը թոյլ չտուին իրենց, միասին բան մը տանելու, բայց եթէ վերմակ մը, ջորի մը և այծ մը: Բայց այստեղ, գրեթէ բոլոր ունեցածնին ոչինչ գինով ծախեցին, մէկ այծը վեց ղրուշ, մէկ ջորին կէս ոսկի, որպէսզի ատով հաց առնեն: Անոնք որ դրամ ունէին և կրնային հաց գնել, աղքատներուն հետ բաժնեցին, մինչեւ որ իրենց դրամն ալ հատաւ: Իրենց ունեցածին մեծ մասը, ճամբան արդէն կողոպտուած էր: Երիտասարդ կին մը որ ութը օր առաջ զաւակ մը ունեցած էր, ճամբորդութեան առաջին գիշերը գողցուց էշը: Տարագրեալները ստիպեցին իրենց բոլոր ունեցածները Զէյթուն թողուլ, որպէսզի, Պոսնացի իսլամ գաղթականները զորս կ'ուզէին անոնց տեղը հաստատել, կարենան այդ բաները իրենց պէտքերուն համար գործածել: Ներկայիս պէտք է որ 20էն 25 հա-

զար թուրք եղած ըլլայ Զէյթունի մէջ: Քաղաքին անունը փոխուեցաւ և Սուլէյմանլըք դրուեցաւ: Քաղաքը և զայն շրջապատող գիւղերը, ամբողջովին դատարկուեցան: Շուրջ 25.000 տարագրեալներէն, 15էն 16.000ը Հալէպի ճամբով տարուեցան, բայց պէտք է աւելի հեռուն երթան, դէպի Արաբիոյ անապատը: Արդեօք զանոնք այդ տեղը անօթութենէ մեռցնել կ'ուզեն: Անոնք որ այստեղէն անցան, Գոնիայի վիլայէթը կ'երթան: Այնտեղ ալ անապատներ կան: Երկու երեք շաբաթ կեցան Անատոլուի երկաթուղիի վերջացած տեղւոյն վրայ, Բողանդի, որովհետեւ գիծը զինուորական փոխադրութիւններով գրաւուած էր: Երբ աքսորականները Գոնիա հասան, ոչինչ կերած էին երեք օրէ իվեր: Քաղաքին Յոյները և Հայերը միացուցին իրենց ջանքերը: Ասոնց դրամ և ուտելիք հայթայթելու համար բայց Գոնիայի վալիին արգիլեց աքսորականներուն որեւէ բան մը տալը, «անոնք իրենց բոլոր պէտք եղածը ունէին» յայտարարելով: Ուրեմն ուրիշ երեք օրեր ալ առանց սնունդի մնացին խեղճերը: Ասկէ վերջ է միայն որ վալիին վերցուց իր արգելքը, և զապթիէներու հսկողութեան տակ կարելի եղաւ իրենց ուտելիք բաժնել: Այն ուրկէ այս տեղեկութիւնները առած եմ, ինծի պատմեց թէ, Գոնիայէն Գարա-Բունար ճամբուն վրայ,- երիտասարդ հայուհի մը իր նորածին զաւակը հօր մը նետեց որովհետեւ այլեւս չէր կրնար զայն սնուցանել: Ուրիշ մայր մը ալ իրենը թռչնին դուռնէն նետեց»:

Նոյն ականատես վկան կը գրէ 21 Մայիս թուականով.

«Զէյթունցիներու երրորդ և վերջին կարաւանը, մեր քաղաքէն անցաւ Մայիս 13ին, և անոնցմէ մէկ քանիին հետ, իրենց բնակած խանին մէջ կրցայ խօսիլ: Ամէնքն ալ երկու օր ոտքով քալած էին, տեղատարափ անձրեւի տակ: Բան մը չէին կերած: Խեղճ պզտիկ աղջիկ մը տեսայ որ շաբաթէն աւելի, բոպիկ ոտքով քալած էր, իբր ամբողջական հագուստ, միայն պատառատուն գոգնոց մը ունենալով: Ցուրտէն ու անօթութենէն կը դողար և ոսկորները տառացիօրէն մարմինէն դուրս կ'ելլէին: Երկոտասանեակ մը մանուկներ պարտաւորուեցան ճամբան թողուլ, որովհետեւ անկարող էին քալելու: Արդեօք անօթութենէն մեռա՞ն ատոնք: Հաւանականաբար: Բայց երբէք բան մը չպիտի գիտնանք այդ մասին: Տեսայ նաև Զէյթունցի երկու խեղճ տարիքոտ աղջիկներ: Հարուստ ընտանիքի մը կը պատկանէին, բայց հետերնին, հագած հագուստներէն զատ, բան մը չկրցան առնել: Յաջողած էին իրենց մազերուն մէջ հինգ վեց ոսկի պահել: Դժբախտութիւն մը իրենց համար, որ ճամբան քալած ատեննին, արեւը փայլեցուց մետաղը և անոր փայլը զապթիէի մը ուշադրութիւնը գրաւեց: Անիկա ժամանակ չկորսնցուց հանել տալու համար ոսկիները, աւելի կարճ միջոց մը ընտրեց, խեղճերուն ամբողջ մազը քաշեց փրցուց»:

«Իմ սեփական աչքերովս տեսայ, նաև ուրիշ խիստ յատկանշական պարագայ մը: Զէյթունի քաղաքացի մը, երբեմն շատ հարուստ, իբրեւ խլակ մը իր հարստութեան, երկու այծ կը քշէր: Վրայ հասաւ ժանտարմա մը և բռնեց երկու անասունները: Հայը խնդրեց որ զանոնք իրեն ձգէ, աւելցնելով թէ ապրելու ուրիշ բան մը չունէր: Իբր միակ պատասխան սկսաւ հարուածներ տեղալ, մինչեւ որ խեղճը փոշիին մէջ գլորեցաւ, և փոշին ալ արիւնաշաղախ ցեխի մը վերածուեցաւ: Այն ատեն ոտքի հարուած մըն ալ տուաւ Հայուն, և երկու այծերը առած ելաւ գնաց: Ուրիշ երկու թուրքեր կը դիտէին այս բանը, առանց զարմանքի ամենաթոյզն նշանի մը: Երկուքէն ոչ մէկը, մտքէն անցուց միջամտել»:

Գարա-Բունար աքսորուածներու վիճակի մասին կը գրէ 14 Մայիս թուականով.

«Նամակ մը, զոր Գարա-Բունարէն ստացայ, և որուն ստուգութիւնը չի կրնար կասկածի տակ դրուիլ, որովհետեւ գրողը ինծի ծանօթ է, կը հաստատէ թէ Գարա-Բունար աքսորուած - վիլայէթին ամենէն վատառողջ վայրերէն մին - վեցէն ութը հազար Զէյ-

թունցի Հայերը կը մեռնին, օրական 150-էն 200 հոգիով: Ճահճատենդը մեծ աւեր կը գործէ ասոնց մէջ, որովհետեւ ամբողջովին զրկուած են սնունդէ և ապաստանէ: Ի՞նչ անգութ հեգնութիւն, երբ կառավարութիւնը կը յաւակնի զանոնք հոն ղրկած ըլլալ, նոյն տեղը գաղթականութիւն մը հիմնելու համար: Ասոնք ո՛չ արօտ ունին, ո՛չ ցանելու հունտեր, ո՛չ հաց, ո՛չ ալ ապաստան, որովհետեւ, ձեռքերնին բացարձակապէս պարապ տարագրուած են»[1]:

Այսպիսով, նման անփառունակ վախճան ունեցաւ հերոս Զեյթունը, որի ողբերգության պրոցեսում մեծ մեղավորության բաժին ունեին Կիլիկիայի հայոց կաթողիկոս ***Սահակ Խապայանը,*** Մարաշի հայ հոգևոր և աշխարհիկ այրերը, ամենագլխավորը՝ Զեյթունի ավագանին: Այդ բոլորն էլ չէին պատկերացնում, թե ինչպիսի սխալներ են կատարում, քանի որ հետագա դեպքերը անկանխատեսելի էին, աներևակայելի: Հետևաբար, կատարվածը, իր բոլոր դժբախտություններով հանդերձ, չի կարելի դավաճանություն համարել: ***Դրանք սխալներ էին, այն էլ ծանրակատագրական:***

Հայերի զորահավաքի մասին ժամանակակիցների թողած բազում վկայությունների մեջ, բնականաբար, ամենից վավերականն ու հավաստին Կ. Պոլսի հայոց պատրիարք ***Զավեն Արքեպիսկոպոս Եղիայանի*** գրառումներն են, որոնք ձևակերպվել են դեպքերի զարգացման ընթացքում և լույս աշխարհ բերվել ոչ շատ ուշացումով: Նա հավաքել, դասդասել ու պահպանել է նաև նամակներ, որոնք վերաբերում են զորահավաքի պրոցեսին՝ ըստ գավառների:

Պատրիարքի վկայությամբ թուրքերի աչքի փուշն էր Վասպուրական աշխարհը, որտեղ նախ՝ հայերի մի մասը զինված էր, քիչ էական չէր նրանց ***խիզախ կեցվածքի հմայքը,*** որը սկզբնավորվում էր խրիմյանական վարժապետանոցից և եզերվում 90-ականների հերոսապատումներով:

Նա հիշատակում է, որ Վանի առաջնորդարանից 1914 թ. սեպտեմբերի 27-ին ստացել է ներքոհիշյալ գրությունը. «Զօրահանութիւնը սկսեց Յուլիս 27ին, Կիրակի օրը, Արարոց եկեղեցւոյ դրան առջեւի հրապարակը պաշարելով, ուր եկեղեցիէն ելլող ամէն Հայերը և հրապարակին վրայ առեւտուրով զբաղած հայ և թուրք ժողովուրդը քշելով առաջնորդեցին զօրանոցները առանց տարիքի և հասակի տարբերութեան, այնպէս որ հաւաքուած այդ մեծ բազմութիւնը արձանագրելու կամ ոչ զինուորցուները զատելու համար քանի մը օրեր պէտք եղաւ, իսկ այդ օրերուն մէջ անոնք սաստիկ նեղութիւններու մատնուեցան, զօրանոցի գաւիթին մէջ այրող արեւու տակ ճնճղերելով: Այս կերպով սկսուած զօրահանութիւնը բնական էր որ խրտչեցնէր շատերը, մանաւանդ Հայերու պէս զինուորական կեանքի իսպառ անվարժ ժողովուրդը, ուստի բնական էր որ ամէնքը անմիջապէս չպատասխանեցին զօրակոչին կամ զինուորագրուելէն յետոյ դասալիքներ գտնուէին, այս պատճառով խիստ հետազօտութիւններ կատարուեցան և այդ միջոցին պատահեցան ցաւալի դէպքերը...»[2]:

Զորահավաքին չմասնակցողները կամ իբրև այսպես կոչված «դասալիքները» պատժվում են խստությամբ կամ էլ գնդակահարվում են տեղնուտեղը:

Վիճակը գնալով դառնում է անտանելի ոչ միայն Վասպուրականում, այլև ողջ Արևմտյան Հայաստանում: Հայերից և ասորիներից սպանվածների թիվը, ամենուրեք հաշվում էին հարյուրներով, նրանց ունեցվածքի հրդեհումը դառնում սովո-

---

[1] Տոքթ. ***Եոհաննես Լեփսիուսի*** Տեղեկագիրը. Պեյրութ. 1965. էջ 10 15:

[2] ***Զավեն արքեպիս.,*** Պատրիարքական հուշերս. վավերագիրներ և վկայություններ. Գահիրե. 1947. էջ 52-53:

ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆ
(1861-1930)

Եվրոպայի ժողովուրդներն ու պետական գործիչները հոգնել են մշտնջենական հայկական հարցից: Դա ինքնին հասկանալի է: Չէ՞ որ այդ հարցը նրանք ձախողեցին: Հայաստան անունը նրանց նիրհած խիղճերում արթնացնում է տոկ ուրացած կամ չկատարած խոստումների տհաճ հիշողություններ: Նրանք մատը մատին չխփեցին իրենց խոստումները կատարելու համար, քանի որ դրանք տրվել էին թեև փոքր, արնաքամ, սակայն շնորհալի մի ժողովրդի, որը չուներ նավթի և ոսկու հանքավայրեր:

Կարեկցում եմ հայ ժողովրդին, որը խճճվեց եվրոպական քաղաքականության մեջ: Նրա համար ավելի լավ կլիներ, եթե իր անունը երբևէ հնչած չլիներ եվրոպացի որևէ քաղաքագետի բերանից: Սակայն հայ ժողովուրդը քնավ չի կորցնում իր հույսը: Նա համառ, անխոնջ աշխատում և սպասում է, շարունակ սպասում:

րական երևույթ: Ահա այդ ամենի մասին, Պատրիարքը 1914 թ. սեպտեմբերի 27-ին աղերսագիր է ներկայացնում Կարնո կուսակալ Իզեթ փաշային, որով նրան հաղորդում է.

«Ամիսէ մը աւելի է որ *Սէֆէր պէրլիք* յայտարարուած է. զօրակոչը սկսեր է և զէնքի տակ կը հրաւիրուին 20-45 տարեկանները. պաշարման դրութիւնը հրատարակուած է և պատերազմական ատեանը կազմուած է, ո՛վ որ չհնազանդի, ո՛վ որ անմիջապէս զօրակոչին չպատասխանէ *իտամի* (մահուան) կը դատապարտուի: Սարսռազդեցիկ այդ սպառնալիքի արձագանգը գաւառի մէկ ծայրէն միւսը կ'երթայ. ի՞նչպէս ձգել արտերը առանց հնձելու, և կալերը առանց կալուելու, սարսափահար և ապշահար դաշտի և լեռնաբնակիչներ ամէն կողմէն Առաջնորդարան կը դիմեն. «Ո՞հ, հայրիկ, դու մեզի ճար մը գտիր, ճամբայ մը ցոյց տուր, աս ի՞նչ տեսակ զօրահանութիւն է, մինչև 45 տարեկանները, և այս երկիրի 45 տարեկանները 50-55 տարեկան են, տարիքի թիւերը պակաս արձանագրած ըլլալուն պատճառաւ, ո՞չ ապաքէն այս ուզուածները մեծաւ մասամբ զինուորական կրթութիւն չեն առած, շատերը կորաքամակ են. ո՞չ ապաքէն քրիստոնեաները զինուորական տուրք տուած են, սակայն այս առարկութիւնները բան մը չեն արժեր. ի հարկէ պէտք է համակերպիլ, հայրենիքը վտանգի մէջ է. պէտք է փութալ օսմանեան բանակին զինակցիլ, այդ պէտք է ըլլայ ամէնքիս նուիրական պարտականութիւնը: Ժանտարմաները և զինուորական խումբերը գիւղերը ելած սրով և հուրով զինուոր կը հաւաքեն. ամէն կերպ բռնութիւն ներելի կը համարուի և խեղճ գիւղացիները իլու հնազանդութեամբ սկսած են խումբ-խումբ գալ:

Ժողովուրդի յուսահատութիւնը իր գագաթնակէտին հասած էր. բայց անոր ցաւը այս միայն չէ, հետզհետէ անկէ կը պահանջուի այն ամենը ինչ որ պատերազմող զօրաց պէտք է, զինուոր հաւաքելու միեւնոյն խստութեամբ սկսած են հաւաքել եզներ և սայլեր, իւրաքանչիւր գիւղէն եթէ չորս կամ վեց եզ պէտք էր, ժանտարմաները ամէն մէկ գիւղէն 30-40 եզ կը բերէին, որպէսզի անոնց մէջէն լաւերը ընտրուէին և անպէտները ետ ղրկուէին. երկրագործը այս նեղ օրերուն գիտէք թէ որքան շուարանք, որքան գործի հետածգում է. մի՞թե կարելի չէր, այդ ընտրութիւնները գյուղին մեջն ընել, բայց ո՞րու հոգն է»[1]: Նմանատիպ բովանդակությամբ բողոքագրերը պատրիարքարանը ստանում էր Հայաստանի գավառներից և սին հույսերով դրանք առաքում Բ. Դուռը:

Մինչև 1916 թ. հունիսը *Սեբաստիայի* նահանգում դեռևս *10 հազար* հայ զինվորներ կային, որոնք աշխատավորական գումարտակների բաժանված, չեթեների հսկողության տակ ամենատարբեր ու նվաստացուցիչ աշխատանքներ էին կատարում: «Ուրիշ հայ զինվորներ կաշխատեին զինվորական պիտոյից (մեջբերում է *Հայկազն Գ. Ղազարյանը* թուրքական սկզբնաղբյուրներից) *(թեմիհզաթի)* ամբարներուն մէջ եւ տակաւին հարիւրաւոր եւ հազարաւոր զինուորներ ալ ճամբաներու շինութեան մէջ, իբրեւ *«ամելէ թապուռ»*ներ Սեբաստիա, Ղանգալ, Թոգաթ, Ռեշատիյէ, Կեսարիա եւայլն:

Նոյն վայրենաբարոյ միջոցներուն ենթարկուեցան այս անբախտ զինուորները, ինչպէս միւս բոլոր բանտարկեալ հայերը, նոյն խաբեբայական միջոցներով. լեցուցած եւ արգելափակած էին զանոնք բանտերու և *մետրեսե*ներու մէջ և մաս առ մաս կոտորած էին: Նախ 20 օր բանտի մէջ, հսկողութեան տակ պահած էին զանոնք, ու-

[1] *Զավէն արքեպիս.*, Պատրիարքական հուշերս. վավերագիրներ և վկայություններ. Գահիրե. 1947. էջ 55-56:

ժասպառ ընելու համար: *Յունիս 22, 1916էն մինչեւ Յուլիս 13, 1916, վայրագօրէն սպանուած էին զանոնք: Շատ քիչեր միայն հրաշքով ազատած են այդ ջարդէն:* Ասոնց մէկ մասը բերած էին Գայա Տիպի Սեբաստիայէն 24 մղոն հարաւ-արեւմուտք՝ մէկ մասը քաղաքին շուրջը, մէկ մասը Շար-Գըշլա եւ Կեմերեկի մօտերը, մասնաւորապէս սպանդանոցի յարմար ծորերու մէջ:

Կարիճէն արեւմուտք սպանուած էին 2 000 անգամ մը և 7 000 ուրիշ անգամ. գումար՝ 9 000: Ատկէ զատ՝ Զառայի մէջ 1 000, Րեշատիյէի մէջ՝ 1 000 (Րեշատիյէ՝ Թոգաթի սանճագին մէջ եւ Րեֆայիէ՝ Շ. Գարահիսարի սանճագին մէջ)»[1]:

1916 թ. հուլիսին Սեբաստիայում գտնվող հայ կաթոլիկների արքեպիսկոպոս Կարապետ Քչուրյանը «լսելով Մուամմերի տված եղեռնական հրահանգը և Սեբաստիոյ հայ զինվորների ջարդը, *կաթվածահար կիյնա և կվախճանի Սեբաստիոյ մեջ»*[2]:

Ներկա ենթաբաժնի գլխագիրը յուրաքանչյուր պատմաբանիցս պահանջում է քննել մի կարևոր խնդրի զարգացման ընթացք ևս, որը մինչև օրս թերևս իր բարդույթների պատճառներով կամ շրջանցվել է, կամ էլ տարօրինակ գնահատականների է արժանացել: *Դա հայ ժողովրդի երկու հատվածների, նրա գլխադասը հանդիսացող քաղաքական կուսակցությունների ակնկալիքների և վերաբերմունքի խնդիրն էր՝ դեպի Առաջին աշխարհամարտն ու արևմտահայության ճակատագիրը:* Ուստի մենք ևս չառաջնորդվելով պատմական *եթե*-ներով կամ հետադարձ հայացքով մարգարեի թիկնոց չառնելով, այլ իբրև սովորական մի հետազոտող, հայտնենք մեր կարծիքն այդ մասին: Չէ՞ որ այսօր, առավել քան երբևէ, դրա կարիքն զգացվում է, այն էլ չափազանց խիստ:

Պատերազմի նախօրյակին Արևելյան Հայաստանում բնակչության թիվը հասել էր *երկու միլիոն հարյուր հազարի,* որից բանակ էր զորակոչվել *250 հազար զինվոր,* կազմելով ընդհանուր մարդաքանակի 13%-ը: Անտանտի մյուս տերությունների բանակներում, մեծ հաճույքով, ընդդեմ Թուրքիայի ծառայում էին և խիզախանում շուրջ 50 հազար հայեր[3]: *Ազգային բյուրոյի* դիմումի համաձայն՝ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը թույլատրեց կազմակերպելու նաև կամավորական ջոկատներ[4]:

Կամավորական առաջին ջոկատները, որոնք հետագայում մարդաշատ զորամասերի վերածվեցին, ղեկավարում էին *Զորավար Անդրանիկը, Քեռին* (Արշակ Գաֆավյանը), *Խանասորցի Վարդանը* (Մեհրաբյան), *Համազասպը* (Սրվանձտյանը): 1915 թ. վերջին հայ կամավորների թիվը հասավ 6000-ի: Հետագայում կամավորական ջոկատներ ձևավորեցին և անօրինակ խիզախությամբ կռվեցին *Հայկ Բժշկյանը* (Գայը), *Արշակ Արղությանը* և այլոք:

Ոգևորությունն անսահման էր: Բոլորն օրորվում էին այն հույսերով, թե ի վերջո ազատագրվելու է Արևմտյան Հայաստանը, և կես հազարամյակ անց վերընծյուղվելու է *հայկական պետականությունը:* Շարժման գլուխ կանգնած էր Ամենայն Հայոց Հայրապետը, իսկ գործող անդամներն էին հայ մտավորականները: Նրանք ձևավորում են Ազգային բյուրո, որի կազմում էին *Ա. Բաբախանյանը (Լեոն), Ս. Հարությունյանը, Հ. Թումանյանը, Կ. Ստեփանյանը, Ա. Սահակյա-*

---

[1] *Հայկազն Գ. Ղազարեան,* Ցեղասպան թուրքը, Պեյրութ, 1968, էջ 98-100:

[2] Նույն տեղում, էջ 101:

[3] Այս և մյուս թվերը վերցրել ենք ակադեմիական բազմահատորյակից: Տես «Հայ ժողովրդի պատմություն» , հ. VI, Երևան, 1981, էջ 547:

[4] «Մշակ», 1914, N 134:

նը, Հ. Ամիրխանյանը, Հ. Սպենդիարյանը, Խ. Աֆրիկյանը, Հ. Արղությանը, Հ. Մելիքյանը, Ս. Կյուլպենկյանը, Ավ. Պողոսյանը, Գ. Խատիսյանը, Ստ. Լիսիցյանը, Ա. Պապովյանը, Ա. Աբեղյանը, Հ. Քոչարյանը: Բյուրոյի պատվավոր նախագահն էր Վրաստանի և Իմերեթիայի հայկական թեմի առաջնորդ ***Մեսրոպ*** եպիսկոպոսը[1]:

Հայ մտավորականները լավ էին գիտակցում, որ այդ պահին ռուս-թուրքական ***տասնմեկերորդ պատերազմն էր*** (և ամենավերջինը) ծավալվում և հայ ժողովուրդը թերևս, ի վերջո կարողանար ազատագրվել թուրքական բռնապետությունից: Դրա համար էլ նրա կամավորական ջոկատները անօրինակ սխրանքներ էին գործում հատկապես գեներալ Անդրանիկի գլխավորությամբ:

Ամենաարյունահեղ մարտերը տեղի ունեցան 1915 թ. ապրիլի 2-րդ կեսին Սալմաստի գավառի կենտրոն ***Դիլման քաղաքի*** մատույցներում: Այդ ճակատամարտով, ռուս գեներալ Չերնոզուբովի խոսքերով, իրականում «որոշվում էր ամբողջ Կովկասի բախտը»: Ռուսական զորքերն Անդրանիկի ջոկատի հետ միասին ետ շպրտեցին Խալիլ բեյի գերազանց ուժերի մի քանի կատաղի գրոհները: Հայ կամավորները մեծ խիզախությամբ ու անձնվիրությամբ սվինամարտի էին բռնվում թշնամու հետ[2]:

Նույն գեներալ Չերնոզուբովն Անդրանիկի ջոկատի մասին գրել է. «Ես ջոկատի մասին կարող եմ խոսել միայն հիացմունքով... Մեր հաջողություններն Աշնակի մոտ, Վրուշ-Խորանում, Խանիքայում, Կոթուրում, Մոլլա-Հասանում, Բելիջիկում և Ղարաթելիում զգալի չափով կապված են առաջին հայկական ջոկատի մարտական գործողությունների հետ, ***որի հրամանատարը Անդրանիկն էր, փորձված զինվորական պետ, մարտի պայմանները հիանալի կերպով ըմբռնող, հաստատակամ, հետևողական... ջոկատն Անդրանիկի հրամանատարությամբ 1915 թ. ապրիլի 15-28-ին մասնակցել է Մուխանջիկի (Դիլմանի) հայտնի ճակատամարտին, որի շնորհիվ Կովկասը փրկվել է թշնամու արշավանքից... Ես ի դեմս Անդրանիկի տեսնում եմ Հայաստանի ազատությունն անմնացորդ կերպով սիրող մեծ հայրենասերի»***[3]:

Անդրանիկի ջոկատը հերոսական մարտեր մղեց նաև Դուզ-Դաղի շրջանում, մասնակցեց Բաշկալայի և Ասուրլիի գրավմանը: Թուրքական զորքերը նահանջեցին Ջուլամերկի ուղղությամբ. նրանց հետապնդում էր Անդրանիկի ջոկատը: Վերջինս ռուսական զորքերի կազմում անցավ պարսկաթուրքական սահմանը, թշնամուն նոր հարված հասցրեց Խանասորի լեռնանցքում, ապա մտավ Բաշկալե:

Անդրանիկի ջոկատի կողմից Խալիլ բեյի զորքերին հասցրած ծանր հարվածները խափանեցին Վանի վրա գրոհող Ջևդեթ բեյի զորամասին օգնություն հասցնելը: Եթե Անդրանիկը «չի կտրեր Խալիլ փաշայի առաջք և չի վերցներ Բաշկալեն, Խալիլի նպատակն էր Վան երթալ և կոտորել Վանը: Չորս թուրք գերի զինվորներ նույն բանը խոստովանեցան, ըսելով, թե «դուք մեզ կանխեցիք և մեր առաջքը կտրեցիք»[4]:

Մեր նպատակից դուրս է այստեղ մանրամասն անդրադառնալ հայկական կամավորական ջոկատների անօրինակ հերոսապատումների պատմությանը: Մենք մեծ հրդեհի մի փոքրիկ, բայց փառահեղ կայծով, ավելի ստույգ կրակով, փորձեցինք հիմք ստեղծել ընդհանրացնելու, որ ***արևելահայությունը առանց բացա-***

[1] «Մշակ», 1914, N 245:
[2] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 548:
[3] ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 370, ցուցակ 1, գործ 76, թերթ 1-2:
[4] «Զորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը», էջ 21:

ռության, մշակելով իր դիրքորոշումը, կանգնած էր արևմտահայության քիկունքում: Նրա համար ամեն ինչը *պարզ էր և հստակ:*

Իսկ արևմտահայությո՞ւնը:

Նախ՝ 1914 թ. նոյեմբերին *սուլթան խալիֆ Մեհմեդ V Ռեշադը գազավաթ*, այսինքն սրբազան պատերազմ հայտարարեց քրիստոնյա աշխարհին:

Ահա դրանցից երկուսը.

Во имя Бога милостивого, милосердого

1) Война с неверными есть такая предписанная Богом обязанность, которая может быть выполнена мусульманином и не лично, а посредством замены. Если часть мусульман выполнит ее, то остальные могут ее не выполнять, а если ни один не выполнит ее, то в пренебрежении ею бывают виновны все. Сражение с неверными необходимо, хотя бы они и не нападали на нас первыми[1].

2) Не предосудительно мусульманам стрелять в неприятелей, хотя бы между ними был пленный или купец мусульманин, или если бы они для защиты воспользовались детьми и пленными мусульманами; поэтому не должно воздерживаться от стреляния в них, но с ожесточением должно стрелять в стреляющих врагов[2].

Պանթուրքիզմն ու պանթուրանիզմն արդեն գործողության մեջ էին, և դրանց դեմն առնելը համարվում էր «սրբապղծություն», հայրենիքի դավաճանություն: Այդ պարագան առավել բարդացնում էր արևմտահայության վիճակը: Նրա ղեկավարությունը հարկադրում էր դրությունից ելքի որոնմանը: Բայց ինչպե՞ս, ինչպիսի՞ միջոցներով, որ կարողանար ցեղասպանությունից փրկել իր ժողովրդին: Ահա այդ մեթոդների ու միջոցների կիրառման խնդրում է, որ այսօր տարակարծություններ են առաջացել հետազոտողների, այո՛, նույնիսկ հայոց պատմաբանների բանակում:

Բարբարոսական մի տերություն, որը սրբազան պատերազմ էր հայտարարում սեփական, հպատակ ժողովրդին, միաժամանակ նրանից պահանջելով կատարել իր «օրինականացված պարտականությունները», այսինքն զենք ու զորք տրամադրել կառավարությանը, ի՞նչ կարող էր անել նրա գլխադասը հոգևոր ղեկավարությունը, ազգային-քաղաքական կուսակցությունները: Վերջիններս երկար խորհելուց հետո ժողովրդին հնազանդության կոչեցին հորդորելով նախ՝ զինաթափվել, կամովին զենքը տալ թուրքերին, ապա դրանից հետո միայն՝ զորակոչվել թուրքական բանակ: ***Սխալ էր, այսօրվա ակնոցներով կարդալիս՝ դատապարտելի:*** Բայց հակառակն անելու դեպքում, թերևս ցեղասպանությունը մի քանի ամիս ավելի վաղ կիրականացվեր, քան եղավ: Եվ մի՞թե մարդկային ուղեղը կարող էր մտածել, թե այդպիսի ողբերգություն կարող էր տեղի ունենալ: Դրա համար էլ այդ իրադարձությունների պատմությունը շարադրելիս, պատմաբան, զգույշ վարվի՛ր, սխալվելիս զգացմունքներ ես վիրավորում, սրտեր ես տրորում ***հայրենասեր ու հայրենակարոտ,*** բայց անելանելի վիճակի մեջ ընկած, փականքի տակ դրված:

Մի կարևոր խնդիր ևս: Պատերազմն սկսվելուց մի քանի շաբաթ անց, պարզվեց, որ թուրքերն արևմտահայության դեռևս չոչնչացրած զինվորներին, տանում էին Կովկասյան ռազմաճակատ, ***փաստորեն եղբորը՝ եղբոր դեմ կռվեցնելու:*** Արևմտահայ գիտակից մարդը Թուրքիայում իր իրավազուրկ, ճնշված ու հարստահարված գոյավիճակից ելք էր որոնում ռուսական զենքի հաղթանակի միջոցով: Նա մտածում էր այսպես. «Մենք ինչ խղճով կռվի պիտի ելնենք մեր ազատարարի դեմ... նախապատիվ կհամա-

[1] ***А. И. Агрономов,*** Джихад, "Священная война" Мухамедян, Москва, Крафт, 2002, стр. 98.

[2] Նույն տեղում, էջ 100: Նման տեքստերից մի երկուսը թարգմանաբար պահպանվել են ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 57, ցուցակ 1, գործ 630, թերթ 9-10:

րեմ կախաղան բարձրանալ, քան թե Ռուսիո դեմ կռվել, գնդակ արձակել անոնց զինվորներուն վրա, որոնց շարքերուն մեջ կան նաև հայ զինվորներ, մեր ազգակից ռուսահայ եղբայրներ, այս պատերազմը եղբայրասպան կռվի հանգամանքն ունի իր մեջ»[1]:

Հետևաբար սկսվում էր թուրքական բանակից հայ զինվորների *«դասալքության»* պրոցեսը: Ահա այս խնդիրն է, որին մենք պետք է *դասալքություն* թե *հերոսացում* անվանում տանք: Մնացած զինվորները անխտիր ոչնչացվեցին, սպանվելուց առաջ սեփական գերեզմանափոսերը փորելով, որը նույնպես չտեսնված ու չլսված էր պատմության մեջ: Ռազմաճակատ «փախչող» արևմտահայ զինվորներն ընդգրկվում էին ռուսական բանակի կամ հայ կամավորների շարքերը, կռվում հերոսաբար, փաստորեն լուծում տարագրված կամ սպանված իրենց ընտանիքների վրեժը: *Այո՛, նրանք դասալիքներ չէին, այլ հերոսացած վրիժառուներ, որոնց անունները հատուկ տառերով պետք է արձանագրվի հայոց պատմության էջերում:*

Այս խնդրի վրա նոր լույս է սփռում 1915 թ. ապրիլի 16-ին Վանից Չևդեթ բեյին ուղղված դասալքությանը վերաբերող մի ընդարձակ զեկուցագիր, որը շատ խնդիրներին պատասխան պարունակելու պատճառով, մեջբերում ենք գրեթե ամբողջությամբ.

«Հայ դասալիքներու թիվը շատ սահմանափակ էր սկզբները և անհնար չէր այս աննշան տոկոսն անհետացնելու...

Ատոր ընդհակառակը դժբախտ և աղետավոր անվստահութիւն մը կառավարության կողմե հայերու հանդեպ, իր անմիջական կարգ մը հետևանքներով, ինչպես նաև հայերու գոյության իսկ սպառնացող կարգ մը ծանր պարագաները ծանրագույն պատճառներ դարձան դասալքումին *ընդհանուր* երևույթ մը տալու համար:

Այդ նոր պատճառներն են.

1. Հայ զինվորներու և ժանդարմներու զինաթափումը, որ քաղաքական անվստահության հեղձուցիչ մթնոլորտ մը ստեղծեց անմիջապես հայերու շուրջը և նպաստեց լարելու միջցեղային հարաբերությունները հային և իսլամին միջև:

2. Զինաթափ եղած հայ զինվորները գրաստի տեղ մը դրվեցան, որ գերազանցապես վիրավորեց անոնց *մարդկային ու ազգային* ինքնասիրությունը, միաճգամայն ստորացնելով զանոնք իրենց իսլամ հայրենակիցներու աչքին:

3. Զինաթափ եղած այդ հայերը, գտնվելով զինված իսլամներու *հսկողության* տակ և հարկադրված լինելով անգեն շրջելու արդեն գրգռված և սպառազեն իսլամների մեջ, անոնց կյանքը վտանգի ենթարկվեցավ: Հասարակության մեջ հանառորեն կշրջեն շշուկներ հարյուրավոր *գնդակահար, ջրախեղդ ու դաշունահար եղած ու անհետ կորսված հայ զինվորներու մասին,* մասնավորապես Կարսո և Իրանի ռազմադաշտին մեջ կամ քովերը:

4. Ծանոթ քուրդ ոճրագործներու ներումը ու զինումը և անոնց մնալը իրենց գյուղերուն կամ հայաբնակ շրջաններուն մեջ, ինչպես Մեհմեդ-էմին, Մուսա և Գասըմ բեյերը և շատ շատերը:

5. Զինաթափ եղած հայ զինվորները այլևայլ պատրվակով հեռացվեցան իրենց գավառներեն դեպի *անծանոթ վայրերը:*

6. Բոլոր իսլամներու, հատկապես քուրդերու անխտիր զինումը 16-60 տարեկան միլիսի պատրվակին տակ:

7. Միլիսներու շահատակությունները հայ գյուղերու մեջ. այսպես... Կարճկան, Բելոնանիկապ, Ընծակ, Եղեգիս գյուղերու մեջ կատարված բռնությունները և սպա-

[1] *Հակոբ Տեր-Հարությունյան,* Շապին-Գարահիսարի ապստամբությունը. Թիֆլիս, 1917, էջ 46-47: Տես նաև *Ջ. Ս. Կիրակոսյան,* Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը. 1914-1916 թթ., Երևան, 1967, էջ 270:

նությունները Բաղեշի միլիսի և Չերքեզ աղայի ջոկատին ձեռքով և վերջապես Մխկներայ բռնաբարումները Եոմեր աղայի միլիսներու կողմե: Բշարե Չաթոյի 600 հոգիանոց խումբը Մանազկերտի մեջ և վերջապես Վանա նահանգի հյուսիսային-արևելյան գյուղերու մեջ Պարսկաստան երթալու ատեն, իսլամ չեթեներու բռնությունները Կարնո հայ գյուղերուն մեջ. քուրդ կամավորներու ավերները Մշո դաշտին մեջ... վերջապես քուրդերու ձեռքով Սլիվանի (Տիգրանակերտ) 12 հայ գյուղերու ամբողջովին կողոպտումը: Իբրև առանձին պատճառ մալ ավելցված է բազմաթիվ քուրդ դասալիքներու փախուստով դեպի Վանի և Բիթլիսի վիլայեթներու լեռնոտ շրջանները և անոնց տուներեղերը սպառնալից կենալը:

8. Համիդներու գնալը հայաբնակ գավառներու մեջ և անոնց կատարած ավերն ու կողոպուտը, ինչպես ***Հասան-Թամրան, Ախոռիկ, Բողազքեսեն, Հազարեն, Մանտան*** գյուղերու թալանը, ***Պստիկ գյուղի*** կողոպտումը Սատըմ բեյի ջոկատին կողմեն Գործոթ, Ըկսզնակ և այլն:

9. Վերջապես Բաշկալեի և շրջակա հայ գյուղերու, ինչպես նաև Ախոռիկի, Հասան-Թամրանի, Հազարենի, Դաշօղլուի և Ազարեկի ջարդերը, որոնք իրականություններ են հակառակ պաշտոնական ամեն հերքումներուն:

10. Քյուրդերու մեծ քանակով ու զինյալ փախուստը բանակեն: Այսօր Վանի ու Բաղեշի կուսակալությանց լեռնային գավառները լեցված են այդ դասալիքներով:

...Բանականության, խղճի և առողջ քաղաքականության հակառակ գործած պիտի լինի կառավարությունը, եթե ստիպե հայը մտնել անզեն ծառայության մեջ, որ վտանգ կսպառնա իր կյանքին առանց որևէ օգուտի մը ընդհանուր հայրենիքին համար, մինչև միևնույն ատեն իր անպաշտպան ընտանիքը ամեն վայրկյան ենթակա է իր զենքով ու կիսավայրենի դրացիներուն արյունոտ քմահաճույքներուն:

Ահա ինչո՞ւ պետք է ***դադարեցնել ըստ իս այլևս դասալիք բառը գործածելե հայ երիտասարդին հանդեպ, քանի որ զենք չունի ան իր ձեռքը, որ էական հանգամանքն է զինվորի մը, որովհետև դասալիք չի կրնար համարվել անզեն զինվորը:***

Ուստի այս դասալիքներու հիշված պատճառները կրոնական, քաղաքական և ընկերային հիմունքներ ունեն: Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Դիարբեքիրի մեջ մեր մատնանշած պատճառներով հայ օջախները տղամարդոցմէ զրկված են և վտանգի տակ կգտնվին: Հազարավոր անզեն հայերը բանակին օգուտ մը չտալով, մյուս կողմեն երկրագործական այնքան կարևոր ու անհրաժեշտ աշխատանքեն ալ զրկված են: Վերջապես, եթե հայ փախստականներու խնդիրը չկարգադրվի, հայրենիքը մեծ վտանգի մը կենթարկվի և մասնավորաբար սա շատ հստակ կտեսնվի: Թե՛ օրենքեն և թե անոթութենեն հետապնդվող այս մարդիկ իրենց կյանքերը գնդակեն ազատելու համար, իրենց ապրուստի ճար մը գտնելու ետևեն պիտի ելնեն բնականաբար»[1]:

Այսպիսով, պատերազմը չսկսած՝ թուրքերը շատ վարպետությամբ զինաթափեցին ողջ հայ ժողովրդին, զինաթափեցին վարպետությամբ, այսինքն՝ հայ վերնախավի գիտությամբ, թողտվությամբ, նույնիսկ նրանց հորդորներով ու սաստերով: Երկրորդ քայլը եղավ զինվորագրության պատրվակի տակ երիտասարդ, առողջ տղամարդկանց տեղահանելն ու ոչնչացնելը, այսինքն՝ կտրել ժողովրդի ձեռքերը, նրան զրկել դիմադրելու բոլոր տեսակի հնարավորություններից:

Երրորդ ու ամենալուրջ հարվածը հայ մտավորականության ոչնչացումն էր: Նրանք առանց հապաղելու նախ՝ կտրեցին հայ ժողովրդի գլուխը, իսկ մարմնի հետ հաշվեհարդար տեսան հետագա չորս տարիներին:

---

[1] ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 227, գործ 416, թերթ 54-58: Այս փաստաթուղթը կրճատված տեսքով օգտագործել է *Ջ. Ս. Կիրակոսյանը*, տե՛ս նրա նշված աշխատությունը, էջ 267 268:

2. Հայ մտավորականության ձերբակալությունը, աքսորն ու ոչնչացումը

Հայ, մասամբ նաև օտար հետազոտողները, ***Մեծ եղեռնի*** սկզբնավորումը համարում են 1915 թ. ապրիլի 24-ին Թուրքիայի մայրաքաղաքում կատարված անտանելի իրադարձությունները: Քանի որ այդ ոճրագործությունը կատարվեց Կ. Պոլսում, ուստի նպատակահարմար ենք համարում մի փոքր ավելի հանգամանորեն անդրադառնալ հայկական այդ ստվարախիտ գաղութի նախաեղեռնյան տասնամյակների պատմությանը:

XIX դարի երկրորդ կեսին Կ. Պոլսի հայ գաղութը արդեն վերածվել էր արևմտահայերի տնտեսական, քաղաքական և մշակույթի ***ամենազորեղ կենտրոնի:*** Իր ազգաբնակչության քանակով ու որակական հատկանիշներով, ժողովրդի լուսավորության նկատմամբ ունեցած մտահոգություններով, հասունացրած մտքով ու ծավալած գաղափարական պայքարով, Կ. Պոլիսն իրավամբ առաջնության դափնին խլել էր հանուր հայ գաղութների ձեռքից և տարել դեպի առաջ: Մադրասն ու Կալկաթան արդեն թառամել էին, Մոսկվան և Թիֆլիսը դեռևս չէին հասունացել համազգային ծգտումների կաղապարման համար[1]: Հայաստանի քաղաքները հասարակական ու քաղաքական շարժումների ծավալման տեսակետից տակավին նիրհում էին հնամենի քնով՝ արձակելով միայն լույսի թույլ շողեր խավարի համատարած անապատների մեջ: Ծովահայաց Կ. Պոլիսը, մասամբ էլ Զմյուռնիան էին մնում արևմտահայերի քաղաքական շարժման այն նշանակալից օջախները, որոնք ոչ միայն նյութական ու իմացական զարկերակներով աղերսի մեջ էին ժողովրդի մայր հատվածին, այլև ֆիզիկական ու մտավոր ուժերի հարատև ներարկումներ էին ստանում նրանից[2]:

Նոր պատմաշրջանում Կ. Պոլիսը դեպի իրեն էր ծգում հայկական առողջ ֆիզիկականն ու բանականը, միտքն ու ուժը, հարստությունն ու թշվառությունը: 1840–60-ական թվականներին գաղթօջախն արդեն ազդում էր ողջ արևմտահայության վրա, տոն տալիս հայ հասարակական, քաղաքական, ազատագրական համազգային ծգտումներին, դառնում Արևելքի ու Արևմուտքի հանդիպակայանը, կամրջում հայ ժողովրդի զույգ հատվածների շահերը, ընդունում արևելահայ առաջավոր մտավորականներին, հղացնում սուլթանական Թուրքիայի լուծը թոթափելու, հայերի կորցրած պետականության վերականգնման ծրագրեր, հաճախ էլ դրանք գործողության մեջ դնելու փորձեր անում:

Գավառներից պանդուխտներ ընդունելով՝ գաղթօջախը միաժամանակ ծգտում էր դեպի եվրոպական մշակույթի մերձակա ու հեռավոր ոստաններ, այնտեղից ստանալու լույս ու ջերմություն, իբրև լրացուցիչ տարրեր իր արգասավորման, ստացածի մի մասը ժողովրդանվեր մտավորականության միջոցով հասցնում գավառահայությանը: Կ. Պոլիսը, սակայն, միջնադարի նման այլևս գաղթակայան չէր բնաշխարհից բռնությամբ խլված, հայրենազուրկ խլյակ դարձած հայ ազգաբնակչության համար, այլ հանգրվան՝ գավառում սոցիալ-քաղաքական ճնշումների են-

---

[1] 1995 թ. Լոնդոնում լույս է տեսել *Ֆիլիպ Մանսելի* «Կոստանդնուպոլիս» (1453-1923) վերնագրված 527 էջանոց մի աշխատություն, որը բոլորովին նոր լույս է սփռում Թուրքիայի պատմության բազմաթիվ խնդիրների վրա: ***Philip Mansel,*** Constantinople, City of the World's Desire 1453-1923, London, 1995. Կ. Պոլսի հայ գաղութին է նվիրված *Յ. Ճ. Սիրունու,* Պոլիս և իր դերը, Պեյրութ, 1965 թ. աշխատությունը: *Հայկ Ղազարյան,* Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 392 և հետո:

[2] *Անդրանիկ Անդրէասեան,* Խոհեր, Պեյրութ, 1961, էջ 8-9:

թարկվող, բռնությունից խուսափող դեպի ազատության «հուսակայանը» ձգտող ժողովրդի համար:

Արևմտյան Հայաստանից գաղթողների, դրսեցիների հաշվին քաղաքը գնալով ընդարձակվում էր, ստվարանում հայ ազգաբնակչության թիվը: Ծնվում և շենանում էին նոր թաղամասեր:

Կ. Պոլիսը սկզբում կառուցված էր յոթ բլուրների վրա և բաժանվում էր երեք ուրույն քաղաքների բուն Պոլիս-Ստամբուլ, Բերա-Բեյօղլու և Սկյուտար: Սրանք իրարից բաժանվում էին Բոսֆորի նեղուցով, Ոսկեղջյուր ծոցով և միավորում առաջներում՝ 19, հետագայում՝ 36 թաղամասեր: XVIII դարի վերջին հայերը՝ մարդաշատ համայնքներով, առանձին եկեղեցիներով, դպրոցներով, զբաղեցնում էին ծայրամասային 20 թաղամասերի կեսից ավելին: Միայն Սուլու Մանաստըր թաղամասում ապրում էին 1000 տնտեսություն հայեր, Ս. Հրեշտակապետում՝ 800, Գում-Գափույում՝ 2000, Կալաթիայում՝ 3000, վեց Օդալարներում՝ 2000: Հայաշատ էին Սկյուտարը, Պալաթը, Ենի Գափուն, Կետիկ փաշան, Սելամիյեն: Ամբողջովին հայկական թաղամասեր էին Խաս գյուղը, Գատը գյուղը, Մաքրի գյուղը, Միջագյուղը[1]:

XIX դարի սկզբներին Կ. Պոլսում ապրում էին 150 հազար հայեր[2], 1840-ական թվականներին նրանց թիվը հասավ 222 հազարի[3], 1860-80-ական թվականներին 250-300 հազարի[4]: Ակնհայտ է, որ Կ. Պոլսի հայ գաղութը աճում էր ոչ միայն բնական աճի, այլև գավառներից եկող պանդուխտների հաշվին: Դրանով է բացատրվում, որ Կ. Պոլիսը գաղութ չէր՝ իր ուրույն, ինքնամփոփ կերպարանքով, սեփական հատկանիշներով, *այլ խճանկարը* ողջ արևմտահայության: Հայաստանի գրեթե բոլոր գավառներն իրենց մասնիկն ու ներկայացուցիչները, բարբառն ու սովորույթներն ունեին այդ ընդհանրության մեջ:

Կ. Պոլսի հայ գաղութի նման ստվարացումը, նրա նշանակության բարձրացումն ուներ իր տնտեսական էական պատճառները: Դարեր առաջ սուլթանները «բարյացակամ» վերաբերմունք ունեին «փեշաքչի» հայերի նկատմամբ: Մայրաքաղաքի բարգավաճման համար նրանք նույնիսկ հովանավորում էին հայ արհեստավորներին, առևտրականներին, սրանց ազատում մանկաժողովների պարտականությունից, զինվորական հարկից: Դեռևս Սիմոն Լեհացին փոքր-ինչ չափազանցված արձանագրել է, թե «Ի Ստամպօլ սակաւ մի ունին մխիթարութիւն քրիստոնեայք և վայելչութիւն, զի ունին եկեղեցիք պայծառ, տօնախմբութիւն ձայնիւ. հեծնուն ձի և ջորի, ագանին եուզչլայ, եթմիշչլայ չուխա. ուտեն, ըմպեն, ուրախ լինին, ունին մեծամեծ տունս, էգիս եւ դրախտս և այլն. զոր Անատոլին բնաւ զայս ոչ երեւի, այլ տներն ախոռի նման եւ չալուով իսկ ի քաղաքսն քարբիչով, դռուին փոքր և խորափտիտ խաւարչտին»[5]: Պոլսի հայերը, կուլտուրապես թուրքերից անհամեմատ բարձր լինելով, աստիճանաբար թափանցեցին սուլթանի պալատը, շատերը դարձան պալատական խորհրդականներ, իրենց ձեռքում կենտրոնացրին պետական կարևոր գերատեսչություններ:

Քաղաքում հնարավորություն ստեղծվեց արհեստի ու առևտրի զարգացմանը: Հայ արհեստավորության ծաղիկը հանգրվանեց Կ. Պոլսում: Թուրք-եվրոպական առևտուրը պահանջում էր գործիմաց, լեզուներ գիտցող վաճառականներ: Իրենց վայելքներով տարված իշխողներն արհամարհում էին առևտրական գործը:

---

[1] «Ընդարձակ օրացոյց Ազգային հիվանդանոցի», 1902, էջ 198:

[2] *Հ. Գ. Մ.*, Մասնական պատմութիւն հայ մեծատուններուն, էջ 49:

[3] *M. A. Ubicini*, Lettres sur la Turquie, Paris, 1853, p. 27.

[4] «Արևելյան մամուլ», 1878, էջ 283: «Արծագանք», 1882, N 36, էջ 557, «Աշակ», 1874, N 93, 1876, N 26, *Րաֆֆի*, Երկեր, հ. 9, Երևան, 1958, էջ 482:

[5] «Հանդէս ամսօրեայ», 1934, N 3-4, էջ 158-159:

Առևտուրն անցնում էր հայ ու հույն վաճառականների ձեռքը: Հետևաբար, առևտրի ու արհեստագործության զարգացման հնարավորությունները գավառից դեպի Կ.Պոլիս ձգեցին հայկական տարրի նոր քարավաններ:

Առևտրականներից և արհեստավորներից զատ մայրաքաղաք էին գալիս հիմնականում պանդուխտները, օրամշակ համալները: Նրանք գալիս էին հաց ու աշխատանք որոնելու, ստակ շահելու, հայոց պատրիարքներից պաշտպանություն ու ապահովություն հայցելու: Պատրիարքարանի առկայությունը սուլթանի նստավայրում քիչ դեր չխաղաց հայկական տարրի համախմբման գործում:

Կ. Պոլիսը ազգաբնակչության սոցիալական կազմով, զբաղմունքի տեսակներով, մշակութային պահանջների մակարդակով, կառավարության հրապարակած «Թանզիմաթ»-ով, սահմանադրական, ձևական, երբեմն խաբուսիկ օրենքներով արտաքնապես նմանվում էր եվրոպական քաղաքներին՝ միշտ պահպանելով իր ասիական բնույթը: Չբացառելով սոցիալական անտանելի շահագործման, ազգային խտրանքների թուրքական յուրահնար մեթոդները, գավառի հետ համեմատած այստեղ քիչ մեղմ էին ազգային ճնշումները, նահանգապետ փաշաների ու երկրատեր քուրդ ցեղապետերի՝ անպաշտպան քրիստոնյաների նկատմամբ կատարված բռնությունները, զանգվածային հարստահարությունները: Եվրոպական բազմաթիվ դիվանագետների, մասնավորապես ռուսական դեսպանության առկայությունը Կ. Պոլսում, Թուրքիայի տնտեսական ու քաղաքական կախումն այդ տերություններից այս կամ այն չափով կաշկանդում էին Ելդըզի տիրակալներին՝ թույլ չտալով հպատակների հետ վարվել այնպես, ինչպես վարվում էին գավառներում:

Նկատելի է գաղութահայության և գավառահայության ապրելակերպի, հատկապես քաղաքական դրության էական տարբերությունները, դրա համար էլ պատահական չէր, որ մտավորականությունը, առևտրականների ու արհեստավորների մեծ մասը, մշակներն ու համալները անընդհատ կենտրոնանում էին ծովամերձ քաղաքներում: Պոլիսը վերածվում էր արևմտահայ կուլտուրայի ամենախոշոր օջախի: Ողջ արևմտահայության մեկ տասներորդ մասը կենտրոնանում էր մայրաքաղաքում: Սակայն էականը միայն քանակը չէր, այլ որակը, գաղթօջախներում հանգրվանած հայկական տարրի տնտեսական ու մտավոր ուրույն կենցաղը:

Կ. Պոլսի հայկական մարդաշատ գաղութը XIX դարի առաջին կեսին բաղկացած էր սոցիալական տարբեր, հակադիր ու իրարամերժ դասերից: Հասարակական այդ դասերը յուրաքանչյուրն իր կարողությամբ էական դեր էր խաղում Թուրքիայի տնտեսական կյանքում: Մինչև «Թանզիմաթ»-ը, հետևաբար և սահմանադրական պայքարի ավարտը, օսմանյան պետության կարևոր զարկերակներն իրենց ձեռքն էին պահում պոլսահայ ամիրաները՝ հայ առևտրավաշխառուական կապիտալի այն մագնատները, որոնք քիչ անց պետք է նահանջեին Թուրքիայի նավահանգիստներում խարսխված եվրոպական կապիտալի ու նրա շոշափուկների դերակատար կոմպրադորական բուրժուազիայի առաջ[1]:

Ամիրաների զգալի մասը ֆեոդալական Թուրքիայի ջատագովներ և խոշոր կարողություն դիզած հայ վաշխառուներ էին: Նրանց գոյությունը ծգվում էր XVI դարից և հարատևում մինչև 1870-ական թվականները: ***Ամիրա, էմիր-պատրիկ տիտղոս են*** կրել հայ մեծատունները, տերության բարձրաստիճան պաշտոնյաները, կուսակալների սեղանավորները, նշանավոր ճարտարապետները: «Ամիրա բառը, թեև ոչ հայկական (արաբերէն ամիր՝ հրամայող, ***էմիր*** – իշխան, իմերա – իշխաններ), միայն հայազգիներու տրուած տիտղոս մ'էր և անպատճառ կենթադրէր կառավարութեան

[1] *Ա.Յովհաննիսյան,* Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, Երևան, 1955, էջ 348:

քով դիրք ունեցող անձ մը... Ամիրա տիտղոսն իբրև պատուանուն բացառապէս կտրուէր նաև հարուստ և երևելի ազգայնոց ոմանց»[1]:

1850-ական, առավելապես 60-ական թվականներին թուրքերի, հույների ու սլավոնների կողքին, մայրաքաղաքում ծնվեց, ձևավորվեց ու առնականացավ նաև հայ պետական պաշտոնեությունը արևմտահայ էֆենդիների դասը: Մինչև 30-ականները Թուրքիայի պաշտոնյա էֆենդիների մեջ հայերի անունները քիչ են հիշատակվում, սակայն 40-ականներից սկսած Կ. Պոլսում, Զմյուռնիայում և նույնիսկ գավառական քաղաքների հրապարակներում տեղեր են բռնում հայ էֆենդիները: Լեզուներին հմուտ, կրթություն ստացած ամիրաների այս հաջորդները կանչվում են պետական պաշտոնների, դառնում սուլթանների նոր հենարաններ, պայքարի ձեռնոց նետում ֆինանսական մագնատներին, զինվորագրվում արտասահմանյան կապիտալին, ոմանք էլ դառնում են թուրք-եվրոպական առևտրի զորեղ միջնորդներ:

Էֆենդիները բարձրանում էին, սակայն, գաղութահայ վաճառականների, ներքին ու արտաքին առևտրով զբաղվող հայ առևտրականների միջավայրից: Մինչև Թուրքիայի կիսագաղութ դառնալը Կ. Պոլսում աշխույժ էր ներքին առևտուրը: Դարասկզբի մայրաքաղաքը արվարձաններով, հայկական ու թուրքական թաղամասերով, պատված էր կրպակներով: Կրպակների ընդհանուր թիվը հասնում էր 5233-ի, որի մի ստվար մասը հայերինն էր: Գործում էին հարյուրի հասնող շուկաներ, խոշոր ***պեզեստաններ,*** խաներ ու վաճառանոցներ: Նույնիսկ ամեն մի ապրանքատեսակը վաճառվում էր հատուկ շուկաներում դրանից էլ ստանալով իր անունը: ***Աթ բազար, դավուդ բազար*** կոչվող շուկաներում վաճառվում էին ձիեր, ջորիներ: ***Եսիր բազարը*** գերիների, մարդավաճառության վայր էր, ուր անարգել աճուրդի էին հանում ստրուկներին, Վրաստանից գերեվարած գեղեցիկ տղաներին ու աղջիկներին: Ըստ որում, սուլթան Սուստաֆայի օրենսդրությունից սկսած, քրիստոնյաները մարդիկ գնելու, տնային ծառաներ պահելու իրավունքից զրկված էին:

Եվահիր բազարը թանկարժեք քարերի, ոսկյա ու արծաթյա իրերի վաճառանոց էր, ***օթուրագճըլար*** բազարը՝ հանդերձանքի վաճառքի: Հայերը կրպակներ ունեին ***Շեհրեմենի*** շուկայում, Չարշամբայում, Գոճա Մուստաֆա փաշայում, Քյուչուք Մուստաֆա փաշայում, Էսկի Ալի փաշա չարսուսիում և այլուր: Ուրեմն, մայրաքաղաքի ներքին առևտրի գերակշռող մասը կենտրոնացված էր հայ վաճառականների ձեռքում:

Սրանք սկզբում համախմբված էին էսնաֆությունների մեջ, պարապում էին նախ գավառից բերված գյուղատնտեսական մթերքների, ապա և տեղական արհեստների արտադրանքների վաճառքով: Դարասկզբին այս հայ վաճառականները ճեղքում էին էսնաֆությունների նեղ զսպաշապիկը, դիզում դրամագլուխ, տիրապետում առևտրի եվրոպական մեթոդներին, հալածում վաշխային առևտրի մեթոդները, յուրացնում քաղաքակիրթ դարին համապատասխան շահաստացության եղանակները[2]:

Կոստանդնուպոլսի հայ համայնքում փոքր թիվ չէին կազմում մտավորականները (մանկավարժներ, գրողներ, բժիշկներ, փաստաբաններ, ճարտարապետներ, արվեստագետներ և այլն), որոնք ակտիվորեն մասնակցում էին ոչ միայն պոլսահայերի, այլև ամբողջ արևմտահայության հասարակական-քաղաքական կյանքին[3]:

Պետության կողմից Կոստանդնուպոլսի հայ համայնքի ղեկավար էր ճանաչված

---

[1] ***Բիւզանդ Քէչեան,*** Պատմութիւն ս. Փրկչի հիւանդանոցին հայոց ի Կ. Պոլիս, 1888, Կ. Պոլիս, էջ 49, տե ս նաև ***Թորոս Ազատեան,*** Ակն և ակնցիք, էջ 49:

[2] ***Ա. Յովհաննիսյան,*** Նալբանդյանը և նրա ժամանակը, էջ 353:

[3] Սույն հատվածը տպագրել ենք ՀՍՀ, հ. 5, Երևան, 1979, էջ 617-618:

Պոլսի հայոց պատրիարքը: 1844-ին ստեղծվել է պոլսահայերի ներքին գործերը կարգավորող մարմին՝ ***Ազգային ժողովը,*** 1847-ին՝ ***Ազգային հոգևոր և գերագույն ժողովները,*** որոնք ***Ազգային սահմանադրության*** (1863) ընդունմամբ վերակազմվել են տարբեր մարմինների: Պաշտոնական ղեկավար հիմնարկների կողքին համայնքի հասարակական կյանքը կազմակերպել են ազգային մշակութային միությունները, բարեգործական ընկերությունները, որոնցից նշանավոր են եղել «Համազգայաց ընկերությունը» (1846), «Ուսումնական ընկերությունը» (1853), «Բարեգործական ընկերությունը» (1860), Ասիական (1877), Արարատյան, Կիլիկյան, Դպրոցասիրաց-Արևելյան (1879, 1880-ից՝ ***Միացյալ ընկերություն հայոց),*** Ազգանվեր հայուհյաց (1879), Դպրոցասեր տիկնանց (1879) ընկերությունները, Իզմիրյանց մրցանակի հանձնախումբը, Սանասարյանի խնամակալությունը, ինչպես նաև Արիների, թատերասերների, երաժշտասերների, գրասերների, կրթասերների, մարմնամարզական միությունները, Հայ արվեստից տունը և այլն: Այս ընկերությունների ջանքերով ու միջոցներով դպրոցներ են հիմնվել Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայաշատ վայրերում, գրադարան-ընթերցարաններ, հարուստ մատենադարաններ Կոստանդնուպոլսում և այլն: XIX դ. վերջից մինչև XX դ. սկիզբը Կոստանդնուպոլսում գործել են հայ ազգային կուսակցությունները:

Կոստանդնուպոլսի առաջին կանոնավոր դպրոցը (ուր պատրաստվում են ուսյալ եկեղեցականներ) հիմնել է Հովհաննես Կոլոտ պատրիարքը XVIII դ. սկզբին (նախ Սկյուտարում, ապա Գում-Գափուում): 1859-ին Կոստանդնուպոլսում կար 42 վարժարան, 1871-ին՝ 48, 1893-ին՝ 39, 1901-ին՝ 40: Կոստանդնուպոլսի ազգային կրթական բազմաթիվ հաստատություններից աչքի են ընկել Թոփ Գափուի Պեզճյան վարժարանը (հիմնվել է 1832-ին), Սկյուտարի ճեմարանը (1838), Խասգյուղի Ներսեսյան վարժարանը, Սամաթիայի Ագապյանը, Թոփ Գափուի Լևոն-Վարդուհյանը, Գատը գյուղի և Բերայի Մխիթարյան հայրերի դպրոցները, Անարատ հղության քույրերի կաթոլիկական, ինչպես նաև ավետարանականների դպրոցները, Գատըգյուղի Արամյանը, Պեշիկթաշի Մաքրուհյանը, Բերայի Աղջկանց արվեստանոցը, Էսայանը, Նոր դպրոցը, ինչպես նաև Հռիփսիմյանց, Գայանյանց, Մեզպուրյան, Մեշտուտճյան, Շահնազարյան, Կարապետյան, Բագրատունի, Պեզազյան, Նիկողոսյան, Տատյան, Սեմերճյան, Սրենց, Պոյաճյան, Ինճեյան, Պերպերյան, Դպրոցասեր տիկնանց վարժարանները և ***Ղալաթիայի Կեդրոնական վարժարանը:***

Կոստանդնուպոլիսը եղել է հայ տպագրության խոշոր կենտրոններից, առաջին հայկական տպարանը հիմնվել է 1565-ին, XIX դ. առաջին կեսին գործում էր 25, իսկ երկրորդին՝ շուրջ 30 տպարան: Դրանցում տպագրվել են հայերեն գրքեր, պարբերականներ և այլն: Առաջին թերթը՝ «Լրո գիր մեծի տերությանն Օսմանյան», լույս է տեսել 1832-ին (տպագրիչն էր Պողոս Արապյանը): Կոստանդնուպոլսում լույս է տեսել 324 անուն պարբերական: Կոստանդնուպոլսում ձևավորվել ու զարգացել են արևմտահայ մանկավարժությունն (Հ. Հինդլյան, Ռ. Պերպերյան, Հ. Ասատուր) ու հրապարակախոսությունը (Ա. Գարագաշյան, Ն. Ռուսինյան, Ն. Զորայան, Ա. Հայկունի, Գ. Օտյան, Հ. Սվաճյան, Ե. Տեմիրճիպաշյան, Թեոդիկ և ուրիշներ), որոնք բարձրացրել են քաղաքական, ազգային-ազատագրական ու ժողովրդական պայքարի խնդիրներ:

Կոստանդնուպոլսում է ***ձևավորվել արևմտահայ գրական լեզուն,*** որով ստեղծվել է հարուստ գրականություն (Հ. Պարոնյան, Մ. Պեշիկթաշլյան, Ծերենց, Գ. Զոհրապ, Տ. Չրաքյան, Սիամանթո, Դ. Վարուժան, Թլկատինցի, Ե. Օտյան, Տ. Կամսարական, Զ. Եսայան, Սիպիլ, Մ. Մեծարենց, Պ. Դուրյան, Լ. Շանթ, Ռ. Զարդարյան, Ռ. Սևակ, Երուխան, Մ. Զարիֆյան, Ա. Արփիարյան, Վ. Թեքեյան և շատ ուրիշներ):

Կոստանդնուպոլսի առաջին պրոֆեսիոնալ դրամատիկական թատրոնը Հովհ. Գասպարյանի ***«Արամյան թատրոնն»*** էր: 1861-ին հիմնվեց ***«Արևելյան թատրոնը»,*** որտեղ ձևավորվեց արևմտահայ դերասանական դպրոցը (Ա. Փափազյան, Ս. Էքշյան, Պ. Մաղաքյան, Մ. Մնակյան, Դ. Թրյանց և ուրիշներ): 1868-82-ին գործել է ***Հ. Վարդովյանի*** «Թատրոն օսմանիեն» հայ դերասաններով (Ե. Գարագաշյան, Թ. Ֆասուլաճյան և ուրիշներ): 1870-ականներին կազմավորվել է ***Ս. Պենլյանի*** օպերետային թատերախումբը: 1882-ից մինչև 1914-ը գործել է ***Մ. Մնակյանի*** «Օսմանյան մելոդրամատիկ թատերախումբը»: 1908-1914-ին հայ թատերական կյանքը Կոստանդնուպոլսում աշխուժացել է ***Վ. Փափազյանի*** ելույթներով, ապա Աբելյան-Արմենյան և Զարիֆյան-Սևումյան թատերախմբերի այցելություններով: Կոստանդնուպոլսում հայ թատերական լիարյուն կյանքն ավարտվեց «Պոլսահայ դրամատիկի» գործունեությամբ (1919-1923):

Պոլսահայ ճարտարապետները, նկարիչները, երաժիշտներն իրենց ստեղծագործություններով հարստացրել ու զարգացրել են հայ (նաև թուրքական) արվեստը: XVI դ. Կոստանդնուպոլսում հայտնի էր ճարտարապետ ***Սինանը*** (հեղինակը՝ նշանավոր Սուլեյմանիե մզկիթի և բազմաթիվ պալատների ու ապարանքների, հասարակական կառույցների և այլն): Շուրջ 300 տարի իրենց արվեստով Թուրքիայի մայրաքաղաքը զարդարել են Պալյանները (Դոլմաբաղչեի, Սարայ Բուրնիե, Չրաղանի պալատները, Թոփհանեի, Օրթաքյոյի, Մեջիդիե, Վալիդե մզկիթները, Եըլդըզի, Չիֆլիկ քյոշկերը, Ս. Փրկիչի ազգային հիվանդանոցը, Սկյուտարի ճեմարանը, Պեշիկթաշի հայկական եկեղեցին և այլն): Հայ նկարիչներից, որոնց բազմաթիվ աշխատանքներ (գեղանկարչական, քանդակագործական, կիրառական արվեստի, մանրանկարչական) պահպանվել են Կոստանդնուպոլսի նկարչության և քանդակագործության, զինվորական, Թոփ Գափուի թանգարաններում, Հայոց պատրիարքարանի արխիվներում և մասնավոր հավաքածուներում, հայտնի են Պ. Պեյզատը (Բիհզատ), Ռաֆայել Բարսեղը, Խոջա Պողոսը, Սեպուհ Մանասը, Սիմոն Հակոբյանը, Թելեմաք Էքսերճյանը, Սոփոն Բեզիրճյանը, Շահին Սարգսյանը, քանդակագործներ Երվանդ Ոսկանը, Հակոբ Փափազյանը, փորագրիչներ Անդրանիկ Ֆեհնդյանը, Մկրտիչ Բենդերյանը, Վահրամ Մյուհենտիսյանը (թուրքական տպագրական տառերի ստեղծող), Վիգեն, Հովսեփ, Գևորգ Աբդուլլահները (լուսանկարչության սկզբնավորողները Թուրքիայում) և շատ ուրիշներ:

Հայ երաժշտությունը Կոստանդնուպոլսում զարգացել է բոլոր բնագավառներով՝ ստեղծագործական, կատարողական արվեստ, երաժշտագիտություն: Համբարձում Լիմոնճյանը (Պապա Համբարձում) ստեղծեց հայկական նոր նոտագրությունը, Տիգրան Չուխաճյանը՝ առաջին հայկական օպերան (նաև թուրքական օպերետի հիմնադիրն է): Երաժիշտ կատարողներով հայտնի են Սինանյան ընտանիքը (ջութակահարներ, դաշնակահարներ, դիրիժորներ), ծնծղաներ պատրաստող Զիլճյան ընտանիքը: Կոստանդնուպոլսում են գործել հանճարեղ Կոմիտասը և շատ ուրիշներ:

XIX դարի 80-ական, առավել ևս 90-ական թվականներին, ինչպես ողջ արևմտահայության, առավել ևս Կ. Պոլսի հայ համայնքի սոցիալ-քաղաքական կյանքն արդեն դարձավ անտանելի ու ողբերգական: Եղբոր դիակի վրայով գահ բարձրացած Համիդ II մարդասպանը Բեռլինի վեհաժողովից (1878) առաջ և, հատկապես, դրանից հետո, հայ «հպատակների» ազատական կեցվածքից խիստ վիրավորված ու զայրացած, իր մթերած ու պահեստավորած հսկայական թույնն առաջին հերթին թափում էր մայրաքաղաքում խարսխված պոլսահայերի գլխին:

Չէ՞ որ Ստամբուլում էր խմորվում, հասունանում հայ ազատագրական պայքարի գաղափարաբանությունը, եվրոպական մեծերին առաքվում երբեմն թախանձագրեր,

երբեմն բողոքագրեր: «Վերջին սուլթանն» այդ բոլորը տեսնում էր և հարմար պահի սպասում՝ հաշվեհարդար տեսնելու «անշնորհակալ գյավուրների հետ»[1]:

Պահն այդքան էլ չուշացավ: Դեպքերը հասունանում էին հօգուտ «Կարմիր սուլթանի»: Զևավորվեցին 90-ականներին ծավալվող հակահայկական իրադարձությունները, որոնք Թուրքիայի պատմության մեջ մտան «Զուլումի տարիներ» հորջորջմամբ:

Ամերիկյան ականավոր թուրքագետ, Թուրքիայի կեսհազարամյա պատմությանը նվիրված մի շարք աշխատությունների հեղինակ ***Լորդ Կինրոսը*** «Օսմանյան կայսրության ծաղկումն ու անկումը» իր հերթական մեծածավալ (690 էջ) աշխատության ստվար բաժինը վերնագրել է «Վերջին սուլթանը», ուր և անդրադարձել է «Համիդի չարագործությունների» բացահայտմանը[2]: Նույնանման կոնցեպցիա են զարգացրել ***Ֆիլիպ Մանսելը***[3], ***Յակով Լանդաուն***[4], ***Յուրի Պետրոսյանը***[5] և այլոք:

Լորդ Կինրոսը (Պատրիկ Բալֆուր) գրում է, որ «Աբդուլ Համիդը եղել է ***դժբախտ*** և դրանով պայմանավորված ***անմարդկային սուլթան:*** Յոթ տարեկան հասակում նա կորցրեց ազգությամբ չերքեզ իր գեղեցկուհի մորը: Դրանից հետո դարձավ մելամաղձոտ և բոլորն ասում էին, թե այլևս նա ոչ ոքի չսիրեց: Չսիրեց նույնիսկ ինքն իրեն...»[6]:

Համիդը կասկածամիտ, վախկոտ, միշտ գունատ, դաժան, չարության մարմնացում հանդիսացող անձնավորություն էր, «Նա իրեն շրջապատել էր լրտեսներով, պրովոկատորներով, գաղտնի ոստիկաններով, մատնիչներով, որոնք նրան ամեն օր տեղյակ էին պահում մայրաքաղաքում, նույնիսկ պալատում կատարված իրադարձությունների մասին»[7]: Թևավոր խոսք էր դարձել, թե Ստամբուլը դարձել է լրտեսների քաղաք, ըստ որում, բնակչության մի կեսը լրտեսում էր մյուսին և ընդհակառակը:

Համիդի մասին ավելի խիստ էին արտահայտվում նրանից դժգոհ թուրք այն մտավորականները, որոնք ապրելով ու գործելով արտասահմանում, պամֆլետներ էին գրում, բնութագրում իրենց սուլթանին: «Հույսի արթնացումը» պամֆլետում գրում են, թե մարդկության պատմությունը երբեք չի տեսել այնպիսի մի միապետի, ինչպես Համիդն է: Նա ***«դաժան է, սրիկա է, անշնորհակալ է և արյունարբու»***[8]: Նրան բնութագրում էին իբրև ***«խելագար», «դիվահար», «հետևողական հրեշ», «դժոխքի ծնունդ», «օձ և կարիճ»:*** Իթթիհատականները ժնևում տպագրված վերոհիշյալ պամֆլետների շապիկի վրա նկարում են Համիդին ատրճանակը ձեռքին[9]:

Ո՛չ անգլիացիների ու ֆրանսիացիների քննադատությունն ու սպառնալիքները, ո՛չ հայ ազատամարտերի նախապատրաստման հարկադրանքը Աբդուլ Համիդ սուլթանին ետ չեն պահում արևմտահայության ոչնչացման վաղամտածված հրեշավոր ծրագրերը իրողության վերածելու մտադրությունից: Հայակեր հրեշը պահը հարմար էր համարում «հայերից» ազատվելու համար[10]:

---

[1] Որպեսզի մեզ միակողմանիության, սուբյեկտիվիզմի մեջ չմեղադրեն, այս հատվածը շարադրելիս որոշեցինք հիմնականում հենվել ***անգլիական, ամերիկյան,*** մասամբ էլ ***ռուսական*** սկզբնաղբյուրների և գրականության ընծեռած փաստերի վրա:

[2] ***Лорд Кинросс,*** Расцвет и упадок османской империи, Москва, 1999. Перевод с английского ***М. Пальни-кова,*** стр. 580-620.

[3] ***Philip Mansel,*** Constantinople, City of the World's Desire 1453-1924, London, 1896.

[4] ***Jacob M. Landau,*** Pan-Turkism From Irregentism to Cooperation, London, 1995.

[5] ***Ю. А. Петросян,*** Османская империя, могущество и гибель, Москва, 1990, стр. 222-223.

[6] ***Лорд Кинросс,*** նշված աշխատությունը, էջ 573:

[7] Նույն տեղում, էջ 580:

[8] ***Ю. А. Петросян,*** նշված աշխատությունը, էջ 225:

[9] Նույն տեղում, էջ 224-225:

[10] «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ, բազմահատորյակ, հ. VI, Երևան, 1981, էջ 270:

«90-ական թվականների ջարդերը թուրքական դահիճների առաջին ***զանգվածային ցեղասպանության փորձն էր,*** – կարդում ենք ակադեմիական բազմահատորյակում: – Այդ ջարդերի հետևանքով զոհվեց ***300 հազար հայ,*** համարյա այդքան էլ տարագրվեց, որից մոտ 100 հազարն անցավ Ռուսաստան, իսկ 150-200000-ը Եվրոպայի, Աֆրիկայի և Ամերիկայի զանազան երկրներ: Արևմտահայության որոշ մասը հարկադրված մահմեդականություն ընդունեց»[1]: Հատկանշականն այն է, որ մեծ տերությունների, այդ թվում և Ռուսաստանի թողտվության պայմաններում հայկական ջարդերը կայսրության հեռավոր նահանգներից տեղափոխվում են ***մայրաքաղաք՝ Կ. Պոլիս:***

Երկունքի տասնամյակ էր ապրում հայ ժողովուրդը: Ըստ որում, նա այդ փորձությունները տանում էր ***արժանավայել և դյուցազնական***[2]: Ասում ենք ***արժանավայել,*** քանզի նա, հակառակ իր ապրած անծայրածիր դժբախտություններին, կրած ֆիզիկական ու հոգեկան տանջանքներին, ամրորեն կառչած մնաց իր հավատքին, իր լեզվին, իր ազգային ավանդույթներին: Ասում ենք ***դյուցազնական,*** որովհետև Հայաստանը չէր բավարարվել սոսկ ողբասացությամբ և արտասուք թափելով, այլ բազմաթիվ պարագաների ժամանակ, խոր ապրելով ազգային վիրավորանքները ***«զենքը վերցուցած է և արյան գնով հատուցած է իր հոգվույն ըմբոստությունը»***[3]:

Այդպես եղավ և 90-ականներին: Համիդիեական գազանություններին դիմագրավում էին արծվաբնի ***զեյթունցիները,*** առյուծասիրտ ***Սասնո քաջերը,*** Վասպուրականի անզուգական հերոսները: Նրանք զինված պայքարի էին դուրս եկել հարկադրաբար: Եվ սխալ կլիներ Զեյթունի, Սասնո, Վասպուրականի հերոսամարտերը անվանել ապստամբություն կամ հեղափոխություն: Դրանք ***ինքնապաշտպանական*** ելույթներ էին, հարկադրաբար դիմագրավումներ, որոնց մասնակիցները, առավել ևս զոհերը, ոսկե տառերով իրենց անունները դրոշմեցին հայոց հերոսամարտերի պատմության էջերում:

Համիդն ստեղծեց «Համիդիե» ջոկատներ հայ ժողովրդին ոչնչացնելու հանձնարարականով: Արևմտահայությունը, դրան հակառակ, ծնեց ***հայդուկային շարժում, ֆիդայական ջոկատներ,*** որոնք հուսահատված ազգի արժանավոր զավակների վերջին ճիչն էին սեփական պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու, մեռնելու բայց պատվով, կռվելու հանուն հայ կանանց ու աղջիկների պատվի անարատության: Արևմտահայությունը փաստորեն առաջին անգամ ծնավորեց ***մահապարտների*** խմբեր: Դրանցից առաջիններից ***մեկն իր ուժերը փորձեց Կ. Պոլսում:***

1896 թվականի երկրորդ կեսին հայկական ջարդերը Թուրքիայում հասան իրենց կուլմինացիային: Հայոց արյամբ կարմիր էր դառնում սեփական հայրենիքի հողը: Դիմագրավելն անհնար էր: Ուժերն անհավասար էին, միջամտողներն այնքան էլ հաճությամբ չէին ճնշում Թուրքիային և թուրքերին: Օգոստոսի 14-ին, ոմանց կարծիքով տակտիկական սխալ կատարելով ՀՅ Դաշնակցության կուսակցության մի խումբ երիտասարդ անդամներ – ***մահապարտներ՝*** զինված զենքի բազմաթիվ տեսակներով, հատկապես ***ռումբերով*** գրավում են Կոստանդնուպոլսի կենտրոնական բանկը՝ ***«Բանկ Օտտոմանը»:*** Նրանք սուլթանից պահանջում էին վերջ դնել արյունահեղությանը Արևմտյան Հայաստանում, անցկացնել պարտավորված բարեփոխությունները արևմտահայության կյանքում, այլապես կպայթեցնեն բանկը և կոչնչացնեն այնտեղ պահվող ողջ հարստությունը: Վերջնագրի կատարման համար հայրենանվեր այդ երիտասարդները ժամկետ էին սահմանել 48 ժամ:

---

[1] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 276:

[2] ***Ժագ դը Մորգան,*** Հայ ժողովրդի պատմությունը, Պոսքրն, 1947, էջ 332:

[3] Նույն տեղում:

Բանկի գլխավոր տնօրեն ***Էդգար Վինսենտը,*** օգտվելով հարմար պահից, գաղտնարանով դուրս եկավ շենքից և ուղևորվեց արտաքին գործերի նախարարություն: Նա սկսեց բանակցություններ կառավարության և մահապարտների միջև[1]: Քաղաքում առաջացավ խուճապ և իրարանցում: Գործին խառնվեցին եվրոպական տերությունների դեսպանները: Վերջապես Համիդը համաձայնվեց բանակցություններ վարել հայկական պատվիրակության հետ, բանկում եղած մարդկանց անվտանգությունը երաշխավորելով, նրանց թույլ տվեց հեռանալ Ֆրանսիա:

Համիդը թուրքավարի խաբեց: Մահապարտների բանկից դուրս գալու հաջորդ երեք օրերին Կ. Պոլսի փողոցներում ծավալվեց հայերի սարսափելի կոտորածը, որը ժողովրդից խլեց շուրջ ***10 հազար մարդու կյանք:*** Քաղաքը նմանվում էր սպանդանոցի: Կոտորում էին անխնա, առանց հաշվի առնելու սեռը, տարիքը, ունևոր, թե չքավոր լինելը: Պատկերն այնքան սահմռկեցուցիչ էր, որ անտարբեր չկարողացան մնալ եվրոպական տերությունների դեսպանները:

Մինչ այդ սուլթանը կարողանում էր եվրոպացիներից ծածկել Արևմտյան Հայաստանում ծավալված արյունահեղությունները: Այժմ ամեն ինչը կատարվում էր նրանց աչքերի առջև, որը զայրույթի նոր ալիք բարձրացրեց քաղաքակիրթ մարդկության շրջաններում: Եվրոպական վեց մեծ պետությունները վերջնագիր ներկայացրեցին Աբդուլ Համիդին՝ պահանջելով վերջ տալ հայ ժողովրդի ջարդերին, այլապես ***նա կկորցնի և՛ իր գահը, և՛ իր դինաստիան***[2]:

Վավերաթուղթը բավականին խիստ էր, սակայն՝ ապարդյուն: Խորամանկ սուլթանը կարողանալով որսալ մեծ տերությունների միջև եղած հակասությունները, մեկ՝ մեկին, մեկ՝ մյուսին խաբկանքով կերակրելով, խուսափեց իր ներքին գործերին նրանց միջամտությունից և շարունակեց ջարդերն այս անգամ ***Ակնում, Սեբաստիայում*** և այլուր[3]:

Այդուհանդերձ Աբդուլ Համիդը փաստորեն չկարողացավ հեշտությամբ իրականացնել երեք միլիոն արևմտահայության բնաջնջումը, ուստի փոխեց իր գործելակերպը և դառնալով գերմանական իմպերիալիզմի կամակատարը, նախապատրաստվում էր նոր արյունահեղության, որն արդեն իրողության վերածվեց նրա գործի հավատարիմ շարունակողներ երիտթուրքերի ձեռքերով:

XX հարյուրամյակի այգաբացը, ինչքան էլ դժվարություններով առլեցուն, այնքան էլ զարմանալիորեն, աննախադեպ պտղաբեր եղավ և՛ արևելահայ, և՛ արևմտահայ մշակույթի ամենաբեղուն բնագավառներում: Երեկ արյան գետերի միջով քայլող ***հայ մայրերը,*** կարծեք թե ի հեճուկս թուրքական բռնապետերի, քուրդ ավազակախմբերի, ***իրենց պոտենցիալ ուժերը սպառում էին և միայն առյուծի կորյուններ ու բնատուր հանճարներ էին ծնում, մեծացնելով, առնականացնելով, նրանց երակներում ներարկում էին հայկազյան անհնազանդ արիական արյուն, արարելու անսահմանափակ կարողություններ:*** Հատկանշական է նաև, որ այդ մտավորականներն ապրում էին իրենց երկրից դուրս, Արևմտյան Եվրոպայի ու Անդրկովկասի կենտրոնական քաղաքներում, հոնիական ջրերի առափնյա Ջմյուռնիայում, հիմնականում Բոսֆորի չքնաղ ափերին փռված, Եվրոպան Ասիային կամրջող ***Կոստանդնուպոլսում:***

Երիտթուրքական բորենիները, համիդյան դպրոցի «համալսարանավարտները», շարունակելով նրա արյունարբու գործունեությունը, թրծված խարդախությամբ, օգտագործեցին վերոհիշյալ տաղանդաշատ հայ մտավորականությանը, խաբեությամբ,

---

[1] Մանրամասն տես ***Лорд Кинросс,*** նշված աշխատությունը, էջ 608-610: Տես նաև ***Philip Mansel,*** Constantinople... էջ 334-337: ***Ю. А. Петросян,*** Османская империя. Могущество и гибель, Москва, 1990, стр. 222-223.

[2] ***Лорд Кинросс,*** նշված աշխատությունը, էջ 609-610:

[3] "Братская помощь пострадавшим в Турции армянам", Москва, 1897, стр. 149.

նրանց ուսերի վրա բարձրանալով, եկան իշխանության և միայն մեկ յոթնամյակից էլ պակաս ժամանակ չլրացած կազմակերպեցին ***հայոց հանճարի ոչնչացումը:***

Նրանց գործն, իրենց կարծիքով, արդեն դյուրին էր: Հայակուլ եռապետերն իրականացրել էին հայ զինվորականների, զինվորագուների, ընդհանրապես առողջ ու դիմագրավելու կարող տղամարդկանց ***մարդահավաքն*** ու մինչև վերջին երիտասարդ արուի ոչնչացումը: Այժմ հարկավոր էր «ազատվել» մայրաքաղաքի հայ մտավորականությունից, որպեսզի ավելի հեշտանար մնացած անզեն ժողովրդի բռնագաղթեցումն ու ոչնչացումը: Մարդասպանների ոհմակն ամեն ինչ ծրագրել և հաշվարկել էր:

Աշխարհին արյան բաղնիքի մեջ քաշած 1914 թ. աշունն իր մայրամուտին էր մոտենում: Ստամբուլի, առանց այդ էլ ամպամած հորիզոնը մթագնում էր: Ամենուր պատերազմի թմբուկների ծայներ էին լսվում: Օգտվելով առիթից սուլթանի հրամանագրերով, ***հոկտեմբերի 1-ից,*** չեղյալ հայտարարվեցին ***կապիտուլյացիաների*** պայմանագրերը, որոնք ծանր բեռի պես շուրջ երկու հարյուրամյակ կքում էին պարազիտային պետության մեջքը: Բ. Դուռը, բեռը թոթափածի նման, կարծեք թե, գոնե մի պահ ազատ շունչ քաշեց:

Չանցած մի քանի շաբաթ, սուլթան ***Ֆաթիհի*** ոսկեզօծ մզկիթում, բազմամարդ խառնամբոխի ներկայությամբ, ընթերցվեց «թուլակազմ ու կամակատար» Մեհմեդ V-ի հրովարտակը սրբազան պատերազմ (ջիհադ-գազավաթ) հայտարարելու վերաբերյալ: Ամենուրեք մթնոլորտը շիկացվում էր: Ոչ միայն ստամբուլաբնակ քրիստոնյաների, հատկապես հայերի հասցեին արված սպառնալիքները, անձրևի ուժգնությամբ, առատանում էին, այլև իսլամ ամբոխը, սպիտակ չալմաներ կապած մոլլաների ուղեկցությամբ, շրջում էր քաղաքի թաղամասերով և ոչնչացնում այն ամենը, ինչ հիշեցնում էին ***ռուսներին*** ու ***Ռուսաստանին:***

Նրանք խուժեցին հայազգի Թագթալյանի շենքի այն հարկաբաժինը, որտեղ ժամանակին (1878 թ. փետրվար 17-ին) ռուս բանագնացներն իրենց պահանջներն էին պարտադրել կործանման եզրին կանգնած սուլթան Համիդին: Ավերեցին այն: Թուրքական սանձարձակ հայհոյանքներով, նրանք մտան ***Գալաթասարայի*** հրապարակը և այնտեղից «դուրս թափեցին» այն զույգ թնդանոթները, որոնք չորս տասնամյակ շարունակ, իբրև հաղթանշան, ամեն րոպե թուրքերին հիշեցնում էին Սան Ստեֆանոն և Բեռլինի կոնգրեսը:

«Առաջին ահազանգն էր այս,- գրում է դեպքերին ականատես ***Թեոդիկը,- որ կհնչեր օտար պաշտպանութենե այլևս զրկված հայոց ականջին:*** Պատերազմին հարուցած տագնապները կարծես մոռացած, իթթիհատականներն իրենց բոլոր ույժերը կժողովեին գիշերը ցորեկ դարբնելով նոր հնարքներ ***Հայությունը անճատումին իսպառ»***[1]:

Եվ սկսվում է «գաղափարասփյուռ խոլ գործունեություն մը», որի մասնակիցներն էին Սելանիկից հին մայրաքաղաք եկած, հրեական կամ անհայտ ծագմամբ թուրքացած ազգայնամոլների այն ոհմակի, որը վաղուց մտել էր «Միություն և առաջադիմություն» խառնամբոխի գարշածուփ դրոշի ներքո[2]:

«Ու գիրի կ'առնուի ահաւոր հրահանգը որ հետզհետէ կը հաղորդուի գաւառական ամէն անկիւն: Ամբոխավար քարոզները կը շարունակուին ***Չարաժողովներու կողմէ,*** իրենց կեդրոնատեղի ունենալով քաղաքներու անխուսափելի «քլիւպ»ները, նոյնիսկ մզկիթները: Բնագդներ կը գրգռուին եւ «բաշիբոզուկ»ներ կը մտնեն նոյն

[1] ***Թեոդիկ [Լիպճեճյան Թեոդոս Գրիգորի],*** Գողգոթա, հ. Ա, մասն Ա, Անթիլիաս (Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի տանն Կիլիկիոյ), 1966, էջ 23-24:

[2] Նույն տեղում, էջ 24:

դրօշին տակ: Աղօթատեղիներու բակերուն մէջ, շուկան, տուներնին, սրճարանի անկիւններ, ամենուրե՛ք լսած են վերին պատգամը, ***հոչակումը Ճիհատին, այսինքն պարզումը Մարգարէին ս. Դրօշին՝ որ կը տրամադրէր անպայման քալել անհաւատներուն, իմա՛ Հայ Քրիստոնեաներուն դէմ, ի հարկին հաւատափոխ կամ կենագրաւ ընելով զանոնք:***

Հայատեացներու այս ջոլիրին գլխաւոր բարուրանքն էր - Հայոց վրայ ի գործ դրուած խժդժութեանց առթիւ - թէ Տաճկահայը նշկահած է կառավարութեան դէմ. եւ այս զրպարտութեան ապացոյց կը ծառայէր կարծեցեալ ապստամբութիւնը Վանի, մինչդեռ տեղւոյն ժողովուրդը կուսակալ Ճէվտէթի սկսած հալածանքէն վերջ դէպքերու բնական բերումով դիմած էր ինքնապաշտպանութեան, ***չմեռնելո՞ւ համար պարզապէս»***[1]:

1915 թ. ապրիլի 15-ին, պատերազմական նախարար ***Էնվերի,*** ներքին գործերի նախարար ***Թալեաթի*** և գարշելի հայատյացությամբ տառապող ***Նազըմի***՝ եռակի ստորագրությամբ Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի հայաբնակ բոլոր նահանգների թուրք ղեկավարությանն է ուղարկվում (խիստ գաղտնի, ծածկագրված) ***հիմնական հրամանագիրը*** հայ ժողովրդի ***համատարած բռնագաղթի, ֆիզիկական ոչնչացման վերաբերյալ:***

Ահա հայասպանությունը պարտադրող այդ հրամանը.

«Իսլամ և թուրք ժողովուրդը ներկայացնող կառավարությունը և «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, միացած ուժերով, ինչ որ ալ պատահի, որևէ հաշտության սեղանի վրա, որևէ ձևով հայկական հարցի մը դրվելը կանխելու համար, օգտվելով պատերազմին մեզ բերած սա անկախութենեն, որոշեցինք վերջնական հաշվեհարդարի ենթարկել զայն, բնաջնջելով անհարազատ այդ տարրը, քշելով զանոնք դեպի Արաբիո անապատները, համածայն տրված մեր գաղտնի հրահանգին... Արդ, կառավարությունն ու Իթթիհաթի մեծ կոմիտեն կոչ կընենք ձեզ և ձեր հայրենասիրության և կիրամայենք, որ ձեր բոլոր տրամադրելի ուժերով աջակցիք «Միության և առաջադիմության» տեղական մարմիններու, ***որոնք 24 ապրիլի արևածագեն սկսյալ,*** գաղտնի ծրագրի մը համաձայն, գործադրության պիտի դնեն այս հրամանը: Որևէ պաշտոնատար ու անհատ, որ կիակառակի այս սրբազան ու հայրենասիրական գործին ու չի տրամադրվիր իրեն հանձնված պարտականության և որևէ ձևով այս կամ այն հայը պաշտպանելու կամ պահելու փորձ կընե, հայրենիքին և կրոնքին թշնամի կնկատվի և ըստ այնմ ալ կպատժվի»[2]:

Ամեն ինչն սկսվեց Կոստանդնուպոլսից, որտեղ խարսխված էր բազմահազարանոց արևմտահայությունը:

1915 թ. ապրիլի 23-ն էր, օրը շաբաթ էր: Երեկվա զատկի տոների արարողությունից հոգնած, հայ համայնքը հանգչում էր երանավետ նիրհով, գուցեև ապրում նոր երազանքներով: Քաղաքը «անհոգ» անդորրի մեջ էր, բացի Այասոֆիայի տաճարի մոտ տեղակայված ոստիկանատան կենտրոնակայանից: Խորին գաղտնապահությամբ այստեղ մուտք ու ելք էին անում ոստիկանները, որոնք հերթականությամբ հասցեներ էին ստանում և հայ մտավորականության ձերբակալության հրամաններ: Իթթիհատական մարդակուլ ոստիկանները շտապ-շտապ ուղևորվում էին իրենց զոհերի տները, իսկ նրանց թիվը փոքր չէր[3]...

---

[1] ***Թեոդիկ,*** նշված աշխատությունը, էջ 25:

[2] ***Ա. Քեոյան,*** Կարմիր դրվագներ հերոսներու կյանքեն (1915-1918), հ. 1, Բուխարեստ, 1938, էջ 63-64: Տե՛ս նաև ՀՍՀ, հ. 7, Երևան, 1981, էջ 425: ***Մ. Արզումանյանի*** «Մեծ եղեռն» հոդվածը:

[3] «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 35: ***Ա. Ն. Մնացականյանի*** հոդվածը. «Հայ ժողովրդի Մեծ եղեռնը և Ազգային վերածնությունը»: Տե՛ս նաև «Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke». Herausgegeben und eingeleitet von Dr. ***Johannes Lepsius,*** Potsdam, 1919, S. 113-142.

Մայրաքաղաքում այդ պահին ապրում էր ողջ հայ մտավորականության փայլատակող փաղանգը. ***196 գրող, 168 նկարիչ, 575 երաժիշտ, 336 բժիշկ, դեղագործ, ատամնաբույժ, 176 ուսուցիչ, քոլեջների պրոֆեսոր, 160 իրավաբան, 62 ճարտարապետ, 64 դերասան:*** Այդքան շատ էր հայ մտավորականների թիվը, քանի որ Ստամբուլում այդ պահին ապրող 800-850 հազար ընդհանուր բնակչության մեջ, արևմտահայերի թիվը հասնում էր 175-200 հազարի: Այս պարագան ևս զայրույթ էր պատճառում մահմեդապաշտ իթթիհատականներին, իսլամի երկրպագուներին:

Ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերը թուրքական ցեղապաշտների զինված հրոսակները ներխուժեցին հայ մտավորականներից շատերի բնակարանները: Մարդկային երևակայությունն անզոր է պատկերացնել կատարվածը: Գիշերվա խաղաղ երկնքի տակ կարծեք թե ռումբեր էին պայթել: Մինչև առավոտյան աղջամուղջը այդ մեծ քաղաքը վերածվել էր դժոխքի, ***քանի որ իրողության էր վերածվել վաղօրոք, պետականորեն մշակված, հայ մտավորականության ցեղասպանության ծրագիրը:***

Ապրիլի 24-ի կիրակին դա մի արհավիրք էր հայ ժողովրդի համար: Կարծեք թե դժոխքի մեջ կալանավորված ավազակներն ու մարդասպանները խորտակել էին գեհենի դարպասները, խուժել դուրս և ահեղ ուրվականի մահացու կատաղությամբ պայթել գաղթօջախի մտավորականության գլխին: «Եվ ամբողջ մտավորական սերունդ մը, – գրում է Անդրանիկ Անդրեասյանը, – գրագետ ու խմբագիր, ուսուցիչ, թե արվեստագետ, եկեղեցական կամ հանրային գործիչ, – ով որ գեղեցկության փառք և ճշմարտության լույս կերգեր, որ ոգիի ազնվացման ու ձերբազատ գոյության տեսիլին կծգտեր զարնվեցավ շղթայի և քաշկռտվեցավ դեպի մահվան գողգոթան: Ինչպես անարգ ստահակ մը կրնա գռիհներու գարշ դիրտով խեղդե՞լ արևը... ***Բայց ինչպե՞ս թուրք խավարի ու եղեռնի մատները կրցան քարով ճգմել, կացինով մորթել ու դանակով պատռել հայ գրողների գլուխները ու սիրտերը, որոնցմե ոգիի ու միտքի հանճարեն շռայլը կհոսեր, արևի շողերուն նման վճիտ, տաք ու հավերժական*** (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[1]:

Միայն ապրիլի 24-ին հասցրեցին ձերբակալել 235 անվանի մտավորականի, պետական և քաղաքական գործչի: Հաջորդ մի քանի օրում ևս կալանավորեցին 300-ից ավելի մարդկանց: Ձերբակալվածների ընդհանուր թիվը հասավ շուրջ ***ութ հարյուրի,*** որոնցից ***ութին միայն հաջողվեց հրաշքով փրկվել մահվան ճիրաններից:***

Մտավորականների խմբերը սկզբում աքսորվեցին երեք վայրեր քաղաքականությամբ զբաղվողները Այաշ գյուղը, մյուսները Անկարայի և Գաստեմունիի միջև գտնվող Չանղըր փոքրիկ քաղաքը և Չանղըրի և Ամասիայի միջև գտնվող Չորում վայրը: Սկզբում նախատեսվում էր Անկարայում զինվորական դատարան գումարել և նրանց դատել, հետո աքսորյալներին հավաստիացնում էին, թե նրանք դատարանի առջև կկանգնեն Դիարբեքիրում և այլուր: Օրինակ, Գրիգոր Զոհրապը համոզված էր, որ ինքը հնարավորություն կունենա դատարանում մերկացնել թուրքական կառավարողների անօրինակ խժդժությունները: Սակայն զո՞ւր հույսեր էին դրանք: Նախ թուրքական կառավարությունը և ոչ մի փաստ չուներ այդ մարդկանց դեմ մեղադրանք հարուցելու, և հետո նրա նպատակը շատ ավելի պարզ էր. ուղղակի ոչնչացնել հայ անվանի մարդկանց աքսորի ճանապարհին:

Անշուշտ, կտեղահանվեր Կ. Պոլսի ամբողջ հայ բնակչությունը, եթե երիտթուրքական կառավարողները դրա համար ունենային տեխնիկական հնարավորություններ: Կայսրության մայրաքաղաքը ծանր կացության մեջ էր, Անտանտի զինված ուժերը լրջորեն

[1] «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ ժգ: ***Անդրանիկ Անդրեասյանի*** հոդվածը. «Սուգի և ուխտի յիսնամյակը»:

սպառնում էին նրան: Այսպիսի պայմաններում իթթիհատական կենտրոնում բուռն վիճաբանություններից հետո հաղթեց առայժմ միայն հայ անվանի մարդկանց աքսորելով բավարարվելու, իսկ մնացածին ավելի պատեհ ժամանակ տեղահանելու տեսակետը[1]:

Կ. Պոլսից աքսորված և տարբեր վայրերում խողխողված հայ անվանի մտավորականների շարքում էին հայ ականավոր գրող, հասարակական-քաղաքական գործիչ, 1908-1912 թթ. օսմանյան պառլամենտի դեպուտատ, հրապարակախոս, իրավաբան ***Գրիգոր Զոհրապը*** (1860-1915), տաղանդավոր բանաստեղծ ***Սիամանթոն*** (Ատոմ Յարճանյան, 1878-1915), բանաստեղծ, ուսուցիչ ***Դանիել Վարուժանը*** (Չիպուքքեաբյանը, 1884-1915), անվանի գրող, մանկավարժ, հրապարակախոս ***Ռուբեն Զարդարյանը*** (1874-1915), բանաստեղծ, բժիշկ, բժշկական ընկերության նախագահ ***Թորգոմյանը,*** բժիշկ, բանասեր, հրապարակախոս ***Նազարեթ Տաղավարյանը*** (1862-1915), բժիշկ, բանաստեղծ ***Ռուբեն Սևակը*** (Ռուբեն Չիլինկիրյանը, 1885-1915), ուսուցիչ, գրող, հրապարակախոս ***Հրանտը*** (Մելքոն Կյուրճյան,1859-1915), գրող, մանկավարժ ***Թլկատինցին*** (Հովհաննես Հարությունյան,1860-1915), բանաստեղծ, քննադատ ***Արտաշես Հարությունյանը*** (1873-1915), նովելիստ, ուսուցիչ, խմբագիր ***Երուխանը*** (Երվանդ Սրմաքեշխանլյան, 1870-1915), արձակագիր, բանաստեղծ, խմբագիր ***Տիգրան Չեոկուրյանը*** (1884-1915), բազմաթիվ վեպերի և պատմագիտական ուսումնասիրությունների («Բանտե բանտ», «Ելլդզե Սասուն», «Վեղարավոր հերոսը», «Ավարայրի արծիվ» և այլն) հեղինակ ***Սմբատ Բյուրատը*** (1862-1915) , բանաստեղծ, թարգմանիչ ***Լևոն Լարենցը*** (1875-1915), ***Ժակ Սայապալյանը*** (Փայլակ) հայտնի իր թարգմանություններով ու արձակ գրվածքներով (1875-1915), երգիծաբան, խմբագիր ***Գրիգոր Թորոսյանը*** (1884-1915), արձակագիր ***Գեղամ Բարսեղյանը*** (1883-1915), հայտնի դերասան ***Ենովք Շահենը*** (1881-1915), հրապարակախոս, պատմաբան, «Բյուզանդիոն» թերթի խմբագիր ***Տիրան Քելեկյանը*** (1862-1915), բանասեր ***Հովհաննես Ղազանչյանը*** (1870-1915), հասարակական հայտնի գործիչ, խմբագիր, հրապարակախոս ***Եսայեմը*** (Գարեգին Կոզիկյան, 1878-1915), բանասեր, պատմաբան, հրապարակախոս ***Գագիկ Օգանյանը*** (1882-1915), նկարիչ ***Հրանտ Աստվածատրյանը*** (1884-1915) և շատ-շատ ուրիշներ[2]:

Ութ հարյուր նահատակներին մեկ առ մեկ բնութագրել, նրանց կենսագրական մանրամասնությունները հաղորդել ընթերցողին նախ մեր հետապնդած նպատակը չէ, մանավանդ, որ հնարավոր էլ չէ, թեկուզ գրքի ծավալի պատճառով: Համենայն դեպս անհրաժեշտ ենք համարում նրանցից մի քանիսի մասին բնութագրական խոսքեր ասել:

Ապրիլյան օրերը հայոց բազմադարյան պատմության մեջ մտան իբրև ***ամենամռայլ ու սև տարեթիվ,*** իսկ 24-ը՝ ստացավ ***«արյունոտ կիրակի»*** անունը[3]: Կ. Պոլսի «օպերացիան» կազմակերպում և գլխավորում էր մայրաքաղաքի ոստիկանապետ ***Պետրի բեյը***՝ օգնականներ ունենալով ***Ռեշադին*** (քաղաքական գծով), ***Ջանփոլադին*** (ապահովության գծով): Նախօրոք կազմված ցուցակները ձևավորելիս ***գարշելի մատնիչի դեր էին կատարել*** Արթին Մկրտչյանը, Հմայակ Արամյանցը և Գամեր Շիրինյանը[4]:

---

[1] ***Զ. Ս. Կիրակոսյան,*** Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, 1914-1916 թթ., երկրորդ հրատարակություն, Երևան, 1967, էջ 294: Տե՛ս նաև ***Թեոդիկ,*** Գողգոթա, հ. Ա, մասն Ա, «Պոլսի աքսորյալները» գլուխը, Անթիլիաս, էջ 26:

[2] ***Զ. Ս. Կիրակոսյան,*** նշված աշխատությունը, էջ 236: Տե՛ս նաև ***Թեոդիկ,*** Յուշարձան նահատակ մտավորականության (***Գալուստ Գալոյանի*** առաջաբանով, էջ 5-15), Բ տպագրություն, ապրիլ 24, 1985, էջ 15-70:, ***Թեոդիկ,*** Գողգոթա, էջ 26-27:

[3] ***J. Lepsius,*** նշված աշխատությունը, էջ 20:

[4] ***Մ. Արզումանյան,*** Հայաստանը 1914-1917, Երևան, 1969, էջ 320-321:

Ապրիլի 24-ի գիշերը կենտրոնական բանտ (Միքթերհանե) բերվեց կալանավորների առաջին խումբը: «Ամենքս ալ, – գրել է Գ. Պալաքյանը, – հետամուտ էինք լուծելու այս առեղծվածը և պատասխան կփնտրեինք այս հարցերուն, բայց ինչո՞ւ հավաքական սա հարյուրավոր ձերբակալություններ և արդյոք ի՞նչ պիտի ըլլա ասոր վախճանը»[1]:

Բանտարկվածները շվարած, ոչինչ չհասկանալով դեռևս ենթադրում էին, թե այն թյուրիմացություն է կամ սխալմունք: Շատերը նույնիսկ գիշերային հագուստով, առանց կոշիկների էին բերման ենթարկվել: Նրանց բնակարաններն առանց զգուշացման ներս խուժող ոստիկանները, վերջիններիս թուրքավարի խաբել էին, թե տանում են ոստիկանապետի մոտ «մի կարևոր հանգամանքի մասին փոքրիկ զրույցի»: Չկար ոչ մեղադրական եզրակացություն, ոչ հարցաքննություն, ոչ դատ: Ամեն ինչը կատարվում էր ապօրինի, անմարդկային և ստոր մեթոդներով: ***Ամեն ինչը անժխտելի վկայություն է հայ ժողովրդի ցեղասպանության, բառ, որից այդքան սարսափում են Թուրքիայի այսօրվա պետական այրերը:***

Եվ այսպես, համառոտակի ներկայացնենք ձերբակալվածների ցուցակը, նրանցից ոմանց փոքր բնութագրումներով: ***Գրիգոր Զոհրապ*** (Կ. Պոլիս, 1860-1915), ականավոր իրավաբան, հանճարեղ գրող, թուրքական խորհրդարանի անդամ, հայ նորավեպի հիմնադիր-սկզբնավորողը[2]:

Գր. Զոհրապին բնութագրելիս արաբական ազգային-ազատագրական գործիչներից, այսինքն ***ազգությամբ արաբ*** շեյխ Ֆազիլ-էլ Ղուսեյնը գրում է. «Ամբողջ աշխարհը գիտի այն մասին, թե ո՞վ էր Կ. Պոլսի հայ պատգամավորը, որի անունը սահմանադրության հռչակումից հետո փառաբանում և ողջունում էին: Նա փայլում էր որպես հռետոր, իր գիտելիքներով և իմաստությամբ: Նա բարձր կրթության տեր մարդ էր, իրավունքի հարցերի գիտակ և ոչնչի առաջ կանգ չէր առնում, երբ խոսքը գնում էր ազգային շահերի պաշտպանության մասին»[3]:

Ապրիլի 24-ի երեկոյան ***Վահրամ Փափազյանը*** Գատը գյուղի թատերասրահում Օթելլո էր խաղում: Իմանալով բանտարկությունների մասին նա դիմաներկով ու թատերական հանդերձանքով, ճողոպրում է, խույս տալիս գաղտնի ոստիկանության ճանկերից, մտնում ֆրանսիական նավը և հասնում Օդեսա: Հանճարեղ դերասանը մտերիմն էր Գր. Զոհրապի և Սիամանթոյի: Ահա թե ինչ է գրում. ***«Գրիգոր Զոհրապը մաքուր սփռոցի վրա թանկարժեք բակարա բաժակի մեջ մատուցված փրփրալից ու հարբեցնող շամպայն եղավ նոր Բյուզանդիոնի խնջույքի սեղանին, որի կիսախում բաժակն իր փրփրոտ հափրանքը չվերջակետեց, որովհետև վայրենի ու սինլբոր ձեռքերը փշրեցին նրան անզգա սալաքարերի վրա, մինչդեռ նա դեռևս կարող էր ամբոխներ արբեցնել երկար տարիներ»***[4]:

Հայ մեծ երգիծաբան Երվանդ Օտյանը տեղեկություններ է հաղորդում Գր. Զոհրապի սպանության մասին. «Զազրելի չարագործություն կատարվեց Ուրֆայից մի քանի ժամվա ճանապարհի հեռավորության վրա: Թուրք պաշտոնյաների խումբը, էնվերի ազգական Խալիլ բեյի գլխավորությամբ (որը հետագայում Բաղդադի բանակի գլխավոր հրամանատար նշանակվեց), հարձակվեց կառքի վրա և գազանաբար սպանեց Գրիգոր Զոհրապին»[5]:

---

[1] ***Գրիգորիս ծ. վարդ. Պալաքեան,*** Հայ Գողգոթան, հ. Ա, Վիեննա, 1922, էջ 75:

[2] ***Մինաս Չուսյան,*** Գրիգոր Զոհրապ, կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1957: Տես նաև ***Ե. Ղ. Սարգսյան,*** նշված աշխատությունը, էջ 236 237:

[3] ***Ֆազիլ էլ Ղուսեյն,*** Զարդերը Հայաստանի մեջ (ականատեսի վկայություններ): Ֆրանսերենից թարգմանեց ***Գր. Պասմաչյան,*** Գահիրե, 1960, էջ 9-10:

[4] «Վասն Հայության» շաբաթաթերթ, 2002, 23 ապրիլի, էջ 20:

[5] "Наше время", 27.04.1919.

Ատոմ Յարճանյանը (Սիամանթոն, Ակն, 1878-1915) սկզբնական կրթությունն ստացել է Կ. Պոլսում: Համիդյան ջարդերի (1894-1896) պատճառով տարագրվել է բազմաթիվ երկրներ: Որոշ ժամանակ մնալով Կահիրեում՝ տեղափոխվել է Ժնև, քիչ անց *խարսխվել Փարիզում,* դառնալով Սորբոնի հռչակավոր համալսարանի գրական բաժնի ազատ ունկնդիր: Եվրոպայում ապրած տարիներին սկսել է հնչել ու աստիճանաբար հուժկու դառնալ բանաստեղծի քնարական ձայնը, ձևավորվել նրա գաղափարաբանությունը՝ հայ ազատամարտի մասին: Նա համազգային փառքի հասավ 1902 թ. հրատարակած «Դյուցազներեն» ժողովածուով: Այն մաս-մաս և ամբողջությամբ երիտասարդությանն ուղղված պատգամներ են, որոնց առաքելական խորհուրդն ուղենշում է «Ռիգվեդայից» վերցրած բնաբանը. *«Այնքան արշալույսներ կան, որ տակավին չեն ծագած...»:* Դա պայքարի ու սթափումի նշանաբանն էր, որ բանաստեղծը ավանդում էր ժամանակակիցներին[1]:

Սիամանթոյին որևէ մեկն ավելի լավ չի բնութագրել, քան *Վահրամ Փափազյանը:* Մեծ դերասանը հանճարեղ գրողին համեմատել է Դանթեի հետ և հպարտացել, որ ինքը ծանոթ է եղել նրան: Նա գրել է. «Թե հնարավոր լիներ մեր այս ներկա ժամանակներում ոգեկոչել մեր թվականությունից շատ առաջ ապրած Եզեկիելին, նրան, որ մի ամբողջ դաշտ լիքը ոսկորներ տեսավ իր շլմորած աչքերի առաջ, նրան, որ սարսափից խլացած իր ականջներում հանկարծ լսեց անհայտությունից խոսող ձայնը, որ հրամայում էր ուտել այդ ոսկորները, նրան վերջապես, այդ ահավոր տեսանողին, որ աղիողորմ թախանձանքով կանչում էր աշխարհի չորս հողմերին պաղատելով շնչել ոսկորների վրա ու կենդանացնել մեռյալներին... Եթե հնարավոր լինի այսօր լսելի դարձնել անլուր ոճիրների դեմ ծառացող այդ ահարկու փոթորիկը Եզեկիելը, այսօր մենք կտեսնեինք մեր աչքերի առաջ Սիամանթոյին, չնայած իր անդարձ մեկնումին անհնարին խոշտանգումների ճանապարհով, մի խոսքով Սիամանթոյին, որի ձայնը խոսում է ու կխոսի այսօրվա հայի ականջին, ինչպես և իր ստեղծած ահարկու պատկերների քերականական օրենքների դեմ ըմբոստ, ահռելիորեն գեղեցիկ լեզվով վաղվա հայի ականջին: Այն լեզվով, որ ինքն ստեղծեց, որ իրենը եղավ...

Եղան օրեր, որ ես ինձ հպարտ էի զգում, որ գիտեմ Դանտեին... Եվ որ Ալիգիերին իմ մտայնությանն այնքան է հարազատ, որքան իմ եսը իմ էությանը...

Եղան և օրեր սակայն, որ ես ինձ հպարտ զգացի մեր մեծ բանաստեղծին Յարճանյան Ատոմին ճանաչելով... որն իր ստեղծած անկրկնելի անբավ հարստությամբ աղքատ չէ 14-րդ դարու տոսկանացուց»[2]:

Դանիել Վարուժանը (Չիպուքքեարյան Դանիել Գրիգորի, գյուղ Բրգինք, Սեբաստիայի նահանգ, 20.04.1884–1915) *հանճարեղ* գրող էր, մասնագիտությամբ ուսուցիչ, հասարակական-քաղաքական ակտիվ գործիչ: Միջնակարգ կրթությունն ստանալով Կ.Պոլսում՝ ուսումը շարունակել է *Բելգիայում,* որտեղ և ավարտել է *Գենտի* համալսարանը: Նրա գլխավոր գործերն են՝ «Սարսուռներ», «Ցեղին սիրտը», «Հեթանոս երգեր» և «Հացին երգը», որը դարձավ բանաստեղծի կարապի երգը[3]: Վարուժանի երգերը թարգմանվել են ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն և արևմտաեվրոպական այլ լեզուներով: Բեղուն գրիչ, անզուգական ու ինքնատիպ ունակություններ ունեցող գրական հսկայի մասին մի քանի տող գրելով՝ չես կարող ներկայացնել նրան: Ուստի թող հանճարի մասին *հանճարը* խոսի՝ *Վահրամ Փափազյանը* բնութագրի թուրքական յաթաղանին զոհ գնացած իր վաղամեռիկ դասընկերոջը: Նա գրում է.

---

[1] ՀՍՀ, հ. 10, Երևան, 1984, էջ 353: Տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 813-814:

[2] «Վասն Հայության», 23 ապրիլի, 2002, էջ 20:

[3] ՀՍՀ, հ. 11, Երևան, 1985, էջ 348-349: *Հ. Ոշտունի,* Դանիել Վարուժան, Երևան, 1961:

«Օ՜, իմ դասկից ընկեր, դու, որի պոետական տավիղը ունեցավ բոլոր լարերը, դու, որի մատները հնչեցնելուց հետո «Հեթանոս երգերի» մոռացված հմայքը տեղ ու ժամանակ կարողացան գտնել և սեփական հոգուդ լարերի վրա գուրգուրանքով հպել երգելու համար «Միջօրեի դադարն» ու «Մեռնող բանվորը», դու, որի հոյակապ տողերի մեջ անծանոթ ձայնին լսող «Ճերմակ աղջիկը» հանուն «առաջին մեղքի» մաքուր խիճերի վրա «սպիտակ ուլը մորթոտեց», դու, որ մի ամբողջ աշխարհ գրկելով հանդերձ եղար ու մնացիր մի պարզ հայորդի, հարազատ մի բեկորը սերնդիդ...

Օ՜, իմ անմոռաց ընկեր... կա՞, մնացե՞լ է արդյոք քո էությունից մի արծագանք, մի թրթռում այն մեծ սիմֆոնիայից, որ դու եղար... Եվ եթե կա, ապա որտե՞ղ, հայտնիր ինձ: Հայտնիր, որովհետև ուզում եմ բուրվառել հոգիդ, երբ չկաս հիմա... իզուր որոնելուց հետո քո հիշատակը միջոցի մեջ, գալ ծնրադրել անհայտ գերեզմանիդ և մեծ հոգիդ խնկարկելու անանց պահանջից հետո գերեզմանահարդարը լինել անհայտ շիրիմիդ»[1]:

Ներկայացնենք նաև մի քանի այլ մտավորականների, որոնք այդ ոճրագործության զոհ դարձան:

Ռուբեն Սևակ (Չիլինկիրյան Ռուբեն Հովհաննեսի, Սիլիվրի (Կ. Պոլսի մոտ), 15.02.1885-26.08.1915): Հայ հանճարեղ բանաստեղծ, արձակագիր, լրագրող, մասնագիտությամբ բժիշկ: Սևակի մեջ ապրում էին բանաստեղծի առատածեռն մուսան և հիպոկրատի հումանիստական հանճնարարությունները: 1910 թ. լույս ընծայեց ***«Կարմիր գիրքը»*** բանաստեղծությունների ժողովածուն նվիրված Հայրենիքին, Սիրուն, հատկապես Ադանայի 1909 թ. կոտորածին: Նրա գլուխգործոցն են համարում ***«Լիմանի լիճը»*** բանաստեղծությունների ժողովածուն, «Բժշկին գիրքեն փրծված էջերը և քերթվածները» արձակ ստեղծագործությունները: Սևակն արևմտահայ բանաստեղծության, առավել ևս արձակի բնագավառում ստեղծեց նոր ժանր, կատարեց բազմաթիվ թարգմանություններ, որոնց մեջ առանձնանում էին Հայնրիխ Հայնեի գործերը: Սպանվեց Չանղըրում, չեթեների դաժան ու անմարդկային ձեռքերով, զարհուրելի դաժանությամբ[2]:

Ռուբեն Զարդարյանը (Արևմտյան Հայաստանի ***Սևերեկ*** գավառ, 1874-1915): Հայ գրող, հրապարակախոս, հրատարակիչ, խմբագիր, անվախ ու աներեր քաղաքական գործիչ: 1910 թ. իր արձակ էջերը հավաքելով հրատարակել է մեկհատորյակում «Ցայգալույս» վերտառությամբ: Նրա ստեղծագործություններից ուշագրավ են «Սարերու տղան» (1902), «Վախես մեռնեի» (1904), «Սև հավը կանչեց» (1906), «Պահակները արթուն են» (1907), և այլ գործեր: Նա թողել է գրականագիտական մի շարք աշխատություններ, որոնցից առանձնանում են «Վաղվա գրականությունը» (1900), «Թլկատինցին» (1908), Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը (1910): Զարդարյանը թարգմանություններ է կատարել Մ. Գորկուց, Վ. Կորոլենկոյից, է. Վերհարնից, Վ. Հյուգոյից, Ա. Ֆրանսից: «Ցայգալույսն» 1912 թ. Փարիզում լույս տեսավ ֆրանսերենով և ցնցեց գրական հասարակայնությանը: Եղել է մի շարք պարբերականների խմբագիր և իր շուրջն է համախմբել սփյուռքահայ գրողներին ու հրապարակախոսներին[3]:

Խաչատուր Մալումյանը (է. Ակնունի ծածկանվամբ, Մեղրի 1860-1915), հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅ դաշնակցության կուսակցության ղեկավար անդամներից, նրա գործերից են «Կովկասյան վերքեր» (հայերեն և ֆրանսերեն),

---

[1] «Վասն Հայության», 23 ապրիլի, 2002, էջ 20:

[2] ***Թեոդիկ,*** Հուշարձան նահատակ մտավորականությանը, Երևան, Բ տպագրություն, ապրիլ 24, 1985: Տես նաև ՀՍՀ, հ. 10, Երևան, 1984, էջ 312-313: ***Վ. Կիրակոսյանի*** հոդվածը:

[3] ***Թեոդիկ,*** նշված աշխատությունը, էջ 31: Տես նաև ՀՍՀ, հ. 3. Երևան, 1977, էջ 665-666; ***Հ. Մարգարյանի*** հոդվածը:

«Գրիգոր Արծրունի», «Դեպի կռիվ», «Դեպի երկիր», «Մեծ իդեալիստը», «Հարգանքի պսակ» (Մ. Փորթուգալյանի հոբելյանի առիթով)։ «Ազատամարտի», հատկապես անստորագիր խմբագրականների մի մասը պատկանում են Ակնունու գրչին։ Մեծ մտածողի, հայրենասիրվեր պայքարամարտիկի գրական ժառանգության համտեսի նպատակով, հրապարակենք նրա կարծիքը Հայրենիքի մասին[1]։

ՀԱՅՐԵՆԻՔ

Ազատագրական արիւնը չէ,- նոյն իսկ այնքան սոսկալի, ինչքան «հայկական կոտորածները» - որ սպանում է մի ազգ, այլ քափառական կեանքը, մուրացկանի պայուսակը, անվերջ տարագրութիւնը։ Մի մոռացիր, որ քսան տարուց աւելի է ինչ օսմանեան բռնապետութիւնը եւ հրդեհածգութեամբ, եւ սովով, եւ կոտորածով, ինչպէս ամբողջ Հայաստանում, մի նպատակ միայն ունի. վերացնել, նւազեցնել Հայերին, դարձնել Հայաստանը ***անհայաբնակ,*** որպէս զի այդպիսով վերջապէս մի ծանր գերեզմանաքար դրւի այն մեծ, ոգեւորիչ հարցի վրայ, որ զբաղեցնում է ամբողջ Եւրոպան՝ «Հայոց հարց» անունով եւ որը 600 տարւայ ստրուկ ժողովրդի սրտում ծնել է եւ յոյս, եւ հերոսութեան ձգտում, եւ մարդկային մեծ իդէալներ...։ Այո՛, իդէալներ որոնց իրագործման համար Հայութիւնը միայն մի վայր ունի,- ***Հայաստան:*** Մայր-հայրենիքից դուրս՝ հայ ժողովուրդը ազգ չէ, այլ փշրանք, թափթփուք, անպէտ եւ անկարեւոր։ Երկիրն է նրա պատմական դերի ***բեմը,*** նրա կուլտուրական բաղձանքների ***հնոցը:*** Թափառական, շրջիկ կեանքը, տարագրութիւնը՝ սպանեց հրէական տաղանդաւոր ***ազգը.*** նա մեզ էլ կը սպանի՝ հասցնելով ազգը ***հայկական ջհուդութեան:***

...Մեզանից աւելի հալածական եւ տգէտ նախնիքը՝ տանջանքների բովից անցնելով՝ մեզ թողին մի մեծ ժառանգութիւն - ***Հայրենիք:*** Ի՞նչ, միթէ մենք պէտք է մեր ապագայ սերունդին ***Հայրենիքի*** փոխարէն թողնենք ***լոկ հայկական գաղութներ,*** ցիրուցան ովկէանի այս եւ այն կողմը, չշաղկապուած ո՛չ մի զգացմունքով, ժողովրդական ոչ մի գաղափարով...։

Է. ԱԿՆՈՒՆԻ

Բարսեղ Շահպազ (Բոսֆորի ափամերձում, 06.1883-1915), հրապարակախոս, խմբագիր, քաղաքական գործիչ։ Ալեքսանդրիայում հրատարակել է «Կրակ» պարբերականը, «Այլասիրություն և երկասիրություն» գրքույկը։ «Օժտված էր դյուրահաս գրելու և խանդավառորեն հրապարակախոսելու կրկնակ կարողություններով»[2]։

Տիգրան Չեոկյուրյան (Կյումուշխանե, 1884-1915), գրող և հրապարակախոս։ Ունեցավ դառը մանկություն, ավելի դաժան պատանեկություն, բայց սիրեց իր հայրենիքն ու մայր ժողովրդին և զոհվեց հանուն այդ սիրո։ Առանց հուզմունքի չես կարող կարդալ ***«Մայրիկիս»*** խորագրված նրա փիլիսոփայական, խոհական, յուրաքանչյուրիս հոգին մաշող արձակ բանաստեղծությունը.

---

[1] *Թեոդիկ,* նշված աշխատությունը, էջ 25-26։ Տես նաև ՀՍՀ, հ. 5, Երևան, 1981, էջ 165։ *Գ. Ստեփանյանի* հոդվածը։

[2] Նույն տեղում, էջ 40։

Հին օրերու քաղցր խօսք մը՝ բարեկամի մը պէս կ'անցնի քովէս ու կը յուզէ զիս այս գիշեր:

Հին օրերու ձայն մը խիղճիս կը հպի. մօրս ժպիտն է, մօրս ժպիտը որ կ'արթընայ իմ մէջս: Ա՜հ, մայրս հիւանդ, մայրս նիհար, լքուած կին:

Պատմութիւն մը կը շրջի ականջիս մօտը, անորոշ աղու շեշտերով: Մայրիկիս ձայնն է որ կը յիշեցնէ այնքան անուշ օրերգ մը թախծոտ:

Օ՜հ, հին բարի երգ, սո՜ւրբ առասպել, ո՞ւրկէ եկար այս գիշեր՝ մօրս ժպիտին հետ: Ո՜րքան ապրեցայ, Աստուած իմ, մոռցած եմ իր դէմքը տմոյն:

Երանի՜, ո՜վ մայր, դեռ պզտիկ, դեռ անմեղ՝ տանէին հոգիս հովերուն հետ, ու մեղրամոմի հիւսքերով պատէիր թաթերս մանրիկ:

Հիմա մեղրամոմի թեւեր կը խեղդեն զիս ամէն օր, ու հոգիս կը փոռւի մութ խորշերու, խոնաւ լորձոտ գետիններու վրայ, կատաղի վիրաւոր սողունի մը պէս:

Երանի՜, ո՜վ մայր, դեռ պզտիկ, դեռ անմեղ, ծորին ոգիները հովերուն հետ վազցնէին իմ հոգիս, ու քու արցունքներուդ մէջ ու քու արցունքներուդ տակ տանէին զիս:

Հիմա արցունքները մեղքի՝ բիւրեղ կ'ըլլան սուր ու այտերս կը խոցոտեն: Հիմա համբոյրները հրաշէկ երկաթներու պէս դէմքս կը մրկեն, ու սիրտս, տե՛ս, աւերակ:

Օ՜, մայր, համբոյրիդ տակ, արցունքիդ տակ, դեռ պզտիկ, դեռ անմեղ՝ պիտի ուզէի ննջել ու մեռնի՜լ...:

Տ. ՉԷՕԿԻՒՐԵԱՆ[1]

Ազգային և քաղաքական գործիչներից զոհ գնացին հարյուրավորներ: Դրանցից հիշատակենք մի քանիսին միայն: ***Համբարձում Պոյաճյան (Մուրատ)***[2] (1867-1915), քաղաքական գործիչ, օսմանյան խորհրդարանի անդամ: ***Վարդգես (Յովհաննես Սերենկյուլյան)*** (1871-1915): ***Հարություն Ճանկուլյան*** (1855-1915): ***Հրաչ (Հայկ Թերեքյան)*** (1871-1915), հեղափոխական գործիչ, օսմանյան բանկի ցույցի կազմակերպիչներից: ***Միհրան Հայկազ*** (1864-1915), քաղաքական գործիչ, ազգային ժողովի երեսփոխան[3]: Եվ այս շարքը կարելի էր ոչ միայն տասնապատկել, այլև հարյուրապատկել:

Այսպիսով, երիտթուրքական մարդասպանները մեկ գիշերվա ընթացքում ձերբակալեցին և մայրաքաղաքի բանտեր լցրեցին հայ գրողներին ու հրապարակախոսներին, թուրքական մեջլիսի հայ պատգամավորներին, բժիշկներին և իրավաբաններին, ուսուցիչներին և դերասաններին, ճարտարապետներին և շինարարներին, դեղագործներին և գիտնականներին, արդյունաբերողներին և վաճառականներին: Դրանք բոլորն էլ արարող, ստեղծագործող, Թուրքիան ծաղկեցնող մարդիկ էին, որոնցից և ոչ մեկի մտքով նույնիսկ չէր անցնում «ապստամբության դրոշ պարզել» իթթիհատականների բռնապետության դեմ:

Եվ ընդհանրապես 1915 թ. ապրիլի առաջին հնգօրյակում Բոսֆորի ափերը խաղաղ էին, ոչ մի կրակոց չէր արձակվել, նույնիսկ սովորական, խաղաղ ցույցեր չէին կազմակերպվել: Այդ օրերին բանաստեղծները, անհոգաբար, հանճարեղ ոտանա-

[1] *Թեոդիկ*, նշված աշխատությունը, էջ 44-45:
[2] «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 517-518:
[3] Նույն տեղում, էջ 518-519:

վորներ էին երկնում, բժիշկները բուժում էին հայ և թուրք հիվանդների վերքերը, ճարտարապետները կառուցում ու վերակառուցում էին մզկիթները, հիասքանչ պալատներ, կամուրջներ և փողոցներ, ուսուցիչները կրթում էին և քրիստոնյա, և՛ մահմեդական երեխաներին, դեղագործներն ու վաճառականները զբաղված էին իրենց սովորական առևտրով[1]: Նրանք բոլորն էլ խաղաղ, ստեղծագործող մարդիկ էին, որոնց բանտարկելիս թուրք ոստիկանները ոչ մի արձանագրություն չկազմեցին, ոչ մի մեղադրանք չներկայացրին, բացի մեկից, այն է *դուք հայ եք, հետևապես գյավուր եք և պետք է սպանվեք:* Թուրքերը այսօր կարո՞ղ են ետադարձ հայացքով փաստաթղթեր «սարքել», կարծում եմ, որ ոչ, քանի որ էքսպերտիզացիա կոչվող գիտություն գոյություն ունի:

Չերբակալված հայ մտավորականության առաջին խմբին 24 ժամ մայրաքաղաքի բանտախցերում տանջահար անելուց հետո, ապրիլի 25-ի գիշերը տեղափոխում են Հայդար փաշայի նավամատույցը և այնտեղից, խիստ հսկողությամբ պաշտպանված, գնացքով «սուրգյուն անում» Իզմիթ-Անկարա ուղեգծով: Հրեշավոր այդ գործողությունը իրողության էր վերածվում Ստամբուլի բանտապետ չեթջի Իբրահիմ բեյի գլխավորությամբ, որի սադիստական հրամանով ու ներկայությամբ կտտանքների էին ենթարկում հայ կալանավորներին, ծաղրուծանակի դատապարտում նրանց, արհամարհում, ծեծում, ձեռքերից խլում մի կտոր հացը, զրկում ջուր խմելու իրավունքից, երբեմն մերկացնելով, զավթում արժեք ներկայացնող նրանց հագուստները[2]:

Ապրիլի 28-ին գնացքը կանգնեցվում է Սենճան-քեոյ կայարանում, ձերբակալվածներից իջեցնում են 75 հոգի և տանում Այաշ ոչնչացնելու[3]: Հուլիսի 7-ին Ուրֆա-Տիգրանակերտ ճանապարհին քարաջարդով սպանում են հայ մտավորականության մեկ այլ խմբի: Հերթականությամբ, իրենց թուրքերին հարմար վայրերում, գաղտնապահությամբ սպանեցին մյուսներին:

Թուրք կառապանի հաղորդմամբ պատմությանն է մնացել *Դանիել Վարուժանի* և *Ռուբեն Սևակի* դաշունահարման մանրամասները: 1915 թ. օգոստոսի 26-ին Չանկրից քիչ հեռու Գայլալիճ կոչվող ձորակ են բերվում երկու մեծ գրողները և նրանց հետ եղած երեք այլ կալանավորներ: Ոստիկանների հրամանով վրա են հասնում չորս զինված «չեթեներ», մերկացնում Վարուժանին, նրա չորս ընկերներին, որպեսզի հագուստը չարյունոտվի և «չփչանա»: *«Չեմ կրնար նկարագրել այն տեսարանը, որուն ներկա եղա, – հաղորդում է թուրք կառապանը: – Այս խեղճ զոհերը մեկիկ-մեկիկ ծառերուն կապվեցան: Իրենց ձեռքերը կապված ըլլալով չէին կրնար ինքզինքը պաշտպանել: Հետո չեթեապետը և իր մարդիկ իրենց դաշույնները մերկացուցին և սկսան դանդաղորեն և հանդարտ կերպով զանոնք մորթել: Դատապարտեալներու աղաղակը և անոնց հուսահատ կատաղությունը սիրտս կծմլեն* (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[4]:

1915 թ. ապրիլ-հուլիս ամիսներին Կ. Պոլսի սալահատակները ներկված էին հայոց անմեղ և թանկարժեք արյամբ, կախաղանների սյուները ծոծվում էին նրանց

---

[1] «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 39-40:

[2] *Մ. Արզումանյան,* նշված աշխատությունը, էջ 321: *Գրիգորիս Պալաքեան,* Հայ Գողգոթան, հ. Ա, Վիեննա, 1921, էջ 78-82: «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 39-40:

[3] Նույն տեղում:

[4] «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 376: Տե՛ս նաև «Հայկաշեն, Տարեգիրք», Պոլիս, 1922:

ծաղրության տակ, բանտախցերը բերնեբերան լիքն էին հայ բանտարկյալներով: ***Նրանք դեպի մահ էին գնում հպարտությամբ, փոխվրեժի*** կոչը շուրթերին: Հետևաբար սխալվում են նաև հայրենի ու օտար այն հետազոտողները, որոնց կարծիքով ժողովուրդն ու նրա քաջարի զավակներն առանց դիմագրավելու են թուրքական զոհասեղանին մոտեցել[1]:

Մեղադրական աթոռին էին նստած Մատթեոս Սարգսյանը (Փարամազ ծածկանունով, էջմիածնեցի), Թորոս (Պենե) Մանուկյանը, Գեղամ Վանիկյանը, Արամ Աշկըբաշյանը, Հովհաննես Եղիազարյանը, Երեմիա Մանուկյանը, Հրանտ Եկավյանը, Պողոս Պողոսյանը և այլոք, թվով քսան երիտասարդներ[2]:

Նրանց մեղադրանք էր ներկայացվել, օսմանյան Թուրքիայում ժողովրդին «ապստամբության» կոչելու, հայ և թուրք ժողովուրդների ազատագրման, անկախ, ազգային պետությունների ձևավորման սկզբունքների համար: Սոցիալիստական գաղափարապաշտության այդ ջատագովները, իրոք կայսերահպատակ, ճնշված բոլոր ժողովուրդների, այդ թվում և թուրք ժողովրդի ծեռքերին պրկած շղթաների խորտակման կոչեր էին արել:

Դատական քննությունը և բանտախցային տանջանքները տևել էին շուրջ տասը ամիս: 1915 թ. ապրիլի 27-ին, Հայաստանում անկախ պետություն ստեղծելու, այսինքն «Պետական դավաճանության» մեղադրանքով, նրանց դատապարտեցին մահվան կախաղանի միջոցով[3]: Մահվան սարսուռի տակ դատապարտյալներն ապրեցին մի քանի ամիս:

1915 թ. հուլիսի 15-ին, Կ. Պոլսի սուլթան Բայազետի հրապարակում, կողք կողքի շարված էին քսան կախաղանասյուներ: Օրը բնությամբ ու բովանդակությամբ մռայլ էր, երկինքը թխպոտ: Ոստիկանության քառաշարք հսկողությամբ վերջապես հրապարակ են բերվում մահապարտները:

«Քայլեցե՛ք ընկերներ գլուխներդ միշտ բարձր»,- լսվում է մահապարտներից մեկի խրոխտ ծայնը: Դա Փարամազն էր, որը կախաղանասյունի առաջ ասաց. «Այնտեղ, ուր կախաղաններն են ծոճվում, ազատություն է ման գալիս»: Նրա վերջին խոսքն էր. «Դուք մեր մարմինը միայն կարող եք կախել, իսկ մեր գաղափարները երբեք: Դուք վաղը պիտի տեսնեք Արևելքի հորիզոնի վրա ազատ և անկախ Հայաստան»: Նրա երազանքն իրականացավ, դժբախտաբար առանց իրեն:

---

[1] «Քսան կախաղանների» մասին ստեղծվել է ծավալուն գրականություն: Տե՛ս ***Թեոդիկ (Լեպճիճյան Թեոդոս Գրիգորի),*** Գողգոթա, հատ. առաջին (Ա մաս), Անթիլիաս, 1966, «Պոլսի կախաղանները» գլուխը, էջ 32-35: ***Ա. Նագդաշյան,*** Հայ մտավորականության ծերբակալությունը և Այաշի բանտը, Պեյրութ, 1969, էջ 108-114: ***Զավեն արքեպիս.,*** Պատրիարքական հուշերս. Գահիրե, 1947, էջ 94-96: «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 376: «Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության», հատ. Ա. էջ 391: «Հայկաշեն տարեգիրք», Կ. Պոլիս, 1922: ***Ա. Ն. Մնացականյան,*** Հայ ժողովրդի ողբերգությունը, Երևան, 1965, էջ 46-48: ***Մ. Վ. Արզումանյան,*** նշված աշխատությունը, էջ 326:

[2] ***Թեոդիկ,*** նշված աշխատությունը, էջ 32:

[3] «Արարատ» օրաթերթի (Բեյրութ) 1962 թ. հունիսի 17-ի համարում տպագրված է դատավճռի տեքստը:

Գլուխ չորրորդ

1915 թվականի Մեծ եղեռնը

Հայ ժողովրդի ապրած ցավն ու ողբերգությունը Ռուսաստանը միշտ էլ ընդունել է որպես իր սեփականը:

Խոնարհում ենք գլուխներս հայ ժողովրդի ցեղասպանության զոհերի հիշատակի առջև:

Վ. Վ. ՊՈՒՏԻՆ
15.09.2001 թ.

1. Մեծ եղեռնի նախաշեմին

ՀԱՅ ժողովուրդը, լինելով աշխարհի հնագույն, նույնիսկ հիմնարար ժողովուրդներից մեկը, համաշխարհային քաղաքակրթության մայրուղիներում կերտեց սեփական և ինքնատիպ, միաժամանակ խիստ ընդգծված այնպիսի ծեռագիր, որն իրավամբ զանազանվում է մյուսներից, այսօր, առավել քան երբևէ զարմանք ու հիացմունք պատճառում հանուր մարդկությանը: Անհայտ չէ, որ յուրաքանչյուր ազգի *կենսագրությունը*, ասել է թե *պատմությունը*, աշխարհի մշակույթի *ոսկյա ֆոնդում* մուտք արած նրա գրավոր ու ճարտարապետական կոթողներն են, հանուրին թողած, հանրաճանաչ դարձած ականավոր դեմքերի մեծ ու փոքր գործերը:

Գրականության, առավել ևս դասագրքերի էջերից ջնջեցեք *կեսարների* ու *ալեքսանդրների*, *արիստոտելների* ու *պլատոնների*, *նապոլեոնների* անունները, այնուհետև դժգույն ու անհետաքրքիր կդառնա մակեդոնական, հունական ու հռոմեական, հատկապես ֆրանսիական ազգի, արդեն ուսանելի դարձած, անցյալի պատմությունը: Հետևաբար ապրել են, ապրում են, այսուհետև ևս կապրեն այն ժողովուրդները, որոնք իրենց անցյալով հպարտանալու իրավունք են նվաճել, ստեղծագործական արարումներով ամուր աղերսված են *ներկային և վստահորեն նայում են դեպի առաջ՝ խոստումնալից ապագան:*

Իբրև մեծ ինտելեկտի տիրապետող ազգ, համաշխարհային պատմության հաշվեկշռում հայ ժողովուրդն ունի առյուծի իր բաժինը: Բոլոր ժամանակներում ու կյանքի բոլոր բնագավառներում նա տվել է *անկրկնելի դեմքեր՝ արժանի մեծարանքի: Մեսրոպ Մաշտոց ու Մովսես Խորենացի, Անանիա Շիրակացի ու հազարամյա հոբելյար Գրիգոր Նարեկացի, Թորոս Ռոսլին ու Սարգիս Պիծակ, Մարտիրոս Սարյան ու Երվանդ Քոչար, Կոմիտաս ու Արամ Խաչատրյան, Վիկտոր Համբարձումյան ու զույգ Օրբելիներ, Հովհաննես Թումանյան ու Ավետիք Իսա-*

հակյան, Գրիգոր Զոհրապ ու Սիամանթո, Հովհաննես Շիրազ ու Պարույր Սևակ, Րաֆֆի ու Դերենիկ Դեմիրճյան, Համո Սահյան ու Վահագն Դավթյան. ահա մի կաթիլ հայ հանճարի փայլատակումներից, որոնցից ամեն մեկը կարող է զարդարել մի ամբողջ ժողովրդի կենսագրություն, իրեն ծնող մայր հայրենիքին իրավունք նվաճելով ապրելու համամարդկային հպարտություն:

Եվ այսօր էլ կենսունակ, ապրող, արարող, ազգային և՛ անհատական, և՛ հավաքական հանճարով աշխարհին զարմացնող այդ ժողովրդի նկատմամբ զարգացման դեռևս նոմադական աստիճանավանդակին կառչած, այլադավան ու բարբարոս մի տերություն, XIX հարյուրամյակի մայրամուտին և XX դարի առաջին երկու տասնամյակներին որդեգրեց հիմնովին բնաջնջելու սահմռկեցուցիչ քաղաքականություն, որն իր տեսակի մեջ աննախադեպ էր դաժանություններով, դրանով էլ մնաց ***եզակի:***

Առաջին աշխարհամարտն ինքնին խոշոր աղետ դառնալով աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդների գլխին՝ առավել ծանր ու ողբերգական հետևանքներ ունեցավ երեք տերությունների միջև բաժանված ու բզկտման առարկա դարձած Հայաստանի համար: Գերտերությունների ոչ միայն պաշտպանությունից զրկված, այլև նրանց զավթողական պլանների իրականացման համար մանրադրամի դերակատարի վերածված Հայաստան աշխարհը, միայնակ, դեմ առ դեմ կանգնած մինչև ատամները զինված մահմեդական բորենիների անխնա հարվածներին, անզոր լինելով դիմագրավել այդ ամենին տվեց մարդկային ***անթիվ*** ու ***անհամար*** զոհեր: Կատարվեց ***ժողովրդասպանություն,*** որը միջազգային իրավաբանական բնորոշումներով ***գենոցիդ*** - ցեղասպանություն, ***արմենոցիդ*** - հայասպանություն անվանում ստացավ:

Ցեղասպանությունն օսմանյան կայսրության մեջ ընդհանուր շղթա էր, երկարատև նախապատրաստության «արգասիք», որն սկզբնավորվեց 1890-ին և եզերվեց 1922 թվականով: Այդ երեսնամյա շղթայի ***բարձրակետը 1915 թվականն էր,*** դրա համար էլ այն իրավամբ ստացավ ***Մեծ եղեռն*** անվանում: Գենոցիդը, սակայն, խնամքով պատրաստված էր, բոլոր բարդույթները ծանրութեթև արված, նույնիսկ մտահոգված կատարողներին հետագա պատասխանատվությունից ազատելու մասին:

1996 թ. ԱՄՆ-ում, Հայոց ցեղասպանության 80-ամյակի առիթով, լույս տեսավ ***Գ.Ս. Գրեյբերի «Քարավանները դեպի մոռացություն, ցեղասպանություն. 1915»*** վերնագրված (210 էջանոց) աշխատությունը, որի առաջաբանը գրել էր իրավագիտության դոկտոր Ռոջեր Սմիթը[1]: Այդ առաջաբանում կարդում ենք. «Ցեղասպանություններ կատարվել են մարդկության պատմության բոլոր շրջաններում, սակայն այն հատկապես ակնառու դարձավ XX դարում: Այս դարը շատ առումներով ողջամիտ և առաջադիմական լինելով հանդերձ, նաև ցեղասպանության դարաշրջան է, երբ տարբեր քաղաքական ռեժիմներում ազգայնամոլությունը խլել է ավելի քան ***60 միլիոն մարդկային կյանք:*** Չնայած նացիստական Գերմանիայի պարտությունից հետո հնչեց «Երբե՛ք նորից» ճիչը, ցեղասպանություններ դրանից հետո էլ բազմիցս կատարվեցին Ասիայում, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում և Եվրոպայում: 1945 թ-ից հետո կատարված ցեղասպանություններն ավելի շատ մարդկային կորուստներ են պատճառել, քան նույն ժամանակում բոլոր քաղաքացիական և ազգամիջյան պատերազմները միասին վերցրած»[2]:

Ռ. Սմիթը նշում է, որ ***շատերը այն սխալ պատկերացումն ունեն, որ ցեղասպա-***

[1] Caravans to Oblivion: the Armenian Genocide 1915 / G.S. Grober - 1996, USA, 1996-210 p.: Այն հաճառոտ բովանդակությամբ թարգմանել է ***Արմենուհի Մարտիրոսյանը*** և տպագրվել է ՀՍՍՀ ԳԱ լրատվության և տեղեկատվության կենտրոնում. «Հայոց ցեղասպանության պատմությունից» վերնագրով (Երևան, 1998) աշխատության երկրորդ բաժնում:

[2] Նույն տեղում, էջ 9:

նությունը պարզունակ, անասնական կամ պարզապես խելագար գործողություն է: Մինչդեռ այն պահանջում է մեծ կազմակերպվածություն, խելք և հմտություն՝ վերջում կատարվածը ժխտելու: Ամեն ինչ մանրամասն հաշվարկվում է: Նախապատրաստողները ընտրում են հարմար պահ իրենց ծրագրի իրագործման համար: Ցեղասպանություն կարող են ծրագրել և իրագործել թե՛ հետամնաց, թե՛ առաջադեմ հասարակություններում: Սխալ պատկերացումները խանգարում են հասկանալ՝ ինչու և ինչպես են դրանք կատարվում[1]:

Ճիշտ են նկատել ամերիկացի հետազոտողները, որ երիտթուրքական ջարդարարները հայ քաղաքական էլիտային խաբելով՝ նրանց օգնությամբ իշխանության գալով, դեռևս համերաշխություն խոստացող փաստաթղթերի թանաքը չչորացած, կազմակերպեցին Ադանայի 30 հազարանոց հայության կոտորածը (1909) և դրա անտրտունջ մարսելուց հետո, արդեն բացահայտ հայտարարեցին, թե *«Թուրքիան թուրքերի համար է»:* Նրանք Եվրոպայի քողտվությունից, ինչպես նաև հայ ավազանու ճարահատյալ լռությունից լկտիացած, առանց երկնչելու, բանածևեցին. *«Թուրքական սահմանադրությունից ու պառլամենտական օրենսդրությունից կօգտվեն նրանք, ովքեր կթուրքանան:* Հակառակվողները պետք է սրբվեն պատմության բեմահարթակից»[2]:

Ս. Ակունին, իբրև դեպքերին ականատես, այդ մասին գրում է. «Օսմ. Սահմանադրության հրատարակումեն ետք իթթիհատը *մեծ համաժողով մը գումարած է Սելանիկի մեջ,* ճշտելու, թե երկրի ղեկը ձեռք առնելե հետո, ի՞նչ պիտի ըլլա իր դիրքը հանդեպ քրիստոնյա տարրին, որ այնքան էլ զանցառելի քանակ մը չէր ներկայացներ: Թուրք նշանավոր փաստաբան Մանիսսի զատե Րեֆիք պեյի նախագահության տակ գումարված այդ համաժողովը գրեթե միաձայնությամբ որոշում տված էր, թուրքաբնակ քրիստոնյա տարրը ենթարկել *այնպիսի վիճակի մը, որ ստիպված իսլամանա կամ շատշատ անունով պահե իր ազգությունը:* Ճիշտ այդ նպատակով էր, որ մեջտեղ նետվեցան «Թուրքիան թուրքիացիներուն» և տիրող տարրի (միլլեթը հաքիմե) նշանաբանը... Երեսփոխանական ժողովի ընտրությանց պահին պայքարը անգամ մը ևս շեշտվեցավ, երբ տեսնվեցավ, որ իթթիհատը մեպուսանի մեջ տեսնել այնպիսի դեմքեր միայն, որոնք իլու գործիքներ ըլլան իթթ. «քամարիալ»-ին և եթե մի քանի քրիստոնյա կարող ազգասեր անձեր կրցան աթոռ ունենալ հոն, ատիկա ալ բացարձակապես հակառակ իթթիհատի կամքին եղած էր: *Իրերն այդ վիճակի մեջ էին, երբ մարտ 31-ի դեպքին առիթով կատարվեցավ Ատանայի ջարդը»*[3]*: Հետևաբար այդ թուրքաժողովը գումարվել էր 1909 թ. մարտից առաջ, և հայերի հետ հաշվեհարդար տեսնելու որոշումը կայացվել էր Համիդի գահընկեցությունից մի քանի ամիս անց:*

Իթթիհատականների խաղաքարտերը հայ ժողովրդի նկատմամբ բռնելիք ընթացքի մասին գնալով մերկապարանոց էին դառնում: 1910 թ. հոկտեմբերի 31-ին Սալոնիկում գումարվեց երիտթուրքերի հերթական համաժողովը, որը համագումարի նշանաբանով էր գնում և տևեց շուրջ երկու շաբաթ: Այստեղ, բազմաթիվ խնդիրների հետ մեկտեղ, քննարկվեց նաև *ազգային հարցի նկատմամբ իթթիհատականների բռնելիք դիրքորոշումը,* որը պաշտոնապես բանաձևում էր *«Թուրքիան միայն թուրքերի համար»* ցեղապաշտական սկզբունքը[4]:

Սալոնիկի խառնաժողովի որոշման 12-րդ կետում արձանագրված էր. «Սպանել

---

[1] Caravans to Oblivion: the Armenian Genocide 1915 / G.S. Grober - 1996, USA, p. 92-93:

[2] *Հրանդ Գանգրունի,* Ցեղասպան իթթիհատը (1908-1923), Պեյրութ, 1994, էջ 15, 79:

[3] Պատրաստեց *Ս. Ակունի* (Բ. տպագրություն), Միլիոն մը հայերու ջարդի պատմությունը, Կ. Պոլիս, 1921, տպագր. Ս. Ասատուրյան որդիք, էջ 3-4:

[4] *Ծ. Պ. Աղայան,* Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 455:

դեպի ազգային ինքնորոշում տանող ամեն տեսակ ձգտում, որ կարող է արտաքին հաջողություններ ապահովել: *Աստիճանաբար խլել ազգային հին առանձնաշնորհումները և Թուրքիո մեջ ապրող զանազան ազգությունները վերածել մեկ ընդհանուրի: Սահմանափակել ոչ թուրք դպրոցներու բացվիլը և արդեն գոյություն ունեցողներու մեջ պարտադիր դարձնել թուրքերենը: Բոլոր ազգերու համար բանալ պետական թուրք դպրոցներ: Ընդհանրապես ջանալ ոչ-թուրք ազգությանց ազգային նկարագիրը խաթարելու և հանդուրժել միայն կրոնական համոզումները, որոնք ավելի քիչ վնաս կարող են տալ»*[1]:

Թուրքական աղբյուրներին լավածանոթ, ցեղասպանության պատմության խորաքնին հետազոտող Հայկազն Գ. Ղազարյանը գրում է. «1910-ի Սելանիկի ժողովին իթթիհատը արդեն իր դիմագիծը հրապարակ դրավ: 13 օր տևեց ժողովը: Ժողովին մեջ ընդունված էր բնաջնջելու հատուկ ծրագիր: Այդ ժողովին հիմքը կազմեցին *թուրք կառավարության ցեղասպանության հետագա քաղաքականություն. գինվորական բռնի ուժով բնաջինջ ընելու ոչ թուրք տարրերը՝ թուրք միացյալ պետություն մը կազմելու համար* (ընդգծումները մերն են Հ. Ղ.)»[2]: Կամ «1909-ի իթթիհատի ժողովին մեջ հետևանքը եղավ դպրոցներու վրա թրքական հակակշիռին, հալածանք ոչ թուրք լեզուներու դեմ: *Մեկ խոսքով չափեր, ձևեր էին Թուրքիան միայն թուրքերուն լոգունգը*»[3]:

Հրանտ Գանգրունին, մանրամասնելով Սալոնիկի ժողովի պատմությունը, նյութեր քաղելով թուրք պատմաբան Կուզքեմփրլիի գրքի 4-րդ բաժնից, վկայում է, որ «1910-ին Թալեաթը կըսեր Սելանիկի համագումարին...

Մենք ուզեցանք գեավուրը օսմանցի դարձնել չկրցանք: Այժմ միակ միջոցը կմնա զենքով ճզմել զանոնք...: Ապա ժողովն ընդունեց կեդրոնածիգ ճնշողական քաղաքականություն՝ բանթուրքիզմի գործադրություն, ջարդի միջոցներով»[4]:

Գնալով իթթիհատականներն առավել սանձարձակ են դառնում հայասպանության իրենց որոշումների մեջ: Սակայն զարմանալին այն էր, որ հայ ավագանու մեծ մասն ընդգրկող հատվածը, նկատելով կատարվածն ու կատարվելիքը, համապատասխան եզրակացության չէր հանգում: Բացառություն էր կազմում Հնչակյան գործիչների մի մասը, հատկապես նրա վարիչներից *Ս. Սապահ-Գուլյանը*: 1916 թ. ապրիլին Հելիոպոլսում (Եգիպտոս) լույս տեսավ «Պատասխանատուները» վերնագրված նրա աշխատությունը, որը քննավերլուծական շարադրանք էր ամփոփում *եղեռնի* մեղավորների, ինչպես նաև նրա պատճառների և հետևանքների վերաբերյալ:

Մեջբերենք այդ աշխատության առաջաբանից մի հատված. «*Պատմական* բոլոր շրջանները իրարու հետ սերտ կերպով օղակված, զոդված են, նրանք իրարուց բոլորովին զատված, առանձնացած, կղզիացած ժամանակամիջոցներ չեն՝ առանց հաղորդակցության ներքին կապերի:- Ո՛չ: Պատմությունը մի ամբողջություն է, շրջանները, եղելությունները, մանր ու խոշոր անցքերը, նրա ձևերը, արտահայտության մասերը, չուկետները, ժամանման կետերն էին, նրանց ընդհանուր բնաշրջումի, էվոլյուցիայի, հարատև զարգացման զանազան մասնիկները, պրոցեսուաները, բջիջներն են, միևնույն ամբողջական շարունակության մասունքները, հոլովվող միևնույն պատմա-մարմնի պեսպեսագույն երեսները, դասավորությունները, կտորտանքները,- մեկը մյուսի հետ ընդելուզված:

---

[1] *Ծ. Պ. Աղայան,* Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 456: Տես նաև **ЦГВИАРИ,** фонд 2000, 1910, дело 2451, лл.17-18:

[2] *Հայկազն Գ. Ղազարեան,* Ցեղասպան թուրքը, էջ 15:

[3] Նույն տեղում, էջ 16:

[4] *Հրանդ Գանգրունի,* Ցեղասպան իթթիհատը, (1908-1923), Պեյրութ, 1994, էջ 15-16:

Պատմական ոչ մի հոսանք, հետք ձգող, արժեք ներկայացնող, վերհիշումի առարկա համարվող ոչ մի իրողություն կա, որ իր նախընթաց ազդակները, կանխորոշ նախապատճառները ունեցած չլիներ, եթե հաճախ շատ հեռավոր»[1]:

Հետևաբար եղեռնի էությունը ճիշտ հասկանալու համար, անհրաժեշտ էր բացահայտել նրա պատճառները, կատարողներին, որպեսզի դրանցից ապագա սերունդները անհրաժեշտ դասեր քաղեն:

Նախքան Մեծ եղեռնի բուն եղելության պատմությունը շարադրելը, ներկայացնենք ժամանակակիցների հրապարակած մի քանի վկայություններ, որոնք նոր լույս են սփռում դեպքերի ընթացքի վրա: ***1919 թ. մայիսի 14-ին,*** այսինքն՝ Մուդրոսի զինադադարից փոքր անց, Բոստոնում լույս տեսավ ***Յ.Պ. Պողոսյանի «Հայ ցեղը և հալածանքները. հոգեբանության լույսին տակ»*** փաստառատ աշխատությունը, որտեղ ականատեսների եզակի գրառումներ են պահպանվել հայ ժողովրդի ողբերգության մասին[2]: Բերենք դրանցից մեկը:

Նա վկայակոչում է Գ. Փափազյան ազգանունով մի հայ մտավորականի, որը հաղորդել է, թե «Շա՜տ թարմ և շատ ալ սարսռազդեցիկ է մտքիս և սրտիս վրա տպավորությունը ընդհանուր պատերազմին այն գուժկան լուրին, զոր առաջին անգամ, աղվոր ու պայծառ առավոտ մը մեզ կբերեր իթթիհատի խայտառակ փրոփականտին անամոթ գործիք Միլլի ընկերությունը, օգոստոս 2. 1914-ին: Սահմռկած էինք... նախընթաց գիշերին տրված հրամանով մը պահարանները բացված են պարունակյալը (կանաչագույն թղթի վրա կայսրական զինանշանով զարդարված, ***Օսմանըլլար*** վերնագրով և խոշոր ու կարմիր գրերով գրված նախադասություններ). պատերու և հրապարակներու վրա փակցված էր: ***Սեֆերպերլիք վար, 20-45 սինհիտե օլանլար սիլահ պաչընա:*** Զորահանություն կա, 20-45 տարեկանները ի զե՜ն: Աղետալի լուր մըն էր, արյունոտ, նույնիսկ եթե մեզ մտավախ ընող հայկական հավանական սարսափներու հեռանկարն ալ կտանջեր մեր միտքը, որոշ էր, որ երկիրը մեծապես պիտի տառապեր, քանի որ ամեն մի երևույթ և ընթացք ցույց կուտային, թե իթթիհատը հրդեհին պիտի մոտենար հրձիգներով, զորս պատրաստած էր արդեն, 1913-ին գարնանամուտին իսկ, բանակը հանձնելով Զանտերս Լիմանի ոհմակին, հակառակ համաձայն տերություններու ամենաբուռն բողոքներուն»[3]:

Դեպքերին մեկ այլ ժամանակակից ***Հրաչյաց էտըմզ Կիպինզը,*** դեռևս 1916 թ., զորահավաքի մասին գրում էր. «1914 թ. աշնանը թուրքերը բանակին համար քրիստոնեաներու և իսլամներու զորահավաքումի սկսան: Բովանդակ Թուրքիո մեջ, լման վեց ամիս, հայերը զինվորական ծառայության կանչվեցան: Ունևորներեն զինվորական փրկանք ընդունվեցան: Բայց քանի մը շաբաթ վերջ աննկատ թողած զինվորական փրկագնի ստացագիրները անոնց տերերուն զինվորագրությունը վերսկսավ: Պոլսո շրջակաները գտնվող հայ դեռատի դասու զինվորները գործոն բանակին մեջ զետեղվեցան, ինչպես պալքանյան պատերազմի ատեն: Իսկ չափահասներ. և հեռավոր վայրերու հայեր, գործածվեցան ճամբաներու, երկաթուղիներու և ամրություններու շինության»[4]:

Օտարերկրացու վկայությամբ՝ հայ երիտասարդները ինչպիսի հանձնարարություն որ ստացան, իրականացրին ամենայն բարեխղճությամբ: Կատարվեց հակա-

---

[1] ***Ս. Սապահ - Գուլյան,*** Պատասխանատուները (Բ. տպագրություն), Պեյրութ, 1974, էջ 7:

[2] ***Յ. Պ. Պողոսյան,*** Հայ ցեղը եվ հալածանքները. հոգեբանության լույսին տակ, Պոստոն, 1919 թ.:

[3] Նույն տեղում, էջ 29-30:

[4] ***Հրաչյաց էտըմզ Կիպինզ,*** ժամանակակից պատմության սևագույն էջը, 1915-ի հայկական դեպքեր, իրողություններ և պատասխանատվություններ: Թարգմանեցին ***Ա. Սաղաթելյանը*** և ***Ե. Մորլեանը,*** Նյու Յորք, 1916, էջ 25-26:

ռակը: 1915 թ. ապրիլին մայրաքաղաքից հրաման ստացվեց, թե քանի որ հայերը Փոքր Ասիայում «ապստամբության են նախապատրաստվում», ***ապա կանխել այն:*** Նույնիսկ եղան թուրքեր, որոնք պատասխանեցին, թե իրենք նման հակապետական արարք չեն նկատել: Այդ հաշվի չառնվեց: Հրամանը հրաման էր և սկսվեցին հաշվեհարդարները:

Կիպինզը շարունակում է. «Եվ հայկական ջարդերու նոր թվական մը սկսավ... Նախ, այս ծեռնարկը կարելի ամենաքիչ դժվարությունով գործադրելու համար, դեռևս քաղաքներու և գյուղերու մեջ մնացած հայ բնակչության ուժեղ տղամարդիկը ազդարարություն ստացան հավաքվիլ հարմարագույն վայր մը, ընդհանրապես քաղաքեն դուրս: Ժանդարմներ և ոստիկաններ այս հրամանին գործադրության խստիվ հսկեցին և ոչ ոք աչքե վրիպեցավ: ***Ջանոնք ժողովելե վերջ բոլորը սուրե անցուցին...*** Մեծ քաղաքներու մեջ սակայն, Պոլսո հրամանները, այսքան ճիշտ ու պարզ կերպով կատարել, կարելի չէր միշտ: Հայ երևելիները իրենց տուներուն մեջ սպանվեցան: Ներքին քաղաքներու այրեր հսկողությամբ «ուրիշ քաղաք» ղրկվեցան: Քանի մը ժամեն վերադարձան պահապանները՝ առանց իրենց բանտարկյալներու... Ծովեզրյա քաղաքներու հայերը նավակներով «ուրիշ նավահանգիստ» մը տարվեցան: ***Նավակները զարմանալիորեն շուտ վերադարձան՝ պարպված իրենց ճամփորդներեն»***[1]***:***

Զորահավաքի պրոցեսի և թուրքական դաժանությունների մասին, դեպքերի ականատես ու ժամանակակից Յ. Պողոսյանը շարունակում է պատմել. ***«Սեֆերպերլիքը, mobilisation,*** բառ մըն և Թուրքիո մեջ, որ ամեն տգետ թուրք կամ քուրդը աչքը ***գոց գիտե,*** և որը հավասար է սարսափի, կաշառակերության, անիրավելու և քայքայումի:

Բոլոր այրերը, իսլամ կամ ոչ իսլամ, առանց որևէ կարգի և կանոնի, 20-45 տարեկան, խումբերով հավաքել, զորանոցներու, մզկիթներու, պանդոկներու մեջ պարզապես խմբել, անոթի, ծարավ և վրա-գլուխ բաց, օրերով արգելափակել, 2-5, 10 ղուրուշ կաշառք տալով պահակ ոստիկաններու կամ զինվորական հսկիչների թույլտվությամբ տուն դառնալ, անպաշտպանները և անողոքները միայն ամենեն առաջ դեպի բանակատեղիները ղրկելով, ազդեցիկ եղողներն ու պաշտպան ունեցողները, միշտ ***թեհծիլ*** ընել, հետածգել, կաշառք չի տվող կամ ***քիպար*** բառով միջոց չապահովող արհեստավոր կամ վաճառական դասին քանի մը օր իսկ պայման չտալ... կնշանակե քայքայել ժողովուրդներու և երկրին տնտեսական կյանքը»[2]:

Մանրամասն նկարագրվում է, որ երիտթուրքական մարդագայլերը գերադասում էին զորահավաքի ենթարկել ավելի քան հայ գրագետ ու վաճառական դասերին, քան սովորական երկրագործներին: Զինվորագրումից հետո հայերի շինությունները, ընդհուպ մինչև կանոնավոր բնակարանները բռնազավթում էին, վերածում զինվորական պահեստների, հիվանդանոցների, թուրք հրամանատարների կացարանների: Ապա շարունակում. «Մեր շրջանին մեջ, մեծապես փույթ կտարվեր, որ հայ զինվորները դեպի Սուրիա, Միջագետք և կամ Պաղեստին ղրկվին և հայ բժիշկներն ու դեղագործները ավելի շուտով զինվորագրվեցան, քան իրենց թուրք արհեստակիցները, որոնք կառավարության և պաշտոնական հիվանդանոցներու պաշտոններով օգտվեցան...»[3]:

Զորահավաքի սարսափազդու դեպքերի մասին, անհավատալի ու ծանրազդու փաստեր է հրապարակում, եղեռնի թույնը մինչև վերջին մրուրն ըմպած խարբերդցի

---

[1] *Հըրպըրդ էտըմզ Կիպընզ*, ժամանակակից պատմության սևագույն էջը. 1915-ի հայկական դեպքեր, իրողություններ և պատասխանատվություններ. էջ 28-29:

[2] *Յ. Պ. Պողոսյան*, նշված աշխատությունը, էջ 32-33:

[3] Նույն տեղում. էջ 33-34:

գրագետ ***Վահե Հայկը,*** որը հեղինակն է «Խարբերդը և նրա ոսկե դաշտը» ծավալուն հուշապատում-հատորյակի, պատվավոր անդամը Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի: Նա պատմում է, որ զորահավաքից անմիջապես հետո «նորագիր հայ զինվորներու, մասնավորապես դպրոցական և ուսյալ երիտասարդներու ձեռքեն զենքերը առնվեցան: Անոնց ամենքին էլ խառնեցին գործավորական բանակին ***«ամելե թապուրի»*** և տարվեցան ամայի լեռներն ու ձորերը ճամբաներ շինելու համար»[1]:

Հայ զինվորներից մեկը, որը հրաշքով փրկվել էր մահվանից, պատմում է. «Մենք ճամբաներ չենք շիներ հոն, այլ խրամներ կբանանք, այսինքն երկար գերեզմանի փոսեր, որոնց մեջ թաղվելու համար... Մեր աշխատանքները պատերազմի մոտ տեղերու վրա չեն ըլլար, այլ բոլորովին ամայի վայրեր. քիչ մը հաց կստանանք միայն, ջուրն ալ եթե մոտ է հազիվ կրնանք ումպ մը խմել: Մեկ բառ եթե խոսինք հրացանի հսկա կոթը կիջնե մեր գլխուն և մենք կիյնանք մեր փորած փոսին մեջ, մեր ընկերներն ալ հող կլցնեն: Ատ կըլլա մեր վերջավորությունը... Քանիներն այդպես թաղվեցան»[2]:

Հայ ժողովրդի ***ցեղասպանությունը*** մեկ անգամ ևս հաստատում է թուրք պետական գործիչ ***Նայիմ բեյը:*** Նա եղել է արևմտահայերի բռնագաղթեցման Հալեպի կոմիտեի քարտուղարը, հավաքել, դասդասել է անմարդկային այդ ոճիրին վերաբերող բազում վավերագրերը, որոնք ստորագրել էին ներքին գործերի նախարար հայակուլ ***Թալեաթը,*** նրա կամակատար գեներալ-նահանգապետ ***Մուստաֆա Աբդուլհալիքը,*** աքսորման գլխավոր կոմիտեի ներկայացուցիչ ***Աբդուլահադ Նուրի բեյը*** և այլոք: Դրանց գումարելով իր սեփական դիտարկումների գրավոր հուշապատումները, ***Նայիմ բեյը*** փաստորեն ստեղծել է մի այնպիսի մեղադրական եզրակացություն, որին որևէ այլ աշխատություն փոխարինել դժվար թե կարողանա:

Մենք թուրքերին պատասխանում ենք ոչ թե ***թուրքավարի,*** այլ ***թուրքերի լեզվով ու ընձեռած փաստաթղթերով:*** Դա ***Նայիմ բեյի*** վերոհիշյալ հաստափոր թղթապանակն է, որը նա տրամադրել է հրապարակախոս, նկարիչ Արամ Անտոնյանին: Վերջինս, թուրքական եռյակի անմարդկային ոճրագործության մութ ծալքերը բացող փաստերը գրեթե անփոփոխ հրապարակել է վերջում կցելով դրանց լուսապատճենները[3]:

Նայիմ բեյի ընձեռած փաստերի և փաստաթղթերի պատմաքաղաքական վերլուծությամբ զբաղվել են Ջ.Ս. Կիրակոսյանը[4], Ռ.Գ. Սահակյանը[5], Ծ.Պ. Աղայանը[6], Գ.Ահարոնյանը[7], Մ.Գ. Ներսիսյանը[8] և այլոք: Նրանք տարբեր տեսանկյուններից արժեքավորել են թուրք պաշտոնյայի պահպանած և հայ մտավորականին հանձնած վա-

---

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 560:

[2] Նույն տեղում, էջ 561:

[3] Գիրքը առաջին անգամ լույս է տեսել ֆրանսերենով 1920 թ., տե՛ս ***Aram Andonian,*** Documents officiels concernant les massacres armeniens. Reproduction photographique d'un grand nombre de documents, Paris, 1920: Նույն թվին գիրքը հրատարակվեց անգլերենով, այն էլ Լոնդոնում: Տե՛ս ***Aram Andonian,*** The Memoirs of Naim Bey. Turkish Official Documents Relating of the Deportations and Massacres of Armenians, London, 1920. Քիչ անց արաբատառ վավերագրերը քարգմանվեցին հայերենի և լույս տեսան հայոց լեզվով: Տե՛ս ***Արամ Անտոնյան,*** Մեծ ոճիրը, Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, պաշտոնական հեռագրեր, Բոստոն, 1921: Այն լույս տեսավ մի քանի անգամ, այդ թվում նաև Երևանում:

[4] ***Ջ. Ս. Կիրակոսյան,*** Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, 1983, էջ 20-22:

[5] ***Р. Г. Свакян,*** Документы младотурецкого комитета о геноциде западных армян 1915-1916 гг., "Известия АН Арм. ССР, Общественные науки, Ереван, 1965, N 3":

[6] ***Ծ. Պ. Աղայան,*** Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 487-490:

[7] «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1095-1096:

[8] «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, ***Մ. Գ. Ներսիսյանի*** խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 559-577, 736-737:

վերագրերը, դրանցով իսկ, գուցե ոչ ավելորդ անգամ, այսօրվա թուրք պատմաբաններին հիշեցնելով, թե իզուր է ձեր համառությունը ցեղասպանությունը չընդունելու գործում:

Օտար սկզբնաղբյուրների, իրենց իսկ թուրք գործիչների վկայությունները, աներկբա են դարձնում, որ հայ ժողովրդի կոտորածները եղել են զանգվածայնորեն, ***կազմակերպվել և իրողության են վերածվել պետական մակարդակով:*** Այդ պարզ ճշմարտությունը այսօր ժխտվում է, փաստերն աղավաղվում են, երբեմն ցույց տրվում ծուռ հայելու միջով:

Հետևաբար, մենք այստեղ փորձելով ներկայացնել Մեծ եղեռնի պատմությունը, անհրաժեշտ չենք համարում բացել նրա մութ ծալքերն ամբողջապես: Դա նախ ծավալով հատորներ կպահանջի, մանավանդ որ այդ մասին ստեղծվել է համապատասխան լեռնակուտակ գրականություն:

Սույն և հետագա շարադրանքով մենք գերխնդիր ունենք ***մեկ անգամ ևս ապացուցելու, որ եղածը ցեղասպանություն էր, և կատարվածի համար պատասխանատուներ և հաշվետուներ պիտի լինեն:*** Այդ ամենը պիտի քննի միջազգային դատական ատյանը (ինչպես կատարվեց հիտլերյան ֆաշիզմի նկատմամբ) և կայացնի արդարացի, անկողմնակալ որոշում:

2. Արևմտահայության բռնագաղթեցումն ու կանգվածային ջարդերը 1915 թվականին

Առաջին աշխարհամարտը հարմար ծխածածկույթ էր մի կողմից՝ «Թուրանական մեծ պետության ստեղծման», մյուս կողմից՝ պանիսլամիստական զառանցական ծրագրերն իրողության վերածելու ճանապարհին խոչընդոտ դարձած, հայ ժողովրդին ***հիմնովին ոչնչացնելու համար:*** Իթթիհատի գաղափարաբաններն ու պետական այրերը բացարձակ հայտարարում էին, որ իսլամապաշտ երկրների արանքում ***«սեպի նման»*** խրված հայն ու Հայաստանը, բացարձակորեն խանգարում են Թուրքիայի և Ռուսաստանի կայսրության գերագահության տակ ապրող իսլամ բնակչության միածուլմանը, Մուհամեդի երկրպագուների արշավող ծիերի վրնջոցի ձայնը Աֆղանստան ու Հնդկաստանից այն կողմ հասցնելուն: Դեռևս 1914 թվականի փետրվարին երիտթուրքերի կենտրոնական օրգան համարվող «Իկթամ» թերթուկը, առաջնորդողում պատգամում էր. «Արևելյան Անատոլիայում (այսինքն Արևմտյան Հայաստանում - Հ.Ղ.) ***բնակվող բոլոր հայերին աքսորել Մեսոպոտոմիա, նրանց տեղը բնակության բերել*** մուսուլմաններին»[1]:

Մահմեդական ժողովուրդների միավորման հիվանդագին երևույթը հանգիստ չէր տալիս ***ձեր*** թե ***երիտասարդ*** թուրքերին այդ օրերին, չի մոռացվում նաև այսօր, ժամանակակից Թուրքիայում: Դրա անժխտելի վկայություններից է 1918 թ. Բաթումի կոնֆերանսում, Թուրքիայի ներկայացուցիչ Վեհիբ փաշայի ցինիկ այն հայտարարությունը, որով դիմելով հայկական պատվիրակությանը՝ ասաց. ***«Դուք տեսնում եք, որ ճակատագիրը մղում է Թուրքիային արևմուտքից դեպի արևելք: Մենք հեռացանք Բալկաններից... բայց մենք պետք է տարածվենք դեպի***

[1] **ЦГВИАРИ**, фонд 2000, опись 1, дело 38, лист 82-84: Տե՛ս նաև ***Ե.Ղ. Մարգսյան,*** Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասում, Երևան, 1964, էջ 229-230:

արևելք: Այնտեղ է մեր արյունը, մեր կրոնը, մեր լեզուն: Դա տարերային հակում է. մեր եղբայրները Բաքվում են, Դաղստանում, Թուրքմենստանում ու Ադրբեջանում: Մենք պետք է ճանապարհ հարթենք դեպի մեր եղբայրները և դուք, հայերդ, մի կանգնեք մեր ճանապարհին»[1]:

Հայկական ջարդերի կազմակերպիչներից մեկը դոկտոր Բեհաեդդին Շաքիրը, նույն կոնֆերանսում հայտարարեց. «Հայերը մեր պանիսլամական ու պանթուրքական սրբազան գաղափարների ճանապարհին են կանգնել, և մենք անխուսափելիորեն բախվում ենք նրանց հետ: Դա բարձր է, դուրս է մեր անձնական զգացմունքներից ու տրամադրություններից: *Մենք ստիպված ենք մեր ճանապարհին տարերայնորեն ոչնչացնել այն ամենը, ինչ որ արգելք է հանդիսանում մեր սրբազան ազգային իդեալների ի կատար ածելու համար»*[2]:

Ստամբուլում հրատարակվող «Նյու-օրիենտ» անգլիական թերթը, Հայաստանի մասին գրում էր. «Այդ երկիրը գտնվում է հենց այն ճանապարհի վրա, որը տանում է դեպի Կովկաս և Կենտրոնական Ասիա, ուր ձգտում էին երիտթուրքերը: Ահա այդ հանգամանքն ավելի, քան թշնամանքի զգացումը, այն բանի պատճառ դարձավ, որ մեծ պատերազմի ժամանակ թուրքերը ձգտում էին ոչնչացնել հայ ժողովրդին»[3]:

Կասկածից վեր է, որ դեռևս պատերազմը չսկսված, պանթուրքիստները խնամքով ու գաղտնապահությամբ նախապատրաստվում էին հայ ժողովրդի ցեղասպանության: 1913 թ. դեկտեմբերի 29-ին, Կ. Պոլսի ռուսական դեսպան Գիրսը, արտգործնախարար Սազոնովին հեռագրում էր (N 1134). «Ադամովը հաղորդում է Էրզրումից. «Գաղտնի ժողովները քաղաքում շարունակվում են ամբողջ ուժով, ընդ որում դրանցում բացեիբաց սկսել են *խոսել հայկական կոտորածի մասին: Մոլլաների հրամանի համաձայն մուսուլմաններն սկսել են սպիտակ չալմա փաթաթել գլխներին:* Ըստ լուրերի, ամեն ինչ պատրաստ է կոտորածի համար, և սպասում են միայն մայրաքաղաքից տրվելիք ազդանշանին: Իթթիհատականները բացեիբաց ստորագրություններ են հավաքում վերահսկողության դեմ գրված բողոքի տակ, կանխապես տերությունների վրա դնելով, բարենորոգումների գործում նրանց միջամտության դեպքում, տեղի ունենալիք կոտորածների մեղքը: Տրամադրությունը տագնապալի է, և ցանկալի կլիներ վճռական միջոցներով կանխել կոտորածը, որ ծեռնտու է առաջ մեր հակառակորդներին Ռուսաստանի նկատմամբ հայերի համակրանքը շեղելու համար»[4]:

Երիտթուրքերը քայլ առ քայլ մոտենում էին Մեծ եղեռնի կենսագործմանը: Մանավանդ որ արդեն Եվրոպան պառակտվել էր երկու բանակի, արդեն ամենուր պատերազմի վառոդի հոտ էր զգացվում: Թուրքերը, գերմանացիների հետ այդ հոտն ավելի շուտ էին առել և, գաղտնի ժողովների թիվը շատացնելով, նախապատրաստվում էին մեծ ոճիրին:

Թուրք ջարդարարների հայասպան քաղաքականությունը հմտորեն բացահայտել և հավուր պատշաճի դատապարտել է «Իթթիհադ վե թերաք» կուսակցության կենտրոնական կոմիտեի նախկին անդամներից մեկը *Մեվլան զադե Ռիֆատը:* «Թուրքական հեղափոխության մութ ծալքերը»[5] հուշապատման բնույթի նրա աշխատու-

---

[1] "Заря Востока", 1925, 24/11, N 812:

[2] Նույն տեղում, 1925, 24/II, N 809:

[3] ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 200, գործ 241, թերթ 681: Տե՛ս նաև *Ե.Պ. Սարգսյան,* նշված աշխատությունը, էջ 231:

[4] **АВПРИ,** Политархив, дело 3465, лл. 125-126.

[5] *Մեվլան զադե Ռիֆատ,* Թուրքական հեղափոխության մութ ծալքերը, թարգմանություն արաբատառ թուրքերենից (Mevlan Zade Rifat, **Turkiye inkilabinin iç yüzü,** Halep, 1929). Բեյրութ, 1938: Տե՛ս *Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան,* Հայ ժողովրդի նոր պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963: Հետագա էջերի թարգմանությունը վերցված է «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում» ժողովածուի 482 և հաջորդ էջերից:

թյան արժեքը վեր է գիտականից ու վավերականից, քանզի հեղինակը ժամանակին մասնակցել է այն բոլոր նիստերին, որտեղ թուրք դահճապետերը որոշումներ էին կայացնում հայ ժողովրդի ողջակիզման վերաբերյալ:

Ասում են անտառ կտրող կացնի կոթը փայտից է լինում: Հետևելով ժողովրդական այդ իմաստությանը, մենք թուրք կեղծարարների գրպարտություններին փորձենք պատասխանել իրենց ***ազգությանը պատկանող, մահմեդական կրոնը պաշտող Մեվլան զադեի*** բերանով, նպատակ ունենալով ցույց տալ, թե հայ ժողովրդի նկատմամբ եղածը ոչ թե ջարդեր են եղել, այլ վաղօրոք որոշված, ապա պատերազմի օրերին կիրառված ***գենոցիդ***-ցեղասպանություն, ***արմենոցիդ***-հայասպանություն:

Այդ շատ կարևոր եղելությունը մեկ անգամ ևս ապացուցելու նպատակով, վկայակոչենք Մեվլան զադե Ռիֆատին: ***1914 թ. հունվար ամսին,*** այսինքն Առաջին աշխարհամարտից դեռևս ***ութ ամիս առաջ,*** Սալոնիկից Ստամբուլ տեղափոխված թուրքացած հրեաների քառյակը, հավաքվել էր ժողովի խնդիր ունենալով հստակեցնել երիտթուրքերի բռնելիք ընթացքը հայ ժողովրդի նկատմամբ:

Հունվարյան ***գաղտնի*** ժողովը բացասական իմաստով ճակատագրական նշանակություն ունեցավ արևմտահայության կյանքում: Այդ ժողովին, ունկնդրի կարգավիճակով, մասնակցում էր նաև իթթիհատի կենտկոմի անդամ Մեվլան զադեն, որը սղագրելով այնտեղ կայացված վճիռների տեքստերը, հետագայում, արաբատառ թուրքերենով հրատարակել և ապագա սերունդներիս է թողել անկրկնելի փաստեր: Ի նկատի ունենալով այդ որոշումների կարևորությունը, մենք նպատակահարմար ենք գտնում դրանք կրկնել ամբողջությամբ, որպեսզի հայ, առավել ևս օտար ընթերցողը պարզ պատկերացում կազմի, թե թուրքերն ինչպես են վարվել անպաշտպան հայ ժողովրդի հետ:

Մեվլան զադեն գրում է, որ «Հայերի տեղահանությունն ու կոտորածը չափազանց վայրագ և ***ցավալի քաղաքական հանցագործություն է...***

«Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարները կենտրոնական կոմիտեում կայացած իրենց մի գաղտնի խորհրդակցությունում որոշում էին կայացրել առանց սեռի ու տարիքի խտրության և ***ոչ մի մարդ կենդանի չթողնելու պայմանով կոտորել և բնաջնջել հայերին:*** Այդ որոշումը իրականացնելու համար նախագահությունը ստեղծեց դոկտ. Բեհաեդդին Շաքիր, դոկտ. Նազըմ և հանրակրթական մինիստր Շյուքրի բեյերից կազմված մի հանձնաժողով՝ տալով նրան «Երեքի գործադիր կոմիտե» անվանումը, որը «Թեշքիլաթի մախսուսա» (հատուկ կազմակերպություն) անվան տակ սկսեց բանտերից հավաքագրել քրեական հանցագործներին և ստեղծել չեթեների հրոսակներ:

Համառոտ նկարագրությունը չի կարող իրական պատկերացում տալ այդ ահավոր ողբերգության մասին:

Եթե ես կարողանամ մոտավորապես նկարագրել, թե ինչպես տեղի ունեցավ «Միություն և առաջադիմություն» կուսակցության այդ հանցագործ արարքը, նրա պատմական այդ գաղտնի խորհրդակցությունը, ազդեցիկ անձանց կատարած առաջարկություններն ու ծավալած վեճերը, բացահայտել դրանք թելադրած քաղաքական ու հասարակական նկատառումները, նրանց «գիտական» կարողությունները, ապա դրանով իսկ ես ծառայություն մատուցած կլինեմ պատմությանը՝ ի հայտ բերելով այդ որոշման դրդապատճառներն ու իսկական մեղավորներին:

Իրականում տեղի ունեցած դեպքերն ու պատահարները ես գրի եմ առել իրավասու և իրազեկ անձանց հաղորդումների ու իմ ընթերցած մեծ թվով գրքերի հիման վրա: Ուստի, որպեսզի ավելի լավ ներկայացնեմ հայկական իրադարձությունները, տեղի ունեցած այդ սահմռկեցուցիչ ողբերգությունը, դրանց կազմակերպիչներին ու

մեղավորներին, նպատակահարմար եմ գտնում արձանագրության ձևով ճշտիվ վերարտադրել այդ խորհրդակցությունը[1]:

Թալեաթի նախագահությամբ անցկացվող գաղտնի խորհրդակցությունում առաջինը ձայն տրվեց դոկտոր Նազըմին: Դոկտոր Նազըմը դողդոջուն ձայնով սկսեց շարադրել իր կարծիքը խնդրի շուրջը...

Դոկտոր Նազըմ. Խոսքով փլավ չեն եփում: Պետք է գործել արագ և վճռականորեն: Հայերը վտանգավոր են, ինչպես թարախապալարը. սկզբում այդ թունավոր վերքը թվում է անվտանգ, բայց եթե այն ժամանակին չվիրահատվի փորձված վիրաբույժի կողմից, ապա անպայման կհանգեցնի մահվան: Անհրաժեշտ է գործել և գործել արագ: Եթե բավարարվենք մասնակի կոտորածով, ինչպես եղավ 1909 թվին Ադանայում և այլ շրջաններում, ապա դա օգուտի փոխարեն վնաս կբերի, քանի որ վտանգ կստեղծենք արթնացնելու այն տարրերին, որոնց նույնպես մտադիր ենք վերացնել ճանապարհից արաբներին և քրդերին. վտանգը կեռապատկվի, և մեր մտադրության իրականացումը կդժվարանա: ***Ես մի քանի անգամ այս ժողովում ձեզ ասել եմ և այժմ էլ կրկնում եմ. եթե մաքրագործումը համընդհանուր ու վերջնական չլինի, ապա օգուտի փոխարեն վնասն անխուսափելի է: Հայ տարրը պետք է հիմքից արմատախիլ անել, որպեսզի ոչ մի հայ չմնա մեր հողում և մոռացվի բուն այդ անունը:*** Հիմա պատերազմ է, այսպիսի հարմար առիթ այլևս չի լինի: Մեծ տերությունների միջամտությունն ու համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքները կմնան աննկատ, իսկ եթե նրանք իմանան էլ, կկանգնեն կատարված փաստի առաջ, և դրանով իսկ հարցը կսպառվի: Այս անգամ մեր գործողությունները ***պետք է հայերի համընդհանուր բնաջնջման բնույթ կրեն. անհրաժեշտ է ոչնչացնել բոլորին՝ մինչև վերջին մարդը:***

Հնարավոր է, որ ձեզանից ոմանք դա գազանություն համարեն, ասեն ի՞նչ վնաս կարող են պատճառել ծերունիները, երեխաներն ու տկարները, որ հարկ լինի նրանց ոչնչացնել: Թող պատժվի միայն նա, ով մեղավոր է. իսկ տանը նստած կանանց, ծերունիների ու կրծքի երեխաների վրա հարձակվելը բարբարոսություն է ու վայրենություն և հակասում է քաղաքակրթության ու մարդասիրության օրենքներին: Թե իբր դոկտոր Նազըմը չափազանցնում է ու դատում անխոհեմ:

Խնդրում եմ ձեզ, էֆենդիներ, մի եղեք այդքան փափկասիրտ ու գթասիրտ, դա վտանգավոր հիվանդություն է: Հիմա պատերազմ է: Ես ձեզ հարցնում եմ՝ մի՞թե պատերազմը բարբարոսություն չէ: Ինչո՞վ է մեղավոր հողագործը, որը գնացել է հայրենի գյուղից ու սպանվել ռազմաճակատում, կամ վաճառականը, որը թողել է իր կրպակը, որ զոհվի արկի պայթյունից: Նրանք ի՞նչ հանցագործություն են կատարել, որ զոհվում են այդպիսի ահավոր մահով: Դաժանությունը բնության օրենքն է, այն կարելի է ընդունել կամ մերժել միայն դատողություններում: Մի՞թե կենդանի էակները, նույնիսկ բույսերը չեն ապրում ուտելով ու ոչնչացնելով միմյանց: Միգուցե դուք ասեք. «Արգելեցեք նրանց դա, չէ որ դա բարբարոսություն է»:

Հասան Ֆեհմի: Այո, էֆենդի, ես էլ եմ ծանոթ ուժեղի կողմից թույլին խժռելու այդ օրենքին, որը հայտնի է կենսաբանության մեջ:

Դոկտոր Նազըմ (շարունակելով): Լավ խորհենք, թե ինչու հեղափոխություն արեցինք, ի՞նչ նպատակ էինք հետապնդում: Ես չեմ ուզում մտածել, թե մեր նպատակն էր վերացնել սուլթան Համիդի մարդկանց և գրավել նրանց տեղը: Ես ձեր ընկերը, զինակիցն ու եղբայրն եմ դարձել, որ վերածենք թրքությունը: ***Ես ուզում եմ, որ այս հողի վրա ապրի ու լիակատար տեր ու տնօրեն լինի թուրքն ու միայն թուրքը: Թող անհետանան բոլոր ոչ թուրք տարրերը, ինչ ազգության և կրոնի էլ որ***

[1] Խորհրդակցությունը տեղի է ունեցել 1914 թ. հունվար ամսին:

նրանք պատկանելիս լինեն: Մեր երկիրը պետք է մաքրել ոչ թուրք տարրերից: Կրոնն ինձ համար իմաստ ու նշանակություն չունի: Իմ կրոնը Թուրանն է:

Դոկտոր Բեհաեդդին Շաքիր (բառերն արտաբերում է հատ-հատ ու շեշտված):

Եթե մի այնպիսի խեղճի մեկը, ինչպիսին Մովսեսն էր, մի այնպիսի հալածական, ինչպես Հիսուսը, և մի այնպիսի որբ, ինչպես Մուհամմեդը, կարողացան աշխարհում ստեղծել առանձին մեծագույն կրոններ, ապա ինչու մենք՝ ուժեղ կամքի ու մտքի տեր մարդիկս, չենք կարող ստեղծել և տարածել Թուրանի կրոնն ու գաղափարը:

Հասան Ֆեհմի: Թող աստված ների այդ խոսքերի համար (վախվորած նայում է շուրջը): Չլինի՞ թե սատանաները վրա տան մեզ:

Կարա Քեմալ: Խոջա էֆենդի, ի՞նչ եք քրթմնջում, աղոթո՞ւմ եք: Աղոթե՛ք գլխիս վրա, որ գլխացավս անցնի:

Դոկտոր Նազըմ (շարունակելով): Վայ մեզ, եթե այդ մաքրագործումը վերջնական չլինի, եթե նրանց չոչնչացնենք լիովին. այդ դեպքում վաղը մենք չենք կարող զբաղեցնել մեր տեղերը. նրանք կբռնեն մեր ձեռքից և այստեղից դուրս կշպրտեն և, դրանով էլ չբավարարվելով, կսպանեն բոլորիս: *Հեղափոխությունը խղճահարություն չի ճանաչում: Նա հետամուտ է իր նպատակին և փշրում է իր ճանապարհին եղած բոլոր խոչընդոտները:*

Դոկտոր Բեհաեդդին Շաքիր: Մենք՝ հեղափոխականներս, հանուն թուրք ազգի ստեղծելով օսմանյան պետություն ազգայնականության սկզբունքներով, ստեղծեցինք «Իթթիհադ վե թերաքքի» իշխանությունը: Մեր ազգային մշակույթում մենք կարող ենք թույլ տալ միայն թուրքական հունդի ծաղկում: Մենք պարտավոր ենք մեր հայրենիքը մաքրել մնացած օտար ժողովուրդներից, արմատախիլ անել նրանց որպես մոլախոտերի: Սա է մեր հեղափոխության նպատակն ու նշանաբանը: Այդ իսկ պատճառով Իթթիհադի իշխանությանը մենք տվեցինք «Նոր Թուրքիայի կառավարություն» անվանումը, զրոյի հավասարեցնելով «օսմանցի» անվանումը: Եվ իրոք, ի՞նչ արժեք կարող էր ունենալ այն: Ի՞նչ կարող է ավելանալ օսմանյան անունով հիմնադրված պետության մշակույթում: Տարբեր ազգությունների ներկայացուցիչները օսմանցու միասնական անվան ներքո ստեղծել են մի զարմանալի խառնուրդ, որը, եթե դրան մոտենանք խիստ գիտականորեն, նույնիսկ չի էլ կարելի պետություն անվանել: Լավագույն դեպքում կարելի է ասել, որ սա հայրենական կալվածք է, որն Օսմանը ժառանգություն է թողել իր որդիներին: Բաղկացած լինելով այլազան տարրերից օսմանյան խառնուրդը չունի իր ազգային դեմքը, այն նման է տարբեր ընտանի կենդանիների կուտակմանը մի տնտեսության մեջ: *Հայերը, հույները, բուլղարները, բոսնիացիները, պոմակները, սերբերը, ալբանացիները, քրդերը, չերքեզները, արաբները, վրացիները, լազերը՝ այս բոլոր տարրերն իբրև թե կազմում էին մի ամբողջություն օսմանցի անվամբ: Պետք է հրաժարվել նման հասկացությունից: Ինչպես որ անասնաբակում սագը, բադը, հավը, ոչխարը, կովը, այծը, եզը, գոմեշն ու ձին ապրում են իրար կողքի և չեն տեսակափոխվում, ճիշտ այդպես էլ այդ ազգությունները մնացել են մեր հողի վրա՝ չփոխելով իրենց ազգությունն ու լեզուն:* Բարենպաստ հանգամանքների դեպքում նրանք նույնիսկ նեղում էին թուրքերին և անջատվում, զավթելով նրանց հողերը, ինչպես արեցին, օրինակ, ռումինները, սերբերը, բուլղարները և հենց վերջերս ալբանացիները:

Կարա Քեմալ: Թող կորչե՛ն...

Հասան Ֆեհմի: Ձերդ բարձրության բարեհաճ թույլտվությամբ և աստծո օգնությամբ ես նույնպես, ինչպես որ իմ դոկտոր եղբայրները, կցանկանայի մի քանի խոսք ասել, բայց ոչ թե արևմտյան գիտության տեսանկյունից, այլ հենվելով արևելյան գիտության և սուրբ օրենքի շարիաթի վրա, որի համաձայն, այն ամենը, ինչ վնասա-

կար է, պետք է կործանվի: *Ճշտիվ ապացուցված է, որ հայերը վնաս են պատճառում: Քանի որ նրանք ապստամբեցին մեր կուսակցության՝ «Իթթիհադ վե թերաքքիի» դեմ, ամոթալի փախուստի մատնեցին ազատության հերոս էնվեր փաշայի փեսային, ապա պետք է առանց տատանվելու կոտորել նրանց բոլորին մինչև վերջին մարդը:* Անգամ ես պատրաստ եմ տալ սրբազան վճիռը ֆեթվան: Մի կարծիք, թե ձեր առջև անփորձ փաթթոցավոր մի սոֆթա է: Իմ մեջ խոսում է երախտագիտությունը. ազատության շնորհիվ ես դարձա խոջա, մեդրեսեների 50 հազար սաների հոգևոր ուսուցիչ եմ: Ես հանգում եմ այս եզրակացության, քանի որ վնասը համընդհանուր է, ապա դրանից խուսափելու համար թույլատրելի է մասնակի վնաս հասցնելը: Իրավաբանական սկզբունքի համաձայն, նկատի չեն առնվելու ծերունիներ են, երեխաներ, թե կանայք, հաշմանդամներ են, թե տկարներ. բոլորն սպանվելու են և բնաջինջ են արվելու: Գլխումս միտք ծագեց բնաջնջման դյուրին եղանակի մասին: *Ձեր թույլտվությամբ հիմա կշարադրեմ այն: Հիմա պատերազմի մեջ ենք. զենք կրելու ընդունակ բոլոր հայերին կուղարկենք կրակի առաջավոր գիծ՝ կռվելու ռուսների դեմ, իսկ հետևից կրակի տակ կառնենք հատկապես դրա համար մեր ուղարկած ուժերի կողմից և բոլորին կբնաջնջենք: Տանը մնացած տկարներին, կանանց ու երեխաներին մեր հրամանով անմիջապես կվերացնեն մեր հավատացյալները, որոնք կկողոպտեն նրանց ունեցվածքն ու կառնեն կտանեն աղջիկներին: Իմ այս նկատառումը կընդունվի՞ արդյոք:*

Կարա Քեմալ: Կեցցե՛ս, Խոջա էֆենդի: Եղբայրներ, տեսա՞ք, ահա մեզ արժանի շեյխ-ուլ-իսլամ:

Էնվեր (լրջորեն): Բնաջնջման եղանակի մշակումը գործադիր մարմնի պարտականությունն է:

Ջավադ: Եզրափակենք: Դոկտորներ Նազըմի, Բեհաեդդին Շաքիրի և նույնիսկ խոջա Հասան Ֆեհմիի բացատրությունները բավականաչափ լույս սփռեցին հարցի վրա... *Մինչև վերջին մարդը հայերի բնաջնջումը որչափ որ անհրաժեշտ է մեր ազգային քաղաքականության համար, նույնչափ էլ կարևոր է թուրքերի տնտեսական իշխանությունը հիմնելու համար: Անցնենք քվեարկության...*

Թալեաթի առաջարկությամբ քվեները հավաքվեցին ու հաշվվեցին: Արդյունքները ցույց տվեցին, որ *բոլոր ներկա գտնվողները միաձայն քվեարկել էին ընդհուպ* մինչև վերջին մարդը հայերին իսպառ բնաջնջելու օգտին»[1]:

Այսպիսով մինչև *ապրիլյան դեպքերը,* իթթիհատականները «տեսականորեն» հիմնավորել էին հայերի ցեղասպանության անհրաժեշտությունն օսմանյան կայսրության և թուրք ու իսլամապաշտ մյուս ժողովուրդների համար: Վաղօրոք պաշտոնազրկել էին հայ այն երևելիներին, որոնք այս կամ այն մեթոդներով պաշտոնի էին հասել: Հավաքել էին հայերի մոտ եղած փոքրաքանակ տաք, ապա նաև սառը զենքերը: Բանակ զորակոչման պատրվակի տակ, ժողովրդից անջատել էին նրա երիտասարդ, առողջ, *պաշտպանունակ* հատվածը, վերջիններիս մաս առ մաս, երբեմն ամբողջապես ֆիզիկապես ոչնչացրին: Ըստ որում՝ սպանությունները կատարվում էին աներևակայելի դաժանություններով:

Այս ամենը կատարվում էր քաղաքակիրթ մարդկության բաց աչքերի առաջ և թուրքերը, կարծես թե ստուգայց էին անցկացնում, համոզվելու հետագա քայլերի հաջողության համար: Այո՛, նրանք համոզվեցին, որ պատերազմ է, ամեն մեկը զբաղված է իր հոգսերով և դրանից ոգևորված անցան գլխավոր հարվածին՝ *Մեծ եղեռնին:*

---

[1] ***Mevlan-zade Rifat.*** Türk Inkilabının Iç yüzü. Halep, 1929, s. 83-93: Տե՛ս նաև «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում»: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, *Մ.Գ. Ներսիսյանի* խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 494-499:

1915 թ. մարտի 9-ին, Հալեպի կառավարությանը (իշխանությանը կամ կուսակալությանը) ուղղված Թուրքիայի ներքին գործերի նախարար ***Մեհմեդ Թալեաթի*** հրամանում (խիստ գաղտնի) արդեն որոշակի կարգադրություն էր արվում ***հայերի համընդհանուր ցեղասպանության վերաբերյալ:*** Բերենք հրամանագիրն ամբողջությամբ, առանց ստորակետի փոփոխության:

Այնտեղ կարգադրված էր. «Թուրքիո հողին վրա ապրող հայոց բոլոր իրավունքները՝ գործելու և տևելու բոլորովին ջնջված են: Այս նկատառումով կառավարությունը իր վրա կառնե բոլոր պատասխանատվությունները և հրահանգած է ուստի, որ նույնիսկ օրորոցի մեջ գտնվող երեխաներ չխնայվին: Այդ հրամանագիրներու արդյունքները նույնիսկ մի քանի գավառներուն մեջ արդեն տեսնված են:

Ասոր հակառակ՝ մեզի անծանոթ պատճառներով, բացառիկ միջոցառումներ կիրարկված են ծանոթ մարդկանց նկատմամբ և փոխանակ այս մարդիկը շիփ-շիտակ իրենց աքսորավայրը տարագրելու, Հալեպ թողված են, որով կառավարությունը նոր դժվարությանց առջև կգտնվի: Իրենց և ոչ մեկ գանգատին և փաստարկության առաջ կանխելու է, քշեցեք զանոնք այդ վայրերեն, կիներ և մանուկներ, ինչ որ եղած ըլլան, նույնիսկ երբ անկարող են քալելու և մի՛ թողուք որ մարդիկ զանոնք պաշտպանեն, քանզի իրենց տգիտության մեջ, օգնել ուզողներ նյութական շահեր ավելի բարձր կդասեն քան ազգասիրական զգացումներ և ուստի ի վիճակի չեն գնահատելու կառավարության ավագ քաղաքականությունը որուն վրա կծանրանա:

Քանզի փոխանակ բնաջնջումի անուղղակի միջոցներուն, որոնք կարգ մի տեղեր ի գործ դրված են, գործածված ***խստություն, արագություն,*** բռնագաղթն աճապարելու, նկատած ճանապարհի և խեղճության դժվարությունները, ուղղակի միջոցներ կարելի է գործածել ապահովապես: Ուստի ***աճապարեք գործելու:***

Պատերազմական նախարարութենեն ընդհանուր հրամաններ տրված են բանակի բոլոր հրամանատարներուն՝ չխառնվիլ աքսորի և տարագրության գործադրությանց: Ըսեք բոլոր պաշտոնյաներուն, որոնք այս նպատակի համար պիտի կոչվին, որ պարտավոր են մեր իրական միտքը-կամքը ի կատար հանել, առանց վախնալու պատասխանատվութենե: Ամեն շաբաթ ձեր գործառնության մասին ծածկագիր տեղեկություններ հաղորդեցեք մեզ:

Թալեաթ»[1]***:***

1915 թ. մարտի 15-ին Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանության թարգմանիչ ***Սերաֆիմովը*** արտաքին գործերի մինիստրությանը ծածկագրով հեռագրում էր (N 164). «Հայերի վիճակը Թուրքիայում նշանակալիորեն վատացել է: Բանակում ծառայող բոլոր հայերը զինաթափված են: Զեյթունում, ուր զորաջոկատ է ուղարկված այնտեղ թաքնված դասալիքներին բռնելու համար, ընդհարումներ են տեղի ունեցել, որը հանգեցրել է ռազմական դատարանի հաստատմանը և բնակիչների հետ դաժան դատաստան տեսնելուն: Դերտել ավանի ամբողջ արական բնակչությունը տեղահանված է: Էրզրումի շրջակայքի 17 գյուղերից միայն երեքն են փրկվել: Մնացածները թալանվել են և ոչնչացվել: Երկրով մեկ հայերի ձերբակալություններ են կատարվում: Հենց Կոստանդնուպոլսում բռնված են 14 հնչակյաններ, որոնք հանձնված են ռազմական դատարանին: ***Հայոց պատրիարքարանը խիստ անհանգստացած է ստեղծված դրությունից և վախենում է կոտորածից»***[2]***:***

1915 թ. ապրիլի 3-ին ռուսական դիվանագիտական կորպուսը, Կ. Պոլսից կրկնում

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Հրատարակություն «Զարթոնք» օրաթերթի, Պեյրութ, 1965, էջ 526-527:

[2] **АВПРИ**, Политархив, дело 3504, лл. 18-19, 1915.

էր նախորդ հեռագրի ամփոփած փաստերը, հաղորդելով. «Զանգվածային ջարդերն էրզրումում, Դյորթյոլում, Զեյթունում և շրջակայքում: Արյունալից ընդհարումներ Բիթլիսում, Վանում, Մուշում... Բռնություններ, թալան, սպանություններ Ակնում և ամբողջ Փոքր Հայքում: Ժողովրդի տնտեսական քայքայում... ընդհանուր կոտորած»[1]:

1915 թ. ձմեռը սարսափելի ցրտաշունչ էր, սակայն այն չէր խանգարում պատերազմական գործողությունների զոհառատ ու արյունալի դառնալուն: Թուրքերը կռվում էին երեք ռազմաճակատներով: Եթե ***Ուինստոն Չերչիլի գլխավորած*** Դարդանելի օպերացիան նրանք շահեցին, ապա Արևելյան կամ Կովկասյան բեմահարթակում թողեցին ***հարյուր հազարից*** ավել թիվ կազմող սպանված ու սառած դիակներ: Մեծ Թուրանի ստեղծման միֆը ի չիք էր դառնում, որի անհաջողության մեղքը երիտթուրքերը փաթաթում էին հայերի վզին[2]:

Պատերազմում հերթական անգամ ***պարտվելով***՝ օսմանյան թուրքերը փորձում էին «հաղթանակ» տանել սեփական ժողովրդի դեմ, այսինքն արագացնել ցեղասպանության պրոցեսը:

1915 թ. փետրվար-մարտ ամիսներին արաբական անապատներում, հատկապես ***Դեր Զորում,*** մեծ աշխուժություն էր տիրում: Ամենուրեք նախապատրաստություն էին տեսնում հայերի զանգվածային ջարդերի: «Մեծ ոգևորություն մը կտիրեր պաշտոնական շրջանակներուն մեջ,- գրում է Արամ Անտոնյանը: -Հայերու ցանկերը, որոնք տարին մի քանի անգամ կնորոգվեին, երևան հանված էին նորեն, սրբագրություններ կկատարվեին, հավելումներ կըլլային: Ամբողջ գաղտնի ոստիկանությունը ոտքի վրա էր: Որովհետև հրամանին կսպասեին մեկ օրեն մյուսը»[3]:

Չուշացավ նաև այդ հրամանը: ***Էնվեր փաշայի ստորագրությամբ*** օսմանյան կայսրության բոլոր տեղամասերի զինվորականներին իջեցվեց ներքոհիշյալ կարգադրությունը.

«Ներկայ կացութեան բերմամբ, կայսերական հրամանաւ որոշուած է Հայ ցեղին ամբողջական փճացումը: Անոնց մասին հետեւեալ գործողութիւնները պիտի ըլլան.

1. Մինչեւ հինգ տարեկան մանուկներէն զատ Օսմանեան հպատակ եղող եւ երկրին մէջ գտնուող հայ անունը կրող բոլոր պաշըպօզուքները (ոչ-զինուորականները) քաղքէ դուրս հանուելով պիտի սպաննուին:

2. Կայսերական բանակներու մէջ ծառայող բոլոր հայ անհատները, առանց դէպքի մը տեղի տալու իրենց զօրաբաժիններէն զատելով, ընդհանուրին աչքէն հեռու ծածուկ վայրերու մէջ գնդակահար պիտի ըլլան:

3. Բանակին մէջ գտնուող հայ սպաներն ալ, իրենց պատկանած զօրախումբերու բանակատեղիին մէջ պիտի բանտարկուին մինչեւ իրենց մասին նոր զեկուցում ըլլալը:

Այս երեք տրամադրութիւնները իւրաքանչիւր բանակի հրամանատարութեան հաղորդուած թուականէն 48 ժամ վերջ անոնց գործադրութեան մասին յատուկ զեկոյց մը պիտի ըլլայ: Ասոր համար, անհրաժեշտ նախապատրաստութիւններէն զատ, ոեւէ գործողութեան պէտք չէ ձեռնարկել:

Ընդհանուր հրամանատարի փոխանորդ եւ պատերազմական նախարար ***Էնվեր»***[4]:

Իթթիհատականների կենտրոնական կոմիտեն Էնվերի հրամանը բավարար չհամարելով, ստուգայց կատարեց համոզվելու, թե իրենք արդեն պատրաստ են ***երկու միլիոն հայությանը ոչնչացնելու համար:*** Քառասուն հազարանոց «Թեշքիլաթի մախսուսայի» ղեկավարներ Ատիֆ և Ազիզ բեյերը, գրավոր զեկուցագրերով, հավաս-

---

[1] **ЦГВИАРИ,** фонд 2000, опись 1, дело 3851, л. 94-95, 1915 г.

[2] ***Հրանդ Գանգրունի,*** Ցեղասպան իթթիհատը (1908-1923), Պեյրութ, 1994, էջ 7-11:

[3] ***Արամ Անտոնյան,*** Մեծ ոճիրը, Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Պոսթըն, 1921, էջ 231:

[4] Նույն տեղում, էջ 232-233:

տիացրեցին, որ կազմակերպության «անդամները», արյան ու ավարի ծարավով սպասում են գործողության թույլտվության: Հոգևոր առաջնորդներ մոլլաներն ու սոֆթայիները գլխներին սպիտակ չալմաներ կապած, քաղաքեքաղաք, գյուղեգյուղ ընկած, մոլեռանդ մահմեդական ամբոխին արյունահեղության էին գրգռում, ջարդարարներին խոստանալով գյավուրների ոչ միայն ունեցվածքը, այլև ընտանիքի անդամներին, հատկապես կանանց և աղջիկներին[1]:

Նրանք նույնիսկ հոգ տարան դաշնակից տերությունների, հատկապես գերմանական դիվանագետների հետ բանակցություններ վարելու, վերջիններիս միջոցով Բեռլինից թույլտվություն ստանալու՝ հայկական ջարդեր կազմակերպելու վերաբերյալ: Չուշացավ և այդ թույլտվությունը:

Ստամբուլում գերմանական արտակարգ և լիազոր դեսպան ***Ֆրայեր ֆոն Վանգենհայմը,*** համաձայնեցնելով Վիլհելմ Երկրորդի հետ, թուրքերին քաջալերեց հայերին բռնագաղթեցնել ռուսական սահմանագծի նահանգներից և տարագրել դեպի արաբական անապատները: Յունկերական կայզերությունը, շահագրգռված էր բանիմաց ու ընդունակ հայ բանվորական զանգվածին աշխատեցնել Բեռլին-Բասրա-Բաղդադ երկաթգծի շինարարության վրա: Այուսներին տեղահանելով հայրենի օջախներից Թեշքիլաթի մախսուսայի՝ չեթեների հսկողության տակ հեռացնում էին բնակատեղերից: Նրանց իսկ ձեռքերով փոսեր էին փորել տալիս, ապա այդ խմբին գնդակահարելով, հաջորդ խումբը գալիս էր, սրանց լցնում մեծ գերեզմանափոս, հողով ծածկում և զենքի սպառնալիքի տակ նոր փոսեր փորում և այսպես շարունակ:

Եվ վերջապես թուրքական եռապետները, համոզվելով ներքին և արտաքին իրենց համար նպաստավոր պայմանների առկայության մեջ, որոշեցին սկսել ***Մեծ եղեռնի գործողությունը ողջ կայսրությունով մեկ:*** 1915 թվականի ապրիլի 15-ին Ստամբուլի Եըլդըզ Քյոշք կոչված պալատում (որտեղ շուրջ երեսուն տարի նստել էր Համիդ մարդասպանը) նիստի էին հավաքվել ներքին գործերի նախարար ***Մեհմեդ Թալեաթ փաշան,*** Սարիղամիշից նոր վերադարձած ռազմական նախարար ***էնվեր փաշան,*** «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի քարտուղար ***դոկտոր Նազըմը*** և իթթիհատականների այլ գլխավոր դեմքեր:

Առանց երկար ու բարակ քննարկումների, ընթերցվեց հայերին վերաբերող նախօրոք կազմված հրամանի ընդարձակ տեքստը, ստորագրվեց վերոհիշյալ եռյակի կողմից և բացահայտ ձևով ուղարկվեց այն նահանգների վալիներին, որտեղ հայեր էին ապրում:

1915 թ. ապրիլի 15-ի հրամանը, առաջին այն փաստաթուղթն էր, որով հանձնարարվում էր հայ ժողովրդի տեղահանությունը, ապա զանգվածային ջարդերը երկրի և՛ եվրոպական, և՛ ասիական բոլոր վիլայեթներում: Հրամանագիրը փաստորեն զրպարտչական մի ամբաստանագիր էր, որի մեջ հայ ժողովրդին մեղադրանք էր ներկայացվում «թշնամական բանակներում» (Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա) կամավորական ջոկատներ ունենալու համար, քանզի այդ կամավորները մեծ վնաս էին պատճառում թուրքական զորամասերին: Պակաս կարևոր չէին համարում երկրի ներսում ապրող հայերի ձեռքին ունեցած «անհամար քանակությամբ զենք ու զինամթերքի առկայությունը»: Նրանք չէին նշում, որ այդ զենքն ու զինամթերքն արդեն խլել են հայերի ձեռքից, իսկ զենք կրող, արական սեռի, երիտասարդ առողջ տղամարդկանց տեղահանել և ոչնչացրել էին աքսորի ճանապարհին:

Հրամանագրի հիմնական հատվածում արձանագրված էր. ***«Այսպիսով կառավարությունը և իթթիհատի կենտրոնական կոմիտեն դիմում են ձեզ ու ձեր հայ-***

[1] *Ռուբեն Սահակյան,* Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 5-7:

ռենասիրությանը ու հրամայում են ձեր տրամադրության տակ եղած բոլոր ուժերով աջակցեք «Միություն և առաջադիմություն» տեղական օրգաններին, որոնք ապրիլի 24-ին արևածագի հետ, գաղտնի հրահանգի համաձայն, կձեռնարկեն այս հրամանի կատարմանը»[1]:

Այդ հրամանագրով մահմեդապաշտ թուրքերին կարգադրվում էր. «... Մեր հայրենիքը, ազգը, պետությունը և կրոնը այդպիսի վտանգի հնարավորությունից պաշտպանելու համար, կառավարությունը, որ ներկայացնում է իսլամն ու թուրք ժողովուրդը, և «Միասնություն ու առաջադիմություն» կոմիտեն, ինչ էլ որ լինի, նպատակ ունենալով կանխել որևէ մի տեղ և որևէ մի ձևով հայկական հարցի առաջացումը, օգտվելով այն անկախությունից, որ մեզ ընձեռել է պատերազմը, *որոշեց վերջնականապես վերջ դնել այդ հարցին, հայերին քշել արաբական անապատները, բնաջնջելով այդ խորթ տարրը, համաձայն մեզ արված գաղտնի հրահանգի* (ընդգծումները մերն են-Հ.Ղ.)»[2]:

Նույն օրերին մեծ եպարքոս *Սայիտ Հալիմ փաշան, «վախենալով»,* որ անմասն կմնա հայկական ջարդերի պրոցեսին, ջանալով գերազանցել երիտթուրքական եռապետներին, իրար հետևից կոչեր էր հղում իսլամ խուժանին: Նրա կոչերից մեկն ավարտվում էր այսպես. *«Սպանեցեք նրանց, ովքեր մեր Ալլահին կողքին թույլ են տալիս գոյություն ունենան ուրիշ աստվածներ, սպանեցեք ամենուրեք, որտեղ էլ նրանց գտնեք, բռնեցեք նրանց, կանգնեցրեք նրանց, փակեցեք նրանց բոլոր ճանապարհները, վերջապես սպանեցեք նրանց, ամեն տեղ, ուր որ գտնեք»*[3]: Ճիշտ է նկատում Ա. Ն. Մնացականյանը, որ «Այդպես հրեշը սողալով մտնում էր արևմտահայերի օջախին, մերձենում մանուկների օրորոցին»[4]:

Հայերի տարագրությունն ու ջարդերն իրականացնելու պահին ևս մարդակեր Թալեաթը, իրար հետևից, ծածկագրված հեռագրեր էր ուղարկում «Հատուկ կազմակերպության» ղեկավարներին, քայլ առ քայլ հետևում, որ հանկարծ աքսորյալներից որևէ մեկը չազատվի՝ այն լինի կին թե տղամարդ, մեծահասակ թե փոքր երեխա: Նախարարը առանձնակի վախ ուներ փոքրահասակներից, որոնք մեծանալով, կարող էին վրեժխնդիր լինել իրենց ծնողների համար:

«... Իրենց հանցավոր ձեռքերի վրա հետքեր չթողնելու համար,- գրում է ջարդերի ականատես, գերմանական գրող Արմին Վեգները,- գերեվարողները, ժողովրդին իր առաջնորդներից ու պատգամավորներից զրկելուց հետո, քշեցին քաղաքներից դուրս... կողոպտեցին նրանց տները, կրակի տվեցին գյուղերը, եկեղեցիները քարուքանդ արեցին կամ մզկիթների վերածեցին, հափշտակեցին անասունները, բռնագրավեցին բոլոր սայլերը, հացը խլեցին իրենց զոհերի բերանից, հանեցին նրանց հագի շորերը, նրանց գլխի ոսկեղեն զարդերը պոկեցին... նրանք քշեցին ամբողջ մի ժողովրդի՝ տղամարդկանց ու կանանց, ալեհեր ծերունիներին ու մանուկներին, հղի մայրերին ու ծծկեր երեխաներին դեպի արաբական անապատները՝ չունենալով այլ նպատակ, քան թողնել նրանց սովից տանջամահ լինելու...»[5]:

Երբ նրանք «երկար» էին դիմադրում մահվանը, թուրք դահիճները «ուղիղ» ճանապարհով էին լուծում հարցը:

---

[1] ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 314, ցուցակ 12, գործ 23, թերթ 3-4: Տես նաև *Առաքել Քոչինյան,* Կարմիր դրվագներ հերոսներու կյանքեն, 1915-1918, Պուքրեշ, 1938, հատ. Ա, էջ 63-65, «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 33-34:

[2] *Արամայիս Մնացականյան,* Հայ ժողովրդի Մեծ եղեռնը և Ազգային վերածնունդը, էջ 34-35:

[3] Վրաստանի Հանրապետության ՊՊԿԱ, ֆոնդ 2, գործ 3255, թերթ 121:

[4] «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 35:

[5] *Armin Wegner.* An Open Letter to President Wilson. The Memoirs of Naim Bey. Pennsylvania, USA, 1964, p. 75-76.

«Հայերին խմբերով հեռացնում էին ու սպանում ամենադաժան եղանակով: Չէին խնայում ո՛չ հիվանդներին, ո՛չ մանուկներին, ո՛չ էլ տարեց մարդկանց»,- վկայում է թուրք պաշտոնյա, աքսորյալ հայերի Հալեպի կոմիտեի գլխավոր քարտուղար Նայիմ բեյը[1]:

«Նրանցից ոչ ոքի կենդանի չթողնենք, առանձնապես 5-7 տարեկանից բարձր երեխաներին, հակառակ դեպքում նրանք կարճ ժամանակում հասակ կառնեն և կփորձեն վրեժ լուծել»[2],- ազդարարում էր իր ժամանակի ամենամեծ մարդասպան Թալեաթ փաշայի հրամանը: Արդար վրեժի հանդեպ տածած վախն էր արյունախում այդ գազանին թելադրում «չխնայել անգամ օրորոցի երեխաներին», և նա գիշատչի աչքերով հսկում էր, որ հրաշքով փրկված երեխաներն անգամ չվրիպեն մահվան ճիրաններից[3]:

Որպեսզի ընթերցողը մեկ անգամ ևս պատկերացնի, թե ինչ նյութից էր ձևավորված Թալեաթը՝ հայակեր այդ հրեշը, բերենք ծածկագրով ուղարկված նրա հեռագիր կարգադրություններից երեքը.

«Շարունակելով որբերի աքսորը նախատեսված ուղղությամբ դաժան սառնամանիքի պայմաններում, մենք նրանց հավերժական հանգիստը կապահովենք: Հետևաբար խնդրում ենք հաշվետվություն ներկայացնել մեզ կատարվածի մասին

Ներքին գործերի մինիստր
Թալեաթ»[4]:

«Հալեպի նահանգապետին.

21 սեպտեմբերի 1915 թ. - Որբանոցի ոչ մի անհրաժեշտություն չկա: Ժամանակը չէ սենտիմենտալությանը անձնատուր լինելու և կերակրելու որբերին երկարածգելով նրանց կյանքը: Քշե՛ք բոլորին անապատ և տեղեկացրե՛ք մեզ այդ մասին:

Թալեաթ»[5]:

«Հալեպի նահանգապետին.

Հավաքե՛ք մի տեղում հայերի այն երեխաներին, որոնք պատերազմական նախարարության հրամանով հանձնված են զինվորական իշխանությունների խնամքին: Հեռացրե՛ք նրանց այն պատրվակով, որ նրանց մասին հոգալու է տեղահանման կոմիտեն: Ոչնչացրե՛ք նրանց և զեկուցե՛ք:

Ներքին գործերի մինիստր
Թալեաթ»[6]:

Այսպիսով իթթիհատականները 1915 թվականի մարտ-ապրիլ ամիսներին, նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո, սկսեցին ***Մեծ եղեռնը*** - սկզբում Ստամբուլում (այդ մասին մենք խոսել ենք վերևում, մանրամասնաբար), ապա ամբողջ օսմանյան կայսրությունում մեկ:

---

[1] ***Armin Wegner.*** An Open Letter to President Wilson. The Memoirs of Naim Bey. Pennsylvania, USA, 1964, p. 28.

[2] Նույն տեղում:

[3] ***Ռուբեն Սահակյան,*** Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 8-9:

[4] ***Armin Wegner,*** նշված աշխատությունը, էջ 62:

[5] Նույն տեղում, էջ 60:

[6] Նույն տեղում, էջ 62-63: Տես նաև ***Ռուբեն Սահակյան,*** նշված աշխատությունը, էջ 9:

Հայ ժողովուրդը ողջակիզվեց երիտթուրք-իթթիհատականների կառուցած բարբարոսական զոհասեղանի վրա: Այդ գողգոթայի երեսունամյա պրոցեսի պատմության ամենասև էջերը գրվեցին 1915 թվականի ***ապրիլ-դեկտեմբեր ամիսներին,*** սկզբնավորվելով Կ. Պոլսի հայ էլիտայի բռնագաղթով ու ոչնչացմամբ և ավարտվելով հիմնական զանգվածի տարագրումով ու մորթոտմամբ: Տվյալ շրջափուլն իրավամբ ***Մեծ եղեռն*** անվանումն է ստացել[1]:

Արևմտահայության զանգվածային բռնագաղթեցման, ապա հրեշավոր մեթոդներով ոչնչացման հանձնարարականով, իթթիհատականների կենտրոնական կոմիտեն առանձնացրեց գործը գլխավորող մի ***գայլախումբ, որի կազմում մտան Էնվերը, Թալեաթը, Նազըմը, Բեհաեդդին Շաքիրը, Միդհատ Շյուքրին:*** Ըմբռնելով խնդրի տարողունակությունն ու բարդույթները, նրանք Արևմտյան Հայաստանը և հայաբնակ վիլայեթները բաժանեցին ***երեք գոտիների,*** սահմանեցին կոտորածի ժամկետները, հաստատեցին յուրաքանչյուր գոտու ղեկավարին:

Առաջին գոտին, թուրքերի վերանվանմամբ, ***Արևելյան Անատոլիան*** էր, այսինքն ***Արևմտյան Հայաստանը,*** որի կազմում մտցրել էին հայոց յոթ վիլայեթները. այն է ***Վանի, Բիթլիսի, Տիգրանակերտի (Դիարբեքիրի), Էրզրումի, Սեբաստիայի, Խարբերդի, Տրապիզոնի*** նահանգները: Այստեղի բռնագաղթը (բացառությամբ Վասպուրականի) սկսվելու էր մայիսի վերջին շաբաթին և ավարտվելու էր դեկտեմբերի երկրորդ տասնօրյակում:

---

[1] Մեծ եղեռնի պատմությանը վերաբերող ***լեռնակուտակ գրականություն է ստեղծվել:*** Նախ հրատարակվել են փաստաթղթերի բարձրարժեք ժողովածուներ. տես "Геноцид армян в османской империи", под редакцией проф. ***М.Г. Нерсисяна,*** Ереван, 1966 (երեք հրատարակություն). "Германские источники о геноциде армян. Период первой мировой войны". Сборник документов и материалов в двух томах, т. I, под редакцией профессора ***С. С. Степаняна,*** Ереван, 1991. "Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919)". Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. Сборник под редакцией ***В. Микаеляна,*** Ереван, 1995.

Հատկապես Մեծ եղեռնի կեսդարյա տարելիցից հետո իրար հետևից լույս տեսան բազմաթիվ մենագրություններ. որոնցից նշենք մի քանիսը միայն (ուղղակի տեղ չլինելու պատճառով): ***Ջ. Ս. Կիրակոսյան,*** Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը. «1915 թվականի Մեծ եղեռնը». Երևան. 1965. էջ 259-410: ***Ե.Ղ. Սարգսյան,*** Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասում. «Հայերի ֆիզիկական ոչնչացման ծրագրի իրագործումը երիտթուրքերի կողմից. 1915-1916 թվականներին». Երևան. 1964. էջ 229-297: «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի». հրատարակություն «Ջարթոնք» օրաթերթի. Պեյրութ. 1965: ***Մ.Ս. Արզումանյան,*** Հայաստան 1914-1917. Երևան. 1969. էջ 315-370 (Արևմտահայերի բռնագաղթը և կոտորածները): ***Ծ.Պ. Աղայան,*** Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից. «Մեծ եղեռնը». Երևան. 1976. էջ 454-495: ***Ռուբեն Սահակյան,*** Ցեղասպանության պատմությունից. «Գենոցիդի «դասական» օրինակ». Երևան. 1990. էջ 9-181: ***Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան,*** Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմությունից. հատոր երկրորդ. գիրք առաջին. «Մեծ եղեռնը գործողության մեջ» Երևան. 2001. էջ 448-471: ***Հայրիխ Ֆիրբյուխեր,*** Հայաստան. 1915. Գերմանացի սպայի վկայություններ. Երևան. 1995: ***Ավետիս Փափազյան,*** Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում. Երևան-Լոս Անջելես. 1995. էջ 49-63: ***Արտեմ Օհանջանյան,*** 1915 թվական. անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին). «Եղեռնը». Երևան. 1997. էջ 85-108: ***Հրանդ Գանգրունի,*** Ցեղասպան իթթիհատը (1908-1923). Պեյրութ. 1994. էջ 119-200:

Այս ցուցակը շատ մեծ է. մանավանդ. որ սփյուռքահայ պատմաբանների գործերը սկզբնաղբյուրների նշանակություն ունեն: Ուրեմն բավարարվենք թվարկված աշխատություններով. ***սակայն անելով մի լուրջ դիտողություն: Զարմանալին այն է, որ պատմաբանների մեծ մասը, օգտվելով նախորդների աշխատություններից, զլանում են գոնե նշել նրանց հեղինակների անունները:*** Դա թերություն չէ. այլ արատ է. որը պետք է վերացնել:

Երկրորդ գոտու մեջ էին մտցրել *Արևմտյան Անատոլիան* - այսինքն *Իզմիտի* (Նիկոմեդիա) մյութեսարիֆությունը, *Բրուսան, Գաստեմունին, Գալաթիան, Իկոնիայի* վիլայեթը: Այստեղի բռնագաղթն սկսվելու էր օգոստոսի առաջին շաբաթում և շարունակվելու էր ողջ սեպտեմբեր ամսին:

Կիլիկյան Հայաստանի (երրորդ գոտու) բնակչության տարագրությունը ծայր էր առնելու 1915 թ. մարտ ամսին և եզերվելու էր ապրիլի վերջին-մայիսի սկզբին: Հյուսիսային Սիրիայի և Միջագետքի հայ բնակչության տեղահանությունը կատարվելու էր մայիս-հոկտեմբեր ամիսներին[1]:

Ժողովրդի բռնի գաղթեցման և ոչնչացման կատարողական խմբերի ղեկավարության «պարտականություններն» ստանձնեցին *Բեհաեդդին Շաքիրը, Միդհատ Շյուքրին* և *դոկտոր Նազըմը:* Նրանցից յուրաքանչյուրը, իր բանդայով, նախօրոք այցելեց իրեն հանձնարարված գոտու կենտրոնական քաղաքը, քննարկեց իրավիճակը, մոլլաների գարշելի շրթունքներով հնչեցրեց «սրբազան պատերազմի» կոչերը, ստեղծեց տեղական կոմիտեներ, գործի դրեց «Թեշքիլաթի մախսուսայի» քուրդ ու շեյթան անդամներին և սկսեց ջարդի պրոցեսը:

Նրանք, եռյակի ստորագրությամբ, հրապարակեցին հայերի բնաջնջման հրամանը, որտեղ (խիստ գաղտնի էր պահվել) ասված էր.

«... որևէ հաշտության սեղանի վրա, որևէ ձևով հայկական հարցի դրվելը կանխելու համար, օգտվելով պատերազմին մեզ բերած սա անկախութենեն, որոշեցինք վերջնական հաշվեհարդարի ենթարկել զայն, բնաջնջելով այդ անհարազատ տարրը քշելով զանոնք դեպի Արաբիայի անապատները, համածայն տրված մեր գաղտնի հրահանգին»: Այդ գաղտնի հրահանգը ամենուրեք ծրարից պետք է հանվեր և գործողության մեջ դրվեր բոլոր վիլայեթներում[2]:

Ջանգվածային ջարդերի ազգասպան գործողությունները սկսվեցին Վասպուրականից, հատկապես Վանի փաշայությունից, որտեղ հայ բնակչությունն ապրում էր կոմպակտ ձևով, խիտ էր բնակեցված, սահմանակից էր Արևելյան Հայաստանին և թուրքերին դաս էր տվել դեռևս XIX դարի 90-ականներին:

Ա. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

Համաշխարհային պատմության մեջ իրադարձություններ կան, որոնք երբեք *անցյալ դառնալ կամ, առավել ևս, մոռացվել չեն կարող,* քանզի նրանցից յուրաքանչյուրի մեջ խտացված ու ամփոփված է հարազատ ժողովրդի ամբողջական նկարագիրը: Այդ եղելություններից մեկն ու անմոռանալին 1915 թվականի ապրիլյան ողբերգությունն էր, որն իր աննախադեպ դաժանությամբ, զոհառատությամբ ոչ միայն հայոց հազարամյակների անցած դժվարանց ճանապարհի ամենասև էջերից դարձավ, այլև *բացահայտեց զարմանահրաշ այս ժողովրդի հերոսական ոգին, անկոտրում կամքը, մեծաքանակ թշնամուն փոքրաթվով դիմագրավելու կորովը, մարտնչող ոգին և ամենաուժեղ այլ գծեր:*

Այդ ծանրագույն դեպքերի ընթացքում բացահայտվեցին երկատված, պետականակորույս ժողովրդի բնավորության անօրինակ այնպիսի հատկանիշները, որոնք կարծեք թե յուրահատուկ են միայն իրեն: *Նա մահվանը կյանքով էր դիմադրում, բարբարոսությանը՝ ստեղծագործական հանճարով,* զենքին գրիչ ու վրձին էր հա-

[1] Մանրամասն տես «Հայկական ջարդերը. Տոքթ. Եոհաննես Լեփսիուսի տեղեկագիր», Պեյրութ. 1965, էջ 5-6: Տես նաև *Ջ. Ս. Կիրակոսյան,* նշված աշխատությունը, էջ 287:

[2] *Bryce Viscount,* The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916. Documents Presented to Wiscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs, London, 1916, p. 2.

կադրում, ավերածություններից հետո շարունակում էր կառուցել, վերակառուցել, հնի վրա վերընձյուղելով նորը, երկիրը դարձնել անճանաչելի, ժողովուրդը՝ թվաշատ[1]:

Հայ ժողովրդի անկոտրում կամքի արտահայտությունը հանդիսացավ Վասպուրականի գոյապայքարը, որի ընթացքում փոքրաթիվ խիզախ մարտիկները ծառս եղան մեծաքանակ ու արյունախում թուրք գազանի դեմ, դիմագրավելով նրան, ոչ միայն հերոսացան, այլև ֆիզիկական բնաջնջումից փրկեցին շուրջ ***երկուս ու կես հարյուր հազարի հասնող հայ բնակչության կյանքը:*** Հայաշխարհի այդ հերոսներն, իրենց անսասան կամքով ու կռվելու վճռականությամբ մեկ անգամ ևս ապացուցեցին, որ իրենց երակներում ամբարված է քաջարի նախնիների արյունը, որ շարունակում են հավատարիմ մնալ երեք Մկրտիչների (Խրիմյան, Փորթուգալյան, Ավետիսյան) հայրենանվեր գաղափարաբանությանը, քայլում են նրանց ակոսած ճանապարհով, ջանալով իրողության վերածել պատգամված կտակը՝ ***Հայրենիքի վերաբերյալ[2]:*** Դիմենք փաստերին:

Վանի վիլայեթը 1915 թ. ուներ ընդարձակ տարածություն, և այնտեղ ապրում էին ***542 հազար բնակիչներ,*** որից ***290 հազարը քրիստոնյաներ էին:*** Յ. Լեփսիուսի հաշվարկումներով՝ դրանցից 192 հազարը հայեր էին, 98 հազարը ասորիներ, 5 հազարը՝ հրեաներ: 247 հազարը մահմեդականներ էին, որից 220000-ը՝ քրդեր, 30500-ը՝ թուրքեր, 500-ը՝ չերքեզներ, 5400-ը՝ եզիդներ, 600-ը՝ բոշաներ[3]:

Ա-Դօն այդ թվերը հաստատում է, սակայն մի քիչ պակասավորությամբ[4]:

Վանի նահանգի, առավել ևս քաղաքի բնակչության ազգային կազմը, տոկոսային փոխհարաբերությունները, հայ բնակչության ***բացարձակ մեծամասնությունը,*** խիստ անհանգստացնում էր երիտթուրքական բորենիներին, որոնք նախապատրաստվում էին ցեղասպանության: Դա էր պատճառը, որ պատերազմը դեռ չսկսված, Վանի նահանգապետ նշանակվեց հայատյաց, արյունախում, դաժանության մեջ մրցակիցը չունեցող Ջևդեթ բեյը՝ Էնվեր փաշայի քեռայրը, դրանից առաջ՝ Սարայի գայմագամը, ապա Բաշկալեի մյութեսարիֆը:

Նրա դաժանությունների մասին զավեշտական պատմություններ էին անում նույնիսկ օտար անցորդները. պատմվում է, որ Ջևդեթ բեյը, մինչև կոտորածները, 12 տարեկան մի հայ տղայի ***պայտել*** և տանջամահ էր արել, որտեղից էլ «Նալբանդ գայմագամ» մականուն էր ստացել: Մեկ այլ հայի վարտիքի մեջ նա կատու գցել տվեց և տեղնուտեղը հոշոտեց[5]: Գործի դրվեցին «համիդիե» գնդերի նախկին հայասպանները և «Հատուկ կազմակերպությանն» անդամագրվածները: Գավառներում կոտորածների հրամանն իջեցված էր, և քուրդ ցեղապետերը «գործի էին անցել»:

Քուրդ ցեղապետերը, հատկապես Մուսա բեկը, Աբդուլ մեջիդը, Խալիտը և Բշարե Չաթոն հանձնարարություն ստացան արյան բաղնիք սարքել հայկական գավառներում: Բշարե Չաթոն, 600 վայրենի խոլամների գլուխն անցած, թալանում էր հայերին, բռնաբարում նրանց կանանց և աղջիկներին: Նա, մտնելով Արճեշի շրջանի Հասպըսիոնակ գյուղը, հյուրընկալվում է հայ ընտանիքներից մեկում, խնջույք է սարքում, վայելում ամեն տեսակի բարիքներ, վերջում էլ պահանջում է, որ տանտերն իր կնոջն իրեն հանձնի, թեկուզ մեկ գիշերով: Հայ ամուսինը բնականաբար հրաժարվում է քուրդ այլանդակի առաջարկից, որի պատճառով էլ նրան նախքան սպանելը

---

[1] *Արսեն Ա. Կեորկիզյան,* Վան-Այգեստանի հերոսամարտը (1915 ապրիլ 7- մայիս 7). «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 729-750:

[2] Նույն տեղում, էջ 730:

[3] Տոքթ. *Եոհաննես Լեփսիուսի* տեղեկագիրը, Հայկական ջարդերը, Պեյրութ, 1965, էջ 23:

[4] *Ա-Դօ,* Մեծ դեպքերը Վասպուրականում, 1914-1915 թվականներին, Երևան, 1917, էջ 30:

[5] *Մ. Արզումանյան,* Հայաստանը 1914-1917 թթ., Երևան, 1969, էջ 337:

շիկացած շամփուրներով ամբողջ մարմինը դաղում են և փաստորեն տանջամահ անում: Քրդերի վայրագությունները Վասպուրականում նմանօրինակը չունեին:

Ժամանակակիցներից Սեպուհ Ակունին գրավոր վկայում է, թե սկսվեց ջարդը Հայոց աշխարհում: Արդանուշի և Օլթիի շրջանների մեջ հայկական երկու գյուղեր ամբողջովին թալանվեցին, 1276 հայեր սպանվեցին[1]: «250-ի չափ մանկամարդ կիներ և աղջիկներ առևանգվեցին, ***մինչև 24 հայ կիներ հերոսական մահով մը անձնասպան եղան, պատիվնին վրա չտալու համար»***[2]: Ձնդեք բեյը, պարսկական արշավանքից վերադառնալուց հետո, թուրք հարուստների մի խմբավորման հետ հանդիպելիս բառացի ասում է. ***«Ատրպատականի (Պարսկաստան) հայերը և սուրիացիները մաքրեցինք, հիմա պետք է միևնույն կերպով շարժինք Վանի հայերուն մասին ալ»***[3]:

Երբ սկսվեց ռուսական զորամասերի դեկտեմբերյան նահանջը, Սադիմ և Հուսեյն բեկերն իրենց հրոսակախմբերով մասնակցեցին վերին և ներքին Ախորիկի, Ավզարեկի, Հասան-Թամրանի և Սալուխանի հայ բնակչության կոտորածին[4]:

Հասան-Թամրանում մանուկներին խլում էին մայրերի գրկից, նետում գետին, հետո նրանց բերաններին փայտեր խցում[5]: Սարայի կայմակամն արգելել էր սպանվածների դիակները հողին հանձնել[6]: Գերի վերցված հայ տղամարդկանց քշում էին մի որևէ ամայի վայր և սրի քաշում:

Նույն ճակատագրին արժանացան բազմաթիվ հայկական այլ գավառներ ու բնակավայրեր: «1914 թվականի դեկտեմբերի սկզբին հասան չարագուշակ շշուկներ, որոնք արյունոտ գույնով կպատկերացնեին Սարայի և Աղբակի հայության ողբերգական վիճակը,- գրում է ժամանակակիցը:- Թեև կառավարությունը սկզբում ամեն ինչ կծածկեր, նույնիսկ կիերքեր, բայց աղետի ահռելի մանրամասնությունները ժողովրդի մեջ սկսան շրջան առնել: Հետզհետե քաղաք (Վան) թափվեցան արնե և հուրե ճողոպրածները՝ իբրև փախստական, որոնք արյունոտ իրականությունը կներկայացնեին արդեն: Վանի առաջնորդարանը այդ առիթով երբ փութաց պաշտոնական բացատրություն խնդրել կառավարութենեն, միևնույն ատեն պատվիրակություն մը ղրկել քննության, ձգձգվեցավ և մերժվեցավ»[7]:

Կոտորածներ և փոխադարձ կռիվներ եղան նոյեմբերին ***Արճակում,*** դեկտեմբերին ***Գյավաշ-Կարճկանի գյուղերում, Փեսանդաշտում, Կարկառ գավառակի*** 18 հայաբնակ գյուղերում, ***Ալջավազի 21 հայաբնակ գյուղերում,*** Հայոց ձորում, Շատախի մոտ հիսուն հայկական գյուղերում և նրա կենտրոնավայր Թաղ գյուղում, այնուհետև Թիմար գավառում՝ 1915 թվականի փետրվար-մարտին և այլուր: Առանձին վայրերում (Վարագ, Շատախ, Վանից հարավ գտնվող Բերդակ գյուղ և այլն) ինքնապաշտպանական դիմադրությունը կրեց քիչ թե շատ կազմակերպված բնույթ և շարունակվեց մինչև մայիս ամիսը, երբ տեղ հասան ռուսական զորամասերը[8]:

1914 թվականի նոյեմբեր-դեկտեմբերին թուրքական զորքերն ու քրդական հրոսակախմբերը, ոստիկանական ջոկատներն ու ամեն կարգի հանցագործ տարրեր ջարդեր կազմակերպեցին Բաշկալեի և Սարայի շրջանների հայաբնակ գյուղերում

---

[1] «Սիլիոն մը հայերու ջարդի պատմությունը», պատրաստեց ***Ս. Ակունին*** (Բ տպագրություն), Կ. Պոլիս, 1921, էջ 35-36:

[2] Նույն տեղում, էջ 34:

[3] Նույն տեղում, էջ 35:

[4] ***Ջ. Ս. Կիրակոսյան,*** Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, էջ 304-305:

[5] ***Հաճրի Բարբի,*** նշված աշխատությունը, էջ 141:

[6] Նույն տեղում, էջ 142:

[7] ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 242, գործ 29, թերթ 7:

[8] ***Ա. Դարբինյան,*** Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 305-307:

(Բազ, Առակ, Ֆիրս, Ալալաև, Ալաս, Սորուն, Ռալիմ, Ախոռիկ, Հասան-Թամրան, Թաշօղլի, Խարաբասորիկ և այլն): Մարդկանց կոտորում էին, թալանում նրանց ունեցվածքը, առևանգում ու բռնաբարում կանանց և աղջիկներին: Ահա բազմաթիվ դեպքերից մեկը. ոստիկանները, քրդերի աջակցությամբ մտնելով Հասան-Թամրան գյուղը, գազանաբար կոտորում են տղամարդկանց ու կանանց, մանուկներին խլում «իրենց մայրերուն գրկերեն, գետին նետում ու անոնց փոքրիկ բերանները փայտի կտորներ խոթելով սպանում»: Նույն բախտին արժանացան Ալաշկերտի գավառի 12 հայաբնակ գյուղեր և հատկապես բազմամարդ Մոլլա-Սուլեյմանն ու Զեթկանը, որոնց բնակչությունը չհասցրեց միանալ գաղթականների հոսանքին և գազանաբար հոշոտվեց[1]: Հայ մեծանուն գրողներ Հ. Թումանյանն ու Ա. Շիրվանզադեն, 1914 թվականի նոյեմբերին այցելելով Արևմտյան Հայաստան, տեսան այդ գյուղերի միայն ավերակները և թուրքական բարբարոսության այլ չարաշուք հետևանքները: Ա. Շիրվանզադեն իր «Պատերազմի վայրերում» ակնարկում բերում է ականատեսի հետևյալ վկայությունը Մոլլա-Սուլեյմանի վերաբերյալ. «Առաջին օրը մեր կազակները արյունաշաղախ փողոցներում ժողովեցին տասնյոթ ծերերի, տասնհինգ կանանց և քսանհինգ երեխաների դիակներ: Եվ ինչ դրության մեջ, ասուված իմ: Անարգված, հոշոտված, պղծված: Այստեղ գլուխներ, այնտեղ ոտքեր ու ձեռքեր: Այստեղ կանանց ծծեր, այնտեղ նրանց մարմինները: Ծերերի աչքերը դուրս բերված: Մանուկների բազուկները կտրտված, երևի, մայրերի փեշերից պոկելու համար:

Եվ պետք է տեսնեիք, ինչպես էին լալիս մեր կազակները, արցունքները սրբելով իրենց թևերով: Մարդիկ, որոնց զգացմունքները բովվել են արյան և կրակի մեջ, փափկել էին ինչպես երեխաներ:

Ինչ վերաբերում է ինձ, չկարողացա կրել տեսարանի կսկիծը և հեռացա:

Զեթկան չկարողացա մտնել: Արդեն տեսածս բավական էր, որպեսզի հավիտյան չմոռանամ: Բայց ընկերս պատմեց, որ նույնն է եղել և այնտեղ»[2]:

Հ. Թումանյանը այդ ու նման բազմաթիվ փաստերի հիման վրա «Տաճկահայաստանն» անվանեց «ավերակների ու դիակների աշխարհ», որտեղ բարբարոս թուրքերն ու քրդերը սոսկ չեն սպանել ու կողոպտել մարդկանց, այլև գազանային զվարճություններ են հորինել. *«Երեխաների ծակատներին մեխ են զարկել, կենդանի մարդկանց զանազան մասերը կտրատել են, զանազան կերպ դասավորել, խաղեր են արել, մինչև կեսը դրել են պղինձն ու կեսից ներքև եփել, որ մյուս մասը կենդանի տեսնի ու զգա, շիկացած երկաթներով կտրել են մարմնի զանազան տեղերը և կրակի վրա կենդանի խորովել են: Ծնողների առաջ երեխաներին են կոտորել, երեխաների առաջ ծնողներին»*[3]:

Վանի վիլայեթում վաղօրոք ծրագրվելիք կոտորածների մասին Ա-Դօն գրում է. «Զևդեթը, պատերազմի դաշտից վերադառնալով, իր հետ բերեց մի ահավոր ծրագիր, այդ ծրագիրը *Վասպուրականի հայության բնաջնջման ծրագիրն էր: Ո՛չ մի հայ մարդ տասը տարեկանից վեր կենդանի չպիտի մնար. նա լիներ ազատ մարդ կամ զինվոր-ամալի, բոլորը պիտի ընկնեին գնդակահար ու սրախողխող, իսկ կանայք, օրիորդները և փոքրիկ տղաներն ու աղջիկները պիտի բաժանվեին մահմեդականների վրա. յուրաքանչյուր հավատացյալ կարող էր անարգել գերել, առևանգել իր ուզած հայ կինը, օրիորդը և երեխան:* Հայերի բնաջնջման այս ահավոր ծրագիրը թելադրված էր Պոլսից, բայց Պոլսին էլ թելադ-

[1] Վերցված է *Մ. Արգումանյանի* նշված աշխատության 339-341-րդ էջերից:

[2] *Ա. Շիրվանզադե,* Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1961, էջ 174:

[3] «Թումանյանը և հայոց պատմական ճակատագիրը», կազմեց, ծանոթագրեց և առաջաբանը գրեց *Լևոն Հախվերդյանը,* Երևան, 2000, էջ 128:

րել էին Ջևդեթը և Վանում գործող իթթիհատական կուսակցության պատկանող անդամները (ընդգծումները մերն են - Հ.Ղ.)»[1]:

Ա-Դօն, շրջելով գյուղ առ գյուղ, տեսնելով սարսափազդու տեսարաններ, լեռնակուտակ փաստեր է հրապարակում Վասպուրականի հայության ապրած ողբերգության վերաբերյալ: Սակայն ամենասահմռկեցուցիչը, այդ փաստերից արած նրա ընդհանրացումն է:

Նա գրում է. «Նախորդ գլխում (խոսքը աշխատության մասին է) մենք տեսանք ահավոր ջարդեր, ջարդեր, որոնք ընթանում էին մի անօրինակ, անդիմադրելի թափով և որոնց դեմ բողոքի հուժկու ձայն չէր լսվում, ըմբոստացած ոգու մարտնչում չէր երևում: Մարդիկ ***տասնյակներով, հարյուրներով ու հազարներով զոհ էին գնում նենգամիտ խաբեությունների. մեկեն իրենց զգում էին շղթայի զարկված, կապանքների տակ և լուռ ու անխոս առաջնորդվում էին սպանդանոցներ ու այնտեղ մորթոտվում, ինչպես մսացու կենդանիներ՝ մսագործի դանակի տակ:*** Մարդկանց այսօրինակ մորթոտվելը զարհուրելի կլիներ, եթե ամեն տեղ պատկերը նույնը լիներ, եթե ամենքն ընկնեին լուռ հնազանդությամբ (ընդգծումները մերն են - Հ.Ղ.)»[2]:

Վասպուրականում կատարված ջարդերի մասին Կ. Պոլսի հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Եղիայանն իր հուշերում թողել է ներքոհիշյալ շարադրանքը. «Նույն ատեն, անդին հայաբնակ կարևոր նահանգի մը՝ ***Վանի*** մեջ ուրիշ բան տեղի կունենար:

Հոն էին մէպուս Վռամեան (բուն անունով Օննիկ Դերձակեան) և Արամ ու Իշխան ռուսահայ ծանօթ յեղափոխականները, որոնք ականատես կ'ըլլային այն ամենուն որ Տարոնի մէջ կը պատահէր այդ օրերուն: Նկատելի էր, որ Վասպուրականի մէջ քիւրտ աւազակներ ազատօրէն մօտաւոր եւ հեռաւոր հայ գիւղերու վրայ ամէն խժդժութիւն կը գործէին կառավարութեան մեղսակցութեամբ:

Այս առթիւ Վռամեան կուսակալ Ճէվտէթի կը ներկայացնէ 1914 Փետրուար 14-ին ընդարձակ յիշատակագիր մը, որով կարգ մը պահանջներ կը ներկայացնէր որոնց ամէնէն գլխաւորն այն էր որ հայ գինուորները տեղւոյն վրայ կատարէին իրենց ծառայութիւնը. Վռամեան, Արամ և Իշխանն այս մասին կը բանակցէին եւ անոր վրայ կը պնդէին: Ապրիլի սկիզբը Շատախի մէջ դէպք մը կը պատահի Հայոց եւ կառավարութեան միջեւ ու կառավարութեան պաշտօնէից կը միանայ Իշխանը հոն երթալով խնդիրը կարգադրելու համար: Ճէվտէթ, որ կը խորհէր Յեղափոխական պետերը մէջտեղէն վերցնել, որպէսզի գինուորագրութեան խնդիրը անգլուխ ժողովուրդին հետ ուզածին պէս կարգադրէ, յարմար առիթ կը գտնէ: Իր հրահանգով ոստիկանները ***գիւղի մը մէջ գիշերած ատեննին Իշխանը կ'սպաննեն եւ անմիջապէս լուրը կը հաղորդեն կուսակալին, որ տակաւին այս լուրը չտարածայնուած՝ ստիպողաբար իր քովը կը հրաւիրէ Վռամեանը եւ Արամը:*** Վռամեան միևնակ ***կ'երթայ եւ վար կը դրուի ու անմիջապէս*** խիստ հսկողութեան տակ ճամբայ կը հանուի դէպի Բաղէշ եւ հոն կը սպանուի»[3]:

«Իշխանի սպանությունը և Վռամյանի ձերբակալումն ու հեռացումը կտարածայնվի շուտով: Հայերն զգալով, որ դավ մը կլարեն իրենց դեմ ապստամբության դրոշ կպարզեն 1915 ապրիլի 7-ին և կհաջողին երկար ատեն դիմադրել»[4]:

---

[1] ***Ա-Դօ,*** Մեծ դեպքերը Վասպուրականում, 1914-1915 թվականներին, Երևան, 1917, էջ 161:

[2] Նույն տեղում, էջ 191:

[3] ***Զավեն արքեպս.,*** Պատրիարքական Յուշերս. վավերագիրներ և վկայություններ, Գահիրե, 1947, էջ 92:

[4] Նույն տեղում, էջ 93: Պատրիարքը հուշերի նույն էջի տողատակում թողել է հետևյալ գրառումը.

«Միհրան Պօյաճեան, կառավարական պաշտօնեայ մը, որ Հօֆի ընկերացած էր դէպի Վան, անոր դարձուելէն յետոյ դատական քննիչութեան պաշտօնով Բաղէշ կը գտնուէր, երբ Վռամեան հոն կը բերուի: Պօյաճեան կը դիմէ կուսակալին Մուսթաֆա Ապտիւլ Խալիքի եւ կը խնդրէ անոր ազատ արձակումը: Կուսակալը իրեն կը պատասխանէ թէ ***«չիմտի ինթիգամ զէմանը տըր»*** (հիմա վրէժի ատենն է) եւ իր գիտցածին պէս կ'ըսէ: Միհրան Պօյաճեան ասիկա ինծի պատմեց Մուսուլի մէջ երբ հոն կը գտնուէի իբրեւ աքսորական»:

Մենք նախորդ էջերի մեջ արձանագրեցինք, որ հայ ժողովուրդը՝ այր թե կին, երիտասարդ թե տարիքավոր մահվանը կյանքով էին պատասխանում: Զարմանահրաշ էր վասպուրականցի հայ կինը: Խիզախ ու աներեր, մահվանը բաց աչքերով նայելով և տղամարդուն համահավասար, նա գնում է դեպի ողջակիզումը, կախաղանը, ***ամենաբռնորոշը***՝ վրեժխնդրության ցասումը: Կ. Պոլսի պատրիարքն այդ մասին գրում է. «Ոստիկան զինուոր մը որ Հալէպէն Մուսուլ հայ տարագրեալներու կարաւանի մը ընկերացած էր, պատմած է թէ սիրուն աղջկան մը առաջարկած է իրեն կին ըլլալ եւ ազատիլ իր ենթարկուած տառապանքէն եւ մահէն: Աղջիկը պատասխանած է թէ «եթէ ձեր մարգարէն է որ հրամայած է ձեզի այդպէս անմարդկային կերպով վերաբերուիլ մեզի հետ, այդպիսի մարգարէ մը պաշտողին կին չեմ ըլլար, իսկ եթէ անիկա չէ հրամայած այս բանը եւ դուք այսպէս կը վարուիք, ես այսպիսի անկրօն եւ անաստուած մարդու կին չեմ ըլլար, հոգ չէ թէ մեռնիմ»: Տգէտ ոստիկան զինուորը այս պատմութիւնը պատմած է Մուսուլի մէջ, անվերապահ իր հիացումը յայտնելով Հայուն տոկուն նկարագիրին եւ աննկուն ու անընկճելի կորովին ու մանաւանդ հաւատքին ջերմութեան վրայ:

Նոյնքան հոյակապ էր խօսքը հայ կնոջ մը որ շոգեկառքին մէջ իրեն ընկերացող թուրք ծամբորդի մը ըսած է թէ «կոտորեցիք եւ տակավին կը կոտորէք մեր այրերը, բայց գիտցէք, որ եթէ մէկ հատ իսկ այր մարդ չմնայ մեր ազգին մէջ, մենք կիներս ձեզմէ զաւակ պիտի ունենանք եւ զանոնք պիտի մեծցնենք ու կրթենք իբր հայ, մեր վրէժը ձեր ազգէն լուծելու համար»[1]:

Մենք, համենայն դեպս, մեծաքանակ ժողովուրդ չենք և հայոց լեզուն էլ մատչելի չէ աշխարհում բոլորին: Այս դեպքերը եթե կատարված լինեին Արևմուտքի մեծ տերություններում և եվրոպական որևէ լեզվով հրատարակվեին, ապա կդառնային համաշխարհային գրականության հսկաների ուշադրության առարկա և ***կցնցեին հանուր մարդկությանը:***

Վանի կուսակալ Ջևդեթ բեյը ավելի քան լրջորեն էր նախապատրաստվում քաղաքի գրավմանը, բնակչության ոչ միայն բռնագաղթեցմանը, այլև ֆիզիկապես հիմնովին բնաջնջմանը: Արդեն լուրեր էին պտտվում, թե Կարինից քաղաք են շարժվում 6-7 հազար ծիավորներ, որոնք պետք է օգնեին Այգեստանին դեմ հանդիման կանգնած թուրքական զորքին և սկսեին կոտորածը: Դեպքերի զարգացման իրական պատկերը տալիս են գերմանացի գբության քույրերից Մաք-Քլորին, բժիշկ Ըշըրը և ամերիկացի միսիոները: Նրանք համոզված հաստատում են, որ Վանը ոչ թե ***ապստամբություն բարձրացրեց,*** այլ թուրքերի հարկադրանքով, հուսահատված գնաց ինքնապաշտպանության: Թողնենք թող խոսեն օտարները:

«Երբ Ճէվտէթ պէյ, վիլայէթին ընդհ. կառավարիչը, Ռուս սահմանագլուխի կռիւներէն վերադարձաւ գարնան առաջին շաբաթներուն, ամէն մարդ զգաց, թէ շուտով բան մը տեղի պիտի ունենար: Իրաւ ալ այդպէս էր: Հայերէն 3000 զինուոր պահանջեց: Ասոնք ծայր աստիճան հոգի մէջ էին խաղաղութիւնը պահպանելու համար, այնպէս որ խոստացան ընթացք տալ իր պահանջումին: Բայց ճիշտ այդ պահուն Շատախի մարզին մէջ, Թուրքերուն և Հայերուն միջև կռիւը ծագած էր, և Ճէվտէթ պէյ ուզեց որ Իշխան երեք ծանօթ Դաշնակցականներու հետ հոն երթայ, անդորրութիւնը հաստատելու համար: Չորսն ալ, ճամբան, դաւաճանօրէն սպանուեցան: 16 Ապրիլ ուրբաթ օրը պատահած էր այս: Այն ատեն Ճէվտէթ իր մօտ կանչեց Վռամեանը, իրեն հետ խորհրդակցութիւն մը ունենալու պատրուակին տակ, և ձերբակալել տալով տարագրեց: Դաշնակցականները գիտէին հիմա թէ չէին կարող Ճէվտէթ պէ-

[1] *Զավէն արքեպս.*, նշված աշխատությունը, էջ 114:

յին վստահիլ, և հետեւապէս անկարելի էր իրենց, անոր ուզած 3000 մարդիկը տալու: Ըսին թէ 400 հոգի պիտի տան, և միւսներուն համար ալ մաս առ մաս զինուորական պէտէ պիտի վճարեն: Բայց կուսակալը յայտարարեց, թէ ինքը մարդու պէտք ունէր և ոչ թէ դրամի, և այլապես յարձակում պիտի գործէր քաղաքին վրայ: Մէկ քանի հայեր խնդրեցին Տօքթ. Ըշըրէն և Պրն. Եէրբօյէն, երթալ տեսնել Ճէվտէթ պէյը, և փորձել զայն հանդարտեցնելու: Ճամբան սպայի մը հանդիպեցան որ ղրկուած էր զիրենք կանչելու: Կուսակալը անխախտ էր իր որոշումին մէջ: Կը մնար միայն հնազանդիլ. ան կրնար ամէն պարագայի ուէ կերպով խորտակել ընդդիմութիւնը, պատուհասել նախ Շատախը և յետոյ Վանի գործը ձեռք առնել: Բայց եթէ Հայերը միակ գնդակ մը արձակէին, ասիկա իրեն համար պիտի ըլլար յարձակումի ազդանշանը: Կուսակալը կուզէր 50 զինուորով պահակախումբ մը դնել հսկելու համար ամերիկեան հաստատութեանց և անմիջական պատասխան մը կը պահանջէր երբ Տօքթ. Ըշըր յաջորդ երկուշաբթի օրը նորէն տեսաւ կուսակալը: Այս վերջինը հարցուց իրեն թէ պահակախումբը ղրկէ՞ Տօքթ. Ըշըր իրեն թողուց այս մասին տրուելիք որոշումը և մեզի երբեք պահակախումբ չեկաւ:

1915 ապրիլ 20-ի երեքշաբթի օրը իրիկուան ժամը 6-ին ատենները մէկ քանի թուրք զինուորներ փորձեցին բռնել կին մը որ քաղաք գացող կիներու խումբի մը մաս կը կազմէր, կինը փախաւ: Այս միջոցին վրայ հասան հայ զինուորները և հարցուցին թէ ի՞նչ կուզէին թուրքերը: Թուրք զինուորները կրակ ըրին անոնց վրայ և սպաննեցին, Պրն. Ըշբէօրրի ականատես վկան եղաւ այս դէպքին որուն վրայ թշնամութիւնները սկսան: Ամբողջ իրիկունը հրացանաձգութիւն տեղի ունեցաւ և նոյն ատեն միջնաբերդէն տևական թնդանօթաձգութիւն մը սկսաւ ամրացած քաղաքին դէմ, որուն Այգեստանի հետ բոլոր հաղորդակցութիւնները խզուած էին:

Գիշերը ամէն կողմ տուներ բոցերու մէջ էին: Այգեստանի մէջ բնակող Հայերուն թիւը 30000 էր մինչդեռ ներքին ամրացած քաղաքամասին մէջ բնակող հայ ազգաբնակչութիւնը բաւական սահմանափակ թիւ մը ունէր, Այգեստանը պաշտպանուած էր դիրքերով, պաշտպաններէն 1500 հոգի միայն կրցան հրացանով զինուիլ. նոյնքան մըն ալ հրազէն կար, իրենց ռազմանիւթի պաշարը քիչ էր որով շատ խնայողութեամբ կը գործածէին և ամէն հնարքի կը դիմէին որպէս զի յարձակողները սպառեն իրենց ռազմանիւթը: Սկսան գնդակ, փամփուշտ և վառօդ ալ պատրաստել. ժամանակ մը վերջը 3 հրասանդ ալ շինեցին, յայտարարութիւն մը ղրկեցին թուրքերուն հաղորդելով անոնց թէ իրենք ոչ մէկ բան չունէին անոնց դէմ այլ միայն կուսակալին դէմ դառնացած էին, եթէ Ճէվտէթը երթար իրենց յարաբերութիւնները կրնային վերստին խաղաղ և բարեկամական դառնալ թուրքերը նոյն իմաստով պատասխանեցին և ըսին թէ իրենք ալ հակառակ էին կռուելու և իրաւցնէ ալ շատ մը թուրք երեւելիներ բողոքագիր մը ստորագրեցին այս պայքարին դէմ, բայց Ճէվտէթ բոլորովին աննշմար անցաւ ատոր վրայէն: Մեր հաստատութեանց հիւսիսային կողմը գտնուող զօրանոցը գրաւուեցաւ հայերու կողմէ և կրակի տրուեցաւ. թողուցին որ այդտեղ գտնուողները փախչին: Յարձակողական ուրիշ նպատակ չունէին. կուզէին պաշտպանել միայն իրենց ընտանեկան յարկը և կեանքը: Հայերու պետը Արամ արգիլեց նոյն իսկ վիրաւորներուն որ չմտնեն մեր հիւանդանոցը զեղծելու համար մեր չեզոքութիւնը: Տօքթ. Ըշըր զանոնք կը դարմանէր առժամեայ հիւանդանոցի մը մէջ որ յատուկ էր իրենց: Ապրիլ 23-ին կուսակալը գրեց Տօքթ. Ըշըրին թէ տեսնուած է, որ զինուած մարդիկ մտած են մեր հաստատութենէն ներս ինչ-որ սուտ էր և ապստամբները ամրութիւններ շինած են մեր քովը: Տօքթ. Ըշըր պատասխանեց, թէ մենք մեր չեզոքութիւնը պահած էինք և թէ պատասխանատու չէինք կրնար ըլլալ արարքներուն համար այն մարդոց և կազմակերպութեանց, որոնք դուրս էին մեր հեղինակութենէն: Մեր բանակցու-

թեան նամակները կը փոխանակուէին ծեր կիներու միջոցաւ, որոնք ի վերջոյ սպանուեցան: Ասոր վրայ Արամ յայտարարեց, թէ այլևս չպիտի արտօնէր որևէ հաղորդակցութիւն: Պաշարման տևողութեանը միջոցին թուրք զինուորները և վայրագ քիւրտերը կըջարդէին ամբողջ շրջականերու այրերը, կիները և մանուկները: Ապրիլ 25-ի կիրակի օրը յարձակումի ենթարկուած անպաշտպան գիւղերէն փախչողները քաղաք ապաստանեցան իրենց հետ առնելով նաև վիրաւորներ: Մեր հիւանդանոցը որ սովորական ատեն 50 անկողին ունի պարտաւորուեցաւ 142 հոգիի տեղ բանալ: Այգեստանէն 4000 հոգի քաշուած և լեցուած էին մեր եկեղեցին, դպրոցական շէնքերը և միսիօնարութեան տրամադրելի բոլոր վայրերը: Պրն. Երօ ձեռքէն եկածը ըրաւ անոնց հանգստութեան համար, կռիւները կը շարունակուէին երբ Հայերը կազմակերպեցին քաղաքային կանոնաւոր ամբողջական վարչութիւն մը, որ ունէր իր քաղաքապետը, դատաւորները և ժանտարմաները: Քաղաքը երբէք այսքան լաւ կերպով չէր կառավարուած: Երկու շաբաթ վերջը Հայերը յաջողած էին գրաւել մէկ քանի կառավարական պաշտօնատուներ հակառակ իրենց վրայ արձակուած 16000 թնդանօթի ռումբերուն և խորտնկէցներուն ժամանակի ընթացքին ամէնէն վերի պարիսպները սկսան տեղի տալ: Այգեստանին մէջ գտնուած դիրքերէն մէկ քանին ալ ռմբակոծուեցան. երեք գնդակներ ալ ինկան մեր ստացուածքին վրայ: Միակ բժիշկը քաղաքին մէջ էր Տօքթ Ըշըր, փախստականներուն մէջ շատցած էին թոքատապի և թանջքի դէպքերը: Տօքթ. Ըշըր ամէնուն ալ կը հասնէր»[1]:

Այս ընդարձակ շարադրանքը մեջբերելով մենք նպատակ ենք հետապնդում պատասխանելու թուրք այն կեղծարարներին, թե իբր հայերի տեղահանությունը կատարվեց, որովհետև ***«Վանում ապստամբություն բարձրացվեց»:*** Ինչպես տեսանք, գերմանական և ամերիկյան ականատեսները հակառակն էին վկայում, այսինքն հայերը զենքի դիմեցին, քանի որ այլ ելք չունեին: Ջևդեթ բեյը բնաջնջել էր Վասպուրականի գավառների հայ անզեն բնակիչներին, այժմ էլ ուզում էր հայասպանել քաղաքը: Հետևաբար, Զեյթունի ճակատագրին չարժանանալու որոշմամբ Վանն ըմբոստացավ, և, այո, ***ինքնապաշտպանության*** դրոշ պարզեց:

Որպեսզի առավել հիմնավոր լինի մեր եզրահանգումը, առկա բազում փաստերից բերենք մեկը ևս: ***1915 թ. մայիսի 31-ին, Վանի իտալական հյուպատոսական գործակալ Գ. Սբորդոն Պետրոգրադի իտալական դեսպանին, Վանի դեպքերին վերաբերող*** մի ծավալուն զեկուցագիր է ուղարկել: Բերենք դրանից մի հատված: Նրա հաղորդմամբ, Վանի դեպքերի մասին «Երեք կարևոր իրադարձություն անհրաժեշտ է նշել: Ամենից առաջ գյուղերի կոտորածները, որոնք Վանի իրադարձություններից շատ ավելի առաջ էին սկսվել: ***Այս կոտորածներում զոհերի թիվը հաշվվում է մոտ 16000:***

Հայ գյուղացիները, թեև զինված են եղել, բայց, փոխանակ իրենց զենքով պաշտպանվելու, դա հանձնել են իշխանություններին, թույլ տալով, որ խեղդեն իրենց: ***Բոլոր այդ կոտորածները կատարվել են արտասովոր անողորմությամբ: Պատռել են փոքր տղաների փորերը, կանանց ու աղջիկներին մերկացրել են և այդպես մերկ քշել լեռները, ինչպես վայրի գազանների:***

Վանում ապաստանած գյուղացիների տղամարդկանց, կանանց ու երեխաների թիվը, նրանց, ում պետք էր կերակրել, թեկուզև սովի սպառնալիքի տակ, քաղաքում հասնում էր տասնհինգ հազարի:

Երկրորդ իրադարձությունը: Հայերի հետ ազատորեն դատաստան տեսնելու համար Ջևդեթ բեյը անհրաժեշտ էր համարում նախ և առաջ վերջ տալ նրանց երեք գլխավոր առաջնորդներին ***Վռամյանին, Արամին և Իշխանին, օժտված և իրենց հարա-***

[1] ***Մ[եպուհ] Ակունի,*** Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Բ տպագրություն, Կ.Պոլիս, 1921, էջ 39-41:

զատ գործին նվիրված այդ մարդկանց: Նա սկսեց Իշխանից: Դա կառավարության հետ իմ և հայկական կոմիտեների բանակցությունների ժամանակ էր»[1]:

Այսպիսով, արևմտյան տերությունների ներկայացուցիչները թուրքերին հակառակ են խոսում, ապացուցում հայ բնակչության անելանելի վիճակը և դրանից դուրս գալու միակ, հերոսական վճիռը, որը մնաց հայոց պատմության ոսկե տարեգրության էջերում:

Համառոտ ներկայացնենք Վանի հերոսամարտի պատմությունը, համառոտ, քանի որ այդ մասին ընդարձակ շարադրանքով պատմվում է մենագրության հաջորդ գլխում: Արդ, ի՞նչ էր տեղի ունեցել Վան քաղաքում *1915 թ. ապրիլի 7-ից մայիսի 7-ը* (ոմանք հաշվում են ուղիղ *մեկ ամիս,* ոմանք *քսանյոթ օր*):

1915 թ. փետրվար-մարտ ամիսներին թուրքական զորքերը, ավարածարավ թուրք ամբոխն ու քրդական հրոսակները, բառիս իսկական իմաստով հոշոտեցին հայ բնակչությանը Վասպուրականում: Հրաշքով փրկված հայկական բեկորները մի կերպ տեղափոխվեցին Վան-Այգեստան և իրենց բախտը կապեցին քաղաքի բնակչության ճակատագրի հետ: Իշխանի և Վռամյանի ուխտադրուժ սպանությունից հետո շուրջ 50 հազար հայ բնակչություն «հավաքած» քաղաքը ինքնապաշտպանության դրոշ պարզեց և նախապատրաստվեց դիմադրության: Ինքնապաշտպանության գործը գլխավորելու համար հայ քաղաքական-հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից ստեղծվեց «Զինվորական շտաբ», գերագույն մարմին, որը ստանձնել էր ժողովրդի պաշտպանության ղեկավարությունը: Նրա գլուխ կանգնած էր Արմենակ Եկարյանը, որն ինքնապաշտպանության օրերին աչքի ընկավ իր հնարամտությամբ ու արիությամբ, կազմակերպչական ու ռազմական ունակություններով: Մարմնի մասն էին կազմում Արամ Մանուկյանը, բուլղարացի Գրիգորը (դաշնակցականներ), Հրանտ Գալիկյանը, ականավոր նկարիչ Փանոս Թերլեմեզյանը և ուրիշներ: Զինվորական մարմնին ենթակա ստեղծվել էին օժանդակ մարմիններ՝ հայթայթիչ, պարենավորման, տեղեկատու, կարմիր խաչի և այլն, որոնք հատկապես կարգավորում էին շրջակա գյուղերից քաղաք թափված բնակչության ամենատարբեր պետքերը[2]:

Ինքնապաշտպանական գործողությունները ծավալվեցին հիմնականում Այգեստանում, որը շրջապատված լինելով կառավարական զորքերի կողմից, կտրված էր քաղաքի կենտրոնից: Այգեստանի պաշտպանության շտաբը կազմակերպեց հրածգային գումարտակներ, ոստիկանական ջոկատ՝ քաղամասի ներսում կարգ ու կանոնին հետևելու համար, վիրակապության կայան և հիվանդանոց: Քաղաքի պաշտպանների մեջ իշխում էր խստագույն կարգապահություն ու կազմակերպվածություն: Կատաղի կռիվների ժամանակ մարտիկներին ոգևորելու համար դպրոցականներից կազմված «Ֆանֆառ» փողային նվագախումբը «Մարսելյեզ» և հայկական ժողովրդական երգեր էր նվագում: Վանի բոլոր բնակիչները համակված էին մի գաղափարով՝ *լավ է մեռնել, քան թե անձնատուր լինել թուրք դահիճներին:* Նրանք, ովքեր զենք ունեին, գնում էին կռվելու թշնամու դեմ, իսկ մնացածները ամրություններ էին կառուցում: Մարտերին մասնակցում էին աղջիկներ, անչափահաս պատանիներ: Կանայք խնամում էին հիվանդներին ու վիրավորներին, պահում երեխաներին և մարտիկների համար հագուստ կարում:

Չնայած քաղաքի համարյա չդադարող հրետանային գնդակոծմանը (Վանի վրա

---

[1] «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», Երևան, 1981, էջ 346: Տե՛ս նաև *Barby Henry.* Au pays de l'épouvante: l'Arménie martyre. Préf. de M. Paul Deschanel. Paris, 1917:

[2] *Ջ. Կիրակոսյան,* նշված աշխատությունը, էջ 311: Տե՛ս նաև *Ա. Դարբինյան,* Հայ ազատագրական շարժման օրերեն (հուշեր 1890-են 1940), Փարիզ, 1947, էջ 268-274: *Ա-Դօ,* նշված աշխատությունը, էջ 222-223:

արձակվեց մոտ 16 հազար արկ), թուրքերին չհաջողվեց ընկճել նրա պաշտպաններին ոգին: Թուրքական հրետանու կողմից քանդված ամրությունները գիշերները վերստին վերականգնվում էին: Ռազմական գործողությունները կատաղի բնույթ ընդունեցին: Դիրքերը հաճախ ձեռքից ձեռք էին անցնում: Թուրքերին այդպես էլ չհաջողվեց կոտրել հայերի դիմադրությունը: Վանի պաշտպանությունը տևեց 27 օր: Փանոս Թերլեմեզյանը բնութագրելով Վանի հերոսամարտը, նշում էր, որ այն «բացարձակապես ժողովրդական պատերազմ էր և որը այս ու այն կուսակցության և անհատներու վերագրելը հիմնովին թյուրիմացություն մ'է»:

Մայիսի 16-ին թուրքերը լուր առնելով, որ մոտենում են ռուսական զորամասերն ու հայ կամավորները, վերջին անգամ գնդակոծեցին քաղաքն ու հեռացան: Հաջորդ օրը երեք հայ կամավորական ջոկատները Վարդանի հրամանատարությամբ մտան Վան: Մայիսի 19-ին Վան մտավ նաև ռուսական բանակը գեներալ Նիկոլաևի հրամանատարությամբ: Ժողովրդի ցնծությանը չափ ու սահման չկար[1]:

Վանը թուրքական արյունոտ տիրապետությունից ազատ մնաց հազիվ 80 օր, մինչև 1915 թվականի հուլիսի 18-ը: Քաղաքում կարգ ու կանոն հաստատվեց, առաջին քայլերն արվեցին քանդված շինությունները վերականգնելու, որբերին խնամելու, համաճարակի դեմ պայքարելու և, ընդհանրապես, նորմալ կյանք հաստատելու ուղղությամբ:

Այդ օրերին խանդավառ ոգևորություն էր տիրում Վանից մինչև Անդրկովկաս: Անդուլ եռուզեռ ու երթևեկ էր սկսվել Վարագից ու Սիփանից մինչև ալեխառն Մասիս: Կովկասից բազմաթիվ մտավորականներ խումբ-խումբ այցի էին գալիս Վասպուրականի պատմական վայրերը: Սակայն շուտով թուրքական բանակը հարձակման անցավ Բիթլիս-Վան և Մուշ-Մանազկերտ ուղղություններով: Ռուսական զորքը թողեց Մանազկերտը, Արճեշը, Վանը և քաշվեց Ալաշկերտ: ***Վասպուրականի 200 հազար հայ բնակչությունը*** կանգնեց երկընտրանքի առջև. մնալ տեղում նշանակում էր անտարակույս մահվան դատապարտվել, գնալ ռուսական զորամասերի հետևից, նշանակում էր թողնել հայրենի օջախը, դառնալ թափառական, մնալ ամեն կարգի դժվարությունները հաղթահարելու, պատահականությունների հույսին: Այնուամենայնիվ, գաղթը գերադասվեց թուրքական յաթաղանից: Նա, «ով կարող է, թող ազատվի», նշանաբանով բռնեց նահանջի ճանապարհը դեպի Կովկաս Իգդիր, Էջմիածին, Երևան և Թիֆլիս ***ճանապարհին տալով քառասուն հազար զոհ: Կովկաս հասավ ընդամենը 150 հազար մարդ, որոնցից շատերն էլ հետագայում մահացան սովից, ցրտից, անօթևանությունից ու հիվանդություններից: «Սիոնի էր տեսարանը... Ամեն քայլափոխիդ հիվանդներ և դիակներ, տնքոց, տառապանքի ճիչեր»[2]:***

Այդուհանդերձ, ճիշտ է ամփոփում պրոֆ. Մ. Արզումանյանը գրելով. «Վանի հերոսական ինքնապաշտպանությունը հայկական գոյամարտի փայլուն դրվագներից է: Այն բռնկվեց, երբ թուրքերն արդեն սկսել էին ջարդերը և նախապատրաստվում էին կոտորել նաև Վանի հայությանը: Այդ միտքը հաստատում է նաև Սազոնովը, որը դեռ 1915 թվականի մայիսի 1-ին գրում էր (Լոնդոնի ռուսական դեսպանին տված հեռագրում). «Կասկածից վեր է, որ հայերի ապստամբությունը Վանում առաջ եկավ կոտորածից, բայց ոչ հակառակը, որովհետև հայերի համար միտք չուներ մինչև մեր զորքերի գալուստը շարժում սկսել թուրքերի գերազանց ուժերի դեմ»[3]: Ուրեմն, լիովին անհիմն են ու շինծու թուրքական այն պնդումները, թե հայերն ապստամբեցին ու կոտորվեցին. հասկանալի է, որ նրանք դիտավորյալ կերպով պատճառը «չփոթում են»

---

[1] Նույնությամբ վերցրել ենք «Հայ ժողովրդի պատմություն» աշխատության VI հատորի 576-րդ էջից (հեղինակ՝ *Ե. Ղ. Մարգսյան*): Տես նաև «Վան-Տոսպ», 1916, ապրիլ, N 22-23, էջ 11:

[2] *Ջ. Ս. Կիրակոսյան*, նշված աշխատությունը, էջ 317-318:

[3] "Геноцид армян в османской империи", стр. 250.

հետևանքի հետ: Իրականում Վանում տեղի ունեցավ ոչ թե ապստամբություն, այլ ***ինքնապաշտպանական հերոսամարտ,*** թեև բոլոր ձևերով էլ այն լիովին արդարացի էր և միայն պատիվ է բերում հայ ժողովրդին»[1]:

Բ. ԲԱՐՁՐ ՀԱՅՔԸ

Մեծն Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ում տեղագրված ու քարտեզագրված Պատմական Հայաստանի տասնհինգ նահանգներից մեկն էր ***Բարձր Հայքը՝ Կարին կենտրոնով,*** որն Հայոց հազարամյակների պատմության մեջ կերտեց ***իրենը, ինքնուրույնը և կենտրոնականը:*** Կարին-Էրզրումն իր դերը չկորցրեց օսմանյան կայսրության կեսհազարամյա գաղջ տիրակալության դարադարձերում ևս: Առավել, այն իր դերը կարևորեց ռուս-թուրքական վերջին պատերազմների ժամանակ, երբ ռուսական զորքերն ամեն անգամ ազատագրում էին նահանգն ու քաղաքը, հայ համայնքին հույս ներշնչում թուրքական բռնապետությունից ազատագրվելու, իսկ վերջում, վերջում. դիվանագիտական ներքին հաշիվների ու խարդավանքների պատճառով, վերադարձվում սուլթաններին:

Նահանգի կրծքավանդակի վրայով վեր ու վար անող ռուս-թուրքական բանակների տեղաշարժերը, դրանցից հետո փոխվրեժի աչքառու վտանգը պատճառ էին դառնում հայ բնակչության տարագրության, գաղթագնացությանը: Սակայն այնքան ծգողական էր հայոց այդ երկրամասի ուժն ու հմայքը, որ կարճ ժամանակահատվածում այն նորից հայահավաքվում էր, հայանում, մարդաշատանում, լուրջ դեր ստանձնում ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև ողջ Թուրքիայի տնտեսական ու ռազմաստրատեգիական կյանքում:

Կարինը շուրջ երեք հարյուրամյակ դարձավ փոխարքայության (սերասքերություն) մայրաքաղաք, երբեմն վարչականորեն, երբեմն էլ հիմնովին իրեն ենթարկելով Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթները: XX դարասկզբին նահանգն ու նրա վալիանիստ քաղաքը անվանում էին այնպես, ինչպես վաղնջական անցյալում:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին Կարնո վիլայեթն ուներ ***645 700*** բնակիչ, որոնցից 227 հազարը քրիստոնյաներ էին: Վիլայեթը համահավաքում էր 225000 հայ, 12000 հույն բնակիչներ: Իսլամ բնակչությունից թուրք ու թուրքմեն էին 240700-ը, 120000-ը քրդեր (այդ թվում 45000-ը նստակյաց, 30000-ը՝ զազա, 45000-ը՝ վաչկատուն), 25000-ը ղզլբաշ, 7000-ը չերքեզ, 3000-ը եզիդ: ***Կարին, Բաբերդ, Խնուս, Դերջան*** քաղաքների մեջ հայերը կազմում էին ընդհանուր բնակչության ***մեկ երրորդից մինչև կեսը[2]:*** Հայերի մարդաշատությունից երկնչելով թուրք կառավարությունը, տվյալ պահին իթթիհատականները, դեռևս ***դիմակավորված,*** հայ քաղաքական ուժերի, հատկապես Դաշնակցական կուսակցության հետ սիրախաղերը շարունակում էին, «եղբայրացման» պրոցեսը ձգելով մինչև հարմար պահը: ***Եվ այդ պահը չուշացավ[3]:***

Թերևս այդ ամենի սկզբնաթելերը գտնվում էին բարենորոգումների հերթական խաբկանքի անգործադրելի ծրագրերի մեջ: Թուրքերը լավ էին հիշում, որ Հունաստանի ազատագրումից սկսած, հատկապես 1822 թվականին առաջին անգամ հնչած բարենորոգում բառի արտասանումից մինչև 1914 թվականը միշտ էլ ավարտվել էին կայսրության կծկումով, քրիստոնյա որևէ երկրի ազատագրումով, թուրքահպատակ որևէ ազգի անկախացմամբ:

---

[1] ***Մ. Արզումանյան,*** նշված աշխատությունը, էջ 365:

[2] «Հայկական ջարդերը. Տոքթ. ***Եոհաննես Լեփսիուսի*** տեղեկագիրը», Պեյրութ, 1965, էջ 42:

[3] ***Լևոն Վարդան,*** Կարինի և շրջակայքի տեղահանությունն ու ջարդերը: «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 439-464:

Այժմ, այսինքն՝ 1914 թ. ***փետրվարի 8-ի*** (հին տոմարով հունվարի 26-ի) հայտարարությամբ Արևմտյան Հայաստանում, առաջին հերթին Կարնո վիլայեթում, բարեկարգումներ պիտի անցկացվեին: «Հայկական նահանգներե ներս,- գրում է Լևոն Վարդանը,- հոգեկան այս մութ աշխարհին վրան էր, որ հանկարծ բացվեցավ պայծառությունը փետրվարի 8-ի լույսին, և պահ մը ստեղծեց ***քապուլա ռազա*** մը հայ բնաշխարհեն ներս, որովհետև տիրող իրականությունեն ոստում մը այլ իրականություն մը՝ ***հայը բնազդով զգաց, թե անկարելի էր պարզորեն»***[1]:

Այդուհանդերձ, ՀՅ դաշնակցության կուսակցության Կարնո մասնաճյուղը, օգտվելով դեռևս իթթիհատականների խաբուսիկ, բայց ***«բարեհամբույր»*** վերաբերմունքից, հրավիրեց VIII համաժողովը, որը քննարկած հարցերի ընդգրկումով հետագայում համագումար անվանում ստացավ:

Ժողովի նախագահողի իրավունքով Սասունի պատգամավորական խմբի ղեկավար ***Վահան Մինախորյանը,*** ընտրեց ղեկավար դիվանը և անցավ ելույթների, որոնք լի էին ողբասացությամբ: «Տխուր փաստերով լի էին այդ զեկուցումները... բռնագրավումներ, մասնակի տեղահանություններ, անհաշիվ սպանություններ և ***կյանքի, գույքի, պատվի անապահովություն, իրավազրկման այնպիսի դեպքեր, որ առանց ցասման, կսկիծի անկարելի էր լսել: Յատկապես զարհուրելի էր Բաղեշի պատգամավոր Սլաքի՝ Արմենակ Յոխիկյանի զեկուցումը: Գրեթե նույն վիճակն էր տիրում Վանի, Մուշի, Էրզրումի, Սվազի շրջաններում»***[2]:

Համագումարը շարունակվում էր: Կրքերը գնալով բորբոքվում էին, մտահոգացումներ էին հրապարակվում բարեկորոգումների միջոցով, «իհարկե եղբայրացած իթթիհատականների բարեհաճությամբ», ժողովրդին փրկել վերահաս կործանումից: Եվ այդ տաք բանավեճերի ընթացքում Սարանոյում պայթեց ատրճանակը, և սպանվեց թագաժառանգը: Աշխարհն ակամայից փաստի առաջ կանգնեց, ***քանզի պատերազմն անխուսափելի էր,*** հետևաբար բոլոր ծրագրերը պետք է վերանայվեին: Պիտի սրբագրվեին նաև դաշնակցություն-իթթիհատականների հարաբերությունները, որոնք խորքում վաղուց փոփոխված էին, այժմ անհրաժեշտ էր ջրի երես հանել:

Հայ գրագետ և բանիմաց մարդկանց մտքովն անգամ չէր անցնում, որ Թուրքիան կարող է ներքաշվել այդ նոր սպանդի մեջ: Նրանք մտածում էին, որ երեկ էին վերջացել Բալկանյան երկու պատերազմները, որոնք շատ ծանր էին նստել կայսրության վրա: Սակայն այդ մտածումները շիլ դուրս եկան: Գայլի զինանշանը կիսալուսնով փոխարինած այդ պետությունը իսլամ ***ավարածարավ ու արյունածարավ մահմեդականները,*** պահը հարմար էին համարում՝ վերագտնելու նախկինում կորցրած իրենց դիրքերը և ոչ միայն այդ, ***այլ հասնել համաթուրանական նոր ու մեծ տերության ստեղծմանը:***

Իթթիհատականները երկու տասնամյակ խաբել էին հայ քաղաքական կուսակցություններին, հատկապես դաշնակցությանը: Եվ օրորվում էին այն սին հույսերով, թե այժմ էլ կկարողանան նրանց օգտագործել իրենց մարդասպան նպատակների իրականացման պրոցեսում: Այս անգամ նրանք սխալվեցին: Սեպուհ Ակունին գրում է, որ «Հ.Յ. դաշնակցության Կարնո պատգամավորական ժողովեն ետք կառավարութեան հրահանգով Պէհաէտտին Շաքիր և կուսակալ Թահսին Կարնոյ մէջ, դարձեալ Թահսին և Իթթիհատի պատուիրակ Նաճի Վանայ մէջ, իսկ կառավարիչ Սէրվէթ և պատուիրակ Իոհան Մուշի մէջ, առանձին դիտումներ ըրին Դաշնակցութեան մարմիններուն որպես զի ապստամբութիւն մը առաջ բերեն Կովկասի մէջ»[3]:

---

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 440-441:

[2] *Վ. Մինախորյան,* 1915 թվականը, Վենետիկ, Ս. Ղազար, 1949, էջ 66:

[3] *Սեպուհ Ակունի,* Սիլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921, էջ 137:

Երիտթուրքերի դատավարության ժամանակ բացահայտված փաստերի հիման վրա ցեղասպանության պատմությանը լավատեղյակ Արամ Անտոնյանը 1921 թ. գրում էր. «Ինչպես ցոյց կուտայ այս անհերքելի փաստը, թուրքերը կը փորձէին Կովկասի ռուսական բանակներուն հաղորդակցութեանց գիծը կտրել, տակաւին պաշտօնապէս պատերազմի չմտած: Այս փաստը նոյն ատեն կը սրբագրէ այն արմատացած սխալը թէ թուրքերը ինքնակամ չմտան պատերազմի, այլ գերման ծովակալ Souchon-ն էր որ 1914 հոկտեմբեր 29-ին Օտէսայի դէմ յարձակելով եւ քանի մը նաւեր ընկղմելով զիրենք կատարուած իրողութեան մը առջեւ դրաւ: Մինչդեռ Եուսուֆ Րիզա Պէյի յայտարարութիւններէն պարզ կ'երեւայ թէ թուրքերը վաղուց որոշած էին պատերազմի մտնել Գերմանիոյ կողքին: Անոնք նոյն իսկ առաջին օրէն պիտի ընէին ատիկա, բայց կը յուսային Անգլիայէն ստանալ իրենց հաշուին շինուած երկու զրահաւորներ. որոնց վրայ embargo դրած էր անգլիական կառավարութիւնը, եւ զորս Պոլիս բերելու համար օսմանցի սպաներ եւ նաւազներ ճամբայ հանուած էին արդէն»[1]:

Լևոն Վարդանը շարունակում է, թե «Դաշնակ-իթթիհատական բանակցությունները անմիջապես սկսան: Գերմանաթրքական զինվորական դաշինքը նոր էր ստորագրվեր, և թուրքերն արդեն Կովկասն իրենց կնկատեին»[2]: Բանակցությունները Կարինում ընթանում էին սկզբում «շատ սիրալիր և հանդարտ», այն էլ փակ դռների ետևում, խիստ գաղտնի: Հաճի բեյն ու Շաքիրը երիտթուրքերի կենտկոմի անունից Կարինի հայ էլիտային, հատկապես դաշնակցության ղեկավարությանն առաջարկում էին.

«... նախընտրելի էր, որ հայերը,- բերում է Լևոն Վարդանը,- ձեռք քաշելով օտար դիվանագիտական դռները ափ առնելու գաղափարեն միանային Թուրքիո և ***Կովկասյան մյուս ժողովուրդներուն, կազմեին կամավորական գունդեր և սահմանի երկու կողմերու վրա կատարեին թիկունքային աշխատանք՝ կայսրության սահմաններեն ներս օգնելով իթթիհատական կառավարության՝ Կովկասի մեջ թիկունքեն հարվածելով ռուսական Կովկասյան բանակը: Այս բոլորին փոխարեն թուրքերը կխոստանային բոլոր հայ և թուրք հարցերը պատշաճորեն լուծել պատերազմին ավարտին*** (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)»[3]:

Բնականաբար, առանց երկմտանքի, դաշնակցության Կարնո կենտրոնը, համաձայնեցնելով կուսակցության մայրաքաղաքի ղեկավարության հետ, լավ ծանոթ լինելով երիտթուրքական ստախոսություններին, ուխտադրժությանը, ***կտրականապես մերժեց*** իթթիհատականների ռուսասպան, ինչու չէ նաև հայասպան առաջարկը: Դրան հաջորդեցին 1914 թ. նոյեմբերի 20-ին Բեհաեդդին Շաքիրի կենտրոնին տված հեռագրերը, թե հայերը համաձայն չեն իրենց առաջարկներին, ուստի անհրաժեշտ է ոչ միայն նրանցից թաքցնել հետագա գործողությունները, այլև արագացնել ***նրանց ջարդի պրոցեսը[4]:***

Կարինը, գտնվելով երկու տերությունների սահմանագծում, դարձավ թուրքական զինվորականության նստատեղի, որոնց ուղեկցում էին «Հատուկ կազմակերպության» հայակուլ ոհմակները և սկսում, շարունակում իրենց ազգասպան գործողությունները: Կարինի վիլայեթում «նվազագույն պատճառաբանությամբ և հաճախ առանց անոր, ձերբակալվեցան հայեր: ***Մեծ ու պզտիկ ենթարկվեցան ծեծի և խոշ-***

[1] ***Արամ Անտոնյան,*** Մեծ ոճիրը. Հայկական վերջին կոտորածները և Թալեադ փաշա, Պոսթըն, 1921, էջ 120:

[2] «1915-1965 Յուշամատեան...», էջ 442:

[3] Նույն տեղում:

[4] «Արարատ», Լոնդոն, 1914, դեկտեմբեր, էջ 83:

տանգումի, կողոպուտի և բռնաբարումի, սպանության և կախաղանի, և տակավին թուրքերը որոնեցին զե՛նք, ուզեցին զենք, պահանջեցին զենք ու երբ չգտան զայն ու երբ անիկա չտրվեցավ իրենց՝ վերստին ծեծեցին ու խոշտանգեցին, կողոպտեցին ու բռնաբարեցին, սպանեցին ու կախաղան բարձրացուցին: Ոճիրի, քանդումի և կողոպուտի արշավ մըն էր, որ սկսավ. մնաց ո՛չ ինչքի և պատվի և ո՛չ ալ կյանքի ապահովություն»[1]:

Սկսվեց ռուս-թուրքական պատերազմը: Թուրքիան, մեծ ախորժակով, մխրճվեց պատերազմի հորձանուտի մեջ: Չանցած մեկ շաբաթ, թուրքերը քանդեցին Կարինի հայկական գերեզմանատան մեջ, ռուս-թուրքական 1877-78 թթ. պատերազմին նվիրված, հայկական գերեզմանոցում կառուցված, հուշարձան կոթողը: «Ապա.- շարունակում է Ս. Ակունին.- կծերբակալվին ռուս հյուպատոսարանի հայ պաշտոնյաները և կղրկվին Կեսարիա, իսկ նույն հյուպատոսարանի զինվորական կցորդին երեք հայ պաշտօնեաները կը կախուին, ամերիկեան միսիօնար Րօպըրթ Չերըլթրնի և վերապրող Հայերու վկայութեան համաձայն: Քանի մը օր ետք, ոստիկան Օսմանի կողմէ կը սպանուի Օսմ. Պանքայի Բ. տնօրէն Սեդրակ Փաստըրմաճեանը, Սուպաչի Քուլպի իր տունը գացած միջոցին, մինչ անոր եղբօրորդին՝ Վահանը անդին նահանջի կը մատնէր Ռուսերը, գրաւելով Չօպան-Քէօբրիւի վրան գտնուած Հննայի բլուրը: Այստեղ պէտք է շեշտել որ այս դէպքերէն զատ Հերթեւ և Թօրթան գիւղերուն և Հասան-Գալէի մէջ մասնակի ջարդ կը պատահէր, ռուսական առաջին յառաջխաղացման և նահանջի պահուն:

Կարնոյ դէպքերուն մէջ ամենագլխավոր դերը կատարած են Պէհաէտտին Շաքիր, կուսակալ Թահսին, մէպուս Սէյֆուլլահ, Ճաֆէր Մուսթաֆա, Սեյֆուլլահի տղան Նէշէք, Քիրզա օղլու Ատիլ, Նալչաճը օղլու Հաճի աղա, Ապտիւբրահիմ օղլու Իպրահիմ, Քօրուքճու օղլու Խուլուսի, Մալաքիոյ կառավարիչ Ֆուատ, Երզընկայի կառավարիչ Մեհմէտ և քիւրտ աշիրէթապետներ՝ Հաճի Պէտիր, Զէյնէլ և ուրիշներ: Ասոնցմէ զատ Սէյֆուլլահ, Հայերու բնաջնջումի գործին յատկացուցած էր իր փեսան, Թօրթումցի իր ազգականները, էպիւլիհիւտցի Ճաֆէրը, Եազճի Արիֆը, Քղեցի Զիան: Ասոնք էին որ գիւղերը բաժնուած և վարած էին տեղահանութիւնը, ինչպէս նաեւ ջարդած Օձնի գիւղի քահանան և անոր ազգականները: Նոյնպէս սպաննել տուած էին 50 Հայեր Մուտուրկայ գիւղին մէջ, իրենց ծիերուն կեր տուած չըլլալնուն համար, բան մը զոր չունէին:

Քէօբրիւ-Քէօյի ռուսական նահանջէն և Սարը-Գամիշի թրքական պարտութենէն ետք Կարին եկած էր պատերազմական նախարար Էնվէրը, և այն պարզ զրպարտութեան վրայ, թէ Թուրքիայէն փախչելով կամաւոր արձանագրուած են, հրացանազարկ ընել տուած էր բնիկ Արտահանցի 30 Հայեր, Կարինի պարիսպներուն տակ Իսթանպօլ Գաբուսըի առջեւ»[2]:

Կարին քաղաքի և ընդհանրապես վիլայեթի հայ բնակչության բռնագաղթի հրամանն արձակվել էր ***1915 թ. մայիսի 5-ին:*** Սակայն նախքան այդ՝ նույն թվի հունվարի վերջերին, սրանցից բռնագրավել էին ունեցած և «չունեցած» զենքերը, իսկ ապրիլի 24-ի՝ լույս 25-ի գիշերը ձերբակալվել էին ***չորս հարյուր մտավորականներ, հատկապես ականավոր դեմքեր:*** Սրանց մեջ էին «Յառաջ» թերթի խմբագիր ***Արամ Ատրունին, Ստեփան Ստեփանյանը (Մառալ), Հրանտ Քեոսեյանը, Լևոն Պալասանյանը, Փիլոս Փափաքյանը:***

Բանտարկության հաջորդ օրը բանտարկյալներին տեղափոխում են Երզնկա, ուր և գնդակահարում են: Մնացածներին բանտում մարմնական և հոգեկան ծանր տան-

[1] «Արարատ», Լոնդոն, 1914, դեկտեմբեր, էջ 445:

[2] *Մ[եպուհ] Ակունի*, Սիլիհոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921, էջ 138-139:

ջանքների ենթարկելով, ամեն մեկին փայտի քառասուն հարված հասցնելով, ևս տանջամահ են անում[1]:

Կարին քաղաքում գնալով մթնոլորտը շիկանում էր: Հակահայկական, ցեղասպանության կոչող թուրքերի ելույթները վերածվում են բազմամարդ հանրահավաքների և հրապարակային ձևով որոշումներ ընդունում ժողովրդի կոտորման վերաբերյալ: Այդ զավեշտական, անմարդկային միտինգներից մեկի մասնակից, մի թուրք թողել է ներքոհիշյալ վկայությունը.

«1915 մայիսի մեջ մունետիկը ընդհանուր միտինգի հրավիրեց բոլոր թուրքերուն քաղաքեն դուրս փաշա Քիոչքի ըսած տեղը: Հավաքվեցան 10 հազարե ավելի թուրքեր. հայ երբեք չթողացին այնտեղ: Վալին Թահսին փաշան սկսավ խոսել. ըսավ, ցավոք սրտի ձեզ հայտնեմ, որ հայերը մեր ձեռքեն Վանը խլեցին և հանձնեցին մեր թշնամուն Սոսկովին: Հայերը մեծ վտանգ են մեր կառավարության, ուստի որտեղ հայ կա, հոն վտանգ կա Վանա տխուր իրականության կրկնումեն: Ձեզ հարցնեմ. ի՞նչ ընթացք պետք է բռնենք դեպի հայերը: Բոլոր ժողովուրդը պոռացին, կոտորենք, ոչնչացնենք գյավուրներուն: Խոսեցավ Սեյֆուլլան... *Բոլոր ժողովը միաբերան գոռացին սպանենք, ոչնչացնենք հային, գյավուրներուն:* Հետո խոսած է Մեֆերը, առաջարկելով բոլոր հայերուն կոտորել անխնա, մեծ, պզտիկ և ազատել երկիրը անոնցմե. ըսավ, *մենք 1895-1896-ին խնայեցինք երեխաներին, բայց որքան սխալվեցանք, մեր խնայած այդ երեխաներն այսօր մեծացած իբր կամավոր մեզ դեմ կապար կնետեն, մեզ կկոտորեն, Վանը կառնեն մեր ձեռքեն և վտանգ կա, որ մյուս քաղաքներս ալ խլեն մեր ձեռքեն: Միտինգը միաձայն կվճռե անխնա կոտորել բոլոր հայերուն: Սակայն դոկտոր Նազըմը կառաջարկե քաղաքներու, գեղերու մեջ արյուն չթափել, որովհետև կսե կհոտին դիակները և հիվանդություններ առաջ կուգան, լավ է քշել հեռու ամայի վայրեր և անդ կոտորել ու ջուրը ձգել: Այսպես ալ կորոշվի և բանաձևը ստիպողական հեռագրով կծանուցի Պոլիս* (ընդգծումները մերն են. - Հ.Գ.)»[2]:

Նախքան քաղաքի բնակչության բռնագաղթեցումը, իթթիհատականները որոշեցին նախ հաշվեհարդար տեսնել նահանգի գյուղերի ու գյուղացիության հետ: Սեպուհ Ակունու վկայությամբ *1915 թ. հունիսի 6-ին.* «Տեղահան կըլլան Կարնո հարյուր գիւղերու Հայութիւնը երկու ժամուան մէջ և *քիչեր միայն Երգնկա կը հասնին, որովհետև կոտորածը կը սկսի ճամբան:* Մաս մը Հայեր կ'ապաստանին Գըզըլպաշներու մօտ: Տեղական կառավարութիւնը քիւրտ ազդեցիկ պէկերու թելադրութեան վրայ կ'ուզէ պատժել քիւրտ մը հայ ջարդած ըլլալուն համար, սակայն նոյն ծիւաղը ազատ կը մնայ ոևէ հետապնդութենէ, ցուցնելով թուղթ մը որուն վրայ գրուած էր իր առած հրամանը՝ հայ ջարդելու մասին»[3]:

Գաղթի ու ջարդի պրոցեսն ավելի ողբերգական կերպարանք ստացավ վիլայեթի Խնուս քաղաքի ու նրա կազայի մեջ մտնող հայկական 38 գյուղերի նկատմամբ: *Ջեմս Բրայսը* վկայում է, որ *1915 թ. մայիսի 16-ին,* երբ Վանը ազատագրվեց, դրանից թուրքերն ավելի գազազեցին և նույն օրը սկսեցին *Խնուսի* կոտորածները: Ապա շարունակում. «Խնուսի դաշտին մեջ կգտնվեին զուտ և խառն հայաբնակ 38 գյուղեր, որոնք Խնուս բերդին հետ ունեին ավելի քան *20 հազար հայ ազգաբնակչություն: Բոլոր այրերը սուրի անցուցվեցան, որոնցմե 400-500 հոգի ռուսական հողը ապաստան գտան:* Երբ ռուսները հաղթականորեն Խնուս մտան հոն գտան 3000-ի չափ վերապրող կիներ և մանուկներ, որոնք բնականաբար Կով-

[1] *Մ[եպուհ] Ակունի,* Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը. Կ. Պոլիս. 1921. էջ 139-140:

[2] Հայաստանի Հանրապետության ՊՊԿԱ, ֆոնդ 57. ցուցակ 1. գործ 632. թերթ 17-18: Տես նաև *Ջ. Ս. Կիրակոսյան,* Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը. Երևան. 1967. էջ 332:

[3] *Մ[եպուհ] Ակունի,* նշված աշխատությունը. էջ 141:

կաս անցան երբ ռուսները պարտավորվեցան ետ նահանջել»[1]: Խնուսը հիմնովին դատարկվեց, հետևաբար և հայազրկվեց:

Նույն բախտին արժանացան Կարինի գավառի, Դերջանի, Մամախաթունի գյուղերի, Բաբերդի, Երզնկայի, Քղիի հայ ազգաբնակչությունը: Յոհաննես Լեփսիուսը, ձեռքի տակ ունենալով ամերիկյան միսիոներուհիների գրավոր վկայությունները, արձանագրում է, թե.

«Մայիսի կէսերուն սկսան Կարինի դաշտին գիւղերուն և Դերջանի ու Մամախաթունի մարզին տարագրութիւնները: Պարպուած գիւղերուն մէջ զետեղեցին Մահմետական գեղացիներ, որոնք Ռուսերու կողմէ գրաւուած մարզերէ փախած էին: Առաջուընէ, տարագրութեան դէմ ամէն ընդդիմութիւն անկարելի դարձնելու համար, Կարինի մարզին մեջէն 15000 հոգի զինուորագրած էին: Կարեւոր վայրերու մէջ՝ ինչպէս Բաբերդ, Երզնկա, Խնուս, Քեղի և այլն, տարագրութեան սկսելէ առաջ ձերբակալած էին առաջնորդները, Կարինի վրայով ղրկելու համար զանոնք: Երիտասարդ թուրքերը Կարին հաւաքուած էին, գործը կազմակերպելու համար:

Մայիս 15-ին, Կարինի դաշտին մէջ ցրուած բոլոր գիւղերը արդէն պարպուած էին, և գրաւուած իսլամ բնակիչներու կողմէ: Ուղղակի Կարինի մէջ, նախ 600 առաջնորդներ ձերբակալուեցան, որոնք տարագրուեցան: Բոլոր իթթիհատականները Կարին հաւաքուած էին, և անկից կը վարէին նահանգին մէջ տեղի ունեցող դէպքերը: Վալի Թահսին պէյ, որ չուզելով գործադրութեան կը դնէր Հայերու դէմ ճնշողական միջոցները, ինքզինքը արդարացնելու համար կ'ըսեր. «Ի՞նչ կրնամ ընել, Բ. Դուռը այսպես հրամայած է»[2]:

Գնալով օղակը նեղանում էր: Էրզրումի վիլայեթի մեջ մտնող գավառների հետ հաշվեհարդար տեսնելուց հետո, իթթիհատականները վերջապես որոշեցին սկսել ջարդը փաշայանիստ քաղաքում, ուր նստած էին եվրոպական մի շարք երկրների հյուպատոսներ և փոխհյուպատոսներ, կային արևմտյան միսիոներներ, գթության քույրեր: Թուրք-գերմանական ոհմակը այդ ամենն արհամարհում էր և նախապատրաստվում էր մարդամորթության գազանային պրոցեսին՝ բուն Կարին քաղաքում:

Կարինի ջարդարարները, իրենց «ծանր բեռը» թեթևացնելու նպատակով, նախ կազմակերպեցին ***Երզնկայի*** ջարդը: 1915 թ. մայիսի 25-ից 26-ը Երզնկայում կուտակված 25 հազար հայերին դուրս բերեցին քաղաքից և միացնելով Կամախի գաղթականությանը, այնտեղ կազմակերպեցին ահավոր ջարդ, որը տևեց չորս օր: Այս մասին պատկերավոր շարադրանք է հրապարակել պրոֆ. Մ. Վ. Արզումանյանը, որը մեջբերում ենք նույնությամբ:

Ականատեսներից մեկի վկայությունը. «Երբ Քեմախի կիրճը հասանք ժանդարմներուն վերաբերմունքը փոխվեցավ: Զինվորական մը իր ժանդարմներով սկսավ հավաքել այն հարստությունը, որ իրենց հետ առած էին տարագրյալները: 50000 կանխիկ ոսկի, դեզ մը զարդեղեններ հանձնվեցան զինվորներուն, որոնք այդ պաշարը տարին իրենց հետ, տրված հրահանգին համաձայն: Կողոպտված հայ ժողովուրդը, սրտաբեկ և զգալով նոր դժբախտություններ, ժանդարմներուն հրամանին համաձայն դուրս ելավ կիրճեն և ահա անմիջապես քուրդերու խուժան մը դիմավորեց մեզ: Հոդ կիները և այրերը բաժնեցին իրարմե և այրերը, որոնք բոլորովին անզեն էին, առաջնորդեցին մերձակա բլրակի մը մոտ, ուր սկսան անխնա կոտորել, բիրերով, քարերով չարաչար սպանելով և գլուխները ջախջախելով: Աղիողորմ և օրհասական աղաղակները կո-

[1] ***Լորտ Պրայս,*** Հայկական ջարդերու փաստաթուղթերը, Ա մաս, Կ. Պոլիս, 1920, էջ 136: Կազմեց ***Վահան Միրագենց,*** հրատարակեց ***Ա. Տիլանյան:***

[2] «Հայկական ջարդեր. Տոքթ. ***Եոհաննես Լեփսիուսի*** տեղեկագիրը», Պեյրութ, 1965, էջ 52-53:

տորվողներուն աշխարհ բռնած էին»[1]: Եվս մի հուշ, որ պատմում է աղետի վերապրողներից մեկը՝ Եպրաքսյա Յանգյանը. «Քեմախի կիրճին մոտ դաշտի մը մեջ իջևանած էինք. ժանդարմները դրացի վրանի մը տակ գեղանի Արմինեն հափշտակելու համար մորթեցին ամոր հայրը, եղբայրը և եղբորորդիները: Արմինեն չվերադարձավ: Հաջորդ օրը նույն տեղը երկու ժանդարմ սվինահար սպանեցին Արամ Գասպարյանը և ամոր կինը առևանգեցին: Վեց տարեկան զավակը, երբ իր հոր արյունաթաթավ դիակին վրա կուլար, ետևեն ձող մը անցուցին, ժողովրդին ցույց տալով, ասացին. «ահա ձեր դրոշակը»: Վաղահաջորդ օրը Արաբկիրի մոտ ժանդարմը մեզ վրանեն հանելով ամայի տեղ մը քշեց, ուր զավակս Լևոնին մորթեց, աղջկանս ծունկերուն վրա, հետո աղջիկս առևանգեց: ***Կամախ չհասած, կին մը կծննդաբերեր, ոստիկան մը երեխան մորը արգանդեն դուրս քաշեց, սվինով երկուքի բաժանելով ըսավ. «տես, հիմա երկվորյակ մը ունեցար»: Մայրը երկու ժամ ետքը մեռավ»[2]:***

Հայերի կոտորածը Քեմախում, նրանց խեղդամահ անելը Եփրատում հաստատում էին նաև իրենք՝ թուրքերը: Այդպես գերմանական գթության երկու քույրեր, պատմելով այդ մահասարսուռ դեպքերի մասին, ասել են. «Զրույցներու ստուգությունը ամենեն առաջ մեզի հավաստվեց մեր թուրք խոհարարուհիին կողմե: Այս կինը արցունքներով կպատմեր, թե թուրքերը լլկած և սպանած էին կիները և տղաքն ալ Եփրատ նետած»[3]:

Երզնկայի հայոց կոտորածների մասին ցնցող փաստեր, հոգեմաշ վկայություններ է հրապարակել դոկտոր Յոհաննես Լեփսիուսը: Այսպես, օրինակ. «Արյունկզակ ջարդարարներու գոռում-գոչումին մեջ՝ կիսամեռ ու մեռած հայերու դիակներ նետուեցան յօրանջող անդունդն ի վար. մարդկային մարմիններու ջախջախումը վիհերուն մէջ կ'արձագանգէր, մօտալուտ մահուան զարհուրանքէն գալարուող զոհերուն խելացնոր կանչերուն, ողբ ու կոծին խառնուած: Այրեր ու կիներ տեսան իրենց զավակներուն բզկտումն ու փեռեկտումը. խարակներուն ցցուածքներուն վրայ կախուած կը մնային ամոնց դիակները: Մայրերը դժոխային ուրուականէն խելագարուած, իրենց զաւակներուն ու ամուսիններուն ետեւեն մահուան անդունդը կը նետուէին: Յուսակտուր մարդկային արարածներ, արիւնռուշտ գազաններուն առջեւ ծնրադի՞ր, կը խնդրէին որ շուտ մեռցուին: Ոմանք գութ կհայցեին կամ իրենց զաւակները անձամբ գետը կը նետէին, որուն ափերուն վրայ դիակներէ կազմուած ամբարտակներ կը բարձրանային: Դիակներու հարուածին տակ ահեղացող գետի ջուրերուն ճողփիւնը կը լսուէր: Միայն մէկ ժամուան հրեշային գործ մը չէր ասիկա, ո՛չ, լման երեք օր անընդհատ շարունակուեցան սուինահարումները, ջարդն ու խողխողումը: Ապառաժներու կատարէն հոսող մարդկային արիւնը հեղեղի մը պէս վար կը հոսէր ու գետին ջուրերուն կը խառնուէր... Սայլերուն վրայի գոյքերը, որոնց տէրերը Եփրատի ջուրերուն կուլ գացած էին, կողոպտուեցան...

Ապառաժներու ցցուածքներուն վրայ ցանցնուած ուռած դիակնե՞ր, որոնք ժանտախտի յատուկ անհանդուրժելի շունչով լեցուցած էին օդը»[4]:

Նահանգին ենթակա գավառների ասպատակումը նեղացնում էր վալիհանիստ քաղաքի օդակը Կարինում:

Վիճակը գնալով ծանրանում էր և դառնում անտանելի: Արդեն քաղաք էին տեղափոխվում ռազմաճակատից բերված առաջին վիրավորները: Ասում են տկլոր մարմնի վրա կատու են թողնում: Ահագնացող սովին գումարվում էր ժանտախտի համա-

---

[1] «1915: Աղետ և վերածնունդ», Փարիզ, 1952, էջ 95:

[2] «Տեր-Ձոր, Աղետեն վերապրողներ», Փարիզ, 1955, էջ 214-215:

[3] *Լեփսիուս,* նշվ. աշխ., էջ 52: Նույնությամբ տե՛ս *Մ. Վ. Արզումանյան*, նշված աշխատությունը, էջ 375:

[4] «Հայկական ջարդերը. Տոքթ. *Եոհաննես Լեփսիուսի* տեղեկագիրը», Պեյրութ, 1965, էջ 379-380:

ճարակը, որը երեկվա ծաղկուն քաղաքը վերածել էր գորշ ու հսկա մի մեռելատան: «Մահն իր մանգաղը սրած՝ ման եկավ փողոցներու մեջ և կոտորեց անխնա: Հազարավոր զինվորներ մեռան մայթերու վրա, ուրիշներ՝ փողոցներուն մեջ մնացին սառած: Տուներ գտնվեցան, որոնց դռները այլևս չբացվեցան արևի ծագին: Մահն ու ցուրտը թևանցուկ քալեցին փողոցե փողոց, տունե տուն, սեմե սեմ և Կարինն ու շրջակայքը վերածեցին մեծ լռության մը»[1]: Դա 1914 թ. ձմեռն էր:

1915 թ. մայիսին Կարին ժամանեց հայասպան ***Բեհաեդդին Շաքիրը,*** որին ուղեկցում էին թուրք և գերմանացի մի խումբ էմիսարներ՝ հանձնարարություն ունենալով բուն քաղաքի հայության տեղահանումն ու բռնագաղթեցումը: Այդ անտանելի պրոցեսի մասին փաստերը առատ են, սակայն բավարարվենք պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի բերած մի ընդարձակ վավերագրի կրճատ ներկայացմամբ, որը վերնագրված է «Հուշեր Էրզրումի գավառի հայ ժողովրդի կրած արհավիրքների, գաղթի և բնաջնջման մասին»[2]:

«Կարնո գյուղերի քարավանը քալեց դեպի Մամախաթուն երեք մեծ խմբերով: Առաջինը՝ բաղկացած Ղարարգ, Օձնի, Չիֆթլիկ, Կեզ և Արծաթի գյուղերի բնակչությունից, երկրորդը՝ Կան, Իլիճե, Ջիթող, Մուտուրկան, Հինձք, Դվնիկ և ուրիշ գյուղերից հասան Մամախաթուն, երբ դեռ ճանապարհ չէր ելած երրորդ խումբը:

Առաջին խումբը առանց ընդհանուր ջարդի հասավ Երզնկա, երկրորդ խումբը՝ Մամախաթունից սկսավ ջարդվել, թափթփուկնին միայն հասավ առաջին խմբին, որը նստած էր Երզնկայի հարավային կողմը Եփրատի ափին: Երրորդը բաղկացած Ումոսդումի, Պատալինի, Թարգունիի, Ուզդաձորի, Երկանիստի, Նորաշենի և ուրիշ գյուղերի ժողովուրդից, հասան Մամախաթուն, անկե առաջնորդվելով տեղույն գայմագամի և չեթեներե կողմանե հասան մինչև Խաուխըն և Փիրիզի մոտերը գրեթե բոլորը ջարդվեցին, որոնցմե փախստական ազատվածներն ընկան Կարին և լեցվելով առաջնորդարան պատմեցին իրենց գլխին եկած փորձանքը: Չմոռանամ ըսել, որ երբ գյուղերը սկսան քանդվել, կառավարությունը քաղաքի համար հայտարարեց, որ Կարինը պիտի մնա ու չքանդվի, գյուղերը քանդվեցին, որովհետև հոն ապրող հայերը մեղավորներ ու հանցավորներ էին: Ահա այսպես, մի կողմանե քաղաքացիք խաբելով, մյուս կողմե գյուղացիները մաքրագործելով հասավ մայիսի 15-ը...

Քաղաքը սկսավ տակն ու վրա ըլլալ. գաղթումի և զուլումի կասկածը սուր կերպով անցավ բոլորի սրտից և գալարեց աղիքները: ... Կուսակալը նախ ուրացավ գյուղացիների կոտորվելը և ստեց անոնց գլխին պայթած փորձանքը և երդվեցավ կրոնին վրա, որ քաղաքի հայության մեկ մասը միայն պիտի հեռանա, այն էլ մինչև Խարբերդ. կառավարության կողմանե պիտի տրվի ամեն կարգի ապահովությանց միջոցներ...

Խաուխընի և Փիրիզի ջարդերից ազատված գյուղացիները տեսնելով, թե քաղաքացիք ալ խաբված իրենց պես պիտի գտնվին թուլամորթ ու գնան ներկելու օտար հողեր, լեցվեցին կրկին առաջնորդարան, համախոհ ունենալով քաղաքի արհեստավորության մեծ մասը, կրկին պարզեցին կատարված իրականությունը և խնդրեցին դուրս չգալ քաղաքից, քանի որ ամեն տեղ մահը դժբախտ հայուն ճակատագիրն է և մահը ամեն տեղ նույնն է:

Անլսելի եղավ խեղճ գյուղացիների և արհեստավորության բողոքը:

... Ելավ քաղաքի առաջին քարավանը առանց շշուկի, հազիվ քաղաքի դուռը

---

[1] *Հ. Հակոբոս վ. Տաշյան,* Հայ ազգի տարագրությունը գերմանական վավերագրերու համեմատ, մասն Ա, Վիեննա, 1921, էջ 171-172:

[2] Հայաստանի Հանրապետության ՊՊԿԱ, ֆոնդ 227, գործ 482, թերթ 1-9: Տե՛ս նաև *Ջ. Ս. Կիրակոսյան,* նշված աշխատությունը, էջ 333-338:

դուրս էին անցած, ահա առաջնորդարան հասավ մի ցուցակագիր ևս, որը կհայտներ մի շարք վաճառականներին և խանութպաններին ալ հինգ օրեն քաղաքից հեռանալուն սև գույժը: Ամեն անոնք, որոնք դեռ արձանագրված չէին երկրորդ խմբի ցուցակագրության մեջ, ցուցակագրվածների հետ թափված շուկան սկսան վաճառել իրեղենները, հանկարծակիի չգալու համար այն օրին, երբ իրենց ալ հայտարարվի հեռանալը: Ոստիկանությունը այդպիսիններին կարգելեր, աշխատելով համոզել, թե իրենք պիտի մնան, բայց ո՞վ կարող էր հավատալ, երբ սև իրականությունը վիշապի պես ցցված էր:

Առանց ծայն ու ծպտունի պատրաստվեցավ երկրորդ խումբը ու ճանապարհ ընկավ որոշված օրին. կառավարությունը զանոնք խաբելու համար որպես ապահովության միջոց անոնց հետ տվավ 250-ի չափ ոստիկան և հրամայեց գնալ Բաբերդի գծով, որպես թե, Մամախաթունի գիծը կտրված է քուրդերու կողմանե, մինչդեռ իրականությունը բոլորովին տարբեր գույն ուներ: Մամախաթունի գիծը որովհետև լեցված էր գյուղացիների դիակներով և Մամախաթունն ու շրջակայքը տարաբախտ գյուղացիների փոքրիկներն ու կիները մնացեր են բացօթին անոթի... անոնց այդ վիճակը պիտի վրդովեցներ քաղաքացիք և առիթ տար դիմելու հարկ եղած միջոցներուն, ասոր համար կառավարությունը խոհեմություն համարեց Բաբերդով հասցնել երզնկա, քանի որ գործողության համար կա դեռ շատ միջոց և ով կարող է խլել այդ միջոցը իրանցից:

Երկրորդ խումբը մեկնած ու հազիվ հասած էր Կարինեն 15 վերստ հեռու գտնված Իլիճե անուն գյուղը. ահա հայտարարվեց երրորդ խմբի հեռանալն երկու օրեն. պատրաստվեցավ և այս խումբը առանց դժկամության, բայց սարսափը գնալով սաստկացավ. առաջին խմբի մասին համառ շշուկ տարածվեցավ, թե ճանապարհին ենթարկվել են գյուղացիների բախտին, մեջերնին գտնված այր մարդիկ կոտորվել են, կիներն ու երեխաները հազիվ կարողացել են իյնալ Քղի: Շշուկը գնալով ավելի սուր կերպարանք ստացավ, բացարձակորեն հայտնի եղավ, թե բոլորին համար վիճակված կամ ծրագրված է նույն բանը: Ի՞նչ կարող էր ընել խեղճ կարնեցին, քանի որ չուներ ղեկավար ուժ, քանի որ երիտասարդությունը իր ափը չէր և եղածներն ալ ծերբակալված ու բանտարկված էին: Կարնեցին այլևս չէր կարող շարժվել, որովհետև իր թիկունքը պահող գյուղացին չիկա, քանդվել է իրմեն շատ առաջ և ինքը անոնց քանդումը դիտել է անտարբերությամբ, մտածելով, թե գյուղացիք մեղավորներ են, անոնք են միայն, որ գրաված են կառավարության ուշադրությունը: Կարնեցու միակ հույսը մնացեր էր առաջնորդ հոր պաշտոնական դիմումներուն և խնդրանքներուն վրա: Խեղճ առաջնորդը կրոնավորի համեստությամբ մոռացած Մովսեսի «ակն ընդ ականի» քարոզությունները, գավազանը թխկթխկացնելով ափ առան կուսակալին, պաշտոնական մարմիններուն և գերմանական հյուպատոսարանի դռները: Ամեն տեղ միևնույն հանկերգը, ամեն տեղ հարյուրավոր երդումներով հերքումներ հայերի գլխին պայթած աղետների մասին: Կուսակալը ամեն միջոց ափ առած էր խաբելու առաջնորդ հայրը՝ շահագործելով անոր դյուրահավատությունները և ամեն գնով աշխատած էր ժողովուրդը մի անգամ քաղաքից դուրս հանել, զանոնք զինաթափ ընել և հեռացնել ծանոթ վայրերից: Ցույց տրված սիրալիր ընդունելությունները և ապահովության մասին հայտնած կեղծ կարգադրությունները վերջապես համոզեցին Սմբատ եպիսկոպոսը, որը վերադառնալով առաջնորդարան սկսավ ինքն ալ իր կարգին համոզել ժողովուրդը, որ կուսակալը բարյացակամ է գտնվել կարնեցիներուն համար շնորհելու ամեն կարգի ապահովություն:

Այսպես թե այնպես քաղաքեն հեռացավ և երրորդ խումբը, թվով շատ ստվար, քան առաջինները, սա կազմված էր ավելի շատ արհեստավորներե: Մոտավոր հաշ-

ԺԱԿ ԴԸ ՄՈՐԳԱՆ
(1857-1924)

Աշխարհում չկա մի լեզու բավականաչափ հարուստ ու գունեղ, որ նկարագրի նմանօրինակ սարսափները, որ արտահայտի այն մարմնական ու հոգևոր տառապանքները, որ կրել էին այդ անմեղ նահատակները, նախքան երկինքը հավիտենական հանգիստ կառաքեր նրանց ի վերուստ: Ահավոր ջարդերից մազապուրծ այդ մի բուռ թշվառ մարդիկ իրենց բոլոր մերձավորների, իրենց համար թանկ էակների մահվան ականատեսները, գտնվում են այնտեղ՝ համակենտրոնացման ճամբարներում ենթարկվելով ամեն տեսակի անպատվության, դատապարտված լինելով կործանման «քարձրաստիճան թուրք պաշտոնյաների», գերմանացի սպաների ու ժանդարմների աչքի առաջ, որոնք, հենվելով իրենց հրացաններին հեգնությամբ ժպտում են տեսնելով մեռնողների հոգեվարքի ջղաձգություններն ու խռխռոցները...

վով ուներ 15000 անդամ մեծ ու փոքր և 4000 եզան ու ձիերի սայլեր, սա խմբի մեջ կգտնվեի և ես, դժբախտս:

Անծրևոտ մի օր էր, հունիսի 5-ը, երբ դուրս եկանք քաղաքից. կարտասվեր բնությունը, թեկուզ իր արցունքն ալ խառնելու փոքրիկների և անմեղների աչքերից հոսած արցունքին: Շարժվեց տարագիր ամբոխը դեպի արևմուտք, դեպի ճանապարհ «զուլումի»: Կորաքամակ ծերունիները, փափկատոտիկ երեխաները և կաթնաթույր օրիորդները սևեր հագած ընկան ճանապարհ... Պետական շոսեն... բռնվեց մեր քարավանով. քաղաք մըն էր, որ կշարժվեր, կերթար և ոչ ճամփորդներ: Այդ օրը հասանք Իլիճե գյուղը և հոն ենթարկվեցանք մանրակրկիտ խուզարկության, մեզնե խլեցին նույնիսկ գրչահատներն անգամ և հասարակության մոտ չթողուցին ոչ մի նկարչական գործիք: Հաջորդ օրը Իլիճեից մեզ միացավ 250 ոստիկաններե բաղկացած մի խումբ հարյուրապետ Նուրի էֆենդիի առաջնորդությամբ և անոր ղեկավարությամբ. այսպես քալեցինք դեպի Բաբերդ: Գիշերները հանգստանալու համար, երբ կթափվեինք մի տեղ, հոն կարծես կշինվեր սպիտակաշեն մի քաղաք: Վերջապես հասանք Բաբերդ, ճանապարհին կտեսնեինք միայն երիտասարդ հայ զինվորներու դիակներ ցիր ու ցան ասդ ու անդ. չմոռնամ ըսել, որ դեպի Բաբերդ մեր գացած ճանապարհը հայկական զոհերու սպանդարանը չէր կարող համարվել, որովհետև այդ գծով չէր գացեր ոչ մի գաղթականություն: Գյուղացիք բոլոր գացեր էին Մամախաթունի գծով. մեզ չթողեցին գալ այն ճանապարհով, որպեսզի չտեսնենք հոն թափթփված մեծ ու փոքրերու սառ դիակները, չկարենանք տեսնել խեղճ գյուղացի գեղանի օրիորդների պահեստը, որոնք ճանապարհի վրա այլևայլ խաների մեջ բանտարկված էին անցնող դարծող զինվորների շնական կիրքերին գոհացում տալու համար: Մեզ համար վիճակված կամ ավելի ճիշտը կարգադրված էր ապահով տանել մինչև Կամախ (Երզնկայեն= 2 օրվա ճանապարհ դեպի հարավ) հոն վերջացնելու համար և այդ կարգադրությունը մեզնե պահված էր մեծ զգուշությամբ շատ գաղտնի:

Մինչև Բաբերդ չունեցանք կարևոր կորուստ, հոն 5 օր հանգստանալե վերջ առաջնորդվեցինք դեպի Երզնկա, դարձյալ ոչ մի փոփոխություն, ճանապարհին մեզ եկան հասան Կարնո կուսակալ Հասան-Թահսին պեյը, իր հետ ունենալով Տրապիզոնի կուսակալը և Բաբերդի գայմագամը, անոնց հետ միասին մտանք Երզնկա: Քաղաքը մեզ չընդունեց, մեզ համար տեղ տրվեցավ քաղաքեն դուրս դեպի Կամախ գացող ճանապարհի վրա:

... Հինգ օր մնացինք հոն հանգստանալու համար, թե ինչո՞ւ, դա միայն մենք գիտցանք վերջը, այդ միջոցին Երզնկա եկան Սեբաստիո կուսակալը և ուրիշ մյութասարիֆներ և գայմագամներ, հոն կռեցին, դարբնեցին մեր բախտը, մեր ճակատագիրը ու ահա վեցերորդ օրը առավոտյան կանուխ մեզ հայտարարվեցավ, որ պիտ ելնենք երթալու դեպի Կամախ:

... Ուի, աստված իմ, ինչ տեսարան՝ վարը կփրփրա եփրատը, սպիտակ կոհակները կարմիր ներկած կեռա, կշաչե, կգալարի: Վերը սրածայր, բարձրաբերձ ժայռեր ցցված դեպի ամպերը, խրոխտ նայվածքնին հառած դեպի իրենց ոտքերուն տակ պտույտ եկող եփրատը կթվեն, կհալվեն հոն լողացող և իրենց անմեղ արյուններովը անոր ալիքները ներկող դժբախտ հայու անշունչ դիակները: Թիվը շատ բարձր էր. հաշիվը անըմբռնելի:

Շարժվեց մեր քարավանը նեղանցքեն ներս երթալու համար դեպի Կամախ, բայց ի՞նչ սոսկալի տեսարան և ի՞նչ անտանելի հոտ: Եփրատի երկու ափերը լեցվեր են ամեն հասակի ու սեռի մարդոց դիակներով, հայու անշնչացած մարմիններով: Կտրիճ, առյուծանման, երկաթաբազուկ երիտասարդներ բաց արած վիթխարի թևերն ընկած են կռնակի վրա, կուրծքերնին տալով ջերմ արևին: Գեղանի

օրիորդները փարած իրենց եղբորը, հորը կամ մորը վիզերը, պառկած են կողք կողքի, խոր, շատ խոր քուն մը քաշելով. փոքրիկ երեխաներ՝ ծակոտված սվինի հարվածներով, ինկած են քարի մը տակ, կամ փոսի մը մեջ, ձեռքերնին պահած այդ ծակոտիքի, այդ մահացու հարվածի բացվածքին վրա ու այնպես մեռած:

Որչափ առաջ գնացինք, տեսարանը այնչափ սոսկալի եղավ...

Մեր քարավանը կտեսներ այս ամենը և հուսահատ, դողդող քայլերով կերթար առաջ. համոզված էինք, որ մենք ալ պիտի ստանանք նույն վիճակը, ինչ որ ստացել են մենե առաջ եկող այդ տրապիզոնցիները, բաբերդցիները, երզնկացիները, Դերջանի և Կարնո գյուղացի ժողովուրդները: Փոքրիկները սկսան փարել իրենց ծնողաց վիզը...

... Ո՞ւր կարող էինք դուրս գալ, քանի կքշվեինք առաջ, տեսարանն այնչափ ավելի սոսկալի կդառնար: Տեսանք «Գառնիի Կորտուն» հուզված գյուղից 5 վերստ առաջ 14 հատ 6-8 տարեկան երեխաներ, որոնք մինչև մեջքները թաղված էին հողին մեջ. խեղճ երեխաներն այնչափ են լաց եղել, որ աչքերը բոլորովին ուռած ու արցունքնին ցամաքած էր: Մեզ տեսնելով քաղցածությունից ծանրացած գլուխնին միայն բարձրացրին, բաց ըրին աչքերն ու պաղ, խորհրդավոր նայվածք մը միայն մեզ ծգին և առանց ձայն ու խոսքի կրկին գլուխնին խոնարհեցրին գետին:

Մեզ շատ խստիվ արգելված էր ճանապարհի անկյալներուն օգնելը, ոստիկաններն ու չեթեները (կամավորները) մեզ շրջապատած էին և որևէ հրամանի հակառակորդներին անմիջապես պատրաստ էին խփելու: Չմոռնամ ըսել, որ մինչև Երզնկա մեր ունեցած ճամփորդական ազատությունը մեզնե խլվեցավ այն օրին, երբ Երզնկայեն ելանք գնալու համար դեպի Կամախ: Այն օրին մեզ հետ եկող ոստիկաններին միացան և չեթեները, որոնք ճանապարհին սկսան կամաց-կամաց պակասեցնել մեր թիվը: Քարավանեն ետ մնացողը երեկոյին այլևս չկար:

Քալեցինք առաջ կարծես տեսնելու համար գերեզմաններու ամենասոսկալիները: Հասանք Եփրատի վրա շինված «Աճեմ-Քեոփրիսի» կոչված կամուրջը: Օհ, ի՞նչ տեսարան վարը, գետի երկու ափին դիակները պառկած են որպես ոչխարի հոտ[1]...

Կամուրջը անցանք, և ահա կամուրջի մեկ ծայրին մի մայր բոլորովին մերկ, մեջքեն վար ներկված է ծննդկան արյունով, մեջքեն վեր՝ ջախջախված կուրծքին ու գլուխին արյուններովը: Քնած փոքրիկ երեխան դեռ կենդանի կտապալվի արյունների մեջ ու վայրկյանը անգամ մը կծչա:

Այսպես անցանք հայոց սպանդարաններեն դեռ շատ քիչ զոհեր խլող և սարսափ պատճառող «Կամախի» ձոր կոչված ապաստարանը և հասանք Կամախ: Երկու օր մնացինք հոն հանգիստ առնելու համար, այդ միջոցին մեզ հետ ընկերացող ոստիկանների և ոստիկանապետ Նուրի պեյի գործը եղավ աշխատել փարատել ժողովրդի սարսափը, համոզելով, թե այլևս այդպես ջարդեր չպիտի լինեն և թագավորը առանձին ներում շնորհած է կարնեցիներին հանգիստ գալու մինչև Հալեպ ու հոն հաստատվելու: Նուրի պեյի և ուրիշների երդումները այլևս չէին կարող մեզ համոզել և մեզ խաբել, բայց ինչ կարող էինք ընել, քանի որ մեր մոտ չի մնացեր նույնիսկ դանակի շեղմ մը և ժողովուրդը իտես այդ ամսին մեռած էր բառին բուն հասկացողությամբ:

Վերջապես քարավանը կամովին ալ դուրս եկավ գնալու դեպի Ակն քաղաքը: Ճանապարհին նույն տեսարանները ավել և ոչ պակաս...»[2]:

---

[1] Այս բանը հաստատում է *Հանրի Բարբիճ*, գրելով, թե «Եփրատի ջուրերը այնքան դիակներ կը կրեն իրենց վրա, որ տեղ-տեղ կուտակված, կը ծնացնեն անցարգելներ, որոնք կը ստիպեն գետը փոխել իր ընթացքը»: Նշված աշխատությունը, էջ 15:

[2] Հայաստանի Հանրապետության ՊՊԿԱ, ֆ. 227, գ. 420, թթ. 20-29: Տես նաև *Ջ. Ս. Կիրակոսյան*, նշված աշխատությունը, էջ 338:

Միայն նրանք կարող էին կրակի վրա երեխաներ խորովել, ծնողների ձեռքով հարազատ երեխաներին մորթել տալ ու նրանց արյունը խմեցնել: Այսպիսի փաստերը հարյուրավոր են: Հնարավոր չէ դրանք նկարագրել կամ այդ մասին տարբեր աղբյուրների հավաստի լինելն ապացուցել: Սակայն մի բան պարզ է, որ այդ մասին են պատմում հազարավոր սովորական, աշխատանքի մարդիկ, որոնք կորցրել են իրենց զավակներին ու հարազատներին, անցել թուրքական դժոխքի միջով: Ստորև մեջ ենք բերում դեպքերի ականատես, Սասունի Ախփի գյուղացի Նուրե Երիցյանի 1916 թվականի նոյեմբերի 5-ին Թիֆլիսում պատմածից մի հատված: Ահա թե ինչ է պատմում նա.

«Քսան օր կռիվ եղավ. թուրքերը եկան, թնդանոթ բերին, 30000-ից ավելի էին, Շենիքի գլխից որ թնդանոթ կարծակեին Անտոքա վրա կհասներ մեզի: Մեկ ռումբով ահագին մարդ կսպանվեին: Այստեղ մենք հաղթվեցինք, կին ու երեխա ընկան թուրքերի ձեռք, կմերկացնեին և ապա կսպանեին, իսկ մնացած մարդիկ ու կռվողներ ցրվեցին սար ու ձոր, Ծովասար, Կեփին և ջոկ-ջոկ կռվեցին: Ես այդ սարսափի ընթացքին, կորուցի իմ հարսներ ու տղան, իմ երկու թոռներ ինքս ձգեցի փախա: Փախանք լցվանք Քանասար, սև ասկյար (թուրք կանոնավոր զորք) մեկ կողմից, քրդեր մեկ կողմից մեզ մեջտեղ առին և սկսեցին կոտորել. երեխաները ձգեցին սվինի ծայրեր. մոր արգանդը պատռեցին և երեխային դուրս հանելով կտոր-կտոր արին: Ազատվողները նորից փախանք Ծովասար:

... Մուշի կառավարիչը հայտարարեց, թե ողջ մնացող սասունցիներին ազատություն է եկել, թագավորը ողորմացել է իրենց նեղություններին և թող հավաքվին Մուշ՝ կերակրվելու և պահվելու: Իրենց դինը տվին սատանին և երդումներ արին, 1500 անձ (Սպաղանք, Հարթք, Եղկարտ, Հիթինք, Ախփի, Թխիք, Գելիեգուզան, Տափըկ, Գեղաշեն, Շուշնամերկ, Իրիցանք) այս գյուղացի բնակիչները, որից 500-ը երեխա, հավաքվեցինք և զորքերով շրջապատված գացինք Մուշ: Այնտեղ մեզ ու տղամարդերին իրարից բաժանեցին և ջոկ-ջոկ տներ լեցրին... Հինգ օր մեզ թողին անհաց ու անջուր: Սկսեց մի աղեկտուր գոռոց... Տղամարդիկ քշեցին Բաղեշի կողմ և սպանեցին բոլորին (500-ից ավելի էին): Իսկ մեզ տարան ***Բլեդըր գյուղ*** (Ս. Կարապետի կողմ, Մուշից 5 ժամ հեռու): Իմ երկու տղաներ տարան մյուսների հետ և սպանեցին: Երբ մեզ եկան տանելու, ընկան մեր մեջ, բոլորին մերկացրին, ինչքան արծաթ-ոսկի թե պահած ունեինք առին: Հետո ընտրեցին յուրաքանչյուր գյուղից 20-ական գեղեցիկ կին ու աղջիկ և տարան բռնաբարեցին և այլևս չթողին մեզ մոտ գալու: Իսկ մեզ քշեցին Բլեդըրի կողմ: Ճանապարհին ետ մնացող մայրերից կխլեին երեխաները և կզարկեին գետին, կսպանեին: Մոտ 200 երեխա գետին զարկելով և սվինով սպանեցին: Մի ջրի հասանք, ուզեցինք խմել: Այդտեղ սպանեցին 5 հոգի և մնացածներս փախանք ջրից հեռու: Վերջապես մեզ հասցրին Բլեդըր, այնտեղ մութ տվեց: Մեզ հավաքեցին մի տուն և սկսեցին ամբողջովին մերկացնել և պահապաններով մեկ-մեկ փոխադրել ուրիշ տուն: Մի քիչ ճարպիկ եղա և մի ծիու ոտների միջից սողացի դուրս և ինձ գցեցի մի խանդակի մեջ ու սպասեցի: Բոլորին մերկացնելուց և մեջտեղելուց հետո խոտ բերին և շարեցին տան չորս բոլոր, քարյուղ թափեցին վրան և կրակ տվին: ...800-ից ավելի էին այստեղ վառվողները...

Հեթինցի Բլոն և Հակոբը (Քոփիցի) Բաղեշից փախան եկան և այսպես պատմեցին, թե «մեզ հինգ հարյուր հոգու տարան դեպի Բաղեշ շրջապատված զորքերով և քրդերով: Բաղեշ հասնելուն պես մեզ տարան քաղաքի մի ծայրը, և մեր ձեռքով երկար փոս տվին փորել, հետո սկսեցին մեզ սվինով և գնդակով սպանել և ձգել փոսի մեջ. մենք երկուսս իսկույն ընկանք դիակների տակ և թեթև հողի տակ կարողացանք շունչ պահել և ծակել դուրս գալով շուտով ու փախանք սարեր»:

Բայց Բլոն և Հակոբը շուտով մեռան, այնքան ուժասպառ էին եղած:

... Մի քանի անգամ էլ քրդերն ու թուրքերը եկան մեզ վրա, որն ընկավ ձեռքը,

սպանեցին մինչև (փետրվարի) Շվաթի վերջ, ռուսներ Մուշ առին: Տափըքի թուրք զորքը փախավ, մենք իջանք Տափըք, մի քանի օր մնացինք, հետո սարը բարձրացանք, 16 հոգի էինք, հինգը ճանապարհին մեռան, մյուսներս անցանք Մուշ, հետո ես անցա Երևան և այնտեղից Թիֆլիս, մի ժամանակ է, որ ապրում եմ իմ միջնեկ տղա Սեդրակի մոտ, որ պատերազմից առաջ Ռուսաստան էր և կամավոր եղած, և այժմ բանվոր է և ինձ պահում է»[1]:

Սասունի սարերում ապաստանած 50 հազար հայ ժողովրդից 1915 թվականի աշնանը մաս-մաս, խումբ-խումբ Կովկաս հասան 10-ից 15 հազար մարդ, մնացածը զոհ գնաց թուրքական յաթաղանին[2]:

Կարինի քաղաքի և վիլայեթի հայ բնակչության տեղահանության, ոչնչացման մանրամասն պատմությունը ներկայացնելով՝ պրոֆ. Մ. Արզումանյանը այն ամփոփում է այսպես.

«Այդպիսով, Կարինը դատարկվեց հայերից: Այնտեղ, Ստեպլտոնի վկայությամբ, մնացին մոտ 20 հայ արհեստավորներ (թուրքերին արհեստ սովորեցնելու և ընդհանրապես նրանց ծառայելու համար), 50 որմնադիրներ և 18 հայ աղջիկներ, որոնք ապաստան էին գտել Ստեպլտոնի մոտ: Սակայն դրանց կյանքն էլ երկար չտևեց: Հայոց որմնադիրներին ստիպեցին հայոց գերեզմանաքարերով իթթիհատական ակումբ կառուցել, որից հետո տարան Երզնկա ու գնդակահարեցին: Նույնպես վարվեցին հայ արհեստավորների հետ: Մնում էին պատսպարված հայուհիները. թուրքերը որոշեցին հրդեհել Ստեպլտոնի տունը և տիրել հայ աղջիկներին: Բայց այդ ժամանակ ռուսական բանակը մոտենում էր Կարինին, և Թահսին բեյը խնդրեց Ստեպլտոնին, որ իշխանությունների հեռանալուց հետո ներկայանա ռուսական բանակի հրամանատարությանն ու հայտնի, որպեսզի նրանք խնայեն Կարինի թուրք ազգաբնակչությանը, որն իբր մեղք չունի հայերի տեղահանության մեջ: Ստեպլտոնը կատարեց այդ խնդրանքը, երբ ռուսական բանակը 1916 թվականի փետրվարի 16-ին մտավ Կարին: Ռուսական բանակի հետ եկած հայ կամավորները շրջեցին քաղաքը, բայց հայեր չգտան, բացի թուրքական տներում եղած 4 աղջիկներից, որոնք Ստեպլտոնի պատսպարած հայուհիների հետ միասին կազմում էին Կարինի ողջ հայ բնակչությունը (22 հոգի)»:

Կարինի հայկական մշակութային հիմնարկներն այրված էին, իսկ հայերի տներում տեղավորված էին թուրքեր. «Այո՛, փոխված էր քաղաքը և անոր հետ նաև ամբողջ գավառը: ***1914-ին երկու հարյուր տասնհինգ հազար հայ ազգաբնակչություն հաշվող Կարինը և շրջակայքը հեղակարծորեն առեր էին սև քղամիդը թրքության: Լքված, ավերակույտի վերածված տեսք մըն էր ամբողջ նահանգին ունեցածը, որուն հիմա կարոտով կնայեր ռուսական սահմանեն Կովկաս անցած յուրաքանչյուր կարնեցի, քղեցի, բաբերդցի կամ երզնկացի:***

Անոնք, որոնք կարող էին հասնել Միջագետքի և Սիրիո անապատները, ցավով կհուսային այն օրը, երբ պիտի արդարություն ըլլար կոտորակված, բզկտված, խորտակված հայության»[3]:

Կարինի հայության բնաջնջումը երիտթուրքերը դիտում էին որպես իրենց «սխրագործություն»: Դրա ակտիվ մասնակից Խալիլ բեյը Բաղդադում՝ իթթիհատական ակումբում մեծագույն հրճվանքով ասաց. «Հայաստանի սիրտը խլեցի, հանեցի, կարգը եկավ արաբականին: Ով որ օսմանյան մահիկին տակ գլուխ չի ծռեր՝ Հայաստանի վիճակին կենթարկվի»[4]:

---

[1] **ՀՀ ՊՊԿԱ**, ֆ. 227, գ. 439, թթ. 8-9:

[2] «Պայքար», 6.7.1963, N 157(17475), ԱՄՆ: Տե՛ս ***Զ. Ս. Կիրակոսյան,*** նշված աշխատությունը, էջ 363-364:

[3] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 462:

[4] «1915: Աղետ և վերածնունդ», էջ 173: Տե՛ս նաև ***Մ. Վ. Արզումանյան,*** նշված աշխատությունը, էջ 383:

Պակասը լրացրին քեմալականները, որոնք արգելեցին հայ գաղթականների վերադարձը դեպի Կարին: Կարինի հայության վրա իջավ սև գիշեր:

Գ. ԲԻԹԼԻՍԻ ԳՈՂԳՈԹԱՆ. ՏԱՐՈՆԻ ԵՎ ՍԱՍՈՒՆԻ ԳՈՅԱՄԱՐՏԵՐԸ

Բիթլիսի վիլայեթը փռված էր Պատմական Հայաստանի ***Տուրուբերան*** նահանգի ընդարձակ տարածքի վրա: Այն, իբրև վարչական առանձին միավոր, ձևավորվել էր Բեռլինի վեհաժողովից, հատկապես 1882 թ. վարչական բաժանումներից հետո: Վիլայեթն ընդգրկում էր Սասունը, Սալնո ձորը, Հարքը, Ապահունիքը, Հաշտեանքը, Մուշն ու Մշո դաշտը, Խնուսը, Մանազկերտը՝ կենտրոն ունենալով գեղեցիկ ու առևտրաշահ ***Բիթլիս (Բաղեշ) քաղաքը:***

Մյուսների համեմատ, նահանգն ուներ չափազանց բարդ կառուցվածք թե աշխարհագրական դիրքով և թե՛ բնակչության ազգային կազմով:

Բիթլիսի վիլայեթի անառիկ բերդ-ամրոցն էր համարվում ***Սասունն***՝ իր լեռնակուտակ աշխարհագրական դիրքով, 60-70 կիլոմետր լայնությամբ և 100 կիլոմետր երկարությամբ: «Սասունն ինքնին համագումար մըն է սեպ ու ցցված գագաթներու, որոնց ծանոթները կկոչեն ***Անտոք, Գերին և Տարկոշ»***[1]***:*** Ռազմաստրատեգիական հարմարավետ դիրքը, թերևս էական նշանակություն է ունեցել լեռնահամայնքների համար, որ լինեին ըմբոստ, պաշտպանեին իրենց կիսանկախ, երբեմն էլ անկախ կացությունը:

Հայոց պատմության բոլոր դարաշրջաններում, ամպերի մեջ մխրճվող, երկնաքերծերի տեսք ունեցող այդ պարսպապատերի ու լեռնամրոցների օղակումն էր ապրում մի լեռնահամայնք, որն ըմբոստ էր իր հայրենի լեռների պես, հպարտ էր նրա գագաթների բարձրության չափ, կարծր էր նրա ժայռերի ամրության նման: Նա հիմնավորվելով այդ լեռնակղզում՝ ընտրել էր ոչ շատ հարուստ ապրելու կյանք ու կենցաղ, սակայն գերադասել էր ազատությունը՝ բոլոր ժամանակների և բոլոր տիրակալների գահակալության հարյուրամյակներում: Այն ***«Չէ կրցած հանդուրժել օտար լուծին, չէ դարձած այլոց ստրուկ ու ռայա: Իր պարզ ու պարզունակ ապրուստը հոգացել է դառնությամբ, բայց չէ իգացած»***[2]***:***

Հայ ժողովրդի կազմավորման արշալույսին լայնարձակ Հայաստանի Հարք գավառն ընտրեց իրեն բնակատեղի ու աթոռանիստ ***Հայկ Նահապետը,*** որի լայնալիճ աղեղից սլացող նետը երաշխավորեց մեր պետականության ծնունդը: Նախաքրիստոնեական հեթանոս լուսավորիչներ ***Դեմետրեի*** և ***Գիսաների*** մեհյանների կմախքին կռթնած, վեր խոյացավ համաքրիստոնեական աշխարհում հանրահայտ, մուրատատուր, լուսաղբյուր Մշո Ս. Կարապետի վանքը, որն ավերվել է հայակեր թուրքերի և բարբարոս քրդերի ձեռքերով[3]:

Տարոն աշխարհը երկատող հայոց սրբազան Արածանիի ջրերումն էր, որ Մեծն Տրդատ արքայի աչքերի առջև, Գրիգոր Լուսավորիչ Վեհափառ Հայրապետը, զանգվածորեն քրիստոնեացրեց հայ համայնքներին՝ ժողովրդին դարձնելով համաշխարհային պատմության մեջ ***պետականորեն առաջին հավատացյալը:*** Մշո գավառի Հացեկաց գյուղում լույս աշխարհ եկավ մի հրաշամանուկ, ապագա հանճարեղ Մեսրոպը (Մաշտոցը), որը պետականություն կորցնելու եզրագծին կանգնած իր ժողովրդին օժտեց ***ամենահզոր զրահով, տվեց նրան տառ ու գիր, գրավոր լեզու և հավերժանալու հնարավորություն:***

---

[1] *Օ. Սարգսյան,* Տարոնի գոյամարտն ու գաղթը, «Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 422:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 423:

Շուրջ հինգ հարյուրամյակ հայոց թագն ու գավազանը պահած ***Արշակունյաց հարստության*** զինված ուժերի դրոշի վրա ծածանվեց Տարոնում խարսխված ***Մամիկոնյան տոհմի*** սպարապետական զինանշանը, որի առաջնորդությամբ փառք ու հզորություն, աներերություն ու անկախություն ապահովվեց հայրենի երկրին: Նրանք ոչ միայն հայրենասիրության և անձնուրացության դրվագներով հարստացրեցին հայոց պատմությունը, այլև բոլոր զորավարներն էլ (բացի Մանվել Մամիկոնյանից) իրենց մահկանացուն կնքեցին ռազմի դաշտում, թշնամու դեմ իրենց բանակները առաջնորդելիս՝ ռազմամարտի առաջին շարքերում:

Քիչ էական չէր բնակչության ընդհանուր թվաքանակն ու ազգային, կրոնական կազմի, տոկոսային փոխհարաբերությունները: Աշխարհամարտի առաջին ամիսների հաշվումներով Բիթլիսի նահանգն ուներ ***398 հազար բնակիչ,*** որից 195 հազարը քրիստոնյա էին, այսինքն՝ 180 հազար հայ և 15 հազար ասորի: Մնացած 200 հազարից 40 հազարը թուրք էին, 45000-ը՝ նստակյաց քուրդ, 47000-ը՝ վաչկատուն քուրդ, 47000-ը՝ զազա քուրդ, 10000-ը՝ չերքեզ, 8000-ը՝ ղզլբաշ, 5000-ը՝ եզիդ[1]:

Հայերը կազմում էին բնակչության համարյա կեսը, սակայն քանակը չէր կարևորը, այլ որակը, քանզի այստեղ արժե հիշատակել ֆրանսիացի մեծ զորավարի թևավոր խոսքը: Երբ Նապոլեոն Բոնապարտը փորձում է մի ճակատամարտ տալ և հարցնում է, թե թշնամին ինչքան զորք ունի, նրան պատասխանում են, թե ***հարյուր հազար: Նա շարունակում է, որ Ֆրանսիան ունի հիսուն հազար և Նապոլեոն Բոնապարտին, որը հավասարեցնում է հաշիվը: Այո՛, հայերն ունեին 180 հազար բնակիչ, բայց սասունցի և տարոնցի*** առյուծներ, որոնք հինգ հարյուրամյակ անկախության դրոշը վառ էին պահել:

Թուրքերը մահացու ատելությամբ էին լցված Բիթլիսի հայության նկատմամբ: Նրանց հիշողության մեջ դեռևս թարմ էին Սասունի ապստամբությունների մանրամասները, հատկապես 1904 թ. հերոսամարտը, որը գլխավորում էր արդեն համազգային մեծ ճանաչում ստացած ***զորավար Անդրանիկը:*** Այժմ ժամանակն էր գնալ փոխվրեժի, մանավանդ կային պատերազմի ընձեռած հնարավորությունները, կենտրոնից ստացած ոչ միայն թույլտվությունը, այլև ***հարկադրանքը:***

1914 թվականի աշնանը Բիթլիսի վալի նշանակվեց գազանաբարո ջարդարար, իթթիհատական ***Մուստաֆա Աբդուլ Խալըգ*** փաշան, իսկ Մուշի գավառապետ՝ ***Սերվեթ բեյը:*** Մուշը զինվորական ուժերի հավաքավայր էր, որտեղի զինվորական մասի ընդհանուր հրամանատարն էր Վասֆի բեյը:

Մուշի իթթիհատի կազմակերպության գլուխն էին կանգնած Ռաշիդը և Ֆալամուզը: Այդ բոլորի վերին խորհրդատուն ու վարիչը Մուշի երեսփոխան Հաջի Իլիազն էր: Նրանք անմիջականորեն գլխավորեցին Տարոնի հայ բնակչության կոտորածը: Նրանք նախօրոք Տարոնի աշխարհը բաժանեցին մոտ 20 շրջանի և յուրաքանչյուրի համար նշանակեցին հատուկ հրոսակախմբեր, որոնք պետք է ոչնչացնեին հայերին[2]:

Ինչպես մյուս վիլայեթների, այնպես էլ Տարոնի եղեռնը սկսվում է զորահավաքով ու պատերազմական տուրքով, որոնք վեր էին ածվում վայրի կամայականության հայ ժողովրդի նկատմամբ: Դեռ 1914 թվականի նոյեմբերի 8-ին Տարոնի առաջնորդ Ներսես եպիսկոպոս Խարախանյանը հաղորդում է պատրիարքարան. «Ժամանակը վտանգներով հղի է. ժողովուրդն ամեն բանե զրկվիլ հանձն առած է, միայն թե կյանքի ապահովություն մը ունենա. բայց ո՞վ պիտի տա անոր ցանկալի ապահովությունը. ***կառավարությո՞ւնը. այն է արդեն ամեն կերպ անկարգության և չարիքներուն***

[1] «Հայկական ջարդեր. Տոքթ. *Եոհաննես Լեփսիուսի* տեղեկագիրը». Պեյրութ, 1965, էջ 135:

[2] *Մ. Վ. Արգումանյան,* նշված աշխատությունը, էջ 390:

աղբյուրը: Հանգամանքները կհաստատեն, որ ժողովրդի այդ կասկածները անհիմն չեն: Կառավարությունը իր վարվելակերպով հայտնի կընե, որ հայերու վրայեն վստահությունը բոլորովին վերցուցած է և ***ինքն է, որ մութ տարրերը կգրգռե հայերու դեմ... Հաստատուն նշաններ կան, թե կառավարությունը պատրվակ կփնտրե գավառիս հայերը աղետներու ենթարկելու.*** և այս տագնապալի վիճակին հանդեպ շվարած, բացի երկնային պաշտպանութենե՝ ուրիշ միջոց մը չենք տեսներ»[1]: Ինչպիսի դառն իրականություն և որպիսի անճարակություն հայ հոգևորականի[2]:

Դեպքերին լավատեղյակ, օտարազգի ***Ջեյմս Բրայսը*** Բիթլիսի և Սղերդի հայության մասին գրած էջերը վերնագրել է «Պիթլիսի և Սղերդի ջարդերը. 180 000 հայության սրախողխող»: Այնտեղ ասված է. «1915 թվականի մայիսի վերջերը Ճէվտէթ պէյ Վանէն արտաքսուեցաւ և քաղաքը Հայոց կողմէ գրաւուեցաւ: Ճէվտէթ փախաւ դէպի հարաւ և Պոհթան կտրելով՝ Սղերդ մտաւ իր 8000 զինուորներով, զոր անուանած էր Գասապ քապուրի (Մսագործ զօրագունդ): Անիկա ջարդեց Սղերդի քրիստոնեաներուն մեծագոյն մասը, և հրաման ըրաւ, որ Հայոց Առաջնորդ Եղիշե Վրդը և Քաղդէացւոց Ատա Շէտ եպիսկոպոսը հրապարակաւ խարոյկի վրայ այրեն: Ապա Ճէվտէթ, իրեն հետեւորդ ունենալով Խալիլ պէյի փոքրիկ բանակը Պիթլիսի վրայ քալեց, Յունիսի մէջտեղերը: Իր հոն հասնելէն առաջ հայերն ու քիւրտերը իրարու հետ համաձայնած էին համերաշխաբար գործելու, փոխադարձ պաշտպանութեան հիման վրայ, ստիպողական պարագաներու տակ, սակայն Ճէվտէթ խանգարեց այդ ներդաշնակութիւնը: Նախ անիկա հայերէն 5000 ոսկի գանձեց և կախեց Յողիկեան և ուրիշ 20-ի չափ հայ առաջնորդներ, որոնցմէ շատերը պատերազմի դաշտին վրայ թուրք զինուորներու վէրքերը կը դարմանեին: Յունիս 25-ին թուրքերը պաշարեցին քաղաքը և շրջակայ գիւղերու հետ ունեցած հաղորդակցութիւնները խզեցին: Կտրիճ երիտասարդները ցորեկ ատեն իրենց տուներէն ծերբակալուեցան և քանի մը օրէն քաղաքէն դուրս հանուելով գնդակահարուեցան և թաղուեցան փոսերու մէջ: Երիտասարդ գեղեցիկ կանայք և տղաք խուժանին մէջ բաժնուեցան և «անպէտ» սեպուածներն ալ հարաւը քշուելով Տիգրիսի մէջ խեղդամահ եղան:

Անոնք որ դիմադրեցին՝ իրենց վերջին փամփուշտը սպառելէ վերջ թոյն առին իրենց ընտանիքներուն հետ և մեռան հերոսական մահով: Արհեստավորներէն հարիւր ընտանիքի չափ վար դրուեցան, զինուորական ստիպողական ծառայութեանց համար, սակայն անոնք ալ վերջէն սրամահ եղան: Պիթլիսի 15000 հայութիւնը այսպէսով զոհ գնաց թուրք բարբարոսութեան»[3]:

Պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանը, օտար աղբյուրներից քաղած նյութերի հիման վրա Բիթլիսի շրջանի հայության կոտորածի մասին տալիս է ընդհանրական շարադրանք[4]: Նրա հաստատմամբ՝ Բիթլիսի շրջանում ջարդը կատարվեց ամենագազանային ձևով: Սկզբում սրի քաշվեցին զորանոցների կառուցման վրա աշխատող հայ տղամարդիկ, այնուհետև հավաքեցին մոտ 9000 կանանց ու երեխաների և երկու օր պահելուց հետո քշեցին Տիգրիսի ափը, որտեղ և բոլորին ջարդեցին ու թափեցին գետը: Միայն մի գյուղում տների մեջ հավաքել և այրել էին 1000 մարդ[5]: Բիթլիսի 3000 տուն հայերից ազատվել էր ընդամենը 600-700 հոգի: Թուրքական բանակի 44-րդ գնդի 4-րդ վաշտի սպա Հագգի էֆենդին իր ձեռագիր հուշատետրում արձանագրել է. «Այսօր ճանապարհին (Բիթլիս-Դիարբեքիր) հանդիպեցինք երկու ժանդարմների, որոնք տանում էին 40-50 հատ կիներ, տղամարդիկ և երեխաներ, ոտաբոբիկ էին

---

[1] ***Զավեն արքեպս.,*** նշված աշխատությունը, էջ 71:
[2] ***Մ. Վ. Արզումանյան,*** նշված աշխատությունը, էջ 300:
[3] ***Լորտ Պրայս,*** Հայկական ջարդերու փաստաթուղթերը, Ա մաս, Կ. Պոլիս, 1920, էջ 129-130:
[4] ***Ջ. Ս. Կիրակոսյան,*** նշված աշխատությունը, էջ 352:
[5] ***A. Toynbee,*** Armenian Atrocities, p. 87-88.

նրանք և լալիս էին. հաց էլ չուներին: ...Ժանդարմներին հարցրինք, թե ո՞ւր են տանում սրանց ու պատասխանեցին, թե մի քիչ տեղ էլ պիտի տանենք ու հետո բոլորին սպանենք»[1]: Այնուհետև նա նկարագրում է Բիթլիսում տեղի ունեցածը: «Ժանդարմները բաց են անում տների դռները և դուրս հանելով ներսը գտնվողներին՝ հավաքում են մի հրապարակի վրա: Հավաքվածների թիկունքը պահում են ժանդարմները: Մարդիկ ոչ մի դիմադրություն ցույց չտվին: Վերջապես Բիթլիսն էլ մաքրվեց»[2]:

Յոհաննես Լեփսիուսը Բաղեշի ջարդի մասին գրում է.

«Բաղեշի կառավարիչն էր Մուսթաֆա Խալիլ, Ներքին գործոց նախարար Թալեաթ պէյի աներձագը: Արդէն քաղաքին և շրջականերուն 20էն 45 տարեկան բոլոր Հայերը ժողված էր, բանակին ծառայութեան համար (այսինքն ճամբաները շինելու և բեռ կրելու համար: Հայերու եկեղեցիներն ու տուները պէտք էր որ պարպուէին, զինուոր բնակեցնելու համար): *Ճիհատի յայտարարութենէն յետոյ* մոլլաները, շէյխերը և հրոսակները, իրենց գլուխը ունենալով նշանաւոր աւազակներ, սկսան շարժիլ: Մահմեդականները զինուած էին, և մզկիթներու մէջ Քրիստոնեաներու դէմ ատելութիւն կը քարոզուէր: Արդէն Դեկտեմբեր և Յունուար ամիսներուն, շատ մը չարագործութիւններ կատարուած էին: Պիթլիսի թուրքերը քիւրտ հրոսախումբ մը կազմելով կը պաշարէին Ուրտանք գիւղը: Չեռք անցուցին Բալապըլըք Կարապետ անունով գիւղացի մը և ուրիշ մէկ քանիներ, ամէնքն ալ ձեռնակապերով քաղաք տարին և չարչարանքներու ենթարկեցին, մօրուքի թելերը քաշելով փրցուցին: 300 հոգիէ բաղկացած ուրիշ հրոսակախումբ մը Քումաճի Ֆարոսի (քիւրտ նշանաւոր շէյխ Ճէլալէտտինի շառաւիղներէն մէկը) և էմիր Մեհմէտի առաջնորդութեամբ, Կարկարի մարզին մէջ 10 գիւղերու վրայ յարձակեցաւ, աւերեց զանոնք և կրակի տուաւ: Չսպաննուողները Վան փախան:

Յունիսին, Բաղէշի մէջ ջարդ մը տեղի ունեցաւ: Բաղէշի և շրջակայ գիւղերու Հայերը, Տիարպէքիրի ուղղութեամբ դրկուեցան: Այրերը սպաննուեցան, 200 կիներ և մանուկներ ճամբան: Տիգրիս գետին եզերքը հասնելուն, ջուրի մէջ խեղդեցին: Այս տարագրութեան մէջ է որ պետք է սպաննուած ըլլայ նաև երեսփոխան *Վռամեան:* Թուրք աղբիւրէ կը պատմուի թէ Հայերը ուզեցին ինքզինքնին ազատել, և հետեւաբար ժանտարմաները պարտաւորուեցան սպաննել զանոնք»[3]:

Բաղեշից հետո հերթը հասավ Մշո դաշտին և բուն քաղաքին: Հայկական այդ ողբերգության, գողգոթայի մասին փաստերն առատ են, վկայությունները բազում ու սրտաճմլիկ, պատմաբանների ստեղծած շարադրանքը ևս քիչ չէ: Տեղի սղության պատճառով մեջբերենք *լորդ Բրայսի*՝ այդ մասին հավաքած նյութերի ամփոփագիրը, որը վերնագրված է ***«Մուշի ջարդերը - խարույկներու վրա խորոված դիակները»:*** Այնտեղ կարդում ենք.

«Պիթլիսի այս ահաւոր ջարդերէն շատ առաջ՝ Տիարպէքիրի քիւրտերն ու թուրքերը Պէքրան և Պէլէք արիւնարբու ցեղերու աջակցութեամբ սրբած էին Սլիվանի, Պիշէրիկի և Տիարպէքիրէն Սասուն տարածուող ընդարձակ դաշտագետինի հայութիւնը: Քանի մը հազար փախստականներ Սասուն ապաստանած էին, իբրև ապահով վայր, որ զերծ էր մեծատարած սարսափներէն: Ասոնք Սասունցիներուն պատմեցին գործուած ահաւոր չարիքները: Ասոր վրայ Սասունցիք գծեցին իրենց հետեւելիք ընթացքը: Անոնք ամէն գնով պիտի ընդդիմանային թուրքերուն: Կովկասի ճակատին վրայ տեղի ունեցած պատերազմական անցուդարձերուն բոլորովին

[1] «Մի թուրք սպայի հիշատակարանից», Թիֆլիս, 1917 թ., էջ 37-38:

[2] Նույն տեղում, էջ 43:

[3] «Հայկական ջարդեր, Տոքթ. *Եոհաննես Լեփսիուսի* տեղեկագիրը», Պեյրութ, 1965, էջ 140-141:

անտեղեակ էին Սասունցիք: Սասուն երկու ուղղութեամբ յարձակում կրեց: Պէլէք, Պէքրան ցեղերը և Զիլանի ծանօթ շեյխ Շէկօն և ուրիշ շատեր կառավարութեան կողմէ զինուեցան: Այս լեռներուն 15000 Հայերը Մուշէն և Տիարպէքիրէն եկած 15000 Հայերուն հետ միանալով՝ ետ մղեցին շատ մը կատաղի յարձակումներ, որոնց մէջ քիւրտերը մարդու և զէնքի ծանր կորուստ ունեցան: Ասոր վրայ թուրք կառավարութիւնը Մուշի Առաջնորդին միջոցաւ անոնց ընդհանուր ներում շնորհել առաջարկեց՝ եթէ անոնք վայր դնէին իրենց զէնքերը և միանային Թուրքիոյ պաշտպանութեան գործին մէջ. իրենց անկեղծութեան իբրեւ ապացոյց բացատրեցին թէ Սլիվանի, Պուլանըքի և ուրիշ տեղերու ջարդերը նզբալի սխալ հասկացողութեան մը հետեւանքը եղած էին: Հալածանքները անմիջապէս վախճան գտան և Մուշ երեք շաբաթի չափ խաղաղութիւն վայելեց: Թուրք կառավարութիւնը աչալուրջ հսկողութիւն կը կատարէր Հայոց շարժումներուն վրայ, որոնց թոյլ չէր տրուեր ոևէ տեղ համախմբուիլ: Յունիսի վերջին շաբթուն Քեազիմ անունով զինուորական մը 10000 մարդոց գլուխը անցած՝ լեռնային հրետանիով եկաւ զօրացնելու Մուշի պահակազօրքը: Անոր ժամանումին յաջորդ օրն իսկ զօրաւոր հետախոյզներ հաստատուեցան այն բլուրներուն վրայ, որոնք Մուշի վրայ տիրապետող դիրք մը ունէին: Այսպէս ընելով անոնք յաջողեցան խզել հաղորդակցութիւնը Մուշի և Սասունի միջեւ: Քիւրտերէ բաղկացած *Ֆէտայի* հրոսակախումբեր գիւղերու և Մուշի յարաբերութիւնները ջնջեցին, այն աստիճան, որ ոչ ոք տեղեակ էր, թէ ինչ կ'անցնէր կը դառնար դրացի գիւղերու մէջ:

Յուլիսի սկիզբները թուրքերը հրամայեցին Հայոց որ յանձնէին իրենց զէնքերը և վճարէին մեծագումար փրկանք: Քաղաքին և գիւղերուն մեծամեծներն ու գիւղապետները ըմբոստացուցիչ չարչարանքներու ենթարկեցին: *Շատերուն եղունգները արմատներէն աքցանով փրցուցին, ակռաները մուրճով փշրեցին, քիթերը ածելիով կտրեցին: Այն աղջիկներն ու կիները, որոնք եկան արտասուաթոր վիճակով փրկել ջանալու իրենց սրտահատորները այդ տանջանքներէն՝ վայրագաբար բռնաբարուեցան ամէնուն ներկայութեանը:* Զոհերուն մահուան աղեկտուր աղաղակները օդը կը լեցնէին, սակայն դահիճները միշտ անզգայ կը մնային: Յուլիս 10ին թուրք զօրագունդեր, միացած բանտերը փակուած ոճրագործներու, սկսան գիւղերէն հաւաքել երիկ մարդիկը: Ասոր վրայ Մուշի դաշտի հարիւր գիւղերէն շատերը իրենց զէնքերը վերցնելով յուսահատական դիմադրութիւն մը ըրին, մինչեւ որ իրենց ռազմամթերքը հատաւ և ամէնքը զոհ գնացին թուրք աններող դանակին:

Մուշի մէջ Հայերը ամրացան եկեղեցիներու, քարաշէն տուներու մէջ և չորս օր անընդհատ ինքզինքնին պաշտպանեցին: Գերման սպաներ կը վարէին թուրք հրետանին: Բոլոր պատերազմիկ Հայերը, մինչեւ վերջին մարդը, կռուելով ինկան քանդուած եկեղեցիներու և տուներու փլատակներուն տակ:

Թուրք խուժանը խոյացաւ անմեղ կանանց ու մանուկներու վրայ և զանոնք քաղաքէն դուրս հանելով խումբերով այրեց ու ջարդեց; Ալիճան, Մեղրագոմ, Խասգեղ և ուրիշ հայ գիւղերու բնակիչները շեղջակոյտ փայտերով շինուած խարոյկներու վրայ խորովեցին: Շատեր այս ահաւոր տեսարանին առջեւ խելագարեցան, ուրիշներ բոցերու ճարճատիւններու մէջ ծնրադիր կ'աղօթէին, իսկ ոմանք սարսափած ողորմելի ճիչերով օգնութիւն կը հայցէին: Դահիճները, որոնք բոլորովին անզգայ կը մնային այս յուզիչ տեսարաններու առջեւ, մանուկներու սրունգներէն բռնած զանոնք կը նետէին բոցերուն մէջ, հրկիզուող իրենց մայրերուն, վայրենի պոռչտուքներով. «Ահա ձեզ ձեր առիւծները»: *Ռուսերու ձեռքը ինկած թուրք գերիները կը պատմէին, թէ այս բարբարոսութիւններէն օրեր վերջ տակաւին օդը տոգորուած էր մարդկային այրուած դիակներու հոտովը:*

Մուշի դաշտի 60000 հայութենէն շատ քիչեր ազատելով ռուսական սահմանագլուխը անցան, իսկ ոմանք ալ Սասուն ապաստանեցան»[1]:

Բարեբախտաբար ***Մուշի*** և ***Սասունի*** եղեռնագործության մասին ստեղծվել է ծավալուն գրականություն:

Դրանցից պետք է առանձնացնել և արժանին հատուցել պրոֆ. Հ. Մ. Պողոսյանին, որը հենվելով հիմնականում հայկական սկզբնաղբյուրների, արխիվային վավերագրերի, ժամանակի մամուլի ու գրականության ընձեռած փաստերի վրա, շարադրել է ***Սասունի ամբողջական*** պատմությունը, առանձնակի ուշադրություն դարձնելով նրա հայկական կյանքի վերջին երկու տարիների և հատկապես ***հայազրկման*** պրոցեսին[2]: Նրա օգտագործած և ընդհանրապես հայկական նյութերից մեջբերենք մի քանիսը, տալով դեպքերի զարգացման ընթացքը:

Մուշում ողբերգությունը սկսվել է ***1915 թ. հունիսի 28-ի առավոտյան:*** Նախքան այդ Տարոնի հարթավայր էր բերվել չեթեներից բաղկացած 2000-ոց մի ջոկատ, ապա Խարբերդից տեղափոխվեց 20 վաշտից բաղկացած «կանոնավոր» բանակ: Մուշի շրջակայքում էր նստած ոչ անհայտ, հայակուլ, քուրդ Մուսա բեկն իր մեծաթիվ «համիդիեներով»:

Դեպքերին ականատես մշեցի ***Գեղամ Տեր-Կարապետյանը*** Մուսա բեկի առևանգած Գյուլիզարի հետ դատական դահլիճում ամուսնացած այդ մտավորականն իր հուշերում պատմում է. «1915 թ. հունիսի 28-ին Հայերը լուռ էին իբրև մահվան դատապարտվածներ. կը զգուշանան ճիչ մը անգամ հանելե. գիտեն, որ պատրվակ կը փնտրեն:

Նույն գիշեր թուրք թաղերու մեջ մունետիկով կառավարություն կը պատվիրե, որ բոլոր այն իսլամներ, զինվոր կամ չեթե վաղը դուրս չելլեն տուներեն ու զգուշանան իրենց տուներու մեջ որևէ հայ պահելու: Հետո ***ճիհատ*** կը քարոզվի զինվորներուն ու չեթեներուն և քաղաքի այն թուրք սրիկաներուն, որ ջարդին կը մասնակցին:

---

[1] ***Լորտ Պրայս,*** Հայկական ջարդերու փաստաթուղթեր, Կ. Պոլիս, 1920, էջ 141-143:

Մենք այդ ընդարձակ քաղվածքը մեջբերեցինք, քանի որ նրա հեղինակը ժամանակակից է, ապա օտարերկրացի: Ո՞վ էր Բրայսը:

Ջեյմս Բրայս (1838-1922) - անգլիացի պետական գործիչ, Լորդերի պալատի անդամ: Հիմնել է Անգլո-հայկական ընկերությունը, 1876 թ. այցելել է Կովկաս և Հայաստան, իր դիտարկումներն ընդհանրացնելով "Transcaucasia and Ararat" գրքում, որը լույս էր տեսել Լոնդոնում 1877 թ.: 1916 թ. Լոնդոնում նրա լույս ընծայած «Հայերի նկատմամբ վերաբերմունքը օսմանյան կայսրությունում» ծավալուն ժողովածուն բազմաթիվ փաստաթղթեր է պարունակում 1915-1916 թթ. Թուրքիայում հայերի տեղահանության ու զանգվածային կոտորածների մասին: Ժողովածուն բովանդակում է 158 փաստաթուղթ: Դրանք ջարդի անմիջական ականատեսների չեզոք երկրների Շվեյցարիայի, Դանիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների (վերջինս համաշխարհային պատերազմի մեջ էր մտել 1917 թ.) և այլ պետությունների միսիոներների, բժիշկների, պրոֆեսորների, սանիտարուհիների, պետական ծառայողների և այլ ներկայացուցիչների պատմածներն են, ինչպես նաև նամակներն ու դիմումները իրենց կառավարություններին: Բրայսի ժողովածուում զետեղված են նաև Թուրքիայի դաշնակից կայզերական Գերմանիայի ներկայացուցիչների մերկացնող ցուցմունքներն ու վկայությունները և շատ այլ նյութեր: Համադրման ու համեմատման միջոցով Բրայսին հաջողվել էր հաստատել ժողովածուում զետեղված փաստերի բացարձակ հավաստիությունը: Գրքին կցված է Ջ. Բրայսի ծավալուն առաջաբանը, որի մեջ հեղինակը տալիս է Հայաստանի պատմության համառոտ ակնարկը հնագույն ժամանակներից մինչև 1915 թ. և մանրամասն շարադրվում արևմտահայության տեղահանության ու զանգվածային ջարդերի պատմությունը: Այդ նույն 1916 թ. Ջ. Բրայսի ժողովածուն Փարիզում հրատարակվեց ֆրանսերեն՝ լրացված երեք նոր փաստաթղթով, որոնք չէին բերված անգլիական հրատարակության մեջ: Կրճատված տեսքով հրատարակվել է նաև հայերեն:

Սույն ծանոթագրությունը (հեղինակ *Ռ. Սահակյան*) տես «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 732-734:

[2] ***Հ. Մ. Պողոսյան,*** Սասունի պատմությունը, Երևան, 1985, էջ 293-345:

Նենգավոր լուսաբացին, հունիսի 28-ին հայոց թաղերը չորս կողմե թնդանոթի կը բռնվին. բոլոր ժողովուրդը ներս փակված, թնդանոթածգության հետ միասնաբար ութ տաս հազար հրացաններ կորոտան անմեղ, անզեն ու ահաբեկ ժողովրդին վրա, տուները կը հրդեհվին, տուները կը փլին, աղեխարշ վայնասուններ ու աղաղակներ քաղաքը կը լեցնեն:

Ու թնդանոթները կորոտան...»[1]:

Եվ այսպես սկսվեց Մուշի ողբերգությունը, որի մասին ականատեսներից մեկը սրտի ցավով ու կսկիծով պատմում է.

«Տեսա զույգ մարագներ, ուր լեցուցին իմ բախտակիցները, կրակի ճարակ դարձած: Անոնց բոցերուն լույսը կը լուսավորեր Խաս գյուղի փողոցները: Կը լսեի սարսափելի պայթումի ձայներ կրակի մեջեն: Մեռավ լմնցավ աշխարհ մը շենցնող ժողովուրդը մեկ ժամվա մեջ. մսե լեռ մը, մարդկային ծով մը կը փճանար: Եվ այդ բոցերուն առջև մարդոց բազմություն մը, որ այդ զարհուրելի և աշխարհի պատմության մեջ չտեսնված տեսարանին առջև, շնական քրքիջներ կարծակեր»[2]:

Մուշի բնակչության մի ստվար մասը, տեսնելով այդ անտանելի պրոցեսը, դիմում է ինքնապաշտպանության, որը ղեկավարում էր քաջ հայդուկ Կոտոյի Հաճին: Նա հմուտ ազատամարտիկ էր, հայ ազատագրական պայքարի բոցերի միջով անցել էր, սկսած 90-ականներից: Այժմ նա կանգնած էր, ***«կենաց ու մահու»*** միջև տարբերություն չդնող, մինչև վերջը պայքարող, տարոնցի քաջերի ինքնապաշտպանական շարժման գլուխ և ժողովրդին առաջնորդում էր կռիվների ***մահ կամ ազատություն*** կարգախոսով:

Պրոֆ. Հ. Մ. Պողոսյանը ընդհանրացնում է[3], որ Մուշի ինքնապաշտպանության ղեկավար Կոտոյի Հաճին հանդուգն և քաջ հին հայդուկ էր: Նա ակտիվորեն մասնակցել էր 1893-1894 թթ. դեպքերին, որի պատճառով ձերբակալվել ու ուղարկվել էր Աքեայի բանտը: Նա մասնակից էր 1901 թ. Առաքելոց վանքի կռիվներին, իսկ 1904 թ. իր եղբոր հետ Սասունում կռվում էր կառավարական զորքերի և քրդական ուժերի դեմ: Այս կռիվներում սպանվում է նրա եղբայրը: Կռիվներից մեկի ժամանակ գնդակը տարել էր Կոտոյի Հաճիի ցուցամատի մի մասը: 1904 թ. Սասունի ինքնապաշտպանությունից հետո, երբ նա Պարսկաստանում էր, բժիշկը ցանկանում է նրա մատը թմրեցնել և ապա վիրահատել: Հաճին ամուր նստում է աթոռի վրա, գրպանից հանում է մի կարմիր թաշկինակ «և քանի մը անգամ ծալելով բերանը կոխեց ու ձեռքը երկնցուց զարմացած բժշկին. «իշտե գործիդ սկսե»... Ամբողջ գործողության ժամանակ, մեր Կոթոյի Հաճին ուֆմ իսկ չըրավ...»[4]:

Հաճիի տղան չնայած փոքր էր, սակայն մասնակցելով կռիվներին, արդեն սպիներ ուներ իր մարմնի վրա, իսկ նրա կինը՝ Յուղոն և քույրը՝ Փառանձեմը, նույնպես անվախ կանայք էին, որոնք «քանիցս բանտ են տարված, չարչարված, բայց փաստեր չգտնելով՝ ազատ են արձակած»[5]:

Մուշ քաղաքի բնակիչների դիմադրությունը տևեց մի քանի օր: Կռվող մարտիկների թիվը այստեղ հասնում էր 60 հոգու, որոնք ունեին մի քանի տասնյակ հրացաններ և 30 հազար փամփուշտ, որից 24 հազարը կրակվեց երկու օրում: Վերջին օրը հայերը զգացին, որ անհնարին է դիմադրել թուրքական այդ ահռելի ուժերին

---

[1] «Պատմութիւն Տարօնի աշխարհի», պատմագրեց ***Կարո Սասունի,*** Պեյրութ, 1956, էջ 844:

[2] Նույն տեղում, էջ 856: Տե՛ս նաև ***Հ. Մ. Պողոսյան,*** նշված աշխատությունը, էջ 324-325:

[3] ***Հ. Մ. Պողոսյան,*** նշված աշխատությունը, էջ 327-328:

[4] ***Մալխաս,*** Ապրումներ, Պոսթըն, 1931, էջ 274:

[5] «Հեղափոխականի մը հիշատակները», հատ. Դ, էջ 115:

և որոշեցին ժողովրդի հետ դուրս գալ քաղաքից, անցնել գետը և բարձրանալ դեպի Սասունի լեռները: Այդպես էլ արվեց: Սակայն, երբ բնակչությունն անցնում էր գետը, թշնամին նկատում է և սկսում է նրա վրա կենտրոնացնել կրակը: Փախստական հազարավոր բնակիչների թուրքական զորքերը սպանում են Քոփ ու Կերմավ գյուղերի մոտ, նրանց մի մասին միայն հաջողվում է ազատվել կոտորածից և բարձրանալ Սասուն: Թուրքական ջարդարարների կողմից Մուշի ամբողջ արու բնակչությունը սպանվեց, իսկ կանանց և երեխաներին լցրին մարագները և այրեցին: Քանդվեց և թալանվեց Մշո Առաքելոց վանքը: Թուրքերը չխնայեցին անգամ քաղաքի գերմանական որբանոցում գտնվող 300 որբերին: Հերոսաբար էին կռվում Մուշի պաշտպանության ղեկավարներ Հածի Հակոբն ու Պոլեյի (Պոլեյան) Մջոն: Հաջի Հակոբի «14 տարեկան տղան անգամ զենք ի ծեռքին քաջաբար կը կռվեր հոր կողքին և երբ հերոսի մը նման դուրս կը խոյանա դեպի թշնամին, կիյնա գնդակներու տարափին տակ»[1]: Կոտոյի Հաջին ինքնապաշտպանության վերջում «երբ կը տեսնա, որ ռազմամթերքը սպառեցավ, տունը կրակի կուտա, կինը կը գնդակահարե ու ինքն ալ, ամեհի առյուծի պես մռնչելով կիյնա յուր վերջին գնդակեն»[2]:

Չնայած Մշո դաշտի գյուղերը մի քանի օրվա ընթացքում մոխրակույտերի վերածվեցին և նրա բնակիչները զոհ գնացին թուրքական արյունարբու խուժանի սրին, սակայն եղան տեղեր, որտեղ ժողովրդի ինքնապաշտպանությունը ավելի համառ էր և երկար տևեց: Առանձնապես հերոսական պաշտպանության վերածվեց Ս. Կարապետ վանքը և նրա շրջակայքը: Ավրան, Ալիջան գյուղերը և Վարդենիսի շրջանի բնակիչները որոշեցին զենքը ձեռքին մեռնել, սակայն չհանձնվել թշնամուն: Բայց հակառակորդը զինված էր մինչև ատամները, նրա ուժերը շատ էին: Թուրքական բանակի հրամանատարությունը, պլանի համաձայն, յուրաքանչյուր գյուղի բնակչությանը կոտորելու համար առանձին զորաբաժին էր հատկացրել, և յուրաքանչյուր հրամանատար գիտեր, թե իր ուժերով որ գյուղի վրա պետք է հարձակվեր:

Թուրքական բարբարոսները ժողովրդին ոչնչացնելու հետ միասին պայթեցնում և ոչնչացնում էին հին, դարավոր հուշարձանները, թալանում էին վանքերին և եկեղեցիներին պատկանող գույքը: Այդ մասին նշված է Ռուսաստանի գիտությունների կայսերական ակադեմիայի 1915 թ. հոկտեմբերի 14-ին կայացած կոնֆերանսի մասնակիցների դիմումում:

Սերվեթին հաջողվեց համառ ջանքերի միջոցով ընկճել Մշո պաշտպաններին, որից հետո 2500 հոգի հայ կանայք և երեխաներ տեղափոխեց Սողգոմ գյուղը և կենդանի-կենդանի այրեց, մնացածներին տարավ այլ տեղեր ու սպանեց: Այսպիսով, մինչև ռուսական բանակի Մուշ հասնելը քաղաքում մնացին 25 արհեստավորական ընտանիքներ: Մշո դաշտի և քաղաքի 180 հազար հայ բնակիչներից ազատվեցին միայն 20 հազարը, իսկ մնացածները զոհ գնացին թուրքական ջարդարարներին[3]:

Բիթլիսի վիլայեթում հայ ազգային-ազատագրական շարժման ամենակարևոր կենտրոններից մեկը, աննկուն ոգի և հարատևելու կամք ունեցողը մնաց Սասունը, որի գլխով շատ մահաբեր խորշակներ էին անցել, Մուշի և նրա շրջակա գյուղերի մեծ մասի անկումից հետո, նորից դարձավ կատաղի կռիվների բեմահարթակ: Դարերի

---

[1] *Վասպուրական,* Վան-Վասպուրականի ապրիլյան հերոսամարտի տասնհինգամյակին առթիվ, 1915-1930, Վենետիկ, Ս. Ղազար, 1930, էջ 138:

[2] *Վ. Փափազյան,* Իմ հուշերը, հատ. Բ, էջ 377:

[3] *Հ. Մ. Պողոսյան,* նշված աշխատությունը, էջ 331:

ըմբոստության ոգին նորից սավառնում էր Հավատորիկի, Օիրինկատարի, Կուրտկի, Դլավերի, Անդոքի և այլ լեռների վրա, որտեղից Սասունի քաջերը սկսեցին իրենց նոր հերոսամարտերը[1]: Լեռնականները կռվելով թուրքական ու քրդական զինված ուժերի դեմ, միաժամանակ պաշտպանում էին լեռնագավառ տեղափոխված հայ ազգաբնակչությանը:

Այժմ տեսնենք, թե ինչպես է ներկայացնում Սասունի ինքնապաշտպանությունը Ջեյմս Բրայսը: Նա գրում է.

«Մինչ ճեվտէք պէյի «Մսագործ վաշտերը» և Քեազիմ պէյի կանոնաւոր զինուորները Պիթլիսի և Մուշի մէջ զբաղված էին: Յուլիսի սկիզբները թուրք հեծելազօրքեր ղրկուեցան Սասուն, քաջալերելու համար քիւրտերը, որոնք Յունիսի մէջ Հայոց կողմէ չարաչար պարտութեան ենթարկուած էին: Թուրք հեծելազօրքը արշաւեց Սասունի ստորին հովիտը և բուռն կռիւէ մը վերջ բռնագրաւեց քանի մը հայ գիւղեր: Այդ միեւնոյն պահուն վերակազմուած քիւրտ ցեղերը փորձեցին Սասունի ճամբան խզել հարաւէն, արեւմուտքէն և հիւսիսէն: Յուլիսի վերջին երկուշաբաթներու ընթացքին շարունակաբար կռիւներ մղուեցան, երբեմն նոյնիսկ գիշերները: Ընդհանրապէս հայերը յաջողութեամբ ետ կը մղէին քիւրտերու յարձակումները: Սասունի ժողովուրդը մտահոգուելու ուրիշ պատճառներ եւս ունէր:

Ազգաբնակչութեան թիւը փախստականներով կրկնապատկուած էր: Կորեկի վերջին հունձքը շատ անյաջող անցած էր: Մեղրը, պտուղը և ուրիշ տեղական արտադրութիւնները սպառած էին և ժողովուրդը չաղուած ոչխարի միսով կը սնանէր: Ի վերջոյ ռազմամթերքը սկսած էր սպառիլ: Ուրեմն աւելի վատթար օրեր կը սպասէին ժողովուրդին: Քեազիմ պէյ Մուշը և անոր գիւղերը նուաճելէ ու ջարդելէ վերջ խոյացաւ այս լեռնականներուն վրայ: Կռիւը վերսկսաւ Սասունի բոլոր սահմաններուն վրայ: Մեծ քնդանօթները հսկայ նախճիրներ գործեցին Հայոց մէջ: Կորիւն, Տիգրան և 20 ուրիշ լաւագոյն մարտիկներ պայթած թուրք միակ ռումբով մը սպաննուեցան: Թնդանօթներու ներկայութենէն քաջալերուած հեծելազօրքն ու քիւրտերը մեծ կորովով յառաջ նետուեցան:

Հայերը պարտավորուած էին իրենց պաշտպանութեան արտաքին գիծերը լքել և օրէ օր ետ քաշուիլ դէպի Անդոկի 10000 ոտք բարձրութիւն ունեցող կեդրոնական կատարը: Ոչ-պատերազմիկ կիներն ու տղաք, ոչխարաց հօտերն ու արջառները մեծապէս կը խանգարէին մարտիկներուն ազատ շարժումները, որոնց ունեցած երեք հազարանոց ուժը կոտորակուելով իջած էր մինչև 1500ի: Ահաւոր խուճապ կը տիրէր թուրքերու բուռն յարձակումներուն և Հայոց հակայարձակումներուն ընթացքին: Հայերէն շատեր իրենց վերջին փամփուշտները սպառելով ապառաժներու վրայ ջախջախեցին իրենց հրացանները և փարեցան իրենց ատրճանակներուն ու դաշոյններուն: Թուրք զինուորներն ու քիւրտերը, որոնք 30000է կը բաղկանային, աստիճանաբար կը մօտենային Հայոց դիրքերուն:

Ասկէ վերջը էր որ տեղի ունեցաւ այն յուսահատական և հերոսական պայքարներէն մին որ միշտ լեռնականներու հպարտութիւնը կազմած է: ***Մարդիկ, կանայք և մանուկներ կռուեցան դանակներով, գերանդիներով, քարերով և ամէն բանով որ կրնային ձեռք անցնել:*** Անոնք լեռան զառիթափերէն վար կը գլտորէին ապառաժի խոշոր կտորներ, սպաննելով թշնամիէն շատեր: Կուրծք կուրծքի ահաւոր կռիւի մը մէջ կիներ գտնուեցան որոնք իրենց դաշոյնները բազմաթիւ թուրքերու կոկորդը մխրճեցին: Օգոստ. 5-ին, կռիւի վերջին օրը, արիւնով ներկուած Անդոկի ապառաժները ինկան թուր-

[1] *Հ. Մ. Պողոսյան,* նշված աշխատությունը, էջ 331:

քերուն ծեռքը: Սասունի հայ մարտիկները, բաց ի անոնցմէ որոնք Թուրքերու ետեւը անցեր էին՝ զարնելու համար անոնց կողերը, ինկան ճակատամարտի մէջ: *Երիտասարդ կիներէն շատեր թուրքերուն ծեռքը չիյնալու համար՝ ապառաժներէն վար գահավիժեցան, ոմանք իրենց սիրասուն մանուկները իրենց կուրծքին վրայ սեղմած: Վերապրողները ասպատակախումբեր կազմելով կը նեղէին թուրքերը: Ռուբէն և Վահան Փափազեան փոքրիկ խումբերով Վան անցան, որոնք Սեպտեմբերի վերջերը երեւան հասան:* Ասոնց տուած տեղեկութեանց համաձայն վերապրողներուն թիւը 30000ի չափ է, սակայն ուտելիք չունենալուն համար կ'ենթադրուի թէ շատ երկար չդիմանալով քիւրտերու կողմէ և կամ թշուառութենէ մեռած ըլլան»[1]:

Պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանը գիտական շրջանառության մեջ է դնում իր հայտնաբերած այնպիսի փաստաթղթեր, որոնք կարդալիս կարող ես հոգեկան մեծ խռովք ապրել:

Առանձին նկարագրություններ այնքան զարհուրելի պատկերներ են քաշում, որ դրանք անհնարին է ոչ միայն նկարագրել, այլև նույնիսկ կարդալ: Սարդկային բանականությունը և խիղճը անուժ են նույնիսկ ընկալելու այն ամենը, որ հայ ժողովրդի նկատմամբ անում էին թուրքական ոճրագործները[2]:

Դ. ՓՈՔՐ ՀԱՅՔՆ ԻՐ ՍԵԲԱՍՏԻԱ ՆԱՀԱՆԳՈՎ

Սեբաստիայի (Սվազի) վիլայեթն ընդգրկում էր Պատմական Հայաստանի *Փոքր Հայք* երկրամասը: Առաջին աշխարհամարտի նախօրյակին այն ուներ 83700 քառ. կմ ընդհանուր տարածք: Նահանգը բաժանված էր չորս գավառի: Դրանք էին. Սեբաստիան (Սվազ կենտրոնով), Կարահիսար-Շարգին (Շապին-Կարահիսար կենտրոնով), Եվդոկիան (Թոխատ կենտրոնով) և Ամասիան (Ամասիա կենտրոնով): Սրանք իրենց հերթին տրոհվում էին 28 գավառակի (կազա), որոնց մեջ էին ընդգրկված 237 գյուղախմբեր (նահիե) կամ 4761 գյուղեր[3]:

Նահանգը գտնվում էր առևտրական բանուկ ճանապարհների խաչմերուկում, ուներ բարեբեր հողեր և գյուղատնտեսության համար նպաստավոր բոլոր պայմանները: Այդ էր բնակչության մարդաշատության գլխավոր պատճառը: 1912 թ. հաշվարկներով Սեբաստիայի վիլայեթի բնակչության թիվը հասնում էր *մեկ միլիոն հիսունվեց հազարի:* Դրանցից 471000-ը քրիստոնյա էին: Հայերը *370 հազար* էին, հույները՝ *76000,* ասորիները՝ *25000:* Մնացածը մահմեդականներ էին, որոնցից երկու երրորդը սյունի թուրքեր էին, թուրքմեններ և չերքեզներ, մեկ երրորդը ղզլբաշ շիիտներ[4]:

Սեբաստիան իր կրթամշակութային հիմնարկություններով, հանճարեղ ու հայրենանվեր զավակներով խոր հետք է թողել ոչ միայն հայոց, այլև համաշխարհային

---

[1] *Լորտ Պրայս,* նշված աշխատությունը, էջ 133-135:

[2] *Ջ. Ս. Կիրակոսյան,* Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, էջ 362-363:

[3] ՀՍՀ, հ. 10, Երևան, 1984, էջ 259: Նահանգում կատարված ցեղասպանության պատմությունը շարադրելիս օգտագործել ենք. *Հայկ Նագդաշյան,* Սեբաստահայության բռնագաղթն ու ջարդը, «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 362-374: *Մ. Վ. Արզումանյան,* Հայաստանը 1914-1917, Երևան, 1969, էջ 405-411: *Մ[եպուհ] Ակունի,* Սիլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921, էջ 74-89: «Հայկական ջարդերը. Տոքթ. *Եոհաննես Լեփսիուսի* տեղեկագիրը», Պեյրութ, 1965, էջ 66-78: *Լորտ Պրայս,* Հայկական ջարդերու փաստաթուղթերը, Կ.Պոլիս, 1920, էջ 152-170: *Մ. Սապահգուլյան,* Փոքր Հայքի հիշատակները, Չիկագո, 1917: *Առաքել Պատրիկ,* Պատմագիրք հուշամատյան Սեբաստիո և գավառի հայությանը, Բեյրութ, 1974: *Կարո Գաբիկյան,* Եղեռնապատում փոքրուն Հայոց և նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիո, Բոստոն, 1924: *Հայկ Ղազարյան,* Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը, 1800-1870 թթ., Երևան, 1967:

[4] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 365-366: Տե՛ս նաև «Հայկական ջարդերը», էջ 66-67:

պատմության մեջ: Նա մարդկությանը տվել է ***Ամիրդովլաթ Ամասիացուն, Մխիթար Սեբաստացուն, Ղևոնդ Ալիշանին*** (Ավարայրի բլբուլը), ***Դանիել Վարուժանին, Սեբաստացի Մուրադին, Նորատունկյան*** տոհմի հայրենակարոտ ու գործունյա ներկայացուցիչներին: Շապին-Կարահիսարում է ծնվել ու նախնական ճանապարհը կտրել ***Անդրանիկ Օզանյանը,*** հայ ժողովրդի փառապսակը ***Զորավար Անդրանիկը:***

Սեբաստիան, իր դիրքով ու գեղեցկությամբ, հազարամյակների անցած ճանապարհով, միշտ չէ, որ խաղաղ կյանք է վայելել: Այն, լինելով Փոքր Հայքի թագուհին, Հայոց Արծրունյաց տոհմի ***արծաթազարդ մայրաքաղաքը,*** անընդհատ կռվախնձորի դեր է կատարել քրիստոնյա, ապա իսլամապաշտ հարևանների համար: Սակայն երկրամասը երբեք չի ընկրկել և չի կորցրել ազգային, հայկական դիմագիծը: Դառն եղավ նահանգում ապրող ժողովրդի ճակատագիրը, երբ Արևելք թափանցեցին մահմեդական հրոսակները: Գեղեցիկ երկիրը պարբերաբար ասպատակվում էր, ավերվում մուսուլման բարբարոսների կողմից, ապա շուտով վերականգնվում էր: Երկրահատվածը «Սև հողեր» հորջորջում էր ստացել օտարների կողմից, սակայն նրան սպառնացող աղետը դեռևս առջևում էր[1]:

1912 թ. գարնանը, Սալոնիկի տխրահռչակ համաժողովից հետո, Սեբաստիայի վալի է նշանակվում հայատյաց, միաժամանակ թուրքոտ իթթիհատական ***Մուամմերը,*** որն իբրև թե ***պատմաբանի*** մասնագիտություն ուներ և «անցյալն ուսումնասիրում էր ապագա գործողությունները ծավալելու նպատակով»: Այդ մարդագայլ հրեշի գործերին անդրադառնալիս, ***Սեպուհ Ակունին*** գրում է.

«Մուամմերը՝ որ նախապես իթթիհատի պատվիրակն էր Սեբաստիայի և ամենաազդեցիկ դեմքը քաղաքին մէջ, համբավ ուներ պատմագէտ մը ըլլալու: Սակայն, փաստը ցոյց տուաւ որ, փոխանակ պատմութիւնը ուսումնասիրած ըլլալու իր քաղաքակրթական բոլոր կողմերովը, ընդհակառակը, միտքը յոգնեցուցած էր աւելի, սերտելու համար թէ, Ասորեստանի բռնակալները, ի՛նչ միջոցներով քար ու քանդ ըրած են բարգաւաճ քաղաքներ, իրենց արշաւանքներու պահուն, թէ ի՞նչպէս մորթազերծ կ՛ընէին գերիները, թէ ի՞նչպէս Սպարթացիները մէկ գիշերուան մէջ, բնաջինջ կ՛ընէին Հիլօթները, կ՛աներեւութացնէին անոնց քաղաքներն ու գիւղերը, թէ Ներոն, ի՞նչպէս կրակի կուտար Հռոմը: Ինքը նախանձելով այս տխրահռչակներուն, կ՛ուզէր հետեւիլ անոնց օրինակին և ըլլալ Աթիլլա մը, Ճինկիզ Խան մը, Լենկթիմուր մը:

Իր նախածեռնութեամբն էր որ Պալքանեան պատերազմէն ետք պօյքօթ հրատարակուած էր քրիստոնեաներու դէմ, և կազմուած էին թուրք ընկերակցութիւններ, քրիստոնեաներու, մասնաւորապէս Հայերու ծեռքէն առնելու համար քաղաքին վաճառականութիւնը, ճարտարարուեստը և հասցնելու թուրք արհեստաւորներ: Դժուար պիտի ըլլար անշուշտ, մէկ անգամէն և շուտով գլուխ հանել այս ծրագիրը, որով իր նպատակին հասնելու համար խորհած էր կրակի տալ նահանգին այն քաղերը, ուր հաստատուած էին հայ վաճառականները: Եւ ահա, յանկարծ օր մը, կը տեսնուի որ սիսթեմաթիք կերպով կ՛այրուին և մոխրակոյտի կը վերածուին Մարզուանի, Ամասիայի, Սեբաստիայի և Եւդոկիայի (Թոգատ) ամբողջ շուկաները. միայն այս վերջին քաղաքին մէջ պատճառելով 300 ոսկիի կորուստ: Հրդեհի կը տրուին նաև, Մարզուանի, Սեբաստիայի և Ամասիայի ալիւրի գործարանները, բոլորն ալ սեփականութիւն Հայերու: ***Իթթիհատի նախապատերազմեան ծրագիրն էր այս, Հայերը տնտեսական տեսակէտով 50 տարի ետ նետելու համար»[2]:***

Սկսվեց պատերազմը: Իթթիհատականները նախապատրաստվեցին հայկական

---

[1] *Մ. Վ. Արզումանյան,* նշված աշխատությունը, էջ 405:

[2] *Ս[եպուհ] Ակունի,* Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921, էջ 74-75:

ջարդերին: Վաղօրոք վիլայեթներ ուղարկեցին երիտթուրքերի կենտկոմի անդամներից: Սեբաստիան բաժին ընկավ *Բեհաեդդին Շաքիրին,* որը Մուամմերի հետ միասին սկսեց Հայկական գողգոթան:

Նրանք դիմեցին պրովոկացիոն քայլերի, որով ուզում էին մահմեդական ամբոխին գրգռել, որոնք առանց այդ էլ գրգռված էին և հեշտացնել հայերի բնաջնջման խնդիրը: Կ.Պոլսի Զավեն պատրիարքն իր հուշերի մեջ գրում է. «1913 թ. օգոստ. 3-ին Ամերիկացի միսիոնար Հօլպրուք Էնտրէսի մօտ սպանուեցաւ, նոյնիսկ տեղւոյն գայմագամին հրամանով Թուրքերու կողմէ: Դատավարութեան ատեն կառավարութիւնը չքաշուեցաւ Հայերը զրպարտելէ, բայց երբ չկրցաւ կլլեցնել, ոճրագործը անծանօթ մնաց ըսելով՝ փակել ուզեց խնդիրը.

«Երբ տակաւին Թորգոմ եպս. Սեբաստիոյ առաջնորդ էր, այսինքն 1914 գարնան, թուրք կառավարութիւնը ուզեց Սեբաստիոյ հայ գիւղերու (Խանճառ և Խորսանայ) սեպհական իրաւունքը եղող արօտատեղիները արդարութեան բացարձակապէս հակառակ ըլլալով՝ Թուրքերու յատկացնել: Բողոքները անլսելի մնացին: Նմանապէս Ս. Նշանի վանքապատկան հողերուն վրայ թուրք զորանոցներ և շէնքեր կառուցանել սկսան:

Կառավարութիւնը ուզեց ճնշել հայը մտաւորապէս ալ: Դպրոցներուն մէջ աւանդուած ազգ. պատմութեան ևն, դասերը վերցուեցան ու անոնց տեղ թուրքերէն դասեր նշանակուեցան. նոյնիսկ աղջիկներու բաժնին տարրականին մէջ, ուր տակաւին հայերէն չսկսած՝ թուրքերէն պիտի սորվէին: Թուրքերէնի ուսուցիչը իրենց ուզածը կ՛ընտրէին:

1915 յունուարի վերջերը, Թուրքերը ամբաստանեցին Հայերը, թէ Սահակ վրդ.-ի սպանութեան փոխարէն ***թուրք զօրքին հացը թունաւորած են:*** Բոլոր հայ փռապանները և կարգ մը գինուորներ բանտ նետուեցան: Մուամմերը կ'ուզեր Հայերը զրպարտել և զանոնք ջարդարար խուժանին ցասմանը ենթարկել: Իբր թէ հացը շուներուն վրայ փորձեր են և քանի մը շուներ սատկեր են: Քննութիւն մը կատարուեցաւ Հայերու մասին և ստութիւնը մէջտեղ ելաւ: Խնդիրը հողեցին, ըսելով որ քաղաքապետութիւնը շուները մէջտեղէն վերցնելու համար թունաւորեր է»[1]:

Գնալով Սեբաստիայում հայ-թուրք հարաբերությունները բացահայտվում են և շիկանում: Մուամմերի հրամանով, գաղտնապես սպանվում է տեղի հոգևոր առաջնորդ Սահակ վարդապետը, մի քանի երևելի հայերի բանտարկում են և գաղտնապես ոչնչացնում: Վիճակն այդպիսին էր, երբ 1915 թ. հունվարի 5-ին, Կարինից վերադարձի ճանապարհին, Սեբաստիա է ժամանում ռազմական նախարար ***Էնվերը:*** Երկերեսանի այդ մսագործը հունվարի 6-ին հայանպաստ ճառ է արտասանում, հանգստացնում ժողովրդին և հեռանում քաղաքից: Սակայն «Այս ճառախօսութիւններէն քանի մը օր յետոյ, բանտէն կ'արձակուին յայտնի աւազակներ, ոճրագործներ և ***կ'արձանագրուին չէթէ,*** իբր թէ էրզրումի ճակատը ղրկուելու համար: Այս սրիկաները, յոխորտանքով պտտելով շուկան, լրբօրեն և հրապարակով կը յայտարարէին թէ «կեավուրներուն փորը պիտի ճեղքեն և անոնց աչքերը շուներուն պիտի կերցնեն այս հրապարակներուն վրայ, իսկ անոնց արիւնը իրենք պիտի խմեն»:

Հազիւ թէ ասոնք էրզրում ղրկուելու համար ճամբայ կը հանուին, երբ Ալիսի հովիտին հայ գիւղերը նշաւակ կ'լլան անոնց գազանային խժդժութիւններուն և անոպայ կիրքերուն: Անոնց մէկ մասը 1915 փետր. 8-ին կ'իջեւանին Բուրդ հայ գիւղը, որ կը գտնուի Շ. Գարահիսարի շրջանակին մէջ և ունէր 300 տուն հայութիւն մը: Գիւղացիները կը պատուեն այս սրիկաները, որոնց գլուխը կը գտնուէր Սահակ վրդ.-ի սպանիչ Զառացի Մահիրը: Ասոնք փոխանակ շնորհակալ ըլլալու, ուտել խմելէ վերջ, կը

[1] *Զավեն արքեպիս.,* Պատրիարքական հուշերս, վավերագիրներ և վկայություններ, Գահիրե, 1947, էջ 66:

մտնեն տուները ու կ'ուզեն առեւանգել հարս ու աղջիկ: Հայ երիտասարդ մը տեսնելով որ կը բռնանան իր նշանածին վրայ ալ, զէնքի կը դիմէ և կը վիրաւորէ առեւանգող սրիկան: Այս դէպքին վրայ գիւղն իրար կ'անցնի. ընդհարում մը տեղի կ'ունենայ: Չէթեները կը յաջողին զսպել գիւղիս պոռթկումը, կը հաւաքեն երիտասարդները և կը կոտորեն զանոնք: Չէթեները մասնաւոր հրահանգով ստեղծած էին այս դէպքը, որովհետեւ Բուրդ, թէեւ էրզրումի ճամբէն խոտոր կ'իյնայ, սակայն եղած է հայ յեղափոխականներու օճախ և գործունէութեան գլխաւոր կեդրոն: Հետեւաբար անհրաժեշտ էր հարուած մը տալ անոր»[1]:

Կազմակերպված ձևով սկսվում է Սեբաստիա քաղաքի հայ բնակչության բռնագաղթն ու ոչնչացումը: Նահանգի վալիանիստ կենտրոն է ժամանում իթթիհատի ներկայացուցիչ Ղանի բեյը, որը բերել էր հայերի տեղահանման ու բնաջնջման հրամանը: Այդ ժամանակ թուրք երեսփոխաններն սկսեցին բացահայտորեն պրոպագանդել, որ *«մեր բուն թշնամիները մեր մոտը, մեր քովը, մեր մեջ էն - հայերը, որոնք բոլոր աշխարհը այսօր մեզ դեմ հանած են, մեր արյունը թափել կուտան, մեր պետության ու հայրենիքի հիմքերը կքանդեն, ուստի պետք է, որ նախ մեր այդ ներքին թշնամիները մաքրենք, բնաջնջենք մեր մեջեն»*[2]:

Սեբաստիայի թուրքական իշխանությունը նախօրոք կազմեց հայերի ընդհանուր մահացանկ: *1915 թ. հունիսի 3-ին* ձերբակալվեցին 3500 հայեր: Դրան հետևեցին նոր ձերբակալություններ և զնդան նետվեցին 5000 հոգի (այդ թվում բոլոր մտավորականները), որոնց ուղարկեցին տարբեր վայրեր և տանջամահ արեցին[3]:

Այնուհետև սկսվեց բռնագաղթը: Մուամմերը *1915 թ. հունիսի 18-ին* բռնագաղթի հրաման տվեց հայերին. «Կայսերական բարձրագույն հրամանով և Շեյխ-ուլ-Իսլամի շերիական ֆեթվայովը որոշված է ձեր մշտնջենական (թեպիտ) տարագրումը Միջագետք, արաբական անապատները. ոչ-ոք չպիտի մնա, *գոգունուզ-պոգունուզ պիլե գալմայաճագ»*[4]: Ալեկոծում սկսվեց ժողովրդի մեջ. շատերը թախանձագին խնդրեցին կուսակալին գթալ իրենց, բայց դրանից կատաղած բորենին ավելի էր չարանում և ասում. *«Եթե գիտնամ մազերուս մեկուն մեջ գութի նշույլ մը կա, փրցունեմ կրակը կգցեմ»:*

Սեբաստիա քաղաքի շուրջ 36000 հայությունը բռնագաղթվեց 15 օրում: Գաղթը կատարվում էր ամենադաժան պայմաններում, որի հետևանքով շատերը սպանվում էին կամ մահանում: Անգամ թուրք ոստիկանները չէին թաքցնում, որ հայերի բռնագաղթն ունի բնաջնջման նպատակ: Ահա, օրինակ, ինչ էր ասում նրանցից մեկը (արյունկզակ Հյուսեյնը) հենց գաղթողներին. *«Իթթիհատը որոշած է հայը բնաջինջ ընել. Հայաստան անունը սրբել աշխարհացույցներու վրայեն, Թուրքիան թուրք-իսլամական աշխարհ մը ընել: Մի կարծեք, որ որոշյալ տեղ մը կղրկվիք ու հոն հաստատ բնակություն մը կունենաք:- Ոչ երբեք. ամենդ, ամենդ պիտի սպանվիք, ջարդվիք, բնաջինջ պիտի ըլլաք: Իթթիհատը ձեզի այս ընելեն վերջը նույնը պետք է ընե քուրդերուն, արաբներուն, կըզըլբաշներուն, վերջապես երկրին բաղկացուցիչ որևէ տարրերուն ալ. Թուրքիան պիտի ըլլա զուտ թուրքերուն. այս է Իթթիհատի ծրագիրը, հետապնդած նպատակը»*[5]:

Բռնագաղթի ենթարկվեցին Սեբաստիայի նահանգի բոլոր հայերը: Նրանց տա-

---

[1] *Սվեպուհի Ակունի*, նշված աշխատությունը, էջ 75-76: Տես նաև *Լորդ Պրայս*, նշված աշխատությունը, էջ 152-153:

[2] *Գուժական Սեբաստիոյ (Կարապետ Գաբիկյան)* Եղեռնապատում, Պոսթըն, 1924, էջ 53:

[3] *Մ. Վ. Արզումանյան*, նշված աշխատությունը, էջ 406:

[4] Նույն տեղում, էջ 92:

[5] Նույն տեղում, էջ 138-139, 407:

նում էին դեպի Դեր Զոր, Մոսուլ և այլն: Ճանապարհին հայ բնակչությունը ենթարկվում էր ոչ միայն ահավոր զրկանքների, այլև սիստեմատիկ ջարդերի: Այդպես, Սեբաստիա-Խարբերդ խճուղու վրա գտնվող մեծ գյուղը ***Հասան-չելեպին, դարձավ հայերի իսկական սպանդանոց:*** Այստեղ իթթիհատականները արյունալից խրախճանք կազմակերպելու համար գրգռում էին թուրքերին ու քրդերին՝ հայտարարելով. «Եկե՛ք, ձեր հայրերը, ձեր զավակները պատերազմի մեջ սպանողները գերի բերեր ենք: Եկե՛ք, դուք ալ զանոնք ջարդեցե՛ք, ձեր վրեժը լուծեցեք, սրտերդ պաղեցուցեք»: Արդյունքն այն ստացվեց, որ տեղի ունեցան զարհուրելի կոտորածներ. «Սպանությունները կկատարվեին խիստ մարդախողխող եղանակով՝ մանգաղներով, նաճախներով, մահակով, կացնով, սրածայր ձողերով, սղոցով: Խեղճ զոհերը ինքզինքնին բարեբաղդ պիտի համարեին, եթե գնդակով մը սպանվեին, որքան կաղաչեն եղեր դահիճներում՝ գնդակով մը մեկ անգամեն սպանել զիրենք, բայց այդ իսկ կխնայեն, մեկ գնդակին 2 ոսկի գին ուզելով: Ժամերով կտվայտեին, կտապալտկեին, կչարչըրկեին արյան ճապաղյաց մեջ, ահռելի հռնդյուններով, ոգորումներով, գալարումներով: Զոհերուն զգեստները, վրանուն եղած դրամ, ժամացույց կբաժնեին ջարդարարներուն, իսկ արյունոտ չուվանները կդարձնեին կարավանի տերերուն»[1]:

Նշանավոր անգլիացի ***Ջեյմս Բրայսը,*** անդրադառնալով բուն Սեբաստիա քաղաքի հայ բնակչության ճակատագրին, գրում է. «Սեբաստիա քաղաքի 25000 Հայերն ալ ենթարկուեցան միեւնոյն ճակատագրին: 1500է աւելի Հայեր բանտերը լեցուեցան: Զանոնք իրարու կապուած խումբերով քաղաքէն դուրս հանուելէ առաջ՝ բանտին մէջ լաւ մը կողոպտուեցան: Կ'ըսուի թէ զոհերուն վրայէն առնուած դրամներն ու զարդեղէնները հսկայ դէզեր կազմեցին, որոնց փոխարէն ստացագրեր ալ տրուեցան որպէս թէ:

Սեբաստիոյ ամերիկ. աղջկանց վարժարանի տեսչուհին Միս Մէրի Կրէֆէմ անձնազոհութեան մեծ օրինակ տուաւ կարելին գործադրելով մեղմացնելու համար հայ տարագիրներուն տառապանքները: Անիկա կամովին ընկերացաւ տարագիրներուն և ականատես եղաւ ահաւոր բարբարոսութիւններու, սակայն Մալաթիոյ քովերը թուրք կառավարութեան կողմէ բռնի կերպով անջատուեցաւ իր սիրելիներէն, որոնք մնալով բոլորովին անպաշտպան՝ ջարդուեցան անխնայօրէն»[2]:

Սեբաստացի ***Հայկ Նագդաշյանը*** իր ամփոփ հետազոտության մեջ այսպես է ներկայացնում 1915 թ. հունիսի 15-ի ողբերգությունը քաղաքում. «Հետզհետե սկսան ձերբակալել բոլոր այրերը 15 տարեկանեն սկսյալ: Հետո, 12-են, 10-են վեր եղողները, և ի վերջո ծանծրացան տարիքն իբրև սահման առնելե: ***Հավաքեցին 110 սանթիմեթրեն ավելի բոլոր այր մանուկներն ալ և բոլորը, բոլորը նույն ձևով ջարդվեցան, մաս մը տարագրութենեն իսկ առաջ և մաս մըն ալ զանգվածային տեղահանութեններեն հետո՝ օրական 150-200-ի հաշվով: Եվ վերջին հայորդիին բնաջնջումը ապահովելու համար թուրք դահիճներուն պետք եղավ 2-3 ամիս՝ կրկնենք տեղահանութենեն հետո միայն, օրական 150-200 հոգի հաշվով, միայն այր մարդ (ընդգծումները մերն են Հ. Ղ.)»[3]:***

Սեպուհ Ակունին, 1921 թ., այսինքն՝ թարմ տպավորությամբ, գրում և թուրքերի մայրաքաղաքում հրապարակում է մի գիրք, որտեղ Սեբաստիայի ջարդի մասին պատմում է. «Գալով Սեբաստիայի մէջ բանտարկուածներուն, իրազեկներու վկայութեանց համաձայն, քաղաքին տեղահանութենէն վերջ է որ անոնք խումբ-խումբ տարուած են Մայրագոմի լերան մէջ՝ Ս. Յակոբի վրան գտնուող Ղարլըխ ըսուած տեղը: Ամէնէն վեր-

[1] ***Կարապետ Գաբիկյան,*** նշված աշխատությունը, էջ 169:

[2] ***Լորտ Պրայս,*** Հայկական ջարդերու փաստաթուղթեր, Ա մաս, Կ.Պոլիս, 1920 (Սեբաստիո կոտորածները գլուխը), էջ 155:

[3] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 369:

ջը սպաննուած են աչքառու մտաւորականները, երեւելիները, կուսակցականները:

Այս վերջիններուն նահատակման գիշերը, հոն ներկայ գտնուած են Մուամմեր, զինուորական և քաղաքային պաշտօնեաներ: Դիւային հաճոյքը կատարեալ ըլլալու համար, կուսակալը կ'արտօնէ Միհրան Իսպիրեանի և Յակոբ Մըճճուքեանի, որ «Մնաք բարով»ի ճառ մը արտասանեն: ***Կ'ըսուի թէ, Մուամմեր, առնելով Բենիամին Թօփալեանի արիւնէն գաւաթ մը կխմէ»***[1]:

Սիրելի ընթերցո՛ղ, դուք կարդում եք վերոհիշյալ տողերը: Չէ՞ որ սա մարդկային չէ, այլ դիվային, հոշոտող, անասնական, գազանային, ***երբ «մարդ» կոչեցյալն իր նմանին մորթել է տալիս և «գավաթով» խմում է նրա արյունը:*** Հետաքրքիր է, եթե եվրախորհրդարան խցկվելու հայտ ներկայացնող այսօրվա թուրք պետական այրերը կարդան այս տողերը, ի՞նչ կասեն իբրև «արդարանալու» խոսք:

Ավելորդ չենք համարում Սեբաստիա քաղաքից 1915 թ. հունիսի 18-ին կատարված հայերի բռնագաղթի մասին մեջբերում անենք Ս. Ակունիի աշխատությունից մի հատված ևս: «Տեղահանության օրուան նախընթաց կիրակին խիստ սրտառուչ պատարագ մը կ'ըլլայ Մայր-եկեղեցիին մէջ, երբ ամէն ոք լալահառաչ հրաժեշտ կ'առնեն իրարմէ: Պատարագէն յետոյ, Գնէլ եպս. եկեղեցիին բանալիները կը ղրկէ Մուամմէրին, որ չընդունիր զանոնք, մօլլայի մը հետ լուր ղրկելով առաջնորդին թէ, իսլամական կրօնը չի թոյլատրեր փակել քրիստոնեաներու եկեղեցին:

Տեղահանութիւնը պիտի սկսի հետեւեալ առտուն, սակայն կ'ուզեն պաշտօնական կողոպուտ մը եւս ընել ու լուր կը տարածայնեն թէ 45 տարեկանէն վեր եղողները պիտի զինուորագրուին, փոխանակ տարագրուելու: Քիչ չըլլար թիւը անոնց որ զինուորագրութենէ ազատելու համար 44 ական ոսկի «պէտէլ» կը վճարեն և դարձեալ կը տարագրուին: Հրաման մըն ալ կը հանեն, արգիլելով իսլամներու հայու ապրանք գնել: Առնող չգտնուելուն, հայ տուներու ինչքը մեծ մասամբ կը մնայ քաղաքը և յետոյ կը գրաւուի կուսակալութեան կողմէ:

Սեբաստիա քաղաքը ունէր 3600 հայ տուն, 36000 բնակչութեամբ, իսկ Sօքք. Լէփսիուս, Սեբաստահայերու ընդհանուր թիւը կը հաշուէ 170000: Սեբաստիայի հայութիւնը ամբողջութեամբ տեղահան կ'ըլլայ երեք շաբթուան ընթացքին, հետեւեալ կերպով.- Առաջին կարաւանը կը հանուի 400 տունով, հետեւեալ օրը 500 տուն, և հետզհետէ 550, 450, 400-ական տուն թաղային բաժանումներով: Ամէնէն առաջուան հանուածներն են Քիւչիւք-Պէնկիլէր կամ Աչող-Տէյիրմէնի թաղը, իսկ ամենավերջինը Սարը-Շէյխ, Գալտըր-Բազար Սեւ-Յողերու թաղը»[2]:

Հայկ Նագդաշյանը «Սեբաստահայության բռնագաղթն ու ջարդը» աշխատության էջերում, փաստորեն շարունակելով Լեփսիուսին և լորդ Բրայսին, բռնագաղթողների մասին գրում է. «Ատիկա պարզապես անտեր մնացած կիներու, անկար ծերունիներու և մանուկներու դանդաղ մահացումն էր, տարիներ տևող և Քրիստոսի գողգոթայեն հազար անգամ ավելի տառապալից ճամբու մը վրա՝ Սվազեն մինչև Չելեպիլերի ձորը, ***Հումամեն մինչև Ոռքքա ու Եփրատ Հայոց լեռնաշխարհին սիրտեն բխող հայակո՞ւլ Եփրատը - մինչև Դեր Զոր և արաբական անվերջ անապատները:*** Այնպես որ, երբ Սեբաստիո ամբողջ հայ զանգվածին հրահանգվեցավ աքսորի ճամբան բռնել, արական սեռին պատկանող մարդ չէր մնացած տուներե ներս, բացի անկար ծերունիներե, անչափահաս մանուկներե, հիվանդներե և ծպտյալներե:

Սեբաստիո նահանգին ամբողջ արու արմատը բնաջնջվեցավ Մայրագոմի լեռներուն մեջ, Ս. Յակոբա վերը Ղըրլըխ ըսված վայրը, Չելեպիլերի ձորը, Կեմերեկի մա-

---

[1] ***Մխեպուհ Ակունի,*** Սիլիհոն մը հայերու ջարդի պատմութիւնը. Կ. Պոլիս, 1921, էջ 88-89:

[2] Նույն տեղում, էջ 92-93:

սերը, կիրճերու մեջ, անտառներու խորերը, հայտնի և անհայտ ձորերու և գետերուն մեջ: Իսկ Սեբաստիո վալիին (կուսակալը) Սուամմէր կոչված բորենին, ***հայտնի մտավորականներու կոտորածին համար ներկա գտնվելով, գավաթ առ գավաթ անոնց արյունը խմելով կարբենար*** (ընդգծումները մերն են.- Հ. Գ.)»[1]:

Սեբաստիայի ճակատագիրը բաժանեց ոչ պակաս հարուստ և բարգավաճ տնտեսություն ունեցող Մարզվան հայաքաղաքը: Այնտեղ ապրում էին 22000 բնակիչներ, որոնցից 12000-ը հայեր էին: Կառավարությունը «կազմակերպեց» նրանց բռնագաղթն ու ոչնչացումը:

1915 թ. հուլիսի 6-ին սկսվեց բռնագաղթը: Դոկտոր Յոհաննես Լեփսիուսը գրում է. «Քաղաքին մէջ խուճապը սոսկալի էր: Մարդիկ կը զգային թէ կառավարութիւնը որոշած է բնաջինջ ընել հայ ցեղը, և ինքզինքնին բացարձակապէս անզօր կը գտնէին դիմադրելու: Ապահով էին թէ այրերը պիտի սպանուէին և կիները պիտի առեւանգուէին: Բազմաթիւ ոճրագործներ արձակուած էին բանտերէն և ***Մարզուանի շրջակայ լեռները աւազակներով լեցուն էին:*** Կը վախցէր թէ մի գուցէ կիները և մանուկները քաղաքէն քիչ մը հեռու տարուին և այս աւազակներուն նշաւակ թողուին: Ինչ որ ալ ըլլայ, կան պարագաներ ուր կարելի է ապացուցանել թէ, ո՛ւր որ հրապուրիչ արտաքինով երիտասարդ հայ աղջիկներ կային, ասոնք Մարզուանի թուրք պաշտօնատարներուն կողմէ առեւանգուեցան: ***Իսլամ մը կըպատմէր որ ժանտարմա մը առաջարկած էր իրեն ծախել, մէկ մէճիտիէի փոխարէն, երկու երիտասարդ աղջիկներ: Կիները այնպէս կը կարծէին թէ մահէն աւելի դառն տառապանքներ ունէին քաշելիք, և շատերը իրենց գրպանին մէջ թոյն ունէին, ի հարկին գործածելու համար զայն: Շատեր՝ միասին առած էին բահ ու բրիչ, կարենալ թաղելու համար զանոնք որոնք կրնային ճամբան մեռնիլ. իրենք ալ սպասէին այդ բանին»[2]:***

Բռնագաղթվածներից ժամանակավորապես փրկվեցին միայն նրանք, որոնք հարկադրված էին մահմեդականություն ընդունել, օրորվելով այն դատարկ հույսերով, թե հետո կվերադառնան Քրիստոսի ընտանիքը: Զուր հույսե՞ր... Լեփսիուսը շարունակում է. «Տարագրութիւնը շուրջ երկու շաբաթ տեւեց, մեկնող խումբերու միջեւ ընդմիջումներով: ***Մարզուանի 12000 հայերէն, 200 հոգիի չափ միայն մնաց:*** Նոյնիսկ անոնք որոնք պատրաստակամութիւն յայտնեցին իսլամութիւնը ընդունելու, յետոյ տարագրուեցան: Մինչեւ այն վայրկեանը ուր այս տողերը կը գրեմ, փոխադրուածներէն ոչ մէկուն նկատմամբ որեւէ ստոյգ լուր մը եկած է: Յոյն սայլապան մը, կը պատմէր թէ, Մարզուանէն մէկ քանի ժամ հեռու, պզտիկ գիւղի մը մէջ, մէկ քանի այրերը բաժնեցին կիներէն, ծեծեցին, շղթայեցին, և առանձին աւելի հեռուները ղրկեցին: Թուրք սայլապան մը կը պատմէ թէ ճամբան այդ կարաւանին հանդիպեցաւ: Այս մարդիկը այնպէս մը փոշիով ծածկուած էին և այնպես աղտոտած էին, որ հազիւ կարելի էր զիրենք ճանչնալ:

Ամասիոյ մէջ, տարագրութենէն յետոյ, թուրքերու կողմէ կրակի տրուեցաւ Հայոց թաղը, շուկան, հայ և յոյն եկեղեցիները:

Կէմէրէկի բոլոր Հայերը (Կեսարիոյ և Սեբաստիոյ միջև), տարագրուեցան, բայց Սեբաստիա չհասան: Այրերը և երիտասարդները սպանուեցան, և կիներն ու մանուկներն ալ թուրք սպաներու միջև բաժնուեցան:

Կէմէրէկի տարագրութենէն պարագայ մը որ գերման Կարմիր Խաչի հիւանդապահուհիներուն կողմէ պատմուած է, արժանի է մասնաւոր յիշատակութեան»[3]:

Բռնագաղթվողների հիմնական մասը, կարելի է ասել գրեթե բոլորը, հեռու ճանա-

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 369-370:
[2] «Հայկական ջարդերը», էջ 74:
[3] Նույն տեղում, էջ 75-76:

պարի չէին գնում: Նրանց պես-պես «անմարդկային մեթոդներով» ոչնչացնում էին նահանգի սահմաններից դեռևս չհանած: Ամերիկյան վարժարանի աշակերտուհի *Հայկանուշ Զարացյանը,* ականատես լինելով անմարդկային այդ տեսարանին, հետո գրավոր հաղորդում է Լեփսիուսին, որը և նույնությամբ բերում է իր աշխատության մեջ: Լեփսիուսի նյութերն օգտագործում է Սեպուհ Ակունին՝ վերապատմելով այդ աղջկա հաղորդածը.

«Երբ որ մեր կարաւանը Հասան-Չէլէպի հասաւ, բոլոր էրիկմարդիկը, մինչեւ տասը տարեկանները, ժողվեցին տարին: Վերջէն լուր եկաւ, թէ մարդ գլուխ հինգ ոսկի տուողը ազատ պիտի ձգեն, իսկ չտուողները պիտի սպանեն: Շատ կիներ ունեցած-չունեցածնին տարին. շատերը կրցան ազատել իրենց մարդիկը: Շատ մարդ վար դրին, դրամ չունենալնուն և տեսնելով որ դրամ փրցնելու յոյս չկայ, *դաժան քիւրտեր և ժանտարմներ ձիու շատ մը պայտեր, գամեր բերին ու սկսան անոնց ոտքերը պայտել և ձեռքերնին հաւատամք բռնել տուած իրար կը գամէին: Աննկարագրելի էր մէկ կողմէ զոհերու աղիողորմ ճիչերը, աղաղակները, միւս կողմէ ալ կնիկներու լացն ու կոծը, վայնասունը: Արիւնը անոնց ոտքերէն և ձեռքերէն կը վազէր աղբիւրի պէս. մինչդեռ դժբախտները ասանկ կը տանջուէին, դահիճները կ'ըսէին անոնց.- «Ի՞նչ կայ, համբերեցէք, չէ՞ որ ձեր Քրիստոս ալ ասանկ ձեռքերէն ու ոտքերէն գամեցին, անիկա բնաւ չի տրտնջաց»:* Վերջէն մեծ քանակութեամբ չոր խոտ բերին, թիթեղ մըն ալ քարիւղ: Խոտը դիզեցին այս խեղճերուն բոլորտիքը, վրան լեցուցին քարիւղը, կրակ տուին, բռնկցուցին: Կանաչ-կարմիր բոցերը կը լափէին կալանաւորները. կիները խելագարած, ոմանք ինքզինքնին կը պատառէին, ոմանք կուրծքերնին, գլուխնին կը ծեծէին, ոմանք մարած կ'իյնային, շատեր ալ իրենց ձեռքով կը ծածկէին երեսնին, չտեսնելու համար այս ահռելի տեսարանը, մինչ անդին դժբախտները մոխիր կը դառնային:

Սեբաստիայի կարաւաններու գրեթէ բոլորին ալ նոյնը վիճակուած է. ամէն կարաւանի մէջ գտնուող այրերը սպանուած են, կիները լլկուած, հարսերը և գեղեցիկները առեւանգուած, մանկիկները մորթոտուած և իսլամ տուները հաւաքուած: Իսկ այս բոլոր դէպքերու ընթացքին, հազիւ թէ ընդդիմութեան պզտիկ փորձեր եղած են»[1]*:*

Սեբաստահայ *Հայկ Նագդաշյանը* իր աշխատության «Բռնաբարումի և բնաջնջումի թրքատիպ մեթոտները» գլխում հրապարակում է փաստեր, անում ընդհանրացումներ, որոնց կարդացողն անգամ *դիմանալ չի կարող,* երևակայել չի կարող, թե ինչպես է մարդ արարածը դիմացել այդ բոլորին և նույնիսկ *վերապրողների* սերունդ թողել: Նա կանանց մասին գրում է. «Երիտասարդ կիներու և աղջիկներու տառապանքը այս բոլորեն զատ ուրի՜շ ալ էր: Անոնք ամեն օր խումբ-խումբ կառևանգվեին վավաշոտ ավազակներու կողմէ, իրենց մայրերու կամ քույրերու աղիողորմ ճիչերուն տակ: Անոնցմե շատերը ժայռերեն վար կնետեին զիրենք և կամ գետերու հորձանքին կհանձնեին հայու պատիվը: Իսկ ժանտարմներն ու ջարդարար ավազակախմբերը հավաքական ու հրապարակային սեռային հարաբերության ցուցադրության խեղճ կսարքեին, մրցանքի ձևով և յուրաքանչյուր արարք զինվորական ազդանշաններով ղեկավարված:

Վա՜յ եկեր այն կնկան կամ աղջկան, որ չէր զսպվեր: Այն ատեն սուրը կմխրճվեր անոր սրտին մեջ և սակայն զերծ չէր մնար բռնաբարվելե իր արյան ճապաղիքների մեջ իսկ: Եվ այս ճակատագիրն է, որ արժանացավ հայկական իգական սեռը, ամոթ ու մեղք չըլլա ըսել, հաճախ յոթը տարեկանեն սկսյալ»[2]:

---

[1] *Մ[եպուհ] Ակունի,* Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ.Պոլիս, 1921:

[2] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 372:

Թուրք գազանները մրցում էին հայ երեխաներին սպանելիս, նրանց նշանախեց դարձնելով. «Այս չէր միայն իժի ծնունդ թուրք դահիճներու և դահճապետներու զվարճությունը: Երբ հանգրվան առ հանգրվան դադար կտրվեր կարավաններուն, դահիճներուն ձանձրույթը փարատելուն համար հազարավորներ զոհ կերթային ***նշանառության մրցանքներու, սրախաղերու և մարդասպանության նորանոր ձևերու: Մանուկ մը օդը նետելով սուրին վրա անցողին իբրև պարգև կտրվեր սիգարեթ մը. բռունցքի մեկ հարվածով մանուկի գանգը փշրողին՝ աֆերիմ մը»***[1]:

Տղամարդկանց մասին ասված է. «Երբ կիրճեն մը կանցնեին կարավանները, թուրք դահիճները կացնի հարվածով մը ծոծրակին և հարված մըն ալ կռնակին կիջեցնեին և անդունդն ի վար կգլորեին արական սեռի այս մնացորդաց: Ու կպատահեր հաճախ, որ վիզը կիսով փրթած մարդակեր խլեակ մը կքաշկռտեր իր գոյությունը հասնելու և միանալու համար կարավաններեն մեկուն:

Եվ այսպես օրեօր հյուծվող, ժամեժամ նվազող և ամեն վայրկյան անարգանքներուն ու տառապանքներուն ամենեն ահավորներուն ենթարկվող սեբաստահայ զանգվածը երբ Ռաքքա հասավ և ապա զինադադարի փողը փչեց, Սեբաստիո կարավաններեն մնացած էր շուրջ 450 անձ, որոնցմէ 60-ը միայն էրիկ մարդեր էին»[2]:

Այսքանից հետո, կարծես հրաշքով, չնայած ասում են, թե հրաշքներ չեն լինում, Սփյուռքում համահավաքվեցին սեբաստահայերի բնավեր բեկորները, կազմեցին հայրենակցական, մշակութային միություններ, ճիգ ու ջանք թափեցին վերապրելու, բազմանալու: Ավելին, նրանց մի ստվար հատվածը հայրենադարձվեց Խորհրդային Հայաստան, Երևանի ծայրամասերում հիմնեց Նոր Սեբաստիա և Նոր Կամարակ թաղամասերը սրտում պահելով ապրած անսահման վիշտը, հայրենիքի կարոտը և միշտ էլ հույսը չկորցրած վերադառնալու պապենական, բազմադարյան Հայրենիքը:

* * *

Հայոց պատմության այս էջերը առանց այդ էլ մռայլ ու միակողմանի կմնային, եթե մենք չանդրադառնայինք ***մի կարևոր դրվագի ևս:*** Անհասկանալի կմնար, թե զորավար Անդրանիկն ու Մուրադ Սեբաստացի ծնած այդ նահանգը ինչպես է, որ առանց գնդակ արձակելու գնաց կառափնարան, սպանվեց՝ դիմագրավման ոչ մի փորձ չարած: Իրոք այդպես չէր: ***Ինքնապաշտպանության անհուսալի ու հանդուգն պայքարի դրոշ պարզեց Շապին-Կարահիսարի հայկական համայնքը:***

Սեբաստիայի նահանգի ***Շապին-Կարահիսարի*** գավառը (սանջակ) միշտ էլ խիզախ կորյուններ է սնել ազգային-ազատագրական պայքարի ոգորումների բովում: Երկրամասը թուրքերի դեմ բազմիցս ըմբոստացել է, և ժամանակակիցներն այն համեմատում են ***Սասունի*** և ***Զեյթունի*** հետ:

Քաղաքն ուներ հազարամյակների հերոսական անցյալ, ռազմաստրատեգիական անառիկ դիրք: ***Կարահիսար*** անուն էր տրված քաղաքին, շղթայածև լեռնապարերով շրջապատված լինելու պատճառով: Նրա երեք կողմերից բարձրանում են անդնդախոր ձորերի կատարին թառած ժայռեր, իսկ չորրորդ եզրից ցցված է բուն, անառիկ բարձունքը: Այդ լեռնապարսպի տարածքի վրա կան հանքային հարստություններ, որոնց շահագործման համար հարթված է մի մեծ հրապարակ:

Լեռնաշղթան ժամանակին դեպի իրեն է ձգել մեծ զորավարների: Այնտեղ հերթականությամբ գիշերել են հռոմեական զորավարներ ***Պոմպեոսն*** ու ***Լուկուլլոսը,*** ապա

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 372:

[2] Նույն տեղում, էջ 372-373:

Պոնտոսի տիրակալ ***Միհրդատ VI Եվպատորն*** ու Հայոց արքայից արքա ***Տիգրան Մեծը:*** Պոմպեոսը, գրավելով բերդաքաղաքը, ջրամբարներ է կառուցել տվել և պարիսպներով ամրացրել, անառիկ դարձրել բերդը: Հռոմեական եռապետության անկումով պայմանավորված, քաղաքը գրավվում է հունաց ***Նիկողայոս Կոլթ*** կայսեր կողմից, որի պատվին էլ վերանվանվում է ***Նիկոպոլիս[1]:*** Բյուզանդական կայսրության անկումից հետո, արդեն Շապին-Կարահիսար անուն ստացած քաղաքն ընկնում է օսմանյան սուլթանության բռնապետության տակ:

Պատերազմի սկզբում քաղաքն ուներ 95000 բնակիչ, որից 25 հազարը հայեր էին: Լեռնահամայնքի այդ խիզախ մարդիկ պաշտպանել են իրենց կիսանկախ վիճակը, այն էլ համառ ու հետևողական պայքարով: Իրապես Շապին-Կարահիսարի հայությունը մի անգամ չէ, որ ընդվզել էր թուրքական բռնակալության դեմ: Այդպես էր նաև 1895-96 թվականներին, երբ բազմաթիվ հայ խիզախներ մարտնչում էին թուրք ջարդարարների դեմ: Հատկապես աչքի էր ընկել Դանիել Չաուշի խումբը, որի «համբավը մինչև Եըլտըզի պալատը հասած էր: Դանիել Չաուշը ողջ կամ մեռած բերողին 1000 օսմ. ոսկի խոստացված էր»: Այդ քաջ հայդուկը հերոսաբար կռվեց և միայն անհավասար մարտում նրա գլուխը դարձավ թշնամու ավար: ***Շապին-Կարահիսարի պարծանքն էր զորավար Անդրանիկը, որը դարձավ ժողովրդական հերոս:***

Շապին-Կարահիսարի հայերը նոր սխրագործության դիմեցին Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Թուրքական զորահավաքը տարածվեց նաև նրանց վրա, և 250-300 երիտասարդներ գնացին բանակ, իսկ մնացածները վճարելով 40-ական ոսկի առժամանակ ազատվեցին, բայց պատերազմի պետքերը հոգալու համար մոբիլիզացվեցին որպես շալակավորներ, պաշտպանական աշխատանքներ կատարողներ և այլն: Ուժեղացան թուրքական իշխանությունների կամայականությունները: Ոստիկանները ուղղակի գրավում էին վաճառատները, բնակչությունից բռնագրավում հագուստ, կոշիկ, պարեն, պահանջում հանձնել ունեցած զենքերը և այլն:

Հայ բնակչությունը արյունահեղությունից խուսափելու համար կատարեց այն ամենը, ինչ հնարավոր էր: Բայց դա չգոհացրեց թուրքական իշխանություններին, որոնք խնդիր էին դրել ոչնչացնել հայերին: Արդեն 1915 թվականի մայիսից սկսվեցին զանգվածային ձերբակալություններն ու սպանությունները: Շատերի հետ միասին նահատակվեց նաև Շապին-Կարահիսարի առաջնորդ Վաղինակ ծ. վարդապետ Թորիկյանը, որին դավադրաբար կանչեցին ու սպանեցին[2]:

Չկարողանալով տանել թուրքերի վիրավորանքներն ու ոչնչացնելու սպառնալիքները քաղաքի, ինչպես նաև շրջակա գյուղերից Շապին-Կարահիսար փախած հայ բնակչությունը որոշում է մեռնել, բայց պատվով: Փաստորեն նա բարձրացնում է ***ինքնապաշտպանության*** դրոշը: Ահա թե ինչպես է նկարագրում այդ դեպքերը ***Սեպուհ Ակունի[3]:***

«Տեղական իշխանութիւնները կատղած էին Հայերուն դէմ, բայց շատ ալ առաջ չէին երթար, որովհետեւ կը ճանչնային քաղաքին Հայութիւնը. այս պատճառով կ'ուզեն խաբեբայութեամբ հասնիլ իրենց նպատակին: 1915 Ապրիլի մէջ սկսած էր արդէն շրջակայ գիւղերու զինաթափութիւնը և քանդուած էր Բիւրք գիւղը և գիւղապետը Յակոբ Քէօչէկեանը սպաննուած իր քրոջ և ծիուն հետ մէկտեղ, իսկ 400 տնուոր

---

[1] ***Խորեն Այվազյան,*** Շապին-Գարահիսարի հայության գոյամարտը. «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 772-780:

[2] ***Արամ Հայկազ,*** Շապին-Գարահիսարը և իր հերոսամարտը, Նյու Յորք, 1957, էջ 115-116: Տես նաև ***Մ. Վ. Արզումանյան,*** նշված աշխատությունը, էջ 410:

[3] ***Մ[եպուհ] Ակունի,*** Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921, էջ 215-217:

Հայութիւնը տեղահան եղած: Այս դէպքերուն վրայ տեղւոյն երիտասարդութիւնը կը քաշուի Ս. Եղիայի լեռը, զինուորները չեն յաջողիր անոնց բան մը ընելու, ի վերջոյ կիներն ու մանուկները թոյնով կը սպաննուին:

Գիւղերու մէջ պատահած այս դէպքերէն դուրս 1915 Յունիսի կիսուն, բուն քաղաքին մէջ ձերբակալութիւններ կը կատարուին: Մէկ կողմէ քաղաքին մէջ տիրող կացութիւնը, միւս կողմէ Երզնկայի, Սեբաստիայի և շրջականերու մէջ պատահած զանգուածային սպաննութիւնները, որոնց արձագանգը հասած էին Շ. Գարահիսարցիներու, կը ստիպէ ժողովուրդը որ խորհի իր ճակատագրին վրայ, երբ մանաւանդ կառավարութիւնը կը փորձե կախել ձերբակալուած յեղափոխականները և կը հրամայէ տեղահանութիւնը: Ասոր չի հանդուրժեր սակայն ռազմիկ Շ. Գարահիսարցին և բողոքի ցոյց մը կ'ընէ, որուն վրայ քաղաքը կը պաշարուի Երզնկայէն բերել տրուած զինուորներով: Ձեռնոցը նետուած էր և ահազանգը հնչած: Հիմակ է, որ Շ. Գարահիսարցին տէր պիտի ըլլար իր ճակատագրին և ահա նախապէս տրուած որոշման համաձայն՝ մէկ քանի հարիւր կտրիճներ կը բարձրանան Միջնաբերդ՝ ուր դիրք կը բռնեն:

Հազիւ թէ դիրք բռնած են, ահա կը սկսի կռիւը և երկուստեք հրացաններ կ'արձակուին: ***Կռիւը սկսած է Յունիս 1/14ին և տեւած է 30 ցերեկ և 30 գիշեր:*** Հայերու բերդէն քաշուելուն վրայ թուրքերը առաջին անգամ կրակ կուտան երկու Հայերու տուն և ապա կը ձեռնարկեն հրոյ ճարակ ընելու ամբողջ քաղաքը: Յունիս 2/15ին բերդէն կը սկսի համազարկը, երբ քաղաքին մէջ հազիւ 12 ժանտարմա մնացած էր: Հայերու բացած բուռն կրակին ազդեցութեան տակ քաղաքին կառավարիչը և պաշտօնեաները կը փախչին, իսկ մնացած 12 ժանտարմաները նոյնպէս վախնալով կը փախչին ***«Կեավուռ պասըեօր, գաչընըզ»*** պօռալով: Նոյնը լեղապատառ կ'ընեն թուրք կիները իրենց տղաքը շալկած և կը վազեն դէպի այգիները: Ճիշդ այս խուճապի պահուն է, որ կտրիճները օգտուելով առիթէն, իրենց ընտանիքները բերդ կառնեն քսանըչորս ժամուան մէջ և նոր եռանդով կը փարին կռուի: Վերապրողներու վկայութեան համաձայն այս կերպով բերդ ապաստանածներու թիւը կը հասնի 6665 հոգիի, որուն ստուար մեծամասնութիւնը կը կազմէին կիներն ու տղաքը:

Շ. Գարահիսարի հերոսամարտը վարած և հայ ընտանիքներուն հանգստութեան հսկողները եղած են հարուստ գերդաստանի զաւակ Վահան Հիւսիսեանը, Հմայեակ Գարակէօզեանը, Վէտիկեանը, Պուռնազեանը և ուրիշներ:

Ահազանգը հնչած ըլլալով, կռիւը օր ըստ օրե աւելի սաստիկ հանգամանք մը կը ստանայ, այնպէս որ եօթներորդ օրը Հայերը կ'ունենան 90-100 հոգիի կորուստ, իսկ թուրքերը՝ 300-350: Անհերքելի է հայ կիներուն ցոյց տուած անձնուիրութիւնը. անոնք միշտ կը լեցնէին հերոսներու փամփուշտները և կը մատուցանէին ծառայութիւններ այնպիսի արագաշարժութեամբ որ հիացում կը պատճառէր:

Հայերը շնորհիւ իրենց ամրաշէն թագստոցներուն առ հասարակ զերծ կը մնային թշնամիին կրակէն, այնպես որ թուրքերը հազար ու մէկ հնարք կը խորհէին ժամ առաջ ընկճելու համար մեր կտրիճները: Այս նպատակով, զինուորական ուժը կը բաժնեն երկու մասի: Անհերդի գիւղին Տիգմին անուն լերան տակ կը զետեղեն 5 թնդանօթ, իսկ Արաղի գիւղին ոտքը՝ 4, Սեբաստիայէն ալ յատկապէս բերուած էր թնդանօթաձիգ ջոկատ մը: Սակայն դարձեալ մեծ օգուտ մը չունենար առաջին օրերուն, այնպէս որ այս անգամ Սեբաստիայէն բերուած 12000 զինուորի և 5 թնդանօթին վրայ կ'աւելցուին Երզնկայէն բերուած 8000 զինուոր 4 թնդանօթով: Թրքական հրետանիին ռումբերը կը սկսին տակաւ առ տակաւ քանդել Հայերուն ամրոցներն ու մարտկոցները, մտահոգութիւն պատճառելու աստիճան: Շնորհիւ իրենց հրետանիին՝ թուրքերը կը յաջողին ժամ մը հեռաւորութեամբ բարձր տեղ մը դիրք բռնել և ուղղակի ռումբ նետել բերդին մէջ: Այս կացութեան առջեւ պէտք էր հնարք խորհիլ կարելի

եղածին չափ դիմադրութիւնը երկարաձգելու համար, այնպէս, որ մեր կտրիճները ո՛ր կողմէն ալ որ կապար գար, իրենց կիները պարիսպ կը կանգնեցնէին պառկած դիրքի վրայ և ձեռք ձեռքի տալով պատ մը կը հիւսէին:

Գաղափար մը տալու համար կռիւի սաստկութեան մասին, ըսենք թէ ականատեսներու վկայութեան համաձայն օրական 300 թնդանօթի ռումբ տեղացած է Հայերուն գլխուն: Դիմադրութիւնը սոսկալի է սակայն, այնպէս որ այս անգամ թուրքերն են որ հնարք կը խորհին խարդախութեամբ անձնատուր ընելու համար մեր արիարանց հերոսները և Սեբաստիայէն եկած զինուորները կը սկսին հետզհետէ մօտենալ մերիններուն և հայերէն լեզուով ըսել թէ ***«Մի վախնաք մեզմէ, մենք ձեզի օգնութեան կուգանք»:*** Այս դաւը սակայն շուտով երեւան կ'ելլէ հայ աչք-բաց պատանիի մը միջոցաւ և անոնցմէ 200 հոգի ցիրուցան կ'ըլլան Հայերու կրակով: Կացութիւնը հետզհետէ կը դառնայ աւելի յուսահատական. իրաւ է, թուրքերը խոշոր կորուստներ կ'ունենան, բայց այս անգամ Հայերու մէջ ծայր տուած մատնութիւնը աւելի մտահոգ կը դարձնէ կռուողները որոնք փրկութեան միջոց կը խորհին: ***Տրուած պատուէրին վրայ մայրեր մեծ կաթսայով, պատրաստուած թունաւոր ըմպելիին կը մօտենան իրենց զաւակներով մէկտեղ և հերոսական մահով մը կը կապուտնան, կ'անմահանան, իսկ 800ի չափ ռազմիկներ կը հեռանան բերդէն, ուրիշ տեղ շարունակելու համար պայքարը, կռիւին 19րդ գիշերը, և կ'ուղղուին դէպի ռուսական սահմանը:***

Այս ռազմիկները իրենց հեռացած պահուն յատկապէս կը յանձնարարեն իրենց քոյրերուն և նշանածներուն, որ երբեք անձնատուր չըլլան, այլ նախընտրեն անձնասպանութիւնը»[1]:

Ինքնապաշտպանների վերջին օրվա վիճակի և կայացրած որոշման մասին պատմում է Բեյրութ գաղթած, վերապրողներից մեկի զավակ Խորեն Այվազյանը: Նա գրում է. «Բերդը ազատված էր: Բայց առաջին օրերու խանդավառութիւնը մարած է, եւ սովի արհաւիրքը զանոնք դրած է մահուան հետ դէմ առ դէմ: Տեղէ մը օգնութիւն ստանալու յոյս չկար: Բոլորը անհամբեր կը սպասէին ռուսական բանակին, ազատութիւն աւետող անոր թնդանօթներու գոռումին:

Սովամահութի՜ւն...

Դուն բաց աչքով կը տեսնես թշնամիին գալը և բազուկդ անշարժ եւ ուժահատ՝ չես կարող զայն հարուածել: Չես կարող պաշտպանուիլ անոր դէմ:

Սովէն ընկճուած բազուկներ պիտի դառնան այլևս անկարող կռուելու:

Ղուկաս աղբար ժողովի կը հրավիրէ բոլոր մարտիկները:

Լուռ եւ ինքնամփոփ, հանդարտ ու պարզ, անիկա անպաճոյճ բառերով կը պարզէ կացութիւնը.- «Ուտելիքը հատած է. մէկ երկու օր ետք անօթի պիտի կռուինք... Ե՞տքը, ի՞նչ պիտի ընենք: Եթէ գիշերային ուժեղ յարձակումով մը պատռենք թշնամիին պաշարման շղթան, ու ելլենք դուրսը, դաշտ կամ լեռ, կրնա՞նք այնտեղէն կռիւը ժամանակ մը եւս շարունակել, կրնա՞նք հեռուէն հսկել բերդի մնացողներուն վրայ, կամ թէ՝ թուրք կառավարութեան սպառնալ որ եթէ անոնց դպչի, մենք ալ թուրք գիւղերը կ'ասպատակենք:

Ես կը կարծեմ թէ քոյլատրելու ենք, որ մեզ հետ գայ ով որ կ'ուզէ, ով որ վստահ է իր ուժին: Սա ալ կայ, որ մենք մեկնինք կամ հոս մնանք, ճակատագիրը նոյնն է: Երբ անօթի ըլլանք եւ ուժաթափ, ինչպէ՞ս կրնանք կռուիլ. մինչդեռ առաջարկած ձեւովս թերեւս մեռնելէ առաջ քանի մը թուրք աւելի կը սատկեցնենք: Մտածեցէք այս մասին»[2]:

Որոշումը կայացվում է 1915 թվականի հունիսի 29-ին, ոմանց կարծիքով ինքնապաշտպանության ***27-րդ, ոմանց հաշվարկներով 30-րդ օրը:*** Մեկամսյա զոհառատ,

---

[1] ***Մ[եպուհ] Ակունի,*** նշված աշխատությունը, էջ 215-217:

[2] ***Խորեն Այվազյան,*** Շապին-Կարահիսարի հայության գոյամարտը, էջ 778:

արյունահեղ մարտերից հետո, անզուգական հերոսները (ովքեր կարող էին) թողնում են պաշտպանական դիրքերը, հանկարծակի հարձակումով ճեղքում են պաշարման օղակը, բարձրանում էնտերեսի լեռը և այնտեղից շարունակում երթը, Պոնտական լեռնաշղթայով դեպի Կիրասոն և Օրդու:

Հուլիսի 30-ի առավոտյան, թուրքերը Բերդի մուտքի մոտ տեսնում են ծածանվող *սպիտակ դրոշ:*

«Այժմ բերդ կը բարձրանան ժանտարմա, ոստիկան, աւազակ, մարդասպան, ամէն դասէ ու տարիքէ ջարդարարներ, կացիններով, բիրերով, ատրճանակներով ու կեռ սուրերով եւ բոլորը կ'իյնան անպաշտպան, վիրաւոր ու հիւանդ ժողովուրդին վրայ...:

Եւ պատուախնդիր հայուհիներ իրենք զիրենք վար կը նետեն ժայռերէն, որպէսզի փրկեն հայ կնոջ պատիւը: Ոմանք իրենց հետ անդունդ կը տանին իրենց մանկիկները եւս: Ի՜նչ անմոռանալի հերոսութիւն ու պատուախնդրութիւն...

Եւ անդին, թափուող անմեղ արիւն... ծո՜վ արիւն...»[1]*:*

Օղակից դուրս եկածներն ընթանում են լեռնային արահետներով, ամեհի կիրճերով, չերքեզների և լազերի հարձակումներին դիմագրավելով: Աստիճանաբար *նոսրանում* է նրանց շարքերը: Սակայն նրանք քայլում են հավատքով տոգորված, ապրելու, գոյատևելու տենչից զորացած, կքայլեն, լեռնաշղթայի վրա թողնելով անթաղ դիակներ: Հերթով ընկնում են ինքնապաշտպանության ղեկավարները, զոհվում են անհավասար մարտերում:

Սակայն... քարավանները դեռ քայլում էին, հույսով, որ ռուսական բանակը կհասնի իրենց, կփրկի իրենց: Եվ հանկարծ կատարվում է այդ հրաշքը:

«Արշալոյսի առաջին ճառագայթներուն տակ, մնացորդացը տեսաւ հսկայ դաշտագետին մը եւ հեռուն ծովը՝ իր կապուտակ գոյնով միացած երկնակամարին:

Անոնք մագնիսացած աչքերով կը նային այդ նոր հորիզոններուն, վստահ ըլլալով թէ հասած է իրենց տառապանքին վերջակէտը:

Ձիաւորներու խումբ մը վարէն յամրօրէն կը բարձրանայ, եւ նոյն պահուն ծիաւորներէն մէկը աւելի արագ յառաջանալով, գլխուն փափախը վեր կը բարձրացնէ եւ կը շարժէ.

Նոյն ատեն կը հնչեն յաղթանակի աղաղակներ: «Հայե՛ր, ռուսական բանակն է որ ձեզի կու գայ»:

Տկար բազուկները այժմ զօրացած կ'երկարին, վատուժ եւ յոգնաբեկ սրունքներ այժմ հաստատուն կը կանգնին, ամիսներէ ի վեր ցամքած շրթունքներ այժմ մաղթանքներ եւ օրհնանքներ կը տեղան:

Հազարաւոր մարմիններ տառապանքէն հիւծած, բայց այժմ կազդուրուած, կը շարժին եւ կ'երթան միանալու իրենց ազատարարներուն:

Վիրաւոր կինը, մահամերձ, վերջին ճիգով մը զօրացած, իր մանկիկը կ'երկարէ բախտաւորներուն ու կ՚ըսե.

«Տարէ՛ք այս իմ մանկիկը, տարէ՛ք հետերնիդ, միայն թէ յիշեցուցէք իր անունը, որպեսզի չմոռնայ...

«Իր անունը... Արմէ՛ն է, Արմէ՛ն... յիշեցուցէք...» եւ երանութեան յոյսի շողով կը գոցէ իր աչքերը»[2]*:*

Ահավոր այս գողգոթային չի կարող դիմանալ ո՛չ գրողի և ո՛չ էլ ընթերցողի հոգեկան աշխարհը: Մի փոքրիկ բեկոր փրկվեց սպանդից, սակայն ոչնչացավ ևս մի ամ-

[1] *Խորեն Այվազյան*, Շապին-Գարահիսարի հայության գոյամարտը, էջ 779-780:

[2] Նույն տեղում:

բողջ համայնք, դատարկվեց ևս մի հայաքաղաք, դառնալով բուերի ու արալեզների նստավայր: Այստեղ են ասել՝ դե ե՛կ վարդապետ և մի՛ խելագարվիր...

Ե. ԴԻԱՐԲԵՔԻՐԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Արևմտյան Հայաստանի խոշորագույն նահանգներից էր ***Դիարբեքիրի (Կույսի երկիր)*** վիլայեթը, որը պատմագիտական գրականության մեջ հաճախ անվանվում է նաև ***Տիգրանակերտ:*** Նրա տարածությունը 1912 թ. հասնում էր 37500 քառ. կմ, բաժանված էր Դիարբեքիրի, Մարդինի, Արղանա-Մադենի սանջակների, որոնք իրենց հերթին տրոհվում էին Սեվերեկ, Սլիվան, Լիճե, Տիրեք, Բեշիրե, Մծբին, Զեզիրե, Միդիադ, Ավնիե, Մարդին, Բալու, Ջերմուկ և Արղնի գավառակների:

Ինչպես օտար աղբյուրները, այնպես էլ հայ հեղինակները Դիարբեքիրի բնակչության թիվը հասցնում են 571500 մարդու: Ազգաբնակչության ազգային կազմով վիլայեթն ուներ չափազանց բարդ կառուցվածք: Այնտեղ ապրում էին 250000 քրիստոնյաներ, որոնցից 150000-ը հայեր էին, 80 հազարը՝ ասորիներ, 20 հազարը՝ հույներ: Դժբախտաբար այստեղ ստվար թիվ էին կազմում մահմեդականները: 200000 քրդեր էին հաստատվել նահանգում, 63000 թուրքեր, 27000 ղզլբաշներ, 10000 չերքեզներ, 4000 եզիդներ, 1500 հրեաներ: Կային նաև գնչուներ և այլ ազգերից փոքրաթիվ համայնքներ[1]:

Երիտթուրքական հայասպանները, օգտվելով, որ նահանգում մահմեդականները բացարձակ մեծամասնություն էին կազմում, հատկապես քրդերի առկայությունից, որոշեցին Դիարբեքիրում ավելի վաղ սկսել ցեղասպանությունը և ավելի դաժան վարվել քրիստոնյաների հետ, քան մյուս վիլայեթներում:

Պատերազմը սկսվելուց հետո Դիարբեքիրում ստեղծվեց զորահավաքի ու պատերազմական տուրքերի հանձնաժողով, որին գլխավորում էին տեղական իթթիհատականներ Աթթար Հագգը և Ջրջիս Աղա-Ջադե Քոռ Յուսուֆ բեյերը: Հանձնաժողովը, որը մասնաճյուղեր ստեղծեց վիլայեթի տարբեր վայրերում, կատարյալ պատուհաս դարձավ հայերի համար: Նրանցից վերցնում էին ամեն ինչ՝ մարդիկ, անասուններ, մթերքներ, ապրանքներ, ընդհուպ մինչև անկողիններ[2]:

Այդ օրերի մասին Դիարբեքիրում հաստատված անգլիական փոխհյուպատոս Թովմաս Գ. Մկրտիչյանը գրում էր, թե 1914 թվականի «Սեպտեմբերի 10-ին գացի «Թեքիալիֆի հարպեյի» կեդրոնը այցելութիւն մը տալու «զոմոսիոն րէիսի» Ճրճիս աղա Ջատէ «Քոռ» Եուսուֆ պէյին: Խօսակցութեան ընթացքին դիտողութիւն ըրի իրեն ըսելով թէ «Տիգրանակերտի վիլայէթին բնակչութեան 2/3 իսլամ եւ 1/3 միայն քրիստոնեայք ըլլալով, «թեքիալիֆի հարպիյէ»ի ալ ծանրութիւնը նոյն համեմատութեամբ պէտք է բաժնուի եւ գանձուի: Մինչդեռ իրենց «զոմոսիոն»ին իսկ հաշիւներուն նայելով 5/6ը քրիստոնեաներէն եւ հազիւ 1/6ը իսլամներէն կը հաւաքեն: Եուսուֆ պէյ պատասխանեց. «Բայց հայերը աւելի հարուստ են, քաղաքին եւ վիլայէթին ամբողջ շուկան, վաճառականութիւնը, արհեստները, առեւտուրը և երկրագործութիւնը ամբողջ անոնց ձեռքն է, դրամ շատ ունին, ուստի պէտք է տա՛ն»: Քաղաքի բնակչութեան եւ վիլայէթի քիւրտ էշրաֆներուն, փաշաներուն եւ պէյերուն մէջէն ա-

[1] *Երվանդ Հ. Քասունի,* 1915 և կոտորածները Տիարպեքիրի մեջ. «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 400: Տես նաև *Թ. Գ. Մկրտիչյան,* Տիգրանակերտի նահանգի ջարդերը և քյուրտերու գազանությունները, Գահիրե, 1919:

[2] *Մ. Վ. Արգումանյան,* Հայաստանը 1914-1917, էջ 420-421:

նուններով օրինակ տուի իրեն ըսելով թէ անոնք շատ աւելի հարուստ են եւ պատրաստի ա՛լ աւելի դրամ ունին, թէ արդարութիւն եւ հաւասարութիւն պէտք է ամէն գործի մէջ, թէ՛ հնար եղածին չափ իրենք պէտք է համեմատութիւնը պահեն, եւ եթէ իրենք կողոպտեն հայերը սպաննած պիտի ըլլան իրենց ոսկի ածող սագը»[1]:

Դիարբեքիրի կառավարիչ (կոմիսեր) Սեհմեդ բեյի հրամանով, լուրջ նախապատրաստութենից հետո, 1914 թ. օգոստոսի 19-ի գիշերը կրակի հրեղեն բոցերի կերակուր են դարձնում քաղաքի շուկան, որտեղի խանութների մեծ մասը հայերինն էին (թուրքերին մեկ օր առաջ, գաղտնաբար, զգուշացրել էին, որ դատարկեն իրենց խանութները):

«Հրդեհին հասցուցած վնասը ըստ կառավարութեան եւ պելետիյէին՝ կը հասնի մինչեւ 350000 ոսկիի: Մինչ ֆրանսական եւ անգլիական հիւպատոսարանները, ինչպէս վաճառականները, վնասը կը գնահատեն մինչեւ կէս միլիոն ոսկի»[2]:

Գնալով վիլայեթում, հատկապես քաղաքում վիճակը դառնում է անելանելի: 1914 թ. սեպտեմբերի 27-ին Դիարբեքիրի առաջնորդ *Չլղատյան* վարդապետը, Կ. Պոլսի հայոց պատրիարք Զաւէն Եղիայանին գրում է.

«Որչափ հոս նոյնչափ աւելի Սլիվանի և Պշերիկի մէջ ժողովուրդը հասցուցած են այն աստիճանին, որ այլեւս ապրիլը անկարելի է գրեթէ: Ամենաբուռն սաստկութեամբ և սպառնալիքներու ներքեւ կը գրաւեն ժողովուրդին ցորենը, ալիւրը, գարին, ձին, ջորին, ոչխարը, ձաւարը, իւղը, թացանը, տրեխցու մորթերը, գեղջկուհու գլխի սաւանները և. և. ունեցողը լռիկ մնջիկ կուտայ արդէն, իսկ չունեցողները պէտք է դրամով ճարեն ու բերեն. հակառակ պարագային կը յանձնուին պատերազմական ատեանին: Դժբախտաբար հոս չի վերջանար չարիքը, ամիսէ մը ի վեր Քիւրտը սկսած է իր հին արհեստին, գուցէ իրմէ եղած գրաւումներուն տեղը լեցնելու համար և իր վրէժխնդրութեան ծարաւը յագեցնելու համար Հայու գլխուն»[3]:

Մեկ ուրիշ նամակով նա շարունակում է. «Կառավարութեան անտարբերութենէն երկիրը սկսած է տակնուվրայ ըլլալ, ժողովուրդը ահ ու սարսափի մատնուած է. մեծ կոտորածէ մը կը վախցուի, ճամբաները աւազակներով լեցուած են. ահագին նեղութիւնք ստանձնելու է մինչև Բարեշէն ճամբորդելու համար. ճամբուն վրայ գտնուող ծխախոտի արտերը բոլորովին փճացուած են Ռաշքոտանցւոց կողմէ և. և»[4]:

Հայերի բողոքագրերը Կ. Պոլսի պատրիարքը հավաքում էր և կից գրությամբ, թախանձագին խնդրանքով, ուղարկում Բ. Դուռ, օրորվելով այն հույսերով, թե կենտրոնական կառավարությունը օգնության ձեռք կմեկնի «իր հավատարիմ հպատակներին»: Ստացվում էր հակառակը: Թուրքերը առավել գազազելով հայերի բողոքագրերից արագացնում են ջարդի կազմակերպման պրոցեսը Դիարբեքիրում:

Պատմաբանի համար անհետաքրքիր չէ 1914 թ. հուլիսի 15-ին կայացած մի երկխոսություն, որտեղ բացահայտվում են շատ գաղտնիքներ: Դիարբեքիրի եղեռնի կազմակերպիչ, օսմանյան պառլամենտի անդամ ***Ֆեյզի բեյը*** հուլիսին գալիս է Դիարբեքիր՝ հանձնարարություն ունենալով քաղաքի և նահանգի հայության բռնագաղթի, նաև ոչնչացման կազմակերպումը: Նա կառավարության աչքում «լավ համարում ուներ», քանի որ հանդիսանում էր 1895 թ. հայկական կոտորածների կազմակերպիչ ***Փիրինճճի Զատե Արեֆի*** որդին և բնավ չէր թաքցնում իր գազանային բնազդը հայ ժողովրդի նկատմամբ:

Այս հրեշի և մի քանի այլ թուրքերի հետ զրույցի ժամանակ պարզվում է սրանց

---

[1] «1915 և կոտորածները Տիարպեքիրի մէջ». ***Երվանդ Ղ. Քասունի,*** էջ 404:
[2] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 405:
[3] ***Զաւէն արքեպս.,*** Պատրիարքական հուշերս. վավերագիրներ և վկայություններ, Գահիրե, 1947, էջ 56:
[4] Նույն տեղում, էջ 57:

մտադրությունները, որոնց մասին, իր անունը չհրապարակած հայ «բարձրաստիճան անձնավորությունը» Ձավեն Պատրիարքին գրում է. «Յուլիս 15ին (1914) Պէյրութի ճամբով Պիթլիս ուղեւորուեցանք. Հալէպէն Տիգրանակերտի մէպուս Ֆէյզի, Ջուլֆի եւ Քեամիլ պէյերուն հետ կառքով ճամբայ ելանք: Ֆէյզի պէյ խօսակցութեանց միջոցին յայտնեց թէ հայերը շատ գէշ վարուած են իրենց հետ. «Պալքանի պատերազմէն վերջ մեր էն տկար միջոցին, Ձաւէն Պատրիարք, էջմիածնի Կաթողիկոս եւ Պօղոս փաշա միանալով մեր վրայ օտար տէրութեանց միջամտութիւնը հրաւիրեցին, ասոր համար *շատ պիտի տուժէք. ձեր ապագան վտանգալից է»:*

«Այս խօսքը քանիցս կրկնեց,- կը շարունակէ պաշտօնատարը իր տեղեկագրին մէջ: Ասոր ի պատասխան ըլլալիք բարենորոգումները առ հասարակ թրքաց, քրտաց եւ հայոց հաւասարապէս ըլլալուն համար, հաւատարմութեան հակառակ հայերը գործ մը չնելնին, եւ բարենորոգումները երկրին բարգաւաճման եւ անդորրութեան պատճառ ըլլալուն համար, ինքն ալ իբրեւ մէպուս գոհ մնալը բնական է՝ խօսքերով զինքը համոզել անկարելի կ'ըլլար: Երբ Ուրֆա հասանք Տիգրանակերտի պաշտօնակից կուսակալը Հիւսէյին ճելաղ պէյը երբ Մ. Հոֆի պաշտօնանկութիւնը ծանոյց, այլեւս Ֆէյզի պէյին ուրախութեան սահման չկար. «այժմ պիտի տեսնէք թէ ձեր գլխուն ի՞նչ պիտի գայ, ըսաւ»:

1914 Օգոստոս 27ին, Հինգշաբթի օր մը, Տիարպեքիրի անգլիական փոխ-հիւպատոս Թովմաս Մկրտիչեան Ֆէյզի պէյի հետ ունեցած իր հանդիպումի ընթացքին, խօսելով պատերազմի մասին, երեսփոխան Ֆէյզիէն կը ստանայ հետեւեալ պատասխանը.

«Այս պատերազմը համաշխարհային պիտի ըլլայ: Գերմանները այնքան մեծ եւ ահեղ պատրաստութիւններ տեսած են այս պատերազմին համար, եւ այնքան գաղտնի գիտեր ըրած ու հնարած են մահացուցիչ գործիքներ, քնդանօթ, ռումբ, ընդծովեայ, օդանաւ, դրամ, զինուոր եւլն. այնքան պատրաստ կան որ, կասկած չկայ թէ իրենք գերմանները պիտի շահին այս պատերազմը: Նախ Ֆրանսան յետոյ Ռուսիան պիտի ճնշեն եւ ջախջախեն, ու յետոյ Անգլիոյ պիտի դառնան, դեռ իրենք չի պատրաստուած... Մեր Թուրքիոյ շահը կը պահանջէ որ Գերմանիոյ կողմը անցնինք: Ինքը խոստացած է որ երբ օգնենք իրեն, մեզի տայ մեր կորսուած բոլոր տեղերը, այսինքն,- *Եգիպտոս, Պենկազի, Թրիփոլի, Թունուզ, Ալճերիա, Ռումելի, Արշիպեղագոս, Կրետէ, Կիպրոս եւ Կովկաս, ինչպէս նաեւ Հնդկաստանն ալ: Այն ատեն հսկայ Օսմանեան կայսրութիւն մը պիտի կազմենք 300 միլիոն իսլամներով: Մինչդեռ քու ազգի անգլիացիներդ մեր երկու տրետնոթերն անգամ չտուին մեզի»:*

Խօսելով հայերու մասին, Ֆէյզի պէյ կը շարունակէ.-

«Հայերը բոլոր ազգով եւ բոլոր կուսակցութիւններով համակիր են Անգլիոյ եւ իր դաշնակիցներուն. յիմարութիւն ու մեծ սխալ մըն է այս իրենց համար: *Պէտք չէ մոռնալ թէ իրենք հպատակ են թուրքին, եւ ուստի, աղէկ պիտի ընեն որ խռովութիւններ հանեն Կովկասի հայոց ձեռքով Ռուսիոյ մէջ՝ եւ այսպէս օգնեն Թուրքիոյ վերստանալու իր կորսնցուցած այդ մասը: ... Բայց եթէ հայերը շարունակեն այս յիմար ընթացքը, շատ սուղի պիտի նստի իրենց: Անգլիա, Ֆրանսա եւ Ռուսիա չեն կրնար օգնել եւ ազատել զանոնք. մինչդեռ մենք կարող ենք ընելու իրենց ինչ որ ուզենք, եւ մեր դաշնակիցները Գերմանիան եւ Աւստրիան, ձայն պիտի չհանեն»*[1]:

Ամեն ինչը պարզ էր: Թուրքերն անցան «մսագործի» իրենց ծրագրերի իրականացման աշխատանքներին: Այդ նպատակով 1915 թվականի մարտին կազմվեց «Հայկական հարցի քննիչ հանձնաժողով», որի նախագահն էր Մեքթուբչի Բեդրեդդին բեյը, իսկ անդամները՝ Ֆոն Հոֆֆ բեյը, Ֆեյզի բեյը, Իլուշտի բեյը, Շևքի բեյը, Շերիֆ բեյը: Ապրիլի սկզբին ստեղծվեց միլիս Մապուրին, որի փաստական ղեկավարն

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», *Երվանդ Հ. Քասունու* աշխատությունը, էջ 405-406:

էր Ֆեյզի բեյը, իսկ ընդհանուր հրամանատարը Ջեմիլ Ֆարազադե Մուստաֆան իր տեղակալով (Յասին Զադե Շևքի)[1]:

Այդ հայասպան մարմինների նախածեռնությամբ 1915 թվականի ապրիլի 15-ին ձերբակալություններ սկսվեցին Դիարբեքիրում, որի հետևանքով բանտարկվեցին 300 երիտասարդներ: Ապա հայոց առաջնորդարանից պահանջեցին, որ բոլոր հայերը հանձնեն զենքերը:

Ստեղծված իրավիճակը քննարկելու համար գումարվեց հայոց Ազգային ժողով Տիգրանակերտի առաջնորդ Մկրտիչ վրդ. Չլղատյանի գլխավորությամբ: Պետք է պատասխան տրվեր գլխավոր հարցին ենթարկվե՞լ թուրքական իշխանությունների կամայականություններին, թե՞ դիմել ինքնապաշտպանության: Ժողովի մասնակիցները պառակտվեցին, ընդ որում, եթե առաջնորդ Չլղատյանը, ֆրանսիական փոխհյուպատոս Հաջի Հարություն Ղասաբյանը, նահանգի թարգման Տիգրան Իլվանյանը և ուրիշներ կողմ էին ինքնապաշտպանության կազմակերպման, ապա Խաչատուր Տիգրանյանը («մեջլիսի իդարեի» անդամ), Ամսին Գազազյանը, Թրփենճյանը, Եկանյանը և այլք պահանջում էին խոնարհաբար կատարել բոլոր կարգադրությունները: Ավելին, Խ. Տիգրանյանը սպառնալով առաջնորդ Չլղատյանին ասաց. ***«Ծո, վարդապետ, ինչպես որ եկեր ես, անանկ ալ քեզ ծիու վրա դրած կղրկենք, մենք կառավարության հակառակ չենք կրնար երթալ, մեր հավատարմությունը ցույց տալու համար պետք է, որ հայոց քով եղած զենքերը հանձնենք»***[2]: Դժբախտաբար, «հաղթանակում է» այդ կործանարար դիրքը. դավաճանների մատնությամբ ու հորդորանքով հավաքվում է եղած զենքը, ձախողվում ինքնապաշտպանության գործը[3]:

Հայատյաց Ֆեյզի բեյը «անցնում է գործի»: Ապրիլի 19-ին սկսվում են զանգվածային ձերբակալությունները: Նույն օրը կալանավորվում և բանտ են նետվում ազգային գրեթե բոլոր գործիչները: Ապրիլի 21-ին ձերբակալվում են հայ ազգային քաղաքական կուսակցությունների ղեկավարները: Մայիսի 1-ին բանտ են լցվում Դիարբեքիրի քիչ թե շատ աչքի ընկնող հայ երևելիները: 300-350 թվաքանակի հասնող կալանավորներին լցնում են 50 մարդ ընդունելու տարողություն ունեցող մի բանտախցիկ, մարմնական ու հոգեկան այնպիսի տանջանքների ենթարկում, որ մահը դառնում է գերադասելի:

1915 թ. մայիսի 7-ին հավաքում են հայերի ձեռքին եղած զենքերը: Դրան հաջորդում է եկեղեցականների բանտարկությունը: Մայիսի 27-ին ձերբակալվում են Մկրտիչ վրդ. Չլղատյանն իր ինը քահանաների հետ: Ապա նույն բախտին են արժանանում կաթոլիկների առաջնորդ Անդրեաս արք. Չելեպյանն իր երեք վարդապետներով: Նույն օրը կալանավորվել են ևս 100-ից ավելի հայեր: Ընդհանուր առմամբ, մայիսի 10-30-ի միջև, բանտարկվում են 1200 հոգի, որոնցից 1000-ը հայեր էին:

Յոհաննես Լեփսիուսի վկայությամբ. «Մայիս 30ին, ասոնցմէ 674ը քէլէքներու մէջ դրուեցան, Մուսուլ փոխադրուելու պատրուակին տակ: Փոխադրութիւնը տեղի կ'ունենար վալիին փոխանորդին և 50 ժանտարմաներու հսկողութեան տակ: Ասոնցմէ կէսը կրցաւ նաեւ մտնել զանազան տեղեր, միւս կէսը գետին երկարութեան կ'երթեւեկէր: Մեկնումէն անմիջապէս յետոյ, 6000 ոսկիի չափ իրենց ամբողջ դրամը և հագուստները առին: ***Յետոյ զանոնք ամէնքն ալ գետը նետեցին: Գետին երկու եզերքներուն վրայ, ժանտարմաները հրաման ունէին սպաննելու ամէն անոնք որոնք կը փորձէին լողալով եզերք ելլել: Իրենց հագուստները յետոյ Տիգրանակերտի շուկան ծախուեցան: Աւազակ Օմար պէյ, աւելի վերը կեցած, ինքն ալ մասնակցեցաւ այս սպանդին»***[4]:

---

[1] ***Զավեն արքեպիս.,*** նշված աշխատությունը, էջ 409:

[2] ***Մ. Վ. Արգումանյան,*** նշված աշխատությունը, էջ 423:

[3] Տոքթ. ***Եոհաննես Լեփսիուսի*** տեղեկագիրը, Հայկական ջարդերը, Պեյրութ, 1965, էջ 91:

[4] Նույն տեղում:

Բանտարկյալներին ենթարկում են աներևակայելի տանջանքների, այսինքն՝ ուղղակի տանջամահ են անում, այն էլ անպատվաբեր եղանակներով ու մեթոդներով: Երվանդ Քասունին գրում է. «Ահաւոր չարչարանքներու կ'ենթարկուին մասնաւորաբար դաշնակցական ղեկավարներէն ***Միհրան Պասթաճեանը, Տիգրան Չաքըճեանը, հնչակեան պետերէն Տիգրանակերտի երեսփոխան Ստեփան Չրաճեանը, իր զաւակները՝ Կարապետն ու Խոսրովը, ռամկավար առաջնորդներէն Յակոբ Օղասարեանը, նահանգի թարգման Տիգրան Իլվանեանը, քաղաքական ժողովի անդամ Ստեփան Մաթոսեանը եւ ուրիշներ:***

Կը հնարուին տանջանքներու ամէնէն գազանային ձեւերը: Թուրք հրէշները իրենց ոտքերէն կը պայտեն վերոյիշեալ ղեկավարներէն ոմանք ու կը պտըտցնեն, ուրիշներու սրտին վրայ շիկացած երկաթէ խոշոր գամերով պայտեր կը գամեն, ինչպէս՝ Պասթաճեանին եւ ընկերներուն: Ոմանց գլուխները կը ճզմեն մեքենաներու մէջ, ուրիշներ կ'անդամահատեն, իսկ ոմանք կը խաչեն, ինչպէս ոստիկան Օհանը»[1]:

Աներևակայելի, չլսված ու չտեսնված էին Դիարբեքիրի հոգևոր առաջնորդի սպանության մեթոդները, դաժանությունները, քրիստոնեական վարդապետության նկատմամբ, մոլլայապաշտ իսլամների բարբաջանքները:

Ահա թե ինչպես են նկարագրում դեպքը ականատեսները. «Սկրտիչ վրդ. Չլղատյանի նահատակությունը իրապես կը մնայ անպատմելի: Գազանն իսկ փշաքաղող վայրագութեանց կ'ենթարկեն հայոց Առաջնորդը: Զինք անջատելով մօտ 700ի հասնող աքսորախումբէ մը, ***1915 Մայիսի 30ի գիշերը,*** «բանտէն հանելով, փողոցներուն մէջ թմբկաւոր ամբոխով մը, իբր արջ երբեմն մուր քսելով, վիզը զանգակներ կախելով, գլուխը պախուրձ անցնելով, կը խայտառակեն հոգեւորականի անվայել ընթացքներու մէջ»:

«...Կէս գիշերին կը վերադարձնեն մզկիթին բակը, ուր կառավարական պաշտօնեաներու, իսլամ ամբոխին ու շէյխերու եւ թմբկահար տէրվիշներու ներկայութեանը ***նախ կը քաշեն տարաբախտ վարդապետին ակռաները մէկիկ-մէկիկ, քունքերուն շիկացած երկաթ կը մխեն, կը կտրեն զմելիով մարմնին միսերը, կը փորեն աչքերը եւ յետոյ կաթիլ կաթիլ քարիւղ թափելով կը վառեն եւ կէս ածխացած վիճակի մէջ կը ձգեն կ'երթան»:***

Տիգրան Մկունդ կու տայ հետեւեալ մանրամասնութիւնը. - «Կիսամեռ վիճակի մէջ ջուր կը լեցնեն մարելով կրակը, խելակորոյս վիճակի մէջ կը վերցնեն զինք նետելով բանտին հիւանդանոցին մէկ ախոռը, երկու միլիս հոն դնելով. յետոյ փայտի հարուածներու տակ կը վերջացնեն Չլղատեանի կեանքը»:

Նուազ խուժդուժ չ'ըլլար նաեւ կաթողիկէ Չէլէպեան Արք.-ի նահատակութիւնը.- «Թուրքեր զինքը Հալէպ ղրկելու պատրուակով Հոռոմ դուռնէն դուրս կը հանեն եւ փոխանակ ուղիղ ճամբուն՝ ձախ կողմը կը տանին զինքը եւ պարապ սառնարանին մէջ իջեցնելով կը հարցնեն. ***«Քեզի հոս բերինք սպանելու համար. ինչպէ՞ս կ'ուզես որ սպաննենք քեզ». «տաշլայըն» (քարկոծեցէք) կը պատասխանէ նահատակութեան պատրաստուած Քս.-ի ծառան. եւ ապա չորս կողմերէն քարեր կը տեղան.*** մինչեւ կուրծքը քարեր կը բարձրանան. երկու զինուորներ կը ղրկուին քոյրը Վարդուշը բերելու որ ականատես լինի իւր եղբօր վերջին վայրկեաններուն: Քրոջ ներկայութեան՝ քարերը Տէր Անդրէասի գլխուն տեղացնելով կը մահացնեն զայն»[2]:

Հայ համայնքը գլխատելուց, նրա հոգևոր և քաղաքական առաջնորդներին ոչնչացնելուց հետո Ֆեյզի բեյը որոշեց արդեն հաշվեհարդար տեսնել ողջ հայության հետ:

---

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 410:

[2] ***Տիգրան Մկունդ,*** Ամիրայի արծագանքները. Նյու Յորգի, (ԱՄՆ), 1950, էջ 241-242:

Նա սկզբում մեկնեց Չեզիրե, բանակցեց քուրդ ցեղապետների հետ, գրգռեց նրանց կրոնական զգացումները և մայիսի սկզբներին վերադարձավ Դիարբեքիր, այն դեպքում, երբ. «Բոլոր հայ երիտասարդությունը *մոտավորապես 10000 անձ քաղաքեն 20-25 ժամ հեռուները դրկված էին: Ազգային ժողովականները, կուսակցականները, կարևոր անձնավորությունները, ամբողջն ալ զնտանիներու մեջ էին նետված: Զարդերու տոռմը պատրաստված՝ վարագույրը բացվելու վրա էր. Ֆեյզի պեյի կսպասեին, որն ևս հասավ:*

Քաղաքին գավառները իրենց գյուղերովը միասին, քյուրտ աշայիրներու և տեղվույն կառավարության ուժերով, տարագրության պատրվակավ ճամբա հանված մոտակա ձորերու մեջ սպանված, լմնցած էին և գեղադեմ հարս ու աղջիկները առևանգված էին: Քաղաքին մոտակա գյուղերն ամեն գիշեր նորակազմ Միլիս Թապուռին երթալով 4-5 գյուղ կոչնչացներ՝ սպաննելով և թալանելով ամեն ինչ:

Կարգը հասած էր քաղաքին հայության ոչնչացման: Ֆեյզի և Րեշիտ պեյերը արյունաբերան կտրած 3 գիշեր Ուլի Ճամիի մեջ կը բանախոսեին կյավուրներու ջարդին համար, և գեշ կերպով կը պատվիրեին թուրք հասարակության, *թե ոչ ոք մեկ հայ երեխա անգամ չի պիտի պահեր, ով որ հայ մը պահեր՝ մահվան պիտի ենթարկվեր: Այս օրերուն, իթթիհատի գոմիթեն նախագահությամբ Ֆեյզի պեյին մեծ ժողով մը կը գումարե, որուն ներկա կը գտնվին բոլոր առաջնակարգ էշրեֆները, իթթիհատականները, նագիպ-էշրեֆ, նույնիսկ մուֆթին:* Օրակարգն էր *հայերուն ջարդի խնդիրը:* Կը վիճեին, թե բոլո՞ր հայերը սրե անցնելու, թե՞ պզտիկներուն խնայելու է: Մեծամասնությամբ կորոշեն, որ օրորոցի մանուկներն անգամ ջարդելու է, մինակ մուֆթին շատ կը պնդե, թե մինչև 12 տարեկաններուն խնայել և զանոնք իսլամացնելու է, սակայն անլսելի կըլլա, որովհետև ամբողջ ժողովը Ֆեյզի պեյի բերանը կը նայեր, որ ամբողջ ուժով կը պնդե, թե օրորոցի մանուկներն անգամ պիտի ոչնչացվին: Ժողովը միաձայնությամբ որոշում կուտա հայոց բնաջնջման, որոշումը կստորագրեն ամբողջն ալ և գրությունը կը հանձնեն կուսակալ Րեշիտ պեյին»[1]:

Վերջապես հերթը հասավ ողջ քաղաքի հայության տեղահանության, բռնագաղթեցմանն ու ոչնչացմանը: Սեպուհ Ակունին 1921 թ. այդ մասին գրում է. «Տիգրանակերտի գաւառակներուն և գիւղերուն հայ ժողովուրդն ալ հետզհետէ տեղահան եղաւ և ճամբաներուն վրայ սպաննուեցաւ, միայն գեղեցիկ կիները զատուեցան:

1915 յուլիսին սկսաւ բուն քաղաքին տարագրութիւնը: Միլիսի հազարապետ Եասին զատէ Շէվքը և ժանտարմայի հրամանատար չիրքէզ Րիշտի կը մտնեն հայ տուները և կը սկսին արծանագրութեան և արեւամուտէն ետք տարագրել: Ճամբայ կը հանեն մօտ հարիւր ընտանիք, խումբ մը Մարտինի ճամբով դէպի հարաւ, ուրիշ խումբ մը Գարապաղչէի ճամբով դէպ արեւմուտք, Տարա, Ռաս-էլ-Այն, Նիսիպին և Տէր Զօր: Գարապաղչէի մօտ կը նահատակուի մեծ մասը: Հայ տարագիրներէն մեծ թիւ մը կը նահատակուի Տիգրանակերտ քաղաքին հարաւը մէկ ժամ հեռու Չաբոխիկ գիւղին մօտ, Գօզան Տէրէի մէջ, քիւրտերու և միլիսներու ձեռքով, Գարաճատաղի հիւսիսային բնակիչներէն քիւրտ Թըրքան-Համիտիէ հեծելազօր-աշիրէթը, 24000ի մօտ տարագիր Հայեր կը կողոպտէ և կը ջարդէ Շէյթան Տէրէսիի և Գայնաղ գիւղին մօտ, Պիկուլեան ձորին միջեւ: Տարագիրներէն անոնք, որ կրցան Ռաս-էլ-Այն հասնիլ, անոնք ալ հոն ջարդուեցան:

Ռաս-էլ-Այնի չէրքեզները իրենց սպաննած տարագիր հայ աղջիկներու և կի-

[1] «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», Պրոֆ. *Մ. Գ. Ներսիսյանի* խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 415:

ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆ
(1926-2000)

ՄԵՆՔ ՀԱՅԵՐՍ, ԴԵՌ ԵՐԳԵՐ ՈՒՆԵՆՔ, ՈՐ ԴԵՌ ՉԵՆՔ ԵՐԳԵԼ, ՎԵՊԵՐ ՉԳՐՎԱԾ, ԵՐԱԶՆԵՐ ՉԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ: ՄԵՆՔ ԴԵՌ... ՊԻՏԻ ՆՍՏԵՆՔ ԱՇԽԱՐՀԻ ԱՂԲՂԿԱՆՑ ՍԵՂԱՆԻ ՇՈՒՐՋԸ, ԻՆՉՊԵՍ ՀԱՎԵՐԺ ԿԵՆՍՈՒՆԱԿ ՍԻ ԱԶԳ, ՈՒ ՊԻՏԻ ԳՈՉԵՆՔ. «ՄԵՌԱԾՆԵՐԸ ՀՐԱՇԱՅՈՒՄ ԵՆ ԱՊՐԵԼ.»:

ներու գլխու մազերովը շինուած և հիւսուած 25 մէթր երկայն հաստ պարան մը նուէր ղրկած են մէպուս Ֆեյզիի, որ ըրած է զայն իր հիւրանոցին ամենամեծ զարդը և փառապսակն է իր եղեռներուն:

Կառավարութիւնը մէկ կողմէ շարունակելով հանդերձ տեղահանութիւնը, միւս կողմէ 1-3 տարեկան հայ երկու սեռէ որբերը կը հաւաքէր և կը տեղաւորէր զանազան տեղեր: Քանի մը ամիս խնամք կը տարուի անոնց, երբ յանկարծ օր մը, զանոնք դնելով կառքերու մէջ, կը տանին Տիգրիս գետին մօտ և ողջ-ողջ, ամենքն ալ բռնելով ոտքերէն, ձեռքերէն կամ գլուխներէն, կը նետեն գետին մէջ: Ուրիշ հարիւրաւոր որբեր ալ, կը տանին Գարապաշ, քաղաքէն մէկուկէս ժամ հեռու գիւղ մը և հոն, երկուքի կը ճեղքեն զանոնք, կտոր կտոր կ'ընեն, շատ որբեր կը նետուին կատղած շուներու առջեւ և կը յօշոտուին: Իսկ գազանաբարոյ սրիկաները կը զուարճանան այս տեսարանին առջև (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)»[1]:

Տիգրան Սկուռդը, անդրադառնալով Դիարբեքիրի հայ զանգվածի հիմնովին տեղահանմանը և ոչնչացմանը, գրում է. «Հունիս ամսո սկիզբներն էր, որ ձեռնարկվեցավ Տիարպեքիրի հայ ընտանիքներու տարագրության: Միլիս Թապուռիի հազարապետ Շեֆգի և ժանտարմա գոմանտանի Ոյուշտի պեյերը, ամեն օր ժամը 4-4 1/2 ըլլալուն, քանի մը միլիսներով և չերքեզներով կը մտնեին հայ տուները, կարծանագրեին տան անդամները և պահակներ կը դնեին տուները, արգիլելով տուներեցիներուն դուրս ելնել, գիշերով բռնի կը հանեին զիրենք իրենց տուներեն, կը ղրկեին Մարտին, անկից ալ Բեսուլայնի հորերու գլուխը, այնտեղ ջարդելով ամենքը կը նետեն հորերու մեջ, որը Հյուշտի լկտի պեյի Շեֆգիի գործն այս էր. ամեն օր միօրինակ 30-40 ընտանիք տարագրել: Այս վիճակը շարունակված է մինչև 1915-ի հոկտեմբեր ամսույն սկիզբները, մինչև որ Տիարպեքիրի հայությունն իր շրջակա գավառներով ու գավառակներով միասին բնաջնջվեցավ»[2]:

Վերոհիշյալ փաստերը վերահաստատում է Երվանդ Քասունին, որը թուրքալեզու և արաբերեն սկզբնաղբյուրները հետազոտելով, անում է ներքոհիշյալ եզրահանգումները.

«Հերթը եկած էր Տիարպեքիրի ժողովուրդին:

1915ի Յուլիսին կը սկսի քաղաքի ժողովուրդին տարագրութիւնը: Միլիսի հազարապետ Եասին Ջաւէտ Շէվքը եւ ժանտարմայի հրամանատար չերքէզ Ռիւշտի կը մտնեն հայ տուները եւ կը սկսին արձանագրութեան, իսկ արեւմուտէն ետք ճամբայ հանել կու տան դէպի որոշուած ճակատագիրը:

100 ընտանիքներէ բաղկացած խումբ մը ճամբայ կը դրուի Մարտինի ճամբով դէպի հարաւ, ուրիշ խումբ մը Գարապաղչայի ճամբով դէպի արեւմուտք, Տարա, Ռաս-իւլ-Այն, Նիսիպին եւ Տէր Զոր: Գարապաղչայի մօտ մեծ թիւ մը անոնցմէ կը նահատակուի: Ուրիշ մեծ թիւ մը Տիարպեքիրէն մէկ ժամ հարաւ Չարոխիկ գիւղին մօտ Գոզան տերէի մէջ քիւրտերու եւ միլիսներու ձեռքով կը կոտորուի: Գարաճատաղի հիւսիսային բնակիչներէն քիւրտ-թրքական-համիտիէ հեծելազօր-աշիրէթը 24000-ի մօտ տարագիր հայեր կը կողոպտէ ու կը ջարդէ Շէյթան տերէսիի ու Գայնագ գիւղի մօտ, Պիկաթլան ձորին մէջ:

Ֆայէզ էլ Ղոսէյն կը վկայէ.-

«Տիգրանակերտ չհասած, հայ կիներու կարաւանի մը հանդիպեցանք, զոր ոստիկաններու խումբ մը դէպի Սեվերէկ կ'առաջնորդէր: Այս դժբախտները այնքան տառապանքի եւ թշուառութեան մէջ էին, որ նոյնիսկ վայրենի կենդանիներու գութը պիտի շարժէր եւ արցունքներ պիտի կորզէր կարծր ժայռերէն:

---

[1] *Մ[եպուհ] Սկուռդ,* Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921, էջ 69-70:

[2] *Տիգրան Սկուռդ,* Ամիդայի արձագանքները, Նյու Յորք, 1950, էջ 252-253:

Տիգրանակերտի պարիսպներուն մօտենալով՝ կը կարծէինք ազատիլ այս արհաւիրքներէն, բայց պատրանք մը եղաւ, որովհետեւ դիակներ կը տարածուէին մինչեւ Սեւ Տիգրանակերտի պատնէշները»:

Տիարպեքիր քաղաքին հետ արեան մէջ կը խեղդուի նաեւ Մարտինի քաղաքը: Կուսակալը Մարտինի կը ղրկէ Մեքքուպճի Պետրէտտինն ու գոմիսէր Մեմտուհը, ասոնցմէ առաջինը նշանակելով քաղաքին կառավարիչ, որուն Ֆէյզի և Ռեշիտ պէյերը կը հրահանգեն շուտով խոշոր փոսեր փորել տալ, որպէսզի Տիարբեքիրէն եւ Մարտինէն տարագրուող հայերը թաղեն անոնց մէջ: Սակայն Պետրէտտին եւ Մեմտուհ առանց ջանքի կ'որոշեն «Տարայի եւ Ռաս-իւլ-Այնի շուրջ գտնուող պարապ և պատրաստի հորերը, գետնափոր նկուղներն ու զնտանները գերեզմանը ընել Տիգրանակերտի, Մարտինի հայ տարագիրներուն»:

Մարտինի մէջ Պետրէտտին եւ Մեմտուհ ծիւաղներու կողքին, ջարդերու պատասխանատուութիւնը կը ստանձնեն Ապտուրրահման Գաուաս, քաղաքապետ Խըտըր Չէլէպի, Ապտուրրեզագ Չէլէպի Շահթինէ, Մուհամմէտ Կուպաշօ, Ապտուլլահ Խըտըր, հարկահաւաք պաշտօնեայ Նեճիպ եւ առաքմանց պաշտօնեայ Ապտիւլքերիմ:

Մարտինի մէջ կը կոտորուին 2000է աւելի հայ կաթողիկէներ եւ 100 ընտանիքի չափ աւետարանականներ: «Ամենաանգութ կերպով մարտիրոսացած են գերապայծառ Մալոյեան, Պօտուրեան Յովհ. Վրդ. բողոքական երէց Ճըրճիս: Պետրէտտին այնքան բուռն կ'ըլլայ, որ Մարտինէն կ'աքսորէ նոյնիսկ երեք ամերիկացիներ, որոնք օգնած էին հայերուն: Ասոնցմէ Տոքթ. Թիոմ կը մեռնի ճամբան: Ամերիկա հասնելէ վերջն ալ կը մեռնի Մր. Անտրըս: Մարտինի մէջ հազիւ 200 ընտանիք ողջ կը մնան»:

Մարտինի հայ կաթողիկէ Առաջնորդը՝ Մալոյեան Արք.ը կը տանին Տիարպեքիրէն երեք ժամ հարաւ արեւելք Քաբա-քէօփրիւ կոչուած վայրը, Տիգրիսի մօտ, ուր գոմիսէր Մեմտուհ զինք սպաննելէ առաջ կը հարցնէ.

- Ըսէ՛ ինծի, ռումբեր ունի՞ք թէ ոչ:

- Եթէ ձեր երեւակայած ռումբերը ունեցած ըլլայինք, ձեր կատարած չարիքները պիտի չկրնայիք ընել,- կը պատասխանէ քաջ հովիւը:

Ու մահը կհասնի վրայ...:

Կոտորածը կը շարունակուի նահանգի ամբողջ տարածքին: Կը խնայուի ոչ ոքի: Ոչ ոք կը փորձէ օգնութեան փութալ: Կառավարութեան հրահանգը՝ «բնաջնջել առանց խնայելու» կը կիրարկուի գրեթէ ամենայն հաւատարմութեամբ»[1]:

Մահվան գերանդին անխնա հնձեց մի ամբողջ նահանգի հայ ազգաբնակչութիւնը, հնձեց առանց հաշվի առնելու սեռը, տարիքը, դասային ու դասակարգային պատկանելիությունը, մեղավոր կամ անմեղ լինելը: Ինչպես մյուս նահանգներում, Դիարբեքիրում էլ ոչնչացման դատապարտվածների հանցանքն այն էր, ***որ նրանք հայ էին, և մի՞թե դա բավարար չէր:***

1915 թ. հուլիս-օգոստոս ամիսներին բռնագաղթեցված հայերին քշեցին դեպի Ռաս-ուլ-Այն, Դեր Զոր, բայց քչերին բախտ վիճակվեց հասնել այդ անապատները: Շատերը կոտորվում են ճանապարհին: 24 հազար հայեր ջարդվում են միայն Պիկաթլան ձորի մեջ (Շեյթան-դարասիի և Գայնազ գյուղի միջև): Ֆայեզ էլ Ղոսեյնը վկայում է, որ այդ դժբախտների տառապանքը «նույնիսկ վայրենի կենդանիներու գութը պիտի շարժեր և արցունքներ պիտի կորզեր՝ կարծր ժայռերեն»[2]:

---

[1] *Երվանդ Հ. Քասունի,* 1915 և կոտորածները Տիարպեքիրի մեջ, էջ 412-413:

[2] *Ֆայեզ էլ Ղոսեյն,* Ջարդերը Հայաստանի մեջ (թարգմանությունը՝ Գր. Պասմաճյանի), Գահիրե, 1960, էջ 39-40:

Եվ այսպես «վարպետորեն» իրականացվեց Դիարբեքիրից արտաքսված հայերի կոտորածը Ռաս-ուլ-Այնի շրջանում, ուր իրենց ոճրագործություններով հատկապես աչքի ընկան չերքեզները:

Հայերին չէր օգնում նաև հավատափոխությունը, թեև ձևականորեն թուրքական կառավարությունը մահմեդական դառնալու դեպքում տալիս էր տեղում մնալու կյանքի երաշխիք: Իրականում գործում էր Թալեաթի կարգադրությունը. «Հաղորդեցեք անոնց, որոնք կուզեն ազատել իրենք զիրենք ընդհանուր տեղահանութենե մահմեդականությունը ընդունելով, որ իրենք մահմեդական պետք է ըլլան իրենց աքսորավայրերուն մեջ»[1]: Հասկանալի է, որ դա բացահայտ մահ էր:

Դիարբեքիրի նահանգի հայերի տված զոհերի մասին կան թվական բազմաթիվ տվյալներ, որոնք բնականաբար հավաստի լինելով, միաժամանակ նաև հակասական են: Այստեղ, վկայակոչելով դրանցից մի քանիսը, ընթերցողին թողնելով ճշգրտության որոշման կայացումը, Սեպուհ Ակունին այդ մասին գրում է. «Տիգրանակերտը, տեղահանութենէն առաջ, կը հաշուէր մօտաւորապէս 150000 հայ: Ենթադրական հաշուով մը այս թիւին 25-26000-ը քշուած են քաղաքէն, իսկ 60-65000ը շրջակայ գաւառակներէն և գիւղերէն, որով կը կարծուի թէ, ընդամենը, քաղաքէն հեռացուած են մօտ 91000 հոգի: Մնացած 59000ը, կին, տղաք և արհեստաւորներ, կամ մնացած են քաղաքին մէջ, ընդունելով իսլամութիւնը, ծառայելով ասդիինին, անդիինին քով, և կամ մնալով իբր արհեստաւոր. մաս մը տեղափոխուած են Տիգրանակերտի շուրջ գտնուող գիւղերը: Սակայն, կարելի չէ ճիշտ ընդունիլ իբր ողջ ցոյց տրուած Հայերու թիւը, քանի որ ցարդ, հակառակ Պատրիարքարանի հարցումին, Տիգրանակերտէն ոեւէ պատասխան չեկաւ այս մասին, պարագաներու բերումով»[2]:

Տիգրան Մկունդը հաշվարկում է, թե «Դիարբեքիրի հայության անձի կորուստն է 35-36000, իսկ շրջակայքից անձի կորուստն է մոտավորապես 40-45000»[3]:

Ֆայեզ էլ Ղոսեյնը վկայում է, որ այն ժամանակ «Տիգրանակերտի մեջ շատ քիչ հայեր մնացած էին, զոր կառավարությունը հարմար դատած էր պահել բանակին ծառայության մեջ, ինչպես կոշկակարներ և այլ արհեստավորներ»[4]: Նրա հաշվարկներով ևս միայն քաղաքից բռնագաղթվել են 36000, իսկ ողջ նահանգից 45000 մարդ:

Ինչ որ է: Ոչնչացված թե մահմեդականություն ընդունած հայ բեկորները, հավասարաչափ կորած էին Հայաստանի և հայ ժողովրդի համար: Նրանց շարքերում եղան նաև հերոսաբար մարտնչողներ, կյանքը թուրքերին «թանկ ծախողներ», վերջիններիս զոհեր պատճառողներ: Դժբախտաբար դրանց թիվը սակավ էր և Դիարբեքիրը դատարկվեց, թուրքացվեց, քրդացվեց, դժբախտաբար, առանց լուրջ դիմադրական ցնցումների:

Զ. ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՐԲԵՐԴՈՒՄ

Խարբերդի վիլայեթն ընկած էր Պատմական Հայաստանի ***Ծոփաց*** աշխարհի, Չորրորդ Հայքի ***Դանձիք*** գավառի տարածքի վրա: Այն, իբրև վարչական առանձին միավոր, կազմավորվել է Բեռլինի վեհաժողովից (1878) հետո և ստանալով նաև ***Մամուրեթ-ուլ-Ազիզ*** անվանումը, արգասիք էր Համիդ II-ի վարած ազգային գաղութային քաղաքականության:

---

[1] ***Մ. Վ. Արզումանյան,*** նշված աշխատությունը, էջ 426: Տե՛ս նաև «1915-1965 Յուշամատեան...», էջ 417:

[2] ***Մ[եպուհ] Ակունի,*** նշված աշխատությունը, էջ 70:

[3] ***Տիգրան Մկունդ,*** Սմիդայի արձագանքները, էջ 253:

[4] ***Ֆայեզ էլ Ղոսեյն,*** նշված աշխատությունը, էջ 16:

Նահանգի փաշայանիստ կենտրոնը սկզբում *Մեզիրեն* էր, սակայն հետո տեղափոխվեց *Խարբերդ:* 1914 թ., երբ շղթայազերծվեց Եվրոպան, և ծայր առավ Առաջին աշխարհամարտը, վիլայեթը վարչականորեն բաժանված էր *Խարբերդի, Մալաթիայի (Մելիտինե)* և *Դերսիմի* գավառների (սանջակ)[1]: Սանջակներն իրենց հերթին տրոհվում էին կազաների (գավառակ) և համահավաքում 5-ը քաղաք, 300-ից ավելի գյուղեր, որոնցից յուրաքանչյուրն ուներ 100-500 տնտեսություն: Հատկապես խիտ էր բնակեցված *Խարբերդի սևահողային գոտին* (դաշտը), որը հողի բերրիության պատճառով ստացել էր *Ոսկեղեն դաշտ* անվանումը[2]:

Խարբերդի նահանգի տարածքը կազմում էր 32900 քառ. կմ, բնակչությունը տատանվում էր 575-600 հազարի միջև: Ընդհանուր բնակչությունն ուներ խայտաբղետ ազգային կազմ, որը և ազդում էր երկրամասի տնտեսական և քաղաքական զարգացման վրա: Գերմանացի Յոհաննես Լեփսիուսի տվյալներով՝ աշխարհամարտի սկզբում Խարբերդի բնակչության 575200-ը բաժանվում էր ըստ ազգությունների և կրոնապաշտության. 174 հազարը քրիստոնյաներ լինելով՝ սրանք իրենց հերթին բաժանվում էին. 168 հազարը՝ հայեր, 5 հազարը՝ ասորիներ, հազարը՝ հույներ: Մահմեդապաշտ բնակչությունը բաղկացած էր 180 հազար շիա ղզլբաշներից, 95 հազար քրդերից (որոնցից 75 հազարը՝ նստակյաց և 20 հազարը՝ վաչկատուն) և 126300 թուրքերից[3]:

Թուրքերի և քրդերի հոծ բազմության առկայությունը նահանգում, հայ բնակչության վիճակը դարձնում էր անկայուն: Դեռ պատերազմից առաջ Խարբերդի հայությունը տառապում էր թուրքական իշխանությունների ու բաշիբոզուկների կեղեքումներից ու կամայականություններից: Երիտթուրքերը պարզապես հայերին սպառնում էին մասսայական կոտորածներով: Այդ մասին է վկայում նաև այն ժամանակ Խարբերդում աշխատող (Մեզիրեի կենտրոնական վարժարանի տեսուչի պաշտոնով), հայ նորավիպագրության ականավոր ներկայացուցիչ Երուխանի (Երվանդ Սրմաքեշխանլյան) 1914 թվականի հունվարի 29-ի՝ իր մտերիմներից մեկին գրած նամակը, որտեղ ասված է. «... Ո՞վ գիտե մեյմընալ ե՞րբ պիտի տեսնենք զիրար. գուցե–ինչո՞ւ չէ–բնավ ալ չտեսնենք, ինչեր կրնան պատահիլ. հոս Պոլիս չէ, ամեն բան մազի վրա: Անցյալ օրը տեղվույս նախնական դատարանին դատավորը,- երևակայե, դատավորը,- հայտարարեց հայերու, որ եթե ընտրությանց չմասնակցեն՝ ահռելի կերպով պիտի ջարդեն հայերը, ինչպես ըրին Ադանա: Եվ այդ իթթիհատական սրիկան՝ դատավոր է, մնացածը դատե»[4]:

Եթե այդպես էր վիլայեթի կենտրոնում, ապա կարելի է պատկերացնել, թե ինչպիսի դժոխային վիճակ էր գավառներում ու գյուղերում[5]:

Նման իրավիճակում ապրող հայկական զանգվածի համար առավել անտանելի հետևանքներ ունեցավ պատերազմը, որն առիթ տվեց հայերի նկատմամբ կիրառել բարբարոսական բոլոր այն ճնշումները, որոնք բաժին էին ընկել մյուս նահանգներում ապրողներին: Առաջին հարվածը տվեց զենքերի հավաքման պրոցեսը: Խարբերդցի *Բենիամին Կ. Ժամկոչյանը,* լինելով նահանգի վերապրողների սերնդից, այդ մասին գրում է. «Սահմանադրութեան վեց տարիներուն կարգ մը միամիտ հայեր այնքան մտերմացան այս ու այն թուրքին հետ, որ բոլոր գաղտնիքնին բացին անոնց

---

[1] ՀՍՀ, հ. 5, Երևան, 1979, էջ 40:

[2] *Ա. Ի. Гиппиус,* Статистические таблицы вилайетов Турецкой империи, прилежащих к Закавказью, Тифлис, 1889, стр. 11-14.

[3] Տոքթ. *Եոհաննես Լեփսիուսի* տեղեկագիրը, Հայկական ջարդերը, Պեյրութ, 1965, էջ 80: Տե՛ս նաև *Մանուկ Գ. Ճիզմեճյան,* Խարբերդը և իր զավակները, Ֆրեզնո-Կալիֆոռնիա, 1955, էջ 48-50:

[4] «ՀՍՀ ԳԱ, Լրաբեր հասարակական գիտությունների», 1966, N 8, էջ 67:

[5] *Մ. Վ. Արզումանյան,* Հայաստանը 1914-1917, էջ 415:

առջեւ, շատ անգամ նոյնիսկ երեւակայական զէնքերու պատմութիւններ հիւսեցին: Ահա՛ պատեհութիւնը այդ պատմութիւնները շահագործելու: Կառավարութիւնը նոր պատրուակ մը գտաւ բարբարոսական չարչարանքներու: Հրապարակաւ զէնքերը պահանջեց: Մինչեւ ծունկի վրայ աղօթելէ զատ ոեւէ բանէ լուր չունեցողներէ կը պահանջուէին զէնքեր, որոնց անունները չէին լսած: Եղաւ ժամանակ որ կառավարութիւնը ինք կ'որոշէր պահանջուած զէնքերու քանակը եւ քաղաքը, թաղը կամ գիւղը պարտէր հայթայթել: Անսաստողը սարսափելի խոշտանգումներու կ'ենթարկուէր: Գտնուեցան անձեր, որոնք կեղծաւորաբար մօտեցող թուրքերէ զէնք գնեցին, յանձնեցին ազատուելու համար, բայց ատանկներուն չարչարանքը աւելի ծանր կ'ըլլար:

Ժողովուրդին չարչարանքին չդիմանալով Առաջնորդ Պսակ Վրդպ. քանի մը հեղինակաւոր անձերու հետ դիմեց կուսակալին՝ դադրեցնելու համար ծեծ ու չարչարանքը: Կուսակալը պատուո՞յն վրայ խոստացաւ վերջացնել ամէն բան՝ եթէ ժողովուրդը ինքնաբերաբար յանձնէր զէնքերը: Անոնք հաւատալով անոր պատուոյ խօսքին, մոռնալով թէ ան պատիւ չուներ, հրապարակ ելան համոզելու ժողովուրդը,- թուրքը խաբեց և զէնքերն հավաքեց:

Անշուշտ, երբ Զէյթունի նման յեղափոխութեան մէջ թրծուած հայեր չկրցան պատեհութիւնը օգտագործել եւ դիմադրել ու զէնքերը յանձնեցին, կարելի չէր տարբեր բան սպասել խարբերդցիէն, որ դարերով միայն մշակոյթով զբաղած էր ու վերջին շրջաններուն միսիոնարական հոգեբանութեամբ դաստիարակուած էր»[1]:

Զենքերի հավաքումն ավարտելուց հետո, թուրքերը ձեռնամուխ են լինում ***երկրորդ քայլի*** իրականացմանը, այն է ***հայ մտավորականության բանտարկությանն ու ոչնչացմանը:*** Նրանք գործում էին մյուս նահանգներում կիրառած քաղաքականության սցենարով, նույնիսկ ավելի վատթար:

Խարբերդը հայ մշակույթի կարևոր օջախ էր: Այն ուներ դպրոցական, ժամանակի իմաստով, հզոր ցանց, ***Եփրատ քոլեջի նման*** կրթական հաստատություն, այնտեղ դասավանդող եվրոպական, նույնիսկ ամերիկյան ու գերմանական համալսարանավարտ ***պրոֆեսուրա:*** Ֆրանսիան հովանավորում էր հայ դպրոցականներին, հատկապես քոլեջը: Քրիստոնյա երեխաները, նախանձ շարժող կրթություն էին ստանում, սակայն նրանց կողքին հետամնացության պատճառով կեղտի ու մրի մեջ կորած, փնթիությամբ անգերազանցելի թուրք ու քուրդ լամուկները նախանձով էին նայում «գյավուրներին»: Այժմ ժամանակը եկել էր ոչնչացնել հայկական էլիտան, հողին հավասարեցնել այն ամենը, ինչ ստեղծվել էր դարերի ընթացքում:

Անտանտան պատերազմ էր վարում Թուրքիայի դեմ, հետևաբար Ֆրանսիան ու ֆրանսիացիները հարկադրված էին թողնել Խարբերդը: Քաղաքում եղած ֆրանսիական ու ամերիկյան հյուպատոսությունները գոցվեցին, Եվրոպան, բացի հայատյաց գերմանացիներից, կորցրեց իր ազդեցությունը և՛ նահանգից, և՛ քաղաքից: Թուրք մարդասպանները, պահը հարմար համարելով, սկսեցին հայ մտավորականության ձերբակալումը, որպեսզի նախքան հայասպանությունը, այսինքն՝ մինչև մարմնի ոչնչացումը, ոչնչացնեն նրա գլուխը:

1915 թ. ապրիլի 23-ին Կ. Պոլսից հրահանգ ստացվեց հայ մտավորականության ու ընդհանրապես ունևոր դասի ունեզրկման և ձերբակալության մասին: Դեպքերին ականատեսը, սրտի անտակ կսկիծով գրում է. «1915 թ. ապրիլի վերջերը (մենք ապրիլի 23-ին վկայական ստացանք, յուղարկաւորական մքնոլորտի մը մէջ, քանի մը ուսուցիչներու եւ սաներու ներկայութեան) փոլիս-քոմիսէր մը կ'այցելէ եղիգցի փոռապան

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Բեյրութ, 1965, էջ 379-380: ***Բենիամին Կ. Ժամկոչյանի*** «Խարբերդի եղեռնը» հոդվածից:

Կարապետ Հոթիկեանին եւ կ'ըսե. «Ես քեզի հետ հաց ու աղ կերած եմ: Գաղտնիք մը պիտի հաղորդեմ: Քանի մը օրէն հայերուն գլխուն խիստ ծանր բան մը պիտի պայթի: Ճիշդ չեմ գիտեր ինչ է, բայց զգուշացիր»: Կարապետ աղաս յաջորդ օրն իսկ հետը առնելով դաշնակցական ընկեր Կարօն, Տոքթ. Նշանը, կ'երթայ Առաջնորդ Պսակ Վրդ.-ին եւ կը յայտնէ ըսուածը: ***Սահմանադրական տարիներուն թմրած առաջնորդներ, փոխանակ ինքնապաշտպանութեան մասին մտածելու, կ'որոշեն զէնքերնին պահել եւ սպասել դէպքերու ընթացքին: Բայց դէպքերը թաւալգլոր եկան:***

Մայիս մէկին Խարբերդ գացած էի եւ քանի մը Եփրատի ու Թլկատինցիի սաներու հետ հաւաքուած էինք Մելքոն Սամուրեանին բնակարանը, երբ լուր եկաւ թէ փրոֆ.-ները ձերբակալուած են: Սպասել կարելի չէր: Ցրուեցանք: Ես Մեզիրէ իջնելու համար, երբ ամերիկեան հաստատութիւններուն քովէն կ'անցնէի, տեսայ թէ Փրոֆ. Յովի. Պուճիգանեանին տան մօտ ոստիկաններ կային:

Մեզիրէ հասնելով լսեցինք թէ Խարբերդի եւ Հիւսենիկի մէջ ձերբակալուած են Փրոֆ.-ներ Թենեքեճեան, Լիւլեճեան, Սողիկեան, Նահիկեան, ասորի Պ. Աշուր, Տ. Վարդան Քհնյ. Ասլանեան, Յովսէփ Մալեէմեզեան, Գէորգ էֆ. Վարդիկեան, Կարապետ Թաշճեան, Արմենակ Թեվրիզեան, Գէորգ Նալպանտեան, Տրդատ Ճիկերճեան, Վարդապետեան, Թումաճան Թումաճանեան, փաստաբան Ասատուր Ժամկոչեան, իսկ Մեզիրէի մէջ հինչակեան ***Նշան Ղազարոսեան (Զէյթունի հերոսներէն), Սեմերճեան,*** Սահակ Տերթլեան, դաշնակցական Կարօ, Տոքթ. Նշան, Աստիկեան, Առաջնորդ Պսակ Ծ. Վրդպ., Երուխան: Աղէտը կատարեալ էր: Երիտասարդ չկար, տնտեսութիւնը քայքայուած էր, չարչարանքներու տակ բարոյալքուած ու հիմա անգլուխ մնացած ամբոխ մը միայն մէջտեղը: Ալ ինչէ՞ն վախնալ: ***Ու քաղաքէն ներս, ու քաղաքէն դուրս, բանտէն ներս, ու բանտէն դուրս ամէն տեսակ գազանային վայրագութիւններ սանձարձակօրէն սկսան գործադրուիլ:***

Մեզիրէի բանտին մէջ յեղափոխական ղեկավարներ՝ Ղազարոսեան, Սեմերճեան, Կարօ, Աստիկեան, Տոքթ. Նշան (որը բանակէն արձակուրդով եկած էր, բայց լսելով թէ գործերը շատ են, կամաւոր գործի լծուած էր), ժամերով ծեծի ենթարկելէ յետոյ գաղտնիք կորզելու պատրուակաւ ժամերով ծիծերուն շուրջ ասեղ ու հերիւն կը պտտցնեն: Կարապետ Թաշճեանը ջուրը դրուած ուռենիի ճիւղերով ծեծելէ յետոյ մարմնոյն ուռած տեղերը ածելիով կը ճեղքեն եւ մէջը քացախ կը լեցնեն: Փրոֆ.ներ Պուճիգանեան, Լիւլեճեան, Սողիկեան ահաւոր ծեծերու ենթարկուելէ, մազ ու եղունգ քաշուելէ, աքցանով միսերը կտրտուելէ յետոյ սպանդանոցէն բերուած մսակոյտի նման արիւնլուայ կը նետուին բանտին յատակը: Ժամեր յետոյ ահաւոր ցաւերու տակ արթննալով, սողոսկելով իրարու կը մօտենան: Մեծ դժուարութեամբ զիրար կը ճանչնան: Աւելի սարսափելին պահուած էր: Իրենց քով գտնուող թուրքեր, երբ կը տեսնեն թէ արթնցած են, սիւնը կապուած մէկը կը ցուցնեն: Յայտնի է, սարսափելի չարչարանքի տակ անճանաչելի ճիւաղի մը վերածուած մէկն է: Պարան մը ոտքէն մինչեւ վիզը օձի նման փաթթած են ու երկու ծայրերէն քաշելով կը պրկեն երկու հոգի: Կը ճանչնա՞ք, կը հարցնեն: Երկար քննութենէ յետոյ միայն կ'ըսէ. «Թենեքեճեան էֆենտին է»: Հա, հա, հա, կը ծաղրեն: «Այո, ձեր էֆենտին է: Բոլորդ ալ այսպէս պիտի ըլլաք»[1]:

Բանտի մէջ սպանեցին Մարտիրոս Մուրադյանին (Եփրատ քոլէջի պրոֆեսոր), աներեւակայելի չարչարանքների արժանացրին փաստաբան Ժամկոչյանին, ծայր աստիճանի խոշտանգումների ենթարկեցին պրոֆեսորներ Ամիրխանյանին և Որբերյանին: Առաջինը, չդիմանալով տանջանքներին, մահացավ, երկրորդին ուղարկեցին

[1] *Բենիամին Կ. Ժամկոչյան,* Խարբերդի եղեռնը, «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 381-382:

գժանոց: Անտանելի տանջամահության ենթարկեցին քահանաներին և կուսակցական առաջնորդներին, հատկապես դաշնակցական շեֆերին:

Բենիամին ժամկոչյանը բերում է, թե. «Քահանաներու ոտքեր պայտեցին, կուսակցական մեծեր ցիցի վրայ նստեցուցին: Վերջապես գազանացած մարդկային մտքին յղացած սանդարամետական բոլոր հնարաւոր միջոցներով ջանացին հայը ստորացնելէ յետոյ հայու Աստուածն ալ նախատել: Պատմուեցաւ թէ *մարդ-անասուն մը փորձած է Խույլուի հայ եկեղեցիին խորանը իբր արտաքնոց գործածել, որը լսելով Վեր. Սաստուր Եղոյան ըսած է. «Այդ մարդը սպանողը երկինք կ'երթայ»: Բայց շատ ուշ:*

Աշխարհ իմանալու է, թէ այս բոլորը կատարուեցաւ Պոլսոյ հրամանով եւ գաւառի ամենէն յետին թուրք, քիւրտ, չերքէզ, չեչէնի գիտակից մեղսակցութեամբ: Ոչ ոք կրցաւ գիտնալ թէ ինչպէ՞ս դարերով հայուն հետ ապրող, հայուն քիրուա (այսինքն կնքահայր) եղող քիւրտը մէկ օրէն միւսը կրցաւ թշնամանալ: Սակայն եղաւ: Ոչ մէկ բացառութիւն:

Աշխարհ ու երկինք տեսան ու լռեցին»[1]:

Այդպիսի ջարդարարական մթնոլորտում թուրքերը նորից առաջին հարվածը տվին բանակի հայ զինվորներին, նրանց զինաթափելով ուղարկեցին ծանր աշխատանքների: Խարբերդի գործավորական բանակի կենտրոնավայրն էր Հողե գյուղը, իսկ այդ գործի պատասխանատուն էր Հյուսեին թուրք սպա-դահիճը: Հայ զինվորներին տաժանակիր աշխատանքից հետո քշեցին դեպի զանազան կողմեր և սպանեցին: Այդպես, մի օր թուրքական հեծելազորը պաշարում է Հողե գյուղը, և հարյուրապետ Քյազիմը (չերքեզ) հայերին ասում է. «Ես եմ Խարբերդի ընդհանուր գործավորական բանակի վերին հրամանատարը: Չեզմե ոչ մեկը պիտի հանդգնի անսաստել իմ հրամաններուս: Ոչ մեկը պիտի հանդգնի փախչելու փորձ մը կատարել: Ան որ չգործե՝ պիտի սպանվի, իսկ ան որ փախչելու ըլլա, պիտի գնդակահարվի: Ձեր բոլորի հոգին կվառեմ՝ եթե ըսածներուս մտիկ չընեք»[2]:

Աշխատանքի տանելու պատրվակի տակ Խարբերդի հայ զինվորներին (ավելի քան 4000 հոգի) խմբերով քշում են դեպի Մեզիրեի «Կարմիր շենք» (Կարմիր ղոնախ) կոչված տանջարանը և սրախողխող անում: Նույնպիսի բախտի արժանացան բազմաթիվ հայ երիտասարդներ ու արհեստավորներ, տղամարդիկ ընդհանրապես[3]:

Յոհաննես Լեփսիուսը ներկայացնելով Խարբերդի բնակչության բռնագաղթի աներևակայելի դաժան պրոցեսը՝ վկայակոչում է դեպքերին ականատես, ամերիկյան հյուպատոս Լեսլի Ա. Տեյվիտի տեղեկագիրը, որը գրվել էր Խարբերդում, 1915 թ. հուլիսի 11-ին և ուղարկվել Նահանգների Կ. Պոլսի դեսպանին: Այնտեղ ասված է. «Առաջին փոխադրութիւնը տեղի ունեցաւ Յունիս 28ի գիշերը: Այս խումբին մէջ կը գտնուէին Ամերիկեան գոլէճի մէկ քանի ուսուցիչները և ուրիշ դիրքի տէր Հայեր, ինչպէս նաև Լուսաւորչական Եկեղեցւոյ Առաջնորդը: Զրոյց շրջեցաւ թէ ամենքն ալ սպանուած էին, և հազիւ թէ կարելի էր կասկածիլ այս զրոյցին ստուգութեանը: Բոլոր հայ գինուորներն ալ նոյն եղանակով տարագրուեցան: Ձերբակալուելով, կ'արգելափակուէին քաղաքին ծայրը գտնուած չենքի մը մէջ: Բնաւ խտիր չդրին պետէլ վճարողներուն և չվճարողներուն միջեւ: Դրամը կ'առնէին ու յետոյ միւսներուն պէս ասոնք ալ կը ծերբակալէին, ամենքը մէկ աքսորելու համար: Կ'ըսուէր թէ տեղ մը պիտի տանէին, ճամբաներու վրայ աշխատցնելու համար, բայց ոչ ոք անկից յետոյ

[1] *Բենիամին Կ. Ժամկոչյան,* Խարբերդի եղեռնը, «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 383:

[2] *Մ. Ճիզմեճյան,* նշված աշխատությունը, էջ 434:

[3] *Մ. Վ. Արզումանյան,* նշված աշխատությունը, էջ 413:

ասոնց մասին որևէ լուր ունեցաւ, և տարակոյս չկայ, որ աշխատութիւնը պատրուակ մը միայն եղաւ:

Քանի որ նոյն ապահով աղբիւրէն տեղեկագիր մը մեզ կը հաղորդե նմանօրինակ դէպք մը տեղի ունենալի Յուլիս 7, չորեքշաբթի օր մը, ուրեմն իրենց բախտը առաջուընէ որոշուած կ'ըլլայ, Յուլիս 5 երկուշաբթի օրը շատ մարդիկ ձերբակալուեցան թէ՛ Խարբերդի և թէ՛ Մեզիրէի մէջ և բանտ նետուեցան: Երեքշաբթի, լույս ճեղքուելուն, բանտէն հանուեցան և քշուեցան գրեթէ անմարդաբնակ լերան մը ուղղութեամբ: Շուրջ 800 հոգի էին ասոնք, 14 հոգինոց իրարու կապուած խումբեր: Կէս օրէ վերջ, քրտական պզտիկ գիւղ մը հասան, գիշերը մզկիթներու և ուրիշ շէնքերու մէջ անցուցին: Այս ամբողջ ժամանակին, բան մը չէին կերած, բան չէին խմած: Իրենց ամբողջ դրամը և հագուստների մեծ մասը ձեռքերնուն առած էին: Չորեքշաբթի, առավոտ կանուխ, քանի մը վայրկյան անդին գտնուած հովիտ տարուեցան: Հոն հրաման ըրին որ ամէնքն ալ նստեն: Այն ատեն ժանտարմաները սկսան վրանին կրակ ընել մինչեւ որ գրեթե ամէնքն ալ մեռան: Մէկ քանի հոգիներ որոնք գնդակներէն չէին սպաննուած, խողխողուան դանակի և սուինի հարուածներով: Քանի մը հոգի հաջողեցան փրցնել զիրենք իրենց տառապանքի ընկերներ կապող չուանը և փախան: Բայց իրենցմէ մեծ մասը հետապնդուեցաւ և սպաննուեցաւ: Թիւը անոնց որոնք վերջնապէս խուսափեցան, ապահովաբար երկու կամ երեք չանցնիր:

Սպաննուածներուն մէջ կը գտնուէր Ամերիկեան կոլէճին մատակարարը: Կային նաև ուրիշ կարեւոր անձինք:

Երբէք, այս անձերուն դէմ որեւէ ամբաստանութիւն չունեցաւ: Ասոնք ձերբակալուեցան ու սպաննուեցան միակ պատճառով որ կառավարութեան ընդհանուր հրամանագիրն էր հայ ցեղէն ազատիլ»[1]:

Դեպքերի մեկ այլ ականատես և քարավանների հետ քայլած բռնագաղթվող, հրաշքով փրկվելով, հետագայում գրառումներ է թողել, որը կարծես թե լրացնում է *Յոհաննես Լեփսիուսին և Լեսլի Ա. Տեյվիտին:*

Սա գրում է, 1915 թ. «Յուլիս մեկին առաջին կարաւանը պիտի ելլէր, սակայն անկէ առաջ բազմաչարչար ընտրանին Խարբերդի եւ Մեզիրէի հայութեան եւ Կարմիր Խոնախի երիտասարդութիւնը քշուեցան դէպի Ծովք, որուն եզերքին Շապկահան գիւղին մօտակայ ձորակի մը մէջ անշիրիմ նահատակուեցան նոր օրերու Ոսկեբերան Վարդան քհնյ. Արսլանեան, մտքի ու սրտի տէր անգերազանցելի Թենեքեճեան, Նահիկեան, *Թլկատինցի՝ սքանչելի գրագէտը, Երուխան՝ վարպետ վիպագիրը եւ այլ մեծերու կարգին Խարբերդի Սոկրատը՝ Պուճիգանեան, որուն գանկը փշրելու ատեն ըսած էին. «Անոր ռումբը գանկին մէջ է»:* Այսպէս Խարբերդի ու շրջակայքի կրօնական, կրթական, տնտեսական ու քաղաքական առաջնորդները, մտքի, սրտի ու հոգիի ամէնէն ազնիւ զաւակները խոշտանգուեցան, մորթոտուեցան եւ Տանդէի Դժոխքը անշքացնող սարսափազդու ձևերով նահատակուեցան:

Արեւելք ու Արեւմուտք թող իմանան թէ՝ թրքական դիւային միտքը յղացաւ պատմութեան ամէնէն գռեհիկ սրբապղծութիւնը, որ իրմէ առաջ ո՛չ մէկ բարբարոս կրցած էր յղանալ: ՄԵՐ ՍՈՒՐԲ ՄԵՇԵՐԷՆ ՈՄԱՆՑ ԱՄՕԹՈՅՔԸ ԿՏՐԵԼՈՎ ԲԵՐԱՆՆԻՆ ԴՆԵԼու ԽԵՆԷՇՈՒԹԻՒՆՆ էր այդ:

Յուլիսի մէկին ելաւ առաջին կարաւանը ու ապա շարունակեցին յաջորդական կարաւանները իրարու ետեւէ: Ոմանք ՉՈՐ ԱՂԲԻՒՐԻ ճամբով դէպի արեւմուտք, ուրիշներ՝ ՏԷՎԷ ՊՕՅՆԻԻ ճամբով դէպի արեւելք: Գլխաւոր սպանդանոցներն եղան ԵՓՐԱՏԻ եզերքը ԻԶՕՂԼԻ եւ ՇՈՎՔԻ եզերքը ՇԱՊԿԱՀԱՆ ու ՔԵՉԻՆ ԽԱՆ: *Դարեր շա-*

[1] *Յոհաննես Լեփսիուս,* նշված աշխատությունը, էջ 81-82:

րուճակ Խարբերդի ու շրջակայքի հայութեան կենսատու ԵՓՐԱՏՆ ու ՕՈՎՔԸ դարձան սպանդանոց մեր ցեղին:

Հատ ու կտոր ըմբոստութեան փորձեր եղան: Մորենիկ գիւղին մէջ խումբ մը երիտասարդներ քաշուած տան մը մէջ մինչեւ վերջին փամփուշտը կռուեցան ու ապա դուրս ելնելով զանազան տեղերու մէջ գտան իրենց նահատակութիւնը:

Օովքի մէջ խումբ մը ապաստանեցաւ Ս. Նշան կղզին: Կռուեցաւ մինչեւ հաց ու փամփուշտի լրանալը, ապա դուրս եկաւ ու մեծ մասը գտաւ իր նահատակութիւնը, բայց մէկ երկու վերապրողներ եղան ապաստանելով քիւրտ ծանօթներու քով, իբր ծառայ»[1]:

«Խարբերդից մինչև Ուրֆա-ճանապարհին» խորագրված գրքում մի ականատես մասնակցի գրառումներ են պահպանվել հայ բռնագաղթեցվածների անցած ճանապարհի, դժոխային տանջանքների մասին[2]:

Այնտեղ ասված է. «Սկսվեց աքսորը: Ջորքերը շրջապատեցին մեր թաղամասերը, ոստիկանական ջոկատները մտան տները բռնելու ու ձերբակալելու բոլորին, ում որ գտնեին (սկզբնական շրջանում միայն տղամարդկանց): Ձերբակալվածներին տարան բանտը, այնտեղ նրանց ձեռքերը կապեցին պարաններով, ապա խումբ-խումբ շղթայեցին ու գիշերով, մեծ բազմությամբ 1000-հոգուց ավել, դուրս հանեցին քաղաքից:

Մենք այդ մասին իմացանք միայն հաջորդ օրը:

Առավոտյան, երբ մայրերն ու կանայք գնացին ուտելիք կամ հագուստ տալու բանտարկյալներին, բանտը դատարկ տեսան: Այնժամ նրանք սարսափելի ողբ ու կական բարձրացրին, հուսահատորեն սկսեցին իրենց կուրծքը ծեծել, շորերը պատառոտել ու մազերը փետել: Նրանց հրամայեցին ցրվել: Նրանք ցրիվ չէին գալիս, նրանք ճչում էին. «Վերադարձրե՛ք մեր ամուսիններին: Վերադարձրե՛ք մեր եղբայրներին ու հայրերին»:

Նրանց ցրեցին հրացանների խզակոթերով ու մտրակներով: Դա կրկնվեց մի քանի օր, մինչև որ քաղաքի բոլոր տղամարդիկ ձերբակալվեցին ու աքսորվեցին: Հետո անցան կանանց և երեխաներին: Նրանց նույնպես հավաքում էին խումբ-խումբ 1000-1500 հոգի, և ժանդարմների հսկողությամբ դուրս էին հանում քաղաքից:

Բանտում մնացին 200-ից ոչ ավելի տղամարդիկ՝ առավել ունևորներից: Սրանք փրկագին էին տվել՝ մարդը 10 ոսկի և թույլտվություն ստացել, որ քաղաքից տեղափոխվեն ոչ թե իրենց ընտանիքներից առանձին, այլ՝ միասին:

Փրկագնվածների թվում էր նաև իմ ամուսինը:

Մենք պատրաստվեցինք և հունիսի 14-ին՝ շաբաթ օր, մյուսների հետ դուրս եկանք Ուրֆա տանող ճանապարհով:

Մեր խումբը բաղկացած էր առավել ունևոր, առավել կրթված և քաղաքում հարգված ընտանիքներից: Մենք մեզ հետ ունեինք սայլեր և ձիեր, բայց շատ դանդաղ էինք առաջ ընթանում, քանի որ տղամարդիկ ոտքով էին գնում:

Հինգերորդ օրը հասանք Իզոլի գյուղը և կանգ առանք հանգստանալու: Մենք Խարբերդից մեզ հետ մթերքի մեծ պաշար էինք վերցրել, բայց Իզոլիում խլեցին, մեզ ոչինչ չթողեցին:

Մոտերքում, գյուղի կողքով, եփրատ գետն է հոսում: Մենք տեսնում էինք, թե ինչպես են հոսանքի հետ քշվում գնում այլանդակված, ուռած դիակներ՝ երկուական միասին կապված: Դրանք այնքան շատ էին, և տեսարանն այնպես սարսափելի էր, որ մենք աշխատում էինք չնայել գետի կողմը:

---

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 386-387:

[2] "На пути от Харберта до Урфы", Москва, 1917: Տես նաև «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», Երևան. 1991, էջ 459-462:

Երբ վրա հասավ երեկոն, տղամարդկանց մեզանից առանձնացրին: Նրանց մեկական կամ մի քանիսին միասին տարան գետի ափը և ասացին ոսկի տվեք, թե չէ ձեզ կսպանենք: Հետն էլ հայհոյում էին ու ծեծում: Ով որ կարողացավ փրկագնվել, փրկագնվեց ու վերադարձավ ճամբար, ով չկարողացավ, նրան սպանեցին և դիակը ջուրը նետեցին:

Իզոլիում մնացինք մի քանի օր: Հետո վեր կացանք ու գնացինք դեպի Մալաթիա:

Մինչև Մալաթիա նույնպես հինգ օր գնացինք և սաստիկ տանջահար եղանք: Մեզ հետ դեռ մնում էին մեր սայլերն ու ծիերը: Բայց ո՛չ տղամարդկանց, ո՛չ էլ 10-11 տարեկանից մեծ երեխաներին թույլ չէին տալիս սայլ նստել: Շատերը քայլում էին ոտաբոբիկ, քանի որ խլել էին նրանց կոշիկները: Սոված, հոգնած, ուռած, արնակոլոլ ոտքերով քայլում էին մեր ամուսինները, հայրերը, եղբայրները և երեխաները: Հենց որ մեկը ուժասպառ ընկնում էր, այլևս ոտքի չէին հանում, այլ քարով խփում էին գլխին, սպանում կամ թողնում էին, որ մեռնի ճանապարհին... Իզոլիից Մալաթիա ճանապարհին մենք շատ դիակներ սփռեցինք:

Բայց ամենասարսափելին, ամենաանտանելին այն էր, որ այդ ճանապարհին սկսվեցին արդեն բռնությունները կանանց նկատմամբ: Բռնաբարում էին զազրելի ցինիզմով, գազանային ծաղրուծանակի ենթարկելով, ամուսինների, հայրերի ու մայրերի աչքի առաջ...

Մալաթիայում առանձնացրին տղամարդկանց և 10 տարեկանից մեծ տղաներին, իսկ մեզ՝ կանանց, աղջիկներին ու փոքր երեխաներին, բաժանեցին խմբերի և տեղավորեցին իջևանատներում:

Խարբերդում մեր ամուսիններն ու հայրերը ոսկով իրավունք գնեցին մնալու իրենց ընտանիքների հետ: Այդ իրավունքը զորություն ունեցավ միայն մինչև Մալաթիա: Այնտեղ անհրաժեշտ եղավ նորից փրկագնվել: Բայց քանի որ արդեն ոչ ոքի մոտ դրամ չէր մնացել,- ամբողջ դրամը խլել էին ճանապարհին, ուստի մեզ զրկեցին վերջին արտոնությունից, վերջին մխիթարությունից:

Ես երեք տարվա ամուսնացած էի, բայց երեխաներ չունեի: Եվ դա մեծ բախտավորություն էր ինձ համար: Բայց ես ջերմորեն սիրում էի ամուսնուս... Երբ նրան, մյուսների հետ մեկտեղ, տանում էին, ես ուշաթափ եղա: Ուշքի գալով՝ կողքիս տեսա արցունքներով ողողված 14-ամյա քրոջս: Այնուհետև իմ մերձավորներից միայն նա մնաց ինձ հետ, քանի որ մորս՝ փոքրահասակ եղբայրներիս ու քույրերիս հետ առանձնացրին մի ուրիշ խմբում:

Գիշերն անցկացրինք ողբալով ու արցունք թափելով: Աղոթում էինք աստծուն, որ գթա մեզ... Չեմ հասկանում, թե նա ինչպե՞ս կարող էր չլսել այդքան մայրերի, այդքան անմեղ երեխաների հուսակտուր կանչերը:

Վաղ առավոտյան մութեսարիֆը պաշտոնյաների հետ եկավ ասելու, թե գիշերը տղամարդկանց ուղարկել են Ուրֆա և որ շուտով այնտեղ կուղարկեն նաև մեզ: Ապա ասացին, թե պետք է խուզարկեն մեզ, քանի որ այդպիսի հրաման կա:

Մենք խելքներս կորցրել էինք, ոչինչ չէինք հասկանում, թույլ էինք տալիս, որ մեզ հետ վարվեն, ինչպես ցանկանում են:

Սկսեցին մեզ մեկ-մեկ մոտեցնել մութեսարիֆին և մերկացնել խուզարկելու համար: Շատերի նույնիսկ ներքնազգեստներն էին հանում, հրամայում էին շուռ գալ, կռանալ, ձեռքով ափլփում էին մերկ մարմինը, անամոթ խոսքեր ասում, ծիծաղում ու զվարճանում:

Հետո հավաքեցին, որ Ուրֆա տանեն:

Սայլերն ու ծիերը խլեցին: Չթողեցին նույնիսկ իշուկներին, որպեսզի հնարավոր

լիներ երեխաներին նստեցնել-տանել: Մայրերը փոքրերին շալակներն առան, իսկ նրանց, որոնք կարող էին քայլել, ձեռքը բռնեցին, ու գնացինք:

Մենք արդեն պարեն չունեինք: Ուտելու համար միայն հաց էին տալիս: Այն երեխաները, որոնք չէին կարող քարթու հաց ուտել, քմահաճում էին, լալիս, ճչում: Եթե ժանդարմներից որևէ մեկին ձանձրացնում էր մանկական ճիչը, *նա մորից խլում էր լալկանին և երեխայի գլուխը ճամփեզրի քարերին խփելով՝ ջախջախում, սպանում էր:*

Առաջին իսկ օթևանում գիշերելիս վերսկսվեցին բռնությունները կանանց նկատմամբ: Նրանց նույնիսկ մի կողմ չէին տանում: Այս մարդիկ ավելի վատն էին, քան անասունները, դրանք գոնե քիչ թե շատ ամոթի զգացում ունեն, իսկ սրանց պետք էր հնարավորին չափ ավելի շատ զազրելիություններ ու նողկալիություններ... Ինչ-որ նորմայի ու հերթի պես բան էին սահմանել. յուրաքանչյուր 10 զինվորի հատկացնում էին մեկ կին, զվարճանում էին նրանով 2-3 ժամ անընդմեջ, ապա տանջահար, կիսամեռ, հաճախ ուշաթափ՝ թողնում հեռանում...

Չպղծված չթողեցին նույնիսկ 10, նույնիսկ 8 տարեկան աղջիկներին:

Դա կրկնվում էր յուրաքանչյուր կանգավայրում:

Նրանց մեջ կային հղի կանայք, որոնք բռնաբարություններից ու ծեծից ծննդաբերում էին վաղաժամ, արյունաքամ լինում ու մեռնում մեր աչքի առաջ:

Որպեսզի փրկվեին հետապնդումներից, շատերը վերքերով այլանդակում էին իրենց դեմքն ու մարմինը, կեղտոտում, զզվելի դարձնում իրենց: Ասենք, առանց այդ արհեստական միջոցների էլ (սոված, պատառոտված, կեղտոտ, վշտից ու տառապանքից խելակորույս) մենք այնպիսի տեսք ունեինք, որ, թվում էր, ամենազազրելի անառակն էլ մեզ վրա չէր կարող նայել տռփանքով... Բայց դրանք մարդկային ամեն մի զգացմունքից զուրկ մարդիկ էին, նույնիսկ հասարակ ֆիզիկական զզվանքի զգացմունքից զուրկ:

Այսպես մենք քայլեցինք մոտ երկու ամիս: Այն հագուստները, որ մեզ դեռևս թողել էին կրկնվող կողոպուտներից հետո, քրքրվել էին ամբողջովին: Բոլորը սարսափելի ցնցոտիների մեջ էին, իսկ շատերը՝ համարյա մերկ: Որպեսզի ինչ-որ բանով ծածկեինք մեր մերկությունը, մենք տերևներից ու խոտերից գոտիներ էինք հյուսում, ինչպես վայրենիներն են անում...

Երբ վերջապես հասանք Ուրֆա, մենք 200 հոգուց ավել չէինք մնացել, մինչդեռ, Խարբերդից դուրս էինք եկել մոտ 2000 հոգով, իսկ Մալաթիայից, տղամարդկանց առանձնացնելուց հետո, 1000-ից ավելի էինք: 1000 կանանցից ու երեխաներից ողջ էին մնացել հազիվ 200-ը, մյուսները կա՛մ մեռել էին ճանապարհին, կա՛մ սպանվել, կա՛մ առևանգվել:

Մեզ՝ խոշտանգված, կիսամեռ, մեր տեսած սարսափներից ու տառապանքներից խելացնոր՝ քշեցին մտցրին Ուրֆայի ինչ-որ իջևանատուն, ասելով, թե այստեղ մեզ թողնելու են մի քանի օրով հանգստանալու համար, իսկ հետո կտանեն ավելի հեռու:

Դրանից ոչ շատ առաջ Ուրֆայում հայերի սարսափելի կոտորած էր եղել: Շատերին սպանել էին, շատերին քշել անապատ սովամահ լինելու: Բայց ոմանք հասցրել էին թաքնվել թաղամասերում և զենքի դիմել: Նրանց ձեռք գցելու համար թուրքերի բոլոր փորձերը մինչև հիմա վերջանում էին անհաջողությամբ: Հայերն ամուր նստել էին և անձնուրացորեն պաշտպանվում էին:

Այն տունը, որտեղ ապրում էի, մի երեսով նայում էր դեպի հայկական թաղամասը, մյուսով թուրքականը:

Ա՜խ, ի՜նչ բերկրանքով էի լսում, թե ինչպես են կրակում հայերի հրացանները: Ի՜նչ հիացմունքով էի տեսնում, թե թուրքերն ինչպես են փախչում այդ կրակոցներից՝ տանելով իրենց վիրավորներին ու սպանվածներին...

Բայց շուտով Հալեպից մեծաթիվ զորք եկավ, հետն էլ գերմանացի մի սպա ու լավ

հրանոթներ: Հրանոթները դրեցին բարձունքների վրա և սկսեցին ռմբակոծել:

Երեք օր անց հայերի բոլոր ամրությունները կործանվեցին, և թուրքերը ներխուժեցին թաղամասերը:

Հայերը, որքան որ դեռևս ողջ մնացածներ կային, փախան թաքնվեցին ամերիկացիների շենքում:

Գերմանացի սպան հայտարարեց, որ նրանց, ովքեր կհանձնվեն, ոչ մի վատ բան չի արվի: Այնժամ հայերը հանձնվեցին գերմանացի սպային: Բայց սպան չպահեց խոստումը. շատերին կապկպեց, ուղարկեց բանտ, իսկ մնացածին արտաքսեց քաղաքից՝ չգիտես թե ուր:

Հետո սկսեցին խուզարկել թուրքերի, ասորիների և եվրոպացիների տները, որպեսզի գտնեին այնտեղ թաքնված հայերին: Ում որ գտնում էին, տանում էին բանտ: Այդ խուզարկությունների ժամանակ ծերբակալեցին նաև մեզ՝ ինձ ու ինձ հետ եղածներին:

Հետո կախաղան սարքեցին և սկսեցին կախել նրանց, ում որ անվանում էին խռովարարների պարագլուխներ...

Ես որոշեցի փախչել, ինչ ուզում է լինի: Պայմանավորվեցի մի քանի ուրիշների հետ, և, երբ գիշերն իջավ, մենք զգուշորեն դուրս եկանք ճամբարից ու փախանք... Ես փախչում էի ամբողջ ուժով, հասցրի փախչել ու թաքնվել քարերի արանքում: Երեկոյան այստեղ ինձ գտավ մի կին, որը, իմ բախտից, հայ էր, արաբի հարճ այդ գյուղում: Նրանից ես իմացա, որ իմ բոլոր ընկերուհիներին գերի են վերցրել, իսկ քրոջս ինչ-որ մեկը տարել է Ուրֆա:

Այս կինը իր մոտ ապաստան տվեց ինձ և թաքուն իմ նամակը հասցրեց Ուրֆա քույր-միսիոներներին: Նրանք իմ հետևից մարդ ուղարկեցին, և ես գիշերը նրա հետ գաղտագողի մտա քաղաք:

Ուրֆայում ես շատ հարցուփորձ արեցի քրոջս մասին, բայց ոչինչ չիմացա: Դառն էր իմ վիճակը, էլ ավելի դառն էր ջահել քրոջս բախտը, որն այժմ մնացել էր բոլորովին մենակ, աստված գիտե ում ձեռքին...

Ես թաքնվեցի իմ մտերիմ գերմանուհու մոտ: Մի քանի օր անցավ: Ոչ ոք ինձ չէր անհանգստացնում: Բայց ահա մի անգամ առավոտյան ոստիկանները շրջապատեցին մեր տունը: Հասկացա, որ ուզում են խուզարկություն կատարել: Իսկույնևեթ դրեցի ծանոթուհուս լայնեզր գլխարկը (զգեստս փոխել էի, հենց որ եկել էի Ուրֆա) և տնից դուրս եկա: Դռան մոտ կանգնած էր ոստիկանական սպան: Ես հանգիստ անցա նրա մոտով: Նա ինձ գերմանուհու տեղ դրեց և բաց թողեց՝ ոչինչ չասելով: Գնացի այգիների կողմը, որտեղ մի ուրիշ գերմանուհի ծանոթ ընկերուհի ուներ: Այստեղ մնացի մինչև երեկո, իսկ երեկոյան նորից վերադարձա մտերմուհուս մոտ, որի տունը առավոտյան վերից վար խուզարկել էին, բայց, իհարկե, ապարդյուն...

Գարնանն իմացա, որ մորս հաջողվել է իր մոտ մնացած երեխաների հետ, քրդերի օգնությամբ, փախչել Մալաթիայից և որ նա հիմա թաքնված է Մեզրեում՝ Խարբերդի մոտ...

Ինչ-որ հրաշքով, եվրոպացի կնոջ տեսք առած՝ ինձ հաջողվեց առանց խոչընդոտի գնալ հասնել Մեզրե, որտեղ գտա մորս, կրտսեր քույրերիս և եղբայրներիս:

Նրանցից իմացա, որ ամուսնուս սպանել էին Մալաթիայում մեր բաժանումից մեկ-երկու օր հետո: Երբ ժանդարմական սպան սկսել էր խուզարկել նրան, նա դուրս էր քաշել հագուստի տակ թաքցրած դաշույնը, մի հարվածով սպանել թուրքին ու փախել: Թուրքերը հետևից կրակ էին բացել և տեղնուտեղն սպանել: Իմանալով այս մանրամասնությունները, ես ավելի շատ ուրախացա, քան վշտացա: Թող սպանված լինի: Նա համենայն դեպս հասցրել էր մահից առաջ վրեժն առնել և իր, և՛ իմ, և՛ հազարավոր ուրիշ տղամարդկանց ու կանանց:

Հազիվ էինք մի քանի օր ապրել Մեզրեում, երբ նորից ստիպված եղանք փախչել, որովհետև թուրքերը մեր հետքը գտել էին:

Այս անգամ մենք փախանք հարևան Դերսիմ, այնտեղի քրդերի մոտ:

Իսկ երբ իմացանք, որ ռուսական զորքերը գրավել են Երզնկան, եկանք ռուսների մոտ: Երզնկայից, մյուս փախստականների հետ, ուղարկվեցինք այստեղ Ռուսաստան:

Ամուսնուս ընտանիքը 48 շունչ էր: Նրանցից կենդանի են մնացել ընդամենը երեք հոգի. ես և երկու տղա»[1]:

Պրոֆ. Մ. Վ. Արզումանյանը, ընդհանրացնելով իր ձեռքի տակ եղած փաստական նյութերը, շարադրում է մյուս քարավանների անցած ուղու, կրած տանջանքների պատմությունը, ավելի ստույգ գողգոթան: Նրա հավաստմամբ շուտով կազմվում է հայերի առաջին քարավանը (մոտ 2500 մարդ), որը Ադամ փաշան պետք է հասցներ Տիգրանակերտ: Նա նախօրոք հավաքում է հայերի մոտ եղած դրամը՝ ասելով. «Ճամփաները շատ ապահով չեն, կվախցվի, որ կկողոպտվիք, ինձի հանձնեցեք ձեր բոլոր դրամները, երբ որ Տիգրանակերտ հասնելու ըլլաք, բոլորն ալ ձեզի կվերադարձնեմ»[2]:

1915 թ. հուլիսի 1-ին Մեզիրեից դուրս է բերվում այդ քարավանը, և անմիջապես տղամարդկանց բաժանում են կանանցից ու երեխաներից: Այնուհետև կոտորում են տղամարդկանց, իսկ մյուսներին քշում ու կողոպտում: Ականատեսներից տիկին Աղավնի Պոյաճյանը պատմել է. «Ոստիկանները տեսնելով, որ զմեզ չեն կրնար համոզել ու մենք մեր տեղերեն չենք շարժիր, սկսան փայտերով, խարազաններով ու հրացանի կոթերով մեզի զարնել: Բռնությամբ զմեզ ճամփա հանեցին... Մեր վիճակը խիստ անտանելի էր: Չի բացատրվիր, որ պատմեմ: Հոս շատ աղջիկներ ծեծելով, քաշելով տարին:

Ոստիկաններ մայրերուն կուրծքերե փոքրիկներ բռնի քաշելով կառնեին ու դրամով արաբներու կծախեին»[3]:

Բռնագաղթվածներից կենդանի մնացածները 8 օրից հետո հասնում են Տիգրանակերտ, իսկ 15 օրից Դեր Զոր, որտեղ ընկնում են արյունարբու Չեքի փաշայի ձեռքը և համարյա բոլորն էլ կոտորվում: Նույն բախտին արժանացավ Խարբերդից բերված երկրորդ քարավանը (մոտ 3000 հոգի), որը շարժվեց 1915 թ. հուլիսի 3-ին: Բռնագաղթի ականատեսներից մեկը վկայում է. «Ես երկնից տակ չէի լսած այդքան ցավագին ու այդքան սրտապատառ լաց ու ճիչեր, որքան այդ բռնագաղթի մեծ քարավանին սվիններուի, փայտերի ու խարազանների ստիպման տակ քշվող, արևեն խանձված անպաշտպան որբերուն և որբևայրիներուն լացն ու ճիչերը»: Երբ հասան Հալեպ, այդ մեծ քարավանից մնացել էր ընդամենը 68 հոգի: 1915 թվականի նոյեմբերին կազմակերպվեց Խարբերդի վերջին գաղթը և քաղաքը դատարկվեց հայերից. մնացել էին մոտ 200 հոգի, որոնց մի մասը պատսպարվել էր «հայերու բարեկամ թուրքերուն քով»[4]:

Թուրքական բռնավորները դաժան էին թե՛ մեծահասակների և թե երեխաների նկատմամբ: Ահա հոլանդացի գթության քրոջ վկայությունը. «Վալին երբ կտարագրեր մեծերը, որբերը կհավաքեր որբանոցին մեջ: Երբ ես որբանոցը այցելեցի 700 հայ մանուկներ կային լավ վիճակի մեջ. ամեն 15 պստիկներու մեկ հայ վերակացու

---

[1] "На пути от Харберта до Урфы", Москва, 1917, стр. 3-7. Տես նաև «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 460-465:

[2] *Վահե Հայկ*, Խարբերդ և անոր ոսկեղեն դաշտը, Նյու Յորք, 1959, էջ 1420: Տես նաև *Մ. Վ. Արզումանյան*, Հայաստանը 1914-1917, Երևան, 1969, էջ 418-419:

[3] Նույն տեղում, էջ 1421:

[4] *Մ. Ճիզմեճյան*, նշվ. աշխ., էջ 424:

պաշտոնյա, լավ հագնված ու կերակրված: Վալին ինքը ըսավ. «Տես թե ինչպես կառավարությունը կհոգա մանուկները»: Քանի մը օր վերջ, երբ նորեն այցելեցի որբանոցը միայն 13 որբեր մնացած էին, մյուսները ղրկած էին Օովակը և ծովամույն ըրած էին: Քիչ հետո 300 պստիկներ ալ հավաքած նույն ճակատագրին մատնած էին, գեղեցիկները ծախելով թուրքերուն և քրդերուն»[1]:

Խարբերդի վիլայեթի խոշոր քաղաքներից էր Մալաթիան, որն ուներ 35000 բնակիչ, դրանից 15000-ը հայեր էին, որոնք նույնպես բռնագաղթվեցին և դեռ ճանապարհին Ատըյաման քրդաբնակ գյուղում ընկան ուժեղ ջարդերի տակ: Սպանում էին ամենավայրենի ձևերով. օրինակ՝ «ցից մը կգամեն գետին, ցիցին գլուխը տաշեն կսուրցնեն, երիտասարդը կնստեցնեն վրան, երկու ուսերեն կչոքեն, չարչարանքով կմեռցնեն. այդպես ցցված կթողուն գետին»[2]:

Խարբերդի վիլայեթը 1915 թ. համարյա հայազրկվեց: Մնացին միայն հատ ու կենտ խլյակներ, որոնք պահվում էին գաղտնարաններում, ապրում խլուրդի պես: Վերջին վերապրողների մասին օտարազգի գթության քույրերից մեկը պատմում է. «Խարբերդ, Մեզիրէ, եւ իրենց շրջակայ հարիւրաւոր շէն ու կենսատու գիւղեր, մէկ երկու ամսուան ընթացքին վերածուեցան աւերակի: *Դրախտային կեանքով լեցուն վայրեր վերածուեցան բուերու բնակավայրի, ուր ցերեկը անօթի շուներ կը կաղկանձէին, գիշերը կատուներ կը սլքտային: Հոս ու հոն կիսաքաղց, կմախացած որբուկներ միայն կը տեսնուէին:* Պաշտօնական սպանդանոցներէ դուրս գրեթէ ամէն ցանկապատի, ամէն փոսի, քարերու կամ թուփերու ետեւ, ճամբաներու եզերքը, ամայի տեղեր, ամէն կողմ դիակ, կտրատուած մարմնոյ անդամներ, փշրուած գանկեր: Բայց այս վիճակը դեռ չէր կշտացուցած բորենիներու արիւնռուշտ ախորժակը»[3]:

Թուրքերը այս դեպքում էլ դիմեցին խարդավանքի: Նրանք հայտարարեցին, թե համաներում է եղել, և դրանով թույլ տվեցին հայերի վերջին բեկորներին թաքստոցներից դուրս գալ և ապրել, ով որտեղ կարողանար: Սակայն դա մի պահ էր: Կարճ միջոց հետո, նորից շարունակվեցին ձերբակալությունները: Կալանավորների մի մասին տեղափոխեցին Խարբերդի բանտը, մյուսներին ուղղակի տարան գերեզմանատուն և գնդակահարեցին:

«Անկե յետոյ վախն ու սարսափը տիրեցաւ,- գրում է ականատեսը: - Սակայն տերսիմցիք շարունակեցին փախստականներ տանիլ: Փասթոր Էհման զինուորական տարիք ունեցող որբերէն տասնըչորս հոգիի չորսական ոսկի փրկագին եւ մաս մըն ալ ժամանակ մը ապրելու համար ուղղակի սաներուն տալով ղրկեց Տերսիմ, 2 փետր. 1916-ին, ուր մնացինք մինչեւ 1917-ի ամառը, երբ ռուսեր Երիզան գրաւեցին եւ մենք Իտարէ անուն ըմբոստ տղայի մը առաջնորդութեամբ անցանք Երիզա:

Մեր մեկնումէն յետոյ հալածանքին կը հետեւի սովը: Հայու հետ կը տառապին ամերիկացի, տանիմարքացի եւ գերման միսիոնարներն ալ: Հոս ալ Էհման կը յաջողի ենվէր փաշայի այցելութեան ատեն կառավարութենէն աժան ցորեն առնել եւ որբերն ու բազմաթիւ այլ ընտանիքներ սովամահութենէ ազատել»[4]:

1916 թ. Խարբերդի վիլայեթը հիմնովին հայաթափվեց: Ցեղասպանությունն այստեղ իրականացվեց «անթերի», համարյա առանց դիմադրության ու զոհերի: Սփյուռքահայ մտավորական, խարբերդցի Բենիամին Ժամկոչյանն իր շարադրանքն ավարտում է խոհական այսպիսի վերջաբանով. «Պատասխանելու համար նոր սերունդէն

---

[1] *Մ. Ճիզմեճյան,* նշվ. աշխ., էջ 457:

[2] Նույն տեղում, էջ 258: Վերոհիշյալ շարադրանքը քաղել ենք *Մ. Վ. Արզումանյանի* գրքից:

[3] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 391:

[4] Նույն տեղում, էջ 392:

տրուած հարցումի մը. «Ի՞նչպէս բացատրել հազարաւոր հայերու մէկ երկու կամ քանի մը տասնեակ ոստիկաններու առջեւ լուռ ու մունջ դէպի սպանդանոց տարուիլը, առանց ոեւէ ըմբոստութեան, դիմադրութեան, քանի որ մէկական քարով կարելի էր ոստիկանները սատկեցնել», կը թելադրենք կարդալ Ա. Ն. Ռուբակինի «Իրադարձութիւնների Յորձանուտում» գիրքը տեսնելու համար թէ նման վայրկեաններու ֆրանսացիներու նման քառասուն միլիոնոց ժողովուրդ մը, որ ցամաքային Եւրոպայի ամենէն ուժեղ բանակն ունէր, ինչպէս առանց փամփուշտ մը արձակելու, ոչխարաց հօտի մը նման փախուստի դիմեց»[1]:

Այստեղ ներողամտությամբ, թող թույլ տրվի չհամաձայնվենք պարոն ժամկոչյանի հետ: Հայ վերնախավը, ինչպես շատ նահանգներում, այնպես էլ Խարբերդում, սխալ կատարեց, երբ ժամանակին չկազմակերպվեց և ժողովրդին չտարավ ինքնապաշտպանության: Պատմության դասերը ցույց տվեցին, որ որտեղ որ եղան ինքնապաշտպանական մարտեր, այնտեղ հայերը կամ իրենց «կյանքը թանկ վաճառեցին», կամ էլ փրկվեցին սպանդից:

Է. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՊՈՆՏՈՍՈՒՄ

Պատմական հայկական ***Պոնտոսի և Խաղտիքի*** տարածքի վրա կազմավորված վարչական այս միավորը, նրա փաշայանիստ կենտրոնի անունով, Առաջին աշխարհամարտի շրջայազերծության պահին, ինչպես նաև նրանից առաջ, ***Տրապիզոնի*** նահանգ կամ վիլայեթ անուն ուներ: Այն ձևավորվել էր 1453 թվականից, այսինքն Կոստանդնուպոլսի գրավումից ի վեր և շարունակել իր գոյությունը մինչև 1920 թվականը:

XIX հարյուրամյակի մայրամուտից սկսած, նահանգն ուներ 31300 քառ. կմ տարածություն: Վիլայեթն առավելագույն երկարությամբ ձգվում էր 433 կմ-ի վրա, լայնությամբ 74 կմ էր՝ սահմանակից լինելով արևմուտքից ***Կաստամունիին,*** հարավից ***Սեբաստիայի*** և ***Էրզրումի*** վիլայեթներին, արևելքից հարևան էր ռուսական կայսրությանը[2]: Հայասպանության պահին վիլայեթն ուներ չորս գավառ (սանջակ), դրանք էին. ***Տրապիզոն, Սամսոն (Ջանիկ), Լազիստան, Գյումուշխանե,*** որոնք իրենց հերթին համահավաքում էին 22 գավառակ (կազա) և 23 գյուղախումբ (նահիե):

Տրապիզոնում հայերը բնակվել են վաղնջական ժամանակներից[3]: Հերոդոտոսի վկայություններով Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Արմենիա սատրապության փեշերը հասնում էին մինչև Եվքսինյան Պոնտոսը, այսինքն Սև ծովը: Մ. թ. ա. III-II դդ. Փոքր Հայքի սահմանները ձգվում էին Տրապիզոնի և Փառակիա բնակավայրերի միջև ընկած սևծովյան առափնյա շրջաններ: Մ. թ. VIII դարում, խալիֆաթի վարած հակահայկական քաղաքականությանը չդիմանալով, շուրջ 12000 հայեր, ***Շապուհ*** և ***Համամ*** իշխանների գլխավորությամբ, գաղթում են Մեծ Հայքից և բնակություն հաստատում ***Խաղտիք*** երկրամասում՝ ձևավորելով համշենահայերի ստվարաթիվ համայնքը[4]: Հայերի թվաքանակն ավելացավ նաև հետագա հարյուրամյակներում, քանի որ նահանգը գտնվում էր ծովի ափին, ուներ նավահանգիստներ և առևտրատնտեսական կապերով աղերսվում էր Ռուսաստանի և Անդրկովկասի երկրների հետ:

Տրապիզոնի հայ զանգվածին մեծ հարված հասցվեց ռուս-թուրքական 1877-

---

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 392:

[2] ՀՍՀ, հ. 12, Երևան, 1986, էջ 89, ***Ա. Միքայելյան,*** «Տրապիզոնի վիլայեթ» հոդվածը:

[3] ***Հ. Տաշյան,*** Հայ բնակչությունը Սև ծովեն մինչև Կարին, Վիեննա, 1921, էջ 40-51:

[4] ՀՍՀ, հ 12, էջ 90:

1878 թթ. պատերազմի ժամանակ: Ճակատագրական եղան 1894-1896 թթ. հայկական կոտորածները:

Թուրքերի կիրառած ցեղասպանության քաղաքականությունից խուսափելով՝ հայ զանգվածների մեծ մասը թողնում է Տրապիզոնը և, գերընտրելով ռուսական տիրապետությունը, բնակություն է հաստատում ինչպես այժմյան Աբխազիայում, այնպես էլ Վրաստանում և Ռուսաստանում: Դրանք համշենահայերն էին, որոնք մինչև օրս էլ պահում են իրենց լեզուն և սովորույթները[1]:

Անցյալ դարի արշալույսին Տրապիզոնի նահանգն ուներ 473000-ի հասնող ընդհանուր ազգաբնակչություն: Սրանց կեսն էր միայն քրիստոնյա: Հույները հաշվվում էին 200 հազար: Իսլամ բնակչության թիվը հասնում էր գերազանց մեծամասնության, որոնք տրոհվում էին թուրքերի, լազերի, չերքեզների և թուրք վաչկատուն այլ ցեղախմբերի: ***Տրապիզոնի վիլայեթում մնացել էին 53000 հայեր,*** որոնցից 2500-ը կաթոլիկ էին, 1000-ը բողոքական: Նրանք ապրում էին Տրապիզոնում (15 հազար), Սամսոնում (10 հազար), Օրդուում (5 հազար), Գյումուշխանեում (3 հազար), Կիրասոնում (1500), Տրիպոլսում (800) և այլն: Շուրջ 30 հազար 500 հայեր էին բնակվում Գոնիայում[2]:

Տրապիզոնցի պատմաբան և ժամանակակից Մ. Գուշակճյանի հաշվարկումներով. «Միայն Տրապիզոնի և շրջակայքի հայերուն թիվը առաջին աշխարհամարտեն անմիջապես առաջ կհասներ ***չուրջ վաթսուն*** հազարի: Բոլոր կարևոր գյուղերն ունեին դպրոց և եկեղեցի»[3]:

Նահանգի հայ գյուղացիությունը, ենթարկվելով թուրք աղաների և չերքեզ ու լազ բեկերի բռնություններին, համենայն դեպս կարողանում էր իր գոյությունն ապահովել սեփական աշխատանքով, ապրել ավելի լավ, քան ծույլ թուրքերն ու ավարառու չերքեզները: Տրապիզոնի շրջակա գյուղերում ցանում էին ծխախոտի աշխարհահռչակ տեսակներ և այն սպառում ոչ միայն Թուրքիայում, այլև արտահանում արտասահման մերձակա ու հեռավոր երկրներ: Նրանք զբաղվում էին ձկնորսությամբ: Որսած ձկան մի մասը վաճառքի էին հանում: Ներսում և հատկապես դրսում հռչակված էր *խամսին* կոչված ձկնատեսակը:

Իբրև կանոն, մահմեդականներից համեմատաբար փոքր թիվ կազմող հայ և հույն գյուղաբնակները, միշտ չէ, որ կրավորականորեն, հնազանդ ենթարկվում էին իսլամապաշտ աղաների բիրտ ճնշումներին: Քրիստոնյա այդ համայնքները տիրապետում էին զենք գործածելու արվեստին և իհարկե կարողանում էին պաշտպանել իրենց ունեցվածքն ու հատկապես ընտանիքի պատիվը:

Քաղաքային ազգաբնակչությունը, հատկապես Տրապիզոնի հայ զանգվածը համեմատաբար լավ էր ապրում: Զբաղվելով առևտրով ու արհեստագործությամբ՝ մասնավորապես տխրահռչակ Սահմանադրական մեղրամիսի տարիներին, տրապիզոնցիները ստեղծեցին ծաղկուն հայ համայնք, որը սատարում էր նահանգի հայ բնակչության մշակութային վերելքին, դպրոցական ցանցի տարածմանը:

Տրապիզոնցի ականատեսի դիտարկմամբ. «Ինչ կը վերաբերի Տրապիզոն քաղաքին, հոս կացութիւնը տարբեր էր: Ընդհանրապէս հայերը ունէին ծաղկեալ տնտեսութիւն: Առեւտրական եւ արդիւնաբերական բոլոր կարեւոր ձեռնարկութիւնները բացառապէս հայերուն եւ յոյներուն ձեռքը կը գտնուէին:

---

[1] *Հայկ Ղազարյան,* Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ.. Երևան, 1967, էջ 250: Տես նաև **ЦГВИАРИ**, фонд 1300, опись 18, дело 63, лл. 84-86:

[2] *Vital Gine,* La Turquie d' Asie, Paris, 1891, tom I, p. 74: Տես նաև «Հայկական ջարդեր». Տոքթ. *Եոհաննես Լեփսիուսի* տեղեկագիրը. Պեյրութ. 1965, էջ 34-35:

[3] *Մ. Գուշակճեան,* Տրապիզոնի և Սամսոնի նահանգներու տեղահանությունն ու ջարդերը. «1915-1965 Յուշամատեան...», էջ 465:

Տարանցիկ (թրանզիթ) վաճառականութիւնը առաւելապէս հայերուն մասնագիտութիւնը կը նկատուէր: Ձեռներէց գործի տէր հայեր շատ յաջող կերպով կազմակերպած էին առեւտրական այս գործառնութիւնները, որոնք մեծ շահոյթի աղբիւր դարձած էին:

Առեւտուրէն զատ կարեւոր արհեստները նոյնպէս հայերուն ձեռքը կը գտնուէին: Ոսկերչութիւնը, պղնձագործութիւնը, դերձակութիւնը, կօշկակարութիւնը, ատաղձագործութիւնը և երկրագործութիւնը գլխաւոր արհեստներն էին, որ կիրարկութեան կը դրուէին Տրապիզոնի մէջ հայ վարպետներու կողմէ: Ոսկիէ եւ արծաթէ շինուած գօտիները (քամար) մինչեւ Կովկաս կ'արտածուէին: Ձկնորսութեան մէջ եւս հայերը առաջին տեղը կը գրաւէին»[1]:

Ավելի բարվոք էր սամսոնահայության ապրելակերպը: «Աշխարհամարտի նախօրյակին Սամսոն կը հաշուէր շուրջ 10000 հայութիւն: Յոյներու թիւը կը հասնէր 10000-ի, իսկ թուրքերունը 15 հազարի: Հայերը քաղաքի հիւսիսային թաղամասը կը գտնուէին, յոյները քաղաքի հարաւ արեւմտեան մասը, իսկ թուրքերը սեպի նման մտած էին երկու թաղերու միջեւ՝ բաժնելով հայերը յոյներէն:

Ի տարբերութիւն Թուրքիոյ միւս շրջաններէն, Սամսոնի հայերուն ու թուրքերուն փոխյարաբերութիւնները սկիզբէն սիրալիր եղած են: Բարի դրացիութեան սկզբունքին հաւատարիմ մնալով հայերը եւ թուրքերը ընդհանրապէս ապրած են համերաշխ փոխադարձաբար գնահատելով զիրար: Սուլթան Համիտի ջարդարար քաղաքականութիւնն իսկ ժխտական լուրջ ազդեցութիւն չէր կրցած ունենալ Սամսոնի թուրքերուն բարի դրացիական տրամադրութիւններուն վրայ»[2]:

Աշխարհամարտը՝ մի կողմից, երիտթուրքական եռապետության հայասպանության հրամաններն ու հորդորները մյուս կողմից, սկզբում սառեցրին, հետո նույնիսկ իրար նկատմամբ թշնամացրեցին հայերին ու թուրքերին: Տրապիզոնն ու Սամսոնը նավահանգիստներ էին: 1915 թ. Ամանորի առաջին շաբաթում ռուսական ռազմանավերը սկսեցին ռմբակոծել սևծովյան ափամերձ քաղաքները. մասնավորապես Տրապիզոնն ու Սամսոնը: Ռմբակոծումները դարձան հաճախակի՝ մեծ վնաս հասցնելով ոչ միայն զինվորական կայաններին, այլև քաղաքային ազգաբնակչությանը:

Այս պարագայում արմատապես փոխվեցին հայ-թուրքական փոխհարաբերությունները, և վերջիններս բռնեցին բացահայտ թշնամության ուղին: Առավել սրվեցին այդ հարաբերությունները, երբ ռուսական բանակը, հայ կամավորների ուղեկցությամբ, գրեթե շքերթով, խորանում էր դեպի Արևմտյան Հայաստանի սիրտը: Թուրքերը դրանից գազազում էին և, չկարողանալով դիմագրավել կանոնավոր զորքին, ***փոխվրեժի*** կոչերով պատրաստվում էին հայերի բնաջնջման հրամանների կատարմանը:

1915 թ. ապրիլի 19-ին թուրք ոստիկանները խուզարկություններ սկսեցին Տրապիզոնի և շրջակա գյուղերի հայ բնակչության տներում: Նրանք զենք էին որոնում: Բարեբախտաբար, գուցե և դժբախտաբար (քանի որ հայերը զենք չունեին) թուրքերը զենքեր չգտնելով, նահանգապետ Ջեմալ Ազմի փաշայի[3] հրամանով, երկու ամսով հետաձգեցին հայերի ոչնչացումը:

Աստիճանաբար մթնոլորտը շիկանում էր: Հայասպանության պրոցեսը հասունանում էր: 1915 թ. հուլիսի 12-ին թուրք մունետիկները, հայկական թաղերը պտտվելով, ազդարարում էին, թե բոլոր հայերը նախապատրաստվեն, որ հինգ օրից պետք է գաղթեցվեն երկրի խորքերը: Մինչ այդ Տրապիզոնից և շրջակա հայկական գյուղե-

---

[1] *Մ. Գուշակճեան,* նշված աշխատությունը, էջ 465:

[2] *Վ. Մինախորյան,* 1915 թվականը, էջ 13:

[3] Դաժան, հայակեր այս մարդասպանին հայ վրիժառուները սպանեցին Բեռլինում 1922 թվականի ապրիլին:

րից 42 անվանի մտավորականների ձերբակալել էին, Սամսոն աքսորելու պատրվակով, նավակներով դուրս էին տարել քաղաքից և կոտորել[1]:

Հաջորդ նախապատրաստական քայլը կատարվեց խաբեությամբ: Կուսակալ *Ջեմալ Ազմին* իր մոտ հրավիրեց հայերի շրջանում անվերապահորեն հարգանքից օգտվող մի շարք մտավորականների և առևտրականների, նրանց հանձնարարեց գնալ թաղերը, ժողովրդին համոզել առանց դիմադրության, պատրաստվեն «տեղափոխման»: Այլապես սպառնում էր թուրք բորենին «Մի քանի անխելքների պատճառով ողջ ժողովուրդը կկոտորվի»[2]: Այդպես էլ եղավ: Նշան և Ղևոնդ քահանաները, Կարապետ Մնացականյան էֆենտին ժողովրդին կոչեցին հնազանդության չպատկերացնելով դրա հետևանքները:

Կազմակերպվեց տեղահանությունը: Առաջին քարավանը պատրաստվեց երթի, բայց ինչ երթի, այլ գողգոթայի:

«Տեղահանութեան որոշուած օրը թուրք ժանտարմաները Տրապիզոնէն դէպի արեւելք հաստատուած հայ գիւղերուն բնակչութիւնը, թիւով 4000, հաւաքեցին ծովեզերք Դրոնայի Չարշիին քով:

Յաջորդ օրը բանտարկուած այրերը բանտերէն դուրս հանելով եւ խումբերու բաժնելով կապուած ձեռքերով խառնեցին գաղթող ժողովուրդին հետ եւ Կալաֆկայի գետի հետքերով դէպի լեռ քշեցին:

Երբ ժողովուրդը գետին վրայ նետուած առաջին կամուրջին կը հասնէր, հետեւելով երիտասարդ գեղանի կնոջ մը օրինակին, 25 այլ կիներ, զաւակնին կուրծքերնին սեղմած՝ նետուեցան փրփրերախ գետին գոգը, նախամեծար համարելով գետի ալիքներուն յանձնուիլ քան թէ պիղծ ջարդարարներու կողմէ լլկուիլ...

Գիւղերէն հեռանալով, կապկպուած այրերը ճամբայէն դուրս հանուեցան եւ խոշտանգուելով նահատակուեցան:

Երեկոյեան գաղթականներուն մնացորդացը հասաւ Սրղանլի դաշտը, որ անմիջապէս չորս կողմէ պաշարուեցաւ *ժանտարմաներուն ու չէթէներուն* կողմէ:

Ժանտարմաները նախ ծերունի հերոս Չալուք Պօղոսը դուրս հանեցին խումբէն եւ սկսան ծաղրանքի նշաւակ դարձնել: Ծերունին խիզախօրէն գոչեց. - «Չեռքերը կապուած մարդիկը ծաղրելը կամ սպաննելը քաջութիւն չէ, վատե՛ր»: Այս ըսելով ան կուրծքը կը բանար պոռալով դահիճներուն երեսին կրակեցե՛ք, շուներ»[3]:

Ծերունի քաջամարտիկի սպանությունը ազդանշան դարձավ տրապիզոնահայության սպանդին: Ականատեսը գրում է. «Ծերունիին սպանութենէն ետք հաւաքական սպանդը սկսաւ: Ողբն ու կոծը եւ սրտակեղեք աղաղակները միճչեւ երկինք կը բարձրանային: Գիշերը վրայ հասաւ, օրհասական գիշեր մը: *Յաջորդ առտու յայտնի կըլլար, որ 4000 անձերէն միայն 700 խլեակներ ողջ մնացած էին:*

Արիւնաքամ կարաւանը երեկոյեան հասաւ *Տաշ Քէօփրի: Գիշերը՝ Շաթիրզատէ Իսմայիլ պէյ իր մարդոցով եկաւ եւ զատեց գեղեցիկ հարսերն ու աղջիկները...:*

Յաջորդ առտու տխրատեսիլ կարաւանը շարունակեց իր արիւնոտ ճամբան: Երգնկա հասած պահուն ան կը հաշուէր միայն... 500 մարդկային խլեակներ:

Երգնկայէն խումբը տարուեցաւ Քեմախի կամուրջը, *ուր բոլորն ալ ջարդուեցան կացիններով, բիրերով ու քարերով եւ դիակները ջուրը թափուեցան:*

Սրղանլիի ջարդի գիշերը, տիրող խաւարէն օգտուելով, նկատելի թիւով հայեր յաջողեցան հեռանալ խումբէն եւ ապաստանեցան մօտակայ Սենջան Միսխորի անտառները:

---

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 468:

[2] Նույն տեղում:

[3] *Մ. Գուշակճեան*, նշված աշխատությունը, էջ 468:

Յաջորդ առտու համանուն գիւղի թուրքերը, հոտ առնող բարակ շուներու պէս երեւան հանելով տարաբախտ հայ գաղթականներուն թաքստոցը, անխնայօրէն ջարդեցին անզօր եւ անպաշտպան խլեակները: Սպանուածներուն թիւը կը բարձրանար շուրջ 300-ի: ***Նասիպ օղլու Թեմելը անունով չարագործը մեծ աւերներ կը գործէր, սակայն վրիժառու հայ գնդակ մը շանսատակ կ'ընէր զայն ի վերջոյ»***[1]:

Հերթը հասաւ Տրապիզոնի ամբողջ բնակչութեան տարագրութեանը եւ ոչնչացմանը: Գերմանացի ականաւոր գործիչ Յոհաննես Լեփսիուսը, ձեռքի տակ ունենալով ամերիկեան հյուպատոս ***Օսկար Հեյզերի*** 1915 թ. հուլիսի 28-ին կազմած տեղեկագիրը տրապիզոնահայութեան ողբերգութեան վերաբերեալ, հրատարակում է այն ամբողջապես՝ ոչինչ չավելացնելով և ոչինչ չպակասեցնելով: Մենք ևս հետևում ենք գերմանացի հումանիստի օրինակին, մեջբերելով ***այսօրվա Թուրքիայի անդրօվկիանոսյան տերերի ներկայացուցչի ընդարձակ շարադրանքը*** հայոց թեկուզև մեկ գավառի ցեղասպանության մասին, Անկարայի պետական այրերի ուշադրությունը հրավիրելով այդ վավերագրի վրա: Ահա այդ փաստաթուղթը.

«ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԻՒՊԱՏՈՍԻՆ»

Տրապիզոն, 28 Յուլիս, 1915

«Շաբաթ 26 Յունիս, Հայերու տարագրութեան հրամանը փողոցներու մէջ ծանուցուեցաւ: Հինգշաբթի Յուլիս 1-ին սուիններ հրացաններուն անցուած ժանտարմաներով բոլոր փողոցները պաշարուեցան և Հայերուն իրենց տուներէն արտաքսումի գործը սկսաւ: Հիւպատոսարանին մօտ, մէկ քաղէն միւսը անցնելիք պզտիկ ճամբու մը վրայ հաւաքուեցան այրերու, կիներու և մանուկներու խումբեր, կռնակնին կապոցներ և պզտիկ ծրարներ առած: Անմիջապէս որ հարիւր հոգինոց խումբ մը կազմուէր, սիւնաւոր ժանտարմաներու կողմէ կը քշուէին հիւպատոսարանին առջեւ, արեւի տաքին և փոշիին մէջ, դէպի Կարինի ճամբուն վրայ: Քաղաքէն դուրս կեցուցին զանոնք, շուրջ 2000 հոգինոց խումբ մը կազմեցին, աւելի հեռու ղրկելու համար գիրենք: Նմանօրինակ երեք խումբեր միասին 6000 հոգի, տարագրուեցան առաջին երեք օրերուն: Տրապիզոնէն և շրջականերէն ուրիշ և աւելի փոքր խումբեր, որոնք աւելի վերջը տարագրուեցան շուրջ 4000 հոգի եղան: Կիներու և մանուկներու ողբերը սիրտ կը կեղեքէին: Այս դժբախտներէն մէկ քանիներ, հարուստ միջավայրերու կը պատկանէին և յարգուած էին. Հարստութեան և հանգստաւէտութեան վարժուած էին: Անոնց մէջ կային եկեղեցականներ, առևտրականներ, սեղանաւորներ, օրէնսգէտներ, մեքենագէտներ, ամէն միջավայրի մարդիկ:

Ընդհանուր կառավարիչը ինծի կ'ըսեր թէ արտօնուած էին կառք ճամբորդութեան համար, բայց ոչ մէկը կը թուէր այդ ուղղութեամբ բան մը ընել: Այսուհանդերձ կը ճանչնամ վաճառական մը որ 15 օսմ. ոսկի վճարեց կառքի մը համար որ զինքն ու իր կինը Կարին պիտի տանէր: Երբ հաւաքատեղի մը հասան, քաղաքէն 10 վայրկեանի մը չափ հեռու, ժանտարմաները հրաման ըրին թողուլ կառքը որ ետ, քաղաք ղրկուեցաւ: Առջի վայրկեանէն, ամբողջ մահմետական ազգաբնակչութիւնը գիտէր թէ այս մարդիկը դիւրին որս մը պիտի ըլլային իրենց ձեռքին մէջ, և իբրեւ ոճրագործներու վարուեցան իրենց հետ: Տրապիզոնի մէջ, ***յունիս 25էն ի վեր, թուական ոչինչ ծախելու հրամանի յայտարարութեան, արգիլուած էր Հայերուն, որ եւ է բան մը ծախելը, նոյնպէս անսաստողը պատժուելու պայմանաւ արգիլուած էր ամէն***

[1] *Մ. Գուշակճեան,* նշված աշխատությունը, էջ 469:

անհատի, որ եւ է բան մը գնել անոնցմէ, ուրեմն անոնք, ծամբորդութեան համար իրենց պէտք եղածը ինչպէ՞ս պիտի հայթայթէին: Վեց կամ ութը ամիսէ ի վեր Տրապիզոնի մէջ, առեւտրական ամէն գործառնութիւն դադրած էր, և մարդիկ սպառած էին իրենց բոլոր խնայողութիւնները: Ինչո՞ւ համար ուզեցին արգիլել իրենց գորգը կամ ուրիշ որ և է բան մը ծախելու, հայթայթել: Շատ մը մարդիկ որոնք կալուածներու տէր էին, զորս պիտի կրնային ծախել, եթէ արտօնուած ըլլային, պարտաւորուեցան, առանց միջոցի մնացած, ոտքով երթալ, և միասին առին, ինչ որ կրցան աճապարանքով իրենց տուներուն մէջէն հաւաքել և իրենց կռնակը առնել: Երբ ուժասպառ ըլլալով, կը պարտաւորուէին ետ մնալ, սուինով կը շամփրուէին և գետը կը նետուէին: Ջուրերը ատոնց դիակները, Տրապիզոնի դիմաց ծովը բերին, կամ թե նուազ խորունկ տեղերը, 10-12 օր մնացին, ապառաժներուն կառչած, ուր փտեցան, սոսկումով համակելով այն ճամբորդները, որոնք ստիպուած էին այստեղերէն անցնիլ: Ես ականատես վկաներու հետ խօսեցայ, որոնք հաւաստեցին, թէ բազմաթիւ մերկ դիակներ տեսած են, որոնք դէպքերէն 15 օր վերջը ծառերու կոճղերու պէս գետին ջուրերուն վրայ կը ծփային և թէ սարսափելի էր անոնց հոտը:

«Յուլիս 17-ին, երբ Գերմանիոյ հիւպատոսին հետ ծիով կը ճամբորդէի, երեք թուրքերու հանդիպեցանք, որոնք աւազին մէջ գերեզման մը կը փորէին մերկ դիակի մը համար, զոր մենք շատ մօտը գետին մէջ կը տեսնէինք: Դիակը կը թուէր տասը օրէն աւելի ջուրին մէջ մնացած ըլլալ: Թուրքերը կ'ըսէին թէ, գետին երկարութեան աւելի վերը, դեռ նոր, չորս ուրիշ դիակներ թաղեցին: Ուրիշ թուրք մը մեզի կ'ըսեր թէ մեր անցնելէն քիչ առաջ, գետը ուրիշ դիակ մը դէպի ծով տարած էր:

«Երեքշաբթի 6 հուլիսին, Տրապիզոնի բոլոր հայ տուները, շուրջ հազար, պարպուած էին, և իրենց բնակիչները տարագրուած: Չհաստատուեցաւ երբեք թէ մէկը գտնուած ըլլայ որ կառավարութեան դէմ ուղղուած շարժումի մը մասնակցած ըլլալու յանցանքը գործած ըլլայ: Եթէ մէկը Հայ էր, ատիկա բաւական էր որպես զի իբր ոճրագործի վարուին հետը և տարագրեն: Սկիզբը ըսուեցաւ թէ հիւանդները ընդհանուր կարգադրութենէն բացառութիւն կը սեպուին: Ասոնք քաղաքին հիւանդանոցը տարուեցան, մինչեւ բաւական մը աղէկ ըլլալնին հոն մնալու համար: Աւելի վերջը, տարիքոտ այրերը և կիները, յղի կիները և մանուկները, կառավարական պաշտօնեաները, ինչպէս և կաթոլիկ Հայերը բացառութիւն նկատուեցան: Բայց ամենէն վերջը որոշուեցաւ որ նոյն իսկ ծերերը, այր թէ կին, նոյնպես կաթոլիկները հեռանան, և ասոնք պարտաւորուեցան երթալ վերջին կարաւանին միանալ: Կարգ մը պզտիկ նաւեր, իրարու ետեւէ, առին այս մարդոցմէն և ճամբայ ելան դէպի Սամսոն: Ընդհանուր կարծիքն այն է թէ խեղդած են զանոնք: Ընդհանուր տարագրութեան առաջին օրերուն, մեծ նաւ մը (քայըք) լեցուցին այրերով, որոնց համար կ'ըսէին թէ հայկական քոմիթէի անդամներ էին և դէպի Սամսոն ղրկեցին: Երկու օր վերջ, ցամաքի ճամբով Տրապիզոն վերադարձաւ ռուսահպատակ, բաւական ծանօթ, Վարդան անունով մէկը, որ այս նաւակով ճամբայ ելած էր: Գլխուն վրայ վէրք մը ունէր, այն աստիճան շփոթած էր որ չէր կրնար ինքզինք հասկցնել: Միակ ըսել կրցածն էր. «Պո՛ւմ պո՛ւմ»: Չերբակալուեցաւ իշխանութեանց կողմէ և հիւանդանոց տարուեցաւ ու հետեւեալ օրը մեռաւ: Թուրք մը կը պատմէր թէ, այս նաւը, Տրապիզոնէն ոչ-հեռու, հանդիպած էր ուրիշ նաւու մը, լեցուն ժանտարմաներով, որոնք պաշտօն ունէին սպաննել այս բոլոր մարդիկը և զանոնք ծովը թափել: Կը կարծէին թէ ամէնքն ալ սպաննած էին, բայց այս ռուսահպատակը, որ խոշոր և գէր էր, միայն վիրաւորուեցաւ և առանց նշմարուելու մինչեւ ծովեզերք գնաց լողալով: Այս տեսակ բաւական նաւեր, մարդերով լեցուած, Տրապիզոնէն մեկնեցան. այս նաւերը խիստ շատ անգամ, մէկ քանի ժամ վերջ բոլորովին պարապ վերադարձած են:

«Թոզ, Տրապիզոնէն շուրջ երկու ժամ հեռու գիւղ մը, բնակուած է լուսաւորչական և կաթոլիկ հայերէ և թուրքերէ: Շատ ազդեցիկ հարուստ հայ մը, Պօղոս Մարսիմեան այնտեղ սպաննուեցաւ իր երկու որդիներովը, ինչպես ապահով վկայ մը կը տեղեկագրէ: Ասոնք իրարու ետեւ շարուեցան, և այնպէս հրացանազարկ եղան: Տասնևհինգ այր ու կին գիւղէն քիչ հեռու հովիտ մը տարուեցան, կիները նախ բռնապղծուեցան ժանտարմայի սպաներու կողմէ ու յետոյ ժանտարմաներու տրամադրութեանը ձգուեցան: Ըստ այս ականատես վկային, մանուկ մը սպաննեցին, անոր գանկը ապառաժներուն վրայ ջախջախելով:

Նոյնիսկ մանուկները փրկելու ծրագիրը հարկ եղաւ լքել: Տրապիզոնի մէջ, այդ մանուկները դպրոցներու և որբանոցներու մէջ զետեղած էին յոյն Արքեպիսկոպոսին կողմէ կազմուած ու հովանաւորուած քոմիթէի մը վերատեսչութեան ներքև և որուն նախագահն էր վալին, իսկ փոխնախագահը Արքեպիսկոպոսը երեք քրիստոնեայ և երեք մահմետական անդամներով: Բայց հիմա, երիտասարդ աղջիկները միայն մահմետական ընտանիքներու կը տրուին և այսպէսով իրարմէ կը բաժնուին: Որբանոցներու փակումը և մանուկներուն մահմետական ընտանիքներու միջև բաժանումը, մեծ յուսախաբութիւն մը եղաւ յոյն Արքեպիսկոպոսին համար որ այնքան եռանդով այս նպատակին համար աշխատած էր և որուն վալին իր օժանդակութիւնը ապահոված էր: Բայց Իթթիհատի պետը, Նայիլ պէյ, որ չէր հաւներ այս ծրագրին, կրցաւ շատ շուտ անոր դէմ կանգնիլ: Այնպէս կ'երեւի թէ շատ մը մանուկներ քաղաքէն դուրս ղրկուած են, գիւղացիներուն բաժնուելու համար: Աւելի չափահաս երիտասարդ աղջիկներուն մէջէն ամենէն գեղեցիկները որոնք որբանոցներու մէջ վար դրուած էին, հսկողութեան և պզտիկներուն խնամք տանելու պաշտօններով, արգելափակուեցան տուներու մէջ և հաճոյքներուն ծառայեցին այս *քլիքին* անդամներուն որոնք կը թուին այստեղ ամէն ինչ կառավարել: Հաւաստի աղբիւրէ տեղեկացայ թէ Իթթիհատի անդամ մը, այստեղ, քաղաքին կեդրոնը տան մը մէջ, ամենէն գեղեցիկներէն տասը աղջիկներ կը պահէ, *իր և իր բարեկամներուն գործածութեանը համար: Մէկ քանի, աւելի դեռատի աղջիկներ, պարկեշտ* մահմետական ընտանիքներու մէջ տեղաւորուեցան: Ամերիկեան միսիոնարութեան նախկին մէկ քանի աշակերտուհիներ, միսիոնարութեան ճիշդ մօտը, իսլամ ընտանիքներու մէջ զետեղուած են հիմա, բայց բնականաբար ամենամեծ մասը այս բախտաւորութիւնը չէ ունեցած:

«Հայերու տուները. թուով հազար, ոստիկանութեան կողմէ հետզհետէ պարպուած են իրենց կարասիներէն: Կարասիներ, անկողինի կազմածներ և բոլոր արժէքաւոր առարկաները, քաղաքը մեծ շէնքերու մէջ պահուած են: Ցուցակագրութեան ոչ մէկ փորձ տեղի ունեցաւ, և պարզապէս ծիծաղելի է կառավարութեան պաշտպանութեան տակ այս ինչքերը կապոցներով պահելու մտածումը, որպեսզի անոնց տէրերը վերադառնալուն, իրենց յանձնուին: Առարկաները իրարու վրայ դիզուած են, զանոնք արձանագրելու առանց որ և է փորձի, կամ առանց զանոնք դիզելու կերպին մէջ որ և է կարգի հետեւելու: Թուրք կիներու և տղաքներու ամբոխ մը քայլ առ քայլ կը հետեւի ոստիկանութեան պաշտօնեաներուն, անգղերու երամի մը պէս, ձեռք անցընելու համար, ինչ որ կըրնան: Անգամ մը որ, տունէ մը կարեւոր կարասիները ոստիկանութեան կողմէ կը տարուին, ամբոխը անմիջապէս ներս կը խուժէ գտածը առնելու համար: Այս դէպքերը ամէն օր իմ սեփական աչքերովս կը տեսնեմ: Կարծեմ թէ շատ մը շաբաթներ պէտք պիտի ըլլայ, բոլոր այս տուները պարպելու համար: Յետոյ պիտի պարպեն Հայերու խանութներն ու վաճառատունները: Այն յանձնաժողովը որ գործը իր ձեռքին մէջ ունի, հիմա խօսքը կ'ընէ ծախելու տնական կարասիներու այս ահագին քանակութիւնը և ուրիշ ինչքեր, «վճարելու համար Հայերու պարտքերը»:

«Գերման հիւպատոսը ինծի կ'ըսեր թե չի կարծեր որ Հայերը, նոյնիսկ պատերազմէն վերջը, կարենան նորէն Տրապիզոն վերադառնալ:

«Վերջերս կը խօսէի երիտասարդի մը հետ, որ իր գինուորական ծառայութիւնը Ինշաաթ Թապուրիի մը մէջ կատարած էր և Կիւմիւշխանէի ճամբուն վրայ կ'աշխատէր: Ինծի պատմեց թէ, 14 օր առաջ, բոլոր Հայերը,180 հոգիի չափ, բաժնուեցան միւս աշխատաւորներէն: Ինքը լսած էր քարապինի հարուածները, և եղաւ մէկը անոնցմէ, որոնք յետոյ ղրկուեցան դիակները թաղելու համար: Տեսաւ որ ամէնքն ալ բոլորովին մերկ էին, անոնց հագուստները գողցած էին:

«Կոհակները Տրապիզոնի իտալական վանքին պարիսպներուն ստորոտը, աւազուտ ծովեզերքին վրայ նետած են կիներու և մանուկներու բազմաթիւ դիակներ: Տեղւոյն յոյն կիներուն կողմէ անոնք թաղուեցան հոն ուր գտնուեցան»:

Բոլոր ասոնք քաղուած են Մ. Նահանգներու հիւպատոսին տեղեկագիրէն»[1]:

Տրապիզոնցի ***Մ. Գուշակճյանը,*** շարունակելով Յոհաննես Լեփսիուսին, գրում է. «Բոլոր հայերը տեղահանելէ ետք (Յուլիս 6,1915), որպէսզի անոնց յիշատակն ու գործերը միանգամայն անհետացնեն, 20-րդ դարու այս վանտալները քանդեցին նաեւ Տրապիզոնի հայոց եկեղեցիները, դպրոցներն ու այլ պատմական յիշատակարանները:

Խոշտանգումներու ու մահուան թուրք մասնագէտները, փորձառական գծով, հետզհետէ սպանութեան ու չարչարանքներու նորանոր ձեւեր սորվեցան...

Այսպէս, դահիճները, դժբախտ դատապարտեալներուն հսկայ փոսեր բանալ տալով, քանի մը հարիւր հոգի մէկ անգամէն անոնց մէջ կը թափէին ու ողջ-ողջ կը թաղէին: Գեղանի կիներն ու աղջիկները լլկելէ ետք, մինչեւ կուրծքերը հողի մէջ թաղելով, կը ծգէին որ անօգնական, անօթի եւ ծարաւ մեռնէին...:

Գիւմիշխանէէն Երզնկա տանող ճամբուն վրայ Թեքքէն գլխաւոր կայանն էր: Օր մը Թեքքէի իջեւաններէն մէկուն մէջ բանտարկուած 100 այրեր, զգալով թէ վերջերնին ոչնչացում էր, ըմբոստացան եւ պահակները զինաթափ ըրին: Անոնցմէ մէկ մասը յետագային լեռները ապաստանեցան եւ հոն կռիւը շարունակեցին:

Թեքքէի իջևաններուն մէջ տեղաւորուած 1000էն աւելի կիներն ու մանուկները քշուեցան դէպի Երզնկա: Ճամբու ընթացքին ուրիշ խումբեր եւս միանալով այս կարաւանին, ան մեծցաւ եւ 2000ի հասաւ: Ապա մարդկային այս խլեակները լեցուցին բարձր պարիսպներով եզերուած գերեզմանոցի մը մէջ:

Գերեզմանատունը ծածկուած էր անթաղ դիակներով, որոնք սարսափելի գարշահոտութիւն մը կը սփռէին: Ձանոնք ներս քշելէ ետք, դռները փակեցին վրանին: Վեց օր մնացին հոն առանց հացի ու ջուրի: Եօթներորդ օրը դուրս հանուեցան դժոխքէն անգամ մը եւս կողոպտուելով:

Այնուհետեւ կարաւանը առաջնորդուեցաւ Քեմախի կիրճը եւ հոս սկսաւ անխնայ կոտորածը: Սպանուածներուն դիակները գետը կը նետուէին: Մարդակերպ ճիւաղները կը բռնէին մանուկներուն ոտքերէն ու ձեռքերէն եւ օդին մէջ ճօճելով գետը կը նետէին զանոնք, ու այս վերջիններուն՝ իրենց խնայելու աղաչանքն ու պաղատանքը կը խառնուէին դահիճներու դիւային բրքիջներուն հետ...

Այս դժոխային տեսարանին ականատես ու հրաշքով վերապրող Պետրոս Սարատճեան վերի մանրամասնութիւնները տալով կ'ըսե,- «այս ողբերգական տեսարանին մեզի մօտեցան քանի մը գերմանացի «գթութե՞ն քոյրեր» ու սկսան քահ քահ ծիծաղիլ, շատ զվարճալի գտնելով քրիստոնեայ ցեղի անմեղ զաւակներուն այսպիսի գազանական ոչնչացումը...»: (***Օրերուն հետ*** - Միսաք Թորլաքեան. էջ 329)»[2]:

---

[1] «Հայկական ջարդերը», Տոքթ. ***Եոհաննես Լեփսիուսի*** տեղեկագիրը. էջ 36-42:

[2] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 472-473:

1915 թ. մայիսի 16-ին ֆրանսիական «Le Temps» պարբերականը Տրապիզոնի հայերի կոտորածի մասին գրում է.

«Պետրոգրադից անգլիական թերթերին ուղարկված հեռագրում տրված են զարհուրելի մանրամասնություններ Տրապիզոնում հայերի կոտորածի մասին, նախքան ռուսները կգրավեին այդ քաղաքը: Ռուսներն այնտեղ գտել են սոսկ 50 հայ որբ, 15 կին և մոտավորապես 1000 տղամարդ, որոնք թաքնվել էին հարևան գյուղերում:

Ամերիկյան հյուպատոսը հայտարարում է, որ ինքը երկար ժամանակ ապրում է Տրապիզոնում և երբեք մտքովը չէր անցնի, որ թուրքերն ընդունակ են այդպիսի գազանությունների:

Հայ երեխաները ծովն էին նետվել շան լակոտների պես, հասուն հայերին դուրս էին հանել քաղաքի սահմաններից և խումբ-խումբ գնդակահարել, ջահել աղջիկներին վաճառել էին հարեմների համար, իսկ հարուստ հայերի ունեցվածքը վաճառքի համար աճուրդի էր հանվել Տրապիզոնի տաճարում: Եվ քանի որ հույները հրաժարվել էին գնել այդ ապրանքները, դրանց աճուրդով վաճառքը տեղի չէր ունեցել:

Հույները հաստատեցին, որ թուրքերն իրենց ահաբեկում էին, սպառնալով գնդակահարությամբ, եթե հայտնաբերվի, որ Տրապիզոնում թողնված թեկուզև մեկ հայ երեխա ապաստան գտած լինի իրենց մոտ: Թուրք կանայք ձեռքերը կոտրտելով ասում են, թե ալլահն օսմանցիներից երես է շուռ տվել հայերի հետ նրանց դաժան վարմունքի համար»[1]:

Տրապիզոնի հայության բախտին արժանացավ Սամսոնի հայկական համայնքը: 1915 թ. հուլիսին հրաման արձակվեց Սամսոնի բնակչության տեղահանության և աքսորի վերաբերյալ: Նրանց տասն օր ժամանակ տրվեց նախապատրաստվելու գաղթի համար:

Քաղաքի հայ երևելիները ժողով հրավիրեցին և հարցը երկար ու բարակ քննարկելուց հետո, մի պատվիրակություն ուղարկեցին մյութեսարիֆի մոտ և միամտաբար խնդրելով որոշումը փոխել: Թուրք պաշտոնյան քմծիծաղով պատասխանեց, որ հրամանը կենտրոնից է և կազատվեն նրանք, ովքեր կիսլամանան: Հուլիսի 15-ին շուկայի մոտ 156 հայերի բանտարկեցին և լցրեցին բերդ: Երկու օրից սկսվեցին տեղահանությունն ու բռնագաղթը:

Սամսոնի հայ զանգվածի գողգոթան հմտորեն է ներկայացրել Սեպուհ Ակունին, դրա համար էլ մեջբերում ենք նրա շարադրանքը: «Սամսոնի մեջ այն նույն խժդուժ պայմաններուն տակ սկսած է հալածանքը, ապրիլի մէջ ձերբակալած են Համբար անուն Դաշնակցական մը և զայն մեռցուցած ծեծի տակ. ապա վախնալով, որ դիազննութիւն կը կատարուի, մէկ ամիս հսկած են դիակին վրայ: Այս ձերբակալութենէն ետք սկսած են զէնքերը ժողվել և Հայերով լեցնել բանտերը: Իսկ Յուլիսի մէջ յայտարարութիւն մը հրատարակած են թէ Հայերը պիտի տարագրուին դէպի հարաւ: Ուրիշ անպաշտօն յայտարարութեամբ մը, կառավարութիւնը զատած է իսլամանալու տրամադիր եղող Հայերը: Ասոր վրայ 50 ընտանիք իսլամացած են, իսկ տարագրուածներէն քանի մը հոգի ալ վերադարձած են Սամսոն իսլամութիւնը ընդունելու խոստումով: ***Գավագլը ըսուած տեղը տարագիրներուն ներկայութեան, բլփատութեան*** հանդէսը տեղի ունեցած է իսլամացած Հայերուն:

Կառավարութեան յայտարարութեան վրայ, տեղահանութիւնը շարունակուած է բուռն թափով: Այրերէն խոշոր մաս մը սպաննուած են Սամսոնէն մէկ ժամ հեռու, իսկ կիներ, տղաքներ և ծերեր, ինչպես նաեւ քիչ թուով այր մարդիկ շարունակելով իրենց ճամբան, Հավզա-էլէվի ճամբով հասած են Ամասիա և անկէ ալ Թոգատ: Թոգատի մէջ

[1] «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում». էջ 505-506:

բանտարկուած Հայերու կիները ուզած են այցելել իրենց ամուսիններուն կամ եղբայրներուն, սակայն ծեծ կերած են: Ճամբաները այնքան շատ դիակ կար, որ Սամսոնի կարաւանին պատկանողները սարսափած են այս տեսարանին առջեւ, սակայն շարունակելով իրենց ճամբան դէպի Շար Գշլա հասած են Սեբաստիա, միայն կին մը խենթեցած է: Սեբաստիոյ մէջ բաժնած են ամուսինները իրենց կիներէն և զանոնք կողոպտած. թէեւ շատ մը կիներ դիմադրած են, սակայն ծեծի տակ սպաննուած են:

Սամսոնցիները շարունակած են իրենց ճամբան Գանկալի խճուղիով, ուր Գուբու Խանին միւտիւրը 100 կարմիր ոսկի և հարիւր գորգ ուզած է տարագիրներէն: Հասան-Չէլէպի գիւղին մօտ հաւաքուած գիւղացիներ սկսած են զատել ծերերը ինչպէս նաեւ 17-20 տարեկանները, եաթաղաններով զանոնք սպաննելու համար: Երկու ժամ վերջ ժանտարմաները եկած են և հաւաքած ծեր կիները. հոն առաջարկուած է գաղթականներուն թէ անոնք որ իսլամութիւնը պիտի ընդունին ներման պիտի արժանանան. 35 հոգի կը մերժեն այս առաջարկը և տեղւոյն վրայ կը սպաննուին: Սամսոնցի խիստ գեղեցիկ օրիորդ մը՝ Պերճուհի Բաշղեան, առաջարկ մը կ'ընդունի թուրք սպայէ մը իրեն հետ ամուսնանալու համար. օրիորդը երկու պայման կ'առաջարկէ և կ'ըսե. «Կը կենակցիմ ձեզի հետ, պայմանաւ որ նախ պատռէք այս իսլամացման թուղթը, յետոյ կարաւանը պէտք է առանց նոր չարչարանքի և կողոպուտի հասնի Մալաթիա»: Սպան կ'ընդունի և գրեթէ կ'ամուսնանայ: Կարաւանը Հեքիմ-Խանէն ետք Մալաթիա գացած ատենը Քիւրտերը կ'առեւանգեն աղջիկ մը, անոր մայրը կը դիմադրէ, բայց երկու հարուածով կը սպաննուի, ծեր կիներ Եփրատը նետուած են անօթի և ծարաւ:

Ժանտարմաները այնքան կը վախցնէին կարաւանին հետեւողները որ կ'ըսէին անոնց «ատեն պիտի գայ որ պիտի փնտռէք Եփրատն ալ խեղդուելու համար, հետեւաբար առիթը ներկայացած է փորձեցէք ժամ առաջ ազատուիլ այս գետը նետուելով»: Սամսոնի ծանօթ ընտանիքներէն Տիկին Տօնիկեան կը խենդենայ երբ աղջիկը կ'առնեն կը տանին, սակայն հեծելազօրաց սպայ մը զայն կ'ազատէ և մօրը կը վերադարձնէ: Ճամբան Տէրսիմ Հաճի Պէքիր պէյ Մէհմէտ աղա կ'առաջարկէ Տիկին Գարտանեանի որ զինքը իր պաշտպանութեան տակ պիտի առնէ, Տիկինը կը պատասխանէ.- «Ես պէտք չունիմ պաշտպանութեան, պիտի քալեմ անոնց հետ, պիտի մեռնիմ անոնց հետ»:

Կարաւանը երբ կը հասնի Զէյնէ քէօյ, Զէյնէ պէյի գլխաւորութեամբ զինուած քիւրտերն ու թուրք-ժանտարմաներ կուգան 13 տարեկանները կը զատեն, տանելու համար, ինչպէս նաեւ կը պահանջեն 300 ոսկի Տօնիկեան, Մարինեան, Աբրահամեան, Մէրեմ Փօթուզեան ընտանիքներէն, ասոնք դրամ և գոհարեղէն կը բերեն Զէյնէ պէյի: Այս վերջինը կ'ուզէ Գաբթանեանին աղջիկը՝ Յասմիկը, որ վրանին տակ նստած էր, սակայն Յասմիկ կը պատասխանէ.- քիւրտ կնիկ չմնա՞ց որ մեզի կուգաք կ'ուզէք, չենք գար և վախցէք Հայու վրէժխնդրութենէն:

Քիւրտը այս խօսքերուն կը խնդայ, սակայն և այնպէս չի համարձակիր իր ցանկութիւնը իրագործելու:

Սամսոնի կարաւանները 3 ամիս քալելէ ետք օրական 6-7 ժամ ըլլալու պայմանաւ, ողջամբ Սուրուճ հասնողներ եղած են, այնքան ջուրի նեղութիւն քաշած են որ տարագիրներէն պարզապէս ջուր խմելու համար հորը նետուողներ եղած և խեղդուած են: Իբր ճիւաղային դրուագ մը, Սամսոնի տեղահանութեան վրայ խօսած ատեննիս, պէտք չէ մոռնանք սա դէպքը: *Հայ կին մը այնքան տառապեր է որ ստիպուեր է իր հինգ տարու զաւակը գետը նետել թեթեւնալու և գէթ մանկիկին հոգէն ազատելու համար, սակայն տեղական իշխանութիւնը լսելով այս պարագան, պատերազմական ատեանի առջեւ քաշած է այդ կինը և յետ դատավարութեան զայն դատապարտած է հինգ տարի բանտարկութեան, իբր իր հարազատը խեղդող:*

Սինիքութեան այս աստիճանը կարելի է սպասել միմիայն թուրք իշխանութիւններէն»[1]:

Պակաս ողբերգությամբ չավարտվեց *Կիրասոնի* հայության ճակատագիրը: Այստեղից տեղահանությունն սկսվեց 1915 թ. հունիսի կեսերին և բռնագաղթի ճանապարհ բռնեցին 1300-ից քիչ ավել հայեր: Առաջին շաբաթում, թուրքերը քարավանից անջատելով 30 ծեր կանանց, որպես «դժվարաշարժ բեռ», սպանեցին լեռան եզրին: Երկրորդ շաբաթում, իրենց ընտանիքներից բաժանելով, կոտորեցին հաջորդ 300 տղամարդկանց:

Եվ այսպես, աստիճանաբար «մաշելով» գաղթականների քարավանը, երբ հասնում են *Գայա* գետին, հանկարծակի վրա են տալիս քուրդ թալանչիները, տարագրվողներին արգելում են կամուրջով անցնելը: Հյուծված, սովատանջ, հոգնած հայ գաղթականները, հարկադրված մտնում են վարարուն գետը: Ջրի կոհակները խեղդամահ անելով ծերերին և երեխաներին, մի տեսակ «փոքրացնում են» քայլողների թիվը: Բարբարոս քրդերը, գետի մյուս ափին կանգնած, ջոկում են գեղեցիկ կանանց և աղջիկներին, պատվազրկում, ապա նետում ջուրը: Ձավեշտական է, որ որոշ տարագրյալների տանում են *մեղվանոց, մեղուներին թողնելով նրանց վրա, զվարճության միջոց են դարձնում:*

Մարդկային միտքը մի՞թե կարող է ենթադրել, եթե մարդկային է, և ոչ գազանային, երբ կիրասոնցի *Սարը Մահմուտ զադե էշրեֆը,* իր եղբայր Հասանը, ոստիկանության հրամանատար *Քեմալը* և հազարապետ *Ֆահիդը. «Կիներու արգանդ բացած են հոն ոսկի և գոհարեղեն փնտռելու համար»*[2]*:* Եվ այդ ժողովուրդն այսօր քաղաքակիրթ է համարվում, եվրախորհրդարան է ուզում թափանցել, ամոթից չմեռնելով նման նախորդներ ունենալու, գոնե նրանց գործած հանցագործությունների համար ներողություն չխնդրելու պարտավորությամբ:

Կիրասոնցի գաղթագնացները, խառնվելով մյուսներին, բյուրավոր զոհեր տալով, աստանդականի ցուպը ձեռքներին, դեռևս դիմակայում էին, դեռևս քայլում էին. «Քսանհինգերորդ օրը, կոտորակուած կարաւանը Գուրաչայ քաղաքը հասնելուն, անկէ քառորդ ժամ հեռու, դաշտին մէջ, բիւրաւոր հայ դիակներ տեսած է: Այդ դաշտէն քանի մը ժամ հեռու, կառավարիչը Կիրասոնցի 500 տարագիրներու վրայ հրազէն պայթեցուցած է և հազիւ 30-40 հոգի ազատած են. կարաւանը սակայն շատ աւելի ահարկու տեսարանի մը ականատես եղած է, երբ հասած է Տէմիր Մաղարա ըսուած տեղը, որ կոչուած էր Էրմէնի Սալախանէսի: Հոս է որ ամէնէն աւելի սպաննուած են Տրապիզոնցիները և Էրզրումցիները: Եփրատ գետին առաջին կամուրջը հասած ատեննին, դռնապանը դրամ ուզած է դիակ դարձած Կիրասոնցի կարաւաններէն. 25 տարու երիտասարդ մը մերժած ըլլալուն համար գետը նետած է:

Խեղճ Կիրասոնցիները, իրենց ճամբայ ելած թուականէն 36 օր վերջ հասած են Ակն, ուրտեղի որբանոցներէն մէկուն մէջ զետեղուած 500 որբերու թունաւորման և եփրատ նետուելուն ականատես եղած են. ասով մէկտեղ Կիրասոնցիներէն եւս իրենց աքսորավայրը տեսնելու բախտին արժանացողներ գտնուած են: Կիրասոնի, Ֆաթսայի, Օրտուի Հայերը գրեթէ ճիշտ նոյն պայմաններուն տակ բնաջինջ եղած են: Դժբախտաբար Տրապիզոն նահանգը, ամբողջութեամբ առնելով, հազիւ թէ նոյն տեղացիներէն 1-2000 հոգի կրցած են ողջ մնալ: *Սակայն ինչ որ մխիթարական է, այս սարսափներուն մէջ գտնուած է հերոսներու խումբ մը, որ լեռ բարձրանալով բաւական վրէժ լուծած է թուրքերէն, մինչեւ Ռուսերու Տրապիզոն մուտքը»*[3]*:*

---

[1] *Մ[եպուհ] Ակունի,* Սիլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը. Կ. Պոլիս, 1921, էջ 179-182:

[2] Նույն տեղում, էջ 182-183:

[3] Նույն տեղում, էջ 184:

Մեծ եղեռնի կեսդարյա սգո արարողությունը առավել տպավորիչ, իրողության պատմությունը փաստառատ դարձնելու մտահոգությամբ, հոբելյանական հայրենանվեր հանձնաժողովը թարգմանաբար հրատարակել է օտար հեղինակների մի շարք այնպիսի աշխատություններ, որոնք սակավ են ծանոթ հայ ընթերցողին: Դրանց շարքում առանձնակի տեղ է գրավում գերմանացի միսիոներ, ժամանակակից, ականատես Անտոն Նելիքմանը: Հայոց ցեղասպանությանը վերաբերող փաստառատ, սրտաճմլիկ վկայություններ պարունակող այդ աշխատությունը «Հայաստանը 1915-1965 առաջին ցեղասպանության հիսնամյակը» վերտառությամբ թարգմանել է *Սեդրակ Ջավենը:*

Ծավալով ոչ մեծ, բայց փաստերով տպավորիչ ու ցնցող այդ աշխատությունից առանձնացնենք և ընթերցողի ուշադրությանը ներկայացնենք *Տրապիզոնի նահանգի,* հատկապես կենտրոնի հայ գաղթականների բռնագաղթեցման պրոցեսը արտացոլող մի քանի փաստեր, որոնց ընթերցումը նույնիսկ շուրջ 90-ամյա հեռավորությամբ, այսօր էլ աներևակայելի է, անտանելի:

Անտոն Նելիքմանը պատմում է. *«Բիւրավոր կոյսեր, կիներ ու մանուկներ յափշտակուելով՝ թուրք կանանոցներն ու քիւրտ գիւղերը տարուեցան, ուր լլկուեցան ու բռնութեամբ իսլամացուեցան»:*

Ուրիշ էջի մը մէջ կը կարդանք. *«Հիւսիսէն եկող կարաւաններէն միայն տասը տարեկանէն վար մանուկներ, պառաւներ, հիւանդներ եւ ծերեր կը մնային, որոնք հարաւային ճամբաները կը հասնէին: Չափահասներն ու պատանիները սպանուած կ'ըլլային, աղջիկները, մանկամարդ կիներն ու անհամար մանուկները փախցուած: Կը մնային միայն անօգնական, թշուառութեան մատնուած մուրացիկ խլեակներ, որոնք Միջագետքի անապատներուն ու ճահճախուտ վայրերուն մէջ, անսուաղութեան եւ հիւանդութեան հետեւանքով, ստոյգ մահուան դատապարտուած էին:*

Տրապիզոնէն երկու ժամ հեռու գտնուող լուսաւորչական և կաթողիկէ հայերէ բնակուած *Թոզի* գիւղի մասին հետեւեալը կը պատմէ ականատես մը: «Պօղոս Սարեան անունով ունեւոր և ազդեցիկ մարդ մը և իր երկու որդիները մեռցուեցան... Ջանոնք իրարու ետեւ կանգնեցուցին և հրացանազարկ ըրին: 45 տղամարդիկ և կիներ գիւղին մօտերը գտնուող ծոր մը տարուեցան: Կիները, սպառազէն ոստիկաններու կողմէ բռնաբարուելէ ետք, ոստիկաններուն տրամադրուեցան: Տղեկի մը գլուխը ժայռին զարնելով ջախջախեցին»:

Տրապիզոնի դէպքերուն ականատես եւրոպացի բարձրաստիճան անձնաւորութեան մը հետեւեալ վկայութիւնը կ'ուզենք պատմել.

«Կանոնաւոր կոտորած մը, անմեղ մանուկներու ջարդ մըն էր», կարելի չէ նկարագրել պատահածը: Պատմութեան մէկ մռայլ էջը, մարդկութեան, քրիստոնեութեան, ազգերու սրբազնագոյն իրաւանց ահռելի բռնաբարումը. Հայոց ջարդերու և հալածանքներու սկզբնաւորութեան, կաթոլիկ հայերուն խնայուեցաւ. այս անգամ սակայն անոնք ալ նոյն բախտին արժանացան ու ասիկա կեդրոնական կառավարութեան հրահանգին վրայ: Տրապիզոնի մէջ կային 14000 հայեր, լուսաւորչական, կաթոլիկ և բողոքական: Ոչ մէկ յանցանք գործած էին, ոչ մէկ խռովութիւն յարուցած... Երբ Տրապիզոնէն մեկնեցայ՝ հարիւր հոգի իսկ ողջ մնացած չէին:

«Հիւպատոսարանի դրան, սենեակիս պատուհանին առջեւէն անցնող տարագիր հայերուն անվերջ շարքերուն երթը երբեք չեմ կրնար մոռնալ: Օգնութեան կանչերուն ոչ ոք կրնար պատասխանել, ոչ ես և ոչ ուրիշ մը, քաղաքը, 15000 սպառազէն զինուորներու, հազարաւոր ոստիկաններու, այսպէս կոչուած «կամաւոր» հրոսակներու և Իթթիհատ վէ Թերրագը (Միութիւն և Յառաջադիմութիւն) կուսակցութեան անդամներուն հսկողութեան տակ, պաշարման ենթարկուած էր: Լացուկոծ, աղիողորմ

կանչեր, օգնութիւն հայցող սրտաճմլիկ աղաղակներ, շատեր մեռան իրենց սարսափէն, ուրիշներ խելագարուեցան... Մահասփիւռ անվերջ հրացանաձգութիւն, քաղաքին մէջ և դուրսը տուներու խուզարկութիւն: Տարագրութեան ճամբաներուն վրայ ամէն օր հարիւրաւոր դիակներ... քրիստոնեաներուն պատկանող դպրոցներէն ու ընտանիքներէն մանուկները բռնութեամբ կը յափշտակուէին. ոմանք իսլամացուելու համար թուրք ընտանիքներու յանձնուեցան. մնացեալները նաւերով Սեւ ծովուն բացերը տարին և ծովը թափեցին:

«Տրապիզոնի մէջ վերջին տեսածներս ասոնք են. այս տեսարանները միշտ պարզուած կը տեսնեմ աչքերուս առջեւ. այնպէս կը կարծեմ, թէ անպատճառ պէտք է խելագարիմ: Ամբողջ ամիս մը ասանկ քստմնեցուցիչ տեսարաններու, մարդկային անվերջ ու սրտաճմլիկ տանջանքներու ականատես եղող մէկը երբեք չի կրնար ըմբռնել, թէ նման վայրագութիւններ ինչպէ՞ս անխղճորեն տեղի ունեցան, մէկ հարց միայն կրնայ տալ, թէ աշխարհիս բոլոր մարդակերներն ու վայրի գազանները... Պոլի՞ս ժամադրուած էին արդեօք: Իմ տեղեկագիրս կը վերջացնեմ, յայտարարելով թէ, Թուրքիոյ պատմութեան այս մռայլ էջը... ամբողջ Քրիստոնեութիւնը վրէժխնդրութեան կոչի կը հրաւիրէ:

Եթէ այսօր տակաւին չէզոք մնացած քրիստոնեայ պետութիւնները իմ գիտցածներս իմանային, ինչ որ աչքերովս տեսայ, ականջներովս լսեցի, բոլորն ալ Թուրքիոյ դէմ պիտի ծառանային և անէծքով խարանէին անոր ոճրագործ կառավարութիւնը. «Միութիւն և Յառաջադիմութիւն» կոչուած անոր արիւնարբու կուսակցութիւնը և Թուրքիոյ զինակիցները, որոնք այս ահռելի բաներուն աչք գոցեցին, մեղսակից պէտք է համարեն... Ամո՜թ իրենց:

Տրապիզոնի մէջ կարելի չեղաւ մանուկները փրկել: «Անոնք (մանուկները) Տրապիզոնի դպրոցներուն և որբանոցներուն մէջ տեղաւորուեցան, յոյն արքեպիսկոպոսի մը կողմէ կազմուած յանձնախումբի մը հսկողութեան ու հոգածութեան յանձնուած... *Նախ փոքրիկ աղջիկները իսլամ ընտանիքներու մէջ ցրուեցան... Ամենէն գեղեցիկ ու մեծկակ աղջիկները, որոնք որբանոցներու մէջ իբրեւ օգնականուհի վար դրուած էին, փոխադրուեցան կարգ մը տուներ, քաղաքին իբր թէ կարգապահութեան հսկող քլիթի անդամներուն անասնական կիրքերուն յագուրդ տալու համար...*

1000 է աւելի հայկական բնակարաններ, իրարու ետեւէ բռնագրաւուեցան: Բոլոր կահ կարասիները, մահիճները և արժէքաւոր առարկաները քաղաքին մեծ չէնքերուն մէջ պահ դրուեցան... Առանց որևէ ցուցակագրութեան խառնիխուռն իրարու վրայ դիզուեցան: Թուրք կիներու և մանուկներու խումբ մը, անգղներու երամի մը պէս, քայլ առ քայլ կը հետեւէր ոստիկանութեան, որ ուզածը յափըշտակէին... Գերման հիւպատոսը ինծի ըսաւ, թէ ինք չէր կարծեր, որ հայերուն պիտի արտօնուէր անգամ մըն ալ Տրապիզոն վերադառնալ պատերազմը լրանալէն ետք ալ»:

Այս դժբախտ երկրին բոլոր կէտերուն մէջ նման դէպքեր պատահեցան. ականատեսներուն պատմածները միշտ նոյնն էին, միայն թէ թիւերը երթալով աւելի կը բարձրանային արեւելեան մարզին մէջ, ուր հայերը ազգաբնակչութեան յարաբերական կամ բացարձակ մեծամասնութիւնը կը կազմէին: *Կարնոյ և Սեբաստիոյ* տեղահանութեանց մասին սարսափելի բաներ կը պատմուին... Ինչ որ հոս պատահեցաւ, ընդհանուր պատասխան մը կու տայ այն հարցումին, թէ հայերուն հալածանքը արդեօք Քրիստոնէութեան հալածանքը չէ՞ր»[1]:

Այսպիսով չափազանց դառը ճակատագիր վիճակվեց Տրապիզոնի վիլայեթի հայ բնակչությանը: Շուրջ *60 հազար հայությունից* հրաշքով փրկվեցին 600 ինքնա-

[1] *Յոհաննես Լեփսիուս*, Հայկական ջարդերը, էջ 375-377:

պաշտպաններ, որոնք բարձրանալով լեռները, անհավասար մարտեր մղեցին իսլամ հազարավոր բորենիների դեմ, դրանով իսկ ոչ միայն պաշտպանեցին իրենց կյանքը, այլև հերոսանալով, ապացուցեցին, որ հայը միայն մեռնելու չէ որ գնում է, այլ նա նաև խիզախել գիտե, պաշտպանվել կարող է: Նրանք մնացին հայոց պատմության մեջ, հետադարձ հայացքով հիշեցնելով, որ եթե իրենց օրինակին շատերը հետևեին, շատերը կփրկվեին:

1916 թ. փետրվարի 18-ին ռուսական բանակը մտավ Տրապիզոն և հայերի փրկված բեկորներն ազատագրելով՝ տեղափոխեց կայսրության հարավային շրջանները:

Ը. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ. ՋԵՅԹՈՒՆ

1914 թ. օգոստոսի 1-ին երկու խմբավորման բաժանված, արևմտյան տերությունները շղթայազերծ եղան, և պայթեց Առաջին համաշխարհային պատերազմը: Հոկտեմբերի 20-ին (նոյեմբերի 2-ին) Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային, և դրանով իսկ իթթիհատի համար հնարավորություն ստեղծվեց ձեռնարկել հայասպանություն կազմակերպել և՛ Արևմտյան, և՛ Կիլիկյան Հայաստանում:

Համաշխարհային պատերազմի մեջ մտնելով՝ օսմանյան կայսրությունը բացահայտում էր իր պանթուրքական նպատակները: *«Մեր մասնակցությունը համաշխարհային պատերազմին,- ասված է երիտթուրքական կառավարության կոչում,- արդարացվում է մեր ազգային իդեալով: Մեր ազգի իդեալն առաջնորդում է մեզ դեպի մեր մոսկովյան թշնամու ոչնչացումը, որպեսզի դրա հետևանքով ստեղծվեն մեր կայսրության բնական սահմանները, որոնք իրենց կազմում կունենան և կմիավորեն մեր ռասայի բոլոր ճյուղավորումները»*[1]:

Թուրքիայի համար պատերազմի գլխավոր բեմահարթակ դարձավ Կովկասյան ռազմաճակատը, որտեղ ռազմական նախարար *Էնվեր* փաշայի գլխավորած 300 հազարանոց բանակը ձգտում էր օր առաջ հաղթանակներ տանել ռուսների և հայ կամավորների դեմ, լուծել արտաքին խնդիրները, որպեսզի դրանով արագացներ *հայերի ցեղասպանության վաղամտածված ծրագրերի կենսագործումը:* Կարճ: Թուրքական բանակը առաջին իսկ ամիսներին հաջողության չհասավ: Հաջորդ տարվա ձմռանը խայտառակ պարտության մատնվեց թուրքական «փառաբանված» բանակը: Տանուլ տալով Սարիղամիշի մարտերը գլխավոր հրամանատարը 1915 թ. հունվարի 14-ին գաղտագողի լքեց ռազմաճակատը՝ զորքերի ղեկավարությունը հանձնելով *Հաֆիզ Հաքը բեյին:* Այդ պրոցեսն առավել գազազացրեց երիտթուրքական եռապետներին ամբողջ պարտության մեղքը գցելով հայ ժողովրդի վրա, *անմիջապես սկսեցին զանգվածային կոտորածները Հայաստանում և մայրաքաղաքում:*

Ծայր առավ Մեծ եղեռնը: Սովորաբար այդ մեծ ողբերգության սկիզբը թվագրվում է *1915 թ. ապրիլի 24-ը,* այսինքն՝ Կ. Պոլսի հայ մտավորականության ձերբակալումն ու բռնագաղթը: Դրա հետ են թուրքերը կապում եղելության պատճառներն ու հետևանքները, ամեն կերպ ջանում արդարանալու ճեղքեր որոնել: Նման սխալ, չհիմնավորված, սարքովի հորինվածքի բացահայտումը մենք հանգամանորեն կատարել ենք մեր մենագրության բազմաթիվ բաժիններում: Այստեղ նշենք ևս մեկը:

Երիտթուրքերը հայերի ցեղասպանությունը սկսել էին ոչ թե 1915 թ. ապրիլի 24-ին, այլ դրանից ավելի վաղ, շատ վաղ, այսինքն՝ նախքան պատերազմն ու կամավորա-

[1] ЦГВИАРИ, фонд 2000, опись 1, дело 752, лл. 343-346:

կան շարժման ծավալումը, հետևաբար և կրած պարտությունները Կովկասյան ռազմաճակատում: Այստեղ և այս առիթով արժե անդրադառնալ վիճահարույց մի խնդրի ևս, դրանով իսկ պատասխանելով ոչ միայն թուրք, այլև որոշ այլազգի, նույնիսկ հատ ու կենտ հայ պատմաբանների: Դա պատերազմի պարագան է:

Բավական ստվար է այն «պատմաբանների» թիվը, որոնց կարծիքով Հայոց եղեռնի պատճառը Առաջին աշխարհամարտն էր: Նույնիսկ կան մակերեսային, սաղրավուն հետազոտողներ, որոնց կարծիքով, եթե չբռնվեր աշխարհամարտը, ապա չէր լինի և ցեղասպանությունը: Այդ շուտասելուկը հիմնավորում են նրանով, որ էնվերի բանակի ջախջախումից և հայկական կամավորական ջոկատների ակտիվ գործողություններից գազազած երիտթուրքերը սկսեցին ջարդել արևմտահայությանը:

Ո՛չ և միանգամայն ո՛չ:

Թուրքիայում ցեղասպանությունը ծրագրվել էր վաղուց, սկսել էր կիրառվել 1890, հատկապես 1894-1896 թվականներին և երիտթուրքերի անդրանիկ քայլը հանդիսացող *Ադանայի* կոտորածով (1909):

Մեծ եղեռնը, այո՛, գործադրվեց պատերազմի նախաշեմին, սակայն ոչ 1915 թ. ապրիլ ամսին: Դեռևս 1914 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, այսինքն աշխարհամարտին Թուրքիայի մասնակցությունից առաջ, երիտթուրքերը սկսեցին իրենց սև գործը, որը զարգացրեցին հետագա 4 տարիների ընթացքում:

Մեծ եղեռնի 1914 թ. կեսերին սկսելու փաստական վավերացումն է կիլիկիահայ հոծ բազմության, հատկապես հայ ազատամարտի կեսհազարամյա պատմության *դափնեպսակակիր* արծվաբնի ***Զեյթունի ողբերգական ճակատագիրը:***

Խնդիրը ներկայացնենք Կիլիկիայի ընդհանուր պատմության աղերսների մեջ:

Ադանայի նշանավոր գրագետ Բյուզանդ Եղիայանը գրում է. «Աշխարհագրականօրէն, Կիլիկիան կը տարածուի Միջերկրական Ծովու արեւելեան եզերքին, Միջօրէականի գիծէն դէպի արեւելք 31-35 երկայնութեան եւ այրեցեալ գօտիէն դէպի հիւսիս 36-38 լայնութեան աստիճաններու վրայ: Անոր ընդհանուր հողային տարածութիւնը հայկական թագաւորութեան Լեւոն Մեծագործի շրջանին հասած է մօտ 45000 քառակ. քիլոմեթր տարածութեան, մօտաւորապէս Արդի Հայաստանի *մէկուկէս տարածութեամբ, կամ ներկայ Զուիցերիայէն* քիչ *մ"աւելի, կամ ներկա Լիբանանի չորս անգամը, միանգամայն իշխելով Միջերկրականի արեւելեան ջուրերուն, եւ այդ հանգամանքով նաեւ մօտակայ Կիպրոս կղզիին:* Հեթումեանց շրջանին այս տարածութիւնը հասած է 52000 քառակուսի քիլոմեթրի, ԺԳ. - ԺԴ. դարերու կամարին:

Կիլիկեան աշխարհի սահմանները որոշուած են ու պաշտպանուած բնութեան շնորհած ծովային եւ լեռնային պարիսպներով»[1]:

XX դարամուտին Հայկական Կիլիկիան վարչականորեն տրոհված էր *Ադանայի,* մասամբ նաև *Հալեբի* վիլայեթների: Ադանայի փաշայությունը, համանուն կենտրոնով, բաղկացած էր հինգ սանջակներից, դրանք էին *Ադանան, Մերսինը, Զեբելի-Բերեքեթը. Գոզան-Սիսը և Իչիլը:* Այն ընդհանուր տարածքով կազմում էր շուրջ 40 հազար քառ. կմ[2]:

Նահանգի բնակչության մասին մնացել են ամենատարբեր տվյալներ: Բերենք դրանցից առավել արժանահավատները: 1912 թ. Պոլսում լույս տեսնող *«Արևելյան տարեցույցը»* հրապարակում է հետևյալ հաշվարկները.

---

[1] Խմբագրեց *Բիւզանդ Եղիայան,* Ատանայի Հայոց պատմություն. Սնթիլիաս-Լիբանան. 1970. էջ 5:

[2] Նույն տեղում. էջ 140:

	Սանջակ	Կազա	Նահիէ	Բնակչութիւն	
				Մահմեդական	Քրիստոնեայ
1	ԱԴԱՆԱ	3	7	60 000	50 000
2	ՄԵՐՍԻՆ	1	3	20 000	50 000
3	ՋԵԲԵԼ-ԲԵՐԵՔԵԹ	6	4	45 000	15 000
4	ԳՈՋԱՆ-ՍԻՍ	4	4	20 000	50 000
5	ԻՉԻԼ	5	7	40 000	50 000
	Գումարներ	19	25	185 000	215 000
	Ընդհ. բնկչք.			400 000[1]	

Բազմաթիվ այլ աղբյուրները, ժամանակակիցների հաշվարկները ևս, նահանգի ընդհանուր բնակչության թիվը արծանագրում են 400-410 հազար, որից ***հայերը*** կազմում էին շուրջ ***200 հազար.*** 10-15 հազար էլ հաշվարկվում են հույները, ասորիները, փոքրաքանակ ղպտիները: Հետևաբար, համեմատաբար կայուն տնտեսություն ունեցող Ադանայի վիլայեթը հայկական էր իր անցյալով, հարուստ մշակույթով և այդ պահին գործող մշակութային ամենատարբեր ընկերություններով, թուրքերին գերազանցող հայ ազգաբնակչությամբ:

Այդ վիճակագրությունից քիչ ինչ տարբեր են ***Գրիգոր Գուտուլյանի*** հրապարակած մարդաքանակը ըստ կրոնական պատկանելության ու ազգության:

Գրիգոր Գալուստյանն իր փաստառատ մենագրության տողատակում, վերահաստատում է վերևում հիշված վիճակագրական տվյալները, սակայն այս դեպքում ավելի մանրամասն և թերևս ավելի համոզիչ: Նա բերում է. «Ուսուցիչ Գր. Գ. Գուտուլեան 1922-ին հրատարակած ***Կիլիկեան Աշխարհագրութեան*** Տարրական Դասընթացքին Միջին Ա. Բ. Գիրքերուն մէջ Կիլիկիոյ ընդհանուր բնակչութեան թիւը կը ներկայացնէ 414000, որուն 216000 Քրիստոնեայ եւ 198000 Իսլամ: Քրիստոնեաներէն 200000 հայ, 10000 յոյն, 1000 սուրիացի, 1500 մարոնիդ, 3000 ասորի, 500 եւրոպացի: Իսկ մահմետական կամ ուրիշ կրօններէն 90000 թուրք, 32000 անսարի, 25000 քիւրտ, 10000 չէրքէզ, 2000 նողայ, 3000 տաղիսթանցի, 2000 կրէտացի, 5000 ռումէլիցի, 15000 գըզըլպաշներ, 8000 ֆարսագներ, 5000 իսլամ արաբ և 1000 եհուրիւքներ»[2]:

Պատմական, Կիլիկյան Հայաստանի տարածքը և հոծ հայ բնակչությունը Ադանայի վիլայեթով չէր սահմանափակվում: Երկրամասի մի քանի կարևոր գավառներ թուրքերն անջատել էին Ադանայի վիլայեթից և մտցրել Հալեպի փաշայության կազմում:

Պատերազմի սկզբում Հալեպի ծավալուն նահանգը բաժանված էր երեք սանջակի: Դրանք էին ***Հալեպը, Ուրֆան և Մարաշը:*** Ամբողջովին և՛ հայկական էր, և՛ հայաբնակ Մարաշի սանջակը, որն իր հերթին բաժանվում էր ***Մարաշի, Զեյթունի, Ալպիսթանի, Անտըրթընի և Բազարճըգի*** նահիեների (գավառակներ)[3]:

Պահպանվել են հայ բնակչության թվաքանակին վերաբերող բազմաթիվ տվյալներ: Գերադասելով Մաղաքիա Օրմանյանի հմտությունն ու տվյալների արժանահավատությունը, մեջբերենք դրանք ողջ Կիլիկիայի և հատկապես Հալեպի վիլայեթի հայության վերաբերյալ:

[1] «Արևելյան տարեցույց», Կ. Պոլիս, 1912, էջ 35-40:
[2] ***Գր. Հ. Գալուստյան*** (Կիլիկեցի). Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու Յորք, 1934, էջ 15:
[3] Նույն տեղում, էջ 30-31:

Գր. Գալուստյանը վկայակոչելով նախկին պատրիարքի 1912 թ. հրապարակած թվերը, գրում է. «Սրբազան վիճակագրին հաշիւով Կիլիկիոյ կաթողիկոսական Աթոռին իրաւասութեան շրջանակին մէջ առաքելական, կաթոլիկ եւ բողոքական Հայերու թիւը կ'ըլլայ 312200, որմէ 74000ը Ատանայի նահանգին մէջ: Իսկ Հալէպի նահանգին, այսինքն Հալէպի, Մարաշի, Զէյթունի, Ֆռնուզի, Այնթապի, Անտիոքի եւ շրջանակներուն Հայերուն թիւն էր 138000 եւ Մելիտինէի, Եօզղատի, Կիւրիւնի, Տիվրիկի եւ Տարէնտէի շրջանին Հայերու թիւն ալ 100,800: «Արաքս»ի *Կիլիկիան* 1890ին Հալէպի նահանգին մէջ ցրուած հայութեան թիւը կը դնէ շուրջ 98000, որուն 70000ը Սիսուանեան սահմաններուն մէջ:

Միւս կողմէ հանգուցեալ Ա. Պիպէոճեանի 1914-ին հրատարակած Գրպանի Ատլասին վիճակագրութեան համաձայն Հալէպի նահանգին տարածութիւնն էր *70000 քառ. հազարամեդր եւ բնակչութիւնը՝ 850000* (քառ. հազարամեդրի վրայ 12 անձ): Այս թիւէն, Օրմանեան Արքեպիս.ի վիճակագրութեան համաձայն, 138000ը հայ էր: Բնականաբար, կային նաեւ արաբախօս քրիստոնեաներ, մանաւանդ Հալէպի սուրիական հողամասերուն մէջ:

Ինչպէս ըսինք, այս թիւերը կը պատկանին տարագրութենէ առաջուան շրջանին: Յայտնի է, թե հայկական բնաջնջումի ահաւոր եւ աննախընթաց ծրագիրը քայքայեց ամէն ինչ: Այսօր Կիլիկիոյ հայութիւնը ամբողջ Ատանայի նահանգին եւ Մարաշի գաւառին մէջ հազիւ քանի մը հարիւր ծերերէ, անկարներէ ու հացակարօտ աղքատներէ կը բաղկանայ: Այդպէսով արդէն փակուած է Կիլիկիոյ հայության հաշիվը»[1]:

Այսպիսով Հայկական Կիլիկիայի 46 հազար քառ. հազարամետրից 52-ի ծգվող տարածքի վրա ապրող հայ բնակչության թիվը հասնում էր շուրջ *երեք հարյուր հազարի:* Սակայն խնդիրը միայն հայության ստվար այդ զանգվածի մեջ չէր:

Սուլթան Աբդուլ Համիդից սկսած, իր դաժանությամբ նրան գերազանցող Մուստաֆա Քեմալով վերջացրած, թուրք պետական բոլոր այրերը երկնչում էին Կիլիկիայից ու այնտեղ խարսխված լեռնահամայնքներից: Նրանք ամեն ժամ մտածում էին, թե կիլիկիահայերը կարող են ապստամբել և վերականգնել իրենց նախկին թագավորությունը:

Թուրքերի հիշողության մեջ դեռևս թարմ էին քաջակորով զեյթունցիների ազատամարտերը, փոքրաքանակ հերոսների սխրանքները մեծաքանակ ասկյարների դեմ, առաջինների հաղթանակներն ու կիսանկախության, համարյա անկախության, պաշտպանությունը: Պակաս երկնչանքի սաստեր չէին տարածում *Հաճընն ու Ուրֆան, Մարաշն ու Ալբիստանը:* Ահա տվյալ պարագան երիտթուրքերին մտածել տվեց, թե որպեսզի կարողանան «անխաթար» իրողության վերածել հայասպանության իրենց ծրագրերը, *անհրաժեշտ էր դրանք սկսել Կիլիկիայից, հատկապես Զեյթունից:*

Հայոց ցեղասպանությունից հրաշքով փրկված *Գրիգորիս* վարդ. *Պալաքյանը* երկհատորանոց իր աշխատության էջերում *անփոխարինելի* շարադրանք է հրապարակել Զեյթունի բնակչության տեղահանության վերաբերյալ[2]: Քանի որ այդ ողբերգության համար երբեմն խիստ քննադատական խոսքեր են հնչել մեր պատմագրության էջերում, երբեմն ուղղակի մեղադրանք են շպրտվել *Կիլիկիայի Սահակ Խապայան* կաթողիկոսի, Կ. Պոլսի *Զավեն Եղիայանի* երեսին, ուստի քիչ ավելի ընդարձակ խոսք տանք, ծանր ճանապարհ անցած, հայրենանվեր այդ հոգևորակա-

[1] *Գր. Գալուստյան,* նշված աշխատությունը, էջ 31-32:

[2] *Գրիգորիս ծ. վարդ. Պալաքեան,* Հայ գողգոթան. Դրվագներ հայ մարտիրոսագրութենեն. Պեռլինեն դեպի Զոր. 1914-1920. Ա հատոր, գլուխ «Առաջին գուժկանը *Կիլիկիային, գաղտնի պատգամավոր»:* Բ տպագրություն. Պեյրութ. 1977. էջ 100-101:

նին, մեջբերենք նրա գրածի մեծ մասը *դատավորի դերը վերապահելով անկողմնակալ ընթերցողին:*

Գր. Պալաքյանը նույնպես զայրացած է թուրք պատմաբանների *այն կեղծիքից,* որի համաձայն, իբր թե, հայերն ապստամբեցին, հատկապես Վանում, դրա համար էլ եղավ «տեղահանություն», այո՛, «իբր գաղթ» և ոչ ժողովրդի բնաջնջում: Նա փաստեր է հրապարակում, որ հայկական ողբերգության պատճառը ոչ թե հայերի ընդդիմությունն էր, այլ ընդհակառակը նրանց պասիվությունը, հոգևոր և աշխարհիկ վերնախավի «հորդորներով» ձեռնարձակ ենթարկվելը, *զինաթափվելը, կամավոր աքսորի ճանապարհ բռնելը: Այլապես անհասկանալի, անհավատալի կմնար Զեյթունի գողգոթան, կես հազարամյակ սավառնող արծվի գաղթի ճանապարհ բռնելն ու հիմնովին ոչնչանալը:*

Այս բոլորի պատճառները հասկանալու համար խոսք տանք Գր. Պալաքյանին, որն այս դեպքում և՛ մեղադրող դատախազ է, և Քրիստոսի մարտիրոսագրված տուժող: Նա այդ բոլորի մասին սկսում է. «Ահա թե ինչպես: Ատանայի մէջ թուրք բարձր պաշտօնատար մը, վաղնջական մտերիմ բարեկամութիւն ունենալով Ատանա քաղաքին մէջ պաշտօնական դիրք ունեցող եւ տեղւոյն եւրոպական շրջանակներուն մօտ յարգանք եւ ազդեցութիւն վայելող մեծահարուստ հայու մը հետ, 1915 Փետրուարի սկիզբը օր մը իր մօտ հրաւիրելով կ'ըսէ խոստովանաբար «Հայոցդ գլխուն կրկին նոր փոթորիկ պիտի պայթի, որը պիտի գերազանցէ ցարդ բոլոր պատահածները, գիտես որ ես քեզ կը սիրեմ, նայէ որ գլուխդ ազատես...»: Հայ վաճառականը երբ կը հարցնէ սարսափած թէ «ի՞նչ կրնամ ընել ազատելու համար», թուրք պաշտօնատարը կը պատասխանէ լակոնական ձեւով մը «Մէրսին գնա՛ եւ շոգենաւ նստելով Եւրոպա փախիր... հարստութիւնս ազատեմ՛ ըսելով ժամանակ մի կորսնցընէր, նայէ յետոյ կը զղջաս...»:

Անակնկալ կերպով յոյժ երկիւղալի լուրի մը առթած բնական հետաքրքրութեամբ մը, երբ հայը սարսափած առ այս մանրամասնութիւններ կը խնդրէ, սրտմաշուք պնդումներէ վերջ թուրք պաշտօնատարը երդուընցնելէ յետոյ հայը իր զաւակացը վրայ այսչափ միայն կ'ըսէ «Զէյթունի, Հաճընի, Տօրթեօլի ինչպէս նաեւ Ատանայի ամբողջ հայերը տեղահան պիտի ըլլան եւ հարստութիւննին պիտի գրաւուի, նոյն իսկ ձեր կիներն ու աղջիկները ձեզի չի պիտի մնան..., ես քիչ կ'ըսեմ, դուն շատ հասկցիր. դուն գլխուդ ճարը նայէ եւ սա տեղէն ժամ առաջ հեռացիր, որպէսզի գալիք փոթորկին մէջ դուն ալ չի խեղդուիս...»:

Հայ վաճառականը չափազանց վրդոված, կ'աճապարէ մեկնումի պատրաստութիւններ տեսնել, բայց նախքան մեկնումը կ'երթայ պատմել ահաւոր այս իրողութիւնը Կիլիկիոյ սրբազան կաթողիկոսին:

Ասկէ քանի մը օր վերջ, անկարելին ի գործ դնելով եւ օգտուելով Ատանայի կուսակալին հետ իր ունեցած մտերիմ բարեկամութենէն, բացառաբար արտօնութիւն կը ստանայ Կիլիկիայէն արտասահման մեկնելու եւ հանդերձ ընտանեօք Մէրսին իջնելով 1915 Փետրուարի կիսուն Իտալական շոգենաւով մը կը մեկնի Եւրոպա:

Կիլիկիոյ ծերունազարդ կաթողիկոսը Սահակ Բ.՝ կարի յուզուած գաղտնաբար իր այս ստացած յոյժ ծանրակշիռ լուրերէն, անքուն գիշերներ կ'անցընէ ջանալով գտնել եղանակ մը, իր ստացած այս բօթաբեր տեղեկութիւնները քննել եւ ստուգել կարողանալու համար:

Այս օրերուն Պոլսէն Ատանա կը վերադառնար, Սուրիոյ եւ Պաղեստինի ռազմաճակատին զինուորական վերին հրամանատար միանգամայն ծովային նախարար Ճէմալ, որուն հետ 1909ի Կիլիկիոյ հայկական կոտորածէն վերջ, Ատանայի կուսակալ եղած օրերէն բարեկամական լաւ յարաբերութիւն ունեցած էր իր բարձր դիրքին բերմամբ:

Ուզելով օգտուիլ այս բացառիկ պատեհութենէն, Կիլիկիոյ դժբախտ կաթողիկոսը

կ'աճապարէ ճեմալի մօտ եւ առանձնակի տեսակցութեան մը մէջ, լրացուցիչ տեղեկութիւններ կը խնդրէ իր վերեւ լսածներու մասին:

Սուրիոյ եւ Պաղեստինի օսմ. բանակի վերին հրամանատար ճեմալ, կը պատասխանէ այսչափ միայն թէ «նախարարական ժողովի այս հարցի մասին ունեցած խորհրդակցութեանց մէջ, շատ աշխատեցայ որ փոխանակ հայ ժողովուրդը ամբողջապէս տեղահան եւ աքսոր ընելու, ամէն քաղաքէ միայն գրչի տէր, մտաւորական ու հայ քաղաքական քոմիդէներու պետերէն 15-20 ական հոգի աքսորել տրուի, ու հասարակ խեղճ ժողովուրդը խնայուի, սակայն կը ցաւիմ ըսել թէ ծայնս լսելի ընել տալ չի կրցայ»:

Ուրիշ կողմնակի բայց վաւերական աղբիւրէ լսած եմ, որ թէ՛ իթթիհատի անպատասխանատու կառավարութեան եւ թէ՛ նախարարական ժողովներու, եւ ամէն այս հարցի մասին տեղի ունեցած գաղտնի խորհրդակցութեանց մէջ, աւելի չափաւոր քաղաքականութեան մը հետեւելու ի նպաստ խօսողներու դէմ ծառացած են միշտ, Հայոց մեծ դահճապետներէն Թալաթ, Պէհաէտտին Շաքիր եւ Տոքթ. Նազըմ:

Կիլիկիոյ խոհազարդ կաթողիկոսը՝ տեսնելով, որ հայ ժողովուրդն ամբողջապէս անմիջական սարսափելի վտանգի մը առջեւ կը գտնուի, եւ չուզելով թերանալ իր բարձր դիրքին պահանջած յոյժ պատասխանատու պարտականութեանը մէջ. ստիպողական կը գտնէ մասնաւոր գաղտնի պատգամաւոր մը փութացընելով Պոլիս, հանուր հայութեան սպառնացող վերահաս ահաւոր այս վտանգին գուժկանը տալ, եւ թելադրել միջոցներ խորհիլ կանխելու համար մեծ վտանգը:

Ս. Կաթողիկոը Մարտ ամսին սկիզբը գիշեր մը իր մօտ հրաւիրելով իրեն յոյժ վստահելի ծանօթ հայրենասէր վաճառական մը, եւ այս վերջինը իրազեկ ընելով հայութեան սպառնացող մեծ վտանգին, կը հրահանգէ անմիջապէս մեկնիլ Պոլիս եւ այս գուժկանը հաղորդել Պոլսոյ Պատրիարքին խոստովանաբար:

Բայց այս օրերուս, ոչ թէ ճամբորդ այլ նամակ ու հեռագիր իսկ Պոլսոյ հետ փոխանակել, կարգ մը գրաքննչական ծեւակերպութեանց, գինուորական ու ոստիկանական կաշկանդումներու ենթակայ էր, ո՞ւր մնաց Հայու մը համար ճամբորդութիւնը:

Այնու ամենայնիւ այս հայ վաճառականը, շնորհիւ իր թուրք պաշտօնեայ բարեկամներուն, հիւանդ ծեւանալով կը յաջողի պատկանեալ պաշտօնատունէն բացառաբար ճամբորդութեան «Վեսիքա» մը ստանալ եւ 1915 Մարտ 2ին մեկնիլ երկաթուղիով դէպի Պոլիս:

Գոնիայի մէջ սակայն թուրք ոստիկանապետը ծեռքէն առնելով «վեսիքան» կ'արգիլէ գինքը մեկնելու Պոլիս:

Սակայն շնորհիւ նոյն պահուն քննչական պաշտօնով Գոնիա գտնուող հայ բարձր պաշտօնէի մը ազդեցիկ միջամտութեան, ճամբորդութեան վեսիքան վերստանալով կը յաջողի շարունակել իր ճամբան եւ անվտանգ հասնիլ Պոլիս:

Մարտ 8ին հասած երեկոյին յաջորդ օրը իսկ, իր պատասխանատու առաքելութեանը պահանջած զգուշաւորութեամբ, կը ներկայանայ Ջաւէն Պատրիարքին եւ յանձնելով կաթողիկոսական այցաքարտը, ուր յիշուած էր միայն թէ յանուն իրեն՝ պէտք եղածը պիտի խօսի բերանացի գրաբերը, խոստովանաբար կը պատմէ այն ամէնը, ինչ որ յանձնարարուած էր իրեն ըսել:

Պատրիարքը՝ նախ չ'ուզեր հաւատալ այսքան ծանրակշիռ լուրերու հաւանականութեան եւ կ'ըսէ թէ «Կիլիկիոյ կաթողիկոսը այս որքան յոռետես անձ է եղեր...»: Ապա Պատրիարքը կը յանձնարարէ իր մեկնումը մէկ երկու օր յետաձգել, մինչեւ որ այս մասին քննութիւն մը կատարելով, կարողանար փոխադարձաբար տեղեկութիւն հաղորդել կաթողիկոսին:

Երբ երկու օր վերջ պատգամաւորը առանձին կը ներկայանայ, Պատրիարքը յանձնելով փոխադարձաբար իր այցաքարտը, կ'ըսէ ի մէջ այլոց «գերման դեսպանը

(Վանկընհայմ) յանուն իր կառավարութեան կը վստահեցընէ մեզ, թէ կոտորած չի պիտի ըլլայ, եւ ո՛չ ալ Հայերը տեղահան պիտի ըլլան: Իսկ ներքին գործոց նախարար Թալաթ փաշայ եւս հաւաստիքներ կու տայ մեզ, թէ հայ ժողովուրդն իր եղած տեղերը հանգիստ ձգելու համար, կարելին ի գործ պիտի դրուի: Բայց միայն յաչս կառավարութեան կասկածելի նկատուածները եւ յանցաւորները պիտի հաւաքուին»:

Այս պատեհութեամբ Պատրիարքը կը յանձնարարէ որ ի մասնաւորի Կիլիկիոյ հայ ժողովուրդը, տեղական կառավարական պաշտօնէից հետ լաւ վարուի, եւ զգուշանայ գրգռիչ ընթացքներէ, միայն զբաղի առօրեայ իր գործերով, եւ հնազանդին պետական հրամաններուն ու հրահանգներուն: Ապա Պատրիարքը կ՛աւելցընէ թէ, կը ցաւի որ ասկէ աւելի բան մը չի գար իր ձեռքէն:

Սակայն պատգամաւորին անձնական տպաւորութիւնը սա կ՛ըլլայ, որ Պատրիարքը պահանջուած լրջութեամբ չառներ մատնանշուած վտանգը, քանի որ Կիլիկիոյ կաթողիկոսին յոռետեսութեան կը վերագրէ այս ամէնը:

Պատգամաւորը այս երկրորդ տեսակցութենէն վերջ կ՛աճապարէ վերադառնալ Ատանա, եւ իր գաղտնի առաքելութեան համարատուութիւնը կը փութայ ընել սրբազան կաթողիկոսին:

Այսպես Կիլիկիոյ կաթողիկոսը գոհ կ՛ըլլայ, որ իր վրայ ծանրացող պարտականութիւնը կատարեց. իսկ Պատրիարքն եւս կը բաւականանայ իր ստացած հաւաստիքները !!! հաղորդելով կաթողիկոսին:

Բայց դժբախտաբար այս յոյժ ծանրակշիռ գուժկանը, գաղտնի կը պահուի մինչեւ վերջը, ոչ մէկը նոյն իսկ ազգին ղեկավար մարդոցմէ ոչ ոք իրազեկ կ՛ըլլայ հայ ժողովուրդի կեանքի եւ մահու բաղդորոշ այս ամենածանրակշիռ իրադարձութիւններուն, մինչեւ որ կը հասնի *1915 Ապրիլ 11ի սարսափի շաբաթ գիշերը:*

Երբ Կոստանդնուպոլսոյ ամբողջ մեր մտաւորականութիւնը, եւ հայ քաղաքական կուսակցութեանց բոլոր ղեկավար պետերը, բոլորովին անգիտակ իրենց գլխուն պայթելիք ահաւոր արեան փոթորկին, մէկ գիշերուան մէջ անակնկալօրէն թակարդը ինկան, եւ ապա աքսորուեցան ու անլուր տանջանքներով նահատակուեցան:

Ամիսներ առաջ նախքան մեր ամէնքի ձերբակալութիւնը, տեղի ունեցած այս բոլոր ծանրակշիռ դէպքերուն միայն իրազեկ եղայ 1922ին Անգլիոյ մէջ հանդիպելով նոյնինքն այս պատգամաւոր Վարդան Փրէնեանին, երբ պատահաբար կրցայ իրազեկ ըլլալ Կիլիկիայէն ղրկուած եւ ամէնքէն ցարդ գաղտնի պահուած այս առաջին գուժկանին բոլոր մանրամասնութեանց:

Ամէնքին ըսինք անոր համար, որովհետեւ ձերբակալուած եւ աքսորուած ըլլալով մայրաքաղաքի ազգային ղեկավար եւ կուսակցական շատ մը պետերու հետ, որոնց մէջ ազգ. կեդր. վարչութեան անդամներ ալ չէին պակսեր, ոչ ոք այս ահաւոր իրադարձութեան մասին որ եւ է տեղեկութիւն ունէր: Չի Կիլիկիայէն Պոլիս գաղտնապէս ղրկուած այս գուժկանի մասին, եթէ մեզմէ մէկն իսկ տեղեկութիւն ունեցած ըլլար, նախ բանտին մէջ, ապա աքսորի ճամբաներուն վրայ, ամէնքն իրար չէին հարցըներ, թէ ի՞նչու կ՛ըլլան այս ամէն ձերբակալութիւնները եւ զգուշական ծայրայեղ միջոցները. ինչպէս աւելի մանրամասնութեամբ եւ փաստացի կերպով պիտի տեսնենք յետագայ արհաւրալից գլուխներուն մէջ եւս»[1]:

Ենթադրում ենք, որ վերոհիշյալ շարադրանքը կբավարարի Կիլիկիայի պատմությամբ հետաքրքրվող, հարցասեր ընթերցողին, ինչու չէ՞ նաև հետազոտողին, հասկանալու, թե ինչ է կատարվել Զեյթունում, նախքան *կործանվելը, այո՛, կործանվելը:* Ներկայացնենք դեպքերի զարգացման հետագա ընթացքը, հենվելով միայն աղետից

[1] *Գրիգորիս ծ. վարդ. Պալաքեան,* Հայ գողգոթան, էջ 101-107:

վերապրողների հուշերի վրա: Եղեռնից մազապուրծ, Բեյրութում հաստատված զեյթունցի վարդապետ *Գևորգ Կարապիսյանը «Կիլիկիոյ Արծվաբույնին քանդումը - զեյթունցիներու տարագրությունն ու ջարդը»* խորագրված աշխատության էջերում պատմում է այդ ողբերգության մասին: Ձեռքի տակ ունենալով բազմաթիվ սկզբնաղբյուրները, դրանց գումարելով իր ականատեսական գրառումները, հայրենակիցների պատմածները, նա գրում է. «1914-ի ամրան ընդհանուր զօրաշարժ կը հռչակուէր: Ամէն կողմ իրարանցում ու եռուզեռ: Ամէն անհատ ստիպուած էր ներկայանալ պետութեան եւ արծանագրուիլ: Կառավարութեան հրամանին համաձայն արծանագրության կայան նշանակուած էր Զէյթուն: Ալպիսթանէն, Եփեսոսէն, եւ այլ շրջաններէ զինուորական տարիք ունեցողները խուժեցին Զէյթուն: Տեղացիք մարդասիրական ամէն անհրաժեշտ պարտականութիւն սիրայօժար եւ կամովին կատարեցին: Հանգանակութիւն ըրին, շարժուն խոհանոցներ հաստատեցին, իջեւանելու տեղ հայթայթեցին, անպատսպարները պատսպարեցին, նօթիները կշտացուցին:

Կառավարութիւնը միջոցներ ձեռք առաւ զինաթափ ընելու ժողովուրդը եւ սիրաշահելու զանոնք: Սահակ Կաթողիկոս կառավարութեան թելադրութեամբ յորդորեց զէյթունցիներուն յանձնել զէնքերը եւ զինուորագրուիլ: Զէյթունցիք անսացին ու հնազանդեցան հայոց կաթողիկոսին: Ըսուած էր «փոքր շարժում մը կրնայ վտանգել Թուրքիոյ նահանգներուն ամբողջ հայութիւնը»:

«Տարագրութիւնը շատ երկար տեւեց, ժողովուրդը յուսալքուած էր ու ընկճուած: Հազարաւորներ ինկան անօթութենէ ու համաճարակէ, եւ ժանտարմներու բիրտ վարմունքէն: *Եղան մայրեր, որոնք պատառ մը հացի փոխարէն ծախեցին իրենց հարազատ զաւակները հանդիպող գնչուներուն: Տարագրութեան ընթացքին գտնուեցան այնպիսի պայմաններու տակ, որ սկսան երանի տալ շուներուն, որոնք հանգիստ կը պառկէին եւ ուտելիք ոսկոր ունէին*[1]:

Ականատես մը կը պատմէ.- «Իմ սեփական աչքերովս տեսայ խիստ յատկանշական պարագայ մը: Զէյթունի քաղաքացի մը, որ շատ հարուստ էր, իբրեւ խլեակ իր հարստութեան երկու այծ կը քշէր հետը տարագրուած ատենը: Վրայ հասաւ ժանտարմը եւ բռնեց երկու անասունները: Հայը խնդրեց որ զանոնք իրեն ձգէ, աւելցնելով թէ ապրելու ուրիշ ոչ մէկ բան ունէր: Իբր միակ պատասխան ժանտարման սկսաւ հարուածներ տեղալ, մինչեւ որ խեղճը գլորուեցաւ փոշիին մէջ եւ փոշին ալ վերածուեցաւ արիւնաշաղախ ցեխի: Այն ատեն երկու հարուած ալ տուաւ հայուն եւ երկու այծերը առած ելաւ գնաց»:

Շատեր իրենք զիրենք լեռներու կատարներէն ծոր կը նետէին, եւ վիրաւորներ կը խնդրէին իրենց սիրելիներէն, որ զիրենք ըսպաննէին, որպէսզի թշնամիին ձեռքը չիյնային:

Գարա բունար ըսուած տեղը (Պոզանքի-Ատանա ճամբուն վրայ) ժանտատեղէն ու ջերմէն օրական կը մահանային 150-200 զէյթունցիներ»[2]:

Սեպուհ Ակունին, կարծես թե շարունակելով այս գողգոթայի պատմությունը, գրում է, թե իրերն այն վիճակի մեջ էին, երբ 1914 թ. դեկտեմբերին հրաման արձակվեցավ Զեյթուն, որ հանձնեն իրենց զենքերը. «Ժողովուրդին մեծ մասը այս հրամանին ալ հնազանդեցաւ և մինչեւ գարուն ո և է դէպք չպատահեցաւ: Սակայն ոստիկան-զինուորները այլևս չափը անցուցին, յայտնապես սկսան անպատւել երիտասարդ հայ աղջիկներ, ինչ որ այս անգամ պատճառ եղաւ, որ ժողովուրդն ալ փոխէ իր վարմունքը հանդէպ կառավարութեան: Եւ ահա հայ կոյսերու պատիւը պաշտպանելու համար զէնքի փաթթուող քսանի չափ տաք-գլուխ հայ երիտասարդներու բռնած դիրքը տեղի տուաւ միջադէպի

[1] *Ս. Ակունի,* Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921, էջ 49:

[2] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 480-482:

մը, երբ երկու կողմէն ալ սպաննուածներ եղան: Այս միջադէպին մասնակցող հայերը ինչպէս նաև թուրք բանակէն մէկ քանի դասալիքներ, պատիժէ զերծ մնալու համար, ապաստանեցան քաղաքէն երեք քառորդ ժամ հեռու գտնուող հիւսիսակողմի Վանք մը: ***Այս դէպքին վրայ էր որ, 1915 Մարտի սկիզբը, Հալէպէն Զէյթուն եկաւ 4-6000 հոգիէ բաղկացած զինուորական ուժ մը, որ սարսափ և մտահոգութիւն պատճառեց Զէյթունի բնակիչներուն մասնաւորապէս և Կիլիկեցիներուն ընդհանրապէս:*** Պատրիարքարան ղրկուած 3/16 (1915) թւակիր տեղեկագրի մը մէջ կը նախատեսուէր որ այս զինուորական շարժումը խոշոր նպատակ մը կը հետապնդէր ի վնաս Հայերու, քանի որ Մարաշէն եկած զինուորական պետին, կառավարիչին և Զէյթունի հրամանատարին խորհրդակցութիւնները շատ կասկածելի հանգամանք մը ունէին: Կիլիկիոյ ազգ. իշխանութիւններուն կողմէ այս բոլոր պարագաները տեղեկագրուած էին Հալէպի կուսակալ և «հայասէր» ճանչցուած Ճէլալ պէյի և խնդրուած էր որ իր կողմէ քննութիւն մը բանայ և առաջքը առնէ աղէտի մը: Կեդրոնի կառավարութիւնը լսեց այս դիմումը, բայց ծանօթ ըլլալով Ճէլալ պէյի տրամադրութիւններուն, այս պատճառով ոչ միայն հակառակեցաւ, որ այդպիսի քննութիւն մը չկատարուի անոր միջոցով, այլ անմիջապես ետ կանչեց զայն: Կուսակալին ետ կանչուելէն ետք Զէյթուն պաշարուեցաւ: Քաղաքի Հայերը սպիտակ դրօշ պարզեցին, հասկցնելով թէ մտադիր չեն ո և է ընդդիմութիւն փորձելու: Իսկ վանքը ապաստանող կտրիճները ինքզինքնին պաշտպանեցին ամբողջ օր մը և գլուխը կերան բաւական թիւով զինուորի, որոնց մէջ նաեւ հրամանատար հազարապետ Սիւլէյման պէյի: Պաշարուածները գիշերը յաջողեցան փախչիլ: Յաջորդ առտուն Զէյթունի հրամանատարը կանչել տուաւ քաղաքին երևելիներէն 300 հոգի, անոնց հետ տեսակցութիւն մը ունենալու համար, բանակատեղին մէջ: Ասոնք, առանց կասկած ունենալու գացին որոշուած տեղը: Եկողներուն մեծ մասը աշխատութեան հասարակ զգեստներով էին, միայն մէկ քանի հոգի քիչ մը դրամ ունէին: Անոնց մէկ մասը նոյնիսկ, լեռներու մէջ արածող իր հօտերուն քովէն եկած էր: Հազիւ թէ բանակատեղ հասած էին, երբ զարմանքով տեղեկացան թէ այլևս քաղաք չէին կրնար վերադառնալ և թէ պիտի փոխադրուէին ուրիշ տեղ: Այս պատճառով չկրցան հետ առնել ճամբորդութեան պետոյքները. մէկ քանիներուն թոյլատրուեցաւ որ կառքեր բերել տան. իսկ մեծ մասը ոտքերով գացին, առանց գիտնալու, թէ ո՞ւր կերթան: Երկու օր ետքն էր, կարծեմ Մարտ 23ին, երբ ամբողջ Զէյթունի հայ ազգաբնակչութիւնը տարագրուեցաւ իրարու ետևէ շատ մը կարաւաններով: Տարագրուածները շուրջ 18000 հոգի էին: Քաղաքը պարպուելէ ետք կեդրոնի կառավարութիւնը ի պատիւ Հայերուն ձեռքով սպաննուած հազարապետ Սիւլէյման պէյի, օրինագծով մը նոյն քաղաքին անունը դրաւ Սիւլէյմանլը: Տարագրութիւնը շաբաթներ տևեց և վերջապէս Մայիսի երկրորդ կիսուն: Այս կտրիճ, հերոս, յանդուգն և քաջ ժողովուրդը այնքան ընկճուած էր որ հազար հոգին կը տանէր մէկ խլլոտ ժանտարմա, այն ալ գաւազանով:

Հազարաւորներ մեռան ճամբաներու վրայ, անօթութենէ, թշվառութենէ և համաճարակէ, իսկ զատ զատ հարիւրաւորներ ժանտարմաներու բիրտ վարմունքին հետևանքով: Այս տողերը գրողը իր աքսորի պահուն էրէյլիի և Պօզանթիի մէջ տեսաւ այդ քաջ հայորդիներու վերջին մնացորդները, երբ անոնք նոր տեղահանութեամբ մը կը քշուէին դէպի անապատները: Քիչ չէր թիւը այն Զէյթունցիներուն, որոնք հակառակ չարքաշ մեծցած ըլլալուն յուսահատած էին և օրերու անօթութիւնը զանոնք բոլորովին ընկճած էին: Էրէյլիի մէջ Պ. Աբիկ Մուպահեաճեանի մասնաւոր ջանքերով էր, որ գաղտնի հանգանակութեամբ ուտելիք գնուեցաւ և հակառակ կառավարական ամենախիստ արգելքին, բաժնուեցաւ անոնց: Օր մը շատ լաւ կը յիշեմ որ Զէյթունի 10-12 կիներ, կատղելով ժանտարմայի մը բռնած կոպիտ ընթացքէն, քարերով յարձակած էին անոր վրայ և բզիկ բզիկ պիտի ընէին եթէ շրջականներէն միջամտութիւն տեղի չունենար:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1915 -1922թթ.

Գ. Քոհրոպ

Միամանյան

Հ. Թէկսարինցի

Ե. Զարդարյան

Տ. Չոլոյան

Դ. Վարուժան

Ծ. Մ-ակ

Երուխան

Ա. Հարությունյան

Տ. Քէշիշյան

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Պետական սահմանները 1914թ.
Պետական սահմանները 1922թ.
Հայաստանի հարևանպետության սահմանը
Հայկական վիլայեթների սահմանը
Տեղահանության գլխավոր ուղիները
Տեղահանության այլ ուղիներ
Երկաթուղի
Համակենտրոնացման ճամբարներ
Տեղահանության և ջեղասպանության կենտրոններ
Տարագրյալների համակենտրոնացման վայրեր
Տարագրության քարավանների կայաններ
Վերաբնակեցման գլխավոր նպատակադրումներ
Վերաբնակեցման ժամանակ աքսորավայրեր
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ
ՍԵՎ ԾՈՎ
ՄԻՋԱԳԵՏՔ
ՍԻՐԻԱ
ՄԵՍՈՊՈՏԱՄԻԱ
ԿԻՊՐՈՍ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎԱԿ
ՍԱՀԱՐԱ
ՍԱՄԱՐԱ
ՍՈՒՐԻԱ
ՀՈՐԴԱՆԱՆ
ՍԱՈՒԴԻԱՆ ԱՐԱԲԻԱ
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
ՎՐԱՍՏԱՆ
ԱՖՂԱՆԱՍՏԱՆ
ՀՆԴԿԱՍՏԱՆ
ՉԻՆԱՍՏԱՆ
ՄՈՆԳՈԼԻԱ
ՌՈՒՍԱՍՏԱՆ
ԿՈՎԿԱՍԻԱ
ՍԵՎԱՆ ԾՈՎ
ՍԱՄՍՈՆ
ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ
ՄԵԾ ՀԱՅՔ
ՓՈՔՐ ՀԱՅՔ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋԱԳԵՏՔ
ՄԵՍՈՊՈՏԱՄԻԱ
ՍԻՐ

ГРАНИЦА МЕЖДУ ТУРЦИЕЙ И АРМЕНИЕЙ ТАК, КАК ОПРЕДЕЛЕНА ВУДРО ВИЛЬСОНОМ
Общая карта, сопровождающая решение Президента Вильсона относительно границы Армении
Факсимиле, сделанное в 1935 г. в качестве сопровождения решения о границе так, как было напечатано в
Papers Relating to the Foreign Relations of the United States, 1920, volume III, pp. 793 ff.



ГРАНИЦА МЕЖДУ ТУРЦИЕЙ И АРМЕНИЕЙ
ТАК, КАК ОНА ОПРЕДЕЛЕНА ПРЕЗИДЕНТОМ СОЕДИНЕННЫХ ШТАТОВ АМЕРИКИ ВУДРО ВИЛЬСОНОМ

Կրնաք երևակայել թէ մարդ մանաւանդ կին մը որչափ յուսահատուած ըլլալու է մէկ պատառ հացի փոխարէն ծախելու համար իր հարազատ զաւակը հանդիպող գիւղացիին կամ գնչուին: Տարագրութեան մէջ ունեցանք այնպիսի վայրկեաններ և գտնվեցանք այնպիսի պայմաններու մէջ երբ երանի կուտայինք շուներու որ քիչ թէ շատ աւելցուք հաց կամ ոսկոր մը ունին ուտելիք և իրենց պառկած ու ·ղը անհանգիստ ընող մը չկար զիրենք: Մարդ տեսնելէ յետոյ Զէյթունցիներու վիճակը, կը զարմանար թէ այս հերոս ժողովուրդը կրնա՞յ եղեր մատնուիլ անոր: Այնքան սարսափած էին խեղճերը, որ գիտնալով հանդերձ թէ դէպի մահ կ'երթան, ի վիճակի չէին բան մը ընելու, այլ միայն կ'անիծէին Կաթողիկոսը»[1]:

Ս. Ակունին մանրազնին հետազոտելով բազմալեզու փաստերը հաստատում է, որ Զէյթունի բնակչության բռնագաղթը կազմակերպվել է 1915 թ. ապրիլի 10-ին, շաբաթ օրվա վաղ առավոտյան, այսինքն՝ պոլսահայ մտավորականության աքսորից ճիշտ երկու շաբաթ առաջ: Նա գրում է. «Սակայն կառավարութիւնը պատրուակ կը փնտռէր քանդելու Զէյթունը և 1915 մարտ 24/6 ապրիլին 5000 զինուոր կը համախմբէ Զէյթունի մօտ: Նոյն պահուն, Մարաշէն կուգան պատ. Շիրաճեանը. Տ. Սահակը և ուրիշներ, յորդորելու համար ժողովուրդը որ ցոյց տայ «ըմբոստ»ներու ծածկուած տեղը, որպէսզի ապահովուի Կիլիկիոյ հայութեան հանգստութիւնը: Ժողովուրդը կը հնազանդի և կ'ըսէ թէ փախստականները կը գտնուին մօտակայ վանքը: Յարձակումը կը սկսի, սակայն Հայերը կը սպաննեն սպայ մը, զինուոր, ընդամենը 2-300 թուրք և կը յաջողին փախչիլ, հազիւ մէկ քանի զոհ ձգելով: Ապրիլ 8ին թուրքերը կրակի կուտան վանքը, կարծելով, թէ փախստականները հոն են: Այս դէպքէն ետք, 50 ընտանիք կը տեղահանուին. մէկ քանի օր յետոյ ալ 60 ընտանիք և հետզհետէ մնացածները: Տեղահանութիւնը կատարուած է *1915 ապրիլ 10ի շաբաթ առտուն:*

Զէյթունցիները, տեղահանուած են երեք ուղղութեամբ, 8000ի մօտ կիներ և տղաք տարուած են, ինչպէս խօսած են Գոնիա, 5000ի մօտ Հալէպ և մնացածը Տէր-Զօր, Րաքքա, մինչեւ Պաղտատի մօտերը: Գոնիայի կողմերը դրկուածները այն աստիճան թշուառ վիճակի մէջ կը գտնուէին որ Պօզանթիէն քիչ մը անդին գտնուող Գարաբունարի կայարանը 6000ի վրայ օրական 150-200 հոգի կը մեռնէին անօթութենէ: Զէյթունի ընդհ. բնակչութիւնը 26000 հոգի ըլլալով, 19000 քշուած են Միջագետքի շրջանը, ուր ջարդուած են ամենամեծ մասամբ»[2]:

Լորդ Բրայսը, ծեռքի տակ ունենալով ժամանակին կազմված, հատկապես Զէյթունի տեղահանության և բռնագաղթին վերաբերող մի շարք վավերագրեր, գրել է *«Հայկական ջարդերու փաստաթուղթերը»* աշխատությունը, որը վերամշակել է, գրական տեսք է տվել, հայերենի է վերածել *Վահան Միրագեցը,* Կ.Պոլսում հրատարակել *Ա. Տիլանյանը:* Այնտեղ ամփոփված են լեռնագավառի 1914-1916 թթ. պատմությանը վերաբերող, պաշտոնական և անպաշտոն փաստաթղթերը, որոնց վրա հենվելով, շարունակենք մեր շարադրանքը այդ դեպքերի մասին:

Լորդ Բրայսի ընծեռած նյութերը պատմում են. «Հայ եկեղեցիին կամարներուն վրայ գտնուող արձանագրութիւնները թուրք զօրաց հրամանատար Խուրշիտ պէյի հրամանաւ ջնջուեցան, և Զէյթուն Մարաշի ճամբուն վրայ սպաննուած *թուրք սպայի մը անունով Սիւլէյմանիէ կոչուեցաւ:* Զէյթունի միւֆթին իր տեղեկագրին մէջ կ'ըսէր թէ 101 զինուոր սպաննուեցան 110 ալ վիրավորուեցան:

Հայ տարագիրները (Փաստաթուղթ 124) իրենց տուները լքելուն պէս Թրակիոյ

[1] *Սվեպուհ Ակունի,* նշված աշխատությունը, էջ 47-49:
[2] Նույն տեղում, էջ 52:

իսլամ մուհաճիրները գրաւեցին զանոնք. *որոնց թիւը կը հասնէր 25 հազարի*: Զէյթուն այժմ կը կոչուի *Եէնի չէհիր:*

Տարագիրները տարուեցան երկու ուղղութեամբ, կէսը դէպի Սուլթանիէ և կէսն ալ Տէր Զօր: Սուլթանիէ ըլլալով խիստ վատառողջ տեղ զոհերէն մէկ կարեւոր մասը մեռաւ և մնացեալներն ալ ղրկուեցան Տէր Զօր:

Եգիպտոսի հայկական գաղութը 3 Յուլիսին, 1915 Եգիպտոսի բրիտանական ուժերու զօրաբաժնի հրամանատար (Ֆերիդ) Սըր Մաքսուէլի ուղղած է նամակ-տեղեկագիր մը Կիլիկիոյ աղէտալի կացութեան մասին, որուն ինչ ինչ մասերը հոս կը փոխադրենք.

«Վսեմափայլ Տէր,

Վերջերս ձեր վսեմութենէն արտօնութիւն խնդրեցինք Կիլիկիա ղրկելու երեք պատուիրակներ որպէս զի երկրին իսկական կացութեան մասին ճշգրիտ տեղեկութիւն մը ձեռք անցուի:

«Մենք խորապէս երախտագէտ կը զգանք մեզ ձեր վսեմութեան կողմէ մեզ եղած շնորհքին համար և այս առիթով կը բաղձանք ձեզ հաղորդել վստահելի տեղեկութիւններ, որոնք մեզ հայթայթուած են պաշտօնական անձերու կողմէ, որք շաբթուս ընթացքին Սիւրայէն տեղս ժամանեցին: Այս իսկ պատճառաւ մեր պատուիրակներուն առաքումը առ այժմ յետաձգուած է: Իրերու ներկայ կացութիւնը կը պահանջէ բոլորովին տարբեր միջոցներու գործածութեան: Քավալիէր Կօթիէրի - Հալէպի իտալական հիւպատոսը - Իսկէնտէրունի և Ատանայի մէջ բնակող կարգ մը օտարներ, և Պիթլիսէն ու Խարբերդէն եկողներ, որոնք բոլորն ալ Կիլիկիայէն անցնելով հոս հասան, չեզոք նաւով մը, կատարուած դէպքերու մասին հետեւեալը կը պատմեն.-

«... Թուրք կառավարութիւնը փորձեց զինուորական ուժով ընկճել Զէյթունը, սակայն իր քափած բոլոր ջանքերը ապարդիւն մնացին: Անոր զօրագունդերը քանիցս կոտորուելով ետ նահանջեցին: Իրերու այդ կացութեան ներքեւ տեղական կառավարութիւնը Կեդրոնի հրամանին վրայ հետեւեալ խորամանկութիւնը գործածեց: Անոնք Կիլիկիոյ Կաթողիկոսին սպառնացին թէ եթէ Զէյթունցիք չյանձնուէին հայ ազգաբնակչութիւնը սուրէ պիտի անցուէր, իսկ հակառակը ընելով իրենց ոեւէ նեղութիւն չպիտի տրուէր: Կաթողիկոսի թախանձագին յանձնարարութեան վրայ, Զէյթունցիք վար դրին իրենց զէնքերը, փրկելու համար իրենց հայրենակիցները: Տէօրթ Եօլի և Հասան Պէյլիի ժողովուրդն ալ միեւնոյն բանը ըրաւ, միեւնոյն նպատակով: Ասոր վրայ կառավարութիւնը դրժելով իր խոստման ժողովուրդը զանգուածներով տարագրեց: Կարգ մը վայրերու մէջ հայկական խումբեր խրամներու մէջ մտած ինքզինքնին կը պաշտպանեն, երբ կարելի ըլլայ ուրիշներու օգնութեան ալ կը փութան, միշտ յուսալով որ դուրսէն իրենց օգնութիւն գալով պիտի կրնան վանել իրենց դարաւոր հարստահարիչը: Միեւնոյն յոյսը կը տածեն տեղւոյն բովանդակ քրիստոնեայ ազգաբնակչութիւնը, եւ նոյն իսկ կարելի է ըսել թէ իսլամներն ալ համոզուած են թէ այս երկիրը շատ չանցած պիտի գրաւուի Դաշնակիցներու կողմէ: Ահա այն կացութիւնը, որուն մէջ կը գտնուի ներկայիս Կիլիկիան և որ մեզ ներկայացուեցաւ վերոյիշեալ պաշտօնական անձանց կողմէ»:

Օտար ականատես մը կը պատմէ (փաստաթուղթ 123). «Երբ աքսորական Զէյթունցիները Գոնիա հասան, երեք օրէ ի վեր բան մը կերած չէին: Քաղաքին Հայերը, Յոյները միասնաբար աշխատեցան այդ թշուառներուն ուտելիք հայթայթելու. սակայն Գոնիայի վալին արգիլեց այդ բանը, ըսելով թէ անոնք օժանդակութեան պէտք չունին: Ուրեմն անոնք երեք օր եւս առանց սնունդի մնացին: Ասկէ վերջ է որ վալին իր դրած արգելքը վերցուց և զապթիէներու հսկողութեան տակ կարելի եղաւ խեղճերուն քիչ մը ուտելիք բաժնել: Իմ տեղեկատուս ինծ պատմեց թէ Գոնիայէն Գարա-Բունար տանող ճամբուն վրայ, *երիտասարդ հայուհի մը իր նորածին զաւակը հոր մը նետեց, որովհետեւ այլեւս չէր կրնար զայն սնուցանել, իսկ ուրիշ հայուհի մըն*

ալ խելակորույս իր պզտիկը թրենի պատուհանէն դուրս նետեց: «Գարա-Բունար տարագրուած Զէյթունցիները խումբ-խումբ կը մեռնին, օրական 150-200 հոգիով: Ճահճատենդը մեծ աւեր կը գործէր»:

17 Յուլիս, 1915 թուականով Գոնիայէն օտարաբնակ մը Պոլիս իր մէկ բարեկամին կը գրէ. «Կրնա՞ք 50 ոսկիի չափ նպաստ մը ղրկել Սուլթանիէ գտնուած Զէյթունցիներու համար: Կառավարութիւնը թող տուած է, որ անոնք սովամահ ըլլան: Տարագիրները արտօնուած չեն իրենց կեդրոններէն հեռանալու, որպէս զի կարենան ապրուստի միջոց մը գտնել: Անոնք միայն արտերէն հաւաքուած բոյսերով ու արմատներով կը սնանին, այս իսկ պատճառաւ թունաւորման շատ մը դէպքեր պատահած են: Արնաւուտ հազարապետ մը որ գինուորական գործով հոն գացած էր, տեսնելով այս դառն կացութիւնը շատ յուզուած և Պոլիս հեռագրած էր, որ «ամէլիէ թապուր» ղրկուած 300 Զէյթունցիներու ընտանիքներուն ոոճիկ տրուէր: Այս դիմումին գոհացում տրուեցաւ, 1600 անձեր ապրուստի չնչին միջոց մը գտած եղան, սակայն անդին մնացին 6000 հոգի եւս, բոլորովին զուրկ ապրուստի միջոցներէ: Մինչեւ վերջին շաբթուս մահերուն թիւը 305 եղած է: Պարտիզակցի Տօքթ. Ստեփանեան, որ մեծ համբաւ հանեց իբրեւ աղքատներու համար զոհաբերող գործիչ, կը հաստատէ թէ ինքը ականատես եղած է անսուաղութեամբ մեռնողներու»[1]:

Այսպիսով՝ ավարտվեց հերոսական մի լեռնագավառի ազատագրական պայքարի պատմությունը, փակվեց Հայոց հերոսապատումի մի էջ: Զեյթունը մնաց իբրև հպարտության հիշողություն, պարծենալու միջոց: Նրա շառավիղները, ապրելու, արարելու ծգտումով, աշխարհեաշխարհ թափառեցին, ի վերջո հավաքվեցին Հայաստանի մայրաքաղաքում և հիմնեցին իրենց հաջորդ արծվաբունը *Նոր Զեյթունը:*

I. ՄԱՐԱՇԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՔՍՈՐԸ

Զեյթունի բնակչությունն այդքան դյուրին մեթոդներով բռնագաղթեցնելուց և աքսորի ճանապարհին աստիճանաբար ոչնչացնելուց հետո թուրքերը, ատամները գոհի արյան մեջ թաթախված գայլերի ախորժակով շարունակեցին զբաղվել Մարաշի հայերի տեղահանման գործով:

Մարաշ գավառն իր շրջակա հայկական բազմաթիվ գյուղերով մտնում էր Հալեպի վիլայեթի կազմում: Այն իբրև բնակավայր, ապա՝ քաղաք, երբեմն էլ իշխանական նստավայր, հազարամյակների ճանապարհ էր անցել:

Կիլիկյան թագավորության հարյուրամյակներում ունեցած ծաղկուն վիճակը կորցնելով օսմանյան բռնապետության շրջանում՝ քաղաքն առավել տուժեց եգիպտական տիրակալ Մուհամեդ Ալիի (1805-1849) որդի Իբրահիմ փաշայի վարած թուրք-եգիպտական արշավանքներից (1840-1842 թթ.):

Մարաշ քաղաքի և գավառի հայությունը գնալով ստվարացավ XIX դարավերջին և հաջորդ դարասկզբին միայն: Պատերազմի սկզբում քաղաքն ուներ 70000 բնակչություն որից 55000-ը հայերն էին: Գավառում ապրում էր 100 հազար հայ բնակչություն[2]: Դժբախտությունն այն էր, որ ինչպես քաղաքում, այնպես էլ գավառում ապրող *մարաշցի թուրքերը շատ մոլեռանդ էին, հայատյաց և նախանձով էին նայում* հայերի ունեցվածքին: Նրանք վաղուց հարմար պահի էին սպասում «ոչնչացնելու գյավուրներին», տեր դառնալով ոչ միայն հայերի հարստությանը, այլև վերջիններիս

[1] *Լորտ Պրայս,* Հայկական ջարդերուն փաստաթղթերը, Ա մաս, կազմեց *Վահան Միրագենց,* Կ. Պոլիս, 1921, էջ 88-91:

[2] *Գր. Գալուստյան,* Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու Յորք, 1934, էջ 214-216:

ընտանիքին: Պահը եկավ: Հրամանն ու քաջալերանքը ստացվում էին Կ. Պոլսից:

Կիլիկեցի Հովսեփ Վարդանյանի «Մարաշի ջարդը» վերնագրված գրքույկի մեջ գրված է.

«1914 Յուլիս 21 ին (հ. տ.) քաղաքին զանազան կէտերու հրապարակներուն վրայ կը փակցուին զօրաշարժը յայտնող եւ հրատարակող ազդերը, որոնց բովանդակութիւնը արդէն գրեթէ տարածայնուած էր եւ որով ամէն հպատակ անձ, ցեղ կամ ազգ հանդէպ կառավարութեան որոշ պարտականութիւն մը կատարելու եւ կը հրաւիրուէր եւ կը պարտաւորուէր ամէն մասամբ, դրամով, ինչքով եւ անձով: Ամէն ինչ կառավարութեանն էր եւ ամէն զէնք կրելու կարող անհատ զինուոր: Բանակի պէտքերը հոգալու համար ժողովուրդը անխտիր տալու էր ամէն ինչ որ ունէր, ինչ որ ուզուէր, ու կը տրուէր առանց առարկութեան եւ տրտունջի: Անհրաւութիւններ եւ բռնի գրաւումներ եւս յաճախ կը պատահէին. բայց ո՞վ կրնար առարկել:

Զօրաշարժի հրատարակութենէն մինչեւ Մարաշի տարագրութեան թուականը 1915 Յուլիս 25, կամ Օգոստոս 7 (նոր տոմար) չմնաց ոեւէ կերպ զոհողութիւն որ չ'ընէր հայ ժողովուրդը, անանկ որ կարելի է ըսել թէ, նախ կողոպտուեցաւ ու ապա տարագրուեցաւ:

1915 Օգոստոս 6 Ուրբաթ օր ետինքի պահուն հոգեւոր պետեր Աւետիս Գերապայծառ Արփիարեան, Տ. Սահակ Քհ. Տէր Պետրոսեան, Վեր. Աբրահամ Յարութիւնեան եւ քանի մը երեւելի ազգայիններ կը կանչուէին կառավարչատուն ուր հաւաքուած էին քաղաքային եւ զինուորական պաշտօնեաներ, որոնք ներկաներու կը հաղորդեն ժողովուրդին - Հայոց - յաջորդ առտու իսկ ճամբայ ելլելու անդառնալի հրամանը, բացառելով կաթոլիկները, մինչ Հայեր եւ Բողոքականներ պարտ էին մեկնել անմիջապէս, քիչ ետքը մնալու նոյն հրամանը կը հաղորդուէր նաեւ Բողոքականաց համար ալ, սակայն, ասոնց բոլորն ալ խաղեր եւ սատանութիւններ էին, քանզի ապա իրարու ետեւէ առանց զանազանելու բոլորն ալ տարագրեցին ինչպէս պիտի տեսնենք:

1915 Յուլիս 25 - 7 Օգոստոս է, Շաբաթ օրը. նախորդ իրիկուընէ լուրը արդէն ամէն շրջանակի մէջ տարածուած էր թէ քրիստոնեայք պարտին վաղուան համար պատրաստուիլ, սա պայմանաւ որ նախ ամուրիներ - երիտասարդներ տան մը մէջ նեցուկ մը մնալով միւս այրերը պարտ էին մեկնիլ եւ ետքն ալ ընտանիքի տէրեր. սակայն շատեր չուզելով բաժնուիլ իրենց սիրելիներէն եւ տան անդամներէն, միասին ճամբայ կ'ելլեն գրեթէ յանպատրաստից եւ խուռն բազմութեամբ. անանկ որ ճամբու երկայնք ու դաշտ կը ծածկուին ամբոխով մը որուն ի տես կը զարմանար կառավարութիւնը եւ Ատանայէ եկող զինուորներու հրամանատարը, որ ճամբուն վրայ նստած բաւական մը շալակաւորներ ետ կը դարձնէր, կամաց-կամաց ու ետքէն գացէք ըսելով. քանզի զսա անանկ համոզած էին տեղական թուրքեր որ Մարաշցիներն ալ պիտի ապստամբէին ու դէմ դնէին. իսկ այժմ սոյն գաղափարը կը ջրուէր:

Եւ այսպէս օր օրի վրայ, թաղ թաղ եւ կամ ընտանեօք ցանկեր կը պատրաստուէին ու կը հաղորդուէին տէրերուն պատրաստ ըլլալ որոշեալ օրը մեկնելու համար, կառավարութիւնը ոմանց կը տրամադրէր, տարապարհակ բռնուած փոխադրութեան միջոցներ, գրաստ, էշ եւ այլն, որոնք սակայն ճամբու ընթացքին գիշերանց փախուստ կու տային յաճախ բեռով միասին ու անդարձ:

Ասանկ օրեր, շաբաթներ կ'անցնէին ու քաղաքին քրիստոնեայ բնակչութիւնը կը ցանցառանար գամ քան զգամ, օր մ'ալ հրաման կ'ելլէր թէ Բողոքականք չպիտի երթան եւ յիրաւի ոմանք ճամբէն եւ ոմանք ալ մինչեւ իսկ Այնթապէն ետ կը վերադարձուէին, բայց ոչ շատ ետք կրկին անգամ կը ղրկուէին:

Այսպես կը շարունակէ գաղթը 3-4 ամիս, ապա ատեն մը, իբր 9 ամիս դադար տրուելէ ետքը, կրկին անգամ մնացեալներէն մաս մը կ'աքսորուի, որ կը զուգադիպէր

Այրան-Ինթիլլի փապուղիին եւ շրջակայից մէջ աշխատող հայ գործաւորներու տարագրութեան. այսու հանդերձ քաղաքը բոլորովին չի պարպուիր եւ բաւական թիւով Հայեր՝ մօտ 3 հազար անձ՝ կը մնայիին, ընդ որս կը մնար նաեւ իբր հոգեւոր հովիւ Տ. Խաչատուր Ծ. վարդ. Տէր Ղազարեան, որ Զէյթունի վանուց եւ եկեղեցաց անօթներն եւ կաի կարասին բերած կը նստեր Ստեփանոս եկեղեցւոյ մէջ:

Մարաշի պատերազմական ատեանը պարապ չէր կենար, կը գործէր ան. մէկ կողմէ կը տարագրէր, միւս կողմէ կը կախէր եւ այսպէս քաղաքին տարբեր կէտերուն վրայ Գանլը Քէօփրիւի, Գանլը Տէրէի եւ Ռէժիի մօտ տասնեակ եւ հնգատասնեակ խումբերով կախաղան կը հանէր երեք հարիւրի չափ բանտարկեալները ու կը մաքրէր բանտը:

Սոյն բոլոր սպանդուածները խոստովանցուցած են Տ. Յակոբ Քհ. Ասլանեան, Շիվիլկի գիւղի Տ. Մանուէլը եւ Խաչատուր Վարդապետ:

Ի տես սոյն կախաղաններու հայ ժողովուրդը կը սահմռկի եւ շատեր առանց կարգի սպասելու ինքնաբերաբար մեկնած են, առանց գիտնալու, թէ ինչ դժբախտութիւն կը սպասէր իրենց քիչ անդին կամ երթալիք տեղին վրայ: Մնացածը ծանօթ է արդէն:

1915 - 18 պատերազմի տարիներ եղան եւ հայ ժողովուրդը, տարագրութեան եւ ջարդի դառն բաժակը ցմրուր քամեց, որուն նկարագրութիւնը դուրս է մեր կար եւ նպատակէն, ամէն մէկ վերապրող կենդանի վկայ եւ անգիր պատմութիւն մըն է ինքնին:

Ինչպէս տեսանք՝ 1915ին ընդհանուր եւ հայաջինջ տարագրութեան կը մասնակցէր Մարաշցին ալ, որ սակայն մեծ մասամբ Սուրիոյ կողմերը գացած ըլլալուն՝ բաղդատմամբ հայաբնակ այլ գաւառներու՝ քիչ կորուստով դուրս կու գայ, գրեթէ առ հարիւր *35-40* զոհ տալով եւ ողջ մնացողներ շուրջ *26-27* հազար անձ կը վերադառնային 1918-1919ին, սոյն թիւին մէջ կը գտնուին նաեւ շրջակայ գիւղերէն եւ այլ հայկական նահանգներէ մաս մը հայեր՝ շատերը այրիներ:

Տէր-Զօրի եւ Րաս-Իւլ-Այնի կողմ գացողներ առանց բացառութեան ջարդուած կամ մեռած են»[1]:

Դեպքերին ժամանակակից *Սեպուհ Ակունին* «Սիլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը» ծավալուն գրքի «Տեղահանութիւն Մարաշի» խորագրուած գլխում, մեծ ցաւով ու ապրումներով հրապարակում է մանրամասներ, որոնք մյուս հետազոտողների գործերում բացակայում են:

Նա գրում է. «Մարաշ մոլեռանդ թրքութեան օճախը և Զէյթունի հրամայող ու մօտը գտնուող գիւղաքաղաքը ըլլալով, *հոս տեղահանութիւնը կատարուած է սարսափելի պայմաններու տակ: Զօրահանութեան հրատարակումէն մօտ երեք ամիս յետոյ Տարէնտէէն (Ալպիստանի մօտ) մօլլաներ եկած են Մարաշ, քննութիւն անցունելու և ըստ այմմ զօրակոչէ զերծ կացուցուելու համար:* Սակայն անոնք քաղաք ոտք դնելնուն պէս առաջին գործերնին ըրած են բողոքել կառավարիչ Ալի Հայտարի թէ՝ հռչակաւոր Նազարէթ Չաւուշի հրոսախումբերը ճամբան զիրենք կողոպտած են և պահանջած անոնց շուտով պատժուիլը: Այդ հրոսախմբերը, աւելցուցած են մօլլաները, կողոպուտէն զատ աղտոտած են նաեւ իրենց բերանները:

Կառավարիչը մտիկ ընելէ յետոյ մօլլաները, պատասխանած է անոնց թէ լրջութեամբ նկատի պիտի առնէ իրենց բողոքը, սակայն անոնք, կառավարութեան մոլեռանդ պաշտօնեաներու դրդումին վրայ, կրկին ներկայացած են կառավարիչին և անմիջական գործունէութիւն պահանջած են: Ալի Հայտար բանտ նետելու սպառնալիքով վռնտած է նոյն մօլլաները և հետեւեալ օրն իսկ անձամբ գացած է Զէյթուն, ուր ձերբակալած և Մարաշ բերած է Նազարէթ Չաւուշը և Գարանֆիլեան վրդ-ը ուրիշ 60 հոգիի հետ:

Մարաշի մէջ, Նազարէթ Չաւուշի ձերբակալման լուրը մեծ խնդութիւն պատճա-

[1] *Գր. Գալուստյան,* նշված աշխատությունը, էջ 778-780:

ռած ըլլալով կառավարիչը վերադարձին ընդունուած է մեծ պատիւներով իսլամ ժողովուրդին կողմէ: Այս առթիւ քաղաքին հիւսիսակողմը գտնուող զօրանոցին առջեւ ճառ մը խօսած է քաղաքին ամէնէն վարնոց թուրքերէն արիւնկզակ հօճա Ֆէյզուլլահը և իսլամութիւնը գրգռած քրիստոնեութեան դէմ:

Զէյթունէն բերուած կալանաւորները բանտարկուած են և մասնաւոր նպատակով սաստիկ խոշտանգումներու առարկայ դարձած, ու մէկիկ մէկիկ նահատակուած են խեղդուելով, թունաւորուելով կամ ծեծի տակ: Ամէնէն ուշ և դժուար հոգի տուողը եղած է Նազարէթ Չավուշը: Բանտին մէջ զայն ծեծած, խոշտանգած և կողէն խորունկ կերպով վիրաւորած են, չէ մեռած: Իթթիհատի սրիկաներէն դեղագործ Լութֆի անծամբ թունաւորած է զայն, դարձեալ չէ մեռած: Ասոր վրայ մէկ-երկու գիշեր դրած են Նազարէթ Չավուշը չուլի մը մէջ և մէկ բանտէն միւսը փոխադրելու պատրուակին տակ գետինին զարկած և կոտրտած են անոր ոսկորները և այսպէս չարաչար մահով մը նահատակած են Զէյթունի հերոսը:

Այս սպանութիւնները արդէն պէտք եղած սարսափը տարածած էին քաղաքին հայութեան միջեւ, երբ Ֆընտըճաքի (Զեյթուն) դէպքին վրայ քաղաքին մէջ եւս ձերբակալութիւնները և կախաղանները սկսած են: Առաջին առիթով ձերբակալուած են առաջն. փոխանորդ Ղեւոնդ քհ. Տ. Նահապետեան, բողոքականներու երէց Ահարոն պատուելի, ինչպէս նաեւ Պ. Պ. Նալչաճեան Կարապետ, «Պիլէզիկճի» Արմենակ, «Պիլէզիկճի» Նազարէթ, Գոնսթան և Յովնան Վարժապետեան, եւն., մօտ 11 հոգի և քշուած են Հալէպ: Մինչ միւս կողմէ կազմուած պատերազմ. ատեանները բուռն գործունէութիւն ցոյց տուած են: Զանազան պատրուակներով և զրպարտութիւններով 50-60 հայեր կախած են քաղաքին մէջ, մինչեւ տեղահանութիւնը, ուրկէ ետք եւս շարունակուած են կախաղանները: Ամիս մը ետք սկսած են ամենախիստ խուզարկութիւնները, որոնց յաջորդած է պաշտօնական յայտարարութիւն մը թէ ձեռքը ոտքը բռնող բոլոր էրիկ-մարդիկը պէտք է պատրաստ ըլլան հեռանալու Մարաշէն:

Այս յայտարարութեան վրայ քաղաքին բոլոր էրիկմարդիկը, առանց դաւանանքի խտրութեան պատրաստուած են մեկնելու, սակայն կառավարութիւնը նոր յայտարարութեամբ մը զեկուցած է ժողովուրդին թէ այս հրամանէն զերծ կացուցուած են կաթոլիկներն ու բողոքականները: Հայ-լուսաւորչական 500 էրիկ-մարդիկ սմենախժդուժ պարագաներու տակ և զրկուած իրենց ընտանիքին ընկերակցութենէն, տարուած են Հալէպ: Ճամբան սպանութիւնները անպակաս եղած են: 1000 տունի մօտ հայ-կաթոլիկներն ու նոյնքան բողոքականները ատեն մը թէեւ զերծ մնացած են գողգոթայի վերելքէն, բայց ի վերջոյ անոնք ալ մատնուած են Հայ-լուսաւորչականներու ճակատագրին: Տարագրուած էրիկ-մարդոց հազիւ 24 ժամ պայմանաժամ տրուած է, քաղաքէն հեռանալու համար: Իսկ ասոնց մեկնումէն 8-10 օր վերջը մաս առ մաս քշուած են ընտանիքները, մասնաւոր ցանկերու համեմատ զոր կը պատրաստէին իթթիհատականները: Սկիզբի օրերուն, երբ սարսափը այնքան բուռն էր, ոչ մէկ ձեռնարկ կատարուած է ժողովուրդին կողմէ, իսլամանալու նպատակով, բայց ի վերջոյ «հագդ տին»ին ընդունած են 40ի չափ հայեր, որոնց մէջ էին ճէհտի Սարգիս իր զաւակներով, աղօրեպան Սինաս, եւն., եւն.:

Հազիւ թէ Հայ լուսաւորչական ընտանիքներու վերջին կարաւանը ճամբայ ելած է քաղաքէն, կառավարութիւնը ձեռնարկած է այս անգամ քշելու կաթոլիկներն ու բողոքականները միեւնոյն ժամանակ: Առաջին անգամ ճամբայ հանուած է Հայ-բողոքական երեւելիներէն և նոյն հասարակութեան գլխաւոր վարիչներէն Կէյիքեան Գրիգոր աղան իր փեսին Սալիպեան Զիայի հետ, ընտանեօք: Սակայն անոնք հազիւ թէ մեկնած էին, երբ կառավարիչը ետ բերել տուած է զանոնք: Ամիս մը մնացած են քաղաքը և ապա դարձեալ քշուած: Բողոքական և կաթոլիկ կարաւաններուն երեք օր պայմանաժամ

տրուած է քաղաքը թողլու համար: Առաջին կարաւանին մէջ, ուր կառավարիչին մտերիմները կը գտնուէին, դիմած են անոր, խնդրելով որ տրուած երեք օրը ութի վերածուի: Այս դիմումին ի պատասխան կառավարիչը մտերմաբար և ամենաշնական կերպով յայտարարած է.- Խորհուրդ կտամ որ ամենաարագ կերպով մեկնիք և Հալէպ երթալով ժամ առաջ հանգստանաք, որովհետեւ իթթիհատի կեդրոնը որոշած է այլեւս փակել Հալէպի ճամբան հայ տարագիրներու առջեւ և ասկէ յետոյ ճամբայ հանուելիք կարաւանները ղրկել Տէր-Զօր, իսկ Տէր-Զօր երթալը ամէն կերպով վտանգաւոր է:

Իսկապէս կաթոլիկներու առաջին կարաւանն է որ Հալէպ գացած է, միւսները ղրկուած են *Զարդաստանի ուղղութեամբ:* Ինչպէս ամէն տեղ, Մարաշի մէջ եւս տեղական կառավարութեան յանձնարարութեամբ շրջակայքի աւազակաբարոյ գիւղացիները, քիւրտ թէ թուրք, յատկապէս զինուած են և ճամբու ընթացքին քաղաքէն 3-5 ժամ հեռու սոթթած կարաւանները, անպատասխանատու կերպով:

Երեք յարանուանութիւններէ ընդամէնը 2000 անձ մնացած է քաղաքը, իբր արհեստաւոր, մասնագէտ, գործաւոր, եւ այլն:

Զինադադարէն ետքի Մարաշի դէպքերուն մէջ նահատակուած Յակոբ Խըռլագեան, քաղաքին մէպուսը, Պոլսոյ մէջ ամէն ազդեցութիւն բանեցուցած և երկրորդ աքսորով մը դէպի Գոնիայի Գոչ-Հիսարը քշուող իր ազգականներուն մէկ մասը կրցած է փրկել:

Մարաշի տեղահանութիւնը և դէպքերը վարած են կառավարիչ Իսմայիլ Հագգը (Զեյթունէն Նազարէթ Չավուշը բերող կառավարիչ Ալի Հայտար ուրիշ տեղ փոխադրուած էր աւելի բարձր պաշտօնով մը, տարագրութիւնը սկսելէ առաջ), թահրիրաթ միւտիրի սեւերես արիւնկզակ ճէվտէթ, էշրաֆէն Գատըզատէ Հաճի Հասան, զաւակը Զիա, փեսան դեղագործ Լութֆի, Իթթիհատի պատուիրակներէն Գօճապաշ օղլու Հաճի Իպրահիմ, Հաճի Ալի աղայի զաւակը Էօմէր, Նաճի և Հաճի Ահմէտ, ինչպէս նաեւ Տէտէ զատէ Մէհմէտ, ոստիկան-զինուորներու փոխ-հրամանատար Էօմէր, քաղապետական նախագահ Պէչէն պէյ զատէ Հաճի պէյ, փաստաբան Սապսըզ զատէ Հաճի, Պէչէն պէյ զատէ Հաճի Իպրահիմ, եւն. եւն.»[1]:

Այսպիսով, 1915 թ. գողգոթային զոհ գնաց ևս մի հայաքաղաք Մարաշն իր շրջակա գյուղերով: Մյուս աղբյուրների հեղինակները վերահաստատում են, որ մարաշցիները աքսորվեցին դեպի Դեր Զոր և փրկվողներին մատների վրա կարելի է հաշվել:

II. ՀԱՃԸՆԻ ԲՈՆԱԳԱՂԹԸ

Հաճըն գավառն ուներ աշխարհագրական հարմարավետ դիրք, գեղեցիկ բնություն, հարուստ բուսականություն:

Այն փռված էր Կիլիկիայի հյուսիսային կողմում, Քերմես կամ Պառակ լեռան հարավում, ծովի մակերևույթից 1140 մետր բարձրության վրա[2]: Հաճընը կարծեք թե այն բանալին էր, որը Հյուսիսային Կիլիկիան միացնում էր Կապադովկիայի և Փոքր Ասիայի ետնախորքի հետ, մյուս կողմից կամուրջ դառնում Կիլիկիայի և Ասորիքի միջև:

---

[1] *Մ[եպուհ] Ակունի,* Սիլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Բ տպագրություն, Կ. Պոլիս, 1921, էջ 297-301:

[2] Հաճընի պատմության մասին գոյություն ունի ծավալուն գրականություն: Հիշենք դրանցից մի քանիսը միայն. *Հ. Պ. Պողոսյան,* Հաճընի ընդհանուր պատմություն, Լոս Անջելես, 1942: *Ս. Հ. Թերզյան,* Հաճընի ութամսյա դյուցազնամարտը, Բուենոս Այրես, 1956: *Գնել եպիս. Ճերեճեան,* Հաճընի դյուցազնական ինքնապաշտպանությունը, Պեյրութ, 1965: *Ս. Ակունի,* Սիլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921· *Գրիգորիս ծ. Վարդապետ Պալաքեան,* Հայ գողգոթա, Ա հատոր, Պեյրութ, 1977 (Բ տպագրություն): *Ջ. Ս. Կիրակոսյան,* Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967:

Քաղաքը պատմության մեջ սկսել է հիշատակվել Կիլիկյան Հայաստանի Ռուբինյան, ապա Հեթումյան իշխանությունների իրար աղերսող տասնամյակներին: Օսմանյան բռնապետության հարյուրամյակներում Հաճընը վերածվում է հայաշատ քաղաքի շրջակայքում ունենալով հայկական տասնյակ գյուղեր ու ավաններ: Հաճընը մտնում էր Ադանայի կուսակալության կազմում, XX դարաշեմին ուներ 5000 տնտեսություն, շուրջ 35000 բնակչությամբ: *Հատուկ ընդգծենք, որ այն միակ քաղաքն էր ողջ Թուրքիայում, որտեղ բնակվում էին բացառապես հայեր:*

Հաճընն հայաքաղաքը ևս ապրեց համիդյան վարչակարգի տապալմանը հաջորդող այն եղբայրացումը, որը տեղի ունեցավ Թուրքիայում: Նրանք փողոցներում պտտացրեցին *ազատություն, հավասարություն, եղբայրություն,* նույնիսկ *արդարություն լոզունգները,* որոնք շուտով պիտի դառնային խլացուցիչ միջոց իրենց աղմուկի ժխորում խեղդելով Ադանայի և շրջակա գավառների մեջ մորթված հայերի վերջին ճիչը:

Շլացուցիչ ու վերամբարձ, պոռոտ խոսքերը ոսկյա փոշի մաղեցին հաճընցիների աչքերին, կուրացնելով նրանց, թույլ չտվեցին նկատելու, որ օսմանյան սահմանադրությամբ թուրքը միայն հին շապիկը մի կողմ նետեց և նոր շապիկ հագավ, որի գույներով շլացան նրա պշացյալ աչքերը, մինչև վրա հասավ օրհասը: Մերկ իրականությունից հետո միայն հաճընցիները կկոցած աչքերը բացեցին, տեսան ճշմարիտը, որն արդեն ուշ էր, քանի որ «նապաստակն անցել էր գետի մյուս ափը»[1]:

Այդ գուժկանն ու օրհասը Ադանայի աղետն էր, որը մահվան գերանդիով հնձեց 30 հազար անպաշտպան հայերի, երկու շաբաթում մոխրակույտի վերածեց շեն ու բարգավաճ, հարուստ ու գեղեցիկ այդ քաղաքը:

Պատերազմի սկզբին Հաճընն ու հաճընցիները ոչ միայն զորեղ էին և կարողացան պաշտպանել իրենց անվտանգությունը, այլ օգնության ձեռք կարկառելով Սսի հայությանը, նրան ժամանակավորապես փրկեցին աղետից: Ցավոք, այդ անվտանգությունը երկար չտևեց: Շուտով այդ արծվաբնի բնակիչները, իրենք ևս ինքնապաշտպանության հույժ կարիք զգացին:

«Այս նպատակով խորհրդակցական ժողով մը կը գումարուի Հաճընի Ս. Գէորգ եկեղեցիին մէջ եւ կը կազմուի *Ինքնապաշտպանութեան Մարմին մը:* Խմբապետներ կը նշանակուին Վարի եւ Վերի թաղամասերուն համար: Խորհրդատու Մարմին մըն ալ գոյութեան կը կանչուի, որուն գլուխն էր Առաջնորդ Ներսէս Եպս. Դանիէլեան, կողքին ունենալով Միս Ռոզ Լեմպըրթը - ամերիկացի միսիոնարուհի Հաճընի մէջ եւ չորս երեւելի հաճընցիներ:

Հաճընցիք իրաւունք ունէին այս քայլերը առնելու, որովհետեւ օրերը յղի էին անակնկալներով, մանաւանդ վստահութիւն երբեք չունէին թուրքերու վրայ, որոնց մէջ անպակաս էին կրակի հետ խաղցողներ, մէկ վայրկեանէն միւսը հրդեհելու համար ամբողջ Հաճընն ու անոր խաղաղ ժողովուրդը»[2]:

Երկուստեք ընդհարման նախապատրաստվող հաճընցիներն ու քաղաքամերձ թուրք ոստիկանությունը շարունակում են փոխադարձ սպառնալիքներով «կյանքը քաշկռտել» մինչև 1915 թ. հունվարյան տոները: Զատկի արարողության կատարման հաջորդ երկուշաբթին «Սուրբ Գէորգ եկեղեցւոյ պատին վրայ, առաւօտ մը կանուխ, կը գտնուի թուղթ մը, որուն վրայ ի միջի այլոց գրուած էր. *«Ամէն հայ թող զէնք գնէ եւ ինքնապաշտպանութեան նուիրուի»:* Նոյն գրիչը *արթուն մնալ* կը յանձնարարէր եւ *արժանի պատիժ կը խոստանար դաւաճաններուն»*[3]*:*

---

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 869:

[2] *Գնել եպս. Ճերեճեան,* նշված աշխատությունը, էջ 870:

[3] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 871:

Այս հայտարարությունը փաստորեն կազմակերպվել էր թուրքական լրտեսական ցանցի կողմից, եկեղեցու պատին էր փակցվել հայի ձեռքով, և այժմ էլ շատ խիստ պատիժներ էին սպասվում: Իսկույն թուրք զինվորապետի մոտ է կանչվում քաղաքի հոգևոր առաջնորդ Սարաճյան սրբազանը և նրանից, երկու օրվա պայմանաժամանակով, պահանջվում մատենագրի հեղինակներին: «Կառավարության կողմե բռնադատվելով Արամ Պօյաճեան մեղքը կը բարդէ հնչակեաններու վրայ եւ 35 անմեղ հնչակեաններ կը նետուին բանտ: Միջամտութիւններով անոնցմէ կարելի կ'ըլլայ ազատել 24 հոգի միայն, եւ մնացեալ 11-ը կը հանուի Ատանայի պատերազմական ատեանին առջեւ, ուր մահուան կը դատապարտուին 4 անմեղներ ու կ'աքսորուին 6 հոգի: Միայն Արամ Սանթուրը կը վերադարձուի Հաճընի, որ խոստացած էր, պատերազմական ատեանի նախագահ Ավնի պէյի, յայտնել Հաճընի մէջ պահուած զէնքերուն վայրերը»[1]:

Հաջորդ օրը Սարաճյանը կանչվում է գավառապետ Ավնի բեյի մոտ, որը պահանջում է հայտնել «խռովարարների» անունները և ասել զենքի տեղը: Չհայտնելու դեպքում, թուրքն սպառնում է ավերված Զեյթունից 4 հազար ասկյար բերել և հաճընցիներին տեղահան անել:

Սրբազանը, հասկանալով խնդրի երկսայրանիությունը, մտահոգված, վերադառնում է առաջնորդարան և հրավիրելով քաղաքի 80 երևելիներին, նրանց տեղյակ է պահում թուրքերի պահանջի մասին: Փաստորեն քննարկում է տեղի ունենում, խնդիր ունենալով որոշել, զենքը ձեռքին դիմել ***ինքնապաշտպանության,*** թե՞ զենքերը հանձնելով ընդառաջել Ավնի բեյի պահանջին:

Հավաքվածները, ծայների չնչին մեծամասնությամբ, ի նկատի ունենալով իրենց անպատրաստ վիճակը, որոշում են փաստորեն գնալ զինաթափման ճանապարհով: Հարցին խառնվում է նաև Սահակ կաթողիկոսը, սակայն իզուր, թուրքերը դրանով ոչ թե բավարարվում են, այլև ավելի են գազազում:

Սեպուհ Ակունին Հաճընի զինաթափման և ժողովրդի տեղահանության մասին գրում է. «Կառավարությունը անվտանգ կերպով պարպելու յաջողելէ ետք Կիլիկիոյ մէջ ամէնէն աւելի յանդուգն ճանչցուած Զէյթունը, Տօրթ-Եօլն ու Մարաշը, կը վախնար տակաւին երկու քաղաքներէ, ***Հաճընէն և Սիսէն:*** Այս իսկ պատճառաւ ուզած է այս վերջին երկու քաղաքները եւս հպատակեցնել իրեն, առանց արիւնահեղութեան տեղի տալու և այս նպատակով յանձնարարած է Սահակ Կաթողիկոսին որ հանդարտութեան և հպատակութեան պատուէրներ տայ ժողովուրդին:

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը իբր բարձրագոյն իշխանութիւնը որ կրնար ազդել ժողովուրդին վրայ, կառավարութեան այս յանձնարարութենէն ետք, 1914-1915 դեկտեմբերի-յունվարի միջոցներուն անձամբ գացած է Հաճընն և եկեղեցիներէն խոհեմութեան ու հանդարտութեան յորդոր կարդացած է ժողովուրդին: Սակայն ճիշդ այս օրերուն զուգադիպող դէպք մը պահ մը դժուարացուցած է Ն. Վեհափառութեան պաշտօնը: Այդ դէպքը ուրիշ բան չէ, եթէ ոչ սա՛ թէ առտու մըն ալ տեսնուած է որ եկեղեցիին պատին փակցուած մարտահրաւէր յայտարարութեամբ մը կոչ կ'ըլլար Հաճընի Հայութեան՝ ժամ առաջ պարզել ապստամբական դրօշ և փրկուիլ ամէն վտանգէ, կամ գոնէ մեռցնել ու պատուաւորապէս մեռնիլ:

Կաթողիկոսը այս թուղթը անմիջապէս ղրկած է կառավարութեան, անկէ բան մը ծածկած չըլլալու կանխահոգութեամբ: Ասոր վրայ քննութեան ձեռնարկուած է և կասկածով ձերբակալուած են երեք հոգի ու տարուած Ատանայի պատերազմական ատեանը, իբր հեղինակ այդ ապստամբական կոչին, դատուելու համար: Հարեւանցի դատավարութենէ մը ետք երեքի մասին ալ կախաղանի վճիռ տրուած ըլլալով՝ ասոնցմէ վաճառական

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 871:

Կիզիրեանը կախուած է Ճիհանի, իսկ Նազարէթ Չըխըրտըմեանն ու Այնթապցի Լուսանկարիչ Ստանայի մէջ: Մինչ բուն Հաճընի մէջ կացութիւնը տագնապալի դարձած է:

Եկեղեցիին պատը փակցուած թուղթի դէպքէն ամիս մը վերջը ոստիկան-զինուորներու հրամանատար հազարապետ Ավնի (Ամանոսի շրջանակին մէջ Պաղտատի գիծին վրայ գտնուող հայութիւնը տեղահանող և բնաջնջող արիւնկզակը) գացած է Հաճընը, քաղաքին հայութեան դաս մը տալու պաշտօնով: Ավնի իջած է քաղաք, իսկ իրեն հետ եկող 4000ի մօտ թուրք զինուորական ուժը առժամապէս տեղաւորուած է քաղաքէն հինգ ժամ հեռու գտնուող տեղ մը: Ավնի տեղւոյն ոստիկանական կազմակերպութեան պաշտօնատարներուն պէտք եղած նախազգուշական հրահանգներ տալով հանդերձ լուր ղրկած է իր բերած զինուորական ուժին որ քաղաք մտնէ: Հրամանը գործադրուած է անմիջապէս և հետեւեալ առտուն իսկ քաղաքը պաշարուած և սպառնալիքի տակ առնուած է:

Ավնի զին. ուժին ժամանումէն յետոյ իր մօտ կանչած է քաղաքին հայ մեծամեծները և պահանջած է պահուած բոլոր զէնքերու յանձնումը, սպառնալով հակառակ պարագային քարուքանդ ընել Հաճընը: Ճիշդ այս օրերուն է որ Կաթողիկոսէն նոր նամակ մը հասած է Հաճընի առաջնորդ Սարաճեան եպ.ի, յանձնարարող որ ժողովուրդը անսայ կառավարութեան հրամաններուն և յանձնէ իր զէնքը:

Ժողովուրդը ամենայն անկեղծութեամբ յանձնած է իր զէնքերը և շատեր աւելի ծեծ ուտելէ ազատելու համար իրենց յանձնածէն զատ նոր մը եւս գնած ու տարած տուած են Ավնիի հրամանին վրայ:

Զէնքերու հաւաքումէն յետոյ սկսած է տեղահանութիւնը սոսկալի պայմաններու տակ և դիտմամբ մինչեւ Հալէպ հետիոտն ղրկուած են մեր ազգակիցները, հեռաւոր ճամբէ մը, փոխանակ Սիսի վրայով տարուելու: Ոչ մասնակի աքսոր տեղի ունեցած է Հաճընի մէջ, ընդհ. տեղահանութենէն առաջ և ոչ ալ ո և է ձեռնարկ Հայերու կողմէ իսլամանալու նպատակով. միայն թէ տեղահանութեան միջոցին խտրութիւն չէ դրուած և հաւասարապէս հանուած են թէ՛ լուսաւորչականը, թէ՛ կաթոլիկը և թէ՛ բողոքականը: Հազիւ մաս մը այրի կիներ մնացած են քաղաքը, իբր զինուորի ընտանիք: Տեղահանութիւնը վարած են գլխաւորաբար Սիսի այն ատենուան կառավարիչը, ոստիկան զինուորներու հրամանատար Ավնի, Իթթիհատի տեղւոյն քլիւպի անդամները, եւն:

Տեղահանութիւնը վերջանալէն յետոյ Ավնիի հրամանով քաղաքը այրուած է, պարզապէս գայն անգամ մըն ալ բնակելի վիճակէ դադրեցնելու համար:

Զինադադարին՝ Հաճընի 25000 հայութենէն հազիւ 5000 վերապրողներ գտնուած և դարձեալ իրենց ծննդավայր հաստատուած են»[1]*:*

1. Հաճընը քաղաքի և մերձակա գիւղերի բնակչութեան ապրած ծանր ողբերգութեան մասին է պատմում Գրիգորիս Պալաքեանը, որը եղեռնից վերապրողներից էր: 1916 թ. իբրև գաղթական, նա եղել էր Հաճընում, տեսել նրա ավերված, մոխրացված վիճակը, հետագայում այդ մասին գրելով և լրացնելով իր նախորդներին: Նա պատմում է. *«Հաճընն, որ 1915ի հայոց տարագրութենէն առաջ 28000 բնակչով գուտ հայաբնակ քաղաք մըն էր՝ շուրջ 5000 տուներով, այժմ աւերակներու կոյտ մըն էր: Հայոց տարագրութենէն քիչ վերջ 1915ի աշնան՝ թուրքերը այրած էին քաղաքը, մի անգամ՝ ընդ միշտ վերջ տալու համար երբեմնի Ռուբենեանց հռչակաւոր Վահկայ բերդի մօտակայ հայ արծիւներու այս լեռնային բոյնին:*

Այրուած քաղաքէն միայն մնացած էր քաղաքին բարձրութեան վրայ հայոց դպրոցին քարաշէն եւ հոյակապ եռայարկ շէնքը: Իսկ քաղաքին ստորոտը մնացած էին միայն հազիւ 200 տուներ աղքատիկ հայերու: Ասկէ զատ քաղաքին ստորոտը Սիս երկարող ճամբուն վրայ դեռ կանգուն էր կառավարական շէնքը, եւ ասոր մօտակայ

[1] *Ս[եպուհ] Ակունի,* Սիլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը. Կ. Պոլիս, 1921. էջ 298-301:

50 տունի մօտ կառավարական թուրք պաշտօնեաներու բնակարանները փայտեայ վանդակներով «խաֆէս»:

Հաճընն կը գտնուի ձորի մը մէջ, որուն մէջտեղէն կ'անցնի Հաճընի գետը եւ երկու կողմը կը բարձրանան բաւական հսկայ լեռներ, որոնց ծախակողմը (դէպի Սիս) լեռներու գահաւանդին կառուցուած է քաղաքը: Իսկ գետին հետ զուգընթաց կ'երթայ մեծ պողոտան դէպի Սիս: Գետին աջակողմի սարաւանդակին վրայ կառուցուած է քարաշէն եւ պարսպապատ Ս. Յակոբ Մծբնայ հայրապետի պատմական վանքը՝ բաւական գեղեցիկ շինուածքով:

Միայն այս վանքն էր, որ քաղաքէն հեռու, հանդիպակաց սարալանջին գտնուելուն՝ ազատ մնացած էր հրդեհի լափլիզող բոցերու աւերիչ հպումէն:

Հաճընի 28000 զուտ հայ բնակչութենէն եւ շրջակայ 22 հայ գիւղերու հայութենէն՝ հազիւ մնացած էին 350ի չափ անչափահաս մանուկներ եւ զառամած ու կորաքամակ պառաւներ: Մնացեալ ժողովուրդը քշուած էր անապատ՝ արեան իր տուրքը վճարելու համար հայ ազատագրութեան դարեւոր դատին:

Թուրքը ուզած էր այրել ու հիմնահատակ կործանել այս զուտ հայաբնակ քաղաքը, որպէս զի անգամ մըն ալ հայերը չկրնան այսպիսի անմատչելի լեռներու եւ կիրճերու մէջ արծիւներու անառիկ բոյներ շինել ու բռնակալ կառավարութեան դէմ գլուխ ցցել:

Այո՛, Հաճընն քաղաքը իրական կմախք մըն էր, որ թէ մեր աչքերուն եւ թէ՛ մեր սրտերուն կը խօսէր անձայն, յուզելով մեզ եւ նոր վէրքեր բանալով մեր արդէն խոցոտ սրտերուն վրայ»[1]:

Գնել Ճերեճյանը, ամփոփելով Հաճընի մասին գրած իր աշխատությունը, անում է երեք կարևոր եզրահանգում: 1. «Հաճընցի առաջին կարավանն էր այս, որ աւա՜ղ, վերջինը պիտի չըլլար: Տարագրուեցան 30-35 000 Հաճընի հայ բնակիչները, ի բաց առեալ ծեր ու անկար, հիւանդ ու բանակի ծառայութեան մէջ եղող զինուորականներու ընտանիքները, ընդամէնը մօտ 1000 հոգի:

Հաճընցիներ հետեւեցան անողոք ճակատագրին զէյթունցիներու, չորք-մարզուանցիներու, մարաշցիներու եւ այնթապցիներու եւ տարագրութեան ճամբուն վրայ ցանեցին զոհեր *Ռաս-Իւլ-Այնի, Մեսքենէի, Ռաքքայի, Պապի, Մումպուճի եւ Տէր-Զորի* կիզիչ ու անհորիզոն անապատներուն մէջ»[2]:

2. Հաճընցիների վերապրողները, բեկորացած տուն վերադարձան Մուդրոսի զինադադարից և պատերազմում, Թուրքիայի կրած պարտությունից հետո: Հայ ստեղծարար ձեռքը աստվածային թռչունի պես նորից վերընձյուղեց իր բույնը և նորից շարունակեց կենդանության շունչ հաղորդել մոխրացած քաղաքին: Սակայն Քեմալ կար, որն ավելի բորենի էր, քան նախորդները:

Անցյալից դաս առնելով՝ անձնական փորձով իմաստնացած հաճընցիները, 1920 թ. ապրիլին ինքնապաշտպանության դրոշ են պարզում: Փոքրաթիվ մարդկանցով, նրանք մի քանի ամիս շարունակում են պայքարը քեմալական հզոր ռազմական մեքենայի դեմ: Ինքնապաշտպան հերոսներն առավել կդիմանային, եթե իրենց կոկորդը չսեղմեր սովի ոսկրոտ ձեռքը: Իսկ Ֆրանսիա՞ն, իսկ եվրոպական շահամոլ քրիստոնյա տերություննե՞րը, նույնիսկ փարիսեցի ԱՄՆ-ի ներկայացուցիչնե՞րը: Այդ բոլորի հասցեին ամոթանքի դառը խոսքեր է ասում Գնել վարդ. Ճերեճյանը: Նա Քրիստոսի անունից, իբրև քրիստոնյա հոգևորական, քրիստոնեական անեծք է կարդում ոչ միայն թուրքերին, այլև Արևմտյան տերություններին:

---

[1] *Գրիգորիս ծ. վարդ. Պալաքեան,* Հայ գողգոթա, Դրվագներ հայ մարտիրոսագրութենեն. Պեռլինեն դեպի Զոր. Ա հատոր. Պեյրութ, 1977 (Բ տպագրություն), էջ 369-371:

[2] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 872:

Սրբազանը գրում է. «Ալճիրա Մարոք, եւ այլն եւ անոնց ոչ-զանցառելի ռազմամթերքն ալ կը սահեցնեն ֆրանսական մեծազօր բանակի «աղքատ» զինամթերանոցին մէջ: Ո՞վ կրնայ ժխտել՝ թէ այդ ռազմանիւթն ալ ֆրանսացիք, ձեռքի տակէ, թուրքերուն չյանձնեցին, որպէսզի անոնք հայուն զէնքով հայ խողխողեն...:

«Ասպետական» Ֆրանսա՝ ասպետական ոգիէն պարպուած, ասպետականի պիտակին տակ միայն թաքնուած, իսկական ասպետական հայուն դէմ դաւաճանեց, որ իր արիւնն անգամ չէր սակարկած Ֆրանսիայի փառքին ու պատիւին համար:

Ամո՜թ...

Ամո՜թ նաեւ ամբողջ քաղաքակիրթ աշխարհին, որ լսեց ու կարդաց Ատանայի հաճընցի ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒՆ ՈՒ ՔՈՅՐԵՐՈՒՆ ԿՈՉԸ, ՄԱՅՐԵՐՈՒ ՏՕՆԻ վաղորդայնին, 1920 Մայիսի 14ին եւ խուլ ծեւացաւ ու խեղդեց խղճի ու խղճմտանքի ծայնը, գութի ու կարեկցութեան զգացումը իր ներսիդին, եւ թոյլ տւաւ որ հայ մայրեր ու քոյրեր որբանան ու այրիանան Հաճընի մէջ, օր ցերեկով, արեւու բորբ շառայլներուն տակ:

Ամո՜թ նաեւ Միացեալ Նահանգներու եւ Անգլիոյ վարիչներուն, որոնք 1920 թուի Յունիսի 29ին, ստացան աղերսագրեր, Ֆրանսայի վարիչներուն հետ, Միացեալ Նահանգներու հաճընցիներուն կողմէ, եւ դիւանագիտութիւն խաղալով չուզեցին վշտացնել այսօրուան ու վաղուան իրենց դաշնակից թուրքերուն սիրտը, եւ կռնակնին դարձուցին, աչքերնին փակեցին ու ականջները խցեցին, չտեսնելու ու չլսելու համար այն բոլորը, որոնք կը կատարուէին քսաներորդ դարու ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ ազգերու աչքերուն առջեւ, քիչ մը անդին, Հաճընի մէջ:

Ամո՜թ, հազա՛ր ամօթ...»[1]:

3. Թողնենք թող խոսի վարդապետը. «Ինկավ Հաճընն ու մեռաւ հաճընցիութեան մեծագոյն մասը, մօտ 10000 հոգի, բայց մէկի փոխարէն բուսան սունկի պէս, երկու Հաճընններ. մէկը միւսէն աւելի գեղեցիկ ու աւելի փառաւոր,- մէկը Լիբանանի գեղածիծաղ ու հիւրընկալ ափերուն վրայ, Պէյրութի մէջ, Նոր-Հաճընն անունին տակ, իսկ միւսը՝ հայրենի օրհնեալ ու փառաւորեալ հողին վրայ՝ քաղաքատիպ Հաճընն Աւան անունին տակ, Արգնի բուժավայրին մօտիկը:

Ու հաճընցին չկորա՜ւ»:

III. ԿԵՍԱՐԻԱՅԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Կեսարիա (Kayseri), *Կայսերի, Գայսերի,* հնում Մաժաք, որոշ ժամանակ *Եվսեբիա* քաղաքն ու համանուն գավառն ընկած էին Փոքր Ասիայի կենտրոնական հատվածում, փռված էին *Արգոս* լեռան ծախակողմյան լանջին, որոնց փեշերը ողողելով, հոսում էր Ալիս (Կըզըլ Իրմակ) գետի *Կարասու* վտակը: Այն համանուն վիլայեթ-փաշայության, վալիանիստ վարչական կենտրոն էր և առևտրատնտեսական կյանքի զարգացման համար ուներ նպաստավոր դիրք[2]:

---

[1] *Գնել եպս. Ճերեճեան,* Հաճընի դիւցազնական ինքնապաշտպանութիւնը. էջ 884-885:

[2] Կեսարիայի պատմության մասին պետք է հիշատակել հետևյալ աշխատությունները, որոնք իհարկին օգտագործել ենք սույն համառոտ ակնարկը շարադրելիս: *Ա. Ալպոյաճեան,* Պատմություն Հայ Կեսարիո, հ. 1-2, Կահիրե, 1937: *Ս. Մ. Ծոցիկյան,* Արևմտահայ աշխարհ, Նյու Յորք, 1947: *Մ[եպուհ] Ակունի,* Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921, էջ 191-196: *Վ. Կեսարացի,* Կեսարիոյ և շրջակայից աբյան տուրքը Հայոց Մեծ եղեռնին. («1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 336-361): ՀՍՀ, հ. 5, Երևան, 1979, էջ 386-387. *Մ. Դարբինյանի* «Կեսարիա» հոդվածը: *Գրիգորիս ծ. վրդ. Պալաբեան,* Հայ գողգոթան, Դրվագներ հայ մարտիրոսագրության, Ա հատոր, Պեյրութ, 1977, էջ 308-354, 454-470: *Հայկ Ղազարյան,* Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը, 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 328-340, 365-374:

Կեսարիան կազմում էր պատմական Կապադովկիայի հիմնական մասը և իր պատմությամբ գալիս էր դարերի խորքից: Նրա մասին հիշատակություններ կան *Մովսես Խորենացու* քերթողական աշխատասիրության էջերում, որտեղ ասվում է, թե հայոց ավանդական թագավոր Արամը երկրամասի կուսակալ էր նշանակել իր զորավարներից մեկին՝ Մշակին: Նորանշանակ կառավարիչը, Արամ թագավորի հանճարարությամբ, այստեղ կառուցում է մի դաստակերտ, պարսպապատում և կոչում իր անունով: Ահա այստեղից է, որ հետագայում Մշակ անունը աղավաղվել և ստացել է Մաժաք ձևը: Հետևաբար *Մաժաք-Կեսարիան* հիմնադրումից մինչև Աքեմենյանների տիրակալության կազմում մտնելն էլ *հայկական էր,* հետևաբար և բնակչության գերակշռող մասը *հայերն էին*[1]*:*

Իր բնական դիրքի, հատկապես առևտրական բանուկ ճանապարհների խաչմերուկում գտնվելու, ինչպես նաև Արևելքն Արևմուտքին աղերսող ռազմաստրատեգիական մայրուղիների կենտրոնակետում հայտնվելու պատճառով, երկրամասը հաճախ է փոխել գերիշխող տիրակալներին: Դեռևս մ. թ. *տասնյոթ* թվականին Կապադովկիան նվաճեցին հռոմեացիները, որոնք ի պատիվ *Գայոս Հուլիոս Կեսար Օկտավիանոս* կայսեր, *Մաժաք-Եվսեբիա* քաղաքը վերանվանեցին *Կեսարիա,* որը հարատևում է մինչև այսօր:

1022 թ. հայկական ծագումով, բյուզանդացի Բարսեղ Երկրորդ կայսրը Կեսարիան նվիրեց Սեբաստիայի իշխան Դավիթ Արծրունուն, որն իր հերթին Բագրատունյաց թագավորության անկման պահին, այսինքն՝ 1045 թ., արու զավակ չունենալու պատճառով, քաղաքը հանձնել է փեսայացած *Գագիկ Բագրատունուն:*

1065 թ. Կարսի հայոց թագավոր Գագիկ Աբասյանը, զգուշանալով արևելքից արշավող սելջուկ-թուրքերի հարձակումներին զուգորդվող ավերածություններից, երկիրը հանձնեց բյուզանդական *Դուկաս* կայսրին (1059-1067), փոխարենը ստացավ Կապադովկիան Կեսարիա կենտրոնատեղով: Այլև անթագակիր թագավորի տեղափոխության ժամանակ, նրա հետ բազմաթիվ հայեր գաղթեցին և բնակություն հաստատեցին Կեսարիայում: 1073 թ. քաղաքն ընկավ սելջուկ թուրքերի արշավանքներից, սակայն հայկական տարրն այս անգամ զարմանալիորեն չբռնագաղթեցվեց: XI դարի վերջերին Կապադովկիայում հայերն այնքան ստվար թիվ էին կազմում, որ ձևավորեցին *հայոց հոգևոր թեմական առաջնորդությունը:* Դժբախտաբար այդ «փարթամությունը» երկար չտևեց: 1243 թ. մոնղոլները ավերեցին այն և մեծ վնաս պատճառեցին հայ վաճառականությանը[2]:

Շուրջ երկու դար իշխանափոխության ենթարկված Կեսարիային սպասվում էր նոր և հիմնավոր դժբախտություն: 1471 թ. մայիսին երկրամասը վերջնականապես նվաճվեց օսմանյան թուրքերի կողմից, որոնց դժոխային բռնապետությունը շարունակվում է մինչև օրս:

Հայերը Կապադովկիայի գավառում, հատկապես Կեսարիայում հաստատվել են վաղնջական ժամանակներից և գնալով այնքան են ստվարացել, որ ձևավորել են Հայ առաքելական եկեղեցու Կեսարիայի հոգևոր բազմամարդ թեմը: *Հանրահայտ է, որ Հայոց առաջին կաթողիկոսները (IV դարում) ձեռնադրվում էին և օծվում Կեսարիայում:* Սակայն քաղաքի հայ համայնքն առավել մարդաշատ դարձավ XIV հարյուրամյակից, առավել ևս Կիլիկյան Հայաստանի իշխանության անկումից ի վեր:

Կեսարիան և նրան շրջապատող հայկական գյուղերն առևտրատնտեսական վե-

---

[1] ՀՍՀ, հ. 5, էջ 386:

[2] *Ա. Ալպոյաճեան,* Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հատ. առաջին, Կահիրե, 1937, էջ 15-21: Տե՛ս նաև ՀՍՀ, հ. 5, էջ 386-387:

րելք ապրեցին XIX դարամիջից սկսած[1], մասնավորապես մինչև Առաջին աշխարհամարտը: Այդ տարիների Կեսարիան (քաղաքը) ուներ ***15 հազարի հասնող*** հայ ազգաբնակչություն, որի ձեռքում էր կենտրոնացված ողջ նահանգի և արհեստագործությունը, և առևտուրը:

Տակավին XVII դարի սկզբներին ուղեգրող-ճանապարհորդ Սիմեոն Լեհացին գրում էր, թե Կեսարիան ունի «... փարթամ վաճառականք եւ խոճայք, անուանի մեծատունք», իսկ արհեստավորները «ամէն դերձակք և խաֆթանճիք են»[2]: Երկու հարյուրամյակ հետո Ղ. Ինճիճյանը հայ արհեստագործների մասին վկայում է, թե «Բնութեամբ ճարտարք են և յաջողակք ի գիւտս արուեստից. մանաւանդ ի ճարտարապետութենէ և ըստ մեծի մասին են հիւսունք, որմնադիրք, քարահատք, քանդակագործք, նկարիչք, մանաւանդ երևելի ճարտարապետք, զի ոչ միայն այս գաւառ, այլ նաև Իստանպոլ մեծամեծ ապարանք իշխանաց և թագաւորին, մզկիթք և բաղանիք, կեսարացւոց, հայոց և յունաց են գործած, թող զայլ փոքր շինուածս տանց»[3]: Հմուտ աշխարհագրագետը հիշատակում է նաև ***«պէս-պէս գործարաններ»,*** որտեղ «գործեն աստառ. դեղին սեկ պատուական, որոյ գործարան ***տեպպաղխանէ է*** ի Թալաս Գափուսին»[4]: Ակնհայտ է, որ երկու հեղինակներին իրարից զատող ժամանակահատվածում, Կեսարիան, արհեստագործության մարզում նախկին, գրեթե խղճուկ մակարդակից կտրվել էր և հայկական տարրի ընդունելու, խժդժություններից համեմատաբար հեռու լինելու, առևտրի հնարավորություն ունենալու և այլ պատճառներով նվաճել տնտեսական նոր բարձունքներ: Քաղաքում կազմակերպվել ու ընդլայնվել էին բամբակագործական, մետաքսագործական ու աբաճիների մանուֆակտուրաներ, ստվարացել էր հայ արհեստագործների թիվը:

Կեսարիայի տեքստիլագործների, արհեստագործ-մանուֆակտուրաների ծյուղերից արդեն հայտնի էին ***յազմաչիները, ջուլհակները, ջեջիմագործները,*** իսկ ավելի ուշ նաև ***գորգագործները:*** Սակայն Կեսարիայի արհեստագործության զարգացման դարի առաջին կեսի մակարդակը վերելք է համարվում նախկինի հետ համեմատած: Նրա առաջընթացը վերապահված էր դարի վերջին քառորդին, մասնավորապես հաջորդ դարաշեմին: 1870-1890-ականներին այն առևտրական խոշոր քաղաք էր Թուրքիայում, սակայն արհեստագործության բնագավառում մնում էր Եվդոկիայի աշակերտը:

Արհեստագործությանը, նույնիսկ մանուֆակտուրային արդյունաբերությանը զուգընթաց, բնականաբար, պետք է որ զարգանար ներքին և արտաքին ոչ միայն ապրանքափոխանակությունը, այլև միջազգային առևտուրը: XIX դարի վերջին քառորդին Կեսարիան վերածվել էր արտաքին առևտրի շուկայի: Այստեղ էին կենտրոնացված մեծ հարստության հասած հայ առևտրականներ Մանուկյանները, Գարակեոզյանները, Զարդարյանները, ***Գյուլպենկյանները,*** որոնք հիմնականում «մանչեստրականներ» էին և բնակվելով Կեսարիայում, ողջ Թուրքիայով մեկ վաճառում էին անգլիական ապրանքներ[5]: Նրանց մեջ կային կերպասեղենի, պատրաստի հագուստի առևտրականներ, զինավաճառներ, երկաթի և երկաթեղենի, պղնձի և պղնձեղենի վաճառողներ: Առաջին անգամ կեսարացիները կազմակերպեցին անգլիական ու

---

[1] [1915] Աղետ և վերածնունդ. հեղինակ ***Աղետեն վերապրողներ,*** Փարիզ, 1952, ***«Կեսարիա»*** գլուխը, որի հեղինակն է ***Սարգիս Կյուրիլեյան,*** էջ 471-474:

[2] «Հանդէս Ամսօրեայ», 1935, էջ 90, ավելի մանրամասն տես «Պատմութիւն Հայ Կեսարիոյ», հատոր Բ, էջ 1494 և հետևյալը:

[3] ***Ղ. Ինճիճեան,*** Աշխարհագրութիւն, էջ 309-310:

[4] Նույն տեղում, էջ 313: Տես նաև ***Հայկ Ղազարյան,*** նշված աշխատությունը, էջ 200:

[5] ***Ա. Ալպոյաճեան,*** Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հատոր Բ, էջ 1471:

ֆրանսիական բազմաթիվ արժեքավոր գրքեր պարունակող գրավաճառանոցներ: Ահա սրանց մասին էր, որ պահպանողական Մրմրյանն ասում էր, որ վաճառում են ֆրանսիական «աստանդիկ նույնիսկ պոռնիկ գաղափարներ» պարունակող գրքեր:

Կեսարացի առևտրականներն իրենց ներմուծած ապրանքները վաճառում էին Թուրքիայի, առավելապես Արևմտյան Հայաստանի գավառներում: Անգլիական ու ֆրանսիական ապրանքների հակերը ռմբակոծում էին գավառի արհեստավորներին ու մանր առևտրականներին, տնտեսապես քայքայում նրանց, մղում պանդխտության: Կեսարացիների առևտրի շառավիղի մասին «Սուրհանդակը» գրում էր. «Երբ տակաւին Սամսոն յաճախող շոգենաւերը այժմեանին չափ բազմաթիւ չէին ու հաղորդակցութիւնները դժուար, և երբ տակաւին էնկիւրիի շոգեկառքին գիծը հեռուն կը մնար ներքնագաւառներէն, շատ տարիներ առաջ, հիմակուանին պէս, կեսարացին եւրոպական քաղաքներու հետ վաճառականական յարաբերութեան մէջ էր. Փոքր Ասիոյ արևմտեան սահմանները, արևելեան խորերը մինչև Տիարպէքիր ապրանք կը յղէր: Կեսարիոյ շրջանակը միասին առնելով, պիտի տեսնենք, թէ այդ տեղացիներէն շատ վաճառականներ են որ եւրոպական քաղաքներէ, ինչպէս Լոնտօնէն, Մանչեսթրէն, Բարիզէն, Մարսիլիայէն, Եանքիներու աշխարհէն, փարաւոններու հնամեայ երկիրներէն ևն. ծայն կուտան...»[1]: Կեսարացիների առևտուրը նվազեց միայն այն ժամանակ, երբ կառուցվեց Բաղդադ-Բասրա երկաթգիծը և քաղաքը հեռու մնաց ընդհանուր մայրուղուց: Սակայն որպես շուկա նա դեռ շարունակում էր իր գոյությունը: «Հակառակ իր ծովէն մեծ հեռաւորութեանը, առանց երկաթուղիի և հագիւ աւարտած ճամբաներով,- գրում է Վիթալ Քինեն,- Կեսարիա... եղաւ առևտրական կեդրոնը Փոքր Ասիոյ: Իր ընդարձակ շուկաները, որոնք կը թուին ոչինչ ունենալ նախանձելու Կ. Պոլսոյ շուկաներէն, դեռ կեանքով լի են: Անիկա ունի վեց լայնանիստ *քէրվանսարայներ* և հոն կը տեսնէ մարդ, մանաւանդ ամառ եղանակին, շրջիլը ուղտերու երկար շարքերու, և ջորիներու և էշերու խումբերու ամէն տեսակ ապրանքներով բեռնաւորուած»[2]:

1880-ական թվականներին կեսարացի հայ առևտրականները տարեկան առևտրից ստանում էին 650.000 օսմ. ինչուն ոսկի[3]: Ընդհանուր առևտրի մեջ ներմուծումը կազմում էր 80 տոկոս, արտահանումը՝ 20 տոկոս: Նույն շրջանումն էր, որ կեսարացի հայ առևտրականները, նեղվելով շուկայի փոքրությունից, թողնում են քաղաքը և բնակություն հաստատում *Լոնդոնում, Մանչեստրում, Մարսելում:* Սակայն կեսարացի վաճառականների մեծ մասը կապված էին դրսի հետ, ավելի կոմպրադորներ էին, քան ազգային բուրժուաներ: Նրանք գրեթե կորցրել էին հայկական ոգին, մոռացել հայերենը, դարձել թուրքախոս կամ անգլիախոս: ***Բավական է հիշատակել, որ դեռևս այսօր մեծ հարստություն պահպանած Գյուլպենկյաններն իրենց նախնական հարստությունը կուտակել են Կեսարիայում:***

Կեսարիան ուներ ցամաքային կլիմա: Ամռանը ջերմությունն այնտեղ հասնում էր մինչև 35 աստիճանի, շրջապատված էր ճահճացած տարածություններով, դրա համար էլ քաղաքաբնիկները, շուրջ երեք ամիս (հուլիս-սեպտեմբեր) իրենց ժամանակն անց էին կացնում շրջակա գյուղերում: Դրանով էր պայմանավորված կեսարիամերձ հայկական բազմաթիվ գյուղերի առկայությունը նահանգում:

Կեսարիայի քաղաքամերձ հայաբնակ հարյուրավոր մեծ ու փոքր գյուղերը միավորված էին երեք շրջանների մեջ: Դրանք էին Այսր-Արգեոսյան, Անդր-Արգեոսյան և

[1] «Սուրհանդակ», 1901, N 591: Տես նաև *Հայկ Ղազարյան,* նշված աշխատությունը, էջ 228:

[2] *Ա. Ալպօյաճեան,* նշված աշխատությունը, հատոր 2, էջ 1469:

[3] Նույն տեղում, էջ 1470:

Կիզիսթրայի շրջանները: Գյուղական հայ բնակչությունը թվաքանակով համահավասարվում էր քաղաքայինին և համագումարվում ու հասնում *երեսուն հազարի*[1]:

Առաջին աշխարհամարտին Թուրքիայի մասնակցությունը հավասարաչափ ծանր նստեց Կեսարիայի հայ ազգաբնակչության վրա թե զինահավաքի և թե զորահավաքի ժամանակ: Եղեռնից վերապրողներից, ականատես *Վ. Կեսարացին* գրում է. «Եվ զինվորական կարգապահությունը շատ խիստ էր այդ թուականներուն մանաւանդ հայերուն նկատմամբ, կանխելու համար որեւէ անհնազանդութիւն կամ ապստամբական շարժում: Քանի քանի հայ զինուորներ մանր յանցանքներու, պզտիկ բացակայութիւններու եւ կամ արձակուրդէն մէկ օր ուշացումի համար, *Կեսարիոյ պատերազմական ատեանին կողմէ մահուան դատապարտուեցան եւ օր ցերեկով գնդակահարուեցան իրենց հարազատներուն եւ ազգակիցներուն ահաբեկած աչքերուն առջեւ:*

Պատերազմի բացառիկ լիազօրութիւններէն օգտուելով, ոստիկաններուն իրաւունք տրուած էր օրուան ամէն ժամուն մտնել որեւէ տունէ ներս, խուզարկել առանց օրինական ձեւակերպութեան եւ գրաւել բանակի անհրաժեշտ իրեղէններ: Այս սանձարձակութիւնը գլխաւորապէս ի գործ կը դրուէր հայերուն դէմ, կողոպուտի նպատակով»[2]:

Սակայն կատարվեց անսպասելին: *1915 թ. փետրվարի 11-ին*՝ Վարդանանց տոնի օրը, այսինքն հինգշաբթի, կեսարիամերծ *էվերեկ* գյուղում, Ամերիկայից նոր վերադարձած *Տեֆճյան Գևորգ* անունով մի երիտասարդ, որը փորձում էր *ինքնաշեն ռումբեր պատրաստել,* մահացավ իր ձեռքերի մեջ պայթած մի ռումբից: Այդ առիթ ծառայեց թուրքերի ձեռքում, որպեսզի հայերին մեղադրեին *«ապստամբություն կազմակերպելու մեջ»* և սկսեին խուզարկություններ, կողոպուտ, առևանգում ոչ միայն գյուղերում, այլև ողջ քաղաքում:

Այնքան խստությամբ էր դրված հարցը, որ *էվերեկի* կայմակամը ևս փոխեցին, նշանակեցին *Շեհապետտին Զեքի* փաշային, մի ճիվաղի և հայատյացի, որին լայն լիազորություններ շնորհելով հանձնարարություն տվեցին հաշվեհարդար տեսնելու երկրամասի ողջ հայության նկատմամբ: Այս հրեշածին բորենին, մահվան գերանդին ձեռքին, սկսեց հայերի «զանգվածային որսը», ոչնչացումը, աքսորը, նրանց ունեցվածքի թալանը: *Նրան խոստացված էր Կեսարիան դատարկելուց հետո, տեղափոխել* Դեր Զոր, այնտեղ կազմակերպել հարյուր հազարավոր հայ բռնագաղթվածների մսաղացը: Այդպես էլ եղավ:

«Զեքիին գլխաւոր մտահոգութիւնը եղաւ նախ զինաթափել ժողովուրդը: Զէնքի թաքստոց գտնելու պատրուակով ձերբակալել տուաւ զինուորական տարիք չունեցող մնացեալ այր մարդիկը: Գիշերները ֆալախայի զարնել տուաւ եւ մարդկային երեւակայութեան սահմաններէն դուրս անհամար չարչարանքներու ենթարկեց բանտարկեալները, զանոնք խոստովանցնելու նպատակով: Գտնուեցան մարդիկ, որոնք չկրցան տոկալ այս խոշտանգումներուն եւ անհիմն ամբաստանութիւններ ու մատնութիւններ ըրին:

Այդ օրերուն էր, որ Հնչակեան կուսակցութեան էվերեկի մասնաճիւղը մասնաւոր պատուիրակութիւն (Թորոսեան Սարգիս եւ ուրիշներ) ղրկեր էր Պոլսոյ Հնչակեան կեդրոնը, անոր տրամադրութիւնը շօշափելու համար: Պատասխան տրուած էր «համակերպիլ ի գին ամէն զոհողութեանց եւ պատճառ չդառնալ հայութեան բնաջնջումին...», երբ թուրքը ծամբայ ելած էր արդէն բնաջնջելու համար այդ հայութիւնը:

Հրէշ Զեքին հարիւրաւոր հրացաններ գրաւեց եւ հակառակ ի գործ դրուած բոլոր

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 345-346: Տես նաև [1915] Աղետ և վերածնունդ, հեղինակ *Աղետեն վերապրողներ,* էջ 471:

[2] *Վ. Կեսարացի,* Կեսարիոյ արյան տուրքը Հայոց Մեծ եղեռնին, էջ 347:

վայրագ միջոցներուն չյաջողեցաւ գտնել Տեֆճեանի շինած ռումբին նմանները եւ է-վերէկի 36է աւելի բանտարկեալները շղթայելով դրկեց Կեսարիոյ պատերազմական ատեանը»[1]:

Կեսարիայի հայ բնակչության նկատմամբ Զեքի փաշայի կիրառած անմարդկային տանջանքների մասին է գրում նաև գերմանացի բյուզանդագետ, արդյունաբերության տնտեսագետ ***Վոլֆգանգ Գուստը,*** «Հայերի ցեղասպանությունը» բազմաշխատ ու արժեքավոր իր մենագրության էջերում, որը գրված է՝ հենք ունենալով հիմնականում գերմանական ու թուրքական արխիվներում վաղուց ի վեր ընդարմացած վավերագրերը:

Նա անդրադարձել է էվերեկում պայթած ռումբի պատմությանը, ապա շարունակել, թե ԱՄՆ-ից մի երիտասարդ վերադառնալով Կեսարիա 1915-ի փետրվարին ցանկացել է ռումբ պատրաստել ու փորձարկելիս գոհվել է: Կայմականը որոշել է դրանով բավարարվել, որովհետև երիտասարդը տեղի հայերի հետ ոչ մի կապ չի ունեցել, սակայն Կեսարիայի կառավարիչը կայմականին պաշտոնանկ է արել, փոխարենն ուղարկել Զեքի բեյին՝ «մի իսկական ճիվաղի» (Լեփսիուս):

«Նա հայերին ոչ միայն գանակոծում էր,- հայտնել է գերմանացի ականատես Ֆրիդա Վոլֆ Հունեքեն,- այլև ոտքերին ծծմբաթթու լցնում, շիկացրած երկաթով դաղում մարմինները: Մի հայ երիտասարդ այդ կտտանքներին հազիվ հինգ րոպե դիմացավ, իսկ մի քահանա ծանր վերքերից երեք օր ուշագնաց մնաց: Բանտերում գտնվող 640 հայերից 30-ի ոտքերն այնպես էին ծվատվել, որ ծերբակալված հայ բժիշկները ճարահատ պետք է անդամահատեին»: Ֆրիդա Վոլֆ Հունեքեն սկզբում իրավունք չի ունեցել Գերմանիա վերադառնալ, որովհետև Կեսարիայի կառավարիչը չի ցանկացել երկրից նրան թողնել վատ տպավորություններով: Միայն գերմանական դեսպանատան վրա կատարված հարձակումից հետո է նա տուն դառնալու արտոնություն ստացել:

Դահիճներն ահավոր կտտանքներ են նախատեսել հատկապես ուսուցիչների, քաղաքական լուսավորիչների, ինչպես նաև հոգևորականների՝ մահմեդական միջավայրում քրիստոնեական հավատի սյուների համար: «Ուսուցիչների աչքերը հանում էին կամ այրում»,- վկայել է էլմերը: «Հինգ թե վեց հայ քահանայի,- Դիարբեքիրից տեղեկացրել է գերմանացի քույր Լաուրա Մյոհրինգը,- լրիվ մերկացրել էին, վրաները ծյութ լցրել, քարշ տվել քաղաքի փողոցներով»[2]:

1915 թ. հունիս-հուլիս ամիսներին Կեսարիա քաղաքի և գյուղերի փողոցներով արյան գետեր էին հոսում: Սպանությունները դառնում էին սովորական երևույթներ, իսկ բերդարգելությունները՝ երանավետ էին համարվում, քանի որ դեռևս հույսեր էին փայփայվում ազատ արձակվելու վերաբերյալ: Համենայն դեպս, կախաղանների սյուները ճոճվում էին անմեղ հայերի ծանրությունից: Այդպես էր վիճակը ***Եոզղատում, Պողազլեանում, Գրշեհերում,*** հատկապես ***Կեսարիա*** քաղաքում:

Սեպուհ Ակունին այդ մասին 1921 թ. գրում է. «Կեսարիոյ մեջ հունիս 2-ին (1915 թ. -Հ. Ղ.) առաջին անգամ ըլլալով կախաղան հանուած են 12 հոգի, որոնց մէջ կային Գէորգ Վիշապեան, գործագործ Յակոբ Խայըրլեան, սեղանաւոր Յակոբ Մերտինեան, վաճառական Կարապետ Ճամճեան, Մինաս Մինասեան եւն.: Դարձեալ 9 հոգի կախաղան հանուած են Յուլիս 24ին, որոնց մէջ կային դատարանի անդամ Գրիգոր Մոմճիհանեան և Հնչակեան ծանօթ հերոս Համբարձում Պօյաճեան (Մուրատ): Յուլիս 31ին կախաղան հանուած են 15 հոգի, որոնց մէջ Տօքթ. Թորոս Նազլեան, գործա-

[1] *Վ. Կեսարացի,* Կեսարիոյ և շրջակայից արյան տուրքը Հայոց Սեծ եղեռնին, էջ 348:

[2] *Վոլֆգանգ Գուստ,* Հայերի ցեղասպանությունը. Աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը, Երևան, 2002, էջ 19-20:

գործ Գրիգոր Գույումճեան, վաճառական Կարապետ Մեվրուզեան, Ղեւոնդ քահանայ Կեմիճեան ևն.: Օգստ. 20ին ալ կախուած են 7 ուսուցիչներ, Սեպտեմբեր 5ին Տօքթոր Սուրէն Նշանեան, Սեպտեմբեր 13ին 3 փաստաբաններ Կարապետ Թաշճեան, Մարտիրոս Գունտագճեան ևն.: Դեկտ. 3ին ալ դարձեալ կախուած են 6 հոգի, որոնց մէջ վաճառական Սիհրան Գռուզեան, ճարտարապետ Լեւոն Վարժապետեան, իսկ Նոյ. 15ին 2 հոգի՝ ուսուցիչ Յակոբ Պէրպէրեան և երկրագործ Սահակ Գայսէրլեան:

Կառավարութեան վայրենութեան մասին որոշ գաղափար մը տուած կ'ըլլանք երբ ըսենք թէ տեղական ոստիկանութեան պահանջին վրայ կախուածներու մարմինը վար առնուած է անոնց ընտանեկան պարագաներուն կողմէ և անոնք որ չկրնալով դիմանալ իրենց հոգեհատորին, այս վիճակին առջեւ լացած են, ենթակայ եղած են հալածանքներու և խոշտանգումներու»[1]:

Կախվածների դիակացած մարմինները դեռևս ճոճվում էին կախաղանասյուներից մահվան սարսուռ ազդելով կենդանի մարդկանց վրա, երբ ***Կեսարիայի և Թալասի*** փողոցներով շրջող թուրք գուժկանները, հրապարակով ազդարարեցին հայերի բռնագաղթեցման մասին Ստամբուլից ստացած հրամանները:

1915 թ. հուլիս 25-ին հրապարակված հրամանագիրն էր այդ, որում ասվում էր. «1.- Բոլոր Հայերը պարտաւոր են մեկնելու հազարական հոգինոց կարաւաններով: Այրերը զատ պիտի երթան ուրիշ ուղղութեամբ, իսկ կիները տարբեր ճամբով:

2.- Ոչ մէկը 200 դրշ. էն աւելի դրամ չի կրնար առնել հետը, և եթէ երբեք, յետ խուզարկութեան, աւելի դրամ գտնուի, ունեցողը պիտի դատուի պատերազմական ատեանին առջեւ:

3.- Ոչ մէկը իրաւունք չունի ծախելու իր ինչքերը: Ան որ դրամ չունի, կրնայ 300 դրշ.ի չափ ծախել իր ինչքերը:

Կառավարութիւնը այս յայտարարութեամբ կ'ուզէր տեղահան ընել ժողովուրդը, իբր թէ օրէնքի սահմանին մէջ գործելու համար, մինչդեռ բանտերու մէջ, թէ Կեսարիոյ թէ շրջակաները, այնպիսի հալածանքներ և խոշտանգումներ տեղի կ'ունենային, զոր նկարագրելու համար ամենակարող գրիչն անգամ պիտի շփոթէր, երբ ուզէր պատկերացնել չարչարանքը իր իսկութեանը և ամբողջ լրութեանը մեջ»[2]:

Երիտթուրքական եռյակի ուղարկած այս հրամանագիրը հրապարակելուց անմիջապես հետո Կեսարիայի պատերազմական ատյանը սկսեց զանգվածային կախաղանների և հայերի ոչնչացման արդեն վերջնական ակտերի իրողության վերածումը: Մարդակեր Ջեքի փաշան շտապում էր ***«թեթևացնել»*** գաղթողների քարավանները, դրա համար էլ շարունակեց հայասպանությունը նոր թափով:

Դեպքերին ականատես Վ. Կեսարացին իր տեսածին ու լսածին գումարելով ***«Հին Կեսարիա»*** վերնագրված հատորի հաղորդած փաստերը, բերում է ներքոհիշյալ աղյուսակները, որոնք պատկերացում են տալիս, թե ի՞նչ սարսափելի սպանդ է կատարվել կեսարացիների նկատմամբ: Նրա հավաստմամբ 1915 թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին քաղաքում եղել են հետևյալ դեպքերը:

ա) Ամբողջովին ջարդուած հայ բանտարկեալներու կարաւաններ

8	*Յունիս*	*- 24 հոգի*	*Կեմերէկի ճամբով Տիգրանակերտ*
29	*»*	*- 14 »*	*Ազիզիէի ճամբով Մաղարա*
30	*»*	*- 46 »*	*Էրքիլիթի ճամբով Չորում*
4	*Յուլիս*	*- 6 »*	*Կեմերէկի ճամբով Տիգրանակերտ*
6	*»*	*- 36 »*	*Կեմերէկի ճամբով Տիգրանակերտ*

[1] *Մ[եպուհ] Ակունի,* Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921, էջ 191:
[2] Նույն տեղում, էջ 192:

9	*»*	*- 54 »*	*Ազիզիէի ճամբով Հալէպ*
10	*»*	*- 21 »*	*Ազիզիէի ճամբով Հալէպ*
15	*»*	*- 8 »*	*Ազիզիէի ճամբով Հալէպ*
2	*Օգոստ.*	*- 5 հոգի*	*Կեմերէկի ճամբով Տիգրանակերտ*
22	*»*	*- 11 »*	*Հալէպի ճամբով Տիգրանակերտ*
25	*»*	*- 4 »*	*Ազիզիէի ճամբով Տիգրանակերտ*
26	*»*	*- 4 »*	*Հալէպի ճամբով Տիգրանակերտ*
2	*Սեպտ.*	*- 4 »*	*Հալէպի ճամբով Տիգրանակերտ*
22	*»*	*- 620 »*	*Համիտիէի ճամբով Ազիզիէ*

Գումար 857 հոգի, ամէնքն ալ նահատակուած:

Բ) Տարագրուած բանտարկեալներու կարաւանները

(Այս կարաւանները ուղղակի չեն ջարդուած, բայց անոնց մեծագոյն մասը զուրկ ընտանեկան խնամքներէ, անօթի եւ հիւանդ վիճակի մէջ մահացած են)

28	*Յունիս*	*- 83 հոգի*	*Նիկտէի ճամբով Հալէպ*
8	*Յուլիս*	*- 134 »*	*Ալպիստանի ճամբով Հալէպ*
11	*Սեպտ.*	*- 21 »*	*Նիկտէի ճամբով Հալէպ*

Գումար 238 հոգի»[1]:

Առավել անտանելի դաժանութիւններ բաժին ընկան Կեսարիայի շրջակա հայ գյուղերի բնակչութեանը: Բերենք դրանցից մի քանիսը միայն:

Ինճեսու գյուղում, 1915 թ. մայիսի 8-ին բանտարկվում է տեղի քահանա *Ատոմ Անջիկյանը.* «Այն քաջ հովիվը ահռելի եւ աներեւակայելի տանջանքներ կրած է, եւ անոնց նկարագրութիւնն իսկ փուշ փուշ կ'ընէ մազերը: Տէր Ատոմի հայրը յիմարացած, իր տղուն դիակին վրայ կը նետուի, բայց իսկոյն կը յօշոտուի վայրագ խուժանին կողմէ: Խե՛ղճ երիցուհին նշաւակ կը դառնայ ամէն տեսակ վատ կիրքերու գոհացումին եւ ապա ստինքներու կտրատումով եւ այլ չարչարանքներով վերջ կը տրուի իր կեանքին: Տեղւոյն հայերէն տասը հոգիի չափ եւս սպանդուելէ յետոյ մնացածները կը տեղահանուին Մայիս 22ին: Ինճէսուէն յետոյ քշուեցան Պոզուքի գիւղերը:

Չոմախլու - Կեսարիոյ պէս, Չոմախլուի էրիկ մարդոցմէ շատեր ծեծի տակ մեռան եւ ուրիշներ սպանդուեցան: Մնացեալ 1646 հոգիէ բաղկացեալ բազմութիւն մը կը տարագրուի 2 Յուլիս 1915ին: Անոնցմէ 325 անձեր միայն ազատուած են»[2]:

Թոմարզա - «1915 Փետրուար 9ին կը ձերբակալուին տեղւոյն 400 երեւելի հայերը, անոնք սոսկալի չարչարանքներ կրելէ յետոյ կը փոխադրուին Կեսարիոյ բանտը: Յետոյ կը ձեռնարկեն զինահաւաքութեան եւ կը սկսին ծեծել մարդ սպանդելու աստիճան: 1915 Օգոստոս 25ին, երկու օր միջոց տալէ յետոյ կը տարագրեն թոմարզացիները: Անոնք գիւղէն ելլելով երբ Ս. Աստուածածինն վանքին դիմացը կը հասնին, թուրք մոլեռանդ հաֆզը իբր անարգանք էզան կը կարդայ եկեղեցւոյ զանգակատունէն:

10.000 բնակիչ հաշուող Թոմարզայէն հազիւ 3-400 ընտանիքներ կը մնան վերապրող»[3]:

Եվ այսպես գյուղ առ գյուղ ներկայացնելով հարյուրավոր էջեր են պետք: Ուստի ընդհանրացնենք: 1915 թվականի Մեծ եղեռնի տարում Կեսարիա քաղաքն ու ամ-

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 356:
[2] Նույն տեղում. էջ 358:
[3] Նույն տեղում. էջ 358-359:

բողջ գավառը հիմնովին դատարկվեցին հայերից: Երկիրը զրկվեց աշխատող, արարող ազգից, դարձավ թուրքական, բարբարոսական, անապատական: Դարերով ստեղծագործած ժողովուրդը կամ ոչնչացվեց տեղում, բռնագաղթի ճանապարհին, կամ էլ հրաշքով փրկվելով, հասավ Դեր Զորի աքսորավայրը: Կեսարիան հայոց պատմության մեջ մնաց միայն հուշ ու հիշողություն, միաժամանակ հավիտենական անեծք ջարդերի կազմակերպիչ հայասպան թուրքերի հասցեին:

Այդ մասին ավելի լավ է, որ թողնենք իր անեծքի խոսքն ասի եղեռնից մազապուրծ, գրագետ կեսարացին. Ահա նրա գրության ամփոփագիրը:

«Մահապարտի ծանր խաչ մը ուսին, անծայրածիր ու անջրդի անապատներէ անցաւ իմ դժբախտ ցեղս: Ամէն օր նոր գողգոթա մը դիմաւորեց, ամէն ժամ նոր խաչելութեան մը ահաւոր դառնութիւնը ճաշակեց ցմրուր, միշտ հայու կուռ եւ անմար հաւատքով գօտեպնդուած եւ իր նախահայրերուն պաշտած Աստուծոյ հոգեպարար աղօթքը իր շրթունքին:

Անթիւ հազարներով ինկան իմ հէգ եղբայրներէս, ոմանք կացնահար, ուրիշներ մերկ, անօթի, հիւանդութեան ու պէսպէս բռնութեանց ծիրաններուն մէջ, միշտ իյնալով, ելլելով իրենց տառապանքի անհատնում ճանապարհին վրայ:

Յաւերժական հանգիստ եւ անդորր նիջ մը պարգեւող համեստ շիրիմ մը իսկ զլացուեցաւ մեր նահատակներուն, որպէսզի իրերայաջորդ հայ սերունդներ ուխտի գային իրենց, ջուխտ մը մոմ վառէին ու պուտ մը խունկ ծխէին անդարձ մեկնած սիրելիներուն անմար յիշատակը ոգեկոչելով:

Անարգ թշնամին քանդեց մեր հայրենական երկրի գերեզմանատուներն իսկ, չորս հովին տուաւ մեր մեռելներուն սուրբ նշխարները եւ աղբ ցանեց անոնց հողերուն վրայ:

Թող նախախնամութեան վրիժառու թաթը անպակաս ըլլայ նամարդ դահիճներուն վրայէն, թող յամեցող արդարութիւնը վերջապէս յայտնուի օր մը եւ միլիոնաւոր անմեղներու արեան գինը պահանջէ այդ անխիղճ բռնակալներէն»[1]:

Այո, ի հեճուկս թուրքերի, ապրեց և այսօր էլ ազգային, անկախ հանրապետության դրոշի ներքո արարում է այն ժողովուրդը, որը ճաշակեց աներևակայելի ողբերգական դաժանություններ: Նա ապրում է, կապրի և իր պահանջը կառաջադրի թուրք բորենիներին: Ուստի և թողնենք թող բանաձևի կեսարացի սփյուռքահայը Բեյրութից.

«Իսկ մենք, մեծ սպանդէն վերապրողներս, հեռու չէ այլեւս այն օրը, որ պիտի երթանք միանալու մեր նահատակ եղբայրներուն: Մեր գերագոյն բաղձանքը, մեր վերջին կտակն իբրեւ աւանդ կը ձգենք մեզմէ ետք գալիք սերունդներուն: Պէտք է որ մեր ազգին բոլոր բաղկացուցիչ տարրերը, կուսակցութիւնները, յարանուանութիւնները անկեղծ սիրով կապուած մնան իրարու, գուրգուրան մեր ծաղկեալ հայրենիքին վրայ, պաշտեն մեր լեզուն ու մշակոյթը, գնահատեն մեր անկորնչելի արժէքները, միշտ համերաշխ ըլլան մեր հիմնական շահերուն կապուած հարցերուն շուրջ ***եւ նիւթական ու բարոյական ամէն միջոցներով, անսպառ ու աննկուն կորովով հետապնդեն դատերուն ամէնէն արդարն ու մարդկայինը, մեր հողային սուրբ դատը:***

Արդարութիւնը, թերեւս ուշ, բայց անպայման արժանի հատուցում մը պիտի չզլանայ այս բազմաչարչար ժողովուրդին»[2]:

Ստեղծելով սույն մենագրությունը մենք ևս լիահույս ենք, որ ժամանակը վաղուց է հասունացել *Հայ դատի* միջազգային ճանաչմանը և ակնկալություններ ունենք սեփական աչքերով տեսնել *ցեղասպանության* ընդունման արարակարգը այսօրվա թուրքական պետական այրերի կողմից:

---

[1] *Վ. Կեսարացի,* Կեսարիոյ և շրջակայից արյան տուրքը Հայոց Մեծ եղեռնին, Պեյրութ, 1965, էջ 337:

[2] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 361:

IV. ՅՈԶՂԱՏԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՍՊԱՆՈՂԸ

Յոզղատ երկրահատվածն ընկած էր Փոքր Ասիայի կենտրոնական մասում. փռված էր Պոնտական լեռնապարի փեշերն ողողող հովիտներից մեկի ետնախորքում: Ընդարձակ, մարդաշատ գավառը (սանջակ) վարչականորեն սահմանակից էր արևմուտքից Անկարայի (Ենիկյուրի), հարավից Կեսարիայի, արևելքից Սեբաստիայի և հյուսիսից Չանկրի և Չորումի իշխանությունների վարչատարածքներին: Այն ընդգրկված էր ***Անկարայի կուսակալության վարչական կազմում,*** սակայն ընդարձակության, հարուստ բնություն ունենալու և կարևոր դիրքի պատճառով կառավարիչը փաշայի տիտղոս էր կրում:

Հայաբնակ Յոզղատ քաղաքը հնամենի անցյալ չուներ: Այն հիմնվել է XVIII դարամիջին, սուլթան Մահմուդ առաջինի (1730-1754) վեհապետության վերջին տասնամյակին, որը կառուցվել է թուրքմեն Չափան զադե Օսմանի դրամական միջոցներով ու շինարարական աշխատանքների կազմակերպմամբ: Գավառն ուներ արդյունավետ ու բերրի հողատարածություններ, դրանցով իսկ պայմանավորված, XIX հարյուրամյակում դարձել էր կայսրությանը գյուղմթերքներ մատակարարող կարևոր շտեմարաններից լավագույնը:

Նորակառույց, գեղատեսիլ քաղաքն իր շրջակայքն էր համահավաքել շեն ու բարեբեր ***շուրջ հազար*** գյուղեր ու գյուղաքաղաքներ, որոնք ունեին խիտ բնակչություն և ապրելակերպով, համեմատած մյուս նահանգներին ավելի բարվոք վիճակ: Այդ գյուղերից ***քառասունութը զուտ հայկական էին կամ գրեթե հայկական:***

Հայերի Յոզղատում հաստատվելու տեղի ու ժամանակի մասին աղբյուրները ժլատ չեն: Այդ մասին առատ փաստեր են պահպանվել և՛ հայկական, և՛ օտար, հատկապես թուրքական սկզբնաղբյուրներում: Իրար վավերացնող հիշատակություններ են պահպանվել, որ Չափան օղլուն, քաղաքի շինարարական աշխատանքների առաջին իսկ ամիսներից քաղաք է հրավիրել քարագործ հայ վարպետների, օրավարձու հազարավոր բանվորների և ջանացել է սրանց հմուտ և գեղեցկացնող մատներով շուք ու փայլ հաղորդել իր նոր նստավայրին: Նրա մտերիմն է դարձել ***«Նաղդաշ Սիմոնը»,*** հմուտ նկարիչ, քանդակագործ մի անձնավորություն:

Հայ ճարտարապետների մի քանի գերդաստանների գոյությամբ է պայմանավորված ազգայինների թվաքանակի ստվարացումը, որն առավել զգալի դարձավ Ղրիմի պատերազմի (1853-1856) տարիներին ու նրանից հետո[1]:

Համաշխարհային պատերազմի շեմին Յոզղատի բնակչությունը բաժանվում էր քաղաքայինի և գյուղականի: Ըստ սփյուռքահայ հետազոտող ***Բուզանդ Քեչյանի*** հաշվարկումների քաղաքում ապրում էին հայ լուսավորչականներ (2450 տուն), բողոքականներ (40 տուն), հույներ (200 տուն), հրեաներ (20 տուն), մահմեդականներ (3500 տուն): Նա ամեն մի տան շնչերը հաշվելով 5-ի, ընդհանրացնում է, թե 1912 թվականին Յոզղատում ապրող հայերի թիվը հասնում էր ***12 հազար հինգ հարյուրի:***

Անդրանիկ Երկանյանը, հավաքելով բազմալեզու և բազմաթիվ վիճակագրական տվյալներ, ընդհանրացնում է, թե շրջակա 48-ը հայկական գյուղերում ապրող

---

[1] Սույն հատվածը շարադրելիս օգտվել ենք ***Անդրանիկ Երկանյանի*** «Եոզկատի և շրջակայքի հայության ահավոր սպանդը» աշխատությունից: («1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 318-335): Ինչպես նաև ***Մ[եպուհ] Ակունի,*** Սիլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921, էջ 197-201: ***Գրիգորիս ծ. վարդ. Պալաքեան,*** Հայ գողգոթան, Դրվագներ հայ մարտիրոսագրութենեն, Պեռլինեն դեպի Զոր, 1914-1920, Ա հատոր, Պեյրութ, 1977 (Բ տպագրություն), էջ 168-202, 264-278: ***Գրիկեր,*** Եոզղատի հայասպանության վավերագրական պատմությունը, Նիւ Եորք, 1980: ***Համրի Պարպի,*** Սարսափի երկրին մեջ, Պեյրութ, 1965, «1915-Աղետէն վերածնունդ», Փարիզ, 1952:

9000 հայկական տնտեսությունների բնակչության թիվը հասնում էր *63 հազարի:* Հետևաբար, թեկուզ պակասավոր, քաղաքում և գյուղերում հիմնավորված հայոց թիվը հասնում էր *75 հազարի*[1]*:*

«Հակառակ մոլեռանդ և հետադեմ թուրք իշխանությանց,- գրում է Անդրանիկ Երկանյանը,- եւ Կարմիր Սուլթանի հայահալած քաղաքականութեան եւ կեղեքումներուն, 1914ի նախօրեակին Եոզկատի եւ շրջակայից հայութեան ազգային, տնտեսական եւ մշակութային վիճակը շատ բարգաւած եղած է: *Միջանկեալ կ'արժէ յիշել թէ ազգապատկան կալուածներու ընդհանուր արժէքը այդ օրուան սակով կը գնահատուէր 175000 հնչուն ոսկի, եւ ապագան ալ շատ խոստմնալից էր... երբ պայթեցաւ Առաջին Համաշխարհային պատերազմը»*[2]*:*

Պատերազմն սկսվելուն առաջին իսկ շաբաթներում Եոզղատի հայ բնակչության 18-ից 45 տարեկանները զորակոչվեցին բանակ և 1914 թ. հոկտեմբերի վերջին շաբաթում, գավառից դուրս հանելով, նշանակված վայրերում ոչնչացվեցին: Դրանց հաջորդում են ապրիլյան արյունոտ դեպքերը: Իթթիհատականներն արդեն նախապատրաստվում էին *Մեծ եղեռնին* և դրա համար էլ իրողության էին վերածում նախապատրաստական ծրագրերը:

Նախ նրանք Թուրքիայով մեկ փոխում են այն կուսակալներին, մեծ գավառների գավառապետերին, որոնք հույսեր չէին ներշնչում նման մեծ պլանի ջարդարարության համար: Նրանք վաղօրոք գիտեին նաև, որ փաշաներից ոմանք «տառապում էին հումանիստական» խղճահարությամբ (սխալվում էին այդպիսի թուրք պաշտոնյա չկար): Դրանց ևս պաշտոնից հանում էին և ետ կանչում Ստամբուլ: Կատարվում էին նոր նշանակումներ:

1915 թ. սկզբներին Իթթիհատի կենտկոմի անդամներից *Աթաֆ* անունով մի շնագայլ նշանակվեց Անկարայի վիլայեթի վալի, քանի որ մարդու «մսագործի» համբավ էր վայելում և իր դաժանությամբ հայտնի էր ողջ կայսրությունով մեկ: Յոզղատի մյութեսարիֆ Ջեմալ Բեյ Ջատե Քեմալը (Վանի կուսակալ Ջևդեթ բեյի աներձագը) փոխարինեց նախկին գավառապետ *Մուհեդդին բեյին*[3]*:*

Կազմավորվեցին այն ջոկատները, որոնք Սեբաստիայի և Անկարայի նահանգներում պետք է ոչնչացնեին տեղահանված հայ բնակչությանը: Դեռևս 1914 թ. նոյեմբերին Սեբաստիայի վալի *Մուամմեր* բեյը, նահանգի դատախազ *Բինեանին* հրամայեց բանտերից ազատ արձակել *124 ոճրագործների:* 1915 թ. մարտի 3-ին Անկարայի բանտից ազատություն ստացան 49-ը ոճրագործներ, որոնց ուղարկեցին Չորում, նորաստեղծ ու բազմամարդ մի հանձնախմբի տրամադրության տակ:

«Եոզղատի Մութեսարիֆ Ճեմալ բեյը,- գրում է Գրիկերը,- Եոզղատ գալե առաջ իբր Եւդոկիոյ կառավարիչ մայիս ամսուան սկիզբը նոյն քաղաքի բանտէն հանեց ոճրագործներ, ապա իբր Եոզղատի կառավարիչ կազմեց յանձնախումբ մը որ կը բաղկանար հետեւեալ անձերէն. Թէվֆիգ Պէյ, Եոզղատի Ատեանի ընդհանուր դատախազ, Հազարապետ Սալիմ Պէյ, Եոզղատի զինուորագրութեան գրասենեակի նախագահ, եւ Ռէմզի Պէյ, Եոզղատի Ատեանի դատաւոր:

Ասոնք 15 Մայիս 1915ին Եոզղատի բանտէն արձակեցին վաթսուն հինգ ոճրագործներ եւ *զանոնք զինելով ղրկեցին Չորում»*[4]*:*

Գրիկերը կարողացել էր հայտնաբերել այն վավերագրերի պատճենները, որոնք ա-

---

[1] «Եոզկատի և շրջակայքի հայության ահավոր սպանդը», էջ 318-319:

[2] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 320:

[3] Նույն տեղում:

[4] *Գրիկեր,* նշվ. աշխ.. էջ 215:

պացույց լինելով ցեղասպանության գոյությանը, Թալեաթի հրամանով ոչնչացվել էին դեռևս երիտթուրքերի դատավարությունից մի փոքր առաջ, չմտածելով դրանց կրկնօրինակների գոյության մասին: Հրապարակելով Յոզղատի բանտից ազատ արձակվածների ճշգրտված ցուցակը՝ Գրիկերը շարունակում է. «Եոզղատի բանտէն ազատ արձակուած վաթսուն հինգ ոճրագործներէն մեծ մասը մարդասպաններ են. 65էն 51ը մարդասպան է. 12ը գող եւ աւազակ, մին անորոշ յանցանքով բանտարկուած, իսկ ուրիշ մըն ալ՝ բանտէն փախած ըլլալուն համար: Այս մարդասպաններէն մեծ մասը 15 տարուան բանտարկութեան դատապարտուած էին, մէկ հոգի ցկեանս, մնացածները եօթէն մինչեւ երեք տարի բանտարկութեան դատապարտուած էին:

Եոզղատի բանտի տնօրէն Ալի Պէյ իր երկու պաշտօնական եւ բացատրական յայտարարութիւններու մէջ կը գործածէ *Թէշքիլաթը ճէտիտա* եւ ոչ թէ *Թէշքիլաթը Մախսուսա* բառերը, զանազանելու համար առաջինը երկրորդէն, ուրիշ բառով արդէն գոյութիւն ունեցող *Թէշքիլաթը Մախսուսան* տարբեր էր 1914 Յուլիս ամսուան մէջ առնուած որոշումին համեմատ կազմուած *Թէշքիլաթը ճէտիտայէն:*

Ճէտիտա արաբերէն բառ է նոյն իմաստով գործածուած նաեւ թրքերէնի մէջ, կը նշանակէ նորոգուած կամ նոր գոյութեան բերուած: Արդէն գոյութիւն ունէր 1913 Յունուար ամիսէն ի վեր *Թէշքիլաթը Մախսուսա* մը որ հիմնուած էր պաշտօնապէս եւ որ կախում ունէր պատերազմական նախարարութենէն անկանոն գործունէութեամբ օգնելու Օսմանեան բանակին, մինչ 1914 Յուլիսին կազմուած Թէշքիլաթը ճէտիտան նպատակ ունէր հայ ցեղի բնաջնջումը: Այս մասին պաշտօնական վաւերագրերէ պիտի տրուին մանրամասնութիւններ:

Թուրքիոյ բանտերէն դատապարտեալ ոճրագործները ազատ արձակելու հրամաններ տրուած էին Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան Ընդհանուր Կեդրոնական Կոմիտէէն, Պատերազմական Նախարարութենէն, Ներքին Գործերու Նախարարութենէն, եւ մասնաւորապէս Օսմանեան Արդարութեան Նախարարութենէն, որուն հրահանգներուն համաձայն իւրաքանչիւր նահանգի, գաւառի, գաւառակի եւ քաղաքի մէջ կազմուեցան յատուկ յանձնախումբեր: Այս յանձնախումբերու մէջ առնուեցան առ հասարակ կառավարիչներ, զինուորական հրամանատարներ, ընդհանուր դատախազներ եւ դատաւորներ, ոստիկանապետներ եւ առողջապահութեան տնօրէններ:

Եոզղատի նախկին դատաւոր Մուսթաֆա Րէմզի Պէյ, որ նոյն քաղաքի մէջ կազմուած յանձնախումբի անդամ էր, յատկապէս կը շեշտէ թէ Արդարութեան Նախարարութեան հրամանով էր որ կազմուեցաւ Եոզղատի բանտէն ոճրագործները ազատ արձակելու յանձնախումբը: Արդարութեան Նախարարութեան հրամանները կ'ընդգրկէին նաեւ բանտերէն ազատ արձակուած ոճրագործներու գործած ոճիրներն եւ կողոպուտները դատական հետապնդումէ զերծ պիտի մնային բացի այն պարագայէն, երբ մարդասպանները ու կողոպտիչները բաժին չէին հաներ իրենց կողոպուտէն կառավարութեան եւ Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան մէկ երրորդի համեմատութեամբ»[1]:

Նա ապա շարունակում է. «Եոզղատի Միւթէսարըֆ ճէմալ Պէյ 12 Դեկտեմբեր 1918ին Պոլսոյ հարցաքննիչ Յանձնախումբին առջեւ պաշտօնապէս վկայեց եւ կարեւոր տեղեկութիւններ տալով հաստատեց թէ ոստիկանապետ Թէվֆիգ Պէյ կազմակերպած էր հրոսակներ Հայերու կոտորածին համար, թէ ինք ճէմալ Պէյ պաշտօնանկ եղաւ, *իր տեղ եկաւ Պողազլեանի Գայմագամ Քէմալ Պէյ եւ սկսաւ կոտորել տալ Եոզղատի եւ գիւղերու հայերը:*

[1] *Գրիկեր*, նշված աշխատությունը, էջ 222-223:

Ճէմալ Պէյ որու հրամանով Եոզղատի բանտէն ոճրագործ դատապարտեալները ազատ արձակուեցան, կը վկայէ պաշտօնապէս թէ նոյն ոճրագործները գործածուեցան տեղահանուած Հայերը կոտորելու համար: Ինք անձամբ ոստիկան սպայ մը ղրկեց կառավարիչ Քէմալ Պէյի որ դադրեցնէ կոտորածը, սակայն ան մտիկ չըրաւ»[1]:

Այսպիսով՝ 1915 թ. ապրիլին, Յոզղատում կազմավորվում է շուրջ 3000 հոգիանոց մի ավազակախումբ, որին հետագայում պիտի միանային շրջակա թուրքական գյուղերի ընչաքաղց, կիսավայրենի գյուղացիներից-ջոլիներից կազմված թալանչիները: Նրանք առաջին իսկ օրերից հանձնարարություն էին ստացել կտրել երթևեկությունը քաղաքի ու գյուղերի հայերի միջև, խանգարել նրանց միավորմանը, մանավանդ, երբ սկսվեր տեղահանությունն ու ջարդը:

Յոզղատի բնակչության տեղահանությունը սկսվել էր 1915 թ. մայիսի վերջին շաբաթում: Նախքան այդ, «երկրի ներքին ապահովության» պատրվակով, հավաքվեց հայերի ձեռքին եղած զենքն ու զինամթերքը:

1915 թ. մայիսի 22-ին, Յոզղատի հոգևոր թեմի առաջնորդ *Ներսես եպիսկոպոս Դանիելյանին* են ուղղում մի գրություն, որի հեղինակներն էին *Չաթ գյուղի* ատենապետն ու ատենադպիրը: Այնտեղ գրված էր.

«Սրբազա՛ն Հայր,

Ստիպողաբար Չեզի կը ներկայացնենք մեր գիւղին վտանգաւոր կացութիւնը եւ փութով կը սպասենք Չեր Սրբազնութեան հրահանգին:

Ըստ կառավարութեան վերջին հրահանգին, երէկ եօթը ոստիկաններ մեր գիւղը գալով, Պողազլեանի գայմագամ Քեմալ պէյին մէկ նամակը բերին (30 Ապրիլ 1915 թուագրեալ), որով երկու օրուայ ընթացքին մեզմէ կը պահանջեն գիւղին բոլոր զէնքերը:

Այս հրահանգը ըստ գայմագամին հաղորդագրութեան ուղղուած է եղեր նաեւ Թուրքիոյ բոլոր նահանգներուն եւ զէնքերը չյանձնելու պարագային մահուան պատիժ պիտի տրուի եղեր անսաստողներուն:

Արդ, յիշեալ հրամանագրին հանդէպ մեր դիրքը ճշդելու համար կը դիմենք Չեր խորհուրդին եւ անձկանօք կը սպասենք Չեր պատասխանին:

Ի դիմաց Չաթի գիւղական խորհուրդի,

Ատենադպիր՝ Յակոբ Տէմիրճեան,

Ատենապետ՝ Մանուկ»[2]:

Ն. Դանիելյանը ոչ միայն սկզբունքային հոգևոր գործիչ էր, անզուգական հայրենանվեր քաղաքացի, այլև բնությունից օժտված էր բանաստեղծական չվիճարկվող տաղանդով: Նրա գրչին է պատկանում *«Կաթիլ մը ցող այրված սրտերի համար»* խորագրված բանաստեղծությունների փունջը, որն իր իսկ հեղինակի բնութագրությամբ, վշտահար սոխակի ցողած մի կաթիլ ջուրն էր ցեղասպանությունից տուժածների սրտերին: Դանիելյան սրբազանը շատ լավ էր հասկանում, որ զենքի հանձնումը նշանակում էր մահ, այսինքն անզեն գնալ դեպի կոկորդիլոսի երախը: Բայց այլ ելք չէր տեսնում, քանի որ ընդդիմանալը նշանակում էր արագացնել ընդհարումը, որի դաժանության մասին դեռևս ոչ ոք պատկերացում չուներ: Թերևս այդ էր նրա գրած պատասխան նամակի հանձնարարականի պատճառը:

Նա պատասխանում էր. «Սիրելի եւ օրհնեալ որդիներս,

Չաթ գիւղի գիւղական խորհուրդի,

Ստացայ Չեր նամակը, որուն կը փութամ պատասխանել: Չաթի դրութիւնը սրտիս կսկիծ եւ աչքերուս արտասուք բերաւ: Որդեակներս շատ լաւ կը հասկնամ Չեր վի-

[1] *Գրիկեր*, նշված աշխատությունը, էջ 256:

[2] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի». էջ 321-322:

ճակը, բայց ի՞նչ ընենք որ մեր Ազգին դառն ճակատագիրն է այս: Կ'անիծեմ Ձեր թշուառութեան պատճառները եւ կը մաղթեմ բոլորիդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մխիթարութիւնն ու օգնութիւնը:

Սիրելիներ, ապահովաբար այս փոթորիկն ալ պիտի անցնի: Մնացէք յուսալից եւ քաջարի, *մի՛ շուարիք եւ ըստ հրամանի՝ յանձնեցէք Ձեր ունեցած զէնքերը, օրէնքը յարգած ըլլալու համար:*

Ցաւ ի սիրտ Ձեզ կը մաղթեմ համբերութիւն եւ համերաշխութիւն:

Մնամ աղօթարար

Ներսէս Եպիսկ. Դանիէլեան»[1]:

Նմանատիպ գրութիւններ ստացան Յոզղատի շրջակայ բոլոր գիւղերի հսմայնապետերը, որոնք հարկադրված էին հանձնել իրենց մոտ եղած զենքերը: Դժբախտաբար հայասպան նման պրոցեսին մասնակցում էին գերմանացի զինվորականները, որոնց մի ձեռքում ատրճանակ էր, մյուսում՝ Աստվածաշունչն ու սուրբ խաչը, և դրանցով «զինված» Մուհամեդի երկրպագուների առջև ընկած, զինաթափում էին իրենց հավատակիցներին:

Հայասպանության պրոցեսը գլխավորող Քեմալ բեյի ծրագրով թուրքերը որոշել էին նախ զինաթափել, տեղահանել ու կոտորել գավառի գյուղական ազգաբնակչությանը, նոր ապա՝ հարձակվել քաղաքի վրա: 1915 թ. հուլիսի 2-ին թուրքերը մտան Թերզիլի հայախոս ու հայաբնակ մեծ գյուղը և սկսեցին սպանդը:

Այդ մասին ականատեսը գրում է. «Եոզկատէն յատկապէս ղրկուած զինուորական հրամանատար՝ թապուր աղասը Ղասըմ պէյ, իր հետ ունենալով իմամ (կրօնաւոր) Ալի Ռիզան եւ յայտնի թուրք պէկեր, 70 ժանտարմաներով կը մտնէ գիւղ: Անմիջապէս մունետիկ կանչել կու տայ թէ՝ «մինչեւ 90 տարեկան այր մարդիկը հաւաքուին եկեղեցի եւ դպրոց պետական «վեսիքա» ստանալու համար, չներկայացողները պիտի պատժուին»:

Մութը կը կոխէ: Եկեղեցի ու դպրոց հաւաքուած այրերը զինուած պահակներու թշնամական նայուածքներուն տակ ելքի մը կը սպասեն: Ջարդարար Ղասըմ պէյ գիւղի մեծաւոր Պալեանի հիւրանոցին մէջ ճոխ սեղանի մը շուրջ հիւրասիրուելով կը շաղակրատէ, որպեսզի... գիշերը յառաջանայ: Ժամը առտուան երկուքին գազանը կը հրամայէ գործի սկսիլ: Բանտարկեալներէն չորսական հոգի դուրս կը կանչեն եւ առանց այլեւայլի իրարու թեւ թեւի կապելով միլիսներու շղթայի մը մէջ կ'առնեն զանոնք:

Մայր մը, իր ամուսինն ու երկու զաւակները արդէն զինուոր ղրկած, ծունկի գալով կը պաղատի Ղասըմին որ խնայէ իր վերջին զաւկին ու այն ալ չտանի կալանաւորներուն հետ զինուոր...

Սարդկային զգացումէ բոլորովին զուրկ գազանը զաւկին փաթթուած մօր գիրկընդխառնումին վերջ տալու համար՝ նշան կ'ընէ իր արբանեակներէն մէկուն, որ գլխուն տըրուած սուրի հարուածով մը կ'անդամալուծէ հէք մայրը: Մայրը գրկած խելակորոյս տղուն լաց ու կոծին վերջ տալու համար՝ նոյն տեղը կը սպաննեն նաեւ զայն:

Իրարու կապուած կալանաւորները, մտրակներու հարուածի տակ, շրջապատուած սուինամերկ միլիսներէ եւ իրենց հետեւող կացիններով, սուրերով, երկսայրիներով, գերանդիներով եւ այլ մահացու գործիքներով զինուած ջարդարարներու վոհմակով մը, երկու ժամ տաժանելի ճամբորդութենէ յետոյ կը հասնին եւ կանգ կ'առնեն ծորի մը ջաղացքին մօտ: Ատրճանակի պայթիւնի մը ազդարարութեամբ՝ Ղասըմ պէյ կ'ոռնայ *«Ջարդեցէ՛ք սա քեաֆիրները, խալիֆային հրամանն է»:* Ու խուժանը յարձակելով կաշկանդուած կալանաւորներուն վրայ՝ կը սկսի վայրագօրէն յօշոտել զանոնք:

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 322-323:

Զոհերուն արիւնոտ զգեստները ցիցերու անցուցած՝ ջարդարարները կը վերադառնան գիւղ եւ հրէշային ծիծաղով կը պոռան հայուհիներուն.- «Տեսէք ձեր էրիկներուն յիշատակները, ընդունեցէք ճշմարիտ կրօնքը, ձեզ մեր մէջ բաժնենք... փրկուեցէ՛ք մահուընէ»: Խօսքէն գործի անցնելով խուժանը կը յարձակի տուներէն ներս, նախ կը բռնաբարէ անտէր մնացած հայուհիները, կը ջարդէ կին, աղջիկ, երեխայ ու կը թալանէ տուները:

Մարդէ զատ ամէն բանի նմանող վայրենիները, մոռնալով հաւատք, կրօնք ու մարդկային էն բնական զգացումներէն գութ ու խղճահարութիւնը, կատղած գազաններու պէս չխնայեցին նոյնիսկ տասը տարեկանէն վար աղջնակներուն, պղծեցին զանոնք եւ անասնական իրենց կիրքերը գոհացնելէ յետոյ անոնց մերկ մարմինները բզիկ բզիկ ըրին: Արիւնէն ու աւարէն գինովցած՝ ուրախութիւններ տաքցնելով կիներու մերկացուած ստինքներուն վրայ կոխեցին, իբրեւ թէ պահուած դրամներու, զէնքերու տեղը խոստովանեցնելու համար անոնց:

Մէկ օրուան մէջ երբեմնի շէն ու բարգաւաճ Թերզելին, անոր հարեւան հայաբնակ գիւղեր Գարաեաղուպ, Մըխըրլար, Չաթ Մենքէչէ եւ Իւրնէճ նոյնանման ջարդարար վոհմակներու ձեռքով կոտորուեցան ու ամայացան»[1]:

Ավելի վատթար վիճակ բաժին ընկավ *Չագմագ* գյուղին: Վերապրողներից *Նարիձա Փիլիպոսյանը* պատմում է, թե 1915 թ. հուլիսի 7-ին (երեքշաբթի) 250 ոստիկանները և շուրջ 30 հազար ավարածարավ մահմեդական ամբոխ, կացիններով զինված, մտնում են Չագմագ գյուղը: Սկսվում է թալանն ու մարդասպանությունը: «120 հոգի սվինավոր ոստիկաններով շրջապատված, խելակորույս, մաս մը կիներ, հարսներ, աղջիկներ կուրծքերնին ծեծելով եւ մազերնին փետտելով, լաց ու կոծով, իրենց փոքրիկներուն ձեռքերէն բռնած կը հետեւէին կարաւանին մինչեւ Եողնուհիսարի ծորը, ուր *Խուլուսիի հրամանին վրայ կացինաւոր գազանները յարձակելով գոհերուն՝ կիներուն եւ փոքրերուն վրայ աննկարագրելի տանջանքներով կը բզբտեն բոլորը:*

Պարբեւահասակ եւ հուժկու մէկն էր կալանաւոր Մանուկ Թավլրեանը: Տասը թուրքեր ձեռքերը կապուած Մանուկը դժուարաւ ըզգետնեցին: Զայն ոչխարի նման մորթելով՝ արիւնը լեցուցին դոյլի մը մէջ եւ կարգով ումպ ումպ խմեցին, անոր պէս զօրաւոր ըլլալու համար:

Այս եղելութիւնը պատմեց ջարդարար թուրք Հասան Օղլու Նեպին»[2]:

Պուրեն Գըշլա գյուղի ջարդի մասին պատմում էր Գարեգին Թաշճյանը, որը հրաշքով փրկվելով կացնահարությունից, կարողացել էր անցնել մինչև *Չանկըրի* ու *Չորումի* աքսորավայրերը և հետագայում բնակություն հաստատել Բեյրութում: Նրա պատմածից մեջբերենք մի փոքր հատված: 1915 թ. հուլիսի 9-ին սկսվեց ջարդը, ապա, դրան հաջորդող երեք օրերում կազմակերպվեց կանանց և երեխաների բռնագաղթը.

«Խուլուսին գիւղին մէջ ոստիկանատուն մը կը հաստատէ՝ հսկելու համար անցուդարձին եւ ձերբակալելու ոեւէ տղամարդ, որ ազատած էր առաջին ջարդէն: Եւ օր մըն ալ ամբողջ գիւղը տեղահան ընելով, միլիսներու եւ պաշտպանութիւնները մտրակներուն տակ, մանուկ ու ծեր ոտաբոպիկ, դեռատի հարսեր մանուկները գրկերնին, կը քշեն հեւասպառ, անօթի ծարաւ, մինչեւ երեկոյ, երբ կը հասնին անդնդախոր ձորով մը եզերուած մարգագետին մը: Մնացած ծեր եւ չափահաս տղամարդիկը մայրերու լացուկոծին տակ կը ջարդեն ու դիակները կը գլտորեն ձորն ի վար: Հարս ու աղջիկ եւ մանուկները կը յափշտակեն եւ կը ցրուեն մօտակայ թուրք գիւղերու մէջ՝ ծուլելու նպատակով իրենց մէջ:

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 322-323:

[2] *Անդրանիկ Երկանյան*, նշված աշխատությունը, էջ 325:

Այսպէս կարելի է, եթէ սիրտ ունինք, երկար գրել Եոզկատի շրջանի մեծ ու փոքր 48 հայկական գյուղերի մասին»[1]:

Այսպիսով, 1915 թ. հուլիս ամսին Յոզղատի շրջակա հայկական 48 գյուղերը, առանց խտրականության և խնայման, ամբողջովին հայազրկվեցին: Գաղթողներին ոչնչացնելուց, կանանց և աղջիկներին կոպեկներով վաճառելուց հետո սկսեցին հաշվեհարդարը քաղաքի և քաղաքացիների հետ:

1915 թ. օգոստոսի 1-ին Յոզղատ է ժամանում հայակուլ Քեմալ փաշան, և նույն օրը ***սկսվում է քաղաքի բնակչության բռնագաղթեցման պրոցեսը:*** Թուրք բորենիները նախ շրջապատում են շուկան, ծերբակալում բոլոր հայերին և փակում բանտերում: Մի քանի ժամ անց շրջափակվում են կամուրջները, բանտարկվում հայ մտավորականները: Շուրջ 18 ժամ հետո, բերդերում իրար կապկպած, չորսական հոգիանոց խմբերով, հոգևոր թեմակալ Ներսես սրբազանին առաջ գցած, քաղցած, տանջահար, ջրազրկած զանգվածին քաղաքից դուրս են քշում:

Երկու օր դաժան փորձությունների ենթարկելով, տեղահանվածներին ոտքով, թուրք զինվորների մտրակների հարվածների տակ, քայլեցնում են և հասցնում ***Դանը Դերե*** կոչված վայրը: Դա ***առաջին քարավանն էր,*** որին հաջորդում են ***երկրորդն ու երրորդը:*** Ականատեսների վկայությամբ շուրջ 500 հոգուց բաղկացած քարավանի հայերին հասցնում են Սեբաստիայի մերձակա ***Կարդաշլարի*** ծոր և բոլորին անխտիր կացնահարում, դաժանորեն սպանում:

Սկսում են հաշվեհարդարը երկրորդ քարավանով քայլեցվող հայերի հետ: Սեպուհ Ակունին, ձեռքի տակ ունենալով ականատեսների վկայություններ, գրում է. «Իսկ երկրորդ կարաւան այս անգամ հայ բնակչութենէն մէկ շաբթուան մէջ 400 հոգի կը հաւաքեն: Ութերորդ օրը դարձեալ եղբայրը եղբօրը, զաւակը հօրը հետ թեւ թեւի կապելով ժանտարմաներուն հսկողութեան տակ կը ճամբուին դէպի Հալէպ: Մինչեւ հոն 450 հոգիէն 45 հոգի հազիւ ողջ կը մնան:

Ասոնք ալ ճամբու դրուելէն վերջը, դարձեալ կը շարունակուի հաւաքումի գործը: 400 հոգիէ բաղկացած երրորդ խումբ մը կը կազմեն, որուն մէջ կը գտնուէին նաեւ շրջակայ Հայ գիւղերէն Եօզղատ ապաստանածներն ալ:

Այս միջոցին պաշտօնանկ կ'ըլլայ կառավարիչ Ճեմալ պէյ և կուգայ Պօղազլեանի ջարդարար գայմագամ Քէմալը որ Պօղազլեանի հայութիւնը ջնջելէն ետքը կը փութար Եօզղատն ալ անոր բաղդակից ընելու: Քէմալի Եօզղատ հասնելէն օր մը վերջ տեղի կ'ունենայ երրորդ բօսթայի առաքումը:

Ժանտարմաները քաջալերուած ամայի լեռներու և ծորերու մէջ իրենց գործած ազատ ոճիրներէն, քստմնելի գազանութիւն մը ի գործ կը դնեն տակաւին քաղաքէն չհեռացած: Փէօհրէկցի (հայ գիւղերէն մէկը) Համբարձում անուն տարէց գիւղապետ մը հիւանդ, մանաւանդ թեւերը կապուած ըլլալով, չկրնար հետեւիլ արագընթաց բօսթային և միայն կը քաշկռտուի թեւերէն կապուած երիտասարդ ընկերներուն կողմէ:

Ժանտարմա մը հրացանին կոթովը այնպիսի հարուած մը կ'իջեցնէ, որ խեղճ ծերունին կը նուաղի. հարուածը վերըստին կը կրկնէ, կը հայհոյէ, սակայն խեղճ ծերունին իր մարած վիճակին մէջ այլեւս չկրնար քայլ մը իսկ յառաջանալ: Ժանտարման անցորդի մը իշուն վիզէն չուան մը կը քակէ և ծերունիին վիզէն կապելով շան դիակի մը պէս կը քաշկռտէ և մինչեւ առուակը կը տանի և հոն կը նետէ: Այս կարաւանին պատկանող ***400 հոգին էլէկճիլէրի ծորին մէջ կը նահատակուին:***

200 կառքով և 800 սայլով 6000 կիներ, պատանիներ ու մանուկներ ճամբայ կը հանուին դէպի Շէհրի Զօր. սակայն Քէլլէրի ծորը համախմբուած չէթէներ, զինեալ գիւ-

[1] *Անդրանիկ Երկանյան,* նշված աշխատությունը. էջ 325:

ղացիներ կառավարութենէն պաշտօնապէս ցրուուած հրացան, սուր, կացին, դանակ, դաշոյն, ցուպ, նոյն իսկ գերանդի, ծեռքերնին բռնած անհամբեր կը սպասեն եկած կառքերուն, ջարդելու, կտրելու, սպաննելու, կողոպտելու, առեւանգելու, անոնց գոյքերը յափշտակելու, որովհետեւ տրուած հրամանին համեմատ մէկ տարեկանէն մինչեւ 95 տարեկան պէտք էր ջարդել կոտորել:

Քանի՜ մանուկներ կը կոխկռտեն, քանի՜ քանի տղաքներու փորը կը ծեղքեն, որքա՜ն աղջիկներ մայրերէն կը զատեն, ինչքա՜ն ականջներ, մատեր, բազուկներ կտոր-կտոր կ'ընեն և անոնց վրայի օղերը, մատնիներն ու ապարանջանները կը յափշտակեն»[1]:

Քարավաններուն մէջ ջարդի մնացորդներին հասցնում են *Յարա Դերեսե* կոչված վայրը: Քեմալն ու նրա աջ ծեռքը դարձած վայրենի Հուսեյնը հրամայում են շորեր փռել և գաղթականներին առաջարկում են դրանց վրա լցնել իրենց մոտ եղած թանկարժեք մետաղները: Փոխարենը, հանձնողներին (Ղուրանի վրա երդումով) խոստացվում է ետ վերադարձնել հայրենի բնակավայրեր: Չորս օր տևած այդ կողոպուտին հաջորդում են սարսափելի ջարդերը:

Անդրանիկ Երկանյանը գրում է. «Այս բոլոր գործողութիւնները վերջացնելէ յետոյ, կը հրամայեն սակաւաթիւ այր մարդոց զատուիլ մէկ կողմ. անոնց թեւերը կը կապուին ամէն ընդդիմութիւն արգիլելու համար, ու կը քշուին մօտակայ ծորին մէջ մորթուելու համար: Ջարդի ընթացքին հայ մը ծեռքերը քակելով խուճապ կը յառաջացնէ չերքէզ մը սպաննելով իր իսկ սուրով:

Հոս մարդկային ուղեղը կը սառի, միտքն ու երեւակայութիւնը կը մթագնին, լեզուն կը տկարանայ կարենալ պատմելու համար այդ ահաւոր, պատմութեան մէջ նմանը չունեցող կոտորածը: Ջարդարարները կ'աշխատէին իրենց վայրագութեամբ զիրար գերազանցել: Տեղի կ'ունենան հրապարակային լկտիութիւններ, գլխատումներ, մարմնի զանազան մասերը կացինով կտրել, յօշոտել: Ծծկեր երեխաներն ու մանուկները երկու ոտքերէն քաշել ու երկու մասի բաժնել, ոտքերու տակ անոնց գանկերը ճզմել:

Անտէր ու անպաշտպան կիներու, պարկեշտասուն կոյսերու եւ հարսերու, անչափահաս մանուկներու անգիտակից վազքերն, իրարու փարիլը, երկնքի խուլ կամարներն վար առնող աղեկտուր ճիչերն ու վայնասունները, փրկուելու յոյսով աղիողորմ աղաչանքներն ու արտասուալից պաղատանքները ջարդի վայրէն մինչեւ մէկ ու կէս ժամ հեռաւորութեան վրայ կը հասնին:

Այս միջոցին Քեմալ իր սպայակոյտով բարձր տեղ մը ելած ջարդին ճիչերն ու վայերը խափանելու համար տավուլ եւ զուռնայ զարնել կու տար: Բոյրազ գիւղէն չերքէզազգի Հաճի Արսլան աշիրապետը այս դժոխային տեսարանին չդիմանալով Քեմալին կ'ըսէ.

- Պէյ էֆենտի, սա Ղուրանին ո՞ր տեղը գրուած է (սապեսիւպեան) անմեղ մանուկները ասանկ սպաննել, դուն գթութիւն չունի՞ս:

Քեմալ զայրոյթով կը պատասխանէ.

- Եթէ գիտես թէ գթութեան երակը որն է, ցոյց տուր ինծի, որ նայիմ, անմիջապէս կտրեմ եւ նետեմ:

Ահա այսպիսի մարդակերպ ճիւաղի մը քմահաճոյքին յանձնուած էր ամբողջ Եոզկատի եւ շրջակայքի հայութիւնը:

Ջարդէն յետոյ շաբաթներ շարունակ թրքուհիներ յօշոտուած հայուհիները կը մերկացնեն իրենց արիւնոտ հագուստներէն, զանոնք իւրացնելու համար: Ա-

[1] *Մխեպուհի Ակունի*, Սիլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը. Կ. Պոլիս, 1921, էջ 198-200:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Նոնք ջարդին վայրը միասին կը բերէին իրենց անչափահաս զաւակները, որպէսզի վարժուի՞ն արեան հոտին...»[1]:

Արյունախում Քեմալը դրանով չբավարարվեց: 1916 փետրվարին նորից կրկնվեց հայոց ջարդը: Նա այս անգամ ոչնչացնում էր հայերի վերջին բեկորները՝ նշանաբան ունենալով, թե ով որ *«մեկ նուկի հայու միս պահի իր մոտ»*, նրան կոչնչացնեն: Կատարվեց նորից անտանելին: Սպանում էին նույնիսկ այն կանանց, որոնք իսլամ էին ընդունել և թուրքերից երեխայի էին սպասում: Տեսնելով այդ ամենը՝ հայ մայրերն իրենք էին սեփական ծնոքներով սպանում սեփական զավակներին, հետո ինքնասպան լինում: Գողգոթան շարունակվում էր ճանապարհներով դեռ քայլել կարողացող բռնագաղթեցվածների քարավանների նկատմամբ:

Երկրորդ կոտորածը կազմակերպվեց *1916 թվականի աշնանը:* Բեռլինից Պոլիս վերադարձած, ապա բռնագաղթեցվածներին կամովին միացած *Գրիգորիս* վարդապետ *Պալաքյանը* այդ օրերին քարավանների հետ քայլում էր դեպի *Դեր Զոր:* Ճաշակելով գաղթականներին բաժին ընկած բոլոր տեսակի դառնությունները, սեփական մաշկի վրա կրելով ուղեկցող թուրք չեթեների գործադրած դաժանությունները, բարձրաստիճան հոգևորականը դառնում է ականատեսը հայ ժողովրդի ամբողջ ողբերգության:

Սրանց քարավանը *Չորումից* հասնում է *Յոզղատ,* ապա այդտեղ մեկ շաբաթ մնալուց հետո, դիակներ «շաղ տալով ճանապարհի» չորս կողմը, շարժվում է դեպի *Պոդուզլյան:* Լսածն ու տեսածը, գաղթից հետո (հրաշքով փրկվելով) հայրենասեր հոգևորականը, գրչի զորությամբ հանձնում է թղթին, ստեղծելով երկհատորանոց *«Հայ գողգոթան»:* Այնտեղ հարյուր էջից ոչ պակաս (էջ 205-294) շարադրանք կա Հայոց եղեռնի մասին ընդհանրապես, Յոզղատի սպանդի վերաբերյալ, մասնավորապես:

Վարդապետը սրտի խորը կսկիծով պատմում է, թե Քեմալ հայասպանն ինչպիսի՞ ավերածություններ էր կատարել Յոզղատում, ինչպիսի՞ դաժանությամբ էր կոտորել անպաշտպան ժողովրդին: Ճանապարհների երկայնքով փռված էին գիշակերների կտուցներով մորթազերծված հայ նահատակների կմախքները, կանանց գանգերից բուրգեր էին գոյացել: Կենդանի մնացածների վիճակը ևս անտանելի էր և անորոշ[2]:

Նա գրում է. «Արդեն մահվան երկյուղը պաշարած էր մեզ ամէնքս ալ. տակաւ կը մօտենայինք մեր եղերական անխուսափելի վախճանին: Մեր շուրջը տեղի ունեցող խորհրդաւոր իրադարձութիւններն, փոխանակ մեր մտահոգութիւնները փարատելու, ընդհակառակը ժամէ ժամ մեր մահաբոյր կասկածներուն իրաւունք տալու բնոյթը ունէին:

Սակայն մտածելու ժամանակ չկար, հարկ էր քալել, թափառական ու հալածական հայեր էինք, ու անողոք ճակատագիրը մեզ կը քշէր կը տանէր դէպի գերեզման... Բայց բա՜բէ, եւ ոչ իսկ գերեզման մը ունենալու պատիւը պիտի ըլլար մեզի...:

Որովհետեւ ներքին գործերու նախարար եւ հայոց մեծ դահճապետ Թալաթ օսմ. կործանող կայսրութեան ամէն կողմը, մինչեւ աննշան գիւղերը հեռագրական հրաման տուած էր, հայերը անխնայ կոտորել քաղաքներէ դուրս սարերու ու ձորերու մէջ: Մնացեալ ծեր կիներն ու երախաներն եւս բնաջնջել դիտումնաւոր կերպով երկարել տրուած ճամբաներու ու Տէր-Զօրի անապատներուն մէջ, թողուլ առանց հացի, առանց ջուրի եւ առանց գերեզմանի...:

Եւ ստուգիւ մէկ միլիոնէ աւելի հայ քաղքենի եւ շինական ժողովուրդ անագորոյն կերպով ջարդուած էր ու անաղմուկ խեղդուած իր արեանը մէջ:

---

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 328:

[2] *Գրիգորիս ծ. վարդ. Պալաքեան,* Հայ գողգոթան, Ա հատոր, Բ տպագրություն, Պեյրութ, 1977, էջ 210-268:

Տասնեակ հազարաւոր արու հայեր, չուաններով կամ պարաններով իրարու կապուած, անգթօրէն խողխողուած էին փոքր Ասիոյ բոլոր ճամբաներուն վրայ, եւ կամ կացիններով ծառի ճիւղերու յօտումին նման ջարդուած: Ի՛նչորովին անկարեկիր եւ խուլ մնալով այս թշուառներուն լացին ու կոծին եւ զիրենք առանց տանջանքի գնդակահար ընելու պաղատանքներուն:

Որովհետեւ հրամանը բարձրէն եկած էր եւ ճիհատը իսկապէս հայոց դէմ հրատարակուած էր, այո՛, պէտք էր ջարդել անխնայ, մինչեւ որ օսմ. կայսրութեան սահմաններուն մէջ ոչ մէկ հայ չմնար:

Այս մահաիրաւէր համատարած կոտորածիս սարսափելի հրամանը, իր ամենախուժդուժ թափովն, գործադրուած էր մասնաւորաբար ***Եոզկատի կառավարչական ամբողջ շրջանին մէջ,*** շնորհիւ էնկիւրիի փոխ կուսակալ Աթըֆի: Որ 1915 Յուլիսին Եոզկատի շրջանին հայերը կոտորելու հրամանն գործադրելու դժկամակող կառավարիչը իսկոյն պաշտօնանկ ընելով, անոր տեղ հայերու սպանդը կազմակերպելու համար առժամապէս Եոզկատի փոխ կառավարչութեան պաշտօնին կը կոչէր Պօղազլիանի գայմագամ Քէմալը: Սա հազիւ պաշտօնի անցած, հրէշային թափով մը անխնայ կոտորել կու տար Եոզկատի ամբողջ շրջանի 42 000ի հասնող հայութիւնը մինչեւ ծծկեր մանուկները..., որոնց սրտաճմլիկ մանրամասնութիւնները հետզհետէ պիտի յիշուի տեղին:

Եոզկատ-Պօղազլիան ճամբուն վրայ՝ երկրորդ օրն իսկ, մեր ճամբուն աջ ու ձախ կողմերուն ինկող արտերուն մէջ, սկսանք տեսնել առաջին անգամ՝ ըլլալով, մարդկային կազմալուծուած կմախքներ եւ մանաւանդ գանգեր, որոնցմէ շատեր երկար մազեր կը կրէին, եւ տարակոյս չէին ձգեր թէ կանացի գանգեր էին...:

Մեր աքսորական ընկերներէն երիտասարդ Պոլսահայ մտաւորականներ յաճախ գետին խոնարհելով՝ այս գանգերը ձեռքերնին կ'առնէին ու արտասուօք կը համբուրէին...: Որովհետեւ ասոնք սրբազան նշխարներն էին չարչարալից մահով նահատակուած մեր եղերաբախտ մայրերուն ու քոյրերուն...»[1]:

Գ. Պալաքյանը խոսում է նաև Յոզղատի հայության ողբերգության կազմակերպիչ Քեմալի ճակատագրի մասին: Նա գրում է. «Այս այն Քէմալն է, որ զինադադարի վաղորդայնին դատարանէն մահուան դատապարտուելով, Պոլսոյ մէջ կախաղան բարձրացուցին: Այս պատճառով թուրքերը հայրենիքի անմեղ զոհ մը նկատելով զայն սրբացուցին. այսպէսով իրենց համամտութիւնը յայտնած եղան Քէմալի գործած ահաւոր ոճիրներուն, որ աւելի քան ***42.000 անմեղ հայերու կեանք արժած էր»[2]:***

Այսպիսով շրջվեց Յոզղատի հայության արյունաներկ պատմության առաջին էջը, որը հավիտենական անեծք էր կարդում թուրք ջարդարարներին, իր դաժանությամբ մնում անկրկնելի և անօրինակ:

Մուդրոսի զինադադարից հետո Յոզղատի հայության բեկորները ***վերադարձան հայրենի օջախներ,*** որը մի տեսակ ջղածգություն էր առաջ բերում Մուստաֆա Քեմալի ու նրան շրջապատող երրորդ շրջափուլի բորենիների շրջաններում: Դրանք ևս մեծամասամբ ոչնչացվեցին:

Անդրանիկ Երկանյանը, պատմելով Յոզղատի սպանդի մասին, իր աշխատությունը եզրափակում է այսպես (որի հետ մենք ևս լիովին համաձայն ենք). «Եոզղատահայությունը Մեծ եղեռնին զոհ տուաւ իր ընդհանուր թիւին 97% տոկոսը:

Անոր ազատութեան եւ խաղաղ կեանքի մը ի խնդիր մարտնչող զաւակները, նենգ ու զազիր թշնամւոյն ցուցուցին իրենց վրիժառու բազկին զօրութիւնը, դաւով ու խա-

---

[1] *Գրիգորիս վարդ. Պալաքեան,* նշված աշխատությունը, էջ 265-267:

[2] Նույն տեղում, էջ 268:

բէութեամբ սպաննուած իրենց հայրերուն եւ եղբայրներուն ճակատէն սրբելով «վախկոտութեան եւ թուլամորթութեան արատը»:

Թող յաւէտ խնկելի մնայ հայ ծնած ըլլալու «մեղքով» եւ ազատութեան սիրոյն նահատակուած մեր պաշտելի հայրերուն, մայրերուն, քոյրերուն եւ եղբայրներուն անմոռանալի յիշատակը:

Թող անքառամ փառապսակներով զարդարուին ցեղին գոյատեւման համար մղուող մեծ պայքարին ընթացքին ինկող անանուն հերոսներուն լուսաւոր ճակատները:

Գիտենք, ո՛վ մեր պաշտելիներ, յայտնի եւ անյայտ վայրերու մէջ ձեր բզքտուած մարմիններն ու փշրուած ոսկորները, որոնք այս ընդարձակ աշխարհին մէջ զիրենք պարփակող ափ մը հող նոյնիսկ չունեցաք, դեռ կը մխա՞ն ձեր տանջուած հոգիները հետ ու պիտի մխա՞ն մինչեւ այն օրը՝ երբ արդարութիւն պիտի ըլլայ անիրաւուած հայու ձեր զաւակներուն:

Համբո՞յր ձեր անշիրիմ ճաիւններուն, ով մեր Մեծ Երազի ճամբուն վրայ ինկող նահատակներ

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՐԿԱՆԵԱՆ»[1]:

V. ԵՂԵՍԻԱՅԻ ՀԱՅ ԶԱՆԳՎԱԾՆԵՐԻ ԴՅՈՒՑԱԶՆԱՍԱՐՏԵՐՆ ՈՒ ԵՂԵՐԱԿԱՆ ՎԱԽՃԱՆԸ

Հազարամյակների համաշխարհային պատմության փորձից իմաստնացած մարդկությունը, հատկապես փոքր, բայց հնամենի ժողովուրդները հանգեցին հիմնավոր մի եզրահանգման, այն է՝ ոչ միայն ապրում ու հարատևում են, այլև հավերժանում են այն ազգերը, ***որոնց զավակները մահվան դեմ կյանքով են կռվել, պատրաստ են եղել նահատակվել՝ հանուն ազատության ու անկախության:***

Սրբազան նման գիտակցությունն ուղենիշ ունենալով, գրեթե բոլոր հայկական համայնքները ***ցանկացել են*** դիմագրավել մինչև ատամները զինված թուրք բորենիների ջարդարարությանը, սակայն, դժբախտաբար, բոլորին չէ, որ հաջողվել է: Տեղի, ժամանակի, զինվածության աստիճանով պայմանավորված, հատկապես անսալով սեփական հոգևոր ու աշխարհիկ որոշ համայնապետերի «սխալ» հորդորներին, ժողովրդի մեծ մասը, բացարձակ մեծամասնությունը, քշվել է դեպի ***Ռես-ուլ-Այնի և Դեր-էլ-Զորի*** (կարճ՝ Դեր Զոր) անապատները, իր մահկանացուն կնքել կամ ճանապարհին, կամ էլ աքսորավայրերում:

Վարդան Մամիկոնյան և Սասունցի Դավիթ արարած ժողովուրդը, Մեծ եղեռնի տարիներին տվեց նաև ինքնապաշտպանական հերոսապատումների մինչ այդ չլսված ու չտեսնված օրինակներ: Որտեղ հնարավոր էր, որտեղ դեռևս ժողովրդի ձեռքին զենք էր մնացել, այնտեղ էլ եղան ըմբոստացումներ, ծավալվեցին անհավասար գոյամարտեր, թափվեցին հուսահատական ճիգեր, մեռնելուց առաջ ցուցաբերվեցին փոխվրեժի զգացումներ: Որպես կանոն, որ գավառներում ինքնապաշտպանական մարտերն ուժեղ էին, այնտեղ ոչնչացումից փրկվողների թիվը համեմատաբար մեծ էր:

Հերոս ինքնապաշտպաններն իրենց պայքարի արյունաներկ դրոշը պարզեցին ***Վան-Վասպուրականում, Սասնո լեռնաշխարհում,*** զորավար Անդրանիկներ ծնած ***Շապին-Կարահիսարում,*** հեքիաթային ***Մուսա լեռներում, Հաճընի*** բերդաքաղաքում: Այդ շարքը դժբախտաբար չի կարելի հավելել կամ համալրել, քանզի մեղավոր, անգիտակից ձեռքերով, զինաթափեցին Զեյթունի արծվաբունը, որը կես հազարամյակ

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի». էջ 335:

անընդմեջ պաշտպանել էր կիսանկախ վիճակ, Ս. Աստվածածնի բարձունքի վրա կամ կոտորածի ձորում թուրքերից դիակույտեր բարձրացրել: Զինաթափված քաղաքն այս անգամ գլխիկոր բռնեց աքսորի դաժան ու զոհառատ ճանապարհը, ոմանք ճողոպրելով մահվան գերանդու հարվածներից, ցրվեցին Կիլիկիայով մեկ, շատերը հասան *Եդեսիա* և օգնության ձեռք խնդրեցին հայրենակիցներից:

Եդեսիան և եդեսացիները, բնավեր խլյակ դարձած զեյթունցիներից իմացան, որ խաբեությամբ լեռնահամայնքը տեղահանվել է, որի մի մասը տեղում ոչնչացվել է, մյուսը՝ բռնել բռնագաղթի կործանարար ճանապարհը: Նրանց համար այլևս տարակուսանք չկար, որ քաղաքը կարժանանա Զեյթունի ճակատագրին, եթե զորեղ միջոցներ չգտնվեն:

Այժմ համլետյան լինել-չլինելու երկընտրանքի խնդիր էր դրված հերոսական այդ ժողովրդի առջև: Նրանք լրջորեն խորհում էին մեռնել կանգնած, սուրը ձեռքներին, պայքարելով, թե անգեն հանձնվել թուրք ու քուրդ բարբարոսների «ողորմածությանը», գլխիկոր բռնելով աքսորի ճանապարհը՝ զոհ դառնալ իսլամապաշտ գազանների անխնա հարվածներին:

Չնայած երկար խորհելու ժամանակը փոքր էր, այնուամենայնիվ, վիճակը գցված լինելու պատճառով պայքարի ձևն ընտրված և գերադասված էր: Հայ *Եդեսիան*, գրեթե միակամ, որոշեց անհավասար զինված պայքարի մեջ որոնել համայնքի փրկությունը, հակառակ դեպքում *մահն ընդունել հոտընկայս, անհավասար գոտեմարտերի ժամանակ միայն:*

Քաղաքը մարտնչեց հերոսաբար, տվեց խիզախության աննախադեպ օրինակներ, մարտավարության զարմանահրաշ վարպետություն: Ակամայից Եդեսիան փոխարինեց Զեյթունին: Նա իր թաղամասում փռեց թուրք զինվորների երկու հազար դիակներ, հայակուլ Ֆահրի փաշային հարկադրելով արտահայտել այն միտքը, թե. *«Ինչ կլիներ մեր վիճակը, եթե այս ծանր օրերին մի քանի Ուրֆաներ մեր դեմ այսպես ծառանայինն»*[1]:

Եդեսահայության հերոսական ոգորումները գլխավորեցին *Հարություն Ռաստակլենյանը, Մկրտիչ Յոթնեղբարյանը* և իրենց կռվելաձևով, առավել ևս նահատակությամբ մնացին, հավերժացան Հայոց պատմության մատյանի էջերում: Թերևս սրանց կարելի է վերագրել Ներսես Շնորհալու *«Ողբ Եդեսիո»* պոեմի ներքոհիշյալ տողերը.

Բայց դուք որդիք իմ սիրելիք,
չեք ինձ մեռեալ, այլ կենդանիք,
Քանզի յերկինս նահատակեալք,
եվ ի յերկինս պսակիք:

Այդուհանդերձ եդեսահայության մի ստվար հատված փրկվեց ոչնչացումից դառնալով եզակի, Մեծ եղեռնի տարիների բռնագաղթվածների մեջ, դրա համար էլ որոշեցինք քիչ ավելի հիմնավոր անդրադառնալ նրանց անցյալի պատմությանը: Չէ՞ որ այսօր էլ ապրում են եդեսահայերը, կարոտանքով սպասում իրենց բնօրրանի ազատագրմանն ու վերադարձին:

*
* *

Պատմական Եդեսիա հայաքաղաքը, անվանակոչվելով նաև *Ուռհա, Ուրֆա* (արաբերեն՝ *Ռուհա),* փռված էր Միջագետքի հյուսիսարևմտյան փեշերին՝ Եփրատի վտակ

[1] *Բրուսո էքարտ,* Սպրածս օրերը Ուրֆայում (Պոտսդամ, 1922), Երևան, 1990, էջ 3: Գերմաներենից թարգմանել և առաջաբան է գրել *Ժոզեֆ Ավետիսյանը:*

Դայաստուն գետի ափերին: Եղեռնի տարիներին այն մտնում էր Հալեպի վիլայեթի կազմում ավելի քան սահմանակից դառնալով Դիարբեքիրի և Խարբերդի նահանգներին:

Երբեմնի հարուստ, բարգավաճ ու գեղատեսիլ այդ քաղաքը կերտել է հարուստ և նախանձելի կենսագրություն: Եդեսիան հնում ուներ *Օրհոն* անուն, որը մ. թ. ա. 303 թ. Սելևկիոս Ա. Նիկատորը հիմնովին վերաշինեց և վերակոչեց *Եդեսիա,* ի պատիվ Մակեդոնիայի համանուն քաղաքի: Մ. թ. ա. 312-216 թթ. այն Օսրոենի թագավորության մայրաքաղաքն էր: Հռոմի Կարակալա կայսրը, գահընկեց անելով Օսրոենի վերջին թագավոր Աբգարին, նրա նստավայրը դարձրեց իր գաղութը[1]:

Եդեսիան այնուհետև կռվախնձոր դարձավ հզոր տերությունների միջև: 363 թ. հռոմա-պարսկական հաշտության պայմանագրով քաղաքն ընկավ Սասանյան Պարսկաստանի տիրապետության տակ և այնուհետև բռնեց զարգացման նոր ուղին՝ բացելով դպրոցներ, հիմնելով մատենադարան, որոնք հանրահայտ էին ողջ Մերձավոր և Միջին Արևելքում, այդ թվում և Հայաստանում: Եդեսիան ընդունել, կրթություն է տվել հայ սաների: Կարծես թե հաղթանակել է այն տեսակետը, որի համաձայն, *Մեծն Մեսրոպ Մաշտոցը* Եդեսիայի հռչակավոր գրադարանում նստած, այնտեղ պահված ձեռագրերից օգտվելով, *ստեղծեց հայոց գրերը*[2]:

Հետագա հարյուրամյակներում, հարուստ ու բարգավաճ այդ քաղաքի կրծքավանդակը տրորեցին բյուզանդացիները, արաբները, սելջուկները, խաչակիրները: 1144 թ. Եդեսիայի վրա հարձակվեցին Մոսուլի Զանգի ամիրայի հրոսակները և կործանարար հարված հասցրին: Քաղաքի պաշտպանության առաջին շարքերում էին հայերը, որոնք վաղուց էին խարսխվել այնտեղ և այնքան մեծ թիվ էին կազմել, որ քաղաքագլուխ (Դուկ) նշանակելիս տիրակալները հարցնում էին նրանց կարծիքը, երբեմն էլ վերջիններին հանձնարարում այդ պաշտոնը:

Քաղաքի մասին հայոց մատենագիտության մեջ ստվարածավալ նյութեր են պահպանվել, սակայն միջնադարին վերաբերող աղբյուրների մեջ գերադասելի է Ներսես Շնորհալու հանճարեղ *«Ողբ Եդեսիո»* պոեմը, գրված 1144 թվականին և առաջին անգամ հրատարակված 1810 թվականին:

«Ողբ Եդեսիո»-ն Հայոց կաթողիկոսի գլուխգործոցն է, միաժամանակ հայ քաղաքական պոեզիայի անդրանիկ նմուշներից մեկը:

Այն քնարավիպերգական ստեղծագործություն է օժտված ծավալուն սյուժեով (Եդեսիա քաղաքի պաշարումը, պաշտպանությունը, գրավումը, կոտորածն ու կողոպուտը, որոնք 1144-ի վերջերին տեղի ունեցած իրական դեպքեր են): Երկի մեջ հանդես է գալիս նաև քնարական հերոսը՝ որոշակի ապրումներով ու զգացմունքներով, ապագայի նկատմամբ ունեցած հավատով ու լավատեսությամբ: Պոեմը գրված է դիմառնության ձևով. Եդեսիան անձնավորված է իբրև որդեկորույս, որբևայրի մի կին, որը սգում է իր դժբախտությունը: Այս միջոցով հեղինակն ստեղծել է կնոջ կենդանի ու ամբողջական բնավորություն, հորինվածքը դարձրել տպավորիչ ու հուզական: Հասուն արվեստագետի վարպետությամբ են նկարագրված ռազմական գործողությունները: Դիմելով

---

[1] Քաղաքի պատմության մանրամասները շարադրված են բազմաթիվ աշխատություններում: Հիշատակենք դրանցից հիմնականները, որոնցից նյութեր քաղելով, ստեղծել ենք սույն հատվածը: «Եդեսիա», *Հ. Բարթիկյան,* ՀՍՀ, հ. 3, 1977, էջ 484: *Մ. Արգումանյան,* Ուրֆայի հերոսամարտը, ՀՍՀ, հ. 12, Երևան, 1986, էջ 293-294: "Турция. Окно в мир". Сингапур, 1995, стр. 273-274, *"Урфа". Ա. Գապպենճյան,* Ուրֆայի հայերուն հերոսամարտը, «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 795-810: *Ա. Սահակյան,* Դյուցազնական Ուրֆան և նրա զավակները, Բեյրութ, 1953: *Զ. Օրբելյան,* Ուրֆայի վերջին օրերը 1915-ին (Դյուցազներգություն), Բեյրութ, 1961: *Մ. Վ. Արգումանյան,* Հայաստանը 1914-1917 թթ., Երևան, 1969: «Հայ ժողովրդի պատմություն», հատ. VI, Երևան, 1981, էջ 572-573: *Ս. Ակունի,* Սիլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, էջ 98-101:

[2] ՀՍՀ, հ. 3, Երևան, 1977, էջ 484:

հակադրությունների՝ բանաստեղծն առավելապես պատկերում է թշնամու բարբարոսական արարքներն ու բնակչության անձնուրաց սխրանքները: Եդեսիայի կործանման նկարագրությամբ բանաստեղծն անդրադարձել է նաև հայ ժողովրդի ճակատագրի հարցերին: Պոեմի սկզբում Եդեսիա-մայրը իրեն ողբակից է հրավիրում Վաղարշապատ և Անի մայրաքաղաքներին՝ հիշեցնելով, որ նրանք նույնպես զրկվել են փառքից ու հզորությունից: Իդեալականացնելով անցյալը Ն. Շնորհալին ձգտել է կենդանի պահել քաղաքական ազատության հասնելու գաղափարը, տեսնել հայրենի երկրի պետական վերածնունդը: Պոեմն ավարտվում է լավատեսությամբ, որբևայրի մայրը վերջնականապես դժբախտացած չի համարում իրեն երբ լուծվի վրեժը, ինքը նորից կերջանկանա, օտարությունից տուն կդառնան տարագիրները: Ն. Շնորհալին չի ղեկավարվել իրականությանը համակերպվելու քրիստոնեական գաղափարով, այլ գտել է, որ միայն պայքարով ու հաղթանակով է հնարավոր նվաճել ազատությունը»[1]:

Եդեսիան այնուհետև բաժին է հասել Լենկթեմուրին (1381), ապա թուրքմեն ամիրաներին: 1512 թ. այն ընկավ Իրանի տիրապետության տակ, 1637 թվականից դարձավ օսմանյան թուրքերի փայաբաժինը և մինչև օրս էլ «պատկանում է» վերջիններիս:

Քաղաքը տվել է հայ անվանի մարդկանց մի ամբողջ փաղանգ: Դրանց մեջ շեշտենք ***Մատթեոս Ուռհայեցուն, լեզվաբան Հակոբ Շահան Ջրպետյանին*** և այլոց: Մ. Մաշտոցից բացի Եդեսիայի հետ կապեր են ունեցել ***Քերթողահայր Մ. Խորենացին, Ներսես Շնորհալին:***

Եդեսիան, ունենալով աշխարհագրական ու առևտրատնտեսական հարմարավետ դիրք, փարթամ տնտեսություն, մագնիսի պես դեպի իրեն է ձգել տարբեր ազգություններին պատկանող բնակիչների: XIX դարասկզբին քաղաքն ուներ երկու հազար տուն: Աշխարհամարտի սկզբում հայերի թիվը, ոմանց կարծիքով, ***քսանութ հազար երկու հարյուր էր***[2], ոմանց թվաբանությամբ ***երեսուներկու հազար***[3], 1975 թ. տվյալներով քաղաքն ուներ 133000 բնակիչ[4], որոնցից շատ չնչին քանակությամբ հայեր միայն:

Ուրֆան թողել է հերոսական պատմության ընդարձակ էջեր: Այդ բոլորը վերապահելով քաղաքի համակողմանի պատմության հետազոտողներին, այստեղ, ընդհանուր գծերով, ներկայացնենք քաղաքի հերոսական ու ողբերգական կացության նկարագիրը XIX դարավերջին և հատկապես XX դարաշեմին:

Ա. Գապպենճյանը «Ուրֆայի հայերի հերոսամարտը» աշխատության մեջ գրում է. «Մշակութային գետնի վրա զարթոնքի այս շարժումը կը շարունակուի մինչեւ 1895, այսինքն՝ համիտեան ջարդերը: Հոս տեղին է յիշել պարագայ մը - հայաբնակ բոլոր քաղաքներն ալ կ'ենթարկուին աղէտին, բայց ի տարբերութիւն միւսներուն, ***Ուրֆա կը դիմադրէ ամբողջ ամիս մը:*** Դժբախտաբար օսմանեան կառավարութեան կեղծ երդումին եւ խոստումներուն հաւատալով, հայերը կը յանձնեն իրենց զէնքերը: Թուրք ամբոխը առիթէն օգտուելով կը յարձակի անզէն ժողովուրդին վրայ: Միամիտ հայերը կը խռնուին եկեղեցիին մէջ եւ հոն տեղի կունենայ երեք հազար ուրֆացիներուն ջարդը: Ըստ անգլիական տեղեկագրի մը՝ համիտեան ջարդերուն ***Ուրֆայի հայերը զոհ տուած են իննէն-տասը հազար հոգի.*** այսինքն՝ հայ բնակչութեան հարիւրին յիսունը»[5]:

---

[1] ՀՍՀ, հ. 8, Երևան, 1982, էջ 255: *Ն. Թահմիզյանի «Ներսես Շնորհալի»* հոդվածը:

[2] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 796:

[3] ՀՍՀ, հ. 12, Երևան, 1986, էջ 293: «Ուրֆա». անստորագիր հոդվածը:

[4] Նույն տեղում: Տես նաև "Турция. Окно в мир", 1997, Сингапур, стр. 273-274, "Урфа" ենթագլուխը, գրված թուրք աշխարհագետ պատմաբանների գրչով:

[5] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 796:

1895 թ. Եդեսիայի հայկական ջարդերի մասին խտացված, բայց հիմնավոր շարադրանք է հրապարակել ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի բազմահատորյակը: Այնտեղ ասված է, որ սարսափելի չափերի է հասնում կոտորածը Եդեսիայում (Ուրֆա): 1895 թ. հոկտեմբերի 16-ին թուրքական կանոնավոր զորքը և ամբոխը հարձակվում են հայերի խանութների վրա, կողոպտում, ավերում ու հրկիզում: Կառավարությունը մոլեռանդ խուժանին զենք է բաժանում և կոչ անում կոտորել հայերին և զավթել նրանց ունեցվածքը: Սակայն հայերը, հիմնականում ապրելով մեկ թաղամասում, կարողանում են դիմադրություն կազմակերպել և թշնամուն ետ մղել: Հաջորդ օրը կառավարության նոր զինված ուժերը, ցեղապետներն ու ավազակապետերը կատաղի հարձակում են սկսում: Այս անգամ ևս հայերի հերոսական պաշտպանությունն անսասան է մնում: Կառավարությունը հրաման է տալիս պաշարել հայկական թաղամասը և թնդանոթի հարվածներով ավերել այն: Դա էլ չի օգնում: Հայերն ուժեղացնում են պաշտպանական դիրքերը: Պաշարումը շարունակվում է ևս հինսուն օր: Համոզվելով, որ ոչ մի կերպ հնարավոր չէ գրավել հայկական թաղամասը, կառավարությունը այս անգամ դիմում է նենգ քայլի, պաշարումը ձևականորեն վերացնում է և կարգադրություն է արվում խաղաղ աշխատանքի անցնել:

Դեկտեմբերի 16-ին քաղաքի հայերը, իմանալով, որ նորից հարձակում է պատրաստվում, հատուկ պատգամավորություն են ուղարկում գավառապետի մոտ, խնդրելով, որ իրենց տրված ապահովության խոստումը կատարվի և հարձանումը կանխվի: Գավառապետը հուսադրում է նրանց և իսկույն երեք հազար պահեստի զինվոր ու 1500 համիդիեական ուղարկում՝ իբր հայկական թաղամասը պաշտպանելու: Կես ժամ չանցած սկսվում է անզեն հայերի կոտորածը: Ավերածությունը, կողոպուտն ու կոտորածը ահավոր չափերի են հասնում: Մեծ թվով կանայք և երեխաներ փակվում են եկեղեցում: Սակայն դահիճները ջարդում են եկեղեցու դուռը, անպաշտպանների վրա նավթ լցնում և այրում: Այդ ահավոր ջարդերին զոհ դարձավ յոթ հազարից ավելի հայ: Ողջ մնացածներից էլ մեռնում էին օրական 10-15 հոգի «իրենց վերքերից կամ սարսափելի տեսարանների սոսկումից»: Եդեսիան ավերակների մի կույտի վերածվեց[1]:

Ահավոր այդ կոտորածը, սակայն, չկարողացավ կոտրել աշխատասեր ու ձեռներեց եդեսիահայության կամքը: Ջարդերից հետո, եթե մյուս գավառների հայերից շատերը սփռվեցին աշխարհով մեկ, ապա եդեսիացիները մնացին կառչած իրենց տանն ու բնակավայրին և կարճ ժամանակում վերակենդանացրին դրանք:

1908 թ. հռչակվեց օսմանյան սահմանադրությունը: «Հայ-թուրք» կեղծ եղբայրացման գաղափարը թևածում էր Եդեսիայով ու նրա շրջակա հայկական գյուղերով մեկ: Գավառի շուրջ 35000-ոց հայ համայնքը ազգային վերածննդի մեղրամիս էր ապրում: Ստեղծված, ճիշտ է ժամանակավոր, բայց և նպաստավոր հանգամանքներից օգտվելով, սկսեցին սունկի նման աճել մշակութային միություններ, նույնիսկ քաղաքական կազմակերպություններ:

Ձեռքից ձեռք էին խլվում Րաֆֆու և Ահարոնյանի հայրենասիրական, ժողովրդին դեպի ազատություն մղող արձակ ու չափածո ստեղծագործությունները: Տաք հացի նման խլվում էին «Խենթն» ու «Կայծերը», «Դավիթ-Բեկն» ու «Սամվելը»: Գամառ-Քաթիպայի բանաստեղծությունները, Մ. Նալբանդյանի «Ազատություն» և «Մանկության օրերը» չէին իջնում բեմերից, չէին դադարում հնչել ժողովրդի շուրթերից:

«Հրապարակ կ'իջնեն նախապես գաղտնի աշխատող կուսակցութիւնները, եւ

[1] «Հայ ժողովրդի պատմություն». հատ. VI, Երևան, 1981, էջ 268: Տես նաև «Արաքս», գիրք Բ 1894-1896, Ս. Պետերբուրգ, էջ 135-136:

յայտնի գործիչներ Փարամազ, Ղեւոնդ Մելոյեան, Տիգրան Ծամհուր կ'այցելեն Ուրֆա: *Մեծ ոգեւորութիւն կը ստեղծէ Գէորգ Չավուշի այրիին այցելութիւնը, եւ հայկական գաւառներէն կտրուած ուրֆացի հայը յափշտակութեամբ մտիկ կ'ընէ տեղի ունեցած քաղաքական դէպքերը; Ազգային շարժումին իր բաժինը կը բերէ նաեւ Ուրֆայի Առաջնորդ Արտաւազդ Վրդ. Գալենտերեանը, արուեստագէտի խառնուածքով խոհուն կղերական մը»*[1]:

Հանրահայտ է, որ հայ-թուրք եղբայրացումը երկար կեանք չունեցաւ, քանզի այն կեղծ էր, շինծու և կառուցված էր ավազի վրա: Ադանայի կոտորածը (1909) քանդեց այդ խախուտ կամուրջը: Եդեսիայի թուրքերը, 1895 թ. կոտորածի համը բերանները մնացած, կրկին փորձեցին ջարդեր կազմակերպել քաղաքում: Նրանց այս անգամ չհաջողվեց, քանի որ երիտասարդությունը Մկրտիչ Յոթնեղբայրյանի գլխավորությամբ, ամիսներ առաջ ոչ միայն զենք էր հայթայթել, զինվել էր, այլև քաղաքից դուրս, հրապարակում զինավարժություններ էր անում: Թուրքերն այդ ամենը տեսնելով, վախեցան հարձակվել հայերի վրա: Այս անգամ Եդեսիան Ադանայի բախտին չարժանացավ:

1914 թ. պայթած Առաջին աշխարհամարտը փոխեց բոլոր տիպի հարաբերությունները, այդ թվում՝ հայերի և թուրքերի, հայերի և կենտրոնական կառավարության, ինչպես նաև տեղական իշխանությունների միջև: Եդեսիայում հայասպանության ծրագրերը իրականացվում էին նույն մեթոդներով: «Հայաջինջ ծրագիրներու գործադրության նպատակով,- գրում է Ա. Գապպենճյանը - կառավարությունը նախ կողոպտեց հայ առեւտրականները, յետոյ հաւաքեց ձիերը, կառքերը եւ ապրանքները բանակին անհրաժեշտ ուտելիք եւ հագուստ հայթայթելու պատրուակով: Անտեղի բախումէ մը խուսափելու համար՝ հայերը գործադրեցին բոլոր հրամանները:

Վտանգը միշտ կար. բայց հայերը ապահովուած կը զգային, քանի որ ունէին ուտելիքի առատ պաշար եւ իրենց թաղերը կը գտնուէին լաւ պաշտպանուած դիրքերու վրայ: Բայց այդ օրերուն Ուրֆա սկսան հասնիլ զէյթունցի հայ գաղթականները եւ շփոթ կացութիւնը աւելի ծանրացաւ:

Ուրֆացի հայը կտրուած էր արտաքին աշխարհէն, եւ երբ տեսաւ անընկճելի զէյթունցին խլեակի մը վերածուած, յուսալքում մը ծայր տուաւ ժողովուրդին մէջ: Բայց անոնք ազգային գիտակցութենէն մղուած, անմիջապէս փարեցան թշուառ գաղթականներուն նիւթապէս օգնելու նուիրական գործին: Եւ այս մատակարարումը տեւեց մայիսէն մինչեւ հունիս ամիսը»[2]:

Եդեսիայում հիմնած գորգագործական ֆաբրիկայի սեփականատեր Բրունո Էքարտը այդ օրերին քաղաքում էր, ականատես էր դեպքերի զարգացման ընթացքին, մանավանդ որ այնտեղ աշխատողները հայուհիներն էին: Զարմանալիորեն այս օտարերկրացին ուներ հայասիրական հակումներ և սրտի ցավով էր ներկայացնում քրիստոնյաների վիճակը մինչև գողգոթան: Նա գրում է. «Այդ ժամանակ ամբողջ Թուրքիայում կեղծ լուրեր էին տարածվում: Ահն ու սարսափն էր իշխում քրիստոնյաների շրջանում, իսկ թուրքերի զայրույթն ու մոլեգին կատաղությունն օրեցօր աճում էր: Անեծքներն ու մոլեռանդ սպառնալիքները գնալով սաստկանում էին: Մենք ցավով էինք դիտում, թե ինչպես իրենց քաղաքակիրթ համարող թուրքերը հայհոյանքներ էին տեղում հայերի գլխին: Թվում էր, թե թուրք հրոսակներն անհամբերությամբ էին սպասում կոտորածներին: Մինչ այդ արդեն սկսվել էր ջարդն Արևելյան Անատո-

---

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 798: *Ա. Գապպենճյան,* Ուրֆայի Հայերուն հերոսամարտը:

[2] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 798:

լիայում: Դիարբեքիրից Ուրֆա եկող մի ամերիկացի հաղորդեց առաջին սարսափելի լուրերը: Որոշ ժամանակ անց Ուրֆա ժամանեցին կանանց ու երեխաների առաջին քարավանները: Ջարդերի ընթացքում իրենց բուն հայրենիքում սպանել էին բոլոր տղամարդկանց, և հազարավոր դիակներ մնացել էին փողոցների աջ ու ձախ կողմերում կերակուր դառնալով շներին և ուրուրներին: Կանայք պատմում էին իրենց աչքերի առջև կատարված զարհուրելի իրադարձությունների մասին:

Աքսորի առաջին օրերի ընթացքում մենք ստիպված էինք բանվորներ փնտրել քաղաքից դուրս մեծ քարվանսարաներում (իջևանատներ): Պատառոտված հագուստներով, հիվանդ, անասելի տխուր կանանց թշվառությունը սարսափելի էր: Նրանց հոգնած աչքերում երևում էր բութ վախը կամ հուսահատությունը: Նրանք հազիվ էին անհրաժեշտ իրեր հայթայթում: Կառավարությունը լքյալներին ժամանակ առ ժամանակ հաց էր բաժանում: Շատերը տառապում էին ահավոր սովից: Նրանց պատմությունները սահմռկեցուցիչ էին: Ժանդարմներն անխնա հարվածել էին նրանց ոտքերով ինչքան ուժ ունեին, քրդերը կողոպտել էին և խայտառակ կտտանքների ենթարկել: Սաստիկ հոգնածության պատճառով շատերը մնացել էին ճանապարհին ուժասպառ ընկած: Գիշերը ոչ ոք ապահովված չէր կողոպտվելուց ու վատթարից: Մի աղջիկ ինձ պատմեց, թե ինչպես ցերեկը երեսին ցեխ էր քսել, որպեսզի քրդերը չհափշտակեին, և գիշերը մտել էր պարկի մեջ ժանդարմների կողմից չհայտնաբերվելու համար: Հաճախ ժանդարմը մոտենում էր որևէ դժբախտի, սպառնում էր, ծեծում մտրակով և, եթե նա դրամ չէր տալիս, կրակում էր և ցած նետում ձիուց:

Ամեն օր Ուրֆա էին ժամանում հայրենիքից վտարվածների նոր քարավաններ: Ավելի վաղ եկածները պետք է տեղ տային ապաստան չունեցողներին: Աքսորի նպատակը, ինչպես ասել էին նրանց, Ուրֆա հասնելը չէր, այլ Միջագետքի անապատներում տանջալիորեն սովամահ անելը:

Ուրֆայից հարավ գտնվող անապատում կանայք և երեխաներն ականատես եղան ամենասարսափելի դեպքերի: Ջրի սակավության պատճառով շատ քարավաններ կործանվում էին: Խմբերի վրա հարձակվում էին արաբները: Նրանք հափշտակում էին մարդկանց վերջին ունեցվածքը և հաճույքով, կուրորեն կրակում բազմության վրա: Մոլեռանդ մարդասպանների ծեռքից հրաշքով փրկվածներին քշում-տանում էին արաբական գյուղերը»[1]:

1915 թ. մայիս-հունիս ամիսներին թուրքերը գործի անցան: Որոշված էր. նախքան բռնագաղթն ու մարդկային սպանդը վճասազերծել հայերին, բանտարկելով մտավորականներին, գլխատել համայնքը: Նրանք կարևոր էին համարում ***գինահավաքն ու զորահավաքը,*** որից և սկսեցին: Գերմանացի ականատեսը շարունակում է. «Որոշ ժամանակ անց կառավարությունը հավաքեց քրիստոնյաների ողջ զենքը: Այդ առթիվ հայերի մեջ վեճ և տարածայնություններ ծագեցին: Շատերն ասում էին. «Ընդառաջ մի՛ գնացեք մոտալուտ վտանգին: Դուք ուզում եք, որ ձեզ կրկին ոչխարների պես մորթե՞ն»: Վերջապես նրանք միաբանվեցին: Մեծամասնությունը ցանկանում էր հանձնել զենքը, որպեսզի կանխեին ճնշման միջոցները: Զենքի հանձնումը, սակայն, չէր կարող մեղմել արտակարգ լարված իրադրությունը: ***Ընդհակառակը, սարսափը գնալով աճում էր: Ամեն օր փողոցում, շուկայում և թաղերում հայերին խմբերով ծերբակալում էին և բանտարկում: Ոչ ոք ապահով չէր: Թուրքերի և հայերի միջև ամենաչնչին տարածայնությունը հանգեցնում էր մատնության և բանտարկության:*** Մի հայ ժամագործ թուրք ժանդարմին, որ ցանկացել էր ժամացույցը նորոգել տալ, ասել էր «Մեխանիզմը չի աշխատում, նո-

[1] *Բրուն էքարտ,* Ապրածս օրերը Ուրֆայում (Պոստսդամ. 1922), Երևան. 1990, էջ 8-10:

րոգումը թանկ կնստի, քանի որ ժամացույցն արժեքավոր է»: Հաջորդ օրը, առավոտյան ժանդարմը խանութում ծերբակալել էր ժամագործին: Եվ նա այլևս չտեսավ իր ընտանիքը: Բանտերում սկսել էին առանձին բանտարկյալների խոշտանգել: Քաշում էին դժբախտների եղունգները, կտրում քիթն ու ականջները և վերջում սպանում էին դանակի հարվածներով: Մի տղա, որ ամեն օր հոր համար կերակուր էր բերում բանտ, մի օր տեսավ իր հորն այլանդակված և վրանում սպանված: Նա Ուրֆայի ամենահայտնի գինագործն էր»[1]:

1915 թ. մայիսի վերջերին ծայր առած ծերբակալությունները գնալով սաստկացան: Ուրֆայում նոր մյութեսարիֆ նշանակված իթթիհատական ***Ալի Հայդարն*** իր դաժանությամբ փորձում էր սարսափ տարածել հայերի վրա, որպեսզի նրանց բռնագաղթն ու ոչնչացումը կատարեր առանց մեծ զոհերի:

Հուլիսի 25-ին ծերբակալեցին և բանտախցեր լցրեցին հարյուրից ավելի հայերի, որոնք առևտրականներ էին, արհեստավորներ և մտավորականներ: Մեկ օր անց ծերբակալվեց Ուրֆայի հայկական հոգևոր թեմի առաջնորդ ***Արտավազդ*** վարդապետ ***Գալենտերյանը,*** որին ուղեկցում էին 1500 երիտասարդներ: Նրանց քաղաքից դուրս հանեցին և ***Կարաքյոփրու*** կոչված վայրում բոլորին էլ ոչնչացրեցին:

Ուրֆան դարձել էր այն խաչմերուկը, գաղթականների այն հավաքավայրը, որտեղից նրանց անցկացնելիս բաժանում էին խմբերի, ուղարկում կամ Դեր Զոր, կամ էլ քաղաքից քիչ հեռացնելիս, սպանում անխնա, առանց սեռը, տարիքը և այլ հանգամանքները հաշվի առնելու: Ճիշտ այդ օրերին Եդեսիա են բերվում Գր. Զոհրապն ու Վարդգեսը, որոնց իբր պետք է ուղարկեին Դիարբեքիր: ***Մկրտիչ Յոթնեղբայրյանը, իմանալով այդ մասին, նրանց առաջարկում է համածայնություն տալ,*** որպեսզի ինքը կազմակերպի վերջիններիս փախուստը: Զոհրապը մերժում է առաջարկը, հույս ունենալով, որ դատավարությունը տեղի կունենա, և ինքը մեղադրական ճառ կարտասանի, կմերկացնի երիտթուրքական ուխտադրժողներին:

Զուր հույսեր...: 1915 թ. օգոստոսի 2-ին Դիարբեքիր տանող ճանապարհին, Շեյթան Դերեսի (Սատանայի ձորում) սպանեցին և՛ ***Գր. Զոհրապին և՛ Վարդգեսին,*** սպանեցին դաժանորեն, անմարդկային ձևերով ու մեթոդներով[2]:

Թուրքերն իրենք հասունացրեցին Եդեսիայի հայ բնակչության, ինքնապաշտպանության դիմելուց բացի այլընտրանք չունենալու որոշման կայացումը: 1915 թ. սեպտեմբերի 29-ին քաղաքի մյութեսարիֆ ***Ալի Հայդար*** փաշան հրաման արձակեց ծերբակալել առաջին կոտորածից ազատված հայերին: Եդեսիան սպասում էր այդ սանձարձակությանը, դրա համար էլ երբ լսվեց թուրքերի պահանջի հրամանը, անմիջապես հնչեցին եկեղեցիների զանգերի ղողանջները և հայկական շուրջ ***35000-ոց բնակչությունը (գավառներն էլ հետը) անհնազանդություն ցուցաբերեց:***

Ուրֆայի հայկական համայնքը, նախօրոք հանձնարարել և վստահել էր ժողովրդի աչքում մեծ հեղինակությունից օգտվող ***Մկրտիչ Յոթնեղբայրյանին,*** մտածել դրությունից ելքի մասին: Վերջինիս գլխավորությամբ, վերոհիշյալ դեպքերից մեկ օր առաջ, հրավիրվեց խորհրդակցություն: Եղան տարակարծություններ, նույնիսկ մտաբախումներ, սակայն, բուռն քննարկումներից հետո նրանք որոշեցին դիմել ինքնապաշտպանության և զենքով դիմագրավել թշնամու հարձակումներին:

Սեպտեմբերի 30-ին Մկրտիչ Յոթնեղբայրյանի գլխավորությամբ կազմվեց ինքնապաշտպանության խորհուրդ, որի կազմում ընդգրկվեցին Հարություն ***Ռաստեկե-***

---

[1] *Բրուսո էքարտ,* նշված աշխատությունը, էջ 10-11:

[2] Նույն տեղում, էջ 14: Տես նաև *Ա. Գապպենճյան,* նշված աշխատությունը, էջ 799:

լենյանը, Հարություն Սիմյանը, Խորեն Քյափելյանը, Լևոն Եղբերելյանը, Հովհաննես Իզմիրլյանը, Արմենակ Արթուրյանը[1]*:* Սրանց հանձնարարվեց ոչ միայն պաշտպանության պլան մշակել, այլև մարտական ջոկատներ կազմակերպել, նրանց զենք բաժանել և հայկական թաղամասերի եզրերին բարիկադներ բարձրացնել: Գնում էր *«մահ կամ ազատություն»* սկզբունքը, որը գերադասվում էր բռնագաղթվելուց և ծեռարծակ ոչնչացումից:

Պաշտպանության համար քաղաքն ուներ բնական ու հարմարավետ դիրք, որից փորձեցին օգտվել հայ մարտիկները: Մի կողմում կանգնած էր *Թըլպտուր* անառիկ բլուրը, մյուս կողմում փռված էին թուրքական թաղամասերը: Ինքնապաշտպաններն իրենց ուժերը կենտրոնացրեցին «հայ-թուրքական» եզրագծում: Ըստ որում, սրանք իրենց թաղամասը բաժանեցին մարտական *վեց շրջանների՝* դրանք մասնատելով *32 դիրքերի:* Առաջին գծում նստած էին 800 այն մարտիկները. որոնք երիտասարդ էին, ֆիզիկապես ուժեղ և բարոյապես կայուն[2]:

Հայ ինքնապաշտպանների համար պակասում էին անհրաժեշտ քանակի զենքը, կռվող ուժերը: Քաղաքը նոր էր տվել թուրքական բանակի համար պահանջվող զինվորներ, նոր էին շատերին բանտարկել և ոչնչացրել (շուրջ 1500 մարդ): Այդ պակասը եկան լրացնելու մարտականորեն տրամադրված, խիզախությամբ նույնիսկ զեյթունցիներին չզիջող եդեսացի հայ կանայք, որոնք կամավոր զենք վերցրեցին և դիրքերում տեղեր գրավելով, կռվեցին իրենց եղբայրներին և ամուսիններին հավասար: Նրանք *«ուխտեցին մեռնել կռվելով, քան թե անարգ թշնամու ձեռքն անցնիլ և անոր նախատինքներուն ենթարկվիլ* (ընդգծումները մերն են-Հ. Ղ.)»[3]:

1915. սեպտեմբերի 29-ի լույս 30-ի գիշերն սկսվեց թուրքերի գրոհը հայոց թաղամասի վրա: Հարձակվում էին թուրքական զորքերը, ավարածարավ իսլամ. արյունախում ամբոխը, նույնիսկ *թուրք կանայք:* Նրանց ուժերը մի քանի անգամ գերազանցում էին պաշտպանվողներից, դրա համար հարկավոր էր հնարներ մտածել:

Մ. Յոթնեղբայրյանը հրամայեց թաղամասի դարպասները բացել և թողնել, որ թուրքերը, առանց դիմադրության, հայկական դիրքերից ներխուժեն ներս: Դրանից ոգևորված, թուրքական գազանախումբը, առանց դիմադրության մտավ հայոց թաղամաս: Հնչեցին եկեղեցիների զանգերը, թիկունքից թուրքերին կտրեցին և սկսեցին կոտորածը: Մի քանի ժամում թուրքերը տվեցին 400 սպանված, մեծ թվով վիրավորներ:

Դեպքերին ականատես, վերապրող եդեսացին պատմում է. «Կռիվ սկսավ: Հարձակումները տեղի կունենային չորս կողմեն: Ամեն օր առավոտեն մինչև կեսօր հրացաններուն ծուխը կծածանվեր Հայոց թաղին վրա: Հայերուն համար անտարակուսելի էր, թե փրկության որևէ հույս չկա, բայց իրենց տրամադրությունները բարձր էր և երգելով ու խիզախությամբ կդիմադրեին թշնամիին հրացանաձգությանը, բազմաթիվ դիակներ ձգելով գետին: Եդեսիո այն թուրքերը, որոնք առաջին կրակը բացած էին, գրեթե բոլորն էլ ինկան:

Մեծ խուճապ առաջ եկավ թուրքերուն մեջ, իրարանցում և սարսափ, մանավանդ որ կանոնավոր զորքը չէր հաջողած գրավել Հայոց թաղը, մինչդեռ հայ աղջիկներ չեմ գիտեր որ տեղեն դուրս գալով, ձեռքի ռումբեր կնետեին թուրք խուժանին մեջ և կանհետանային: *Քաղաքին թուրքերը հետզհետե փախան և պահ մը Հայերը տեր դարձան ամբողջ եդեսիո»*[4]*:*

---

[1] ՀՍՀ, հ. 12, Երևան, 1986, էջ 286: *Մ. Արզումանյան,* «Ուրֆայի հերոսամարտը 1915» (ծավալուն հոդված):

[2] ՀՍՀ, հ. 12, էջ 293:

[3] Հեղինակ *Աղետեն վերապրողներ,* 1915, Աղետ և վերածնունդ. տպագր. «Արաքս», Փարիզ, 1952, էջ 125:

[4] Նույն տեղում, էջ 125:

Դիրքերում արդեն ամուր նստած հայ պաշտպանները, ոգևորությամբ հակառակորդին գոչում էին. «Թուրքեր, դուք մեզ հուսահատության մղեցիք: Կառավարությունը կյանքի ապահովություն էր խոստացած մեզ: Բայց սուտ է և խաբեություն: Կառավարության նպատակը մեկ բան է միայն - Հայ ժողովրդի կորուստը: Դուք ամեն կողմ մահ և ապականություն է, որ կտարածեք: Այժմ կարգը մերն է Ուրֆայի հայերուս: ***Մենք պատրաստ ենք մեռնելու զենքը ձեռքներիս»***[1]***:***

Հայկական հանրագիտարանը հրապարակում է ներքոհիշյալ շարադրանքը.

«Թշնամին, տալով զգալի կորուստներ, հարկադրված դադարեցրեց մարտը: Օրեցօր նոսրանում էին նաև հայ մարտիկների շարքերը, սպառվում էին զինամթերքն ու պարենը: Ծնկից ծանր վիրավոր Մկրտիչ Յոթնեղբայրյանին փոխարինել էր հիվանդ ***Հարություն Ռաստեկելենյանը:*** Հայերը գերադասում էին մեռնել զենքը ձեռքին, քան հանձնվել ոսոխին: Տեսնելով, որ ծակատային գրոհով չի կարողանում ընկճել հայերի դիմադրությունը, ***Ֆախրի փաշան*** որոշեց սեղմել պաշարման օղակը: Հոկտ. 10-ին հայոց թաղամասը երեք կողմից վերցվեց ***խաչածև*** թնդանոթային կրակի տակ: Մ. Յոթնեղբայրյանը պատգարակով դիրքից դիրք էր անցնում, ոգեշնչում կռվողներին: Ֆախրի փաշան նրա մոտ ուղարկեց Ուրֆայի գորգագործարանատեր, գերմանացի Մ. էքարդին, որը, հայ քաջորդուն խոստանալով կյանք, պահանջեց դադարեցնել կռիվը և հանձնվել: Արտահայտելով հայերի արդարացի զայրույթը Մ. Յոթնեղբայրյանը էքարդին պատասխանեց «Եթե ձեր մեջ քաղաքակիրթ և քրիստոնյա մարդու զգացում կա, փրկեցեք անապատներուն մեջ կոտորվող անմեղ հայ ժողովուրդը»: Հոկտ. 12-ին ավելի սաստկացավ կրակը, որն անմիջականորեն ղեկավարում էր թուրք. սպայակույտի հրամանատար, գերմանացի գնդապետ ֆոն էքսֆեյլը: Հաջորդ օրը թշնամին թնդանոթածգությամբ անխնա ավերեց հայկական թաղամասը, որտեղ գտնվող ամերիկյան միսիոներությունը (Մ. Լեսլիի գլխավորությամբ) սպիտակ դրոշ պարզեց: Օգտագործելով առիթը թուրքերը ներխուժեցին այնտեղ, սակայն դարանած հայ մարտիկները հանկարծակի հարձակումով թշնամուն պատճառեցին մեծ կորուստներ:

Այնուամենայնիվ, հայերի դրությունը օրավուր ծանրանում էր, պակասել էր կռվող ուժը, սպանվել էր ***Հ. Ռաստեկելենյանը:*** Դեպքերին ականատես դանիացի միսիոներ Քարեն Եփփեն գրել է. «Հայկական թաղի ինքնապաշտպանությունը չի կրնար ավելի երկար դիմադրել թշնամու գերազանց ուժին դիմաց: Դիրքերը իրար ետևե կռմբակոծվին, խմբապետները կսպանվին և կվիրավորվին: Արձակված ռումբերեն կճեղքվի Մայր եկեղեցվո պատը, որտեղ շատեր ապաստան են գտած: Ռումբերը կվիրավորեն նաև հայերու վերջին խմբապետը, որ արյունլվա գետին իյնալէ վերջ, իր վերջին ուժերը կհավաքե և կաղաղակե, որ տոկան, դարձյալ տոկան»[2]:

Հոկտեմբերի 23-ին թուրքերը, մեծ զոհերի գնով, կարողացան մտնել հայկական թաղամաս: Ինքնապաշտպանները դիմադրում էին աներևակայելի խիզախությամբ: ***Մ. Յոթնեղբայրյանը արձակեց բոլոր գնդակները, գետին փռեց բազմաթիվ թուրքերի, վերջին գնդակով էլ ինքնասպան եղավ:*** Դրանով իսկ ավարտվեց հերոս հայության դյուցազնամարտը աշխարհին, նույնիսկ թուրքերին զարմացնելով և ապացուցելով, որ հայ ժողովուրդը կռվել գիտե, մեռնելուց առաջ իր վրեժը լուծել գիտե:

Վրեժխնդրությամբ լցված, երկու հազարի հասնող կորուստներ տված թուրքերը կատաղած Ֆահրի փաշայի գլխավորությամբ ներխուժեցին Հայկական թաղամաս և սկսեցին իրենց գազանությունները: Վերապրող ականատեսներից մեկը պատմում է.

---

[1] ***Ա. Սահակյան***, Դյուցազնական Ուրֆան և իր հայորդիները. Բեյրութ, 1955, էջ 818:

[2] ՀՍՀ, հ. 12, էջ 294:

«Թուրք զինուորները խուժեցին Հայոց թաղը եւ սկսան անխնայ կոտորել անտուն ժողովուրդը: Երիտասարդները և աղջիկները տակաւին կը կռուէին ցրուած խումբերով: Առանձին մարդիկ կամ կիներ թունաւորուած էին եւ կը գալարուէին զինուորներուն ոտքերուն տակ: Սանուկներ, ծերեր շուարած կը դեգերէին աւերակներու մէջ, մինչ անդին խումբ մը աղջիկներ եւ տղաքներ կը հրդեհէին Հայոց ինչքերը, կը դիզէին գորգեր, կարասիներ, նոյնիսկ ուտեստեղէններ եւ կը ջնջէին ամէն ինչ, թշնամիին ձեռքը բան չի ձգելու համար: *Թուրքերը գրաւեցին վերջապէս Հայոց թաղը եւ սկսան հաւաքել մանուկները, ծերերը եւ երկու սեռէ կռւող Հայերէն մաս մը, զոր յաջողած էին գերի բռնել: Թուրք զինուորականները եւ զինուորներ զարմանալով կը դիտէին կատարուած գետնափորներու կառուցուածքը եւ կռուի մէջ ինկած հայ աղջիկներու դիակները, որոնց կուրծքերը զարդարուած էին փամփուշտակալներու շարքերով եւ գրեթէ յուզուած կը ըսէին իրարու.*

- Միթէ այսպէս բան կրնա՞յ ըլլալ:

Կառավարութիւնը ծերբակալած էր մօտ 2000 հոգի, որոնց մէջ կային 200ի չափ այրեր եւ կիներ: Ասոնցմէ 60 այրեր եւ կիներ ու աղջիկներ իբր ապստամբութեան հեղինակ կախուեցան Եդեսիոյ մէջ եւ մնացեալ 140 հոգին ղրկուեցան Հալէպ դատուելու համար, իսկ կիները եւ երեխաները աքսորուեցան Միջագետք:

Այն թուրքերը, որ շրջակայքէն եկած էին կողոպուտի, ոչ միայն ձեռնունայն վերադարձան, այլեւ սարսափած էին, որովհետեւ գետնափորներու մէջէն տակաւին կը յայտնուէին ողջ մնացած Հայեր, որոնցմէ ոմանք մինչեւ մահ գնդակ կ'արձակէին»[1]:

Այսպիսով տխուր վերջաւորութեամբ ավարտվեց Ուրֆայի ինքնապաշտպանությունը: Իթթիհատականների որոշմամբ սկսվեց վաղօրոք ծրագրված գաղթը: Քարավաններն ընդհանրապես կազմվում էին անչափահաս աղջիկներից և տարիքավոր կանանցից: Առողջ տղամարդկանց գերակշիռ մեծամասնությունը ոչնչացվել էր:

Ծանր էր բռնագաղթվողների վիճակը: Սննդի պակասը, թուրք և արաբ խուժանի պարբերական հարձակումները, կիրառված դաժանությունները ոչ միայն օր առ օր. այլև ժամ առ ժամ հնձում էին տարիքավորներին և հիվանդներին, նոսրացնում նրանց շարքերը: Ողջ մնացողները երանի էին տալիս կռվի ընթացքում հերոսաբար զոհվածներին:

Եդեսիայի բռնագաղթվածների քարավանները քշեցին դեպի *Թել Ապիատա,* ապա *Այն-Արուս,* որտեղից էլ տարան *Ռաքա:* Վերջին կայանը որոշված էր *Դեր Զոր:* Ճանապարհն ավելի դաժանացավ: Կիզիչ արևը, խեղդող տոթը, քաղցը, ամենակարևորը խմելու ջրի գրեթե բացակայությունը ոչնչացնում էին «Դժբախտ տարագիրներին»: Մնացողների կամ դիմացկունների մեծ մասն էլ գնդակահարվում էին չեչենների կողմից:

«Զարդէն ազատուած խլեակներ կային, որոնք տարտղնուած էին Սուրիոյ զանազան քաղաքներուն մէջ: Անոնք կը մէկտեղուին Դամասկոս եւ կ'որոշեն դուրս գալ օսմանեան տիրապետութեան սահմաններէն: Փախստականները Դամասկոսէն ճամբայ կ'ելլեն դէպի Ճեպէլ Տրիւզ եւ այդ շրջանի աշիրապետ Շերիֆ Ալիի օժանդակութեամբ կը յաջողին անվտանգ անցնիլ անապատէն: Ազատուողները ապահով կը հասնին Աքապա: Այս այն շրջանն էր, երբ արտասահմանի հայութիւնը լծուած էր Հայկական Լեգէոնի կազմութեան; Տղաքը խանդավառութեամբ կը մասնակցին այդ շարժումին եւ նաւ նստելով կը մեկնին Սուէզ: 1918ի Յուլիսի սկիզբը, թրքական դժոխքէն փախուստ տուող հայերը Փորթ-Սայիտէն կ'անցնին Կիպրոս եւ կը միանան Հայկական Լեգէոնին»[2]:

[1] Հեղինակ *Աղետեն վերապրողներ.* 1915. Աղետ և վերածնունդ, Փարիզ, 1952, էջ 127:

[2] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 807:

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո (1918-20) ողջ մնացած ուրֆացի հայերը (մոտ 6000 մարդ) վերադարձան իրենց ծննդավայրը, սակայն քեմալական հալածանքների պայմաններում հարկադրված եղան մինչև 1923-ը հեռանալ Սիրիա (Հալեպ, Դամասկոս), Ֆրանսիա, Ամերիկա, իսկ մի մասն էլ ներգաղթեց Խորհրդային Հայաստան: Աշտարակի շրջանում ստեղծվել է Նոր Եդեսիա ավանը, որտեղ կառուցվել է Ուրֆայի հայերի զոհերին նվիրված հուշարձան[1]:

Ավարտվեց հայաբնակ, տնտեսապես հարուստ, խիզախությամբ անօրինակ մի համայնքի պատմությունը, որի ողբերգությունը, կարծում եմ, հանգիստ չպետք է տա թուրք բորենիներին:

VI. ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՀԵՐՈՍԱՊԱՏՈՒՄԸ

Հայ ժողովուրդն իր հազարամյակների տարեգրության ոսկեզօծ մատյանում, օտար, ասպատակող տերությունների դեմ մղած հավասար ու անհավասար գոտեմարտերում բազում և անկրկնելի էջեր է արարել: Դժբախտաբար, օսմանյան բռնապետության տարածքում նրա ծավալած ազգային-ազատագրական ոգորումների պատմությունը համեմատաբար նույնչափ հարուստ չէր հերոսական դրվագներով, քանզի այնքան էլ հեշտ չէր ծառս լինել անհամար զորքեր ունեցող բարբարոս մի տերության դեմ, որի արհեստն արշավանքներն էին, ոչ թուրք ժողովուրդների ստրկացումը, փոքր ու մեծ տերությունների նվաճումը:

Այս տեսանկյունից դիտարկելով *փոքրաթիվ մուսալեռցիների* խիզախ, նույնիսկ հանդուգն քայլերը մնում են գրեթե եզակի, նմանօրինակը չունեցող հերոսապատումներ ոչ միայն հայոց, այլև համաշխարհային պատմության մեջ: Դրանք դարձել են լեգենդ իրավամբ իրենց վրա հրավիրելով եվրոպացիների սևեռուն ուշադրությունը:

Թուրքական ռազմական մսաղացի դեմ վեր խոյացող մուսալեռցի հերոսներն Առաջին աշխարհամարտի տարիներին իրավամբ առաջնության դափնին խլեցին Վան-Վասպուրականի խիզախ ազատամարտիկների, երեկվա արծվանիստ զեյթունցիների և իր օրերի Դավթատուր Սասունի ծեռքերից: Կյանքի գնով, բոլորովին անհավասար դիմագրավումով նրանք ապացուցեցին, որ եթե հայկական բոլոր համայնքները հետևեին իրենց օրինակին, ապա ցեղասպան թուրքերն ու վայրենաբարո Թուրքիան հազիվ թե կարողանային այդքան հեշտությամբ կատարել *հայասպանությունը:* Հայ ժողովուրդն այդ պրոցեսում տուժեց ոչ թե *«ապստամբելու պատճառով»,* ինչպես զրպարտում են թուրքական պետական այրերն ու պատմաբան-կեղծարարները, այլև *չապստամբելու,* զենք չգործածելու հետևանքով:

Հետևաբար Մուսա լեռը դարձավ *դաս ու դասարան* հետագա ազատամարտերի և ազատամարտիկների, նույնիսկ նույնքան սրբազան ու ճակատագրական *Ղարաբաղյան ազատագրական կռիվների հերոսամարտիկների համար:* Թերևս այդ տեսանկյունից էլ նայելով ու գնահատելով, նրանց փառքը կմնա իբրև

[1] ՀՍՀ, հ. 12, էջ 294:

փայլատակող գիսաստղ, այնքան ժամանակ, որքան կապրի և կհարատևի հայ ժողովուրդը[1]:

Մուսա լեռն ընկած է Միջերկրականի ափերին, Անտիոքից 18 կիլոմետր դեպի արևմուտք և Օրոնդես գետով եզերվում է Անտիոք-Քեսաբից: ***Մուսա լեռ, Ջեբալ Մուսա, Մովսեսի սրբազան*** լեռ անունը կրող բարձունքի կրծքին, մանյակի պես, իրար հաջորդականությամբ շարվում էին վեց հայկական գյուղեր: Դրանք էին ***Եողուն-օլուք, Խըտըրպեկ (Իտտեր), Պիթիաս, Հաջի Հաբիբլի, Վագըֆ, Քեպուսիք*** և գյուղակներ ***Վերի Ազգեր, Վարի Ազգեր, Չավլիք, Մաղարաճաք, Սուլթումու և Ամած:*** Գյուղախումբը վարչականորեն ենթարկվում էր ***Անտիոքի*** գավառապետին՝ համագումար մտնելով ***Հալեբի*** կուսակալության կազմում:

Միջերկրականի ծովահայաց ափերին փռված այդ գյուղաշարքն ուներ զուտ հայկական ազգաբնակչություն, ուրույն կենցաղ և ինքնատիպ ապրելակերպ[2]: Դժվար է ասել, թե երբ են ծնունդ առել հայկական այդ գյուղերը, երբ են անվանակոչվել Մուսա լեռ: Հայտնի է սակայն, որ հիշյալ հատվածում հայեր են հաստատված եղել մ. թ. ա. երրորդ դարում, որոնց թիվը ստվարացավ Տիգրան Մեծի աշխարհակալության տարիներին:

Հաջորդ հազարամյակում հայկական գաղութը շարունակաբար իր ազգային դիմագիծը փոփոխում է, որը պայմանավորված էր միջազգային բարենպաստ կամ անբարեպատեհ իրադարձություններով: Զարմանալի չէ, որ թուրք-սելջուկների արշավանքների վաղորդայնին Սուեդիայի հայկական համայնքների թվաքանակը ստվարացավ:

Կիլիկիայի հայոց թագավորության անկումից ի վեր Մուսա լեռան հայ գաղթաշխարհը նկատելիորեն տկարացավ: Սակայն այն կրկին վերակենդանացման լուրջ աշխուժություն ապրեց XV հարյուրամյակում: Հատկապես մեծ թիվ կազմեցին լեռան վեց գյուղերում, ինչպես նաև Քեսաբի, Արամու, Ղնեմիեի հայ բնակիչները:

Նոր դարաշրջանի մուսալեռցիները հանրահայտ էին իրենց ավանդապահությամբ, աշխատասիրությամբ: Նրանք հիմնականում պարապում էին գյուղատնտեսությամբ, հատկապես շերամապահության արհեստով, որը երբեմն բարձրանում էր արվեստի մակարդակի: Լեռնահամայնքները ապրում էին նույն հոգսերով ու ազգային, հայրենասիրական զգացումներով, ինչպիսին բաժին էր ընկնում արևմտահայությանը:

Սուեդիան մի փոքրիկ Հայաստան էր, ճիշտ է աշխարհագրորեն նրանից մեծ հեռավորությամբ, բայց հոգեկան կապերով սերտ աղերսների մեջ էր հայրենիքի հետ:

Պետք է ասել, որ Սուեդիայի հայությունը նախկինում էլ աչքի է ընկել իր ըմբոստ, ազատատենչ ոգով, չի խոնարհվել թուրքական յաթաղանի առաջ և անհրաժեշտության դեպքում դիմադրություն է ցույց տվել ջարդարարներին: Այսպես, համիդյան ջարդերի ժամանակ Սուեդիայի հայությունը 1895-ին դիմեց ինքնապաշտպանության և խիզախորեն մարտնչեց թուրքական կանոնավոր զորքերի դեմ: 1909-ի ապրիլին

---

[1] Մուսա լեռան հայերի պատմությանը նվիրված են բազմաթիվ աշխատություններ: Սույն սեղմ հատվածը շարադրելիս օգտագործել ենք. ***Տ. Անդրեասյան,*** Ձեյթունի անծնատվությունը և Սուետիո ինքնապաշտպանությունը, Կահիրե, 1915: «Յուշամատեան Մուսա լեռան», ***Մարտիրոս Գուշակչյանի*** և ***Պողոս Մատուրյանի*** խմբագրությամբ, Պեյրութ, 1970, էջ 334-398: «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 781-794 (***Յակոբ Դավթյանի*** հոդվածը «Մուսա լեռան հայերը մեր ժողովրդի ազատագրական պայքարի մեջ»): ՀՍՀ, հ. 8, Երևան, 1982, էջ 85-86, ***Մ. Արզումանյան,*** «Մուսա լեռան հերոսամարտը 1915 թ.»: ***Ռուբեն Սահակյան,*** Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 175-192: ***Հ. Պուրսալյան,*** Մուսա լեռան հերոսամարտը, Հալեպ, 1954: ***Ֆրանց Վերֆել,*** Մուսա լեռան քառասուն օրը, Երևան, 1964: ***Հ. Չոլաքյան,*** Ցամքած աղբյուրը նորեն կբխի, Հալեպ, 1981: ***Մ[եպուհ] Ակունի,*** Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921, էջ 202-210:

[2] «Մուսալեռ-Այնճար», 1939-1999, բացառիկ համար, օգոստոս, 1999, Անթիլիաս, էջ 5-6:

Կիլիկիայում և այլուր կազմակերպված ջարդերի ժամանակ նա դարձյալ չընկրկեց, արիաբար դիմադրեց, իսկ Հաջի-Հաբիբլի գյուղի մոտ փախուստի մատնեց թուրքական հրոսակախմբերին ու զինված խուժանին[1]:

Առանձնապես հիշարժան ու հատկանշական էին XIX դ. 90-ականներին Մուսա լեռան գյուղերում ծավալված հակասուլթանական, ինքնապաշտպանական պայքարը, որն իր վրա հրավիրեց ողջ հայ ժողովրդի ուշադրությունը: Այդ մասին ***Հակոբ Դավիթյանը*** գրում է. «Եվրոպայի ուշադրութիւնը հայութեան վրայ հրաւիրելու նոյն առաջադրութեամբ եւ ժողովուրդը ազատագրական պայքարին պատրաստելու նոյն մտահոգութեամբ էր, որ հնչակեան ***Աղասին Մուսա Լերան*** գիւղերուն մէջ գործի լծուեցաւ եւ յաջողեցաւ 1892էն սկսեալ թրքական իշխանութեան վճարուելիք տուրքերը կեցնել եւ սուետահայութիւնը ըմբոստութեան մղել: Օսմանեան Կայսրութեան զանազան մասերուն մէջ ծայր տուող անհնազանդութիւնները մէկ կողմէ եւ շահագրգիռ մեծ պետութիւններուն, Ֆրանսայի, Անգլիոյ, Ռուսիոյ եւ Գերմանիոյ, Թուրքիոյ ներքին գործերուն յաճախակի միջամտութիւնները միւս կողմէ, արգելք հանդիսացան անմիջական հակազդեցութեան մը: Այնպէս որ՝ սուետահայութիւնը քաջալերուեցաւ իր յանդուգն ծեռնարկին մէջ, հաստատեց իր սեփական դատարանը եւ մինչեւ 1895ի վերջերը ինքնավար դարձաւ: Այդ շրջանին ծագող բոլոր վէճերը կը բերուէին ինքնավար սուետահայութեան դատարանին, ուր անոնք կը քննուէին եւ անոնց մասին վճիռներ կ'արձակուէին, ապա վճիռները գործադրութեան կը դրուէին յեղափոխականներու ստեղծած ոստիկանութեան կողմէ: Կ'ըսուի թէ սուետահայութեան դատարանին առած վճիռները, որոնք կը հսկէին տուգանքէ ու բանտարկութենէ մինչեւ մահապատիժ, արդար վճիռներու համբաւ կը վայելէին, այնքան մը որ դրացի այլազգ բնակիչները եւս իրենց տարակարծութիւններն ու վէճերը հոն կը բերէին»[2]:

1895 թ. վերջերին, թուրքական բազմահազարանոց բանակը Զեյթունից շարժվեց դեպի Սուեդիա և պատրաստվում էր հաշվեհարդարի նստել այն մուսալեռցիների հետ, որոնք շուրջ երեք տարի համարյա անկախության դրոշ էին պարզել: Օսմանյան 3000-անոց բանակը շրջափակեց լեռնաշխարհի բոլոր ճանապարհները, պատրաստվում էր մտնել Հաջի Հաբիբլի գյուղն ու սկսել կոտորածը; Որոշ տարակարծություններով հանդերձ, սուեդահայությունը մնաց ոչ միայն միասնական, այլև իր թևերի տակ առավ այն հնչակյաններին, որոնք եկել էին լեռնաշխարհի կռիվները գլխավորելու:

Բնականաբար ուժերն անհամեմատ անհավասար էին: Հայ ինքնապաշտպանները շատ քիչ զենք ու զինամթերք ունեին դիմամարտելու թուրքական զինված բանդաներին: Թուրքերը Մուսալեռ էին բերել 3000 զինվոր, մի քանի հազարանոց ավարածարավ խուժան, երկու թնդանոթ: Սակայն նրանք երկնչում էին եվրոպական տերությունների, իրենց ներքին գործերին միջամտելու առիթ ստեղծելուց, մանավանդ որ լեռան մերձավոր ափերով լողում էին անգլիական ու ֆրանսիական ռազմանավերը: Հայ ինքնապաշտպաններն էլ զգում էին, որ պայքարը կարող է իրենց համար ճակատագրական վերջավորություն ունենալ:

Երկուստեք բանակցելու, խնդիրը խաղաղ լուծելու ցանկություններ էին հասունանում: Եվ այդպես էլ եղավ: Հզոր Թուրքիան, ընկրկելով մուսալեռցիների վճռականության առաջ, համաձայնվեց երաշխավորելու ոչ միայն 14 հնչակյանների անվտանգ անցումը արտասահման, այլև Սուեդիայի հայության նախկին վիճակի պահպանությունը: Փաստորեն մի բուռ հայությունը 1895 թ. իր սուրը հաղթանակով դրեց պատյանը:

---

[1] *Ռուբեն Սահակյան*, Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 175:

[2] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 782:

Դարավերջը և հատկապես քսաներորդ հարյուրամյակի շքամուտքը ազգային վերազարթումի, նույնիսկ վերածննդի թափ հաղորդեցին և ողջ արևմտահայությանը, և սուեդահայերին: Դպրոցական, կրթական-մշակութային շարժումները զուգորդվեցին ազգային-ազատագրական պայքարի նոր վերելքով, որոնք հանուր հայությանը բերեցին նոր ***ինքնագիտակցության,*** առավել ևս ***ինքնավստահության:***

«Եվ այդ վերազարթումի ոգիին շնորհիվ էր,- գրում է մուսալեռցի ***Հակոբ Դավիթյանը,***- դարձյալ Ադանայի ջարդերու օրերուն, երբ 1909ին, թուրք բազմահազար խուժանը, պետական քաջալերութեամբ Անտիոքի մէջ երեք հարիւրէ աւելի հայերը ամբողջովին ջարդելէ յետոյ, կ'ուղղուէր դէպի Մուսա Լերան հայկական գիւղերը: Ձեռքերնին զինուած բրերով, կացիններով, սուրերով եւ հրացաններով, սուետահայութիւնը Հաճի Հապիպլի գիւղին մօտերը ղրկեց իր քաջասիրտ կռուողները, որոնց առաջին իսկ հրացանածգութեամբ արիւնարբու խուժանը խուճապահար ցիր ու ցան եղաւ:

Բայց սուետահայութիւնը իր խիզախութեամբ եւ քաջագործութիւններով մեծագոյն համբաւ շինեց 1915ի Մեծ Եղեռնի օրերուն երբ Մուսա Լեռ բարձրացաւ, պարզած ըմբոստութեան դրօշը, եւ պանծալի ու յաղթական ճակատամարտեր մղեց թրքական կանոնաւոր բանակին եւ օսմանեան վանտալութեան դէմ»[1]:

Հայաստանի զույգ հատվածներից կտրված, Միջերկրականի հեռավոր ափերին փռված, Սուեդիայի հայ փոքրաթիվ համայնքը զբաղված էր խաղաղ, ստեղծագործ, սակայն չարքաշ աշխատանքով: Պայթեց համաշխարհայինը, որի պահին Մուսա լեռն ուներ բնակչության հետևյալ պատկերը.

Քեպուսե	-	251 ընտանիք, 1125 անձ
Վագըֆ	-	82 ընտանիք, 470 անձ
Խտըրբեկ	-	245 ընտանիք, 1149 անձ
Եողունլուք	-	255 ընտանիք, 1233 անձ
Հաջի Հաբիբլի	-	257 ընտանիք, 1284 անձ
Պիթիաս	-	195 ընտանիք, 1050 անձ
Ընդամենը	-	1265 ընտանիք, 6311 անձ

Ուրեմն 1915 թ. կեսերին Սուեդիայում ապրում էր ընդամենը 6311 մարդ, որոնցից 2080-ը բռնեց գաղթի ճանապարհը, իսկ 4231-ը բարձրացրեց ինքնապաշտպանության դրոշը: Արդ անդրադառնանք որոշ մանրամասների:

1915 թ. սկզբներին փախստական որոշ զինվորներ, ապաստան որոնելով Մուսա լեռան գյուղերում, լեռնահայերին լուրեր էին հասցրել Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում կատարվող ու շարունակվող բռնագաղթերի, ժողովրդի ոչնչացման, Դեր Զոր աքսորելու և այլ խնդիրների մասին: Այդ լուրերը քննարկման նյութ էին դառնում հայ երևելիների հավաքույթներում, որտեղից արդեն հաճախ էին լսվում ***«Մահ կամ ազատություն» բառերը:***

Հուլիսի 12-ին Զեյթունի բողոքական համայնքի քարոզիչ ***Տիգրան Անդրեասյանը,*** հրաշքով փրկվելով կոտորածից, վերադառնում է իր ծննդավայր Եողունլուք գյուղը և միանում հարազատներին: Պատվելին հանգամանորեն պատմում է, թե զեյթունցիները դժոխային ինչպիսի տանջանքների ենթարկվեցին, ինչպես սպանվեցին և նրանց հոգևոր ու քաղաքական առաջնորդները, ինչպես դատարկվեց ու լիովին մարդազրկվեց երբեմնի հզոր այդ հայաքաղաքը:

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 785:

Մուսալեռցիներն այժմ արդեն լիովին տիրապետում էին Հայաստանում և հայաբնակ գյուղերում կատարվող իրադարձությունների պատմության մանրամասներին և իրենք էլ դրանից ելք էին որոնում: Անշուշտ բնակչության, հատկապես հոգևոր և աշխարհիկ առաջնորդների շրջաններում, թևածում էին տարակարծություններ, նույնիսկ մտաբախումներ:

Նման իրադրությունների պայմաններում, 1915 թ. հուլիսի 16-ի ստորագրությամբ, սակայն հուլիսի 28-ին Սուեդիայի գյուղերն է հասնում Անտիոքի գավառի կայմական *Մարուֆի* հրամանը լեռնցիների տեղահանման և բռնագաղթեցման վերաբերյալ: Բերենք այդ հրամանի տեքստն ամբողջությամբ.

«ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

1.- Նկատելով որ սոյն յայտարարութեան թուականէն եօթ օր վերջ Անտիոքի Գազայի բոլոր հայերը պիտի լքեն Անտիոքն ու անոր պատկանող գիւղերը, հարկ է որ սոյն հրամանագրին ենթակայ ամէն անհատ յիշեալ ժամանակամիջոցին մէջ կարգադրէ իր անձնական գործերը եւ պատրաստէ իր փոխադրութեան միջոցները:

2.- Կառավարութեան կողմէ որոշուած վայրերը ***հայերու տեղահանութեան միջոցին, անոնց խաղաղութիւնը, հանգստութիւնը եւ ամէն տեսակ կեղեքումի դէմ անոնց պաշտպանութիւնը պիտի ապահովուի ժանտարմաներու միջոցաւ:***

3.- Աղքատութիւնը ստուգուած ընտանիքներուն կառավարութեան կողմէ պիտի տրուին փոխադրութեան միջոցներ եւ սնունդ:

4.- Հոս մնալիք ստացուածքներն ու գոյքերը, մէկիկ մէկիկ, իրենց տեսակներովը, պիտի ցուցակագրուին կառավարութեան կողմէ եւ ապահով տեղեր պիտի դրուին ու պաշտպանուին եւ յետոյ ***անոնց վաճառումէն գոյացած գումարները պետական սնտուկին մէջ պիտի դրուին եւ ապա տէրերուն պիտի ղրկուին:***

5.- ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԲՈԼՈՐ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ՊԻՏԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԻՆ, ՔԱՆԻ ՈՐ ԻՐԵՆՑ ՂՐԿՈՒԵԼԻՔ ՏԵՂԵՐԸ ՀԱՆԳՍՏԱՒԷՏ ԿԵՐՊՈՎ ՊԻՏԻ ԲՆԱԿԵՑՈՒԻՆ:

6.- Իմ նախագահութեանս տակ յանձնախումբ մը կազմեցի որպէսզի առաքումի գործը բարւօք կատարուի եւ կառավարուի, անձնական իրաւունքներէ պաշտպանուին, եւ ստացուածքներն ու շարժուն գոյքերը տետրակներու մէջ արձանագրուին:

7.- Պէտք է որ տեղահանութեան ենթակայ անհատներ կատարեալ վստահութիւն ունենան կառավարութեան գործողութեանց վրայ, եւ ուրիշ օսմանեան հպատակներ ալ պէտք է յարգեն այս իրաւունքները որոնք պաշտպանուած են օրէնքով, ՔԱՆԻ ՈՐ, ԳՈՐԾԱԴՐՈՒԵԼԻՔ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՍԱՐԱԿ ԳԱՂԹՈՒՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ:

8.- Կը յայտարարեմ թէ, ըլլայ ժողովուրդէն եւ ըլլայ կարգապագութեան պատասխանատու պաշտօնեաներէն, ով որ զանցառու գտնուի, անմիջապէս պիտի ծերբակալուի եւ զինուորական ատեանի պիտի ղրկուի:

16 Յուլիս, 331

Անտիոքի գազայի գայմագամ

ՄԱՐՈՒՖ»[1]:

Տեղահանության հրամանը, որը ստորագրված էր թուրք կայմակամի գրչով, ասկյարների ուղեկցությամբ, մունետիկները կարդում էին բոլոր գյուղերի հրապարակներում: Ժողովրդին հորդորում պատրաստվել գաղթագնացությանը:

Հուլիսի 29-ին վերը նշված հայկական գյուղերի երևելիները հավաքվեցին Յողուճօլուկում խորհրդակցական ընդհանուր ժողովի, որն անցավ լարված մթնոլորտում: Հանուն պատմական ճշմարտության պետք է ասել, որ լեռ բարձրանալու և զինված

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», էջ 788:

դիմադրություն ցույց տալու գաղափարը սկզբում հավանություն գտավ ոչ բոլորի կողմից: Ներկաների մի մասը դիմադրության որևէ փորձը խենթություն համարեց վկայակոչելով զենքի, ռազմամթերքի ու պարենի սակավությունը: Հիրավի, սուեդահայերն իրենց տրամադրության տակ ունեին 140 սովորական և մի քանի հարյուր հասարակ, փողաբերանի կողմից լցվող հրացան, 11 «Մաուզեր» տիպի ատրճանակ յուրաքանչյուրի համար 100-120 փամփուշտով և որոշ քանակությամբ վառոդ դատարկ փամփուշտները լցնելու համար: Սակայն ի վերջո հաղթանակեցին զգաստ բանականությունն ու մարդկային արժանապատվության զգացումը՝ եթե զոհվել, ապա «իմացյալ մահով» զոհվելու գաղափարը: Մուսալեռցիների հիմնական զանգվածը ժամանակին կանխագուշակեց իթթիհատական պարագլուխների արծակած բռնագաղթի հրամանի թաքնված իմաստը, այսինքն տեղահանություն անեացում, մահ:

«Ես այստեղ ծնվել եմ, այստեղ էլ կմեռնեմ, բայց գաղթական չեմ դառնա»: Ահա այս երդումն էր, որ տվեց քաջարի մուսալեռցիների ճնշող մեծամասնությունը: Իսկ մնացածնե՞րը: Նրանք, ունկնդրելով Բիթիաս ու Քեբուսիե գյուղերի քահանաներին ու հարուստներին, բռնեցին գաղթի կործանարար ճամփան և հիմնականում ոչնչացան աքսորի ճամփաներին ու Դեր Զորի անապատում:

Պետք է ասել, որ տատանվողների ու պահպանողականների մի մասն էլ միացավ մեծամասնությանը, երբ համոզվեց, որ կառավարությունը ոչ մի բացառություն չի անում և տեղահանության հրամանը տարածվում է և իրենց վրա[1]:

Դեպքերին մասնակից *Հակոբ Դավթյանը,* իբրև ականատես (փոքր տարիքի է եղել, սակայն հիշում է, մանավանդ, որ նրա հայրը կռվողների առաջնաշարքերումն էր) այդ հաղթական, անհավատալի երթը ներկայացնում է այսպես. «Ուրեմն, Սուետիոյ վեց գյուղերու հայութեան երկու երրորդը ապստամբութեան դրօշը պարզեց ու լեռ բարձրացաւ, չափուելու համար թրքական բանակին հետ, նախընտրելով գիտակից մահը, իսկ մէկ երրորդը տարագրութեան ճամբան բռնեց, «օրինապահութե՞ն» սիրոյն:

Մուսա Լեռան վրայ բարձրացող առիւծասիրտ հայերը սկսան կազմակերպուիլ՝ հերոսամարտի անվեհեր առաջնորդներ Եսայի Եաղուպեանի, Պետրոս Տըմլաքեանի եւ այլոց ղեկավարութեան տակ: Նախ հապճեպով կառուցուեցան պատահական միջոցներով խշտեակներ՝ անձրեւէն պատսպարուելու համար, յետոյ կազմուեցան շրջանային մարմիններ, չորս տարբեր շրջաններու մէջ (Գըզըլճա, Գուզճըղազ, Տամլաճըգ եւ Գափլան-տուզաղը) այդ վայրերուն մէջ հաստատած ժողովուրդի երեւելիներով, յետոյ ծրագրուեցան զօրանոցներու կառուցումը եւ խրամներու պատրաստութիւնը ռազմագիտական կէտերու յառաջապահներու ճշդումը, «հեռաձայնի» դրութիւնը խումբերու կազմակերպութեան մէջ, յառաջապահներու ճշդումը, հեռաձայնի դրութիւնը պատանիներու միջոցաւ, դիտարաններու հաստատումը, օգնութեան փութացող ֆետայական խումբերու կազմակերպութիւնը՝ վտանգուած մէկ կէտին ուժ փութացնելու համար եւն. եւն., եւ այս բոլորը առանց ունենալու մարզուած զինուորականներ, այլ պարզ բնազդական մղումով»[2]:

Մուսալեռցիներն ընտրեցին 600-ի հասնող առաջամարտիկների, նրանց տեղավորեցին առաջին գծում և շարունակեցին պաշտպանական նախապատրաստությունը: Թշնամին սակայն քնած չէր: Նրանք ևս մտմտում էին հարձակման մասին, հույս ունենալով, որ փոքրաթիվ զորքով կկվաճեն լեռնալանջը, մանավանդ որ ինքնապաշտպանների թիկունքում ծովն էր և փախուստի այլ ճանապարհ չկար:

---

[1] *Ռուբեն Սահակյան,* Ցեղասպանության պատմությունից, Երևան, 1990, էջ 176:

[2] *Յակոբ Դավթյան,* Մուսա լեռան հայերը մեր ժողովրդի ազատագրական պայքարի մեջ, էջ 789:

Օգոստոսի 7-ին թուրքական զորքերի մի ջոկատ, Սուեդիայի մյուդիր Խալիդի գլխավորությամբ սկսում է հարձակումը հույս ունենալով հեշտությամբ հպատակեցնել ինքնապաշտպաններին: Վեց ժամ տևող առաջին ընդհարումը աստիճանաբար թեժանալով ու վերածվելով արյունահեղ գոտեմարտերի ավարտվեց լեռան պաշտպանների հաղթանակով: Երեկոյան թշնամին նահանջեց իր հետ տանելով 5-6 սպանված և ավելի մեծ թիվ կազմող վիրավորների: Առաջին հարձակումը միաժամանակ պարտադրեց արագացնել պաշտպանական դիրքերի կառուցման աշխատանքները, կռվող ուժերի կազմակերպումն ու դասավորումը: Տասնապետներ կարգվելու հետ մեկտեղ առանձնացվում է շուրջ 40 քաջամարտիկների մի խումբ բաղկացած զինվորական որոշ փորձառություն ունեցող կամ վարպետորեն զենք գործածելու ունակ երիտասարդներից: Իսկ ծերերն ու պատանիները կազմում էին օժանդակ ուժը, որին հանձնարարված էր երկրորդական պաշտպանությունը:

Անցավ ընդամենը 3 օր, և ահա թշնամին, համալրելով ուժերը, օգոստոսի 10-ի վաղ առավոտյան անցավ նոր հարձակման անհամեմատ ավելի մեծ ուժերով մոտ 5 հազար զինվոր ու սպա: Այս անգամ թուրքական զորքերը, պաշտպանված լեռնային խոշոր թնդանոթներով, առաջ էին շարժվում յոթ թուրք հազարապետների և գերմանացի սպայի ղեկավարությամբ[1]:

Դրությունը գնալով ծանրանում էր, սակայն ***«Մահ իմացյալ անմահություն է»*** նշանաբանով մարտնչող առյուծասիրտ հայ ինքնապաշտպաններից ամեն մեկը աներևակայելի սխրանքներ էր գործում: Նրանք կռվում էին հորդ անձրևի տակ, ինքնամոռացումով: Այդ ճակատամարտը տևեց 12 ժամ, սակայն հայերը չէին նահանջում ոչ մի քայլ[2]:

Ինքնապաշտպաններին խանգարում էին թնդանոթները մեծ վնաս հասցնելով հայոց դիրքերին: Թնդանոթը գրավելու մտահոգությամբ նրանք գաղտնուղիներով թշնամու ճամբար են ուղարկում մի երիտասարդի: Սեպուհ Ակունին պատմում է. «Իր բոլոր հոգիով անձնուէր և յանդուգն հայ երիտասարդ մը, որ մասնաւոր դիւրութիւններ ալ ունէր լեռները մագլցելու և իջնելու, աննշմար կերպով սահելով իջած է վար դէպի այն կողմ ուր դրուած էր թնդանօթը և մացառներուն մէջէն սողալով մօտեցած է այն ժայռին, որուն վրայ զետեղուած էր թնդանոթը: Այս կտրիճը այնքան մօտեցած է, որ ուղղակի սկսած է լսել այն խօսակցութիւնը զոր կը փոխանակէին թուրքերը: Սպաննած է չորս թուրքեր, թնդանօթածիգ, մեծ խուճապի պատճառելով, այն աստիճան որ թուրք հրամանատարը գոնէ թնդանօթը փրկելու համար զայն փոխադրած է ուրիշ տեղ և իրենք ալ քաշուած են:

Այս զմայլելի հերոսութեան վրայ կառավարութիւնը ստիպողաբար զէնքի տակ առած է 4000 թուրք գիւղացիներ, որոնք միանալով 3000 հոգինոց կանոնաւոր ուժին, ամէն միջոց ձեռք առնելով, յուսահատական գրոհէ մը ետք յաջողած են գրաւել մէկ քանի այնպիսի դիրքեր, որոնք կը տիրէին Հայերու ապաստանած բարձունքներուն վրայ: Հետեւեալ օրուան յարձակման իրիկունը թուրքերը յաջողած են չորս հարիւր մէթրի չափ մօտենալ հայկական համախմբման վայրին, նեղ դրութեան մը մատնելով մեր քաջերը: Գիշերը մեր առիւծները փորձած են շուրջառիկ շարժում մը, որ պիտի սկսէր համազարկ հրացանաձգութեամբ և պիտի վերջանար գիրկընդխառն կռիւով: Այս շարժումը յաջողութեամբ գլուխ եկած է և նոր խուճապ մը պատճառած թուրքերուն որոնք ուժեղ յարձակում մը կարծելով կէս ժամ վերջ տուած են նահանջի հրաման: Առտուն արդէն պարպուած էին այդ դիրքերը զոր յաջողած էին ձեռք անցընել

[1] *Ռուբեն Սահակյան,* նշված աշխատությունը, էջ 178:

[2] *Հանրի Պարպի,* Սարսափի երկրին մեջ, Պեյրութ, 1965, էջ 80-81:

թուրքերը: Այս կռուի ընթացքին սպաննուած էին 200 թուրք և հայերու ձեռքը ինկած էր բաւական հրացան, ռազմամթերք և ուրիշ իրեղէններ»[1]:

Հաջորդ օրը օգոստոսի 16-ին, կռիվը վերսկսվում է առավել կատաղի ուժով: Կեսօրին թուրքերին հաջողվում է խորտակել պաշտպանական գծերը՝ ստիպելով մուսալեռցիներին դիմելու անկարգ նահանջի: Դրա հետևանքով թշնամին արդեն համազարկի տակ է առնում կենտրոնական բանակատեղին՝ Դամլաջըքը: Մի պահ գերիշխում է հուսահատությունը, և սկսվում է խուճապը: Անգեն կանանց ու երեխաների թափորը Աբրահամ քահանա Տեր-Գալուստյանի գլխավորությամբ ուղղվում է դեպի ծով ալիքների մեջ փրկելու հայ կնոջ պատիվը դաժան ոտնխի բարբարոսությունից: Սակայն թուրքերի կայծակնային հարձակման հետևանքով առաջացած խուճապը երկար չի տևում: Մի պահ հուսալքված, ոչ մեծաթիվ մարտիկների խումբը, ոգևորվելով անվեհեր մարտիկներ Եսայի Յաղուբյանի, Ջաբրա Խեյոյանի, Վանես Խոջենյանի, Մարտիրոս Հաբեշյանի, Մովսես Յարամաղյանի, Պետրոս Գալուստյանի, Մարտիրոս Ջանսզյանի (Գալենտեր), Մանուկ Գըլըճյանի, Պողոս Գապայանի, Պետրոս Արամացյանի, Հակոբ Խեչոնյանի, Սարգիս Շանննագյանի, խիզախ կանանց՝ Շուշան Գապայանի, Վարդեր Ջեյթլյանի, Մանուշակ Մանուկյանի, Եղիսաբեթ Սըգայանի օրինակով, հավաքում է իրեն, նոր շունչ առնում, վերադառնում դիրքերը և շարունակում օրհասական կռիվը, որն այդ օրը ևս ի վերջո պսակվեց մուսալեռցիների հաղթանակով[2]:

Պարտություն պարտության հետևից կրած գազազած թուրքերը օգոստոսի 19-ին ձեռնարկում են ամենավերջին և իրենց հաշվարկներով, ամենամարդաշատ արշավանքը: Այս անգամ սողալով դեպի լեռն էին բարձրանում ինը հազարանոց կանոնավոր զորքերն ու հրոսակախմբերը: Ընդհանուր հրամանատարն էր Ֆախրի փաշան: Երկու օր տեղի էին ունենում ահեղ մարտեր: Երկուստեք զոհեր էին տրվում: Թուրքերը նույնիսկ ճեղքեցին պաշտպանական որոշ գծեր, սակայն լուրջ հաջողության չհասան: Վերջին օրը նրանք տալով շուրջ 1000 մարդու կորուստ՝ ստիպված զորքերը ետ քաշեցին և նահանջեցին:

Փաստորեն պարտված թուրքական բանակը փոխեց պայքարի տակտիկան: Նրանք լեռան ստորոտում կուտակելով 15000-անոց բանակ և իսլամ, բարբարոս խուժան՝ որոշեցին շրջապատման օղակի մեջ առնել ինքնապաշտպաններին և սովամահության սարսափով նրանց հարկադրել առանց կռվի անձնատուր լինել:

Իրոք մուսալեռցիների վիճակը դառնում էր օրհասական: Գնալով կրճատվում էին պարենն ու հատկապես ռազմամթերքը, ավելանում էր վիրավորների թիվը, դժվար էին դիմանում ծերերն ու փոքրահասակները[3]:

Մուսալեռցիները խորհում էին, ճիշտ է անհուսալի, բայց և այնպես դրությունից դուրս գալու ելքի մասին: Նրանք որոշեցին դիմել եվրոպական որևէ տերության ռազմանավերին և օգնություն խնդրել նրանցից: Ազդանշան տալու համար լեռան ծովահայաց եզրին բարձրացվեցին երկու «դրոշակ»: Դրանք լայնաւարած սավաններ էին, որոնց վրա նկարված էին կարմիր խաչեր և մեծ-մեծ տառերով գրված՝ «Քրիստոնյաները վտանգի մեջ են»:

Այդ, փաստորեն ցուցապաստառների կողքին կանգնեցրել էին մի խումբ պահակներ, որոնք հանձնարարություն ունեին նավը տեսնելուն պես ծածանել դրանք: Եթե մարտանավը նկատեր իրենց և ուղղություն վերցներ դեպի ծովափերը, ապա փորձված լողորդներից մեկը (նախատեսված էր ***Մովսես Գըրգյանը, Պուպուշյանը*** կամ

---

[1] ***Մ[եպուհ] Ակունի,*** Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921, էջ 203-204:

[2] ***Ռուբեն Սահակյան,*** նշված աշխատությունը, էջ 180-181:

[3] ՀՍՀ, հ. 8, էջ 85: ***Մ. Արզումանյանի*** հոդվածը:

Չլարյանը), ծով նետվելով, լողար դեպի նավը, նավապետին հանձներ անգլերենով գրված թիթեղյա տուփի մեջ տեղավորված (որպեսզի չթրջվեր) խնդրագիրը[1]:

Բերենք այդ խնդրագրից մի հատված միայն: Այնտեղ ասված էր. «Անգլիական, ֆրանսիական, իտալական, ռուսական և ամերիկյան բոլոր ծովակալներուն, նավապետներուն և իշխանությանց, որոնց կրնա ներկայանալ սույն աղերսագիրը դիմում կընենք մենք հանուն Աստուծո և մարդկային եղբայրության, դիմում կընենք հանուն Քրիստոսի և քրիստոնեության... Տեր, մենք հոս ապաստանած ենք թուրքական բարբարոսութեենե, խժդժություններեն, կոտորածեն և մահեն, մանավանդ մեր կիներուն պատիվին բռնաբարումեն զերծ մնալու համար: Տես, վստահ ենք, որ դուք տեղյակ եք թուրքին ներկա բնաջնջման քաղաքականության, զոր ան կգործադրե մեր խեղճ ցեղին վրա... Մեկ խոսքով, որոշ գիտենք թե, ինչպես որ ամերիկացի տոքթոր մը ըսած է, թուրք կառավարությունը որոշած է բնաջնջել թրքահայերը և մեծ կորովով կը գործադրե իր ծրագիրները: Հիմա, Տեր, մենք դարերով հալածված ժողովրդի մը մնացորդներն ենք: Թուրք կառավարությունը ***ասկե 40 օր*** առաջ իմացուց մեզի մեր ամբողջ ժողովուրդը գաղթեցնելու իր որոշումը, և մենք հոս քաշվեցանք մեր կյանքն ու պատիվը փրկելու համար, քանզի որոշ գիտենք, թե գաղթել ներկա պայմաններու ներքև կնշանակե ոչնչացում, սարսափ, տանջանք և անպատվություն: Ուստի մենք որոշեցինք մեռնել կռվելով, քան մեր իսկ աչքերով տեսնել մեր կիներուն պատվին անարգվիլը և հետո, իբր վախկոտներ, անշուշտ չարչարանքներով մահվան դիմել»[2]:

Այնուհետև արձանագրվում էր, որ շրջափակվածներն արդեն երեք վճռորոշ ճակատամարտ են տվել թուրքական բարբարոսների դեմ, սակայն այլևս դիմագրավել չեն կարողանում, քանի որ պարենը վերջանում է, սովը շուտով վրա է հասնելու, գինամթերքը նույնպես պակասելու է:

Ապա շարունակում. «Տեր, դիմում կընենք Ձեզի, հանուն Աստծո և մարդկային եղբայրության, հանուն Քրիստոսի, ընդդեմ քաղաքակրթության այս ոսոխին և կխնդրենք, որ ազատեք մեր կյանքն ու պատիվը: Հաճեցեք, Տեր, փոխադրել զմեզ Կիպրոս կամ ուրիշ ազատ երկիր մը: Մեր ժողովուրդը ծույլ չէ. կրնա իր ապրուստը ճարել, եթե գործ տրվի իրեն: Եվ կամ, եթե այսքանը կարելի չէ, հաճեցեք փոխադրել գոնե մեր կիները, ծերերը ու մանուկները, և պարենավորեցեք մեզ զենքերով և ռազմամթերքով, ուտելիք տվեք մեզի, որ ձեզի հետ կողք-կողքի կռվինք թրքական ուժերուն դեմ: Կը խնդրենք, Տեր, մի թողուք որ սովամահ ըլլանք, մի՛ թողուք, որ ոչնչանանք, ազատեցեք մեր կյանքը, ազատեցեք մեր պատիվը, քանի դեռ ուշ չէ:

Ձեր խոնարհ ծառան

Ի դիմաց տեղվույս բոլոր քրիստոնյաներուն

Տիգրան Անդրեասյան

1915 օգոստոս 20/2 սեպտեմբեր»[3]:

Օրերն անցնում էին, սակայն որևէ ռազմանավ չէր երևում: Մուսալեռցիներն հարկադրված էին մի երիտասարդ լողորդի ուղարկել Հալեպի ամերիկյան հյուպատոսի մոտ օգնություն խնդրելու առաքելությամբ: Երկու այլ սուրհանդակներ, կտրելով ***30 հազար մետրի*** հասնող լեռնային կածաններ, շուրջանցեր կատարելով, փաստորեն անարդյունք վերադառնում են բանակատեղ: Դրությունը գնալով դառնում էր օրհա-

[1] *Ռուբեն Սահակյան,* նշված աշխատությունը, էջ 182-183:

[2] *Տ. Անդրեասյան,* Ձեյթունի անձնատվությունը և Սուետիո ինքնապաշտպանությունը. Կահիրե. 1915, էջ 44:

[3] «Յուշամատեան Մուսա լեռան», ***Մարտիրոս Գուշակչյանի*** և ***Պողոս Ծատուրյանի*** խմբագրությամբ. Պեյրութ, 1970, էջ 348:

սական: Այդ բանը նկատում էին թուրքերը և իրար հաջորդող վերջնագրեր ներկայացնելով, պատրաստվում էին հերթական գրոհի:

1915 թ. սեպտեմբերի 5-ին՝ կիրակնօրյա ու արևոտ պայծառատես մի առավոտ, լեռան կատարին խմբված հուսակարոտ հայ ինքնապաշտպաններն անզեն աչքերով փրկարար նավեր էին որոնում: Հանկարծ հորիզոնում երևում է ֆրանսիական դրոշակակիր լողացող մի հածանավ: Դա *«Գիշեն» ռազմանավն էր,* որի անձնակազմը հեռվից նկատելով շրջափակված հայերին, մոտենում է ծովափին, ափ է իջեցնում մի մակույկ, շտապ վերցնում Խաչեր Թումասյանին (որը ֆրանսերեն խոսել գիտեր) և մի քանի այլ ժամապահների և վերադառնում հածանավը:

Արժանին պետք է հատուցել նաև ծերունազարդ *խիզախ լողորդ Մովսես Գրիգյանին,* որն արդեն իսկ նետվել էր ծովը և բավականին մոտեցել նավին: Մի ուրիշ նավակ նրան հասցնում է մինչև «Գիշեն» հածանավը, որը գտնվում էր ֆրանսիական ծովակալ Դարտիժ դյու Ֆուրնեի հրամանատարության ներքո լողացող նավին: Դրա նավապետն էր II կարգի կապիտան Բրիսոնը, որին և հանձնվում է վերը նշված դիմումը: Վերջինս, ուշադիր կարդալով այն, «իր հիացմունքն է հայտնում հանդեպ ընդհանրապես հայ ժողովուրդը»: Նրա պահանջով նավ է հասցվում նաև Պետրոս Տմլաքյանը՝ լրացուցիչ տեղեկություններ տալով թուրքական զորքերի տեղաբաշխման մասին: Տեղեկացնելով դեպքի մասին իր բարձր հրամանատարությանը կապիտան Բրիսոնը, իր անձնական պատասխանատվությամբ, հածանավը խարսխել է տալիս ծովափի մոտ և հրամայում ռմբակոծել Քեբուսիե գյուղի եկեղեցին, որը թուրքերը վեր էին ածել ռազմամթերանոցի: Այս ռմբակոծությունը նյութական մեծ վնասներ է հասցնում թուրքերին՝ պատճառելով նաև լուրջ մտահոգություն նրանց հրամանատարությանը[1]:

Ռմբակոծությամբ թուրքական զորակայանները, հատկապես զինապահեստները ոչնչացնելուց հետո, ֆրանսիացիները հեռանում են, խոստանում շուտով վերադառնալ և հիմնավոր օգնության ձեռք մեկնել մուսալեռցիներին:

Ոիֆաթ բեյի ուղարկած չեթեները ուշիուշով հետևում էին դեպքերի զարգացման ընթացքին և կատարվածի մասին զեկուցում կենտրոնին: Նրանք տեսան, որ ֆրանսիական հածանավը հեռացավ և փաստորեն այլևս չէր երևում: Ոգևորվելով դրանից՝ թուրքերը վերջնագիր են ներկայացնում «անհնազանդներին», պահանջելով անձնատուր լինել, *«այլապես կոչնչացնեն բոլորին»:* Իբրև պայմանաժամանակ տրվում է երկու ժամ: Հայ համայնքն էլ, ժամանակ շահելու դիտավորությամբ, խնդրում է պայմանաժամն ավելացնել և հասցնել 24 ժամի:

Թուրքերը, կարծես թե դրանից ոգևորված, առանց մի ժամ սպասելու, անմիջապես սկսում են հարձակումը: Սեպտեմբերի 9-ին թուրքական քնդանոթները սկսեցին որոտալ Մուսա լեռան բարձունքներում: Թուրք բազմահազարանոց ասկյարները, հետևից գցած ավարածարավ խուժանին, արյունն աչքերն առած, նույնիսկ զոհերի առաջ կանգ չառնելով, շարժվում էին դեպի հայկական դիրքերը: Սեղմ ճակատամարտ էր սպասվում: Փոխզիջում չկար: Երկուստեք գնում էին մինչև վերջ: Սակայն հաղթանակեց արդարամտությունը, ազատատենչ ոգին, հայրենասիրությունը, ինչպես նաև ռազմական տաղանդը:

Հայերը, դիմելով ռազմական հնարանքի, ցույց են տալիս, որ իբր նահանջում են՝ դիրքերը թողնելով իսլամի երկրպագուներին: Թուրքերը, լքելով դիրքերը, բարձրանում են մինչև մոտակա կիրճը: Այդ պահին հայկական զինյալները, թաքստոցներից դուրս գալով, սկսում են թուրքերի մսաղացը: Նրանք, մեծաքանակ զոհեր տալով,

[1] *Ռուբեն Սահակյան,* նշված աշխատությունը, էջ 184-185:

հարկադրված նահանջում են: Հայերը երկու սպանված ունենալով միայն նորից դառնում են դրության տերը: Արևամուտին ճակատամարտն ավարտվում է հայ զորայինների փայլուն հաղթանակով:

1915 թ. սեպտեմբերի 10-ին վերադարձան ֆրանսիական նավերը և սկսեցին ռմբակոծել թուրքական դիրքերը: Հայերի ոգևորությանն ու ցնծությանը չափ ու սահման չկար: Փրկված էին ինքնապաշտպանները, մանավանդ երբ իմացվեց ֆրանսիական կառավարության որոշումը, այն է. ինքնապաշտպաններին, բոլորին տեղափոխել Պորտ Սաիդ: Փոխադրվողների թիվը կազմում էր 4058 մարդ, որոնցից 1563-ը երեխաներ էին, 2495-ը կանայք ու տղամարդիկ: Դեպքերին ականատես Տիրան Թեքեյանը գրում է. «Երբ կիները, ծերունիներեն և տղաներեն վերջինը նավ դրված էր, հայկական 20 զորախմբերը, միաժամանակ ձգելով իրենց լեռնային դիրքերը, զանազան կողմերեն ծովափ եկան, և ես ան ատեն տեսա, որ ծորերեն ծայր կուտային, խմբակ առ խմբակ, հուժկու և խրոխտ պատերազմիկներ կուրծքերնին փամփշտակալներով զարդարված»[1]:

Այդ նույն *Տ. Թեքեյանը* ծառայում էր ֆրանսիական նավատորմում ավագ սպայի կոչումով և պակաս չէր նրա դերը մուսալեռցիների տեղափոխությունը կազմակերպելու գործում:

Պորտ Սաիդում մուսալեռցիներին ընդունեցին հերոսների նման, ռազմականշքերթային պատվո պահակներով, նրանց անմիջապես տրամադրեցին վրաններ, սնվելու և գիշերելու համար, անհրաժեշտ ուտելիք ու պայմաններ: Մի քանի ժամում բարձրացավ մի վրանաքաղաք, որը շրջապատված էր տեղացիների հարգալից վերաբերմունքով: Սեպուհ Ակունին գրում է. «Մեր ապաստանեալ ազգակիցները Բօր-Սաիտ հասած ատեննին ամենահամակիր ընդունելութեան արժանացած են Եգիպտոսի բարձր քօմիսէր Սըր Հէնրի Մաք-Մահօնի և Ջօր. Մաքսուէլի կողմէ, որոնք անձամբ զբաղած են ապահովելու համար մեր ազգակիցներուն հանգիստը: ***Եգիպտոսի Սուլթանը անմիջապէս 250 ոսկի դրկած է. ապաստանեալներու պէտքերուն յատկացուելու համար:***

Մէկ քանի օր ետք Մուսա լերան վրայ կռուող մեր քաջարի հայրենակիցները դիմած են զինուորական իշխանութեան և խնդրած են իրենց զէնք տալով դրկել ռազմաճակատ, սակայն զինուորական իշխանութիւնները մերժած են: Ահա այսպէսով է որ ազատուած է քանի մը հազար հայութիւն»[2]:

Պորտ Սաիդում, կարճ ժամանակամիջոցում հայերն սկսեցին իրենց ոչ միայն լավ զգալ, այլև մասնակցել Թուրքիայի դեմ տեղացիների մղած ազատագրական գոտեմարտերին: Շուրջ 600 մուսալեռցիներ, զենքը ձեռքներին, կռվեցին լեգեոնական դրոշի ներքո, անկրկնելի հերոսություն ցուցաբերեցին 1918 թ. սեպտեմբերի 19-ին ծավալված հանրահայտ *Արարայի* ճակատամարտի կռիվներում:

Առաջին աշխարհամարտը եզերվեց թուրք-գերմանական խմբավորման անփառունակ պարտությամբ: Մուդրոսի զինադադարից հետո կատարվեցին տարածքային փոխանակումներ: Սիրիան վերստացավ իր տարածքը, որի մեջ էին մտնում ողջ *Սուեդիան* և նրա մասն կազմող *Մուսա լեռան* գյուղերը: Օգտվելով նման հնարավորություններից 1919 թվականի հուլիս-նոյեմբեր ամիսներին մուսալեռցիները, մեծ ու փոքր քարավաններով վերադարձան հայրենի լեռնաշխարհը: Նորից սկսեցին ծխալ հայոց օջախները: Կարճ ժամանակամիջոցում հայերի շինարար աշխատան-

[1] «Յուշամատեան Մուսա լեռան», էջ 348: Տես նաև *Ռուբեն Սահակյան,* նշված աշխատությունը, էջ 187-188:

[2] *Սեպուհ Ակունի,* նշված աշխատությունը, էջ 210:

քով և ստեղծագործական շնորհքով կյանքը շարունակեց ընթանալ բնականոն հունով: Դժբախտաբար երկար չտևեց նման հանգիստը:

1936 թ. սկզբներին Ալեքսանդրետի սանջակը ստանում է անկախ պետության կարգավիճակ: Սակայն շուտով հայտնի է դառնում Ֆրանսիայի դիվանագիտական այն խարդավանքը, որով միտվում էր Սիրիայի անբաժան մասը կազմող Ալեքսանդրետի վարչամիավորը Թուրքիային հանձնելու մտադրությունը: Նման որոշումը անշուշտ մեծ դժգոհություն է առաջացնում արաբ և հայ բազմահազար տեղացիների շրջանում:

1937 թ. հունվարի 8-ին մուսալեռցիները, դաշնակցած արաբական ազգային կուսակցության ղեկավար *Ջեքի Արսուզի* հետ, մարդաշատ ցույց են կազմակերպում, բողոքելով Ֆրանսիայի դեմ, որն իր հովանու տակ վերցրած Ալեքսանդրետը խլում է և հանձնում Թուրքիային: Տարբեր ազգերի մասնակցությամբ ծավալված, շուրջ երեք օր տևող բողոքի ցույցերը, դժբախտաբար, ապարդյուն վերջավորություն ունեցան: Ֆրանսիան անդրդվելի է մնում իր որոշման մեջ և սանջակը պիտի հանձներ Թուրքիային[1]:

Մուսալեռցին արդեն ճաշակել էր թուրքական տիրապետության տակ ապրելու դառը դեղահատը: Դրա համար էլ որոշում ընդունվեց ողջ համայնքով, առանց բացառության, բռնել գաղթի ճանապարհը: Նկատի ունենալով, որ 1939 թ. հունիսի 23-ին, Փարիզում պիտի ստորագրվեր թուրք-ֆրանսիական դաշնագիրը Ալեքսանդրետի հանձնման վերաբերյալ, հայկական համայնքը որոշում է մեկ շաբաթվա ընթացքում թողնել հայրենի բնօրրանը: Սակայն գաղթը սկսվել էր դեռևս վաղուց:

1939 թ. հուլիսի 17-ից մուսալեռցիները թողնում են իրենց գյուղերը: «Եվ դարձյալ գաղթականությո՞ւն, երբ տակավին նախորդ գաղթականության հիշողությունը թարմ էր,- գրում է ամսագիրը,- մուսալեռցին արցունքոտ աչքերով կբաժանվեր իր հայրենի գյուղեն ու լեռեն. Հուլիսի 23-ին, Մուսա լեռան գյուղերը պարպած էին իրենց բնակիչներեն: Մինչև 23 հուլիս 1939, սանջակի (Մուսա լեռ և Գըրդը խան) 35000 հաշվող հայությունը, ինչպես նաև 20000 արաբներ և չերքեզներ կը հեռանան Սան Սանջակեն և կը հաստատվին Սիրիա կամ Լիբանան»[2]:

Նույն թվականի հուլիս-օգոստոսին հայաբնակ գյուղերի ողջ բնակչությունը շուրջ 5 հազար մարդ, փոխադրվեց Լիբանան, *Այնճար անունը կրող ընդարձակ բացատը, ուր մուսալեռցիները լծվելով շինարար աշխատանքի, կարճ ժամանակում կյանքի կոչեցին իրենց նոր բնակավայրը:* Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո 1946-1947 թթ. մուսալեռցիների մի զգալի մասը ավելի քան 650 ընտանիք, ներգաղթեց Խորհրդային Հայաստան, բնակություն հաստատելով Երևանում և էջմիածնի շրջանում: Այստեղ գտնվող *Գիհեվետ ավանը* 1972-ին վերանվանվեց *Մուսալեռ,* ուր վեր է խոյանում Մուսա լեռան հերոսամարտի հոյակապ հուշարձանը (ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյան)[3]:

Խոսելով Մուսա լեռան հերոսական ինքնապաշտպանության մասին այսօր չափազանց կարևոր է հիշատակել նրա պատմական որոշ դասերը, նրա այժմեական հնչողությունն ու հրատապ արդիականությունը, որովհետև ազգայնամոլ այն ուժերը, որոնք երեկ փորձում էին վերջ դնել մուսալեռցի հայերի և ընդհանրապես հայ ժողովրդի գոյությանը, այսօր էլ կենսունակ ու վտանգավոր են:

---

[1] Մանրամասն տես «Մուսալեռ-Այնճար», «Այնճար» ամսագրի 60-ամյա հոբելյանական համարը (1939-1999), Այնճար, 1999. էջ 5-9:

[2] Նույն տեղում, էջ 9:

[3] *Ռուբեն Սահակյան,* նշված աշխատությունը. էջ 189:

Այս տեսանկյունից դիտելով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին օսմանյան կայսրությունում ծավալված իրադարձությունները հայկական եղեռնը, արևմտահայերի ինքնապաշտպանական մարտերը, արևմտյան տերությունների դիրքորոշումը և այլն, մենք պիտի արձանագրենք, որ մուսալեռցիների օրինակը տակավին մնում է որպես մի կանխազգուշացում և զգոնության ահազանգ ուղղված համայն աշխարհին, ահազանգ, որին ինչպես գրում է Լենինգրադում լույս տեսնող "Звезда" ամսագիրը, «աշխարհը ժամանակին չանսաց» և չուզեց հասկանալ, որ հայերի ցեղասպանությունը, որի դեմ ընդվզեցին քաջարի մուսալեռցիները, «ընդամենը նախերգանքն էր եվրոպական մի շարք ազգերի ու ազգությունների բնաջնջման»: ***Մինչդեռ նման եզրակացության էր հանգել «Մուսա լեռան քառասուն օրը» անմահ վեպի հեղինակ, մեծ հումանիստ Ֆրանց Վերֆելը,*** որն «իր ժամանակակիցներից շատ առաջ կանխագուշակեց, թե ինչ աղետներ կբերի գերմանացի ժողովրդին խաբած ու նրան իր կամքին ենթարկած մի խումբ բախտախնդիրների դիկտատուրան: Ի դեմս Հիտլերի, Հիմլերի, Գյորինգի ու Գեբելսի,– կարդում ենք նույն ամսագրում,– նա ճանաչեց էնվերի, Թալեաթի, Ջեմալի ու Նազըմի բնավորությունները և մարդկությանը կոչ արեց, ի սեր բարության, զինված մենամարտի մեջ մտնել չարության դեմ»[1]:

Լեհ կին գրող Քրիստինա Ժիվուլսկայան՝ հիտլերյան մահվան ճամբարների նախկին բանտարկյալը, «Օսվենցիմի դժոխքը» հայտնի գիրք-ողբերգության հեղինակը, նշում է, որ Ֆրանց Վերֆելի վեպի հերոս ***Գաբրիել Բագրատյանն*** իր համար դարձել էր պայքարի միակ ճիշտ ձևի խորհրդանիշ, «երբ ինքը կանգնած է եղել կործանման դեմ հանդիման»:

«Ցավոք,- ավելացնում է նա,- հիտլերյան մահվան ճամբարները հնարավորություն չէին տալիս հավաքվելու Մուսա լեռան նման բարձունքի վրա, այնտեղից թշնամուն հարվածելու համար: Դաժանության աստիճանը նույնն էր մնացել, կատարելագործվել էր միայն մարդասպանության տեխնիկան: Բարձր լարվածության էլեկտրական հոսանքին միացած փշալարերի ետևում, Օսվենցիմ կոչվող այդ անիծյալ հողակտորի վրա փակված, ես քանի-քանի անգամ եմ Մուսա լեռ երազել...»[2]:

Սուսալեռցիներն այսօր շարունակում են իրենց սրբազան ավանդույթները: Արարատի փեշերին, Մասիսի սպիտակափառ գագաթի փայլի տակ, նրանք ամեն տարի, ***սեպտեմբեր ամսվա վերջին շաբաթում*** հարիսա են պատրաստում և բաժանում բոլորին, բոլորին: Հավաքատեղին էջմիածնի շրջանի ***Մուսալեռ*** գյուղն է, որի բնակիչն եմ այսօր ես ***Հայկ Ղազարյանս,*** ծնունդով ***վարդենիկցի*** (Ներքին Գյոզալդարա), արմատներով ***մշեցի:***

---

[1] *Ռուբեն Սահակյան,* նշված աշխատությունը, էջ 190: Տե ս նաև «Գրական թերթ», 1986, N 41:

[2] Նույն տեղում, էջ 193:

Գլուխ հինգերորդ

Արևմտահայության զանգվածային ջարդերը բռնագաղթի ճանապարհին. սահմռկեցուցիչ դաժանությունները Ռաս-ուլ-Այնից մինչև Դեր Զոր

Երբ հայ ճահապահներուն գանգրևին մի լեո բարչրաձար, հաապաար այն ապրվեր կգրեր Սուրբ Աբարապի հավիրևնական չյան երկնաբարչ կարապին:

ԳՐԻԳՈՐԻՍ ՊԱԼԱՔԵԱՆ

1. Աներևակայելի դաժանությունները հայ մտավորականության նկատմամբ

1915 թ. ապրիլի 24-ին, Թալեաթի հրամանով, խավարապատ գիշերային մթան ուղեկցությամբ, *բորենիակերպ թուրք ոստիկանները* մեկ գիշերվա մեջ հավաքեցին մայրաքաղաքում ապրող հայ մտավորականության գերակշիռ մեծամասնությանը, լցրեցին Ստամբուլի բանտախցերը, նախապատրաստվեցին նրանց աքսորի արարողությանը, որպեսզի ճանապարհին կարողանային հեշտությամբ բոլորին ոչնչացնել:

Ի լրումն նախորդ էջերի, այստեղ փորձենք *ներկայացնել* արևմտահայ գավառներից, հայկական ու հայաբնակ մեծ ու փոքր քաղաքներից բռնագաղթեցված, դաժանորեն ոչնչացված կամ արաբական անապատներ քշված հայ մտավորականների, պետական ապարատում աշխատանքի կանչվածների, ունևոր ու անվանի հայերի թվաքանակը: Եվ մայրաքաղաքի, և՛ գավառներից բռնագաղթեցված հայ մտավորականների նկատմամբ կիրառվել են մարմնական, հոգեկան այնպիսի տանջանքներ, որոնց մասին մինչ այդ ո՛չ լսվել էր և ո՛չ էլ՝ տեսնվել: Մեծ էր դրանց թիվը, սակայն բերենք մի քանիսը միայն:

1915 թ. ապրիլ-մայիս ամիսներին բռնագաղթեցվել են.

1. Կարինից	- 600 հայ մտավորականներ
2. Սեբաստիայից	- 500
3. Դիարբեքիրից	- 820
4. Կեսարիայից	- 200
5. Շապին-Կարահիսարից	- 50
6. Իզմիթից	- 100
7. Պարտիզակից	- 80
8. Բրուսայից	- 40
9. Ադաբազարից	- 80
10. Մարզվանից	- 20
11. Խարբերդից	- 500
12. Տրապիզոնից	- 450
13. Մարաշից	- 200
14. Ուրֆայից	- 250
15. Մալաթիայից	- 400
16. Սամսոնից	- 200
17. Մուշից	- 100

Այս թվերը կարելի է ճշգրտել, ավելացնել, շատացնել, սակայն եղածն էլ, մեր կարծիքով, բավարար է ցույց տալու, թե ինչպիսի *գողգոթա* են ապրել հայ միտքն ու խիղճը, գիրն ու գրականությունը, բժշկությունն ու առողջապահությունը, արվեստն ու փիլիսոփայությունը, արհեստը, արդյունաբերությունը և առևտուրը: Ամենամռայլը, *մեծատառով գրված* այդ մարդկանց նկատմամբ կիրառված դաժանություններն էին, որոնց մասին մենք հարկ համարեցինք *կրկնակի* անդրադառնալ միևնույն աշխատության սույն էջերում:

Սկսենք *Գրիգոր Զոհրապից.*

Գր. Զոհրապը մեծատաղանդ գրող էր, որի *«Անհետացած սերունդ մը»* վիպակը համազգային ճանաչում բերեց նրան, այնպես, որ պարբերական մամուլը վերջինիս սկսեց համեմատել ֆրանսիական գրական մեծերի հետ: «Տարազի» հոդվածագիրը Զոհրապի մասին գրեց. «Հայ գրականության *Մոպասանն էր ան,* որի յուրաքանչյուր նորավեպը ... գողտրիկ գոհար մըն էր»[1]: Գրականությանը զուգընթաց, նա զբաղվում էր իրավագիտությամբ: Ֆրանսիայում ստացած մասնագիտական գիտելիքներով զինված գրչով ու բանավոր ելույթներով պաշտպանում էր հայ և ոչ միայն հայ անպաշտպան ժողովրդի բռնաբարված իրավունքները:

Ճարտասան էր թուրքական մեջլիսի հայ անդամը: *Միրաբո,* երբեմն էլ *Ցիցերոն* ու *Դանտոն* էր կոչվում Զոհրապը, որի ատենախոսությամբ բեմահարթակ դուրս գալու պահին, երկնչանք էին ապրում նույնիսկ Թալեաթն ու Էնվերը, Շուքրին ու Նազըմ բեյը: Նրանից պետք էր «ազատվել», նրան պետք էր ոչնչացնել, այն էլ անաղմուկ: Այդպես էր որոշել իթթիհատականների հայակեր *եռյակը:*

Երբ սկսվեցին Կ. Պոլսի աքսորն ու Կիլիկիայի, հատկապես Զեյթունը ցնցող, անհավատալի աղետը, երբ գործողության մեջ դրվեցին Սալոնիկի որոշումները, մեծանում ու հայրենանվեր հայ պատգամավորը բարիկադների վրա էր և որոշել էր ըմբոստանալ հայերին հնձող թուրքական գերանդին գործադրողների դեմ, գրչով ու խոսքով պայքարել մինչև վերջ: Թերևս այդ պարագան ևս արագացրեց վաղուց ծրագրված նրա կործանումը:

[1] «Տարազ», 1915, N 10, էջ 117:

Հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոսը վկայում է, որ 1915 թ. ապրիլի 13/26-ին Կ. Պոլսի Խառը ժողովում ընթերցվեց Գր. Զոհրապի մի քանի օր առաջ պատրաստած զեկուցագիրը, որտեղ մեկիկ-մեկիկ հիշատակած լինելով հայ բանտարկյալների անունները, մասնավորապես արձանագրում էր, թե. «Օսմ. կառավարութեան կողմէ ցոյց տրուած այս աստիճան անվստահութեան համար Ազգին տխրութիւնը մեծ է, թէ՛ սխալ է փախստական գիներուորներու քաղաքական նպատակներ վերագրել, թէ՛ Ազգը ո՛չ թէ քաղաքական նպատակներ կը հետապնդէ, այլ ընդհակառակն՝ կը վախնայ որ մի՛ գուցէ այսքան խստութիւններուն յաջորդէ ընդհ. ջարդ մ'ալ, թէ՛ կառավարութեան կասկածը և Ազգին այս մտահոգութիւնը իրարու հետ խոտոր կը համեմատին, և այս կացութեան դարման տանելու համար ո՛չ թէ խիստ և ճնշո՛ղ այլ մեղմ և ներո՛ղ քաղաքականութիւն մը աւելի նպաստաւոր է և անհրաժեշտ, թէ՛ կը խնդրուի այսպէս վերաբերուիլ հայ Ազգին հետ, գո՛նէ ի յարգանս յիշատակին հազարաւոր հայ գիներուորներուն որոնք Օսմ. հայրենեաց պաշտպանութեան համար իրենց արիւնը թափած են»[1]:

Թուրքական մեջլիսի մեպուսը, օգտվելով իր անձեռնմխելիության իրավունքից, դոփում էր բարձրաստիճան բոլոր պաշտոնյաների դռները, երբեմն սպառնալով, երբեմն աղերսանքով իր ժողովրդի փրկության ելքեր որոնում:

1915 թ. մայիսի 15-ին Զոհրապը եղավ Թալեաթի և իթթիհատականների պարագլուխ Մ. Շյուքրիի մոտ: Արևմտահայ երախտաշատ պատմաբան Ա. Ալպոյաճյանն այսպես է ներկայացնում թուրք ցեղասպանների հետ Զոհրապի ունեցած բուռն մարտավեճի վերջաբանը.

«- Օր մը,- կըսե [Զոհրապը],- ապահով եղեք, որ հաշիվ պիտի պահանջվի ձեզմե և դուք չպիտի կարենաք արդարացնել ձեր արարքները:

Թալիաթ պեյ հեգնանքով կհարցնե.

- Ո՞վ պիտի պահանջե այդ հաշիվը:

- Ես,- կպատասխանե Զոհրապ,- խորհրդարանի մեջ իբր հայ մեպուս (երեսփոխան), ձեզմե հաշիվ պիտի պահանջեմ»:

Իրավացի է պատմաբանը, իրոք, «այդ վայրկյանեն, իսկ վճռված էր իր մահը»: Հինգերորդ օրը, այդ զրույցից հետո, Զոհրապը ձերբակալվեց[2]:

1915 թ. մայիսի 20-ին Զոհրապը կալանավորվեց, Վարդգեսի հետ միասին բռնեց Տիգրանակերտ տանող աքսորի ճանապարհը, բայց անսպասելի հարվածից շշմած, հույսեր փայփայելով, թե իրեն կազատեն, քանի որ ինքը մեպուս (երեսփոխան) է, անձեռնմխելի: Նա, երիտթուրքերի մյուս ղեկավարների նման, *մասոն էր,* որոնք իրար դիմելիս անվանակոչում էին *«եղբայր» փափկանունով:* Ահա այդ «եղբայրական» ռոմանտիկայով, կալանավորված Զոհրապը հեռագիր է արձակում թուրքական երրորդ բանակի հրամանատար Մեհմեդ Զեմալ փաշային, որտեղ ասված էր. «Սիրելի եղբայր, չգիտեմ ինչի՞ վերագրեմ մեր այս դժբախտ վիճակը. ուժս էլ սպառվել է. չափից ավելի տկար եմ զգում ինքզինքս հուզմունքից. ժամից ժամ սպասում եմ Ձերդ բարձրության հրամանին:

Գր. Զոհրապ»[3]:

Պատասխանը չուշացավ: Հաջորդ իսկ առավոտյան կանուխ Զոհրապը ստացավ հետևյալ տողերը. «Սիրելի՛ եղբայր, բնավ մտահոգ մի լինի, քեյֆիդ նայիր, կարող ես

---

[1] *Զավեն արքեպս.,* Պատրիարքական Յուշերս. վավերագիրներ և վկայություններ, Գահիրե, 1947, էջ 86:

[2] *Ա. Ալպոյաճեան,* Անհետացող դեմքեր. Գրիգոր Զոհրապ (իր կյանքը և գործը), Կ. Պոլիս, 1919, էջ 245: Տես նաև *Մինաս Չյուսյան,* Գրիգոր Զոհրապ, Երևան, 1957, էջ 50-51: *Ծ. Պ. Աղայան,* նշված աշխատությունը, էջ 479:

[3] *Վաղինակ Բյուրատ,* Ընտիր էջեր. Երևան, 2002, էջ 137-138:

հյուրանոցից դուրս էլ մանգալ: Գնա պտույտ արա Սեբիլ և ճենիկյե պարտեզները. մի քանի օր վերջ ես ալ Շամից (Դամասկոսից - Հ. Դ.) Հալեպ եմ գալու»[1]:

Ապրիլյան գողգոթայից հրաշքով փրկված *Գրիգորիս Պալաբյանը* վկայում է, որ «երբ Զօհրապ եւ Վարդգես կը ժամանեն Ատանա, հոս մէկ քանի ազդեցիկ հայեր մասնաւոր թոյլտուութեամբ կը տեսակցին այս երկու հայ երեսփոխաններուն հետ, առաջարկելով որ եւ իցէ օժանդակութիւն: Բայց ասոնք կը պատասխանեն թէ ուրիշ որ եւ է բանի պէտք չունին, միայն կը խնդրեն որ իրենց Ատանայէն ողջ անցնիլը լուր տան Պոլիս իրենց ընտանիքներուն:

Դարձեալ խիստ հսկողութեամբ Պոլսէն ընկերացող ոստիկանապետի մը եւ ոստիկանի մը, վերջապէս ողջամբ կը հասնին Հալեպ»[2]:

Հալեպից հայ աքսորականներին տեղափոխում են Եդեսիա, որտեղ նրանց անմիջապես արգելափակում են քաղաքային բանտում սահմանելով ամենախիստ հսկողություն:

Թուրքական ղեկավարությունը գործում էր Հուդայի սկզբունքներով: Երեկոյան Գր. Զոհրապին և Վարդգեսին, որոնք չէին սպասում, թե ինչ է պատրաստվել իրենց համար, հանում են բանտից և տանում Ուրֆայի երեսփոխան *Մահմուտ Նետիմի* տուն հյուրասիրության: Գր. Պալաքյանը, որն այդ օրերին Եդեսիայում էր, պատմում է. «Զօհրապ և Վարդգես Եդեսիոյ մէջ կը հիւրասիրուին Ուրֆայի օսմ. երեսփոխան, հետեւապէս եւ Զօհրապի ու Վարդգէսի պաշտօնակից Մահմուտ Նէտիմէ: Բայց այս հիւրասիրութեան անունին ներքեւ քակարդ մը լարուած էր: Որովհետեւ հազիւ երեկոեան ընթրիքը կամայ ակամայ ըրած, չորս ոստիկաններ գալով կը պահանջեն թուրք տանուտէրէն երկու ողբացեալ աքսորականները, ըսելով թէ «կառքը կը սպասէ Խարբերդ պիտի երթան»:

Տարաբախտ Զօհրապ, զգալով թէ դէպի մահ կ'առաջնորդուին, եւ թէ այլեւս իրենց ժամերը համրուած են, տանտիրոջ Մահմուտ Նէտիմի վիզը իյնալով, կ'աղաչէ ըսելով «Մեզ սպաննելու կը տանին, կ'աղաչեմ միջամտեցէք...»: *Բայց Վարդգէս՝ յեղափոխականի վայել սառնասրտութեամբ անտարբեր կը մնայ դէպի անխուսափելին, զի ինք իր յեղափոխական կեանքին մէջ ի պատանեկութենէ, վաղուց ընտելացած էր մահուան հետ եւ ինչ որ կ'ապրէր աւելին էր...:*

Մահմուտ Նետիմ կը խոստանայ միջամտել, սակայն ոչ ոք կրնայ թափանցել այս եղերական ու եղեռնական իրադարձութեանց գաղտնիքին...:

Հուսկ ուրեմն հեծեալ ոստիկան զինուորներու հսկողութեամբ Զօհրապ եւ Վարդգէս մէկ կառքի մէջ, եւ Եդեսիոյ առաջնորդ Արտաւազդ Ծ. Վարդապետ Գալէնտէրեան ու տեղւոյն երեւելիներէն երկու հայեր, երկրորդ կառքի մը մէջ նստեցնելէ վերջ, ճամբայ կը հանուին դէպի Տիգրանակերտ...:

Եդեսիայէն մէկ ժամ *հեռու Գարաքէօփրիւ* ըսուած վայրը հազիւ հասած ըստ նախօրօք եղած կարգադրութեան, կը պաշարուին մեր կալանաւորները: Չերքէզ Մէհմէտ եւ Խալիլ իրենց զինավառ հեծեալ չէթէներով կը կանգնեցնեն փոքրիկ այս կարաւանը եւ կը հրամայեն ոստիկան զինուորներուն, որ զոհերը ձգելով վերադառնան, քանի որ ասոնց պաշտօնը այլեւս լրացած էր:

Ահաւոր վայրկեանը կը մօտենայ...: Արիւնարբու հրոսապետները կառքէն վար կ'առնեն եղերաբախտ աքսորականները, եւ իրենց հետ բերած մէկ մեդրնոց երկաթ գամերով գետին կը բեւեռեն եղկելիները: Կը փետտեն Արտաւազդ վարդապետի մօ-

---

[1] *Վաղինակ Բյուրատ,* Ընտիր էջեր, Երևան, 2002, էջ 138:

[2] *Գրիգորիս* ծ. վարդ. *Պալաքեան,* Հայ Գողգոթան, Դրվագներ հայ մարտիրոսագրութենէն. Պեյրութ. 1977. էջ 203:

րուքն եւ կը կտրեն բոլորին ալ գլուխները, զանազան տանջանքներ տալէ վերջ: Մի առ մի կը կտրեն նաեւ թշուառներուն բոլոր անդամներն, նախապէս մերկացնելէ վերջ:

Եղեռնի այս լուրը Ուրֆայի կառավարիչը կը հեռագրէ Պոլիս, ուր օրէ օր Զօհրապի եւ Վարդգէսի սպանման աւետաւոր լուրին կը սպասէին Թալաթ և Իթթիհատի քոմիտէի կեդրոնի անդամները: Զօհրապի եւ Վարդգէսի սպանման լուրը առնելով, ներքին գործոց նախարար եւ ողբացեալներուն իբր թէ բարեկամ Թալաթ լուր կը ղրկէ առաջնոյն տիկնոջ, թէ Զօհրապ սրտի հիւանդութիւն ունենալուն Տիգրանակերտի ճամբուն վրայ կաթուածահար եղած է կառքին մէջ...: Իսկ Վարդգէսի կնոջ բացառաբար կը թոյլատրէ մեկնիլ Պուլկարիա, մինչ ցայն վայր արգելք եղած էր, եւ Վարդգէսի առ այս ըրած բոլոր դիմումներուն միշտ պատասխանած էր «Վարդգէս քեզի Պուլկարիա երթալու հրաման չեմ տար. գիտեմ օձիքդ ազատել կ'ուզես. բայց ճար չկայ, մենք ինչ որ ըլլանք, դուն ալ մեզի հետ պիտի ըլլաս...»:

Խորհրդաւոր այս խօսքերուն նշանակութիւնը ողբացեալները վերջը միայն հասկցան, երբ արդէն ուշ էր...:

Ճիշդ նոյն տեղւոյն մէջ, այս սարսափելի սպանութենէն 8 օր առաջ, կը նահատակուին ուրֆացի եւ տիգրանակերտցի գործաւոր գումարտակներու (ամէլէ թապուրի) *4000 հայ զինուորներ, ամենախժդուժ ու չարչարալից մահուամբ:*

Այսպիսի եղերական ու ահաւոր մահ մը կ'ունենան Զօհրապ եւ Վարդգէս, որոնք հայ ժողովրդի շահերու պերճախօս փաստաբաններն էին օսմ. Սահմանադրութեան 1908ի վաղորդայնին ընտրուած օսմ. երեսփոխանական ժողովին մէջ: Իսկ մասնաւորաբար կարնեցի Վարդգէս, իր քսանամեայ տարիքէն սկսեալ անվհատ եւ քաջարի վէթրանն էր եղած հայ ժողովրդի փրկութեան դատին. եւ բազմիցս տարիներով բանտարկուած, հալածուած, խոշտանգուած եւ օսմ. Սահմանադրութեան միայն բանտէն արձակուած էր օգտուելով քաղաքական բանտարկեալներուն ընդհանուր ներումէն»[1]:

Գ. Պալաքյանի պատմածին ավելացնում է և լրացուցիչ փաստեր է հաղորդում, նահատակ հոր՝ *Սմբատ Բյուրատի* ավագ որդի *Վաղինակ Բյուրատը,* որը 1928 թ. փետրվարին աշխատում էր Հալեպում և հանդիպումներ էր ունենում եղեսացի քարտուղար Մարտիրոս Հարությունյանի հետ: Մ. Հարությունյանը և Արփիար Արփիարյանի զավակ *Ֆիլիպ Արփիարյանը,* մի արաբ շինարարից լսել են (որը եղել էր Գր. Զոհրապին և Վարդգեսին փոխադրող կառքի կառապանը), թե Իբրահիմ Խույրին, նախօրյակին գրպանում դրած ուներ մի հրամանագիր, որի մեջ գրված էր. *«Բնաջնջում քաղաքական հանցապարտներ Զոհրապ և Վարդգես դավաճաններին»*[2]:

Ողբերգությունը սկսված էր: Արաբի պատմածի համաձայն. «Երբ հասնում ենք Թաշ Քյոփրյու կամրջի տակ և պատրաստվում էի կառքը անցկացնել ջրի մյուս կողմ, հանկարծ չեթեճին գոռաց. *«Տո՛ անհավատ խոզ, կեցրու կառքը, գո՛րծ ունենք»:*

Կառքը կեցրի, գազանն հարձակվեց իր մոտ նստած Վարդգեսի վրա, որն արդեն շշմել էր հուզմունքից: Նա ոչ մի բողոք չի անում, *նրան քարշ տվեց ցած, պառկեցրեց գետնին և ոչխարի նման կտրեց նրա վիզը: Արյունը վշշում էր: Երբ անշարժացավ, այս անգամին հովազի նման նորից ցատկեց կառքի մեջ՝ Զոհրապի վրա, որը դիմադրեց նրան ձեռքերով: Պահանջում է աջ ձեռքի մատանին, որը նվեր էր ստացել Շիմտիտանի քուրդ աշիրաթապետ Իպրահիմ պեյից, որի որդին կախաղանի դատապարտված է եղել և սակայն Զոհրապի պերճախոս պաշտպանողականով ազատվել է մահվանից:*

Զոհրապի երկար մաքառումին հրոսապետը վերջ է տալիս՝ դաշույնի մեկ

---

[1] *Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեան,* նշված աշխատությունը, էջ 206-208:

[2] *Վաղինակ Բյուրատ,* Ընտիր էջեր, Երևան, 2002, էջ 140:

հարվածով կտրելով նրա աջ ձեռքի մատները, հափշտակում է մատանին և մատները դեն է գցում հողի վրա: Զոհրապը նվաղած՝ գլուխը ցած է գցում կառքի բարձիկին: Գազանը նրա բաճկոնի վրայից պոկում, հանում է նրա գեղակերտ ոսկե ժամացույցն էլ, որն ընդելուզված էր ադամանդներով և նրա անունը քանդակված էր ակներով: Վերջում ոտքի հարվածներով դժբախտ Զոհրապին կառքից վար է գցում, քարշ տալով կառապանի օգնությամբ՝ պառկեցնում է Վարդգեսի անշունչ դիակի վրա, վերջում կառքից առնում է երկար քառակուսի վաթսուն սանտիմետրանոց մեխ, ուղիղ խփում է Զոհրապի սրտին, մինչև որ մեխը հողի մեջ է մխրճվում: Գործը լրացնելուց վերջ հրամայում է կառապանին քշել կառքը Ուրֆա քաղաք: Բայց նույն գիշերն իսկ, Եդեսիայի հերոսամարտին մասնակցող մի քաջարի խումբ գալիս և երկուսի դիակներն էլ կամուրջի մյուս կողմը պատվանդանի տակ թաղում է (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[1]:

Այսպիսով, Զոհրապը դաժանորեն սպանվեց աքսորի ճանապարհին, Եդեսիայի մոտակայքում, Կարաքյոփրյու կոչված վայրի մոտ, *1915 թվականի հավանաբար հուլիս 7-ին: Այդ թվականն է դրված այն կեղծ փաստաթղթերի տակ, որոնց նպատակն էր ցույց տալ, թե Զոհրապը մեռել է բնական մահով:*

Զոհրապի սպանության մանրամասնությունները բուն ոճրագործի Չերքեզ Ահմեդի խոսքերից առնելով հաղորդում է թուրք պատմագիր Ահմեդ Րեֆիգը: Այդ վայրենին, հայ ժողովրդի արյունարբու դահիճներից մեկը, սադիստական հատուկ բավականությամբ է պատմել իր ոճրագործությունը: Պատմագրի հարցին, թե ի՞նչ եղան Զոհրապը և մյուսները, վայրենին պատասխանել է.

«- Ա՜, չիմացա՞ք, ամենքն ալ սատկեցուցի:

Սիկառին ծուխերը դեպի օդին բարձրացուց, ձախ ձեռքովը պեխերը շտկելով խոսքը շարունակեց:

- Հալեպեն ելած էին: Ճամբան հանդիպեցանք: Իսկույն իրենց կառքերը պաշարեցի: Հասկցան թե պիտի սատկին: ... Զոհրապը ձեռք անցուցի: Ոտքիս տակը առի, խոշոր քարով մը գլուխը ճզմեցի, ճզմեցի մինչև որ սատկեցավ»[2]:

Հանճարի և վայրենու, քաղաքակրթության և բարբարոսության ընդհարումն էր այդ սպանությունը, որ կատարվեց նախամարդու բութ գործիքով քարով[3]:

Հայ մտավորականության ողբերգական ոչնչացման պատմության ամենամութ ծալքերը բացելիս դոկտոր *Ա. Նագդաշյանը,* իբրև հավելված, իր գրքի տողատակում դնում է ծանոթագրություն, որտեղ ասված է. «Զոհրապ և Վարդգես բանտարկուած վիճակի մէջ Ատանայէն Հալէպ տարուելով, ապա Ուրֆայի եւ Սեվերեկի միջեւ Չերքէզ Ազիզի չէթէյական խումբի կողմէ սպաննուեցան: Իսկ Խաժակ-Զարդարեան-Տաղաւարեանի խումբը, որ վեց հոգիէ կը բաղկանար, Մեսքէնէ տարուեցան եւ այնտեղը Եփրատի միւս կողմը անցուելով հոն սպաննուեցան: Նիւ Եորքի մէջ Ուրֆացի տիկին մը կայ, որ Մեսքէնէ տարագրուած ըլլալով, հոն այս վեց հոգիին կառքի մը մէջ բերուիլը տեսած է եւ քովերնին մօտենալ ուզողները արգիլուեր են, եւ անոնք ալ չեն թոյլատրուած, որ կառքէն դուրս ելլեն կամ խօսք մը խօսին: Անմիջապէս Եփրատի միւս կողմը անցնելով սպաններ են: Միայն անոնք կառքի մէջէն թուղթ մը ձգելու յաջողեր են, որուն վրայ անունները գրուած ըլլալով, օգնութիւն կը խնդրեն: Այս թուղթը պահուած է այդ տիկնոջ կողմէ»[4]:

---

[1] *Վաղինակ Բյուրատ,* նշված աշխատությունը, էջ 141-142: Տես նաև *Ա. Նագդաշյան,* Հայ մտավորականության ծերբակալությունը և Այաշի բանտը, Պեյրութ, 1969, էջ 81-84:

[2] *Ա. Ալպօյաճեան,* Անհետացող դեմքեր- Գրիգոր Զոհրապ, Կ. Պոլիս, 1919, էջ 252:

[3] *Մինաս Հյուսյան,* Գրիգոր Զոհրապ, կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1957, էջ 52-53:

[4] Տոքթ. *Ա. Նագդաշյան,* Հայ մտավորականներու ծերբակալությունը և Այաշի բանտը, Պեյրութ, 1969, էջ 49:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ,
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՖԱԴԵՅ ՏԱՃԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Այսպիսով շրջվեց հայ գրականության պատմության էջերից մեկը՝ կարևորը: Բարբարոսաբար սպանվեցին հանճարեղ մեծություններ, որոնցից յուրաքանչյուրը կարող էր փառք ու պատիվ պարգևել մի ամբողջ ժողովրդի:

Պակաս ողբերգական ճակատագիր բաժին չընկավ ***Դանիել Վարուժանին ու Ռուբեն Սևակին, Տիրան Քելեկյանին ու Հրանդ Մաղազաջյանին, Վահրամ Թորգոմյանին (բժիշկ) ու Տիգրան Չեոկուրյանին:*** Նրանց սպանության ձևերն ու բարբարոսական, վայրենաբարո մեթոդները ոչնչով չէին զիջում նախորդներին:

1915 թ. ապրիլի 24-ի գիշերվա ժամը 5-ին ձերբակալեցին Դանիել Վարուժանին: Նրան, ինչպես նաև մյուսներին, անկողնուց հանում են և գիշերային ներքնահագուստով, ուղղակի առաջնորդում ու փակում բերդի բանտախցիկում: Մյուս օրը, երեկոյան ժամերին, մեծ դժվարությամբ նրանց է հասցվում գոնե սովորական հագուստ:

Դ. Վարուժանին, իբրև ***«թեթև հանցագործ»,*** ուղարկում են ***Չանղըրի*** համակենտրոնացման ճամբարը, որտեղ արդեն բանտարկված էին ***Կոմիտասն*** ու մյուս մտավորականները: Երկու օր հետո սրանցից առանձնացնում են ***ութսունմեկ «վտանգավոր հանցագործներին»,*** ուղարկում են ***Այաշ:*** Դեռ կալանավայրը չհասած այդ խմբի վրա են հարձակվում ***«վայրենի չեթեները, գազանացած գյուղացիները»,*** որոնց ձեռքերով «խողխողվում են աքսորյալները, թալանվում և սպանվում քարի, փայտի և սրի հարվածներից, ***դիակապտության*** ենթարկելով, մերկացնում են սպանվածներին, գցում ***Գանձը-դերե*** ասված ձորը, անգերեզման հանգուցյալների մարմինը դարձնում գազանների կեր»[1]:

Չանղըրում մնում են Վարուժանը, Ռուբեն Սևակն ու Մաղազաջյանը, որոնք իրար այնքան մտերիմ էին, որ անվանվում էին Տրիումվիրատ–եռապետություն: Սրանց բանտարկել էին ապրիլի վերջին և պահել Չանղըրում մինչև օգոստոսի 13-ը, ապա, իբրև թե կենտրոնից եկած հրամանի համաձայն, բանտից հանում են, նստեցնում կառք և տանում դատավարության: Երբ կառք էին նստելու, «մի րոպե Վարուժանը մատիտով գրում է իր հոգեհատոր կնոջը ***Արաքսիին. «Տանում են մեզ դատելու. Լա՛վ խնամիր երկու բալիկներիս և մի սպանիր հիշատակս»:*** Եվ երկտողը հանձնում է Բյուզանդ Պոզաջյանին, որը ներման արժանացած լինելով, նույն օրն իսկ վերադառնալու էր Պոլիս: Պոզաջյանը սույն երկտողը բերել և հանձնել է Վարուժանի կնոջը[2]:

Ճանապարհին Վարուժանն ու Սևակը խիստ ընկճված էին, թաղված տխուր հուշերի օվկիանի մեջ, իսկ Մաղազաջյանը, ճիշտ է, արհեստականորեն, «դերասանություն անելով» իրեն ուրախ էր ձևացնում, նույնիսկ դրությանը ոչ պատշաճ կատակներ անում:

«Հազիվ թե կառքը Չանղըրից երեք ժամվա ճամփա էր կտրել և հասել Թյունեյ գյուղի ձորը, հանկարծ կառքը կեցնում են հրեշ հրոսակները, իհարկե նախապես կազմակերպված, ***մեկ-մեկ մորթոտում են որպես ոչխարի: Մահառիթ լուրը երեկոյան հասնում է Չանղըրը և բոլորին սահմռկեցնում է»***[3]: «Այսպես զոհվեց նաև Ռ. Սևակը,- գրում է Վաղինակ Բյուրատը,- հայկական գողգոթայի ճամփին. թեև նրա սպանվելուց հինգ օր վերջ նրա ազատման հրամանագիրը հասնում է»[4]:

Դ. Վարուժանի ու Ռ. Սևակի ողբերգական մահվան նման փաստի ճշմարտացի լինելն է հաստատում, համարյա բառացիորեն կրկնում ***Միքայել Շամտանճյանը:*** Նա պատմում է, որ երբ իրենց քարավանը Կ. Պոլսից հասավ Այաշ, այնտեղ իմացավ, թե հինգ մտավորականներ են պահվում բերդում: ***«Այդ հինգին մեջ են մեր հավետ սիրելի Վարուժանն ու Սևակը,-*** գրում է Շամտանճյանը:- Այդ հինգը Այաշ փոխադրվե-

---

[1] *Վաղինակ Բյուրատ,* Ընտիր էջեր, էջ 127:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 128:

[4] Նույն տեղում, էջ 144-145:

լու ճամբուն վրա, Չանղըրըեն վեց ժամ անդին, Թույնեյեն կես ժամ դուրս, կմորթվին գյուղացիներե խմբակե մը, կազմված Չանղըրըի իթթիհատի պատասխանատու քարտուղարին և ոստիկան զինվորներու հրամանատարին նախաձեռնությամբ և թուրք հերոսի մը գործակցությամբ: Վերջեն կտեղեկանանք, թե այս հինգին Այաշ ճամբու հանած ատեն, մեր մյուս ընկերները դադրած էին արդեն Այաշի մեջ ըլլալե: Այս եղեռնը, իր հիմերեն կսարսե մեր հոգիները, և այն պուտ մը քաջությանը, որուն ապավինած պիտի բաժանվեինք Չանղըրըի անհրապույր հորիզոններեն, կսառի մեր երակներուն մեջ և կկարկամի մեր ոտքերը»[1]:

Հայ մտավորականության բանտարկության, աքսորի և ողբերգական վախճանի մասին պատկերավոր էջեր է թողել պրոֆ. *Ա. Ն. Մնացականյանը:* Ընդհանրական են պատմաբանի ներկայացումները, քանի որ առավել ընդարձակ գրելու դեպքում, հատորներ կգոյանային, ուստի մենք ևս կհետևենք նրա օրինակին, սեղմ էջերով կպատմենք այդ գողգոթայի մասին[2]:

Թուրք ոստիկանները և «Հատուկ կազմակերպության» անդամները, օրը ցերեկով հրավիրված էին ներքին գործերի նախարարության ընդարձակ բակը «լուրջ հանձնարարություն կատարելու»: Վերջապես մթնեց: Բացվեցին վաղօրոք պատրաստված փակ ծրարները, ոստիկանները, խիստ գաղտագողի, ցրվեցին Ստամբուլի փողոցներով մեկ հավաքելու և կալանավայր բերման ենթարկելու այն մտավորականներին, որոնց անունները գրված էին ցուցակներում:

Չարմանալիորեն առաջին համարում *Մեծն Կոմիտասն էր:* Թուրք բարբարոսներն առանց նախազգուշացման ներխուժեցին նրա ննջասենյակը, որտեղ անփութորեն շեղջված էին մշակված ու անմշակ նոտաներ, անկյունային հատվածում դրված էր դաշնամուրը այն գործիքը, որի վրա ստեղծվել էին հայոց երգն ու երաժշտությունը, ընթերցվել էին հազարամյակի կենսագրություն ունեցող, մինչ այդ անընթեռնելի համարվող խազերը: Բորենիները տարան Կոմիտասին, կոպտորեն տեղավորելով կառքի մեջ, չթողնելով լրացուցիչ որևէ արտահագուստ կամ դրամ վերցնելու հետը:

Դեպի բանտախուց են առաջնորդում *Տիրան Քելեկյանին:* Գեղեցիկ արտաքինով, առինքնող, դեպի իրեն ձգող խելացի աչքերով, բարձրահասակ այդ պոլսեցին փայլուն գիտելիքներ էր ստացել Սորբոնի համալսարանում, ձեռք բերածը մշակել ու զարգացրել էր ֆրանսիական ակադեմիայում: Վերադարձին Թուրքիայի մայրաքաղաքում նա խմբագրել էր մի շարք թերթեր, գրել հրապարակախոսական բազմաթիվ հոդվածներ, կազմել «Ազգային հետազոտություններ» ծավալուն ու գիտական աշխատությունը, առաջին անգամ ստեղծել *«Ֆրանսերեն-թուրքերեն»* մեծ բառարան, այնքան մեծ ու շահավետ գործ կատարել բուն թուրք ժողովրդի համար: Այդ ամենը ոչնչացվում էր մեկ րոպեում, ոչնչացվում էր բիրտ ձեռքերով, բարբարոսական մեթոդներով, այն էլ Սեբաստիայի Ալիս գետի կամուրջի մոտ:

Թուրք բորենիները կոպտորեն բանտապահին են ներկայացնում *Ատոմ Յարճանյանին՝ Սիամանթոյին,* հայ գրականության այն գիսաստղին, որի ստեղծագործական հանճարն արդեն փայլատակել էր հանուր հայության շրջաններում, բազմաթիվ թարգմանություններով դարձել ֆրանսիացի, գերմանացի, առավել ևս թուրք ընթերցողի սեփականությունը: Կարճ տևեց նրա և բանտարկության, և ոչնչացման պրոցեսը: Անկարայի բերդում իր մահկանացուն կնքեց մեծ գրողն ու սկզբունքային քաղաքացին:

---

[1] *Միքայել Շամտանճյան,* Հայ մտքին հարկը եղեռնին, Յիսնամեակ (1915-1965), Անթիլիաս, 1965, էջ 70:

[2] *Ա. Ն. Մնացականյան,* Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1965, էջ 44-47:

1965 թ., Բեյրութի «Արարատ» օրաթերթում տպագրվել են որդու՝ *Վաղինակ Բյուրատի* վկայությունները հանճարեղ հոր՝ *Սմբատ Բյուրատի* կյանքի վերջին օրերի, բանտարկության, աքսորի և եղերական սպանության մասին:

Նա գրում է. «Հորս աքսորեցին մյուս մտավորականների հետ:

Ութ օր յետոյ, Մայիս 1-ին ստացայ առաջին բացիկը. հայրս գրում էր, թէ իրենք ութսունչորս հոգի են եւ գտնւում են Այաշ քաղաքի «Սարը Ղըշլա» կոչուող շէնքում: Երկրորդ բացիկում խօսքը Թալէաթ փաշային էր ուղղուած. «Փաշա, չէի կարծում, որ կեանքդ փրկողին դէպի մահ կ'ուղարկես: Սա ազնուութիւն չէ»: Այդ բացիկը մայրս տարաւ Թալէաթ փաշայի ապարանքը: Քիչ յետոյ գալիս է Թալէաթը: Նրա կինը խնդրում է, որ «Սըֆաթ» էֆէնտիին (Սմբատ) ազատի:

Թալէաթը պատասխանում է.

- Տիկին, ես չէի կարող էնվէր փաշայի հրամանին դիմադրել. գնա նրան աղաչիր:

Երբ խուզարկել էին հօրս բնակարանը, բոլոր ձեռագրերը պարկի մէջ լցնելով, տարել էին քաղաքական բաժնի նկուղը: Տարիներ յետոյ, 1919 թ. գարնանը կաշառեցի քաղաքական բաժանմունքի մի կոմիսարը, գնացինք այդ նկուղը: Երկար պրպտումից յետոյ գտայ միայն հօրս «Բանաստեղծութիւններ»ի կազմած հատորը, նոյնպէս կազմած՝ «Լեռնականի մը Յուշատետրը»: Իսկ անկազմ տետրակներով՝ «Արշակ Երկրորդ» պատմական վէպը, «Լեռին Կոյսը» 1600 թուականի զէյթունցի Զարմոն հերոսուհու մասին և Իզմիրլեան Կաթողիկոսի մասին գրուած «Խուժանին Կուռքը», ուրիշ շատ ձեռագրերի հետ միասին վանտալները այրել էին:

Որոնումներիս ժամանակ հանդիպեցի Դանիէլ Վարուժանի կնոջը՝ Արաքսիին՝ որը նոյնպէս փնտռում էր Վարուժանի ձեռագրերը: Ի՜նչ մեծ բարեբախտութիւն, որ գտնուեց «Հացին Երգը»:

1919 թուականի Մարտի 27-ին Պոլսից Անգարայի ճամբով գնացի Այաշ: Գիւղաքաղաքը գրաւուած էր իտալացիների կողմից: Առաւօտեան գնացի այն շէնքը՝ ուր բնակուել էին աքսորականները: Պատերն ամբողջութեամբ ծածկուած էին մեր անմահ նահատակների գրութիւններով: Հօրս ձեռքով գրուած էր. *«Այո՛, վստահ եմ, որ մենք սպանուելու ենք. սակայն այս պատերազմի վախճանը յայտնի է, թուրքը շատ բան պիտի կորցնի, հայ ազգը չի մեռնելու, 1915 Օգոստոս 14»: Այաշ:*

Վաղինակ Բիւրատ»[1]:

Գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ, ուսուցիչ, մեջլիսի երեսփոխան *Ռուբեն Զարդարյանը* գնդակահարվեց *Եդեսիայի* քաղաքամուտքի մատույցներում: Դիակը թողնվեց անթաղ ու այլանդակված: Նրա հետ նույն բախտին արժանացավ դոկտոր *Նազարեթ Տաղավարյանը:*

Դասախոս *Ներսես Զաքարյանը,* որը պատգամավոր էր, ազգային կենտրոնի վարչության պետ, գնդակահարվեց Անկարայում: Նույն քաղաքի բերդում գնդակահարվեցին վիպագիր *Սմբատ Բյուրատը, Հովհաննես Գալածյանը,* բժիշկ *Խաչիկ Պարտիզպանյանը* և այլոք[2]:

Հայտնի փաստաբան *Բարսեղ Շահբազը* նահատակվեց Խարբերդի մոտակայքում, դեղագործներ *Գրիգոր Միսքճյանը* և *Հակոբ Թերզյանը* սպանվեցին Անկարայի բերդում: Նույն քաղաքի մատույցներում գնդակահարվեցին *Միհրան, Լևոն* և *Գևորգ Գայքճյան* վաճառական եղբայրները:

Բոլորին մեկ առ մեկ թվարկել անհնար է, որոշ իմաստով էլ անիմաստ: Ընդհանրացնելով կարելի է ամփոփել, որ թուրք ոճրագործները, առանց խղճի խայթի, միա-

---

[1] *Վաղինակ Բյուրատ,* Ընտիր էջեր. Երևան. 2002. էջ 100-101:

[2] *Ա. Ն. Մնացականյան,* նշված աշխատությունը. էջ 44-45:

ժամանակ, առանց խտրականության սպանեցին հայոց միտքը, այսինքն գրողին, բժշկին, փաստաբանին, լրագրողին, ուսուցչին, դերասանին, գիտնականին, օսմանյան պառլամենտի բոլոր հայ երեսփոխաններին, նույնիսկ գրավաճառներին ու դեղագործներին:

Դրանք բոլորը խաղաղ, ստեղծագործ, աշխատող, ավելի քան Թուրքիային ու թուրքերին ծառայող մտավորականներ էին: Նրանցից ոչ մեկը «ապստամբ» չի եղել, հակաթուրքական որևէ գործողություն չի ծավալել, ժողովրդին անհնազանդության կոչեր չի հղել: Որպես ընդհանրացում փաստարկենք, որ գնդակահարվածներից, սրակոտոր արվածներից, քարասպանության ենթարկվածներից ոչ ոքի համար ***դատ ու դատաստան չի եղել,*** որևէ փաստաթուղթ չի կազմվել, հետագայի համար պահվող արձանագրություն չի գրվել: Իթթիհատականներն առաջին իսկ գործողությունները ծավալելիս մտավախություն են ունեցել ապագայի դատ ու դատաստանից: Թերևս այդ էր պատճառը անհետք սպանությունների:

Նրանք դաժան դատաստան տեսան նաև հայ ազատամարտի ղեկավար, համազգային ճանաչում ստացած գործիչների հետ:

Երիտթուրքական եռապետությունը, հատկապես նրա ներքին գործոց նախարար ***Մեհմեդ Թալեաթը,*** դաժան դատաստան տեսավ իր երեկվա այն գաղափարակիցների հետ, որոնց ուսերին բարձրանալով, կատարեց պետական հեղաշրջում և քիչ անց, մայրաքաղաքից արտաքսեց Աբդուլ Համիդին: Հայ քաղաքական այդ գործիչների փաղանգի մեջ ուրույն աթոռ ուներ ***Համբարձում Պոյաջյանը՝ Մուրադը,*** որն իրավամբ վաստակեց ***Մեծ Մուրադ*** պատվանունը[1]:

Սփյուռքի մեր պատմաբանները, որոշ դեպքերում հայրենի հետազոտողները ևս, քննարկման նշանախեց դարձնելով հայ ազատագրական ոգորումները, չեն խնայում գրեթե ոչ ոքի և հետադարձ հայացքով, ուրանալով լավն ու ուսանելին, մերժողական կեցվածք են ընդունում: Դրա պատճառը մեկն է, հիմնականը, ***այսինքն՝ այդ շարժումից ելքն էր՝ պարտվելը:*** Թերևս այդ կճճռոտ, վիճահարույց խնդրի քննարկումը թողնելով հետագա աշխատությունների ընդարձակ էջերին այստեղ հատուկ շեշտենք, որ հայ ազատամարտն ունեցել է զմայլելի հերոսներ, որոնք իրենց կյանքը մինչև վերջ նվիրելով ժողովրդի ազատության սուրբ գործին, զոհվեցին, պարտադրելով զգուշությամբ վարվել իրենց հիշատակի հետ, անփութորեն չցավացնել ոչ իրենց և ոչ էլ նրանց, ովքեր կազմել են այդ հիասքանչ պլեադան: «Մեր Հեղափոխության պատմությունը,- գրում է Ա. Նագդաշյանը,- հարուստ է այդ անծնուրաց հերոսներով: Հայտնի, քէ անհայտ, անվանի, քէ անանուն հազարներով կը համըրվին անոնք որ հայկական ***աստվածատաճարային անմահ*** փառք կը ***կազմեն*** (ընդգծումները մերն են.- Հ. Ղ.)»[2]: «Ո՛չ, ի զուր տեղը չեն այնքան զոհեր մեծ գաղափարի մը համար: Նահատակներուն հոգիները կը սաւառնին ազգին բոլոր զաւակներուն վրայ:

Անոնց ներշնչումը, ոգեւորութիւնը ամէն հայու սրտի մէջ պիտի ապրի, եթէ մինչեւ իսկ մէկ հատիկ հայ մնայ այս աշխարհիս վրայ:

Յարգա՜նք, բիւր յարգա՜նք անոնց յիշատակին»[3]:

---

[1] Հայ ազատամարտի հորձանուտում առնականացել են երկու Մուրադներ: Այուսը՝ Մուրադ Սեբաստացին էր (1878-1918), որին ոչ միայն թուրքերը, այլև հայ պատմաբաններից շատերը շփոթում են իրար հետ, նույնիսկ չգիտեն, որ ***Մուրադները երկուսն են:*** Այդ իսկ պատճառով, Մեծ Մուրադի մասին քիչ-ինչ մանրամասնենք մեր ասելիքը:

[2] Տոքթ. ***Ա. Նագդաշյան,*** Հայ մտավորականներու ծերբակալությունը և Այաշի բանտը. Պեյրութ, 1969. էջ 61:

[3] Նույն տեղում. էջ 59-60:

Այդ հարգանքին առավել արժանի էին զույգ *Մուրադները,* հատկապես *Համբարձում Հակոբի Պոյաջյանը,* որը ծնվել էր 1860 թ. հունիսի 2-ին, Կիլիկիայի Հաճըն քաղաքում, համեստ արհեստավորի ընտանիքում[1]: Նա արդեն մեծ հեղինակությունից օգտվող ժիրայրի փոքր եղբայրն էր և հետո նրա ճանապարհով պիտի գնար դեպի թուրքական կախաղանասյունը:

Երիտասարդ Համբարձումը 1885 թ. փոխադրվում է մայրաքաղաք՝ նպատակ ունենալով «Միացյալ ընկերության» դպրոցն ավարտելուց հետո ընդունվել բժշկական համալսարան և ստանալ մասնագիտական կրթություն: Սակայն հաճընցու տարերքը բժիշկ դառնալը չէր: Նա երազում էր ընկղմվել հայ ազատամարտի հորձանուտի մեջ և պայքարել իր Հայրենիքի ազատագրման նշանաբանով:

Շուտով այդ առիթը ներկայանում է: Արդեն Հնչակյան կուսակցության Կ. Պոլսի մասնաճյուղի ղեկավար ընտրված Համբարձում Պոյաջյանը մասնակցում է Կ. Պոլսի 1890 թ. *Գում-Գափուի ցույցին,* ապա հեղափոխականի ընդհատակյա փորձ ունենալով, կարողանում է փրկվել բանտային կալանքից: Ահա թե ինչ է գրում Ա. Նագդաշյանը. «Նույն թվին (1890) խիստ կերպով խառն լինելով Կ. Պոլսի անմոռանալի ցոյցին մէջ, խուսափելու համար կառավարութիւնից որ նրան փնտռում էր, նա պահուեցաւ նոյնիսկ Կ. Պոլսում մի տան մէջ: Նրա պատկերը մեծադիր դիրքով նկարուած ու կախուած էր ոստիկանապետ Նազըմի ընդունարանում, ուր նա ցոյց էր տրւում ամէն ծերբակալուածի, թէ արդեօ՞ք չգիտէ ուր է, իսկ լուսանկարը բազմաթիւ օրինակներով բաժնուած էր ոստիկաններին եւ լրտեսներին: *Նրա գլուխը գնահատուած էր 2000 ոսկիի: Ու այդ սպիտակ տէրորի օրերին:*

«Պոյաճեան անխռով կերպով շարունակում էր կատարել իր գործերն ու պարտականութիւնները, ի հարկէ միշտ պահուած մնալով»:

«Հնչակ»-ը կը մոռնայ սակայն յիշել մանրամասնութիւն մը զոր Պ. Տամատեանէն քաղած եմ: Եթէ թուրք կառավարութիւնը այդքան սուղ կը գնահատէր Մուրատին գլուխը, պատճառն այն էր, որ 1890-ի պատմական այդ ցոյցին հոգին եւ կազմակերպիչը Մուրատն էր եղած Գում Գափուի Մայր Եկեղեցւոյ կամարներուն տակ:

Մուրատ կը յաջողի խուսափիլ թուրք կառավարութեան ճանկերէն եւ հասնիլ Ա-թէնք, յունական նաւով մը: Քէֆալոնցի տարագին մէջ ծպտուած եւ յօնքերը, արտեւանունքն ու մօրուքը ածիլուած:

Մուրատ ընդամենը հազիւ մէկուկէս տարի Թուրքիայէն դուրս կը մնայ: 1892-ի աշնան առանձին առաքելութիւնով մը Մշոյ շրջանը կ'ուղարկուի: Մեծ յեղափոխականին ճամփորդութիւնը ուղղակի առասպելական է: Անիկա Իսկէնտէրուն դուրս կուգայ եւ ոտքով կ'ուղեւորի դէպի Սասուն»[2]:

1894 թ. Մուրատը Սասունում էր և ղեկավարում էր հերոսական ինքնապաշտպանությունը, որտեղ երևաց նրա ոչ միայն աներեր կամքը, անձնազոհության աստիճանի հասած խիզախությունը, այլև *ռազմական տաղանդը:* Համիդի զորքերը մեծ զոհերի գնով, ի վերջո, հաղթանակ տարան և օգոստոսի վերջին շաբաթում ծերբակալեցին Համբարձում Պոյաջյանին, որին արդեն վերամկրտել էին *Մեծ Մուրադ:*

Դժոխային տանջանքների ենթարկելով՝ նրան սկզբում պահում են Դիարբեքիրի բանտում, ապա տեղափոխում Կ. Պոլսի բերդը, որը տանջարանի համբավ էր ձեռք բերել: 1895 թ. Մուրադին աքսորում են Լիբիա՝ սկզբում *Բենգազի,* ապա *Տրիպոլի:* Անտանելի շոգ, ջրազուրկ, ավազապատ այդ երկիրը կալանավորների գերեզմանոցն էր: Շնորհիվ իր պնդակազմության՝ Մուրադը ոչ միայն կարողանում է այնտեղ

[1] ՀՍՀ, հ. 9, Երևան, 1983, էջ 376:

[2] *Ա. Նագդաշյան,* նշված աշխատությունը, էջ 61:

ապրել, այլև քրոջ ու հնչակյանների օգնությամբ փախցվում է սկզբում Եգիպտոս, քիչ հետո նաև *Ֆրանսիա և Ամերիկա:* Մեծ հեղափոխականն արդեն 45 տարեկան էր և արտասահմանյան հայության կողմից ընդունվում էր իբրև ազգության փրկիչ, ազատարար:

Երիտթուրքերի հեղաշրջումն առիթ դարձավ, որ արևմտահայ բարեկամները Մուրադին ընտրեին օսմանյան պառլամենտի անդամ և նրա համար հնարավորություն ստեղծեին վերադառնալու Ստամբուլ: Կարճ եղավ նրա ազատությունը Թուրքիայում: Երդմնազանց Թալեաթը 90-ականներին հավաքած թույնի մաղձը, այժմ հարմար առիթով թափեց Մուրադի գլխին, նրան զրկեց մայրաքաղաքում ապրելու իրավունքից և աքսորեց *Կեսարիա,* որպեսզի հարմար պահին վերջապես կարողանար ազատվել «վտանգավոր այդ մարդուց»:

Ավելորդ էպիտետներից խուսափելու, մեծ ազատամարտիկի կյանքի վերջին օրերի պատմությունը հարազատորեն ներկայացնելու նպատակով վկայակոչենք նրա «բանտակից ընկեր» *Սեդրակ Գարակեոզյանի* ընդարձակ, վավերական հուշագրությունը:

«Յիշատակ մը Մուրատի վերջին օրերէն» խորագիրը կրող նրա հուշագրությունում կարդում ենք. «Կեսարիան իր ամբողջ շրջակայքով արյուն կուլար 1915-ի տարեշրջանին: Օրուան կառավարութիւնը Հայերու ազգային և ընկերական կեանքը քանդելու համար ո՛չ մէկ միջոց կը խնայէր. յերիւրածոյ ապստամբութեան պատրուակին տակ, առանց խտրութեան բոլոր Հայերը, կուսակցական եւ ոչ-կուսակցական կ'առաջնորդուէին բանտ: Ոստիկանութեան ցանց մը քաղաքը եւ գիւղերը պաշարած, տղամարդիկը կ'ուղարկէր կեդրոնը, ուր բացուած էր արդէն մեծ «հաւատաքննութեան ատեանը» պատժելու համար ապստամբները: Հեռաւոր քաղաքներէն կը բերուէին կասկածելի անհատներ - բանակ ղրկուած սպաներ, բժիշկներ - պատերազմական ատեանի բովէն անցնելու եւ աւելի մահուան գիրկը նետուելու համար:

Եօթը երկար ամիսներ, այս շրջանի խեղճ Հայերը մահ փնտռած են. բզքտուած ոտքերու, ջախջախուած գանկերու վիրակապերու լուացքը ըրած են խեղճ հայ մայրերը, արցունքոտ աչքերով եւ ցաւոտ կուրծքով, եւ գիշերուան խոր լռութեան մէջ, հեռուէն, բանտի խորքէն հասած իրենց զաւկին, եղբօր եւ ամուսնոյն հսկայ գաւազաններու հարուածներու տակ գալարուն, աղեկտուր լաց ու վայնասունները ապրած են երկար չլուսցող գիշերներով, իսկ լուսաբացին բանտէն վերադարձած անկողինները եւ լաթերու արիւնոտ լուացքը կը սկսէր, այսպէս շարունակ օրեր եւ ամիսներ կ'ապրէին անոնք, իրենց տղամարդերու տանջալիր Գողգոթան:

Ձէքին Տէր Զօրի կառավարիչը, նոր դարու Լենկթիմուրը, այդ տարին ամբողջ մեր շրջանը սարսափեցուցած էր, «հայ արիւն», «հայ միտք», «հայ մտածում» բոլորը պիտի փճացնէր, որովհետեւ անոր համար ծնած էր եւ իր կեանքի դերը այդ էր. եթէ գիտնար, որ իր երակներուն մէջէն կաթիլ մը գութի արիւն կը հոսէր, առանց վարանման պիտի խլէր այդ երակը իրմէ եւ նետէր շուներուն, իր դիւային քրքիջով շարունակ այդ բանը կը կրկնէր, երբ որեւէ հայ անհատ իր սիրելիի չարչարանքին ականատես խնդրանք մը կամ գութ կը հայցէր իրմէ:

Այդ մարդ-գազանը կանգ առաւ օր մը, անունի մը առջեւ տեղւոյս կազմակերպութեան տետրակին մէջ նշանակուած «Մուրատ». անմիջապէս կը հեռագրէ եւ կը պահանջէ զայն ներքին գործոց նախարարութենէն. չափազանց միամիտ էինք եւ չէինք հաւատար, որ «Մուրատ»ը պիտի յանձնէին անոր ծեռքը, բայց արդէն գիշերուան ուշ ժամերուն կը լսուէր բանտի դրան դղրդագին բացումը եւ հազարէ աւելի բանտարկեալներ, տժգոյն դէմքով բայց կորովի նայուածքով «Մուրատը» իրենց մէջ ունէին. ան խոշտանգուած էր այն գիշեր, զգայացունց եւ դժնդակ միջոցներով, այդ օրուան

հարցաքննութեան ղեկավարողն էր Ձէքին իր համախոհ արբանեակներով, մասնաւորապէս չէր մեկնած իր պաշտօնատեղին էվէրէկ եւ մնացած էր Կեսարիա: *Հինգ հարիւր գաւազանի հարուածներու տակ, չէր արտասանած ոչ մէկ բառ. առաջին հարցումին թէ գաղտնիքները պէտք է ըսուին, ան պատասխանած էր. «Ես արդէն պէտք եղածը ըսած եմ Ներքին Գործոց Նախարարութեան». պէտք էր այդ դիմադրող եւ գաղտնիք պահող ուժը ճղակտոր ընել. հրէշային ճիգեր ըրած են* բոլորը, գոնէ աւելի բառ մը խլելու համար անոր բերնէն, բայց «Մուրատ» զգայազիրկ ինկած էր հարուածներու ուժգնութենէն եւ ուզած են վերակենդանացնել զայն: Բռնակալին արժանապատուութիւնը չէր բաղխած այսքան ուժգին ընդդիմութեան, եւ ան կատաղութենէն դռներու եւ պատուհաններու ապակիները կը կոտրէ ինքզինքը ամէն ուժէ գերիվեր նկատողը, պարտուած էր այս սպիտակահեր յեղափոխականին առջեւ: Նոյն գիշեր տասնեակներով օղիի եւ շամբանեայի շիշեր պարպուած էին, որպէսզի ամբողջովին բիրտ ուժի վերածուած ու շղթայազերծ բնազդով կարենային ընել ամէն բան, ամէն սարսափ պարտութեան մատնելու համար այս «Հայ»ը: Բայց, ան «Մուրատ» մնաց անպարտելի եւ հարուածները փշրուեցան անոր զօրաւոր եւ փառայեղ կամքին առջեւ: Բզքտուած էին անոր ոտքերը, պատռուած էր գանկը, բայց յեղափոխական մարդուն կրանիթեայ ընդդիմութեան առջեւ, արբած խելագարութիւնը եւ վայրենի բնազդը կքած, պարտուած եւ ծեռընթափ եղած էին: Ահա այդ գիշեր էր, որ զայն կը ղրկեին բանտ, մեզ մօտ եւ կը լսէինք նոյնիսկ բանտապահներու հիացումի փսփսուքները անոր հուժկու դիմադրութեան եւ տոկունութեան մասին:

Արդէն փոխադրուած էր բանտի հիւանդանոցը, ուր կազմակերպած էին հայ բանտարկուած բժիշկներ, խոշտանգումներէն վիրաւորներու դարմանումին համար: Այդ օրը աղետալի օր մը դարձաւ մեզի համար, այլեւս ըմբռնած էինք մեզի սպառնացող վտանգին ահաւորութիւնը, կորսուած էինք եւ մեր փրկութիւնը կապուած էր աքսորի ճամբուն եւ կախաղանի փայտին հետ:

Մուրատ հոն է, հիւանդներուն հետ, իր ոտքերուն մատները բզքտուած են, հաշմանդամ եղած անկողին ինկած էր, բայց իրմէ աւելի կը մտածէ իր շուրջի երիտասարդ եւ պատանիներու վրայ, կ'ուզէր միևնակ ինք դառնալ այդ բոլորի ներկայացուցիչը, մեռնիլ անոնց համար, միայն թէ փրկուին անոնք, ինչո՞ւ այդ անմեղ եւ դեռահաս կտրիճները ենթարկուէին միեւնոյն տառապանքներուն, եւ որպէսզի իր շուրջիններուն հանգիստը չխանգարէ, *չարտաբերեց ոչ մէկ հառաչանք երբ երկու բժիշկներ կը կտրէին անոր ոտքին բթամատը: Այդ վայրկեանին մենք մեր ցաւն ու վէրքը մոռցած, ապրեցանք անոր զսպուած առիւծի տառապանքը:*

Ծեծի եւ տանջանքի շրջանէն ետք, սկսաւ պատերազմական ատեանի գործունէութիւնը, բանտարկեալները խումբ-խումբ կը ներկայանային անոր առջեւ, տասնեակներ կը դատապարտուէին մէկ օրուայ մէջ, կախաղանը արդէն սկսած էր հնծել մաս առ մաս մեր լաւագոյն ուժերը, բաւական ուշացած էին երկրորդ խմբակի վճիռները եւ բանտը երեւութապէս խաղաղած էր կարծես, գիշերային հարցաքննութիւնները եւ խոշտանգումները վերջացած ըլլալով, քովէ քով կուգայինք, գիրար կը քաջալերէինք եւ կը կազմէինք պզտիկ խմբակներ ուր կ'երգուէին «Պարզիր Աղբիւր»ի նման աւուր պատշաճի երգեր: Մուրատը ամենուս մօտ էր, իր դիմագծերէն, նայուածքներէն կ'ուզէինք ներշնչումներ ունենալ, անոր անվհատ կեանքի եւ մահուան նոյն ձեւով նայող երեւոյթէն եւ յայտնած քաջալերող խօսքերէն, մեր մէջ կը ստեղծուէին մահը դիմաւորելու կարելիութիւններ ու գալիք նոր օրերու հաւատքը եւ մեծ ազատագրութեան օրը, իսկ եթէ մենք չկարողանայինք տեսնել, մեր վաղուան սերունդին ճամբան գոնէ մասամբ մը կը հարթէին մեր տանջանքներն ու զոհողութիւնները:

Մուքը երբ կոխէր, բանտի բնակչութիւնը քնանալէ առաջ կը համախմբուէր իրիկնամուտի ժամերգութիւնը կատարելու: Կղերը, բժիշկը, հաւատաւորն ու անհաւատը հոն էին մէկ շունչով եւ յուզումով «անծանօթ»ին գերբնական միջամտութիւնը հայցելու, իրենց սրտառուչ «եկեսցէ»ովը. հոն էր Մուրատ, բարի հաւատաւոր յեղափոխականը, նոյնացած էր իր ժողովուրդի տանջանքի, փոթորկումներուն, անոր աղօթքներուն եւ մրմունջներուն հետ. ան գոհ էր կեանքի այս ծեւէն եւ կը բաժնէր գոնէ իր պաշտած ժողովուրդին մարտիրոսութեան վերջին գալարումները:

Բանտը ամբողջ խաղաղ քունի մէջ էր 1915 Յուլիս 24-ի գիշերը: Առտուան ժամը վեցն էր, երբ զինուորական խումբի մը համաչափ քալուածքը կանգ առաւ բանտի դրան առջեւ, դուռը բացուեցաւ եւ բանտապահը ներս առաջնորդեց ոստիկանները, նախապատրաստուած անուններու անկողիններուն մօտ... ընդհանուր սարսափ եւ սահմռկեցուցիչ լռութիւն տիրեց ամէն անկիւն: Շունչերնիս բռնուած, իւրաքանչիւրս կը սպասէր իր կարգին. այդ գիշեր 8 երիտասարդներ բաժնեցին մեր գրկէն եւ տարին դէպի կախաղան: *Մուրատ հետեւեալ օրը, բոլոր գացող երիտասարդներու պարագաներուն կ'այցելէր եւ իր մխիթարանքի խօսքը կը բաշխէր: Անոնց մահը կը նկատէր անմահութիւն, կը շեշտէր իւրաքանչիւրին ինկած ճամբուն գեղեցկութիւնը, ինչքան հանդարտ եւ բնական էր իր արտայայտութեան մէջ, կարծես թէ յուզում եւ յուսահատութիւն ըսուած բանը չկար իր ճակտին վրայ, ան հաշտուած էր իր կարգին այդ սեղանին վրայ ողջակիզուելու հոյակապ մտքին հետ: 24 ժամ չանցած, Յուլիս 24–ի գիշերը, ժամը 2-ին, բանտի կիսամութին մէջէն երկու ստուերներ կը շարժէին եւ կ'արթնցնէին Մուրատը.* ան ցատկեց անկողնէն ու կը քալէր անոնց հետ ժպտուն եւ բոլորովին անտարբեր. անոր հասակը աւելի շեշտուած, քայլերը աւելի ուժգին էին: Այդ օր, իր երիտասարդութիւնը կ'ապրէր, Սասունի լեռներուն վրայ կռուող հերոս Մուրատն էր որ կը քալէր մութին մէջէն եւ կը գծէր մեր առաջ այդ լուսաշաւիղ ճանապարհը, որ փշոտ եւ դժուարանցանելի էր մեզի համար. մեր սրտերը պիտի պայթէին կարծես, երբ կը մտածէինք այդ գահավէժ անդունդի մօտիկութեան: Այդ գիշեր ան հարթեց մեր ուղին, գնաց հոն, կախաղանի սիւնին առջեւ ծնկաչոք աղօթեց - ականատեսները կը պատմեն այս բոլորը - ըսելով *«Տէ՛ր, ներէ՛ ասոնց, որովհետեւ չեն գիտեր թէ ինչ կը գործեն»: Վայրագ ամբոխը մագլցած տանիքներու եւ սիւներու վրայ, պատկառանքով դիտած է այս մարդուն մահուան հանդէպ ցոյց տուած հեզահամբոյր եւ հերոսական կեցուածքը:*

Մեր յեղափոխական պատմութեան մէջ քալեց ան անսայթաք իր սիրած ժողովուրդին հետ, պաշտպանեց անոր Դատը հերոսական պայքարներով, ան չմոլորուեցաւ փառքի եւ պատուանշաններու խափուսիկ երեւոյթներէն, այլ հաւատքը կուրծքին, ժպիտը ճակտին, քալեց խիզախ ու անվեհեր:

Այն աղէտալի Յուլիս 24-ի գիշերէն ետք, աշխարհի չորս հովերուն ցանցնուեցաւ անոր աճիւնները, նոր սերունդը պիտի չկրնայ հետքը գտնել այդ փոշիներուն, բայց անոր յեղափոխական գործունէութեան աննման խոյանքները, մեր Ազատութեան Դատին հանդէպ ունեցած ուխտաւորի կեցուածքը, մեզ կը թելադրեն ուղղուիլ դէպի իր նախասիրած «Անկախ Հայրենիք»ի նպատակակէտին: Միայն այս ուղղութեամբ է որ կրնանք իր յիշատակը յարգած ըլլալ. ահա այն ատեն Մուրատի ծափ եւ փառք չսիրող հոգին պիտի ստանայ իր վերջնական գոհացումը»[1]:

Վ. Կեսարացին ևս դեպքերին ականատես է եղել և Մուրադի բանտային օրերի ու կրած ֆիզիկական տանջանքների մասին գրել է. «... Պատերազմական ատյանը տեն-

[1] *Ա. Նագդաշյան,* Հայ մտավորականներու ծերբակալությունը և Այաշի բանտը. Պեյրութ, 1969, էջ 72-77:

դագին աշխատանքի լծուած էր բոլոր թղթածրարները քննելու եւ ամբաստանեալները հարցաքննութեան ենթարկելու համար: Էվէրէկի, Կեսարիոյ եւ շրջակայից հարիւրաւոր բանտարկեալներէն զատ, ձերբակալեալ վիճակի մէջ քաղաք բերուած էին նշանաւոր հնչակեան յեղափոխական եւ Սիսի երեսփոխան *Համբարձում Պոյաճեանը (Մուրատ)*, Հաճընի բարձրագոյն վարժարանի տնօրէն Վահան Ամատունին եւ ուրիշներ: *Մուրատը չարչարեցին ամենավայրագ միջոցներով, նոյնիսկ ոտքին գամ գամեցին, բայց այդ հրաշք մարդը մինչեւ վերջին վայրկեան ստոյիկեան կեցուածքով մը տոկաց այդ բոլորին եւ միշտ բարձր պահեց արժանաւոր յեղափոխականի մը արժանապատուութիւնն ու մեծութիւնը:* Բոլոր բանտարկեալները, մեծով պզտիկով, Մուրատով մխիթարուեցան, անոր հայ ժողովուրդի մեծութեան, անոր ապագային նկատմամբ սնուցած կուռ հաւատքով եւ լաւատեսութեան ջերմ շունչով հաղորդուեցան»[1]:

Համբարձում Պոյաջեանի՝ Մեծ Մուրադի հետ հաշվեհարդարի նստեց թուրքական բոլոր բորենիների մեջ ամենագազան *Ջեքի փաշան,* որը Հայոց գողգոթայի իրականացումը շարունակեց Միջագետքի անապատներում, հատկապես Ռաս-ուլ-Այնում:

Գերմանացի ականավոր լրագրող, փաստաբան, պատմաբան *Վոլֆգանգ Գուստը,* հենվելով ցեղասպանության ականատես, օտարերկրացի (այսինքն չեզոք) հուշագրողների ընծեռած փաստերի վրա, *Մեծ Մուրադին* կախաղան հանող Ջեքի փաշայի և Ռաս-ուլ-Այնի մահվան ճամբարի մասին հրապարակում է ցնցող փաստեր:

Նա բերում է, թե *«միայն մեկ շաբաթվա ընթացքում* Դեր էլ Զորի շրջակայքում սպանվել է *60 հազար հայ,* հաղորդել է ամերիկացի հյուպատոս Ջեսի Ջեքսոնը՝ 1918-ի մարտին իր կառավարությանն ուղղած ամփոփագրում, իսկ ընդհանուր առմամբ այնտեղ իրենց մահն են գտել ավելի քան *300 հազար հայ:*

Մահվան մեկ այլ ճամբար է եղել *Ռաս-ուլ-Այնը*՝ չեչենների միջագետքյան անապատային բնակատեղին, որը Բաղդադի երկաթուղու վերջին կայարանն էր: Երբ 1917-ի հունիսին գերմանացի Բրունո էքարտը, որպես Բաղդադի երկաթուղային վարչության ծառայող, այցելել է այդ «գեղատեսիլ օազիսը», տեսել է 14 հազար հայ, որոնց տեղ են հասցրել հետիոտն: Նա զրուցել է բզկտված հագուստներով կանանց, անլվա երեխաների թափառախմբի և երկու հայ բրուտի հետ, գետնափոր խրճիթում ապրող երկու արհեստավորը կենդանի են մնացել միայն նրա համար, որ «գիտեին տեղացիների համար խիստ անհրաժեշտ կուժ պատրաստել»:

Սկզբում կառավարիչը շինարարական ու այգեգործական աշխատանքներ է տվել, և շատ շուտով հայտնվել են ընդարձակ բանջարանոցներ, նույնիսկ մեծ իջևանատուն: Դրանից հետո հանձնարարել են կառուցել հիվանդանոց, որը չերքեզների խղճուկ, կավե հյուղակների կողքին պալատ է թվացել, թեև, ըստ էքարտի, չեչենները կառուցման պատիվը վերագրել են չերքեզներին: «Այնուամենայնիվ, երբ շինարարական աշխատանքները հասել են մինչև պատուհանների առաջին շարքը, հայերին 400-500 հոգանոց խմբերով *Ռաս-ուլ-Այնից* երկու ժամ դեպի արևելք են քշել ու կոտորել: Ջեքի բեյին թուրքական «Թասվիր էֆքիար» թերթի թղթակիցը հարցրել է, թե *«Ճի՞շտ է, որ 10 հազար հայ ես կոտորել»,* Ջեքին պատասխանել է. *«Ես պատվավոր մարդ եմ, տասը հազարը ինձ պատիվ չի բերում, մի քիչ ավելացրու»»»*[2]:

Ցինիկ և ինքնավստահ ինչպիսի անպատկառ մարդ կարող էր լինել Ջեքի հայասպանը, որի սպանած հայերի ցուցակումն էին Մեծ Մուրադն ու նրա բանտակից ըն-

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 349: *Ա. Կեսարացի,* «Կեսարիո և Հայոց շրջակայից արյան տուրքը Հայոց Մեծ եղեռնին»:

[2] *Վոլֆգանգ Գուստ,* Հայերի ցեղասպանությունը. Աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը. Երևան, 2002, էջ 50: Գերմաներենից թարգմանեց *Ռուզան Յորդանյանը,* առաջաբանը *Արմեն Զարյանի:*

կերները:

Անշուշտ ողբերգական էր Վանի երեսփոխան *Վռամյանի* ճակատագիրը, որի սպանության խնդիրը քննարկման նյութ դարձավ եղեռնի մեղավորների գործողությունները դատապարտող ատյանի 1918 թ. նոյեմբերի 18-ի նիստում: Այնտեղ հրապարակվում է Վռամյանի 1915 թ. հունվար ամսին հայ ժողովրդին արած պատգամի ընդարձակ տեքստից մի փոքր հատված, որը կասկած չի թողնում, թե ինքնապաշտպանությունից առաջ հայ էլիտան տրամադրված էր խաղաղ ելքով վճռել հարցերը, ***հնազանդության էր կոչել*** Վասպուրականի երիտասարդությանը: Ահա այդ պատգամից մի հատված, որը հրապարակել է անվանի պատմաբան ***Վահագն Տատրյանը:*** Վռամյանն ասել է, թե «Դուք կը խօսիք կառավարութեան դաւադրութեան մասին: Այո՛, ես գիտեմ, որ օր մը իմ դիակը փռուած պիտի մնայ... Գիտեմ, որ օր մըն ալ չի պիտի վերադառնամ ես ձեր քով: Գիտեմ որ քաղաքը պաշարուած է արդէն եւ օր մը թնդանօթներով հիմնայատակ պիտի քանդեն այս գեղեցիկ շէնքը, ուր հաւաքուած էք դուք ժողովի եւ պիտի կոտորեն ձեզ... Մենք չի պիտի սկսինք. մենք չի պիտի տանք ազդանշանը, ***որովհետեւ մենք ապստամբներ չենք եւ ապստամբութիւն մը ինքնին բաւական է՝ ամբողջ հայկական բարձրաւանդակը հսկայական գերեզմանոցի մը վերածելու:***

Եւ վերջապէս, մենք համոզուած ենք ձեզ հետ, որ հակառակ մեր բոլոր զիջումներուն, օր մը ահարկու փոթորիկը պիտի պայթի մեր գլխուն:

Այդ օրերը մօտեցած են... բայց մեր ամբողջ նպատակն է քիչ զոհերով ազատիլ այս վիթխարի հարուածէն:

Թո՛ղ Վռամեան մը չըլլայ, թո՛ղ Իշխան մը սպաննուի.... թող ամբողջ գաւառ մը նոյնիսկ հուրի եւ սուրի տակ ոչնչանայ ... բայց թող փրկուի մեծամասնութիւնը, թող կարենայ ճողոպրիլ հայութիւնը իբրեւ ազգային հաւաքականութիւն:

Միայն վերջին րոպէին, երբ այլեւս ոչ մէկ ճամբայ կը մնայ եւ թշնամիին սուրը կ'երկարի ամբողջ հայ ազգի պարանոցին առհասարակ, այն ատեն ոչ ոք պիտի մեղադրէ ձեզ, եթէ դուք եւս դիմէք ձեր առաջարկած ինքնապաշտպանութեան զէնքին եւ պաշտպանէք ինքզինքնիդ եւ ձեր ազգութիւնը»[1]:

Թեկուզև միայն այս տողերը կասկած չեն թողնում, որ Վասպուրականի հայության ինքնապաշտպանությունը պարտադրել են թուրքերը: Հետևաբար, սխալվում են այն թուրք պատմաբանները, ըստ որոնց կեղծիքի, եթե չլիներ Վանի հերոսամարտը, ապա չէր լինի նաև ցեղասպանություն: Այո՛, եթե հայ վասպուրականցին չպաշտպանվեր, ապա կոչնչացվեր ևս *200 հազար հայություն,* այնպես, ինչպես ***ուխտադրժորեն, բայց խիստ դաժանությամբ*** սպանվեց խաղաղության մարտակոչի կողմնակից Վռամյանը:

Այդ մասին շարադրանք է հրապարակում Վ. Տատրյանը, որին մենք ոչինչ ավելացնել չենք ուզում: Նա գրում է.

«Վանի երեսփոխան Վռամեան Ապրիլ 4/17-ին դաւադրաբար ձերբակալուեցաւ Վանի նահանգի կուսակալ Թահիր Ճէվտէթի կողմէ, որ պատերազմական նախարար Էնվերի քեռայրն էր, ամուսնացած ըլլալով այս վերջնոյն քրոջը հետ: Աւստրիոյ Զինուորական Լիազօրը Մարաջախտ Փոմիանքովսքի, որ մօտէն ծանօթ էր Վանի դէպքերու հոլովոյթին, իր յուշերուն մէջ Ճէվտէթը կը նկարագրէ իբրեւ «իսկական ծիւաղ մը՝ մարդկային կերպարանքով» (Ein wahres Ungeheuer in Menschengestalt). Joseph Pomiankowski, Der Zusammenbruch des Osmanischen Reiches, Վիէննա, 1928, վերատպուած 1969-ին, էջ 160: Վռամեան Ապրիլ 4/17-ի առաւօտուն Աւանց գիւղի նա-

[1] Պրոֆ. *Վահագն Տատրեան,* Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով. Պայքար. 1995, էջ 53:

ւահանգիստէն (Վանայ լիճ) 50 գաւառային ոստիկաններու ընկերակցութեամբ տարուեցաւ դէպի Պիթլիս: Ըստ Ամերիկեան Բարձր Հոգատար (High Commissioner) Lewis Heck-ի Իսթանպուլէն Ուաշինկթընն ուղարկած 21 Յունուար 1919 թուակիր տեղեկագրին, Վռամեան նետուած էր Պիթլիսի «սարսափելի զնտաններէն մէկուն մէջ, բոլորովին մերկ, իր մարմինը կը կրէր բազմաթիւ վէրքեր, աչքերը վտիտ եւ հիւանդագին, մօրուսը չափէն աւելի երկար: Ոչ միայն զրկուած էր սնունդէ, այլ գաւառային ոստիկանութեան զօրանոցի բակին մէջ ստացած էր 50 հարուած ծանր մէկ գաւազանով մը: Քիթէն եւ բերանէն արիւն կը հոսէր: Երկու շաբաթ յետոյ 50 գաւառային ոստիկաններու ընկերակցութեամբ, ձեռնակապ վիճակով, Վռամեան քշուեցաւ դէպի Արաբական Կամուրջ կիրճը, ճամբու ընթացքին շարունակ ենթարկուելով ծեծի»: U. S. National Archives. Record Groop 256. 867, 4016/3: Իր ձերբակալման եւ սպանութեան լուրերը արձանագրուած են Գերման պետական արխիւներու հետեւեալ թղթածրարներուն մէջ. *Գերմանական Արտ. Գործոց Նախարարութեան Արխիւ.* A. A. Botschaft Konstantinopel K 168, թիւ 9. (3224), փոխ հիւպատոս Scheubner Richter-ի էրզրումէն (Կարին) ուղարկած 15 Մայիս 1915 թուակիր տեղեկագիրը: Վռամեան վերջապէս սպաննուեցաւ Մուֆարկինի մօտ թակարդ լարած ջարդարար-աւազակներու կողմէ, Պաթման Սու կամուրջին մօտ, Պիթլիսէն Տիյարպէքիր փոխադրութեան ընթացքին»[1]:

Վռամյանի դաժան ճակատագրին քանի՞-քանի՞ հազարներ արժանացան:

2. Հայ վինվորների ոչնչացման սադիստական մեթոդները

Պատմագիտական աշխատությունները, առավել ևս պատմության դասագրքերը, սոսկ ընթերցանության առարկա չեն, այլև բազմիմաստ խորհրդատուներ՝ անցյալից դասեր առնելու առատաբուխ աղբյուր: *Ասում են՝ պատմությունը երբեմն կրկնվում է, բայց կրկնվում է այն պարագայում, երբ մարդկային հիշողությունը տկարանում է, համապատասխան դասեր չի քաղում անցյալից, քանզի պատմության և քաղաքականության տարբերությունը, որոշ իմաստով, նրանց ջրբաժան գիծն է միայն:*

Այդ բանաձևով ընդառաջվելով, հիտլերյան ֆաշիստներին նախորդող գերմանական յունկերները, հայասպանության պրոցեսում ոչ միայն «դասավանդում էին» իթթիհատական մարդագայլերին, այլև նրանց փորձը հետագայում հմտորեն փոխանցում ու վարպետացած կիրառում երկրորդ աշխարհամարտի տարիներին: Այստեղ, կոնկրետ, խոսքն առանձնապես վերաբերում է հանիրավի «ազգային դավաճանության» մեջ մեղադրվող զինվորների ոչնչացման հակամարդկային ձևերին և գազանային մեթոդներին:

Մենք աշխատության նախորդ բաժիններում նշել ենք, որ Առաջին աշխարհամարտի բռնկման իսկ ամիսներից, երիտթուրքերը բանակ զորակոչեցին շուրջ *երկու հարյուր հազար հայ երիտասարդների:* Շուտով, շատ շուտով բացահայտվեց, որ թուրքերը անբարեհույս համարելով հայ զինվորներին, նրանց կամ օգտագործեցին աշխատանքային գումարտակներում, կամ էլ ոչնչացրեցին զանգվածորեն: Պետությունը, հանիրավի, պատերազմ հայտարարեց սեփական քաղաքացիներին, հնազանդներից առավել հնազանդ, աշխատասեր ու արարող սեփական ժողովրդին:

[1] *Վահագն Տատրեան,* նշված աշխատությունը. էջ 96-97:

Բայց ինչպե՞ս, ի՞նչ մեթոդներով: Ահա այստեղ էր, որ ի հայտ եկավ թուրք մարդասպանների կատարած ոճրագործությունների աննախադեպ լինելը ոչ միայն նոր դարաշրջանում, այլև գրված ու չգրված համաշխարհային հանուր պատմության սևացած էջերում:

Իհարկե, դյուրին չէր 200 հազար առողջ, կենսունակ երիտասարդ մարդկանց միանգամից ոչնչացնելը, առանց միջազգային աղմկարարության, թերևս նրանց գերեզմանափոսեր լցնելը: Այդ էր պատճառը, որ թուրքերը, պատմության մեջ առաջին անգամ օգտագործեցին *բժշկական թույն, վակցինա՝* մարդկանց ոչնչացնելու նպատակով: Ահա վավերական վկայությունները...

1919 թ. վերջերին, Մուդրոսի զինադադարից, այսինքն՝ թուրք-գերմանական ալյանսի պարտությունից մի քանի ամիս անց, բուն Ստամբուլում, ֆրանսերենով լույս տեսան մեղադրական ակտի դեր ստացած աշխատություններ, որոնք զորեղ ապացույցներ են պարունակում թուրք բժիշկների՝ 1915-1916 թվականներին կատարած, բայց չտեսնված ու չլսված չարագործությունների մասին[1]: Այդ մարդախողխողների թվում էին ֆրանսիական բժշկական համալսարանների շրջանավարտներ, ***հիպոկրատյան երդմնատու դոկտոր Նազըմը, Բեհաեդդին Շաքիրը, «Թեշքիլաթի մախսուսա»*** կազմակերպության անդամ դարձած թուրք այլ բժիշկները, ըստ որում ատամնաբույժներ, վիրաբույժներ, թերապևտներ, դեղագործներ[2]:

Թուրք այդ բժիշկներն ամենից առաջ ***բծավոր տիֆի վիրուս էին պատվաստում հայ զինվորներին:*** «Մահվան դատապարտվածների վրա փորձեր դնելու» հրամանն ու թույլտվությունը գալիս էին երիտթուրքերի սանիտարական վարչությունից: Նրանք բժիշկներին ոչ միայն արտոնում, այլև խրախուսում էին՝ նախքան սպանելը, իբրև ճապագարներ, օգտագործել հայ զինվորներին՝ գիտաբժշկական փորձերի համար:

Վերլուծական շարադրանքը վերապահելով այլ էջերի՝ այստեղ մեջբերենք այն ***ընդարձակ քաղվածքները, որոնք վկայում են թուրք բժիշկների՝ հայ զինվորների վրա դրած գիտափորձերի մասին:*** Փաստաթղթերում ասված է, որ Հայաստանում փորձերին ծեռնամուխ եղան անհապաղ...

«Փորձի ենթարկվողների մեծ մասը մեռնում էր մի քանի օրից: Պատվաստումները շարունակվում էին մեծ ընդգրկումներով: Երիտասարդ, ամրակազմ հայ զինվորներին հավաքեցին աշխատանքային գումարտակներում և բռնությամբ պատվաստումներ արեցին նրանց: Կ. Պոլսի թերթերը մերթ ընդ մերթ խոսք էին բացում հրաշքի և գիտական մեծ հայտնագործության մասին: Շնորհավորական հեռագրեր էին ստացվում անվերջ:

Քաղաքական հանդեսներում և բժշկական տեղեկագրերում տպագրված հոդվածներում հաղորդվում էր, որ վիճակագրական տվյալները հիանալի են: Բայց այդ խանդավառությունը երկար չտևեց՝ աստիճանաբար փոխարինվելով հիասթափության ու բազմանշանակ լռության: Եթե մի քանի թուրք բժիշկներ իսկապես գիտական նպատակներ էին հետապնդում, ապա մյուսների համար տվյալ դեպքում դա «անցանկալի անձանց» ոչնչացնելու անվրեպ ու արագ միջոց էր:

Եվ իրոք, շշուկով հաղորդում էին փորձերի մանրամասները: Փորձի էին ենթակա ոչ թե ծովախոզուկներ կամ ճագարներ, այլ երիտասարդ, հիանալի մարմնակազմվածքով հայերը, որոնք ոչ մի հանցագործություն կամ զանցանք չէին կատարել: Այդ նոր տեսակի փորձակենդանիներին ներարկում էին տիֆավարակ սպիտակուցազերծված արյուն, որը եռացված չէր մինչև 56°,

[1] «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», Երևան, 1991, էջ 771: *Ռ. Գ. Սահակյանի* կազմած ծանոթագրությունները:

[2] «Les persécutions contre les médecins arméniens pendant la guerre générale en Turquie». Constantinople, 1919, p. 26-52:

հետևաբար և «ակտիվազերծված» չէր:

Այս տխուր փորձերն անցկացվել էին 1915-1916 թթ. Երզնկայում ախտաբանական կազմախոսության պրոֆեսոր Համդի բեյի և նրա օգնականների կողմից 3-րդ բանակային կորպուսի գլխավոր բժիշկ Թեֆիկ Սալիմի կարգադրությամբ:

Շատ քաղաքացիներ ու զինվորականներ, այդ թվում և հայ բժիշկներ էին ներկա լինում այդ հանրահայտ ներարկումներին, որոնց պատվաստանյութը, ինչպես հենց նոր նշեցինք, պատրաստված էր պարզունակ եղանակով և ամեն մի գիտական տեսության հակառակ:

Մենք մի կողմ ենք թողնում ինչպես փրկվածների, այնպես էլ այդ փորձերին ներկա եղած հայ բժիշկների վկայությունները, որպեսզի լսենք թուրք գործակիցների հայտարարությունները:

Ահա վիրաբույժ Հայդար Ջեմալի ստորագրությամբ բաց նամակը ներքին գործերի մինիստրին, որը տպագրված է «Turkdje Stambul» թերթում (23 դեկտեմբերի, 1918 թ., N 45):

«Ձերդ գերազանցություն, պարոն մինիստր:

Այն պահին, երբ պատրաստվում են քննել հայերի տեղահանության հարցը, ես նկատում եմ գլխավորապես գեներալ նահանգապետներին ու պետերին մեղադրելու միտում...

Իմ կողմից պատիվ ունեմ Ձերդ գերազանցությանը հաղորդելու գիտության անվան տակ կատարված վայրագությունների մասին...

1915 թվականին, դեկտեմբեր ամսին Երզնկայում 3-րդ բանակային կորպուսի գլխավոր բժիշկ Թևֆիկ Սալիմի կարգադրությամբ բծավոր տիֆով հիվանդներից վերցված արյունը առանց «ակտիվազերծման» օգտագործվել էր որպես պատվաստանյութ անմեղ հայերի վրա, որոնք դատապարտված էին աքսորման: Նման փորձերը սովորաբար դրվում էին որոշակի փորձակենդանիների վրա:

Այդ գործողությունների հետևանքով փորձի ենթարկվող անձանցից շատերը հիվանդանում էին ու մեռնում: Նախքան նրանց պատվաստումներ անելը նրանց խաբում էին, հայտարարելով, թե այդ պատվաստումներն արվում են որպես նախազգուշական միջոց բծավոր տիֆի դեմ:

Այդ փորձերի կազմակերպիչ *Համդի Սուադը*՝ օսմանյան բժշկական դպրոցի ախտաբանական կազմախոսության պրոֆեսորը, իր ուսումնասիրությունների արդյունքները տպագրելով «Gazette Médicale militaire de Constantinople»-ում, հայտարարել էր, թե դրանք կատարվել էին մահապարտների վրա, մինչդեռ Ձեր խոնարհ ծառան ականատես է և կարող է հաստատել, որ ***պրոֆեսորի մահաբեր գիտափորձերի օբյեկտները ոչ մի ուրիշ մեղք չունեին, բացի այն, որ հայ էին:*** Այդ փաստերը կարող են հաստատել Երզնկայի կենտրոնական հիվանդանոցի գլխավոր բժիշկ դոկտոր Ռեֆեթ բեյը, երկու հայ բժիշկներ, որոնք աշխատում էին նրա հետ, ինչպես նաև Երզնկայի կարմիր խաչի գլխավոր բժիշկ դոկտոր Սելահէդդին բեյը: Եվ այսպես, Ձեր խոնարհ ծառան հայտարարում է, որ քաղաքական հանցագործությունների հետ մեկտեղ կատարվել են նաև գիտական հանցագործություններ, որոնց մասին պատրաստ եմ տալու ցանկացած պարզաբանումները»:

Ահա մի ուրիշ նամակ, որը դոկտոր Սելահեդդինը հասցեագրել է ***«Turkdje Stambul» թուրքերեն թերթին*** և տպագրվել է այդ ***թերթի N 46-ում՝ 1918 թ. դեկտեմբերի 24-ին.*** «Վիրաբույժ Հայդար Ջեմալի կողմից ներքին գործերի մինիստրին հասցեագրված բաց նամակում երեկ ես հիշատակվել էի իբրև որոշ փաստերի անմիջական ականատես: Իրազեկ լինելով նրան, ինչ տեղի է ունեցել Երզնկայի կենտրոնական հիվանդանոցում, ես խղճիս պարտքն եմ համարում պարզաբանել այդ գործը...

1915 թ. այն հայերից շատերին, որոնք դժվարությամբ թաքնվել էին Երզնկայում, ընտրեցին և որպես ենթափորձայիններ տեղավորեցին քաղաքի կենտրոնական հիվանդանոցում, որպեսզի նրանց վրա մանրէաբանական փորձեր դնեն, որոնք սովորաբար դրվում էին ծովախոզուկների ու ճագարների վրա: Այդպես զոհվեցին շատ հայեր...»:

Ահա և երրորդ նամակը, որը նույն բժիշկը գրել է այդ նույն թեմայով, և որը տպագրվել է «Alemdar» թուրքերեն թերթի 1919 թ. հունվարի 8-ի համարում:

«Եթե ընդունենք, որ «Միության և առաջադիմության» կառավարությունը (ավելացրեք նաև Գերմանիան) երբեք նշանակություն չի տվել խղճին, բարոյականությանը, պատվին ու սրբագործված բոլոր սովորույթներին, ապա կարելի է դյուրությամբ հասկանալ այն առաջնորդող գաղափարը, որը նրան մղել է այնքան շատ տառապանքներ պատճառելու հայերին: Այն ժամանակ ոչ ոք հաշիվ չէր պահանջում կատարված վայրենությունների համար, և մարդիկ կարծում էին, թե այդ ամենը անպատիժ կմնա:

Հենց այդ մտայնությունն էլ մղեց բծավոր տիֆի պատվաստանյութի հետ կապված փորձեր իրականացնելուն Երզնկայում... Մեր հարուցած մեղադրանքները հաստատելու համար մենք բավականաչափ ապացույցներ ունենք: Հետաքրքրական է, որ արդեն եղած բազմաթիվ ելույթների պատճառով ես հրաժարվեցի հրապարակել տվյալ խնդրին վերաբերող որևէ բան, այն դեպքում, երբ տվյալ հարցում միանգամայն անձեռնհաս բժիշկներ մամուլում հանդես եկան հերքելով ճիշտ մեղադրանքները: Հենց դա էլ ինձ ստիպեց գրիչ վերցնել: Պետք է նկատի ունենալ, որ այդ մարդիկ, որոնք սիրում են իրենց ցույց տալ, դիմում են ամբոխին և ապավինում զարմանահարույց միջոցների:

Եթե այդ գործին ձեռնամուխ լինեն ձեռնհաս ու հեղինակավոր անձինք, ապա ճշմարտությունը երևան կհանվի: Այդ գործում էլ, ինչպես որ տեղահանության, ջարդերի ու կողոպուտների հարցում, կան մեղավորներ:

Մեր բժիշկները չպետք է տագնապի մատնվեն: Մեղավորները հայտնի են:

Եթե կա մեկը, որը ցանկանում է հովանավորել հանցագործներին, թող սպասի այնքան, մինչև որ նորից իշխանության գլուխ անցնի «Միություն և առաջադիմություն» կուսակցության կառավարությունը:

Ճշմարտությունը կպարզվի ոչ թե լրագրային հոդվածների հրապարակումով, այլ դատարանում»[1]:

Այսպիսով իրենց մարդկային կերպարանքը կորցրած բժիշկներ Նազըմի և Բեհաեդդին Շաքիրի նման ոճրագործները հայ զինվորների վրա նման մահաբեր փորձարկումներ կատարելուց բացի նույն եղանակով ոչնչացրել են նաև իրենց գործընկեր 221 հայ այն բժիշկներին, որոնցից շատերը ժամանակին եղել են իրենց իսկ ուսուցիչները:

Հայ զինվորների կոտորածի այրոցեսում թուրք մարդասպանների կիրառած սարսափելի մեթոդների մասին է խոսում Վոլֆգանգ Գուստը, իր աշխատության «Խնայել վառոդը. հայ զինվորների հետևողական բնաջնջումը» վերնագրված հատվածում: Նա բերում է փաստեր օտարերկրյա ականատեսների գրառումներից, ապա շարունակում.

«Հայ զինվորների ճակատագիրը պայմանավորվել է նաև այն բանով, թե որտեղ են ծառայել: Եթե հայերին տարել են Օսմանյան կայսրության արաբական գավառները, կենդանի մնալու հույս, թերևս, եղել է: Իսկ Անատոլիայում, սա արդեն վերաբերում է մեծամասնությանը, նրանց հետևողականորեն ոչնչացրել են:

[1] «Les persécutions contre les médecins arméniens pendant la guerre générale en Turquie». Constantinople, 1919, p. 7, 20-25: Տես նաև «Հայերի ցեղասպանությունը .». էջ 321-324:

Շվեդուհի քույր Թորա ֆոն Վեդել-Յարլսբերգը և գերմանացի քույր Եվա Էլվերսը, որոնք երկուսն էլ շատ լավ տիրապետել են թուրքերենին և աշխատել են գերմանական Կարմիր խաչի ընկերությունում, քանիցս ականատես են եղել, թե ինչպես 100 հայ նորակոչիկի քշել են դաշտ, սպանել: Կենտրոնական Անատոլիայի Սվազ քաղաքի միսիոներական հիվանդանոցում ավելի ուշ նրանք հանդիպել են «ծոծրակին ահավոր վերքով» մի փախստականի, որը նկարագրել է, որ իրեն և ուրիշ մոտ 95 ճանապարհաշինարարների շարք են կանգնեցրել, հետո տասը ժանդարմ կրակել են այնքան, ինչքան փամփուշտ են ունեցել: Մնացածներին սպանել են դանակներով ու քարերով:

Մի երիտասարդ թուրք սակրավոր Տրապիզոնի ամերիկյան հյուպատոս Օսկար Հայցերին պատմել է, որ իր զորամասի 180 հայերին տարել են ամայի մի տեղ: Քիչ անց լսել է հրացանի կրակոցներ, որից հետո իրեն հանձնարարել են լրիվ մերկ դիակները թաղել:

«Մենք արդեն իմացել էինք, որ տղամարդկանց ստիպում են ճանապարհ բացել,- հայտնել է անգլուհի Մ. Վ. Ֆրիերսընը Այնթապի (այժմ *Գազիանթեփ*) ամերիկյան որբանոցի տնօրենը,- աշխատանքը վերջացնելուն պես նրանց կանգնեցրել էին ճանապարհի երկայնքով և հիմնականում դաշույններով սպանել, որովհետև սպան զինվորներին հրամայել էր հայերի համար վառոդ չվատնել»: Հետևողականորեն կազմակերպված այդ նախճիրը շարունակվել է 1915-ի ամբողջ ամառը: «Ընդ որում, այդ նպատակով ավելի շատ դանակ էին օգտագործում,- հաստատել է նաև շվեյցարացի Յակոբ Քյունցլերը, որը Ուրֆայում ծերանոց էր բացել,- մի տեղ հայերին ստիպել էին շարքերով նետվել բարձր ժայռից, հետո հերթով դանակահարել էին»:

Կենդանի մնացածներից մեկը կարողացել էր փախչել, թաքնվել Ուրֆայի գերմանական գորգագործարանում: Նա գերմանական որբանոցի տնօրեն Բրունո Էքարտին պատմել է, որ իրենք թուրքերի և քրդերի հետ ճանապարհ են փորել քաղաքից երկու ժամ հեռու մի վայրում: Հետո սպան 50 հայերի առանձնացրել է իբր շտապ աշխատանքի համար, հեռացրել և պարաններով կապել, որ չփախչեն: Նրանց հասցրել են մի հովիտ, ուր սպան սպառնալից ճառ է արտասանել: «Կորչեն դավաճանները» խոսքերը հնչելուն պես ժանդարմները մեկը մյուսի հետևից գնդակահարել են բոլորին: Այդ հայն էլ է ընկել, բայց չի սպանվել: Ավելի ուշ եկել են քրդերը, զոհերի հագուստները թալանել: «Այսօր դեռ շատ քրիստոնյա շներ կբերեն,- ասել է քրդերի առաջնորդը,- մի վիճեք, մենք հարուստ ավար կունենանք»:

«Որոշ հայ զինվորների ստիպում էին մինչև գնդակահարվելը փորել իրենց գերեզմանները»,- հայտնել է Կոստանդնուպոլսում ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուն: Մյուսներին նետում էին անդնդախոր կիրճերը, որոնց մեջ լինում էին մարդիկ, որ կենդանի էին մնում (ըստ Քյունցլերի վկայության): «Մի քանի տարի անց,- շարունակել է շվեյցարացին,- գարնանային հեղեղները դաշտ քշեցին կմախքների դժգունած ու արևահար ոսկորներ, որոնք վկայում էին հայ զինվորների զանգվածային սպանությունների մասին»: Միայն թուրքական մի գեներալ 3-րդ բանակի հրամանատար *Վեհիբ փաշան* է պատժել մեղավորներին: Երբ նա իմացել է, որ իր զորամասի 2000 հայերի, որոնց ուղարկել է ճանապարհաշինարարության, գնդակահարել են քայլերթի ժամանակ, անտեսելով Թալեաթի վճռական բողոքները, պատասխանատու ոստիկանական երկու սպաների մահապատժի է ենթարկել[1]:

Ըընե Պինոն «Հայերի բնաջնջումը» գրքում, դեռևս 1916 թվականին հրապարակել է փաստեր հայ զինվորների ոչնչացման բարբարոսական մեթոդների մասին:

[1] *Վոլֆգանգ Գուստ*, նշված աշխատությունը. էջ 19-20:

Նա գրել է. «Ամենուրեք նկատվում է գրեթե միևնույն պատկերը: Նախ և առաջ *դա անզեն հայ զինվորների ջարդն էր նրանց զինված ընկերների կողմից. այդ դժբախտներին հարյուրներով, հազարներով տանում էին ամայի վայրեր և այնտեղ գնդակահարում: Նրանց, ում խնայել էին, ստիպում էին կատարել ամենածանր աշխատանքները, որից նրանք բոլորն էլ աստիճանաբար կործանվում էին:* Քաղաքներում և գյուղերում հրաման էր ստացվել տեղահանության մասին. սովորաբար ժամկետի ոչ մի հետաձգում չի ընձեռվում: Հայերը չեն կարող հետները վերցնել իրենց ունեցվածքը, այն վաճառվում է շատ հազվադեպ և էժան գնով: Ում էլ որ հաջողվում է վաճառքից որոշ գումար ստանալ, այն երկար չի մնում նրա մոտ: Զինվորները, թուրք ժանդարմները, քրդերը հարձակվում են խղճուկ սայլախմբերի վրա, ինչպես գայլերի ոհմակը իր զոհի վրա. նրանք թալանում են այն ամենը, ինչ թեկուզ որոշ արժեք է ներկայացնում: Ծերունիներին սպանում են, կամ էլ նրանք զոհվում են սովից ու հոգնատանջ լինելուց: Ջահել կանանց ու աղջիկներին բռնությամբ տանում են թուրքական հարեմները կամ էլ հանձնում զինվորներին, որ զվարճանան: Փոքրահասակ երեխաներին խլում են մայրերից և հանձնում մուսուլմաններին»[1]:

1915 թ. ապրիլի 10-ին Կ. Պոլսի ռուսական դեսպանության թարգմանիչ ***Սերաֆիմովը*** Պետերբուրգի կաբինետին 191-րդ ծեպագրով հաղորդում է. «Իշխանությունների շորթողականությունը ծայրահեղ չափերի է հասել: Քրիստոնյա, մանավանդ հայ, բնակչությունը ենթարկվում է ամեն կարգի հալածանքների, հաճախ էլ՝ խոշտանգումների: *Զինվորական ծառայության կանչելու պատրվակով բանտարկում են անխտիր բոլոր տարիքի մարդկանց՝ բռնելով փողոցից, եկեղեցիներից, խանութներից, տրամվայներից և այլուր, ժամանակ չտալով, որ ո՛չ իրենց գործերը կարգավորեն, ո՛չ հարազատներին նախազգուշացնեն:***

Հաճախացել են նաև մեր հպատակների անհիմն բանտարկությունները, որոնց հաճախ ոտքով արտաքսում են Փոքր Ասիա կամ ծերբակալում նետում են այստեղի բանտերը:

Շարադրված հանգամանքների կապակցությամբ դրությունն է՛լ ավելի տագնապալի է դառնում և բարելավում չի խոստանում, եթե միայն արտաքին հանգամանքները Դռանը չհամոզեն, որ իրեն անխուսափելի պատիժ է սպասվում»[2]:

1915 թ. մայիսի 14-ին Ամենայն Հայոց կաթողիկոս, վեհափառ հայրապետ Գևորգ V-ը Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովին նամակով հաղորդում էր. «Վերջին հավաստի տեղեկությունները ցույց են տալիս, որ Թուրքահայաստանի իմ հոտը փորձության սարսափելի օրեր է ապրում: Հայերի համար ամեն մի սուրբ բան՝ կրոն, սրբություններ և ընտանեկան պատիվ, վրդովեցուցիչ կերպով պղծվում են թուրքերի, ասկյարների և քրդերի կողմից, և նրանց ողջ ունեցվածքը հրի ու սրի ճարակ է դարձվում: Թուրքական ժանդարմները Վանի վիլայեթում զորակոչի անվան տակ կամ էլ իբրև թե հասարակական աշխատանքների համար հավաքում են հայ տղամարդկանց և հայրենի տեղերից հեռու տանելով՝ զանգվածաբար գնդակահարում, իսկ կանանց և երեխաներին՝ առևանգում...»[3]:

1915 թ. օգոստոսի 3-ին Ռուսաստանի կովկասյան բանակի շտաբի թարգմանիչ ***Մաքսիմովը,*** իր 108-րդ գրությամբ, բանակային կորպուսի պետին զեկուցում է.

«Այսօր իմ կողմից լրացուցիչ հարցաքննված է ռազմագերի Հուսեյն Սաբրին՝ հա-

---

[1] ***René Pinon.*** La suppression des Arméniens. Méthode allemande, travail turc. Paris, 1916, p. 27-29, 59-61: Տե՛ս նաև «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 538-539:

[2] **АВПРИ**, Политархив, дело 3804, л. 22-23.

[3] Նույն տեղում, գործ 3508, թերթ 16:

մահավաք կորպուսի շարժական հոսպիտալի ավագ գրագիրը: Երեք ամիս սրանից առաջ *Լիզում գտնվող Մուշի ժանդարմական գումարտակը հավաքեց բոլոր հայ տղամարդկանց՝ 10 տարեկանից վեր: Հավաքելով, այսպիսով, մոտ հարյուր հիսուն հոգի, տարան: Հաջորդ օրը բոլոր այդ հայերին մորթված գտան լեռան ստորոտում՝ Լիզից մոտ մեկ ժամվա ոտքի ճամփա հեռու: Նույնկերպ են վարվել շրջակա գյուղերի բոլոր հայերի հետ: Հայ տղամարդկանց տանելուց մի քանի օր հետո, Հուսեյն Սաբրին վկան է եղել զինվորների կողմից հայ աղջիկների բռնաբարությունների...»*[1]:

1915 թ. սեպտեմբերի 3-ին բժիշկ Ջավրիևը (Ջավարյան) Ռուսաստանի արտգործնախարար Սազոնովին մի ընդարձակ նամակով պատմում է Արևմտյան Հայաստանում տիրող անտանելի վիճակի մասին, հատուկ ընդգծելով, թե «1. Այս տարվա գարնան և ամռան ընթացքում թուրքական համարյա ամբողջ բանակում հատուկ հնարքներով, մասնակիորեն, *բայց անզիջում մորթոտվել են զորակոչված համարյա բոլոր հայերը: Այդկերպ սպանվել են մի քանի տասնյակ հազար տղամարդիկ՝ իրենց ծաղկուն տարիքում:*

2. Համարյա ամբողջ Կիլիկիայից, Զեյթունից ու Սվազից գլխովին արտաքսված է հայ բնակչությունը: Դրանից առանձնացվել է *առավել երիտասարդ տղամարդկանց մեծ մասը, որոնց քշել տարել են ինչ-որ տեղ:* Նրանց ճակատագրի մասին տեղեկություններ չկան, և նրանց, անկասկած, սպանել են: Մնացած բոլորը, առանց բացառության, ոտքով, առանց որևէ ունեցվածք վերցնելու, քշվել են Միջագետք: Կանանց ու երեխաների վիթխարի բազմություն կոտորվել է հյուծումից, ջրամույն եղել գետերն անցնելիս և մեռել քաղցից ու ծարավից: Հետ մնացողներին անգթորեն սպանել են: Ջահել աղջիկներին ջոկել տարել են: Միջագետքում ուզում են նրանց իբրև թե տարաբնակեցնել քոչվորների մեջ:

Նրանց խիստ մեծ մասն արդեն իսլամ է ընդունել»[2]:

1915 թ. հունիսին, երզրումի հայերի կոտորածի, հատկապես հայ զինվորների ոչնչացման դաժան պրոցեսի մասին, պարսիկ ուղտապան Քերպելա Ալի Սեհմեդը պատմել է. «Ես ռազմամթերք կը փոխադրեի Երզնկայեն Կարին: Մի անգամ 1915 հունիսի մեջ, երբ եկա Խոթուրի կամուրջին մոտ, մի ահռելի տեսարան ներկայացավ իմ աչքերուս: Անթիվ-անհամար մարդու դիակներ մեծ կամուրջին 12 կամարները լեցուցած էին, դեմ էին առած, և ջուրը իր ընթացքը փոխած կամուրջեն անդին կը վազեր: Սոսկալի էր տեսնիլը, երկար սպասեցի քարավանովս, մինչև որ այդ դիակները քշվեցան և կարողացա կամուրջեն անցնիլ: Սակայն կամուրջեն մինչև ճիհիս ամբողջ ճանապարհը լեցուն էր դիակներով, ծերեր, կիներ, երեխաներ արդեն հոտած, նեխված և ուռած: Այնպիսի մեծ գարշահոտություն կար, որ անցնիլ այդ ճանապարհով անհնար էր: Իմ երկու ուղտապաններս արդեն հոտեն հիվանդանալով մեռան, և ես ստիպվեցա ճանապարհս փոխել: Անլուր և զարհուրելի ոճրագործության զոհեր և հետքեր էին ասոնք: Իսկ բոլոր դիակները հայեր, թշվառ հայեր էին»[3]:

1915 թ. հոկտեմբերի 15-ին արևմտահայոց պատրիարք *Զավեն* արքեպիսկոպոս *Եղիայանը Պողոս Նուբար* փաշային գրել է. «Ինչ վերաբերում է կանանց վիճակին, ապա այդ մասին մենք արդեն ասել ենք բավականին մանրամասնորեն: Մարդկային կյանքն այստեղ ընդհանրապես մի գրոշի արժեք չունի:

Նույն բախտին են արժանացել նաև հայ զինվորները: Նրանք բոլորը զինաթափվել

---

[1] **АВПРИ**, Политархив, дело 3504, л. 43-44.

[2] Նույն տեղում, գործ 3479, թերթ 12-20. Այս վավերագրերի մի մասը հրատարակել է *Մ. Գ. Ներսիսյանը:* Տես նրա խմբագրած «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 364-365:

[3] Հայաստանի Հանրապետության ՊՊԿԱ, ֆոնդ 57, ցուցակ 5, գործ 106, թերթ 18-19:

են և հիմա աշխատում են ճանապարհաշինության մեջ: Վստահության արժանի աղբյուրներից մեզ հայտնի է, որ Էրզրումի նահանգից զորակոչված հայ զինվորները, որոնք աշխատելիս են եղել *Էրզրում-Երզնկա ճանապարհի վրա, բոլորն սպանվել են: Դիարբեքիրի նահանգից զորակոչվածները սպանվել են Դիարբեքիր-Ուրֆա և Դիարբեքիր-Խարբերդ ճանապարհներին: Միայն Խարբերդից 1800 զինվորներ՝ հայ պատանիներ են ուղարկվել Դիարբեքիր աշխատելու: Նրանք բոլորն սպանվել են Արղանայի շրջակայքում: Մենք տեղեկություններ չունենք այլ շրջաններից, բայց անկասկած է, որ այնտեղ էլ զինվորներին նույն բախտն է վիճակվել »*[1]:

Գերմանացի ականավոր մտավորական, հայ ժողովրդի մեծ բարեկամ, դոկտոր *Յոհաննես Լեփսիուսը* 1916 թվականին, հայերի զինվորագրության և զինվորների ոչնչացման մասին հրապարակում է ներքոհիշյալ ընդհանրական պատկերը: Ականատեսն ու անկողմնակալ դիտորդը, սրտի մեծ ցավով գրում է. «Միջոցառումների երկրորդ էտապը, որ նախորդել է համընդհանուր տարագրությանը, վերաբերում է բնակչության արական մասին, որը բանակ էր կանչվել կամ արդեն այնտեղ ծառայում էր այս իրադարձությունների ժամանակ: Զինվորական ծառայության մեջ գտնվող հայերը, որոնք ռազմական մինիստրի վկայությամբ քաջաբար մարտնչում էին ոչ միայն Դարդանելում, այլև Կովկասյան ճակատում Ռուսաստանի դեմ, մեծ մասամբ զինաթափվել են և օգտագործվել բանակի կարիքների համար որպես *բեռնակիրներ կամ ճանապարհների վերականգնման վրա աշխատողներ:* Համարյա բոլոր գավառներից լուրեր են ստացվել, որ ոչ միայն հարկադիր աշխատանքի մեջ գտնվող հայերն են տարվել խուլ տեղեր և սպանվել իրենց ընկեր-մուսուլմանների ձեռքով, այլև *ամբողջ խմբեր՝ 80, 100 և ավելի մարդուց բաղկացած, գնդակահարվում էին զինվորների ու զինվորական ժանդարմերիայի ձեռքով՝ իրենց սպաների հրամանի համաձայն:* Հավանաբար երբեք, համեմայն դեպս մինչև պատերազմի ավարտը, չի պարզվի, թե ինչ չափեր էր ընդունել բանակ զորակոչված հայերի սպանությունը:

Զինվորական պարիակ կատարելու պատրվակով շատ քաղաքներում ու գյուղերում *16-70 տարեկան տղամարդկանց, չնայած այն բանին, որ նրանք բանակում ծառայելուց ազատվելու համար հարկ էին վճարել կամ պիտանի չէին բանակում ծառայելու, շարասյուներով տարել են լեռները և գնդակահարել առանց նախնական որևէ քննության,* ինչն ի միջի այլոց, ոչ ժամանակը, ոչ հանգամանքները թույլ չէին տալիս կատարելու...»[2]:

Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանը, 1915 թ. ապրիլից սկսած, իր գրություների տակ արդեն ստորագրում էր *«նահատակ բրքահայության վշտակիր պատրիարք»* ինքնակոչումով, որը բողոքի յուրահատուկ ակցիա էր ուղղված իթթիհատականների դեմ: Նա իր հուշերում բերում է բազմաթիվ բողոքագրեր, որոնք ստացել էր Հայաստանի հոգևոր թեմերի առաջնորդներից, և որոնք վավերական վկայություններ են *զորահավաքի պրոցեսի,* հայերի նկատմամբ ցուցաբերած անմարդկային, բարբարոսական վերաբերմունքի մասին: Դրանցից մեկը գրված էր 1915 թ. հուլիսի 13-ին և բովանդակում էր ազգի ընդհանուր ողբերգությունը, մասնավորապես զորահավաքի մանրամասները:

Այդ նամակով հաղորդվում էր, որ «Մայիսի 25էն ի վեր դէպքերը գահավիժօրէն իրար յաջորդեցին և Ազգին վիճակը իր դառնագոյն և թշուառագոյն աստիճանին հասաւ: Մինչ այն օրը միայն Կիլիկիոյ քանի մը քաղաքներու և գիւղերու ժողովրդեան բռնի

[1] **АВПРИ,** Посольство в Константинополе, дело 3504, лл. 99-100.

[2] ***Dr. Johannes Lepsius.*** Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei. Potsdam, 1916, S. 3-4, 21-23.

տարագրումը գիտէինք, իսկ Կարնոյ մասին շշուկներ միայն հասած էին մեզի. այսօր ստուգապէս գիտենք, թէ Կիլիկիոյ բոլոր քաղաքներու և գիւղերու հայ ժողովուրդը ամբողջովին արդէն տեղահան եղած է և Հալէպի հարաւային անապատները քշուած: Կարնոյ ժողովուրդը Մայիս մէկէն ի վեր և ապա ամբողջ նահանգը, հետզհետէ ճամբայ հանուած են Սամսոնէն ու Կեսարիայէն սկսեալ մինչեւ Տիգրանակերտ և Եդեսիա մէջն ըլլալով: Տրապիզոնի, Սեբաստիոյ, Խարբերդի, Բաղէշի, Վանայ և Տիգրանակերտի ամբողջ Հայութիւնը, մեծէն մինչեւ պզտիկ, առանց մէկ մարդ իսկ թողլու, քշուած է դէպի Միջագետաց անապատները, Հալէպի հարաւային կողմերէն մինչեւ Մուսուլ և Պաղտատ: «Հայաստան առանց Հայու», այս է Օսմ. կառավարութեան ծրագիրը: Եւ արդէն սկսուած է Հայոց հողերուն և տուներուն մէջ իսլամներ բնակեցնել: Հարկ չկայ ըսելու, որ տարագրուողները ոչ մէկ բան կրնան առնել իրենց հետ կառավարութեան կողմէ թոյլ չտրուելուն պատճառաւ, և արդէն փոխադրութեան միջոց ալ չէ մնացեր այդ գաւառներուն մէջ քանի որ զինուորական իշխանութիւնը ամբողջովին գրաւած է զանոնք: Հայ գաղթականները պարտաւոր են մէկէն երկու ամիս և աւելի հետիոտն ճամբորդել հասնելու համար անապատի այն անկիւնը, որ որոշուած է անոնց գերեզման ըլլալու: Արդէն լուրեր կը հասնին թէ ճամբուն երկայնքը և Եփրատի ջուրերը լեցուն են դիակներով այն թշուառ գաղթականներուն, որոնց մնացորդներն ալ անապատներու մէջ հետզհետէ մեռնելու դատապարտուած են ոչ բնակարան, ոչ աշխատութեան միջոց և ոչ ապրուստ ունենալնուն պատճառաւ: *Հայութիւնը ամբողջովին բնաջինջ ընելու ծրագիր մըն է այս, առանց աղմուկի, առանց կոտորած անունը տալու ահռելի նախճիր մըն է այս: Պէտք է գիտնալ թէ 20-45 տարեկանները զէնքի տակ առնուելէ յետոյ 15-20 և 45-60 տարեկան արուներն ալ զինուորական պէտքերու փոխադրութեան համար վար դրուած են: Պէտէ տուողներն զանազան տեղեր աքսորուած կամ այլևայլ պատճառներով բանտարկուած են, հետեւաբար հայ գաղթականները կը ճամբորդեն միայն, ծեր կին և մանուկ ունենալով. և այնպիսի տեղերէ պիտի անցնին ուր խաղաղութեան ժամանակ անգամ առանց կողոպտուելու կամ սպանուելու կարելի չէ անցնիլ: Թուրք չէթէները և այլ աւազակները ու նոյնիսկ ժանտարմներն ու կառավարական պաշտօնեաները զանոնք կողոպտելու, կիներն ու աղջիկները բռնաբարելու և առեւանգելու համար ազատօրէն կը գործեն: Զանազան տեղերէ իսլամացումներու լուրեր ալ կը հասնին մեզի, կ'երեւի թէ ժողովուրդը իր կ'եանքը փրկելու ուրիշ միջոց չունի:*

Պատերազմական ատեանները անխնայ կը գործեն ամենուրեք. Պոլսոյ մէջ 20 հնչակեաններու կախաղան հանուիլը իմացաք անշուշտ լրագիրներէն: Ասոնց համար տրուած վճիռը տէրութեան ոչ մէկ օրէնքին կը համաձայնէր. նոյն օրը Կեսարիոյ մէջ ալ 12 հոգի կախաղան հանուած են «Պուքրէշի մէջ Հնչակեան և Դաշնակցական կուսակցութեանց ըրած գաղտնի ժողովին հրահանգներուն հնազանդ ըլլալնուն համար»»[1]:

1916 թվականին, անգլերենից թարգմանելով, ռուսաց լեզվով Պետրոգրադում հրատարակվեց *Հերբերտ Ադամս Գիբբոնսի* «Վերջին ջարդերը Հայաստանում» գիրքը: Այնտեղ փաստեր, վկայություններ կան *Հայոց Մեծ եղեռնի,* ինչպես նաև զորահավաքի, զինվորների տարագրման և զանգվածորեն ոչնչացման մասին: Նա գրում է. *«1915 թվականի ապրիլից օսմանյան կառավարությունը ամբողջ Թուրքիայում սիստեմատիկաբար սկսեց կենսագործել հայ ժողովրդին բնաջնջելու խնամքով մտածված ծրագիրը: Վեց ամսվա ընթացքում սպանվել է մեկ միլիոն հայ: Զոհերի թիվն ու նրանց բնաջնջման եղանակն աննախադեպ է նո-*

[1] *Զավէն արքեպս.*, Պատրիարքական հուշերս, վավերագիրներ և վկայություններ, Գահիրե. 1947. էջ 134-135:

րագույն պատմության մեջ... ապա սկսվեց ջարդի նոր շրջանը:

Սկզբում, կարգադրությունները հնարավորին չափ նվազագույն վտանգով կատարելու նպատակով, քաղաքներում և գյուղերում դեռևս մնացած հայ արական բնակչությունը կանչվում էր հատուկ նախատեսված հարմար վայրեր, մեծ մասամբ քաղաքից դուրս, ընդ որում ոստիկանությունը հետևում էր, որ ոչ ոք չխուսափի հրավերից: Ոչ ոք մոռացված չէր: *Երբ այդ վայրերում հայ տղամարդկանց մի որոշ քանակություն էր հավաքվում, նրանց սրախողխող էին անում...* Դա արվում էր սովորաբար փոքր քաղաքներում ու շեներում: Ավելի խոշոր կենտրոններում միշտ չէ, որ հարմար էր լինում այդպես հեշտ ու հանգիստ կատարել Կ. Պոլսից ստացված կարգադրությունները: Հայ վերնախավը սպանվում էր փողոցներում ու սեփական տներում: Եթե բանը տեղի էր ունենում ներքին նահանգներում, ապա հայ տղամարդիկ պահակախմբի հսկողությամբ ուղարկվում էին որևէ այլ քաղաք: Մի քանի ժամ անց պահակախումբը վերադառնում էր առանց իր գերիների: Առափնյա քաղաքներում հայերին նավակներով ուղարկում էին այլ նավահանգիստ: Նավակները զարմանալիորեն արագ էին վերադառնում առանց ուղևորների»[1]:

Ռուս դիվանագետ, իրավաբան ու պատմաբան *Անդրեյ Նիկոլաևիչ Մանդելշտամը* (1869-1939) 16 տարի անընդմեջ աշխատել է Թուրքիայում զբաղեցնելով Կ. Պոլսի դեսպանատան առաջին աստիճանի քարտուղարի պաշտոնը: Նա գրել է և 1917 թ. Փարիզում ֆրանսերենով հրատարակել «Օսմանյան կայսրության ճակատագիրը» փաստառատ աշխատությունը: Հավաքած, դասդասած ու գիտական մշակման ենթարկած վավերագրերին զուգահեռ սեփական դիտարկումները, ականատեսի և ականջալուր տեղեկությունները, նա հրապարակում է սարսափազդու այնպիսի փաստեր, որոնք այսօր էլ կարդալիս ցնցվում ես, հոգեկան մեծ խռովք ես ապրում:

«Դաժանություններ և խոշտանգումներ» վերնագրված հատվածում կարդում ենք «Թուրքիայում այն խոշտանգումներն ու դաժանությունները, որոնց զոհը դարձան հայերը 1915 թ., հնարամտության ու բազմազանության առումով բնավ չէին զիջում նրանց, որոնց ենթարկվել էին նրանք 1895 և 1909 թթ.:

Անողոք գանահարություն, հանված աչքեր, պոկված եղունգներ ու մազեր, սղոցված կամ կտրված քթեր, ձեռքեր, ոտքեր և մարմնի այլ մասեր, շիկացած երկաթով դաղում, առաստաղից կախում ոչինչ չէր բացակայում ցուցակից: Վիրավորական կլիներ այստեղ չհիշելը այն ահավոր մեղադրանքի մասին, որ հայերը հրապարակավ կայացրել էին էնվեր փաշայի Վանի նահանգապետ Ջևդեթ բեյի, «մսագործների գումարտակների» պետի նկատմամբ: Հենց նորին գերազանցությանն է պատկանում խոշտանգումների երկու ձևի գյուտի պատիվը. դրանցից մեկը հայերի ներբանները պայտելն է, ինչպես գրաստներին, նորություն, որի համար նրա գյուտարարն արժանացել է «բաշկալեցի պայտառ» մականվան. *մյուսը կատուներով խոշտանգելն էր, որի դեպքում կատուներ էին խցկում խոշտանգվողների հագուստի տակ և ապա ծեծում կենդանիներին, որ նրանց ստիպեն իրենց ատամներն ու ճանկերը խրել զոհի փորոտիքը»[2]:*

Ռուս արևելագետ, խորհրդային ականավոր պատմաբան *Վլադիմիր Ալեքսանդրովիչ Գորդլևսկին* (1876-1956), 1917 թ. գրեց «Հայերը և պատերազմը» հոդվածը, որի էջերում ներկայացրեց արևմտահայության կրած տառապանքները օսմանյան

[1] *Герберт Адамс Гиббонс,* Последние избиения в Армении. Факты и ответственности. Перевод с английского, Петроград,1916, стр. 15-16.

[2] *A. Mandelstam,* Le sort de l'Empire Ottoman. Lausanne-Paris, 1917, p. 270.

Թուրքիայում: Այնտեղ գրված է. «Կոտորածը կոտորած, պատերազմն էլ պատերազմ, իսկ հայերին վերցնում են զինծառայության, բայց, երևում է, նրանց առաջավոր դիրքեր չեն ուղարկում, այլ թողնում են թիկունքում՝ աշխատանքներ կատարելու: Հազվադեպ հայեր են պատահում նաև զորքերում: Մի անգամ մեզ մոտ էր փախել մի հայ, որը նախքան պատերազմը ապրել էր Ռուսաստանում: Նա պատմում էր, որ հայերը իրենց կյանքը փրկելու համար բանակ զորակոչվելիս երբեմն ընդունում էին իսլամը, կամ, ավելի ճիշտ, բռնությամբ մահմեդականացվում էին: Երբ շարքում անվանակոչի ժամանակ մի այդպիսի նորադարձ մուսուլման տվել էր իր քրիստոնեական անունը, նա տեղնուտեղը գնդակահարվել էր...

Եվ այդպես անվերջ գազանություններ, կոտորած, ստրկացում, գնդակահարություններ: Թուրքիայում ապրող հայերի միայն համեմատաբար փոքր մասին հաջողվեց փրկվել: Ես հիշում եմ այն դառնաղետ տեսարանը, երբ ռուսական զորքի անակնկալ նահանջից ահաբեկված հայերը լքեցին տակավին նոր վերականգնված տները և ուղղվեցին դեպի Ալաշկերտի հովիտ: Ահա եզը դանդաղ քաշում է ճռռացող սայլը, որի վրա դարսված է ամբողջ տնային կահ-կարասին: Իսկ կողքից քայլում է մի կին, մի ձեռքին հայելի պահած, մյուսին դաշույն: Ինքներդ որոշեք, թե նրա մեջ ինչն է ավելի ուժեղ՝ պչրանքի, թե ինքնապաշտպանության բնազդը...»[1]:

Այսպիսով 1914-1916 թվականներին, արևմտահայության շուրջ երկու հարյուր հազարանոց հատվածը, հիմնականում 18-45 տարեկան տղամարդիկ, զորակոչվեցին թուրքական բանակ և անմիջապես ոչնչացվեցին երկրի տարբեր հատվածներում: Ոչնչացվածների ահռելի թվաքանակը, ջարդերի դաժան ձևն ու անտանելի մեթոդները, մեկ անգամ ևս ապացույց են, որ օսմանյան կայսրության մեջ իրականացվել է ***ցեղասպանություն, հայասպանություն,*** որի համար այսօրվա թուրքերը պետք է պատասխան տան:

3. Ցեղասպանության մահապարտ գերանդին ինձեց հայոց գենոֆոնդը

Օսմանյան կայսրության կեսհազարամյա պատմության խորաքննին հետազոտությունը հնարավորություն է ընձեռում հասկանալու, թե այդ ինչպես պատահեց, որ գերիշխող բռնապետությունը, գերակայող իսլամ կրոնապաշտները, «հանկարծակի» ***պատերազմ հայտարարեցին*** իրենց այլադավան ու այլակրոն հպատակ ժողովուրդներին: Նրանցից շատերին բնաջնջեցին ***մասնակիորեն*** (բուլղարներ, հույներ, սլավոններ), ոմանց ***ամբողջովին*** (արևմտահայեր): Մի՞թե թուրքերը հաշվի չառան, որ մակաբույծ իրենց պետական ապարատը, բանակը, մուսուլմանական կրոնական ու աշխարհիկ վերնախավն ապրում, կերակրվում էր այլակրոն հպատակներից բռնագանձված «օրինական» ու անօրինական հարկային թալանի հաշվին:

Այդ քաղաքականությունը թուրք ասպատակողներին ուղեկցող, պատմության ետնախորքում ձևավորված բնազդն էր, որը շարունակաբար ավելի էր խստանում և գնալով վտանգավոր կերպարանք առնում: Ինչքան մոտենում ու հպվում ենք նոր պատմաշրջանին, այնքան թուլանում, հետևաբար և բարբարոս ու անկառավարելի էր դառնում աշխարհի ամենագեղեցիկ երկրներից բռնազավթված հողերի վրա նստած այդ տերությունը:

[1] Академик *В. А. Гордлевский,* Избранные сочинения, т. III, Москва, 1962, с. 128-130.

Բռնություն, ասպատակություն, ժողովուրդներին մեծ վնաս պատճառող ավերիչ արշավանքներ, ահա անարտադրող այդ կայսրության կարգախոսը: Թուրքերը, դուրս գալով միջինասիական անապատներից, գայլից ծնունդ առած, գայլի ախորժակով նայելով Առաջավոր Ասիայի ու Եվրոպայի բարեբեր հողատարածություններին, հագուրդ տալով արդեն ձևավորած իրենց բնազդներին, պոկում էին քաղաքակրթության ծառի *արդեն վերջին տերևները:* Արյուն ու արցունք «պարգևելով» նորագրավ երկրների զարգացման մակարդակով իրենցից շատ բարձր կանգնած ժողովուրդներին նրանք ի սկզբանե *մահաբույր յաթաղանով սրախողխող էին անում, թույնով սպանում, ի հարկին խեղդամահ* անում բոլոր նրանց, ովքեր թումբ կկանգնեին իրենց ճանապարհին: Օսմանցիները նույն զենքերով էին կռվում նաև իրար դեմ, կենտրոնախույս ուժերին ոչնչացնելու դեպքում միջոցների մեջ ոչ մի խտրություն չէին դնում և ոչ մի խոչընդոտի առաջ կանգ չէին առնում:

Թերևս նման կարգախոս ունեցել են աշխարհի որոշ այլ տերություններ ևս: Սակայն դրանցից և ոչ մեկը կործանարար նման քաղաքականություն չի շարունակել, շողացող ու մահասփյուռ սուրը այդքան անխնայորեն չի գործադրել, հոգևոր, ստեղծարար մղումներն այդ աստիճանի դաժանաբար չի ոչնչացրել:

Թուրքերն ի սկզբանե անտանելի ձևերով են վարվել նաև իրար նկատմամբ: Ներքին խնդիրները նրանք լուծել են սրի ու արյան միջոցով: Բավական է հիշատակել, որ օսմանյան գահին բազմած սուլթաններից *մեկ երրորդը գլխատվել* են հենց իրենց թուրքերի արյունոտ ձեռքերով: Տերության երկրորդ մարդու *երկու հարյուր մեծ վեզիրներից յոթանասունվեցը բնական մահով չեն հեռացել այս աշխարհից*[1]:

Այդուհանդերձ, խոր միջնադարում ազգասպանությունը դեռևս այդքան զանգվածորեն կիրառելի չէր համարվում բռնապետական այդ երկրում: Մուշեղ արքեպիսկոպոսը «Հայկական մղձավանջ» իր ծավալուն և պատմաքննական վերլուծումներ գրքի «Ջարդերի պատճառները» գլխում գրում է. «Ջարդերու պատճառները փնտռելէ առաջ, պէտք է նախ գիտնալ, թէ ինչո՞ւ *չորս հարիւր տարի հայերուս խնայուեցան վերջին 40-50 տարուան սիսթեմաթիք ջարդերը,* երբ Սուլթաններու գահուն վրայ կ'իշխէին *Անգութ* Մուհամմէտի, *կատաղի* Մուրատի, *Սատակող* Սիւլէյմանի, *որովայնահար* (էվանթրէօր) Մահմուտի, և *խեղդող* Օսմանի պէս վայրագ, անգութ և անողորմ Սուլթաններ, և ինչո՞ւ հին ջարդերը տեղական եղան ու մնացին:

Թուրքերն ու իրենց բարեկամները, պատմութեան ընթացքին, Թուրքիոյ մէջ հայերուն տրուած ապրելու այդ *«յարաբերական»* և *«նուազագոյն»* իրաւունքը կը վերագրեն թուրք ժողովուրդին և կառավարութեան *հպատակասէր բարեացակամութեանը, և իսլամութեան ազատամիտ ոգիին?:* Եւ կ'եզրակացընեն «եթէ թուրքերը վայրագ և ջարդարար եղած ըլլային, մինչև հիմա պէտք էր որ Հայութիւնը բնաջնջուած ըլլար...: Ուստի, եթէ ջարդեր պատահեցան, անոր պատասխանատուութիւնը պէտք է փնտռել հայերուն *Յեղափոխական և անջատողական* ձեռնարկներուն մէջ»[2]: Խորագետ հոգևորական պատմաբանը, նույն եղեռնի օրերին, նման հայեցակարգի կողմնակիցներին պատասխանում է, թե. «Հայերուն Թուրքիոյ մէջ կարենալ ապրած ըլլալու բուն պատճառները պէտք է փնտռել ոչ թուրքին մարդկային զգացումներուն ? և ո՛չ ալ իսլամութեան *ենթադրական* ! ազատախոհութեանը մէջ. այդ պատճառները կը գտնուին թուրքին հաճոյասիրութեան, դիւրակեցութեան փափաքին, *ձրիակերութեանը, ինչպէս նաև Հայուն*

[1] *Հայերիխ Ֆիրբյուխեր,* Հայաստան, *1915,* Երևան, 1995 (թարգմանությունը *Գրիգոր Ջանիկյանի*), էջ 21:
[2] *Մուշեղ արքեպիսկոպոս,* Հայկական մղձավանջը. քննական վերլուծումներ. տպարան «Ազգ». Պոստոն, 1916, էջ 46-47:

արտադրելու կարողութեանը մէջ: Այս իրողութիւններն են, որ կրնան բաւականաչափ լոյս սփռել Պատմութեան մութ անկիւններուն վրայ, և մեզի ցոյց տալ այն շարժառիթները, որոնք Հայութեան գոյութիւնը երկարածգեցին արիւնի, ջարդի և թալանի այդ երկրին մէջ:

Թուրք իշխանութիւնը մակաբուծային կեանք մը ապրած է պատմութեան ընթացքին: *Իսլամական ժողովուրդները պատերազմասէր եղած են աւարի և թալանի համար:* Մահմետի օրով Մէքքէի և ուրիշ տեղերու վրայ տարուած յաղթանակները թալանի և կողոպուտի խոստումներով միայն յաջողութիւն գտան: Իսլամութեան առաջին յաղթանակը կողոպուտի, թալանի, աւարառութեան ճամբով միայն եղած է:

Ջարդի ու կողոպուտի հոգեբանութեամբ առաջնորդուած ժողովուրդ մը հետզհետէ կը կորսնցընէ պատուաւոր և իմաստուն աշխատութեամբ ապրելու իր կարողութիւնն ու ընդունակութիւնը: *Միևնոյնը պատահեցաւ մեզի տիրապետողներուն, որոնց ոտքերուն տակ խոտերն անգամ կը չորնային, և կենդանութիւնը կը մարէր իրենց ճամբաներուն վրայ: Անոնք համոզուեցան վերջապէս, թէ ջարդերը ամենալաւ միջոցը չէին իրենց ապրուստին: Միանուագ կողոպուտները՝ ջարդերէ վերջ՝ չէին կրնար բաւական երկար ատենի համար իրենց կեանքը ապահովել: Պէտք էր ապրէին մարդիկ, որպէսզի անոնց շարունակական աշխատութիւնը, անոնց ճարտարարուեստն ու արտադրութիւնը ապրեցընէին զիրենք:* Եւ Հայերը միակ ժողովուրդն էին Ասիոյ մէջ, որոնք կրնային այդ գոհացումը տալ Մոնկոլեան իսլամներուն և իրենց Սուլթաններուն: Եւ ամբողջ դարեր, գերիի կատարեալ համակերպութեամբ հայերը թողուցին, որ իրենց արդիւնքը կիսեն թուրքերը, որ իրենց աշխատանքին պտուղը բաժնեն իրենց հետ պետական մակաբոյծներ և աւազակներ, իբրև փոխարինութիւն մը իրենց *ապրելու իրաւունքին:* Ճակատագրօրէն համակերպեցան, երբ *կառավարութիւն, և ազաներ, ու ծառայներ* շարունակաբար յափշտակեցին իրենցմէ իրենց դրամը, իրենց երիտասարդութիւնը, իրենց կինն ու պատիւը: Չէ՞ մի որ *բայլաներ* էին...: Եւ երբ ուզեցին գաղթել, այդ իրաւունքն անգամ զլացուեցաւ յաճախ պատմութեան ընթացքին, սպառնալիքի կամ սուտ խոստումներու տակ»[1]:

Կարծեք թե հայ մտավորականին շարունակում է, հաստատում գերմանացի դիվանագետն ու հրապարակախոսը *Հայնրիխ Ֆիրբյուխերը,* որի փոքրածավալ, սակայն խորաքնին հետազոտության մեջ կարդում ենք. «Թուրքերը նախ սելջուկների վարձու ռազմիկները դարձան, ապա շատ շուտ նրանցից խլեցին անծայրածիր կայսրությունն ու անառիկ կառույցներն անգամ կործանեցին: Դեռևս Օսմանը թուրքերի հրոսակապետը, որի անունով հետագայում կոչվեց ամբողջ ցեղախումբը, երազում էր համաշխարհային տիրակալության մասին: Նա հայտնի դարձավ նետով ինքնասպանության հորեղբորը սպանելուց հետո (վերջինս դեմ էր եղել ինչ-որ ամրոց զավթելուն): Օսմանի որդին Օրհանը (1326-1359), ստեղծեց ենիչերիների մարտախումբը, *որի ասպատակություններն իսկույնևեթ ահուդողի մատնեցին ամբողջ Եվրոպան ու Ասիան:* Այն փաստորեն ռազմագիտությանը հայտնի ամենաարտառոց բանակն էր կազմված էր *քրիստոնյա պատանիներից, որոնց պատերազմների ժամանակ թուրքերը գերեվարում կամ բռնի խլում էին Փոքր Ասիայի հույն, հայ ընտանիքներից:*

Ենիչերիների գինավարժությունն սկսվում էր տասը տարեկանից: Նրանց հիանալի էին սնում, ավելին, ուտելիքին այնպիսի կարևորություն էին տալիս, որ մսի կաթսան դարձել էր զորախմբի խորհրդանիշը, իսկ հրամանատարն ստացել էր «Չորբա-

[1] *Մուշեղ արքեպիսկոպոս,* նշված աշխատությունը, էջ 48-49:

ջի» (ապուր եփող) տիտղոսը: Այս հղփացած, լավ վարժեցված մարտիկներով առաջին սուլթանները գերազանցում էին տվյալ ժամանակվա ցանկացած երկրի ռազմական հնարավորությունները:

1389-ին, Կոսովո Պոլեի մոտ, Ամսելֆիլդի դաշտում, Մուրադ I-ի տարած հաղթանակի շնորհիվ, որը փաստորեն տապալեց Սերբիայի անկախ պետականությունը, Թուրքիան համաշխարհային համբավի հասավ: Ճակատամարտի դաշտում սերբ ռազմիկի սրից ընկավ Մուրադը: Նրա որդին Բայազիդ I-ը, թագադրվելու համար եղբորը խեղդամահ արեց: Հետագայում սա սովորություն դարձավ ամեն գահակալություն ուղեկցվում էր եղբայրասպանությամբ, որևէ այլ հարազատի գլխատումով: ***Մուհամմեդ III-ը (1595-1603) իր քառասյուն գահի առաջ տասնյոթ եղբայրների գլուխներից բուրգ կառուցել տվեց:*** Սուլթանները թագաժառանգներին շատ հաճախ մեկուսացնում էին «արքայազների վանդակում», ուր հաճախ նրանք անց էին կացնում կյանքի կեսը և ոգելից խմիչքից, կանանցից այնպես էին հյուծվում, բարոյազրկվում, որ իշխանության գլուխ անցնելուց հետո մեծ մասը անկարող էր լինում երկիրը կառավարել: Օսմանյան բոլոր նշանավոր տիրակալների համար առաջնայինը կայսրությանը լայնածավալ տարածքներ կցելը, կողոպուտն ու այլ ժողովուրդներին ստրկացնելն է եղել: Հաճախ թուրքերին կոչում էին «Արևելքի պրուսացիներ»: Եթե դաժան բռնասիրությունն, իրոք, պրուսական հատկանիշ է, ուրեմն թուրքերը Հոհենցոլերների հետնորդներից շատ ավելի լավ, ավելի վաղ էին պրուսացի դարձել: Ամեն դեպքում մի բանով նման էին իրար երկուսն էլ անընդունակ էին բարոյական հաղթանակներ տանել:

Սուլթանի պալատը, ըստ էության, պետք է անծայրածիր միապետության կենսունակ սիրտը լիներ, բայց հետզհետե վերածվում էր չարորակ խոցի, որը հյուծում, անդամալուծում էր ամբողջ մարմինը»[1]:

Նման ավարտուն բնութագրություն էր տալիս պրուսացիներին և թուրքերին գերմանացին, խիզախ ու աներեր դիվանագետը, որն իր կյանքն ավարտեց փոքր ժողովուրդների իրավունքների պաշտպանության բարիկադների վրա:

Այսպիսով, հայ ժողովրդի ***գենոֆոնդի*** ոչնչացման, հատկապես աճող սերնդին, փոքր ու մեծ երեխաներին ***մասամբ իսլամապաշտ դարձնելու, հիմնականում բնաջնջելու քաղաքականությունն անցնում էր դարերի միջնորմով*** և փաստորեն թուրք ազգի ռասայական խտրականության արդեն ավարտուն արտահայտությունն էր: Տվյալ պահին, պայմանները նպաստավոր էին իրողության վերածելու այն, ինչի մասին երազել էին թուրք սուլթանները Օսմանից սկսած, Աբդուլ Համիդով եզերած:

Հարյուր հազարների հասնող հայ մանուկներին ծնողազրկելու, որբացնելու, ապա՝ կամ Մուհամեդի փարախն առաջնորդելու, կամ էլ աճուրդի ճանապարհով կոպեկներով վաճառքի հանելու ազգասպան գործողությունները, սակայն, կատարեցին երիտթուրքերը՝ տխրահռչակ ***Եոյակի*** ղեկավարությամբ: Այդ հակամարդկային արարքը գլխավորում էր շնագայլ Մեհմեդ Թալիաթը, որը գնդախորով եղավ հայոց ***Վիլհելմ Տելի*** ատրճանակից արձակած փոխվրեժի արտահայտությունը հանդիսացող, ատրճանակի երեք գնդակով: Հետևաբար Մեծ եղեռն ասելով, որոշ իմաստով, պետք է հասկանալ հայոց մանուկ սերնդի ոչնչացումը, կատարված համազգային ոճիրը, որը երբեք չի մոռացվի և իր ծանրության ծայնով կզնգա թուրքերի բանբրաթաղանթ ականջին այնքան ժամանակ, որքան կհարատևի մարդկությունը:

Հայ որբերի մասին ընդհանրապես, մի ամբողջ ժողովրդի, մինչև 12 տարեկան հասակ ունեցող հատվածի ապրած գողգոթայի մասին մասնավորապես, ***Սփյուռ-***

[1] *Հայնրիխ Ֆիրբյուխեր,* նշված աշխատությունը, էջ 24-25:

քում ստեղծվել է ծավալուն գրականություն, սակայն Հայրենիքում, դժբախտաբար, մի քանի անձուկ էջերից ավելի շարադրանք չես գտնի[1]: Ուստի Մեծ եղեռնի պատմությունն առավել ամբողջական դարձնելու բնականոն մտահոգությամբ, մենք ևս փորձեցինք մասամբ լրացնել այդ բացը:

Ինչպես ողջ հայ ժողովրդի, այնպես էլ, հատկապես, հայ կանանց ու երեխաների ոչնչացման հրամանները ստորագրել, առաքել, դրանց գործադրմանը հետևել է ե-րիտթուրքերի կառավարության կազմում ներքին գործերի նախարարի պաշտոնն զբաղեցնող Մեհմեդ Թալեաթը: Բերենք ***մարդասպանությանը*** վերաբերող այդ հրամանագրերից մի քանիսը միայն.

1 Թիւ 502.

Ծածկագիր ներքին գործոց նախարարութեան, ուղղուած Հալէպի կուսակալութեան.

Կը յանձնարարենք որ ծանօթ անձնաւորութեանց (Հայոց) այրերուն նկատմամբ նախապէս գործադրուիլը ձեզի հրամայուած եղած կարգադրութիւններուն ***ենթարկէք նաեւ կիներն ու պզտիկները, եւ այս մասին վստահելի պաշտօնեաներ կարգէք:***

3 Սեպտ. 915

Ներքին գործոց նախարար
ԹԱԼԱԱԹ

2 Թիւ 603.

Ծածկագիր ներքին գործոց նախարարութեան, ուղղուած Հալէպի կուսակալութեան.

Կ'իմանանք թէ Սվազի, Մամուրէթ-Իւլ-Ազիզի, Տիարպէքիրի, Էրզրումի նահանգներէն տարագրուած եւ ճամբուն ընթացքին իրենց ծննդավայրերուն մեռած ըլլալուն հետեւանքով անոր մնացած ծանօթ անձնաւորութեանց (Հայոց) ***պզտիկները կարգ մը իսլամ ընտանիքներու կողմէ որդեգրութեան եւ սպասաւորութեան կ'ընդունուին: Ձեր նահանգին մէջ գտնուող այդ կարգի տղաքը հաւաքելով՝ տարագրութեան վայրերը (անապատները) ղրկելնիդ եւ յարմար դատուած կերպով ժողովուրդին այս մասին պէտք եղած հրահանգները տալերնիդ իբր շրջաբերական կը ծանուցանենք:***

5 Նոյեմբեր 915

Ներքին գործոց նախարար
ԹԱԼԱԱԹ

3 Թիւ 830.

Ծածկագիրը ներքին գործոց նախարարութեան, ուղղուած Հալէպի կուսակալութեան.

Հաւաքեցէք եւ սնուցէք այն որբերը միայն, որոնք չեն կրնար յիշել զուլումը որուն ենթարկուեցան իրենց ծնողները: Մնացածները կարաւաններուն ընկերացնելով ղրկեցէք:

12 Դեկտեմբեր 915

Ներքին գործոց նախարար
ԹԱԼԱԱԹ[2]

---

[1] Սփյուռքում հայ որբերի պատմությանը նվիրված բազմաթիվ աշխատություններից նշենք մի քանիսը միայն: ***Լիպարիտ Ազատյան,*** Հայ որբերը Մեծ եղեռնի, հատոր առաջին, Լոս Անճելըս, 1995: ***Նույնի***՝ «Հայ որբերը Մեծ եղեռնի», հատոր երկրորդ, Լոս Անճելըս, 1999: ***Նույնի***՝ «Հայ որբերը Մեծ եղեռնի», Լոս Անճելըս, 2002: (Եռահատորյակը խնամքով խմբագրել է, առաջաբան, երբեմն էլ վերջաբան է գրել սփյուռքահայ անվանի գրող ու հրապարակախոս ***Ստեփան Ալաջաջյանը):***

Խնդրին են վերաբերում նաև ***Համայակ Գարանյանի*** «Հայ որբությունը» աշխատությունը, Պեյրութ, 1965 թ., որը զետեղված է «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի» աշխատության 927-952-րդ էջերում: Տե՛ս նաև ***Արամ Անտոնյան,*** Մեծ ոճիրը, Պոսքըն, 1921, էջ 59, 151, 180-184, 187-189: Սրտաճմլիկ, սարսռազդու փաստեր են զետեղված պրոֆեսորներ ***Մ. Գ. Ներսիսյանի, Վ. Ա. Միքայելյանի*** խմբագրած և հրատարակած փաստաթղթերի արժեքավոր ժողովածուների էջերում: Հետևաբար այս խնդրի մասին մեր շարադրանքը գրեթե կազմված է վերոհիշյալ աշխատություններից քաղած նյութերի օգտագործումով:

[2] ***Լիպարիտ Ազատյան,*** նշված աշխատությունը, հ. 1, էջ 18-20: Հեղինակը հրատարակել է ոչ միայն այս հեռագրերը, այլև սրանց ***արաբատառ թուրքերեն բնագրերը:***

Վերոհիշյալ և նմանատիպ այլ հեռագրեր Հալեպի, Ադանայի վիլայեթների վալիներին են ուղարկվել 1915 թվականին և վերջիններիս խստագույնս հանձնարարություն տալով հայ որբերին քայլելով ուղարկել դեպի Դեր Զորի ու Ռաս-ուլ-Այնի անապատները, *եթե «ապրեն՝ վատ», եթե «մեռնեն՝ լավ» կարգախոսով:* Հետապնդումը շարունակվեց հաջորդ տարիներին:

1916 թ. հունվարի 16-ի N 840 հրամանագրով կարգադրվում էր.

«Հալէպի կուսակալութեան.

Կը լսենք որ Ինքիլլի, Այրանի շրջականերէն սկսեալ մինչեւ Հալէպ երկարող գիծերու ճամբաներուն երկայնքը, մեծագոյն մասը կին եւ պզտիկներ, 40-50.000 հայեր կը գտնուին: Ամենախիստ կերպով պիտի պատժուին այն անձերը որոնք զինուորական առաքմանց համար մեծ կարեւորութիւն ունեցող այդ դիրքերուն վրայ թշուառութեան համախմբման մը կազմուելուն պատճառ կ'ըլլան: *Հետեւաբար. Ատանայի կուսակալութեան հետ բանակցելով, անմիջապէս, առանց Հալէպ հանդիպցնելու, հետիոտն իրենց տարագրութեան վայրերը (անապատները) ղրկեցէք այդ հայերը: Կարեւորութեամբ կը սպասեմ որ մինչեւ շաբաթ մը հաղորդէք անոր արդիւնքը»:*

16 Յունուար 916.

Ներքին Գործոց Նախարար
ԹԱԼԷԱԴ»[1]

Թալեաթն այս բնագավառում խիստ հետևողական էր և դաժանությամբ առանձնանում էր մեծահասակների ջարդարարության գործի կազմակերպիչներից: 1916 թ. հունվարի 23-ին նա Հալեպի կուսակալությանն ուղարկեց ևս մի ծածկագիր հեռագիր, որտեղ ասված է.

«No. 853.

Ծածկագիր ներքին գործոց նախարարութեան, ուղղուած Հալէպի կուսակալութեան.

Անանկ ատեն մը ուր պաշտպանութեան եւ սնունդի կարօտ հազարաւոր իսլամ գաղթականներ եւ նահատակներու (4) այրիներ կը գտնուին, ապագային դարձեալ վնասակար դառնալէ զատ ուրիշ բանի չծառայելիք կարգ մը ծանօթ անձնաւորութեանց (Հայոց) *ձգած պզտիկներուն սնուցման համար աւելորդ ծախքեր ընելը յարմար չէ: Ատոնք տարագրութեան կարաւաններուն ընկերացնելով, վիլայէթն դուրս հանել, եւ մինչեւ հիմայ սնուցուողներն ալ՝ մեր վերջին զեկուցման համեմատ՝ Սվազ ղրկել:*

23 Յունուար 916.

Ներքին գործոց նախարար
ԹԱԼԷԱԴ»

(Մակագրուած).-

«Գաղթականներու ընդհանուր Տեսչութեան փոխանորդին: 25 յունուար:

Կուսակալ
ՄՈՒՍԹԱՖԱ ԱՊՏՈՒԼՀԱԼԻԳ»[2]:

[1] *Արամ Անտոնյան,* Մեծ ոճիրը, էջ 52:

[2] Նույն տեղում, էջ 189:

1916 թ. հունվարի 26-ին ընդհանուր տեսչության փոխանորդ Ապտուլահատ Նուրին դիմում էր ներքին գործերի նախարարություն, թույլտվություն ստանալու համար, որպեսզի ձմեռային այդ ցրտերին երեխաներին գցեն ձյան վրա, նրանց *«հավիտենական հանգիստ»* ապահովեն, իսկ նախօրոք որոշված ծախսերը խնայեն:

Եվ այսպես, շուրջ 90-ամյա հեռավորությունից, գիտական ճշմարտացիությամբ շարադրել հայ ժողովրդի մանուկ սերնդի ապրած անսահման ողբերգության, անտակ ցավերի պատմությունը, մեր կարծիքով, *գրեթե անհնարին է:* Դժվարությունը կայանում է ոչ միայն վիճակագրական, վավերագրական փաստերի բացակայության մեջ, այլև հոգեբանական խնդրի սրտամաշ, զգացմունքային լինելու մեջ, որոնք ազդում են այսօրվա սերնդիս մարդկային արժանապատվության վրա: Մի տեսակ ստորացած ես զգում քեզ, երբ այդքան բարբարոսություն գործած ռասան իսլամապաշտները, համառությամբ ուրանում են կատարվածը, առանց խղճի խայթի, նույնիսկ համարձակվում են հակառակվել, բարձրագոչել, թե թուրքերն ավելի շատ են զոհեր ունեցել, քան հայ «կոմիտեջիները»:

Մենք այստեղ չենք ուզում իջնել թուրք կեղծարարների սարքած աստիճանավանդակի վրա, այլ հատիկ-հատիկ հավաքած փաստերով, ջանալ հազարևմեկերորդ անգամ ապացուցել, իթթիհատականների, ապա քեմալականների կատարած *մանկաջարդությունն* օսմանյան կայսրությունում, իսկ շարունակությունը Արևելյան Հայաստանում: Ալեքսանդրապոլի և Կարսի ողբերգությունները գլուխգործոցն էին հայ գենոֆոնդի ոչնչացման, բացահայտումը բարբարոսական հակազգային, հակամարդկային այն ծրագրի կենսագործման, որի հեղինակները մտադրվել էին պատմության բեմահարթակից ընդհանրապես բնաջնջել հայ ժողովրդին ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև հանուր հողագնդի երեսից:

Այդ պարագան ի նկատի ունենալով, ջանալով հնարավորինս ամբողջացնելու հայոց ցեղասպանության պատմությունը, մենք այստեղ փորձում ենք ընդհանուր գծերով ներկայացնել նաև աճող սերնդի կրած կորուստների չափը, ընթերցողի ուշադրությունը հրավիրելով ոչ թե և ոչ միայն առանձին փաստարկների, այլև ջարդերի իրականացման *հակամարդկային, բարբարոսական եղանակների ու մեթոդների վրա:*

Խնդրի տարողունակությունը, հետազոտության համար ընդարձակ էջերի անհրաժեշտությունը մեզ հարկադրեցին կոնկրետանալ երեք հիմնական ենթահարցերի վրա, դրանք են.

ա) *մանուկներ, որոնք սպանվել են հրազենով, սրով, քարաջարդմամբ, սովահարությամբ,*

բ) մանուկների թուրքացման պրոցեսը, քրդացված հայ երեխաները,

գ) Հայաստանի, Թուրքիայի, Ռուսաստանի և աշխարհի տասնյակ ու տասնյակ երկրներում տեղաբաշխված որբանոցներում ցրված մանուկների հայտնի ու անհայտ ճակատագրերը:

Նախօրոք արձանագրենք, ավելի ճիշտ վերահաստատենք անվանի մտավորական *Բյուզանդ Եղիայանի* այն եզրահանգումը, թե 1915 թ. կոտորված արևմտահայության թվին պետք է գումարել նաև «տեղահանության ժամանակ հարյուր հազարներով մանուկներ ոչնչացման ենթարկված կամ իսլամացած»[1]: Նրա հաշվարկումներով գողգոթայի ենթարկված *հայ մանուկների թիվը կես միլիոնից ավելի էր:*

Լիպարիտ Ազատյանը հրատարակում է մի ցուցակ, ըստ որի, Թուրքիայի պար-

[1] «Ժամանակակից պատմություն կաթողիկոսության Հայոց Կիլիկիո 1914-1972», Անթիլիաս, 1970, էջ 249-250: Տես նաև *Լիպարիտ Ազատյան,* Հայ որբերը Մեծ եղեռնի, Լոս Անճելըս, 1995, հ. 1, էջ 35:

տությունից հետո, այսինքն Մուդրոսի զինադադարի օրերին, կենդանի մնացած հայ որբերն ունեին ներքոհիշյալ թվաքանակը.

Շրջանի որբանոցներ	Որբերու թիւ	Շրջանի որբանոցներ	Որբերու թիւ
Խարբերդի որբանոցներ	5 300	Պարտիզակ	200
Հայաստան	**45 000**	Ատանա	2 000
Պոլիս	4 000	Հալէպ	2 000
Սեբաստիա-Մարզուան	5 600	Մարաշ	1 700
Պրուսա	250	Այնթապ	1 200
Գոնիա	600	Երուսաղէմ	800
Սամսոն-Տրապիզոն	750	Փորթ Սաիտ	350
Կեսարիա	2 300	Պաղտատ-Մուսուլ	600
Մալաթիա	1 250	Ուրֆա	1 200
Անկիւրի	250	Մերտին	1 000
Իզմիթ	225	Տիգրանակերտ	700
		Ընդ. գումար	77 275[1]:

Ակնհայտ է, որ կես միլիոնանոց ծնողազուրկ երեխաներից կենդանի են մնացել հարյուր հազարից էլ շատ պակաս: Հետևապես, ոչնչացված հայ երեխաների թիվը չորս հարյուր հազարից շատ ավել է, իսկ նրանց սպանության ձևերն ու մեթոդները ցեղասպանության աներկբա վավերացումներն են: Դիմենք փաստերին, իհարկե շատ սահմանափակ. քանզի նյութերը լեռնակուտակ են, անհատնում:

Գերմանացի ուղեգրողը, 1915 թ. հուլիսի 28-ից մինչև օգոստոսի 20-ը, շրջելով Մարաշով մեկ, թողել է հետևյալ նկարագրությունը. «Օգոստոսի 6-ին Ֆինդիջախ հայկական գյուղը, որը գտնվում է Մարաշի մոտերքում, ամբողջովին ավերվել է, և բոլոր բնակիչները (3000 հոգի) կոտորված են: Վերջին երեք ամսում ջորեպանները մեծ թվով հայերի են քշել տարել դեպի Եփրատ: Նրանք իրենց աչքով Եփրատի մեջ տեսել են դիակներ և վկա են եղել կանանց ու աղջիկների վաճառքի, ինչպես և նրանց նկատմամբ գործադրված բռնությունների:

Մարաշի ամերիկյան մի դպրոցում ես տեսել եմ ամենաանասելի կերպով խեղված (անձեռք. անոտք) հարյուրից ավելի կանանց ու երեխաների, և նրանց մեջ՝ 1-2 տարեկանների:

Օգոստոսի 14-ին 34 հայերի գնդակահարեցին Մարաշում, որոնց թվում և՝ 12 տարեկան երկու երեխայի: Օգոստոսի 15-ին գնդակահարեցին 24, իսկ հետո կախեցին 14 հայերի: Գնդակահարվածները ծանր շղթաներով վզներից կապված են եղել միմյանց հետ և փոսը նետվել: Մուսուլմանական բնակչության ներկայությամբ նրանց մահապատժի են ենթարկել ամերիկյան քոլեջի հետևում: Ես տեսա, թե բարբարոս բնակչությունը ինչպիսի խոշտանգումների էր ենթարկում դեռևս հոգեվարքի ցնցումների մեջ գտնվող մարմինները. ոտքից էին ձգում, ձեռքից, և, որպեսզի զվարճացնեին մուսուլման ամբոխին, ոստիկաններն ու ժանդարմները ատրճանակներով կրակում էին աննկարագրելիորեն այլանդակված դիակների վրա: Այնուհետև ամբոխը նետվեց դեպի գերմանական հիվանդանոցը գոռալով. «Յա՜շա-

[1] «Ժամանակակից պատմություն կաթողիկոսության Հայոց Կիլիկիո 1914-1972», Անթիլիաս, 1970, էջ 249-250: Տե ս նաև *Լիպարիտ Ազատյան,* Հայ որբերը Մեծ եղեռնի, Լոս Անճելըս, 1995, հ 1, էջ 35-36:

սըն Ալմանիա» (Կեցցե՛ Գերմանիան): Մուսուլմաններն անվերջ կրկնում էին, թե հենց Գերմանիան է մեղավոր, որ իրենք այսպես են վարվում հայերի հետ»[1]:

Հաջի անունով մի մահմեդական պատմել է, որ «Խարբերդից ու Սեբաստիայից աքսորված 18 հազար հայերից մինչև Հալեպ հասել են 350 կին ու երեխա, իսկ էրզրումից աքսորված 19 հազարից ընդամենը 11 հոգի. մեկ հիվանդ երեխա, չորս աղջիկ և վեց կին: Կանանց և աղջիկների քարավանը 65 ժամում ոտքով անցել է Ռասուլ-Այնից մինչև Հալեպ ձգվող երկաթգծի պաստառը, չնայած այն բանին, որ այդ ամբողջ ժամանակ զորքեր տեղափոխող գնացքները դատարկ էին վերադառնում: Մուսուլման ճանապարհորդները, որոնք անցել են այս ճանապարհով, պատմում են, թե այդ ճանապարհը անանցանելի է բազմաթիվ դիակների պատճառով, որոնք այդտեղ ընկած են և իրենց գարշահոտությամբ թունավորում են օդը: Հալեպում մնացած աքսորականներից 100-200 հոգին մեռան ծանր ճանապարհից հետո: *Երբ կանայք ու երեխաները, որոնք սովից նիհարել էին այն աստիճան, որ սկսել էին կմախքի նմանվել, գալիս էին Հալեպ, նետվում էին ուտելիքի վրա, ինչպես գազաններ: Բայց նրանցից շատերի ներքին օրգանների ֆունկցիաները խախտված էին, մեկ-երկու պատառ կուլ տալուց հետո նրանք գդալը մի կողմ էին նետում»[2]:*

Հալեպի գերմանական դպրոցի ուսուցիչ դոկտոր *Մարտին Նիպագեն* հաղորդում է. «Մեր դպրոցի դիմաց, քարվանսարաներից մեկում, գտնվում են աքսորյալների այդ քարավաններից մեկի մնացորդները մոտ չորս հարյուր տանջահար էակներ, որոնց մեջ կա 5-7 տարեկան հասակի հարյուր երեխա: Նրանց մեծ մասը տիֆով կամ դիզենտերիայով հիվանդ է: Երբ մտնում ես բակը, քեզ թվում է, թե դա գժանոց է: Երբ նրանց ուտելիք են բերում, ապա երևում է, որ նրանք մոռացել են ուտելը: Նրանց ստամոքսը, բազմամսյա քաղցից փոքրացած, այլևս սնունդ չի ընդունում: Երբ նրանց հաց են տալիս, նրանք անտարբերությամբ մի կողմ են նետում: Նրանք հանգիստ սպասում են իրենց մահվանը»[3]:

Թուրքական բանակում ծառայող Ն. Օգանովսկին 1915 թ. սեպտեմբերին «День» թերթում տպագրած հոդվածում գրել է. «Բայց ամենասարսափելի պատկերները այդ հազվագյուտ ականատեսը տեսել է Բիթլիսում: Դեռ Բիթլիս չհասած, անտառում նա տեսել է ոչ վաղուց մորթոտված մի խումբ տղամարդկանց և նրանց կողքին էլ երեք կնոջ, միանգամայն մերկ, գլխիվայր կախած: *Կանանցից մեկի կողքին տղում էր մեկ տարեկան մի երեխա և թաթիկները պարզում մորը, իսկ մայրը, դեմքն արյունով լցված, դեռ կենդանի, ձեռքերը մեկնում էր երեխային, բայց նրանք չէին կարողանում միմյանց հասնել: Մի քիչ այն կողմում ընկած էին երեք կանանց արյունաշաղախ դիակներ և մի մանկիկ՝ մոր արյունով ողողված, խլվլում էր կանանցից մեկի կրծքի վրա:*

Օրագրի հեղինակը տեսել է, թե ինչպես էին կայմակամի խոլամները հրկիզում երկհարկանի հարուստ մի տուն: Երկրորդ հարկում երևաց մի կին երեխան գրկին: Նա լուսամուտից լուսամուտ էր նետվում. «աման» ճչում, բայց ամեն կողմից հանդիպում էր իր վրա ուղղված հրացանների փողերի: Կրակն աստիճանաբար բռնում էր վերին հարկը, ծուխը պատում էր լուսամուտները մեկը մյուսի հետևից, և այդ կինը երեխայի հետ մեկտեղ այրվել է նրա աչքի առաջ»[4]:

1965 թ. Մեծ եղեռնի կեսդարյա տարելիցի առթիվ, *Գ. Սահարոնյանը, «Սահմռկեցուցիչ վկայություններ»* խորագրի տակ, հրապարակում է ցնցող փաստեր հայ երեխա-

---

[1] Quelques documents sur le sort des Arméniens en 1915, Fascicule III, Geneve, 1916, p. 162. Տե՛ս նաև «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 381-384:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում էջ 147-148:

[4] «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 432-433:

ների ոչնչացման պրոցեսի մասին: Նա բերում է ամասիացի *Յեղինե Իգնատոսյանի* պատմածներից ներքոհիշյալ հատվածը. «1915 թ. հուլիս 21.- Շար Գըշլայի մէջ տեղւոյն գայմագամը մեր կարաւանէն 1500ի չափ աղջիկ ընտրեց ու գիւղացիներուն ծախեց: Ա-նոնցմէ 600ը Ամասիոյ մէջ իմ հին աշակերտուհիներս էին: Ամասիայէն 18.000 հոգի տա-րագրուեցանք, 8 այր, 90 կին միայն մնացինք: Երեք ամիսէն Հալէպ կրցինք գալ:

Օգոստոս 2.- Գըրգ Կէօզ ջուր խմելէ արգիլուեցանք: 12 ժամէ ի վեր կաթիլ մը ջուր չէինք խմած, ջուր խմելու թոյլտուութիւն խնդրող 25 կիներ գետը տարին խեղդեցին: Այդ գիշեր 205 հոգի ծարաւէն մեռան:

Օգոստոս 10.- Ֆըրընճըլարի մէջ ստիպեցին որ ծծկերները ձգենք: 500ի չափ երեխաներ հոն ողջ-ողջ թաղուեցան: Երեխաներու ճիչը դեռ կէս ժամ հեռուէն կը լսուէր ու մայրերու լացը ժամերով կ'արձագանգէր դաշտին մէջ:

Օգոստոս 30.- Սուրուճի եւ Ուրֆայի միջեւ տեսայ երեխայ մը, մեռած մօրը կուրծքը կը ծծէր»[1]:

Երզնկացի վերապրող *Արշալույս Գարակոզյանը* վկայել է, թե «1915 մայիսի 26ին Քեմախի կիրճին մօտ դաշտի մը մէջ քանի մը ժանտարմաներ 6 տարեկան Մես-րոպ անուն տղան մօրը *բազուկներուն մէջէն բռնի առին, փայտէ խաչի մը վրայ գամեցին աչքերէն, ձեռքերէն եւ ոտքերէն. յետոյ ժողովուրդին ցուցադրելով պո-ռացին. «Ահա ձեր Քրիստոսը եւ խաչը, թող ձեզ ազատէ»*[2]:

Ուրֆացի *Հայկանուշ Շահինյանը* ներկայացնում է, թե. «1915 թ. սեպտ. 5ին Ուր-ֆայի մօտ *Գըզլարի մէջ թուրքերը մորթեցին 3 եւ 6 տարեկան երկու զաւակներս ու դիակները շուներուն կերցուցին:*

Սեպտեմբեր 12ին Ուրֆայի մօտ եղիսաբէթ Տեմիրճեանը պղծեցին եւ երկու զաւակները մեր ներկայութեան մորթեցին: Թափթափեան ընտանիքին պատ-կանող երեք աղջիկներ պղծեցին ու մօտակայ գիւղացիներուն ծախեցին»[3]:

Երզնկացի *Եպրաքսե Եանըգյանը* պատմում է. «1915 մայիս 25ին, Քեմախի կիր-ճին մօտ դաշտի մը մէջ իջեւանած էինք, ժանտարմաներ դրացի վրանի մը տակ գե-ղանի Արմինէն յափշտակելու համար մորթեցին անոր հայրը, եղբայրը եւ եղբօրորդի-ները: Արմինեն չվերադարձաւ:

Մայիս 26ին նոյն տեղը երկու ժանտարմա սուինահար ըսպաննեցին Արամ Գաս-պարեանը եւ անոր կինը առեւանգեցին: *Վեց տարեկան զաւակը երբ իր հօր արիւ-նաթաթախ դիակին վրայ կու լար, ետեւէն ձորի մը անցուցին, ժողովուրդին ցուցադրելով պոռացին՝ «ահա ձեր դրօշակը»:*

Մայիս 27ին Արաբկիրի մօտ ժանտարմա մը մեզ վրանէն հանելով, ամայի տեղ մը քշեց, ուր զաւակս Լեւոնը մորթեց աղջկանս ծունկերուն վրայ, յետոյ աղջիկս առե-ւանգեց:

Քեմախ չհասած, կին մը կը ծննդաբերէր, ոստիկան մը երեխան մօրը ար-գանդէն դուրս քաշեց. սուինով երկուքի բաժնելով ըսաւ. «Տես, հիմա երկուո-րեակ մը ունեցար»: Մայրը երկու ժամ ետք մեռաւ»[4]:

Սամսոնցի *Սրբուհի Ավագյանը* հաղորդում է, թե. «1915 օգոստոս 5. - Գըրըգ Կէօ-զի մօտ տեսայ խորունկ աւազան մը, լեցուած 5 տարեկանէն վար պզտիկներով, ո-րոնցմէ ոմանք դեռ ողջ էին: Նոյն տեղը տեսայ 100ի չափ ծերունի կիներու դիակներ, իրենց վերմակներուն մէջ այրուած»[5]:

---

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 527:
[2] Նույն տեղում, էջ 528:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 539:
[5] Նույն տեղում, էջ 540:

Տարոն-Տուրուբերանի գաղթականների մասին հաղորդվում են ներքոհիշյալ փաստերը. «Մշոյ կարաւաններուն մէջ հրաշքով ազատած կին մը 1915 յուլիս 26ին պատմած է թէ տարագիրները կամ սպանուած և կամ նետուած են Մուրատ գետը, որ մէկ ճիւղն է Եփրատի, արեւելքի կողմը»: «Գիւղերէն հաւաքուած 8-10000 տարագիրներ ճամբայ հանուեցան և բոլոր այն ծերերը և տկարները, որոնք չէին կրնար քալել, սպանուեցան: Մեր վրայ կը հսկէին մօտ 100 քիւրտեր, որոնց հաճոյքէն կախում ուներ մեր կեանքը: Շատ սովորական էր ասոնց համար մեր ներկայութեան իսկ գեղեցիկ աղջիկները առեւանգելը. *8 տարու շատ աղջնակներու կուսութիւնը բռնաբարեցին և այս վիճակին մատնուողներէն անոնք որ չէին կրնար քալել հրացանի բռնուեցան: Ճամբան քիւրտ կիներ եկան մեզի կողոպտելու: Առեւանգուած հարսերու զաւակները կը սպանուէին իրենց մօրը աչքին առջեւ»*[1]:

1952 թվականին Փարիզի «Արաքս» հրատարակչությունը հավաքել, դասդասել և խնամքով մշակելով հրատարակել է եղեռնից փրկվածների հիշողությունները, ավելի ճիշտ, վկայությունները բռնագաղթվածների ոչնչացման մասին: Ցնցող, հոգեկան անսահման խռովկանք պատճառող այդ «պատմությունների» մեջ առանձնանում է Եփրատում ջրախեղդ արված 70 մանուկների ոչնչացման եղելությունը, որը մեջբերում ենք ամբողջությամբ, որպեսզի թուրքերը կարդան և պատկերացնեն, թե ինչպիսին են եղել իրենց հայրերն ու պապերը, արժե այսօր նզովքի խոսք ասել նրանց հասցեին: Վերապրողները պատմում են. «Դիտած էինք, որ Ճարապլուսէն քիչ հեռու անսովոր երեւոյթ մը յայտնուած էր. երամներով ագռաւներ, եւ շուներու վոհմակներ կ'երեւէին, որոնց կռնչիւնը, ոռնոցը եւ լալիւնը երկարօրէն կը լսուէր իրիկնամուտի ժամերուն: Հետաքրքրուած գացինք այն կողմերը տեսնելու, թէ ինչ կայ: Տակաւին ճանապարհին վրայ դաշտերուն մէջ տեսանք մարդկային մարմնի բեկորներ, ձեռքեր, կէս յօշոտուած գանկեր եւ այլն: Ովքե՞ր էին ասոնք, ուրկէ՞ եկած էին, չի կրցանք հասկնալ: Տեսանք, որ խոշոր շուներ դէպի իրենց որջերը կը քաշէին դիակներու բեկորներ իրենց ձագերուն համար: Իսկ գետեզրը այդ բեկորները այնքան առատ էին, որ շուներու խումբեր եւ ագռաւներու, վայրի զանազան թռչուններու երամներ, իրարու առանց վնասելու, անվրդով թառած իրենց որսերուն վրայ, դունչերնին խրած դիակներու մէջ անընդհատ կը լափէին:

Գերմանական երկաթուղիի գիծի հայթայթիչը, որ զուիցերիացի էր, Գարատաղի անտառը մեկնեցաւ փայտ բերել տալու համար, բայց չկարողացաւ Եփրատի եզերքէն իր ճամբան շարունակել, որովհետեւ Պէրէճիքէն մինչեւ Գարատաղ գետին երկու եզերքը դիզուած դիակները այնպիսի նեխութիւն յառաջ կը բերէին, անոնց երեւոյթը այնպէս խոր կերպով ջիղերը քայքայեր էին, որ սարսափով փախաւ, վերադարձաւ Հալէպ հիւանդացաւ:

Երբ Ատիամանի, Սամսատի եւ շրջակայ գիւղերու Հայերը տեղահան ըրած են, կիները ղրկուած են Արաբ Բունարի կայարանը եւ այրերն ալ կապելով իրարու, նետած են գետը: Մայիսի վերջերը այդ վայրերու կիները գնացքով, 40 վակոնով, իւրաքանչիւրին մէջ 60 հոգի, կը ղրկուէին դէպի Հալէպ: Երբ կ'անցնէին Եփրատի առժամանակեայ կամուրջին վրայէն, այդ դժբախտները վակոնի պատուհաններէն կը տեսնեն խումբ մը դիակներ գետին վրայ, որոնց հագուստները եւ տարազը նման էր իրենց գիւղացիներու հագուստներուն: *Հարս մը որ գնացքին մէջ նոր ծնած էր իր անդրանիկ զաւակը եւ որ իր հարստութեան եւ գեղեցկութեան պատճառաւ անլուր տանջանքներու մատնուած էր ճամբուն վրայ եւ կէս խելագար վիճակի մէջ էր, կը կարծէ ճանչնալ իր ամուսինը դիակներու այդ խումբին մէջ: Բոլոր կիները կը ճչեն եւ կ'ուզեն գե-*

[1] *Ս[եպուհ] Ակունի*, Սիլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921, էջ 172:

տը թափուիլ, սիրական անուններ կ'աղաղակեն, կը պոռան, կը հեծեծեն: Նոր հարսը խելակորոյս վիճակի մէջ կ'ուզէ գետ նետուիլ եւ չի յաջողիլ նեղ պատուհանէն դուրս ցատկել, նորածին մանուկը կը նետէ դէպի կարծեցեալ ամուսինը:

Թուրք մը պատրուակելով որ մանուկները պիտի տանի, լաւ մարդոց խնամքներու պիտի յանձնէ, Սամսադի գիւղացիներէն եւ թուրքերու ծեռքէ հաւաքուած *մանուկներէն 70 հոգի* կ'առնէ մակոյկ մը կը լեցնէ եւ կ'ըսէ թէ Եփրատի վրայով ճարապլուս պիտի բերէ անկէ Հալէպ անցնելու համար:

Երբ կը հասնին Սիւրբիւրկէճի (Սուրբ Փրկիչ) մօտ, ուր ջրվէժ մը կայ եւ մեծ յորձանք մը կը կազմէ, եւ որ վերջին ծայր վտանգաւոր է մակոյկներու համար, փայտ մը կը կոտրէ մակոյկէն, ինքը կը նետուի ջուրը եւ լողալով կը հասնի գետեզրը: Մանուկներու մակոյկը անտէր եւ առանց ղեկի կը հասնի յորձանքին, կը շրջի անմիջապէս եւ սարսափահար մանուկները ցիր ու ցան պահ մը կը դառնան յորձանքին մէջ: Կէս ժամ չանցած 70 փոքրիկ դիակներ կ'ուղեւորուին հոսանքն ի վար»[1]:

Մեծ եղեռնի ողբերգության համայնապատկերն էր դարձել *Գրիգորիս* ծայրագույն վարդապետ *Պալաբյանը:* Լսելով իր ժողովրդի ապրած ծանր վշտի մասին, նա Բեռլինից աճապարեց Ստամբուլ, կամավոր միացավ բռնագաղթվածներին. ամիսներով քայլեց բնավեր խլյակ դարձած այդ դժբախտներին կողք կողքի, դիմացավ սովահարության, օրերով ծարավ մնալուն, ամեն րոպե սպասելով թուրքերի դատաստանին, քայլեց...: Այո. քայլեց, անցավ արաբական արևախանձ անապատներով, զգաց մահվան դատավճռի ծանր հետևանքները, սակայն հաստատ իր որոշման մեջ, հասավ մինչև Դեր Զոր աչքից չփախցնելով հայ ժողովրդի կրած տանջանքների ոչ մի մանրուք:

Հրաշքով փրկված, բարձրապատիվ, հայրենանվեր ու խիզախ հոգևորականը օրագրային գրառումներից հետագայում անցավ մեծ կտավի գործեր ստեղծելուն: Նա գրեց եղեռնի պատմությանը նվիրված *երկհատոր* մի աշխատություն, այն վերնագրելով «Հայ Գողգոթան» ներկայացրեց բազում հարցեր, առավել ևս *«Հայ մանուկ ցեղի»* կրած տանջանքների պատմությունը, որից մեջբերենք մի հատված միայն: Նա գրում է. «Ամէն կողմէ հարիւրով կամ հազարով հասնող կարաւաններ հետզհետէ ստուարանալով կ'ըլլային տասնեակ հազարներ:

Բնականաբար անկազմակերպ երկրի մը մէջ, եւ անկազմակերպ կառավարութեան մը ներքեւ, եւ մանավանդ բնաջնջելու յայտնի նպատակով տիրող խուժդուժ եւ անգութ հալածանքներու եւս պատճառով տասնեակ հազարներու հասնող հայ տարագրեալներու թիւը, շուտով կը կրկնապատկուէր ու կ'եռապատկուէր մասնաւոր դիտումով: Որպէս զի այս ընդհանուր խճողումով անհնար ըլլար պարենաւորումը եւ ինքնին չքմեղանար թուրք կառավարութիւնը իր բնաջնջումի դիւային ծրագրին մէջ:

Այս համատարած ժողովրդային մեծազանգուած խճողումներուն բնական հետեւանքը կ'ըլլար անշուշտ, հացի ու ջուրի պակասը եւ համաճարակներու ու տեսակ-տեսակ հիւանդութեանց տարածմամբ կոտորակում թշուառ հայ ժողովրդեան եւ անճիտում:

Հազարներով Իսլահիյէ հասնող ժողովուրդէն հազիւ հարիւրներ ճամբայ կը հանուէին ամէն օր, իբր թէ փոխադրութեանց եւ ոստիկան զինուորներու չգոյութեան չքմեղանքի դիտումնաւոր առարկութեամբ: Ասոր բնական հետեւանքը այն կ'ըլլար, որ սովահար եւ քանչէթ տառապող թշուառ ժողովրդեան մէջ առօրեայ մահերու թիւը հետզհետէ կ'աճէր անհաւատալի համեմատութեամբ: Օրեր եղած են, որ տասնեակ հազարաւոր վրաններու մէջ ոչ թէ տասով, այլ հարիւրաւոր մեռելներ եղած են, եւ առողջ մարդիկ չեն գտնուած, որ մեռելները հաւաքելով թաղեն: Իսկ եթէ բռնի կեր-

[1] «[1915] Աղետ և վերածնունդ», հեղինակ *Աղետեն վերապրողներ*, Փարիզ. 1952. էջ 54-59:

պով եւ հեռուէն ու մօտէն մարդ ճարուած է, փնտռուած քանակութեամբ բահ ու բրիչ չէ գտնուած այսքան հոծ թուով մեռեալները թաղելու համար:

Մանաւանդ առաջին զոհերն եղած են ամէն հասակէ ու սեռէ անմեղ հայ մանուկներն, մէկ գիշերուան մէջ փչող հիւսիսի սառնաշունչ քամին աշնան խորշակահար տերեւներու նման հազարաւոր թշուառ մանուկներ խլած է հայ մայրերու գրկէն: Իսկ եղերաբախտ մայրերը չեն լացած, որովհետեւ լալու ժամանակ ալ չեն ունեցած, եւ ընդհակառակը մխիթարուած են, խորհելով որ այս համատարած եւ շարունակական թշուառութեանց մէջ աւելի բախտաւորը ան է, որ ժամ առաջ մեռնելով կ'ազատի եւ միանգամայն կ'ազատէ իրենները աւելորդ բեռէ մը...: Քանի որ վաղ թէ ուշ ըլլալիքը տարաժամ մահն է, եւ ոչ թէ յուսալի փրկութիւնը:

Ահա այս պատճառով, երբ մեր թշուառ կարաւանը հասաւ Իսլահիյէ, մեր առջեւ պարզուեցաւ մէկը այն ահաւոր տեսարաններէն, որուն վերյիշումը ամենասեւ էջերէն մէկը կը կազմէ հայութեան աշխարհասասան բնաջնջումին:

Թուէր թէ մեր առջեւ տարածուող երկիրը պատերազմի դաշտ մը ըլլար: Որովհետեւ Իսլահիյէի առջեւ երկարող դաշտագետինը ծածկուած էր անհամար մեծ ու փոքր հողակոյտերով: Ասոնք գերեզմաններն էին յիսունով կամ հարիւրով թաղուած հայերու, եւ հակառակ արդէն ծմեռ մը անցած ըլլալուն՝ դեռ այս հողակոյտերն կը պահէին իրենց կորնթարդ բարձրութիւնը, եւ աւա՜ղ կային որ բլուրներ էին...:

Երբ կը խորհէինք թէ այս բլուրները հայերով լեցուած մարդկային բլուրներ էին... մեր յուսահատութիւնը եւ բարոյալքումը այլեւս կը հասնէր անծնասպանութեան միտող աստիճաններու...:

Տասնեակ հազարաւոր հայերու այս դիակները հողին ներքեւ թաղուած էին ոչ թէ իբր վերջին նուիրական պարտականութիւն, որը քաղաքակիրթ թէ վայրենի հանուր մարդկութեան վերջին իրաւունքը եղած է նախապատմական դարերէ ի վեր: Այլ ասոնք թաղուած էին կառավարութեան ղրկած իսլամ բանւորներու ձեռամբ պարզապէս «մթնոլորտը մաքրելու» համար նեխած կամ կազմալուծուած բիւրաւոր մարմիններու ապականութենէն...:

Որովհետեւ բռնագաղթի դատապարտուած հիւծած ու սպառած հայ տարաբախտ ժողովուրդը իրապէս անկարող էր իր մեռեալները թաղելու: Ինչպէս ըսինք, ոչ բրիչ ունէր, ոչ ալ ոյժ այս գործիքները գործածելու կամ իր սիրելիներուն անշունչ մարմինները վերցնելու եւ հողի խոր վիհերուն մէջ նետելու...:

Այս պատճառով խումբ խումբ ամէն օր մեկնող կարաւանները, կը ձգէին իրենց դիակնացած սիրելիները ու կը մեկնէին, առանց երկար բարակ սուգի սովորական եւ աղմկալից արտայայտութիւններու: Քանի որ վաղը նոյն սեւ ճակատագիրը կը սպասէր եւ իրենց ամէնուն ալ, մինչ օրուան զուլումը արդէն բաւ էր շուտով մոռացնել տալու հավիտենական անդարձ բաժանումը իրենց սիրելիներէն»[1]:

Հայ որբերի Դեր Զորում ապրած ողբերգության մասին է խոսում *Հայկ Թորոյանը,* որը հավաստում է Զեքի փաշայի հայւոսպան գործունեության, ինչպես նաև տեղացի արաբների մարդկային վերաբերմունքի մասին:

Բերենք այդ հատվածը. «Եթե չ'ըլլար Արաբ ազնիւ ժողովուրդին մարդասիրութիւնը, կը գրէ անհատական նամակի մը մէջ Հայկ Թորոյեան, 1915ի Աղետին առաջին վկայողը, Սուրիոյ եւ Միջագետքի հայութեան մեծ մասը գոյութիւն չէր ունենար: (Տեսնել «1915- Աղետ եւ Վերածնունդ», էջ 16-175):

[1] *Գրիգորիս ծ. վարդ. Պալաքեան,* Հայ Գողգոթան. Դրվագներ հայ մարտիրոսագրութեան. Պեռլինեն դեպի Զոր. 1914-1920. Ա հատոր. Բ տպագրություն. Պեյրութ. 1977. էջ 455-458:

Արաբներու մասին վկայութիւն մը եւս, գրուած Տէր-Զօրի ահաւոր ջարդէն վերապրողի մը կողմէ. «Այս միջոցին, աւելի քան 50.000 հայեր խճողուած էին Րաս-էլ-Այնէն մինչեւ Տէր-Զօր: Թրքական իշխանութիւնը ատոնց մաքրագործման յոյսը դրած էր Տէր-Զօրի արաբներուն վրայ: *Արիւնարբու Զէքի պէյը տեղւոյն երեւելիները հրապարակի մը մէջ հաւաքելով, ուր կանչուած էին հազարաւոր տարագրուածներ, կ՛առաջարկէ հայերը ջարդել: Ինք տալով օրինակը, հայ մանկիկ մը կը յափշտակէ եւ ոտքէն բռնելով, սուրովը երկու կտոր կ՛ընէ: Ներկայ Արաբները սարսափահար կը հեռանան, խնդրելով 48 ժամուան պայմանաժամ մը, իրենց ընելիքը որոշելու համար: Յետ խորհրդակցութեան, կը պատասխանեն. «Մեր խիղճը չենք կրնար բեռնաւորել անմեղներու արիւնով...»: Որմէ ետք, հրէշ թուրքը Սաֆա գիւղի չէչէններուն միջոցաւ կը գործադրէ իր արիւնոտ ծրագիրը...»:*

Արաբացած հայերէն անոնք որ 1915ին առնուազն 8-10 տարեկան էին, կը յիշեն իրենց հայկական ծագումը, ծննդավայրը, ծնողքը, ազգականներ եւ պապենական սովորութիւններ»[1]:

Հայ ժողովրդի ցեղասպանության պատմության նորովի հետազոտողներից է գերմանացի բյուզանդագետ, արդյունաբերության տնտեսագետ *Վոլֆգանգ Գուստը:* «Հայերի ցեղասպանությունը», խորախորհուրդ նրա աշխատությունը, վերջերս հրատարակել է *«Կարլ Հանսել»* հանրահայտ հրատարակչությունը (Մյունխեն-Վիեննա), որը կառուցված է *գերմանական* ու *թուրքական* արխիվներից հայտնաբերված նոր վավերագրերի հենքին կռթնած և լուրջ հարված է հասցնում ավազի վրա «հիմնված» թուրք կեղծարարների «հիմնազուրկ շենքին»[2]:

Նրա աշխատության առաջին գլուխը վերնագրված է *«Այս ողբերգությունը ժայռերից էլ արցունք կքամեր»:* Մենք կավելացնեինք, հումանիստ գիտնականի մենագրության ամեն մի էջը ցամաքած աչքերից էլ արտասուք կքամեր: Այն իր ընդգրկումով, նորահայտ ու առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող փաստերով, թարմ շունչ է հաղորդում ցեղասպանության պատմագիտությանը և իբրև օտարի, շշմեցուցիչ հարվածներ իջեցնում պատմության կեղծարարների գլխին:

Նա բերում է փաստեր առանց տողատակերի, այսինքն չակերտված, որոնք ինքնին մեծ արժեք ներկայացնելու պատճառով մեզ հարկադրում են ընդարձակ մեջբերումներ կատարելու հիշատակված մենագրությունից: Վոլֆգանգ Գուստը գրում է. «Ամենակարճ ժամանակամիջոցում թուրքերը սպանել էին *մեկ միլիոն հայերի, ընդ որում՝ առայսօր այդ թիվը վիճելի է համարվում:*

Թուրքիայի ներքին գործերի նախարար և ոճրագործության գլխավոր կազմակերպիչ Թալեաթը 1915-ի աշնանը Թուրքիայի բարեկամ էռնեստ Եքին ասել է *300 հազար* զոհերի մասին, բայց գերմանական դեսպանատունը զոհերի *թիվը հասցնում է մեկուկես միլիոնի:* Անվիճելի է, որ այդ ոճիրներից հետո Կենտրոնական և Արևելյան Անատոլիայի բնակավայրերում այլևս ոչ մի հայ չի մնացել:

«Հայերը մեռնում էին,- գրել է գերմանացի գրող Թեոֆիլ Վեգները, որը, որպես զինվորական բժիշկ, դարձել է ցեղասպանության ականատեսը,- քրդերից մորթոտված, ժանդարմներից կողոպտված, գնդակահարված, կախված, թունավորված, դաշունահարված, խեղդված, համաճարակներից հյուծված, ջրախեղդ եղած, սառած, պապակ ու սովալլուկ, նեխած, շնագայլերից հոշոտված: *Երեխաները լալիս էին մահվան ճիրաններում, տղամարդիկ ջախջախվում ժայռերի վրա, մայրերն իրենց երեխանե-*

[1] «Տէր-Զօր». հեղինակ *Աղետեն վերապրողներ,* Փարիզ, տպարան Պ. էլեկյան, 1955. էջ 28:

[2] *Վոլֆգանգ Գուստ,* նշված աշխատությունը, էջ 3-5:

րին նետում էին ջրհորները, հղիները երգելով հանձնվում էին եփրատին: Երկրային բոլոր տեսակի մահերով էին մեռնում նրանք, բոլոր դարերի մահերով»:

«Ես տեսել եմ խելագարվածների,- հավաստել է Վեգները Վուդրո Վիլսոնին ուղղած բաց նամակում,- որոնք ուտում էին իրենց կղկղանքը, կանանց, որոնք եփում էին իրենց նորածինների մարմինը, աղջիկների, որոնք դիահատում էին իրենց մայրերի դեռևս տաք մարմինները, որպեսզի աղիներից հանեն թալանչի ժանդարմների սարսափից կուլ տված ոսկին»:

Վեգները, որը հետագայում նացիստների համակենտրոնացման ճամբարում տեսնելու էր իր հայրենակիցների բարբարոսությունները, դարձել է զոհերի իրավապաշտպանը. «Կարծես հազարավոր մեռածներ են իմ բերանով խոսում»: Հանցագործների մասին գրել է. *«Ծառայողները, սպաները, զինվորները, հովիվները մրցում էին արյան իրենց արբեցմամբ, մանկահասակ որբ աղջիկներին քարշ էին տալիս դպրոցներից՝ իրենց անասնական հաճույքների համար, մահակով ծեծում էին հղիության վերջին շաբաթներն ապրող կանանց, ովքեր մահամերձ, այլևս չէին կարողանում քայլել, ծեծում էին, մինչև որ կինը փողոցում ծննդաբերեր ու մեռներ, փոշու հետ խառնվելով վերածվեր արնաշաղախ կույտի»[1]:*

Վոլֆգանգ Գուստի գրքի «Փոքր Աուշվից փոքրիկների համար. երեխաների տառապանքն ու մահը» խորագրված գլխի նյութը ամբողջովին վերաբերում է մեր հետազոտության սույն խնդրին: Ուստի այն մեջբերում ենք առանց խմբագրության կամ կրճատման:

Նա գրում է. «Ականատեսներին ամենաշատը ցնցել է երեխաների ճակատագիրը: 8-9 տարեկան բազում մանուկներ, ըստ ամերիկուհի Քեյթ է. Էյնսլիի, թափառում էին աքսորի ճանապարհին, թեև «հոգնածությունից հազիվ էին ոտքի վրա մնում: Չնայած դրան, գրկած տանում էին կրտսեր քույրերին, որովհետև մայրերը վերջին պահին նրանց ձայնում, պատվիրում էին. «Ուշադիր եղիր, փոքրիկին չկորցնես»:

«Շատ մայրեր իրենց մի երեխային չնչին ուտելիքով թողնում էին ճամփեզրին,- հայտնել է Քեյթ Էյնսլին,- որպեսզի կարողանան մյուսների հոգսը հոգալ: Հաճախ լսվում էին այսպիսի հուսահատ ճիչեր. «Չե՞ք ուզում իմ դստերը վերցնել, դուք նրան կազատեք ճանապարհի տառապանքներից: Նա կրթվել է ձեր դպրոցներում: Եթե վերցնեք, կյանքը փրկած կլինեք»: Կամ խնդրում էին. «Վերցրեք իմ փոքրիկին, իմ սիրասուն զավակին: Ես ինչպես գնամ լեռներով ու այրող անապատներով, նրան էլ հետս տանեմ, կերակրեմ»:

Սակայն, եթե որևէ մեկը ցանկացել է օգնել հայ մանուկներին, վտանգել է սեփական կյանքը: «Ես տեսել եմ,- գրել է անգլուհի Ֆրիերսընը,- թե ինչպես ծեծեցին մի ծեր կնոջ, որովհետև նա փորձում էր մի հիվանդ երեխայի ջուր տալ»:

Հարյուրավոր երեխաների, հայտնել է Մերսինի ամերիկյան հյուպատոս Նաթանը, ծնողները լքել են, որովհետև այլևս ի վիճակի չեն եղել նրանց տառապանքները տեսնել կամ տիրություն անել: Թողել են շատերին: Գերմանացի բուժքույր Պաուլա Շեֆերը ճանապարհի փոշիների մեջ գտել է մի քանի շաբաթական բոլորովին մերկ նորածնի: Նա դեռ ողջ է եղել: «Այդպիսիք սովորաբար ընկած էին լինում թփերի տակ և ճչում էին սովից ու ծարավից»:

Բաղդադի երկաթուղով ճամփորդելիս ամերիկուհի Հերլոու Բըրջը տեսել է հայուհիներին, որոնք իրենց նորածիններին նետել են գետը, որովհետև անկարող են եղել տանել նրանց սովալլուկ հեծեծանքը: Մի կին հենց գնացքում երկվորյակ է ունեցել, գցել է գետը, ինքն էլ նետվել հետևներից: Ըստ մի այլ ականատեսի առանձնահա-

[1] *Վոլֆգանգ Գուստ*, նշված աշխատությունը, էջ 10-11:

տուկ վիշտ է եղել այն, որ հայերը չեն կարողացել հողին հանձնել մեռածների մարմինները: Շատ մայրեր, մեջքին կապած, օրերով քարշ են տվել նրանց այն հույսով, որ կկարողանան ինչ-որ տեղ թաղել, փրկել շների և ուրուրների բաժին դառնալուց:

Տրապիզոնում կոտորվել է շուրջ 3 հազար հայ երեխա: Շատերը եղել են այն նավակներում, որոնցով հայերին տարել են բաց ծով և խեղդել, տեղեկացրել են ամերիկացիները: Իսկ ինչ նրանք չեն իմացել, հայտնի է դարձել հետպատերազմյան դատավարության ժամանակ: Առողջապահության հսկիչ, թուրք բժիշկ Սայիբի թելադրանքով երեխաներին ոչնչացրել են թունավորված չոր կաթով կամ գազով խեղդել են Կարմիր խաչի հիվանդանոցի նկուղում: Թուրք կանայք նրանց գազախցեր են մտցրել, իբր թե ախտահանելու համար: Որոշ ժամանակ լսվել է երեխաների ճիչը, հետո լռություն է տիրել հաղորդել են թուրք վկաները: Վերջում մանուկների սևացած դիակները կողովներով սուզել են ծովի խորքերը: Հիրավի փոքր Աուշվից հայ փոքրիկների համար:

Նման մեկ այլ սոսկալի «գյուտի» եվրոպացիները հանդիպել են Միջագետքի անապատում: Ըստ Մոսուլի գերմանական հյուպատոսի վկայության (հետագայում պատմել է ուսուցիչ Մարտին Նիպագը) Հալեպ տանող ճանապարհի որոշ հատվածներում այնքան շատ մանկական կտրված ձեռքեր են թափված եղել, որ հնարավոր կլիներ դրանցով մի ամբողջ փողոց սալահատակել: Արմին Թ. Վեգներն էլ լսնցել է այդպիսի ճանապարհներով ծածկված կտրված մանկական ձեռքերով, որոնք ասես աղերսանքով պարզված են եղել իրենց դահիճներին:

«Ուրֆայի գերմանական հոսպիտալում պառկած էր մի աղջնակ, որի երկու ձեռքն էլ կտրված էր»,- գրել է Նիպագը: Ըստ երևույթին այն բանի համար, ենթադրում է հայ բժիշկ Արմենակ Պարոնիկյանը, որ չկարողանա վրեժ լուծել»[1]:

«Ամենաայլանդակ ձևերով բռնաբարված յոթնամյա դեռատիները. կանանց ու աղջիկների ճակատագիրը» վերնագրված Վոլֆգանգի մենագրության տվյալ գլուխը պարունակում է ***հազվագյուտ*** փաստեր, ինչպես նաև գերմանացիների, այո՛, իր ազգակիցների, ինչպես նաև թուրքերի երեսին ամոթի թուք շպրտող շարադրանք, եթե այդ ջարդարարներն ամոթի զգացում ունենան: Այս պարագայում, ի նկատի ունենալով տվյալ հատվածի խոր գիտականությունը, ինչպես նաև նրա հեղինակի օտարազգի, կոնկրետ դեպքում, գերմանացի լինելը, մենք նպատակահարմար գտանք այդ բաժինը վերահրատարակել նույնությամբ: Նա գրում է. «Պատերազմները միշտ և ամենուր կանանց տառապանք են բերել: «Տարագիրների յուրաքանչյուր քարավան մեզ արհավիրքի նոր լուրեր էր բերում,- գրել է անգլուհի Ֆրիերսընը,- չնչին բացառությամբ երիտասարդ կանանց ու աղջիկների տանում, անարգում էին, մյուս մասի հետ վարվում էին ամենավայրագ ձևով»: «Բոլոր հայուհիներն ազատ էին «ինչպես թռչուն» և կարող էին փրկության հույսեր ունենալ, քանի դեռ դրամները չէին վերջացել,- գրել է շվեյցարացի Քյունցլերը,- նույնիսկ ամենավավաշոտ թուրքը փողը նախընտրում էր կնոջ մարմնից»: «Մայրերը տալիս էին բոլոր խնայողությունները,- հաղորդել է ամերիկուհի Ուելսը,- որպեսզի դուստրերին փրկեն բռնաբարությունից, բայց նրանց ունեցածը հերիքում էր միայն որոշ ճանապարհահատվածում»:

Ուրֆայում թուրք իշխանավորները եկեղեցին վերածել են պոռնկատան, ուր քշել են տարագիր հայ կանանց: «Հարևան տներից կարելի էր տեսնել,- գրել է գերմանական որբանոցի տնօրեն Բրունո Էքարտը,- թե ինչպես էին քաղաքի թուրքերն ընտրում և գիշերներն իրենց տները քարշ տալիս ամենագեղեցիկ կանանց ու աղջիկներին: Այդ ընթացքում սպանված եպիսկոպոսի սենյակից անընդհատ ցավատանջ ճիչեր էին լսվում»:

Յոզղաթ քաղաքի մոտերքում, Բողազ Քեմհնի կիրճում, ինչպես պատերազմից

[1] ***Վոլֆգանգ Գուստ,*** նշված աշխատությունը, էջ 35-38:

հետո ցուցմունք է տվել մի թուրք ծառայող, ժանդարմներն առանձնացրել են 300 ջահել *կանանց ու յոթ տարեկան աղջիկների, բռնաբարել են ամենաայլանդակ ձևերով: «Թուրք տղամարդիկ ավելի դաժան էին վարվել, քան վայրի գազանները»*,- գրել է Թեոդոր Էլմերը:

Տեղահանությունից առաջ շատ բնակավայրերում իշխանավորներն իրենց հնազույքների համար պահել են ամենագեղեցիկ աղջիկներին: Տրապիզոնում նահանգապետ Ջեմալ Ազմին չքնաղ հայուհիներին ոչ միայն ևվեր է ուղարկել Կոստանդնուպոլսի իր պետերին, այլև քաղաքի Կարմիր խաչի հիվանդանոցից բերել է տվել 15 երիտասարդ հայուհու, որպեսզի, ըստ վաճառական Մեհմեդ Ալիի ցուցմունքի, հագուրդ տա տռփամոլությանը: Ինչպես պատերազմից հետո հուշագրել է մաքսային տեսուչ Բիգիմը, դատարանն այնուհետև հաստատել է, որ հատկապես կույս հայուհիներին բռնաբարել են բազմատեսակ կտտանքներով:

Հալեպում եվրոպացիները փրկել են հայ աղջնակների, ընդ որում՝ այդ դժբախտներին ընդամենը մի քանի մարկով գնել են թուրք զինվորից, որը պղծել է նրանց, գրել է ուսուցիչ Մարտին Նիպագը: «Բոլոր այդ աղջիկները, կարծես, հոգեկան խանգարում ստացած լինեին (դարձյալ ըստ Նիպագի), նրանցից շատերը տեսել էին, թե ինչպես են թուրքերն իրենց ծնողների վիզը կտրել: Ես գիտեմ այնպիսի դժբախտ արարածների, որոնցից ամիսներով հնարավոր չէր մի բառ անգամ կորզել»: Գերմանացի ուսուցիչը հաղորդել է մի տասնչորսամյա հայուհու մասին, որին փրկել է Բաղդադի երկաթուղու մի գերմանացի պահեստապետ: «Երեխային մի գիշերվա մեջ այնքան հաճախ էին բռնաբարել թուրք զինվորները, որ լրիվ կորցրել էր գիտակցությունը: Ես տեսնում էի, թե ինչպես է նա այրվող շուրթերով խելացնոր գալարվում իր բարձի վրա և դժվարությամբ էի կարողանում ջուր խմեցնել»:

Շատ հայուհիներ չեն դիմացել սեռական տանջանքներին: «Այդ գազանները երիտասարդ կանանց ու աղջիկներին չարչարում էին ամենակոպիտ իրերով, խեղճերի ճիչը հասնում էր երկինք»,- պատմել է բայբուրթցի մի հայուհի: Տաբագրության ճանապարհին բոլորին ցնցել են աղջիկների և երեխաների այլանդակված դիակները: Բաղդադի երկաթուղու գերմանացի ծառայող Գրայֆը հաղորդել է, որ Թել Աբիյադի և Ռաս-ուլ-Այնի երկաթուղային թմբի երկայնքով զանգվածաբար փռված են եղել պղծված կանանց մերկ մարմիններ. «Նրանցից շատերի սրբանները ցից էր խրված»:

Ըստ ամերիկուհի Ուելսի Հալեպից մեկը գրել է. «Ավելի լավ է աղջիկներին այդտեղ խեղդեք, քան թողնեք, որ գան այստեղ հասնեն»: Շատ հայ կանայք այդպես էլ վարվել են՝ կամավոր մահով փորձել են զերծ մնալ խայտառակությունից: Մարզվանի օրիորդաց վարժարանի տնօրեն տիկին Վիլարդը մի պահ նույնիսկ մտածել է (ըստ Էլմերի), որ ավելի լավ է երիտասարդ հայուհիներին վարժարանի այգում գնդակահարեն, քան հանձնեն թուրք բարբարոսներին: «Ջահել աղջիկներից մի քանիսը թույն խմեցին,- հայտնել է ամերիկուհի Հոլտը,- շատերն անարգանքից խուսափելու համար նետվում էին գետը, ոմանք էլ իրենց երեխաների կյանքը փրկելու համար ենթարկվում էին»:

«Սակայն նույնիսկ հղի կանայք շատ հազվադեպ են կարեկցանքի արժանանում: Նրանց քշում էին մտրակի հարվածներով,- պատմել է ամերիկացի բժիշկ Ֆրեդ Շիփլըրդը,- մի մասը ծննդաբերում էր ճանապարհին, բայց բիրտ պահակները ստիպում էին անմիջապես շարունակել ճանապարհը, և կանայք արյունաքամ էին լինում»: «Այնթապի մոտերքում,- վկայել է գերմանացի ինժեներ էռնեստ Փիպերը,- մի կին գիշերը երկվորյակ ունեցավ, բայց առավոտյան ստիպեցին շարունակել ճանապարհը: Ճարահատ երեխաներին թողեց մի թփի տակ, իսկ քիչ անց ինքն էլ գետին գլորվեց: Մի ուրիշ կին էլ ծննդաբերեց երթի ժամանակ և քանի որ պարտադրեցին անմիջապես քայլել, մեռած տապալվեց»:

«Հայտնի է դարձել մի դեպք,- հաղորդել է Շիփըրդը,- երբ հսկիչները մարդկային խիղճ են դրսևորել, ծննդկաններին մի քանի ժամվա դադար են տվել, իսկ հետո, ճանապարհը շարունակելու համար, նույնիսկ սայլ տրամադրել»: Հարաբերականորեն մարդկային մեկ այլ դեպքի մասին պատմել է Մ. Վ. Ֆրիերսընը: Մեկնումի հրամանից հետո ոստիկանը այդ գիշեր ծննդաբերած մի կնոջ մտրակով քշել է առաջ, բայց երբ մի հայ բուժքույր բողոքել և ծննդկանի համար սայլ է պահանջել, ոստիկանը մի ծերուկի հրել-գցել է ավանակի վրայից, նստեցրել կնոջը: Բայց հայուհին քաղաքից դուրս չեկած մեռել է:

«Բոլոր գեղեցիկ տղաներին ու աղջիկներին թուրքերն արդեն ընտրել էին,- գրել է Սիացյալ Նահանգների Խարբերդի հյուպատոս Դևիսը,- նրանց հետ վարվում էին ինչպես ստրուկների հետ, եթե, իհարկե, շատ ավելի ստոր նպատակների չէին ծառայեցնում»:

Տեղահանման ամիսներին, հատկապես Արևելյան Թուրքիայում, ծաղկում էին վաղուց ի վեր մոռացված ստրուկների շուկաները: Ըստ մի հայուհու ցուցմունքի՝ իրենց քարավանի կանայք և աղջիկները ճանապարհի յուրաքանչյուր քաղաքում պետք է շարվեին հրապարակում: Իշխանությունների ընտրությունից հետո շրջակա գյուղերի բնակիչներին հայտնել են, որ նրանք էլ կարող են ընտրություն կատարել:

«Շատ թուրքեր,- Երզնկայից գրել են Վեդել-Յարլսբերգ և էլվերս քույրերը,- ծիերով գալիս, տանում էին երեխաներին ու դեռատի աղջիկներին: Քաղաքում իսկական ստրկական շուկա էր բացվել, միայն թե վաճառվող ապրանքը գրեթե ոչինչ կամ շատ քիչ արժեր: Մի անգամ երկու աղջկա գնեցին մոտ 4 մարկով, մի ուրիշ անգամ ոչխարով»: Դանիացի քույր Կարեն Եպպեն վկայել է. *«Մի երեխայի գինը մի բուռ թութուն էր»:*

Թուրքերը բժիշկներին հանձնարարել են քննել իրենց դուր եկած աղջիկներին, տեղեկացրել է Միացյալ Նահանգների հյուպատոս Դևիսը: Թե 4 տարի անց այդ առողջ և անմեղ աղջիկներն ինչի են վերածվել, պատմել է Դևիսի հայրենակիցը ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնի՝ օսմանյան կայսրություն քննության ուղարկած անձնական ներկայացուցիչը՝ գեներալ-մայոր Ջեյմս Գ. Հերբորդը. «Այլասերումն ու բռնաբարումը, կտտանքն ու մահը իրենց ահավոր հետքերն են թողել, հայկական *100 գեղեցիկ հովիտներում կանայք ու երեխաները վարակված են սեռական հիվանդություններով: Մի խոսքով՝ ամենուր, որպես անարգ ու վայրագ դաժանության հետևանք, թշվառությունն է իշխում»: Հերբորդը հատկապես ցնցվել է 150, այսպես կոչված «հարսնացուների» գործից: «Նրանցից շատերը պարզապես երեխաներ էին,- գրել է նա,- այդ անչափահաս աղջիկների հետ կատարվածը աշխարհի ցանկացած այլ անկյունում անհավատալի կհամարվեր»:*

Մոտ 100 հազար հայուհիների, ըստ Ազգերի լիգայի զեկուցագրի, թաքցրել են թուրքական հարեմներում կամ ստիպել են ամուսնանալ թուրքերի ու քրդերի հետ: Նրանց միայն չնչին մասն է պատերազմից հետո կրկին հայտնվել»[1]:

Այսքանից հետո մենք դժվարանում ենք նոր, լրացուցիչ ապացույցներ փնտրել, որպեսզի ընթերցողին համոզենք, թե թուրքերը վայրենի, շնագայլ, հայակեր են եղել Մեծ եղեռնի տարիներին և հիմնովին ոչնչացրել են Հայոց գենոֆոնդը: Բայց միայն մարդասպանությունը չէ, որ ցնցող է, սահմռկեցուցիչ, այլ դրա իրականացման ձևերն ու մեթոդները, որոնք ոչ միայն ընթերցողին, այլև գրողին, հրապարակողին, հոգեկան մեծ խռովկանք են պատճառում, տանջահարում, ամոթի ցավ պատճառում, թե ինչեր են քաշել մեր քույրերն ու եղբայրները բարբարոս այդ ազգի ձեռքին, այո, ամբողջ ազգի և ոչ առանձին անհատների:

---

[1] *Վոլֆգանգ Գուստ,* Հայերի ցեղասպանությունը. Երևան, 2002, էջ 37-40:

*

* *

Մեծ եղեռնի զոհերի թիվը հաշվելիս, անշուշտ, լուրջ ուշադրություն պետք է դարձնել բռնությամբ մահմեդականություն «ընդունած» այն հայերի թվաքանակի վրա, որոնք, մահվան սարսափի տակ, հավատափոխության ենթարկվեցին: Որքա՞ն էր առևանգված, վաճառքի հանված, իբրև տնային ստրուկ դարձրած բնավեր հայ խլյակների թիվը, ինչպես մինչև օրս ոչ ոք, այնպես էլ մենք ճշգրտորեն որոշել չենք կարող:

Խնդիրը հանգամանորեն քննության է առել *Լիպարիտ Ազատյանն* իր ստվարածավալ, եռահատոր «Հայ որբերը Մեծ եղեռնի» աշխատության էջերում, որտեղ ցավոք, ինքը ևս *զգուշացել է ընդհանրացնող* որևէ թիվ հրապարակել: Նույն ճանապարհն է ընտրել գրքերի հմուտ խմբագիր, հայ անվանի գրող ու քաղաքական գործիչ, եղեռնից մազապուրծ ծնողների զրագետ զավակ *Ստեփան Ալաջաջյանը:*

Նրանք գիտական երկրորդ կյանք են պարգևել այն հեղինակների հաշվարկներին, որոնք չնայած իրար հակասող, երբեմն էլ միայն լրացնող լինելով, մոտավոր պատկերացում են տալիս իսլամացած հայերի թվաքանակի վերաբերյալ: Լ. Ազատյանի վերոհիշյալ աշխատության *«Որքան հայեր բրքացան»* գլխում կարդում ենք. «Մեր պրպտումներն ու մեր ձեռքի տակ եղած տուեալները մեզի իրաւունք չեն տար որոշակի եզրակացութիւն մը ընելու, ուստի կը բաւարարուինք քանի մը արծանագրութիւններով:

Փրոֆ. Գէորգ Պաղճեան, որ հմուտ ու բարեխիղճ երկասիրող մըն է իբրեւ պատմագէտ եւ յատկապէս ցեղասպանութեան ու հայկական հարցերու վերաբերեալ նիւթերուն ուսումնասիրութեան եւ վերլուծութեան մէջ, իր ֆրանսերէն լեզուով հրատարակած «Հայկական հարցը» գրքին մէջ ենթագլուխ մը նուիրած է բռնի հաւատափոխուած հայերու թուաքանակի առընչութեամբ: Այնտեղ Պրն. Պաղճեան կը նշէ, թէ դեռեւս 1916-ին Ժոաննի Պրիգոն (Joanny Bricaud), հեղինակը «Arménie qui agonise» գրքին, կը վկայէ, որ *«Ապրիլ ամիսէն ասդին հարիւր հազարէ աւելի հայեր բռնի հաւատափոխուեցան իսլամի...»:*

Փրոֆ. Պաղճեան բազմաթիւ մէջբերումներ կը կատարէ ուրիշ հեղինակներէ, որոնց շարքին Հայր Ժան Շինիարայի «Le Martyre et l'Exile-1919» գիրքէն, ապա ֆրանսական Դեղին Գիրքէն (Livre Jaune), ինչպէս նաեւ կ'օգտագործէ Մաք Քոլմ եւ Դիլլոնի այն վկայութիւնը, թէ *«290.300 հայեր բռնի հաւատափոխուեցան իսլամի»* (Livre Rouge, Paris, 1919, p. 9):

Վենետիկի (Ս. Ղազար) Մխիթարեան Միաբանութեան Հայր Բարսեղ Սարգիսեանն ալ, դեռ 1919-ին, իր հաշուումներով կը յանգի այն ենթադրութեան, թէ *«մէկ միլիոնի չափ հայեր բռնի կերպով հաւատափոխուեցան իսլամի»*[1]:

Լ. Ազատյանը հրապարակում է մի հետաքրքիր նամակ ևս, որը հաստատում է, թե 1970-ական թվականներին Թուրքիայում ապրել են շուրջ *500 հազար* հավատափոխ հայեր: Ահա նրա բերած նամակի տեքստը.

«70-ական թուականին, 50 երկիրներու դեսպաններ Մոսկուայէն Հայաստան եկած էին այցի: Անոնց կարգին նաեւ թուրք դեսպանը: Ընդունելութեան պահուն Կապի Կոմիտէի նախագահի տեղակալ Անդրանիկ Մարտիրոսեան, որ թրքերէն գիտէր, անձամբ խօսքի բռնուելով թուրք դեսպանին հետ, անկէ իմացած էր որ դեռ 500.000 հայեր կ'ապրին Թուրքիոյ մէջ: Դեսպանը պնդած էր այս թիւին վրայ:

Հայաստան տիրող կարծիքը այն էր, թէ թուրք դեսպանը հաշուի կ'առներ թրքացած հայերը»:

«Ես ասի ուղղակի Անդրանիկէն լսած եմ, հաւաստի է», կը գրէ Ճեպեճեանը»[2]:

---

[1] *Լիպարիտ Ազատյան,* Հայ որբերը Մեծ եղեռնի. հ. երրորդ. Լոս Անճելըս, 2001, էջ 68:

[2] Նույն տեղում, էջ 69:

Վերոհիշյալ կամ դրանցից զատ այլ փաստերից ևս կարելի է եզրակացնել, որ Թուրքիայում ցայսօր դեռևս հարատևում են *կես միլիոն* իսլամացած հայեր, որոնք բեկորներն են մահմեդականության բռնադատված հայ որբերի, թերևս նաև մեծահասակ իսլամացվածների:

Լիպարիտ Ազատյանի եռահատորյակի էջերում կարող ենք գտնել նաև *«Որքան հայեր քրտացան»* ենթաբաժինը, որտեղ, հենվելով օտար աղբյուրների վրա, հաշվարկներ կատարելով, նա հանգում է այն եզրահանգման, թե. *«Այսպիսով Թուրքիայի տարածքի վրա ենթադրվող Քյուրտիստանի մեջ առնվազն 300 հազար քրտացած հայ կայ. քրիստոնյա-իսլամ, բայց այնուամենայնիվ, ծագումով հայ՝ քրտախոս հայ»*[1]:

Ավստրիական շնորհալի պատմաբան, արխիվագետ *Արտեմ Օհանջանյանը*, պրպտելով Ավստրիայի և ընդհանրապես գերմանալեզու բազմաթիվ արխիվներ, գիտական շրջանառության մեջ է դնում բոլորովին նոր, թարմ, մինչ այդ չօգտագործված փաստեր, որոնք վերաբերում են նաև հայերին, մասնավորապես *հայ երեխաների* թուրքացման պրոցեսին: Նյութի կարևորությունը մեզ պարտադրում է ընդարձակ քաղվածք բերել նրա աշխատությունից:

Նա գրում է. «Հայերի տեղահանումը շարունակելու համար թուրքական կառավարությունն օգտագործեց մի ուրիշ պատրվակ. կառավարական հրամանագրով որոշում ընդունվեց պատժելու դասալիքների ընտանիքներին: Թեև այդ հրամանագիրը հավասարապես վերաբերում էր ողջ կայսրության բնակիչներին, սակայն խստագույն պատիժներ էին ստանում միայն քրիստոնյաները: Նադամլենցկին 1915 թ. հոկտեմբերի 22-ին Ադրիանապոլսից հաղորդում է. «Գործնականում այնպես է արվում, որ ոստիկանական ատյանների ներկայացուցիչները գնում են այն հույների եւ հայերի տները, որոնց բնակիչները խուսափել են զինվորական ծառայությունից, եւ հայտնում են վերջիններիս, որ նրանք 14 օրվա ընթացքում պետք է տեղափոխվեն երկրի խորքը: Քրիստոնյաների զինվորական ծառայությունից խուսափելու պատճառը պետք է փնտրել նրանց հանդեպ բիրտ վերաբերմունքի եւ այն հանգամանքի մեջ, որ նրանց օգտագործում են ոչ թե որպես զինվորների, այլ որպես ճանապարհաշինարարների»:

Վատիկանի նվիրակ Հ. Հոֆերը երզրումում ականատես էր հայերի հալածանքներին: Վերադառնալով Վիեննա նա 1915 թ. հոկտեմբերի 26-ին մի հուշագիր է կազմում բռնագաղթի ենթարկվածների ճակատագրի մասին. «Կաթոլիկական հաստատությունների դեմ ուղղված մասոնական հալածանքների կողքին պետք է հիշատակվեն թուրքական կառավարության շատ ավելի ծանրակշիռ հալածանքները ողջ հայ ազգի դեմ: Տեղահանում (բռնագաղթ) բառը նշանակում է.

1. Լիակատար բաժանում ամուսիններին իրենց կանանցից ու մայրերին իրենց երեխաներից:

2. Թուրք սուրհանդակների սպառնալիքները եւ շողոքորթությունները սրան կամ նրան հավատափոխության դրդելու նպատակով: Հավատափոխներին, որոնք շատ են, անմիջապես տանում են զուտ մահմեդական բնակավայրեր, որտեղից այլեւս վերադարձ չկա:

3. Կանանց առևանգում, եթե նրանք իրենց մարմնական հատկանիշներով հարմար են հարեմներին վաճառելու կամ ազնվականների ու պահակների ցածր ցանկությունները բավարարելու համար:

4. *Փոքր աղջիկներին տարբեր բնակավայրերից դարձնում են թուրքական տների համար փոքրիկ աղախիններ, իսկ այդ տների պարտականությունն է նրանց տալ համապատասխան մահմեդական կրթություն: Նրանցից ոմանք նույնիսկ Կ. Պոլիս են եկել: Այլ վայրերում բոլոր քրիստոնյա տղաներին թլպա-*

[1] *Լիպարիտ Ազատյան*, նշված աշխատությունը, էջ 163:

տում եւ թուրքական տներ են տանում: Այսպես. սեպտեմբերի 1-ին՝ սուլթանի ծննդյան օրը, հանդիսավոր կերպով թլպատեցին 100 քրիստոնյա տղաների Անկարայից, այդ թվում շատ կաթոլիկների:

5. Կան գավառներ, որոնցում ներկայումս իրենց թուրքական հայրենիքի համար մարտնչող զինվորների կանանց ու աղջիկներին հավաքում են բացառապես թուրքական գյուղերում բաշխելու համար (ականատեսն է զեկուցողը), որը պատահել է Իզմիրում:

Ընտրությունն այս ձեւով կատարելուց հետո մնացածներին ստիպում են լքել իրենց ամբողջ ունեցվածքը, տները, դրամը եւ գնալու երկրի խորքերը: Մեծ մասամբ բիրտ ժանդարմների ուղեկցությամբ նրանք առանց հանգստի շրջում են գյուղից գյուղ, հարթավայրից հարթավայր, դեպի անհայտ նպատակ: Բաժանման տառապանքից ու ցավից հոգեպես ցնցված, նրանց օրգանիզմն այլեւս ի վիճակի չէ դիմանալու վատ եղանակին ու զրկանքներին, այնպես որ շատերը մեռնում են ճանապարհին: Մյուսներին սպանում են առանց այլեւայլության: Այսպիսով՝ հաստատվում է Վանում եւ Բիթլիսում հայերի համընդհանուր կոտորածի լուրը, նաև Սարդինի կոտորածինը, որտեղ սպանել են կաթոլիկ եպիսկոպոսին իր յոթ հարյուր հավատարիմների հետ միասին: *Վերոհիշյալ վկան հաղորդում է Անգորայից, որ տասը տարեկանից բարձր արական սեռի հայ ողջ բնակչությունը բնաջնջվել է կոտորածի միջոցով: Նման շատ օրինակներ կարելի է բերել:*

Այն դաժանության վրա, որին ենթարկվում են տեղահանվածները, լույս է սփռում զեկուցողի կողմից ներկայացված երկու թուրք վկաների պատմածը: Անգորայի ճանապարհին մի լքված եկեղեցում սվիններով հսկողության տակ էին գտնվում հարյուր հիսունից երկու հարյուր տեղահանված հայեր, այդ թվում մի կաթոլիկ քահանա եւ երկու քույրեր: Ստիպված լինելով իրենց բնական կարիքը նույն տեղում հոգալու, նրանք պառկած են իրար վրա՝ ապականված սրահում, մերկ գետնին: Երկու վկաներն այս ամբոխում նկատել էին խոլերայից մահացած կանանց երկու դիակ, որոնց պահակները թույլ չեն տվել թաղել: Պետք է նշել, որ թուրքերն իրենք կոտորածների կամ զրկանքների պատճառով զոհված հայերի *թիվը համարում են հինգ հարյուր հազար, իսկ տեղահանվածներինը՝ հինը հարյուր հազար:*

Տեղահանվածների վիճակի մասին գնդապետ Կրեսը գրում է. «Այն օրերին տեսածս շատ տխուր բաներից ամենասարսափելին, թերեւս, այցելությունն էր թուրքական իշխանությունների կողմից բացված որբանոց, ուր տեղավորված էին մոտ հինգ հարյուր ծնողազուրկ հայ երեխաներ: Մի հին եկեղեցում երեխաները պառկած էին բարակ ծղոտե խսիրների վրա, առանց վերմակների հագած միայն Արեւելքում ընդունված խալաթանման գիշերանոցներ: Պատուհաններն ու դռները ջարդած էին, տանիքից կաթում էր, ննջարանի մեջտեղում անծրեւներից մի մեծ ջրափոս էր առաջացել: Երեխաները ցրտից դողում էին: *Նրանք օրական երեսուն գրամ հաց եւ մի բաս* ջրիկ ապուր էին ստանում: Ամենահուզիչն այն էր, որ նրանք բոլորը լուռ էին ու անտարբեր: Չէր լսվում ոչ գանգատ, ոչ տրտունջ, միայն հիվանդների տնքոց: Խոշոր մանկական աչքերը հետեւում էին մեզ՝ լի ահով ու սարսափով»:

Զոհված հայերի թիվը, ըստ թուրքերի, հինգ հարյուր հազար էր: Հոկտեմբերի 23-ին այդ թիվն է հաղորդում նաեւ Ցվիրակ Սպանելլին Բուրյանին: Եթե հաշվի առնենք, որ տեղահանվածների առնվազն երեք քառորդը մահացել է աքսորի ճանապարհին, ապա մինչեւ *1915 թ. հոկտեմբերի 24-ը պետք է զոհված լինեն մեկ միլիոնից ավելի հայեր:* Այդ եզրակացությանն ենք հանդիպում նաեւ 1915 թ. դեկտեմբերի 2-ի մի լրտեսագրում. «Այլ հաշվարկների հետ համընկնելով իմ տեղեկատուն հավաստիացնում է, որ *բնաջնջվել է մոտ մեկ միլիոն հայ»:*

Զինադադարից հետո իշխանության եկած «Ազատության եւ միասնության» կառավարությունը խոսում էր ութ հարյուր հազար զոհված հայերի մասին: Այդ ժամա-

նակ արդեն վերջացել էր եւ այսպես կոչված հայերի ապստամբությունը Սուեդիայում: 1915 թ. հոկտեմբերի 25-ին Դանդինին հաղորդում է, որ ապստամբ հայերը փախել են անգլիական նավերով եւ որպես կամավոր մեկնել Դարդանել: Մինչդեռ Ուրֆայում կառավարական զորքերը ճնշել են հայերի ապստամբությունը եւ գերի են վերցրել մոտ երեսուն հազար մարդ, այդ թվում՝ կանանց ու երեխաների:

Սուեդիայի ապստամբությունը, ինչպես եւ Վանինը, զուտ ինքնապաշտպանական բնույթ էր կրում: Սուեդիայից փրկություն գտած չորս հազար հիսունութ հայերից հայ բողոքական քահանա Տիգրան Անդրեասյանը գրում է. «Իմ հայրենիք (Անտիոք) հասնելուց 18 օր անց Անտիոքում ստացվեց թուրքական կառավարության հրամանն այն մասին, որ Մուսա լեռան շուրջը գտնվող վեց գյուղերը յոթ օրվա ընթացքում պատրաստվեն տեղահանման: Հազիվ թե կարողանաք պատկերացնել այն զարմանքն ու վրդովմունքը, որ առաջացրեց այդ հրամանը: Ամբողջ գիշերը չենք քնել ու մտածում էինք, թե ի՞նչ անենք: Թվում էր, թե անհույս է թուրքական կառավարությանը հակառակվելը: Սակայն մեր ընտանիքները հեռավոր անապատ ուղարկելը, որտեղ ապրում են մոլեռանդ արաբական ցեղերը, այնքան սարսափելի էր թվում, որ կանայք, ինչպես եւ տղամարդիկ, հակված էին հրամանին հակառակվելու՝ գերադասելով իրենց վրա դարձնել կառավարության ցասումը: Մենք գիտեինք, որ անհնար էր լինելու պաշտպանել մեր լեռան շուրջը ընկած գյուղերը: Կառավարության հրամանն արձակվել էր հուլիսի 30-ին: 7 օրվա ժամկետն այժմ գրեթե անցել էր, եւ մենք պարզեցինք, որ թուրքերը մեր փախուստը հայտնաբերել էին: Ապա, օգոստոսի 5-ին, սկսեցին գրոհը»[1]: Նա ապա շարունակում է. «Կարծիք կար, թե հայերին տեղահանում են միայն սահմանամերձ շրջաններից: Այնինչ պարզվեց, որ նրանց անապատներ են տեղահանել բոլոր մարզերից: 1915 թ. նոյեմբերի 2-ին Պալավիչինին զեկուցում է. «Մինչեւ հիմա թվում էր, թե այն հայերին, որոնք ապրում են բուն հայկական շրջաններից դուրս, տեղահանումը չի սպառնում: Սակայն արդեն մի շաբաթ է, ինչ լուրեր են հասնում նաեւ Ադրիանապոլսից, որ այնտեղի հայերը եւս վտարվում են»:

«Հենց միայն Դամասկոսով անցել են հիսուն հազար բռնագաղթվածներ», Դամասկոսում Ավստրո-Հունգարիայի հյուպատոսի կարծիքով այսքան շատ էին այն հայերը, որոնք պետք է բնակեցվեին Հորդանանից ու Մեռյալ ծովից դեպի արեւելք: Սակայն նա չէր կարծում, որ սրանք կարող էին կենդանի մնալ: «Սովն ու համաճարակներն արդեն մոլեգնում են նրանց շրջանում»: Բռնագաղթածների երեխաների համար մեծ օգնություն էր,- գրում է նա,- եթե սրանց մասամբ բռնությամբ, մասամբ էլ հոժարակամ անջատում էին իրենց հարազատներից եւ հանձնում թուրք ընտանիքների: Բռնագաղթը շարունակվում էր: Դրա իրականացման եղանակը զարհուրելի էր: Ավստրո-Հունգարիայի հյուպատոսը 1915-ի նոյեմբերի 2-ին հաղորդում է Ադրիանապոլիսից.

«Անկարելի է նկարագրել արտաքսումների ժամանակ տեղի ունեցող տեսարանները. հիվանդներին, ծերերին ու երեխաներին դուրս էին քաշում անկողնուց եւ ուժով տանում: Անօգնական, անմեղ մարդկանց նկատմամբ ոչինչ հաշվի չէր առնվում, խիղճ չկար, իշխում էր միայն բիրտ ուժն ու բարբարոսական անարդարությունը»[2]:

Հայ ժողովրդի անօրինակ ողբերգության մասին գերմանացի Հայնրիխ Ֆիրբյուխերը այնպիսի հուզմունքով է արտահայտվել, այնպիսի ցնցող փաստեր է հրապարակել, որ նրանից հետո, դժվար թե գտնվի մեկը, որը կարողանա ավելի պատկերավոր արտահայտվել: Ի նկատի ունենալով շարադրանքի հեղինակի գերմանացի լինելը (այսինքն՝ այն ազգից, որը դաշնակցում էր Թուրքիային), ինչպես նաև օգտա-

[1] *Արտեմ Օհանջանյան*, 1915 թվական. Անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին), Երևան, 1997, էջ 108-111:

[2] Նույն տեղում, էջ 112:

գործած փաստերի գերմանալեզու արխիվներից հավաքելը, այստեղ մեջ ենք բերում մի ընդարձակ շարադրանք, թուրքերին հրավիրելով նախ կարդալ այն, ապա նոր պատրաստվել հակաճառելու:

Ահա այդ շարադրանքը. *«Սատանայի կիրճը»* վերնագրված ենթագլխում կարդում ենք. «Տրապիզոնի ու էրզրումի կուսակալություններից բռնագաղթվածներին Եփրատի հովտով քշեցին մինչև Քեմախի կիրճը՝ զառիթափ լանջերով մի անդնդախոր լեռնանցք, որի նեղ ոլորաններով խելահեղ արագությամբ գահավիժում էր գետը: Հարյուր հազարավոր հայեր այնպիսի աննկարագրելի տանջանք ու տառապանք կրեցին այնտեղ, որ թվում էր այդ անհնչյալ մի ափ հողակտորի վրա դարձյալ կենտրոնացել է մարդկային հազարամյա դաժանությունը, որպեսզի հունիսյան տոթին մոլեգնած հրեշի նման ոռնա.

- Ամբողջ քաղաքակրթությունը մի անպաշտպան քող է, որ երկոտանի, վայրագ ու դժնի ճիվաղն ամեն ակնթարթ կարող է բզիկ-բզիկ անել:

Քեմախի նախճիրը, որ «Սիրանույշ» վեպում նկարագրել է վիպասան Ֆ. Ո Նորդը (Շտուտգարտ, գերմանական հրատարակչություն), ավելի շուտ հեղինակային հիվանդագին երևակայության անբնական ծնունդ է թվում, քան իրական իրադարձությունների անկողմնակալ վերարտադրություն: Էդգար Պոյի, Էռնեստ Հոֆմանի ամենազարհուրելի նկարագրություններն անգամ խամրում են այն ամենի կողքին, ինչ 1915-ին այստեղ արել են Վիլհելմ II-ի թուրք դաշնակիցները:

Հայերի հոծ, անվերջանալի խմբերը հունիսի 8-ին, 9-ին և 10-ին դուրս եկան Երզնկայից: Նրանց ուղեկցում էր զինվորական պահակախումբը, որ մինչև տեղ հասնելը պիտի ապահովեր հետիոտներից և մոտ հարյուր եզան սայլից կազմված քարավանի անվտանգությունը: Բռնագաղթվածներին քշեցին Քեմախ՝ հաջորդ գավառի կենտրոնը, բայց Եփրատի հովիտով անցած հարյուրհազարավոր հայերից միայն մի փոքրաթիվ խումբ վերջնական հանգրվան հասավ: *Անդնդախոր կիրճում թուրք զինվորներն ու արյունարբու քրդերը շրջակա լեռներից խուժեցին, հարձակվեցին անպաշտպան գաղթականների վրա, արյան անհագ ծարավով կողոպտեցին, կոտորեցին նրանց: Ջարդարարները խելագար ոռնոցներով անդնդախոր կիրճն էին շպրտում դիակներն ու մահամերձների մարմինները: Ջախջախվող ոսկորների ճարճատյունն անընդհատ արձագանքում էր ծորի նեղ պատերի մեջ, խառնվում վերևից եկող հոգեվարքների հուսահատ ճիչերին: Ծնողների աչքի առաջ զավակներին ու մերձավորներին բզկտում, կտոր-կտոր էին անում, արյունաշաղախ մսագնդերը խփում սուրսայր ժայռերին: Դժոխային այդ տեսարանից իրենց կորցրած մայրերն ու կանայք երեխաների, ամուսինների ետևից նետվում էին մահվան խորխորատները, ոմանք հուսահատ ծունկ էին չոքում արյունոտ ձեռքերով դահիճների առաջ, խնդրում շուտ սպանել իրենց: Կային նաև այնպիսիները, որոնք գութ էին աղերսում կամ իրենց ձեռքով զավակներին գետը նետում, որի ժայռոտ ափերին դիակները ամբարտակներ էին գոյացրել: Ցած ընկնող անկեղդան մարմիններից ալիքներն անընդհատ ծողփում էին: Եվ այդ դժոխային սպանդը, մոլագար նախճիրը ոչ թե մի երկու ժամ, անընդմեջ երեք օր շարունակվեց: Մարդկանց երկար տանջում ու մորթում էին, արյան առվակները ժայռերի արանքով դանդաղ հոսում էին ներքև, խառնվում գետի բուռն հորձանքին:*

Երեք օր... Եվ արևը չէր խավարում, մոլեգնած հողմը չէր շրջում ստամբուլյան մեղկ պարտեզների շենշող սեղանները, որոնց շուրջը գերմանացի ու թուրք դաշնակիցները բաժակ բաժակի էին խփում: *Մորթվող երեխաների աղիողորմ ճիչերը նույնիսկ արևելյան գայթակղիչ պատկերները չէին ցրում, որ սրճարանների մշտական հաճախորդների երևակայության մեջ ուրվագծում էին ոգելից ըմպելիքների գոլորշիները:* Մի՞թե գերմանացի ոչ մի պետական գործիչ գիշերը չզարթնեց խղճի խայթից, որպեսզի բոսֆորյան պաշտոնակիցների դեմքին գոռար, որ նրանք շղթայվելու

արժանի դևեր են: Մերոնք այդ ամենին այնքա՜ն անլուրջ էին վերաբերվում...

Բեռլին ուղարկած 1915 թվականի մայիսի 31-ի զեկուցագրում դեսպան Վանգենհայմը գրում է. «Դժբախտաբար, հիշատակված դեպքերը, ելնելով Թուրքիայի ռազմական ու քաղաքական ներկա իրավիճակից, հնարավոր չէր կանխել»: Դժբախտաբար ինչ լավ, ուղղակի հիանալի գտնված բառ է:

Երեք օր: Այն մարդկանց ունեցվածքը, որոնց մարմինները Եփրատը կուլ էր տվել, տարան իրենց իսկ անտեր մնացած եզան սայլերով: Ու միայն չորրորդ օրը 86-րդ հեծյալ ջոկատը Քեմախ հասավ, որպեսզի «պատժի» արյունռուշտ քրդերին: Այդ «արդարադատ» զինվորները, սակայն, պարզապես նախճիրն ավարտեցին անգթորեն խողխողելով հատուկենտ ողջ մնացածներին: Կիրճի լանջերն ու լերկ ժայռերը պատած էր ուռած դիակներով, ծորից անտանելի գարշահոտություն էր բարձրանում:

Երզնկայում աշխատած երկու գերմանացի բուժքույր պատմել են.

«Մի զինվոր-ոստիկան պարծենում էր, որ օրական տասը-տասներկու հոգի է սպանել, գետը նետել, երեխաներին, որոնք չեն կարողացել փախչել, խփել է ժայռերին, գանգերը փշրել: Կանանց, ճանապարհի բոլոր գյուղերում, նորից ու նորից բռնաբարել են»:

Այնուհետև, նրանք շարունակում են.

«Հաջորդ առավոտ շուտ մենք լսեցինք մահվան դատապարտված քարավանի աղմուկը, որն անվերջանալի նախրի էր նման: Հուսահատությունն աննկարագրելի էր, շատերը գոռում էին. «Փրկե՛ք մեզ, մենք մահմեդական, գերմանացի, ինչ ուզենաք կդառնանք, միայն թե գութ ունեցեք, ազատեք... Հիմա Քեմախ կտանեն, բոլորիս կմորթեն»: Քիչ անց մոտեցանք ու տեսանք, որ թուրք հեծյալները երեխաներ, ջահել աղջիկներ են առևանգում: Քաղաքի մուտքի մոտ, գերմանական բժշկական հաստատության կողքին, դեպի Քեմախ շարժվելուց առաջ քարավանը կանգ առավ: ***Իսկույն իսկական ստրկավաճառություն սկսվեց՝ այն տարբերությամբ, որ «գնորդները» ոչինչ չէին վճարում, մայրերն ինքնակամ էին հանձնում զավակներին, շատ լավ իմանալով, որ համառելը զուր է»:***

Հունիսի 21-ին Կարմիր խաչի այս երկու աշխատակցուհիները թողնում են Երզնկան և երկու օր անց, ճանապարհին, ավելի ահավոր իրավիճակների ականատես լինում.

«Սարսռեցնող լռությամբ փոքր ու մեծ, մինչև անգամ էշի թամքին դժվարությամբ նստած պառավները առաջ էին շարժվում, որպեսզի քիչ անց բոլորին կապկպեն ու Քեմախ-բողազի կոչվող անիծյալ կիրճի բարձրաբերձ ժայռերից Եփրատի ալիքների մեջ նետեն: Մի հույն սայլապան նկարագրեց, թե ինչպես է դա արվում: Մարդու սիրտ քարանում է սարսափից: Մեզ ուղեկցող զինվոր-ոստիկանը պատմում էր.

– Ավելի քան 3000 կնոջ ու երեխայի Մամախաթունից Քեմախ ես հասցրի: Հեփ գիդթի, բիդթի («Բոլորն էլ վերացան, վերջացան...»):

Մենք հարցրինք.

– Եթե ուզում էիք վերացնել, ինչո՞ւ գյուղերում չսպանեցիք, նախ տանջեցիք, նվաստացրիք այդքան:

– Բա դիակներն ի՞նչ անեինք,- պատասխանեց նա,- կնեխեին, վարակ կտարածեին»:

Կանգ առնենք մի պահ: Հազար տարի առաջ, բուլղարների դահիճը Վասիլ II-ը 15000 հոգու աչք էր փորել, ընդ որում 150-ի մի աչքը թողել էր, որպեսզի իրենց կույր եղբայրներին բուլղար արքայի Սիմեոնի մոտ հասցնեն: Ասում են 978 թվականին ռուս զորավար Սվյատոսլավը Ադրիանապոլսի մոտ 40000 հոգու ցից է հանել տվել: Կրասոսը հրամայել է խաչել Սպարտակի գլխավորությամբ ապստամբած հազարավոր ստրուկների: Երուսաղեմը գրավելուն պես Տիտոսը դժնդակ վայրագություններ է սանձազերծել: Ֆրանկենհաուզենի դաշտավայրում «Արյան հովտում», գերմանացի իշխանները դաժան դատաստան են տեսել պարտված գյուղացիների նկատմամբ...

Բայց այդ ամենը եղել է 2000, 1000, 400 տարի առաջ, հաղթողը պարտվողից վրեժ է լուծել, պատերազմի բիրտ օրենքով հաշվեհարդարի ձգտել: Ամենայն հավանականությամբ, եթե հակառակորդը հաղթեր, նույն կերպ կվարվեր: Դրանք ռազմամոլների դարեր էին՝ մարդը դեռևս ինչ-որ բան «արժեր», չնայած այդ արժեքը դահիճ կամ զոհ լինելուց ավելին չէր: Ամենքն էլ պատերազմի ստրուկ էին՝ զինվոր, հպատակ, հայրենիքի պաշտպան, պարզապես մարդ: *Սակայն մի ամբողջ ժողովրդի բնաջնջումը՝ կանանց ու երեխաների նպատակադրված խողխողումով, բարբարոսության մի գագաթ էր, որին հասնելու համար նույնիսկ մեր նախնիները բավականաչափ չէին «հասունացել»: Պետք է վերհիշել Պիսառոյի կարմրամորթներին ոչնչացնելու եղեռնագործությունը, անգլիացի «քրիստոնյաների» տասմանական, նորզելանդական մարդորսությունը, բուրական պատերազմի նախճիրները, գերմանացիների՝ հերերոներին հալածելով, ծարավից տանջամահ անելու մանրամասները, գեթ մոտավոր պատկերացում կազմելու համար, թե 1915-ին ինչ է տեղի ունեցել Քեմախում: Ճիշտ է, մինչև հիմա էլ փորձում են կատարվածը տարբեր՝ արյան մոլուցքով, ընչաքաղցությամբ, կրոնական ատելությամբ, բռնասիրությամբ, հիմարությամբ և այլ շարժառիթներով բացատրել, սակայն 1915 թվականի եղեռնագործությունը անըմբռնելի է այն աստիճանի, որ իրավամբ թվում է պատմության ամենաարյունոտ, դժնդակ առեղծվածը: Սովորական, մարդկային բանականության համար հայերի սպանդը անընդունելի ու անմեկնաբանելի է՝ ոճիր, որի հետ չի կարելի հաշտվել»*[1]:

Կարծում ենք ընթերցողն այս ծավալուն մեջբերումից ավելի հստակ պատկերացում կկազմի հայկական *Տասնհինգի* մասին, քան մեկ ամբողջ հատոր կարդա այդ փաստերի վերլուծության վերաբերյալ:

Յոհաննես Լեփսիուսը, իր ձեռքի տակ ունենալով գերմանացի գթության քույրերի վկայությունները 1915 թ. հունիսի 11-13-ին Կամախում և Երզնկայում կատարված հայկական ջարդերի, հատկապես կանանց «բռնապղծման» և մանուկների ոչնչացման մասին, գրում է.

«Յաջորդ օրը 11 յունիս, հեծելազօրաց 86րդ վաշտի զոկատները, իրենց սպաներուն առաջնորդութեամբ, *Քեմախի կիրճը* դրկուեցան, ըսելով թէ քիւրտերը պիտի պատուհասէին: Գերման գթութեան քոյրերու ստացած տեղեկութեանց համաձայն, որոնք հոն գտնուող թուրք զինուորներուն իսկ բերնէն լսուած վկայութիւններ են, թուրք հեծեալ զոկատները ջարդեցին բոլոր անոնք, որոնք կարաւաններէն տակաւին ողջ մնացած էին, գրեթէ *ամէնքն ալ միայն կիներ և մանուկներ ըլլալով:* Թուրք զինուորները կը պատմէին թէ՝ ինչպէս կիները ծունկի կուգային և գթութիւն կը հայցէին, և թէ ինչպէս, ի վերջոյ տեսնելով թէ ոչ մէկ օգնութիւն չի գար, *իրենք իրենց իսկ ձեռքերով, իրենց մանուկները գետը նետած են:* Թուրք երիտասարդ զինուոր մը կ'ըսէր. «Սրտի դպչող բան էր. անկարող էր կրակ ընել, միայն թէ այնպէս կը ձեւացներ»: Ուրիշներ ընդհակառակը կը պարծենային իրենց տմարդի արարքներուն համար, Կէիլզէն գերման դեղագործին ներկայութեան: *Ջարդը չորս ժամ տեւեց. սայլեր բերած էին դիակները փոխադրելու համար դէպի գետը, և ասով կատարուածին բոլոր հետքերը ոչնչացնելու:* Յունիս 21-ի իրիկունը, զինուորները վերադարձան աւարներով բեռնաւոր: Ջարդերէն յետոյ, բազմաթիւ օրերու ընթացքին երզնկայի շուրջ, ցորենի դաշտերու մէջ, միշտ տեսակ մը որսի ելան, զգետնելու համար այն բազմաթիւ փախստականները, որոնք այն տեղուանքը պահուտած էին»[2]:

---

[1] *Հայերին Ֆիրբյուխեր*, Հայաստան, 1915 (գերմաներենից թարգմանությունը *Գրիգոր Ջանիկյանի*), «Փյունիկ», Երևան, 1995, էջ 44-49:

[2] «Հայկական ջարդերը», տոքթ. *Եոհաննես Լեփսիուսի* տեղեկագիրը, Պեյրութ, 1965, էջ 57:

Պատմելով Ալաշկերտի, Դիադինի, Աբաղայի դաշտի գյուղերի հայ բնակչության կոտորածի մասին, Յ. Լեփսիուսը ծանրանում է մանուկ սերնդի զանգվածային կրոնափոխության պատմության վրա, շարունակելով. «Միւս 270 ընտանիքներու արու անդամները սպաննուեցան և մանկամարդ աղջիկները առեւանգուեցան: Նոյն բախտը վիճակեցաւ Մոլլա Սիւլէյման գիւղին, ուր 150 ընտանիքներու այրերը սպաննուեցան, և կիներն ու մանուկները առեւանգուեցան: Նոյնը Սետկան գիւղին մէջ, ուր 70 ընտանիքներ կորսնցուցին իրենց այրերը և իրենց կիները: Ամերտի գիւղն ալ իր բնակիչներէն այդչափ մը կորսնցուց: Խոջան գիւղին մէջ 35 ընտանիք, Շուտկան գիւղին մէջ 25 ընտանիք նոյն բախտը ունեցան*: Միայն Մոլլա Սիւլեյման և Սետկան գիւղերէն, համիտիէ քիւրտերը 500 կին և մանկամարդ աղջիկ առեւանգեցին: Բոլոր առեւանգուած կիներն ու մանկամարդ աղջիկները բռնի իսլամացուեցան:* Տիատինի մարզը. սահմանաւորուած է Ապաղայի դաշտէն, որ անկից միայն Օվաճըքի լեռնաշղթայով անջատուած է, և որ կը տարածուի Վանայ հարաւային կողմը, Պարսիկ սահմանագլուխին և Վանայ Լիճին հիւսիսային արեւելեան եզերքներուն միջեւ: Այս մարզին հայ գիւղերուն մէջ ալ, Աքմաք, Քաչան, Չպուքլը, Կահիմաք, Խան, Աղօրիկ, Հասան-Թամբա, Աղբարիկ և Րաշվա, Հայերը և քրիստոնեայ Սուրիացիները նախ թալանուեցան և յետոյ, անկանոն քաղաքային զինուորներու կողմէ սպաննուեցան: Սպաննուած Հայերը կը հաշուուին 2060 և Սուրիացիները 300»[1]:

Իրանցի ականավոր գրող, հրապարակախոս, քաղաքական գործիչ, գիտութ֊յան դոկտոր *Իսմայիլ Ռային* (1919-1980) Պարսկաստանի առաջավոր մտավորականներից էր: Նա հեղինակ է ստվարածավալ մի շարք մենագրությունների, որոնցից առանձնանում է *«Հայերի կոտորածները»* աշխատությունը: Այն նվիրված է հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականության կիրառմանը Թուրքիայում 1876-1919 թվականներին: Աշխատությունը գրված է պարսկալեզու և թուրքական, ինչպես նաև եվրոպական արխիվներից քաղված փաստերի հիման վրա, դրա համար էլ նորույթներ է գումարում ցեղասպանության պատմությանը:

Նա բերում է հայերի սպանությանը վերաբերող մի շարք փաստեր, որոնք զուրկ չեն հետաքրքրությունից և մեկ անգամ ևս հաստատում են, թե թուրքերը ինչպիսի դաժանությամբ են վարվել անպաշտպան արևմտահայության հետ:

Նա վկայում է, թե «Տեղի ունեցածի հանկարծակի հարձակման, երկու քահանաների սպանության և տասնհինգից բարձր տարիք ունեցող տղամարդկանց ջարդերի մասին: Ապա պատմում է, թե ինչպես ծիերը, ունեցվածքը և դրամը գողացան, նույնիսկ ուտելիքն ու հացը իրենցից խլեցին:

Եղեռնից փրկվածներից մի կին պատմում է.

«Մեծ թվով կանանց ու աղջիկների մեզնից առանձնացնելով դեպի լեռները քշեցին: Նրանց թվում էր քույրս *մեկամյա կրծքի երեխայի հետ: Մանկանը նրանից խլեցին եւ շպրտելով գետին՝ սպանեցին: Մի թուրք վերցրեց դիակը եւ հեռացավ:* Չիմացավ, թե ուր տարան: Մայրս որքան ուժ ուներ հետապնդեց նրանց: Նա այնքան հոգնեց, որ մի բլրի մոտ ուշաթափվեց եւ գետին գլորվեց: Ճամփից նախորդ խմբի անդամներից շատերին գտանք: Ձոհվածների մեջ մեծ թվով կանանց դիակներ կային, որոնք իրենց ամուսինների ու երեխաների դիակների մոտ էին ընկած: *Տեսա նաեւ մահամերձ ծերունիների եւ երեխաների, որոնք դեռ շնչում էին, բայց շարժվելու եւ նույնիսկ խոսելու ուժ չունեին...»:*

Այստեղ մեկ անգամ եւս նախկին ականատեսը, զրույցի մեջ մտնելով, աքսորի տխուր օրերի հուշերից հետեւյալն է պատմում. «Մենք անընդհատ հանդիպում էինք սպանված ու ամբողջովին արյան մեջ կորած տղամարդկանց: Հանդիպում էինք նաեւ իրենց ամու-

[1] «Հայկական ջարդերը». տոքթ. *Եոհաննես Լեփսիուսի* տեղեկագիրը. Պեյրութ. 1965. էջ 94:

սիների, որդիների կողքին զոհված կանանց, աղջիկների: Լեռների բարձունքներում եւ ձորերի խորքերում *ընկած էին ծերունիների եւ մանուկների դիերը...»:*

Նրանք նախորդ քարավանի կազմում էին առաջ շարժվում: Այդ քարավանների հետքերով շարժվող ուրիշ գաղթականներ, որոնք այլ վայրերից էին գալիս, կոտորածների այդօրինակ ողբերգական տեսարանների ականատեսներն էին: «Շատերը մի գրոշ չունենալով, հենց ճամփորդության սկզբից ստիպված էին քայլել ուսերին դրված բեռով: Այսպիսի մարդիկ բնականաբար շուտով հոգնում էին եւ, ետ մնալով քարավանից, ընկնում ուժասպառ: Այնուհետեւ նրանց կուրծքը կամ որովայնը խոցվում էր սվիններով, որից հետո նրանք գետն էին նետվում, գետը դիակները քշում, տանում էր ծով կամ դրանք դեմ էին առնում սալաքարերին եւ այնտեղ էլ մնում:

Այդ դիակները 10-12 օր հետո նեխում էին: Այդուհանդերձ այսպիսի վախճան ունեցողներն ավելի երջանիկ էին, քանի որ նրանք փրկված էին իրենց հարազատներին սպասող աներեւակայելի չարչարանքներից»:

Մի հայ կին պատմում է. «Մենք իրավունք չունեինք գիշերները գյուղերում քնել, այլ ստիպված էինք գիշերն անցկացնել գյուղերից դուրս: Այն ժամանակ ոստիկանները, ելուզակներն ու գյուղացիները գիշերվա մթության մեջ ամոթալի եւ աննկարագրելի արարքներ էին կատարում: Մեր ուղեկիցներից շատերը սովից, մարմնական ու հոգեկան հարվածներից տանջամահ եղան: Ոմանք էլ թուլությունից եւ հյուծվածությունից ետ մնացին ու ճամփին ընկան»:

Վերոհիշյալ կինը գաղթականների հետ պատահած այլ աղետների մասին պատմելիս ավելացնում է. «Մարդիկ սովից այնպիսի դրության մեջ էին ընկել, որ ստիպված անասունների նման խոտ էին ուտում: Այնուամենայնիվ, ոմանք դիմանում էին: Այդ պատճառով, պահակները նրանց ուժասպառ անելու եւ շարքերը նոսրացնելու համար, ավելի դաժան միջոցների էին դիմում»:

Հիշյալ կինը շարունակելով պատմել իր հիշողությունները, ավելացնում է. «Ամենածանր ու աներեւակայելի սարսափները կարելի էր տեսնել Եփրատի (Կարասուի) արեւմտյան ափերին ու Երզնկայի դաշտավայրում: Կանանց, աղջիկների ու երեխաների այլանդակված դիերի տեսարանը սարսուռ էր առաջացնում:

Ելուզակները կանանց ու աղջիկների հետ վարվում էին վայրենաբար: Ամենուրեք կարելի էր լսել նրանց ճիչն ու աղաղակը: Ելուզակներն ու ոստիկանները տասնհինգ տարեկանից փոքր երեխաներին նետում էին Եփրատ գետը: Լողալ իմացողներին եւ իրենց կյանքի փրկության համար ջանք գործադրողներին գնդակոծում էին, որից գետի ջուրը դառնում էր արյունոտ ու կարմիր»:

Սակայն այդ դեպքերը պատմող կնոջը վիճակված չէր մեռնել: Նա դատապարտված էր դիտելու այդ սրտակեղեք տեսարանները:

«Ճամփորդության հաջորդ շրջանում դաշտերն ու բլուրների ստորոտները ծայրից-ծայր լցված էին ուռած ու սեւացած դիակներով, իսկ գարշահոտությունը շնչելն անհնարին էր դարձել»: Ճամփորդության երեսուներկուերորդ օրը նրանք մի տեղ ժամանակավորապես կանգ առան:

Եվ այս կնոջ պատմածն էլ հենց այստեղ ավարտվում է: Մեզ հայտնի չէ, թե հետո ինչ է պատահել այդ կնոջը, քանի որ ժամանակավոր կանգ առնելու տեղը դեռեւս ճանապարհի կեսն էր, եւ նա դեռ աքսորի ճամփան պիտի շարունակեր»[1]:

Իրանցի հրապարակախոսն, այս անգամ հենվելով «Ամերիկյան կոմիտեի հաղորդագրությունների» ընձեռած փաստերին, իր պատմությունը շարունակում է այսպես.

«Վերոհիշյալ քաղաքը գտնվում է Եփրատի (Մուրադսու) արեւելյան շրջանում: Հյու-

[1] *Իսմայիլ Ռային,* Հայերի կոտորածները (պարսկերենից թարգմանեց *Ա. Ա. Դարբինյանը),* Երեւան, 1999. էջ 76-79:

սիսից դեպի հարավ ձգվող խճուղու հատման կետում, որտեղից աքսորյալների բազմաթիվ քարավաններ են անցել: Հիշյալ օտարերկրացի ականատեսը գրում է. «Եթե խոսքը վերաբերում է միայն տեղահանությանը, ապա դա սարսափելի չէր: Ցավալին այն էր, որ բոլորն էլ գիտեին, որ ճամփորդության ընթացքում ոչ ոք չի փրկվելու: Իսկ նրանք, ովքեր փրկության հույսեր էին փայփայում, երզրումից դեպի Երզնկա գնացող մի քանի հազար մարդու անմխիթար վիճակը տեսնելով, հուսալքվում էին: Ես մի քանի անգամ այցելեցի նրանց ճամբարը, եւ ոմանց հետ զրուցեցի: Նրանք բոլորը, առանց բացառության, ցնցոտիների մեջ էին, կեղտոտ, սոված ու հիվանդ: Եթե հաշվի առնենք, որ նրանք շուրջ երկու ամիս ճամփորդել են առանց զգեստները փոխելու եւ լվացվելու, առանց օթեւանի եւ սննդամթերքի չնչին պաշարով, ապա ամեն ինչ պարզ կդառնա: Պետությունը նրանց չնչին օրապահիկ էր տվել: Մի անգամ, կերակուր բերելիս, նրանց տեսա: Ոչնչով չէին տարբերվում վայրի գազաններից, հարձակվում էին կերակուր բերող պահակի վրա, իսկ մյուս պահակները մահակներով քշում էին նրանց: Հասցրած հարվածներն այնքան ուժգին էին, որ հաճախ մահվան պատճառ էին դառնում: Դիտելով այդ դժվար էր հավատալ, որ նրանք էլ ինչ-որ ժամանակ մարդ են եղել:

Կանանց. երեխաներին առաջարկելով ճամբարի կողքով անցնող մարդկանց, խնդրում էին նրանց տանել իրենց հետ: *Թուրքերը. օգտվելով այդ հնարավորությունից, վերցնում էին երեխաներին ու աղջիկներին՝ որպես աղախին կամ այլ նպատակներով օգտագործելու համար: Ոմանք, նույնիսկ օգտվելով այդ առիթից, բժիշկներ էին բերում՝ քննելու աղջիկներին եւ ընտրելու ամենաառողջներին:*

Նրանց մեջ մնացել էր ընդամենը մի քանի տղամարդ, համարյա բոլորը ճամփին սպանվել էին:

Բոլորն էլ նույնն էին պատմում հարձակման ու կողոպուտի մասին: Մեծամասնությունը մի քանի անգամ ենթարկվել էր նմանօրինակ հարձակումների ու կողոպուտների: Մեծ թվով գաղթականներ, հատկապես տղամարդիկ, սպանվել էին: Կանայք ու երեխաներն էլ էին զոհ դարձել: Նրանցից շատերը զոհվել էին հյուծվածությունից եւ հիվանդություններից: Այս ճամբարում եղած ժամանակ ամեն օր զոհեր էին եղել: Մինչ նրանց գալը, մի քանի տարբեր խմբեր էլ էին այս քաղաք մուտք գործել, եւ մեկերկու օր այստեղ մնալուց հետո, առանց իմանալու, թե ուր են գնում, ստիպված շարունակել են ճանապարհը: Համենայն դեպս. այստեղ մուտք գործողները կազմում էին տեղահանվածների մի չնչին մասը: Այնպես որ. շարունակելով ճանապարհը, նրանք էլ հավանաբար նույն ճակատագրին պիտի արժանանային: Եվ այդ խմբերից, ի վերջո, մարդ չպիտի մնար»[1]:

Այսպիսով, դատարկվեց Արևմտյան Հայաստանը, մահվան ճամբարներում ոչնչացվեցին մեծն ու փոքրը, մայրն ու նրա սիրասուն զավակները, աղքատն ու հարուստը, կրթվածն ու անկիրթը, գրողն ու գյուղացին: Սահվան գերանդին, ոչ ոքի մեջ խտրություն չդնելով, հնձում էր հայն ու Հայաստանը, անմարդաբնակ, բուերի բնակավայրի վերածելով քաղաքակիրթ մի երկիր, որն ուներ հազարամյակների հարուստ պատմություն:

Թուրքերը, այո՛, բոլոր թուրքերը և ոչ թե միայն վերնախավը, ազգովին ոչնչացրեցին մի ամբողջ ժողովրդի, ոչնչացրեցին անտրտունջ, առանց խղճի խայթի, առանց վախի ու պատասխանատվության զգացումի: Նրանք ծառն արմատախիլ արեցին, մեծերին համահավասար կոտորեցին փոքրերին, մանուկներին, վախենալով, որ վերջիններս մեծանալով կհիշեն կատարվածը և հաշվի կնստեն թուրք ապագա, այսինքն այսօրվա սերնդի հետ: Այստեղ, այո, նրանք չեն սխալվել: Մենք վերապրել ենք այդ ամենը, և մենք բոլորս *հաշիվ ենք պահանջում, հատուցում:*

[1] *Իսմայիլ Ռային*, նշված աշխատությունը, էջ 76:

4. Բռնագաղթեցվածների ոչնչացման ճամբարները

Համաշխարհային հասարակայնությունը անհամար պատերազմներ, արյունահեղ ճակատամարտեր, ջարդեր ու ավերածություններ է տեսել: Սակայն ***1915 թվականը,*** իր դաժանությամբ, ***մի ամբողջ ազգի ոչնչացմամբ,*** հնամենի ու քաղաքակիրթ մի ժողովրդի հայրենի երկրի հայաթափմամբ ու սեփականացմամբ, իրոք որ աննախադեպ էր, ծանրագույն ***ոճրագործություն,*** որն ուղղված էր ***հանուր մարդկության դեմ:***

Քսաներորդ դարի առաջին զույգ տասնամյակներին կատարված այդ ցեղասպանությունը ***դարձավ վարակիչ*** օրինակ՝ հաջորդ տերությունների համար և գրեթե կրկնվեց նույն դաժանությամբ ու մասշտաբներով՝ խլելով մարդկային մեծաթիվ կյանքեր: Դրա հիմնական պատճառներից գլխավորն այն էր, որ աշխարհը ժամանակին չդատապարտեց թուրքական գազանությունները, հաշիվ չպահանջեց կատարվածի համար, արժանի հակահարված չտվեց ո՛չ երիտթուրքական բորենիներին և ո՛չ էլ քեմալական հայասպաններին: Թուրք-գերմանական վայրագություններն ավելի կատարելագործված, բայց և այնպես, կրկնվեցին հիտլերյան ֆաշիստների կողմից Երկրորդ աշխարհամարտի տարիներին:

Իթթիհատական թուրքերը, գերմանական զինվորականների խորհրդով ու հովանավորությամբ, հիմնեցին ***մահվան ճամբարներ,*** որտեղ քշեցին բռնագաղթի ճանապարհը մղված հայկական բեկորներին շարունակելով ցեղասպանությունը, իրողության վերածեցին մինչև վերջին մարդը ոչնչացնելու վաղամտածված ծրագիրը:

Ստվար էր մահվան ճամբարների թիվը: Դրանք հիմնականում տեղակայված էին ***Սիրիայի*** ու ***Միջագետքի*** անապատներում, Տիգրիս և Եփրատ գետերի միջնամասում ընկած այն վայրերում. որտեղ ոչ միայն ապրելու, այլև շնչելու ու գոյատևելու չնչին պայմանները բացակայում էին: ***Մեսքենե, Ռաս-ուլ-Այն, Ռաքքա, Դեր Զոր*** (կրճատ օգտագործվում է նաև ***Տեր-Զոր*** անվանումը), ***Սեբկա, Հոմս, Մոսուլ, Սավար,*** ինչպես նաև ***Չանկըր*** և ***Չորում:*** Ահա այն վայրերը, որտեղ իրենց գերեզմանը գտան կա՛մ մահանալով, կա՛մ, նույնիսկ, մայր հողի մեջ թաղվելու հնարավորությունից զրկվեցին հայ գաղթականները: Սիրիայի և Թուրքիայի այսօրվա սահմանագլխին փռված այդ մահիճները, տվյալ պահին հայերի համար օժտված էին այն բովանդակությամբ, ունեին այն իմաստը, ինչ հետագայում ***Մայդանեկը, Տրեբլինկան*** կամ ***Աուշվիցը*** հրեական ջարդերի պրոցեսում՝ Երկրորդ աշխարհամարտում:

Եվրոպայում ռուսական Սիբիրը համարվել է ***սարսափելի աքսորավայր:*** «Բայց ի՞նչ է Սիբիրը Միջագետքի անապատների համեմատությամբ,- ասել է Արմին Վեգները, որը տեղահանման ժամանակ անցել է այնտեղով:- Ո՛չ խոտ, ո՛չ ծառ, ո՛չ անասուն, ո՛չ մարդ, Եփրատ և Տիգրիս գետերից այն կողմ ո՛չ մի կաթիլ ջուր: Մի քանի փոքր գյուղեր հազիվ են կերակրում արաբ բեդվիններին, որոնք այնքան թշվառ, աղքատ էին, որ ամեն անցորդի համարում էին ցանկալի որս»: Այնտեղ հասած տարագիրները միայն, ըստ Յոհաննես Լեփսիուսի, վերածվել էին «անօգնական, մուրացիկ զանգվածի, որը Միջագետքի անապատներում և համաճարակի գոտիներում սովից ու հիվանդություններից պիտի վերանար»:

Նույն ճնշող տպավորություններն են ուղեկցել ամերիկացի միսիոներ Ուիլյամ Վ. Փիթին, որը նույնպես անցել է Հալեպ-Մոսուլ անապատային ճանապարհը: Նա գրում է, որ «Հայերին անասունների նման խցկել էին ժամանակավոր ճամբարները, նրանք պաշտպանված չէին ցրտից ու շոգից, գրեթե մերկ էին ու թերսնված: Ով դեռ մի քիչ ուժ ուներ, մտնում էր հողափոր փոսերի մեջ: Նույնիսկ նրանք, ում հաջողվել է փախչել հսկիչներից, դատապարտված են եղել մահվան»: Փիթը տեսել է քանի՜-քանի-

սի՞ն, որոնք շրջապատված են եղել սոված շներով: Վերջիններս սպասել են մահվան դեմ մղվող վերջին ջղածգումներին, որպեսզի վրա պրծնեն ու հոշոտեն: ***«Ինձ թվում է, ես տառացիորեն դժոխքով անցա»,*** խոսքը եզրափակել է միսիոները[1]:

Հայ ազգաբնակչության մահվան ճամբարները, ինչպես նշվեց, բազմաթիվ ու բազմազան էին[2]: Նշենք դրանցից մի քանիսը, կարևորները, փորձենք ցույց տալ մեր ժողովրդի ապրած գողգոթայի վերջին հանգրվանները:

Մահվան ճամբարներից երևի առաջինը ***Ռաքքան էր:*** Այն ընկած էր ***Հալեպ–Դեր Զոր*** ծգվող ճանապարհի վրա, Եփրատ գետի ձախ եզրին, հայերի ***մահաքաղաքից*** հեռու էր 134 կիլոմետրով: Ռաքքան փոքր գյուղաքաղաք էր, ենթարկվում էր արաբ շեյխին, սակայն կերտել էր հարուստ կենսագրություն:

Հռոմեական կայսրության տիրապետության շրջանում, դեռևս ծաղկուն քաղաքն ուներ կամարակապ ջրմուղ, 15 կմ-ի հասնող պարիսպներ, որոնք սկսած Չինգիզ խանից, եզերած իթթիհատականներով, ավերվեցին, և տեղանքը վերածվեց ամայի հողատարածքների[3]: Բնակչությունն այժմ ապրում էր անասնապահությունից ստացած եկամուտներով: Ռաքքայի յուղը շատ «սննդարար ու համեղ» էր և սնում էր սիրիացիներին, լիբանանցիներին, նույնիսկ արտահանվում էր Ամերիկա:

Վաղինակ Բյուրատը, լինելով Ռաքքայում, այսինքն գնալով հոր աքսորման ճանապարհով, հանդիպել էր ականատեսների հետ, որոնք պատմել էին. թե «1915 թվականի աշնանն արդեն Ռաքքայեն և Շամիայեն դժբախտ ցեղիս տարագիր կարավանները դեպի Դեյր էզ Զոր գացած էին, որտեղ ալ նահատակված էին քիֆուսից, մալարիայից և ահարկու սովից: 1916 թվի հուլիսին էնեզե և չեչեն վաչկատուն ռհմականերուն ձեռքով Պապ հավա ըսված վայրը Եփրատ գետի եզերքին, ***160 հազարեն ավելի տարագիրներուն ձեռքով մեծ տարածություն մը փորել էին տվել և անոնց վրա նավթ սրսկելով՝ այրած էին:*** Փաստը ակնբախ էր. մի քանի տասնյակ վերապրողներ. որոնց երեսներն ու ձեռները խանձված էին, հրաշքով ազատված էին դիակներու տակ մի քանի օր մնալե վերջ, փախչելով ազատված էին և Հալեպի Հայոց առաջնորդարանը հասնելով պատմած էին այս ահարկու մեծ ոճիրը»[4]:

Դեպի Դեր Զոր տանող ճանապարհի վրա հայ գաղթականների հաջորդ խոշոր գերեզմանավայրը ***Մեսքենեն էր:*** Գերմանացի հետազոտողը, ձեռքի տակ ունենալով միսիոներների բազում վկայություններ, ընդհանրացնում է դրանք և գրում. ***«Մեսքենեի*** հարթավայրում արդեն թաղված է եղել մոտ 60 հազար հայ: Կենդանի մնացած երեխաների մեջ մոլեգնել է սարսափելի արյունալուծը, որովհետև, ըստ Փիթի՝ «այդ դժբախտ փոքրիկները սովից ուտում էին խոտ, հող և նույնիսկ արտաթորանք: Ես տեսել եմ 5 մետր լայնությամբ, 6 մետր երկարությամբ վրանում սովամահ եղած 400 երեխայի, տեսել եմ կանանց, որոնք ծիու քրիքի միջից ջոկում էին չմարսված գարու

---

[1] ***Վոլֆգանգ Գուստ,*** Հայերի ցեղասպանությունը. Աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը. Երևան, 2002, էջ 48:

[2] Այդ մասին տես ***Նուբար Մակարոֆ,*** Դեյր-էզ-Զորի աքսորյալը. Օսմանյան հայերի 1915- աքսորը, Երևան. 2001: ***Արամ Անտոնյան,*** Մեծ ոճիրը. Հայկական վերջին կոտորածները և Թալեադ փաշա, Պոսթըն, 1921: «Տեր-Զոր», հեղինակ ***Աղետեն վերապրողները,*** Փարիզ, 1955: «Տեր-Զորի ջարդերը», հատված «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի» գրքից, Պեյրութ, 1965, էջ 485-498: ***Իսմայիլ Ռային,*** Հայերի կոտորածները. Երևան, 1989, էջ 84-93: ***Վոլֆգանգ Գուստ,*** Հայերի ցեղասպանությունը. Աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը. Երևան, 2002, էջ 48-54: ***Ծ. Պ. Ազայան,*** Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 488-490: ***Ֆայեզ էլ Ղոսեյն,*** Հերոսական հայության անցյալեն, Զարդերը Հայաստանի մեջ (ականատեսի վկայություններ) Գահիրե, 1960, էջ 7-40: «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», Երևան, 1991, էջք 515. 545, 595, 696-700:

[3] Սույն էջերը շարադրելիս նյութերը քաղել ենք ***Սմբատ Բյուրատի որդի Վաղինակ Բյուրատի*** «Ընտիր էջեր» աշխատությունից, Երևան, 2002, էջ 30-34:

[4] ***Վաղինակ Բյուրատ,*** նշված աշխատությունը, էջ 31-32:

հատիկները և ուտում»: Փիթը հաց է առաջարկել... «Նրանք խլեցին զարհուրելի մի ագահությամբ, ցատկոտելով ու մոլագար ջղածգումներով: Խռպոտ աղաղակով ու հեծկլտոցով նրանք ինձ էին մեկնել իրենց կմախքացած թևերը»:

«Կենդանի մնացածներից շատերը նետվում էին համայնական գերեզմանափոսերը,- զեկուցել է «Գերմանական օգնության» միության ներկայացուցիչը Մեսքենեի հարթավայրից,- և խնդրում էին, որ իրենց էլ թաղեն, սարսափելի տառապանքներին վերջ դնեն»: Մի քարոզիչ պատմել է, որ *Սեպկայում ծնողները մորթել, բոլորի հետ կերել են երեխաներին: Ուտելու համար սպանել են նաև մահամերձներին:*

Նույնիսկ կայզերական Գերմանիայի հյուպատոս Վալտեր Ռյոսլերը հայերի երդվյալ բարեկամը, նրանց տառապանքների մասին զեկույցները համարել է հնարովի սարսափ-պատմություններ: Նա նույնիսկ դիտորդ է ուղարկել Եփրատի ափերը, որտեղից վերադառնալուց հետո բժշկական ծառայության գնդապետ Շախտը գրել է. «Ճանապարհին ես շատ արհավիրքներ եմ տեսել: Այն, ինչ պատմում էին, լրիվ ճիշտ է»:

Ռյոսլերի դիտորդը Մեսքենեում հանդիպել է լքյալների մի փոքր խմբի, այդ թվում նստած վիճակում նեխող մի կնոջ դիակի և երկու հիվանդի: Մի այլ տեղ նա տեսել է միլիոնավոր ճանճերով ծածկված հսկա դիակույտ իսկական վարակի օջախ: «Այդ ահավոր վայրում,- գրել է նա,- նստել էր սովահար, լքված մի մայր և խելացնոր ողբում էր իր երեխաների կորուստը: Եվս մեկ մայրամուտ, և նա կփրկվի այդ ամենից»[1]:

Սևրի Բարբին «Սարսափի երկրում» գրքում նկարագրում է, թե 1916 թ. աշնանը ինչպիսի տանջանքների են ենթարկվել հայ գաղթականները *Մեսքենեից Դեր Զոր* անցնելու ճանապարհին: «Ողբերգական փաստաթուղթը» ենթավերնագրի տակ կարդում ենք[2].

«Սովի, հյուծվածության ու հիվանդությունների պատճառած տառապանքներից դանդաղ զոհվող այդ բոլոր դժբախտ աքսորյալների ահավոր ճակատագրի վերաբերյալ հետագայում իմ տրամադրության տակ դրվեց մի նոր փաստաթուղթ անհերքելի ու ստույգ:

Այդ փաստաթուղթը «Հայերին ու ասորիներին օգնելու ամերիկյան կոմիտեի» արխիվից է: Դա վերջին զեկույցն է, որը 1916 թ. աշնանը կոմիտեին է ուղարկվել թեպետև ոչ ամերիկացու, բայց մի անձնավորության կողմից, որը պատկանում է չեզոք տերություններից մեկին:

«Ինձ համար անհնար է հաղորդել այն սարսափելի տպավորությունը, որ մեջս մնացել է հատկապես Եփրատից արևելք *Մեսքենեի և Դեյր էլ Զորի միջև ընկած* հայերի կայանատեղեր այցելելուց հետո,- ասվում է զեկուցագրում:- Այդ շրջանում նույնիսկ կայանատեղեր էլ չի կարելի անվանել այն վայրերը, որտեղ աքսորյալները, որոնք մեծ մասամբ մերկ են, մնում են գրեթե անսնունդ, անասունների նման քշվել են միատեղ և ապրում են բաց երկնքի տակ, առանց որևէ օթևանի, անապատի անչափ դաժան կլիմայի արևակեզ ամռան և համատարած սառնաշունչ ձմռան ահավոր պայմաններում:

Միայն շատ քչերին, դեռ բոլորովին ուժասպառ չեղածներին է հաջողվել իրենց համար պատսպարան սարքել գետնի տակ, գետի ափին. և մեկ էլ մի քանի ուրիշների, որոնք ջարդից պահպանելով ինչ-որ քուրջ ու փալաս, վրանանման խղճուկ բաներ են պատրաստել:

---

[1] *Վոլֆգանգ Գուստ,* Հայերի ցեղասպանությունը. Աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը, Երևան, 2002, էջ 48-49:

[2] «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», Երևան, 1991, էջ 557-558:

Բոլորը սովատանջ են: Բոլորն էլ իրենց հյուծված, դժգույն, մռայլ դեմքերով, չորացած, սաստիկ ցիհարած մարմիններով քայլող կմախք են հիշեցնում, որոնց ներսից կրծում են ամենաահավոր հիվանդությունները: Տպավորությունն այնպիսին է, որ կառավարությունը ցանկանում է նրանց բոլորին սովամահ անել»:

Ապա զեկուցագրի հեղինակը հիշեցնում է, որ Արևմտյան Հայաստանի հայ բնակչության այդ մնացորդները, որոնք նետված են Եփրատի ափը, բացառապես կանայք են, երեխաներ ու ծերունիներ: Միջին տարիքի տղամարդիկ և երիտասարդները մեծավ մասամբ կոտորվել են, իսկ կենդանի մնացածները ցրված են կայսրության բոլոր ճանապարհներին, որտեղ նրանք խիճ են ջարդում: Երիտասարդ աղջիկները, նույնիսկ տակավին դեռահասները դարձել են մուսուլմանների ավար. եթե միայն նրանք էլ չեն կոտորվել ճանապարհին:

Այնուհետև զեկուցագրում ասվում է.

«Համակենտրոնացման ճամբարների շուրջը հեռվում շրջում են հեծյալ ժանդարմներ, որպեսզի խոչընդոտեն անապատ փախչելը, որտեղ մահն անխուսափելի է:

Ես հանդիպեցի մի քանի այդպիսի փախստականների, որոնց ժանդարմները թողել էին իրենց բախտին, նրանք շրջապատված էին սոված շների մի ամբողջ ոհմակով, որոնք հենց միայն սպասում էին, թե դժբախտներից մեկնումեկը երբ կփչի վերջին շունչը...:

Դահիճներին մեղադրող երեխաների ծայները: Դժբախտ Հայաստանի նահատակության մասին ակնարկս վերջացնելու համար պետք է նկարագրեմ նսւև մի շարք զարհուրելի տեսարաններ, թերևս ավելի զարհուրելի, քան մնացած բոլորը, քանի որ դահիճների զոհերը երեխաներ են...»[1]:

Աշխարհամարտի տարիներին, Հալեպից հայերին աքսորող կոմիտեի քարտուղար Նայիմ բեյը ականատես է եղել հայկական կոտորածներին, հայ զանգվածներին Դեր Զոր և այլ վայրեր աքսորելուն[2]: 1920 թվականին Լոնդոնում հրապարակված իր հուշերում նա բերում է մի շարք կարևոր փաստաթղթեր, որոնք անողոքաբար մերկացնում են թուրք ցեղասպաններին: Նկարագրելով հայկական ջարդերը և դիմակազերծ անելով թուրքական կառավարության ոճրագործ քաղաքականությունը՝ նա գրում է. «Ամեն անգամ ես ցնցվում էի, երբ գրանցում էի վերծանված գաղտնի հրամանները: Մի ամբողջ ազգ, այդ թվում կանայք և երեխաներ, մահվան էր դատապարտված»[3]:

Երկրի բոլոր ծայրերից Հալեպ քշված հայ քարավանների մնացորդները կառավարությունը սկզբնապես որոշել էր ուղարկել *Մաարա, էլ-Բաբ և Հալեպի այլ հեռավոր շրջանները: Հետո հրաման տրվեց աքսորի քշել Խան-Զոր գետի հովիտը (Դեր Զորի մոտ):* Թուրքիայի ներքին գործերի նախարարի 1915 թ. նոյեմբերին արձակած հրամաններից մեկում ասվում է. «Հայտնի ժողովրդի (հայերի) աքսորի նպատակն է, ապահովել մեր հայրենիքի անվտանգությունը ապագայում, քանի որ նրանք, որտեղ էլ որ ապրեն, ոչ մի դեպքում չեն հրաժարվի իրենց ապստամբական ոգուց: Դրա համար էլ մենք պետք է ջանանք ամեն կերպ նվազեցնել նրանց քանակը»[4]:

Ստանալով այդ ցուցումը աքսորող կոմիտեի պետ էյուբ բեյը և ոստիկանապետ էմին բեյը, խորհրդակցելով նահանգապետ Աբդուլահմադ Նուրի բեյի հետ, կազմեցին հայերին ոչնչացնելու իրենց նոր, ավելի դաժան ծրագիրը: էյուբ բեյը կողմնակից էր բացարձակ կոտորածի, բայց առավել խորամանկ Աբդուլահմադ Նուրի բեյն

[1] «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», էջ 558:
[2] *Ծ. Պ. Աղայան,* նշված աշխատությունը, էջ 487:
[3] "Геноцид армян в османской империи", Ереван, 1966, стр. 390-391.
[4] Նույն տեղում, էջ 419:

այդ պլանի հետ չհամաձայնվեց: Նա նպատակահարմար էր գտնում աքսորականներին ենթարկել տանջանքի և խիստ ծմռան փորձություններին: Այդ ձևով նրանց ոչնչացնելով, կարելի կլիներ ապացույցներ թողնել, որ իբր նրանք մահացել են բնական մահով:

Բոլոր տեղերից Հալեպ քշած աքսորականներին կուտակում էին Հարեմի և Քիլիսայի շրջակայքում, ինչպես նաև Հալեպի շուրջը: Այստեղից նրանց խմբերով ուղարկում էին Ակտերիմ, ապա էլ-Բաբ: «Ամեն օր,- գրում է Նայիմ բեյը,- հաղորդում էին սովից, ցրտից, հիվանդություններից հարյուրավոր մահացողների մասին»: Սովը և վարակիչ հիվանդությունները այնպիսի չափերի հասան, որ սկսեցին ոչնչանալ նաև տեղական արաբները: Թուրքերի նպատակն էլ հենց այդ էր՝ հայերից հետո ոչնչացնել արաբներին և մյուս ժողովուրդներին»[1]:

Բռնագաղթման մեթոդներով աքսորի ճանապարհը «բռնած» հայ տարագիրները ենթարկվում էին սարսափելի տանջանքների: Նրանցից քչերին էր բախտ վիճակվում կենդանի մնալ կամ «նույնիսկ հասնել» արաբական անապատներում նշանակված մահվան ճամբարները: ***Անդրեյ Մանդելշտամը,*** «Օսմանյան կայսրության ճակատագիրը» գրքում, ***«Աքսորյալների նկատմամբ տմարդի վերաբերմունքը տեղահանության ժամանակ»*** հատվածում պատմում է, թե «Աքսորյալների քարավանները, որոնք բաղկացած էին գլխավորապես ծերերից, կանանցից ու երեխաներից, ճամփա ընկնելու պահից դառնում էին ամենաանամոթ շահագործման թիրախ իշխանությունների կողմից, որոնք պետք է հոգ տանեին նրանց մասին: Քաղաքից մեծ հեռավորության վրա սայլապանները ժանդարմների մասնակցությամբ նրանց իջեցնում էին և հետ դառնում իրենց սայլերով, որոնց համար ոսկու գին էին վճարած լինում դժբախտներին թողնելով ճանապարհը շարունակելու ոտքով... Գիշերները ավազակները հարձակվում էին քարավանների վրա ու թալանում դրանք, սպանում տղամարդկանց, բռնաբարում կամ առևանգում ջահել կանանց, գողանում երեխաներին: Այդ բանում ժանդարմները օգնում էին հրոսակներին իրենց զոհերից փող շորթելով նրանց «պահպանության» համար: Կայմակամները (գավառապետերը) հայերի անվտանգությունը երաշխավորելու համար նրանց ստիպում էին իրենց փող վճարել, իսկ հետո թույլ էին տալիս հարձակվել նրանց վրա: Իշխանությունները գրեթե պարեն չէին բաշխում. հաճախ նույնիսկ խոչընդոտներ էին հարուցում, որ աքսորյալները իրենց պարենով չապահովեին տեղահանության ժամանակ: Այդ պատճառով էլ աքսորյալները հազարներով զոհվում էին քաղցից ու ծարավից:

Ժանդարմների ու ելուզակների դաժանությունը չափ ու սահման չուներ: Որոշ դեպքերում նրանք գաղթողների վրայից հանում էին ամբողջ հագուստը և ստիպում քայլել օրեր շարունակ, միանգամայն մերկ քայլել անապատի կիզիչ արևի տակ, իսկ երբ հասնում էին ջրհորների, ժանդարմները վաճառում էին ջուր խմելու իրավունքը: Ծննդաբերելուց անմիջապես հետո կանայք պետք է շարունակեին ճանապարհը. հազարավոր մարդիկ ընկնում էին ճանապարհներին, մահանալով սովից, ծարավից ու հոգնածությունից: Դիակները, հատկապես երեխաների, հաճախ հատված թաթիկներով, մնում էին փռված ճանապարհներին: Ժամանակ առ ժամանակ դահիճները, ասես կատաղելով կենդանի մնացածների դիմացկունությունից, կանանց ու երեխաներին ջրահեղձ էին անում գետերում, ողջակիզում կամ սպանում դաժան կտտանքներով: Եփրատը հազարավոր դիակներ էր տանում: Բազմաթիվ ուրիշներ, հուրախություն ծուռակների ու շների, թողնվելով անթաղ, ժանտահոտությամբ թունավորում էին...

[1] "Геноцид армян в османской империи", Ереван, 1966, стр. 420.

Նման պայմաններում, ինչպես վկայում են գերմանացիները, տարագիրների քարավանները, որոնք Մեծ Հայքից ճանապարհ ընկնելիս հասնում էին հազարավորների, հարավ ժամանելու պահին կրճատվում էին մինչև հարյուրավոր ու ավելի պակաս թվով մարդիկ: Խարբերդից, Ակնից, Թոքաթից և Սեբաստիայից ***18000 տարագրվածներից Հալեպ էին հասել ընդամենը 350 մարդ, իսկ Էրզրումից տեղահանված 19000-ից մնացել էր 11 մարդ:*** Ակներև է, որ տեղահանությունը երբեք այդպիսի «արդյունքների» չէր հանգեցնի առանց թուրքական իշխանությունների մասնակցության և նույնիսկ հրահրման, որոնք ոչ միայն անհրաժեշտ միջոցներ չձեռնարկեցին պարեն մատակարարելու և քարավանների անվտանգությունն ապահովելու համար, այլև խրախուսում ու կազմակերպում էին հրոսակների հարձակումներ աքսորյալների վրա, ժանդարմներին և կանոնավոր զորքերն օգտագործելով օրինականացված կոտորածի համար: Եվ եթե, չնայած այդ համագործակցությանը, աքսորյալների մի մասը այնուամենայնիվ հասնում էր նշանակման վայր, ապա դա միայն այն պատճառով, որ հարկավոր էր եվրոպական [հասարակական] կարծիքին ապացուցել, թե նշանակման վայր էր ժամանել հայերի առնվազն գոնե մի որոշ մասը, ինչպես և այն պատճառով, որ նոր տեղում ողջ մնացածների կործանումը կասկած չէր հարուցում»[1]:

Ցեղասպանությունից հրաշքով փրկված ***Գրիգորիս Պալաբյանը*** քայլում էր դեպի ***մահվան ճամբարներ*** ծգվող քարավանների շարքերով, խմում այն դառը դեղահաբերը, որոնցից թուրքերն ամեն օր առատ բաժին էին հանում հայ բռնագաղթվածներին: Նա գրառումներ էր անում, ականատեսի տպավորություններին գումարում ականջալուրը՝ հույս ունենալով հետագայում դրանք հանձնել հայ և օտարազգի ընթերցողի ուշադրությանը:

Գ. Պալաբյանը վկայում է, որ 1915 թ. ապրիլի 25-ին, կիրակի գիշերը, Ստամբուլից բռնահանված հայ տարագրյալների քարավանը հասավ Էնկյուրիի և Գոնիայի երկաթուղային անջատման կենտրոնավայրը, որտեղ և պիտի որոշվեր, թե որ ուղղությամբ նրանց կշարժեին մահվան գերանդուն հանձնելով: ***Այսշ տանող ճանապարհի վրա «հանկարծ հանդիսատես կըլլայինք այնպիսի ահավոր տեսարանի մը, որուն վերհիշումն իսկ հրաշքով վերապրողներուս դեռ նույնքան սարսուռ ու սարսափ կազդե*** (ընդգծումները մերն են – Հ. Ղ.)»[2]:

Ապա նա շարունակում է. «Երբ երկաթուղու գնացքը հասաւ Սենճան Քէօյի ըսուած այս կայարանը, հոս դուրս եկաւ Պոլսէն մեզ ընկերացող կեդրոն. բանտի պետ գարշելին Իպրահիմ, եւ շրջապատուած մեզ ընկերացող ոստիկանապետներէն եւ ոստիկան զինուորներէն, ձեռքը առած մեր անուններու սեւ ցանկը, սկսաւ կարդալ «Սիլվիօյրիչի, Ակնունի, Զարդարեան, Խաժակ, Շահրիկեան, Ճիհանկիւլեան, Տոքթ. Տաղաւարեան, Սարգիս Մինասեան» եւ այլն: Խառնի խուռն անուններ յայտնի «յեղափոխականներու», ոչ կուսակցականներու, պահպանողականներու, շուրջ 75 անձերու:

Որոց անունները որ կը կարդացուէր, վար կ'իջնէին գնացքէն եւ կ'երթային իրարու մօտ յաջորդաբար զինուորական շղթաներու մէջ շարուելու...: Մինչեւ մեր ոսկորներն սարսուռ կը զգայինք, թեպետ որոշ չէինք գիտէր թէ ինչո՞ւ աս բաժանումը կ'ընէին, բայց շատ ուշագրաւ էին յաջորդաբար կանչուած անունները: Մեզմէ բաժնուողներէն ոմանց հետ համբուրուեցանք ու համբուրեցինք, ակնթարթի մը մէջ լացինք ու լացուցինք զիրար, զի բնազդաբար միայն կը զգայինք թէ կը բաժնուէինք իրարմէ անդարձ...:

Ահա սուրբ նահատակութեամբ օծուն անունները մեր տառապանքի ազնիւ այն

[1] «Հայերի ցեղասպանությունն օսմանյան կայսրությունում». Երևան, 1991, էջ 594-595:

[2] *Գրիգորիս* ծ. վարդ. *Պալաբեան,* Հայ Գողգոթան. Դրվագներ հայ մարտիրոսագրութենեն. Պոլիսեն դեպի Ջոր (1914-1920). Ա հատոր. Բ տպագրություն. Պեյրութ. 1977. էջ 119:

ընկերներուն, որոնք Սէնճան Քէօյի կայարանին առջեւ մեզմէ բաժնուելով հեռացան *գնացին դէպի Այաշ,* եւ մէկ քանի ամիս վերջ էնկիւրիի մօտակայ ձորերուն մէջ, չարչարալից մահուամբ, ողջակիզեցան հայրենիքի սրբանուէր սեղանին վրայ, հայ ազգի ազատագրութեան անմահներու յաւիտենական մատեանին մէջ արձանագրելով իրենց անունը ոսկի տառերով»[1]:

Գաղթականների թվաքանակը մերթ մեծանում էր, մերթ, հատկապես գիշերները, փոքրանում: Թեթևացնելու թուրքական եղանակը ոչնչացումն էր երբեմն սրով, քարասպանությամբ, երբեմն հրազենով: Միայն Այաշում ոչնչացվեց բռնագաղթվածների հոծ բազմություն: Այաշի ջարդի կազմակերպիչ «*Խուրշիտ չավուշ* ինքը էնկիւրիի մէջ պարծանօք պատմած է այժմ վերապրող հայ բժիշկի մը այս բոլոր մանրամասնութիւնները, աւելցնելով թէ «երբ կոտորածը սկսանք, սպաննուողներուն աղիողորմ ճիչերովը, վայնասուններովը ձորը եւ լեռը կը թնդար: Ես Տոքթ. Փաշայեանին աչքերը նախ փորեցի, ապա վիզը կտրեցի եւ ահաւասիկ անոր ոսկի շղթան ու ժամացոյցը...»: Դիւային ժպիտով մը այս ամէնը պատմելէ վերջ կը յայտնէ Խուրշիտ, թէ փառք կու տայ Ալլահին, որ բախտ ունենալով անձամբ մասնակցելու «ճիհատին», իրենց սուրբ մարգարէին «ճէննէթին», այսինքն արքայութեան արժանացած է...:

Իսկ հրաշքով վերապրող ականատեսներ կը պատմեն, թէ էնկիւրիի շրջակայ բոլոր թուրք գիւղացիները իրենց սպաննած զոհերուն «ռետենկոթները», «պոնժուռները», «փարտըսիւները», «ժաքէթները», կօշիկները հագած էին, անժխտելի ապացոյցը կրելով արեան ահաւոր խնջոյքի իրենց մասնակցութեան:

Խուրշիտ չավուշ հայ բժիշկին կը պատմէ նաեւ դիւային ներքին գոհունակութեամբ մը, թէ թուրք գիւղացիները անշունչ նահատակներու ծուէն ծուէն եղած մարմիններն իսկ հրէշային զբօսանքի համար ժամերով կը խոշտանգէին, անդամահատելով անոնց անկենդան նշխարները: Մինչեւ որ գիշերուան խաւարը վրայ հասնելով, դուրս կու գան իրենց թագստոցէն այս անգամ ալ դիակեր բորենիներ եւ այլ վայրի գազաններ, իրենց կարգին ամբողջացնելու համար մարդ-գազաններու պակաս թողածը արեան համատարած այս սարսափելի նախճիրէն»[2]:

Գրիգորիս Պալաքեանը պատմում է, թե ինքը «բարեկամանալով» քարավանին ուղեկցող թուրք Շուքրի բեյի հետ, մի զրույց է վարել ջարդվող հայերի թեմայով: Շուքրին պատմել է. «Այս ճամբան կտեսնե՞ս, բացի տարագրութեան սկիզբը, 1915-ի հուլիսին Չորումցիներու առաջին կարավանեն, դեռ այս ճամբեն ողջ անցնող չեղավ»:

Հարց. «Շյուքրի պեյ, այս մեր անցած ճամբաներուն վրա ի՞նչ կը կարծէք, ո՞րքան հայ կոտորուեցան, բնականաբար դուք իբր Եոզկատի ոստիկան զինուորներու հարիւրապետ գիտէք անշուշտ, թէ որչափ հայ ջարդուեցան Ձեր Սանճագին մէջ (կառավարչական շրջանակ)»:

Պատասխան. «Արդէն այս այժմ գաղտնիք մը չէ, մօտ 86.000 հայեր ջարդուեցան, մենք ալ զարմացանք, որովհետեւ կառավարութիւնը ինքն ալ չէր գիտեր, որ *էնկիւրիի կուսակալութեան* մէջ այսքան հոծ հայեր կը բնակին: Թէպէտ այս թուին մէջ քանի մը հազար ալ շրջակայ կուսակալութիւններէն գալով մեր ճամբաներէն անցնող հայեր կան, որոնք մասնաւորաբար մեր ճամբաներէն անցուեցան, որպէսզի անոնք ալ մաքրենք. իր բառով «փաքլայալըմ»: Միշտ այս բացատրութիւնը կը գործածէին թուրքերը եւ մանաւանդ պետական պաշտօնեաներն, քաղաքային ըլլան թէ զինուրական, հայերու կոտորածը ակնարկելու ատեն»:

---

[1] *Գրիգորիս* ծ. վարդ. *Պալաքեան,* նշված աշխատությունը, էջ 119-120:

[2] Նույն տեղում, հատոր Բ. էջ 187-188:

Հարց. «Հայերու այս ընդհանուր կոտորածները որո՞ւ հրամանով գործադրուեցան»:

Պատասխան. ***«Թէ՛ Պոլսոյ Իթթիհատի կեդրոնական քոմիտէէն, եւ թէ՛ ներքին գործոց նախարարութենէն հրամաններ եկան հայերը աքսորելու, կամ աւելի ծիշդ բացատրութեամբ քաղաքներէն դուրս հանելով կոտորելու:*** Այս հրամանը ամենախիստ կերպով գործադրեց Պօղազլիանի Գայմագամ Քէմալ, որ կոտորածի հրամանն չգործադրող Եոզկատի միւթասարըֆին պաշտօնանկ ըլլալէն վերջ, այն ատենի էնկիւրիի փոխ կուսակալ Աքըֆի հրամանով փոխ կառավարիչ նշանակուեցաւ Եոզկատի: Որովհետեւ ինքն ալ Վանեցի էր, եւ ինք լսած էր թէ իր ընտանեկան բոլոր պարագաները հայերը կոտորած էին անխնայ Վանայ ապստամբութեան ժամանակ. այս պատճառով ինքն ալ փոխ վրէժի դիմեց, անխնայ կոտորելով այրերուն հետ նաեւ կիներն ու երախաները...»:

Հարց. «Ուրեմն Եոզկատի այս շրջանակներուն մէջ կիներ՞ն ալ կոտորուեցան: Հարցնելուս պատճառն սա է՝ որ մեր լսածին նայելով, թէպետ ամէն կողմ այրերը անխնայ կոտորուեցան, բայց իգական սեռը խնայուեցաւ կ'ըսուէր, միայն գեղեցիկ կոյսերը եւ հարսները ուզողները իրենց հարէմները տարին, մինչ ծեր ու տարէց կիները Տէր-Զօր քշուեցան: Ձեր Սանճագին մէջ ալ միթէ այսպէս չեղա՞ւ»:

Պատասխան. «Մեր կողմերը այսպէս չեղաւ, որովհետեւ ինչպէս ըսի, Պօղազլիանի Գայմագամը Վանի հայոց 1915 Ապրիլի ապստամբութեան միջոցին, իր ընտանեկան պարագաներուն սպանութենէն զայրացած եւ անձնական վրիժառութենէ դրդեալ, նոյն իսկ առանց ուշադիր ըլլալու գոնէ երեւոյթներու փրկութեան, անխնայ կոտորել տուաւ կիներն ու աղջիկները մինչեւ ծծկեր մանուկները, ըսելով թէ - ՄԱՐԳԱՐԷԻՆ ԳԼԽՈՒՆ ՎՐԱՅ ԵՐԴՈՒՄ ԸՐԱԾ ԵՄ, ԵՈՋԿԱՏԻ ՍԱՆՃԱԳԻՆ ՄԷՋ ՈՉ ՄԷԿ ՀԱՅ ՉՊԻՏԻ ԿԵՆԴԱՆԻ ԹՈՂՈՒՄ»:

Հարց. «Շիւքրի պէյ, մեզի ալ խօսակցութիւն պէտք է. կ'աղաչեմ ինծի պատմէ թէ ***Եոզկատի կիները ու աղջիկներն ի՞նչպէս ջարդուեցան»: Բայց այս միջոցին ոստիկան գիւղորներու տասնապետը՝ ճամբուն վրայ երկիւղալի նշաններ տեսած ըլլալով եկաւ հրահանգ ստանալու, որով մեր ալ խօսակցութիւնը ինքնին հոս ընդհատեցաւ:***

Արդարեւ նոյն այս մահուան ճամբուն վրայ եւ այսքան դժնդակ վիճակի մէջ մանրամասնութեամբ պատմուած այս ահաւոր դէպքերու ազդեցութիւնը չկրողներու զարմանալի թերեւս նոյն իսկ անկարելի համարուած յանդգնութեամբ մը, հետամուտ էի իրազեկ ըլլալու ցեղիս ահաւոր մարտիրոսութեան մանրամասնութեանց: Խորհելով անշուշտ որ եթէ հնար ըլլար օր մը որ եւ իցէ կերպով ողջ մնալ, պիտի կարելի ըլլար լոյս սփռել այնպիսի եղերական ու եղեռնական սարսափելի դէպքերու վրայ, որոնց անպայման ոչ մէկ հայ ականատես եղած պիտի կրնար ըլլալ: Մասնաւորաբար քանի վէրքն տաք էր, իրական ու ստուգապատում քննութիւն մը ***ՏԵՂԻՈՅՆ ՎՐԱՅ՝ յառաջիկային մեծ արժէք կրնար ունենալ. մանաւանդ որ այս բոլորը պատմողը նոյն ինքն այն ոճրագործն էր, որ ըստ իր յայտարարութեան, ղեկավարած էր Եոզկատի Սանճագին մէջ տեղի ունեցած 42.000 հայերու համատարած սպանդը»***[1]:

Ակնհայտ է, սակայն, որ հայ տարաբախտների ոչնչացման համար մահվան հիմնական ճամբարները կառուցել էին ***Ռաս-ուլ-Այնում*** և ***Դեր Զորում (Տեր-Զորում):*** Այդ պարագան ի նկատի ունենալով, փորձենք քիչ ավելի մանրամասն կանգ առնել մարդասպանության հիշյալ կենտրոնների վրա:

Իրադարձությունների ծավալման գլխավոր ***վկան թուրք է,*** պաշտոնական մի անձնավորություն, դրա համար էլ նյութերի մեծ մասը քաղում ենք նրա տրամադրած վավե-

[1] *Գրիգորիս Պալաքեան,* Հայ Գողգոթա, հատոր Բ, էջ 269-271:

րաթղթերից: Այդ անձնավորությունը Հալեպի գաղթականների գլխավոր տեսչության քարտուղար ***Նայիմ բեյն*** էր, որն այդ պաշտոնում աշխատել է ***1915-1917 թվականներին*** և «կազմակերպել է» օսմանյան կայսրության բոլոր վիլայեթներից հավաքագրված աքսորյալներին դեպի Միջագետքի անապատներն աքսորելու գործողությունները[1]:

Նայիմ բեյը, պաշտոնի բերմամբ, Թալեաթից ստացել է բազմաթիվ հեռագրեր, հրամաններ, պաշտոնական գրություններ, որոնք վերաբերում էին արևմտահայության բռնագաղթեցմանը, դեպի մահվան ճամբարներ քշելուն կամ աքսորի ճանապարհին նրանց ջարդերին: Պատերազմում կրած պարտությունից հետո, իթթիհատականները «խնամքով ոչնչացրեցին» այդ փաստաթղթերը:

1918 թ. թուրքերը հեռացան Հալեպից: Նայիմ բեյը, մնալով քաղաքում, հանդիպեց եղեռնից փրկված Արամ Անտոնյանին, անսալով նրա խնդրանքին, նա համաձայնվեց Անտոնյանին փոխանցել ոչ միայն հայկական ջարդերին վերաբերող պաշտոնական գրությունները, այլև դրանց լրացնող իր հուշերը: Արամ Անտոնյանը, շնորհակալությամբ ընդունելով այդ գրառումները, կարճ ժամանակամիջոցում խնամքով մշակեց դրանք, ապա եվրոպական լեզուներով հրատարակելով, նախ՝ մերկացրեց երիտթուրքերի հայասպան դիմագիծը, ապա՝ վավերական ու պատմական ատաղձ մատակարարեց Մեծ եղեռնի պատմությամբ զբաղվող հետագա հետազոտողներին[2]:

Նախքան ***Նայիմ բեյի*** վկայություններին անցնելը Արամ Անտոնյանը տալիս է մահվան ճամբարներում կոտորված հայ բռնագաղթեցվածների ընդհանրական համրանքը: Նա գրում է. «Բայց նոյն իսկ այդ չարչարանքի կեանքը շատ տեսաւ կառավարութիւնը, եւ այն անապատներուն մէջ կազմակերպեց երեք սոսկալի ջարդեր, առաջինը՝ ***Րէս-Իւլ-Այնի*** մէջ որուն զոհուեցան մօտաւորապէս 70.000 հոգի, երկրորդը ***Ինթիլլիի*** մէջ ուր համախմբուած էին 50.000 հոգի և մեծ մասամբ կ'աշխատէին Պաղտատի երկաթուղիի ճամբուն թիւնէլին պեղման: ***Իսկ երրորդը, որ ամէնէն զարհուրելին եղաւ Տէր Զօրի մէջ, ուր Զէքի Պէյ 200.000ի մօտ հայ սպաննեց:***

Այս թիւերը սոսկ ջարդերու միջոցին ինկած զոհերը ցոյց կուտան: Եթէ այդ երեք տեղերուն, մասնաւորաբար Րէս--Իւլ-Այնի եւ Տէր Զօրի մէջ, մասնակի սպանութեանց, թշուառութեան, հիւանդութեան եւ անօթութեան զոհերն ալ հաշուենք, անապատներուն մէջ մեռած կամ սպաննուած Հայերուն թիւը մէկ միլիոնը կ'անցնի: Մի՛ միայն թիֆիւսին զոհուեցան 150.000 հոգի Իսլահիէի մէջ, 60.000 Կատմայի եւ Ազազի մէջ, մօտաւորապէս 80.000 Պապի մէջ, աւելի քան 100.000 հոգի Մէսքէնէի մէջ, առանց հաշուելու Հալէպի, Եփրատի երկայնքը գտնուող միւս կայքերուն եւ Րէս-Իւլ-Այնի ու Տէր Զօրի մէջ մեռածները: Իմ Մէսքէնէ գտնուած ատենս օրական մահերու միջին թիւը 300-500 էր: Պապի մէջ միակ օր մը հազար հարիւր տասը մէկ հոգի ինկեր էին: Եւ այս դիակները անթաղ կը մնային, կը հոտէին, կ'որդնոտէին, այնքա՛ն որ զանոնք յօշոտելու համար շրջակայ գիւղերէն իջնող շուները Աստուծոյ մէկ բարիքը կը նկատվեին այստեղ»[3]:

Ա. Անտոնյանն արձանագրում է, որ արաբական անապատներում այն մեծ ոճիրը, որ երիտթուրքերը գործեցին դա ***«Ռաս-ուլ-Այնի ջարդն էր»,*** ապա շարունակում. «Նախ պէյի յիշողութեանց սկիզբը տեսանք թէ ի՛նչ դրութեան մէջ կը գտնուէին այնտեղ ինկած Հայերը: Նախապէս՝ ներքին գաւառներէ իջնող կիներու եւ տղոց կարաւաններու մնացորդները հոն կը մոլորէին, կը սպաննուէին կամ կը մեռնէին թշուառու-

[1] Այս հատվածը գրել է ***Ռ. Գ. Սահակյանը,*** տես «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», Երևան, 1991, էջ 736-737, 54-րդ ***ծանոթագրությունը:***

[2] ***Արամ Անտոնյան,*** Մեծ ոճիրը, Հայկական վերջին կոտորածները և Թալեադ փաշա, Պոսթըն, 1921, էջ 6-10:

[3] Նույն տեղում, էջ 18-19:

թենէ: Բայց տակաւ Անատօլըի երկաթուղիի գիծին երկայնքէն ու Կիլիկիայէն անոնգին թուով ժողովուրդ սկսեր էր իջնել հոն, երբ պէտք եղեր էր պարպել ***Իսլահիյէն, յետոյ Գադման, յետոյ Ազազը, յետոյ Ագթէրինը, որոնց մէջ յաջորդաբար կը խռնուէին քշուող տարագիրները:*** Ըսինք արդէն թէ Րէս-Իւլ-Այնի գայմագամը, Եուսուֆ Ջիյա Պէյ, բարի մարդ մըն էր, որ ի զուր հեռագիր հեռագրի վրայ կը հասցնէր Հալէպ, խնդրելով որ այլեւս Րէս-Իւլ-Այն գաղթական չղրկեն, որովհետեւ արդէն իսկ ղրկուածներուն հոգատարութեան ու պատսպարման չէր կրնար հասնիլ:

Նաիմ Պէյ կը գրէ -

«Երբ դէպի Րէս-Իւլ-Այն երկաթուղիով կը կատարուէր գաղթականներու առաքումը, գայմագամ Եուսուֆ Ջիյա Պէյ ծանոյց թէ այլեւս Րէս-Իւլ-Այնի մէջ հայ զետեղելիք տեղ չէ մնացած, թէ ամէն օր 5-600 գաղթական կը մեռնի, թէ ո՛չ ողջերը դէպի աւելի վար ղրկելու, ոչ ալ մեռելները թաղելու ժամանակ կը գտնեն: Եուսուֆ Ջիյա Պէյ կը պաղատէր որ այլեւս դադրի դէպի Րէս-Իւլ-Այն գաղթականի առաքումը:

Հետեւեալ իմաստով պատասխանուեցաւ իրեն.- Առաքումները փութացուցէ՛ք. այդ պարագային մեկնելու վիճակին մէջ չեղողները քաղքէն քանի մը ժամ անդին կ'իյնան կը մեռնին, եւ գաւառակը թէ՛ ողջերէն եւ թէ մեռելներէն ազատած կ'ըլլայ:

Տեղւոյն առաքման պաշտօնեային եւ գայմագամին վերջին տեղեկագիրներէն կը հասկցուէր թէ չորս ամսուան միջոցին 13-14000 Հայեր անօթութենէ եւ հիւանդութենէ մեռած են»:

Ահա այս դրութեան մէջ էին Րէս-Իւլ-Այնի հայ գաղթականները, երբ Հալէպի մէջ զանոնք բոլորովին բնաջինջ ընելու միջոցներուն վրայ կը խորհէին»:

Այդ դեպքերի մասին ***Նայիմ բէյը*** պատմում է.

«Հալէպէն Րէս-Իւլ-Այնի գաղթականներու առաքման պաշտօնեային ղրկուած հրահանգները չէին գործադրուիր,- կը գրէ իր յիշողութեանց մէջ: Ապտիւլահատ Նուրի Պէյ գաղթականներու առաքման պաշտօնեան, Ատիլ Պէյը նեղելով հասկցաւ թէ հոն գտնուող Հայերու դէպի անապատ առաքման հակառակորդը նոյն ինքն Տէր Զօրի կառավարիչ Սուատ Պէյն է:

Նուրի Պէյ, Հալէպ դարձին, իրողութիւնը տեղեկացրեց կուսակալ Ապտիւլհալիգ Պէյի, որ անմիջապէս ծածկագրով հրամայեց Ալի Սուատ Պէյի.- «Հազարաւոր Հայերու Րէս-Իւլ-Այնի մէջ թողուած ըլլալը կառավարութեան սրբազան նպատակին անհամաձայն պարագայ ***մըն է, քշեցէ՛ք զանոնք այն տեղէն»:***

Ալի Սուատ Պէյ պատասխանեց.- «Փոխադրութեան միջոցներ չկան որպէս զի կարենամ ժողովուրդը տեղահան ընել: Եթէ հետապնդուած նպատակը զանոնք սպանել է, այս բանը ոչ կրնամ ընել, ոչ ալ ընել տալ»:

Մուսթաֆա Ապտիւլհալիգ Պէյ այս հեռագիրը Պօլիս ներքին գործոց նախարարութեան ղրկեց, անոր կցելով հետեւեալ տեղեկագիրը Ալի Սուատ Պէյի մասին.-

Ներքին գործոց բարձր նախարարութեան.

Քննութեան համար անցեալները Րէս-ուլ-Այն գացող գաղթականաց ընդհանուր Տեսչի փոխանորդին տեղեկագրէն կը հասկցուի որ նոյն տեղը ղրկուած Հայերը մինչեւ այսօր հոն թողուած եւ շէնք շնորհք տուն տեղ կազմակերպած են, եւ թէ զանոնք պաշտպանող եւ անոնց այնտեղ հաստատուելնին թոյլատրողը Զօրի կառավարիչ Ալի Սուատ Պէյն է:

Թէեւ կրկին եւ կրկին գրուած է թէ Րէս-Իւլ-Այնի պես պզտիկ, բայց տեղական կարեւորութիւն ունեցող գիւղաքաղաքի մը մէջ հազարաւոր Հայերու խռնուիլը եւ ««փոխադրութեան միջոցներ կը պակսին»ի պէս պատճառաբանութիւններով առաքում չկատարուիլը պատասխանատուութիւն կը պատճառէ, բայց արդիւնք մը չէ տեսնուած:

Ալի Սուատ Պէյի ատոնց (Հայոց) մասին ցոյց տուած կողմնակցութիւնն ու պաշտպանութիւնը զարմանալի համեմատութեան մը հասած են: Պատմուածին նայելով, իր քով գտնուած կարգ մը (Հայ) տղոց արդուզարդը ինք իր ձեռքով կ'ընէ, եւ անոնց ծնողներուն աղէտին վրայ կու լայ ու կ'ողբայ եղեր: Այն կողմերը ղրկուող Հայերը այս կերպով այլապէս երջանիկ կենցաղի մը կ'արժանանան, եւ ասոր համար Ալի Սուատ Պէյի երախտապարտ են:

Բայց որովհետեւ այդ կացութեան շարունակութիւնը հալէպէն գաղթականներու առաքմանց ակամայ յետաձգման պատճառ պիտի դառնայ, Ձեր նախարարական բարձրութեան դիմելով յարմար կարգադրութիւն մը կը խնդրենք:

23 Դեկտեմբեր 915.

Կուսակալ
ՄՈՒՍԹԱՖԱ ԱՊՏԻԻԼՀԱԼԻԳ».

«Այս տեղեկագրին վրայ էր որ Ալի Սուատ Պէյ պաշտօնանկ պիտի ըլլար ժամանակ մը ետքը»:

*
* *

Իրերը այս դրութեան մէջ մնացին մինչեւ 1916 Փետրուար: Այդ ամսուն Րես-Իւլ-Այն ժամանեց հայկական կոտորածներու ամենէն անողորմ ու վատահամբաւ գործադրիչներէն մէկը, Վանի նախորդ ***կուսակալ Ճէվտէթ Պէյ,*** քեռայր պատերազմական նախարար Էնվէր փաշայի: Վանի ջարդերը գործադրելէն ետք գացեր էր Մուշ, հոն նոյնպէս կոտորել տուած էր, եւ յետոյ Պիթլիս անցեր էր Մուսթաֆա Ապտիւլհալիգ Պէյի ջարդերը լրացնելու: 1916 Փետրուարին Ատանայի կուսակալ կարգուած ըլլալով, իր պաշտօնատեղին կը մեկնէր եւ հասեր էր Րես-Իւլ-Այն, ուր այդ միջոցին մօտաւորապէս ***50.000 հայ*** գաղթական կը գտնուէր: Գայմագամը իսկոյն իրեն ընդառաջ փութացած էր հետեւորդներու խումբի մը հետ, որուն մէջ պատահմամբ կը գտնուէր նաեւ Պաղտատի Երկաթուղիի Ընկերութեան Շինութեանց ճիւղին հայ բժիշկներէն մէկը Տոքթ. Հրեշտակեան: Տոքթորը վերջէն մեզի պատմեց թէ ***Ճէվտէթ Պէյի առաջին*** տեսած բանը եղաւ այն բլրակը որուն վրայ կը գտնուէին հայ գաղթականներու հազարաւոր վրանները: Ճէվտէթ Պէյ կը կարծէ թէ զինուորական վրաններ են, եւ կը հարցնէ թէ դէպի ո՞ր կողմ կ'երթան այդ զինուորները. Գայմագամը կը պատասխանէ թէ զինուոր չեն ատոնք, այլ հայ գաղթականներ: Հազիւ ասիկա լսած Ճէվտէթ Պէյ որ մտքէն անգամ չէր կրնար անցնել թէ հայ մըն ալ կայ իր ունկնդիրներուն մէջ, կը պոռայ.

- Տակաւին այս շուներէն կը մնա՞ն. հրաման կ'ընեմ քեզի որ բոլորն ալ ջարդես:

Գայմագամը կը մերժէ հնազանդիլ, առարկելով որ չի կրնար արիւնը մտնել այդքան անմեղներու, որոնք ոչ մէկ վնաս հասցուցած են իրեն:

- Ուրեմն չե՞ս գիտեր թէ ի՞նչ ծրագիր կը հետապնդէ կառավարութիւնը, կ'ըսէ Ճէվտէթ Պէյ:

Ու կը սպառնայ որ զինքը պաշտօնանկ ընել պիտի տայ: Նոյն իսկ, գործը խօսքին միացնելով, իսկոյն կը կանչէ հեռագրական պաշտօնեան եւ իրողութիւնը կ'իմացնէ Պօլիս:

Հետեւանքը անշուշտ պաշտօնանկութիւն մը պիտի ըլլար, եւ այդպէս ալ եղաւ: Եուսուֆ Ձիյա Պէյ հեռացուեցաւ Րես-Իւլ-Այնէն, եւ տասը օր վերջ, մարտի սկիզբը, եկաւ նոր գայմագամ մը, Րումէլիի Քօչանա գաւառակէն երիտասարդ մը, ***Քէրիմ Րէֆի Պէյ,*** որ Ճէվտէթ Պէյի մարդն էր:

Հայկական տեղահանութեան առթիւ կառավարութիւնը յատուկ դիտումով պաշտօ-

նի կոչած էր մասնաւորաբար այն մարդիկը որոնք Պալքանեան պատերազմին միջոցին ընտանեօք շատ տաժանելի տարագրութեան մը ենթարկուած եւ Պօլիս գաղթած էին: Ասոնց սրտին մէջ իրենց հերուան տառապանքներուն բովանդակ դառնութիւնն ու վրէժի պապակը բաբախուն կը մնար: Եւ այդ էր պատճառը, որ այնքան զարհուրելի վայրենութիւն մը ցոյց տուին, հակառակ անոր որ Հայերը դեր մը չէին ունեցած անոնց երբեմնի տառապանքներուն մէջ: Նոյն իսկ Պալքանեան պատերազմին ընթացքին ամէն ճակատներու ***Օսմանեան*** բանակներուն մէջ գտնուող հայ զինուորները հերոսական կորովով մը կռուեցան, ինչպէս վկայեցին առ հասարակ բոլոր Թուրք հրամանատարները: Իրենց ոխը Պուլկարներէն, Սերպերէն, Յելլէններէն հանեցին Հայոցմէն:

Րէս-Իւլ-Այնի նոր գայմագամը զմայլելի գործիք մը եղաւ Հալէպի բորենիներուն ծեռքը, որոնց առջեւ ասպարէզը բոլորովին բաց կը մնար, որովհետեւ յաջողեր էին հրաժարեցնել նաեւ Ալի Սուատ Պէյը, Տէր Զօրի կառավարիչը: Մարտ 17-ին Քէրիմ Րէֆի Պէյ սկսաւ տեղահանութիւնը: Այս գործը վստահուած էր չէչէններուն, որոնց գլուխը կը գտնուէր Րէս-Իւլ-Այնի քաղապետութեան Տնօրէն Արսլան Պէյ, եւ որոնց մասին Նաիմ Պէյ հետեւեալը կը գրէ իր յիշողութեանց մէջ.-

Րէս-Իւլ-Այնի չէչէններէն հրոսակախումբ մը կազմուեցաւ, իբր թէ այդ տեղի գաղթականները ճամբորդութեան միջոցին յարձակումէ զերծ պահելու համար: Այս հրոսակախումբը զինուեցաւ: Պահապանի անունը կրող այդ մարդիկը սակայն, ճամբան գաղթականները կողոպտելու, սպաննելու պաշտօնը ունէին:

Րէս-Իւլ-Այնի եղերական դէպքին հրամանը ուղղակի Հալէպէն տրուեցաւ: Այս հրամանը այն հրոսակախումբին պետերուն տրուած էր: Անոնցմէ մէկ քանին Հալէպ եկան եւ կուսակալ Մուսթաֆա Ապտիւլհալիգ Պէյի հետ տեսնուեցան: Անոնց վերադարձէն չորս հինգ օր ետքը Րէս-Իւլ-Այնի գայմագամը (Քէրիմ Րէֆի Պէյ) ծածկագրով իմացուց անոնց հասած եւ հրահանգները ընդունած ըլլալը»:

Զարդերը գրեթէ տեղահանութեան հետեւեցան, որովհետեւ կատարուեցան շատ մօտիկ տեղուանք, գլխաւորաբար Ճըրճըպի ափերուն եւ դէպի Շէտտատէ իջնող ճամբուն վրայ: Հայերը, խումբ-խումբ հանուելով, կը սպաննուէին ամենավայրագ կերպով: Երբեմն անոնցմէ մարդիկ կը յաջողէին փախչիլ, կուգային Րէս-Իւլ-Այն,- կարելի չէր ուրիշ տեղ երթալ,- կը պատմէին զարհուրանքը: Երեւակայել պէտք է թէ այդ պատմութիւնները լսող խեղճ անպաշտպան ժողովուրդը ի՜նչ ահաւոր սրտայուզութեան, ի՜նչ սոսկումի կը մատնուէր, երբ կուգային խարազանով, հրացանի բուներով, գաւազանի եւ մոյկի հարուածներով զինքը կը հանէին ու կը քշէին դէպի այն սպանդանոցները: Ո՛չ հիւանդի խնայուեցաւ, ո՛չ մանուկներու, ո՛չ ծերերու:

Զարդերը տեւեցին ամիսներ: Մինչեւ Յունիս տակաւին կը շարունակուէին, երբ տեղւոյն գաղթականներու առաքման պաշտօնեան Ատիլ Պէյ այլեւս իր գործը լրացած նկատելով ճամբայ ելաւ դէպի Հալէպ, հազարաւոր ոսկիներով: Որովհետեւ գաղթականները, առանց ո՛եւ է փոխադրութեան միջոցի ճամբայ հանուած ըլլալով, գրեթէ ոչինչ կրցած էին առնել հետերնին: Արդէն գիտնալով որ քանի մը ժամ անդին պիտի սպաննուին, չէին ուզեր աւելորդ տեղը բեռ տանիլ: Իրենց կարասիները, իրենց վրանները, քշուելնէն տակաւին շաբաթներ ետք կը մնային այն բլրակին գագաթը ուր բանակած էին: Վերջէն ընդհանուր թալան մը տեղի ունեցած էր, եւ Ատիլ Պէյ ալ խոշոր բաժին մը առած կը մեկնէր: Չմեկնած իրեն ողջերթի գացողներուն պատուիրած էր հրապարակաւ.

- Չըլլայ որ հատ մը անգամ ողջ թողուք. պզտիկները մանաւանդ, մինչեւ 7-8 տարեկանները, ջարդեցէք անխնայ, որովհետեւ եթէ ողջ թողուք վաղը ատոնք մեզմէ վրէժ լուծելու պիտի ելլեն:

Բայց իր մեկնումէն վերջը, Քէրիմ Րէֆի Պէյ պիտի ստիպուէր կասեցնել տեղահա-

նութիւնն ու ջարդերը: Այդ միջոցին Զէքի Պէյ Տէր Զօր հասած էր իբր կառավարիչ, Սուատ Պէյի տեղ, եւ այն տեղի ջարդերը սկսած ըլլալով, մարդու պէտք ունէր իր դիւային գործը յաջողցնելու համար: ***Մօտաւորապէս 200.000 հոգի ջարդելը դիւրին*** գործ չէ: Աշխատութեան հսկայական համեմատութիւնը զինքը շփոթեցուցեր էր: Ստիպուած Տէր Զօր կանչեր էր Րէս-Իւլ-Այնի ջարդերը կատարող բոլոր Չէչէնները, որոնք գացեր էին միանալու Սէֆայի իրենց ազգակիցներուն: Բայց նորէն ջարդարարները անբաւական էին գոհերուն համար: Հասկնալով որ Չէչէններուն միջոցաւ գործը չպիտի լրանայ, Զէքի Պէյ Զօրի շրջակայ արաբ աշիրէթներուն խոստացեր էր գոհերուն հագուստները իրենց տալ, եթէ ջարդերուն օգնէին: Եւ անոնք ընդուներ էին: Մեծագոյն մասը անոնց ձեռքով ջարդուեցաւ:

Չէչէններուն այս ժամանակաւոր բացակայութեան պատճառաւ, Րէս-Իւլ-Այն մնացած մէկ երկու հարիւր ընտանիքներ պահ մը շունչ առին: Բայց այս դադարը երկար չպիտի տեւէր: Այն միջոցին ուր ***թէ՛ Րէս-Իւլ-Այնի մէջ*** եւ թէ՛ Տէր Զօր ջարդերը տեղի կ'ունենային, ճէվտէթ Պէյ անցած էր Ատանա: Ճամբան հանդիպեր էր Ինթիլլի ուր փութով առաջ կը տարուէին Պաղտատի երկաթուղիի փապուղիին շինութիւնները: Աւելի քան 50.000 Հայեր, որոնք կարաւաններէն անջատուելով հոն մնացեր էին, պատառ մը հացի փոխարէն կ'աշխատէին տեղահանութեան սկսելէն ի վեր: Շատ հարուստ ու դիրքի տէր մարդիկ դարձեր էին պարզ գործաւոր, քար կը կոտրէին, ու նորէն գոհ էին, որովհետեւ այդտեղ գոնէ զերծ էին: Անոնց մեծ մասը կիներ եւ պզտիկներ էին, որոնք նոյնպէս կ'աշխատէին:

Արդէն այս գործաւորները հանելու փորձ մը եղած ***էր 1915-ի վերջերը:***

Նաիմ Պէյ կը գրէ այդ մասին.-

«Թէ՛ երկաթուղիի շինութիւններու եւ թէ վարչութեան պաշտօնեաներուն մեծագոյն մասը հայ էր: Կառավարութիւնը, իբր թէ անոնց անյարմարութենէն վախնալով հետեւեալ հրամանը տուաւ.-

«No 801

Հալէպի Կուսակալութեան.

Առ հասարակ ամէն հաստատութեան, երկաթուղիի եւ ուրիշ շինութիւններու գործերուն մէջ ծառայող Հայերուն ալ իրենց տարագրութեան վայրերը ղրկուելնին որոշուած եւ այս մասին պատերազմական նախարարութենէն բանակի հրամանատարութեանց տեղեկութիւն տրուած է: Արդիւնքը հաղորդեցէք:

26 Դեկտ. 915. Ներքին գործոց նախարար
ԹԱԼԷԱԴ»[1]:

Ռաս-ուլ-Այնի ջարդերը գերազանցեցին Թալեաթի և Ջևդեթ բեյի սպասելիքները: Արյան հեղեղներ էին առաջացել: Գավառակը ծածկված էր կանանց, ծերերի, մանուկների դիակներով: Սպանվողների աղաղակները, վիրավորների տնքոցները մոռացության էին տալիս դժոխքի տանջանքները: Փոքրաքանակ վերապրողներին ևս չհասցնելով ոչնչացնել, նրանց քշեցին դեպի Շետտատեի շրջակա վայրերը, որպեսզի կոտորեին հաջորդ էտապում Դեր Զորի հայոց վերջին մնացորդների հետ:

Արամ Անտոնյանն այդ ողբերգությունն ամփոփում է այսպես. «1916 ապրիլին, մինչդեռ Ռես-իւլ-Այնի ջարդերը տեղի կունենային եւ ճամբաները լեցուն էին նոյն իսկ ծծկան պզտիկներու, և ծիծերնին կտրուած աղջիկներու, ցցահան եղած կիներու եւ մարդոց դիակներով, Շուէտացի գերմանասէր Պ. Սվէն-Հետին անկէ անցաւ: Քար մը պիտի խղճար ամենաանողորմ կերպով խողխողուած այդ անմեղ մարտի-

[1] ***Արամ Անտոնյան,*** Սեծ ոճիրը, էջ 51-58:

րոսներուն դիակները տեսնելով: Պ. Սվէն-Հետին նոյն իսկ այդ քարի կտորն ալ չուներ իբր սիրտ: Պօլսոյ մէջ Թուրքերը գովեց, ու Եւրոպա անցնելուն հերքեց ջարդերը որոնց ականատես եղեր էր:

Գրեթէ նոյն ատենները ***Ռէս-իւլ-Այնէն*** անցնելով Ճարապլուս գնաց համբաւաւոր «էմտէն» մարտանաւին հրամանատարը, Ֆօն Միւքքէն: Այդ միջոցին Ճարապլուս կը գտնուէր Պաղտատի երկաթուղիի շինութեանց ընկերութեան բժիշկներէն Տք. Հրեշտակեանի կինը, որ գերմանուհի մըն է: Տիկին Հրեշտակեան ինք անձամբ մեզի պատմեց,- Ֆօն Միւքքէի կը խօսի հայկական ջարդերուն վրայ եւ կըսէ թէ խաղաղութեան կնքուելէն ետք Գերմանիա ի՞նչ պատասխան պիտի տայ քաղաքակիրթ աշխարհին այդ բարբարոսութեանց նկատմամբ որոնք իր աչքին առջեւ գործուեցան:

Ֆօն Միւքքէ կը պատասխանէ.

- Հոգ ընելիք բան չկայ, տիկին. խաղաղութեան կնքուելէն ետք կարգադրելիք ա՜յնքան խնդիրներ պիտի ըլլան որ հաւ մը անգամ իր փետուրը չպիտի շարժէ Հայերուն համար...»[1]:

ԴԵՐ ԶՈՐ

Մեծ եղեռնի իրականացման, բռնագաղթի ենթարկված հայ գաղթականների կենտրոնական, ամենագլխավոր, ամենասահմռկեցուցիչ, ամենադաժան, ամենաանմարդկային ճամբարը ***Դեյր-էզ-Զորն*** էր, որն իր անունն ստացել էր արաբերեն ***դեյր***-վանք և ***զոր***-անտառ բառակապակցությունից: Այն տարբեր դարերում աղավաղվել է, վերածվել ***Դեյր-էլ-Զոր, Դեր-էզ-Զոր, Տեր-Զոր, Դեր Զոր*** անվանաձևերի: Քանի որ հայ և օտար պատմագիտական գրականության մեջ այժմ ընդունված է գրել ***Դեր Զոր,*** մենք ևս հետևում ենք գրության այդ ձևին:

Դեր Զոր քաղաք-բնակավայրն այժմ գտնվում է Սիրիայի կազմում, փռված է Եփրատ գետի աջ ափին, Ռաքքա - Բաղդադ գետային և Թադմոր (Պալմիրա) - Ֆաջամի խճուղային ճանապարհների քառուղիներում: Քաղաքի դիմաց, գետի հոսանքի ուղղությամբ, հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք ընկած է հնում եղած ամենամեծ և անտառապատ կղզին: Մինչև «թուրքանալը», բնակավայրում նստած էր նեստորական հոգևոր թեմի առաջնորդը: Միջնադարում այն եղել է տարանցիկ առևտրական կենտրոն, իսկ օսմանցիների գրավումից հետո մտել է Հալեպի վիլայեթի կազմի մեջ և վերածվել խղճուկ գյուղաքաղաքի[2]:

«Տեր-Զոր» աշխատության հեղինակային կոլեկտիվը, որի մեծ մասը նույնիսկ շարունակում է ապրել արաբական այդ անապատում, գրում է. «Թրքական տիրապետության տակ, արևելյան յետամնաց քաղաք էր Տէր-Զօրը, հողակերտ տուներով ու նեղ, անարեւ գռիհներով: Համեմատաբար լայն պողոտայի մը եւ զուգահեռ երկու փողոցներու մէջ կեդրոնացած էին Տէր-Զօրի գլխաւոր շէնքերը. կառավարչատուն, կարաւանի իջեւան-խաներ, մզկիթ, շուկայ, սրճարան, զինւորական հիւանդանոց, մէկ դեղարան եւ այլն:

Հակառակ խեղճ վիճակին, Սուրիոյ եւ Իրաքի արաբական քաղաքներուն եւ անապատի թափառաշրջիկ ցեղերուն առեւտրական միակ կեդրոնն էր Տէր-Զօր, անպաշտօն, բայց իրական մայրաքաղաքը Միջագետքի անապատային տարածութեան:

Թուրքերու օրով, Հալէպ-Պաղտատ կառքի ***ճամբորդութիւնը կը տեւէր 18-20 օր: Կարաւանի ոտքով՝ 40 օր:*** Հիմա, ***Դամասկոս-Պաղտատ*** գծով եւ օթոքառերով 12-14 ժամ: ***(Պաղտատի եւ Հալէպի միջեւ հեռաւորութիւնն է հազար քիլոմէթր):*** Ու-

[1] ***Արամ Անտոնյան,*** նշված աշխատությունը, էջ 60-61:

[2] ՀՍՀ, հ. 3, Երևան, 1977, էջ 348:

ղեւորը, երկար եւ դժուարին ճամբորդութիւնը կիսելէ ետք, սփոփունքով կ'ողջունէր Տէր-Զօր քաղաքին հեռաւոր եւ սպիտակ սիլհուէթը:

Միջագետքի ազատագրումը թուրքին լուծէն, հսկայական փոփոխութիւն առաջ բերաւ քաղաքին մէջ: Բացուեցան լայն, ծառազարդ պողոտաներ, շինուեցան դպրոց, լիսէ, կառավարական պալատ, հիւանդանոց, երկրագործական գիշերօթիկ վարժարան, նոր կամուրջ, արդիական օթէլներ եւն: Նորութիւններ են նաեւ ելեքտրական լուսավորութիւնը, ջուրի բաշխումը եւ զբոսավայրերը: Վարժարաններու մեջ տղա և աղջիկ, կը հագուին միօրինակ, նոր հագուստներով: Ուսուցչուհիները պարտաւոր են առանց քօղի շրջիլ:

Քաղաքին բնակչութեան թիւն է 32.000, մեծամասնութեամբ՝ արաբ, շրջակայ գիւղերով՝ 60.000: Փոքրամասնութիւններն են՝ հայ, հայ-կաթոլիկ, Սուրիան-կաթոլիկ, Քիլտան-(Քաղդէացի) կաթոլիկ, Սուրիան- հին օրթոտոքս եւ հայախոս ասորի»[1]:

Պարսիկ պատմաբան Իսմայիլ Ռային, «Հայերի կոտորածները» աշխատութեան էջերում, անդրադառնալով օսմանեան կայսրութեանում հայերի նկատմամբ 1876-1919 թթ. կիրառվող քաղաքականութեան պատմութեանը, օգտագործելով նաև օտար ականատեսների գրառումները, Դեր Զորի մասին պատմում է. «Տեր Զորում տեղի ունեցածի մասին հավաստի մի աղբյուրից մեր ձեռքի տակ կա մանրամասն մի հաղորդագրություն: Դա Շվեյցարիայի Բալ քաղաքից օրիորդ Բիադրիս Ռոհների վկայությունն է: Օրիորդ Ռոհները անձամբ Տեր-Զորում հայերի կրած տառապանքների ականատեսն է եղել: Նա իր հուշերը հրապարակել է «Արեւածագ» պարբերականում եւ Գերմանիայի «Արեւելքի քրիստոնյաների բարեգործական կազմակերպություն» օրգանում: Նրա հրապարակած հուշերից ներկայացնում ենք որոշ հատվածներ. ***«Հալեպից ծիով վեց օրվա հեռավորության վրա գտնվող անապատային*** Դեր Զոր քաղաքում մի մեծ տուն տեսանք, որի բոլոր սենյակները, տանիքը եւ պատշգամբները զբաղեցրել էին հայերը: Մեծ մասամբ կանայք եւ երեխաներ էին: Մի քանի ծերեր էլ կային, իրենց փալասների վրա պառկած էին: Այս լեռնաբնակների համար անապատային կյանքը անչափ դժվար էր: Հաջորդ օրը տեսա հայ գաղթականների մի ճամբար, որի վրանները պատրաստված էին այծի մորթուց: Այս տարաբախտ մարդկանցից շատերը պառկած էին դրսում՝ կիզիչ արեւից շիկացած ավազների վրա: Մեծ թվով հիվանդներ լինելու պատճառով օսմանցիները մեկ օրով նրանց հանգստանալու հնարավորություն էին տվել: Զգեստները վկայում էին նրանց երբեմնի բարեկեցիկ կյանքի մասին: Նրանք Զեյթունի մոտակայքում գտնվող Գեբեն գյուղից էին: Նրանց առաջնորդում էր հովվապետը: Օրական հինգ-վեց երեխա ճամփին զոհվում էին: Հենց նոր մի երիտասարդ կնոջ քաղումից էին վերադառնում: Նա թողել էր ինը տարեկան մի աղջնակ: Նրանք աղերսում էին, որ այդ աղջնակին ինձ հետ տանեմ:

Նրանք, ովքեր անապատում ճամփորդելու փորձ չունեն, չեն կարող դրա չարչարանքները պատկերացնել. անապատային խորդուբորդ ճանապարհ՝ առանց ծածկի ու ստվերի, ճամփորդություն կիզիչ արեւից շիկացած քարաստանների վրայով: Իսկ երթուղու հետ զուգահեռ հոսող ***եփրատի պղտոր ջուրը չէր կարող մարդկանց ծարավը հագեցնել: Հաջորդ օրը հանդիպեցի զեյթունցի հայերի մեկ այլ ճամբարի, նույն տառապալից վիճակն էր տիրում, նույն թշվառությունն ու տառապանքները: Նրանք հարցնում էին. ինչո՞ւ մեզ անմիջապես չեն սպանում, ինչո՞ւ չեն փրկում այս չարչարանքներից, ինչո՞ւ են մեզ տանջամահ անում: Արդեն մի քանի օր է, ինչ խմելու ջուր չունենք, մեր երեխաները ծարավի չեն դիմանում»[2]:***

---

[1] Հեղինակ՝ *Աղետեն վերապրողներ*, Տեր-Զոր, Փարիզ, 1955, էջ 24-25:

[2] *Իսմայիլ Ռային*, Հայերի կոտորածները (պարսկերենից թարգմանեց *Ա. Ա. Դարբինյանը*), Երևան, 1999, էջ 88:

Իսմայիլ Ռային, օգտվելով հարմար առիթից, լինելով Հալեպում, փորձում է հանդիպել Դեր Զորի կառավարչի հետ: Նրան հաջողեցնում են այդ հանդիպումը, որի մասին էլ գրում է. «Դեր Զորի կառավարիչը, որն այժմ գտնվում է Հալեպում, ասում է, որ իր քաղաքում տասնհինգ հազար հայեր կան, ***երեխաները հիմնականում վաճառքի են հանվում, որպեսզի սովամահ չլինեն, որովհետեւ պետությունը, փաստորեն, օրապահիկ չի տալիս:***

Նրանց Պոլսի լքված շների նման անտերության էին մատնել, որպեսզի սովից ոչնչանան: Եվ դա այն նպատակակետն էր, որի համար հայերը ստիպված էին հարյուրավոր կիլոմետրեր քարքարոտ ճանապարհ անցնել: Մինչեւ տառապանքի վերջին հասնելը, նրանք կանգ էին առել ***Մուրադսուի*** մոտակայքում գտնվող մի քաղաքում (այդ քաղաքի մասին մի ականատեսի տված վկայությունների հիման վրա տեղեկություններ ենք հաղորդել): Այդտեղ եղած ժամանակ արդեն նրանք իրենց թշվառության գագաթնակետին էին հասել: Սակայն Հալեպում ավելի ծանր օրեր էին նրանց սպասում, եւ դեռ ամենածանր օրերը առջեւում էին: ***Մենք չարաբաստիկ Դեր Զոր տեղահանման հետ միասին ծանոթացանք նաև հայերի ճակատագրի մասին: Հալեպը անապատի մեջ մի օազիս է, եւ այն ողողող գետը թափվում է քաղաքից ոտքով շուրջ մեկ օրվա հեռավորությամբ դեպի հարավ-արեւելք ձգվող ճահիճների մեջ: Այդ ճահճուտները հատկացվեցին նորեկների առաջին խմբերին: Սակայն ավելի մեծ թվով խմբեր այլեւս չէին կարող տեղավորվել այնտեղ: Ուստի, հաջորդ խմբերը հինգ օր ճամփորդելով՝ նրանցից առաջ ընկան, եւ տեղափոխվեցին հաջորդ նահանգի վարչական կենտրոնը համարվող Դեր Զոր քաղաքը, որը գտնվում է ամֆիթատրոնի տեսք ունեցող արաբական հեղձուկ անապատներից*** դեպի Պարսից ծոցը հոսող Եփրատ գետի եզերքին: Այդ ճամփորդության ընթացքում աքսորյալներին մեկ այլ դժբախտություն էր սպասվում: Այստեղ խոշտանգողները փոխվում էին քրդերը բլուրների վրա դադար էին առնում, եւ նրանց փոխարինելու էին գալիս ***արաբ բեդվինները:*** Այդ բռնարարների տռփանքի ու ատելության զոհը դարձած հայերը, այսքան հեռավոր վայրերը քշվելու փոխարեն ավելի լավ կլիներ հենց իրենց լեռնաշխարհում գնդակահարվեին, եւ այսպիսի անարգանքի ու տառապանքի չարժանանային: ***Հարյուրավոր մարդիկ սովի եւ գազանային բռնաբարությունների հետեւանքով զոհվեցին, եւ համարյա բոլորն էլ անապատում սովից, ծարավից եւ Անազայի արաբների վայրագություններից մահամերձ վիճակում էին գտնվում»***[1]:

Գերմանացի Վոլֆգանգ Գուստը «Հայերի ցեղասպանությունը» աշխատության էջերում, հենվելով օտարազգի միսիոներների, հատկապես կին ականատեսների հաղորդած փաստերի վրա, գրում է. ***«Անապատային Դեր էլ Զոր քաղաքում,*** ուր առնվազն 15 հազար հայ են քշել, ըստ ամերիկացի վիրաբույժ Շիփըրդի զեկուցագրի, արաբները կանանց լավ էին վերաբերվում, մարդասեր թուրք կառավարիչը՝ ***Ալի Սուաթ բեյը,*** նույնիսկ 50 հազար ֆունտ է տրամադրել: «Նա մեզ հոր պես է վերաբերվում»,- ասել են հայերը գերմանական միսիոներներին: Սակայն երբ մայրաքաղաքում լսել են այդ մասին, անմիջապես Սուաթ բեյին հեռացրել են պաշտոնից: Նրան փոխարինել է Սևերեկի կայմակամը՝ ***Չերքեզ Զեքի բեյը,*** որը, ըստ Ռյոսլերի հավատարմատարի, երդվել է ոչ մի հայ կենդանի չթողնել: Նա բոլորին հավաքել է Եփրատի վտակ Մուրադ գետի մոտ մի հսկայական վրանաճամբարում, որտեղից խումբ առ խումբ տեղափոխել է տվել և Խաբուր գետի ափին կոտորել: «Երբ մի անգամ բոլորին միասին գնդակահարել էին, դահիճները հեգնանքով ներել էին նման շտապողականությունը»:

1916 թվականի հոկտեմբերի 9-ին Դեր Զորի ոստիկանապետ Մուստաֆա Զիդքիի

[1] *Իսմայիլ Ռային*, Հայերի կոտորածները, էջ 87:

ԴԵՅՎԻԴ ԼԼՈՅԴ ՋՈՐՋ
(1863-1946)

Շուրջ վաթսուն տարի հետո միայն, Լ. Ջորջը, ի լուր աշխարհի, խոստովանեց անգլիական դիվանագիտության մեղսակցությունը հայ ժողովրդի ճակատագրում, հատկապես Բեռլինի կոնգրեսի տխրահռչակ, հայադավ որոշումները կայացնելիս: Այդ որոշումը,– գրում էր Միացյալ Թագավորության նախկին վարչապետը,– մեծարվում էր մեր կողմից՝ որպես Անգլիայի մեծագույն հաղթանակը, նրա թելադրած պատվավոր խաղաղությունը: Հայաստանը ողջակիզվեց մեր կառուցած հաղթանակի զոհասեղանի վրա... Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897, 1909 թվականների սոսկալի ջարդերին և 1915 թվականի ամենասարսափելի կոտորածին:

կարգադրությամբ 200 խոշոր կոճղափայտերով խարույկ են վառել, վրան լցրել 200 աման նավթ: Այնուհետև, ինչպես հաստատել է հայ փաստաբան Սահակ Մեսրոպը, «բորբոքել են խարույկը և թևերն ու ***ձեռքերը կապած 2000 որբ հայ երեխաների*** *նետել* բոցերի մեջ»:

Մեծաթիվ ածխացած գանգերի, որոնց մի մասի վրա հրացանի գնդակի անցքեր են եղել, և կմախքների մասին հետագայում հայտնել է գերմանացի կապիտան Հանս-Յոախիմ ֆոն Լյոշեբրանդ-Հորնը, որը ենթասպա Լանգենեգերի հետ Դեր Զորից ներքև Եփրատ թափվող Խաբուր գետի ափերից ձիով գնացել է հյուսիս: «Մի քանի տեղ մենք գտանք խարույկի մնացորդներ, որոնց մեջ նույնպես մարդկային ոսկորներ և գանգեր կային: Ամենամեծ կուտակումը Քիշլա Շեդադեի մոտ էր: Տեղի բնակչությունը պատմում էր այն 12 հազար հայերի մասին, որոնք կոտորվել էին՝ գնդակահարվել կամ խեղդվել»: Դեռ այսօր էլ երեխաները ոսկե ատամներ ու նշանի մատանիներ են փնտրում այն լեռների քարայրներում, որոնց ***«Հայկական քարանձավներ»*** են անվանում:

«Եթե նույնիսկ հայ ժողովուրդն ունենար այն բոլոր թերությունները, ինչի համար մեղադրում էին նրա թշնամիները,- գրել է Արմին Թ. Վեգները,- և շատ ավելի վատ արարքներ գործած լիներ, քան վերագրում էին նրան, այդ դեպքում նույնիսկ այս ժողովուրդը բոլոր ժամանակներում սրբագործված կլիներ այն ահավոր տառապանքի պատճառով, որի բեռը ծանրացած էր ուսերին»:

Այս դարի առաջին ցեղասպանությունը տուժածների վրա այնպիսի ներգործություն է ունեցել, որ նրանք ամենասոսկալի եզրահանգումներ են արել: Հայերը, ինչպես Հալեպից հավաստել է Միացյալ Նահանգների հյուպատոս Ջեքսոնը, արագ մահը նախընտրել են բռնագաղթի արհավիրքներից: «Նույնիսկ զանգվածային, կազմակերպված կոտորածը շատ ավելի մարդկային կլիներ»,- ասել է տարագիրներից մեկը:

Մահը փրկություն, կոտորածը՝ տառապանքներից ազատվելու լավագույն միջոց... Այսպես մտածող հայերը չէին կարող նույնիսկ կռահել, որ հազիվ քառորդ դար անց իրենց դահիճներին նվիրված դաշնակիցները շատ ավելի ծավալուն ոճիր կգործեն, եթե, իհարկե, կարելի է երբևէ համեմատել այդ զանգվածային սպանդները»[1]:

Գրիգորիս ծայրագույն վարդապետ ***Պալաքյանը,*** շուրջ չորս տարի դեգերելով բռնագաղթեցվածների մայրուղիներում, ճաշակելով հայ աքսորականին բաժին ընկած բոլոր տեսակի դառնությունների դեղահաբերը, գրպանում պահում էր օրագիր և գրի առնում այն ամենը, ինչ վերաբերում էր ***հայ գողգոթային:*** Զարմանահրաշ լավատեսությամբ հոգևորականը հույսեր էր փայփայում ոչ միայն իր ազատմանը, մահից փրկվելուն, այլև հավաքած նյութին «կյանք հաղորդելուն», գրքեր գրելուն և աշխարհին պատմելու, թե ինչ տառապանքներ է կրել իր ժողովուրդը, հատկապես արաբական անապատներում:

Նրա լավատեսությունը հաղթանակեց:

Գ. Պալաքյանը փրկվեց: Վարդապետը գրեց երկհատորյա ***«Հայ Գողգոթա»*** աշխատությունը, որի էջերում անդրադարձավ նաև հայոց ցեղասպանության ամենադաժան իրադարձություններին, հատկապես ***Դեր Զորի մահվան ճամբարում կատարված հայասպանության*** «աներևակայելի պրոցեսի նկարագրությանը»:

Քանի որ նրա գրածները վավերական, կասկած չհարուցող վկայություններ են, ուստի մեջբերենք ընդարձակ քաղվածքներով: Գ. Պալաքյանի գրքում կարդում ենք.

«Ահա թէ ինչպէս պատմեց այս հայ երիտասարդը ***Տէր-Զօրի*** ահաւոր ջարդը, որ բնաջնջեց վերապրող հայութեան վերջին խլեակները:

---

[1] *Վոլֆգանգ Գուստ,* Հայերի ցեղասպանությունը. Աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը. Երևան. 2002. էջ 51-52:

Տէր-Զօր Փոքր Ասիոյ, Միջագետքի եւ Սուրիոյ մէջտեղ տարածուող ընդարձակածաւալ անապատներուն մէջ, եւ Եփրատի ափին կառավարչանիստ (միւթասարըֆութիւն) քաղաք մըն է, ***Հալէպէն հեռու վեց օրուան ուղտի ճամբով:***

Իթթիհատական թուրք կառավարութիւնը 1915ին հայութեան բնաջնջման իր անլուր և եղեռնապարտ ծրագրով որոշած էր ամբողջ հայութիւնը Տէր-Զօր աքսորել եւ հոն նոր հայրենիք մը կազմել տալ:

Սակայն տեղահան եղած մէկ միլիոն 450.000 հայութենէն մինչեւ 1915 Յուլիս ամիսը, հազիւ 70.000 ընտանիք կամ ըսենք 350.000 հայութիւն մը կրցած էր ողջամբ հասնիլ Տէր-Զօր:

Տեղւոյն այն ատենի կառավարիչը էր Ալի Սուատ պէյ, որ թուրք հին սերունդին պատկանող պաշտօնատար մը ըլլալով, չուզեր գործադրել Պոլսէն իրեն եղած ջարդի կրկնակի հրամանները: Ընդհակառակը գաղթականաց յանձնախումբ մը կազմելով կը ջանայ մեղմել տարագիր հայութեան անապատի տառապահիւծ կեանքը:

Շնորհիւ կառավարիչ Ալի Սուատի կամ Սուուտի, տարագիր աւելի քան 350-400.000 հայեր Տէր-Զօր քաղաքէն կէս ժամ հեռու իրենց իբր գաղթականական բանակատեղի յատկացուած աւազի անապատը մէկ քանի ամսուան յոյժ կարճ ժամանակամիջոցի մը մէջ աւանի մը կը վերածեն:

Թէպէտ ամէնքն ալ վրանաբնակ էին, բայց որովհետեւ իրենց մէջ կը գտնուէին ամէն կարգի արհեստաւորներ, շրջակայ ցեղեր կուգան եւ բաւարար վճարմամբ կը ջանան օգտուիլ հայ արհեստաւորներու փորձառութենէն:

Տակաւ այն աստիճան կը շենայ Տէր-Զօրի մօտակայ հայ գաղթականներու այս նորահաստատ կայանը, որ Տէր-Զօրէն առ ի հետաքրքրութիւն այս կայանը այցելութեան եկող թուրք պաշտօնեաներ յանկարծ իրենց առջեւ վրաններու քաղաք մը տեսնելով իրեն շուկայով, այնքան կը զարմանան, որ կը դառնան ու կ'ըսեն տեղւոյն վրայ իրենց ծանօթ հայերուն.

- Եղբայր, ի՞նչ տեսակ ժողովուրդ էք, հազիւ եկած այս անապատը շէնցուցիք...:

Տէր-Զօրի կառավարիչ Ալի Սուատի դէպի հայերը ցոյց տուած մարդասիրական այս ընթացքը լսելով Թալէաթ կը զայրանայ եւ անմիջապէս պաշտօնանկ կ'ընէ զայն, մանաւանդ որ Ալի Սուատ համարձակած էր Տէր-Զօրի հայերը ջարդելու պետական կրկնակի հրամանները անհետեւանք թողուլ:

Ալի Սուատի տեղ Տէր-Զօրի կառավարիչ կը նշանակուի ներքին գործոց նախարար Թալէաթի կողմէ, ***էվէրէկ-Ֆենէսէի (Կեսարիա)*** կառավարիչ ***չէրքէզ Սալիհ Զէքի:***

1916 Ապրիլին, այս արիւնռուշտ մարդ-հրէշը հազիւ ժամանած իր նոր պաշտօնատեղին Տէր-Զօր, անմիջապէս հայ տարագիրները կարաւան կարաւան կը ցրուէ Տէր-Զօրի շրջակայ գիւղերը:

Այս անապատի ցեղերը վաչկատուն, աւազակաբարոյ, կիսավայրենի եւ վայրագ ցեղեր ըլլալով, կը սկսին հալածել, տանջել, կողոպտել թշուառ հայ տարագիր ժողովուրդը: Ալ սովորական բան կ'ըլլայ աղջիկներ ու կիներ առեւանգել, լլկել, սպաննել:

Զէքի, հարիւրհազարաւոր տարագիր հայեր այր, կին, աղջիկ, մանուկ այսպէս կը ղրկէ Տէր-Զօրի կառավարչական շրջանակին ենթակայ քաղաքները ու աւանները, ***Սիսվար, Մուրաթ, Շէտատիէ, Հասիչէ:*** Զէքի Տէր-Զօրի վերապրող հայութիւնը կոտորելու համար անխնայ, տեղւոյն Չէչէններէն եւ այլ թափառական աւազակաբարոյ խառնուրդ ցեղերէն չէթայական խումբեր կը կազմէ եւ հրաման կուտայ անխնայ կոտորելու, առանց խնայելու ոչ ոքի, յայտարարելով թէ Տէր-Զօրի մէջ գտնուող հայերը վերջնապէս մաքրելու համար Պոլսէն պետական հրաման եկած է:

Այս յատկապէս կազմուած չէթայական կատաղի ջոլիրները կը յարձակին անզէն ու անպաշտպան հայ ժողովուրդին վրայ 1916 Օգոստոսի Պայրամի օրէն սկսեալ,

անխնայ կը սկսին ջարդել, նախապէս կողոպտելով եւ առանց բացառութեան մերկացնելով ամենքն ալ:

Մարդկային գրիչը անզօր է նկարագրելու այն համատարած անգութ կոտորածները, որուն զոհ գացին աւելի քան 160.000 հայեր առանց սեռի ու հասակի խտրութեան: Մուրատ եւ Խապուր գետերը լեցուեցան տասնեակ հազարաւոր հայերու յօշոտուած դիակներով: Եփրատի ջուրերը արեամբ ներկուեցան, եւ այնպիսի խուժդուժ մահերով սպաննուեցան անմեղ հայ տարագիրները: Այս անգթութիւններուն հեղինակներէն ոմանք դիւահարեցան, անդամալոյծ եղան, կուրացան: Անխիղճ եւ արիւնածարաւ ոճրագործները յայտարարած են ոմանց. «Աստուած մեր պատիժը տուաւ, արժանի էինք ատոր»: Եթէ մէկ քանին խղճահարեցան, մեծագոյն մասը այս մարդ-հրէշներուն պարծենցած են թէ ինչե՜ր, ինչե՜ր ըրած են եւ ինչպիսի անլուր տանջանքներով սպաննած են հայ տարագիրները:

Երեքէն տասը տարեկան հայ մանուկները հարիւրներով ի մի հաւաքած, օրերով անօթի պահած են, ապա զուարճանալու համար մարդոց եւ կենդանիներու աղբ կերցուցած եւ ապա կացիններով չարաչար սպաննած են:

Շատ ու շատ հայ կիներ, ողջ ողջ հորերը լեցուցած եւ աւազով ծածկած են, հրէշային խրախճանութեամբ պար բռնելով ու դառնալով հորերուն շուրջ:

Իսկ 1916 Օգոստոսին Տէր-Զօրի այս համատարած հայկական ջարդերուն անծամբ հսկած է կառավարիչ Զէքի, քննելու եւ տեսնելու համար թէ իր հրամանները ճշդութեամբ կը գործադրուի՞ն: Իսկ այն ոստիկան զինուորները, չէթաներն ու այլ պետական պաշտօնեաներ ու անհատներ որոնք գթալով ազատեր կամ կաշառքով պահեր են հայեր, ամենախիստ պատիժի ենթարկուած են Զէքիի կողմէ:

Այն աստիճան խստութեամբ եւ անգթութեամբ գործադրել կուտայ Զէքի Տէր-Զօրի հայոց ջարդը, որ հազիւ 4-5000 հայեր կ'ազատին այս աղէտէն:

Շատ հայեր մեծամեծ փրկանք վճարելով հանդերձ դահիճներուն, կրկին ջարդուած են անխնայ կերպով: Ասոնցմէ մէկն է Սկիլի Սուլթան պէկ, որ 250 հայ հարուստ ընտանիքներէ փրկանք առնելէ վերջ, ամենքն ալ կացինահար ըրած եւ Զէքիէն պաշտօնի բարձրացում է ստացած:

Այսպէս, ուրեմն, 1915ի ամրան ու աշնան հայաբնակ ներքին գաւառներէն տեղահան եղած շուրջ մէկուկէս միլիոն հայ ժողովուրդէն 800.000էն աւելին ճամբաներուն վրայ կոտորուած է, 400.000ը դեռ Տէր-Զօր չհասած անօթի, ծարաւ, ճամբու տաժանքին չկրնալով տոկալ փճացած է, իսկ Տէր-Զօր հասնող շուրջ 400.000 հայերէն 250 հազարը 1915 Օգոստոսէն մինչեւ 1916 Օգոստոս անօթի, ծարաւ կորսուած է Տէր-Զօրի եւ Ռէս-իւլ-Այնի անապատներուն մէջ: ***Իսկ 160 հազարը եւս, ինչպէս վերեւ յիշեցինք մանրամասնութեամբ, Տէր-Զօրի կառավարիչ Զէքիի կազմակերպած չէթաներով անխնայ կոտորուած են: Ու հազիւ 4000 կամ 5000 հայեր ողջ մնացած են հրաշքով մը, որոնք հետզհետէ թշուառութենէ ու անօթութենէ նուաղելով 1918ի ամրան հազիւ 4-500 մնացած էին Տէր-Զօրի մէջ:***

Նոյն այս ջարդերը տեղի կ'ունենան հաւասար անգթութեամբ Ռէս-իւլ-Այնի եւ շրջակայից մէջ, մինչեւ որ Միջագետքի աւազները նահատակուած հայերու գանկերուն եւ կմախքներուն բացօթեայ գերեզմանը կը դառնայ:

Հայ ապագայ սերունդները պէտք է յիշատակարան մը կանգնեն այս աւազներուն վրայ, յանուն այս ահաւոր մարտիրոսագրութեան»[1]:

---

[1] *Գրիգորիս* ծ. վարդ. *Պալաքեան*, Հայ Գողգոթան, Դրվագներ հայ մարտիրոսագրութենեն, Պերլինէն դեպի Տէր-Զոր, 1914-1920, Բ հատոր, Բ տպագրություն, Պեյրութ, 1977, էջ 216-219: «*Տէր-Զօրի* հայոց կոտորածը» վերնագրված բաժնից:

Ֆրանսիայի մայրաքաղաքը, զարմանալիորեն, հանգրվանավայր դարձավ Դեր Զորի գեհենից պատահաբար փրկված, հատուկենտ այն հայերի համար, որոնք ոդիսականն սկսելով Բաղդադից, աշխարհեաշխարհ թափառելով, ի վերջո իրենց լաստանավը առափնեցին Սենայի նավամատույցում:

Ֆրանսահայ գաղթականները որոշեցին կրակից փրկված փաստաթղթեր և այլ նյութեր հավաքել և խնամքով մշակելով դրանք, հրատարակել առանց խմբագրումների՝ ջանալով գրավոր հուշարձան կառուցել արաբական անապատներում զոհված իրենց հարազատների համար:

Ծավալուն հուշապատումի հեղինակ է արծանագրված ***Աղետէն վերապրողներ,*** որի վերնագիրն է ***«1915 Աղետ և վերածնունդ»:*** Գիրքն ամփոփում է տարբեր վիլայեթներից բռնագաղթված հայերի հուշերը, հատկապես սրտաճմլիկ են ***մահվան*** ճամբարներից հրաշքով փրկվածների գրառումները: Այստեղ մենք վերահրատարակում ենք Դեր Զորից փախած հայ գաղթականների հուշերը, ինչպես ասում են՝ ոչ ավելացնելով և ոչ պակասեցնելով: Թուրքերն այսօր փաստեր են ուզում, թող կարդան այս և հետագա էջերը:

Հուշապատման էջերում կարդում ենք.

ՊԱՂՏԱՏ

ԴԱՒԻԹ ԹԱԴԷՈՍԵԱՆ

Հետեւեալը գրի առած է Պաղտատի հին եւ ծանօթ ընտանիքի մը անդամներէն մէկը, որ, իբր անգլիական հպատակ, եղած է առանձնաշնորհեալ մը եւ շուտով վերադարձած է Պաղտատ: Իրմէ առաջ եւ իրեն հետ, Պաղտատէն ուրիշ տղամարդիկ եւ կիներ ալ աքսորած են Մուսուլ, Տէր-Զօր եւ Իզմիր: (Տեսնել այս գրքին սկիզբը, Հայկ Թորոյեանի վկայութիւնը): Թուրքերուն ծրագիրն էր, տեղահան ընել բոլոր Հայերը, օրինակ, Պոլսոյ եւ Իզմիրի շրջակայքէն դէպի Միջագետք եւ Միջագետքէն դէպի Մուսուլ եւ Իզմիր, եւ սպառել ու ջարդել զանոնք տարագրութեան ճամբուն վրայ: Պաղտատէն աքսորուածներէն շատերը մեռած են Մուսուլի եւ Տէր-Զօրի մէջ:

Դաւիթ Թադէոսեանի Տէր-Զօր գտնուած միջոցին, բաղդատաբար հանգիստ էր Տէր-Զօր քշուած ժողովուրդը, շնորհիւ միւթէսարըֆ Ալի Սուատ պէյի որ կ'ուզէր Հայերու շինարարութենէն օգտուելով, մեծ քաղաքի մը վերածել արաբական այդ ովասիսը:

Նոյն միւթէսարըֆը Տէր-Զօրի մէջ կը հաստատէ որբանոց մը, տնօրէն նշանակելով Պաղտատէն աքսորուած Տր. Յակոբեանը, հին յեղափոխական որ յիշուած է Սմբատ Բիւրատի ***«Բանտէ Բանտ»*** գրքին մէջ, «Չաթալ-Սաքալ Տօքթօր» անունով:

Թալաթ կը տեղեկանայ թէ հազարաւոր Հայեր ողջ մնացած են Տէր-Զօրի մէջ: Ալի Սուատի տեղ մութէսարըֆ կը նշանակէ թրքական եղեռնին մեծագոյն դահիճներէն մէկը, Ջէքին, որ Տէր-Զօրի եւ շրջակայքի աքսորականները կը ջարդէ գրեթէ ամբողջութեամբ: Ջարդին զոհ կ'երթան նաեւ որբանոցին 2000 երախաները: Ջէքին քաղաքի կամուրջին վրայէն եփրատ գետը նետել կուտայ զանոնք: Իսկ Տր. Յակոբեանը յանկարծամահ կ'ըլլայ սրտին ցաւէն:

10 Դեկտ. 1915 ուրբաթ կէսօրին աքսորակից ընկերներուս ***հետ միասին Տէր-Զօր հասանք:*** Ուղղակի սէրայ տարին մեզ ուր բակին մէջ շարուած մնացինք մեր գոյքերով եւ կառքերով մինչեւ որ ոստիկանապետը եկաւ եւ պէտք եղած ձեւակերպութիւնը կատարեց: Այդ միջոցին սէրայի բակը հաւաքուեցան բոլոր մեր ծանօթները, որոնք Պաղտատէն նախապէս աքսորուած էին: Մեզ տարին մեծկակ խան մը, քաղաքին հարաւակողմը, ուր սենեակներ վարձեցինք եւ առժամապէս տեղաւորուեցանք:

Կը ճաշէինք քաղաքապետական պարտէզին մէջ, Պոլսէն աքսորուած Լեւոն Շաշլեանի ճաշարանը: Ամէն առաւօտ ոստիկանատուն կը ներկայանայինք եւ յատուկ տետրակի մը մէջ կը ստորագրէինք:

Տէր-Զօր քաղաքը երկուքի կը բաժնուի՝ հին եւ նոր: Հին քաղաքը որ անճաշակ եւ ցեխով շինուած տուներէ կը բաղկանայ, գրեթէ բոլորովին լքուած գտանք: Նոր քաղաքը ճաշակաւոր տուներով, լայն պողոտայով եւ ուղիղ զուգահեռական փողոցներով շինուած է հին քաղաքի հարաւակողմը, գետի երկայնութեան: Եփրատ գետը, քաղաքէն գրեթէ երկու ժամ հեռու, դէպի հիւսիս երկու ճիւղի կը բաժնուի: Այս բաժանումը կ'երկարի մինչեւ Մէյատին գիւղը, Տէր-Զօրէն երկու ժամ դէպի հարաւ, ուր միանալով մայր Եփրատ գետը կը կազմէ: Տէր-Զօր քաղաքին դիմացը մօտաւորապէս չորս ժամ տարածութեամբ կղզի մը կազմուած է, ուր ժամանակին խոշոր անտառներ կային եւ ասորի ճգնաւորաց վանք մը որոնցմէ Տէր-Զօր քաղաքը իր անունը առած է: ***«Տէյր» արաբերէն կը նշանակէ վանք, «զօր» կը նշանակէ անտառ:*** Հիմա այդ անտառներէն մաս մը միայն մնացած է, կղզիին մեծ մասը մշակուած է եւ պտղատու պարտէզներ տնկուած են: Տէր-Զօր նշանաւոր է նաեւ իր բանջարեղէնով եւ իւղոտ ու համեղ ոչխարի միսով: Քաղաքին դիմաց, վերոյիշեալ կղզիին մէջ սրճարաններ եւ շրջավայրեր շինուած են, ուր քաղաքացիք հինաւուրց քարէ կամուրջէ մը անցնելով երեկոները պտոյտի կ'երթան եւ կը զբօսնուն:

Տէր-Զօր, անապատին մէջ շինուած, կարեւոր դիրք եւ առեւտուր ունի: Շրջակայքի վրանաբնակ ցեղերը իրենց բերքը ծախելու եւ պիտոյքը հայթայթելու համար Տէր-Զօր կը դիմեն: Հոս քանի մը Դամասկոսցի եւ Հալէպցի վաճառականներ եւ արհեստաւորներ հաստատուած են տարիներէ ի վեր, եւ առեւտուրով կը պարապին:

Տեղացի քրիստոնեայ բնակչութեան մեծ մասը Մարտիներէն գաղթած հայ կաթոլիկ են, ունին վայելուչ եկեղեցի մը եւ յարակից դպրոց մը: Քաղդէացի եւ Ասորի կաթոլիկներն ալ ունին իրենց յատուկ եկեղեցիները եւ փոքրաթիւ ժողովուրդ:

Երբ մենք Տէր-Զօր հասանք, արդէն երկու կարաւան կիլիկեցի հայ գաղթականներ հասած եւ քաղաքին դիմաց, Եփրատի երկրորդ ճիւղէն անդին, անապատին մէջ տեղաւորուած էին: Մաս առ մաս ամէն օր դէպի Մուսուլ կը ղրկուէին հետիոտն: Քանի Տէր-Զօր էի շարունակ հայ գաղթականներու խմբակներ կուգային եւ գետին միւս կողմը իրենց յատկացուած քէմբին մէջ կը հավաքուէին: Վերջէն լսեցի որ կոտորուած են դահիճ միթէսարիֆ Ահմէդ Ձէքիի հրամանով:

Տէր-Զօր գտնուած ատենս, թիֆուսը համաճարակ հանգամանք ստացաւ, անխնայ հնձելով թէ հայ գաղթականները եւ թէ տեղացիները: Մեռնողները վերցնող չիկար եւ քաղաքապետութիւնը ստիպուեցաւ բեռնակիրներ գործածելով տուներէն եւ փողոցներէն մեռելները հաւաքել եւ քաղաքէն դուրս խոշոր փոսերու մէջ թաղել:

Տէր-Զօր բաւականաչափ Չէրքէզներ ալ կը բնակին: Մեր ատենը իրենց ազգապետն էր ***Մահմուտ պէյ անունով անձ մը, որ Տէր-Զօրի քաղաքապետն էր:*** Կինը յոյն ըլլալով զաւակները քրիստոնէական կրթութիւն ստացած էին: Չէրքէզները ոեւէ արհեստ մը չունին, ասպատակութեամբ կ'ապրին եւ իրենց այս յատկութենէն օգտուելով, թուրք կառավարութիւնը զիրենք իբր չէթէ գործածեց թէ հոս եւ թէ Ռասուլայն, Հայերը կողոպտելու եւ բնաջինջ ընելու համար:

Ծնունդէն մի քանի օր յետոյ լսեցինք որ Տէր-Զօրի հայ կաթոլիկ քահանան, Պետրոս Թէրզեանը ձերբակալուած է: Թէ մեզ եւ թէ բոլոր հայ գաղթականներուն անխտիր միշտ օգտակար եղած էր, որով ընկերներուս հետ իրեն այցելութեան գացինք եւ մեզ սիրով ընդունեց իր բանտին խուցին մէջ: Վերջէն լսեցի որ խեղճը ատեն մը բանտը մնալէ յետոյ սպանուած է Տէր-Զօրի միթէսարիֆ տխրահռչակ Ձէքիի հրամանաւ, կարգ մը հայ երիտասարդներու հետ, որոնց մէջ էին նաեւ մեր ***Բաս իւլ Այն հանդի-***

պած եւ մեզ հետ Տէր-Զօր եկած Տիգրան Գասապեան Ուրֆացին եւ Պոլսեցի ճաշարանապետ Լեւոն Շաշլեանը:

Մեր Տէր-Զօր հասած ատեն Սանճաղի միքէսարիֆն էր Ալի Սուատ պէյը, որ Հայերու տեղահանութեան հակառակ էր, եւ հայ գաղթականներուն գթառատ աչքով կը նայէր: Նա հայ անոք որբերը հաւաքել տուաւ մեծկակ տան մը մէջ եւ խնամեց քաղաքապետութեան ծախքով եւ որբերուն իբր վերակացու կարգեց մեր աքսորակից ընկերը Տոքթ. Յակոբեան: Պոլսոյ կառավարութիւնը լսելով Ալի Սուատի բարեացակամութիւնը դէպի Հայերը, փոխադրեց զինքը Պաղտատ փոխ-կուսակալի պաշտօնով եւ տեղը միքասարիֆ կարգեց տխրահռչակ Զէքին, Հայերը բնաջինջ ընելու համար:

Տէր-Զօրը այն ատեն անկախ միքասարիֆութիւն էր ուղղակի Պոլսոյ պատասխանատու:

Իրաք, 1951»[1]:

Մուդրոսի զինադադարով, 1914 թ. օգոստոսին շղթայազերծված, Առաջին աշխարհամարտն ավարտվեց: Թուրք-գերմանական ցեղասպանները, խայտառակ պարտություն կրելով, փաստորեն հանձնվեցին Անտանտայի, հատկապես Միացյալ Թագավորության և Ֆրանսիայի սրի ողորմածությանը: Պատերազմի բեմահարթակում կամովին, թե պարտադրված ձևով հայտնված ամեն մի տերություն կամ ժողովուրդ, այժմ ընդհանրացնում էր իր ձեռքբերումներն ու կորուստները, խորհում ետպատերազմյան տարիներին սեփական վերքերը բուժելու, եթե բռնազավթումներ էր ունեցել, ապա ավարը բաժանելու մասին:

Աշխարհն արդեն գիտեր, որ այդ մսաղացում ***ամենից շատ տուժել էր անմեղ, անպաշտպան ու խաղաղասեր հայ ժողովուրդը:*** Բարիկադների երկու երեսում հայտնված, տարբեր կրոն ու դավանանք ունեցող ազգերին հայտնի էր արևմտահայության ազգովին ապրած ողբերգությունը, ցեղասպանության ենթարկվելը: Ժողովրդի ապրած ազգասպանության գողգոթայից հետո միայն, եվրոպական մեծերը Թուրքիայից հաշիվ էին պահանջում, վերջինիս պարտադրում դատական պրոցեսներ կազմակերպել, ***«մեղավորներին»*** համապատասխան պատասխանատվության ենթարկել, եղեռնից վերապրողներին, գոնե ***բարոյական հատուցում տալ:***

Բոսֆորի ափերին, այսինքն՝ դեռևս հին մայրաքաղաքում ծվարած, մի ամբողջ ժողովուրդ մորթոտած թուրքերը կեղծ թատերախաղեր էին կազմակերպում: Մի կողմից օտար երկրներ, հատկապես Գերմանիա փախուստի հնարավորություն էին տալիս հայոց դահիճներին, ցեղասպանության «ճարտարապետներին», մյուս կողմից հեռակա կարգով նրանց մահապատժի դատապարտում: Այդ ծիծաղելի ֆարսն այդպես էլ կվերջանար, եթե ի վերջո չգործեին հայոց ***Վիլհելմ Տելերը*** և թուրքական դատարանի որոշումները չիրականացնեին միջազգային նորմերով. աշխարհին ապացուցելով, թե հայերը կարող են նույնպես վրեժխնդիր լինել, իրենց հարազատների թափած ծով արյան դիմաց, արյունով հատուցում ստանալ:

Թեկուզև նման իրավիճակում, արդեն փոքրաթիվ դարձած հայ մտավորականությունը, մահից հրաշքով փրկված գրագետ ու գործարար այրերը, իրենց բողոքի հուժկու ձայնն էին բարձրացնում հանուր մարդկության առջև, շարունակելով օրորվել ռոմանտիկ այն հույսերով, թե Եվրոպան գոնե այժմ տեր կկանգնի իրենց դատին և ի վերջո ***անկախության*** իրավունք կստանան, եթե ոչ՝ գոնե կրած կորուստների փոխհատուցումը:

---

[1] Հեղինակ ***Աղետեն վերապրողներ,*** 1915. Աղետ և վերածնունդ. Փարիզ. տպագրություն Արաքս. 1952. էջ 469-471:

Չևակերպվում էին և Թուրքիայի իսկ մայրաքաղաքում տպագրվում Հայոց ցեղասպանությանը վերաբերող, թարմ հետքերով գնացող այնպիսի աշխատություններ, որոնք այսօր փաստորեն սկզբնաղբյուրի ուժ և նշանակություն են ձեռք բերել: Դրանցից առանձնանում են մի քանիսը, հատկապես ***Սեպուհ Ակունու «Միլիոն մը հայերու ջարդի պատմությունը»*** գիրքը, որի էջերում, օտարազգի ականատեսների վկայություններից քաղած փաստերի հիման վրա, հեղինակը նախ ներկայացնում է ողջ կայսրությունով մեկ հայ բռնագաղթեցվածների քարավանների շարժը: Հավատարիմ պատմական իրողությանը՝ ականատես և ականջալուր հեղինակը այնպիսի դաժանությունների կիրառման մասին է խոսում, որոնք շուրջ իննսունամյա հեռավորությունից չես կարող առանց հոգեկան տառապանքի կարդալ և չես կարող չզարմանալ, թե այդ ամենը կատարող թուրքերը այսօր ինչ համարձակությամբ են ուրանում եղելությունը, ոչ միայն, այլ նույնիսկ համարձակվում են հայ անպաշտպան ժողովրդին մեղադրել կատարվածի մեջ:

Ընդհանուր տեղահանության և ճանապարհին կատարված հայկական ջարդերի մասին, մեզ թվում է, բավարար էջերով ներկայացրեցինք աշխատության նախորդ գլուխներում: Այստեղ անդրադառնանք մահվան ճամբարների, հատկապես Դեր Զորի մսաղացի պատմությանը, իհարկե առանց ավելորդ միջամտությունների, որպեսզի ընթերցողը, կարդալով սկզբնաղբյուրը, առաջին ձեռքից տեղեկանա հայ ժողովրդի ապրած ողբերգության, թափած ծով արյան չափի մասին և հանգի համապատասխան եզրահանգմանը՝ ապագայում անելիքի մասին:

Ս. Ակունին գրում է.

«ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵՆԷՆ ՎԵՐՋ

Հայերու ընդհ. տեղահանութիւնը լրանալէ վերջ տարագրուածներու մեծ մասը տեղաւորուած էր արաբական շրջանին զանազան կողմերը, մերկ, թշուառ և կմախացած վիճակի մէջ: Ջարդէ, յարձակումներէ և անօթութեան պատճառած մահէն զերծ մնացած ***հարիւր հազարաւոր տարագիրներ, որոնք յաջողած էին մինչեւ արաբական շրջանը ողջ մնալ, միամտաբար կը խորհէին այլեւս իրենց հանգիստը գտած ըլլալ, սակայն դժբաղդաբար յուսախաբ եղան:*** Համեմատաբար հանգիստ կեանք մը անցուցին անոնք միայն, որոնք բաղդի բերումով ինկած էին Հալէպի և Դամասկոսի կողմերը կամ հաստատուած էին ուղղակի քաղաքներու մէջ: Իսկ անոնք որ քշուած էին Րես-իւլ-Այնի և Տէր-Զօրի կողմերը, առաջին օրէն անտանելի կեանք մը ապրեցան, մինչև որ վայրագ և արիւնարբու պաշտօնատար մը՝ էվէրէկ-Ֆէնէէսէի կառավարիչ Զէքի Տէր-Զօրի կառավարիչ նշանակուելով, ձեռնարկեց նոր հարուած մը տալ և ողջ մնացած մեր հարիւր հազարաւոր ազգակիցները նահատակել, իբր թէ դեռ անլոյծ համարուող հայկական խնդիրը արմատապէս լուծելու համար:

ՏԷՐ-ԶՕՐԻ ՋԱՐԴԸ

Տէր-Զօր ըսուած դժոխք քաղաքը կը գտնուի Եփրատի վրայ, 300 քիլօմէթր դէպի հարաւ-արեւելքը Հալէպի: Անապատին մէջ մեծ քաղաք մըն է, Հալէպէն վեց օր հեռաւորութեամբ ընդարձակ տարածութեան մը վրայ, ուր հազուագիւտ գիւղեր միայն կը գտնուին. մնացած տարածութիւնը իբր արօտատեղի կը ծառայէ վաչկատուն արաբ ցեղախումբերու:

Թուրքիոյ ամէն կողմերէն հոն համախմբուած էին հարիւր հազարաւոր տարագիրներ և կ'ապրէին ահաւոր սարսափի և մահուան սպառնալիքի տակ: Ո և է իշխանութիւն չճանչցող և պաշտօնապէս քաջալերուած պէտէվիներ և չէչէններ ոչ միայն կը կողոպտէին վերջին մնացորդը տարագիրներու ունեցածին, կիներ կ'առեւանգէին, այլ անվախ կերպով կը նահատակէին նաեւ ուզածնուն չափ հայ:

Կառավարութիւնը միտքը դրած էր անապատներու մէջ անօթութեամբ մեռցնել

տեղահանուած ժողովուրդը, սակայն տեսնելով անոր ապրելու յամառութիւնը, հակառակ անոր որ հազարաւորներ արդէն ինկած էին, մինչեւ անապատները, կը հրամայէ Տէր-Զօր գտնուող հայերու թիւը պակսեցնել: Այս հրամանը ղրկուած պահուն տեղւոյն կառավարիչն էր Ալի Սուատ պէյը, որ ըմբռնելով տրուած հրահանգին բուն իմաստը, կը խղճահարի և չի համակերպիր գործադրելու զայն: Այս պատճառաւ պաշտօնանկ կ'ըլլայ և իբր իրեն հաջորդ Տէր-Զօր կը ղրկուի ***էվէրէկ-Ֆէնէսէի կառավարիչ չէրքէս Սալիհ Զէքին:***

Այս վերջինը գալուն պէս մունետիկի միջոցաւ անմիջապէս կ'ազդարարէ թէ այն արաբները որոնք իրենց քով հայ կը պահեն, պիտի կախուին կամուրջին գլուխը: Այս ազդարարութենէն ետք ***Զէքի 1916 օգոստ. 21ին նոր*** տեղահանութիւն մը սկսած է և Տէր-Զօրի մարզին մէջ համախմբուած հարիւր հազարաւոր տարագիրները ճամբայ հանած է դէպի Սիւվար, Մուրաթ, Շէտատիէ և Հասիչէ գաւառակները ուր կը խճողուին մօտ 60.000 ազգակիցներ և հազիւ հոն հասած օգոստ. 25ին կը կոտորուին, նոյն այդ շաբաթուան Զէքիի ներկայութեան: Յատկապէս պատրաստուած հարիւրաւոր չէչէններ կը մտնեն տարագիրներու բազմութեան մէջ և անխնայ կը սկսին զարնել, մորթել, ոմանց գանկը պայթեցնելով, ոմանց աղիքները դուրս թափելով, ոմանց ալ ոսկորներն ու անդամները կոտրտելով: Այնքան սարսափելի եղած է այս կոտորածը, որ նոյնիսկ անոր մասնակցող արիւնարբու գազաններ վերջին պահուն խղճահարութեան եկեր են: ***Մուրատ և Խապուր գետերը լեցուած են դիակներով, ջուրը կարմրցնելու աստիճան:***

Նահատակուածներու պզտիկները նախապէս հաւաքուած և որբանոց մը դրած են, սակայն ի վերջոյ զանոնք ալ խարոյկէ անցուցած են, անոնց ցնցոտիները քարիւղելէ յետոյ: Ասիկա տեղի ունեցած է Գուրպան Պայրամըի օրը: Մինչ անդին ջարդարարներու ուրիշ խումբ մը տարագիրները հաւաքած է խոշոր հորի մը գլուխը և զանոնք մէկիկ մէկիկ նահատակելէ ետք նետած են մէջը:

Արիւնկզակ կառավարիչը շատ անգամներ այցելած է այն վայրերը, ուր ջարդեր տեղի ունեցած են, թէ աչքովը տեսնելու համար իր զոհերը և թէ հասկնալու համար որ իր հրամանները տառապէս գործադրուա՞ծ են:

Տէր-Զօրի ջարդէն հազիւ հարիւր հոգի կրցած է ազատիլ, հրաշքով:

«Բըթի Բարիգիէն»ի Պոլսոյ թղթակիցը խօսելով Տէր-Զօրի ջարդին վրայ, սա տողերը գրած է.- «Տէր-Զօրի մէջ ***3-10 տարեկան 7000 տղաք բանտարկուած են*** գարշահոտ վայրի մը մէջ եւ զանոնք այնպէս մը կուտակած որ խեղճ պզտիկները ստիպուած էին իրարու վրայ պառկելու: Առաջները երկու օրը անգամ մը, հացի շերտ մը տուած են անոնց, սակայն ետքէն ոչինչ չեն բերած, այնպէս որ բոլորը մեռած են անօթութենէ և ծարաւէ: Ասկէ զատ խորունկ խրամներ փորել տուած են հարիւր հայ կիներու համար: Ապա անոնց պահապանները դարձած են Մէքքէ և ծունր դրած հրաւիրելու համար մարգարէն: Ասկէ ետք յարձակած են խեղճ կիներուն վրայ և զանոնք կացինահար ըրած: Տէր-Զօրի մէջ, 100.000 հայեր համախմբուած են իբր թէ ռազմագիտական պատճառով: Պոլսէն հեռագրով հարցում կ'ուղղուի կառավարիչին թէ «ո՞րքան հայ ունիք»: Կառավարիչի պատասխանին վրայ Բ. Դրան կողմէ նոր հեռագիր մը կը ղրկուի թէ «Թիւը շատ է: Հայերը պէտք չէ որ 5000էն աւելի ըլլան: Կառավարիչը կ'ըմբռնէ հեռագրին եղեռնական իմաստը և կը հրաժարի, բայց անոր ***յաջորդը անմիջապէս ջարդել կուտայ 90.000 հայեր»:***

Տէր-Զօրի դէպքերուն մէջ կառավարիչ Զէքիի գործակից եղած են քօմիսէր Այնթապցի Մուսթաֆա, գաղթականներու զետեղման տնօրէն Թիւրքի առաքման պաշտօնեայ Ապտուլլահ փաշա: Զէքի չէչէններէն յատկապէս կազմած է 300 հոգինոց հեծեալ և պետական լաւ զէնքերով զինուած չէթէախումբ մը որ շրջակայ վաչկատուն արաբ-

ներու օժանդակութեամբ կազմակերպած է հարիւր հազարաւոր հայերու կողոպուտի և ջարդի գործը: Այս չէչէններու գլխաւորները Զէքիի կողմէ ջարդէն առաջ կառավարիչ նշանակուած են Մուրաթ, Սիւվար, Շէտատիէ և Հասիչէ գաւառակներուն: Մուրաթի «միւտիր»ը եղած է Սաֆայէն չէչէն Մեհմէտ պէկ, Սիւվարի «միւտիր»ը՝ Սաֆայէն չէչէն Շէյխ Սիւլէյման պէկ, Շէտատիէինը՝ Սաֆայէն չէչէն Սիւլէյման Սաուլլաի պէկ, իսկ Հասիչէի կառավարիչը եղած է Սաֆայէն չէչէն Իսա Եախթա պէկ: Ասոնք են որ վարած են ջարդերը: Նոյնպէս պատասխանատու են Ակիլի Սուլթան պէկ, որ ամենավերջին օրերուն ողջ մնացած 300 ընտանիքի մէջէն հարուստ կարծուած 67 ընտանիքներէն փրկագին առած է, զանոնք ազատելու խոստումով և ապա զանոնք չարաչար կերպով նահատակել տուած է: Նահատակուած այս ընտանիքներուն մէջ կը գտնուէին Այնթապցի Լեւոն Գարուճեանը, Չօրլուցի Արտաշէս ու Լեւոն անուն անձերը... Հաճի Հասան պէկ ըսուած բորենին հետեւած է Ակիլի Սուլթան պէկի օրինակին և սպաննած է 20 ընտանիք, մեծաքանակ փրկագին մը առնելէ ետք անոնցմէ: Հաւասարապէս պատասխանատու են նաեւ Ապտիւլ Ազիզ, Մօլլա Ապտիւլսէլամ, Ճեպրայիլ, Ապտուլլաի Վեհապ, շէյխ Սիւլէյմանի եղբայրը՝ Իսմայիլ, Ապտիւլքէրիմ, եւն., եւն.»[1]:

Դեր Զորի ողբերգությունը ժամանակին իր վրա էր հրավիրել հայ ժողովրդի մեծ բարեկամ ***Յոհաննես Լեփսիուսի*** (1858-1926 թթ.) ուշադրությունը: Գերմանացի ականավոր հասարակական գործիչն ու արևելագետը, հումանիստ հոգևորականը, հատիկ-հատիկ փաստեր հավաքելով, անձամբ ստուգելով դրանց իսկությունը, գրել է աշխատություններ, որոնք վերաբերում էին երիտթուրքերի ջարդարարական քաղաքականությանը՝ Հայաստանում, Հայոց Կիլիկիայում, մասնավորապես Միջագետքի անապատներում, Դեր Զորում ու Ռաս-ուլ-Այնում:

1919 թ. Կ. Պոլսում Միքայել Շամտաճյանը, գերմաներենից արևմտահայերենի է վերածել և հրատարակել Յ. Լեփսիուսի ***«Գաղտնի տեղեկագիր, Հայ ժողովրդի ջարդերը»*** աշխատությունը, որն իր պարունակած նյութերով արդեն ցնցել էր աշխարհը, ծանր ապտակի նման իջել ոչ միայն երիտթուրքերի, այլև նրանց զորավիգ կանգնած յունկերական գերմանացիների երեսին: Ի նկատի ունենալով աշխատության կարևորությունը, առավել ևս այժմեությունը, ցեղասպանության քանգարան-ինստիտուտի նախածեռնությամբ, տնօրեն՝ ***Լ. Ա. Բարսեղյանի*** խմբագրությամբ, ***Գ. Բ. Թոսունյանի*** գրչով, այն վերաթարգմանվել է արևելահայերենի և նոր կյանք տվել այն փաստերին[2], որոնք վերաբերում են Միջագետքի անապատներում, չոր ու անջրդի վայրերում, բարկ արևի տակ, սովից, տարափոխիկ հիվանդություններից մեռնող կամ էլ թուրքերի, քրդերի ու չերքեզ բարբարոսների սրից ***մեռցվող*** հայ գաղթականների «կյանքին»:

Գերմանացի հոգևորականը, եվրոպական գթության քույրերի, միսիոներների գրառումները պատմական ատաղձ դարձնելով՝ անժխտելի փաստերով նկարագրել է արևմտահայության բռնագաղթի պրոցեսը, ցույց տվել, թե ինչի էին արժանի թուրք բորենիները ***երեկ, այսօր*** և ***ապագայում,*** այսինքն՝ քանի կհարատևի մարդկությունը: Առանձնապես անտանելի տպավորություններ են գործում գրքի «Տարագիրների բախտը» խորագրված էջերը, որոնք վերաբերում են ***Դեր Զորի աքսորյալների «կյանքին», «կենցաղին» և «նահատակմանը»:***

Յ. Լեփսիուսը գրում է. «Հայ ժողովրդի դեպի Արաբիայի անապատների սահմա-

---

[1] «Միլիոն մը հայերու ջարդի պատմություն», պատրաստեց *Մ[եպուհ] Ակունի,* Կ. Պոլիս, 1921, տպագր. *Ս. Աստուրյան* որդիք, էջ 315-321:

[2] *Յոհաննես Լեփսիուս,* Գաղտնի տեղեկագիր, Հայ ժողովրդի ջարդերը, Երևան, 2003, *Գ. Բ. Թոսունյանի* թարգմանությունը:

նակից մարզերը տարագրելու ժամանակ թուրքերը երբեք իրենց մտածությունը չեն ծանրաբեռնել, թե ճանապարհին նրանց ինչով են ապահովում... նրանք նույնիսկ անտարբեր էին անցնում այն բանի կողքով, որ տարագիրների մի մասը ճանապարհին էր մեռնում կամ կոտորվում էր գաղթի ընթացքում սովից ու հիվանդությունից: Տարագրության վերջին կետը, ինչպես ասվեց, Բաղդատի երկաթուղագծի շուրջը գտնված Միջագետքի երկրները չէին, այլ Արաբիայի անապատները, որոնք անհունորեն տարածվում են այս մարզերի հարավային կողմում: Դատարկված էին նաև Միջագետքի քաղաքները: Իբրև տարագրության վերջին կետ նախատեսված էր այն մարզը, որը գտնվում էր Եփրատի ափին, ***Դեյր-էզ-Զորի*** (Հալեպից 300 կմ հարավարևելք) և Տիգրիսի (Մոսուլի վրա) միջև: Այդ մարզում հազվագյուտ գյուղեր են գտնվում, միայն Տիգրիսի և Եփրատի անմիջական հարևանությամբ, իսկ մնացած տարածությունը արաբական վայրկատուն ցեղախմբերի արոտատեղին է:

Այս մարզերի ճանապարհները ***Դեյր-էզ-Զորի*** ուղղությամբ տանում են դեպի Հալեպ, Ուրֆա, Վերան Շեհիր, Նիսիբին, դեպի արաբական անապատների սահմաններն ու Ջեզիրե և Մոսուլի ուղղությամբ: Ավելի ուշ տեղափոխություններ կատարվեցին նաև Հավրանի ճանապարհով դեպի Դամասկոս:

Տավրոսի լեռնաշղթան, որ առաջամասը և հյուսիսային Անատոլիան բաժանում է Միջագետքի հարթավայրից, միայն սակավաթիվ տեղերում է, որ անանցանելի ճանապարհներ ունի: «Կիլիկիայի դռները» Փոքր Ասիան կապում են Կիլիկիայի հետ. ճանապարհը, անցնելով Ամանոսի կիրճերով, տանում է դեպի Հալեպ: Մեկ այլ ավելի գործուն ու բանուկ ճանապարհ Եփրատի ափերի մարզերից, հայկական բարձրագավառից տանում է դեպի Միջագետքի դաշտավայրը՝ անցնելով Խարբերդով, Տիգրանակերտով ու Մարտինով; Այս ճանապարհից անջատվում է մի ուրիշ ճանապարհ և գնում է ավելի արևելք՝ անցնելով լեռան անհարթ արահետներով, Մալաթիայի և Ադիամանի վրայով: Հալեպից Տիգրանակերտ տանող ճանապարհն անցնում է Եփրատից և հասնում մինչև Ուրֆա՝ անցնելով Սամսատի միջով:

Բոլոր նրանք, ովքեր տարագրվեցին դեպի հարավ, գալով Կարինի և Տրապիզոնի վիլայեթներից, ստիպված եղան անցնել Քեմախի կիրճով, ուր արև է թափանցում: Անցնելով Եփրատը, Ակնը և Արաբկիրը՝ նրանք դուրս էին գալիս Խարբերդի ու Մալաթիայի ճանապարհը: Սեբաստիայի վիլայեթից տեղափոխվողներն էլ նույնպես հիմնականում անցան Մալաթիայից ու Խարբերդից: Տավրոսի գյուղերի և Կիլիկյան մարզի դատարկումը նվազ դժվարություններ էր ներկայացնում, որովհետև Մարաշից ու Այնթապից դեպի Ուրֆա կամ Հալեպ գնացող ճանապարհն ու Ամանոսի լեռների հյուսիսում գտնվող լեռների երկաթուղին անանցանելի էին: Անատոլիայի կենտրոնական և արևմտյան նահանգների հայերին դեպի Արաբիայի անապատները փոխադրելու համար կարելի էր տրամադրել թե՛ Բաղդատի երկաթուղին և թե՛ այդ երկաթուղու երկարությամբ ընկած հին ճանապարհը. երկաթուղին կարող էր օգտագործվել միայն նրանց կողմից, ովքեր իրենց ունեցվածքի մնացորդով կկարողանային վճարել ճանապարհածախսը դրանով անասուն տեղափոխելու համար նախատեսված վագոններում տեղ ունենալու համար: Բայց այդ գնացքներն էլ կարճ ժամանակ անց այլևս չէին ճարվում, որովհետև դրանք անհրաժեշտ էին զինվորական փոխադրումի համար: Կիլիկիայի ազգաբնակչության մի մասին տարան Կոնիայի ճահիճները, երբեմնի Իզմիթի ու Բրուսայի մարզերից գաղթած ընտանիքների համար կիրառեցին ցրելու գործընթացը: Շատ հաճախ ընտանիքների տղամարդկանց, կանանց ու երեխաներին բաժանում էին իրարից և 10-20 հոգիանոց խմբերով ցրում մահմեդական գյուղերի մեջ՝ իսլամացնելու համար:

Արևելյան վիլայեթներից մեկնող ճանապարհն անցնում էր Բաղեշով ու Սղերդով, այնուհետև անցնելով Տիգրիսի վրայով՝ գնում էր դեպի Ջեզիրե և Մոսուլ: Այդ ճանապարհով անցնող քարավանները մասամբ բնաջնջվել են ճանապարհին կամ խեղդվել են Տիգրիսի ջրերի մեջ:

Միայն Կարինի վիլայեթի սահմանագլխի մարզերի ու Վանա լճի շուրջը գտնված բնակիչները կարողացան փախչել և ապաստան գտնել սահմանագլխի մյուս կողմում:

Օրոնթեի գետաբերանում գտնվող Սուեյդիե գյուղերից 4058 հոգիանոց մի խումբ, որից 3004-ը կին ու երեխաներ էին, կարողացան փախչել Ջեբելի Մուսա: Ծովափից նրանց վերցրեց ֆրանսիական մի հածանավ և ողջ-առողջ փոխադրեց Ալեքսանդրիա:

Մենք ունենք ականատես վկաների պատմություններն այն քարավանների կացության մասին, որոնք Խարբերդից անցան Մարաշ-Այնթապ-Հալեպ կամ Այնթապ-Ուրֆա-Ռես-յուլ-Այն գծով»[1]:

Հայ ժողովրդի ապրած ողբերգությունը, ավելի կոնկրետ՝ հայասպանություն-արմենոցիդը ժխտելով, թուրքերը սպառնում են բացել արխիվները և «ապացուցել», որ ոչ թե իրենք են կոտորել հայերին, այլ՝ ընդհակառակը: Նրանք փաստեր են ուզում, դրա համար էլ մենք հարկադրված ենք ընդարձակ քաղվածքներ մեջբերելու, այսօրվա թուրքերին հրամցնելու՝ կարդան, տեսնեն, թե իրենց հայրերն ու եղբայրները ի՞նչ են խաղացել անպաշտպան հայ ժողովրդի գլխին: Քաղվածքների ընդարձակությունը պայմանավորված է նրանց հեղինակի ***օտարազգի, գերմանացի լինելով, այն երկրի քաղաքացու,*** որը պատերազմի տարիներին Թուրքիայի դաշնակիցն էր և պակաս մեղք չուներ հայոց ցեղասպանության գործում:

Յ. Լեփսիուսը, նկարագրելով դեպի Միջագետքի անապատները «քշվող» հայերի կրած տառապանքները, գրում է. «Տեղափոխությունների ժամանակ նախ գողանում էին տարագիրների հնչուն դրամը, հետո՝ ամբողջ ունեցվածքը: Տարագիր բողոքական մի երեց տեսավ, թե ինչպես մի ընտանիքից գողացան 43, մեկ այլ ընտանիքից 28 ոսկի: Ինքը երեցը, նոր էր ամուսնացած և ստիպված եղավ Հածնում թողնել իր երիտասարդ կնոջը, որն իր առաջին զավակը պիտի ունենար: Այժմ տարագիրների չորս հինգերորդ մասը կին ու երեխաներ էին: Դրանցից երեք հինգերորդը քայլում էր բոկոտն: Հածնցի մի տղամարդ, որին անձամբ ճանաչում եմ, և որը առնվազն 1500 գրամ ոսկու հարստություն ուներ, ճանապարհին կողոպտված էր. այնպես որ հարկ եղավ իր համար հագուստ մուրալ: ***Տարագիրները, քանի որ չէին կարողանում թաղել իրենց մեռելներին, խիստ վշտահար էին: Դիակները մնում էին ճանապարհների վրա, որտեղ որ պատահեր: Կանայք իրենց մեջքերին տակավին կրում էին իրենց զավակների դիակները: Հալեպից 10 մղոն դեպի արևելք գտնվող Պապ գյուղում ժամանակավորապես, մի քանի շաբաթով բնակեցրին այն տարագիրներին, որոնք անցնում էին այդտեղով, բայց նրանց թույլ չտվեցին դեպի ետ մի քայլ անելու և իրենց հարազատների դիակները թաղելու:***

Ամենադժբախտ ճակատագիրը այն կանանցն էր, որոնք ծննդաբերում էին ճանապարհին: Նրանց հազիվ ժամանակ էր տրվում աշխարհ բերելու իրենց զավակին: Մի կին ծնեց երկվորյակներ. գիշեր էր, և հաջորդ առավոտ նրան ստիպեցին հետիոտն շարունակել ճանապարհը իր երկու երեխաները մեջքին առած: Երկու ժամ քայլելուց հետո նա կքեց: Ձիավորներն ստիպեցին, որ նա իր երկու երեխաներին թողնի մի թփի տակ ու ճանապարհը շարունակի քարավանի հետ: Մեկ այլ կին ծննդաբերեց

[1] *Յոհաննես Լեփսիուս,* նշված աշխատությունը, էջ 92-94:

քայլելու ընթացքում, նրան ստիպեցին վեր կենալ ու քայլել, և նա ընկավ-մեռավ: Մեկ այլ կին Այնթապի մոտ ծննդաբերության ժամանակ օգնություն ստացավ միսիոներների կողմից: Հնարավոր եղավ նրան թույլ տալու, որ նա հեծնի մի կենդանու վրա, գիրկն առնի ցնցոտիներով փաթաթված իր նորածնին և շարունակի ճանապարհը: Հիշատակված սույս դեպքերը միայն Մարաշից Այնթապ ճանապարհին կատարվածներն են, այդտեղ մի մեծ ափսեի մեջ գտնվեց նորածին մի երեխա, որին մի ժամ առաջ թողել էր տարագիրների մի խումբ: Մարաշի Թաշխանում գտնվեցին երեք նորածիններ՝ աղբի վրա ընկած:

Ճանապարհին հանդիպում էինք երեխաների անթիվ դիակների, որոնք առանց թաղվելու ընկած էին ճանապարհի վրա: Մի թուրք հազարապետ, որ երեք օր առաջ ինձ հետ վերադարձել էր այդտեղ, ասում էր, թե շատ երեխաներ ճանապարհին լքվել են իրենց մայրերի կողմից, որովհետև մայրերը այլևս չէին կարողանում երեխաներին կերակրել: Ավելի մեծ երեխաներին թուրքերը խլում էին մայրերի ձեռքից: Այդ ձևով հազարապետը, ինչպես նաև նրա եղբայրները, իրենց տներում մեկական հայ երեխա ունեին և ուզում էին նրանց մեծացնել որպես մահմեդական: Տղաներից մեկը խոսում էր գերմաներեն: Նա պետք է մեր որբանոցից լիներ: 300-ի էր հասնում այն կանանց թիվը, որոնք եղել են այդտեղով անցնող քարավանների մեջ և ծննդաբերել են ճանապարհին:

Այդտեղ հետին թշվառության ու հուսահատության մատնված մի ընտանիք վեց ոսկով մի թուրքի ծախեց իր 18 տարեկան դեռահաս աղջկան: Կանանց մեծ մասի ամուսիններին թուրքերը վերցրել էին բանակում ծառայելու համար, իսկ ովքեր զորաշարժի հրամանին չպատասխանեցին, նրանց կախեցին կամ հրացանազարկ արեցին: Վերջերս Մարաշում այդպես ավարտվեց յոթ անհատների ճակատագիրը: Բայց ովքեր մտան զինվորական ծառայության մեջ, նրանք ավելի շատ աշխատեցին ճանապարհների շինարարության վրա, և նրանք այլևս իրավունք չունեին զենք կրելու: Ովքեր տուն էին վերադառնում, նրանք անգործ էին մնում: Երկու օր առաջ Ջերաբլուսում հանդիպեցի մի հայ զինվորի, որ գալիս էր Երուսաղեմից և թույլտվություն ուներ գնալու իր տունը՝ Կեպեն գյուղը (այն գտնվում է Ջեյթունի և Սիսի միջև): Երկար տարիներ ճանաչում էի այդ մարդուն: Այստեղ նա իմացավ, որ իր մայրը, կինը և երեք զավակները տարագրված են դեպի անապատ: Հարազատներին գտնելու նրա բոլոր փնտրտուքները ապարդյուն անցան:

28 օր է, ինչ Եփրատի մեջ երևում են դիակներ, որոնք տարվում են հոսանքի կողմից: Դրանք մեջտեղից երկու-երկու կամ բազուկներից 3-8 հոգով կապված են իրար հետ: Մի թուրք սպայի հարցրին, թե ինչու դիակները թաղել չեն տալիս: Նա պատասխանեց, որ հրաման չի ստացել և մանավանդ որ հնարավոր չէ հաստատել, թե նրանք իսլա՞մ են, թե քրիստոնյա, քանի որ նրանց սեռական օրգանները կտրված էին: (Մահմեդականներին թերևս կթաղեին, բայց քրիստոնյաներին՝ ո՛չ): Շները պատառոտում էին ալիքների կողմից դուրս նետած դիակները, իսկ այն դիակները, որոնք ընկել-մնացել էին ավազակույտերի վրա, անգղերի որս դարձան: Գերմանացի մի ծիավոր մենակ ճամփորդելիս տեսել էր վեց զույգ դիակներ, որոնց գետը քշում-տանում էր: Գերմանական հեծելազորի մի հարյուրապետ պատմում էր, թե ինչպես Դիարբեքիրից Ուրֆա ծիով գնալու ժամանակ ճանապարհի երկու կողմերում տեսել է անթիվ դիակներ: Նրանք բոլորն էլ երիտասարդներ էին, որոնց վզները կտրված էին: (Նրանք բոլորն էլ զինվորական ծառայության կանչված և ճանապարհների շինարարության վրա աշխատող տղամարդիկ էին): Թուրք մի փաշա ծանոթ մի հայի այսպես էր ասում. *«Գոհ եղեք գոնե անապատում գերեզման ունենալու համար, ձերոնցից շատերը նույնիսկ այդ բանը չունեն»:*

Տարագիրների կեսն անգամ ողջ չի մնացել: Նախորդ օրը, այստեղ, կայարանում, մի կին մեռավ, երեկ 11 հոգի մեռան, այսօր առավոտյան 10 հոգի: Հաճնցի բողոքական մի երեց Օսմանիեում մի թուրքի ասում էր. «Այս տարագիրների կեսն էլ ողջ չպիտի մնա»: Թուրքը պատասխանեց. «և մեր ուզածն էլ այդ է»:

Բայց չպիտի մոռանալ նաև այն, որ կան մահմեդականներ էլ, որոնք դատապարտում են այս անգթությունները, որոնք գործադրվում են հայերի նկատմամբ: Իսլամ մի շեյխ, հալեպցի ծանոթ մի անձնավորություն, իմ ներկայությամբ հայտարարեց. «Երբ խոսք է լինում հայերի դեմ ցույց տրված արարքների մասին, ես ամաչում եմ թուրք լինելուս համար»:

Ողջ մնացողը, ով ուզում է լինի, ստիպված է իսլամություն ընդունել: Այս նպատակին ավելի հեշտությամբ հասնելու համար ընտանիքներ են ուղարկում այս կամ այն մահմեդական գյուղերը: Այն տարագիրների քանակը, որ այստեղից ու Այնթապից են անցել մինչև օրս, հասնում է 50 հազարի: Նրանց ինը տասներորդ մասը մեկ օր առաջ է հրաման ստացել հետևյալ առավոտյան ճանապարհ ընկնելու մասին: Շատ քարավաններ ուղարկում էին Ուրֆայի ուղղությամբ, իսկ ոմանց էլ՝ Հալեպի, Մոսուլի կամ Դեյր-էզ-Զորի ուղղությամբ: Իշխանությունները պնդում են, թե նրանց այնտեղ իբրև գաղութ պիտի հաստատեն: *Բայց ովքեր խուսափում են դանակից, նրանք այնտեղ ամենայն հավանականությամբ սովից պիտի մեռնեն:*

Շուրջ 10 հազար հոգի հասել է Եփրատի վրա գտնվող Դեյր-էզ-Զոր: Մինչև հիմա մյուսների մասին ոչ մեկի լուր չկա: Ասվում է, թե ովքեր ուղարկված էին Մոսուլի ուղղությամբ, պետք է հաստատված լինեն երկաթգծից 25 կմ հեռու: Դա նշանակում է, որ նրանց ուզում են քշել անապատ, որպեսզի նրանց բնաջնջումը գլուխ գա առանց վկաների:

Ինչ որ գրում եմ, դա միայն մի փոքր մասն է այն բոլոր անգթությունների, որոնք տեղի են ունենում այստեղ երկու ամիս ի վեր և որոնք օրեցօր ավելի մեծ ծավալ են ընդունում: Ինչ որ անձամբ տեսա և ինչի որ տեղեկացա ծանոթներից ու բարեկամներից, որոնք կատարվածի վկաներ են, դրանք մի մասն են միայն: Ես կարող եմ պատմածս բոլոր իրողությունների համար տալ տվյալներ ու անունները այն անձանց, ովքեր դրանց ականատես վկաներն են եղել»[1]:

Գերմանացի ժամանակակցի ու ականատեսի զուտ փաստեր պարունակող, հայ ժողովրդի ցեղասպանությանը նվիրված աշխատության *«Տարագրության վախճանը»* վերնագրված գլխում խոսվում է միայն *Դեր Զորի մահվան ճամբարի մասին,* ցույց է տրվում բռնագաղթեցվածների կրած տառապանքներն արաբական այդ անապատում, նրանց վախճանը:

Թողնենք թող խոսի *Յ. Լեփսիուսը.* «Դեյր-էզ-Զորում (Հալեպից 6 օրվա հեռավորության վրա, անապատում գտնվող մի մեծ քաղաք է) մարդկանցով լցված մի մեծ իջևան գտանք (այսպես գրում է գերմանացի մի միսիոներուհի՝ օրիորդ Լ. Մորինգը, 1915 թ. հուլիսի 12-ին): Տրամադրվելիք բոլոր վայրերը, տանիքները և տների ճեմելիքները գրավված էին հայերի, մանավանդ կանանց և երեխաների կողմից: Բայց որոշ քանակությամբ տղամարդիկ էլ նստած էին ծածկերի տակ, բոլոր այն տեղերում, ուր մի փոքր ստվեր կարող էին գտնել:

Անմիջապես տեղեկացա, որ դրանք հայեր են. մոտեցա նրանց հետ խոսելու համար: Նրանք Ֆրնուզից էին, Զեյթունի և Մարաշի մարզից, որոնք խճողված լինելով նեղ դրության մեջ, ներկայացնում էին վերին աստիճանի տխուր մի տեսարան: Մեր որբանոցի երեխաների մասին տեղեկություններ ուզեցի, և նրանք ինձ մոտ բերեցին

[1] *Յոհաննես Լեփսիուս,* Գաղտնի տեղեկագիր. Հայ ժողովրդի ջարդերը. Երևան, 2003. էջ 97-99:

քույր Բեատրիս Ռոների մի աշակերտուհուն Մարթա Գարագաշյանին: Այդ աղջիկը ինձ պատմեց հետևյալը: Մի օր թուրք ժանդարմները Ֆրնուզ էին եկել և ծերբակալել մեծ քանակությամբ մարդկանց նրանց բանակ տանելու համար: Եվ ոչ ոք չգիտեր, թե ուր էին տանում իրենց: Ազգաբնակչության մնացած մասին էլ հայտնեցին, թե իրենց տներից հեռանալու համար ընդամենը չորս ժամ ունեն: Նրանց թույլ էին տալիս իրենց հետ վերցնել այն, ինչ կկարողանային տանել, նույնիսկ գրաստներ վերցնել: Որոշված ժամը լրանալուն պես նրանց ստիպեցին դուրս ելնել իրենց գյուղից չիմանալով, թե ուր են գնալու, և թե կրկին իրար տեսնելո՞ւ են: Սկզբում շատ ուրախ էին, որ գտնվում են իրենց լեռների վրա և ուտելիք ունեն. սկզբում ամեն ինչ լավ էր գնում:

Նրանց խոստացել էին փող տալ, և որքան հիշում եմ, առաջին օրերի համար մարդ գլուխ 30 փարա տվին: Բայց շատ շուտով դադարեցրին ռոճիկ տալ և օրական ***ամեն մեկին 50 գրամ ձավար տվին:*** Եվ այսպես չորս շաբաթվա տաժանելի ճանապարհորդությունից հետո Ֆուրնուզի մարդիկ հասել էին Դեյր-էզ-Զոր անցնելով Մարաշից ու Հալեպից: Երեք շաբաթ է, ինչ նրանք կուտակվել էին իջևանում՝ առանց իմանալու, թե ինչ պիտի անեին իրենց հետ: Նրանք փող չունեին, և թուրքերի տված ուտելիքները հետզհետե պակասում էին: Արդեն մի քանի օր էր անցել, ինչ նրանց այլևս հաց չէին տալիս: Նրանց արգելափակում էին և թույլ չէին տալիս, որ խոսեն տեղի բնակիչների հետ: Այդպես էլ Մարթան չկարողացավ գնալ Մարաշի որբանոցը: Նա շատ տխուր պատմում էր. «Մենք երկու տուն ունեինք, ստիպված ամեն ինչ թողեցինք, և հիմա մեր տներում բնակվում են մուհաճիրներ (Եվրոպայից գաղթած իսլամներ)»: Ֆուրնուզում ջարդ տեղի չունեցավ, զափթիեները մարդկանց հետ լավ էին վարվել: Նրանք ամենից ավելի հացի պակասությունից նեղվեցին: Այրեցյալ անապատով քայլելիս իբր յայլաճի (լեռնական. նրանք իրենց այդպես էին անվանում) նրանք կրկնակի տառապում էին տապից:

Հայերը հավաստում են, թե չգիտեն իրենց տարագրության շարժառիթը: Հետևյալ օրը, կեսօրվա հանգստի ժամանակ, հանդիպեցինք հայերի մի ամբողջ հավաքատեղի: Խեղճ մարդիկ քրդերի նման այծի մորթով վրաններ էին պատրաստել և այնտեղ հանգստանում էին: Բայց նրանց մեծ մասը մնում էր առանց ապաստանի, այրող ավազի վրա, արևի կրակի տակ: Բազմաթիվ հիվանդների պատճառով թուրքերը մեկ օր հանգիստ էին տվել: Չի կարելի երևակայել մեկ այլ ավելի ցավագին բան, քան նմանօրինակ մարդկանց բազմություններ այս անապատում և այս պայմաններում: Նրանց հագուստներից կարելի էր ենթադրել, որ այս խեղճերը երբեմն որոշ բարեկեցության մեջ են ապրել, իսկ ներկայումս նրանց դեմքերին դրոշմվում էր թշվառությունը: «Հա՜ց, հա՜ց»,- այս էր նրանց միակ աղերսանքը: Նրանք Կեպենից էին և աքսորված էին իրենց երեցի հետ: Այդ երեցը ինձ պատմեց, որ իրենցից օրական հինգ-վեց հոգի մեռնում է, երեխա կամ չափահաս: Այդ օրը ինը տարեկան մի աղջկա մորը թաղելուց էին վերադառնում, այդ աղջիկը բոլորովին մենակ էր մնացել: Ինձ հատուկ խնդրեցին, որ ես նրան հետս որբանոց տանեի: Երեցը ինձ այն նույն պատմությունն արեց, ինչ որ ***Դեյր-էզ-Զորի փոքրիկ*** աղջիկն էր պատմել:

Ովքեր անապատին ծանոթ չեն, նրանք չեն կարող նույնիսկ մոտավոր գաղափար կազմել հայ տարագիրների թշվառության ու տառապանքների մասին: Անապատը լեռնային է և շատ հաճախ առանց ստվերի: Օձապտույտ ճանապարհը օրերով անցնում է ժայռերի վրայով և շատ տաժանելի է: Երբ գալիս էինք Հալեպից, մեր աջ կողմում միշտ ունենում էինք Եփրատը, որը ձգվում է բրուտի դեղնորակ կավի ժապավենի պես, բայց մեզ այնքան մոտ չէր, որ կարողանայինք նրանից ջուր վերցնել: Ծարավը չարչարում էր այս խեղճ մարդկանց, այն շատ անտանելի էր: Շատ սովորական բան էր, երբ հիվանդ մարդիկ ընկնում ու մեռնում էին:

Քարի պես կարծր մի պարկ հաց, որ բերվեց Բաղդատից, ընդունվեց մեծ երախտագիտությամբ: «Մենք ջրի մեջ թրջում ենք, և մեր երեխաները ուտում են այն»,- ասում էին մայրերը երջանկությամբ:

Երեկոյան գյուղ հասնելիս գտանք հայերի մի հավաքատեղ: Նրանք զեյթունցիներ էին: Նույն թշվառությունը, նույն գանգատները ջերմության մասին, նույն հացի պակասը և արաբների նույն կեղեքումները: Երիտասարդ մի աղջիկ, որ Բեյրութի որբանոցում դաստիարակվել էր կրոնավորուհիների կողմից, լավ գերմաներենով մեզ պատմում էր իր քաշած տառապանքները:

«Աստված ինչի համար է թույլ տալիս այս բանը: Ինչի համար մենք պետք է այսպես տառապենք: Ինչու մեզ անմիջապես չեն սպանում: Ամբողջ օրը մենք ջուր չունենք երեխաների համար, և նրանք գոռում են ծարավից: Գիշերը արաբները գողանում են մեր անկողիններն ու հագուստները, առևանգում են մեր երիտասարդ աղջիկներին և բռնապղծում կանանց: Երբ մենք այլևս չենք կարողանում քայլել, ժանդարմները ծեծում են մեզ»: Նրանք նաև պատմում էին, որ ամոթից խույս տալու համար բազմաթիվ կանայք ջուրն էին նետվում, մայրերը իրենց նորածիններին ջուրն էին գցում, որովհետև այդ թշվառ վիճակից դուրս գալու ելք այլևս չէին տեսնում:

Անապատում ամբողջ ճանապարհորդության ընթացքում ուտելիքը պակասում էր: Մայրերի համար իրենց ամբողջ ընտանիքների արագահաս մահը տեսնելը ավելի ցավալի բան էր, քան թե սովից իրենց հարազատների մեռնելը տեսնելը:

Հալեպից դուրս գալու երկրորդ օրը Ամանոսի լեռներում հանդիպեցինք ուրիշ հայերի, որոնք Հաճնից ու նրա շրջակայքից էին: Նրանք ինը օր է, ինչ ճամփա են ընկել: Անապատում գտնվողների հետ համեմատած նրանք դեռևս լավ պայմաններում էին ապրում. տակավին իրենց ունեցվածքը բարձած կառքեր ունեին, ձիեր իրենց մտրուկներով, եզներ, կովեր և նույնիսկ ուղտեր. քարավանի ծայրը չէր երևում: Նրանք մագլցում էին լեռը, և ես ինքս ինձ հարցնում էի, թե սրանք որքան ժամանակ տակավին իրենց ունեցվածքի տերը պիտի մնային: Նրանք դեռևս իրենց ծննդավայրի հողի վրա էին, լեռներում, և ոչ մի նախազգացում չունեին անապատի սարսափներից:

Նրանք իմ տեսած վերջին հայերն էին: Մարդ չի կարող մոռանալ նմանօրինակ դեպքերը»[1]:

Ենթադրում ենք, որ այս փաստերը մի չնչին մասն են ներկայացնելու այն տառապանքների, որոնց ենթարկվեցին բռնագաղթված հայերի վերջին բեկորները Դեր Զորում և նրա շարունակությունը կազմող մահվան մյուս ճամբարներում:

Հայոց ցեղասպանության հայրենի և օտար պատմաբաններից շատերը, առավել ևս սովորական ընթերցողները, մեծ մասամբ այն կարծիքին են, թե *Գենոցիդը* հիմնականում իրականացվել է *Դեր Զորում.* և նրանք, որոշ առումով, չեն սխալվում, քանզի արաբական այդ անապատներում իր «վերջավորությունն» ապրեց մի ժողովուրդ, որի զավակները շուրջ ինը տասնամյակ բողոքում են, պայքարում, փաստեր, նոր ապացույցներ են հավաքում ու հրապարակում, սակայն, դժբախտաբար, դեռևս բաղձալի հաջողության չեն հասնում:

Հայասպանությունը *Դեր Զորի* մահվան գլխավոր ճամբարում, աներևակայելի կերպարանք ստացավ: Դժոխքի քավարանները հիշեցնող, ավազապատ ու արևախանձ այդ «հանգրվանը», կարծես դարձավ արևմտահայության վերջին կանգառը, որտեղից այն կողմ բռնագաղթեցվածների համար տանջամահություն էր, աշխարհի վերջը: Ճանապարհներին աստիճանաբար «հալվող», ոչնչացվող կամ փոքրաթիվ

[1] *Յոհաննես Լեփսիուս,* նշված աշխատությունը, էջ 103-105:

դարձող հայ գաղթականների քարավանները Դեր Զոր էին հասցնում հյուծված, կմախքացած փոքրաթիվ տղամարդկանց, հիմնականում կանանց ու անչափահասների: Հազարներ էին մեռնողները, հատուկենտ էին մահվան գերանդուց փրկվողները: Այդ բոլորը, սակայն, չէին գոհացնում հայասպան բորենի Թալեաթին, դրա համար էլ ամեն օր սպանության նոր ձևեր ու մեթոդներ էր հորինում նա և դրանք կիրառել տալիս իր սատելիտների արյունոտ ձեռքերով:

Հետևաբար, մենք ևս ***Դեր Զորը*** համարելով ***արմենոցիդի*** վերջին նպատակակետը, փորձենք մեկ անգամ էլ անդրադառնալ այդ վայրում կատարված ***զուլումին,*** թուրքերին թուրքի վկայությամբ փաստեր հրամցնենք, որպեսզի այլևս արխիվային «անհայտ» նյութերի առկայությամբ, չսպառնան ***Հայ դատի պաշտպաններիս:***

Սկսենք սկզբից: 1915 թ. հուլիսին Հալեպում ստեղծվեց հատուկ կառավարական մարմին ***Գաղթականների տեսչություն*** հորջորջմամբ, որին հանձնարարվեց կայսրության բոլոր վիլայեթներից դեպի ***Դեր Զորի*** անապատները աքսորելու գործը[1]: Այդ կոմիտեի առաջին գլխավոր քարտուղար նշանակվեց ***ազգությամբ թուրք Նայիմ բեյը,*** որի մասին եղեռնից հրաշքով փրկված ***Արամ Անտոնյանը*** գրում է. «Ներկա հրատարակչությամբ այդ խղճի ծայնն է, որ կը բերեմ հայկական մարտիրոսագրութեան: Իմ միջոցաւ Թուրք մըն է որ պիտի խօսի, Թուրք մը որ Հայ ժողովուրդին ընդհանուր կոտորածին համար մասնաւորապէս հաստատուած պաշտօնատան մը մէջ կարեւոր պաշտօն մը վարած է երկար ժամանակ, եւ որուն ձեռքէն անցած են սպանդի բոլոր պաշտօնական հրամանները եւ այդ հրամաններուն գործադրութեան տեղեկագիրները»[2]: Այդ պաշտոնյան և Անտոնյանի խոսակիցը ***Նայիմ բեյն էր:***

Արամ Անտոնյանը շարունակում է, թե Նայիմ բեյին տեսել է 1916 թ. սկզբներին, երբ Եփրատի սահմանակից անապատներից մեկի ***Մեսքենեի*** մեջ, Դեր Զորի հսկայածավալ ջարդերի նախապատրաստություն էր տեսնվում: «Պաղտատի գծին վրա մնացած հայ գաղթականների կոտորելու որոշումը տրված էր արդեն,- շարունակում է Ա. Անտոնյանը: - Ջէքի Պէյ Տէր Զօրի կառավարիչը, անհամբեր հեռագիրներ կ'ուղղէր Հալէպ, պահանջելով թէ՛ այդ քաղքին, թէ շրջակայ աւաններուն ու գիւղերուն, եւ թէ ճամբաներուն վրայ մնացած բոլոր Հայերը, որպէս զի ժամ առաջ գերագոյն հարուածը տայ:

Հալէպի գաղթականաց Տեսչութիւնը որ տարագրութեան բոլոր զարհուրանքին գլխաւոր կազմակերպիչը եղաւ, տեսնելով որ հակառակ տրուած հրամաններուն Մէսքէնէի մէջ եւ ամբողջ Եփրատի գիծին վրայ տակաւին ահագին թուով Հայ գաղթականներ կը մնան, իր գլխաւոր-քարտուղարը, Նահիմ Պէյը կը ղրկէր որպէս զի շուտով պարպի կայքը»[3]:

Նայիմ բեյը, պատերազմից հետո, համաձայնվելով իր ձեռքի տակ ունեցած, հայերին վերաբերող պաշտոնական վավերագրերը, ինչպես նաև գրավոր հուշերը տրամադրել Ա. Անտոնյանին, դրանցով նոր լույս էր սփռում ցեղասպանության պատմության վրա: Նրա վկայությամբ Հալեպից տեղահանված քարավանները «արտամղվում» էին դեպի ***Ռաս-ուլ-Այն*** և ***Դեր Զոր,*** որոնք ճանապարհին պիտի մաշվեին, փոքրացվեին, կուչ գային և ինչքան քչանային, այնքան նպատակին հասած կլինեին թուրքերը:

«... Օր մը, կը շարունակէ Նահիմ Պէյ, ներքին գործոց նախարարութիւնը հետեւեալ ծածկագիր հեռագիրը ղրկեց.-

---

[1] «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», Երևան, 1991, էջ 736-737: ***Ռ. Գ. Սահակյանի*** կազմած ծանոթագրությունները:

[2] ***Արամ Անտոնյան,*** Մեծ ոճիրը, Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Պոսթըն, 1921, էջ 6:

[3] Նույն տեղում, էջ 7:

Ծանօթ անձնաւորութեանց[1] առաքման նպատակը հայրենիքին ապագայ բարօրութեան ապահովութիւնն է. որովհետեւ ատոնք ո՛ւր որ ալ բնակեցուին դարձեալ ետ չպիտի կենան իրենց անհիմնապարտ գաղափարներէն, պէտք է աշխատիլ որ կարելի եղածին չափ նուազի անոնց թիւը»:

«1915 տարուան Նոյեմբերին հասած էր այս հեռագիրը: Ութ օր վերջ առանց կուսակալին կողմէ մակագրուելու տրուեցաւ Ապտիւլահատ Նուրի Պէյի: Նոյն իրիկունն իսկ, ժամը 11½ին գաղթականաց Տեսուչ էյուպ Պէյ եւ ժանտարմըրիի հրամանատար էմին Պէյ պաշտօնատուն փութացին, Ապտիւլահատ Նուրի Պէյի մօտ: Նուրի Պէյ իսկոյն անոնց հաղորդեց ստացած հեռագիրը, եւ մօտաւորապէս ժամ մը տեսնուեցան: Իրենց խօսակցութեան նիւթը Հայերու բնաջնջման ձեւն էր: էյուպ Պէյ յայտնի համարձակ փճացման կողմնակից էր: Բայց Ապտիւլահատ Նուրի Պէյ որ շատ խորամանկ մարդ մըն էր, մերժեց այդ գաղափարը: Իր կարծիքով, լաւագոյն էր հայ գաղթականները զրկանքի եւ ծմրան սաստկութեան ենթարկել եւ այդպէսով մեռցնել, ինչ որ ապագային անոնց բնական մահուամբ մեռած ըլլալուն թէզը պաշտպանելու եւ զօրացնելու պիտի ծառայէր: 10-15000 հայ գաղթականներ, մէկ կէտի մը վրայ համախմբուելով, անշուշտ շուտով զրկանքի, անօթութեան եւ հիւանդութեան պիտի ենթարկուէին: Յետոյ յանկարծ, երբ զանոնք տեղահան ընէին աւելի առաջ քշելու համար, բնականաբար մարդիկը չպիտի կրնային փոխադրութեան միջոց ճարել, պիտի ստիպուէին քալել, եւ պիտի իյնային ճամբաներուն երկայնքը: Վերջապէս իր կարծիքը յաղթանակեց:

Մինչեւ այն ատեն Հալէպի մէջ ժանտարմաները գաղթականներու գործերուն չէին միջամտեր: Բայց ժանտարմաներու պաշտօնատունն ալ սկսաւ ոստիկանատան գործակցիլ: Շուտով մեծ գործունէութիւն մը ծայր տուաւ Հալէպ: Կադմայի մէջ, Քիլիսի շրջակաները եւ Հալէպի շուրջը խռնուած գաղթականները մաս առ մաս Ագբէրին եւ անկէ Պապ կը ղրկուէին: Իրօք մտածածնուն պէս ալ եղաւ: Անօթութենէ, ցուրտէն, հիւանդութենէն ամէն օր հարիւրաւոր անձերու մեռնելուն լուրը կը հասնէր մեզի: էյուպ Պէյ Ազազ գնաց: Վերադարձին խնդալով պաշտօնատուն եկաւ: Կը պատմէր թէ ինչպէ՞ս վրաններուը այրած էր: Պապ լեցաւ: Թիֆիւսը չորս դին կ'այրէր, կը մրրկէր: Գայմագամը, գաղթականներու առաքման պաշտօնեաները, ամէն օր մահուան տեղեկագիրներ կը ղրկէին: Մահը լոկ Հայերը չէր զարներ. բնիկ ժողովուրդն ալ կը կոտորէր:

Օր մը ըսի Ապտիւլահատ Նուրի Պէյի.

- Պէյ էֆենտի, գաղթականներու առաքումը քիչ մը մեղմացնենք, որովհետեւ մահը բովանդակ Միջագետքի կը սպառնայ. այս ընթացքով այդ ընդարձակ հողամասին վրայ դեւերէն զատ ոչ ոք պիտի մնայ: Րես-Իւլ-Այնի գայմագամը ողբագին հայցումներ կ'ընէ կոր այս մասին:

Նուրի Պէյ խնդաց:

- Տղա՛ս, ըսաւ, այս կերպով երկու վնասակար տարրեր մէկանց կը փճացնենք. Հայերուն հետ սատկողները Արաբներ չե՞ն. գէ՞շ է. թրքութեան ապագային ճամբան կը հարթուի:

Լռեցի: Այս ահաւոր պատասխանը դողացուց զիս:

«Ի՞նչ բան կը քաջալերէր այդ մարդը որպէս զի անվախ ու համարձակ, կարենայ այս աստիճան անողորմ ու հրէշային ծրագրի մը գործադրութիւնը հետապնդել: Շատ

[1] Տեղահանութեան եւ ջարդերու, ինչպէս նաեւ յարակից գործողութեանց վերաբերող պաշտօնական բոլոր ծածկագիրներու մէջ ընդհանրապէս այդ «Ծանօթ Անձնաւորութիւններ» ասութիւնը կը գործածուէր *Հայերուն համար:*

բան կարելի է ըսել այս մասին: Բայց հրամանագրի օրինակ մը որ գաղթականաց ընդհանուր Տեսչութեան գաղտնի թուղթերուն մէջ կը գտնուէր, մինակը կը բաւէ բացատրելու համար այդ աներկիւղ համարձակութիւնը որով Նուրի Պէյ կը կատարէր իրեն վստահուած գործը,- Հայերու ընդհանուր բնաջնջման գործը:

Ահաւասիկ այդ հրամանագիրը.

«Դարերէ ի վեր պետութեան ամուր հիմքը քանդելու բաղձացող եւ կառավարութեան համար կարեւոր փորձանքի մը երեւոյթը առած հայ տարրին ջնջումը թէեւ նախապէս մտադրուած էր, բայց ժամանակին ստիպումները այս սրբազան մտադրութիւնը իրականացնելու կարելիութիւն չէին ընծայեր: Հիմայ, բոլոր արգելքները վերցած եւ հայրենիքը այս վնասակար տարրէն փրկելու ժամանակը հասած նկատելով, կարեւորութեամբ կը յանձնարարուի որ անոնց արգահատելի վիճակին հանդէպ գութի զգացումներու չյանձնուիք, եւ անոնց ընդհանուրին գոյութեան վերջ տալով, Թուրքիոյ մէջ հայ անունին չմնալուն ոգի ի բռին աշխատիք: Ուշադրութիւն ընէք որ այս նպատակը իրականացնելու կոչուելիք պաշտօնեաները հայրենասէր եւ վստահելի մարդիկ ըլլան»:

Այս հրամանագրին թուականը յայտնի չէր, ոչ ալ որո՞ւ կողմէ ղրկուած ըլլալը, որովհետեւ պատճէն մըն էր: Ամէն բան ցոյց կուտայ սակայն որ եկած է ներքին գործոց նախարարութեան կողմէ ուղղակի կուսակալին, եւ կուսակալութիւնն ալ հաղորդած է գաղթականաց ընդհանուր Տեսչութեան»[1]:

Մայրաքաղաքից հատուկ հանձնարարականներ ստանալուց հետո, սկսվեց Հալեպի դատարկումը: Նահանգի կենտրոնում կուտակվել էին Կ. Պոլսի շրջակայքից, Պարտիզակից, Ադաբազարից, Գոնիայից, Զեյթունից բռնագաղթեցված հայերի քարավանները: Թալեաթի «սաստիկ հրահանգով» սրանց մի մասին իջեցրեցին ***Մեսքենե,*** շատերին կոտորեցին, մնացածներին ուղղեցին դեպի Դեր Զոր:

«Ամեն մարդ մտահոգ էր, թե ինչո՞ւ կըլլար այս նոր տեղահանումը եւ ***թէ ինչո՞ւ Տէր Զոր կը քշէին ժողովուրդը:*** Բայց վրդովման աւելի մեծ պատճառ մը կար: ***Ռասիւլ-Այնի ջարդերուն լուրը հասել էր նաեւ Մեսքենէ:*** Ամիսներ տեւող կոտորածը չէր կրնար գաղտնի մնալ, նոյնիսկ անապատին մէջ: Արաբներու կողմէ բերուած հատուկտոր տեղեկութիւններէ հասկցած էինք, որ այնտեղ գտնուող գրեթէ բոլոր հայերը սպաննուած են: Միւս կողմէ Մեսքենէի միւտիրին հետ մտերմացած կարգ մը մարդիկ կը հաւաստէին թէ Հալէպէն «գէշ» հրահանգներ կու գան: Ընթացիկ լեզուին մէջ «գէշ» ածականը մեծ բան չի նշանակէր. բայց այդ արհաւիրքի օրերուն այդ մահուան ոստանին մէջ «զարհուրանք»ին մէկ հոմանիշն էր: Լուր ելած էր տակաւին թէ այլեւս Եփրատի աջ եզերքէն պիտի չղրկուին գաղթականները, այլ ձախ ափունքէն, եւ ասիկա արդէն մահուան դատապարտութեան պէս բան մըն էր մեկնելիք կարաւաններուն համար, որովհետեւ այդ ափունքէն մինչեւ Ռաքքա մարդիկ պիտի բռնադատուէին անցնիլ բոլորովին անջրդի անապատներէ, որոնց մէջ անպայման պիտի մեռնէին տաքէն, ծարաւէն, անօթութենէ: Էլ Ճեզիրէի շրջանակը, ինչպէս կը կոչուի Եփրատի ձախ եզերքը,- գերեզմանի ճամբան էր:

Սոսկումը իր ծայրագոյն աստիճանին հասաւ երբ սկսանք պզտիկ տղաքը իբր լրաբեր գործածելով տեղեկութիւն ստանալ Տէր Զորէն:- «Վար մի իջնէք, փախէք»:- Այս էր մեզի հասած անփոփոխելի տեղեկութիւնը: Եւ անոնք որ մեզի կու տային այս խորհուրդը, կը զգացնէին թէ իրենք ինկած են ցանցին մէջ, պիտի ջարդուին անխուսափելի կերպով»[2]:

---

[1] *Արամ Անտոնեան,* Սեծ ոճիրը, էջ 24-26:

[2] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 488.

Դեր Զորում հավաքեցին հարյուրհազարներով բռնագաղթեցված հայերին և նրանց տանջամահ արեցին այնպիսի մեթոդներով, որոնք երկոտանի մարդ արարածը չէր տեսել իր անցած հազարամյակների պատմության ճանապարհին: Դա մի կատարյալ դժոխք էր, սակայն ոչ *Դանթեի* նկարագրածը, այլ բոլորովին մի այլ, աներևակայելի երևույթ:

Այնտեղ բզիկ-բզիկ արեցին այն բոլոր հայ կույսերն, որոնք, դեռևս չբացված կոկոն վիճակում, զոհ դարձան *թուրք, չերքեզ, արաբ* բարբարոսների անառակ վարմունքին, վերածվեցին առք ու վաճառքի առարկայի և ծախվեցին նույնիսկ աճուրդով: Ամենախայտառակ բախտին «արժանացան» հայ կանայք, գերեվարվեցին, բռնաբարվեցին, քչերը միայն կարողացան կենդանի մնալ և կրոնափոխության ենթարկվելով՝ դարձան իսլամապաշտների հարճեր, տնային ծառաներ, շատերը բռնաբարվելուց հետո, սրախողխող արվեցին կամ ողջակիզվեցին:

Հազարներով, տասնյակ հազարներով որբեր գոյացան: Ծնողազուրկ, ընկեցիկ այդ երեխաները ցրված էին անապատի մի ծայրից մյուսը, գյուղերի և քաղաքների մեջ: Նրանք օրեցօր քայքայվում էին ֆիզիկապես ու, հատկապես, բարոյապես, հասնում մի այնպիսի աստիճանի, որ այլևս պիտանի չէին ոչ ազգին և ոչ էլ մարդկությանը: *Անապատում մեռնում էր հայոց գենոֆոնդը:*

Այդտեղ ոչնչացվում էին այն շինարար ու ստեղծագործ ձեռքերը, որոնք հազարամյա իրենց պատմական հայրենիքում ընծյուղել ու վերընծյուղել էին պալատներ, վանքեր ու եկեղեցիներ, քաղաքներ ու ագարակներ, կուտակել ցեղի դարերի հարստությունը: Իսլամ բարբարոսներն ոչ միայն կտրեցին արարող այդ ձեռքերը, այլև ավերակների վերածեցին մի ամբողջ հայրենիք, պղծեցին այնտեղ կառուցված հնամենի վանքերն ու եկեղեցիները, ախոռի վերածեցին դպրոցներն ու հիվանդանոցները, հողին հավասարեցրին սուրբ-սրբոցները՝ հայոց գերեզմանոցները:

Վաղօրոք պատկերացնելով իրենց վախճանը, տարիքավոր տղամարդիկ, հատկապես ծերունազարդ հայ կանայք, աքսորվելու ճանապարհին իրենց հետ հայրենիքից հող էին վերցրել: Ձգալով մահվան մոտալուտ լինելը՝ նրանք այդ հողը, մասերի վերածելով, բաժանում էին իրար մեջ, օրորվելով այն պատրանքներով, թե մեռնելիս ամփոփվում են հայրենի հողում: Այս երևույթը այսօր էլ ցնցում է. թե հայ մարդն ինչպիսի պաշտամունք ունի և՛ հայրենիքի նկատմամբ, ընդհանրապես, և՛ նրա հողի նկատմամբ, մասնավորապես: Կարծեք թե Դեր Զորը դարձել էր հայերի գերեզմանոց, հայրենի օրհնած հողով թաղված: Բայց քանիսի՞ն, քանի՞ հարյուրին, քանզի բոլորը չէ, որ հողափոսի ու գերեզմանի արժանացան[1]...

Դեր Զորում կատարված դաժանությունները ստվարացրին առանց այդ էլ *խելագարվածների* թվաքանակը: Հայ գաղթականները, ենթարկվելով աներևակայելի կտտանքների, հոգեկան անասելի ծանր դրամա էին ապրում, երբ տեսնում էին մարդկության դեմ կատարված ոճրագործները, բռնաբարիչները, բարբարոսները, հրեշները անպատիժ են և անպատիժ էլ պիտի մնային: Նրանք փրկության բոլոր հույսերը կորցրել էին, դրա համար էլ միայն խենթությունն էր մնում և դրան էլ արժանանում են:

Եղեռնի 50-ամյա հոբելյանական հանձնաժողովի ղեկավարությունը, «Դեր Զոր» վերտառությամբ, վերահրատարակելով *Նայիմ Սեֆա* բեյի հուշերն ու տրամադրած մյուս վավերագրերը, շարունակում է. «Բռնագաղթեցվածները, մահվան այդ ճամբարում «երկար ատեն կար որ աչքերը այլեւս վեր նայելու բնազդական վարժութիւնն անգամ կորսնցուցեր էին. ա՛լ ոչ ոք երկինքէն բան մը կը յուսար. կը վախնային որ ան

[1] «1915-1965 Յուշամատեան. Սեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 490:

ալ իրենց վրայ կը փլչէր, որովհետեւ ո՛չ միայն մարդիկը, այլ ամէն բան իրենց թշնամի էր, նոյնիսկ ջուրը, քարերը, աւազը, հողը: Ամէն կողմէ եւ ամէն բանէ, մարդոցմէն ինչպէս տարրերէն մօտալուտ սպանդին արհաւիրքը կը բխէր իբր առատահոս ջրվէժ մը:

Ու մարդիկ ապշեր, խելռեր, գլխիկոր մնացեր էին միանգամայն ամէն կողմէ պաշարուած մահուան սպառնալիքով, այնքա՛ն իրական եւ բաբախուն որ կարծես իրենց կը հպէր ինչպէս դաշոյնի մը շեղբը, ինչպէս հրացանի մը գնդակը, ինչպէս ճոկանի մը գուռտը: Բոլորին ալ մտածումները անոր վրայ էին: Ամէն ծայն, ամէն արձագանգ, նոյնիսկ կեանքի ու բնութեան ամէնէն ընտանի արտայայտութիւնները,- նորածինի մը ճիչը, պառաւի մը մռլտուքը, կանացի աւաչ մը, հիւանդի մը հռնդիւնը, ***տղու մը ծիծաղը, բոլոր հառաչանքները,- մանաւանդ հառաչանքները, որովհետեւ ամէն մարդ կը հառաչէր, հովին սոյլը,*** եփրատը իր դաւաճան կարկաչով, շուներու հաչիւնը, ագռաւի մը կրկռոցը, բոլորը, բոլորը, իսկոյն մահուան գաղափարով կը թարգմանուէին: Անիկա ամէն տեղ եւ ամէն բանի մէջ էր,- մահուան գաղափարը,- աւելի ահաւոր ու զահանդական քան նոյնիսկ մահը, որովհետեւ մահը չ'ապրիր, կը զարնէ կայծակի պէս ու կայծակի պէս ալ կ'իյնայ, մինչդեռ այդ գաղափարի ծեւին տակ այդպէս յաճախանք մը դարձած անիկա այլեւս կենդանի մահն էր, կ'ապրե՜ր, յամրաբար կարծես իբր զբօսանք մը կատարելով անէացման իր քստմնելի աշխատութիւնը: Անոր ցանցին մէջ մարդիկ այնպէս էին ինչպէս մուկը կատուին կամշոտ ճանկերուն տակ:

Ինչպէ՞ս կը նախանձէինք անոնց վրայ, որոնք մեռեր էին արդէն: Անոնք ապահովաբար աւելի բախտաւոր եղած էին քան մենք: Ինկեր էին տասնեակներով, հարիւրներով, հազարներով, բայց ինկեր էին ամէնքն ալ դէպի Հիւսիս դարձած, լաւագոյն վաղորդայնի մը մեծ, արդար ու շողշողուն ապագայի մը սրտապնդիչ յոյսին հրդեհը աչքերուն մէջ: Իրենց վերջին հռնդիւնը, վերջին ակնարկը, վերջին գալարումը, վերջին հեւքը ողջոյն մըն էր դէպի այդ փայլուն ապագան, որ պիտի ծնէր վերջապէս ***Համամարդկային Տէրութեանց յաղթանակէն:*** Որովհետեւ միշտ հաւատացին այդ յաղթանակին: Մեռեր անէացեր էին, բայց ճիշդ յաղթութեան աւետիսին արբշռութեան մէջ իյնող զինուորի մը նման: Այդ աղուոր երազը կենդանի ու բաբախուն մնացեր էր իրենց ***դիակնացած*** մարմնին մէջ, իրենց հետ թաղուած էր անապատին ամբողջ երկայնքը, յոյսի հուռներու պէս, որոնց ապահով բողբոջման մասին վստահ էին այնքան որ նոյնիսկ իյնալէն ետք տակաւին այդ հոյակապ արշալոյսին արփենի ճաճանչները կը շողային իրենց դէմքին մեռելական դալկութեան վրայ»[1]:

Դեր Զորը վերածվեց հայոց գերեզմանոցի: Սակայն, դժբախտաբար, շուրջ ***200 հազար հայերի ոչնչացմամբ*** թուրք մարդագայլերը չբավարարվեցին, չկշտացան անմեղ ու անպաշտպան գաղթականների թափած ծով արյամբ: Արյունարբու Զեքի բեյը, հրահանգավորվելով ***«Թեշքիլաթի մախսուսայի»*** ղեկավարությունից, որոշեց. կենդանի մնացածներին տեղահանել Դեր Զորից և առանձին խմբերով նրանց ուղարկել ***Մոսուլ:***

Մոսուլը հեռու էր: Դրա համար էլ գաղթականների «վերջին հոսքերն» ուղղվեցին դեպի ***Շետտատին,*** որոնք անցնելու էին ***Մարաթի*** և ***Սավուրի անապատներով:*** Ճանապարհին այդքան բազմությանն սպանելը, թաղելը, վարակիչ հիվանդություններից խուսափելը հնարավոր չէր: «Հնարամիտ» Զեքին որոշեց արհեստական սով առաջացնել, որի ընթացքում մարդիկ սկսեցին ուտել էշեր, շներ, կատուներ, հետո նաև սատկած ձիերի և ուղտերի դիակներ: Երբ նման բոլոր կենդանիներին կերան, վերջացրեցին, սկսվեց մարդակերություն, ***որն իր ձևով ու բովանդակությամբ նմանատիպը չի ունեցել մարդկային պատմության ընթացքում:***

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 491:

Բերենք միայն մի ողբերգության նկարագրությունը. «Աղջիկ մը հիվանդ պառկած էր, մեկ քանի օրուան անօթութեամբ: Մայրը գլխուն վերեւ կը հսկէր: Մօտէն եփող միսի հոտ կու գար: Տղու դիակ մը կ'եփէին անշուշտ:

Աղջիկը կ'ըսէր մօրը:

- Մայր, գնա կտոր մը ուզէ, ալ չեմ դիմանար...

Մայրը կ'երթայ, բայց քիչ ետքը ձեռնունայն կը վերադառնայ:

- Չտուի՞ն, կ'ըսէ աղջիկը. մա՛յր, եթէ մեռնիմ, դուն ալ իմ միսէս չտաս անոնց, մինակդ կեր...

Այսպէս պզտիկները իրենց ողջութեանը վարժուած էին այն գաղափարին հետ, թէ մեռնելէն ետք իրենց դիակները պիտի ուտեն:

Մայրեր այլեւս յիմարացած, իրենց զավակները ծախու հանած էին: Կիներ կը գոռային.

- Աղջիկս է, հարազատս է, հոգիս է, կը ծախեմ ու չեն առներ, նայեցէ՛ք, չեն առներ...

Դեղագործ մը որ հետը թոյն ուներ, դեղահատներ շինած էր, ու բախտաւորներ զանոնք կը գնէին հատը մէկ ոսկիի, վայրկեան մը առաջ ազատելու համար այն անպատում չարչարանքներէն:

550 երիտասարդներ, զորս Զեքի պէյ բանտարկեց որովհետեւ զինուորական իշխանութիւնը կ'աշխատէր զանոնք զինուորագրելով ճամբու շինութեանց յատկացնելու, Տէր Զորի զօրանոցին մէջ ամբողջ եօթ օր առանց հացի եւ առանց ջուրի թողուեցան: Իրար բզքտեր, իրար կերեր էին ողջ-ողջ»[1]:

Այսպիսով, 1915-1917 թթ. ընթացքում երիտթուրքական կառավարության կողմից ձեռնարկված հայաջինջ գազանությունների հետևանքով մոտ ***երկու միլիոն*** հայեր աքսորվեցին, որոնցից ***մեկուկես միլիոնից ավելին*** սպանվեց կամ զոհ գնաց սովին ու համաճարակին Միջագետքի անապատներում: Բռնի թուրքացման ենթարկվեցին շուրջ երկու հարյուր հազար հայեր, գերազանցապես կանայք ու երեխաներ[2]:

Երիտթուրքերի կողմից կազմակերպված հայերի ցեղասպանության մասին գերմանացի նշանավոր հասարակական գործիչ Լեփսիուսը «Գերմանիան և Հայաստանը» իր հայտնի ժողովածուում գրում էր. «Ոչ մի կասկած չկա, որ խոսքը ոչ թե կայսրության անվտանգության նպատակին ուղղված ռազմական միջոցառումների, այլ ***հայ ժողովրդի ծրագրված ոչնչացման մասին էր»***[3]:

Երիտթուրքերը գազանային եղանակով «լուծեցին» Հայկական հարցը: Մեծ եղեռնից հետո արյունարբու Թալեաթ փաշան պաշտոնապես հայտարարեց ***«Չկա այլևս Հայկական հարց, քանի որ չկան նաև հայեր»:*** Բնաջնջելով և տեղահան անելով արևմտահայությանը, երիտթուրքական կառավարող շրջաններն, իրենց կարծիքով, «վերացրին այդ խոչընդոտը», որը խանգարում էր իրենց պանթուրքական, զավթողական ծրագրերի իրականացմանը:

Առաջին համաշխարհային պատերազմում երկրագնդի տարբեր մասերում իրագործված ոճիրներից և ոչ մեկը չի կարող համեմատվել այս ողբերգության հետ: Ինչպես զոհերի քանակությամբ, այնպես էլ նրանց հանդեպ գործադրված միջոցներով, հայերի այս ***սպանդ-գենոցիդը*** պատմության մեջ հիշատակված բոլոր ջարդերից ամենասոսկալին էր: Երիտթուրքերին հաջողվեց Հայկական հարցն իրենց ցանկացած ձևով վճռել եվրոպական մեծ տերությունների ցուցաբերած հանցագործ վարքագծի ու թողտվության պատճառով[4]:

---

[1] «1915-1965 Յուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 497-498:

[2] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, Երևան, 1981, էջ 557-558:

[3] *J. Lepsius.* Deutschland und Armenien 1914-1918. Potsdam, 1919. S. XXIV-XXV.

[4] «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 558:

Եղեռնից մազապուրծ սերնդին ևս բաժին էր ընկել դաժան ճակատագիր: Իրենց ոդիսականն սկսելով օսմանյան կայսրության մահաբեր ափերից, ցրվելով աշխարհով մեկ, խարսխվելով երկրագնդի *բոլոր* աշխարհամասերում վերապրողները չկարողացան և չէին էլ կարողանա մոռանալ այն ամենը, ինչ տեսան իրենց ծնողներն ու հարազատները: ***«Հիշելն ապրել է, մոռանալը՝ մահ»*** կարգախոսով սփյուռքահայերն ամեն անկյունում կրկնում են Ավետիս Ահարոնյանի այն հանճարարական, թևավոր խոսքերը, թե

Այսքան չարիք թե մոռանան մեր որդիք
Թող ողջ աշխարհն հայուն կարդա նախատինք:

Այո՛, հանուր հայ ժողովուրդը չի կարող մոռանալ իր ծնողների ապրած գողգոթան: Ամեն տարի, ապրիլի 24-ին աշխարհի ամեն ծայրերից, մագնիսի նման դեպի իրեն է ձգում ***Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը,*** ոչ միայն հարգանքի տուրք մատուցելու զոհվածների հիշատակին, այլև վերապրողների սերնդին, առավելապես երիտասարդությանը պատգամում շարունակել պայքարը ***հայ դատի համաշխարհային ճանաչման, հատկապես Թուրքիայի կողմից ընդունման կարգախոսով:***

Այս բաժինն ավելի պատկերավոր չենք կարող եզրափակել, քան կաներ ***Շահան-դուխտ*** ստորագրությամբ տպագրված մի հոդվածի հեղինակը, որը խորագրված է ***«Խոսե՛, Դեր Զոր նոր սերունդին»:*** Այնտեղ գրված է. «Սիամանթոյի, Վարուժանի, Զարդարեանի քերթողութիւնը, գիր-գրականութեամբ փոխանցուած կտակը պ՚տք է պահուի սուրբ յանձնառութեամբ, գերուխտով:

Հայորդի, բարձրաձայն արտասանէ «Խեղդամահը», «Պարը», «Առկայծ ճրագը», «Բագինին փառաբանութիւնը» եւ միւս կտակները, որպէսզի բոցը մնայ հոգիիդ մէջ արծարծ, ջահը հերոսներուն բռնես բարձր:

Ու դեռ պիտի երգես երգը Սողոմոն Թեհլիրեանին, պիտի կարդաս ***«Կտակը»*** Արշաւիր Շիրակեանին, պիտի հաղորդուիս հերոսութեամբը Միսաք Թորլաքեաններու, Տաճատ Թերլեմեզեաններու: Անունները չեն ասոնք միայն, այլ հաղորդութեան համով օծուած խրախոյս եւ զօրութիւն:

Կոմիտասին անունը որ լսես, պիտի հարցնես մօրդ, հօրդ, ուսուցիչիդ, դրացիիդ: Ո՞վ էր այդ վեղարաւորը, որ երգեր կտակեց հայ ժողովուրդին ու ինք անմահացաւ. ինչո՞ւ... հարցումիդ պատասխանը պահէ ականջներուդ մէջ ու երգէ «Կռունկ», «Ծիրանի ծառ», որպեսզի քիմքդ քաղցրանայ, հոգիդ պարծենայ, թեւերդ թռիչք առնեն ու հասնին Հայաստան ու Արցախ նոր երգը հիւսելու հայուն վաղուան:

«Անլռելի Զանգակատուն»ին ղօղանջն է յիշողութիւնը Եղեռնին: Թող ականջներդ միշտ բաց մնան համերգին դիմաց ողջակիզած ցեղին, ապա երգէ «Տէր Ողորմեա», ու Կոմիտաս Վարդապետ այցի կու գայ քեզ օգնութեան, որ դուն հայ մնաս օտարութեան ափերուն: Կոմիտասի երգը Թուր Կեծակին է Սասնայ Դաւթին, երբ որ երգես «Տըլէ եաման» կամ՝ «Խնկի ծառ». հայոց քաջեր քեզի կու գան օգնութեան, ընկրկումի վարանոտ պահուն որ դուն մնաս անխախտ, կանգուն, որ ժայռանաս հոսանքներուն դէմ խեղդող»[1]:

[1] «Ազդակ» (բացառիկ համար նվիրված Մեծ եղեռնի 85-ամյակին), Պեյրութ, 2000, 24-ը ապրիլի, էջ 91-92:

Գլուխ վեցերորդ

Հայ ժողովրդի ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչվել է դեռևս 1915-1920 թվականներին

Հնչեց օսմանյան կայսրության բաղման կանչը ոչ միայն Եվրոպայում, այլև Ասիայում, և դրանում ոչ թե մենք, այլ օսմանյան բռնապետությունն է մեղավորը: Թուրքական տիրապետության չքացումով կվերանա այն խոցը, որն ուտում է երկրագնդի գեղեցկագույն մարզերը... Թուրքական կայսրությունն ինքնասպանություն գործեց և անփառ ձևերով փորձեց իր գերեզմանը:

Մեծ Բրիտանիայի պրեմիեր մինիստր
ՀԵՐԲԵՐՏ ՀԱՆՐԻ ԱՍՔՎԻՏ, 1918 թ.

1. Մեծ տերություններն Առաջին աշխարհամարտի առաջին իսկ ամիսներին դատապարտել են հայկական ողբերգությունը

ԶԵՌԱՐՁԱԿ, անկաշկանդ ոչնչացնելով, մասամբ միայն *դեպորտացիայի* (բռնահանման) ենթարկելով շուրջ *երկուսևկես միլիոն* անմեղ, անզեն ու անպաշտպան *արևմտահայությանը*, ինչպես իր ժամանակին, առավել քան այսօր, չերկնչելով պատմության աheղ դատաստանից, թուրքերը բռնեցին և համառությամբ շարունակում են որդեգրել ցեղասպանության անժխտելի իրողությունը հետևողականորեն ժխտելու ուղին: Անմեղ ծնանալով՝ նրանք ոչ միայն իրենց հայրերին և պապերին արդարացնելու անհաջող փորձեր են անում, այլև ճգնում են կատարվածի մեղքը բարդել յաթաղանի զոհ դարձած անպաշտպան հայ ժողովրդի վզին[1]:

[1] Բարեբախտաբար, թուրքերին մերկացնող աշխատությունների թիվը բազմաթիվ է: Նշենք դրանցից մի քանիսը միայն: *Ա. Ն. Մնացականյան,* Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1965 (*Հրաչյա Քոչարի* առաջաբանով): *Ավետիս Եափուճյան,* Մեծ եղեռնը օտար մտավորականության գնահատումով, Գահիրե, 1980: *Ավետիս Փափազյան,* Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում, Երևան-Լոս Անճելըս, 1996: *Ջ. Ս. Կիրակոսյան,* Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք երկրորդ, Երևան, 1983: *Ю. Г. Барсегов,* Геноцид армян, преступление по международному праву, Москва, 2000. *Լ. Ա. Բարսեղյան,* Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրությունը (1915-2000 թթ.): *Նույնի՝* Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, Երևան, 2001: *Նույնի՝* Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է Հայոց ցեղասպանությունը, Երևան, 1998: Սույն գլուխը շարադրելիս, բնականաբար, օգտվել ենք վերոհիշյալ և այլ աշխատություններից, համապատասխան էջերում նշելով նրանց հեղինակների անունները:

Թուրքիայի ամենաբարձրաստիճան պետական այրերը, նյութական միջոցների մխսման առաջ կանգ չառնելով, ծայնափող դարձնելով «կեղծարար» պատմաբաններին, ուրանում են ցեղասպանության իրականացումը, մոռանալով, որ դեռևս իր ժամանակին և՛ թուրքերը, և՛ եվրոպացիները ընդունել են այդ «երևույթի առկայությունը»: Որպեսզի չփորփրենք նրանց նախորդների ուղեղի մութ ծալքերը, փորձենք դիմել փաստերին և թուրքերի հետ խոսել փաստերի լեզվով վկայակոչելով բացառապես կամ թուրք, կամ էլ արևմտաեվրոպական, մասամբ նաև ռուսական սկզբնաղբյուրները:

1908 թ. հուլիսին օսմանյան բռնապետության մեջ կատարվեց պետական անարյուն հեղաշրջում: Քրիստոնյա ազգերի դահիճ Աբդուլ Համիդը հարկադրված եղավ թույլատրել թուրքական սահմանադրության գործածությունը, և փաստորեն Թուրքիան հռչակվեց իբրև «սահմանադրական միապետություն»: Թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների ուսերի վրայով իշխանության եկած երիտթուրքերը, սահմանադրական մեղրամսի օրերին, խաբկանքով, ամենուրեք վանկարկում էին ազատություն, հավասարություն, եղբայրություն լոզունգները: Երկրին ու թուրքերին անծանոթ մարդը մի պահ կարող էր շփոթվել, կարծելով, թե ինքը հեղափոխության օրրան Փարիզում է գտնվում, և ոչ թե երեկ 300 հազար հայեր մորթած Ստամբուլում:

Դժբախտաբար այդ ծխածածկույթը երկար կյանք չունեցավ: 1909 թ. ապրիլին «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխները իրենց դաժանությամբ գերազանցեցին Աբդուլ Համիդին և ինչպես Ադանան, այնպես էլ Կիլիկիայի մի շարք այլ քաղաքներ ներկեցին հայոց ծով արյամբ: Հայասպանությունը շարունակվեց ավելի հետևողականորեն ու ավելի դաժան մեթոդներով, որը սթափեցրեց հայ քաղաքական կուսակցությունների առաջնորդներին, մեջլիսի հայ երեսփոխաններին: Նրանք վերջապես հասկացան, որ խաբված են, բայց ինչ անելը դեռևս չգիտեին: Բացարձակ ծեռնոց նետեի՞ն երիտթուրքերին, խզեի՞ն բոլոր կապերը նրանց հետ: Դժվար է ասել որն էր ճիշտը, քանզի այսօրվա աչքերով և այսօրվա մտածողությամբ վճիռներ կայացնելը, մեզ թվում է, ճիշտ չէ, մանավանդ որ այդ եզրահանգումները պատմագիտական անմեղ շարադրանք չեն միայն, այլ իրենց ենթատեքստում քաղաքական մեղադրանքի բարդույթներ են պարունակում:

Երկար ժամանակ չանցավ, որպեսզի իթթիհատի մարդագայլերն իրենց ժանիքները խրեին անպաշտպան հայ ժողովրդի մարմնի մեջ, գործադրեին Սալոնիկի ժողովի որոշումները հպատակ ոչ թուրք ազգերի ոչնչացման վերաբերյալ[1]:

Հայերին հալածելու, սոցիալ-քաղաքական ճնշումներն առավել սաստկացնելու, արդեն բացարձակ ցեղասպանության քարոզներ կարդալու պատճառներն այժմ Հայկական բարենորոգումների շուրջ ծավալվող նոր խոսակցություններն էին, որոնք դուրս էին գալիս Եըլդըզ Քյոշքի շրջապարիսպներից և դառնում եվրոպական մայրաքաղաքների քննարկման առարկա[2]:

Բարենորոգում բառից իսկ նյարդայնացած երիտթուրքերը, դեռևս պատերազմը չսկսված, կարողացան տապալել նրա բոլոր նախագծերի գործածությունը: Կ. Պոլսի հայոց պատրիարք Զավեն արք. Եղիայանը, երբ բողոքեց դրա դեմ, պահանջելով ընդհանուր տեսուչների օգնականներ նշանակելու դեպքում, հաշվի առնել ***հավասարության*** սկզբունքները, նորաթուխ, հայատյաց նախարար Թալեաթը, հայտարարեց. «Մենք այնպես չենք հասկանում հավասարության սկզբունքը, ինչպես հա-

[1] ***Ավետիս Փափազյան,*** Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում, Երևան-Լոս Անջելես, 1995, էջ 35:

[2] ***Մ. Ե. Մարտիրոսյան,*** Հայկական բարենորոգումների իրագործման ձախողումը օսմանյան կայսրությունում 1914 թ., «Բանբեր Հայաստանի արխիվների», 1989, №3, էջ 178-179:

յերն են ցանկանում մեկնաբանել: *Դա նշանակում է բոլոր օտտոմանների հավասարություն. ինչի՞ց եք դժգոհում: Դուք ցանկանում էիք Եվրոպայի օգնությամբ ստանալ բարենորոգումներ... Ահա ձեզ բարենորոգումներ»*[1]:

Ճիշտ է նկատվում, որ Բեռլինի վեհաժողովից սկսած, շուրջ երեքուկես տասնամյակ բարենորոգումների կիրառման փափագով տապակվող հայ ժողովուրդը ոչ միայն չտեսավ իր բաղձանքի կատարումը, այլև կանգնեց կոտորածների նախաշեմին, որից միայն մեկ քայլ հետո սկսվեց հայասպանությունը:

Այո՛, երբ շղթայազերծ եղած աշխարհի մեծերը սկսեցին Առաջին աշխարհամարտը, Թալեաթը, Ջեմալը և մյուս պարագլուխները բացահայտ հայտարարում էին այն, որ իրենք մտան պատերազմի մեջ, որպեսզի ազատվեն իրենց վզին փաթաթված նման պարտադրանքներից: «Մենք յոյս ունէինք, որ համաշխարհային պատերազմի կրակի միջից անցնելով,- գրում է Ջեմալ փաշան իր հուշագրութեան մէջ,- մեզ կը յաջողուի ազատուել մեր վզին փաթաթած շատ տհաճ պարտաւորութիւններից, որոնք միմիայն պատրուակ էին մեր ներքին գործերին միջամտելու համար»[2]:

Ահա թե ինչ է դիպուկորեն գրել նաև տվյալ ժամանակի գերմանացի գիտնական-արևելագետ Ժ. Մարկվարտը. «Նոյնիսկ «Սահմանադրութեան» հռչակումից յետոյ էլ օսմանեան քաղաքականութեան հիմնական լոզունգն էր «եթէ չլինեն հայերը, ուրեմն չի լինի նաեւ «հայկական հարցը»: Ատանայի դաժան կոտորածը ցոյց տուեց, որ Երիտթուրքերը, որոնք զարմանալիօրէն Եւրոպայում իրենց համար լիպերալ համբաւ ունենալու հասարակական կարծիք էին ստեղծել, իրենց դաժանութեամբ ոչնչով չզիջեցին մեծ մարդասպան Ապտուլ Համիտին»[3]:

Արևմտահայությանը ցեղասպանության ենթարկելու թուրքերի նախապատրաստական աշխատանքները ժամանակին նկատում էին օսմանյան կայսրությունում նստած ռուս դիվանագետները և անմիջապես այդ մասին ոչ միայն հայտնում էին Պետերբուրգի կաբինետին, այլև երևույթին տալիս էին համապատասխան գնահատականներ: Դեռևս 1912 թ. նոյեմբերի 23-ին Էրզրումի ռուսական հյուպատոսության քարտուղար, արքունի խորհրդական Վիշինսկին, Կովկասի զինվորական օկրուգի շտաբին տեղյակ է պահում, թե. «Սահմանադրություն հայտարարվելուց հետո Թուրքիայում ըստ էության ոչինչ չի փոխվել. փոփոխվել է սոսկ իշխանությունն ինքը, իսկ կարգերն ամբողջովին նույնն են մնացել:

Կարելի է առանց չափազանցության ասել, որ Թուրքիայի արևելյան վիլայեթների հայ բնակչության դրությունը ներկայումս ոչնչով ավելի լավ չէ, քան համիդյան ժամանակներում, այլ ընդհակառակը՝ նույնիսկ ավելի վատ է. առաջ գոնե որևէ իշխանություն կար, իսկ այժմ գավառներում լիակատար անիշխանություն է տիրում: Թերթերը համարյա ամեն օր նորանոր լուրեր են բերում հայ բնակչության նկատմամբ գործադրվող բռնությունների մասին...

Թուրքիայում իմ բազմաթիվ ուղևորությունների ժամանակ ինձ վիճակվել է շատ բան տեսնել, հարկ է եղել նաև շատ խոսել բոլոր դասերի հայերի հետ սկսած հասարակ հողագործ գյուղացիներից ու վերջացրած մտավորական անձանցով, և իմ ողջ տեսած-լսածից ես ստացել եմ սոսկ մեկ տպավորություն, այն, որ այդ ժողովրդի վիճակը, որը *նետված է մոլեռանդ և իրեն թշնամի մուսուլմանների միջև, իրոք սարսափելի է. յուրաքանչյուր ժամ, յուրաքանչյուր րոպե նրանք ստիպված են*

---

[1] *Մ. Ե. Մարտիրոսյան,* նշված աշխատությունը, էջ 180: Տե՛ս նաև **АВПРИ,** Политархив, 1914 г., опись 182, дело 3475, л. 139.

[2] ***Behçet Cemal,*** Cemal Paşa, Hatıralar. 1959, s. 359.

[3] Տե՛ս *Dr. Marquart.* Die Entstehung und Wiederherstellung der Armenischen Nation. Berlin, 1919, S. 45. Տե՛ս նաև *Ավետիս Փափազյան,* նշված աշխատությունը, էջ 35:

դողալ ոչ միայն իրենց գույքի համար, այլև՝ իրենց կյանքի, քանի որ նախապատրաստվող ջարդերի մասին լուրերը երբեք, ըստ էության, Թուրքիայում չեն դադարում: Բնական է, որ այդպիսի պայմաններում ապրելը շատերի ուժից վեր է. ով որ կարող է, արտագաղթում է Թուրքիայից, մնում են լոկ նրանք, ովքեր այս կամ այն պատճառով ի վիճակի չեն արտագաղթել...

Հայկական ջարդերի չափերը չի կարելի անմիջականորեն կոտորածից ընկած զոհերով միայն հաշվել: Անհամեմատ ավելի խորն են ընդգրկում և բնակչության կրճատման վրա ազդում դրանց անուղղակի հետևանքները, որոնք արտահայտվում են ծնելիության և դրա հետևանքով էլ՝ բազում տարիներով բնակչության աճի նվազման մեջ, ի հետևանք ջարդերին մշտապես ուղեկցող ֆիզիկական, հոգևոր և մանավանդ նյութական սպառման ու անկման...»[1]:

1912 թ. դեկտեմբերի 24-ին, Կ. Պոլսի հայոց պատրիարքի և Գր. Զոհրապի թախանձանքներին ընդառաջելով, Գևորգ V կաթողիկոսը Նիկոլայ II-ին գրած նամակն ավարտում է այսպես. «Հայկական հարցը 34 տարի է, ինչ լուծման է դրված եվրոպական դիվանագիտության առաջ, սակայն մինչև օրս մնում է չբավարարված: Եթե հայերը հիմա էլ անտեսվեն, ապա դա հավասարազոր կլինի մի ամբողջ ժողովրդի վերջնական ոչնչացման հանձնելուն...»[2]:

1913 թ. ապրիլի 7-ին Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Ադամովը, Կ. Պոլսի դեսպան Գիրսին գրում էր, թե վիլայեթում կատարված նախապատրաստությունները ուղղված են հայ բնակչությանը կոտորելու ջանքերին: Նա հատկապես շեշտում է, թե ինչ մեթոդներով էին սրվում ազգամիջյան թշնամական փոխհարաբերությունները: «Մեր այժմյան բոլոր դժբախտությունները,- ասել է խանը,- մեր նախկին քրիստոնյա ռայայից են գալիս, որի հանդեպ մենք չափից շատ փափկանկատ եղանք, քանի դեռ նա մեր իշխանության տակ էր: Հիմա չպետք է կրկնել նույն այդ սխալը, քանի դեռ ուշ չէ, մանավանդ որ սահմանադրությունն արդեն հավասարեցրել է հայերին ու մուսուլմաններին: Ես իմ կողմից ձեռք եմ առել անհրաժեշտ միջոցներ և *Բասենի կազայի քրդական բոլոր գյուղերի քրդերին հորդորել եմ այլևս չհապաղել կոտորելու հայերին և նրանց ունեցվածքը թալանելու, այդ նույն խորհրդով դիմում եմ և ձեզ: Բոլոր բեկերը, որոնց հետ ինձ վիճակվել է հանդիպել, չէին կարողանում չհամաձայնել ինձ հետ, ուստի և հուսով եմ, որ դուք էլ կհետևեք նրանց գովելի օրինակին»: Հայերին կոտորելու այսպիսի անթաքույց քարոզը չի կարող իր պտուղները չտալ...»*[3]:

1913 թ. մայիսի 14(27)-ին Կ. Պոլսի ռուսական դեսպան Գիրսը արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովին հեռագրով հաղորդում է. «Մայիսի 7-ին Շիրկովը հեռագրում է, որ սպանություններն ու կողոպուտները անվերջանալի են դառնում: Նա վկայակոչում է հայերի և ասորիների 7 սպանություն և անասունների հափշտակում: Ըստ նրա տեղեկությունների՝ հայերի վիճակը անտանելի է, և նրանք Խիզանի, Երունի ու Թաթիկի գավառներում վախենում են տներից դուրս գալ դաշտերը մշակելու համար: Սարուխան գյուղի հայերը, թվով 72 ծուխ, գնացել են Թաթիկի գավառը, որպեսզի Ռուսաստան գաղթեն, բայց գավառի կայմակամը չի թողել»[4]:

---

[1] **ЦГВИАРИ**, фонд 2000, опись 1, дело 1004, лл. 434-444.

[2] **АВПРИ**, Политархив, дело 3460, л. 35.

[3] **АВПРИ**, Посольство в Константинополе, дело 2684, л. 36-37. Ռուսական արխիվներից քաղված որոշ փաստաթղթեր հրատարակել են *Մ. Գ. Ներսիսյանը* և *Ռ. Գ. Սահակյանը*. տե՛ս «Հայերի ցեղասպանությունը...» ժողովածուի 300-314-րդ էջերում:

[4] **АВПРИ**, Политархив, дело 3461, л. 37.

Մեծ տերությունները պատերազմի հենց առաջին տարում Թուրքիային նախազգուշացնում էին ջարդերի կազմակերպման համար: Սակայն ո՛չ մեծ տերությունների սպառնալիքները և ո՛չ էլ ԱՄՆ-ի դեսպան, մեծ հումանիստ Հենրի Մորգենթաուի գթաշարժ թախանձանքները չկարողացան մեղմացնել հայերի նկատմամբ թուրքերի կիրառած անմարդկային քաղաքականությունը: Ընդհակառակը, երիտթուրքերն ավելի կատաղեցին իրենց արարքների մեջ[1]:

Հարց է ծագում, ո՞րն էր այդ վավերագրի ու նրա առաքողների տված օգուտը հայ ժողովրդին: ***Այդ պահին քիչ:*** Սակայն պատերազմի հաղթական ավարտից հետո, հատկապես Սևրի պայմանագրով բանաձևվեց 230-րդ հոդվածը. որը Թուրքիայից պահանջում էր Անտանտի տերություններին հանձնել հայկական ջարդերի պատասխանատուներին: Դժբախտաբար Սևրի որոշումները թաղվեցին Լոզանի լաբիրինթոսում և կարծես թե մոռացվեց հայերի խնդիրը: ***Այն կրկին հրապարակ եկավ Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո, հատկապես Նյուրնբերգյան և Տոկիոյի որոշումները կազմելու ժամանակ[2]:***

1948 թ. դեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի կոնվենցիան կրկնում է 1915 թ. մայիսի 24-ին արված վերոհիշյալ հայտարարության այն դրույթը, որ ***ցեղասպանությունը հանցագործություն է՝ ուղղված հանուր մարդկության դեմ[3]:*** Այն մտել է այդ փաստաթղթի 5 (գ) և 6 (գ) հոդվածների մեջ և ***կրկնվել բառացիորեն:*** Երևի թուրքերը կարդացել են այդ փաստաթղթերը, վախենում են դրանց գործադրությունից, դրա համար էլ համառությամբ հրաժարվում են ցեղասպանության ճանաչումից: Մեկը հարց տար, թե ձեր հայրերն ու պապերը չվախեցան մեկ ամբողջ ժողովուրդ մորթելուց, դուք վախենում եք նրանց կատարածի համար հաշիվ տալո՞ւց: Իզուր...

Ցեղասպանության ճանաչման մի կարևոր կռվան, ***անժխտելի ապացույց ևս գոյություն ունի:*** 1915 թ. ապրիլի 7-ին Իտալիայի թագավոր Վիկտոր Էմանուելին ուղղած հեռագրին զուգընթաց, Գևորգ Ե Վեհափառը, թերևս, դիմել է նաև ***Հռոմի Բենեդիկտոս ԺԵ*** պապին, նրանից խնդրելով օգնել արևմտահայությանը: Դժբախտաբար այդ գրության մասին մենք խոսում ենք ենթադրաբար, քանի որ հեռագրի բնագիրը մինչև օրս հայտնաբերված չէ: Սակայն մեր եզրակացության հաստատման մասին կան մի շարք, ճիշտ է կողմնակի, բայց և այնպես կարևոր հաստատագրեր.

ա) Նախ Վենետիկի Սուրբ Ղազար կղզում խարսխված ***Մխիթարյան*** հայրենասիրական միաբանությունը (այս տարի լրանում է նրա հիմնադրման 300-ամյակը) չէր կարող չհետաքրքրվել հայ ժողովրդի ճակատագրով և բողոքի իր ձայնը չբարձրացնել կաթոլիկական աշխարհի առջև: Նման պարագայում, Մխիթարյանների ողբասացության ճիչերը պետք է որ առաջինը հասնեին Հռոմի պապին, Վատիկանի հոգևոր կենտրոնին:

բ) Վատիկանը Կ. Պոլսում ուներ պապական նվիրակություն: 1915 թ. Ստամբուլում պապի նվիրակն էր ***Անջելո Մարիա Տոլչին,*** որը կենտրոնին լուրեր էր հաղորդում Թուրքիայում կատարված իրադարձությունների մասին: Այդ նվիրակը չէր կարող լռել սահմռկեցուցիչ այն իրադարձությունների, ցեղասպանության փաստերի մասին, որոնք իրենց ծանրությամբ ցնցել էին ամբողջ քրիստոնյա աշխարհին, հանուր առաջադեմ մարդկությանը:

---

[1] ***Զավեն Մսըրլեան,*** Հայկազեան հայագիտական հանդես, 1997 թ., ժէ հատոր, էջ 122: Տե՛ս նաև U.S.A., Department of State, Foreign Relations of the United States, 1915, Supplement, Washington, D.C., 1928, pp. 981-982:

[2] ***Զավեն Մսըրլեան,*** նշված հանդեսը, էջ 123:

[3] ***Սրմեն Մարության,*** նշված գրքույկը (առաջաբանը), էջ 4:

գ) Հայտնի է նաև, որ Վատիկանի կարգադրությամբ ***Մարիա Տոլչին*** կոչ է արել կաթոլիկապաշտ ավստրիական և գերմանական դեսպաններին, նրանց առաջարկելով միջամտել Թուրքիայի ներքին գործերին և դադարեցնել տալ հայ ժողովրդի ցեղասպանությունը[1]:

դ) Նույն նվիրակը, Վատիկանին հաղորդում է, թե դժբախտաբար ավստրո-գերմանական դեսպանները փաստորեն որևէ ազդեցություն չունեն թուրքական եռապետերի վրա, ուստի հարկավոր է ավելի զորեղ միջոցներ գործադրել:

Հռոմի Բենեդիկտոս XV պապը, մանրամասն տեղեկանալով Թուրքիայում տիրող իրադրությանը, հատկապես ապրիլի 24-ի դեպքերին, 1915 թ. հուլիսի 28-ին կոչով դիմում է պատերազմող կողմերին, առաջարկելով խաղաղ բնակչության նկատմամբ վարվել մարդասիրաբար: Եվ վերջապես 1915 թ. սեպտեմբերի 10-ին, ծեռագիր նամակով, Պապը դիմում է Թուրքիայի Մոհամեդ V Ռեշատ սուլթանին:

1915 թ. հոկտեմբերի 5-ին Անջելո Մարիա Տոլչին այցելեց Բ. Դուռ և այնտեղի քաղաքական գործերի տնօրենին հայտնեց, որ ինքը Հռոմի Պապի կողմից ուղարկված նամակ պետք է հանձնի Մոհամեդ Ե սուլթանին: Մեկշաբաթյա բանակցությունից հետո միայն Հռոմի Պապի պատվիրակին հաջողվեց վերոհիշյալ նամակը հանձնել սուլթանին[2]:

Հայ ժողովրդի ցեղասպանության կանխման նպատակով, պաշտոնական գրագրությունները շարունակում էին առատանալ ինչպես Անտանտի տերությունների ղեկավարության, այնպես էլ չեզոք պետությունների դիվանագիտական կաբինետների միջև: Անշուշտ, այս բնագավառում ամենից գործարարն ու հետևողականը մնում էին Անտանտի տերությունների դիվանագետները[3]:

Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն ճանաչմանն ու դատապարտմանը վերաբերող ուշագրավ աշխատություն է հրապարակել ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Լ. Ա. Բարսեղյանը, որտեղ, հենվելով փաստական առատ ու վավերական նյութերի վրա, ոչ միայն կազմել է դրա ժամանակագրությունը, այլև եղելությանը տվել համապատասխան գնահատականներ: ***Ամբողջովին բաժանելով սույն մենագրության խմբագրի կարծիքը, ավելորդ համարելով նոր աղբյուրների վրա հղումներ կատարելը,*** մեջբերում ենք այդ էջերը ոչինչ չավելացնելով և ոչինչ չպակասեցնելով[4]:

---

[1] ***Զավեն Մսըրլեան,*** Բենեդիկտոս ԺԵ Պապը և Մեծ եղեռնը, Հայկազեան հայագիտական հանդես, ԺԹ հատոր, Պեյրութ, 1999, էջ 141-142:

[2] Այս հատվածում օգտագործված որոշ փաստերը ***կրկնվում են:*** Մենք դա գիտենք, սակայն թողել ենք իրենց տեղերում, որպեսզի ընթերցողը ճիշտ պատկերացում կազմի քննարկվող խնդիրների մասին:

[3] Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի երիտասարդ կոլեկտիվը, պատմագիտության դոկտոր ***Լ. Ա. Բարսեղյանի*** գլխավորությամբ ու խմբագրությամբ, հրատարակել է սույն թեմային վերաբերող մի շարք աշխատություններ: Նշենք դրանցից մի քանիսը. ***Արմեն Մարուքյան,*** Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը Հայոց 1915-1916 թթ. ցեղասպանության մասին, Երևան, 2001: ***Լ. Ա. Բարսեղյան,*** Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն ճանաչման և դատապարտման ժամանակագրություն (1915-2000 թթ.), Երևան, 2001: ***Տիգրան Սարուխանյան,*** Հայոց ցեղասպանության դատապարտումը Մեծ Բրիտանիայի խորհրդարանում (1915-1918 թթ.), Երևան, 2000: ***Լ. Ա. Բարսեղյան,*** Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է Հայոց ցեղասպանությունը, Երևան, 1998: ***Նույնի՝*** Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, Երևան, 2001: ***Տիգրան Զաքարյան,*** Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915-1916 թթ. Հայոց ցեղասպանության մասին, Երևան, 2002: ***Ю. Г. Барсегов,*** Геноцид армян-преступление по международному праву, Москва, 2000.

[4] ***Լ. Ա. Բարսեղյան,*** Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրությունը (1915-2000 թթ.), Երևան, 2001, էջ 15-22:

1915 թ.

- *Հուլիսի 28-ին* Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատում պատասխանելով վիկոնտ Ջեյմս Բրայսի՝ Հայաստանում թուրքերի կողմից քրիստոնյաների սպանության վերաբերյալ հարցին, պատերազմական խորհրդի նախագահ կոմս Գրյուն հայտարարեց, որ արտաքին գործերի նախարարությունում ստացված տեղեկությունները ցույց են տալիս, որ այդ ոճրագործությունները գնալով և՛ թվաքանակով, և՛ վայրագության աստիճանով աճում են: Այդ գործողությունները, հայտարարեց լորդ Գրյուն «և՛ զանգվածային կոտորածը, և՛ բռնագաղթը իրագործվել են հարկադրված վերաբնակեցման պատրվակի ներքո»:

- *Սեպտեմբերի 30-ին և հոկտեմբերի 7-ին* Բեռնի (Շվեյցարիա) «Կենտրոնական սրահում» կազմակերպվեցին հրապարակային դասախոսություններ նվիրված հայ ժողովրդի ողբերգությանը:

- *Հոկտեմբերին* ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով հրատարակվեց շվեյցարացի 110 նշանավոր քաղաքացիների՝ Շվեյցարիայի գերմանական և ռոմանական կանտոնների ճանաչված գիտնականների, լրագրողների ու հասարակական գործիչների հանրահայտ «Կոչը» ի պաշտպանություն հայ ժողովրդի:

- *Հոկտեմբերի 6-ին* Բեռնում (Շվեյցարիա) տեղի ունեցավ Եվրոպայում գործող հայասիրական կազմակերպությունների հիմնադիր առաջին համագումարը:

- *Հոկտեմբերի 6-ին* Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատում հանդես եկավ լորդ Ջեյմս Բրայսը: Նա հայտարարեց. «Անցել է այն ժամանակը, երբ որևէ վնաս կարող է հասցվել հրապարակայնությամբ և որքան ամբողջական հրապարակայնություն տրվի այն իրադարձություններին, որոնք տեղի են ունեցել, այնքան ավելի լավ կլինի, որովհետև այն ձեռք է բերում այդ կոտորածների, եթե դրանք չեն ավարտվել, խափանման գոյություն ունեցող միակ հավանականությունը: Վշտացած եմ ասելու, որ նման կարգի տեղեկությունը, քանի որ հասել է ինձ մի շարք երկրամասերից, գալիս է ցույց տալու, որ բազմաթիվ եղանակներով զոհվածների քանակությունը, որոնց վրա ես կհենվեմ, շատ մեծ է: Այդ թիվը ընդունված է համարել 800 000:

... Գոյություն չունի որևէ պատվիրան իսլամում, որն արդարացնում է այն արյունահեղությունը, որը ոճրագործվեց:

... Ամբողջ ազգը դեռևս բնաջինջ եղած չէ, որքանով վերաբերում է լեռների այս փախստականներին և նրանց, ովքեր փախել են Անդրկովկաս, և ես հուսով եմ, որ մենք բոլորս անկեղծորեն համաձայն ենք, որ ցանկացած ջանք պետք է թափել, որը կարող է թափվել՝ ուղարկելու համար օգնություն այս դժբախտ վերապրածներին, որոնցից հարյուրավորներն ամեն օր տանջամահ են լինում կարիքից և հիվանդությունից: Դա այն ամենն է, ինչ մենք այժմ կարող ենք անել Անգլիայում, թույլ տվեք անել այդ և անել արագորեն»:

- *Հոկտեմբերի 12-ին* Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատում Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար էդվարդ Գրեյը հայտարարեց՝ «Թուրքիայում հայերի կոտորածների և բռնագաղթի խնդրի վերաբերյալ բրիտանական կառավարության տնօրինած ողջ տեղեկատվությունը դարձել է հրապարակային: Այդ ամենի վերաբերյալ կարող է լինել մեկ զգացում՝ սարսափի և վրդովմունքի»:

- *Նոյեմբերի 16-ին* հանդես գալով որպես կառավարության կողմից Համայնքների պալատի անդամների հարցապնդումների պատասխանող Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ լորդ Ռ. Սեսիլը հայտարարեց, որ Թուրքիայի կողմից «ոճիրը կշռադատված է ոչ թե հայ ազգը պատժելու, այլ ոչնչացնելու համար: Դա միակ նպատակն էր, դրա միակ պատճառը»:

- Նոյեմբերի 18-ին Փարիզի «Ամերիկյան ակումբում» կազմակերպվեց հավաք նվիրված հայերի ողբերգության դատապարտմանը:

1916 թ.

- Հունվարի 11-ին Գերմանիայի Ռայխստագում ելույթ ունեցավ պատգամավոր, միջազգային սոցիալիստական շարժման ականավոր գործիչ Կարլ Լիբկնեխտը, որը դիմելով ռայխսկանցլերին՝ հարցրեց արդյոք նա տեղյակ է այն մասին, որ դաշնակից թուրքական կայսրությունում հարյուրավոր և հազարավոր հայ բնակչությունը տեղահանվեց իր բնակության վայրերից և ոչնչացվեց: Նա պահանջեց գերմանական կառավարությունից արգելել նման սարսափների կրկնությունը կենդանի մնացած հայ բնակչության նկատմամբ:

- Փետրվարի 9-ին ԱՄՆ-ի Սենատը ընդունեց թիվ 12 բանաձևը, որով միջնորդում էր ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին հատուկ օր սահմանել հայերի օգնության հիմնադրամներին հանգանակության միջոցով ամերիկացիների կարեկցանքը արտահայտելու համար: Բանաձևում ասվում է

«... Նկատի ունենալով, որ պատերազմի մեջ ներգրավված երկրներում այժմ կան մի քանի հարյուր հազարավոր սննդի, հագուստի և օթևանի կարիք ունեցող հայեր,

նկատի ունենալով, որ նրանցից շատերը ելնելով պետության պատերազմի մեջ գտնվելու հանգամանքից, ստիպված էին թողնել իրենց տները և ունեցվածքը զրկված լինելով տարրական կարիքները հոգալու հնարավորությունից, որը պատճառ էր դառնում քաղցի, հիվանդությունների և անասելի տառապանքների,

նկատի ունենալով, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների ժողովուրդը ցավով ընկալել է այս բազմաթիվ մարդկային էակների սարսափելի իրավիճակը և գրկաբաց պատասխանել է նրանց օգնության խնդրանքին, երբ էլ որ նման խնդրանք հասել է նրանց,

ուստի և Սենատը որոշում է (Ներկայացուցիչների պալատի համաձայնությամբ)... Միացյալ Նահանգների նախագահին հարգալից խնդրել՝ օր սահմանել, որի ընթացքում այս երկրի քաղաքացիները կարող են իրենց կարեկցանքը արտահայտել հանգանակություն կատարելով պատերազմող երկրներում այժմ բացված հայ օգնության հիմնադրամներին»:

- Փետրվարի 9-ին Ռուսաստանի Պետական դումայում հանդես եկավ արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովը, որը հայտարարեց. «Փետրվարի 3-ին ընկավ Էրզրումը... Ինձ դեռևս նախկինում վիճակվել էր ձեր առջև հիշատակել այդ դժբախտ ժողովրդի չլսված տանջանքների մասին: Դաշնակցային Գերմանիայի բարեհաճ աչքի առջև թուրքերը ըստ երևույթին մտադիր են իրագործել հայ բնակչության լիակատար բնաջնջման մասին իրենց վաղեմի երազանքը...»:

- Ապրիլի 9-ին Փարիզի Սորբոնի համալսարանի դահլիճում կայացավ «Մեծարանք Հայաստանին» բազմահազարանոց հավաքը: Ելույթ ունենալով հավաքում, Ֆրանսիայի լուսավորության նախարար Պենլվեն հայտարարեց, որ «... մեկ տարուց ի վեր Հայաստանն արյունաներկ դարձնող կոտորածները գերազանցում են նախորդ ոճիրները՝ թե իրենց չափերով, թե իրենց վայրենությամբ: Գերմանիան կարող է հպարտանալ իր գործով, որն իր քստմնելիությամբ մոռացնել տվեց Լենկ Թեմուրի փառքը»: Նույն հանդեսում, իր բացման խոսքում Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահ Պոլ Դեշանելը խստորեն դատապարտեց թուրք դահիճների կողմից իրականացվող հայ ժողովրդի սպանդը:

- Հուլիսի 29-ին Փարիզում իր գործունեությունը սկսեց «Ֆրանսիա-Հայաս-

տան» ընկերակցությունը, որի վարչության անդամներն էին Ֆրանսիայի կառավարության երկու նախարարներ, սենատորներ և դեպուտատներ: Ընկերակցության պատվավոր նախագահներ ընտրվեցին Ֆրանսիայի նախկին վարչապետ, Սենատի Արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Ժորժ Կլեմանսոն, Ֆրանսիայի պետական նախարար Դենի Քոշենը, Ֆրանսիայի ակադեմիայի անդամ, գրող Անատոլ Ֆրանսը:

- ***Օգոստոսի 31-ին*** Վաշինգտոնում ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը հանդես եկավ մի առանձին հայտարարությամբ այն մասին, որ ընդունելով Սենատի առաջարկությունը 1916 թ. հոկտեմբերի 21-ի շաբաթ և հոկտեմբերի 22-ի կիրակի օրերը նշանակում է հատուկ օրեր, որի ժամանակ Միացյալ Նահանգների քաղաքացիները կարող են իրենց ցանկացած հանգանակությունը կատարել՝ օգնելու սիրիացի և հայ հալածված ժողովուրդներին:

- ***Նոյեմբերի 16-ին*** «Բեռլինի միսիոներական Միության» նախագահ դոկտոր Կարլ Ակսենֆելդը «Դիմում» հղեց Գերմանիայի կանցլեր Բետտման-Հոլվեգին, որտեղ ասվում էր, որ «չեզոք երկրներում Գերմանիայի հասցեին լայնորեն տարածվում են մեղադրանքները այն մասին, որ նա ոչ միայն անվրդով դիտում է, այլև աջակցում է քրիստոնյա մի ողջ ժողովրդի եղեռնի իրագործմանը»:

1917 թ.

- ***Մարտի 29-ին*** Ստոկհոլմում տեղի ունեցավ բազմամարդ միտինգ, որը նվիրված էր Հայոց ցեղասպանության դատապարտմանը: Միտինգի մասնակիցները դատապարտեցին Շվեդիայի կառավարության անտարբեր վերաբերմունքը հայերի նկատմամբ:

- ***Նոյեմբերի 6-ին*** հանդես գալով Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատում, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Արթուր Բալֆուրը հայտարարեց. «Պե՞տք է արդյոք մեզ համար անտարբերության փաստ դառնա այն, որ Հայաստանը պետք է ետ վերադարձվի, ինչպես հարգարժան ջենտլմենները ցանկանում են վերադարձնել նրան իրենց բանաձևով՝ Թուրքիայի իշխանության ներքո: Ես չեմ ցանկանում քանդել իսկական թուրքական համայնքը՝ կազմված թուրքերից, թուրքերին սազական ձևով, թուրքերին կառավարող: Հակառակը, մեր հաստատուն նպատակը ոչ թուրք ազգերին թուրքական իշխանությունից ազատագրելն է:... Ի՞նչն է իմպերիալիստական, ցանկության մեջ՝ տեսնելու Լեհաստանն անկախ, Հայաստանն ազատագրված թուրքերից, էլզաս Լոթարինգիան՝ վերամիացած Ֆրանսիային, տեսնելու, որ Իտալիան ունենալու է իր սեփական ազգը, լեզուն և քաղաքակրթությունն ընդգրկող տարածությունը»:

- ***Դեկտեմբերի 4-ին*** հանդես գալով ԱՄՆ-ի կոնգրեսում, նախագահ Վ. Վիլսոնը հայտարարեց, որ «Մենք հույս ունենք թուրքական կայսրության ժողովուրդների համար ապահովել իրավունք և հնարավորություն՝ իրենց կյանքը դարձնելու անվտանգ, իսկ իրենց ճակատագիրը՝ ապահով ագրեսիաներից ու անարդարությունից, օտարերկրյա արքունիքների ու կուսակցությունների կարգադրություններից»:

- ***Դեկտեմբերի 22-ին*** նախագահ Վ. Վիլսոնը հատուկ հանձնարարական տվեց ԱՄՆ-ի կառավարությանը՝ ուսումնասիրել Հայաստանի հետագա ճակատագրի հետ կապված դաշնակից պետությունների կարծիքը և այդ կապակցությամբ մշակել ԱՄՆ-ի դիրքորոշման հիմնական ուղղությունները:

1918 թ.

- Հունվարի 6-ին «Գերմանա-հայկական Միության» անունից Պաուլ Ռորբախը, էդվարդ Կիրը և Մարտին Ռադեն դիմում հղեցին Գերմանիայի կառավարությանը առաջարկելով Հայաստանի համար ավտոնոմիա:

- Հունվարի 8-ին հրապարակվեց ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի տասնչորս կետերից բաղկացած հայտարարությունը, որոնցից տասներկուերորդը վերաբերում էր հայերին:

- Հունիսի 4-ին Բաթում քաղաքում հաշտության և բարեկամության պայմանագիր կնքվեց օսմանյան կայսերական կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև: Պայմանագրի կարևոր բաժիններից էր հոդված 10-ը, որտեղ ասվում էր. «Պայմանավորվող կողմերից մեկի տարածքի բնակիչները կամ համայնքները, որոնք ունեն սեփականություն և օգտագործման իրավունք սահմանի մյուս կողմում գտնվող անշարժ գույքի նկատմամբ, կարող են օգտագործել դրանք, շահագործել կամ վարձակալության տալ, վարել կամ վաճառել անձամբ կամ վստահված անձանց միջոցով:

Ոչ ոք չի կարող զրկվել այդ անշարժ գույքի նկատմամբ իրեն պատկանող սեփականության իրավունքից այլ կերպ, քան նկատի ունենալով հասարակական շահը և միշտ փոխհատուցմամբ: Ոչ մի արգելք չպետք է հարուցվի բնակիչներին կամ նշված համայնքների ներկայացուցիչներին, երբ նրանք սահմանը կանցնեն՝ ներկայացնելով ճանապարհային թերթիկները, որոնք կտրվեն ըստ բնակավայրի համապատասխան իշխանությունների կողմից և որոնք կօրինականացվեն մյուս կողմի իշխանությունների կողմից: Թեթևացումներ ու հատուկ արտոնություններ կտրվեն սահմանն անցնելու և սահմանային բնակավայրում առևտուր անելու համար»:

- Հուլիսի 31-ին Սայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց գերմանա-ավստրո-հունգարական պատվիրակությունը՝ գեներալ Ֆոն Կրեսի և Կովկասում Ավստրո-Հունգարիայի դեսպան, բարոն Ֆրանկենշտայնի գլխավորությամբ: Հանդիպման ժամանակ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն նրանց փոխանցեց Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կայսրերին ուղղված իր կոնդակները՝ հայերին օգնելու նպատակով:

- Հոկտեմբերի կեսերին ԱՄՆ-ի կոնգրեսական էդուարդ Լիթլը կոնգրես ներկայացրեց թիվ 336 բանաձևը, որի նախագծում ասված էր. «Հայ ժողովուրդն իրավունք ունի ազատ և անկախ լինելու, ելք ունենալով դեպի ծով և տերը լինելու այն քրիստոնեական մշակույթի, որի համար նրա զավակները նահատակվեցին»:

- Նոյեմբերի 4-ին Ստամբուլում բացվեց Թուրքիայի խորհրդարանի հետպատերազմյան գումարման չորրորդ նիստը (առաջին նիստը տեղի ունեցավ 1918 թ. հոկտեմբերի 10-ին): Առաջին անգամ խորհրդարանի ամբիոնից Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո հնչեցին հույն, հայ և թուրք պատգամավորների պաշտոնական հարցադրումները Օսմանյան Թուրքիայում բնակվող հայերի և հույների կոտորածների և խորհրդարանի հայ պատգամավորներ Զոհրապի և Վարդգեսի սպանության հետ կապված մեղավորներին պատժելու մասին: Խորհրդարանի նիստին մասնակցող հայ յոթ պատգամավորները՝ Մատթևոս Նալպանտյանը, Օննիկ Իհսանը, Հովսեփ Մատաթյանը, Արթին Պոշկեզենյանը, Հակոբ Խրլաքյանը, Գեղամ Տեր-Կարապետյանը և Տիգրան Պարսամյանը հանդես եկան Թուրքիայի կառավարությանը ուղղված հարցապնդմամբ՝ պահանջելով բացատրություն տալ, թե նա ինչ վերաբերմունք ունի 1915 թ. մայիսի 14-ին՝ տեղահանության մասին և 1915 թ. սեպտեմբերի 13-ին՝ լքյալ գույքերի մասին կառավարության կողմից ընդունված օրենքների նկատմամբ, և ովքեր են այդ ոճրագործությունների կազմակերպիչներն ու պատասխանատուները:

ՅՈՒՐԻ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՉ ՎԵՍԵԼՈՎՍԿԻ
(1872-1919)

Երբ Փոքր Ասիայի հայ բնակչության գլխին եկող աղետների մասին մենք իմանանք վիպագիրների ու բանաստեղծների երկերից, գուցե, թերևս կասկած ծագի մեր մեջ, թե արդյո՞ք լիովին ճշգրիտ պատկերն են մեզ տալիս այդ գրողները, տվյալ դեպքում չկա՞ն արդյոք չափազանցություններ, նկարագրությունների և բնութագրերի չափազանց միանմանություն, միանգամայն ակամա շեղումներ չե՞ն, արդյոք, իսկական, անգունազարդ իրականությունից: Բայց ավա՜ղ... Այն, ինչ մենք գտնում ենք գրական երկերում, երբեմն ապշեցուցիչ կերպով համընկնում են այն փաստական տվյալների հետ, որոնք բերվում են դիվանագիտական փաստաթղթերում, Կապույտ գրքերում, հյուպատոսների ու դեսպանների զեկույցներում, հետաքննական հանձնախմբերի արձանագրություններում... Երբեմն իսկական, մերկ...

Հանդես գալով խորհրդարանում՝ Տրապիզոնից պատգամավոր թուրք Մեհմետ Էմինը իր ելույթի վերջում հայտարարեց. «Այո՛, պարոններ, ես նույնպես ասում եմ, որ մեր կառավարական անձերը շատ ընտանիքների կանանցով և երեխաներով կոտորեցին և նրանց ունեցվածքը կողոպտեցին: *Որքան հայեր, որ այսօր պակասում են, եթե նկատի ունենանք նրանց բնակչության նախապատերազմյան մեկ միլիոն երկու հարյուր հազար թիվը, որից և պետք է պակասեցնել վերապրողների թիվը, այդ բոլորը ոչնչացվեցին և սպանվեցին և նրանց ունեցվածքն էլ ավարի մատնվեց: Այս մասին և ոչ մի կասկած: Ես էլ նույնպես փափագում եմ և պահանջում պատժել հանցավորներին»:*

- Նոյեմբերի 13-ին Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատում Հայաստանի և Կիլիկիայի շրջաններում տեղի ունեցող իրադարձությունների կապակցությամբ ընդարձակ ելույթ ունեցավ ***Ջեյմս Բրայսը,*** որը խիստ քննադատության ենթարկեց Թուրքիայի կառավարությանը: Նա առանձնահատուկ նշեց. «Ինչպես իրազեկ են Ձերդ պայծառափայլ լորդերը, ներկա թուրքական կառավարությունը ընդգրկում է որոշ քանակությամբ մարդիկ, որոնք եղել են այն ցնցող կոտորածների (որոնք տեղի ունեցան 1915 թվականին) մեղքի գործընկերները: Ձերդ պայծառափայլ լորդերից նրանք, ովքեր ցանկանում են թարմացնել իրենց հիշողությունը, կարող են դիմել Կապույտ գրքին, որը հրատարակվել է Արտաքին գործերի նախարարության կողմից 1916 թվականին, որի մեջ դուք կգտնեք արձանագրությունն այն սարսափելի կոտորածների, որոնք ամենուրեք ծանուցվում են պատմության մեջ, որքան էլ փորձ է կատարվել հավանություն չտալ կամ արդարացնել: Ոչ միայն Թալեաթ փաշան, ոճրագործների մեջ, որոնք այդ պահին ստեղծեցին Միություն և Առաջադիմություն կոմիտեն, ամենաակնառուն, այլև մի շարք անձինք, որոնք դեռևս գոյություն ունեցող թուրքական կառավարության անդամ են, պետք է կրեն այդ կոտորածների մեղքը»:

- Նոյեմբերի 18-ին շարունակվեց Թուրքիայի խորհրդարանի նոյեմբերի 4-ին սկսված նիստը: Ընդարձակ ճառով հանդես գալով խորհրդարանում՝ Հալեպից հայ պատգամավոր Արթին Պոշկեզենյանը հայտարարեց. *«Իմ դիմումնագիրը հետևյալ նպատակներն է հետապնդում. առաջին՝ հանցագործ պաշտոնյաներին և անհատներին պատժելու եղանակների հաստատումը: Երկրորդ. սրա և նրա մոտ գտնվող առևանգված և ստրկացված կանանց և որբերի հավաքագրում: Երրորդ. կառավարության կողմից դրանց կերակրելու կազմակերպում: Չորրորդ. նրանց գույքի և ունեցվածքի վերադարձնելը: Հինգերորդ. նրանց կրած վնասների հատուցումը»:*

- Դեկտեմբերի 9-ին, 11-ին և 12-ին իր նիստերը շարունակեց և դրանով իսկ աշխատանքներն ավարտեց օսմանյան Թուրքիայի վերջին գումարման խորհրդարանը:

- Դեկտեմբերի 10-ին ԱՄՆ սենատոր Հենրի Կաբոտ Լոջը Սենատ ներկայացրեց թիվ 378 բանաձևը, որտեղ առաջարկվում էր Սենատին կարծիք հայտնել, որ *«...Հայաստանը, ներառյալ Թուրքահայաստանի վեց վիլայեթներն ու Կիլիկիան, Ռուսաստանը, պարսկական, ադրբեջանական նահանգների հյուսիսային մասի գավառները պետք է անկախ լինեն և խաղաղության կոնգրեսը միջոցներ կձեռնարկի Հայաստանին օգնելու և անկախ հանրապետություն ստեղծելու համար»*[1]:

Այսպիսով, հայ ժողովրդի ցեղասպանության անժխտելի իրողությունն իր օրերում ճանաչել և դատապարտել են օվկիանոսների երկու ափերում հաստատված, աշխարհի գրեթե բոլոր խոշոր տերությունների ղեկավարները, այդ թվում թագավորներն

[1] *Լ. Ա. Բարսեղյան,* նշված աշխատությունը, էջ 15-22:

ու պրեզիդենտները, արտգործնախարարներն ու դեսպանները, հյուպատոսներն ու փոխհյուպատոսները, լորդերն ու իշխանները: Նրանց թողած գրավոր վկայությունները ժամանակին ընթերցվել են բարձրադիր ատյաններում, հրապարակվել մամուլում, թարգմանաբար գիտական շրջանառության մեջ դրվել բազմաթիվ լեզուներով:

Այո՛, աշխարհն իր ժամանակին պաշտոնապես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում, սակայն, դժբախտաբար, միայն ճանաչեց, միայն բավարարվեց փաստի արձանագրումով: Քաղաքական ակնկալություններից ելնելով, տնտեսական շահերը գերադասելով մի ամբողջ ժողովրդի թափած արյան գետերից՝ եվրոպական մեծերը շուտով մոռացան հայ ժողովրդի անհատակ վիշտը և բարբարոս այդ տերությունից համեղ պատառներ պոկելը գերադասեցին ցեղասպանության պետական մակարդակով դատապարտումից:

Այն պահին մեղավորը Գերմանիան էր, ապա դրան գումարվեցին շահապաշտ Ֆրանսիան ու ավանդական թուրքասեր Միացյալ Թագավորությունը, այսօր էլ Հյուսիսային Ամերիկան: Միևնույն է՝ վաղ թե ապագայում Հայոց ցեղասպանությունը ճանաչվելու է: Այդ պրոցեսին համաձայն են աստիճանաբար լռակյացների շարքերը լքող Արևմուտքի տերությունները, ինչպես, օրինակ, Ֆրանսիան:

Խնդրի լուծման համար առատ փաստեր են թողել նաև թուրքերը պառլամենտական նիստերում արտասանած իրենց ատենախոսություններում, երիտթուրքերի դատավարության պրոցեսում: Քանի որ թուրք ղեկավարները մեզ սպառնում են հակահայկական փաստերի հրապարակումով, դրա համար էլ դիմենք այնպիսի փաստերի վերահրատարակման, որոնք 1919-1920 թվականներին դուրս են եկել իրենց նախորդների շուրթերից:

2. Թուրքական խորհրդարանը դատապարտեց հայկական կոտորածները. օսմանյան դատարանը մահավճիռ կայացրեց երիտթուրք հայասպան ղեկավարության նկատմամբ

Առաջին աշխարհամարտը երկուստեք զավթողական, թալանչիական բնույթ ուներ: Այն վերջացավ գերմանա-թուրքական խմբավորման խայտառակ պարտությամբ, 1918 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին:

Թուրքիայի խնդրանքով, զինադադարի բանակցությունները ծայր առան 1918 թվականի օգոստոսի 30-ին, որոնք ավարտվեցին հոկտեմբերի 30-ին, ***Մուդրոսի*** գրավոր փաստաթղթով: Անգլիայի հետ պայմանավորվածություն ձեռք բերած երիտթուրքական կառավարությունը, պարտված, բարոյալքված, աշխարհի առաջ ցեղասպանի տխրահռչակ համբավ ձեռք բերած վիճակում, ձեռնարկ հանձնվեց Անտանտի տերությունների սրի ողորմածությանը:

Գրեթե մեկ շաբաթվա ընթացքում լռեցին թնդանոթները, դադարեցվեցին բանակների զորաշարժերը, զորացրվեցին շուրջ չորսուկես տարի զենքի ծանրության տակ կքված, հրաշքով կենդանի մնացած զորամիավորումները: Այս դեպքում, շարունակեցին գործի անցնել դիվանագետները, որոնք ***գծագրական դաժան գործիքները ձեռքներին,*** վերածնում էին աշխարհի քարտեզը՝ ելակետ ունենալով ոչ թե անհրաժեշտությունն ու արդարամտությունը, այլ սեփական, կանխամտածված շահերը, որոնց ակնկալիքներով էլ մտել էին արյունաթաթավ այդ բոհեմի հորձանուտները:

Առաջին աշխարհամարտն իր տևականությամբ, ընդգրկումով, երկրագնդի տար-

բեր աշխարհամասերում շարժված զորամիավորումների քանակով, աննախադեպ էր հանուր մարդկության պատմության ընթացքում:

Ռուսաստանը հուլիսի 29-ին հայտարարեց մասնակի, իսկ հուլիսի 30-ին՝ լրիվ զորահավաք: Գերմանիան օգոստոսի 1-ին պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, իսկ օգոստոսի 3-ին՝ Ֆրանսիային: Անգլիան օգոստոսի 4-ին պատերազմ հայտարարեց Գերմանիային: Օգոստոսի 23-ին Գերմանիայի դեմ ելավ Ճապոնիան: Հոկտեմբերի 29-ին ***գերմանա-ավստրիական խմբավորմանը միացավ Թուրքիան:*** Այնուհետև Անտանտի կողմում պատերազմի մեջ մտան Իտալիան (1915-ի մայիսի 23), Ռումինիան (1916-ի օգոստոսի 27), ԱՄՆ (1917-ի ապրիլի 6):

Պատերազմին սկզբում մասնակցում էր 8 պետություն՝ 732 մլն. բնակչությամբ (գաղութներով), պատերազմի վերջում նրա մեջ էին ներքաշված աշխարհի 59 պետություններից 33՝ ավելի քան 1,5 մլրդ. բնակչությամբ (երկրագնդի բնակչության 87%-ը): Պատերազմն ընդգրկել էր Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի ավելի քան 4 մլն. կմ² տարածք: Սկզբում հակառակորդ կողմերը դուրս են բերել 484 դիվիզիա (9747 հզ. մարդ): Պատերազմի ընթացքում զենքի էր կոչվել մոտ 74 մլն. մարդ (Անտանտի երկրներում՝ 48355 հզ. և գերմանական խմբավորման երկրներում՝ 25160 հզ. մարդ): 1917-ի մայիսին հաշվվում էր 889 դիվիզիա (Անտանտ՝ 525, գերմանական խմբավորման պետություններ՝ 364): Անտանտի պետությունների գերակշռությունը գերմանա-ավստրիական խմբավորման նկատմամբ ակնհայտ էր: Սակայն գերմանական զինված ուժերը ունեին ավելի բարձր կազմակերպվածություն և մարտունակություն, ավելի շատ ծանր սպառազինություն, քան հակառակորդ բանակները: Ընդհանուր առմամբ, Գերմանիան ավելի լավ էր նախապատրաստված պատերազմին, քան որևէ այլ պետություն»[1]:

Առաջին աշխարհամարտը տևեց չորս տարի երեք ամիս և 10-ը օր: Պատերազմում սպանվածների թիվը հասավ ***տասը միլիոնի,*** վիրավորներինն ու հաշմանդամներինը՝ ***քսան միլիոնի,*** համաճարակներից և սովից մահացավ ***տասը միլիոն*** մարդ[2]:

Դրանցից Ռուսաստանը կորցրեց 2,3 միլիոն, Գերմանիան՝ 2 միլիոն, Ավստրո-Հունգարիան՝ 1,440 հազար, Ֆրանսիան՝ 1,383 հազար, Անգլիան՝ 744 հազար, Իտալիան՝ 700 հազար, ԱՄՆ-ը՝ 53 հազար մարդ[3]: Պարտված Թուրքիան կորցրեց 325 հազար զինվոր, որը մնացածների համեմատ, զոհերի չնչին թվաքանակ էր կազմում[4]: Փոքրիկ Հայաստանը, դիտարկվելով Անտանտի դաշնակից, իբրև թե պատերազմից «հաղթող» դուրս եկած կողմ, կորցրեց շուրջ ոչ միայն մեկուկես միլիոն ազգաբնակչություն[5], այլև իր տարածքի մեծ մասը՝ և՛ Արևմտյան, և՛ Արևելյան Հայաստաններում:

---

[1] ՀՍՀ. հ. 1, Երևան, 1974, էջ 527:

[2] Նույն տեղում, էջ 529:

[3] «Всемирная история», том VIII, Москва, 1961, стр. 99.

[4] ***Մ. Վ. Արզումանյան,*** Դարավոր գոյամարտ, Երևան, 1989, էջ 566: Տե՛ս նաև ***Мустафа Кемал,*** Путь новой Турции, том I, стр. XXI.

[5] Հետազոտվող խնդրի մասին ստեղծվել են, ճիշտ է փոքրաթիվ, սակայն լրջմիտ հեղինակների, խորաքնին հետազոտություններ: Նշենք դրանցից կարևորները. «Հայերի ցեղասպանությունն ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի»: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ ***Ա. Հ. Փափազյանի,*** Երևան, 1988: Փրոֆ. ***Վահագն Տատրյան,*** Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, Պայքար, 1995: ***Ջ. Կիրակոսյան,*** Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք երկրորդ, Երևան, 1983: ***Հրանդ Գանգրունի,*** Ցեղասպան իթթիհատը (1908-1923), Պեյրութ, 1994: ***Ավետիս Փափազյան,*** Հայոց ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում, Երևան-Լոս Անջելես, 1995:

Այդուհանդերձ, Թուրքիան պարտվեց: 1918 թ. օգոստոսի 30-ին ձեռք բերված համաձայնագիրը, զինադադարի պայմանագրի վերածվեց 1918 թ. հոկտեմբերի 30-ին[1]: Այդ օրը Մեծ Բրիտանիայի և Թուրքիայի միջև ***Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում,*** անգլիական «Ագամեմնոն» զրահանավի վրա, ստորագրվեց պայմանագիր, որը պատմության մեջ մտավ ***Մուդրոսի զինադադար անունով:*** Այն Անտանտի կողմից ստորագրեց Քալթորփը, Թուրքիայի կողմից Ռաուֆը, Հիքմեթ և Սաադուլլա բեյերը:

Զինադադարի առաջին հոդվածով դաշնակիցների առջև ոչ միայն բացվում էին Բոսֆորի և Դարդանելի նեղուցների դարպասները, այլև բռնազավթվում էին դրանք: Անհապաղ զորացրվում էին թուրքական զորքերը (հոդված 5), բացառությամբ չնչին այն զորամիավորումների, որոնք պետք է պաշտպանեին երկրի ներքին կարգն ու արտաքին սահմանները: Հեջազից, Ասիրից, Սիրիայից և Միջագետքի բոլոր կայաններից դուրս բերվող կայազորները հանձնվում էին դաշնակցային հրամանատարությանը: ***«Թուրքական զորքերը մինչև վերջին մարդը դուրս էին բերվում Կիլիկիայից (հոդված 16)»: Հայկական վիլայեթներից (որևէ) մեկում անկարգություններ ծագելու դեպքում,*** դաշնակիցներն իրենց իրավունք են վերապահում դրանց գրավումը (հոդված 24): Դաշնակիցների և Թուրքիայի միջև թշնամական գործողությունները դադարեցվում էին 1918 թ. հոկտեմբերի 31-ից, հինգշաբթի օրվա տեղական ժամանակով ժամը 3-ից (հոդված 25):

Պատմության մեջ կատարվում էր թուրքերի համար անսպասելին: Կրկնվում էին եղելությունները: Զինադադարն ստորագրվում էր մի նավի վրա, որը կրում էր ***Ագամեմնոն*** անունը, այսինքն՝ այն արքայի անունը, որը գլխավորելով հունական բանակը, հաղթական պատերազմից հետո, սպիտակաբաշ երիվարի վրա նստած, մտավ պարտված Տրոյա քաղաքը և ցուցադրեց իր երկրի ուժն ու հզորությունը: Թուրքերը լսել էին նաև, որ 1453 թվականի ***մայիսի 30-ին,*** չորսօրյա բարբարոսական կողոպուտից հետո, ***Մահմուդ Ֆաթիհ*** սուլթանը, նույն գույնի ծիու քառատրոփ շարժով, անցնում էր Բյուզանդիայի հնամենի մայրաքաղաքով, անվանափոխման հրաման արձակում և «ցուցադրում իր ուժն ու հզորությունը»:

1815 թ. մարտի 30-ին, դաշնակիցների զորքերը գլխավորում էր երիտասարդ, արտաքինով գեղեցիկ, Ալեքսանդր Առաջին ցարը, որը հզոր Նապոլեոն Բոնապարտին հաղթելուց հետո, սպիտակաբաշ երիվարը նստած, իբրև «հաղթական Ագամեմնոն» մտնում էր Փարիզ և ուղևորվում, ոչ ավել և ոչ պակաս, քան Ֆրանսիայի կայսեր առաջին տիկնոջ՝ ***Ժոզեֆինայի*** ամառանոցը: Անգլիացիները, պատմության դասերը լավ սերտած լինելով, 1918 թ. հոկտեմբերի 30-ին համանուն գույնի երիվարները նստած, մտան Թուրքիայի մայրաքաղաքը և ազդարարեցին Անտանտի հաղթանակը:

Թուրքերը ահ ու սարսափի մեջ էին: Այդքան հարյուրամյակներում քրիստոնյաների արյունը խմած, մանավանդ հայոց, մասամբ նաև հունական ողբերգություններից հետո, նրանք կարծում էին, որ կկրկնվի այն, ինչ իրենք են բերել քրիստոնյա ժողովուրդների գլխին: Այդ վախն առավել խորացավ, երբ նոյեմբերի 1-ի, լույս 2-ի գիշերը, մարդասպան շնագայլերի յոթը գլխավորները Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Շուքրի և Նազըմ բեյերը, ոստիկանապետեր Պետրեն և Ազմին, գաղտագողի փախուստի դիմեցին:

Գերմանական R-1 մակնիշի հածանավը, նեղուցներով դուրս գալով, ծխածածկույթով մտավ Սև ծով և ուղևորվեց սկզբում դեպի Օդեսա, հետո նաև Գերմանիա:

---

[1] «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», պրոֆ. ***Ջ. Ս. Կիրակոսյանի*** խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 537 - 539:

«Ասիկա առիթ տվավ,- գրում է պրոֆ. Վահագն Տատրյանը,- որ մինչ այդ ահուդողի մատնուած Իթթիհատի հակառակորդները իրենց լռութիւնը փարատելով մամուլի միջոցով ահազանգ հնչեցնեն եւ ազդարարեն կառավարութեան, որ գործի անցնի եւ ձերբակալէ միւս մեղսակիցները, նախքան անոնց ալ փախուստի դիմելը: Այս առթիւ, թերթերը լեցուեցան յօդուածներով, տեղեկատուութիւններով եւ առաջարկներով. Իթթիհատ կուսակցութիւնը եւ այդ կուսակցութեան ապաւինելով չարագործութիւններուն մասնակցող եւ կամ զանոնք հովանաւորող կառավարական եւ վարչական իշխանաւորները անարգանքի սիւնին կը ***քամուէին իբրեւ երկչոտ եւ պատեհապաշտ յանցագործներ, որոնք երկիրը անդունդի եզրին հասցուցած էին եւ հիմա անարգօրէն փախուստի մասին կը մտածէին:***

Բայց այս պարսաւանքները միայն Իթթիհատի հակառակորդ Իթիլաֆ կուսակցութեան վարիչներէն չէին բխեր. ստուար թիւով թուրքեր, ներառեալ ղեկավար տարրեր, որոնք առնուազն հանդուրժողական կեցուածք բռնած էին Իթթիհատի հանդէպ, եւ նոյնիսկ ուրիշ շատեր որոնք կամ համակրած էին անոր կրաւորական կեցուածքով մը, եւ կամ քաջալերած էին այդ կուսակցութեան բռնարարքները, սկսան հրապարակաւ դատապարտել Իթթիհատը եւ իր գերադաս մարմինները: Մէկ կողմէ այս տարբեր աղբիւրներէն կիրարկուած ճնշումները, միւս կողմէ յաղթական Դաշնակիցներու տիրական ներկայութիւնը Կոստանդնուպոլսոյ մէջ, ազդակներ էին որոնք զուգորդուելով ստեղծեցին անհրաժեշտ ենթահողը եւ մթնոլորտը թուրք ջարդարարներու դէմ դատական հետապնդումի գործին ծեռնարկելու նոյնինքն յետ-պատերազմեան թուրք կառավարութեան կողմէ»[1]:

Աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո համաշխարհային հասարակայնությունը առաջին հերթին պահանջեց պատասխանատվության ենթարկել արևմտահայությանը ցեղասպանության ենթարկած թուրք ոճրագործներին: Այդպիսի ***պահանջով հանդես եկան նշանավոր արևելագետներ՝ ֆրանսիացի հնագետ-պատմաբան ժակ դը Մորգանը, գերմանացի հայագետ Յոզեֆ Մարկվարտը:*** Դատապարտող սուր հոդվածներով և աշխատություններով բողոքի ձայն բարձրացրին տարբեր ազգությունների քաղաքական, գիտության և մշակութային ականավոր գործիչներ՝ Յոհաննես Լեփսիուսը, Արմին Վեգները, Մարտին Նիպագեն, Անտուան Մեյեն, Ֆրեդերիկ Մակլերը, Ռընե Պինոնը, Վիկտոր Բերարը, Արնոլդ Թոյնբին, Վալերի Բրյուսովը, Յուրի Վեսելովսկին, Անդրեյ Մանդելշտամը, Հենրի Մորգենթաուն, Հերբերտ Ադամս Գիբբոնսը և շատ ուրիշներ:

Հանդես գալով Մեծ Բրիտանիայի համայնքների պալատում 1918 թ. նոյեմբերի 12-ին՝ Ռայթը անգլիական կառավարությունից պահանջեց, որ դաշնակիցների ներկայացուցիչները Թուրքիայի հետ խաղաղության պայմանները քննարկելիս հատուկ կանգ առնեն հայկական կոտորածների հանցագործներին պատժելու հարցի վրա:

Թուրք գործիչների և պաշտոնյաների մեջ ևս գտնվել են առանձին մարդիկ, որոնք ոչ միայն կողմնակից չեն եղել հայերին կոտորելու հրեշային ծրագրի իրականացմանը, նողկանքով ու ատելությամբ են վերաբերվել տեղի ունեցող վայրագություններին, հրաժարվել են կատարելու կենտրոնական կառավարության՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի գաղտնի հրամանները հայ ժողովրդին տեղահանելու և կոտորելու հարցում (այդպիսիները անմիջապես հեռացվել են պաշտոնից, պատասխանատվության ենթարկվել և նույնիսկ ներքին կար-

[1] Փրոֆ. ***Վահագն Տատրյան,*** Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով. Պայքար, 1995, էջ 5-6:

գով դատապարտվել մահվան), այլև հետագայում ակտիվ գործունեություն են ծավալել կազմակերպելու հանցագործների դատավարությունը[1]:

Գնալով, երիտթուրքերի վզին հագցված մեղադրանքի զսպաշապիկը նեղանում էր: 1918 թ. մայրամուտին «Իթթիհադ» կուսակցությունը, երիտթուրքերը Թուրքիայում հայտարարվեցին օրենքից դուրս[2]: Պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանը շարունակում է. «Եվրոպական հասարակական կարծիքը խիստ հակաերիտթուրքական էր: Ականավոր արևելագետներ՝ գերմանացի Յոզեֆ Մարկվարտը և ֆրանսիացի ժակ դը Մորգանը հրապարակավ պահանջեցին միջազգային տրիբունալի դատին հանձնել հայասպան քաղաքականության գլխավոր հանցագործներին: Գերմանացի գիտնական Յոզեֆ Մարկվարտը 1919-ի հունվարին արտասանած ճառում իր կառավարությունից պահանջեց ջանքեր գործադրել, գտնել Էնվերին, Թալեաթին և մյուս չարագործներին, նրանց հանձնել Անտանտին միջազգային դատարանի միջոցով նրանց դատելու համար:

1919-ի սկզբին թուրքաց կառավարությունն անգլերեն հրապարակեց մի գրություն, որը վերնագրված էր «Թուրք-հայկական հարց. թուրքաց տեսակետը»: Այստեղ խոսվում էր երիտթուրքական պարագլուխների բարբարոսական մեթոդների մասին, նրանց գործողություններն անվանում էին «անխիղճ», «դաժան». խոստովանում էին, որ պետության շահերը պաշտպանելու համար այդպիսի քաղաքականություն վարելու անհրաժեշտություն չկար: «Միության կազմակերպության մեղքը, որը մշակել և մտածված իրականացնում էր ոչնչացման և կողոպուտի այդ ներքին քաղաքականությունը, ակնբախ է: Նրա պարագլուխներն ընկնում են մարդկության ամենամեծ հանցագործների շարքը»:

Գրության հեղինակները համապատասխան փոխհատուցում էին խոստանում երիտթուրքական քաղաքականությունից տուժած հայերին, խոսում էին անհրաժեշտ ժամանակի մասին այդ խնդիրն իրականացնելու համար: Եվ վերջապես ազդարարվում էր, որ «այդ ամենի համար, բոլոր պաշտոնական անձինք, ովքեր գործել են որպես միության կազմակերպության գործակալներ հայերին ոչնչացնելու և կողոպտելու կամպանիայում, արդեն ձերբակալված են և տրված են դատի»: «Մի խոսքով արդարությունը լրիվ գործողության մեջ է դրված»,- ասված էր այնտեղ: «Տեղահանված բնակչությունը վերադառնում է իր տները», կողոպուտից տուժած մարդկանց տրվում են նպաստներ, «առանձնացվում են նշանակալի ֆոնդեր», տուժածների «վիշտն ամոքելու» համար: Կ. Պոլսի տնօրենները գրում էին, որ «***թուրք ժողովուրդն*** իր գլուխը խոնարհում է» հայ ժողովրդի ողբերգության առաջ: «Դա նա անում է տխրությամբ՝ հայ ժողովրդի և ամոթով՝ իր համար: Նա խոստովանում է դա և պարտավորություններ է իրականացնում, որոնք ծագել են այդ իրադրության հետևանքով: Բայց թուրք ժողովուրդը մերժում է որևէ բարոյական պատասխանատվություն, որ կապված է իր անարժան ղեկավարների գործողությունների հետ և նրանց չի ճանաչում»: Այնուհետև ասվում էր, որ «թուրքերն իսկապես սպանել էին հայերին, կոտորածներ կազմակերպել, կողոպտել և ավերել նրանց տները»[3]:

1918 թ. հոկտեմբերի 7-ին ոչ միայն տապալվեց, այլև օրենքից դուրս հայտարար-

---

[1] «Հայերի ցեղասպանությունն ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի»: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները ***Ա. Հ. Փափազյանի,*** Երևան, 1988, էջ 12-13:

[2] ***Ջ. Կիրակոսյան***, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915-ից մինչև մեր օրերը), գիրք երկրորդ, Երևան, 1983, էջ 172: Տես նաև ***Р. Арипов, Н. Мальштейн,*** Щит и меч революции, сб. «Чекисты», Ташкент, 1978, стр. 100.

[3] ***Ջ. Կիրակոսյան,*** նշված աշխատությունը, էջ 172: Տես նաև The Turco-Armenian Question. The Turkish Point of View, Constantinople, 1919, s. 81-84.

վեց Մեհմեդ Թալեաթի տխրահռչակ, հայասպան կառավարությունը: Նորաձևանակ *Մուհամեդ Զ. Վահաեդդինի* կայսերական հրամանով, պետք է կազմվեր նոր կառավարություն՝ իր վարչապետով: Գործին միջամտում էին երկրում դրության տեր դարձած անգլիական էմիսարները: Նրանց թելադրանքով կառավարություն կազմելու առաջարկ ստացավ, Լոնդոնում թուրքական նախկին դեսպան, մեջլիսի անդամ *Թեֆիկ փաշան:* Այս թուրքը դեմ էր մյուս թուրքերին, այսինքն՝ երիտթուրքերին: Այդուհանդերձ, նրան չհաջողվեց նոր կառավարություն կազմել:

1918 թ. հոկտեմբերի 9-ին, նախկին ռազմական նախարար Մահմեդ Իզզեթ փաշան կազմեց մի կառավարություն, որի մեջ մտան մի շարք երևելի երիտթուրքական գործիչներ: Սրանց մեջ էր Ֆեթհի բեյը (ներքին գործերի մինիստր), որը դարձել էր «Թեջադդոտ» կազմակերպության ղեկավար: Սա իթթիհատի նոր անվանումն էր: Մամուլում քննադատություն ծավալվեց Իզզեթ փաշայի դեմ: Նրան մեղադրում էին իթթիհատականների փախուստը կազմակերպելու, հայերից կողոպտված գումարները և թանկարժեք իրերն արտասահման փոխադրելու մեջ («Նոր կյանք», № 107, 3. 2. 1919): 1918-ի դեկտեմբերի 27-ին «Նյու Յորք Թայմսը» հաղորդեց, թե թուրքական պառլամենտը ցրված է, թե Թուրքիայի ներքին գործերի մինիստրը Գերագույն զինվորական դատարան կազմելու վերաբերյալ հաղորդագրություն է հրապարակել: Նույն թերթը մի քանի օր անց (30. 12. 1918) տպագրել էր ԱՄՆ-ի հայկական ազգային խորհրդի նախագահ Միհրան Սվասլիի բողոքը, որտեղ նա անվստահություն էր արտահայտում թուրքական դատարանին և դատավորների նկատմամբ և պահանջում էր դատական պրոցեսը կազմակերպել Անտանտի ներկայացուցիչների մասնակցությամբ: Ընդհանրապես, սկսած 1918-ի հոկտեմբերից, այն բանից հետո, երբ նույն ամսի 7-ին Թալեաթի երիտթուրքական կառավարությունը հրաժարական տվեց, քննադատությունը, վերագնահատումները, դատապարտումները դարձան թուրքական մամուլի գլխավոր զբաղմունքը: Հայկական թեման՝ արևմտահայության տեղահանման ու ոչնչացման խնդիրները, օսմանյան պետության ներսում հայոց խաղացած դերի տարբեր կողմերը քննարկվում էին ամենուրեք: Նախապես Հալեպի, ապա Կոնիայի կուսակալ Ջելալ բեյը «Վագիթ» թերթում պատմել էր հայոց տեղահանության չափազանց կարևոր մանրամասների, իր բռնած դիրքի մասին: Նա գրել է. «Եթե աշխարհի վրա մեր բոլոր թշնամիները իրար միանային մեր դեմ և ուզեին այսպիսի մեծագույն կորուստ պատճառել մեզ, պիտի չկարողանային հաջողել»: «Հանրային հարստության գրեթե քառորդը հայերի ձեռքին էր,- գրում է նա:- Հայերն իրենց ձեռքում ունեին երկրի վաճառահանության և արդյունագործության գրեթե կեսը: Բնաջնջել հայերին համազոր է կայսրության քանդումին, մի կորուստ, որը կարելի պիտի չլինի վերագտնել դարերի ընթացքում»: Ջելալ բեյը իր տեսակետները չէր թաքցրել ոչ կուսակցությունից, ոչ երեսփոխաններից: Բայց ոչ ոք ականջ չէր դրել նրա խորհուրդներին («Ռենեսանս», № 5, 13. 12. 1918):

«Ռենեսանս» թերթը 1918-ի դեկտեմբերի 18-ին (№ 10) տպագրեց «Մորնինգ պոստ» անգլիական թերթին թագաժառանգ իշխան Աբդուլ Մեջիտի տված հարցազրույցի տեքստը: Թագաժառանգը չէր թաքցնում, որ «կոտորածը Թալեաթի և Էնվերի գործն էր», որ «եթե Գերմանիան ուզեր, կարող էր սպանդն արգելել» և այլն, և այլն: Էնվերը թագաժառանգից չէր թաքցրել, որ նրանք բնաջնջման վերաբերյալ «վճռական որոշումներ» էին ունեցել: Թագաժառանգը պատմում էր, թե իբր սուլթանին աղաչել էր միջամտել, բայց ոչինչ չէր ստացվել:

Մամուլի էջերում բացահայտվում էին նոր փաստեր, հրապարակ էին հանվում նոր հանցավորներ: Թուրքական «Սապահ» թերթը մի բաց նամակ էր հղել արդարադատության նախկին մինիստր Փիրիզադի Իբրահիմ բեյին՝ նրան ուղղելով բազմաթիվ

մերկացնող հարցապնդումներ: «Մի՞թե հրոսապետ Թալեաթը չէր, որ քեզ Սալոնիկի կուսակալ նշանակեց և այնտեղից հետ կանչելով արդարադատության մինիստր նշանակեց»[1]:

Համաշխարհային հասարակայնության հետևողական ու ճնշող ազդեցությամբ Թուրքիայում որոշվեց *դատական պրոցես սկսել* հայ ժողովրդի դահճապետների նկատմամբ: Սակայն նախքան դատավարությունը, սուլթան Վահեդդինը հանձնարարեց տարբեր ազգերի պատկանող մեջլիսի երեսփոխաններին թղթածրարներ պատրաստել, լուրեր հավաքել և տրամադրել դատական ատյանին: Կազմվեցին մի քանի իրար հաջորդող հանձնաժողովներ, որոնցից հինգերորդին «բախտ վիճակվեց» քննել *Սաիտ Հալիմի և Թալեաթի* գլխավորած կաբինետների անդամներին՝ նպատակ հետապնդելով պարզել նրանց մեղսակցությունը հայերի ցեղասպանության պրոցեսին[2]:

Հինգերորդ հանձնաժողովի ընձեռած նյութերի հիման վրա երեսփոխանական ժողովը 1918 թ. հոկտեմբերի 10-ին Ստամբուլում գումարեց իր առաջին նիստը, որը նախագահում էր Թալեաթի մտերիմ *Խալիլ (Մենթեշե) բեյը,* իսկ փոխնախագահն էր *Հյուսեյին Ճահիտ (Եալդըն)*[3]*:*

Երկրորդ նիստը կայացավ 1918 թ. նոյեմբերի 4-ին, հաջորդը՝ նոյեմբերի 18-ին:

Այդ նիստի սղագրությունից ամբողջական հատվածներ թարգմանելով թուրքերենից, պրոֆ. Վահագն Տատրյանը բերում է. «Ծանօթ հրապարակագիր եւ Իթթիհատ Կուսակցութեան կիսապաշտօն խօսնակի դեր կատարող Tanin օրաթերթի խմբագիր Հիւսէյին Ճահիտ կը նախագահէր այս նիստին. բացի երեսփոխաններէն, ներկայ էին նաեւ երեք նախարարներ՝ Մուսթաֆա Ռէշիտ փաշա՝ Արտաքին Գործոց նախարար, Մուսթաֆա Արիֆ՝ Ներքին Գործոց նախարար եւ Կրթական նախարար՝ Ռիզա Թէվֆիք: Բաց աստի, ներկայ էր նաեւ Պետական Խորհուրդի նախագահ Շէրիֆ փաշան: Առանց չափազանցութեան կարելի է ըսել, որ Հալէպի երեսփոխան *Արթին Պօշկէզէնեանի ելոյթը,* իր բազմերանգ խոյանքներով եւ միանգամայն սպրդասացութիւններով, գրեթէ տիրապետեց այդ նիստի առաջին մասին եւ իր դրոշմը դրաւ անոր վրայ: Արտաքին Գործոց նախարարը, զգալով կացութեան լրջութիւնը, պահանջեց որ նիստը գաղտնի ըլլայ, բայց ժողովը չընդառաջեց: Բացատրելէ ետք որ ներկայ կառավարութեան առջեւ յոյժ կարեւոր երկու լուծելի հարցեր կան, այսինքն օրէնքի դրութեան վերականգնումը Թուրքիոյ մէջ եւ հաշտութիւն կնքելու հարկադրութիւնը, հայ երեսփոխանը մատը դրաւ իր թուրք պաշտօնակիցներու համար ***անախորժ եւ խռովայոյզ հարց հանդիսացող Մեծ Եղեռնի վրայ, զայն նկատելով իբրեւ կոտտացող վէրք մը. ահա իր խօսքերուն ամփոփումը:***

- Պարոններ, գիտէք որ զինադադար կնքուեցաւ. հաշտութիւն բուրող արեւն ալ հորիզոնին վրայ իր գլուխը բարձրացուց. շուտով յաղթական եւ պարտեալ ազգեր սեղանին շուրջը պիտի բոլորուին: Ես կ'ըսեմ որ մենք պարապ ձեռքերով չերթանք այդ սեղանին գլուխը. մեզի պաշտպանելու, մեր իրաւունքները պահպանելու կարող ներ-

[1] Այս էջերը նույնությամբ քաղում ենք պրոֆ. *Ջ. Կիրակոսյանի* աշխատությունից: Տես *Ջ. Կիրակոսյան,* Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք երկրորդ, էջ 164-165:

[2] Երեսփոխանական ժողովի պատմությունը, գիտական բարեխղճությամբ, թուրքական և եվրոպական սկզբնաղբյուրներով, շարադրել է Հայաստանի ազգային ակադեմիայի պատվավոր ակադեմիկոս *Վահագն Տատրյանը:* Ավելորդ համարելով հմուտ հետազոտողին կրկնելը այստեղ մենք ներկայացնում ենք մի քանի փաստեր միայն, որոնք մեկ անգամ ևս ապացուցում են թուրքերի մեղսակցությունը Հայոց ցեղասպանությանը: Թուրքերը փաստեր են ուզում, մենք էլ թուրքերին փաստեր ենք «տրամադրում»:

[3] Այս և հետագա շարադրանքը մանրամասն տես փրոֆ. *Վահագն Տատրյան,* Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, Պայքար, 1995, էջ 7-10:

կայացուցիչներով զինուելնիս հարկ է. բաց խօսինք: Պարոններ, դուք գիտէք, որ թուրք ազգը այսօր քաղաքական գետնի վրայ եւ քաղաքակիրթ աշխարհի առջեւ ամբաստանեալի դիրքի մը վրայ կը գտնուի: (muttehim mevkiinde), («Ստուած մի արասցէ»-ի ծայներ): Թոյլ տուէք որ բացատրեմ. նախ լսեցէք զիս, յետոյ առարկեցէք, նոյնիսկ ծեծեցէք զիս, եթէ կը փափաքիք («երբէք»-ի ծայներ), բայց մտիկ ըրէք զիս: Այսօր մենք դէմ հանդիման կը գտնուինք մէկ մեծ ոճիրի (bir cinayeti azime), որ Օսմանեան պատմութեան ամենատխուր եւ ամենաարիւնալի մէկ էջը կը ներկայացնէ, երկինք եւ երկիր դղրդացնող այս վիթխարի ոճիրը (yerleri ve gökleri titreten bu cinayeti azime), ինչպէս գիտէք, հայկական կոտորածը, հայկական ողբերգութիւնն է: Ասոր համար թուրք ազգը կ'ամբաստանուի, բայց բուն ամբաստանեալը թուրք ազգը չէ, այլ թուրք կառավարութիւնը, նախորդ վարչակազմն է («պռավօ»-ի ծայներ): Բայց հարց պիտի տրուի, որ ազգը ի՞նչ է, կառավարութիւնը ի՞նչ. միթէ երկուքն ալ նոյն բանը չե՞ն: Այս ժողովին մէջ քանիցս ըսուեցաւ որ ազգ եւ կառավարութիւն նոյն բանն են. ոչ միայն այս ժողովին մէջ, այլ Եւրոպայի ամենաականաւոր մարդոց բերաններէն ալ նոյն խօսքը ելաւ: Սակայն սա սխալ եւ թիւր արտայայտութիւն մըն է. արդարեւ, ազգը ուրիշ բան, կառավարութիւնը ուրիշ բան... ես կը պնդեմ, որ թուրք ազգին ամբաստանութեան տուն տուող այդ հսկայ ոճիրը նախկին վարչակազմին, աւելի ճիշդը չէթական վարչութեան կողմէ գործուած է: Թուրքերուն վիզին նետուած ամբաստանութեան այս շղթային ամենաահաւոր օղակը հայկական ողբերգութեան կ'առնչուի, կեդրոնը գտնուող փոքրիկ խմբակի մը ընել տուած արարքն է ասիկա: Յատուկ Կազմակերպութեան (Teskilâti Mahsusa) նման միաւորներու գործակցութեամբ այդ խմբակի գաւառային ստորադաս պաշտօնեութիւնը գլուխ հանեց այս ոճիրը, որուն գործադրման համար գործի լծուեցան կուսակալներ, փոխ-կուսակալներ (Mutassarrif), շրջանային կառավարիչներ (Kaymakam), գաւառային ոստիկանութեան (Jandarma) հրամանատարներ, ոստիկանական տնօրէններ եւ հասարակ ոստիկաններ»[1]:

Նոյեմբերի 18-ի նիստում բարձրացվում է նաև թուրքական երեսփոխանական ժողովի անդամներ Գրիգոր Զոհրապի, Վարդգեսի, Վանի պատգամավոր Վռամյանի սպանության, նրանց սպանողների ինքնության և պատժի առավելագույն չափին ենթարկելու խնդիրը: Վահագն Տատրյանը շարունակում է. «Ասկէ յետոյ Պօշկէզէնեան կ'անդրադառնայ «տխուր» պարագայի մը, այն է երեսփոխաններ Զօհրապի եւ Վարդգէսի սպանութիւնը, որուն համար երեք երեսփոխաններ դիտողագիր մը տուեր էին ստուգելու համար ոճիրին պայմանները. մէջտեղ ելեր է, որ չէրքէզ Ահմէտ եւ իր ընկերը *(չէթէներու ղեկավար՝ Յիսնապետ Հալիլ.* Վ.Տ.) գործած են այդ ոճիրը:

- Որով,- կը շարունակէ հայ երեսփոխանը,- կասկած չկայ որ վատահամբաւ չէթէներու ըրած գործն է ասիկա: Չէրքէզ Ահմէտ նախընտրած էր ապրիլ Պոլսոյ մէջ. որով հարց կը ծագի թէ ո՞վ ղրկեց այս մարդիկը Ուրֆայի եւ Տիյարպէքիրի (Տիգրանակերտ) շրջանները. անոնք ի՞նչ գործ ունէին այդ տեղերը: Հիմա ուրեմն ես այդ դիտողագրին պիտի կցեմ իմ առաջարկս, այն է կառավարութիւնը այս մարդիկը հոդ ղրկողները թող փնտռէ եւ այդպիսով ոճիրին բուն հեղինակները երեւան հանէ. մեր ընկերներէն *միևնակ Զօհրապը եւ Վարդգէսը չէ որ կոտորուեցան... տակաւին անոնցմէ զատ կան երկու հայ երեսփոխաններ, որոնց ճակատագիրը ինծի դեռ անյայտ կը մնայ (Վանի երեսփոխաններ՝ Կոմս [Վահան Փափազեան] եւ Վռամեան [Օնիկ Դերձակեան] Վ.Տ.):* Բայց պիտի ըսէք որ ի՞նչ իմաստ ունի զբաղիլը այսպիսի մանրամասնութիւններով երբ անդին կայ բուն եւ գլխաւոր հարցը: Ինծի այս մտազբաղումին մղողը ընկերականութեան զգացումն է, անոնք մեր բոլորին պաշտօնա-

[1] Փրոֆ. *Վահագն Տատրյան,* նշված աշխատությունը, էջ 21-22:

կիցներն էին: Կը նկատեմ, որ Զօհրապի եւ Վարդգէսի այս եղերական վախճանին համար հոս մնացող 250 պաշտօնակիցներս բոլորն ալ յոյժ վշտակից են:

Բայց ափսոս, որ մեզմէ ոչ մէկը կրցաւ միջամտել: Պատճա՞ռը. որովհետեւ այդ անհիծեալ չուանը մեր բոլորին լեզուն ըմբերանած էր. դաժան կախաղանը, դամոկլեան սուրի պէս մեր աչքերուն առջեւ ցցուած էր: Ահա այս պատճառով, ես ալ, լռելուս համար անպարտ չ'ըլլալով, կը կարծեմ թէ մեղսակից մըն եմ, եւ բոլոր պաշտօնակիցներուս նոյն պատճառով իսկ կը ներեմ: Գլուխնիդ շատ ուռեցուցի. ամփոփեմ խօսքերս. շունչս հատաւ եւ վիշտս ալ աւելի եւս խօսիլս կը դժուարացնէ:

Հիմա պարոններ, անհրաժեշտ է որ այս ոճիրին մասնակցող պաշտօնեաները պատժուին: Հաշտութեան ժողովը կազմուելու վրայ է: Ինչպէս դիտել տուի, հոն պարապ ձեռքերով չերթանք:

Օսման Սահպ պէյ (Պոլսոյ երեսփոխան).- Այդ ժողովին Վանէն եկող մահմետականներ ալ պիտի երթան: Ալ կը բաւէ (աղմուկ եւ ***իրարանցում, եւ «շարունակել» պոռացող ձայներ):***

Արթին Պօշկէզէնեան (շարունակելով).- Միայն այս հրէշները պատժելով գործը չի լմննար. անոնց թիկունք կանգնող մարդոցմէ կարգ մը ստորին եւ սրիկայ անձեր ալ պէտք է պատժուին եւ վնաս կրողներուն հատուցում պէտք է ընել. արդարեւ ապրանքի պէս հոս հոն բաշխուած անարատ եւ սիրուն կոյսեր կան. նոյնիսկ անոնցմէ ոմանք հոս Պոլսոյ մէջ կարգ մը մարդոց քով կը գտնուին ***(աղմուկ, իրարանցում).*** այդ անմեղ կոյսերը տակաւին ասոր անոր քով կը շարունակեն պահուըտիլ ***(աղմուկ եւ իրարանցում):***

Իհսան պէյ (Մարտին).- Վանէն տարուած մահմետական կիները մոռցա՞ր, մարդ Աստուծոյ: Ամօթ քեզի ***(աղմուկ եւ իրարանցում):***

Արթին Պօշկէզէնեան (շարունակելով).- Այս մարդոց պատժուիլը չի պահանջուիր (կոր). անոնք որոնք (կոյս աղջիկներ կը պահեն իրենց քով) անամօթաբար կը վայելեն որոշ պաշտպանութիւն մը: Ձեր բոլորին մարդասիրութեան եւ արդարամտութեան ոգիին կոչ կ'ընեմ ***(աղմուկ եւ իրարանցում):***

Իլյաս Սամի էֆենտի (Մուշ).- Օրակարգէն դուրս կը խօսիք, եթէ այս նիւթին մասին պիտի խօսինք, դահլիճին իրագործելիք ծրագրին խնդիրը չպիտի կարգաւորուի ***(աղմուկ եւ իրարանցում):***

Արթին Պօշկէզէնեան (շարունակելով).- Հոս երեսփոխանական ժողովի պատուանդանն է. հոս ո՛չ Մուշ է, ոչ ալ Պիթլիս ***(աղմուկ եւ իրարանցում):*** Փառք Աստուծոյ, արդարութեան արեւը ծագեցաւ:

Պարոններ հոս «հօմ սքուլ» անունով վսեմ անգլիական դպրոց մը կայ: Ատկէ շրջանաւարտ կարգ մը կոյսեր, կրթուած աղջիկներ, այսօր կարգ մը քիւրտերու, խուժանի մարդոց գիրկերը պառկած՝ անոնց հաճոյքներուն զոհ կ'երթան: Անոնք տակաւին այդ վիճակին մէջ կը գտնուին. ասոր համար ո՞վ չի լար ***(«այս մարդիկը ովքեր կը պաշտպանեն»-ի ձայներ եւ ժխոր):***

Իլյաս Սամի (Մուշ).- Իրականութիւնը մի ծածկեր. մենք ալ կ'անհիծենք այսպիսի բաներ ընողները ***(ժխոր եւ իրարանցում):***

Արթին Պօշկէզէնեան.- Ես ասոնք ընողը թուրք ազգն է չեմ ըսեր (կոր):

Իլյաս Սամի էֆենտի (Մուշ).- Իրականութիւնը մի ծածկեր. այսօր իմ հայրենիքս արիւնի եւ թշուառութեան մէջ խեղդել տուողը ահա քու այդ ընկեր ըսած Վանի երեսփոխանն է ***(կ'ակնարկուի Վահան Փափազեանի. Վ.Տ.):*** Ասոնք ըսէ:

Արթին Պօշկէզէնեան.- Անիկա ինչո՞ւ դատի չի քաշեցին. անոր դէմ դատաստան պէտք էր ըլլար:

Իլյաս Սամի (Մուշ).- Այս իրողութիւններն ալ բացայայտէ, իրականութիւնը արեւի

պէս արտացոլացուր: Զինեալ վիճակով Ռուսիոյ օգնութեան հասնող երեսփոխանները... *(Հաւանաբար կ'ակնարկուի յատկապէս Կարինի նախկին երեսփոխան Արմէն Գարոյի. Վ.Տ.):*

Արթին Պօշկէզէնեան (շարունակելով).- Այս հսկայ 600 տարուայ պետութիւնը փճացնողները մէջտեղն են. հայրենիքին դաւաճանողները Աստուած թող պատժէ»[1]:

Խորհրդարանական ժողովի նիստերը շարունակվեցին 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Յոթը հոգուց բաղկացած հայ պատգամավորական խումբը, առանց երկնչանքի, սուլթանի նստավայրում, բարձրացնում էր Հայկական եղեռնի խնդիրը, մատնանշում մեղավորներին և պահանջում նախ՝ դրանց պատժել, ապա՝ հատուցում տալ թուրքական յաթաղանին զոհ գնացած արևմտահայությանը:

Գնալով երիտթուրքերի կատարած ցեղասպանությանը վերաբերող գրավոր ապացույցները լեռնակուտակ էին դառնում, տպագրվում մամուլում, կարդացվում մեջլիսի նիստերում, թռուցիկների ծևով, տարածվում Ստամբուլի փողոցներում, բաժանվում մայրաքաղաքում հաստատված եվրոպական դեսպաններին: Ժողովուրդ ու հայրենիք կորցրած հայ մտավորականության կենդանի մնացած վերջին «փշրանքները» փոխվրեժի արտահայտություններ էին, որոնք կամա թե ակամա թուրք ղեկավարությանը հարկադրում էին դատական պրոցեսներ կազմակերպել, դրանով իսկ, իրենց կարծիքով, «փրկել առկա կառավարության, առանց այդ էլ կորցրած հեղինակությունը»:

Շատ համառոտ անդրադառնանք թուրքական այդ վավերագրերի ներկայացմանն ու դատավարության պրոցեսին՝ *նպատակ ունենալով թուրքերի մասին խոսեցնել թուրքերին:*

*
* *

Յուրաքանչյուր օր հեռուստատեսությամբ նայում ենք, ռադիոյով լսում, թուրքական և նույնիսկ եվրոպական մամուլի էջերում կարդում հայոց պետական այրերի, մեր մտավորականության հասցեին հնչող անխիղճ *մեղադրանքներ:* Այսօրվա թուրք ղեկավարությունը, դժբախտաբար, պանթուրքիստական ախտով վարակելով իսլամապաշտ երիտասարդությանը, ոչ միայն չի ընդունում հայասպանության անժխտելի փաստը, այլև մեղադրում է իրենց նախորդների՝ գերանդիով հնձված անմեղ արևմտահայերին, գենոցիդի նոր դրսևորմամբ սպառնում հայ ժողովրդին: Նրանք պատանդներ ունենալով Ստամբուլում՝ Հայոց պատրիարքին հարկադրում են հոգևորականին ոչ պատվաբեր եղանակով արտահայտվել ցեղասպանության մասին, որը *մեր կարծիքով, տուրք է դիվանագիտությանը և միջոց՝ իր հովված հոտի ֆիզիկական գոյության ինքնապաշտպանությանը:*

Հայասպանության մեթոդների և ձևերի գործադրման պրոցեսում, այսօրվա թուրքերը *ոչինչ չեն մոռացել,* քանզի շարունակում են իրենց մայրաքաղաքում, իրենցից մեկ հազարամյակ առաջ հաստատված հայկական համայնքին պատկանող հանրակրթական յոթը դպրոցներում և երեք լիցեյներում սովորող, նույնիսկ փոքրահասակ դպրոցականներին հարկադրել, հրապարակավ ժխտել ցեղասպանության փաստը: Ավելին, այդ անմեղ արարածները պետք է «խոստովանեն», որ կոտորածների մեղավորներն եղել են հայերը և թուրքերն ավելի շատ կորուստներ են ունեցել, քան «անշնորհակալ գյավուրները»:

Թուրքերը սպառնում են բացել իրենց արխիվները, փաստախեղդ անել ցեղասպանության համար հաշիվ պահանջողներիս՝ մոռանալով եղած վավերագրերի գո-

[1] Պրոֆ. *Վահագն Տատրյան,* նշված աշխատությունը, էջ 26-27:

յության փաստը: Դրանով է պայմանավորված մեր անդրադարձը հրապարակված, գիտական լայն շրջանառության մեջ դրված հանրահայտ, բայց իրավաբանորեն շատ կարևոր վավերագրերին: Դիմենք փաստերին:

Երիտթուրքերի դատավարության 1919-1920 թվականների դատական ատյաններ-ի արձանագրությունները, ճիշտ է, փոքր տպաքանակով, բայց և այնպես, ***արաբատառ թուրքերենով*** հրատարակվել են ***«Թաքվիմ վաքայի»***՝ պաշտոնական պարբերականի գրեթե ամենօրյա համարներում՝ իբրև ***հավելված:*** Այդ նյութերը Երևան է տեղափոխել և Հայաստանի արխիվադարանին հանձնել Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանի նախկին շրջանավարտ, եղեռնից հրաշքով փրկված և Ֆրանսիա տեղափոխված Ռուժե (Կարապիս) Զրբաշյանը[1]:

Չափազանց արժեքավոր այդ փաստաթղթերը, արաբատառ թուրքերենից հայերեն-ի է վերածել և գիտական ապարատով հրատարակել վաստակաշատ թուրքագետ Ա. Հ. Փափազյանը, որի, գրքին իբրև ներդիր կցված, արժեքավոր առաջաբանում կարդում ենք. «Առայսօր երիտթուրքերի դատավարության նյութերի առանձին մասեր հրապարակվել են ֆրանսերեն, ռուսերեն և հայերեն լեզուներով: Ֆրանսիացի հեղինակ Ժան-Մարի Կարզուն 1975 թ. հրատարակած իր «Ընդօրինակելի ցեղասպանություն. Հայաստան, 1915» արժեքավոր աշխատության հավելվածում, թուրքերեն բնագրից պատշաճ մակարդակով թարգմանված՝ բերել է Յոզղաթի, Տրապիզոնի և Խարբերդի հայերի տեղահանության և կոտորածների պատասխանատուների դատավարության վճիռները: Երիտթուրքական կառավարության ղեկավարների և «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների դատավարության մեղադրական եզրակացության ռուսերեն թարգմանությունը (ֆրանսերենից) առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվեց ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի և պատմ. գիտ. դոկտոր Ռ. Գ. Սահակյանի կազմած «Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի ժողովածուում, որտեղ որոշ կրճատումներով բերված են նաև Տրապիզոնի և Խարբերդի հայերի տեղահանության ու կոտորածների պատասխանատուների վերաբերյալ կայացված դատավճիռները: Յոզղաթի հայերի տեղահանության և կոտորածի պատասխանատուների դատավճիռը արևմտահայերեն է թարգմանել Գրիկէրը (Գրիգոր Կէրկերյան) «Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը» շահեկան աշխատության մեջ: Գրիկէրը բերել է նաև Յոզղաթի դատաքննությանը վերաբերող մի շարք վավերագրական նյութերի թարգմանություններ՝ թուրքերեն բնագրերով: Դատավարությանը վերաբերող առանձին նյութերի հայերեն (համառոտագրված) թարգմանությունները՝ 1919-1920 թթ. մամուլից քաղված, բերված են նաև Ջ. Ս. Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» աշխատության էջերում:

Ստորև ամբողջությամբ հրապարակվում են բնագրից հայերեն թարգմանված «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների, երիտթուրքական կառավարության ղեկավարների, կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների, պաշտոնյաների դատաքննության նյութերը, որոնք առնչվում են արևմտահայության տեղահանության և կոտորածների հետ: Թարգմանության մեջ չեն ընդգրկված կուսակցության համագումարների, կարգապահական հարցերի, ինչպես նաև պարենային և առևտրի խնդրում տեղի ունեցած չարաշահումներին վերաբերող նյութերը:

Իհարկե, դատաքննության նյութերը ամբողջական չեն, քանի որ հարցաքննու-

---

[1] ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 450, ցուցակ 52: Տե՛ս նաև «Հայերի ցեղասպանությունն ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի», Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ ***Ա. Հ. Փափազյանի,*** Երևան, 1988, էջ 27:

թյունների բոլոր արծանագրությունները չեն հրապարակվել «Թաքվիմ-ի վեքայի»-ի հավելվածներում: Արևմտահայության տեղահանության և կոտորածին վերաբերող վավերագրական նյութերը (հեռագրեր, հրահանգներ, մեղադրյալների նախնական հարցաքննության արձանագրություններ, ականատեսի վկայություններ և այլն) ամփոփված են եղել ռազմական արտակարգ ատյանի 293 թղթապանակներում: Բնական է, որ դրանց ամբողջական հրատարակումը առավել մանրամասն կբացահայտեր երիտթուրքերի գործադրած վայրագությունները»[1]:

1919 թ. հունվարին Թուրքիայի մայրաքաղաքում՝ Անգլիայի օկուպացիոն զորքերի հսկողության ներքո, սուլթան ***Մեհմեդ Զ. Վահեդդինի*** (1918-1922) կայսերական հրովարտակով պիտի սկսվեր հայասպան երիտթուրքերի դատական պրոցեսը: ***Ուինստոն Չերչիլը,*** ականատեսի լավատեղյակությամբ, պատմում է. ***«Զինադադարից հետո, թուրքերն ասում էին. մենք արժանի էինք պատժվելու, բայց մեզ թող պատժե մեր հին բարեկամ Անգլիան*** (ընդգծումները մերն են - Հ. Ղ.)»[2]:

Պրոֆ. Զ. Ս. Կիրակոսյանը շարունակում է. «Կ. Պոլսի «Սաբահ» թերթը 1919-ի հունվարի 31-ին հրապարակեց ձերբակալված իթթիհադական պարագլուխների ցուցակը: Պատասխանատվության կանչվածների մեջ էին Ջավիդը (նախկին ֆինանսների մինիստր, պառլամենտի փոխնախագահ), Շյուքրին (իթթիհադի կենտկոմի գլխավոր քարտուղար), Կարասոն (դեպուտատ Կ. Պոլսից), Ջանփոլադը (նախկին ներքին գործերի մինիստր), Սաբրին (կենտկոմի պատասխանատու քարտուղար), Զիա Գյոք Ալփը (իթթիհադի կենտկոմի անդամ) և բազմաթիվ ուրիշներ:

1919-ի փետրվարի 12-ին, «Փարիզի» վրա հենվելով, «Նյու Յորք Թայմսը» հաղորդում էր թուրքական զինվորական դատարանի աշխատանքի սկսման մասին. «Դիարբեքիրի նահանգապետը առաջինը պետք է պատասխանատվության կանչվեր կոտորածի համար»: Բացելով դատը՝ գլխավոր մեղադրողը խոսում էր աշխարհը սարսռեցրած կոտորածի հեղինակներին պատժելու անհրաժեշտության մասին:

Նախկին մեծ վեզիր Թեվֆիկ փաշան մի իտալական թերթի տված իր հարցազրույցի մեջ («Նյու Յորք Թայմս», 13.3.1919) պահանջեց ստեղծել միջազգային հանձնաժողով, պարզելու և հաստատելու համար հայերի ոչնչացման փաստերը: «Միայն այդ ճանապարհով Եվրոպան կարող է իմանալ ճշմարտությունը: Մենք ոչ միայն չենք ժխտում Հայաստանում տեղի ունեցած ծանր իրադարձությունները, այլև խորապես ցավում ենք դրանց համար: Մենք այժմ դատում ենք նրանց, ովքեր պատասխանատվություն են կրում»:

Էնվերը, Թալեաթը, Ջեմալը և մյուսները հանցագործ էին ճանաչվում ոչ միայն հայկական ջարդերի, այլև Քութ էլ-Ամարայի ճակատամարտում թուրքական բանակին գերի ընկած անգլիացի զինվորների և սպաների նկատմամբ կիրառված գազանությունների համար»[3]:

Ա. Հ. Փափազյանը, հրապարակելով երիտթուրքերի դատավարության փաստաթղթերը, դրանց կից առաջաբանում գրում է. «Երիտթուրքական կառավարության ղեկավարների և «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտկոմի անդամների դատավարությունը սկսվում է 1919 թ. ապրիլի 27-ին Կ. Պոլսում և ընդհատումներով տևում մինչև հունիսի 26-ը: Մայիս ամսին տեղի ունեցած 6 նիստերի ընթացքում հիմնականում հարցաքննության են ենթարկվում «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամները, մեծ վեզիր Սայիդ

---

[1] ***Ա. Հ. Փափազյան,*** նշված աշխատությունը, էջ 26-28:

[2] ***У. Черчилль,*** Мировой кризис, Москва, 1932, стр. 247.

[3] ***Զ. Ս. Կիրակոսյան,*** նշված աշխատությունը, էջ 171: Տես նաև «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1920, 13-ը փետրվարի:

Հալիմ փաշան և մի քանի մինիստրներ: Սակայն անբացատրելի պարագաներով մայիսի 28-ին անգլիական հրամանատարության կողմից 77 հոգի բանտից աքսորվում է Մալթա կղզի և ընդհատվում է դատաքննությունը: Հունիս ամսին մեղադրական նոր ապացույցների հիման վրա շարունակվում է դատաքննությունը: Հունիսյան դատաքննության 7 նիստերում լսվում է պետական պաշտոնական անձանց փոստի և հեռագրական մինիստր Հյուսեյն Հաշիմ բեյի, սենատի նախագահ Ռիֆաթ բեյի, նաև երկրի հոգևոր առաջնորդներ (շեյխ-ուլ-իսլամներ) Էսադ, Հայրի և Մուսա Քյազիմ էֆենդիների դատաքննությունը: Դատավճիռը կայացվում է 1919 թ. հուլիսի 5-ին:

Այս դատաքննությունների ընթացքում հեռակա կարգով մեղադրվում են 11, իսկ դատավարությանը ներկա 20 կուսակցական և պետական բարձրաստիճան գործիչներ:

Հեռակա կարգով դատի տրված մեղադրյալներն էին.

1. Թալեաթ փաշա - ներքին գործերի մինիստր, մեծ վեզիր (1917-1918 թթ.)

2. Էնվեր փաշա - ռազմական մինիստր

3. Ջեմալ փաշա - ծովային մինիստր

4. Բեհաէդդին Շաքիր բեյ - երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի նախագահ

5. Դոկտ. Նազըմ բեյ - կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, հանրակրթական մինիստր, «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի անդամ

6. Ջավիդ բեյ - ֆինանսների մինիստր

7. Սուլեյման էլբիստանի բեյ - հողագործության և առևտրի մինիստր (1915-1917 թթ.)

8. Մուստաֆա Շերեֆ բեյ - հողագործության և առևտրի մինիստր (1917-1918 թթ.)

9. Օսկան էֆենդի - փոստի և հեռագրատան մինիստր (1914-1917 թթ.)

10. Դոկտ. Ռուզուհի էֆենդի - կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ

11. Ազիզ էֆենդի - հասարակական անվտանգության մինիստր, «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի անդամ

Դատարանում ներկա գտնվող մեղադրյալներ՝

1. Սայիդ Հալիմ փաշա - մեծ վեզիր (1913-1916)

2. Միդհատ Շյուքրի բեյ - կուսակցության կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար

3. Ահմեդ Ջեվադ բեյ - Կ. Պոլսի պարետ, «Թեշքիլաթի մահսուսայի» անդամ

4. Աթիֆ բեյ - Անկարայի պատգամավոր, «Թեշքիլաթի մահսուսայի» անդամ

5. Զիա Գյոքալփ - կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ

6. Քյուչյուկ Թալաաթ բեյ - կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ

7. Ռիզա բեյ - կուսակցության կենտրոնական կոմիտեի և «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի անդամ

8. Իբրահիմ բեյ - մեջլիսի նախագահ

9. Հայրի էֆենդի - շեյխ ուլ-իսլամ

10. Մուսա Քյազիմ էֆենդի - շեյխ ուլ-իսլամ

11. Խալիլ էֆենդի - արդարադատության և արտաքին գործերի մինիստր, «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի անդամ

12. Ահմեդ Նեսիմի բեյ - արտաքին գործերի մինիստր (1917-1918)

13. Իսմայիլ Ջանփոլատ բեյ - ներքին գործերի մինիստր (1917-1918 թթ.)

14. Աբբաս Հալիմ փաշա - հասարակական աշխատանքների մինիստր (1915-1917 թթ.)

15. Ալի Մյունիֆ բեյ - հասարակական աշխատանքների մինիստր (1917-1918 թթ.)

16. Շյուքրի բեյ - հանրակրթական մինիստր, «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի անդամ
17. Քեմալ բեյ - պարենավորման մինիստր, կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ
18. Հյուսեյն Հաշիմ բեյ - փոստի և հեռագրատան մինիստր (1917-1918 թթ.)
19. Ռիֆաթ բեյ - սենատի նախագահ
20. Մեհմեդ էսադ էֆենդի - շեյխ ուլ-իսլամ[1]

Ա. Հ. Փափազյանը, ձեռքի տակ ունենալով արաբատառ թուրքերենով գրված մի շարք այլ վավերագրեր, անում է ուշագրավ մի շարք եզրահանգումներ, որոնցից մեջբերենք մի քանիսը: Նա գրում է. «Ըստ դատաքննության կարգի, հանձնաժողովի նախագահ, գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշան առաջին հերթին հաստատում է մեղադրյալների ինքնությունը, ինչպես նաև նրանց դատապաշտպանների առկայության հարցը: Միևնույն ժամանակ հայտարարում է, որ ռազմական արտակարգ ատյաններում մեղադրյալների պաշտպանության համար օրենքը չի նախատեսում դատավարության ընթացքում դատապաշտպանների ներկայությունը: Դատական քարտուղար Շեֆիկ բեյը ընթերցում է մեղադրական եզրակացությունը: Միևնույն ժամանակ քրեական օրենսգրքի 372-րդ հոդվածի հիման վրա տրվում է գլխավոր դատախազ Մուստաֆա Նազմի ***փաշայի հավանությունը բացականերին հեռակա կարգով դատելու մասին:*** Մուստաֆա Նազմի փաշան, նկատի ունենալով նաև թե՛ դատասկզբում և թե՛ ընթացքում դատապաշտպանների առարկություններն այն մասին, որ «մինիստրների և այլ պետական բարձր պաշտոնյաների հետ առնչվող դատական հարցերը քննարկման են ենթակա ոչ թե ռազմական արտակարգ ատյանում, այլ գերագույն դատարանում», իր ելույթում նշում է, որ մեղադրական եզրակացության մեջ թվարկված հանցագործությունները կատարվել են ոչ թե կառավարության անունից, այլ կուսակցության կենտրոնական կոմիտեի ու նրա պլենումների որոշումներից ելնելով:

Առաջին և հաջորդ մեղադրական եզրակացություններում բերված փաստաթղթերը՝ ծածկագիր հեռագրերը, նամակները, վկայում են, որ արևմտահայության տեղահանություններն ու կոտորածները ռազմական կամ կարգապահական միջոցառում չեն եղել, սահմանափակ կամ տեղական բնույթ չեն կրել, այլ եղել են կանխամտածված և իրականացվել են բացարձակապես կուսակցության կենտրոնական կոմիտեի նախածեռնությամբ, հատուկ կենտրոնի հրահանգներով ու գաղտնի հրամաններով: Մեղադրական եզրակացություններում և դատական նիստերի ընթացքում հիմնական շեշտը դրվում է արևմտահայության կոտորածի վրա:

Կովկասյան ճակատի երրորդ բանակի նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Վեհիբ փաշան դատաքննությանը ներկայացրած իր վկայության մեջ այդ մասին հայտնում է, որ հայերի բնաջնջման և ունեցվածքի կողոպտման հարցը վճռվել է «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից, որ երրորդ բանակի շրջակայքում արնախում հրոսակախմբերի կազմակերպողն ու ղեկավարողը Բեհաէդդին Շաքիր բեյն է:

Իսկ ներքին գործերի մինիստրության հատուկ գրասենյակի պետ Իհսան բեյը նույնպես վկայում է, որ երբ ինքը Քիլիսի կայմակամն էր, Ստամբուլից Հալեպ գործուղված Աբդուլլահադ Նուրի բեյը հայտարարել է, որ «[հայերի] տեղահանման հիմնական նպատակը նրանց ոչնչացումն է», որ ինքն այդ հարցով կապի մեջ մտնելով Թալաաթ բեյի հետ, նրանից ուղղակի ստացել է կոտորելու հրաման, որ նա [Թալաաթը] ձգտել է համոզել իրեն, որ դա է երկրի փրկությունը:

[1] *Ա. Հ. Փափազյան,* նշված աշխատությունը, էջ 14-15:

Հետագայում, իր հուշագրության մեջ նույնիսկ Թալաաթն ընդունում է, որ հայերի տեղահանության ժամանակ տեղի են ունեցել բռնություններ և կոտորածներ: Թալաաթը, ինչպես վկայում է Հալիդե էդիբը, խոստովանել է իր անմարդկային արարքը և արդարացում է որոնել ազգային շահերի տեսակետից համոզված լինելով, «որ այնքան ժամանակ, երբ մի ազգ իր սեփական շահերի համար անում է ամեն ինչ, և հաջողվում է, աշխարհն ընդունում է այդ: Ես պատրաստ եմ մեռնելու այն բանի համար, ինչ կատարեցի և ես գիտեմ, որ կմեռնեմ դրա համար»,- հայտարարել է նա:

Դատավարության 2-րդ, 5-րդ և 6-րդ նիստերում հարցաքննության է ենթարկվում արևմտահայության կոտորածն իրականացնող «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն, որը կյանքի էր կոչվել «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների կողմից հատուկ որոշմամբ: Դատաքննությունը բացահայտում է, որ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հանցագործ գործունեությանը մասնակցություն են ունեցել կուսակցության կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Միդհատ Շյուքրի բեյը, անդամներ Բեհաէդդին Շաքիրը, դոկտ. Նազըմը, Ռիզա բեյը, Անկարայի պատգամավոր Աթիֆ բեյը, հանրակրթական մինիստր Շյուքրի բեյը, մեջլիսի նախագահ Խալիլը, հասարակական անվտանգության մինիստր Ազիզ բեյը, Կ. Պոլսի պարետ Ջեվադը: Հանցագործներին ղեկավարել է ներքին գործերի մինիստր Թալաաթը»[1]:

Պրոֆ. Ջ. Կիրակոսյանը, բազմակողմանի ուսումնասիրելով երիտթուրքերի դատավարության պրոցեսի պատմությունը, առանձնակի ուշադրության արժանացնելով 1919 թ. մարտի 8-ի դատական նիստի արձանագրությունները, թուրքական սկզբնաղբյուրներից քաղում է ներքոհիշյալ փաստերը: Մեջբերենք դրանք, առանց փոփոխության, որպեսզի թուրքերը չասեն, թե մենք խմբագրական միջամտություն ենք կատարել:

Այդ նիստում արձանագրվել է. «Դատարանի նախագահ Մուստաֆա Նազըմ փաշա:

Անդամներ՝ բրիգադային գեներալ Ջեքի փաշա, բրիգադային գեներալ Մուստաֆա փաշա, բրիգադային գեներալ Ալի Նազըմ փաշա, գնդապետ Ռաջեբ Ֆերդի բեյ, արձանագրող քարտուղար:

Մեղադրյալներ՝ Մուսա Քյազիմ էֆենդի, նախկին Շեյխ-ուլ-իսլամ, Էսադ էֆենդի (սենատի նախկին նախագահ), Հուսեյն Հաշեմ բեյ (փոստի, հեռագրի և հեռախոսի ծառայության նախկին մինիստր):

Մեղադրյալներ, որոնք դատվում են ի բացակայություն. Թալեաթ փաշա (նախկին մեծ վեզիր), Էնվեր էֆենդի (նախկին ռազմական մինիստր), Ջեմալ էֆենդի (նավատորմի նախկին մինիստր), դոկտոր Նազըմ բեյ (հասարակական կրթության նախկին մինիստր), Ջավիդ բեյ (ֆինանսների նախկին մինիստր), Ոսկան էֆենդի (փոստի, հեռագրի և հեռախոսի ծառայության նախկին մինիստր), Սուլեյման էլ Բուստանի էֆենդի (առևտրի և գյուղատնտեսության նախկին մինիստր), Մուստաֆա Շերիֆ բեյ (առևտրի և գյուղատնտեսության նախկին մինիստր):

Դատավճիռ

«Դատարանը ուսումնասիրեց և քննարկեց մեղադրյալների հետ կապված բոլոր նյութերն ու փաստաթղթերը: Քանի որ մեղադրյալները և նրանց փաստաբանները մերժում էին որևէ մեղադրանք և իրենց մեղավոր չէին ճանաչում, քանի որ դատախազը իր ***1919-ի մայիսի 2-ի, 20-ի և 22-ի, հունիսի 8-ի, 10-ի և 25-ի մեղադրական ակտով ցույց տվեց,*** որ «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը (այժմ

[1] *Ա. Հ. Փափազյան,* նշված աշխատությունը, էջ 16-17:

լուծարքի ենթարկված) մեղավոր է եղել բազմաթիվ հանցանքների համար, որ նրա ղեկավարները հանդիսացել են այդ մեղքերի հեղինակները, և որ նրանք պետք է պատժվեն.

Դատարանը որոշում է, որ մեղադրանքները պետք է վերաբերեն նախ և առաջ այդ կազմակերպությանը. դատարանն արձանագրում է, որ այդ կազմակերպության ղեկավարներն այլևս չունեն այն հայրենասիրական զգացումները, որ նրանց հատուկ էին հեղափոխությունից առաջ»:

Այնուհետև դատարանը ցույց էր տալիս 1908 թվականի հեղափոխական հեղաշրջման առաջադիմական և անհրաժեշտ բնույթը, մեղադրում համիդյան շրջանի «սխալները», որպեսզի ցույց տար հասարակական կարծիքի մեջ տեղի ունեցած այն հուսախաբությունը, որն արդյունք էր երիտթուրքերի անհաջողության Լիբիայում և Բալկաններում, ներքին կյանքը բարելավելու անկարողության և այլն, դատարանը փաստերով ցույց էր տալիս, որ ազատության և խաղաղ կյանքի հույսերն ի դերև ելան:

Դատարանը երիտթուրք պարագլուխներին մեղադրում էր ինքնագլուխ որոշումներ ընդունելու մեջ, որոնք հակասում էին երկրի և ժողովրդի շահերին, նրանց մեղադրում էր անօրեն գործողությունների մեջ՝ մինիստրների փոփոխում, այնպիսի քայլերի իրագործում, որոնք հիշեցնում էին Համիդի շրջանի գործողությունները:

Դատարանը արձանագրում էր, որ ոչ մահմեդական ժողովուրդներից հատկապես դժգոհ էին հայերը, որոնք եկան այն եզրակացության, որ սխալվել են հավատալով սահմանադրական կառավարության պարգևելիք խաղաղությանն ու արդարությանը և կանգնեցին իրենց նախկին ազգային ձգտումների դիրքի վրա: Օսմանյան միասնությանը հասցված հարվածի մեղքը դրվում էր իթթիհադի վրա:

Հետաքրքրական է, որ մեղադրյալների փաստաբանները երիտթուրքերի կատարած հանցանքները փորձում էին բացատրել երկրում մեկ կուսակցության ռեժիմով:

Դատարանն իր առաջադրած մեղադրանքներն ամփոփել էր հինգ կետերում.

1. Տրապիզոնում, Յոզգաթում և Բողազլյանում կատարված կոտորածները պլանավորվել և իրականացվել են «Միություն և առաջադիմություն» կոմիտեի պարագլուխների կողմից: Նույնիսկ, եթե նրանցից ոմանք պնդում էին, թե կոտորածի մասին տեղեկացել են միայն postfactum, դատարանը նրանց մեղադրում էր այն բանի համար, որ տեղեկանալով կոտորածների մասին, նրանք չէին փորձել խոչընդոտել դրանց, պատժել հեղինակներին:

2. Ինչպես հաստատվեց գրավոր հայտարարություններից, նախկին մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան փորձել էր իր մոտ հրավիրել երիտթուրքերի պարագլուխներին և համոզել նրանց, որ Թուրքիայի համար վտանգավոր կլինի մասնակցել պատերազմին, որ անհրաժեշտ է չեզոքություն պահպանել: Նրա տեսակետը մերժվեց, և Թուրքիան մխրճվեց պատերազմի հորձանուտը: Դատարանում երիտթուրքական ներեսփոխան Ռիզա բեյը խոստովանեց, որ մինչև պատերազմի հռչակումը *ինքը Տրապիզոնի վրայով Ռուսաստանի տերիտորիան ողողում էր բանդաներով:*

Դատարանը արձանագրում էր այն փաստը, որ Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո ֆինանսների մինիստր Ջավիդ բեյը, հասարակական աշխատանքների մինիստր Չուրուկ Սուլու Մահմադ փաշան, առևտրի մինիստր Բուստանին հրաժարական տվին ի նշան բողոքի, որ առանց կառավարության որոշման Թուրքիան ներքաշվել էր պատերազմի մեջ:

3. Դատարանը մեղադրում էր իթթիհադի ղեկավարությանը նախկին մեծ վեզիրին ռազմական մինիստրի պաշտոնից ազատելու մեջ:

4. Դատարանը արձանագրում էր Կ. Պոլսից դեպուտատ, երիտթուրքական ղեկա-

վար գործիչ Քեմալ բեյի կողմից պաշտոնը չարաշահելու և սպեկուլյացիայով զբաղվելու փաստը:

Դատարանն առանձնակի հետևողականությամբ պարզում էր և դատապարտում այն փաստերը, որոնք ցույց էին տալիս, որ երիտթուրքերի կուսակցությունը դիմազրկում էր կառավարությանը, կատարում նրա դերը: Իթթիհադը մեղադրվում էր սահմանադրությունը ոտնահարելու մեջ:

5. Շեյխ-ուլ-Իսլամ Մուսա Քյազիմ էֆենդին մեղադրվում էր երկրի «արդարադատությունը» իթթիհադին հանձնելու մեջ: Նա խոստովանում էր, որ իրավազուրկ էր դարձել ու ամեն անգամ պատասխանում էր. «Մի հարցրեք իմ կարծիքը: Կուսակցությունն ուզում է այդ և դա այդպես պետք է լինի»:

Դատարանն առանց այլևայլության որպես սկզբունքային մեղավորներ մեղավոր ճանաչեց

Թալեաթին, ի բացակայություն
Էնվերին, »
Ջեմալին, »
Դոկտոր Նազըմին »

նաև Ջավիդ բեյին,

Մուստաֆա Շերիֆ բեյին (առևտրի և գյուղատնտեսության մինիստրին) նույնպես ի բացակայություն:

Շեյխ-ուլ-Իսլամը Մուսա Քյազիմ էֆենդին ամբաստանվում էր կրոնը իթթիհադի նպատակներին ծառայեցնելու, նրա հետ գործակցելու մեջ: Նա նույնպես մեղավոր էր ճանաչվում:

Մեղադրանքի հիմքում դրվում էր քրեական օրենսդրության 45-րդ հոդվածը և 55-րդ հոդվածի վերջին պարագրաֆը: Ըստ այդ պարագրաֆի վերը հիշատակված անձինք մեղադրվում էին սահմանադրությունը ոտնահարելու մեջ և դատապարտվում էին մահվան (Թալեաթ, Էնվեր, Ջեմալ, դոկտոր Նազըմ):

1919-ի հուլիսի 13-ին «Նյու Յորք Թայմսը» հաղորդեց, որ «Թուրքիան դատապարտում է ռազմական ժամանակի իր պարագլուխներին», որ զինվորական տրիբունալը մահվան է դատապարտել Էնվեր փաշային, Թալեաթ փաշային և Ջեմալ փաշային: «Երեքն էլ փախուստի մեջ են»: Թերթը հաղորդում էր, որ Ջավիդ բեյը և մի քանի ուրիշներ (այդ թվում նախկին Շեյխ-ուլ-Իսլամը) դատապարտվել են 15 տարվա տաժանակրության»[1]:

Երիտթուրքերի դատական ատյանի արաբատառ թուրքերենով կազմված արձանագրությունների հմուտ թարգմանիչ Ա. Հ. Փափազյանը, գրքի սկավէջ, սակայն արժեքավոր ու արժեքավորող առաջաբանում անդրադառնում է 1919 թ. ***հունիսի 21-ի, 23-ի և 28-ի նիստերին:*** Այդ նիստերում հեռակա կարգով դատապարտվել են Մալթա կղզին աքսորված մեղադրյալները, ինչպես նաև այլ հանցագործներ, թվով 36 անձնավորություններ.

Ահա նրանց ոչ լրիվ անվանաշարը.

1. Ավնի բեյ - կուսակցության Մանիսայի պատասխանատու քարտուղար

2. Հասան Սելահեդդին բեյ - Վերակազմյալ կուսակցության Բեյօղլուի պատասխանատու քարտուղար

3. Հիլմի բեյ - Անկարայի պատգամավոր

---

[1] *Ջ. Կիրակոսյան,* Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915-ից մինչև մեր օրերը), գիրք երկրորդ, Երևան, 1983, էջ 203-207:

4. Միդհատ բեյ - կուսակցության Բալուի պատասխանատու քարտուղար

5. Բեսիմ Ջուհդի բեյ - կուսակցության էսկիշեհիրի պատասխանատու քարտուղար

6. Մեհմեդ Ջեմալ բեյ - կուսակցության Հալեպի պատասխանատու քարտուղար

7. Աղաօղլու Ահմեդ - Կարահիսարի պատգամավոր

8. Դոկտ. Ահմեդ Միդհատ բեյ - կուսակցության Բրուսայի պատասխանատու քարտուղար

9. Մումթազ բեյ - Սուարիի կայմակամ

10. Հասան Ֆեհմի բեյ - Սինոպի պատգամավոր

11. Սաբրի բեյ - Սարուխանի պատգամավոր և Վերակազմյալ կուսակցության անդամ

12. Ջեվդեթ բեյ - կուսակցության Միրգունի պատասխանատու քարտուղարի տեղակալ

13. Սելահեդդին Ջիմջոզ - Կ. Պոլսի պատգամավոր

14. Հյուսեյն Թոսուն - էրզրումի պատգամավոր և ազգային գործակալության տնօրեն

15. Հասան Նամըք բեյ - կուսակցության Սալոնիկի պատասխանատու քարտուղար, Ստամբուլի բանկի ներկայացուցիչ

16. Ալի Ռիզա - կուսակցության Բրուսայի պատասխանատու քարտուղար

17. Աբդուլ Քադիր - կուսակցության Կոնիայի պատասխանատու քարտուղարի տեղակալ

18. Թոտորաքի բեյ - Կոնիայի գյուղատնտեսության տեսուչ

19. Սամիհ Ռիֆաթ բեյ - Կոնիայի վալի

20. Սադեդդին բեյ - Կոնիայի ոստիկանության պետ

21. Ֆերիդ բեյ - կուսակցության Կոնիայի ներկայացուցիչ

22. Ֆեհմի բեյ - Ակշեհիրի Ջիհանբեյլի Նահիեի կառավարիչ

23. Մյուֆթի զադե Քյամիլ բեյ - Ակշեհիրի վալի

24. Հասան Բասրի բեյ - Ակշեհիրի ոստիկանապետի տեղակալ

25. Համիդ բեյ - կուսակցության Ադաբազարի ներկայացուցիչ

26. Հյուսեյն Նեջատի բեյ - Հալեպի շրջանի չեթեների առաջնորդ

27. Ղանի բեյ - կուսակցության Սիվասի ներկայացուցիչ

28. Մյուֆթի Մեհմեդ Ալի - կուսակցության Բոլվադինի ներկայացուցիչ

29. Հաջի Աթա բեյ - կուսակցության Բոլվադինի ներկայացուցիչ

30. Կարա կադը Հասան - կուսակցության Բոլվադինի ներկայացուցիչ

31. Աբդուլ Ղանի բեյ - կուսակցության էդիրնեի ներկայացուցիչ[1]

Այս պատմությունը երկար է և անպատվաբեր թե՛ դատապարտված թուրքերին, թե՛ նրանց թուրք կենսագիրներին և թե՛ նաև հայ պատմաբաններիս: Անպատվաբեր է, քանզի անարժան, մարդկության կողմից նողկանքի դատապարտված այդ անձնավորությունների անունները գրվում են պատմության էջերում: ***Հարկադրված է արված մեր նախորդների, ինչպես նաև մեր կողմից, որպեսզի խոստովանենք, որ մեր կողմից հարկադրական քայլեր են դրանք, որպեսզի կարողանանք թուրքերի լեզվով, թուրքերին պատասխան տանք, հույս ունենալով, որ փաստերի ծանրության տակ ցեղասպանություն կատարողների այսօրվա սերնդին կհարկադրենք կամ կհամոզենք ճանաչել ճշմարտությունը:***

[1] *Ա. Հ. Փափազյան*, Հայերի ցեղասպանությունը..., էջ 21-23:

Գլուխ յոթերորդ

Հայ ժողովրդի ցեղասպանությունը ճանաչել և դատապարտել են աշխարհի քսաներեք պետությունները

Քսանմեկերորդ դարը հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հարյուրամյակ է: Մենք համոզված ենք, որ այդ հաղթարշավը առաջիկայում նոր ու հուժկու թափ կստանա և քաղաքակիրթ մարդկությունը, հերթականությամբ ոչ միայն կհրապարակի օրենքներ, այլև Թուրքիային և թուրքերին կհարկադրի ընդունել իրենց նախորդների կատարած հայասպանությունը և փոխհատուցել այն ինչին արժանի է հայ ժողովուրդը: Հեռու չէ այն օրը, երբ Հայ դատի հանձնախմբի, Հայոց ցեղասպանության քանգարան-ինստիտուտի կոլեկտիվի առաջնորդությամբ, եղեռնից հրաշքով փրկվածների զավակները, կգնան Արևմտյան Հայաստան ոչ միայն իբրև զբոսաշրջիկներ, այլև կորցրած հայրենիքի իսկական տերեր:

Մեր ժամանակներում հայ ժողովրդի ցեղասպանության ճանաչման և դատապարտման վերաբերյալ հետաքրքրությունը գնալով ուժեղանում է: Դժբախտաբար, առայսօր դեռևս սակավաթիվ պետություններ են ճանաչել ցեղասպանությունը: Դրանցից են ***Ռուսաստանի Պետական դուման և Ֆրանսիան,*** որոնք ճանաչել են հայասպանությունը: Բերենք օրենքները.

«Հայաստան» օրաթերթի 1995 թ. ապրիլի 18-ի համարում կարդում ենք.

Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործում նոր, նշանակալի քայլ կատարվեց: Ռուսաստանի Դաշնության Պետական դուման 1995 թ. ապրիլի 14-ին ընդունեց հայտարարություն «1915-1922 թթ. հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին»:

Ահա այդ նշանավոր փաստաթուղթը:

«Հենվելով անհերքելի պատմական փաստերի վրա, որոնք վկայում են Արևմտահայաստանի տարածքում 1915-1922 թթ. հայերի բնաջնջման մասին,

- հետևելով ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի ընդունած միջազգային ոգուն ու տառին,

- պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների վաղեմության ժամկետի մասին 1968 թ. նոյեմբերի 26-ի միջազգագրին,

- ձգտելով վերածնել ռուսական պետության մարդասիրական ավանդույթները, հիշեցնելով, որ Ռուսաստանի նախաձեռնությամբ եվրոպական մեծ տերությունները դեռ 1915 թ. հայ ժողովրդի հանդեպ թուրքական կայսրության գործողությունները որակել են որպես «մարդկության դեմ ուղղված հանցագործություն»,

- նշելով, որ իր պատմական հայրենիքում եղբայրական հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը կատարվել է Ռուսաստանի քայքայման համար պայմաններ ստեղծելու նպատակով,

- ՌԴ Պետդուման դատապարտում է 1915-1922 թթ. հայերի բնաջնջման կազմակերպիչներին,

- իր կարեկցանքն է հայտնում հայ ժողովրդին և ապրիլի 24-ը համարում ցեղասպանության զոհերի հիշատակի օր»:

14 ապրիլի 1995 թ.

Բերենք նաև որոշման բնագիրը:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՖԵԴԵՐԱՏԻՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ
ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է ՀԱՅՈՑ
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ФЕДЕРАЛЬНОЕ СОБРАНИЕ — ПАРЛАМЕНТ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ

ПОСТАНОВЛЕНИЕ
ГОСУДАРСТВЕННОЙ ДУМЫ

О заявлении Государственной Думы Федерального Собрания
Российской Федерации
"Об осуждении геноцида армянского народа в 1915 - 1922 годах"

Государственная Дума Федерального Собрания Российской Федерации
п о с т а н о в л я е т :

Принять заявление Государственной Думы Федерального Собрания Российской Федерации "Об осуждении геноцида армянского народа в 1915 - 1922 годах".

Председатель Государственной Думы
Федерального Собрания
Российской Федерации И. П. Рыбкин

1999-2001 թթ. հունվարն ընկած ժամանակահատվածում, Ֆրանսիայի հայ գաղութի համառ, հետևողական ու լարված պայքարն ավարտվեց փայլուն հաղթանակով: Ֆրանսիայի Ազգային Ժողովը 2001 թ. հունվարի 18-ին միաձայն ընդունեց օրինագիծ՝ հայերի ցեղասպանության ճանաչման վերաբերյալ: Հունվարի 29-ին պրեզիդենտ Ժակ Շիրակը և հանրապետության վարչապետ Լիոնել Ժոսպեն ստորագրեցին այդ նախագիծը, և այն փաստորեն օրենքի ուժ ստացավ (այս մասին մանրամասն տես՝ Լ. Ա. Բարսեղյան, Ֆրանսիան Հայոց ցեղասպանությանը օրենսդրությամբ ճանաչած առաջին պետությունն է աշխարհում, Երևան, 2002, էջ 85-87):

Ահա այդ օրենքի տեքստերը՝ երկու լեզուներով:

LOI N^{0}2001-70 DU 29 JANVIER 2001 RELATIVE À LA RECONNAISSANCE DU GÉNOCIDE ARMÉNIEN DE 1915

L'Assemblée nationale et le Sénat ont adopté,
Le Président de la République promulgue la loi dont la teneur suit:

ARTICLE UNIQUE

La France reconnaît publiquement le génocide arménien de 1915.
La présente loi sera exécutée comme loi de l'Etat.
Fait à Paris, le 29 janvier 2001.

JACQUES CHIRAC
Par le Président de la République

Le Premier ministre,
LIONEL JOSPIN

2001թ. ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ԹԻՎ 2001-70 ՕՐԵՆՔԸ 1915թ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ազգային ժողովը և Սենատը ընդունել են,
Հանրապետության նախագահը հրապարակում է օրենք, որի բովանդակությունը հետևյալն է.

ԵԶԱԿԻ ՀՈԴՎԱԾ

Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է 1915թ. Հայոց ցեղասպանությունը:
Ներկա օրենքը կկիրառվի որպես պետության օրենք:
Փարիզ, 2001թ. հունվարի 29:

ԺԱԿ ՇԻՐԱԿ
Հանրապետության նախագահ

Վարչապետ՝
ԼԻՈՆԵԼ ԺՈՍՊԵՆ

"That this House acknowledge the Armenian genocide of 1915 and condemn this act as a crime against humanity."

Private Members' Business

Pursuant to Standing Order 93(1), the House proceeded to the taking of the deferred recorded division on the motion of Ms. Dalphond-Guiral (Laval Centre), seconded by Mr. Assadourian (Brampton Centre), Mr. Kenney (Calgary Southeast) and Ms McDonough (Halifax), — That this House acknowledge the Armenian genocide of 1915 and condemn this act as a crime against humanity. (Private Members' Business M-380)

The question was put on the motion and it was agreed to on the following division:

YEAS: 153, NAYS: 68

ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԲԱՆԱՁԵՎ

21 ապրիլի, 2004թ.

«Համայնքների պալատը ճանաչում է 1915 թ-ի Հայոց ցեղասպանությունը և այն դատապարտում է որպես մարդկության դեմ գործած հանցագործություն»:

Քվեարկության արդյունքն է՝
կողմ՝ 153
դեմ՝ 68

THE ARMENIAN GENOCIDE 1890-1922



Author of the map: HAYK GHAZARYAN

Editor: L.A. BARSEGHYAN

Numeral signs:

1 Dprevank
2 Armash
3 Residence the Catholicos
4 Ayas
5 Mamura
6 Islahiye
7 Alexandrette
8 Rayo
9 Azaz
10 Frnouz
11 Yarpouz
12 Chmshkatsag
13 Kapan-Maden
14 St. Gevorg
15 St. Aharon
16 St. Karapet
17 St. Arrakelots
18 Nankir
19 Aghtamar
20 Hogvots
21 St. Bardughimeos
22 Melsopavank
23 Karakhos

SCALE M 1:3 500 000

35 0 35 70 105 140 175km

Armenian provinces (vilayet)

1 Trabizon province
2 Sivas province
3 Erzerum province
4 Kharberd province
5 Diarbekir province
6 Bitlis province
7 Van province

Map compiled by H.G. SARGSYAN

GENOCIDE DU PEUPLE ARMENIEN 1890-1922


MER NOIRE
BULGARIE
GRECE
GEORGIE
MER DE MARMARA
MER EGEE
MER MEDITERRANEE
MER MORTE
CHYPRE
SYRIE
IRAN
IRAQ
ARMENIE OTTOMANE
MESOPOTAMIE
REPUBLIQUE D'ARMENIE
PROVINCE DE KARS
ARTSAKH
CASPIENNE
CONSTANTINOPLE (ISTANBUL)
Adrianople (Edirne)
Rodosto (Tekirdagh)
Nicomedie (Izmit)
Adsbazar
Brousa (Boursa)
Bandirme
Biledjik
Sogoutho
Eskichehir
Ayvounde
Sivrihissar
Gordioum
Angora (Ankara)
Aych
Kangheri
Zongouldak
Eregli
Kesout
Bolou
Inebolou
Sinope
Kastamouni
Samsoun
Bafra
Kavza
Osmandjik
Mersivan
Amassia
Tchorroum
Tchartchembe
Unieh
Ordou
Keresonde
Tirebol
Eleou
Rize
TREBIZONDE
Artaza
Gumuchkhane
Sarighamich
Sper
Babert (Baybourt)
Torroum
Khorassan
Tokhat (Eudocie)
Tourkhal
Niksar
Aghtchbachi
Champo-Karahissar
Tamzara
Kelkit
Everek
ERZEROUM (KARIN)
Hassankhala
Tchifrigan
Tchikhgan
Diadin
Banazet
Nakhidjevan
Kamri
Tabriz
Maku
Mont Gr. Ararat
Mont Pt. Ararat
Igdir
Sardarabad
Khorvirap
EREVAN
ELISABETHPOLE (GANDZAK)
Gandzasar
BAKOU
BATOUMI
Ardahan
Alexandrapole
Kamakilissa
CHOUCHI
Amaras
Bach-Aparan
Etchmiadzine
Sanghamich
Oltou
Kharsan
Mamoura
Soulousoun
Yozghar
Karamaghara
Mermer
SIVAS (SEBASTIA)
Zara
Koridjanis
Erzindjan
Kamakh
Bouloumer
Kghi
Dertch
Gueuksoun
Brmaksize
Kharpout
Khous
Manazkert
Ardjech
Berkri
Khoy
Salmaste
Ourmia
Lake Ourmia
Artsk
Khlat
Later
Moush
BITLIS (BAGHECH)
Khizan
Chatakh
Bachkale
Nahan
Ardjesh
Seghert
Djoulamerk
Silvan
Hani
Tadem
Arghana
Tchoungouch
Derondo
Arka
Malakan (Meliten)
Albistan
Mezre
Beulam
Djermouk
DIARBEKIR (AMIDE)
Severek
Adiaman
Zeytoun
Gueukson
Hadji-Vahkab
Levonklar
Fendidjak
Aksaray
Behesni
Chamchat
Viranchehir
Derik
Mardin
Edessa (Urfa)
Hromkla
Bazardjik
Ayntab
Biredjik
Seroudj
Ras-ul-Ayn
Hassitch
MOSSOUL
Cheddadiye
Kasserdji
Kirkouk
Zelebine
Souvar
Dair Zor
Meyadin
Bessireh
Ayn el Kom
Abou-Kemal
Ana
Bakouba
BAGDAD
Euphrate
Khabour
Djeraboulous
En-Nichan
Membidj
Mounboy
Akhterin
El-Bab
Tefnye
ALEP
Sebil
Lale
Meskene
Rakka
Dipsi
Abou-Harar
Hamam
Sebka
El-Khanassir
Seriyeh
Souedia
Kessab
Latakieh
Antioche
Beilan
Musa Dagh
Payas
Kilis
Dourtyol
Osmanie
Bagtchi
Marach
Intili
Tarse
Adana
Mersine
Lambrone
Karaman
Antalya
Stanozo
Tchomakhtou
Isparte
Denizli
Andin
Samosse
Akchehir
Sultankhan
Aksaran
Tomardzo
Nigde
KONYA (ICONIE)
Karapounar
Ereyli
Pozanti
Afion-Garahissar
Tchai
Akhissar
Pergame
Lesbos
Manissa
Smyrne (Izmir)
St. Stephanos
Keutahia
Kirchehir
Boghazlian
Hadji-Bektach
Kaisarie (Cesaree)
Tchomakhtou
Evereck
Kangal
Arabkir
Hassan-Agha
Tchalbeh
KHARBERT
Divrik
Akn
Perdir
Khozat
Metskert
Haydaran
Tchapaghjour
Balou
Gueurun
Tchakichla
Kemakh
Kamakhi
Bachlachi
Kighi
Khnous
Later
Artske
Khlat

Վերջաբանի փոխարեն

ԵՐԿՈՒ հազար հինգ թվականի ապրիլի 24-ին լրանում է ***հայ ժողովրդի ցեղասպանության իննսունամյակը:*** Շուրջ ինը տասնամյակ առաջ, «երիտասարդ թուրքերը», շարունակելով Աբդուլ Համիդի կիրառած հայասպան քաղաքականությունը, գերազանցելով նրան և մինչ այդ հողագնդի երեսին գործած բոլոր ջարդարարներին, հիմնովին ոչնչացրեցին կամ բռնագաղթեցրեցին Արևմտյան Հայաստանում և Հայկական Կիլիկիայում ապրող հայությանը:

Ինչպես վերոհիշյալ թուրք ջարդարարները, այնպես էլ նրանց հաջորդած Մուստաֆա Քեմալն ու Կարաբեքիր փաշան օսմանյան ամբողջ կայսրությունը դատարկելով արևմտահայության վերջին բեկորներից, հայասպանությունը շարունակեցին Արևելյան Հայաստանում, Նախիջևանում և Լեռնային Ղարաբաղում, թուրք ազերիների ձեռքերով մոխրակույտի վերածեցին հեքիաթային գեղեցկությամբ օժտված Շուշի և Կարս բերդաքաղաքները, գրեթե հայազրկեցին Բաքուն, ասպատակեցին Ալեքսանդրապոլը (Գյումրի) և ընդհուպ մոտեցան Երևանի մատույցներին: Օսմանյան կայսրությունում, թե Անդրկովկասում բնակվող թուրք ցեղի բոլոր դասերի ու դասակարգերի ներկայացուցիչները, չնչին բացառությամբ, ձեռք ձեռքի տված վայրենաբարո քուրդ ու չերքեզ ցեղախմբերի հետ, խախտելով միջազգային բոլոր տեսակի օրենքները, կատարեցին ցեղասպանություն, ավելի կոնկրետ ***արմենոցիդ (հայասպանություն),*** որն իր դաժանությամբ ուղղված էր հանուր մարդկության դեմ:

Իրենց գործած մարդասպանության ձևերով ու աներևակայելի մեթոդներով, թուրքերը դատարկեցին մի ամբողջ ժողովրդի սրբազան Հայրենիքը, մոխրակույտի վերածեցին հազարամյակներով ստեղծած նրա հուշարձանները, հոյակերտ վանքերն ու սրբազան եկեղեցիները, քաղաքներն ու ավանները: Գտնվելով զարգացման ցածր մակարդակի վրա՝ նրանք մարդասպանությունը կատարեցին բարբարոսական մեթոդներով, այնպիսի վիշտ ակոսեցին իրենցից անհամեմատ բարձր կանգնած հայ ժողովրդի սրտերում, որը ոչ միայն չի մոռացվում, այլ գնալով ավելի է խորանում, այսօրվա և հաջորդ սերունդներին պատգամելով, ***թե հիշելն ապրել է, մոռանալը՝ մահ...***

Իբրև ցեղասպանության անմիջական հետևանք, աշխարհի գրեթե բոլոր երկրներում ձևավորվեցին հայկական գաղութներ, որոնք ընդհանուր անունով կոչվեցին ***Սփյուռք*** - ավելի կոնկրետ ***Հայկական սփյուռք:*** Այնտեղ վերապրողները ցեղասպանությունից մազապուրծ հայկական բեկորներն էին, այն ծնողների հայրենազուրկ զավակները, որոնք պարտականություն ունեին պաշտպանել իրենց և ոչնչացված հայրենակիցների ոտնահարված իրավունքները՝ փայփայելով իրական այն հույսերը, թե մի օր կվերադառնան Հայրենիքը-ծննդավայրը, գոնե հողին կհանձնեն մինչև օրս անթաղ մնացած հարազատների ոսկորները:

Արտասահմանում ստեղծվեց պահանջատիրության նշանաբանով պայքարի հրապարակ իջած ***Հայ դատի հանձնաժողով:*** Այն խոշոր գործ կատարեց, սակայն ավելին անելն անհնարին էր, քանզի Երկրորդ հանրապետության տարիներին, կառավարող այրերը, Մոսկվայից համապատասխան թույլտվություն չունենալով, չէին կարող բավարար չափով զորավիգ կանգնել սփյուռքահայությանը (կային խիզախողներ, կային նաև դրանց շարքերում նացիոնալիզմի պիտակով պատժվողներ): Հայ դատի պաշտպանության ստվարաթիվ գրասենյակները կարողացան հասնել էական հաջողությունների: Նրանք աշխարհի առաջադեմ մարդկությանը և նույնիսկ պետական բարձրաստիճան այրերին (Ֆրանսիա, Ռուսաստան, Հունաստան և այլն) կարողացան համոզել, որ XIX դարի վերջին, XX դարասկզբին օսմանյան կայսրությունում իրոք եղել են հայկական զանգվածային կոտորածներ: Այդ կոտորածները ոչ թե սովորական ջարդեր էին, այլ ***ցեղասպանություն, հայասպանություն:***

Սփյուռքահայությունը չի դադարում խիզախումներից, որպեսզի կարողանա այսօրվա միջազգային ատյաններին, փաստերի ծանրության տակ, ստիպել, համոզել, որ անխտիր բոլորը ճանաչեն, դատապարտեն Հայոց ցեղասպանությունը, հարկավ Թուրքիայից և թուրքերից պահանջեն հատուցում:

Վերջին տարիներին, անշուշտ, վիճակն այլ է, հայ ժողովրդի համար համեմատաբար նպաստավոր: Այժմ արդեն Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը, պրեզիդենտի, վարչապետի և արտաքին գործերի նախարարի մակարդակով, պաշտպանում է Հայկական դատի ներկայացուցիչներին, Թուրքիայից պահանջում ճանաչել Հայոց ցեղասպանության իսկությունը: Եվ ոչ միայն այդ. Ամենայն Հայոց կաթողիկոսը ուխտագնացություն է կատարում Դեր Զոր, իր օրհնանքի խոսքն ուղղում մարդակուլ անապատում դեռևս հրաշքով վերապրող բնավեր հայ խլյակներին: Կարծում ենք 90-ամյա տարելիցը նոր լիցք կհաղորդի ցեղասպանության նշանաբանով մղված պայքարին:

Ոչինչ չի մոռացվել, ոչ ոք չի մոռացվել կարգախոսը նշանաբան դարձրած ողջ հայ ժողովուրդը, պահանջատիրության արդարացի խնդիրները լուծելու առաքելությունն ունենալով, միաժամանակ քաջ գիտակցում է, որ իր առջև բարդույթների դժվարանվաճ թումբ կա կանգնած: Նախ, մեծ տերություններից շատերը, հատկապես գերտերություններից Ամերիկայի Միացյալ Նահանգները, ելնելով իրենց ռազմաստրատեգիական շահերից, կրկին պաշտպանության տակ են վերցրել Թուրքիային և թուրքերին: Ամեն չորսը տարին մեկ, պրեզիդենտական ընտրությունների ժամանակ, ձայներ կորզելու նպատակով նրանք խոստանում են ընտրությունից հետո, դատապարտել ցեղասպանությունը, սակայն իշխանություն ստանալուց հետո դրժում են իրենց խոստումը: Դրանից թուրքերը թև են առնում և շարունակում համառել ճշմարտությունը բարձրաձայն արտասանել: Ոչ միայն այդ:

Թուրքիան հսկայական միջոցներ է ծախսում, կեղծիքներով լի «աշխատություններ» տարածում աշխարհով մեկ, դրանց էջերում ոչ միայն ժխտելով Հայոց ցեղասպանության գոյությունը, այլև առանց ամոթի զգացումի, արևմտահայությանն է համարում ջարդի հիմնական մեղսակիցը: Ահա նման պարագան է հարկադրում հայ պատմաբաններիս, գրել աշխատություններ, օտար լեզուներով հրատարակել դրանք, այլազգի, արտասահմանյան ընթերցողին, աշխարհի մեծ ու փոքր տերությունների ղեկավարությանը մեկ անգամ ևս համոզել, որ Թուրքիան և թուրքերը 1890-1922 թվականներին հայասպանություն են կատարել մեկ ամբողջ ժողովրդի նկատմամբ, բռնազավթել են նրա Հայրենիքը, բարոյական անսահման վիրավորանքին զուգընթաց, նյութական մեծ վնաս են պատճառել «հպատակներին»: Աշխարհում ցեղասպանություններ եղել են, սակայն շատ քիչ են, գրեթե հազվագյուտ են

այն դեպքերը, երբ Թուրքիայի նման երկրի իշխանությունները ոչնչացնում են ամբողջ ***անպաշտպան, արարող, ստեղծագործող այն էլ սեփական ժողովրդին:***

Ահա այս և բազմաթիվ այլ կնճռոտ, վիճահարույց խնդիրներն ենք քննում հրատարակված մեր սույն աշխատության էջերում, հույս ունենալով, որ ինչ որ չափով նպաստ կբերենք ցեղասպանության միջազգային ճանաչման սրբազան գործին: Թե ինչքանո՞վ է մեզ հաջողվել հասնել մեր առջև դրված խնդրի լուծմանը, կասի անկողմնակալ ընթերցողը:

Աշխատությունը գրելիս օգտագործել ենք շուրջ կես դար հավաքած բազմաբնույթ և բազմալեզու արխիվային հսկայածավալ նյութեր, պարբերական մամուլ և հատկապես ակադեմիական ծանրակշիռ մենագրություններ: Գերադասելով և՛ Հայրենիքում, և՛ Սփյուռքում ցեղասպանությանը վերաբերող աշխատություններին, ջանացել ենք օգտագործել նաև օտար այն հեղինակների գործերը, որոնք տվյալ դեպքում օբյեկտիվ ու անկաշառ են: Մեկ խոսքով, սույն երկհատորյակը, կարելի է ասել, ***պատմագիտական մտքի հանրագումարն է, գրված սեփական կոնցեպցիայով և ուրույն տեսակետներով:***

Մենք ձգտել ենք ցեղասպանության պատմությունը բաժանել իրար հաջորդող, առավել խստացող ու դաժանացող երեք փուլերի: Առաջին փուլն ընդգրկում է 1890-1909 թթ. ժամանակահատվածը, երբ Աբդուլ Համիդը, հենվելով բանակի, քրդական «համիդիե» զորաջոկատների, մահմեդական, ավարածարավ թուրք և քուրդ խուժանի վրա, կոտորեց շուրջ ***300 հազար անպաշտպան հայության,*** պատճառ դարձավ հարյուր հազարավոր խաղաղ բնակչության բռնագաղթին: Համիդը ոչ միայն ցեղասպանության սկիզբը դրեց, այլև պայմաններ ստեղծեց հաջորդ փուլում ավելի հեշտացնել ***Մեծ եղեռնը:***

Ցեղասպանության երկրորդ փուլն ընդգրկում է 1915-1916 թվականները, երբ իշխանության եկած երիտասարդ թուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը, աներևակայելիորեն գերազանցելով Աբդուլ Համիդ սուլթանին, ոչնչացրեց մի ամբողջ ժողովրդի, դատարկեց մի ամբողջ հայրենիք: Նրանք, սկսելով Ադանայի կոտորածով (1909թ.), նախապատրաստվեցին և 1915 թ. իրականացրեցին Մեծ եղեռնը՝ ոչնչացնելով ***մեկնկես միլիոն արևմտահայության:***

Երրորդ էտապն իրականացրեցին Մուստաֆա Քեմալն ու Կարաբեքիրը, որոնք գործեցին 1918-1922 թվականներին՝ ոչնչացնելով Արևմտյան Հայաստանում հրաշքով փրկված հայ համայնքի վերջին բեկորները, Կիլիկիայի հայությանը, Կարսն ու Ալեքսանդրապոլը, Նախիջևանն ու Շուշին: Այս շրջափուլում օսմանյան թուրքերը գործակցում էին կովկասյան թուրքերի հետ, նպատակ հետապնդելով մեկընդմիշտ ոչնչացնել ողջ հայ ժողովրդին, որտեղ էլ ապրելիս լիներ նա: Կարծում ենք, որ նրանք իրենց նպատակի առաջին մասը կատարեցին, սակայն ողջ հայ ժողովրդին ամբողջապես ոչնչացնելու գործում հաջողության չհասան:

Հայ ժողովրդի ցեղասպանությունը XIX դարավերջի և XX հարյուրամյակի առաջին երկու տասնամյակներում ծավալված, գրեթե նախադեպը չունեցող ողբերգություն էր, որն, իրավամբ, համաշխարհային պատմության էջեր մտավ ***Մեծ եղեռն, Մեծ ոճիր, Հայասպանություն, Հայկական տասնհինգ, Ողջակիզում, Հայկական ջարդեր*** և նույնանման այլ բնորոշումներով: Այդ բոլորով հանդերձ, մենք մնում ենք մի ազգ, մի ժողովուրդ, մարդկության արշալույսից եկած, հաճախակի մահվան ընդառաջ գնալով, մահը տրորել ենք կյանքով, դրա համար էլ մեզ հետ գոյատևումի եկած ժողովուրդների մեծ մասն անհետացան պատմության բեմահարթակից, իսկ մենք դիմացանք և այսօր ոչ միայն հարատևում ենք, այլև ունենք ***անկախ Հայաստան պետականությունը:***

Դժբախտությունն այն է, որ մարդկության հազարամյակների պատմության էջերը կարմիր են ներկված այն ծովածավալ արյունով թափված հին աշխարհից սկսած, այսօրվա նոր դարաշրջանով եզերված: Բռնկվել են նաև անթիվ պատերազմներ, կոտորվել են անհամար մարդիկ և ինչքան ժամանակները նորանում են, այնքան պատերազմները թեժանում են, նույնիսկ երկու անգամ վերածվում աշխարհամարտերի: «Քաղաքակրթություն կոչված մարդկային ծեռակերտի պատմության գրեթե բոլոր էջերը արյուն կկաթկթի դժբախտաբար,- գրում է սփյուռքահայ հետազոտող Գերսամ Ահարոնյանը: - Բոլոր ցամաքամասերուն վրա և բոլոր դարերուն, աշխարհակալներ, թե տիտղոսավոր ավազակներ «թշնամին» ջարդած են հազարներով, հարյուր հազարներով, միլիոններով վասն փառքի, կողոպուտի ու տիրակալության: Եվ այս տեսակետով իրարու ըսելիք չունին պատմության մեջ «մեծ» որակավորման արժանացած պետությունները»: Անժխտելի է նաև, որ պատերազմների ժամանակ երկուստեք թափած արյունը տարբերվում է զանգվածային այն ջարդերից, որոնք կիրառվել են մեծերի կողմից փոքրերի նկատմամբ, ունեն պայքարի անհավասար սկզբունքներ և իրավամբ ստանում են գենոցիդ անվանում:

«Այդ քստմնելի, ահազդեցիկ մարդկային դրամային մեջ,- շարունակում է Գերսամ Ահարոնյանը,- եղած են ցեղեր կամ ազգեր սակայն, որոնց միակ «առաքելությունը» եղած է կարծեք ոճիր գործել, քանդել, ավերել, թալանել: Մինչ իսպանացիք կամ անգլիացիք... սպանելեն ետք սկսած են շինել ու քաղաքակրթություն կերտել, անդին եղած են սակավաթիվ ցեղեր, որոնք միայն հրկիզած են ու բնաջնջած և հետո ոչինչ ստեղծած են, ոչինչ կերտած: Ահա այդ վերջին տեսակի ***ցեղերուն ցանկին գլուխը գրված է թուրք: Ցեղ մը, որուն գլխավոր մասնագիտությունը եղած է ցեղասպանությունը, որուն գլխավոր «շնորհքը» եղած է քանդումը: Անիկա «մարդը մարդու դեմ գայլ» չէ եղած, այլ՝ «գայլ՝ մարդու դեմ գայլ եղած է,- գիշատիչ գայլերու ոհմակ պարզապես ու տևապես: Եվ իզուր չէ, որ թուրքը իբրև ցեղային խորհրդանիշ նախընտրած և որդեգրած է Գորշ գայլը»:***

Ականայից կարծեք թե զայրույթ, մի քիչ էլ վիրավորանքի երանգ կա եղեռնից մազապուրծ ընտանիքի վերջին շառավիղներից մեկի սփյուռքահայ հրապարակախոսի վերոհիշյալ տողերի մեջ: Բայց չէ որ այդպես է իրողությունը: Ապացույցներից բերենք միայն մեկը. երեկ այսինքն 1995 թ. թուրք «դեմոկրատական մտավորական» Դուրու Աբդուլկադիրը հրապարակեց հետևյալ տողերը. ***«Ոչ թուրքերը - կամա, թե ակամա հանդիսանում են թուրքերի թշնամիները,- գրում է նա,- քանզի նրանք չունեն մեր ազնվաբարո, վեհանձն գծերը»:*** Ստացվում է այնպես, որ աշխարհի քրիստոնյա բոլոր ժողովուրդները, ինչպես նաև մահմեդապաշտ, ոչ թուրք մյուս ժողովուրդները քանի որ չունեն թուրքերի «ազնվաբարո և վեհանձն» գծերը, հետևաբար, նրանք բոլորը թուրքերի թշնամիներն են:

Թուրքական ցեղապաշտությունն այսօր ևս շնչում է Բոսֆորի ափերին, քանի որ քրդերի և ոչ թուրք, հպատակ այլ ժողովուրդների ցեղասպանությունը շարունակվում է օրը ցերեկով, առանց արգելքի: Թուրքերը, այո, գրեթե ողջ ազգը և ոչ թե միայն կառավարող շրջանները, հայերից և քրդերից զատ, գուցե և ավելին, թունոտ ատելությամբ են լցված Ռուսաստանի, ռուս ժողովրդի, ընդհանրապես սլավոնական ցեղակրոնական միավորման դեմ: Յուքսել Օսման Սերչենգեշտին «Ենի Իսթանբուլում» (Նոր Իսթանբուլ, 2.IX.1967) զետեղված պանթուրքիստական թույնով ներծծված հոդվածում ոչ միայն պահանջում է օսմանյան լայնածավալ կայսրության վերակենդանացումը, այլև նախկին ԽՍՀՄ իսլամապաշտ երկրներից «ռուսներին դուրս վռնդելը»: Նա գրում է. «Ռուսները պետք է հեռանան թուրքական երկրներից Կովկասից, Թուրքմենիայից, Ղազախստանից, Ադրբեջանից, Ուզբեկստանից, Յակուտիայից...

Կովկասը և Ադրբեջանը պետք է Թուրքիային թողնել»: Ճիշտ է բնութագրում պատմաբան պրոֆ. Մ. Արզումանյանը. «Լինելով բրդոտ ռասիստ, նա լկտիաբար քարոզում էր. «Անատոլիայի ամեն մի անկյունում բնակվող իսլամ թուրքը... ռուսից ավելի քաղաքավարի է, ավելի մարդկային»»:

Թուրք բարբարոսների գործած չարիքների անպատիժ մնալը, անցյալ դարասկզբի ցեղասպանությունը հավուր պատշաճի չդատապարտելը, թերևս պատճառներից մեկը դարձան, որպեսզի հիտլերյան ֆաշիզմը կրկներ գենոցիդը հրեաների, լեհերի, ռուսների և սլավոնական այլ ազգերի նկատմամբ: Բուխենվալդի և Մայդանեկի համակենտրոնացման ճամբարները կարծես թե կառուցել էին այն թուրքերն ու գերմանացիները, որոնք 1915 թ. հսկում էին Դեր Զորի հայասպան «կենտրոնակայաններ»ը»: Քիչ թե շատ բանական մարդ արարածը, այլևս չէր կարող դիմանալ սահմռկեցուցիչ այն արարողությանը, երբ տեսնում էր հարյուրհազարավոր 3-5 տարեկան հասակի, սպանվելուց հետո վառարանում այրված, երեխաների կոշիկները: ***Դրանք Միջագետքում չէին, այլ Արևմտյան Եվրոպայի սրտում:***

Նյուրնբերգյան դատավարության ժամանակ (20.XI.1945 - 1.X.1946) քննարկվեց երկրորդ աշխարհամարտի գլխավոր հանցագործների հարցը: Այն, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար պետությունների ղեկը վարողների նկատմամբ պատմության մեջ առաջին դատավարությունն էր, կայացրած անդրանիկ որոշումը: Միջազգային ռազմական տրիբունալի դատին էին հանձնվել նացիստական Գերմանիայի խոշոր այն հանցագործները, որոնք մեղադրական աթոռին էին գամվել, խաղաղ բնակչությանն ընդհանրապես, պատերազմի ռազմագերիներին մասնավորապես, տանջամահ անելու, հասարակական և մասնավոր սեփականությունը հափշտակելու, ստրկական աշխատանքը վերակենդանացնելու, փոքր ու անպաշտպան ժողովուրդների բնաջնջման փորձ կատարելու և նմանատիպ այլ հանցագործությունների համար: Նյուրնբերգյան դատարանի բացահայտումներն ու նրանց նկատմամբ հանած որոշումները Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ՝ հիմնված 12.01.1945) Գլխավոր ասամբլեայի համար հիմք դարձան, որպեսզի անդրադառնար ցեղասպանության հարցին և այդ փաստերից աներ համապատասխան եզրահանգումներ:

Ցեղասպանություն էր որակվում ռասայական, ազգային, էթնիկական կամ կրոնական հատկանիշներով բնակչության առանձին խմբերի բնաջնջումը: Գենոցիդը XX դարում երկու անգամ ընդունել է ավելի խոշոր չափեր և հետապնդել է որևէ ժողովրդի ամբողջովին ոչնչացնելու նպատակ՝ ինչպես Թուրքիայում հայերի կոտորածը (1890-1922) կամ գերմանական ֆաշիստների կողմից հրեաների և սլավոնների հավաքական, ամբողջական ոչնչացումը (1939-1945):

Գենոցիդը դիտարկվում է իբրև ծանր հանցագործություն՝ գործադրված ընդհանուր մարդկության դեմ, որն ունի հետևյալ որակումները. զավթողական պատերազմների սանձազերծում, պատերազմի օրենքների և սովորույթների խախտում, գերիների նկատմամբ դաժանության դրսևորում, զավթած տերիտորիաների բնակչության բնաջնջում և ստրկացում, անմեղ քաղաքացիների տանջահարում, հանրային կամ մասնավոր սեփականության կողոպտում, կրոնական կամ քաղաքական շարժառիթներով նրանց հետապնդում: Կոնվենցիայով պատժելի են համարվում նաև ցեղասպանության կազմակերպումը, դավադրությունը, հրահրումը, օժանդակությունը: Ցեղասպանության համար մեղավորների հանդեպ վաղեմության ժամկետ չի սահմանվում: Նրանց նկատմամբ կոնվենցիան ունի հետադարձ ուժ, այսինքն՝ մեղավորները պատասխանատվության են կանչվում նաև մինչև կոնվենցիան կատարած հանցագործության համար: Ծանր հանցագործներ են ճանաչվում Թուրքիան և

Գերմանիան, որոնցից երկրորդը պատժվեց, իսկ առաջինը մինչև օրս էլ մնում է անպատիժ:

Երկրորդ աշխարհամարտի ավարտից մեկ տասնամյակ չանցած, Արևմտյան Գերմանիայում ծվարած Հիտլերի մաշկափոխած սատելիտները, զարմանալիորեն փորձեր էին անում հնացած համարել Նյուրնբերգյան դատավարության որոշումները, առաջադրում հանցագործության վաղեմության իրավունքի խնդիրը: ՄԱԿ-ի գագաթնաժողովը ժամանակին հասկացավ նման առաջարկի վտանգավորությունը, ի լուր աշխարհի հայտարարեց, թե նման ոճիրներ, որոնց զոհ են գնացել միլիոնավոր մարդիկ, երբեք արդարացում չունեն և դրանց հանցավորներին չի փրկի նույնիսկ վաղեմության իրավունքը:

Այդուհանդերձ ՄԱԿ-ը 1967 թ. դեկտեմբերին հերթական անգամ անդրադարձավ գենոցիդի խնդրին, հատուկ կոնվենցիայով մեկ անգամ ևս որոշեց պատերազմի հանցագործների վրա վաղեմության իրավունքը չտարածել: «Կոնվենցիան ելնում էր նրանից, որ «ըստ միջազգային իրավունքի ռազմական հանցագործությունները և մարդկության դեմ ուղղված մյուս հանցագործությունները պատկանում են ամենածանր հանցագործությունների թվին», որ այդպիսի հանցագործությունների նկատմամբ ներքին օրենքների կիրառումը «արգելակում է այն անձանց դատական հետապնդումն ու պատիժը, որոնք պատասխանատու են այդպիսի հանցագործությունների համար», ուստի և նրանց վրա բոլորովին չի տարածվում վաղեմության ժամկետը»: Վերոհիշյալ բոլոր որոշումները, առավել ևս 1967 թ. ՄԱԿ-ի կոնվենցիան, առանց վերապահումների պետք է տարածել թուրքական շովինիստների վրա, որոնք Հիտլերից առաջ ոչնչացրեցին մի ամբողջ ժողովրդի ստվար հատվածին:

Ժամանակին Խորհրդային Միության ղեկավարությունը վերջապես վճռականորեն դատապարտեց Թուրքիայի գործած ոճրագործությունը հայ ժողովրդի նկատմամբ, ոչ միայն թույլատրեց Երևանում կառուցելու ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթողը, այլև ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեի գլխավոր օրգան «Պրավդա» օրաթերթում հրատարակեց հոդված «Գենոցիդը ծայրագույն հանցագործություն է մարդկության հանդեպ» վերնագրով: Հոդվածը նվիրված էր Հայոց Մեծ եղեռնի կեսդարյա տարելիցին և առաջին անգամ նման մակարդակով թուլատրում էր հայ ժողովրդի սգո արարողությունը ***Ծիծեռնակաբերդում:***

Այդ «հաջողությունները» պայմանավորված էին նախ համաժողովրդական այն պոռթկումով, հանրահավաքով, որը բռնկվեց 1965 թ. ապրիլի 24-ին: Ժողովուրդը, հատկապես երիտասարդությունը, որի համբերության բաժակը լցված էր, այլևս դիմանալ չէր կարողանում անարդար լռությանը և պահանջում էր թույլտվություն՝ ապրիլի 24-ը նշելու իբրև սգո օր և Հայաստանին վերադարձնել նրա անբաժան մասը ***Լեռնային Ղարաբաղը:*** Իբրև կանոն, ժողովուրդը չի սխալվում: Նա հասավ իր նպատակին: Իհարկե, ***չպետք է ուրանալ Հայաստանի այն ժամանակվա ղեկավարության հայրենասիրական ոգին, ինչպես նաև, այս դեպքում Սփյուռքի զորավիգ կանգնելը Մայր Հայրենիքին:***

Խնդիրը դրանով չավարտվեց: 1965 թ. հուլիսին Հելսինկիում կայացավ խաղաղության, ազգային անվտանգության, ընդհանուր զինաթափման համաշխարհային կոնֆերանս: Միջազգային այդ բարձրապատիվ համաժողովն իր ամփոփիչ արձանագրության էջերում միաձայն դատապարտեց բռնատիրությունը, գաղութատիրությունը և ցեղասպանությունը: Առանց զարմանքի, նման փաստաթղթում, այդ մակարդակով ուղղակի գնահատական տրվեց նաև Հայոց ցեղասպանությանը: Այնտեղ ասված էր. «Այս տարի 50-ամյակն է Օսմանյան Թուրքիայի կողմից գործադրված հայկական կոտորածների, ազգային հարցը մի ժողովրդի բնաջնջումով լուծելու նպա-

տակով: Այս ցեղասպանությունը խլեց կյանքը ավելի քան ***մեկուկես միլիոն*** ազատասեր հայերի, այսինքն՝ հայ ժողովրդի երկու երրորդին»:

Ցեղասպանության ճանաչման խնդիրն այսօր, վերջապես, դարձել է աշխարհի գրեթե բոլոր խոշոր տերությունների ղեկավարության և պառլամենտների ուշադրության առարկա: Թուրք պետական այրերն, առավել ևս պրեզիդենտն ու վարչապետը, հասկանալով եղելության բացահայտման ու ճանաչման բարդույթը, ամեն միջոցի դիմում են ժխտելու այն, նույնիսկ կատարվածի մեղքը բարդում են «հեղափոխական հայերի» վրա: Թուրքերն սպառնում են բացել Ստամբուլի, Անկարայի, այս վերջերս էլ՝ Բաքվի արխիվները, «նոր նյութեր» դնել գիտական շրջանառության մեջ և ապացուցել ցեղասպանության բացակայությունը կամ «անշնորհակալ» ու «անհնազանդ» հայերի մեղավորությունը: Նրանք մոռացել են, որ ցեղասպանության ժամանակ, իրենց նախորդները թողել են հսկայածավալ նյութեր հայկական ջարդերի մասին: Փորձենք դրանցից մի քանիսը միայն վկայակոչել:

1. ՄԱԿ-ի բոլոր կոնվենցիաներով ցեղասպանություն էր ճանաչվում այն հանցագործությունը, որը վաղօրոք ծրագրված էր, ուներ իրողության վերածելու համապատասխան նպատակադրում: Հայ ժողովրդի բնաջնջման մտահղացումը ձևավորվել էր դեռևս ուշ միջնադարում, կիսով չափ իրականացվել Աբդուլ Համիդի գահակալության նախավերջին տասնամյակին (1890-1896), ապա Ադանայում (1909) և ավարտվել երիտթուրքերի ու քեմալականների տխրահռչակ տիրակալության ժամանակահատվածում:

Պատճառները «բազմազան էին», սակայն այս դեպքում նշենք միայն մեկը՝ գլխավորը: Պանթուրքիզմի ախտով թունավորված թուրքական ռասան XIX դարավերջին, Արևմուտքի, ու, հատկապես, Ռուսաստանի ծանր հարվածների տակ, հերթականորեն կորցնում էր իր եվրոպական նահանգները: Սլավոնական ազգերը թոթափում էին սուլթանական բռնապետության կեսհազարամյա լուծը, վերածվում էին ինքնիշխան պետությունների: Պարագիտային կյանքով ապրող թուրքական կայսրությունը կորցնում էր և՛ ռազմաստրատեգիական հենակետերը, և՛ հարկերի ու կողոպուտի միջոցով «ձեռք բերված» եկամուտները: Բ. Դուռը խճճվում էր միջազգային պարտքերի բարդ ցանցի մեջ, ոչ միայն վերակենդանանալու հույսեր չէր ներշնչում, այլև կանգնում էր մահացման իրական վտանգի առջև: Թուրքերը կայսրության վերակենդանացման, նույնիսկ նոր ու ընդարձակ տերության վերականգնելու ելքը տեսնում էին դեպի Առաջավոր Ասիա ծավալվելու, իրենց Արևելքի մահմեդապաշտ ժողովուրդներին միացնելու, «նոր օսմանների ծիերը Աֆղանստանից մինչև Հնդկաստան վրնջացնելու մեջ»: Ջառանցական թվացող նրանց երազանքն էր իրար կարկատել իսլամապաշտ երկրներին, ստեղծել թուրանական նոր և հզոր պետություն: Այդ զառանցանքը այսօր էլ ուժի մեջ է, մանավանդ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո:

Պանիսլամիստների «մտահղացմամբ» իրենց զավթողական այդ պլաններն իրականացնելու ճանապարհին, իբրև «բնական արգելք» կանգնած էին հայ ժողովրդի զույգ հատվածները: Նրանց կարծիքով, և դա թերևս սխալ չէր, Հայաստանն իր աշխարհագրական ու ռազմաստրատեգիական դիրքով խանգարում էր Արևելքում ապրող Մուհամեդի երկրպագուների միավորմանը: Որպես ելք նրանք սկզբում մտադրվել էին կամ տեղահանել, կամ էլ ոչնչացնել արևմտահայությանը:

Յոհաննես Լեփսիուսը, Թալեաթ փաշային պատժող Սողոմոն Թեհլերյանի դատավարության ժամանակ տված ցուցմունքում, Բեռլինի հրապարակային դատական նիստում հայտարարեց. «Ես 1913-ին Կ. Պոլիս էի: Բանակցությունների միջոցին երիտթուրքերը շատ զայրացած էին, որ հայկական բարենորոգումների հարցը դարձյալ կզբաղեցնե պետությունները... Այն ատեն երիտասարդ թուրքերու կողմը կար-

տահայտվեր. «*Եթե դուք, հայերդ, բարեկորոգումներե ձեռք չեք քաշեր, պիտի պատահի բան մը, որուն հանդեպ Աբդուլ Համիդի ջարդերը տղու խաղալիք են* (ընդգծումները մերն են - Հ. Ղ.): Երիտթուրքերը, դեռևս համաշխարհային պատերազմը չսկսված, արդեն բացահայտ հայտարարում էին. «Հայաստանը խանգարում է մահմեդականների միասնությանն ու թուրքական միության ստեղծմանը՝ թուրքական ռասան Կովկասի, Իրանի ու Կենտրոնական Ասիայի նրան ազգակից բնակչության հետ միավորելու ճանապարհով»:

Մեհմեդ Թալեաթի նման մարդասպանի անթվական մի հրամանագրի մեջ ասված է. «Թերևս ասկից շատ առաջ որոշված էր բնաջնջել հայ տարրը, որ դարեր շարունակ կջանար մեր կայսրության ապահով հիմունքը քանդել և հիմա ալ իրական վտանգի մը ծներ ստացավ, սակայն դասավորումները չէին թույլատրեր այս սուրբ ծրագիր-նպատակը ի գլուխ հանել: Հիմա, որ բոլոր արգելքները մեջտեղեն վերցված են, պատեհ առիթ կներկայանա մեր հայրենիքը այդ վտանգավոր տարրեն փրկելու: Ստիպողական կհանձնարարենք, որ պետք չէ գութի զգացումներով վարակվիք անոնց թշվառ ու տառապալի կացությունը տեսնելով, բայց անոնց բոլորին ալ սպանդ ի գործ դնել: Ձեր ամբողջ կարողությամբ ջանացեք Տաճկաստանեն, Թուրքիայեն մի անգամ ընդմիշտ հետքը վերացնել «Հայաստան»ի անվան...»: 1914 թ. փետրվարի 22-ին, այսինքն Առաջին աշխարհամարտի բռնկումից շուրջ կես տարի առաջ, երիտթուրքերի կենտրոնական օրգան «Իկդամ» օրաթերթը առաջնորդող հոդվածում պատգամում էր Արևելյան Անատոլիայից - այսինքն՝ Արևմտյան Հայաստանից ողջ հայությանը բռնագաղթեցնել Միջագետք և նրանց փոխարինել մահմեդականներով, նույնիսկ շեշտում *իսլամ - թուրքերով:*

Վերևում զարգացրած մեր կոնցեպցիայի ուղղակի ապացույցն է Բաթումի կոնֆերանսում Թուրքիան ներկայացնող Վեհիբ փաշայի 1918 թ. մայիսին արած սպառնալի հայտարարությունը՝ ուղղված հայ պատվիրակներին: Նա այսպես դիմեց հայերին. ***«Դուք տեսնում եք, որ ճակատագիրը Թուրքիային արևմուտքից մղում է դեպի արևելք: Այնտեղ է մեր արյունը, մեր կրոնը, մեր լեզուն: Դա տարերային հակում է: Մեր եղբայրները Բաքվում են, Դաղստանում, Թուրքեստանում ու Ադրբեջանում: Մենք պետք է ճանապարհ հարթենք դեպի մեր եղբայրները, և դուք, հայերդ մի կանգնեք մեր ճանապարհին»:***

1915 թ. սեպտեմբերի 9-ին արյունարբու Թալեաթը ծածկագրով Հալեպի կուսակալին է ուղարկում հայասպան ներքոհիշյալ հեռագիրը. «Հայերու համար Թուրքիո հողին մեջ ապրելու, աշխատելու իրավունքները ամբողջովին ջնջված են և այդ մասին կառավարությունը, բովանդակ պատասխանատվությունը ստանձնելով, հրամայած է նույնիսկ օրորոցին մանուկները չթողուլ: Քանի մը նահանգներու մեջ այս հրամանին գործադրության արդյունքները տեսնված են... Առանց որևէ պատճառաբանություն ընդունելու, կին, թե մանուկ, ինչ որ ալ ըլլան, նույնիսկ շարժվելու անկարող եղողները հանեցեք հոնկե և տեղի մի տաք, որ զանոնք պաշտպանե ժողովուրդը, որ տգիտությանը բերմունքով... չի կրնար կառավարության հետապնդած մեծ քաղաքականությունը գնահատել, որովհետև ուրիշ տեղեր անուղղակի կերպով կատարվող բնաջնջման գործողությունները. - խստություն, արագություն (տարագրության ընթացքին), ճամբու նեղություններ, թշվառություն. - հոդ ուղղակի կերպով կրնան ապահովիլ, հետևաբար՝ առանց ժամանակ կորցնելու ոգի ի բռին աշխատեցեք... Հաճեցեք Ձեր գործունեության արդյունքները ամեն շաբթու ծածկագրով հաղորդելու»:

Թուրք պետական մի շարք գործիչների հիշողությունների, նույնիսկ պաշտոնական գրագրությունների մութ ծալքերում պահպանվել են փաստեր, որոնք հաստա-

տում են, թե երիտթուրքերի պարագլուխները գաղտնի խորհրդակցությունների են հավաքվել և այնտեղ վավերացրել են հայ ժողովրդին բնաջնջելու իրենց հրեշավոր ծրագրերը: Ահա թե ինչ է ասում այդ խորհրդակցություններից մեկում իթթիհատականների ղեկավար, ընդհանրապես երիտթուրքերի գաղափարական առաջնորդ ճանաչված դոկտոր Նազըմ բեյը. «Հայ ժողովրդին պետք է արմատապես ոչնչացնել, այնպես, որ ոչ մի հայ չմնա մեր հողի վրա և մոռացվի այդ անունը: Այժմ պատերազմ է գնում և այդպիսի հարմար առիթ այլևս չի լինելու: Մեծ տերությունների գործին խառնվելուց և համաշխարհային մամուլի աղմկալից բողոքներից չպետք է վախենալ, քանզի մինչև նրանց իմանալը ավարտել գործը և նրանց կատարված փաստի առաջ պիտի կանգնեցնել: Դրանով հարցն այլևս կփակվի: Այս անգամ մեր գործողությունները պետք է ընդունեն համընդհանուր բնույթ, այնպես, որ ոչ մի հայ չփրկվի... Ես ուզում եմ, որ այս հողի վրա ապրեն թուրքեր, միայն թուրքեր և անբաժան տիրապետեն իրենց հողին: Թող անհայտանան բոլոր ոչ թուրք տարրերը, ինչպիսի ազգության և կրոնի էլ պատկանելիս լինեն նրանք»:

Երիտթուրքերի հայասպան նման սպառնալիքները նորույթ չէին: Իշխանության գլուխն անցնելուն պես, նրանք բացեիբաց հայտարարեցին, որ «ազգային հարցերը կլուծեն բոլոր ազգությունների ֆիզիկական ոչնչացմամբ, բացի թուրքերից և միայն նրանցից, ովքեր կհամաձայնվեն անհապաղ դառնալ թուրք»: Նրանք հայտարարեցին, որ օսմանյան կայսրության մեջ այլևս «չկան» հայ, հույն, արաբ և այլն, որ «այնտեղ ապրող բոլոր ազգությունները «օտտոմաններ են» և պետք է դառնան թուրքեր, այլապես մենք նրանց կկոտորենք»:

1911 թ. հոկտեմբերին Սալոնիկում գումարվեց իթթիհատականների հերթական, բայց վճռորոշ համագումարը: Պանթուրքիզմի դրոշով կայացած այդ համաժողովում ելույթ ունեցավ Նազըմ բեյը: Նրա «ատենախոսությունը» դարձավ համագումարի որոշումների «հիմնաքարը»: Նազըմը մասնավորապես ասաց. «Մի մոռանաք, որ մեր նախահայրերը Թուրանեն եկած են ու այսօր Անդրկովկասի ու ինչպես Կասպից ծովեն դեպի Արևելք տարածվող ընդարձակ հողամասերուն վրա թուրք ցեղեր կապրեն, գրեթե միատարր, ավա՜ղ, մեր դարավոր թշնամի Ռուսաստանին լուծին տակ: Մեր քաղաքական հորիզոնը բաց կմնա այդ ուղղությամբ միայն ու մեզի կմնա սրբազան պարտք մը իրականացնել թուրք ցեղին միությունը Միջերկրականեն մինչև Արալ ծովը... Այդ քաղաքական ծրագրին իրականացման նախապայմանը Հայկական հարցի արմատական լուծումն է... Պետք է բնաջնջել հայերը մեր կայսրության մեջ»: Քննարկման լուրջ մտաբախումների առարկա դարձան Ռուսաստանի դեմ ուղղված, բայց հիմնականում հայ ժողովրդին բնաջնջելու բովանդակած կարծիքները: Սալոնիկում խմբված իսլամացած հրեաների գլխավորած այդ խառնաժողով-համագումարը, թեր ու դեմ կարծիքներ հայտնելուց հետո, ի վերջո հանգեց հետևյալ եզրահանգմանը. «Վաղ թե ուշ պետք է իրագործվի Թուրքիայի բոլոր հպատակների օտտոմանացումը, բայց մի բան պարզ է, որ դա երբեք չի կատարվի համոզելով, այլ պետք է կատարվի զենքի ուժով»:

1911 թ. հոկտեմբերին «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն Սալոնիկից տեղափոխվեց մայրաքաղաք: Մի քանի ամիս անց, նույն կուսակցության ղեկավարության որոշմամբ, Բոսֆորի ափերին իր չորս կանանց հետ ցմահ բանտարկության դատապարտված Աբդուլ Համիդը փոխադրվեց Սալոնիկ (նոյեմբեր, 1912): 1918 թ. Սալոնիկում էլ նա մահացավ, որի գերեզմանին, ճառ արտասանելուց հետո, արտասվեց Թալեաթը, «Կարմիր սուլթանին» որակելով իբրև «ջարդարարության վարպետ» և իրենց ուսուցիչը:

Հայ ժողովրդի զանգվածային բնաջնջման վերջնական որոշումը կայացվեց 1915 թ.

փետրվարի 11-17-ին գումարված «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի «խիստ գաղտնի» նիստում: Ոճրագործների, ազգասպանների, հայ ժողովրդի «ընտրյալ» թշնամիների ժողով էր այն, որին մասնակցում էին Թալեաթ բեյը, Ջիա Կեոքալփին, դոկտոր Նազըմը, Միդհատ Շուքյուրին, դոկտոր Բեհաեդդին Շաքիրը, Հուսեյն Ճահիտը, Կարա Քեմալը, Խալիլ բեյը, Հասան Ֆահմին, Աղա օղլու Ահմեդը, Էնվեր Ճահիտը և Մեվլան զադե Ռիֆատը: Կենտկոմի անդամներից բացակայում էին Ջեմալը, որը ղեկավարում էր եգիպտական ռազմաճակատում տեղակայված թուրքական բանակը և Պետրոս Հալաճյանը, որը կոմիտեի միակ հայ անդամն էր: Շուրջ մեկ շաբաթ (ոմանց կարծիքով 3 օր) տևած հայասպանների այդ ժողովը հերթականությամբ նախագահում էին ներքին գործերի նախարար Թալեաթը, պանթուրքիզմի տեսաբան Ջիա Կեոքալփը, մարդկության վերջին տականք Նազըմ բեյը: Հնչեցին նույնպես թեր ու դեմ, ավելի ճիշտ, «չափավոր» և «արմատական» կարծիքներ:

Վերջնական որոշման կայացումը դանդաղում էր: Ձայրացավ դոկտոր Նազըմ բեյը, բորբոքված ամբիոն բարձրացավ և հայտարարեց, որ «Պետք է արմատապես լուծել Հայկական հարցը, բնաջնջելով ազգն ամբողջովին», ապա ավելացրեց. «Եվ կը կարծեմ արտահայտած ըլլալ կարծիքը Բեհաեդդին բեյին, երբ ըսեմ, թե մենք երկուքս ալ գլուխ կը հանենք այս գործը, կբավե, որ որոշեք»: Տեսնելով, որ համենայն դեպս այդքան էլ հաճությամբ չի ընդունվում մի ամբողջ ժողովրդի բնաջնջելու վաղամտածված ծրագիրը գործադրության մեջ դնելու որոշումը, Նազըմ բեյը կրկին ամբիոն բարձրացավ և իր ելույթը շարունակեց այսպես. «Մենք այս հեղափոխությունը ինչո՞ւ կատարեցինք, մեր նպատակն ի՞նչ էր: Սուլթան Աբդուլ Համիդի մարդիկը իրենց աթոռներեն վար առնելո՞ւ, անոնց տեղը բազմելո՞ւ համար... Ես թրքություն կենդանացնելու համար ձեզի ընկեր, եղբայր եղա, ես թուրքին, միայն թուրքին, ապրելը, այս հողին վրա անկախ իշխան մը ըլլալը կփափագիմ, ոչ թուրք տարրերը թող ջնջվին, որ ազգության և որ կրոնքին ալ պատկանած ըլլան, որ այս երկիրը ոչ թուրք տարրերեն մաքրել պետք է... վա՜յ մեզի, եթե վերջնական մաքրագործումը, վերջնական բնաջնջումը չկատարվի»:

Պանթուրքիզմն ու պանթուրանիզմն իբրև գաղափարաբանություն մխրճվում էր ժողով-խորհրդակցության մասնակիցների ուղեղներում: Բանը հասնում է նրան, որ Բեհաեդդին Շաքիրը ցինիկորեն հայտարարում էր, որ եթե թշվառական ***Մովսեսը, պարապ Հիսուսը և որբ Մուհամեդը կարող էին ստեղծել «աստվածային վարդապետություններ»*** - իրարից տարբեր ու իրարամերժ տարբեր կրոններ, ապա ինչո՞ւ մենք չենք կարող ***«ստեղծել և տարածել թուրանի կրոնը և գաղափարը»:*** Կենտկոմի մյուս անդամ Հասան Ֆեհմին նույնպես «աստվածաբանական մարզանքներ է անում» և ծգտում ցեղամոլության արգահատելի դոկտրինը հիմնավորել կրոնական դոգմաներով. «Արևելյան գիտության և սուրբ օրենքի շարիաթի համաձայն, բոլոր նրանք, ովքեր վնասակար են ճանաչվում, պետք է ոչնչանան: Ամենայն ճշգրտությամբ ապացուցված է, որ հայերը վնաս են բերում: - Քանի որ նրանք ապստամբել են մեր «Իթթիհատ վե թերաքքի» կուսակցության դեմ, ստիպել են ազատության հերոս էնվեր փաշայի փեսային (Վանի նահանգապետ Ջևդեդ բեյին) ամոթալի փախուստի դիմել, ապա պետք է նրանց բոլորին մինչև վերջին մարդը բնաջնջել»: Համաժողովն ավարտվեց: Վերջին նիստի նախագահող Թալեաթի առաջարկով, հայ ժողովրդի ոչնչացման կոնկրետացված պլանի իրագործումը դրվեց քվեարկության: Այն ընդունվեց միաձայն: Հայ ժողովրդի նկատմամբ անասնական ատելությամբ լցված այդ «մարդակերպ հրեշները» բոլոր մանրուքները հաշվի էին առել ջարդը «հաջողությամբ» իրագործելու համար: Թուրքական, ժամանակի արևմտաեվրոպական, դժբախ-

Ս. Մ. ԿԻՐՈՎ
(1886-1934)

Օր օրի Թուրքահայաստանից սառցվեցին միևնույն մղձավանջային լուրերը: Հայ կանանց ու երեխաների արցունքները չեն պատմի այն մասին, ինչ արել են թուրքերն այնտեղ, իսկ աներևակայելի ասրատի ու տանջանք ապրող հայ խաղաղ բնակչության բարբարոսաբար թափված արյունը սոսկ որոշ, հեռավոր պատկերացում է տալիս հայ ժողովրդի գողգոթայի մասին: Գուցե միայն հետո, երբ մարդկային արյան գետերը կանգ կառնեն, նոր մի Դանթե կկարողանա միլիոնավոր մարդկանց ապաստափելի տանջանքների պատկերը: Եվ այդ պատկերը կմտցնեն մեծ պատերազմի պատմության մեջ, սակայն բոլորը չէ, որ ուժ կունենան ուշադիր դիտել այն, քանի որ նա ամբողջությամբ համատարած մղձավանջ կարտահայտի: Եվ այդ մասին մենք այստեղ, թիկունքում նստածներս, պետք է միշտ հիշենք: Չէ՞ որ մենք առաջինը պետք է օգնության ձեռք մեկնենք կենդանի մնացած, իրենց մոխրակույտերը թողած հայ փախստականներին: Նրանց թիվը շատ է, և դրանով էլ ավելի ծանր է նրանց վիճակը:

տաբար նաև որոշ հայ հեղինակների գործերում գովասանքի տողերի ենք հանդիպում այն թուրքերի հասցեին, որոնք փրկել են հայերի: Բայց քանի՞սն են եղել դրանք, քանի՞ հայի են ազատել սպանությունից: Որպեսզի պատկերն առավել պարզ դառնա և վեճերի առիթ չստեղծվի, բերենք հետևյալ հրամանը. «Այս հեռագիրը (թարգմանաբար հրատարակել է Արամ Անտոնյանը) հակառակ իսլամական օրենքին, թե «արգելված բանը մի՛ ըներ սպառնալիքի ու սարսափի տակ» կը հայտարարե՛, ***թե այն իսլամը, որ կհամարձակի պահել հայ մը, պիտի կախվի իր տան առջև և իր տունը պիտի այրվի: Պահողը, եթե պաշտոնեայ մըն է, պաշտոնանկ պիտի ըլլա և, պիտի դատվի պատերազմական ատեանի կողմէ: Հայ պաշտպանողները, եթե զինվորական են, պիտի վտարվին զինվորական ասպարեզեն և, պիտի տարվին պատերազմական ատեանի առջև»:***

2. Գենոցիդին վերաբերող Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) բոլոր կոնվենցիաների հրապարակած փաստաթղթերում ընդգծված է, որ ***ցեղասպանությունը՝ կատարված թե՛ պատերազմի, թե՛ խաղաղության ժամանակ, միևնույն է, միջազգային օրենքներով դիտվում է իբրև մարդկության դեմ գործած ոճրագործություն և նրա մտահղացողներն ու իրողության վերածողները պատժվելու են առանց վաղեմության ժամկետի:***

Ցեղասպանության երևույթի բնորոշումը տրվել է 1945-1946 թթ. տեղի ունեցած Նյուրնբերգյան միջազգային զինվորական դատարանի կողմից Երկրորդ համաշխարհային պատերազմի հանցագործների դատավարության ընթացքում: Դատարանի վճռի 6-րդ հոդվածում հստակորեն արձանագրված է, որ «մարդկության դեմ հանցագործություններ են քաղաքացիական բնակչության նկատմամբ կիրառված սպանությունները, բնաջնջումը, ստրկացումը, աքսորը և այլ դաժանությունները կամ քաղաքական, ռասայական ու կրոնական շարժառիթներով հետապնդումները, որոնք կատարվել են պատերազմից առաջ և պատերազմի ժամանակ...»:

Միջազգային իրավունքի տեսանկյունից «գենոցիդ» տերմինը կամ ցեղասպանություն հասկացողությունը համակողմանիորեն իր ձևակերպումն է ստացել Միավորված ազգերի կազմակերպության 1946 թվականի դեկտեմբերի 11-ին ընդունած բանաձևի մեջ, որը հիմք դարձավ 1948 թվականի դեկտեմբերի 9-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված համաձայնագրի համար: Այն այսօր հայտնի է հանրությանը որպես «Կոնվենցիա ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի ենթարկելու մասին»: Կոնվենցիան սահմանում է, որ ցեղասպանություն է համարվում ամեն մի գործողություն, որն իրագործվում է բնաջնջման մտադրությամբ, ամբողջովին կամ մասամբ, ազգային, բարոյական, ռասայական կամ կրոնական խմբի հանդեպ հետևյալ դեպքում.

ա. խմբի անդամների սպանությունը.

բ. խմբի անդամներին լուրջ մարմնական կամ հոգեկան վնասներ պատճառելը.

գ. կանխամտորեն խմբի համար կյանքի այնպիսի պայմանների պարտադրումն այն հաշվով, որպեսզի դրանք հանգեցնեն ամբողջապես կամ մասնակիորեն ֆիզիկական ոչնչացմանը.

դ. հարկադիր միջոցների նախատեսում, որով կանխվում են ծնունդները խմբի ներսում.

ե. մի խմբի երեխաներին բռնի տեղափոխելը մեկ ուրիշ խումբ:

Միավորված ազգերի կազմակերպության նույն կոնվենցիան միաժամանակ սահմանել է պատժի ենթական հետևյալ գործողությունները.

ա. ցեղասպանությունը.

բ. գաղտնի համաձայնությունը ցեղասպանություն գործելու համար.

գ. ցեղասպանության ուղղակի և մասսայական հրահրումը.
դ. ցեղասպանություն կատարելու փորձը.
ե. մասնակցությունը ցեղասպանությանը:

1968 թվականի նոյեմբերի 26-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան ընդունեց «Կոնվենցիա պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետի մասին», որով հռչակվեց, որ միջազգային իրավունքի մեջ հաստատվում է կարևորագույն մի սկզբունք, ըստ որի «ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ գոյություն չունի» և այն չի կիրառվում 1948 թվականի դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի ենթարկելու մասին համաձայնագրի» նկատմամբ: Ցեղասպանության համար վաղեմությունը չկիրառելու մասին համաձայնագիրն ունի հետադարձ ուժ: Դա նշանակում է, որ ցեղասպանության կազմակերպիչներն ու իրագործողները պատասխանատվության են ենթարկվում նաև մինչ համաձայնագրի հռչակումը մարդկության դեմ ձեռնարկած հանցագործության համար:

Ինչպես հայտնի է, 1948 թ. դեկտեմբերի 9-ի Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի որոշումը պաշտոնապես ուժի մեջ է մտել 1951 թվականի հունվարի 12-ին, իսկ Թուրքիայի կողմից այն ստորագրվել էր դեռևս 1950 թվականի հունիսի 31-ին: Այդ համաձայնագրին հավանություն տված Թուրքիան միաժամանակ հստակ գիտե, որ ցեղասպանության գործողությունները «մարդկությանը ծանր կորուստներ են պատճառել», և ցեղասպանությունը որակվում է որպես ոճիր ըստ ազգերի իրավունքի կանոնակետերի: Այս սահմանումը նաև նշանակում է, որ մինչև 1948 թվականի դեկտեմբերի 9-ն իրագործված ոճիրները նույնպես պետք է դիտվեն որպես ցեղասպանություն, անկախ այն հանգամանքից, որ ցեղասպանություն տերմինը վերջերս է մտել շրջանառության մեջ:

Չգիտես ինչու, շատերն այն սխալ պատկերացումն ունեն, որ ցեղասպանությունը պարզունակ, մի ինչ-որ տեղ անասնական կամ պարզապես խելագար գործողություն է: Սակայն ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, ցեղասպանությունը պահանջում է մեծ կազմակերպվածություն այն իրականացնելու և մտավոր կարողություն ու հմտություն կատարվածը վերջում ժխտելու համար: Ցեղասպանություն իրականացնելիս նախապես կազմակերպիչներն ամեն ինչ մանրամասնորեն հաշվարկում են: Նախ և առաջ նախապատրաստողներն ընտրում են հարմար պահ իրենց ծրագիրն իրագործելու համար: Այսօր արդեն, երբ միջազգային հանրությունը քաջածանոթ է ցեղասպանությունների պատմությանը, մի բան պարզ է, որ ցեղասպանությունը կարող են ծրագրել և իրագործել ինչպես հետամնաց, այնպես էլ առաջադեմ հասարակություններում: Սխալ են նրանք, որոնց պատկերացումներում ցեղասպանությունները համարվում են անցյալին բնորոշ երևույթներ:

Այո՛, ցեղասպանություն իրականացրեց Թուրքիան, որի կատարած ոճրագործությունը պետք է ճանաչվի իբրև ***գենոցիդ*** և ճանաչվի հանուր մարդկության կողմից:

ԲԱԺԻՆ ԵՐԲՈՐՂ

Սույն բաժնում զետեղված են Երկրորդ աշխարհամարտից առաջ և հատկապես դրանից հետո ստեղծված միջազգային այնպիսի վավերագրեր, որոնք դատապարտում են *Գենոցիդ-ցեղասպանությունն ընդհանրապես, հայոց ցեղասպանությունը-Մեծեղեռնը մասնավորապես*

Մեր սույն ***երկհատորյակը*** *պատրաստ էր հրատարակության, երբ* ***Մոսկվայում*** *լույս տեսավ հմուտ իրավաբան, պատմաբան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր* ***Յու. Գ. Բարսեղովի*** *կազմած, ծանոթագրած վավերագրերի ստվարածավալ ժողովածուն, որն իր տեսակի մեջ եզակի է, արժեքավոր և ինքնին* ***ճոր խոսք*** *է ցեղասպանության պատմության բնագավառում (տե՛ս "****Геноцид Армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий****". Том 1, составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук, профессор* ***Ю. Г. Барсегов,*** *Москва, 2002): Ծրագրված երկհատորյակի առաջին հատորում զետեղված են* ***հայտնի և ճորահայտ*** *մի շարք այնպիսի վավերագրեր, որոնք խիստ հետաքրքրում են գենոցիդի պատմաբաններիս և պատասխան են բուրք կեղծարարներին: Ի նկատի ունենալով այդ փաստաթղթերի կարևորությունը՝ մենք որոշեցինք դրանց* ***հատընտիրը*** *վերահրատարակել մեր սույն մենագրությունում իբրև* ***հավելված****՝ դրանցում խմբագրական ոչ մի միջամտություն չանելով: Տրամադրած վավերագրերի գիտական մշակման համար շնորհակալություն ենք հայտնում մեր լավ բարեկամին՝ պրոֆեսոր* ***Յու. Գ. Բարսեղովին:***

№ 1

ПРЕМЬЕР-МИНИСТР ВЕЛИКОБРИТАНИИ Д. ЛЛОЙД ДЖОРДЖ
о позиции Союзных держав и об ответственности Турции за геноцид армян*

<...> Целые провинции опустели и обезлюдели в результате жестокой резни, вдохновлявшейся, устраивавшейся и направлявшейся правительством. Летописи и руины говорят нам, что в течение многих столетий на месте разлагающейся огромной империи когда-то существовали самые процветающие цивилизации. В пределах нынешней империи не осталось ни одного уголка, который не надо было бы переделать и перестроить с самого основания, чтобы он мог хоть в слабой степени напомнить о древней славе и великолепии.

<...> В Армении Абдул Гамид и младотурки сознательно упрощали армянскую проблему, истребляя и изгоняя народ, который они считали народом предателей и неверных. В этой дикой расправе они действительно преуспели. Точно смерч пронесся по равнинам Армении. Спасшихся можно было отыскать только в недосягаемых горах: здесь затравленные беглецы находили суровое и ненадежное убежище. Многие бежали в Сирию. Хотя сирийские арабы находились под властью турок и были правоверными магометанами, они не были убийцами и не желали принимать участие в истреблении беззащитных неверных, доверившихся человечности, которой учил пророк.

<...> Словом, турки непрестанно и с варварскими ухищрениями исправляли статистические данные в свою пользу.<...>

Армения была для нас проблемой совершенно другого порядка. Поколением раньше жители Армении и по расовому и по религиозному признаку резко отличались от господствующей турецкой нации. По вере они были христиане. Недоброй памяти Абдул Гамид проводил политику изгнания этого древнего народа из населяемых им долин. Этот дикий метод превращения армянского большинства в жалкое, запуганное меньшинство был осуществлен в большинстве плодородных районов Армении. Союзные державы единогласно придерживались того мнения, что нельзя позволить туркам воспользоваться плодами их зверств, а армянскому народу должно быть полностью возвращено наследие предков и предоставлена возможность восстановить свое былое могущество.

Никто не выражал это мнение с такой силой и таким гневным возмущением против угнетателей, как Президент и народ Соединенных Штатов Америки.<...>

Все мы соглашались, что было бы жестоко бросить уцелевших армян на произвол судьбы, не предоставив Америке возможность показать, что она го-

това помочь им воссоздать нацию, достаточно сильную и способную постоять за себя против Серого Волка, как называли Кемаля его друзья, и его разрастающейся стаи. Россия, когда-то бравшая на себя задачу освобождения и защиты армян, удалилась с поля сражения. Нота Президента говорила, что Америка еще не утратила интереса к армянам.

* Печатается по: *Д. Ллойд Джордж. Правда о мирных договорах. Москва., 1957. Т. 2. С. 199-200, 417-418, 439.*

№ 2

ОБРАЩЕНИЕ СОВЕТА НАРОДНЫХ КОМИССАРОВ РСФСР «Ко всем трудящимся мусульманам России и Востока» (20 ноября/3 декабря 1917 г.)*

Товарищи. Братья.

Великие события происходят в России. Близится конец кровавой войны, начатой из-за дележа чужих стран. Падает господство хищников, поработивших народы мира. Под ударами русской революции трещит все здание кабалы и рабства. Мир произвола и угнетения доживает последние дни. Рождается новый мир, мир трудящихся и освобождающихся. Во главе этой революции стоит рабочее и крестьянское правительство России, Совет Народных Комиссаров.<...>

Рушится царство капиталистического грабежа и насилия. Горит почва под ногами хищников империализма.

Перед лицом этих великих событий мы обращаемся к вам, трудящиеся и обездоленные мусульмане России и Востока...

Мусульмане Востока, персы и турки, арабы и индусы, все те, головами и имуществом которых, свободой и родиной которых сотни лет торговали алчные хищники Европы, все те, страны которых хотят поделить начавшие войну грабители.

Мы заявляем, что тайные договоры свергнутого царя о захвате Константинополя, подтвержденные свергнутым Керенским, ныне порваны и уничтожены. Республика Российская и ее правительство, Совет Народных Комиссаров, против захвата чужих земель. <...>

Мы заявляем, что договор о разделе Турции и «отнятии» у нее Армении порван и уничтожен. Как только прекратятся военные действия, армянам будет обеспечено право свободно определить свою политическую судьбу.<...>

* Печатается по: *Известия. 1917. 22 нояб. Собрание узаконений и распоряжений рабочего и крестьянского правительства. № 6. 1917. 19 дек. С. 91-96.*

№ 3

ЗАЯВЛЕНИЕ ПРЕМЬЕР-МИНИСТРА ВЕЛИКОБРИТАНИИ Д. ЛЛОЙД ДЖОРДЖА В ПАЛАТЕ ОБЩИН (20 декабря 1917 г.)*

Вот слова, которые я отважился применить [в выступлении в Глазго 29 июня 1917г.] относительно Месопотамии и колоний:

«Что произойдет в Месопотамии, должно быть оставлено на усмотрение Мирной конференции, когда она соберется, но есть одна вещь, которая никогда не случится. Она никогда не будет возвращена под гибельную тиранию турок <...>. То же самое относится к Армении, земле, пропитанной насквозь кровью невинных и вырезанных, и это сделали люди, которые обязаны были защитить их.»

* Печатается по: *The Parliamentary Debates. Official Report. Fifth series-volume C. House of Commons, 11th Volume of Session 1917, London. P. 2220.*

№ 4

ПИСЬМО ПРЕДСЕДАТЕЛЯ СОВЕТА МИНИСТРОВ ФРАНЦИИ Ж. КЛЕМАНСО ПРЕДСЕДАТЕЛЮ АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ ДЕЛЕГАЦИИ Б. НУБАР-ПАШЕ (23 июля 1918 г.)*

<...>Напоминая героическое поведение ваших соотечественников, вы просите меня воспользоваться представившимся случаем для поощрения их усилий и чтобы сказать им, что условия, навязанные Константинопольской конференцией не будут признаны Правительством Республики.

Франция, жертва самой несправедливой агрессии, включила в перечень своих требований освобождение порабощенных наций. Как традиционная защитница этих народов, она многократно выражала свои глубокие симпатии армянам. Она делала все, чтобы оказать им помощь. <...>

Я счастлив подтвердить Вам, что правительство Республики, как и правительство Великобритании продолжает относить армянскую нацию к числу народов, судьбу которых Союзные державы собираются урегулировать в соответствии с правом народов на самоопределение.

* Печатается по: *Archives du Ministère des Affaires étrangères. E-Levant 1918-1929. Arménie. T. 1, F. 80-80 v.*

№ 5

ТЕЛЕГРАММА ГЛАВЫ ГЕРМАНСКОЙ ВОЕННОЙ МИССИИ НА КАВКАЗЕ ГЕНЕРАЛА КРЕССА ФОН КРЕССЕНШТЕЙНА МИНИСТЕРСТВУ ИНОСТРАННЫХ ДЕЛ
о необходимости принудить Турцию согласиться на возвращение беженцев-армян (26 июля 1918 г.)*

Армяне меня осаждают и умоляют позаботиться о том, чтобы спасти тысячи их соотечественников от голодной смерти, ***принудив*** Турецкое правительство позволить им вернуться на родину. Мои многочисленные телеграммы Министерству иностранных дел по этому поводу до сих пор остаются без ответа. Прошу срочно телеграфировать, предпринимает ли Кайзеровское Правительство шаги в поддержку армян и с каким результатом. Не говоря уже о

требовании гуманности, этот вопрос затрагивает наш политический престиж. Если мы и на этот раз не сможем помочь армянам, то подтвердится подозрение в том, что мы как и турки виновны в резне 1915 г.

